ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

II

ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ
1516–1918 թթ.

ԵՐԵՎԱՆ 2004

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3(5 Արաբ)
Հ 854

Խմբագիր՝ **Վահան Բայբուրդյան**
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննիսյան, Նիկոլայ
Հ 854 **ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:** Հատոր II. Օսմանյան տիրապետության շրջան. 1516–1918 թթ./.– Եր.: Զանգակ–97, 2004.– 680 էջ + 20 կավճ.:

Արաբների պատմությանը նվիրված սույն, երկրորդ հատորում, լուսաբանվում է արաբական երկրների պատմությունը XVII դ. սկզբներից, օսմանյան պետության կողմից նրանց նվաճումից, մինչև Օսմանյան կայսրության կործանումը, որը տեղի ունեցավ 1918 թ.:
Ուսումնասիրվում են արաբական երկրների վարչա–քաղաքական կարգավիճակի հարցերը, օսմանյան դժնդակ լծի բացասական հետևանքները արաբական երկրների քաղաքական, սոցիալ–տնտեսական, էթնիկական և մշակութային զարգացումների վրա, ինչպես նաև արաբների հակաօսմանյան ընդվզումները: Զգալի տեղ է հատկացվում արաբական ազգային ինքնագիտակցության ձևավորմանը և ազգային–մշակութային զարթոնքին, «Արաբական մեծ ապստամբությանը» ընդդեմ օսմանյան բռնատիրության Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որը նշանակալի դեր խաղաց Օսմանյան կայսրության կործանման մեջ:
Քննարկվում է նաև արևմտյան տերությունների գաղութարարական քաղաքականությունը Արաբական Արևելքում:
Առանձնակի ուշադրություն է դարձվել արաբա–հայկական հարաբերություններին, այդ թվում և արաբների դիրքորոշմանը հայկական ցեղասպանության նկատմամբ, և նրանց մարդասիրական վերաբերմունքին հայ տարագիրների հանդեպ:

Հ $\frac{0503000000}{0003(01)–2004}$ 2004 թ. ԳՄԴ 63.3(5 Արաբ)

191679
00000593 7

ISBN 99930–2–912–2

© Ն. Հ. Հովհաննիսյան, 2004 թ.
© «Զանգակ–97», 2004 թ.



ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Կոնֆլիկտների լուծման Հայաստանի Կենտրոնի հիմնադիր տնօրեն և Հայ–ատլանտյան ասոցիացիայի նախագահ: Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարիզ), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության (Հալեպ), Ազգային աշխարհագրական ընկերության (ԱՄՆ) անդամ է և Ամերիկյան կենսագրական ինստիտուտի հետազոտությունների վարչության խորհրդական:

Հեղինակ է մոտ 400 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 30–ից ավելի մենագրական ուսումնասիրությունների՝ նվիրված արաբա-

կան երկրների պատմության, Մերձավոր և Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, աշխարհաքաղաքականության, իսլամի և արաբական գաղափարախոսության, հայ–արաբական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության, էթնոքաղաքական կոնֆլիկտների, դիվանագիտության, Հայաստանի արտաքին քաղաքականության, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի և այլ հանգուցային հարցերի ուսումնասիրությանը: Այդ ուսումնասիրությունները լույս են տեսել Անգլիայում, ԱՄՆ–ում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում, Լիբանանում, Իրաքում, Սիրիայում, Քուվեյթում, Ռուսաստանում, Հունգարիայում, Վրաստանում և այլ երկրներում:

Նրա մենագրական ուսումնասիրություններից են. «Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում» (Երևան, 1967 թ., հայերեն, Բեյրութ, 1974, արաբերեն), «Սիրիական անկախ հանրապետության կազմավորումը» (Մոսկվա, 1968, ռուսերեն), «Ազգային–ազատագրական շարժումը Իրաքում (1917–1958 թթ.)» (1976), «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն Արաբական Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ» (1980), «Դիվանագիտություն» (1997), «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» (1998, անգլերեն), «Ղարաբաղյան հիմնախնդիրը. գործոնները, չափանիշները, լուծման տարբերակները» (1999, անգլերեն), «Հայոց ցեղասպանությունը. Արմենոցիդ» (2002, անգլերեն), «Արաբական երկրների պատմություն: Հ. I. Արաբները VII դարից մինչև 1516 թ.» (2003), «Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը» (2004) և այլն:

1989 թ. Բրիտանական ակադեմիայի հրավերով աշխատել է Լոնդոնի համալսարանում, 1993–1994 թթ., շահելով Ֆուլբրայթի մրցանակը, աշխատել է Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, Վաշինգտոն, ԱՄՆ, իսկ 1995 թ. Մերիլենդի համալսարանում, ԱՄՆ և այլն: Մասնակից է բազմաթիվ միջազգային գիտական կոնգրեսների:

2001 թ. եղել է Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700–ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ: Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի և Հայոց ցեղասպանության 90–ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ է: Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով «Հայոց ցեղասպանության դատապարտման և մարդասիրական սկզբունքների հաստատման ուղղությամբ ծավալած գիտական և հասարակական գործունեության համար» և այլ պարգևներով:

ԱՌԱՋԱԲԱՆ

Երկրորդ հատորն ընդգրկում է պատմական մի մեծ, չորսհարյուրամյա ժամանակաշրջան, 1516 թվականից, երբ նոր բարձրացող Օսմանյան կայսրությունը սկսեց Արաբական Արևելքի՝ Մաշրիկի, և Արաբական Արևմուտքի՝ Մաղրիբի, նվաճումը, մինչև 1918 թվականը, Օսմանյան կայսրության կործանումը և անհետանալը աշխարհի քաղաքական քարտեզից:

Այդ ագրեսիվ, իր բնույթով ռազմամոլ, ռազմա–ֆեոդալական կայսրությունն իր կազմավորման առաջին օրվանից մեծ սպառնալիք էր առնվազն երեք մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի, ժողովուրդներին և պետություններին, որոնց մի զգալի մասը հայտնվեց նրա տիրապետության տակ, իսկ ավելի մեծ մասն էլ սարսափահար սպասում էր իր ճակատագրին:

Օսմանյան տիրապետության տակ ընկած ժողովուրդների և երկրների շարքում հայտնվեցին Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արաբական ժողովուրդները և երկրները: Քոչվոր անասնապահ թուրքական ցեղերը, որոնք VII դարից սկսել էին արաբներից իսլամ ընդունել և որպես այդպիսին հանդիսանում էին նրանց «աշակերտները», երախտամոռ և անշնորհակալ «սաներ» գտնվեցին իրենց հոգևոր–կրոնական «ուսուցիչների» հանդեպ: Նրանք արաբական երկրները զավթում և իրենց կրոնակից մուսուլման արաբ «եղբայրների» հետ վարվում էին նույնպիսի դաժանությամբ, ինչպես «գյաուրների»՝ հայերի, հույների, սլավոնների և այլ ոչ թուրք ժողովուրդների հետ:

Հենց նման արյունարբու և կործանարար քաղաքականությունը հիմք հանդիսացավ եվրոպական քաղաքական–լուսավորչական ընդերքում ծնունդ առած «Այստեղով թուրքն է անցել» սարսափազդու բանաձևի համար:

Հարկ է նշել, որ օղուզական–օսմանյան բեյլիքի՝ իշխանապետության, վերածումը իսկապես կայսրության, տեղի ունեցավ արաբական երկրները նվաճելուց հետո: Ճիշտ է, մինչ այդ, կամ դրան զուգահեռ, օս-

մանյան պետությունը զգալի տարածքներ էր գրավել արևմուտքում, այդ թվում և ամբողջ Բյուզանդական կայսրությունը, ինչպես նաև Բալկաններում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, այդուհանդերձ, նա դեռ հեռու էր լիարժեք կայսրություն կոչվելու իրավունքից: Միայն Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների միջև ընկած արաբական վիթխարի տարածքների վրա իր տիրապետությունը հաստատելուց հետո այդ նախկին բեյլիքը իրավունք ունեցավ կոչվելու կայսրություն:

Սույն հատորում լուսաբանվող հանգուցային հարցերի առաջին խումբը կազմում են արաբական երկրների նվաճումը և դրա դրդապատճառները, նրանց կարգավիճակը օսմանյան կայսրության կազմում, հարաբերությունները կենտրոնի և տեղական կառավարիչների միջև, վարչա–տերիտորիալ բաժանումը, արաբական սոցիալական տարբեր խավերի վերաբերմունքը նոր տիրակալների նկատմամբ:

Վստահ ենք, որ այս հարցերի քննությունը լույս կսփռի նվաճած արաբական երկրներում օսմանյան տիրակալների քաղաքականության բնույթի և նպատակների վրա, հնարավորություն կտա բացահայտել, թե նրանք ի՞նչ ուժերի վրա էին հենվում իրենց քաղաքականությունը կիրառելիս և ի՞նչ մեթոդներով էին փորձում ապահովել իրենց տիրապետությունը արաբական աշխարհում, որի բնակչությունն իր թվաքանակով գերազանցում էր թուրքերին:

Հանգուցային հարցերի մյուս կարևոր խումբը կազմում են քաղաքական և սոցիալ–տնտեսական հարցերը: Վաչկատուն թուրք–օղուզներն իրենց զարգացման մակարդակով զիջում էին արաբներին, արաբա–մուսուլմանական քաղաքակրթության ստեղծողներին և կրողներին: Թուրքական տիրապետությունը բացասական հետևանքներ ունեցավ արաբների քաղաքական և սոցիալ–տնտեսական զարգացման վրա, կասեցրեց նրանց առաջխաղացումը և դարձավ նրանց հետամնացության պատճառներից մեկը: Այդ հարցերի լուսաբանությունը և դրա հետ սերտորեն աղերսված արաբ բնակչության դրության, սոցիալ–տնտեսական վիճակի քննությունը հանդիսանում է այս հատորի առանցքային հարցերից մեկը:

Արաբները հլու–հնազանդ ենթակա ժողովուրդ չեն եղել և լուռ ու մունջ չեն տարել թուրքական լուծը: Նրանք բազմիցս ընդվզել են թուրքական բռնակալության դեմ և փորձել թոթափել այն, կամ ինչ–որ չափով բարելավել իրենց վիճակը: Եվ չնայած այն հանգամանքին, որ այդ հակաօսմանյան ելույթները թուրքական սուլթանները դաժանորեն ճն-

շում էին, այդուհանդերձ, դրանք անհետևանք չէին անցնում: Նրանք աստիճանաբար, քայլ առ քայլ, թուլացնում էին օտարերկրյա տիրակալների դիրքերը և երբեմն ստիպում նրանց դիմել զիջումների, փորձում կայսրությունում հռչակվող բարեփոխումները կիրառել, թեև անհետևողականորեն կամ ձևականորեն, նաև արաբական երկրներում, մասնավորապես Մերձավոր Արևելքի արաբական երկրներում:

Այս հույժ կարևոր հարցերի լուսաբանությունը ևս իր արժանի տեղն է գտել հատորում քննարկվող հիմնախնդիրների շարքում:

Արաբների պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում XIX դարը, որը համարվում է արաբական զարթոնքի՝ Նահդայի դար, երբ մեծ խթան ստացավ արաբական ինքնագիտակցության ձևավորումը և զարգացումը: Արաբական լուսավոր և առաջադեմ գործիչները ավելի ու ավելի մեծ ուշադրություն էին դարձնում արաբների ինքնության և արաբական աշխարհում առաջադեմ եվրոպական գաղափարների տարածման անհրաժեշտության հարցերին: Նահդայի շրջանակներում նրանք ավելի հստակ ու որոշակիորեն էին առաջ քաշում օսմանյան լծից արաբների ազատագրման խնդիրը: Դա արաբական պատմության ամենափայլուն ժամանակաշրջաններից մեկն է, որը խոր հետք է թողել արաբների գիտակցության մեջ:

Բնականաբար, այս կարևոր հարցերի քննարկումը կազմում է հատորի կարևոր մասերից մեկը:

Հատորի առանձին հատվածներում քննության են ենթարկվում արաբական երկրների վիճակը սուլթան Աբդուլ Համիդ II գահակալության տարիներին, որն արաբները կոչել են զուլումի տարիներ, արաբների դիրքորոշումը երիտթուրքերի հեղափոխության հանդեպ և արաբա–երիտթուրքական փոխհարաբերությունները, հակասությունների խորացումը արաբա–թուրքական հարաբերություններում, որոնք կարևոր փուլ հանդիսացան թուրքական լծից արաբների ազատագրման պայքարում:

XVIII դարի վերջերից արաբական երկրների նկատմամբ սկսում են մեծ հետաքրքրություն ցուցաբերել արևմտյան երկրները, առաջին հերթին Անգլիան և Ֆրանսիան: Նրանք աստիճանաբար ուժեղացնում են իրենց դիրքերը և ազդեցությունը Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում, նրանց ներգրավում միջազգային հարաբերությունների ոլորտը և հող նախապատրաստում այդ երկրները նվաճելու համար, որը նրանց հաջողվեց իրականացնել Առաջին հա-

մաշխարհային պատերազմի ընթացքում: Առանց այս հարցերի ամբողջական ուսումնասիրության հնարավոր չէ ճշգրիտ պատկերացում կազմել արաբների տվյալ ժամակահատվածի պատմության վերաբերյալ:

Հատորի եզրափակիչ մասը նվիրված է արաբական երկրների դրությանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրանք որպես Օսմանյան կայսրության մասեր ակամայից ներգրավվեցին պատերազմի հորձանուտում: Պատերազմը շատ ծանր նստեց արաբների վրա, նրանց բերելով մեծ աղետ, տնտեսական վիճակի աննախադեպ վատթարացում, զանգվածային սով, մեծաքանակ զոհեր և այլն:

Այդ հարցերի հետ միասին քննարկվում է երիտթուրքերի ղեկավարների հակաարաբական քաղաքականությունը, բացահայտվում արաբների նկատմամբ զանգվածային սպանություններ իրագործելու երիտթուրքական հանցագործ ղեկավարների հրեշավոր ծրագրերը, որը հանձնարարված էր իրագործել Ջեմալ փաշային, որը հարցականի տակ կարող էր դնել արաբների՝ որպես էթնոսի, գոյությունը:

Հատուկ քննարկման առարկա է հանդիսանում 1916 թ. հունիսին սկսված Արաբական մեծ ապստամբությունը՝ «Աս սաուրա ալ–արաբիյա ալ–քուբրա», Հիջազի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի և նրա չորս որդիների գլխավորությամբ: Հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում ապստամբության նախապատրաստման հարցերին, նրա ղեկավարության քաղաքական ծրագրերի և նպատակների էության բացահայտմանը, ինչպես նաև ապստամբության ղեկավարության և Անտանտի երկրների, առաջին հերթին Անգլիայի և Ֆրանսիայի փոխհարաբերություններին: Անուրանալի է այդ ապստամբության նշանակությունը և արաբական ապստամբ զորամիավորումների ներդրումը արաբական հայրենիքը չորս հարյուր տարի տևած օսմանյան բռնակալական լծից ազատագրելու գործում:

Այս հատորում նույնպես, ինչպես առաջին հատորում, իր ուրույն տեղն ունի արաբա–հայկական հարաբերությունների քննարկումը և նրա հանգուցային հարցերի լուսաբանությունը: Աղբյուրների և առկա մասնագիտական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ այդ չորս հարյուր տարիների ընթացքում, չնայած օսմանյան բռնակալական լծին, նրա կողմից կիրառվող հալածանքներին ու սարսափելի պատիժներին, հայ–արաբական հարաբերությունները երբեք չեն ընդհատվել և, որ ավելի կարևոր է, չեն դադարել բարեկամական լինելուց: Հայերը շարունակել են կարևոր դերակատարում ունենալ արա-

բական երկրների քաղաքական կյանքում, հատկապես Եգիպտոսում, Լիբանանում և Սիրիայում, ակտիվ դեր են խաղացել արաբական Նահդայի, ազգային–մշակութային զարթոնքի սկզբնավորման և խորացման, արաբական ազգայնական գաղափարախոսության ձևավորման գործում: Հայ և արաբ ազգային քաղաքական գործիչները XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հանգեցին այն եզրակացության, որ օսմանյան լծից ազատվելու հարցում արաբների և հայերի ազգային քաղաքական շահերը միանգամայն համընկնում են:

Կարծում ենք, որ այս հանգամանքը վճռական նշանակություն ունեցավ արաբ ժողովրդի, նրա ազգային և հայրենասեր քաղաքական առաջնորդների այն դիրքորոշման մեջ, որ նրանք գրավեցին 1915 թ. երիտթուրքական ջարդարարների կողմից կազմակերպած հայոց ցեղասպանության հանդեպ: Նրանք խստորեն դատապարտեցին երիտթուրքերի այդ ոճրագործությունը և օգնության ձեռք մեկնեցին նրանց տարածքներով անցնող հայ գաղթականներին, որի շնորհիվ հայերի հոծ զանգվածները փրկվեցին մահվան անխուսափելի ճիրաններից:

Այստեղ հարկ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Արաբները, նրանց առաջնորդները, արաբ պատմաբանները համոզված են, որ երիտթուրքերը ծրագրել էին հայոց ցեղասպանության հետ միասին կազմակերպել նաև արաբների ցեղասպանությունը և այդ ուղիով մեկընդմիշտ ազատվել իրենց համար վտանգավոր այդ երկու ոչ թուրք ժողովուրդներից:

Այս հարցերին ընթերցողը կարող է հանգամանորեն ծանոթանալ, ընթերցելով աշխատությունը:

Օսմանյան կայսրությունը հետամնաց, ռազմա–ֆեոդալական արյունարբու բռնապետություն էր, որը խարսխված էր ուրիշ ազգերին, ոչ միայն քրիստոնյա, այլև մուսուլման, ճնշելու, հարստահարելու, որպես էթնոս կոտորելու և ջարդերի սկզբունքների վրա: Ուստի նա դատապարտված էր կործանման, որը և տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, 1918 թ., տարբեր ազգերի ջանքերի շնորհիվ: Այդ շնորհակալ գործում իրենց արժանի մասնակցությունն ունեցան նաև արաբները:

Գլուխ առաջին

ՕՂՈՒԶԱ–ՕՍՄԱՆՅԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆՎԵԼԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄՈՒՄ (XIII–XV ԴԴ.)

I. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔՈՉՎՈՐ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱ

1. Թուրքական առաջին ցեղերի հայտնվելը տարածաշրջանում և դրա մասին հայկական աղբյուրների կարևորությունը

Մինչև XI դարը թուրքական էթնոսը որպես ժողովրդագրական երևույթ գոյություն չի ունեցել այն ընդարձակ աշխարհաքաղաքական տարածքում՝ Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում և Փոքր Ասիայում, որը հնուց ի վեր հանդիսանում է մարդկության օրրաններից և համամարդկային քաղաքակրթության առաջացման հիմնական կենտրոններից մեկը: Այդ երեք շրջանները մշտապես կապված են եղել միմյանց հետ, ներազդել միմյանց վրա, և, որոշ իմաստով, մի ներքին տրամաբանությամբ, կազմել են քաղաքական, տնտեսական և մշակութային մեկ ամբողջություն:

Նրանք հնուց ի վեր ունեին իրենց տեղաբնիկները, որպիսին հանդիսանում էին պարսիկները, արաբները և ասորիները, հայերը, վրացիները և աղվանները, հույները և քրդերը, և այլն: Եվ չնայած բազմաթիվ արհավիրքներին, այդ տարածքում տարբեր նվաճողների հայտնվելուն, միևնույն է, նրանք չեն կարողացել արմատական փոփոխության ենթարկել նրա դեմոգրաֆիկական կազմը: Նորեկները կամ հեռացել են այդ տարածաշրջանից, կամ էլ տարրալուծվել տեղաբնիկների մեջ:

Թեև թուրքական ցեղերի, գլխավորապես թուրքմենների և օղուզների գաղթը և հաստատվելը Փոքր Ասիայում թվագրվում է XI դարի վերջը, սակայն դա չի նշանակում, թե նրանք մինչ այդ հայտնի չեն եղել Մերձավոր Արևելքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի տեղաբնիկներին, կամ թե նրանք ընդհանրապես այդ տարածքներում չեն երևացել: Խոսքն այդ մասին չէ, այլ այն մասին, որ նրանց հայտնվելը կամ գաղթը վերոնշյալ տարածք չի կրել զանգվածային բնույթ և փոփոխության չի ենթարկել նրա էթնիկական կազմը: Այդ մասին են վկայում միջնադարյան հայկական, բյուզանդական, սիրիական, արաբական և այլ սկզբնաղբյուրները:

Թուրքերի էթնոգենեզի հարցերով զբաղվող ռուս մասնագետ Դ. Երեմեևն իր «Թուրքերի ծագումը» աշխատության մեջ, անդրադառնալով թուրքական քոչվորական ցեղերի Առաջավոր Ասիա, մասնավորապես Փոքր Ասիա ներթափանցելու հարցին և դրա վերաբերյալ աղբյուրներին, այդ աղբյուրների մեջ, իրենց կարևորությամբ առանձնացնում է հայկական աղբյուրները: «Վաղ շրջանի գրավոր աղբյուրներից,— գրում է հեղինակը,— ավելի մեծ նշանակություն ունեն, թերևս հայկականները: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (V դար), VII դարի հայկական «Աշխարհացույցի» մեջ պահպանվել են տեղեկություններ թյուրքական առաջին ցեղերի՝ Անդրկովկաս և Փոքր Ասիայի արևելյան շրջանները ներթափանցելու մասին: Անդրկովկասյան և փոքրասիական ժողովուրդների հետ սուվարների և խազարների ունեցած կապերի մասին է պատմում Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գիրքը: XI–XIII դարերում հայկական աղբյուրներում տեղեկություններ են երևում օղուզների և թուրքմենների մասին, որոնք սելջուկյան նվաճումների ժամանակ ներխուժել էին Փոքր Ասիա: Այդ աղբյուրների թվում ամենից առաջ հարկավոր է նշել Արիստակես Լաստիվերցու (XI դար), Մատթեոս Ուռհայեցու (մահացել է 1144 թ.), Մխիթար Այրիվանցու (XIII դար) ժամանակագրությունները»:

Դրանց պետք է ավելացնել նաև, ինչպես վկայում է ռուս պատմաբանը, հայ պատմիչներ Ագաթանգեղոսին և Փավստոս Բուզանդին, մանավանդ երբ խոսքը վերաբերում է հոներին:

Հոները, ապա նաև ավարները, մի փոքր ավելի ուշ պեչենեգները կամ ղփչաղները, որոնք ռուսական պատմագիտական գրականության մեջ հայտնի են պոլովցիներ անվամբ, բուլղարները և թուրքական այլ ցեղեր, հաստատվում են Հյուսիսային Կովկասում, մերձկասպյան շրջա-

նում, ապա նաև հարավռուսական տափաստաններում և մերձսևծովյան շրջաններում: Նրանց այս փուլում չի հաջողվում մտնել Անդրկովկաս, Մերձավոր Արևելք և Փոքր Ասիա: Նրանք հայտնվում են այդ տարածաշրջանի մատույցներում և դառնում անհանգիստ և վտանգավոր հարևաններ:

Հետագայում նրանք տեղաշարժվում են դեպի արևմուտք, մտնում Թրակիա, ապա նաև ներթափանցում Բյուզանդական կայսրության փոքրասիական տարածքներ: Բյուզանդիան, որ այդ ժամանակ դեռևս բավականին հզոր էր, կարողանում էր նրանց ոչ միայն ենթարկել իրեն, այլև օգտագործել իր ռազմական արշավանքների ժամանակ: Նրանց որոշ մասը դառնում է նստակյաց, ընդունում է քրիստոնեություն և ձուլվում տեղացիների մեջ:

2. Թուրքական քոչվորական ցեղերի տարածաշրջան ներթափանցելու նոր փուլը: Դեմոգրաֆիական նոր երևույթ

Թուրքական քոչվորական ցեղերի տարածաշրջան ներթափանցելու երկրորդ փուլն սկսվում է VII դարից, երբ Արաբական խալիֆայությունը, մանավանդ Օմայյանների տիրապետության շրջանում, նվաճեց և իր տիրույթներին միացրեց միջինասիական տարածքները, որոնք հիմնականում բնակեցված էին թուրքական տարբեր ցեղերով և ցեղախմբերով: Սկսվեց նրանց իսլամացումը, որը կրոնական առումով դուռ էր բացում նրանց առջև խալիֆայության տարբեր մասերում անհամեմատ ավելի հեշտությամբ տարածվելու համար:

Բայց ամենաարտառոցն այն էր, որ խալիֆաները, հատկապես Աբբասյան, իրենց քաղաքականությամբ նպաստում էին խալիֆայության արաբական շրջաններում թուրքերի տարածմանը և բնակության հաստատմանը:

Խալիֆաները, որոնք արդեն չէին վստահում տեղացիներից հավաքագրված իրենց թիկնապահ զորքին, գվարդիային, անցան իրենց թիկնապահ զորքը գլխավորապես թուրքերից կազմավորելու քաղաքականությանը: Եվ սկսվեց նրանց բավականին ստվար խմբերի տեղափոխվելը Միջին Ասիայից Բաղդադ և խալիֆայության այլ մասեր: Այդ քաղաքականությամբ խալիֆաները հույս ունեին, թե իրենց արմատներից պոկված թուրքերը, որոնք արաբական աշխարհում հենարաններ չունեին, հավատարմորեն կծառայեն իրենց և կապահովեն իրենց և ի-

րենց հարազատների ու մերձավորների անվտանգությունը: Դրա հետևանքով, տարեցտարի ավելի ու ավելի մեծաքանակ թուրքեր էին կենտրոնանում Բաղդադում և խալիֆայության տարբեր մասերում:

Սակայն խալիֆաներն իրենց հաշիվներում սխալվեցին: Թուրքական գվարդիան շատ շուտով դարձավ կարևոր քաղաքական ուժ, որն սկսեց իր ինքնուրույն դերակատարումն ունենալ: Նա այնքան հզորացավ և ինքնուրույն դարձավ իր գործողություններում, որ ինքը սահմանեց խաղի կանոնները և սկսեց իր կամքը թելադրել խալիֆաներին, ընդհուպ մինչև իրենց անցանկալի խալիֆաներին գահընկեց անելը և իրենց ձեռնտու մարդկանց խալիֆայության գահին բազմեցնելը, որը դառնում էր նրանց պատանդը և հարկադրված էր հլու հնազանդ կատարել նրանց ցանկությունները:

Ահա այսպես թուրքերը սկսեցին տարածվել և մշտական բնակություն հաստատել խալիֆայության արաբական և որոշ չափով նաև պարսկական հատվածներում:

Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք:

Թուրքերի այդ կենտրոնացումը տարածաշրջանում թեև ավելի մեծ մասշտաբներ ընդունեց, այնուամենայնիվ, դեռևս ժողովրդագրական էական փոփոխություն չառաջացրեց: Բայց դրա համար ստեղծվեցին համապատասխան նախադրյալներ, որոնք բարենպաստ պայմանների դեպքում իրենց անպայման զգացնել կտային: Եվ, իրոք, հետագայում այդպես էլ եղավ:

Մյուս կողմից այդ գործընթացը սահմանափակվեց միայն խալիֆայության արաբական մասերով և չտարածվեց նրա կազմի մեջ մտնող էթնիկական մյուս, ոչ արաբական մասերում: Մենք առաջին հերթին նկատի ունենք Անդրկովկասը, ինչպես նաև Փոքր Ասիան:

Իրավիճակն արմատականորեն փոխվեց X դարի վերջերին և XI դարի սկզբներին, երբ սկսվեց թուրքական ցեղերի արդեն զանգվածային տեղաշարժը և ներխուժումը Միջին Ասիայից Մերձավոր Արևելք, ապա նաև Անդրկովկաս և Փոքր Ասիա: Դա արդեն առանձին, փոքր ցեղախմբերի տեղաշարժ չէր, այլ մի հուժկու ալիք, որը ունեցավ քաղաքական և ժողովրդագրական լուրջ հետևանքներ այդ ընդարձակ տարածաշրջանի համար: Դրա միջուկը կազմում էին թուրքմենները և օղուզները, որոնք պատմական թատերաբեմ իջան սելջուկներ անվան ներքո: Նրանք «սելջուկ» հորջորջվեցին իրենց ցեղապետերից մեկի՝ Սելջուկի անունով: Հենց նրա թոռներին՝ Չաղրի բեկին և Տուղրիլ բեկին էր վիճակ-

ված Սելջուկյան պետության հիմնումը: 1038 թ. Չաղրի բեկը հռչակվեց սուլթան Մերվում, իսկ նրա եղբայր Տուղրիլը Նիշապուրում: Սկսվեց Իրանի, Իրաքի, Սիրիայի և Անդրկովկասի նվաճումը:

Տուղրիլ բեկ I 1055 թ. գրավեց խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը և վերացրեց Բուիների տիրապետությունը Աբբասյան խալիֆայության վրա: Այսպիսով, պատմության մեջ առաջին անգամ Մերձավոր Արևելքում եկվոր թուրքական տարրի կողմից ստեղծվեց թուրքական պետություն, որը կոչվեց «Սելջուկյանների Մեծ պետություն»: Դա արդեն ոչ թե առանձին ցեղախմբերի ներթափանցում էր, որը հետապնդում էր սահմանափակ նպատակներ, այլ իր բնույթով բոլորովին նոր երևույթ, որն ունեցավ շատ հեռուն գնացող քաղաքական և ժողովրդագրական հետևանքներ:

Հերթը հասավ Փոքր Ասիային:

Ինչպես վկայում է հայ պատմիչ, վարդապետ Արիստակես Լաստիվերտցին, թուրքմենները և օղուզներն իրենց ցեղապետերի գլխավորությամբ, անհամար զորքերով ու փղերով, կառքերով ու երիվարներով, կանանցով ու երեխաներով, բազմանդամ ընտանիքներով և հոտերով, դուրս գալով Խորասանից, Իրաքից և Սիրիայից, սելջուկյան սուլթան Տուղրիլ բեկի առաջնորդությամբ շարժվեցին դեպի Փոքր Ասիա:

II. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ (1299 թ.)

1. Թուրքական գործոնը

Նվաճելով Իրանը, Իրաքը, Սիրիան և հարակից տարածքները, և իրենց վերահսկողությունը հաստատելով Աբբասյան խալիֆայության վրա և ձևականորեն պահպանելով նրա գոյությունը, սելջուկներն իրենց հայացքն ուղղեցին դեպի Փոքր Ասիա, որպես նվաճումների հաջորդ հանգրվան: Դա իրագործեց սելջուկյան սուլթան Ալփ Արսլանը, որը սելջուկյան սուլթան էր դարձել 1063 թ.:

Նա 1064 թ. ձեռնարկեց մի մեծ արշավանք, որը պսակվեց հաջողությամբ: Նրա զորքերը. Ատրպատականից, անցնելով Արաքս գետը, ներխուժեցին Նախիջևան, ապա գրավեցին Լոռին, Քարթլին ու Ջավախքը: Ալփ Արսլանը 1065 թ. գրավեց Անին, իսկ 1071 թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց բյուզանդական բանա-

կը, գերեվարելով կայսր Ռոմանոս Դիոգենեսին: 1085 թ. Իզմիրը գրավելուց հետո, կարելի է ասել, որ Փոքր Ասիայի մեծ մասն անցավ սելջուկների տիրապետության տակ: Այսպիսով, Սելջուկյան Մեծ սուլթանությունը դարձավ մի ընդարձակ և հզոր կայսրություն, որին տարածաշրջանում մրցակից որևէ ուժ գոյություն չուներ:

Մանազկերտի ճակատամարտը շրջադարձային նշանակություն ունեցավ ոչ միայն Բյուզանդիայի, այլև ամբողջ Մերձավոր Արևելքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի պատմական ճակատագրում: Հետայսու թուրքական գործոնը դարձավ վճռական, որի հետ հարկադրված էին հաշվի նստել տարածաշրջանի բոլոր պետությունները և ժողովուրդները:

Ներխուժելով Փոքր Ասիա և իր տիրապետությունը հաստատելով նորանոր տարածքների վրա, Սելջուկյան Մեծ սուլթանությունը այստեղ հիմնեց երկրորդ սելջուկյան պետությունը, որը թեև ձևականորեն կախման մեջ էր գտնվում նրանից, սակայն իրականում գործում էր որպես անկախ պետություն: Այն ստացավ Ռումի սուլթանություն անունը: «Ռումը» Բյուզանդական, տվյալ դեպքում Հռոմեական կայսրության կամ Հռոմի արաբական անվանումն է, որն արաբներից անցել է թուրքերին: Հատկանշական է, որ անգամ բյուզանդացիներն իրենց անվանում էին ոչ թե հույներ («հելեններ»), այլ «ռոմցիներ», այսինքն հռոմեացիներ: Հիշենք, որ հայերի մոտ նույնպես ընդունված է եղել «ուռում» և «հոռոմ» ձևը:

1116 թ. սելջուկները, շարունակելով իրենց նվաճումները, գրավեցին կարևոր նշանակություն ունեցող Կոնիան, որը դարձավ Ռումի սուլթանության մայրաքաղաքը: Դրանից հետո նա կոչվեց նաև Իկոնիայի սուլթանություն:

Այսպիսով, մերձավորարևելյան–փոքրասիական ընդարձակ տարածքներում կազմավորվեցին երկու թուրքական պետություններ՝ Սելջուկյան Մեծ սուլթանությունը և Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը:

XIII դարի առաջին կեսին տեղի ունեցան նոր քաղաքական փոփոխություններ տարածաշրջանում: Թատերաբեմի վրա հայտնվեցին մոնղոլները, որոնք իրենց ճանապարհին ավերելով, սպանելով, կործանելով և սրբելով ամեն բան, ինչ հնարավոր էր, ներխուժեցին Անատոլիա և 1243 թ. ջախջախեցին սելջուկյան բանակը: Սելջուկյան պետությունը վասալական կախման մեջ ընկավ մոնղոլներից և դարձավ նրանց հար-

կատուն: Սկսվեց Իկոնիայի սելջուկյան պետության թուլացումը, ապա նաև անկումը:

2. Բեյլիքներ: Օսմանլը կամ Օսմանյան բեյլիքության կազմավորումը

Դրանից օգտվեցին նրա կազմի մեջ մտնող թուրքական տարբեր ցեղախմբեր, որոնք Փոքր Ասիայի արևմտյան մասերում հիմնեցին իրենց իշխանապետությունները՝ բեյլիքները: Նրանք ձևականորեն դեռևս ենթակա էին և կախման մեջ էին գտնվում Իկոնիայի սուլթանությունից, բայց իրականում, եթե ոչ անկախ, ապա կիսանկախ պետական միավորումներ էին: Ձևավորվեցին նման մոտ մեկ տասնյակ բեյլիքներ, որոնք խարսխված էին ցեղային պատկանելության հիմքի վրա, ինչպես Կարամանի, Սարուխանի, Այդընի, Ռամազանօղլուի և այլ բեյլիքներ կամ բեյություններ:

Դրանց թվում էր նաև Օսմանլը կամ Օսմանյան բեյլիքը (բեյությունը), որը գտնվում էր Անատոլիայի հյուսիս–արևմուտքում: Խորասանից թուրքական մյուս ցեղերի հետ Փոքր Ասիա ներխուժած և, ինչպես նշվեց, նրա հյուսիս–արևմտյան մասում հաստատված այս օղուզա–թուրքմենական ցեղախմբի ցեղապետն էր էրթուղրուլը: Նա սելջուկյան սուլթան Ալա ադ–Դին Քեյ Կուբադ I–ից ստացավ ավատակալվածք: 1281 թ. նրա մահվանից հետո, սուլթան Ալա ադ–Դին Քեյ Կուբադ III էրթողրուլին շնորհված այդ նույն ավատակալվածքը կամ իշխանակալվածքը շնորհեց նրա որդուն՝ Օսմանին: Իկոնիայի սուլթանը 1289 թ. նրան շնորհում է բեյի տիտղոս և նվիրում իշխանին արժանի թուր, դրոշ, թմբուկ և իշխանական մական: Օսմանը մոտ տասը տարի մեծ հմտությամբ կառավարում է իրեն տրված բեյլիքը և մեծ ջանքեր գործադրում այն ամրապնդելու և հզորացնելու ուղղությամբ:

Օսմանը, օգտվելով Իկոնիայի սուլթանության հետագա քայքայումից, 1299 թ. իր բեյլիքը հռչակեց անկախ պետություն:

Ահա այսպես ասպարեզ իջավ մի նոր թուրքական պետություն, որին պատմության կողմից վիճակված էր բացառիկ դեր խաղալ: Այդ պետությունը նրա հիմադիր Օսմանի անունով կոչվեց Օսմանլը, այսինքն Օսմանյան:

Ինչպես նշվեց, օսմանցիները Փոքր Ասիա էին տեղափոխվել Խորասանից և համարվում էին սովորական մի ցեղախումբ: Սակայն ինչ-

պես հաճախ է պատահում, հետագայում, երբ ստեղծվեց օսմանյան պետությունը, իսկ հետո նաև նաև Օսմանյան կայսրությունը, ապա փորձեր կատարվեցին օսմանյան դինաստիայի ծագումնաբանությունը գունազարդելու ուղղությամբ, օսմանցիների արմատները փնտրելով պատմության խորքերում և կապելով երևելի գործիչների հետ: Այդ հարցին հատուկ անդրադարձել է ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը, նշելով, որ «տարածված են ֆանտաստիկ պատմություններ օսմանյան դինաստիայի ծագման մասին»: Դրանցից մեկը, որը վկայված է արաբ պատմիչ Մակրիզիի կողմից, և որը Վ. Բարտոլդը համարում է «օսմանյան առասպել», օսմանյան դինաստիայի նախորդներին ուղղակիորեն կապում է Աբու Մուսլիմի հետ, որը VIII դարում վճռական դեր է խաղացել Օմայյան դինաստիայի տապալման և Աբբասյաններին խալիֆայության գահին նստեցնելու գործում: (Այդ մասին ավելի մանրամասն տես սույն եռահատորյակի առաջին հատորում): Ըստ մեկ այլ տարածված առասպելի, Օսմանին վերագրվում է արաբական ծագում, որը, իբր, սերում էր Հիջազի արաբներից, որոշ ժամանակ բնակվել էր Մադինայում և այդտեղից գնացել Փոքր Ասիա: Այս և դրա նման մյուս «ֆանտաստիկ առասպելների» նպատակն է եղել հետին թվով «ազնվացնել» օսմանյան դինաստիան և նրան վերագրել «բարձր» ծագում և այդ հանգամանքն օգտագործել քաղաքական նպատակների համար:

III. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ — ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (XIV–XV ԴԴ.)

1. Օսմանյան բեյլիքը որպես ագրեսիվ պետություն: Բեյության վերածումը սուլթանության

Նորաստեղծ պետությունն իր գոյության առաջին օրվանից իրեն դրսևորեց որպես ագրեսիվ պետություն և որդեգրեց ծավալապաշտական քաղաքականություն, որն, ըստ էության, ընկած էր նրա արտաքին քաղաքականության հիմքում, ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության կործանումը 1918 թվականին.:

Այս պետության նվաճողական քաղաքականությունն սկսվեց իրագործվել Փոքր Ասիայում և սկզբնական փուլում արևմտյան ուղղվածություն ուներ: Օսմանը, որը կառավարեց 1299 թ. մինչև 1326 թ., և նրա մահվանից հետո նրան փոխարինած որդին՝ Օրհանը (1326–1359 թթ.), սկսեցին նրանից, որ իրենց տիրույթներին միացրին մյուս բեյլիքների որոշ մասը, որը բարձրացրեց օսմանյան պետության կշիռը Փոքր Ասիայում: Նրանց ռազմական հաջողություններին նպաստեց այն հանգամանքը, որ 1307 թ. վերացավ Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը: Մյուս պատճառն այն էր, որ Բյուզանդական կայսրությունն օրեցօր թուլանում էր և այլևս ի վիճակի չէր սանձել իր տարածքներում հայտնված ռազմատենչ թուրքական ցեղերին և կանխել նրանց նոր տերտորիալ ձեռքբերումները, որոնք կատարվում էին գլխավորապես նրա տարածքների հաշվին:

Դեռևս 1301 թ. օսմանները, գրավեցին Ենիշեհիրը: Օսմանն իր նստավայրը, որը գտնվում էր Սողյութում, տեղափոխեց Ենիշեհիր, որը մոտ քառորդ դար եղավ այդ պետության մայրաքաղաքը:

Հատկապես հաջողակ գտնվեց Օրհանը, որը գահ բարձրանալուց անմիջապես հետո, 1326 թ. գրավեց Բյուզանդիային պատկանող Բուրսա քաղաքը և այն դարձրեց իր երիտասարդ պետության մայրաքաղաքը: Դրան հետևեց ռազմական հաջողությունների մի շարան: 1330 թ. օսմանցիների հարվածների տակ ընկավ Նիկիան, որը միացվեց օսմանյան պետությանը, իսկ 1337 թ, նույն ճակատագրին արժանացավ Նիկոմեդիան (Իզմիթը): XIV դարի 50–ական թվականներին նրանք հասան նոր և տպավորիչ հաղթանակների: Օրհանի զորքերը նվաճեցին Փոքր Ասիայի ամբողջ հյուսիս–արևմուտքը, դուրս եկան Մարմարայի և Սև ծովի ափերը, և 1352 թ. անցնելով Դարդանելը, մտան Եվրոպա:

XIV դարի վերջերին օսմանյան պետությունն իրեն միացրեց դեռևս իրենց կիսանկախությունը պահպանող մնացած բոլոր բեյլիքները:

Հերթը հասավ Բալկաններին, որի նվաճումն իրագործեցին Օրհանի որդին Մուրադ I (1359–1389 թթ.) և թոռը՝ Բայազիդ I (1389–1401 թթ.): Օսմանցիները 1362 թ. գրավեցին Ադրիանապոլիս քաղաքը, որը վերանվանեց Էդիրնե: Մուրադ I իր պետության մայրաքաղաքը Բուրսայից տեղափոխեց Էդիրնե: Ադրիանապոլիսի անկումը ծանր կորուստ էր Բյուզանդական կայսրության համար, որն ավելի վատթարացրեց նրա առանց այն էլ ծանր վիճակը: Դա արտահայտվեց նաև նրանում, որ

Բյուզանդական կայսրությունը դարձավ օսմանյան պետության հարկատուն:

Մուրադ I գահակալության շրջանում տեղի ունեցավ նաև մեկ կարևոր իրադաձություն: Նա առաջինն էր, որ պաշտոնապես ընդունեց սուլթան տիտղոսը: Մինչ այդ, թե՛ իր պապը՝ Օսմանը, և թե՛ հայրը՝ Օրհանը, կրում էին բեյ տիտղոսը: Օսմանյան պետությունն այնքան էր ուժեղացել, որ այդ ժամանակ արդեն նրա ղեկավարն իրեն կարող էր կոչել սուլթան: Դրան համապատասխան Օսմանյան բեյլիքը վերանվանվեց սուլթանության:

Արաբներից մյուս ժողովուրդներին, այդ թվում և թուրքերին, անցած այդ բառը նշանակում էր «իշխանություն», «հզորություն»: Ավելի լայն առումով «սուլթան» նշանակում է «հզոր տիրակալ»:

Հատկանշական է, որ Մուրադ I հաջորդած օսմանյան պետության բոլոր 33 ղեկավարները, ընդհուպ մինչև վերջինը՝ Մուհամմադ VI Վահիդ ադ–Դինը, կրել են այդ տիտղոսը, նույնիսկ այն ժամանակ, երբ օսմանյան պետությունը դարձել էր Օսմանյան կայսրություն:

Ներխուժելով Բալկաններ, օսմանցիները նվաճեցին Բուլղարիան, ապա մտան Սերբիա, որտեղ Կոսովոյի դաշտում 1389 թ. տեղի ունեցած ճակատամարտում, Մուրադ I զորքերը պարտության մատնեցին սերբերին: Նրանց ենթակա դարձան, թեև ոչ ամբողջությամբ, նաև Բոսնիան և Ալբանիան:

Հունգարիան փորձեց կազմակերպել խաչակրաց արշավանք օսմանցիների դեմ և այդպես կանխել նրանց ներթափանցումը Կենտրոնական Եվրոպա, սակայն դա նրան չհաջողվեց: 1396 թ. Նիկոպոլիս քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հունգարացիները և նրա դաշնակիցները ծանր պարտություն կրեցին: Դրանից հետո Վալախիան ևս դարձավ Օսմանցիների վասալը:

2. Մեհմեդ II Ֆաթիհը և Բյուզանդական կայսրության անկումը

Արևմտյան ուղղությամբ կատարված արշավանքների մեջ կարևոր էր նաև օսմանցիների ներխուժումը Հունաստան սուլթան Բայազիդ I գլխավորությամբ և Թեսալիայի գրավումը:

Այսպիսով, օղակն ավելի ու ավելի էր սեղմվում Բյուզանդական կայսրության շուրջը, ավելի ճիշտ նրա մայրաքաղաքի՝ Կոնստանդնուպոլսի շուրջը, այսինքն այն, ինչ մնացել էր կայսրությունից:

Սակայն տեղի ունեցան իրադարձություններ, որոնք խառնեցին օսմանցիների խաղաքարտերը և կասեցրին նրանց հետագա նվաճումները:

1402 թ. Փոքր Ասիա ներխուժեցին Լանկ Թիմուրի հորդաները: Լանկ Թիմուրը Միջին Ասիայում ստեղծել էր մի հզոր պետություն: Դուրս գալով Միջին Ասիայից և շարժվելով դեպի Փոքր Ասիա, նա ճանապարհին ոչնչացրեցեց բազմաթիվ մեծ ու փոքր պետություններ, հրի մատնեց քաղաքներ ու գյուղական բնակավայրեր, ահ ու սարսափ տարածելով տարածաշրջանի ժողովուրդների մեջ:

Փոքր Ասիայում նրա զորքերն անխուսափելիորեն պետք է բախվեին և, իրոք, բախվեցին օսմանյան սուլթան Բայազիդ I զորքերի հետ: Նրանց միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1402 թ. Անգորայի (այժմ Անկարա) մոտ: Անկարան գրավել էր Օրհանը դեռևս 1356 թ.: Այս արյունահեղ ճակատամարտն ավարտվեց օսմանցիների խայտառակ պարտությամբ: Սուլթան Բայազիդը և նրա երկու որդիները գերի ընկան:

Շարունակելով իր հաղթարշավը, Լանկ Թիմուրը հասավ մինչև Էգեյան ծով, ճանապարհին կործանելով բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ, ամայացնելով նվաճած տարածքները և գերեվարելով ու Միջին Ասիա քշելով բազմաթիվ մարդկանց: Նա օսմանյան պետությունը տրոհեց և բաժանեց առանձին մասերի: Այդ ձևով նա փորձեց ջլատել այդ պետությունը և զրկել նրան որևէ հետագա դերակատարումից տարածաշրջանում: Այդ բոլորից հետո նա վերադարձավ Միջին Ասիա:

Լանկ Թիմուրի հասցրած ծանր հարվածներից հետո օսմանյան պետությունը դադարեց միասնական պետություն լինելուց և, բնականաբար, երկար ժամանակ հնարավորություն չուներ նվաճողական քաղաքականություն վարել: Օսմանյան ավագանու առջև կանգնած էր պետության միասնականությունը և նախկին հզորությունը վերականգնելու խնդիրը: Ի վերջո դա հաջողվեց իրագործել սուլթան Մուրադ II, որը օսմանյան գահակալն էր 1421–1451 թթ. և նրա որդուն՝ Մեհմեդ II (1451–1481 թթ.):

Մուրադ II մեծ ուշադրություն դարձրեց բանակի հզորության վերականգնմանը: Նրա անվան հետ է կապված նոր հետևակի՝ **ենիչերի** զորքի ստեղծումը, որն աչքի էր ընկնում իր դաժանությամբ և պատուհաս դարձավ նվաճված ժողովուրդների գլխին:

Նրա անվան հետ է կապված նաև մանկահավաքի՝ դնշիրմեի համակարգի նորամուծությունը, որը սկսվեց կիրառվել 1438 թ.: Դրա էությունը կայանում էր հետևյալում: Սուլթանի հրամանով պարբերաբար բռնի կերպով հավաքագրում էին քրիստոնյա երեխաներին, նրան դարձնում էին մուսուլման, բնակեցնում թուրքական ընտանիքներում և նրանց պատրաստում օսմանյան բանակում ծառայելու համար: Դառնալով հասուն, նրանց պարտադիր ծառայության էին վերցնում ենիչերիական զարքերում:

Դնշիրմեի ինստիտուտը նույնպես մի իսկական պատուհաս էր քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, գլխին:

Իր միասնականությունը և հզորությունը վերականգնած օսմանյան պետությունը վերսկսեց իր նվաճողական քաղաքականությունը, որի գլխավոր նպատակն այդ պահին դարձավ Կոնստանդնուպոլսի գրավումը և Բյուզանդական կայսրության վերացումը: Դա հաջողվեց իրագործել 1453 թ. մայիսի 29–ին, երբ Մեհմեդ II–ի երկուհարյուրհազարանոց զորքերը գրոհով գրավեցին Կոնստանդնուպոլիսը:

Բյուզանդական կայսրության անկումը բացասական հետևանքներ ունեցավ ոչ միայն Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի, այլև համաշխարհային պատմության ու քաղաքակրթության զարգացումների վրա: Կարելի է ասել, որ նա փոխեց համաշխարհային պատմության զարգացման ընթացքը:

Մեհմեդ II–ն իր տարած այդ պատմական հաղթանակի համար կոչվեց «Ֆաթիհ»՝ նվաճող: Նա բյուզանդական մայրաքաղաքը դարձրեց իր բարձրացող և կայսրություն վերածվելու նախաշեմին գտնվող հզոր պետության մայրաքաղաքը, որը կոչվեց Ստամբուլ: Նա իր մայրաքաղաքի կարգավիճակը պահպանեց մինչև Օսմանյան կայսրության կործանումը և քեմալականների կողմից Անկարան պետության մայրաքաղաք հռչակելը:

Վերացնելով Բյուզանդական կայսրությունը, Մեհմեդ II գրավեց նորանոր տարածքներ: 1458 թ. նա գրավեց Աթենքի դքսությունը, մեկ տարի անց լիովին իրեն ենթարկեց Սերբիան, ապա նաև Մորեան: Իսկ 1461 թ. նրա հերթական զոհը դարձավ Սև ծովի ափերին հույների կողմից հիմնված Տրապիզոնի կայսրությունը: Շարունակելով իր ռազմական գործողությունները, որի ժամանակ հաջողությունը մշտապես ուղեկցում էր նրան, Մեհմեդ II XV դարի 60–70–ական թվականներին իր վերահսկողությունը հաստատեց Ղրիմի խանության վրա, որը դարձավ

նրա վասալը, Մոլդովայի, Վալախիայի, Բոսնիայի և այլ տարածքների վրա: Նա մոտ 16 տարի տևած պատերազմի ընթացքում (1463–1479 թթ.) պարտության մատնեց Վենետիկին, որը օսմանյան սուլթանին զիջեց էգեյան ծովի մի շարք կղզիներ, վճարեց մեծ ռազմատուգանք և պարտավորվեց ամեն տարի նրան հարկ վճարել: Ոգևորված այդ ռազմական հաջողություններով, Մեհմեդ II արդեն երազում էր Իտալիան գրավելու մասին: Եվ ի կատարումն այդ երազանքի, նրա զորքերը 1480 թ. ներխուժեցին Հարավային Իտալիա: Բայց այս անգամ ճակատագիը երես էր թեքել նրանից: Իտալացիներին հաջողվեց նախ կասեցնել օսմանյան զորքերի առաջխաղացումը, ապա ստիպել նրանց հեռանալ Իտալիայից:

Մեհմեդ II վախճանվեց 1481 թ., թողնելով հարուստ ժառանգություն իր հաջորդներին, որոնք հետագայում փորձեցին շարունակել նվաճումներն արևմտյան ուղղությամբ, սակայն որևէ շոշափելի հաջողության չհասան, եթե չհաշվենք Հունգարիայի մի մասի նվաճումը: Իսկ Վիեննայի պատերի տակ նրանք պարտություն կրեցին:

XV դարի վերջերից և XVI դարի սկզբներից օսմանյան սուլթանների նվաճողական քաղաքականության մեջ գերակա ուղղություն է դառնում արևելյան ուղղությունը, որը կարելի է անվանել արաբական ուղղություն:

Սակայն նախքան այդ հարցին անդրադառնալը, հարկ ենք համարում կանգ առնել մի կարևոր հարցի լուսաբանության վրա:

IV. «ԹՈՒՐՔ» ԷԹՆՈՍ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԵՐԺԵԼԻ ՏԵՍԱԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Օսմանյան նվաճումների հետևանքով թուրքական պետության սահմաններում հայտնվեցին բազմաթիվ ժողովուրդներ, որոնք ունեին տարբեր ծագում, խոսում էին տարբեր լեզուներով, դավանում տարբեր կրոններ, ունեին իրենց սեփական պատմությունը և այլն: Նվաճված ժողովուրդների շարքում հայտնվեցին ինչպես քրիստոնյա, այնպես էլ մուսուլման տարբեր ժողովուրդներ՝ ասորիները, հայերը, հույները, սերբերը, հունգարացիները, ռումինները, վրացիները, լազերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Օսմանյան պետությունը էթնիկական առումով դարձել էր մի իսկական խառնարան, որտեղ կողք կողքի ապրում

էին զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող բազում ժողովուրդներ: Սակայն նրանք բոլոր հպատակ էին օսմանցիներին, օսմանյան թուրքերին, որոնք իրենց մշակութային, քաղաքական և սոցիալ–տնտեսական զարգացման մակարդակով գտնվում էին աստիճանակարգի ստորին սանդղակի վրա և այդ առումով զիջում էին իրենց ենթակա համարյա բոլոր ժողովուրդներին և էթնիկական խմբերին:

Այս խառնարանում, անշուշտ, տեղի էին ունենում փոխազդեցություններ, կրոնափոխություն, ուծացում և այլ գործընթացներ, որը միանգամայն բնական է: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ օսմանյան պետությունը բռնապետություն էր, որտեղ հալածանքները էթնիկական և կրոնական հողի վրա բարձրացվել էին պետական քաղաքականության մակարդակի:

Այդուհանդերձ, յուրաքանչյուր էթնիկական խումբ կամ ժողովուրդ ուներ իր էթնիկ ինքնությունը, և, որ շատ կարևոր է, չնայած քաղաքական և կրոնական հալածանքներին, նրանք ձգտում էին պահպանել իրենց դիմագիծը: Ուստի այս հարցերը քննարկելիս անհրաժեշտ է մեծ զգուշավորություն և հակացուցված են հապշտապ, մակերեսային եզրակացությունները:

Ցավոք սրտի, որոշ ուսումնասիրողների աշխատություններում հաճախ են հանդիպում նման մոտեցումներ:

Դրա օրինակներից մեկը ռուս պատմաբան Լ. Ս. Վասիլևի «Արևելքի պատմությունը» աշխատության առաջին հատորում տեղ գտած տեսակետն է: «Թուրք–օղուզները,— գրում է նա,— որոնք կազմում էին սուլթանության էթնիկապես տիրապետող կորիզը, և աստիճանաբար նրանց ազդեցության տակ թուրքացող տեղական բնակչությունը՝ հույները, հայերը, մասամբ նաև վրացիները և պարսիկները, ահա այն կոմպոնենտները, որոնց հիման վրա ձևավորվեց Թուրքիայի ապագա բնակչությունը և ամենից առաջ իրենք թուրքերը»: Հենվելով հայերի հույների, վրացիների և պարսիկների թուրքացման իր խիստ վիճելի տեսակետի վրա, Լ. Վասիլևն ընթերցողին է մատուցում իր հետևյալ եզրակացությունը. «**Այդ պատճառով էլ թուրքեր, բառի լայն իմաստով, կարելի է վերապահումներով անվանել Թուրքիայի ամբողջ բնակչությունը**» (էջ 301):

Նման տեսակետը, թեև «վերապահումներով», այդուհանդերձ ոչ գիտական է, հիմնավորված չէ և արհեստական, մտացածին մի կառույց է: Կրկնում ենք, ընդունելով հանդերձ, որ տեղի էր ունենում փոխազդե-

ցություն, կրոնափոխություն, անգամ ազգափոխություն, այնուամենայնիվ, այդ առօրյա գործընթացները հիմք չեն կարող հանդիսանալ նման մի արտառոց եզրակացության համար, առ այն, որ օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները և էթնիկական խմբերը՝ արաբները, հայերը, հույները, վրացիները և այլն, թուրքեր են: Այստեղ դրությունը չի փրկում և չի էլ կարող փրկել հեղինակի ոչ «վերապահումները» և ոչ էլ «բառի լայն իմաստով» ձևակերպումը:

Հայտնի է, որ բոլոր կայսրություններն էլ բազմազգ են եղել, նրանց տարածքներում բնակվել են տարբեր էթնիկական խմբերի և դավանանքների պատկանող ժողովուրդներ: Հայտնի է, նաև, որ բոլոր կայսրություններում էլ տեղի են ունեցել ուծացման և կրոնափոխության երևույթներ: Այդպես էր ռուսական կայսրությունում, որը համարվում էր ժողովուրդների բանտ: Բայց երբեք, անգամ ռուսական ամենամոլի նացիոնալիստները կամ սևհարյուրակայինները, չեն փորձել, օգտվելով Լ. Վասիլևի ձևակերպումից, Ռուսաստանի ամբողջ բնակչությունը համարել ռուսներ, լինի դա այդ բառի լայն, թե նեղ իմաստով: Այստեղ հայը համարվում էր հայ, վրացին՝ վրացի, թաթարը՝ թաթար և այլն:

Նույնը կարելի է ասել նաև Բրիտանական կայսրության և պատմության մեջ գոյություն ունեցած այլ կայսրությունների մասին:

Լ. Վասիլևի տեսակետը կիրառելի չէ անգամ օսմանյան կայսրության մեջ ընդգրկված մուսուլմանական ժողովուրդների՝ արաբների, պարսիկների և քրդերի դեպքում, թեև իսլամն առանձին ազգություն չի ընդունում, այլ քարոզում է «իսլամական ազգի» գաղափարը: Նույնիսկ այդ դեպքում արաբները, պարսիկները և մուսուլմանական մյուս ժողովուրդները պահպանել են իրենց էթնիկ տարբերությունը կամ ինքնությունը, որի վկայությունն է նրանց ստեղծած բարձր մշակույթը, որը հանդիսանում է համաշխարհային մշակույթի հարստություններից մեկը:

Բարեբախտաբար այս տեսակետը չունի շատ հետևորդներ և անընդունելի է շատ արևելագետ մասնագետների համար: Դրանց թվին է պատկանում Ֆ. Հիթթին: Նա առանձնացնում է Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցած ռայյաների ինստիտուտի հարցը: «Ռայյա» արաբերեն բառ է, որ նշանակում է և՛ «հոտ» (անասունների), և՛ «արածացնել»: Ֆ. Հիթթին նշում է, որ Օսմանյան կայսրության «ենթակաները ռայյաներ էին, հոտեր, որոնց պետք էր հովվապետություն անել, խուզել և կթել»: Այս հասկացությունն առաջին հերթին կիրառվում էր կայսրության ենթակա քրիստոնյաների՝ հայերի, հույների, սլավոնների և այլ

քրիստոնյա հպատակների կապակցությամբ, այսինքն նրանց նկատմամբ, ովքեր Լ. Վասիլևի կողմից համարվում էին «թուրք» հասկացողության օրգանական մասը: Իսկ դա անհեթեթություն է:

Այս առումով Լ. Վասիլևի տեսակետին տրամագծորեն հակադիր է նաև Դ. Երեմեևի կարծիքը: Նա նշում է, որ «Ռումի սուլթանությունը շատ խայտաբղետ էր էթնիկական տեսակետից. այնտեղ ապրում էին ծագումով տարբեր թյուրքական ցեղեր, **էթնիկապես միմյանցից և թյուրքերից հեռու բնիկ ժողովուրդներ (հայեր, վրացիներ, հույներ, քրդեր, արաբներ և այլն)**» (ընդգծումն մերն է — Ն. Հ.):

Հարկ է նկատի ունենալ մի հանգամանք ևս, որը հիմք է տալիս պնդելու, որ անգամ իրենք, օսմանյան կառավարողները, վերևում թվարկած բոլոր ժողովուրդներին չեն մտցրել «թուրք»՝ հասկացողության մեջ: Ընդհակառակը, նրանք շատ հստակ տարբերակում են մտցրել նրանց միջև: Դրա վկայությունն է «միլլեթների» համակարգի ստեղծումը Օսմանյան կայսրությունում: Այդ համակարգը խարսխված էր էթնո–կրոնական սկզբունքի վրա: Ըստ այդմ, օսմանյան իշխանությունը ճանաչում էր հունական միլլեթը, հայկական միլլեթը, հրեական միլլեթը, ասորական (սիրիական) միլլեթը և այլն, որոնք մի կողմից էթնիկական–դավանական տարբերակման արտահայտություն էին, այդ տարբերակման արտաքին դրսևորում, իսկ մյուս կողմից՝ որոշակի, թեև խիստ սահմանափակ լիազորություններով օժտված մի համակարգ, որը տնօրինում էր տվյալ միլլեթի ներքին որոշ ազգային գործառույթներ:

Վերջապես անհրաժեշտ ենք համարում կանգ առնել «թուրք» հասկացողության մեկ այլ կիրառման վրա: Թուրքական, այդ թվում և թուրքմենական և օղուզական ցեղերի մոտ վաղնջական ժամանակներից ներցեղային հարաբերությունների մեջ ընդունված է եղել հարաբերությունների պարզություն ցեղապետի և ցեղախմբի անդամների միջև: Ցեղապետը անհաղթահարելի պատնեշներով պատսպարված չէր ցեղի հասարակ անդամներից, նա հասանելի ու մատչելի էր նրանց: Իհարկե, սա չի նշանակում, թե նրանց միջև գոյություն չի ունեցել անհավասարություն, այդ թվում և գույքային–ունեցվածքային:

Սակայն հարաբերությունները նրանց միջև փոխվեցին, երբ ստեղծվեցին սելջուկյան երկու պետությունները՝ Սելջուկյան Մեծ սուլթանությունը և Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը: Սելջուկյան սուլթանները և նրանց շուրջը համախմբված ցեղային ավագանին աստիճանաբար հեռանում, անջատվում, ապա և կտրվում էին իրենց ցեղակից-

ներից: Դեռ ավելին, նրանք իրենց քոչվոր ցեղակիցների վրա սկսում են նայել վերնից: Ինչպես նշում է Դ. Երեմեևը, «Հենց սելջուկյանների դարաշրջանում էր, որ «թյուրք» բառը դարձավ նախատական՝ որպես «ռամիկի», «պլեբեյի» հոմանիշ»:

Այդ հարցին անդրադարձել է նաև թուրք պատմաբան Ի. Քաֆեսօղլուն: «Սուլթանները,— գրում է նա,— կտրվեցին օղուզական զանգվածներից, որոնց ուժերով նվաճվել էր կայսրությունը. նրանք արդեն ոչ թե ցեղերի նախկին առաջնորդներ էին, այլ իսլամի սուլթաններ, որոնք հաճախ անարդարացի էին վարվում թուրքմենների հետ»:

Պատմության հարցերի, այդ թվում և էթնոգենեզի ու էթնիկական խնդիրների ուսումնասիրությանը և լուսաբանությանը պետք է մոտենալ պատասխանատվության մեծ զգացումով: Այստեղ շինծու, արհեստական կառույցները կարող են միայն խառնաշփոթ առաջացնել և գործին վնասել:

Գլուխ երկրորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ (XVI Դ.)

I. ՄԱՐՋ ԴԱԲԻՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ՍԻՐԻԱՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ

1. Օսմանյան սուլթանության նվաճողական քաղաքականության արևելյան ուղղությունը

Օսմանյան սուլթանությունը, XIV–XV դարերում հիմնականում ավարտելով իր նվաճումները արևմտյան ուղղությամբ, վերջ տալով Բյուզանդական կայսրության գոյությանը, հաստատվելով Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան մասերում և Բալկաններում, ներխուժելով Կենտրոնական Եվրոպա, փոխեց իր նվաճողական քաղաքականության ուղղությունը: Արևմուտքում՝ Եվրոպայում, թուրքերն այլևս հեռանկարներ չունեին նոր երկրներ գրավելու տեսակետից: Ուստի նրանց ռազմավարության մեջ գերակա ուղղությունը դարձավ արևելյանը, նպատակակետ ունենալով Հայաստանի, Ասորիքի և արաբական երկրների նվաճումը: Օսմանյան պետությունը այստեղ նույնպես հասավ նոր հաջողությունների, որի շնորհիվ մեծապես ընդարձակվեցին նրա սահմանները ի հաշիվ նոր նվաճումների:

Արևելյան նվաճողական քաղաքականության նախաձեռնողը եղավ սուլթան Սելիմ I (1512–1520), որը պատմության մեջ մտել է Յավուզ՝ Ահեղ մականունով: Նրա գահակալության տարիներին օսմանյան պետությունն ավելի հզորացավ և դարձավ տարածաշրջանի ամենաու-

ժեղ պետությունը: Նրա անվան հետ է կապված արաբական երկրների նվաճման և օսմանյան տիրապետության հաստատման սկիզբը:

Դեպի արևելք տանող ճանապարհին նրա միակ ախոյանը Սեֆյան Պարսկաստանն էր, որի շահ Իսմայիլը նույնպես ուներ քաղաքական մեծ հավակնություններ: XVI դարի սկզբներին նրա կազմի մեջ, բացի բուն Պարսկաստանից, մտնում էին նաև Հայաստանը, Վրաստանը, Ատրպատականը և Միջագետքը: Բախումն այս երկու հզոր պետությունների միջև անխուսափելի էր: 1514 թ. Չալդրանի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Սելիմ I և շահ Իսմայիլի զորքերի միջև, որն ավարտվեց պարսկական զորքի պարտությամբ: Թուրքական տիրապետության տակ անցավ Արևմտյան Հայաստանը, Հյուսիսային Պարսկաստանը, Միջագետքը: Թուրքական զորքերն ընդհուպ մոտեցան արաբական երկրներին: Սկսվեց արաբական երկրների նվաճումը օսմանյան պետության կողմից:

Առաջին հարվածը հասցվեց Սիրիային, որն այդ ժամանակ գտնվում էր եգիպտական մամլուքների տիրապետության տակ:

Մամլուք սուլթան Կանսոհ ալ–Գուրիի համար ստեղծվեց շատ ծանր վիճակ: Նա, կանխատեսելով թուրքական վտանգը արաբական երկրներին և ձգտելով՝ դիմագրավել օսմանյան ագրեսիային, գաղտնի դաշինքի մեջ էր մտել Պարսկաստանի շահ Իսմայիլի հետ: Սակայն այս վերջինիս պարտությունը Չալդրանի ճակատամարտում խառնեց նրա խաղաքարտերը և նա հասկացավ, որ հույս չի կարող դնել պարսկական շահի վրա: 1516 թ. գարնանը նա փորձեց հանդես գալ որպես միջնորդ Սելիմ I և շահ Իսմայիլի միջև, այն հույսով, որ դա կարող է կանխել թուրքական զորքերի ներխուժումը Սիրիա: Սակայն նա ուներ մի գաղտնի նպատակ ևս: Իր այդ միջնորդության նպատակն էր օգնել պարսիկներին, որոնց նա այդ ժամանակ չէր համարում այնպիսի վտանգավոր հակառակորդ, ինչպես թուրքերին:

Սակայն նրա այդ առաքելությունը ձախողվեց: Սելիմ I իր լրտեսների միջոցով իմացավ մամլուքների այդ գաղտնի մտադրության մասին: Եվ երբ Կանսոհի խոսնակը եկավ սուլթան Սելիմի մոտ բանակցություններ վարելու հույսով, ապա սուլթանը սափրել տվեց նրա մորուքը, որը մեծ վիրավորանք և ստորացում էր համարվում, նստեցրեց կաղ էշի վրա և հետ ուղարկեց նրան իր տիրոջ, այսինքն մամլուք սուլթան Կանսոհի մոտ, իսկ նրան ուղեկցող անձանց գլխատեց:

Օսմանյան սուլթանը պատերազմ հայտարարեց Եգիպտոսին:

2. Մարջ Դաբիքի ճակատամարտը և Սիրիայի նվաճումը

Թուրքական և մամլուքյան բանակների միջև գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 1516 թ. օգոստոսին 24–ին, Հալեբից հյուսիս գտնվող Մարջ Դաբիք բնակավայրի մոտ: Մամլուքյան բանակը բավականին լավ պատրաստված և մարտունակ բանակ էր և հայտնի չէ, թե ճակատամարտն ինչպիսի ելք կունենար, եթե չլիներ Կանսոհի մի քանի զորավարների դավաճանությունը: Ինքը, 75–ամյա Կանսոհը, չնայած իր առաջացած տարիքին, կռվում էր քաջաբար և հմտորեն ղեկավարում մարտը: Ճակատամարտի վճռական պահին, մամլուքների բանակի ձախ թևի հրամանատար, Հալեբի նահանգապետ Խաիր բեյը դավաճանեց Կանսոհին և անցավ թուրքերի կողմը: Նույն կերպ վարվեց նաև Սիրիայի մյուս կարևոր շրջանի՝ Համայի կառավարիչ Ջան Բիրդի ալ–Ղազալին: Դրան ավելացրած նաև այն, որ մարտում ընկավ սուլթան Կանսոհը: Նրա զոհվելը և երկու կարևոր զորահրամանատարների դավաճանությունը, պատերազմի ելքը որոշեցին հօգուտ թուրքերի:

Սելիմ I հաղթականորեն մտավ Հալեբ, որը բոլոր ժամանակներում կարևոր դեր է խաղացել Սիրիայի պատմության մեջ, լինելով նրա քաղաքական, տնտեսական և մշակութային ակնառու կենտրոններից մեկը:

Մարջ Դաբիքի ճակատամարտը և արաբների պարտությունը պատմության մեջ մտել է որպես արաբական երկրները թուրքերի կողմից նվաճելու և արաբական աշխարհի վրա օսմանյան տիրապետությունը հաստատելու սկիզբ: Նա խոր հետք է թողել արաբների հիշողության մեջ և դարեր շարունակ նրանք երազել են ռևանշի մասին:

Սելիմ I իր զորքի հետ Հալեբում մնաց մինչև հոկտեմբեր ամիսը: Զորքին որոշ հանգիստ տալուց և համալրելուց հետո, նա Հալեբից դուրս եկավ և շարժվեց Դամասկոսի վրա: Մարջ Դաբիքի մոտ արաբների կրած պարտությունից հետո, Դամասկոսը գրավելն այլևս առանձին դժվարություն չէր ներկայացնում: Եվ, իրոք, Սելիմ I, առանց որևէ բարդության գրավեց Օմայյան խալիֆաների մայրաքաղաքը: Դրան հաջորդեց ամբողջ Սիրիայի գրավումը:

Խաիր բեյը նշանակվեց Հալեբի և նրա շրջակա տարածքների կառավարիչ, իսկ եգիպտական սուլթանին դավաճանած, Համայի կառավարիչ Ջան Բիրդի ալ–Ղազալին 1518 թ. նույնպես ստացավ բավակա-

նին բարձր պաշտոն, նա նշանակվեց Սիրիայի փոխարքա: Սակայն ալ–Ղազալին դժգոհ էր դրանից և երբ 1520 թ. մահացավ սուլթան Սելիմ I, նա իրեն հռչակեց անկախ և հրաժարվեց ճանաչել օսմանցիների գերիշխանությունը: Ցանկանալով ամրապանդել իր դիրքերը և օսմանցիների հավանական հարձակողական գործողությունների դեպքում ունենալ դաշնակից, ալ–Ղազալին դիմեց դավաճանության գծով իր գործընկեր Խաիր բեյին նույն կերպ վարվել, այսինքն հրաժարվել ճանաչել օսմանյան գերիշխանությունը և իրեն հայտարարել անկախ: Սակայն Սելիմ I փոխարեն գահին նստած սուլթան Սուլեյմանը առանց հապաղելու դիմեց վճռական ռազմական և պատժիչ գործողությունների: Նա զորքերը մտցրեց Դամասկոս և իրավունք տվեց իր ենիչերիական զորքին ավերել, կողոպտել, թալանել և սպանել: Նրա գործողություններն իրենց դաժանությամբ հիշեցնում էին Լանկ Թիմուրի առասպելական և ահարկու պատիժները: Այդ կերպ սուլթանը հնազանդեցրեց Դամասկոսը, դաս տալով ապստամբության և անհնազանդության սիրահարներին:

Սակայն Սիրիայի նվաճումը միայն առաջին քայլն էր: Սիրիան դարձավ թուրքերի հենարանը, որտեղից նրանք այնուհետև սկսեցին արաբական մյուս երկրների նվաճումը:

II. ՌԻԴԱՆԻԵԱՑԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ

1. Սելիմ I Ահեղի առաջարկությունները Եգիպտոսի սուլթան մամլուք Թուման բեյին

Արաբական երկրները նվաճելու ճանապարհին Սիրիայից հետո հաջորդ քայլ եղավ Եգիպտոսի նվաճումը: Եվ դա բնական էր: Սիրիան, ինչպես նշվեց, գտնվում էր եգիպտական մամլուքների տիրապետության տակ: Ձախջախելով մամլուքներին և իր տիրապետությունը հաստատելով Սիրիայի վրա, սուլթան Սելիմ I չէր կարող կես ճանապարհին կանգ առնել, նա պետք է կատարեր նաև հաջորդ քայլը՝ իր տիրապետությունը հաստատեր Եգիպտոսի վրա, եթե նա մտադիր էր գրավել ամբողջ արաբական աշխարհը: Իսկ քանի որ նա լի էր վճռականությամբ իրագործել այդ ծրագիրը, ուստի և նա կատարեց այդ քայլը ևս:

Թուրքական զորքերի Եգիպտոս ներխուժելու նախօրյակին, այստեղ տեղի էին ունեցել մի շարք փոփոխություններ: Մահացած Կանսոհի փոխարեն 1516 թ. հոկտեմբերի 17–ին Կահիրեում սուլթան էր հռչակվել Թուման բեյը, որը լի էր վճռականությամբ պաշտպանել Եգիպտոսը թուրքական ներխուժումից: Բացառված չէ, որ նա այլ, ավելի հեռուն գնացող հավակնոտ հույսեր էլ էր փայփայում:

Սուլթան Սելիմ I, նախքան պատերազմական գործողություններ սկսելը, 1516 թ. դեկտեմբերին դեսպաններ ուղարկեց Թուման բեյի մոտ, որոնք նրան փոխանցեցին օսմանյան սուլթանի նամակը: Նամակը պարունակում էր մի շարք պահանջներ, որոնց կատարման դեպքում սուլթանը Թուման բեյին տալիս էր համապատասխան խոստումներ: Սելիմ I պահանջում էր Թուման բեյից, որ ուրբաթօրյա աղոթքի՝ խուտբայի ժամանակ, հիշատակվի իր՝ Սելիմի անունը: Մյուս կարևոր պահանջը կայանում էր նրանում, որ Թուման բեյը համաձայնվի, որպեսզի դրամ հատվի Սելիմի պատկերով: Այդ պահանջները կատարելու դեպքում օսմանյան սուլթանը համաձայնվում էր Թուման բեյին թողնել որպես Եգիպտոսի փոխարքա, այսինքն օսմանյան սուլթանի տեղապահ:

Արաբ պատմիչ Իբն Իյասը «Քիթաբ թարիխ Մըսրի» («Գիրք Եգիպտոսի պատմության») երկասիրության մեջ, որը հանդիսանում է սույն իրադարձությունների գլխավոր աղբյուրը, վկայում է, որ Թուման բեյին ուղղված իր նամակում սուլթան Սելիմ I դրսևորել է կոպտություն և արհամարհանք: Դրա մասին են խոսում նամակի այն տողերը, որտեղ նա, իրեն ներկայացնելով քսան թագավորների ժառանգ, հակադրում է Թուման բեյին, որին համարում է «ստրուկ, որին գնում և վաճառում են»:

Թուման բեյը սուլթան Սելիմի դեսպանների միջոցով ստացված նրա նամակի երկու պահանջն էլ հրաժարվեց կատարել: Դեռ ավելին, նրա հրամանով օսմանյան սուլթանի դեսպանները սպանվեցին:

Հարց է ծագում, արդյո՞ք օսմանյան սուլթանը սպասում էր կամ հավատացած էր, որ Եգիպտոսի կառավարիչը կընդունի և կկատարի իր պահանջները: Կարծում ենք, որ ոչ: Դրական պատասխանի սպասողը այդ աստիճանի չէր ստորացնի նրան, նշելով, թե «Դու ստրուկ ես, որին գնում և վաճառում են»: Այդ մասին է վկայում նաև այն պարագան, որ նրա դեսպանները Կահիրե էին հասել 1516 թ. դեկտեմբերի 16–ին, հենց այն նույն օրը, երբ Սուլթան Սելիմ I իր զորքի գլուխն անցած դուրս է գալիս Դամասկոսից և շարժվում Կահիրեի ուղղությամբ: Այսինքն նա Եգիպտոսի վրա հարձակվում է, չսպասելով պատասխանի, երբ դեռ չէր

ստացվել Թուման բեյի ժխտական պատասխանը նրա առաջարկություններին, և այդ ժամանակահատվածում չէր էլ կարող ստացվել:

Օսմանյան սուլթան Սելիմ I զորքերը Սիրիայից դուրս եկան 1516 թ. դեկտեմբերին, ուղղություն վերցնելով դեպի Կահիրե:

Ճանապարհին երկու կարևոր իրադարձություն տեղի ունեցավ:

Մտնելով Պաղեստին, Սելիմ I ուխտագնացություն կատարեց Երուսաղեմ, ալլահից հայցելով բարյացակամ վերաբերմունք և օգնություն: Նա դրանով ձգտում էր նաև դրական տպավորություն թողնել արաբների, նրանց ղեկավարների և ուլեմների վրա:

Մյուս իրադարձությունը եգիպտական և օսմանյան զորքերի միջև առաջին ընդհարումն էր Պաղեստին տարածքում, Ղազայի մոտ: Թուման բեյը հույս ուներ կասեցնել օսմանյան զորքերի հետագա առաջխաղացումը Կահիրեի ուղղությամբ: Սակայն դա նրան չհաջողվեց: Եգիպտական առաջապահ ուժերը դեկտեմբերի 19–ին տեղի ունեցած ճակատամարտում գլխովին ջախջախվեցին: Բայց դա չի կարելի համարել գլխավոր ճակատամարտը եգիպտոսի մամլուքների և օսմանյան բանակի միջև:

2. Ռիդանիյայի ճակատամարտը և Եգիպտոսի գրավումը

Սելիմ I 1517 թ. հունվարին ներխուժեց Եգիպտոս: Հունվարի 23–ին նրա զորքերն արդեն Կահիրեի մատույցներում էին: Մահացու վտանգ կախվեց մամլուքների իշխանության և անձամբ սուլթան Թուման բեյի գլխին: Երկու բանակները՝ օսմանյան և մամլուքյան, ճակատ ճակատի հանդիպեցին Կահիրեի մերձակայքում գտնվող Ռիդանիյայի մոտ: Դա եղավ վճռական ճակատամարտը: Մամլուքյան բանակը կռվում էր քաջաբար, իսկ Թուման բեյը իր զինվորներին զանազան խոստումներով ոգևորում ու քաջալերում էր:

Ինչ վերաբերում է ժողովրդական զանգվածներին, ապա նրանք անտարբեր էին այդ բոլորի հանդեպ և բնավ էլ շահագրգռված չէին մամլուքների հաղթանակով: Դա բացատրվում է մամլուքների դաժան և կեղեքիչ քաղաքականությամբ, որ հարյուրամյակներ շարունակ նրանք վարում էին եգիպտացի գյուղացիների, արհեստավորների, քաղաքային բնակչությամբ նկատմամբ: Ուստի նրանք ակամայից, ինչ–որ մի տեղ, օսմանցիներին, իրենց հակառակորդների հակառակորդներին դիտում

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ
ՕՍՄԱՆՅԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔՈ
1516-1918 թթ.
ԲԻՍԿԱՅԱՆ ԾՈՎ
ՖՐԱՆՍԻԱ
ԻՏԱԼԻԱ
ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
ԿՈՐՍԻԿԱ
ԻՍՊԱՆԻԱ
ՍԱՐԴԻՆԻԱ
Կորդովա
Կոստանդնուպոլիս
ԹՈՒՐՔԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԻՑԻԼԻԱ
ԿՐԵՏԵ
ԿԻՊՐՈՍ
Դամասկոս
Հալեբ
Բաղդադ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՄԱՐՈԿԿՈ
ԱԼԺԻՐ
ԹՈՒՆԻՍ
ԼԻԲԻԱ
Երուսաղեմ
ՍԻՐԻԱ
ԻՐԱՔ
Բասրա
Ֆաո
Կահիրե
ԵԳԻՊՏՈՍ
ԱՐԱԲԻԱ
ԿԱՐՄԻՐ ԾՈՎ
Մադինա
Մեքքա
ՊԱՐՍԿԱ ԾՈՎ
ՕՄԱՆԻ ԾՈՎ
ԵՄԵՆ
Սանա
Ադեն
ՍՈՒԴԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ
0°
20°
40°
60°

էին որպես ազատարարների, որոնք իրենց կարող էին ազատել մամլուքյան սարսափազդու լծից:

Պատմության մեջ շատ հաճախ են լինում նման դեպքեր, երբ ծանր վիճակում գտնվող ժողովուրդը, իրենց ճնշողների հակառակորդներին ակամայից ընկալում էին որպես ազատարարների, թեև շատ շուտով նրանք հիասթափվելու էին, ընկնելով մի նոր, համանման, նախորդից ոչ պակաս ծանր լծի ներքո: Այդ նույն բանը պատահեց օսմանների հետ, երբ Բալկաններում կամ Փոքր Ասիայի որոշ մասերում որոշ ժողովուրդներ սխալմունք ունեցան նրանց ընկալել որպես ազատարարների, անգամ բյուզանդական տիրապետությունը թոթափելու հարցում: Եվ ահա, այժմ, այդ նույն բանը տեղի էր ունենում արաբական որոշ ժողովուրդների հետ:

Այդ վճռական ճակատամարտում մամլուքյան զորքը պարտվեց և օսմանյան սուլթան Սելիմ I մտավ Կահիրե:

Հաջորդ օրը, հունվարի 24–ին Կահիրեի մզկիթներից մեկում տեղի ունեցած աղոթքի ժամանակ, խուտբայում նշվեց Սելիմ I անունը:

Թուման բեյը թեև պարտություն կրեց, սակայն նրան հաջողվեց փախուստ տալ: Նա հունվարի 27–ին իր զորքերի մնացորդներով հանկարծակի հարձակվեց և ներխուժեց Կահիրե, որն անցավ նրա տիրապետության տակ: Երեք օր շարունակ դաժան փողոցային մարտեր էին գնում Կահիրեում: Թուման բեյի հաջողության մասին է խոսում այն փաստը, որ հունվարի 30–ին, Կահիրե ներխուժման երրորդ օրը, ուրբաթօրյա խուտբայի ժամանակ հիշվեց արդեն ոչ թե սուլթան Սելիմի, այլ Թուման բեյի անունը: Դա եղավ նրա վերջին հաջողությունը: Այդ նույն օրվա վերջում օսմանյան զորքերը պարտության մատնեցին Թուման բեյի զորքերին և վերջնականապես տիրեցին Կահիրեին:

Թուման բեյին այս անգամ ևս հաջողվեց փախչել: Նա կարողացավ Եգիպտոսի նահանգներից նոր զորք հավաքել և կրկին հարձակվեց օսմանցիների վրա և կրկին պարտվեց: Նա ընկավ արաբ բեդվինների ձեռքը, որոնք նրան առանց հապաղելու հանձնեցին թուրքական սուլթանին: Վերջինիս որոշումը եղավ արագ և դաժան: Թուման բեյը, որն այդքան գլխացավանք էր պատճառել Սելիմ I, կախաղան հանվեց:

Սելիմ I Հալեբի կառավարիչ Խաիր բեյին 1517 թ. օգոստոսին նշանակեց Եգիպտոսի կառավարիչ: Նա այն Խաիր բեյն էր, որ Մարջ Դաբիկի ճակատամարտի ժամանակ դավաճանեց իր տիրոջը, մամլուքյան սուլթան Կանսոհին և անցավ օսմանցիների կողմը: Թուրքական

սուլթանը հավանաբար չէր մոռացել նրա այդ ծառայությունը և նրան վստահելով, արժանացրեց այդպիսի բարձր պաշտոնի:

Եգիպտոսն ընկավ օսմանյան տիրապետության տակ:

Այսպիսով, մեկ տարուց էլ պակաս ժամանակամիջոցում, 1516 թ. օգոստոսից մինչև 1517 թ. հունվարն ընկած ժամանակաշրջանում, սուլթան Սելիմ I նվաճեց արաբական երկու ամենակարևոր երկրները՝ Սիրիան և Եգիպտոսը:

Սուլթան Սելիմի հաղթանակները շահ Իսմայիլի և մամլուքների դեմ, Սիրիայի և Եգիպտոսի համեմատաբար հեշտ նվաճումը, ոմանք բացատրում են այն հանգամանքով, որ նրա բանակում կար և օգտագործվում էր հրետանի, որը նա ձեռք էր բերել եվրոպացիներից կամ ինչպես այն ժամանակ տարածված էր, ֆրանկներից: Դրանից բացարձակապես զուրկ էին մամլուքները: Թե որքանով է այդ փաստարկը ճիշտ կամ սխալ, տվյալ պարագայում նշանակություն չունի: Խոսքն այստեղ արաբների, տվյալ դեպքում եգիպտացիների, ինչպես նաև արևելյան այլ ժողովուրդների մենտալիտետի մասին է: Նրանք, այդ թվում և Եգիպտոսի արաբները հրետանին համարելով մի գործիք, որը «միանգամից դուրս է նետում մի մեծ բուռ արճիճ», հրաժարվում են պատերազմել այն մարդկանց հետ, ովքեր «կռվում են կրակով»: Նրանց իդեալը, տղամարդուն արժանավայել զենքը, որը չի նսեմացնում նրանց տղամարդկային արժանապատվությունը, ոչ թե ֆրանկների հնարած «հուր արձակող» գործիքը, այսինքն հրետանին էր, այլ թուրը և նիզակը, որից օգտվել է Մուհամմադ մարգարեն: Որոշ կրոնամոլներ անգամ այնքան հեռուն են գնում, որ այդ հարցին տալով կրոնական իմաստ, հայտարարում են, որ «Մենք չենք հրաժարվի սուննայից և չենք ընդունի քրիստոնյաների սուննան»:

Իհարկե, այս հանգամանքը չպետք է բացարձակացնել, մանավանդ եթե նկատի ունենանք, որ հենց այդ նույն ժամանակ կամ որոշ ժամանակ անց, իրենք արաբները և այլ մուսուլմանական ժողովուրդները նույնպես սկսում են իրենց բանակները զինել զենքի այդ նոր տեսակով, որը սկզբնական շրջանում սարսափազդու զենք էր ընկալվում:

Սիրիայի և Եգիպտոսի նվաճումը և նրանց անցնելը օսմանյան տիրապետության տակ, ունեցավ քաղաքական մեծ հետևանքներ և կարևոր նշանակություն արաբական մյուս երկրները նվաճելու գործում:

III. ԱՐԱԲԻԱՑԻ ՀՊԱՏԱԿՎԵԼԸ ՕՍՄԱՆՑԱՆ ՍՈՒԼԹԱՆԻՆ

1. Արաբիայի կարևորությունը Սելիմ I համար

Սիրիայի և Եգիպտոսի նվաճումը օսմանցիների կողմից, կարելի է ասել ցնցող տպավորություն գործեց արաբական երկրների վրա: Այդ հանգամանքը դյուրացրեց թուրքերի համար արաբական մյուս երկրների նվաճումը, ըստ որում, պակաս կորուստներով:

Սուլթան Սելիմ I համար կարևոր նշանակություն ուներ Արաբիան, մանավանդ Հիջազը, որտեղ գտնվում են իսլամական աշխարհի երկու սրբակենտրոնները, Մեքքան և Մադինան: Նա լավ էր հասկանում, որ այդ երկու քաղաքների դիրքորոշումից շատ բան էր կախված իր դիրքերն արաբական և ընդհանրապես մուսուլմանական աշխարհում ամրապնդելու տեսակետից: Հիջազի կառավարիչները, որոնք կոչվում էին շերիֆներ և որոնք համարվում էին Մուհամմադ մարգարեի սերունդներից, և որոնց ենթակա էին Մեքքան և Մադինան, շատ ազդեցիկ մարդիկ էին, որոնք մեծ հեղինակություն էին վայելում ամբողջ մուսուլմանական աշխարհում:

Մեքքայում և Մադինայում ուշադիր հետևում էին թուրք–եգիպտական հակամարտությանը: Այնտեղ Եգիպտոսի և Օսմանյան պետության միջև պատերազմի ելքը, եգիպտական սուլթանի և մամլուքների պարտությունն ընդհանուր առմամբ դրականորեն ընդունվեց: Դա բացատրվում է այն լարված հարաբերություններով, որ գոյություն ունեին մամլուք սուլթանների, որոնց վերահսկողության տակ էր գտնվում Արաբիայի այդ մասը, և Հիջազի շերիֆների, Մեքքայի ու Մադինայի հոգևոր առաջնորդների միջև: Մամլուք սուլթանները, որոնք արագորեն մեկը մյուսին տապալում, իրենց մրցակիցներին սպանում և դավադրությունների կամ արյունալի հեղաշրջումների ուղիով էին իշխանության գլուխ գալիս, այնքան էլ Մեքքայի և Մադինայի աջակցության կարիքը չէին զգում: Քիչ չէին դեպքերը, երբ մամլուք սուլթանները բռնություններ էին կիրառում Հիջազի շերիֆների նկատմամբ, ձերբակալում, բանտ նետում և այլն:

Սելիմ I տարած հաղթանակից հետո Հիջազի շերիֆը և Մեքքայի ու Մադինայի ավագանին իր հնազանդությունը հայտնեց օսմանյան

սուլթանին, նրան ընդունելով որպես իրենց հովանավոր: Դա պետք է բացատրել երեք հանգամանքով:

Առաջին, թուրքական հաղթանակի և մամլուքների իշխանության տապալման հետևանքով, Հիջազը, Մեքքան և Մադինան ազատվում էին իրենց համար ատելի մամլուքյան տիրապետությունից:

Երկրորդ, Մեքքայում և Մադինայում, ինչպես նաև Արաբիայի այլ մասերում համբերության բաժակը լցվել և խոր դժգոհություն էր կուտակվել Ջիդդայի կառավարիչ Հուսեյնի կամայականություններից և դաժանություններից, որոնք անգամ մամլուքյան չափանիշներով համարվում էին արտառոց:

Եվ, վերջապես, երրորդ, Մեքքային և Մադինային ավելի ձեռնտու էր և նրանց շոյում էր այն հանգամանքը, որ իրենք դառնում են մեծ և հզոր մուսուլմանական պետության մասը, որը, ինչպես նրանք էին ենթադրում, ավելի կազմակերպված և կարգապահ երկիր էր, քան թե խրոնիկական քաոսային վիճակում գտնվող մամլուքյան սուլթանությունը:

Սելիմ I նկատմամբ Հիջազի բարենպաստ դիրքորոշման մեջ իր ոչ երկրորդական դերը խաղաց օսմանյան սուլթանի հարգալից վերաբերմունքը սրբակենտրոնների ավագանու նկատմամբ: Սելիմ I իրեն հայտարարեց Մեքքայի և Մադինայի հովանավոր: Դեռ ավելին, նա իրեն հայտարարեց նաև Մեքքա ուխտագնացների հովանավոր և կոչ արեց մուսուլմաններին ուխտագնացության մեկնել Հիջազի սրբակենտրոնները: Այդ ամենը դուր էր գալիս հիջազյան ավագանուն, որն ամրապնդում էր նրանց հեղինակությունը և բարելավում նրանց նյութական հնարավորությունները: Սելիմ I սիրաշահելու համար նրանց թանկարժեք նվերներ էր տալիս: Հայտնի է, որ, երբ Թուման բեյը պարտություն կրեց և Կահիրեն անցավ թուրքական սուլթանի իշխանության տակ, Մեքքայից Կահիրե եկավ երևելի հոգևոր ղեկավարներից մեկը՝ Սալահ ադ–Դինը: Սելիմ I նրան ընդունեց, մեծ պատիվների արժանացրեց, շատ առատաձեռն նվերներ հանձնեց և պատվով հետ ուղարկեց Մեքքա: Նա շատ լավ գիտեր, որ այդ ամենը դրական տպավորություն է գործելու Մեքքայում: Դա եզակի դեպք չէր: Կահիրում գտնվելու օրերին թուրքական սուլթանը նման պատիվների էր արժանացնում նաև այլ երևելի մեքքացիների և մադինացիների:

2. Օսմանյան տիրապետության հաստատումը Արաբիայի վրա

Ի պատասխան Սելիմի I այսպիսի բարյացակամ դիրքորոշման, հիջազյան ավագանին չհապաղեց համարժեք քայլերի դիմելու: Բացի այն, որ նրանք ճանաչեցին թուրքական սուլթանին որպես պետության ղեկավար, նրանց որոշումով Սելիմի անունը մտցվեց խուտբայի մեջ և հիշատակվում էր կիրակնօրյա համընդհանուր մուսուլմանական աղոթքի ժամանակ: Նրանց որոշումով նաև դրամ հատվեց Սելիմի պատկերով: Այսինքն նրան արժանացրին այնպիսի պատվի, որը մուսուլմանական ավանդության համաձայն սովորաբար տրվում էր մուսուլմանական օրինական վեհապետերին:

Միաժամանակ որոշվեց պաշտոնական պատվիրակություն ուղարկել Կահիրե, որի նպատակն էր պաշտոնապես հավաստել Հիջազի հպատակությունը Սելիմ I: Պատվիրակության կամ դեսպանության ղեկավար նշանակվեց Հիջազի շերիֆ Բարակատի 12–ամյա որդին՝ Ջամալ ադ–Դին Աբու Նումեյ Մուհամմադը: Նա Կահիրե ժամանեց 1516 թ. մայիսի վերջերին և արժանացավ լավ ընդունելության սուլթանի կողմից: Այդ այցելության կարևոր արդյունքներից մեկը եղավ այն, որ երիտասարդ շերիֆը հավատարմության երդում տվեց թուրքական սուլթանին: Ստանալով թանկարժեք նվերներ նրանից, Ջամալ ադ–Դին Մուհամմադը վերադարձավ Մեքքա: Բայց նա իր հետ Կահիրեից տարավ երևի թե ամենաթանկարժեք նվերը իր հոր համար: Սելիմ I հրամանով, Բարակատը պահպանելով հնից եկող Հիջազի կամ Մեքքայի շերիֆի պաշտոնը և տիտղոսը, միաժամանակ ստացավ Մեքքայի կառավարման այնպիսի իրավունքներ, որոնք սովորաբար տրվում էին փաշաներին: Ահա Ջամալ ադ–Դինն իր հետ տանում էր թուրքական սուլթանի այդ հրամանը:

Վերջապես, 1517 թ. դեկտեմբերին, երբ սկսվեց մուսուլմանների զանգվածային ուխտագնացությունը Մեքքա, ապա, ի նշան հարգանքի Սելիմ I նկատմամբ, շերիֆ Բարակատը իր որդու հետ միասին դիմավորեցին այդ ուխտավորների քարավաններին: Նրանք իրենց հետ բերել էին թանկարժեք նվերներ թուրքական սուլթանի կողմից: Վերջինս ուղարկել էր նաև ծածկոց Կաաբայի համար, որի վրա գրված էր «Սելիմ»: Նրանք բոլորը միասին, Հիջազի շերիֆը և ամբողջ ավագանին ուխտավորների հետ միասին առաջին անգամ աղոթեցին սուլթան Սելիմ I համար:

Դրանով կարելի էր ավարտված համարել Հիջազի, Արաբիայի ամենակարևոր և կենսունակ մասի, հնազանդությունը սուլթան Սելիմին և օսմանյան գերիշխանության ճանաչումը:

Այսպիսով, Արաբիան, ի տարբերություն Սիրիայի և Եգիպտոսի, որոնք նվաճվեցին թուրքերի կողմից ռազմական գործողությունների հետևանքով, Մարջ Դաբիքում և Կահիրեի մոտ տարած հաղթանակների արդյունքում, անցավ օսմանյան տիրապետության տակ, առանց պատերազմական գործողությունների, խաղաղ ճանապարհով, հանգամանքների բերումով կամովին հնազանդվելով թուրքական սուլթանին:

XVI դարի 30–ական թվականներին թուրքերը հայտնվեցին նաև Եմենում: Բայց նրանց տիրապետությունն այստեղ երբեք կայուն չի եղել և շատ հաճախ ձևական բնույթ է կրել: Անհնազանդ եմենցիները կարողանում էին շատ հարցերում պահպանել իրենց անկախ դիրքորոշումը և իրենց հարցերը լուծել ըստ իրենց հայեցողության:

Իսկ ինչ վերաբերում է կենտրոնական Արաբիային, ապա այստեղ թուրքերը չկարողացան հաստատվել: Քոչվոր արաբ բեդվինները իրենց գլխին բացի իրենց ավանդական ղեկավարներից՝ ցեղապետերից և շեյխերից, ուրիշ ոչ մի իշխանություն չէին ճանաչում և շարունակում էին ազատ տեղափոխվել իրենց տրամադրության տակ գտնվող տարածքներով, արոտավայրերով ու յայլաներով:

IV. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՑՈՒՄՆ ՕՍՄԱՆՑԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Օսմանցիներն իրենց տիրապետությունը հաստատեցին նաև Լիբանանի, վրա: Լիբանանը օսմանյան հպատակությունն ընդունելու նախօրյակին կառավարում էր Մաանի ազդեցիկ ֆեոդալական ընտանիքը և օգտվում էր յուրատեսակ ինքնավարությունից:

Երբ սուլթան Սելիմ I 1516 թ. ներխուժեց Սիրիա, դա խիստ անհանգստացրեց Լիբանանի էմիր Ֆախր ադ–Դին ալ–Մաանին: Լիբանանը դարեր շարունակ սերտորեն կապված է եղել Սիրիայի հետ և այնտեղ տեղի ունեցող ամեն մի խոշոր իրադարձություն անմիջապես անդրադարձել է Լիբանանի վրա: Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ խելացի և հեռատես Ֆախր ադ–Դինը I որոշեց չմիջամտել պատերազմական գործողություններին և որևէ մեկի կողմը չանցնել: Նա իր ժո-

ղովրդին կոչ արեց համբերատար սպասել պատերազմի ելքին և թեքվել հաղթողի կողմը: Լիբանանյան ավագանին ընդունեց էմիրի այս դիրքորոշումը, որը Լիբանանին ապահովեց խաղաղություն և կանխեց թուրքական զորքերի ներխուժումը Լիբանան և ռազմական գործողությունների ծավալումը նրա տարածքում:

Սելիմ I, ինչպես նշվել է, շահեց Մարջ Դաբիքի ճակատամարտը և գրավեց ամբողջ Սիրիան: Դա կանխորոշեց Ֆախր ադ–Դինի դիրքորոշումը օսմանյան նվաճողների հանդեպ:

Հավատարիմ իր հռչակած սկզբունքին, Ֆախր ադ–Դինը I լիբանանյան ամբողջ ավատական ավագանու հետ մեկնեց Սիրիա և ներկայացավ սուլթան Սելիմ I, սպասելով նրա դատաստանին: Նա ծնկի եկավ սուլթանի առջև, համբուրեց նրա ոտքերի տակի գետինը և իր հպատակությունը հայտնեց նրան: Ծնկաչոք նա այնպիսի ճարտասանությամբ փառաբանեց թուրքական սուլթանին, նրա տոհմը, խելքը, զինական հաջողությունները, փայլուն գործողությունները և մեծահոգությունը, որ ուղղակի հմայեց Սելիմին: Ֆախր ադ–Դինը խոստացավ հնազանդ լինել և երդվեց հավատարմորեն ծառայել նրան: Նա մեծ տպավորություն թողեց սուլթան Սելիմի և նրա մերձավոր զինակիցների վրա:

Սուլթանը, իրոք, մեծահոգի գտնվեց: Նա ճանաչեց Ֆախր ադ–Դինի I իրավունքները և վերահաստատեց նրան որպես Լիբանանի էմիր: Նա ճանաչեց նաև Լիբանանի մյուս շեյխերի և համայնքապետերի իրավունքները իրենց տիրույթների շրջանակներում: Դրանով նա փաստորեն հաստատեց այն սահմանափակ ինքնավար իրավունքները, որոնցից նրանք օգտվում էին մինչ այդ:

Լիբանանի վրա դրվեց շատ թեթև հարկ: Լիբանանյան ավատատերերն իրենց տիրույթներում գործում էին անկախ: Նրանք անգամ ազատվեցին սուլթանին զինվորական ծառայություն մատուցելուց:

Լիբանանին տալով այդպիսի արտոնություններ, սուլթան Սելիմը ձգտում էր դրանով ապահովել լիբանանյան վերնախավի հավատարմությունը և խուսափել ռազմական ընդհարումներից այդ լեռնային երկրում, որի բնակչությունն աչքի էր ընկնում իր մարտունակությամբ:

Այդ շրջանում օսմանյան տիրապետությունը հաստատվեց նաև Հորդանանի և Պաղեստինի վրա:

V. ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ԳՐԱՎՈՒՄԸ (1534–1538 թթ.)

1. Իրաքը կռվախնձոր Օսմանյան կայսրության և շահական Պարսկաստանի միջև

Սուլթան Սելիմ Ահեղը, որին հաջողվեց նվաճել Մերձավոր Արևելքի արաբական երկրների մեծ մասը, մահացավ 1520 թ., մի այնպիսի կարևոր արաբական երկրի նվաճումը, ինչպիսին Իրաքն էր, թողնելով իրեն հաջորդած իր որդուն՝ Սուլեյմանին, որը օսմանյան պատմության մեջ մտել է որպես Սուլեյման Հոյակապ և Սուլեյման Կանունի՝ Օրենսդիր անուններով (1520–1566 թթ.):

Իրաքը միջին դարերում միշտ հրապուրել է օտար նվաճողներին, որոնք ձգտել են իրենց ենթարկել այն և հաստատվել այնտեղ: Դրանում իր վճռական դերն է խաղացել նաև այն հանգամանքը, որ Բաղդադը Աբբասյան խալիֆայության շքեղ մայրաքաղաքն էր, կարևոր քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը, մուսուլմանական աշխարհի քաղաքական և հոգևոր առաջնորդների՝ խալիֆաների նստավայրը: Իրաքի և Բաղդադի գրավումը ոչ միայն պատվաբեր էր, այլև երազանք յուրաքանչյուր նվաճողի համար, որը բարձրացնում էր նրա հեղինակությունը մուսուլմանական աշխարհում: Եվ դա մեկ անգամ չէ, որ հաջողվել է նրանց, մանավանդ երբ սկսեց թուլանալ և անկում ապրել Աբբասյան խալիֆայությունը: X–XV դարերում նա հայտնվել է Բուիների, Սելջուկների, մոնղոլների և այլ օտար նվաճողների տիրապետության ներքո:

XVI դարի սկզբներին դրանց ավելացավ նաև Պարսկաստանը: Մինչ այդ Իրաքն անցել էր թուրքմենական Ակ–Կոյունլու պետության, իսկ ապա նաև Կարա–Կոյունլուների տիրապետության ներքո: 1508 թ. պարսկական շահ Իսմայիլին հաջողվեց պարտության մատնել Կարա–Կոյունլուներին և գրավել Կենտրոնական Իրաքը Բաղդադով հանդերձ, և Հարավային Իրաքը:

Պարսկաստանի այս հաջողությունը խիստ անհանգստացրեց սուլթան Սուլեյմանին: Այստեղ, բացի տարածքային նոր նվաճումների հարցից, ավելացավ նաև սուննի–շիա հակամարտության խնդիրը: Պարսկաստանում տիրապետող էր շիիզմը, իսկ Թուրքիայում՝ սուննիզմը: Բաղդադի բնակչության մեծամասնությունը նույնպես սուննիներ

էին: Սուլթան Սուլեյմանը, որը, ինչպես և իր հայրը, հավակնություն ուներ հանդես գալ որպես «խալիֆա» և ուղղափառ մուսուլմանների, այսինքն սուննիների պաշտպան, չէր կարող հաշտ նայել, թե ինչպես են շիաները իշխում Բաղդադի սուննիների վրա և նեղում նրանց:

Մյուս կողմից, Իրաքում, Բաղդադից հարավ, Նաջաֆում և Քերբելայում գտնվում էին շիիզմի կրոնական կենտրոնները: Ուստի Պարսկաստանն էլ իր հերթին շահագրգռված էր, որպեսզի դրանք գտնվեն իր տիրապետության տակ:

Ինչպես տեսնում ենք, լուրջ հակասություններ գոյություն ունեին երկու պետությունների միջև:

2. Թուրք–պարսկական պատերազմը և Իրաքի գրավումը Օսմանյան պետության կողմից

Սուլթան Սուլեյման I որոշեց պատերազմական գործողություններ սկսել Պարսկաստանի դեմ Իրաքը նվաճելու համար: Այդ որոշումն ընդունելիս, նա հաշվի առավ, որ պայմանները, մանավանդ Պարսկաստանի խառնակ ներքաղաքական դրությունը, նպաստավոր է իր համար: Դրանք կապված էին 1524 թ. Պարսկաստանի ազդեցիկ շահ Իսմայիլի մահվան հետ: Նրան գահի վրա փոխարինեց նրա տասնամյա որդին, շահ Թահմասպը: Օգտվելով շահի անչափահաս և անփորձ լինելուց, գլուխ բարձրացրին իրանական ցեղապետերը և սկսվեց միջցեղային պայքար, որը հանգեցրեց պետության թուլացմանը, խառնաշփոթ վիճակի ստեղծմանը, տնտեսության քայքայմանը և բանակի կազմալուծմանը: Դրան ավելացրած նաև կենտրոնախույս ուժերի ակտիվացումը, հատկապես Պարսկաստանի ծայրամասերում: Այսպես, օրինակ, Ատրպատականի փոխարքան տեղյակ պահեց թուրքական սուլթանին, որ ինքը պատրաստ է անցնել նրա կողմը: Դա եզակի դեպք չէր: Բաղդադի նահանգապետն ավելի հեռուն գնաց: Նա իրեն հաձնված քաղաքի բանալիներն ուղարկեց Ստամբուլ, անձամբ սուլթանին:

Սուլթան Սուլեյմանը որոշեց օգտվել իր համար այդ բարենպաստ իրադրությունից և իր մեծաքանակ բանակի գլուխն անցած, 1534 թ. գարնանը մտավ Պարսկաստան: Նա շատ հետաքրքիր տակտիկա ընտրեց: Նա որոշեց ոչ թե գնալ ուղիղ Բաղդադի վրա, այլ ներխուժել Ատրպատական և գրավել նրա կենտրոնը՝ Թավրիզը: Սուլթան Սուլեյմանի հաշվարկը կայանում էր նրանում, որ Թավրիզի գրավումը կարող է մեծ

տպավորություն գործել պարսիկների վրա և արագացնել Բաղդադի անկումը: Նա չէր բացառում, որ դրանից հետո հնարավոր է Բաղդադի հանձնումն իրեն առանց մարտի: Եվ նրա սպասելիքները միանգամայն արդարացան:

Բաղդադի պարետը, պարսկական հայտնի զորահրամանատար Մուհամմադ Բեկը, երբ իմացավ Թավրիզի գրավման մասին, անմիջապես հրամայեց պարսկական զորքերը դուրս բերել Բաղդադից: Նա հրաժարվեց որևէ դիմադրություն ցույց տալ և մարտի բռնվել թուրքական բանակի հետ: Սուլթանն առանց մարտի գրավեց Աբբասյանների երբեմնի մայրաքաղաքը, որտեղ նա մնաց մոտ կես տարի՝ զբաղված լինելով Բաղդադի բարեկարգմամբ, կարգուկանոնի հաստատմամբ, վերականգնեց Բաղդադի այն մզկիթը, որտեղ թաղված էր Աբու Հանիֆին, մուսուլմանական չորս մազհաբներից մեկի հիմնադիրը, որին հետևում են մինչև օրս օսմանյան թուրքերը:

Օսմանյան տիրապետության տակ անցան նաև Մոսուլը, Նաջաֆը և Քերբելան: Շուտով հերթը հասավ նաև Բասրային, որը կատարվեց շատ հետաքրքիր ձևով: Բասրայի կառավարիչն էր արաբական ազդեցիկ ցեղերից մեկի ցեղապետ շեյխ Ռաշիդը: Նա Ստամբուլ ուղարկեց իր որդուն, որը հոր անունից անձամբ սուլթան Սուլեյմանին հանձնեց Բասրայի բանալիները: Դա նշան էր այն բանի, որ Բասրան ընդունում է օսմանյան գերիշանությունը: Սուլթանը, իհարկե, մեծ գոհունակությամբ ընդունեց այդ նվերը:

Այսպիսով, 1534–1538 թթ. ավարտվեց Իրաքի նվաճումը:

Դրան հաջորդեց Ադենի (1547 թ.), Մասկադի (1551 թ.), ապա և ամբողջ Եմենի նվաճումը, որն իրականացվեց 1568 թ.:

Դրանով փաստորեն ավարտվեց1516 թ. սկսված Մերձավոր Արևելքի արաբական համարյա բոլոր երկրների գրավումը և նրանց ենթարկումը օսմանյան սուլթանական տիրապետությանը:

VI. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ՝ ՄԱՂՐԻԲԻ, ՆՎԱՃՈՒՄԸ

1. Ալժիրի, Թունիսի և Տրիպոլիի նվաճումը

XVI դարի առաջին կեսին օսմանյան տիրապետության տակ հայտնվեցին նաև Հյուսիսային Աֆրիկայի կամ Մաղրիբի արաբական երկր-

ները: Դա կազմում էր սուլթանների նվաճողական քաղաքականության էական մասերից մեկը, հաշվի առնելով այդ երկրների աշխարհագրական դիրքը, բնական հարստությունները և այլն:

Առաջին արաբական երկիրը, որ Հյուսիսային Աֆրիկայում անցավ օսմանյան տիրապետության տակ Ալժիրն էր, որը, ինչպես և ընդհանրապես Մաղրիբի նվաճումն, իրագործվեց սուլթան Սուլեյման I գահակալության շրջանում:

Ալժիրի և ամբողջությամբ Մաղրիբի գրավմանը մեծապես նպաստեց Եգիպտոսի նվաճումը: 1518 թ., հունական ծագումով երկու ծովահեններ, Խայր ադ–Դին Բարբարոսան և նրա եղբայրը, Եգիպտոսից դուրս գալով մի մեծ զինախմբի գլուխ անցած ներխուժեցին Ալժիր, որը գտնվում էր իսպանական հսկողության ներքո, և այն հայտարարեցին որպես թուրքական սուլթանին ենթակա տարածք: Այդ ծառայության համար, որը դրեց Մաղրիբի նվաճման սկիզբը, օսմանյան Բարձր Դուռը, այսինքն՝ պալատը կամ կառավարությունը, Խայր ադ–Դինին նշանակեց Ալժիրի կառավարիչ և նրան շնորհեց բեյլերբեյի՝ բեյերի բեյ, բարձր տիտղոսը: Նրա տրամադրության տակ էր գտնվում ենիչերիների մի հզոր զորախումբ: Իր հզորությունն ամրապնդելու համար բեյլերբեյը շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծեց նավատորմ: Նրանում ռազմական ծառայության համար հիմնականում հավաքագրում էին քրիստոնյաների, մասնավորապես իտալացիների և հույների: Հենց դա դարձավ օսմանյան նվաճողական քաղաքականության իրագործման հիմնական գործիքը Միջերկրածովյան ավազանում: Այս նավատորմը ահ ու սարսափ էր տարածում այդ տարածաշրջանում, ընդհուպ մինչև Իսպանիայի ափերը:

Ալժիրը սպառնալիք դարձավ իր հարևան երկրների, առաջին հերթին հարևան Թունիսի համար: Այն նվաճելու համար որպես պատրվակ օգտագործվեցին Թունիսում ծագած խառնակությունները, կապված այն հարցի հետ, թե ով պետք է լինի գահի ժառանգորդը: Օգտագործելով այդ վեճը որպես պատրվակ, Խայր ադ–Դինը 1534 թ. ներխուժեց Թունիս և գրավեց այն: Սակայն երկար ժամանակ պահանջվեց, մինչև որ նա վերածվեց օսմանյան նահանգներից մեկի: Դրանում մեծ դերակատարում ունեցավ Սինան փաշան, որը Բարձր Դռան կողմից ստացավ բեյի տիտղոս: Նա մեկ այլ կարևոր ծառայություն էլ մատուցեց Օսմանյան կայսրությանը: 1551 թ. Սինան փաշան և՝երկու թուրք գեներալներ սկսեցին Տրիպոլիի գրավումը, որը գտնվում էր Մալթայի Սեն Ջոն օրդե-

նի հսկողության տակ: Սինան փաշան կարողացավ Տրիպոլիից արտաքսել այդ օրդենի ասպետներին և Տրիպոլին ևս միացնել օսմանյան տիրույթներին:

Այսպիսով, մոտ 35 տարվա ընթացքում, արաբական Մաղրիբը ևս, բացի Մարոկկոյից, հայտնվեց օսմանյան տիրապետության ներքո:

2. Օսմանյան բեյության կայսրության վերածվելու գործընթացի ավարտը

Ասիական և աֆրիկյան մայրցամաքներում գտնվող արաբական երկրների նվաճումով ավարտվեց օսմանյան պետության վերածումը կայսրության, որը սկսվել էր Մեհմեդ Ֆաթիհ սուլթանի ծավալապաշտական քաղաքականությամբ: Նա տարածվում էր երեք մայրցամաքներում՝ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

Նրա կազմի մեջ բացի Անատոլիայից, որը կայսրության միջուկն էր, Եվրոպայում մտնում էին՝ Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Բուլղարիան, Դալմացիան, Թրակիան, Հունգարիան, Հունաստանը, Մակեդոնիան, Մոլդովան, Պոդոլիան, Տրանսիլվանիան, Վալախիան, Սև ծովի հյուսիսային ափը մինչև Կուբան և նրա արևելյան ափի մի մասը, Ազովը և Ղրիմը, Ասիայում՝ Հայաստանի մի մասը, Հարավային Վրաստանը, Քրդստանը, Արաբիան, Եմենը, Լիբանանը, Իրաքը և ամբողջ Միջագետքը, Հորդանանը, Սիրիան, Պաղեստինը, Աֆրիկայում՝ Ալժիրը, Եգիպտոսը, Թունիսը, Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: Կայսրության մաս էին կազմում նաև Կիպրոս և Կրետե կղզիները:

Այսպիսով, Անատոլիայի հյուսիս–արևմտյան մասում ծնավորված օղուզյան Օսմանլը՝ օսմանյան բեյլիքը պատմական շատ կարճ ժամանակաշրջանում, XV–XVI դարերում, վերածվեց մի ընդարձակ և հզոր կայսրության, որը ահ ու սարսափ էր տարածում իր հեռու ու մոտիկ հարևան պետությունների վրա:

XV–XVI դարերը համարվում են այդ պետության հզորության գագաթնակետը:

Դրանից հետո, մի շարք ներքին և արտաքին գործոնների ազդեցության ներքո, սկսվեց նրա անկասելի վայրէջքը:

VII. ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԿԵՂԾ ԽԱԼԻՖԱՆԵՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ Դ' ՕՍՄՈՆԻ ՏԵՍԱԴՐՈՒԹԸ

1. Իսլամագետների և պատմաբանների տեսակետները Օսմանյան սուլթանների անօրինական խալիֆաներ լինելու հարցի վերաբերյալ

Օսմանյան կայսրությունը XV–XVI դարերում դարձավ մուսուլմանական ամենաուժեղ պետությունն աշխարհում: Նրա տիրապետության տակ հայտնվեցին մուսուլմանական բազմաթիվ երկրներ, այդ թվում և իսլամի օրրանը հանդիսացող արաբական երկրները: Օսմանյան սուլթանները դարձան մուսուլմանական երկրների և ժողովուրդների աշխարհիկ վեհապետերը:

Սակայն բաց էր մնում նրանց հոգևոր–կրոնական ղեկավարի կարգավիճակը: Արդյո՞ք թուրքական սուլթանները, որոնց տիրապետության տակ անցան մուսուլմանական կարևոր կենտրոնները, ինքնաբերաբար դարձան աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդը, թե՞ ոչ:

Խոսքը օսմանյան սուլթանների կողմից խալիֆայի տիտղոսը ստանալու և կրելու մասին է, ավելի ճիշտ նրա օրինականության հարցի մասին:

Խալիֆայի ինստիտուտը մուսուլմանական աշխարհում առաջացավ VII դարում Մուհամմադ մարգարեի մահվանից հետո: Խալիֆան համարվում էր Արաբական խալիֆայության և նրա կազմի մեջ մտնող մուսուլմանական երկրների ոչ միայն աշխարհիկ և այլև հոգևոր գլխավոր առաջնորդը, իմամը: Հետագա տարիներին, Արաբական խալիֆայության անկումից հետո, խալիֆաները կորցրեցին իրենց աշխարհիկ բոլոր գործառույթները և նրանց մնաց միայն կրոնական գործառույթը որպես մուսուլմանների հոգևոր–կրոնական ղեկավար: Դրանում շահագրգռված էին բոլոր նորահայտ նվաճողները՝ բուիները, սելջուկները, մոնղոլները, մամլուքները և այլն: Նորահայտ սուլթանները խալիֆաներին, խալիֆայական ինստիտուտը չէին վերացնում, դրանում շահագրգռված չէին, որովհետև նրանք խալիֆաների ֆետվաներով, նրանց օրհնությամբ էին հաստատվում գահի վրա, ավելի ճիշտ սրբագործում իրենց իշխանությունը: Իսկ դա, ըստ մուսուլմանական տիրապետող ավանդության, ուներ վճռական նշանակություն: Եթե այս կամ

այն գահի նորահայտ հավակնորդին չէր հաջողվում ձեռք բերել խալիֆայի օրինությունը և չէր ճանաչվում նրա կողմից որպես օրինական տիրակալ, ապա նրա, գահի հավակնորդի հավակնությունները հավասարվում էին զրոյի: Այդ հարցն առանձնապես սուր բնույթ էր կրում, եթե նկատի ունենանք այն պարագան, որ շատ հաճախ միաժամանակ լինում էին գահի մի քանի հավակնորդներ և նրանցից յուրաքանչյուրին հաղթանակի համար անհրաժեշտ էր խալիֆայի կողմից «իր իրավունքների» ճանաչումը:

Խալիֆաների այդ ձնական իշխանությունը, որը շատերը համարում են ֆիկցիա, ցայտուն կերպով դրսևորվեց, երբ 1258 թ. մոնղոլների հարվածների տակ, Աբբասյան խալիֆայության անկումից հետո, իշխանությունը կորցրած Աբբասյան խալիֆաները, եգիպտական մամլուքների բարեհաճությամբ հաստատվեցին Կահիրեում: Այստեղ նրանք իրենց գոյությունը պահպանեցին մոտ երեք դար, ձնականորեն կրելով «Աբբասյան խալիֆաներ» կոչումը, իրականում լինելով իշխանազուրկ: Դեռ ավելին, շուտով նրանք դարձան խաղալիք մամլուք սուլթանների ձեռքում, որոնք նրանցից ստանալով իրենց անհրաժեշտ հրովարտակը գահակալության վերաբերյալ և այդ կերպ սրբագործելով իրենց իշխանությունը, այնուհետև բոլորովին հաշվի չէին նստում նրանց հետ, արհամարհում էին նրանց, անգամ բռնություններ կիրառում նրանց նկատմամբ, ընդհուպ մինչև ծեր՛բակալությունը և բանտ նետելը:

Փոխհարաբերությունների այսպիսի բնույթը, ինչքան էլ, որ տարօրինակ թվա, ձեռնտու էր երկու կողմերին էլ:

Դա ձեռնտու էր մամլուք սուլթաններին, քանի որ խալիֆաներին պահելով իրենցից կախված և ենթակա վիճակում, նրանց օգնությամբ օրինականության բնույթ էին տալիս իրենց իշխանությանը, նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք այդ իշխանությունը գրավում էին իրենց նախորդին սպանելու և արյունահեղության ճանապարհով: Իսկ նրանք սովորաբար միայն այդ ուղիով էին գրավում իշխանությունը և նրանցից շատ քչերին էր հաջողվում բնականոն ճանապարհով մահանալ:

Դա գոհացնում էր նաև խալիֆաներին, որոնք կորցնելով աշխարհիկ իշխանությունը, այլևս ոչ մի քաղաքական և ռազմական դերակատարում չունեին, ինչպես նախկինում, ուստի և ամուր կառչած էին մուսուլմանների հոգևոր առաջնորդի կոչմանը, անգամ եթե այդ գործառույթը ֆիկցիա էր: Դա հնարավորություն էր տալիս նրանց մուսուլմանների կյանքում ինչ–որ դերակատարում ունենալ, ապահովել իրենց նյութա-

կան և ֆիզիկական գոյությունը, ունենալ ոչ թե թափառաշրջիկի հալածական կյանք, այլ մնայուն նստավայր և այլն:

Խալիֆայի կամ մուսուլմանների հոգևոր առաջնորդի և գլխավոր իմամի հարցը կանգնեց օսմանյան սուլթանների, առաջին հերթին սուլթան Սելիմ I առջև, երբ Օսմանյան կայսրությունը հայտնվեց պատմության թատերաբեմում և այն էլ մուսուլմանական ամենահզոր պետության կարգավիճակով, որի տիրապետության տակ էր հայտնվել իսլամադավան ժողովուրդների ճնշող մեծամասնությունը, և որի սահմաններում էին գտնվում մուսուլմանական աշխարհի ամենակարևոր սրբակենտրոնները, ինչպես սուննիների՝ Մեքքան և Մադինան, այնպես էլ շիաների՝ Նաջաֆը և Քերբելան:

Օսմանյան սուլթանների խալիֆա լինելու, ավելի ճիշտ նրանց օրինական խալիֆա լինելու հարցում, մասնագետների, ինչպես պատմաբանների, այնպես էլ կրոնագետների մոտ, գոյություն չունի միասնական տեսակետ: Նրանց ճնշող մեծամասնությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ օսմանյան սուլթանները կեղծ, ինքնակոչ խալիֆաներ էին:

Այդ տեսակետը շատ հստակ կերպով է արտահայտված արաբական պատմության մի այնպիսի հմուտ մասնագետի մոտ, ինչպիսին Ա. Ադամովն է: Ահա թե ինչ է գրված այդ մասին նրա «Արաբական Իրաքը» գրքում, որը պարունակում է շատ արժեքավոր ինֆորմացիա. «Արաբական Իրաքին տիրապետելը թուրքական սուլթանների համար դարձավ ավելի անհրաժեշտ այն բանից հետո, երբ 1517 թ., Եգիպտոսը գրավելուց հետո, Սելիմն ընդունեց «խալիֆայի» տիտղոս, հարկադրելով իր հետ Կահիրեից տարված վերջին Աբբասյանին, Մութավաքիլ իբն Ամրիլ Հաքիմին, հրաժարվել այդ տիտղոսից հօգուտ իրեն և իրեն զիջել «Աստծո մարգարեի տեղապահի» կոչման հետ կապված մուսուլմանական աշխարհի հոգևոր առաջնորդի իրավունքները և առավելությունները»:

Հեղինակը, ինչպես տեսնում ենք «խալիֆա» բառը Սելիմի դեպքում վերցրել է չակերտների մեջ, ցանկանալով ընդգծել օսմանյան սուլթանի խալիֆա լինելու ոչ օրինական, ոչ լեգիտիմ լինելը: Մյուս կողմից, Ա. Ադամովն առանց կասկածի տեղիք տալու ընդգծում է, որ Սելիմը խալիֆայի տիտղոսը ստացել է կամ ժառանգել է ոչ թե օրինական ճանապարհով, այլ հարկադրելով վերջին օրինական Աբբասյան խալիֆային այդ կոչումը զիջել իրեն: Այլ կերպ ասած, սուլթան Սելիմ I և նրան հաջորդած սուլթանները որպես խալիֆաներ ուզուրպատորներ են:

Այս տեսակետին համակարծիք են Ս. Շումովը, Ա. Անդրեևը և մի շարք այլ հեղինակներ: Այդ մասին ակնարկում է նաև Դ. Երեմեևը:

Օսմանյան սուլթաններին անօրինական խալիֆաներ են համարում շիաները: Այստեղ հարցը միայն այն չէ, որ շիաները ավանդաբար հանդես էին գալիս խալիֆայի գահին բացառապես Ալիի հետնորդներին տեսնելու պահանջով, գտնելով, որ միայն ալիականները կամ շիաները ունեն դրա իրավունքը: Նրանք ընդհանրապես գտնում են, որ թուրքական սուլթաններին ոչ ոք չի տվել խալիֆա դառնալու իրավունք, այլ նրանք դա զավթել են: Այդ մասին, թեև ժլատ կերպով, խոսում է մի այնպիսի հեղինակավոր պատմաբան, ինչպես Ֆ. Հիթթին: Նշելով, որ Իրաքը շիիզմի միջնաբերդն էր, նա գրում է, որ «շիիզմի շատ հետևորդներ նայում էին սուննի խալիֆաների վրա, ինչպիսին օսմանյան սուլթաններն էին, որպես ուզուրպատորների»:

Օսմանյան սուլթաններին օրինական խալիֆաներ չէին ընդունում վահաբիները, որոնք ասպարեզ իջան XVIII դարում Արաբիայում և այնուհետև մեծ հեղինակություն նվաճեցին մուսուլմանական աշխարհում: Այս շարժման հիմնադիր Մուհամմադ իբն ալ–Վահաբը և նրա հետևորդները, որոնք կոչվեցին վահաբիներ, բացեիբաց դատապարտում էին օսմանյան սուլթաններին այն բանի համար, որ նրանք ապօրինաբար յուրացրել էին խալիֆաների տիտղոսը:

Սակայն պատմագիտական գրականության մեջ ոչ մի հեղինակ այնպիսի մանրազննին, համակողմանի և խորքային ուսումնասիրության չի ենթարկել օսմանյան սուլթանների խալիֆա լինելու հարցը, ոչ ոք չի ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ դրել այնպիսի աղբյուրներ, ինչպես ակադեմիկոս Վ. Բարտոլդը: Բացի իսլամի վերաբերյալ ընդհանուր բնույթի աշխատություններից, որտեղ շոշափվում է այդ հարցը, Վ. Բարտոլդը այդ խնդրի քննարկմանն է նվիրել հատուկ ուսումնասիրություն, շատ խոսուն վերնագրով՝ «Խալիֆա և սուլթան»: Եվ թեև այս աշխատությունը լույս է տեսել 1912 թ., այդուհանդերձ, նա մինչև օրս չի կորցրել իր արդիականությունը և նրա առաջ քաշած դրույթները, բացատրությունները և եզրակացությունները չեն հնացել և ցարդ հիմնականում պահպանել են իրենց գիտական արժեքը:

Վ. Բարտոլդը հանգամանորեն անդրադառնում է Աբբասյան վերջին խալիֆա Մութավաքիլի հետ սուլթան Սելիմի հանդիպման և նրան իր հետ Ստամբուլ տանելու հարցին, դա համարելով խիստ կարևոր հանգամանք Սելիմի խալիֆա դառնալու կամ առասպելի լուսաբանու-

թյան խնդրում: Այդ հանդիպումն ավելի շուտ եղել է գերեվարություն: Հալեբի մոտ, Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ, եգիպտական մամլուք սուլթան Կանսոհին ուղեկցում էր նաև խալիֆա Մութավաքիլը: Նա կամավոր չէր եկել, այլ դա տուրք էր մամլուք սուլթանների կողմից սահմանված այն նոր կարգի, որի համաձայն մամլուք սուլթանների կարևոր տեղաշարժերի, այդ թվում և պատերազմների ժամանակ, խալիֆաները պարտադիր կերպով ուղեկցում էին սուլթաններին: Դա առանձնահատուկ իմաստ ու շուք էր տալիս սուլթանների գործողություններին:

Ուրեմն Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ, որն ավարտվեց մամլուք սուլթանի պարտությամբ, խալիֆա Մութավաքիլը, որը, ինչպես նշվեց մամլուքի կողքին էր, գերի վերցվեց սուլթան Սելիմ I կողմից: Ահա այդ ժամանակ տեղի է ունենում նրանց հանդիպումը Հալեբի մոտ, այսպես կոչված «Կապույտ հրապարակում»: Սելիմը շատ սիրալիր է վարվում խալիֆայի հետ, անգամ խոստանում նրան վերադարձնել Բաղդադ, խալիֆաների մայրաքաղաքը: Նա Մութավաքիլին հագուստ և դրամ է նվիրում ու թույլատրում է վերադառնալ Հալեբ, սակայն նրա վրա հսկողություն է սահմանում:

Այդ նույն ժամանակ, 1516 թ. հոկտեմբերի 17–ին, ինչպես այդ մասին արդեն հիշատակել ենք, Կահիրում Կանսոհի փոխարեն սուլթան հռչակվեց Թուման բեյը: Սակայն դրա օրինականության համար անհրաժեշտ էր խալիֆայի «համաձայնությունը» և օրհնությունը, իսկ խալիֆա Մութավաքիլը գերյալի վիճակում գտնվում էր Սելիմ I մոտ:

Կահիրեում ելքը գտան շատ հետաքրքիր ձևով: Դեռևս կենդանի էր նախկին խալիֆա, Մութավաքիլի հայրը՝ Մուսթամսիկը, որը խալիֆա էր եղել 1497–1509 թթ. և խալիֆայությունից հրաժարվել էր հօգուտ իր որդու՝ տարիքի և վատ տեսողության պատճառով: Սակայն նա իր մոտ մշտապես պահում էր իր որդու կողմից տրված լիազորագիր–հավաստագիրն առ այն, որ նրա բացակայության դեպքում ինքը կարող էր կատարել խալիֆայի պարտականությունները: Թուման բեյն օգտվեց այդ հանգամանքից և ավարտին հասցրեց իր սուլթան օծվելու արարողությունը, տալով դրան օրինական բնույթ: Օծումը կատարեց Մուսթամսիկը:

Այսպիսով, ստացվեց յուրահատուկ դրություն: Փաստորեն գոյություն ունեին երկու խալիֆա, մեկը Կահիրեում, որը դարձել էր Սելիմ I թշնամի մամլուք սուլթանի կամակատարը, իսկ մյուսը՝ նրա մոտ գտն-

վող Մութավաքիլը: Պարզ է, որ նման իրավիճակը, որը հակասում էր օսմանյան սուլթանի քաղաքական շահերին և ծրագրերին, երկար ժամանակ չէր կարող շարունակվել: Անհրաժեշտ էր այդ հարցը լուծել և օսմանյան սուլթան Սելիմ I իր համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրը լուծեց թուրքավարի: Նա գրավեց Կահիրեն և կախաղան բարձրացրեց Թուման բեյին: Դրանով ասպարեզից վերացավ նաև Մուսթամսիկի խնդիրը որպես խալիֆա: Իսկ ինչ վերաբերում է գերվածի կարգավիճակում գտնվող մյուս խալիֆային՝ Մութավաքիլին, ապա Սելիմը նրան իր հետ տարավ Կահիրե, մշտապես հսկողության տակ պահելով: Բայց այստեղ նրան Սելիմը չթողեց խալիֆայություն անել:

Սելիմ I, հաստատվելով Եգիպտոսում և ամրապնդելով իր դիրքերը, պատրաստվում էր վերադառնալ իր մայրաքաղաքը, Ստամբուլ: Որոշ աղբյուրների համաձայն նա Մութավաքիլին իր հետ է վերցնում, իսկ որոշ հեղինակներ նշում են, որ օսմանյան սուլթանը նրան նավով Ալեքսանդրիայից ուղարկում է Ստամբուլ, հետո ինքը մեկնում: Այս վերջին տեսակետին է նաև Վ. Բարտոլդը, որը, հենվելով Իբն Իյասի հաղորդման վրա, նշում է, որ երբ Սելիմը վերադարձավ Ստամբուլ, ապա Եգիպտոսից բոլոր արտաքսվածները «խալիֆայի (իմա Մութավաքիլի — Ն. Հ.) գլխավորությամբ պետք է դիմավորեին իր մայրաքաղաքը վերադարձող սուլթանին: Տեսնելով վեհապետին, խալիֆան ցանկանում էր ծիուց ցած իջնել նրա առաջ: Սելիմը չթողեց և ընդհանրապես նրան մեծ հարգանքներ ցուցաբերեց»:

Ահա այս բոլորից հետո, Վ. Բարտոլդը ընդհուպ մոտենում է գլխավոր հարցի պատասխանին, արդյո՞ք Աբբասյան վերջին խալիֆա Մութավաքիլը պաշտոնապես հրաժարվել է խալիֆայությունից հօգուտ Սելիմի, այլ կերպ ասած, արդյո՞ք Սելիմը հանդիսանում է լեգիտիմ խալիֆա, թե, ոչ: «Հետագայում,— կարդում ենք Վ. Բարտոլդի մոտ,— երբ պետք եղավ հիմնավորել օսմանյան սուլթանի իրավունքը խալիֆայության նկատմամբ, հորինվեց լեգենդ, որ իբր թե Մութավաքիլը պաշտոնապես հրաժարվել է իր խալիֆայությունից հօգուտ Սելիմի»: Ինչպես տեսնում ենք, Վ. Բարտոլդի դիրքորոշումը շատ հստակ է: Նա Սելիմի խալիֆա դառնալը օրինական խալիֆայի կողմից հրաժարվելու ուղիով, համարում է հետագայում ստեղծված լեգենդ, ուրեմն և իրականությանը չհամապատասխանող: Այս միտքն ավելի ընդգծելու համար, հեղինակավոր իսլամագետը ավելացնում է. «Ըստ նորագույն թուրքական հեղինակներից մեկի՝ Քեմալ բեյի, այդ արարողությունը (Սելիմի խալիֆա

դառնալու — Ն. Հ.) տեղի է ունեցել Սոֆիայի մզկիթում», ու ավելացնում. «Նման արարողության մասին ժամանակակիցների մոտ ոչ մի տեղեկություն չկա: Եգիպտոսում և Սիրիայում նախկինի պես Մութավաքիլին համարում էին խալիֆա, և դամասկոսյան անոնիմը սկսում է 926/1520 թ. իրադարձությունների շարադրանքը այն դիտողությունից, որ այդ ժամանակ խալիֆա եղել է Մութավաքիլը, որը գտնվում էր Ստամբուլում»:

Այստեղ շատ կարևոր է Վ. Բարտոլդի դիտողությունն առ այն, որ ժամանակակիցների մոտ այդպիսի տեղեկություն չկա: Շատ քիչ հեղինակ կարող է գտնվել, որ իրավունք ունի անվերապահորեն նման պնդում անել: Այդ քչերից մեկն էլ հենց Վ. Բարտոլդն է, որի «Խալիֆա և սուլթան» աշխատությունն ապշեցնում է միջնադարյան աղբյուրների և ժամանակակից ուսումնասիրությունների արտակարգ լայն ընդգրկումով: Նրա ձեռքի տակ են եղել միջնադարյան հազվագյուտ արաբական, պարսկական սկզբնաղբյուրներ, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, ռուսերեն և այլ լեզուներով հրատարակված աշխատություններ, որոնց քննական ուսումնասիրության վրա է նա կառուցում իր եզրակացությունները:

Ահա հենվելով այդ աղբյուրների վրա, նա հերքում է նաև գերմանացի հեղինակ Վեյլի արտահայտած կարծիքը, որը բավականին տարօրինակ է: Նա ենթադրում է, որ Մութավաքիլը գտնվել է Ստամբուլում Սելիմի մահից հետո էլ, որը տեղի է ունեցել 1520 թ.: Վեյլը այն կարծիքին է, որ խալիֆա Մութավաքիլը սուլթան Սուլեյմանից է իրավունք ստացել վերադառնալ Ստամբուլից Կահիրե «միայն իր բոլոր իրավունքներից հօգուտ օսմանյան սուլթանի նոր հրաժարականից հետո»: Ստացվում է, որ Մութավաքիլը երկու անգամ է հրաժարվել իր խալիֆայական իրավունքներից, առաջին անգամ հօգուտ Սելիմի, իսկ երկրորդ անգամ՝ հօգուտ նրա որդու, սուլթան Սուլեյմանի: Առարկելով Վեյլին, որ Մութավաքիլն իբր նորից է հրաժարվել իր խալիֆայական իրավունքներից, այս անգամ հօգուտ Սուլեյմանի, Վ. Բարտոլդը նշում է. «բայց այդ մասին ոչ մի տեղեկություն չկա: Կուտբ ադ–Դին Մեքքացին, որն անձամբ է տեսել խալիֆային 943/1536–37 թ. ուղղակի ասում է, որ Մութավաքիլը «վերադարձավ Եգիպտոս և այնտեղ դարձավ խալիֆա», որպիսին և նա մնաց մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 950 թ. շա'բանի 12–ին/1543 թ. նոյեմբերի 10–ին. միայն նրա մահվանով Եգիպտոսում դադարեց «աբբասյան անվանական խալիֆայությունը»:

Վ. Բարտոլդն ի մի բերելով իր կարծիքն այս կնճռոտ և արհեստականորեն խճողված հարցի վերաբերյալ, եզրակացնում է. «Հակառակ Վեյլի կարծիքի, մենք, այսպիսով, ոչ մի հիմք չունենք չվստահել XVI դարի հեղինակներից մեկին, որ եգիպտական խալիֆայությունը Սելիմի կողմից նվաճվելուց հետո դադարեց ինքն իրեն, առանց Մութավաքիլի որևէ հանդիսավոր հրաժարականի իր իրավունքներից հօգուտ Սելիմի կամ Սուլեյմանի»: Վ. Բարտոլդը բաժանում է այդ հեղինակի տեսակետն այն մասին, որ մամլուք սուլթանները չէին օգտվում ժառանգականության իրավունքից և չունեին որևէ հեղինակություն, ուստի Աբբասյան խալիֆաները պետք էին նրանց, որպեսզի նրանց միջոցով հաստատվեն գահի վրա և այդ կերպ իրենց իշխանությանը տան օրինական բնույթ: «Մինչդեռ Սելիմին ուլեմաները (մուսուլման աստվածաբանները — Ն. Հ.) հայտարարեցին, որ նրան այդպիսի հաստատում պետք չէ»:

Այստեղ նկատի էր առնվում այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը հզոր կայսրություն էր, սուլթանները շատ զորավոր էին, նրանք ունեին անառարկելի հեղինակություն և հանդիսանում էին մուսուլմանների տիրակալը: Նման պայմաններում նրանք, ըստ ուլեմաների, ոչ մի անհրաժեշտություն չունեին իրենց իշխանության օրինականության հարցում որևէ երկրորդ կողմի հաստատմանը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ Աբբասյան վերջին խալիֆայից սուլթան Սելիմին խալիֆայությունը փոխանցելու վարկածը շինծու է և չի համապատասխանում իրականությանը: Պատմության մեջ նման գործողություն տեղի չի ունեցել: Հետևաբար, սուլթան Սելիմը I և նրան հաջորդած օսմանյան բոլոր սուլթանները իրավունք չունեն կոչվելու մուսուլմանական աշխարհի, բոլոր մուսուլմանների օրինական հոգևոր առաջնորդ–խալիֆա:

Նրանք ուզուրպատորներ են: Այդպիսին են պատմական փաստերը:

2. Հայազգի դ'Օսսոնի հոգևոր սուվերենության տեսադրույթը օսմանյան սուլթանների խալիֆա լինելու վերաբերյալ

Եթե մինչև հիմա մենք հարցը քննարկում էինք այդ փաստը լինելու կամ չլինելու առումով, ապա այժմ հարկ ենք համարում դրան անդրադառնալ տեսության առումով, տեսություն, որի հիմնադիրն է հայազգի դ'Օսսոնը: Այդ կապակցությամբ ահա թե ինչ է գրում Վ. Բարտոլդը.

«Մութավաքիլի, վերջին եգիպտական Աբբասյանի կողմից խալիֆայությունը Սելիմին փոխանցելու տեսությունը ստեղծվել է XVIII դարի վերջում թուրքական հայի կողմից: Այդ կապակցությամբ հենց այդ ժամանակ էլ առաջացավ բոլոր մուսուլմանների նկատմամբ թուրքական սուլթանի հոգևոր սուվերենության հասկացողությունը, եթե անգամ նրանք ենթարկված չէին նրան որպես աշխարհիկ վեհապետի»:

Հայազգի Մուրաջա դ'Օսսոնը ծնվել է 1740 թ. Ստամբուլում և մահացել 1807 թ. Փարիզում: Նա երկար ժամանակ որպես դիվանագետ ծառայության մեջ է եղել շվեդական արքունիքում, հանդիսանալով Շվեդիայի գործերի հավատարմատարը, ապա նաև դեսպանորդը Օսմանյան կայսրությունում: Դիվանագիտական գործունեությանը զուգահեռ, նա որպես արևելագետ, զբաղվել է նաև գիտական աշխատանքներով, մասնավորապես գրել է «Օսմանյան կայսրության ընդհանուր նկարագիրը» ֆրանսերեն աշխատությունը՝ յոթ հատորով, որը նրա մահվանից հետո հրատարակել է նրա որդին՝ Աբրահամ դ'Օսսոնը: Վ. Բարտոլդն անդրադառնում է նրա այդ աշխատությանը և այնտեղից վերցնում դ'Օսսոնի տեսության վերաբերյալ տեղեկությունը: Այդ կապակցությամբ նա գրում է, որ ծագումով հայ Մուրաջա դ'Օսսոնը իր ընդածակ աշխատության վրա աշխատում էր շվեդական թագավորի հովանավորության ներքո և նա հեղինակն է մի գրքի, որտեղ առաջին անգամ է ներկայացվում Մութավաքիլի կողմից Սելիմին խալիֆայությունը փոխանցելու տեսությունը:

Ո՞րն է այդ տեսության էությունը, ինչով է նա գրավել մասնագետների ուշադրությունը և այդպիսի տեղ գրավել խալիֆայության հարցում:

Դ'Օսսոնի տեսության համաձայն թուրքական սուլթանը, որպես եգիպտական Աբբասյանների ժառանգորդ, օժտված է հոգևոր սուվերենությամբ, որը տարածվում է բոլոր մուսուլմանների վրա: Նույնիսկ այն երկրները, որոնց տիրակալները, ինչպես Մարոկկոյի կայսրը, չեն ենթարկվում օսմանյան սուլթանի աշխարհիկ իշխանությանը, նրանք, ըստ դ'Օսսոնի, ընդունում են նրա հոգևոր իշխանությունը: Վ. Բարտոլդն ընդունում է, որ դ'Օսսոնի տեսությունը նորություն էր եվրոպական գիտության մեջ, թեև որոշ հեղինակներ, ինչպես Վոլնեն, կամ հենց ինքը, Վ. Բարտոլդը, ինչպես արդեն նշել ենք, չի ընդունում Մութավաքիլի կողմից խալիֆայությունը սուլթան Սելիմին փոխանցելու փաստի իսկությունը: Այդուհանդերձ, Վ. Բարտոլդի վկայությամբ, «դ'Օսսոնի բա-

նածնը հաջողություն ունեցավ ինչպես մուսուլմանական աշխարհում, այնպես էլ Եվրոպայում»:

Թուրքական սուլթանների հոգևոր սուվերենը կամ խալիֆա լինելու վերաբերյալ դ'Օսսոնի տեսությունն առաջինը ընդունեց Ռուսաստանը: Կայսրուհի Եկատերինա II այն օգտագործեց 1774 թ. ռուս–թուրքական Քուչուկ–Կայնարջիի պայմանագրի կնքման ժամանակ ծագած բարդությունները հաղթահարելու ժամանակ:

Անկախ այն բանից, թե ինչպես են որոշ հետազոտողներ մոտենում թուրքական սուլթանի բոլոր մուսուլմանների հոգևոր սուվերենը լինելու դ'Օսսոնի տեսությանը, մասնագետներն, այդուհանդերձ, ընդունում են, որ նա հանդիսանում է «խալիֆայության» գաղափարի վերջին արտահայտությունը խալիֆայության ինստիտուտի գոյության տասնմեկ դարերի ընթացքում: Այդ տեսությունը մեծ դերակատարություն ունեցավ թուրքական սուլթանների «խալիֆա» լինելու, նրանց նման կարգավիճակի խնդրում, մանավանդ գործնական հարցերում, պետությունների փոխհարաբերություններում ինչ–որ փոխզիջողական լուծում գտնելու գործում, սակայն նա չկարողացավ և չէր էլ կարող հերքել օսմանյան սուլթանների ոչ լեգիտիմ խալիֆաներ լինելու միանգամայն հիմնավոր տեսակետը:

Գլուխ երրորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ (XVI–XVIII ԴԴ.)

I. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

1. «Օսմանի սուրը» կայսրության միասնականության պահպանման գլխավոր զենք

Օսմանյան կայսրությունը ռազմա–ֆեոդալական պետություն էր, որի գոյությունը, հզորությունը և տեղը միջազգային հարաբերություններում պայմանավորված էր, ավելի ճիշտ, հիմնված էր նվաճումների քաղաքականության վրա: Տարածքային նվաճումները, որն իր գոյության առաջին օրվանից որդեգրեց օսմանյան բեյլիքը, ապա նրան փոխարինելու եկած օսմանյան սուլթանությունը և, վերջապես, օսմանյան կայսրությունը, չէր նշանակում սոսկ երկրների նվաճում: Նա ինքնաբերաբար նշանակում էր նաև նոր ժողովուրդների նվաճում, ժողովուրդներ, որոնք որպես բնիկներ, դարեր շարունակ ապրել են այդ տարածքների վրա, ստեղծել իրենց ինքնատիպ մշակույթը, քաղաքակրթությունը, ինչպես արաբները, հույները, հայերը և այլն: Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից, ժողովուրդների նվաճումը ենթադրում էր նրանց բռնության մեջ պահել:

Նվաճումը և բռնությունը միևնույն մեդալի երկու կողմերն են, առանց մեկի, չկա մյուսը:

Արաբները, օսմանյան նվաճումների արդյունքում հայտնվելով օսմանյան տիրապետության ներքո, մոտ չորս հարյուր տարի բռնա-

կալական լծի տակ ապրելու «հաճույքն» ունեցան: Անմիջապես շփվելով օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների հետ, նրանք այդ իշխանությունների, նրանց քաղաքականության մասին իրենց պատկերացումները կազմեցին այդ անմիջական շփումների արդյունքում: Ըստ այդմ էլ, աստիճանաբար նրանց մոտ ձևավորվեցին նրանց պատկերացումները օսմանյան կայսրության, նրա բնույթի և բարքերի մասին:

Արաբ բազմաթիվ հեղինակներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, տնտեսագետներ և այլն, յուրաքանչյուրը յուրովի, անդրադարձել է այս խնդրին և տվել իր գնահատականը: Դրանց մեջ կցանկանայինք առանձնացնել Շակիկ Ղարբալին, Հաֆիզ Ֆուաադ Հասանին, Մրվան Մուդավարին, Ֆիլիպ Հիթթիին, Ամին Սաիդին, Սամիր Արբաշին, Սալիհ Զահր ադ–Դինին, Նաիմ ալ–Յաֆիին, Էմիլ Թումային և այլոց:

Նրանք համամիտ են ամենագլխավոր հարցում, այն է՝ Օսմանյան կայսրությունը բռնատիրական, դիկտատորական պետություն էր, որը նրանք համարում էին զուլումի երկիր: Այս սահմանումը, կարելի է ասել, ընդունելի դարձավ բոլորի համար, իսկ «զուլում» արաբերեն բառը որպես եզր մտավ համաշխարհային քաղաքագիտական բառարանում:

Օսմանյան կայսրության բնութագիրը, մեր կարծիքով, շատ խորն ու ամբողջական է տրված եգիպտացի փիլիսոփա, սոցիոլոգ և քաղաքագետ պրոֆեսոր Շակիկ Ղարբալի կողմից: Նա խորապես ուսումնասիրել է Օսմանյան կայսրության պատմությունը և թուրքական կառավարության քաղաքականությունը ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և եգիպտացիների ու արաբական մյուս ժողովուրդների նկատմամբ: Նա, որպես մահմեդական մտավորական քաջածանոթ է իսլամին, նրա օրենքներին, այդ թվում և շարիաթին: Նա տվել է օսմանյան պետության և հասարակության անատոմիան, որը կարող է լույս սփռել արաբների կողմից օսմանյան կայսրության էության և բնույթի բացահայտման շատ կողմերի վրա: Իր խորիմաստ վերլուծությունների հիման վրա, Շակիկ Ղարբալը գալիս է այն եզրակացության, որ «Օսմանյան կայսրության ֆիասկոն, նրա լճացումը և նեխումը պատճառաբանված են այն հանգամանքով, որ նա չէր խարսխվում կրոնական, քաղաքական կամ սոցիալական նոր գաղափարների վրա, այլ հենվում էր պատերազմների և էքսպանսիայի վրա, և դռները չէր բացում տարբեր կրոններին և ազգություններին պատկանող իր բազմաթիվ ռայյաների առջև»: Ահա այդ քաղաքականությունը, որը շատ տառապանքներ պատճառեց իրեն ենթա-

կա մուսուլման և քրիստոնյա հպատակներին, ի վերջո կործանարար եղավ նաև Օսմանյան կայսրության համար:

Հաֆիզ Ֆուադ Հասանը օսմանյան կայսրությունը համարում է ժողովուրդների բանտ: Այս տեսակետը լայն տարածում է գտել արաբական պատմագիտության մեջ, որը, կարելի է ասել, հանդիսանում է Օսմանյան կայսրության բնորոշ գծերից մեկը:

Ուշագրավ է Ֆ. Հիթթի տեսակետը: Նշելով, որ «Օսմանյան կայսրությունն ըստ էության իր բնույթով և կառուցվածքով ռազմական և դինաստիական կայսրություն էր», հիմնավոր կերպով բացատրում է, թե որն էր նրա գլխավոր խնդիրը կամ նպատակը: Նրա բնորոշմամբ Օսմանյան կայսրության «գլխավոր նպատակը ոչ այնքան նրա հպատակների բարեկեցությունն էր, որքան պետության բարեկեցությունը՝ մարմնավորված սուլթան–խալիֆայի անձնավորությամբ»: Եվ նա միանգամայն ճիշտ կերպով է բացատրում, թե ինչու հպատակների բարեկեցությունը չէր կարող լինել թուրքական պետության գլխավոր խնդիրը: Պատճառներից մեկը Ֆ. Հիթթին համարում է այն հանգամանքը, որ կայսրության «հպատակները տարբեր ազգությունների՝ արաբների, ասորիների, իրաքցիների, եգիպտացիների, բերբերների, քրդերի, հայերի, սլավոնների, հույների, ալբանացիների մի կոնգլոմերատ էր, տարբեր հավատքներով, լեզուներով և ապրելաձևով, որոնց միասին էր պահում Օսմանի սուրը»:

Ֆ. Հիթթիի այս մեկնաբանությունը շատ էական է Օսմանյան կայսրության բնույթը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար: Այստեղ կարևոր է այն պարագան, որ այդ կայսրության նպատակն իր հպատակների բարեկեցությունն ապահովելը չէր, և մյուս, ոչ պակաս դիտողությունն այն մասին, որ կայսրության մեջ մտնող բազմաթիվ ժողովուրդներին միատեղ պահողը, ոչ թե նրանց ազգային, քաղաքական, տնտեսական կամ հոգևոր–մշակութային ընդհանրությունը կամ ընդհանուր շահերն էին, այլ «Օսմանի սուրը»: Շատ դիպուկ է ասված:

Օսմանյան կայսրությանը բնորոշ գծերից մեկը, որն ուղղակի առնչություն ունի նրա բնույթի բացահայտման հետ, Ֆ. Հիթթին համարում է նրա ռազմամոլ լինելը և ամեն ինչ այդ նպատակին ենթարկելը: Այդ կապակցությամբ նա շեշտում է այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը որպես պետություն կազմակերպված էր նախ և առաջ պատերազմների համար և ոչ թե իր ժողովրդի բարեկեցության համար

(«A state organized primarily for warfare than for the welfare of its people»)»:

Այս բոլորից բացի, Ֆ. Հիթթին մատնանշում է մի կարևոր հանգամանք, որը բնորոշ էր այդ կայսրությանը: Դա այն «բաժանարար գիծն էր, որ հստակորեն քաշված էր մուսուլմանների և քրիստոնյաների, անգամ մուսուլման թուրքերի և մուսուլման արաբների միջև»:

Այս վերջին պարագան շատ էական է օսմանյան կայսրության իսկական բնույթն ըմբռնելու և բացատրելու տեսակետից: Եթե բաժանարար գիծ գոյություն ուներ մուսուլմանների և քրիստոնյաների միջև, ապա դա ինչ–ոչ կերպ կարելի է հասկանալ: Բայց եթե այդպիսի բաժանարար գիծ էին թուրքական իշխանություններն անցկացրել միևնույն կրոնին պատկանող արաբների և թուրքերի միջև, ապա դրանից արդեն ռասայականության հոտ է փչում:

Եվ իրավացի է Ֆ. Հիթթին, երբ նշում է, որ օսմանյան կայսրության հռչակած նման սկզբունքները, հետապնդած նպատակները և բնույթը իրենց մեջ պարունակում էին նրա հիմքերի նեխման և քայքայման սերմերը:

2. «Արաբները թուրքերից ավելի քաղաքակիրթ ժողովուրդ են»

Արաբ հեղինակները, որոնք հմուտ են Օսմանյան կայսրության պատմության իմացության մեջ, միակարծիք են նաև մի կարևոր հարցում: Նրանք, հենվելով փաստերի վրա, գալիս են այն եզրակացության, որ օսմանյան կայսրության ներքին քաղաքականության բնորոշ գծերից մեկը նրանում բնակվող տարբեր ժողովուրդներին միմյանց դեմ լարելն էր էթնիկական և կրոնադավանական հողի վրա և զանգվածային ջարդերի կազմակերպումը կայսրության մեջ մտնող տարբեր շրջաններում: Մրվան ալ–Մուդավարը, Ուսման Թուրքը, Հաֆիզ Ֆուադ Հասանը, Ամին Սաիդը, Էմիլ Թուման և այլ արաբ հեղինակներ իրենց ուսումնասիրություններում հանգամանորեն լուսաբանել են արաբների, ասորիների, հայերի, բուլղարների, հույների և կայսրության հպատակ այլ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ կիրառվող բռնությունները, ջարդերը և կոտորածները: Այս հարցում նրանց եզրակացությունն այն է, որ օսմանյան իշխանավորները նման քաղաքականությամբ փորձում էին հնազանդության մեջ պահել ոչ թուրք ժողովուրդներին, քրիստոնյա, թե մահմեդա-

կան, պահպանել կայսրության տերտորիալ ամբողջականությունը և երկարաձգել նրա գոյությունը:

Վերևում, սույն աշխատության առաջին գլխում, նշվեց, որ արդեն սելջուկյան ժամանակաշրջանում, հենց իրեն՝ սելջուկյան ցեղային ավագանու կողմից, որն անջատվել էր թուրքական զանգվածից և նրա վրա արդեն նայում էր վերևից, «թյուրք» բառը նախատական իմաստ էր ձեռք բերել և օգտագործվում էր որպես «ռամիկի» և «պլեբեյի» հոմանիշ: Այս հարցին յուրովի է անդրադարձել լիբանանցի արաբ պատմաբան Սալիհ Զահր ադ–Դինը «Հայերը և արաբները թուրանիզմի և սիոնիզմի միջև» իր աշխատության մեջ:

Սալիհ Զահր ադ–Դինը այս հարցը քննության է առնում արաբական և հայկական նյութի հիման վրա, ելակետ ունենալով այն հանգամանքը, որ թեև «արաբները և հայերը մի երկրի և ազգի զավակները չէին, բայց նրանք ... մի ճակատագրի զավակներն էին»: Նա նկատի ունի օսմանյան դարաշրջանը, երբ երկու ժողովուրդն էլ, արաբները և հայերը, գտնվում էին միևնույն՝ օսմանյան տիրապետության տակ: Բացատրելով իր միտքը, Զահր ադ–Դինը ընդգծում է, որ «նրանց թշնամին մեկ էր»: Նա ի նկատի ունի բռնակալական օսմանյան լուծը: «Թուրք–օսմանյան վարչությունը,— գրում է նա,— սկզբից նեթ փորձում էր թուրքացնել արաբներին և հայերին, թուրանացնել նրանց»: Նշելով, որ դա հեշտ գործ չէր օսմանյան իշխանությունների համար, Սալիհ Զահր ադ–Դինն իր տեսակետը հաստատելու համար հետևյալ փաստարկներն է բերում.

«Առաջին, արաբները թուրքերից ավելի քաղաքակիրթ էին և թվաքանակով նրանցից ավելի շատ:

Երկրորդ, արաբները իսլամի դրոշակակիրներն են և նրա մարգարեներից Մուհամմադը արաբ է և Կորանի լեզուն արաբերենն է:

Երրորդ, արաբները կառչած էին իրենց ազգությանը, քաղաքակրթությանը, պատմությանը և լեզվին»:

Նա անվերապահորեն համանման որակներ ու հատկանիշներ է տեսնում ու առանձնացնում նաև հայերի մոտ:

Այս բոլորից հետո, Սալիհ Զահր ադ–Դինը ի մի է բերում այն որակական տարբերությունները, որոնք ըստ նրա գոյություն ունեն մի կողմից արաբների ու հայերի, իսկ մյուս կողմից թուրքերի միջև: Նա ընդգծում է նման հինգ տարբերություններ: Ահա նրանք.

«Առաջին — արաբները և հայերն ունեն լեզու, պատմություն և մշակույթ,— թուրքերը չունեն ո՛չ լեզու, ո՛չ պատմություն և ո՛չ էլ մշակույթ:

Երկրորդ — արաբները և հայերն ունեն ազգություն,— թուրքերը ազգություն չունեն:

Երրորդ — արաբները և հայերը ժողովուրդ և ազգ (ումմա) են,— թուրքերը ժողովուրդ և ազգ (ումմա) չեն:

Չորրորդ — արաբները և հայերը պրոբլեմ ունեն,— թուրքերը պրոբլեմ չունեն:

Հինգերորդ — արաբները հող և հայրենիք ունեն,— թուրքերը ո՛չ հող և ո՛չ էլ հայրենիք ունեն»:

Կարծում ենք, որ միանգամայն հիմնավորված է արաբ պատմաբանի այս ինքնատիպ ու տպավորիչ տեսակետը:

Ընդհանուր գծերով ահա այսպիսին են արաբների կողմից Օսմանյան կայսրությանը տրված գնահատականները:

Ի մի բերելով Օսմանյան կայսրության էության կամ բնույթի վերաբերյալ արաբների վերոնշյալ կարծիքները, կարելի է ասել, որ դրանք հանգում են հետևյալին:

Առաջին, Օսմանյան կայսրությունն ընկալուչ չէր նոր գաղափարների նկատմամբ, ուստի և օրգանապես ընդունակ չէր վերակառուցվել ըստ այդ նոր քաղաքական, հոգևոր–կրոնական և սոցիալական գաղափարների, հաշվի առնելով կայսրության մեծամասնությունը կազմող ժաղովուրդների պահանջները: Նա գերի մնաց կայսրության փոքրամասնությունը կազմող թուրքերի պատկերացումներին ու պահանջներին, որոնք հնարավոր էր բավարարել միայն հին, ավանդական միջոցներով, բռնությամբ, հալածանքներով, պատերազմների ու էքսպանսիայի ուղիով: Շակիկի տեսակետի համաձայն, օսմանյան կայսրությունը փրկելու համար պետք էր բացել ռայյաների, այսինքն հպատակների ձայնը լսելի դարձնելու և նրանց շահերը հաշվի առնելու դռները: Մինչդեռ թուրքական սուլթաններն այդ դռները դրեցին ավելի ամուր փականի տակ, բաց պահելով բռնությունների, պատերազմների ու ծավալապաշտ քաղաքականության դռները:

Երկրորդ, Օսմանյան կայսրությունը վերածվել էր ժողովուրդների բանտի, որտեղ ոչ թուրք ժողովուրդների զանգվածային ջարդերը բարձրացվել էին պետական քաղաքականության մակարդակի, որոնք առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերածվեցին հայերի, ա-

սորիների և հույների ցեղասպանության իրագործմանը, իսկ արաբների նկատմամբ՝ ցեղասպանության կիրառման փորձերի:

Երրորդ, Օսմանյան կայսրությունն իր բնույթով, որպես պետություն, առաջին պլանի վրա դնում էր պետության և նրա խորհրդանիշը հանդիսացող սուլթանի ու նրա վերնախավի շահերի ապահովումը, անտեսելով տասնյակ միլիոնավոր մարդկանց, տարբեր ժողովուրդների շահերը ու բարեկեցության հարցերը: Ուստի այդ պետությունը խորթ էր արաբների և մյուս ոչ թուրք ժողովուրդների համար: Դա նրանց պետությունը չէր:

Չորրորդ, օսմանյան կայսրությունը, նրա գաղափարախոսությունը, ողջ կառույցները հարմարված էին պատերազմների, նվաճումների և այլ ժողովուրդների հարստահարման համար: Այստեղից տրամաբանորեն բխում է, որ նա կդադարեր կայսրություն լինելուց և գոյության իրավունքից, ու պատմության թատերաբեմից անմիջապես կիջներ, հենց որ զրկվեր իր այդ «պատմական առաքելությունն» իրագործելու հնարավորությունից:

Օսմանյան կայսրության հետ հենց այդպես էլ պատահեց: Նա չդիմացավ նոր գաղափարներին և չբռնեց պատմության քննությունը:

Բայց դա հետո:

Այս հարցին անդրադառնալն անհրաժեշտ էր պատկերացնելու համար, թե ինչպիսի կայսրության սահմաններում էին հայտնվել արաբական երկրները, ինչպես նաև այլ ոչ թուրք ժողովուրդները, ինչպես նաև ճիշտ հասկանալու համար կայսրության շրջանակներում ծավալված իրադարձությունների բնույթը և նրանց ներքին զսպանակները, ինչպես նաև արաբների դիրքորոշումը հանգուցային հարցերի նկատմամբ, որոնք իրենց լուսաբանությունը կգտնեն սույն հատորի հետագա էջերում:

II. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Վարչատարածքային բաժանման ընդհանուր սկզբունքները

Արաբական երկրների վարչատարածքային բաժանումը միտված էր օսմանյան տիրապետության պահպանմանը և ուժեղացմանը: Հետևաբար, դա ոչ թե ձևական բնույթ ունեցող հարց էր, այլ սկզբունքային, որից շատ բանով էր կախված կայսրության կենսունակությունը, նորմալ գործունեությունը և տարածքային ամբողջականությունը:

Վարչատարածքային բաժանման հիմքում դրվեց յուրաքանչյուր երկրի քաղաքական և տնտեսական կարևորությունն ու յուրահատկությունները, ինչպես նաև նրանց պատմական առանձնահատկությունները հաշվի առնելը: Իսկ դրանք կայսրության տարբեր մասերում տարբերվում էին միմյանցից: Բալկաններում տեղական կառույցների համակարգը, օրինակ, տարբերվում էր արաբականից, և, ընդհակառակը:

Օսմանյան տիրապետության շրջանում տեղի ունեցավ մի կարևոր նորամուծություն: Դա ամբողջ կայսրությունում վարչատարածքային միավորումների կատեգորիաների սահմանումն ու նրանց ու անվանակոչումն էր:

Կայսրության մեջ մտնող արևելյան տարածքները բաժանվեցին փաշալիք–էյալաթների, վիլայաթների, սանջաքների և կազաների:

Փաշալիքները կամ **էյալաթները** ամենախոշոր վարչական միավորներն էին, որոնց գլուխ կանգնած էին սուլթանի կողմից նշանակված փաշաները: Դրանք խոշոր նահանգներ–պրովինցիաներն էին:

Օսմանյան կայսրությունը XVI դարում, արաբական նվաճումներից հետո, բաժանված էր այդպիսի 16 էյալաթների, խոշոր մարզերի:

Վիլայաթները նույնպես նահանգներ կամ մարզեր էին, ինչպես էյալաթները, սակայն այն տարբերությամբ, որ նրանք իրենց ծավալներով զիջում էին էյալաթներին և նրանց գլուխ կանգնած էին վալիները, որոնք իրենց աստիճանակարգով փաշաներից ավելի ցածր էին կանգնած:

Սանջաք կամ **լիվա** բառացիորեն նշանակում է դրոշ, դրոշակ, որի ներքո սովորաբար միավորվում էին զինվորական–սիփահիները որ-

պես մեկ զինվորական միավոր: Սակայն հետագայում դա վերաիմաստավորվեց և ձեռք բերեց վարչատարածքային միավորի իմաստ, որը համապատասխանում է օկրուգին կամ գավառին: Նրա գլուխ կանգնած էր կայմակամը:

Կազա, որը համարվում էր օսմանյան կայսրության վարչատարածքային ամենափոքր միավորը: Հայերենում դրա համարժեքը հավանաբար կարելի է համարել գավառակը կամ փոքր շրջանը:

2. Կառավարման կենտրոնածիգ համակարգը և նրա առանձնահատկությունները

Կայսրությունում, կենտրոնում և տեղերում, հաստատվեց կառավարական դաժան և խիստ կենտրոնացված համակարգ:

Համակարգի վերևում սուլթանն էր, որին պաշտոնապես կոչում էին փադիշահ: Նա էր Օսմանյան կայսրության և նրա բոլոր հպատակների, այդ թվում և արաբների, ամենաբարձր քաղաքական, ռազմական, և ինչպես նշեցինք նախորդ էջերում, թեև ոչ լեգիտիմ, այնուամենայնիվ, հոգևոր–կրոնական ղեկավարը:

Սակայն սուլթանների ինվեստիտուրայի հարցում կար մի յուրահատկություն: Ի տարբերություն շատ երկրների, որտեղ հաստատված էր մայորատի, հորից իշխանությունն ավագ որդուն անցնելու կամ պրիմագենիտուրայի սկզբունքը, Օսմանյան կայսրությունում այլ սկզբունք էր գործում: Իշխանությունը հորից ավագ որդուն փոխանցելու սկզբունքը այստեղ ընդունված չէր և նման ավանդույթ չկար: Սովորաբար դա բացատրում են երկու հանգամանքներով:

Առաջին, Օսմանյան կայսրությունում դեռևս իրեն զգացնել էր տալիս ոչ հեռավոր անցյալի քոչվորական տոհմա–ցեղային հարաբերություններին բնորոշ ավանդույթը, ըստ որի բնավ էլ պարտադիր չէր իշխանությունն անպայման ավագ որդուն փոխանցելը: Այդ հարցում քոչվորական ցեղային ավագանին ավելի ազատ ու անկաշկանդ էր գործում:

Թեև պետք է նշել, որ մինչև Օսմանյան կայսրության ի հայտ գալը, իսլամական շատ պետություններ արդեն լուծել էին պրիմագենիտուրայի՝ իշխանությունն ավագ որդուն անցնելու հարցը: Նշենք թեկուզ Արաբական խալիֆայությունը, որը Օմայյանների և Աբբասյանների ժա-

մանակ դարձել էր ժառանգականության վրա (հորից որդուն) հիմնված դինաստիական կայսրություն:

Երկրորդ, հարեմի առկայությունը օսմանյան արքունիքում: Ամեն մի սուլթան ուներ մեծ հարեմ, որը բաղկացած էր տարբեր ազգությունների կանանցից, թեև նրանք թուրքացել կամ էլ պաշտոնապես թուրքեր էին համարվում: Սովորաբար սուլթանն իրենից հետո թողնում էր մեծաքանակ արու զավակներ, որոնցից յուրաքանչյուրը կարող էր գահի հավակնորդ լինել: Այդ բանն արգելող որևէ օրենք կամ ավանդույթ գոյություն չուներ: Եվ քանի որ միևնույն սուլթանից, սակայն տարբեր կանանցից լույս աշխարհ եկած այդ գահի հավակնորդների թիկունքում կային որոշակի քաղաքական խմբավորումներ, որոնց շահերը խաչաձևվում էին, ապա սուլթանի մահից հետո ծավալվում էր կատաղի և արյունալի պայքար սուլթանի որդիների և նրանց աջակցող քաղաքական, նույնիսկ կարելի է ասել կլանային ուժերի միջև, թե նրանցից ով պետք է նստի փադիշահի գահին: Դրանով էր նաև պայմանավորված այն ավանդույթը, որ սուլթանի գահի համար մղված պայքարում հաղթանակողն առաջին հերթին սպանում էր իր բոլոր եղբայրներին և ամենամոտ հարազատներին, ֆիզիկապես վերացնելով իր բոլոր մրցակիցներին: Նշենք թեկուզ սուլթան Աբդուլ Համիդ II, որը բարձրանալով գահին իր առաջին «պարտականությունը» համարեց իր բոլոր եղբայրներին մորթելը:

Թեև այս իրադարձությունները ծավալվում էին մայրաքաղաքում, սակայն արյունահեղ պայքարը Ստամբուլում և դրա հետ կապված իշխանափոխությունն անհրաժեշտաբար իր ազդեցությունն էր ունենում կայսրության բոլոր մասերի, այդ թվում և արաբական երկրների, և նրանց կառավարման համակարգի վրա:

Նոր սուլթանի հայտնվելը իր հետ համապատասխան փոփոխություններ էր բերում նաև կայսրության ծայրագավառներում: Հաղթանակած սուլթանը սովորաբար փոփոխություններ էր մտցնում տեղերում: Նա անխնա հեռացնում կամ պատժում էր բոլոր այն կառավարիչներին, որոնց նա թեկուզ և աննշան չափով կասկածում էր իրեն նվիրված և հավատարիմ լինելու հարցում, նշանակում էր նոր փաշաներ, վալիներ և այլն, որոնք իրենց հերթին համապատասխան փոփոխություններ էին մտցնում կառավարման ավելի ստորին օղակներում, հարմարվելով նոր փադիշահին և նրա պահանջներին:

Կառավարման այս համակարգը, վերևից մինչև ներքև, ուներ շատ խոցելի կողմեր, որոնք թուլացնում էին նրան և չէին նպաստում նրա հստակ գործունեությանը: Դա ավելի ցայտունորեն դրսևորվեց XVII դարից, երբ սկսվեց կայսրության թուլացումը, որը հանգեցրեց կենտրոնական իշխանության ազդեցության թուլացմանը տեղերի վրա, վալիների, փաշաների և մյուս տեղական կառավարողների իշխանության ուժեղացմանը, և դրա հետ կապված կամայականությունների սաստկացմանը, պաշտոնավաճառությանը և այլն:

Երկրի կառավարման համակարգում, բնականաբար, կարևոր օղակ էր կառավարությունը կամ Բարձրագույն խորհուրդը՝ դիվան–ի–հումայյունը: Նա նշանակվում էր սուլթանի կողմից և պատասխանատու էր միայն նրա առջև: Նրա կազմի մեջ մտնում էին մի քանի վազիրներ և նրա աշխատանքներն անմիջապես ղեկավարում և համադրում էր մեծ վազիրը:

Կառավարության համակարգում անհրաժեշտ է առանձնացնել երեք գլխավոր կառուցվածք՝ ռազմա–վարչական, ֆինանսական և դատա–կրոնական: Անհրաժեշտ ենք համարում առանձնացնել այդ երեք կառույցները ոչ միայն այն պատճառով, որ նրանք ամենակարևորներն էին, այլ նաև այն պատճառով, որ նրանք գործում էին ոչ միայն կայսրության կենտրոնում, կենտրոնական նահանգներում, այլև հավասարապես տեղերում, կայսրության եվրոպական, ասիական և աֆրիկյան նահանգներում, մարզերում ու գավառներում:

Դրանց մեջ ամենակարևորը, թերևս, ռազմա–վարչական կառույցն էր կամ, ժամանակակից տերմինալոգիայով ասած, մինիստրությունը: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ նրա գլուխ կանգնած էր մեծ վազիը: Կայսրությունը, ինչպես նշել ենք, բաժանված էր 16 էյալաթների, որոնց մի մասը կազմավորված էր արաբական տարածքներից: Նրանց գլուխ կանգնած էին նահանգապետ–բեյլերբեյերը: Նրանք նշանակվում էին սուլթանի կողմից, սակայն անմիջականորոն ենթարկվում էին մեծ վազիրին և նրան էին հաշվետու իրենց ամենօրյա գործունեության համար: Յուրաքանչյուր էյալաթ պարտավոր էր, նրա մեծության և բնակչության թվաքանակին համապատասխան, անհրաժեշտության դեպքում զինված ուժեր ներկայացնել և դրանք դնել սուլթանի տրամադրության տակ: Փաշայի կամ վալիի գլխավոր պարտականությունն էր դրանք մշտապես պահել մարտունակ վիճակում: Այդ

պաշտոնում նրա մնալու կամ չմնալու հարցը կախված էր առաջին հերթին այն բանից, թե նա ինչպես էր լուծում այդ հարցը:

Բեյլերբեյը տվյալ նահանգի կամ մարզի ընդհանուր ղեկավարն էր և նրան էին ենթակա այդ մարզի բոլոր սանջաքները և նրանց ղեկավարները, սանջաքբեյերը: Եթե նկատի ունենանք, որ կայսրությունը բաժանված էր 250 սանջաքների, որոնց մի զգալի մասը գտնվում էր արաբական երկրներում, ապա պարզ կդառնա նրանց կարևորությունը երկրի կյանքում: Սանջաքբեյերը օժտված էին բավականին լայն լիազորություններով և ղեկավարվում էին գավառային Կանուն–նամեներով՝ օրենսգրքով: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր սանջաք ուներ իր Կանուն–նամեն:

Այս բուրգ հիշեցնող կառույցի հիմքում ընկած էին թիմարիոտները: Դրանք երեկվա քոչվորներն էին, որոնք մտել էին մշտական զինվորական ծառայության մեջ որպես հեծյալ սիփահիներ և իրենց զինվորական ծառայության դիմաց ստանում էին թիմար: Դա որոշակի հողաբաժին էր պայմանական ժառանգականության իրավունքով: Նա համարվում էր պայմանական, որովհետև այդ հողը նրա ժառանգին կանցներ, եթե վերջինս նույնպես ծառայության մտներ կայսրության զորքերում: Ծառայությունը դադարեցնելու պարագային նա զրկվում էր այդ հողաբաժնից: Թիմարիոտն իրավունք ուներ հարկ գանձել այդ հողաբաժնի վրա աշխատողներից և դրա հաշվին ապահովում էր իր գոյությունը և ռազմական հանդերձանքի՝ ձի, զենք, համապատասխան հագուստ և այլն, ձեռքբերումը:

Դժվար չէ, կռահել, որ ռազմա–վարչական կառույցը Օսմանյան կայսրության ողնաշարն էր, որն ուղղակիորեն ազդում էր կայսրության համընդհանուր վիճակի վրա և որի անխափան գործունեությունից զգալիորեն կախված էր օսմանյան կայսրության կենսունակությունը:

Երկրորդ կարևոր կառույցը կայսրության ֆինանսական գերատեսչությունն էր: Նրա ղեկավարը ֆինանսների վազիր–դեֆտերդարն էր: Այս գերատեսչությունը գործում էր համընդհանուր կայսերական, մարզային–նահանգական (էյալաթ, վիլայաթ) և տեղական–գավառային (սանջաք) մակարդակներով: Նա ուներ բավականին զարգացած և ճյուղավորված ապարատ, որի ներկայացուցիչները կամ հատուկ պաշտոնյաները կենտրոնական ապարատում և տեղերում, իրականացնում էին ստուգողական, վերահսկիչ, հաշվառման և կատարողական գործառույթներ: Նրանց ամենակարևոր օգնականները գրագիրներն էին, որոնք

համարվում էին այդ պաշտոնյաների աջ թևը: Եթե ֆինանսական բարձրաստիճան պաշտոնյաների մեջ քիչ էին կայսրության ծայրագավառների տեղաբնիկ, ոչ թուրք ազգաբնակչության ներկայացուցիչները, ապա գրագիրների շարքերը զգալիորեն համալրվում էին տեղացիներից: Դա բացատրվում է նրանով, որ թուրք պաշտոնյաները չէին տիրապետում տեղացիների լեզուներին, ուստի հարկադրված էին այդ գործի մեջ ներգրավել տեղացիների, որոնք գրագետ էին և շատ հաճախ նաև թարգմանչի դեր էին կատարում:

Նրանց գլխավոր խնդիրը հարկերի և տուրքերի չափերի սահմանումն էր, հարկահավաքման պահուստների հաշվառումը և պետական գանձարան հարկերի մուտքերի հաշվառումը: Ուստի նրանք անում էին ամեն բան պետական գանձարկղը ինչքան հնարավոր է հարստացնելու համար, կանգ չառնելով ոչնչի առջև, կիրառելով հարկադրանք, բռնություններ և տարբեր պատիժներ:

Իսկ ինչ վերբերում է պետական ապարատի երրորդ կարևոր կառույցին, դատա–կրոնական համակարգին, ապա նրա ֆունկցիաները բավականին յուրահատուկ էին: Նա կոչված էր հետևելու կայսրության բնակչության ապրելաձևին, օրինապահությանը, Կորանով և շարիաթով նախատեսված պահանջներից չշեղվելուն, ամեն տեսակ օրինազանցությունները պատժելուն, որը շատ հաճախ իրականացվում էր ամենադաժան ձևերով և այլն: Նրա խնդիրն էր փաստորեն կայսրության բնակչությանը պարտադրել ապրել ըստ մուսուլմանական օրենքների և ադաթի: Պատահականություն չէ, որ նրա գլուխ կանգնած էր Օսմանյան կայսրության կրոնապետը՝ շեյխ ուլ–իսլամը, որի վերդիկտները՝ վճիռները, վերջնական էին և կատարվում էին անշեղորեն: Մարզերում այս գերատեսչությունը ներկայացված էր կադի–ասկյարներով, այսինքն զինվորական դատավորներով, իսկ սանջաքներում՝ քաղաքացիական կադիներով՝ դատավորներով: Այս վերջիններս, որ վճիռներ էին արձակում հանուն իսլամի, կատարում էին նաև այլ ֆունկցիաներ, որոնք չկային նախկինում, մուսուլմանական այլ երկրներում, ինչպես Արաբական խալիֆայությունը: Կադիներին էր տրված զանազան տեսակի փաստաթղթերի և գործարքների հաստատման, առևտրական և ֆինանսական վեճերի քննարկման և լուծման, ու համանման այլ խնդիրների լուծման իրավունքը:

Այս համակարգն իր մեջ ներառնում էր ամբողջ կայսրությունն իր տարատեսակ վարչատերիտորիալ բաժանումներով, և պետական կառույցները՝ վերևից ներքև:

Եվ, վերջապես, օսմանյան կայսրության պետական վարչական համակարգի բաղադրամասն էր կազմում, մեր կողմից արդեն նշված ոչ մուսուլման ժողովուրդների միլլեթների համակարգը: Օսմանյան կայսրությունում թույլատրվել էին հույն–ուղղափառների, հայ–առաքելական, հրեա (յահուդի), ասորի (սիրիական) միլլեթները: Դրանք ներհամայնքային հարցերը կարգավորելու սահմանափակ իրավունքներով օժտված կառույցներ էին, որոնք գործում էին տվյալ համայնքների հոգևոր առաջնորդների հովանու ներքո:

Այժմ կրկին անդրադառնանք վարչատարածքային բաժանման խնդիրներին: Այդ բաժանումը, թեև կատարվում էր կայսրության ընդհանուր հայեցակարգի շրջանակներում, որի մասին խոսվեց վերևում, այնուամենայնիվ, նա ուներ տարբերակումներ: Դա դրսևորվեց առաջին հերթին Եգիպտոսի դեպքում:

III. ԵԳԻՊՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԵԿ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ: ՄԱՄԼՈՒՔՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐ ԴՈՒՌԸ

1. «Կանուն ալ–Մըսրի»

Եգիպտոսը, ի տարբերություն Սիրիայի կամ Իրաքի, չտրոհվեց առանձին փաշայությունների կամ վիլայաթների, այլ պահպանվեց որպես տերիտորիալ մեկ ամբողջություն, թեև նրա ներսում, կատարվեցին որոշ փոփոխություններ:

Սուլթան Սելիմ I Եգիպտոսի փոխարքա նշանակեց թուրք փաշա, Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ մամլուք սուլթանին դավաճանած և նրա կողմն անցած, Հալեբի նահանգապետ Խաիր բեյին: Նախքան Կահիրեից մեկնելը և Ստամբուլ վերադառնալը, Սելիմը եգիպտական փոխարքայի տրամադրության տակ թողեց մի զորախումբ, որը բաղկացած էր հինգ հազար ենիչերիներից:

Սուլթան Սուլեյման I 1525 թ. հաստատեց «Կանուն ալ–Մըսրի»՝ «Եգիպտոսի օրենսգիրքը», որը կարգավորում էր նրա ներքին կառավարման հարցերը: Այս օրենքով ամրագրվեց Եգիպտոսի մեկ ամբողջական տարածքային միավոր լինելու կարգավիճակը, որի գլուխ կանգնած էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող փաշան, որը համարվում էր փոխարքա և ներկայացնում էր սուլթանին այդ արաբական երկրում: Ըստ «Կանուն ալ–Մըսրիի», փոխարքան օժտված էր լայն լիազորություններով: Նրան ենթակա էին Եգիպտոսի տարածքում գործող բոլոր վարչական, քաղաքացիական և զինվորական մարմիններն ու պաշտոնյաները:

Վարչատարածքային առումով Եգիպտոսում սուլթանների կատարած ամենաէական բարեփոխումը նրա սահմաններում տասներկու սանջաքների կազմավորումն էր: Նրանց ղեկավարների նշանակման հարցում թուրքական սուլթանը դրսևորեց որոշակի զգուշավորություն: Բոլոր տասներկու սանջաքների կառավարիչներ (հաքիմներ) նշանակվեցին սանջաքբեյերը երևելի մամլուքներից, որոնք կառավարման որոշակի փորձ ու հեղինակություն ունեին: Նման քայլը պետք է բացատրել նրանով, որ սուլթանը հավանաբար հասկանում էր, որ ինքը, մի կողմից, հուսալի հենարան չունի Եգիպտոսում, որի վրա կարողանար հենվել, իսկ մյուս կողմից, մամլուքներն իրենցից որոշակի ուժ էին ներկայացնում, որն անտեսել հնարավոր չէր: Ուստի օսմանյան սուլթանները որոշեցին սիրաշահել մշտապես մարտականորեն տրամադրված և պետական հեղաշրջումների հակված մամլուքներին և այդ քաղաքականության դրսևորումներից մեկն էլ նրանց ավագանուն պաշտոններ բաժանելն էր: Դրա վկայությունն է նաև այն իրողությունը, որ այդ մամլուքներն ունեին նրանց նվիրված և ստրուկ մարտիկներից կազմված հավատարիմ զինախումբ, որը պատրաստ էր անվերապահորեն կատարել նրանց հրամանները, սակայն սուլթանները անգամ չփորձեցին դրանք ցրել կամ արգելել:

Սելիմ I և Սուլեյման I մի կարևոր զիջում ևս կատարեցին եգիպտական մամլուքներին: Նրանց վերապահվեց հարկեր հավաքելու իրավունքը, որը նրանց պատկանում էր նաև այն ժամանակ, երբ Եգիպտոսը կառավարում էին մամլուք սուլթանները: Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև, որը սուլթանը չարգելեց նոր մամլուքների հոսքը Եգիպտոս և նրանց շարքերի համալրումը, որը մամլուքների հզորության և ազդե-

ցության կարևոր աղբյուրներից մեկն էր, ապա պատկերն ավելի կատարյալ կդառնա:

Եվ, իրոք, անցնելով օսմանյան տիրապետության տակ, մամլուքները կարողացան երկար ժամանակ պահպանել իրենց դիրքերը և դերակատարությունը Եգիպտոսում: Ճիշտ է, նրանք թուրքական սուլթաններին ընդունում էին որպես իրենց սյուզերենը, տերը, որի վասալներն էին, բայց դա որոշ իմաստով ձևական կամ խորհրդանշական բնույթ էր կրում և արտահայտվում էր հիմնականում թուրքական սուլթանին տարեկան հարկեր վճարելու փաստի մեջ, որոնք նույնիսկ ոմանք հարկ էլ չէին համարում, այլ դիտում էին որպես նվիրատվություն մամլուքից սուլթանին:

Հետագայում սուլթանների իշխանությունը մամլուքների վրա ավելի թուլացավ, երբ սկսեցին Ստամբուլից թուրք փաշաներ ուղարկել Եգիպտոս որպես փոխարքաներ: Նրանք, որպես կանոն, վատ գիտեին Եգիպտոսը, տեղական պայմանները, մամլուքներին, սովորույթները և այլն: Նրանց մեջ շատերը համապատասխան փորձ և ունակություն չունեին Եգիպտոսի նման բարդ երկիրը կառավարելու համար: Դրա հետևանքով թուրքական փաշաները աստիճանաբար կորցրեցին երկրի վրա իրենց վերահսկողությունը պահպանելու հնարավորությունները, որի հաշվին աստիճանաբար ընդլայվում էր մամլուքների ազատ գործողությունների դաշտը: Նրանք ավելի ու ավելի էին անտեսում Ստամբուլին:

2. Հարաբերությունների սրումը մամլուքների և Բարձր Դռան միջև: Մամլուքներ Ալի բեյը և Մուհամմադ ազ–Զահաբին

Ստամբուլում տեսնում էին այս ամենը և որոշ քայլեր կատարում դրությունը շտկելու և Եգիպտոսի վրա Բարձր Դռան վերահսկողությունն ամրապնդելու ուղղությամբ: Դրա վկայություններից մեկն էլ փաշաներին հաճախակի փոփոխելն էր: Եգիպտոսի վրա թուրքական ուղղակի տիրապետության կամ ավելի ճիշտ՝ կառավարման 280 տարիներին, Կահիրեում փոխվել է ավելի քան 100 փաշա: Բայց դա, հակառակ սպասումների, դրական արդյունքներ չտվեց: Ընդհակառակը, դրա հետևանքով առաջացան նոր հիմնախնդիրներ, այդ թվում և կապված բանակի հետ:

Հայտնի է այն առաջնակարգ դերը, որ արևելյան երկրներում դարեր շարունակ, ավանդաբար խաղացել է բանակը: Նույնն էր իրավիճակը նաև Եգիպտոսում: Այս հարցում անհրաժեշտ էր զգոն լինել և բանակը պահել խիստ հսկողության տակ, նվաճել նրա վստահությունը: Բայց փաշաների հաճախակի փոփոխությունները, նրանց մի մասի թուլամորթ կամ անփորձ, անգամ ապաշնորհ լինելը, հանգեցրեց նրան, որ եգիպտական բանակը աստիճանաբար դուրս եկավ նրանց վերահսկողությունից, դարձավ անկարգապահ և ի վերջո, անկառավարելի: Այս երևույթի անմիջական հետևանքը եղավ այն, որ Եգիպտոսում կրկին գլուխ բարձրացրին մամլուքները, լայն թափ ստացան նրանց խռովությունները, ուղղված սուլթանների նշանակած փաշաների դեմ, պայքարը բեյերի միջև ազդեցության և նոր տիրույթների տիրանալու համար և այլն: Երկրում ստեղծվեց անկայուն վիճակ:

Փաշաների հեղինակության անկման վրա ազդում էր նաև այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը, որը XV–XVI դարերում հասել էր իր հզորության գագաթնակետին, XVII սկսել էր թուլանալ և անկում ապրել: Իսկ որոշ ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ Օսմանյան կայսրության վայրէջքը սկսվեց սուլթան Սուլեյման I մահվանից հետո, որը տեղի ունեցավ 1566 թ.:

Կայսրության համընդհանուր թուլացումը հանգեցրեց Եգիպտոսի և կայսրության մյուս մարզերում սուլթանների ներկայացուցիչների՝ փոխարքաների, փաշաների, վալիների և մյուս պաշտոնյաների հեղինակության անկմանը: Իսկ դա նշանակում էր թուրքական իշխանության թուլացում տեղերում:

Եգիպտական մամլուքները տարեց տարի ավելի էին ամրապնդում իրենց դիրքերը և իշխանությունը երկրում, և ավելի ու ավելի քիչ էին հաշվի նստում Ստամբուլի հետ: Դեպքերի ընթացքը խոսում էր այն մասին, որ վաղ թե ուշ կհայտնվի այն մամլուքը, որը բացահայտ մարտահրավեր է նետելու Բարձր Դռանը: Եվ, իրոք, նա հայտնվեց ի դեմս Ալի բեյի:

Ալի բեյը, որը ծագումով աբխազ քրիստոնյա էր Կովկասից, փոքր հասակում ընկնում է ստրկավաճառների ձեռքը, որոնք նրան վաճառում են որպես ստրուկ: Հայտնվելով Եգիպտոսում, հետագա տարիներին, նա համբերատարորեն, աստիճանաբար սկսում է բարձրանալ և կարևոր դեր խաղալ մամլուքների մեջ: Իշխանության համար մղվող պայքարում, Ալի բեյը 1767 թ. հաղթեց իր մրցակից մյուս մամլուք բեյե-

րին, մտավ Կահիրե և իրեն հռչակեց շեյխ ալ–բալադի՝ քաղաքի կառավարիչ:

Հաղթելով իր հակառակորդ մամլուք բեյերին, Ալի բեյն այնուհետև դաժան հաշվեհարդար տեսավ Կահիրում տեղակայված թուրքական ենիչերիական զորքերի հետ: Կոտորելով նրանց, Ալի բեյը 1769 թ. Կահիրեից արտաքսեց թուրքական փաշային, որը համարվում էր Եգիպտոսի փոխարքան, և Եգիպտոսը հռչակեց անկախ:

Դա առաջին լուրջ մարտահրավերն էր, որ արաբական որևէ երկիր նետեց Ստամբուլին:

Ալի բեյը, սակայն չսահմանափակվեց միայն Եգիպտոսով: Նա ուներ հեռուն գնացող փառասիրական մեծ ծրագրեր: Աջակից ունենալով իր փեսային՝ Մուհամմադ Աբու ազ–Զահաբիին, նա իր առաջնահերթ խնդիրը համարեց Արաբիայի և Սիրիայի գրավումը: 1770 թ. հուլիսին նրա զորքերը մտան Մեքքա: Մեքքայի գրավումն անհրաժեշտ էր Ալի բեյին Հիջազի շերիֆից ինվեստիտուրայի, իր իշխանության հաստատումն ստանալու համար: Եվ նա ստացավ: Սակայն դրա համար Ալի բեյը նախ հեռացրեց գործող շերիֆին և նրան փոխարինեց շերիֆների ընտանիքի մեկ այլ ներկայացուցիչով, որը պատրաստ էր մամլուքի բոլոր պահանջները կատարել: Հիջազի նոր շերիֆը Ալի բեյին շնորհեց «Եգիպտոսի սուլթան և երկու ծովերի կառավարիչ» տիտղոսը: Երկու ծովեր ասելով, նկատի ունեին Միջերկրական և Կարմիր ծովերը:

Այսպիսով, Ալի բեյը դարձավ Եգիպտոսի օրինական կառավարիչը, որի հովանավորության տակ էր գտնվում նաև Արաբիան, համենայն դեպս նրա այն տարածքը, որտեղ գտնվում են Մեքքա և Մադինա քաղաքները: Նա, համապատասխան իրեն «շնորհված» տիտղոսի, սկսեց դրամ հատել: Նրա անունը հիշատակվում էր խուտբայի ժամանակ:

Արաբիան իրեն ենթարկելուց հետո, Ալի բեյը 1771 թ. իր զորքերը շարժեց Սիրիայի վրա: Նրա 30 հազարանոց բանակը գլխավորում էր Մուհամմադ ազ–Զահաբին: Նա գրավեց Դամասկոսը և սիրիական այլ քաղաքներ:

Բայց այստեղ պատահեց այն, ինչ որ շատ հաճախ էր պատահում մամլուքների պրակտիկայում: Սիրիայի համար պայքարի թեժ պահին, Ալիին դավաճանեց նրա փեսան՝ Մուհամմադ Աբու ազ–Զահաբին: Նա իր երեսունհազարանոց բանակն ուղղեց Ալի բեյի դեմ: Սակայն նախքան այդ քայլին դիմելը, նա գաղտնի բանակցությունների մեջ էր մտել

Ստամբուլի հետ և ստացել թուրքական սուլթանի հավանությունը և խոստումները նրան Եգիպտոսի կառավարիչ նշանակելու հարցում:

Ալի բեյն ի վիճակի չլինելով դիմադրել, փախավ իր դաշնակից Զահիր ալ–Ումարի մոտ: Դա տեղի ունեցավ 1772 թ.: Զահիր ալ–Ումարը, որը գտնվում էր Ակկայում, նույնպես ապստամբել էր թուրքական սուլթանի դեմ և այդ իմաստով նրանք Ալի բեյի հետ դաշնակիցներ էին: Ալ–Ումարը չվարանեց օգնել իր դաշնակցին և նրա տրամադրության տակ դրեց ալբանացիներից կազմված մի զորաբանակ, որի թիվը հասնում էր երեք հազարի: Նա իր դաշնակցին տրամադրեց նաև համապատասխան զենք և հանդերձանք:

Ալի բեյը ստանալով այս օգնությունը, նետվեց պատերազմի դաշտ իր դավաճան փեսային պատժելու և իր իշխանությունը վերականգնելու համար: Բայց ճակատագիրը երես էր թեքել նրանից: Ճակատամարտում նա վիրավորվեց և 1773 թ. մահացավ:

Այդ բոլորից հետո Աբու ազ–Զահաբիին ոչինչ չէր խանգարում հաղթականորեն մտնել Կահիրե: Թուրքական սուլթանը պահպանեց իր խոստումը ինվեստիտուրայի հարցում և նրան նշանակեց Եգիպտոսի փաշա:

Աբու ալ–Զահաբին, բնականաբար, ժառանգեց շեյխ ալ–բալադի տիտղոսը, որը նրան տալիս էր առաջնություն մնացած բոլոր մամլուքների նկատմամբ: Բայց նա ստացավ նաև մեկ այլ տիտղոս, որը կոչվում էր էմիր ալ–հաջ՝ ուխտագնացության էմիր, որը կարելի է թարգմանել որպես ուխտագնացության համար պատասխանատու, ուխտագնացության հարցերը տնօրինող: Դա նույնպես կարևոր պաշտոն էր և, որ շատ էական է, եկամատաբեր պաշտոն էր: Մյուս կողմից դա որոշակի հնարավորություն էր տալիս Աբու ազ–Զահաբիին, իր ազդեցությունը տարածել հաջ կատարող մյուս երկրների մուսուլմանների վրա:

Այս իրադարձությունների լուսաբանությունը կարևոր է ոչ միայն Եգիպտոսի կարգավիճակի, նրա ներքին դրության և մամլուքների փոխհարաբերությունների մասին պատկերացում կազմելու համար, այլ նաև այն առումով, որ Ալի բեյի կողմից թուրքական սուլթանի դեմ բացահայտորեն հանդես գալը և Եգիպտոսի անկախության հռչակումը, ծանր հարված էր Օսմանյան կայսրության և նրա սուլթանների հեղինակությանը: Դա, ավելի քան մեկ այլ բան, ցուցադրեց Օսմանյան կայսրության թուլությունը, բացահայտեց այն իրողությունը, որ եկել են այլ ժամանակներ, երբ թուրքական սուլթաններն այլևս ամենազոր չեն և օսմա-

նյան տիրապետությանը միանգամայն հնարավոր է մարտահրավեր նետել և անգամ հասնել հաջողության:

Աբու Զահաբին եգիպտոսը կառավարեց մինչև իր մահը՝ 1775 թ.: Նրա մահվանից հետո վերսկսվեց դաժան պայքարը մամլուքների միջև իշխանության համար, որը տևեց մոտ տասնհինգ տարի: Այդ տարիներին շատ արյուն հոսեց: Վերջապես, 1791 թ. իշխանության համար մղվող պայքարում հաղթանակեցին երկու մամլուք բեյեր՝ Մուրադ բեյը և Իբրահիմ բեյը: Համաձայնության գալով, նրանք համատեղ եգիպտոսը կառավարեցին մինչև 1798 թ., մինչև այն պահը, երբ եգիպտոսում հայտնվեց ֆրանսիական գեներալ Բոնապարտը:

IV. ՍԻՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Սիրիայի բաժանումը վիլայաթների: Սիրիան անկախ հռչակելու ալ–Ղազալիի փորձերի ձախողումը

Սիրիայի վարչատարածքային բաժանման հիմքում դրվեց վիլայաթների կազմավորման սկզբունքը: Նման վարչատարածքային միավորներ Աբբասյան խալիֆայության ժամանակ գոյություն չունեին:

Սիրիան սկզբնական շրջանում բաժանվեց երեք վիլայաթների՝ Դամասկոսի, Հալեբի և Տրիպոլիի: 1660 թ. տեղի ունեցավ նոր բաժանում և ստեղծվեց նոր, թվով չորրորդ՝ Սայդայի վիլայաթը:

Վիլայաթների գլուխ կանգնած էին օսմանյան սուլթանների կողմից նշանակվող վալիները, որոնք օժտված էին ամենալայն իրավունքներով և իրենց տիրույթներում օգտվում էին անսահմանափակ իշխանությամբ, պատասխանատու լինելով միայն սուլթանի առջև: Նրանց պարտականությունների մեջ մտնում էին իրենց ենթակա վիլայաթներում կարգ ու կանոն պահպանելը, ամեն տեսակ խռովությունների, հուզումների և հակաօսմանյան ելույթների ճնշումը, քաղաքներում և այլ բնակավայրերում ոստիկանական ֆունկցիաների իրականացումը, պատերազմի դեպքում անհրաժեշտ քանակությամբ զորք զենքով ու հանդերձանքով թուրքական սուլթանին տրամադրելը և այլն:

Օսմանյան կայսրությունում չգրված օրենքների ու հաստատված բարքերի համաձայն, վալիի պաշտոնը որպես կանոն գնում էին և դա

բոլորովին էլ գաղտնիք չէր: Օսմանյան պետական ապարատը կոռումպացված էր, այստեղ ամեն ինչ վաճառվում և գնվում էր:

Վալիները, այդ թվում և Սիրիայի, գնելով վալիի պաշտոնը, իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում նախ և առաջ պաշտոնի գնման համար իրենց վճարած փողը հետ վերադարձնել, այնուհետև հարստություն դիզել: Իսկ դրա միակ աղբյուրը հասարակ ժողովրդին կողոպտելն էր, որի մեջ թուրքական պաշտոնյաները լավ էին հմտացել: Բացի դրանից, իրենք էլ էին զբաղվում պաշտոնավաճառությամբ, համապատասխան գումարի դիմաց վաճառելով իրենց ենթակա պաշտոնները:

Լինում էին դեպքեր, երբ ազդեցիկ և իրենց ուժեղ համարող վալին փորձում էր կամայականորեն, ինքնագլուխ փոփոխություններ մտցնել վիլայաթների արդեն հաստատված սահմանների մեջ և ընդածակել իր կառավարության ներքո գտնվող տարածքները ի հաշիվ այլ տարածքների: Այդպես վարվեց Դամասկոսի վալի Ջան–Բիրդի ալ–Ղազալին: Սա Համայի նախկին կառավարիչն էր, որը, ինչպես արդեն նշել ենք, 1516 թ. Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ դավաճանեց իր սյուզերեն, Եգիպտոսի մամլուք սուլթանին, և անցավ Սելիմ I կողմը: Ի գին իր դավաճանության, նա թուրքական սուլթանից ստացավ Դամասկոսի վալիի բարձր պաշտոնը: Բայց ըստ երևույթին դավաճանությունն եղել է այդ մարդու արյան մեջ:

Ալ–Ղազալին, 1520 թ., օգտվելով Սելիմ I մահից, և, հավանաբար ենթադրելով, որ Ստամբուլում խառնաշփոթ վիճակ է տիրում, որը սովորական երևույթ էր սուլթանի մահից հետո և նոր սուլթանի գահին նստելու պայմաններում, դիմեց շատ համարձակ քայլի, որը հղի էր մեծ վտանգներով: Նա Դամասկոսի վիլայաթին միացրեց Երուսաղեմը, Սաֆադը և Ղազան: Դրան հետևեց նրա հաջորդ քայլը: Նա 1520 թ., Օմայյանների հռչակավոր մզկիթում իրեն հռչակեց անկախ ու սուվերեն, ընդունելով Մալիք ալ–Աշրաֆ՝ «Ամենազնիվ թագավոր» տիտղոսը:

Այսպիսով, նա արմատական փոփոխություն մտցրեց Սիրիայի կարգավիճակում, որը հաստատվել էր Բարձր Դռան կողմից:

Մալիք ալ–Աշրաֆը գիտակցում էր, որ Ստամբուլը հենց այնպես չի համաձայնվի կատարված փոփոխությունների հետ և իրեն չի ների օսմանյան իշխանություններին նետած իր մարտահրավերը: Ուստի պատրաստվելով դիմադրության և երկարատև պայքարի թուրքական սուլթանների դեմ, նա դիմեց Եգիպտոսի փոխարքա Խաիր բեյին, կոչ անելով նրան իրեն ևս հայտարարել անկախ Ստամբուլից:

Սակայն նա սխալվեց իր հաշիվներում, որը ողբերգական հետևանքներ ունեցավ նրա համար:

Նախ հրաժարվեց թուրքական սուլթանի դեմ ապստամբվել Խաիր բեյը, որն այդ պաշտոնը ստացել էր շնորհիվ Սելիմ I բարեհաճության: Նույնիսկ եթե նա ընդառաջեր ալ–Ղազալիի կոչին, հավատացած ենք, հազիվ թե դա որևէ ազդեցություն ունենար պայքարի ելքի վրա և նրանց փրկեր:

Սակայն դա չէր էականը, այլ այն, որ սուլթան Սուլեյմանն իրեն դրսևորեց որպես վճռական պետական գործիչ, ընդունակ անհրաժեշտության դեպքում արագ որոշումներ ընդունելու: Փոխարինելով իր հորը սուլթանի գահի վրա, նա իր առաջնահերթ խնդիրներից մեկը համարեց պատժել ապստամբ ալ–Ղազալիին, որն այս անգամ դավաճանել էր օսմանյան սուլթաններին, վերականգնել օսմանյան տիրապետությունը Դամասկոսի և նրա շրջակա տարածքների վրա:

Սուլթան Սուլեյմանը 1521 թ. հունվարին արդեն Սիրիայում էր: Հունվարի 27–ին Դամասկոսի մոտ, ալ–Քաբանում տեղի ունեցած ճակատամարտում, նա ջախջախեց Ջան–Բիրդի ալ–Ղազալիին, դաժանորեն պատժեց ապստամբներին, այդ թվում և զինվորներին: Ալ–Ղազալին գերի ընկավ և սուլթան Սուլեյմանի հրամանով կախաղան հանվեց:

Սուլեյմանի հրամանով վերականգնվեց Սիրիայի մինչ ալ–Ղազալիի ապստամբությունը հաստատված վարչակարգը՝ երեք վիլայաթներն իրենց նախկին սահմաններով:

Ի դեպ, օսմանյան կառավարման առաջին տարիներին վերականգնվեց Սիրիայի նախկին, պատմական անունը՝ «Սուրիյա», «Շամի» կամ «Շամի երկրի» փոխարեն, որն այդ երկրի օգտագործելի ամենատարածված անվանակոչումն էր դարձել:

2. Սիրիական ավագանու ուժեղացումը կառավարման համակարգում: Ալ–Ազըմների ընտանիքը

Սիրիան իր վիլայաթների թվին համապատասխան բաժանվեց սանջաքների: Դամասկոսի վիլայաթը բաժանվեց տասը սանջաքի, Հալեբի վիլայաթը բաղկացած էր ինը սանջաքից, որոնք տեղադրված էին Հյուսիսային Սիրիայում, իսկ Տրիպոլիի վիլայաթը՝ հինգ սանջաքից:

Հետագայում Սիրիայի վարչատարածքային բաժանումը որոշ փոփոխությունների ենթարկվեց:

ՍԻՐԻԱՅԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ
ՕՍՄԱՆՅԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐՈՔ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ՀԱԼԵԲԻ
ՎԻԼԱՅԱԹ
ՄԱՐԴԻՆ
ՈՒՐՖԱ
ԲԻՐԻՋԻԿ
ԱԴԱՆԱ
ՄԵՐՍԻՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏ
ՀԱԼԵԲ
ԵՓՐԱՏ
ԱՆՏԻՈՔ
ՀԱՄԱ
ՀՈՄՍ
ԿԻՊՐՈՍ
ՏՐԻՊՈԼԻ
ԼԻԲԱՆԱՆԻ
ԲԱԱԼԲԵԿ
ՊԱԼՄԻՐԱ
(ԹԱԴՄՈՐ)
ԲԵՅՐՈՒԹ
ԴԱՄԱՍԿՈՍ
ՀԱՅՖԱ
ԴԱՐ'Ա
ՅԱՖՖԱ
ԵՐՈՒՍԱՂԵՄ
ՕՍՄԱՆ
ՂԱԶԱ
ԲԵԵՐՇԵԲԱ
ՄԵԴՅԱԼ
ԾՈՎ
ԱՔԱԲԱ
ՄՈՒԴԱՎՎԱՐԱ

Այդ ժամանակ, ընդունված սովորույթի համաձայն, Սիրիայի տարածքներ էին համարվում ժամանակակից Լիբանանի մաս կազմող Սայդայի և Տրիպոլիի փաշայությունները, ինչպես նաև Պաղեստինի որոշ հատվածներ: Իսկ Լիբանանն ընկալվում էր որպես միայն նրա լեռնային մասը, որն ավելի շատ հայտնի էր Լեռնալիբանան անունով:

Թուրքական սուլթանի 1841 թ. որոշումով, Սայդայի և Տրիպոլիի առանձին փաշայությունների փոխարեն, նրանց միավորումով ստեղծվեց մի նոր էյալաթ, որի կենտրոնը դարձավ Բեյրութը: Էյալաթը նույնպես կոչվեց նրա անունով: Իսկ Պաղեստինը, որ մինչ այդ բաժանված էր տարբեր վիլայաթների միջև, դարձավ ինքնուրույն վարչատարածքային միավոր, որը կոչվեց Երուսաղեմի սանջաք: Նա ենթակա էր Բեյրութին:

Սիրիայում նույնպես շատ արագ էին միմյանց փոխարինում վալիները: Դրա մասին են խոսում հետևյալ թվական տվյալները: Դամասկոսում 184 տարվա ընթացքում փոխվել է 133 վալի, իսկ Հալեբի վիլայաթը երեք տարվա ընթացքում ունեցել է ինը վալի: Նրանց այդքան արագ փոփոխության պատճառները նույնն էին, ինչ որ Եգիպտոսի փաշաներինը: Միայն թե, Սիրիայի պարագայում կարևոր նշանակություն ունեցավ նաև վալիների պաշտոնների վաճառելու–գնելու հանգամանքը, թեև հազիվ թե ճիշտ լիներ այդ նույն հանգամանքի բացառումը նաև Եգիպտոսի փաշաներին իրենց պաշտոններում նշանակելու հարցում:

Օսմանյան կայսրության թուլացումն իր բացասական հետևանքներն ունեցավ նաև Սիրիայի կառավարման համակարգի վրա: Ինչպես և Եգիպտոսի պարագայում, սուլթանները աստիճանաբար կորցրեցին իրենց վերահսկողությունը վալիների և վիլայաթների մյուս պաշտոնյաների գործունեության վրա: Վալիները և սանջաքբեյերն ավելի ու ավելի ինքնուրույն էին դառնում իրենց տրված վարչական միավորների շրջանակներում:

Դրան զուգահեռաբար աստիճանաբար ուժեղանում էր տեղական արաբական ավատական ավագանու, երևելի արաբական ընտանիքների դերը Սիրիայի, ինչպես նաև Լիբանանի, Պաղեստինի և այլ երկրամասերի կյանքում, ներառյալ կառավարման համակարգը:

Սիրիայում այդպիսի ընտանիքների շարքում առաջին հերթին պետք է նշել Ազըմների ընտանիքին, որը բնակվում էր Դամասկոսում: Այդ ընտանիքը բացառիկ դեր է խաղացել Սիրիայի քաղաքական կյանքում: Ազըմների ազդեցությունն այնքան էր ուժեղացել, որ թուլացող սուլթանները հարկադրված էին նրանց նշանակել Դամասկոսի վալիներ

և նրանք այդ պաշտոնը վարել են 1724–1783 թ.: Նրանք իրավունք են ձեռք բերում կրել «փաշա»՝ տիտղոսը: Առաջինը Դամասկոսի վալի նշանակվեց Իսմայիլ ալ–Ազըմը, որին փոխարինեց նրա որդին՝ Ասադ ալ–Ազըմը: Ալ–Ազըմների ընտանիքի գործունեությունը չի սահմանափակվել միայն իրենց հայրենի քաղաքով: Ազըմներից վալիներ են նշանակվել նաև Տրիպոլիի և Սայդայի վիլայաթներում: Ազըմները սովորաբար լոյալ են եղել բարձր Դռան հանդեպ:

Այդուհանդերձ թուրքական սուլթանները ուշադիր հետևում էին Ազըմների գործունեությանը, հարմար առիթի սպասելով նրանց իրենց տեղը ցույց տալու և պատժելու համար: Նրանք այդպես վարվեցին առաջին վալի Իսմայիլ ալ–Ազըմի հետ, որին ձերբակալեցին և բանտ նետեցին, որտեղ և նա մահացավ: Թուրքական սուլթանը դաժանորեն վարվեց Ասադ ալ–Ազըմի հետ, որին նրա հրամանով 1757 թ. խեղդամահ արեցին բաղնիքում: Նրանց հետ այսպես դաժան վարվելու հիմնական պատճառն այն էր, որ հայր և որդի Ազըմները ձգտում էին ավելի ինքնուրույն քաղաքականություն վարել, հաշվի առնելով Սիրիայի ազգային շահերը: Իսկ դա Օսմանյան կայսրությունում համարվում էր մահացու մեղք:

Օսմանյան տիրակալների այդ քայլերը, թեև թուլացրին Ազըմների և ընդհանրապես սիրիական ավատական ավագանու դիրքերը, բայց դա ժամանակավոր բնույթ էր կրում: Նրանց այդպես էլ չհաջողվեց արմատախիլ անել հակաօսմանյան տրամադրությունները Սիրիայում և կանխել իրենց դիրքերի հետագա թուլացումը արաբական այդ կարևոր երկրամասում:

V. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱԱՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ

1. Լիբանանը որպես ներքին ինքնավարությամբ օժտված իշխանապետություն

Լիբանանը, չնայած իր փոքր տարածքին, միշտ էլ կարևոր դերակատարում է ունեցել արաբական աշխարհում, որը պայմանավորված է նրա հարմար աշխարհագրական դիրքով, ինտելեկտուալ և մշակութային համեմատաբար բարձր ներուժով, լիբանանցիների բնատուր հնա-

ռամտությամբ ու աշխատասիրությամբ և այլ գործոններով: Եվ օտար նվաճողները միշտ հաշվի են առել այդ հանգամանքը: Այդ առումով բացառություն չէին նաև օսմանցիները:

Լիբանանում բնակվող արաբների մեջ այդ ժամանակ գլխավոր դերակատարում ունեին դրուզները և աստիճանաբար իրենց դիրքերն ամրապնդող քրիստոնյա մարոնի արաբները: Դրուզական ֆեոդալ ընտանիքների մեջ աչքի էին ընկնում Մաան և Շիհաբ կլանները, իսկ հետագայում ասպարեզ իջան Արսլանները, Ջունբլատները և այլն: Նրանք մերթ միավորվում էին, մերթ պայքարում միմյանց դեմ: XVI դ. սկզբներին հաջողությունն ուղեկցեց Մաաններին, որի գլխավորը՝ Ֆախր ադ–Դինը, 1516 թ. իր հպատակությունը հայտնեց օսմանյան սուլթան Սելիմ I, որը նրան հաստատեց որպես Լիբանանի էմիր: Լիբանանին շնորհվեց ինքնավար էմիրության կարգավիճակ, իսկ Մաանները՝ դարձան կառավարող դինաստիա: Նրանք Լիբանանը կառավարեցին 1516–1697 թթ., որից հետո նրանց փոխարինելու եկավ Շիհաբների դինաստիան:

Անհրաժեշտ է նշել, որ երբ խոսք է գնում Լիբանանի մասին, ապա չպետք է նկատի ունենալ ներկա Լիբանանի սահմանները, որը ձևավորվեց 1920 թ.: Այդ ժամանակ «Լիբանան» հասկացողությունն աշխարհագրական առումով ընդգրկում էր Լիբանանի լեռնային մասը, Շուֆի շրջանը և այլն, որը մասնագիտական գրականության մեջ ավելի հայտնի է «Լեռնալիբանան» հորջորջումով:

Ֆախր ադ–Դին I, սկզբնական շրջանում լոյալ էր օսմանյան սուլթաններին և չէր թերանում Ստամբուլի նկատմամբ իր պարտականությունները կատարելու մեջ: Նա բարեխիղճ էր հարկերը հավաքելու և դրանք սուլթանին փոխանցելու և այլ հարցերում:

Լիբանանի կարգավիճակի հարցում կար նաև մեկ այլ յուրահատկություն: Լիբանանը փաստորեն չէր կարող անմիջականորեն կապի կամ հարաբերությունների մեջ մտնել Բարձր Դռան հետ: Նա դա կարող էր անել Դամասկոսի վալիի միջոցով: Սուլթանները Դամասկոսի վալիների վրա էին դրել միջնորդի կամ Լիբանանը Ստամբուլի հետ կապող օղակի պարտականությունները: Վերջիններս դա կատարում էին մեծ հաճույքով, քանի որ դա նրանց որոշ հնարավորություններ էր տալիս իրենց ազդեցությունը տարածելու այդ կարևոր երկրամասի վրա:

Իսկ Դամասկոսին Լիբանանի և Ստամբուլի միջև կապող օղակի դերակատարություն հատկացնելու սուլթանների քայլի մեջ պետք է

տեսնել այդ ուղիով Լիբանանի վրա հսկողություն սահմանելու վատ քողարկված միտում:

Սելիմ I լիբանանյան էմիրին տվել էր որոշ ինքնուրույնություն ներքին հարցերում: Օգտվելով դրանից, ինչպես նաև այն հանգամանքից, որ Լիբանանից գանձվող հարկերը համեմատաբար ցածր էին, և էմիրներն առանձին ռազմական պարտականություններ չունեին սուլթանների նկատմամբ, Ֆախր ադ–Դին I եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ Լիբանանի տնտեսական զարգացմանը, կառուցապատմանը և ինքնավարության հետագա ամրապնդմանը:

Օսմանյան Բարձր Դուռը, որը ուշադիր հետևում էր Ֆախր ադ–Դին I այս քաղաքականությանը, հաշտ աչքով չէր նայում Լիբանանի ինքնուրույնությունն ամրապնդելու և տնտեսական վերելքն ապահովելու լիբանանյան էմիրի քաղաքականությանը: Սուլթան Սուլեյման I փոխեց իր քաղաքականությունը Լիբանանի նկատմաբ, փորձելով այն դնել իր ուղղակի կառավարման ներքո: Սակայն նա հանդիպեց լիբանանցիների համառ դիմադրությանը Ֆախր ադ–Դինի գլխավորությամբ, և հաջողություն չունեցավ: Սուլթանը դիմեց հին ու փորձված մեթոդին — դավադրությանը: 1544 թ. Ֆախր ադ–Դին I դավադրաբար սպանվեց Դամասկոսի վալիի կողմից:

2. էմիր Ֆախր ադ–Դին II: Լիբանանի անկախության նվաճման նրա փորձերը

Չնայած էմիրի սպանությանը, լիբանանցիների պայքարը օսմանյան տիրապետությունը Լիբանանի վրա ամրապնդելու քաղաքականության դեմ, շարունակվեց: Պայքարը գլխավորեց սպանված Ֆախր ադ–Դին I որդին՝ Քուրքումազը: Սակայն այդ պայքարում 1585 թ. նա ևս, ի վերջո, զոհվեց: Նրա զոհվելուց հետո էմիրությունն անցավ նրա որդուն՝ Ֆախր ադ–Դին II:

Երկու էմիրների սպանությունը, այդուհանդերձ, չհանգեցրեց էմիրության վերացմանը կամ Լիբանանի կարգավիճակի մեջ որևէ փոփոխությանը: Սուլթանները ձնականորեն պահպանեցին այն բոլորը, ինչ տվել էր սուլթան Սելիմը: Սակայն նրանք այժմ ավելի ուշադիր ու աչալուրջ էին:

Ֆախր ադ–Դին II խելացի, եռանդուն, զգույշ, վերին աստիճանի հաշվենկատ, խորամանկ և նուրբ դիվանագիտությամբ օժտված պետա-

կան գործիչ էր: Հենց նրա էմիրության օրոք Լիբանանի էմիրությունը հասավ իր ծաղկման և հզորության գագաթնակետին:

Ֆախր ադ–Դին II փայփայում էր շատ համարձակ և հեռուն գնացող քաղաքական ծրագրեր, որոնք այլ կերպ, քան հավակնոտ համարել, հնարավոր չէր: Նա իր առջև խնդիր էր դրել ստեղծել ռազմական առումով և տնտեսապես հզոր Լիբանան, ընդարձակել նրա սահմանները, որը հիմք է տվել նրան մեղադրելու «Մեծ Լիբանան» ստեղծելու նկրտումներ ունենալու մեջ, խզել հարաբերությունները Ստամբուլի հետ կամ դրանք արմատապես փոխել, Լիբանանը դնել զարգացման առաջադիմական ուղու վրա, շատ բաներում ընդօրինակելով Եվրոպային:

Ֆախր ադ–Դին II իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ իր ծրագրերի կենսագործմանը: Նա աստիճանաբար վերականգնեց քանդված և ավերված երկիրը, կառուցեց նոր ճանապարհներ, զարգացրեց տնտեսությունը, ստեղծեց լավ զինված և մարտունակ հզոր բանակ: Այդ շրջանում Լիբանանը արաբական ամենազարգացած և առաջադիմած երկիրն էր:

Բարձր Դուռը ստիպված Ֆախր ադ–Դին II զիջեց ընդարձակ տարածքներ հարևան արաբական շրջաններից, այդ թվում Բեյրութի ու Սիդոնի սանջաքները, Տրիպոլին, Բաալբաքն ու Բիքաան, Սաֆադը, Տիբերիան և Նազարեթը: Փաստորեն նա իրագործեց «Մեծ Լիբանան» ստեղծելու իր քաղաքական ծրագիրը:

Սուլթանը համաձայնվեց այդ տարածքները դնել լիբանանյան էմիրի կառավարման ներքո, հավանաբար, երկու պատճառով:

Առաջին, հաշվի առնելով Լիբանանի, իրոք, հզորությունը, նրա ռազմական ուժերի բարձր մակարդակը:

Երկրորդ, Օսմանյան կայսրությունն այդ ժամանակ ծանր օրեր էր ապրում և գտնվում էր բարդ ներքին և արտաքին քաղաքական վիճակում: Ուստի նրան ձեռնտու չէր պայքարի նոր՝ճակատ բացել: Բայց դա չէր նշանակում, թե Բարձր Դուռը հաշտվել էր այդ տարածքները վերջնականապես Լիբանանի էմիրին զիջելու մտքի հետ: Նա ուղղակի այդ պահին խուսափում էր հարցի արմատական լուծումից, այն հետաձգելով ավելի հարմար պահի: Եվ այդպես էլ եղավ:

Ֆախր ադ–Դինը II փաստորեն սկսեց ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարել, որը չէին հանդգնում կատարել օսմանյան կայսրության մեջ մտնող արաբական ոչ մի երկիր, էյալաթ, փաշալիք կամ թե վիլայաթ: 1608 թ. նա հարաբերությունների մեջ մտավ Տոսկա-

նայի դուքս Ֆերդինանդ Մեդիչիի հետ և կնքեց պայմանագիր համագործակցության վերաբերյալ: Սակայն նա պարունակում էր գաղտնի հոդված Լիբանանի և Տոսկանայի միջև ռազմական համագործակցության մասին, որը, անկասկած, ուղղված էր Թուրքիայի դեմ:

Ֆախր ադ–Դին II, գտնելով, որ ինքն արդեն լուծել է հզոր և տնտեսապես ամուր Լիբանան ստեղծելու խնդիրը, անցավ իր ծրագրի ամենակարևոր, բայց և ամենավտանգավոր կետի կատարմանը՝ խզել կապերը Բարձր Դռան հետ կամ դրանք դնել նոր հիմքի վրա, որի դեպքում ինքը նրան ենթակա չէր լինելու:

Այդ բոլոր նախապատրաստական աշխատանքներից հետո մինչև ապստամբությունը մի քայլ էր միայն: Ապստամբությունը տեղի ունեցավ 1613 թ., որը, հակառակ սպասումների, որևէ լավ բան չբերեց Ֆախր ադ–Դին II:

Թուրքական զորքերը Դամասկոսից, որն ամենահարմար կետն էր, ներխուժեցին Լիբանան: Էմիրի զորքերն ի վիճակի չեղան կասեցնել թուրքական բանակի հարձակողական գործողությունները և առաջխաղացումը: Նրանք պարտություն կրեցին: Սակայն էմիրին հաջողվեց իր ընտանիքով հեռանալ Լիբանանից և ապաստան գտնել իր դաշնակից, Տոսկանայի դուքս Ֆերդինանդ Մեդիչիի մոտ: Նա Տոսկանայի մայրաքաղաք Ֆլորենցիայում մնաց ուղիղ հինգ տարի՝ 1613–1618 թթ.:

Խորամանկ և ճարտարալեզու Ֆախր ադ–Դինը, որը վտարանդիության հինգ տարիների ընթացքում մշտական գաղտնի կապերի մեջ էր Բարձր Դռան հետ, կարողացավ սուլթան Օսման II ներողությունը հայցել: Ստամբուլում նրան ներեցին և թույլատրեցին վերադառնալ Լիբանան: Նա լրիվ վերականգնվեց իր էմիրական իրավունքների մեջ: Բարձր Դուռը, հավանաբար մտածում էր, որ պարտություն կրած, երկրից արտաքսված և հինգ տարի օտարության մեջ իր ընտանիքի հետ անցկացրած Ֆախր ադ–Դինը, համապատասխան դասեր քաղած կլինի և իրեն հնազանդ կպահի ու հավատարմորեն կծառայի Օսմանյան կայսրությանը: Սակայն այս անգամ նա սխալվեց:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Ֆախր ադ–Դին II չէր հրաժարվել իր քաղաքական ծրագրերից: Վերադառնալով հայրենիք և անցնելով էմիրի իր պարտականությունների կատարմանը, Ֆախր ադ–Դինը վերին աստիճանի զգուշորեն, սակայն մեղվաջանորեն, նախապատրաստվում էր օսմանյան լուծը տապալելու իր ազգանվեր և պատմական առաքելությանը: Նրան այդ հնարավորությունն ընձեռնում

էր այն հանգամանքը, որ Բարձր Դուռը նույնությամբ, առանց որևէ փոփոխության, պահպանեց Լիբանանի կարգավիճակը: Իսկ դա գործողությունների լայն ազատություն էր տալիս հակաօսմանյան տրամադրություններով օժտված լիբանանյան էմիրին:

Նրա դրությունն ավելի ամրապնդվեց, երբ սուլթան Մուրադ IV 1624 թ. նրան ճանաչեց Արաբստանի ղեկավար: Դա, ըստ էության, վարչական մի նոր ընդարձակ միավոր էր, որն իր մեջ ներառնում էր Հալեբից մինչև Եգիպտոսի սահմանները ձգվող արաբական երկրները, որի կենտրոնը Լիբանանի իշխանապետությունն էր:

Ֆախր ադ–Դին II, ի տարբերություն նախորդ տարիների, երբ իր գլխավոր խնդիրը համարում էր Լիբանանի տնտեսական զարգացումը և հզորացումը շինարարության ուղիով, այժմ, հնգամյա վտարանդիությունից վերադառնալուց հետո, նա այդ խնդիրը, որը նրա հակաօսմանյան քաղաքականության հիմնաքարն էր, փորձում էր իրագործել Լիբանանի արդիականացման ուղիով, հիմնվելով եվրոպական արժեքների վրա: Այդ նպատակով նա Իտալիայից Լիբանան հրավիրեց տարբեր մասնագիտությունների գծով փորձագետների, ինժեներների, գյուղատնտեսական մասնագետների, ինչպես նաև ճարտարապետների: Նրանք զգալի դեր խաղացին արդյունաբերական և գյուղատնտեսական նոր մեթոդները Լիբանանում ներդնելու ուղղությամբ, լիբանանյան գյուղացիներին հողի մշակման նոր ձևերը սովորեցնելու գործում: Այդ բոլորը տվեցին իրենց դրական արդյունքները:

Եվրոպայի հետ կապերն ավելի ամրապնդելու և եվրոպական արժեքները Լիբանանի իշխանապետությունում տարածելու նպատակով, Ֆախր ադ–Դին II նպաստեց եվրոպական քրիստոնյա միսիոներների գործունեության ծավալմանը իր էմիրության սահմաններում: Նա առանձին համակրանք ուներ ֆրանսիական կաթոլիկ միսիոներների նկատմամբ: Էմիրի բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ, միսիոներները իրենց կենտրոնները հիմնեցին Բեյրութում, Տրիպոլիում, Սիդոնում, Դամասկոսում, Հալեբում և այլ վայրերում: Նրանք բաց էին անում դպրոցներ, հիմնում հիվանդանոցներ, քարոզում իրենց հայացքները և նպաստում քրիստոնեության տարածմանը արաբական երկրներում: Էմիրը համոզված էր, որ եվրոպական քրիստոնյա միսիոներների գործունեությունը կնպաստի իր դիրքերի ամրապնդմանը և իր էմիրության հետագա զորացմանը:

Այստեղ հարկ է անդրադառնալ Ֆախր ադ–Դին II կրոնական հայացքներին, ավելի ճիշտ նրա վերաբերմունքին տարբեր կրոններին: Այդ հարցում ժամանակակիցներին զարմացրել է նրա այս պես կոչված «ճկուն», եթե ոչ անսկզբունքային պահվածքը, որը մինչև հիմա զարմացնում է նաև մերօրյա հետազոտողներին: Նրանցից ոչ ոք վստահաբար չէր կարող ասել, թե ինչ կրոն էր դավանում նա, քանի որ թուրքերին ցույց էր տալիս, թե ինքը մուսուլման է, դրուզների առջև նա դրուզականության հետևորդ էր իրեն ներկայացնում, իսկ դրա հետ միասին լուրեր էին պտտվում, որ նա մկրտվել է որպես քրիստոնյա: Դրանով էր նաև բացատրվում նրա արտակարգ բարեհաճ վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ:

Ճիշտ է, նա վարում էր ճկուն քաղաքականություն, բայց Ֆախր ադ–Դինը կրակի հետ էր խաղում և, հավանաբար, թերագնահատում օսմանյան տիրակալներին: Իսկ նրանց ավելի ու ավելի էր անհանգստացնում էմիրի քաղաքականությունն ամբողջությամբ վերցված: Հասունանում էր նոր ճգնաժամ լիբանանա–օսմանյան հարաբերություններում: Իսկ այդ ճգնաժամն այնքան էր խորացել, որ ակնահայտորեն այն այլևս անհնար էր լուծել քաղաքական միջոցներով:

Օսմանյան սուլթան Մուրադ IV (1623–1640 թթ.) 1633 թ. պատերազմական գործողություններ սկսեց էմիր Ֆախր ադ–Դին II դեմ: Այս անգամ նս, ինչպես օսմանա–լիբանանյան առաջին պատերազմի ժամանակ, թուրքական զորքերը Լիբանան ներխուժեցին Դամասկոսից: Բայց ի տարբերություն առաջին պատերազմի, այս անգամ լիբանանյան բանակը կարողացավ դիմադրություն ցույց տալ թուքերին: Պատերազմը ձգձգումներով տևեց մոտ երկու տարի, մինչև 1635 թ.: Լիբանանյան բանակը պարտություն կրեց և Ֆախր ադ–Դինը փախավ լեռները ու թաքնվեց մի անմատչելի՝ քարանձավում, Ջեզզինից ոչ հեռու: Թուրքերին հաջողվեց, ի վերջո, հայտնաբերել նրա թաքստոցը և գերել նրան: Շգթայակապ էմիրին իր որդիների հետ միասին տարան Ստամբուլ: Փրկության ոչ մի հույս նրա համար այլևս չկար: Այս անգամ թուրքերը, հաշվի առնելով նախորդ անգամ իրենց թույլ տրված սխալները, գործեցին արագ և վճռական: Սուլթան Մուրադ IV հրամանով Լիբանանի էմիր Ֆախր ադ–Դին II գլխատվեց, իսկ նրա անգլուխ մարմինը երեք օր շարունակ ցուցադրվում էր կայսրության մայրաքաղաքում: Մահապատժի ենթարկվեցին նաև նրա որդիները:

Այսպիսի ողբերգական վախճան ունեցավ այս յուրահատուկ քաղաքական գործիչը, որն իր հայացքներով և Լիբանանն օսմանյան լծից ազատագրելու հանդուգն ծրագրերով, առաջ էր ընկել իր ժամանակներից:

Ֆախր ադ–Դինը խոր հետք է թողել պատմության մեջ և նրա անունը լիբանանցիները արտասանում են մեծ հպարտությամբ ու հարգանքով:

3. Լիբանանը հետֆախրադդինյան շրջանում: Շիհաբները Լիբանանյան իշխանապետության էմիրներ

Ֆախր ադ–Դին II պարտությունը թուլացրեց Լիբանան իշխանապետությունը: Թուլացան նաև Մաանների դինաստիայի դիրքերը: Ճիշտ է, նրանք դրանից հետո ևս մոտ վաթսուն տարի կառավարեցին Լիբանանը որպես էմիրներ, բայց նրանք այլևս նախկին Մաանները չէին և այլևս չփորձեցին մարտահրավեր նետել Ստամբուլին: Եվ 1697 թ. նրանք հեռացան պատմության բեմից, էմիրությունը զիջելով Շիհաբներին, որոնք Լիբանանի իշխանապետերը եղան մինչև 1840 թ.:

Փոխվեց իրադրությունը նաև Լիբանանի շուրջը: Կորցնելով իր հզորությունը, նա դարձավ հարևան արաբական տարբեր ուժերի ոտնձգությունների առարկա: Խոսքը գնում է առաջին հերթին Պաղեստինում իր դիրքերը ամրապնդած Զահիր ալ–Ումարի մասին: Նախկին բեդվինի որդի, որի հորը Լիբանանի Շիհաբի էմիրը նշանակել էր Սաֆադի շրջանի կառավարիչ, Զահիր ալ–Ումարն իրեն դրսևորեց որպես մի դաժան և իր նպատակներին հասնելու համար ոչնչի առջև կանգ չառնող գործիչ, մեծ վտանգ ներկայացնելով իր հարևաններին: Իր հորից ժառանգած Սաֆադին, նա 1737 թ. միացրեց նաև Տիբերիան, ապա Նաբլուսը և Նազարեթը: Նրա ձեռքբերումների մեջ կարևոր նշանակություն ունեցավ Ակկայի վրա վերահսկողության սահմանումը:

Ալ–Ումարը 1750 թ. իր նստոցը Սաֆադից տեղափոխեց Ակկա: Նա վերականգնեց դեռևս խաչակիրների ժամանակ ավերակների վերածված ռազմավարական նշանակություն ունեցող այս քաղաքը, վերածելով այն մի անառիկ ամրոցի: Ակկան ոչ միայն դարձավ քաղաք–ամրոց, այլև նշանակալի առևտրական կենտրոն: Առևտուրի զարգացման համար ապահովություն ստեղծելու համար, նա ամենայն դաժանությամբ վերացրեց ավազակախմբերին և բանդիտներին, վերջ տալով նրանց

գործունեությանը, խստորեն պատժում էր ամեն տեսակ անօրինականություն և բարենպաստ պայմաններ ստեղծում առևտրի զարգացման համար: Նա հովանավորում էր նաև գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը և, բարձր գնահատելով քրիստոնյաների դերը տնտեսության և առևտրի բնագավառում, այս մոլեռանդ մուսուլմանը, հանդուրժողական վերաբերմունք ուներ քրիստոնյաների նկատմամբ, ապահովելով նրանց անձի և գույքի անվտանգությունը:

Ամրապնդելով իր դիրքերը, Զահիր ալ–Ումարը կապեր հաստատեց Եգիպտոսի մամլուք սուլթան Ալի բեյի հետ, այդ կապերին տալով դաշնակցային բնույթ: Նա, չբավարարվելով ծեռք բերածով, ցանկանում էր այդ դաշնակցային հարաբերությունների միջոցով ընդարձակել իր տիրույթները: Դրան նպաստեց նաև ռուս–թուրքական հերթական պատերազմի ժամանակ ռուսական նավատորմի հայտնվելը լիբանանյան ջրերում: Ռուսական նավատորմի օգնությամբ ալ–Ումարը 1772 թ. գրավեց Սիդոնը և ընդհուպ մոտեցավ Լեռնալիբանին:

Զահիր ալ–Ումարի բարձրացումը և իր տիրույթների ընդարձակումն ի հաշիվ իր հարևան երկրների՝ Լիբանանի և Սիրիայի, անհանգստացնում էր վերջիններիս, հատկապես Լիբանանին, մանավանդ այն բանից հետո, երբ Զահիրի զորքերը 1773 թ. սեպտեմբերի 27–ին գրավեցին Բեյրութը: Դա արդեն շատ լուրջ մարտահրավեր էր թե՛ Լիբանանին, թե՛ Սիրիային և թե՛ Բարձր Դռանը:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Զահիր ալ–Ումարի գործողություններն իրենց բնույթով փաստորեն ապստամբություն էր, ուղղված օսմանյան տիրապետության դեմ: Սակայն նրա գործողությունները Լիբանանի էմիրության դեմ և նոր տարածքների գրավումը հարևան արաբական երկրներից, որոնց կարգավիճակը և սահմանները հստակորեն հաստատված էր, ստեղծում էր բարդ իրավիճակ: Լիբանանը և Սիրիան կանգնեցին ծանր երկընտրանքի առջև: Նրանք որպես արաբական երկրներ, անշուշտ, կողմնակից էին արաբների հակաօսմանյան շարժումներին: Բայց մյուս կողմից ալ–Ումարի գործողությունները և տարածքային նվաճումները ի հաշիվ վերոնշյալ արաբական երկրների, հակասում էր վերջիններիս շահերին և դա, բնականաբար, չէր կարող նրանց հրճվանքն առաջացնել:

Ահա այսպիսի պայմաններում, Լիբանանի Շիհաբի էմիրները միավորվում են Դամասկոսի վալիի և թուրքերի հետ ու միասնական ճակատով հանդես գալիս Զահիր ալ–Ումարի դեմ: 1775 թ. նրանք հարձակ-

վում են Ակկայի վրա և պաշարում ալ–Ումարի մայրաքաղաքը: Զահիր ալ–Ումարը դառնում է վարձու մարդասպանի զոհը: Թեև դրանից հետո նս երկար ժամանակ շարունակվեց պայքարը ալ–Ումարի որդու՝ Ալիի գլխավորությամբ, սակայն վերջինս նույնպես սպանվեց, իսկ դիմադրությունը կոտրվեց:

Այս գործողությունների ժամանակ մեծ դեր խաղաց սիրիական բանակում, որը հանդես էր գալիս թուրքերի հետ համատեղ, ծառայող սպա Ահմադը:

Նա ծագումով բոսնիացի քրիստոնյա էր, որը ինչ–որ հանցանք էր գործել և խուսափելով պատիժ կրելուց, Բոսնիայից փախուստ էր տվել Ստամբուլ և այնտեղ կամովին վաճառվել էր մի հրեա ստրկավաճառի, նրա օգնությամբ տեղափոխվել Կահիրե ու հանձնվել սուլթան Ալի բեյին որպես նրա մամլուքը: Այստեղ էլ նա ընդունում է Ահմադ անունը, խնամքով թաքցնելով իր մութ անցյալը, կրոնական և ազգային ծագումը: Նա Ալի բեյի հանձնարարությամբ կատարում է դահճի պարտականություններ, այդ պատճառով ել ստանում «ալ–ջազար», այսինքն «դահիճ» կամ «մսագործ» մականունը: Հետագա իր գործողություններով, որի արդյունքում նրա ձեռքով բյուր մարդիկ են զոհվում, նա լրիվ արդարացնում է իր այդ կոչումը և պատմության մեջ մտել է որպես Ահմադ ալ–Ջազար:

Ահմադը հետագայում տեղափոխվում է Սիրիա, ուղղակի ծառայության մեջ մտնում թուրքերի մոտ: Նրանց իր նվիրվածության և հատկապես Սայդայի պաշտպանության համար ընդդեմ Զահիր ալ–Ումարի ցուցաբերած իր գործողությունների համար, նա Բարձր Դռան կողմից նշանակվում է Սայդայի կառավարիչ: Միջերկրածովյան այդ առափնյա քաղաքը դարձնելով իր հենակետը, Ահմադը սկսեց ընդարձակել իր տիրույթներն ի հաշիվ Լիբանանի և Պաղեստինի: Նա նշանակվում է Դամասկոսի վալի և նրա ենթակայության տակ են անցնում նաև Տրիպոլին, Լիբանանի, Սիրիայի և Պաղեստինի ընդարձակ տարածքներ: Նա դառնում է Սիրիայի փոխարքան: Չնայած նրան ենթակա էր օսմանյան սուլթանին, սակայն նա այնքան էր հզորացել, որ շատ հաճախ անտեսում էր սուլթան Սելիմ III կարգադրությունները: Իսկ մեկ անգամ, ինչպես վկայված է աղբյուրներում, նա ոչ միայն չի կատարում օսմանյան սուլթանի կարգադրությունը, այլև մահապատժի ենթարկում այդ հրամանը բերող սուլթանի սուրհանդակին:

Նա շատ դաժան էր իր բոլոր հպատակների նկատմամբ և իր տիրապետության տակ գտնվող երկրամասը կառավարում էր երկաթյա բռունցքով ու անասելի, պատիժներով, չխնայելով ոչ ոքի, անգամ նրանց, ովքեր հավատարմորեն ծառայում էին իրեն: Արաբ պատմաբան Միխայիլ Մուշաքան վկայում է, որ Ահմադը կասկածելով, որ իր երեսունյոթ հոգուց կազմված հարեմի որոշ կանայք իրեն դավաճանում են, նա, առանց պարզելու, թե կոնկրետ ով է իրեն դավաճանել, և ով է հավատարիմ, նրանց բոլորին կրակի մեջ է նետում:

Ահմադ ալ–Ջազարը ահավոր չարիք էր դարձել Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի բնակչության համար, որը բազմիցս ընդվզել է նրա դեմ, փորձելով ծերբազատվել այդ դահճից: 1789 թ. Ահմադի դեմ ուղղված խոշոր ապստամբություն տեղի ունեցավ Լիբանանում, որն ընդհատումներով շարունակվեց մինչև 1797 թ.: Ապստամբները հասան մեծ հաջողությունների: Նրանք ազատագրեցին Բեյրութը, Սայդան և Սուրը: Իսկ 1798 թ. հուժկու ապստամբություն բռնկվեց Դամասկոսում: Ստեղծված պայմաններում, երբ հողն այրվում էր Ահմադ ալ–Ջազարի ոտքերի տակ, իսկ նրա դեմ ուղղված այդ շարժումն իր մի սուր ծայրով ուղղված էր նաև օսմանյան տիրապետության դեմ, սուլթան Սելիմ III հարկադրված էր նրան հեռացնել Դամասկոսի վալիի պաշտոնից և նրա փոխարեն նոր վալի նշանակել:

Ահմադ ալ–Ջազարի անունը պատմության մեջ մտել է որպես չարիքի, դաժանության և սարսափի խորհրդանիշ և արաբների հիշողության մեջ մինչև օրս մնացել է որպես այդպիսին:

Շիհաբները, որոնց իրավունքները ոտնահարվում էին Ահմադի կողմից, կրկին դարձան Լիբանանի լիիրավ էմիրները:

VI. ԻՐԱՔԸ ՈՐՊԵՍ ՎԻԼԱՅԱԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ: ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՔԻ ՀԱՄԱՐ

1. Իրաքի բաժանումը Բաղդադի, Մոսուլի և Բասրայի վիլայաթների

Վիլայաթի սկզբունքը դրվեց, բացի Սիրիայից, նաև Իրաքի, այդ կարևոր երկրի կարգավիճակի հաստատման հիմքում: Առաջին վիլայաթը, որ կազմավորվեց Իրաքի տարածքում, Բաղդադի վիլայաթն էր: Նա ամենակարևոր և կենտրոնական վիլայաթն էր Իրաքում և հանդիսանում էր Բարձր Դռան գլխավոր հենարանը, որի օգնությամբ Ստամբուլը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել այս երկրամասում և դիմակայել Պարսկաստանի հավակնություններին, որը, թեև 1534–1538 թթ. թուրք–պարսկական պատերազմի ժամանակ պարտություն էր կրել, բայց չէր հրաժարվել Իրաքի վրա կրկին իր տիրապետությունը հաստատելու մտադրությունից:

Մյուս վիլայաթը, որ ձևավորվեց Իրաքում, Մոսուլի վիլայաթն էր, որն ընդգրկում էր Իրաքի կամ Միջագետքի ամբողջ հյուսիսային շրջանները:

Մնում էր Իրաքի հարավային շրջանների հարցը, որտեղ գլխավոր դերակատարումը պատկանում էր Բասրա քաղաքին: Նրա կառավարիչ–նահանգապետն էր արաբ շեյխ Ռաշիդը, որը բավականին ազդեցիկ անձնավորություն էր և նրա հետ բախման մեջ մտնելը թուրքերը համարում էին ոչ այնքան ցանկալի: Բասրայի հարցը լուծելու և նրա վրա թուրքական տիրապետությունը տարածելու համար, Բարձր Դռան ներկայացուցիչները բանակցությունների մեջ մտան շեյխ Ռաշիդի հետ: Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ արաբ շեյխն ինքը նույնպես շահագրգռվածություն ցուցաբերեց Բարձր Դռան հետ վարվող բանակցությունների և Ստամբուլի հետ մերձենալու հարցում: Նկատի ունենք այն վտանգը, որ կախվել էր Բասրայի վրա, պորտուգալացիների՝ Բասրային տիրանալու հավակնությունների հետևանքով: Շեյխ Ռաշիդի մտավախությունները միանգամայն հիմնավորված էին, քանի որ պորտուգալացիներն արդեն հասցրել էին իրենց ազդեցությու-

նը տարածել Պարսից ծոցի վրա և 1515 թ. գրավել Օրմուզ կղզին: Հերթը Բասրայինն էր:

Հաշվարկները շեյխ Ռաշիդին հանգեցրին այն եզրակացության, որ նրա համար նախընտրելի է օսմանյան, քան թե պորտուգալական տիրապետությունը: Նման դիրքորոշումը կարծում ենք պայմանավորված էր երկու հանգամանքով:

Մինչև պորտուգալացիների հայտնվելը, Պարսից ծոցում, անգամ Հնդկական օվկիանոսի լայն տարածքներում տիրապետող էին արաբները, արաբական նավաստիները: Դա նրանց ապրուստի և հարստության գլխավոր աղբյուրներից մեկն էր, որից նրանք զրկվեցին պորտուգալացիների պատճառով: Դա չէր կարող հակապարտուգալական ուժեղ զգացմունքներ չառաջացնել արաբների մոտ: Ուստի այդպիսի պայմաններում, երբ շեյխ Ռաշիդը լավ էր հասկանում, որ իր սեփական ուժերով ի վիճակի չէ կասեցնել պորտուգալացիների էքսպանսիան, նա իր հայրենակիցների հակապորտուգալական զգացմունքների ալիքի բարձրացման պայմաններում նախընտրում է օսմանյան տիրապետությունը:

Օսմանցիներին նախապատվություն տալու հարցում չպետք է բացառել արաբների և թուրքերի միևնույն իսլամական կրոնին պատկանելու հանգամանքը: Եթե նկատի ունենանք, որ դեպքերը տեղի էին ունենում միջնադարում, երբ կրոնական գործոնը մեծ դեր էր խաղում, իսկ շատ հաճախ էլ վճռական էր հանդիսանում, ապա շեյխ Ռաշիդի դիրքորոշումը միանգամայն հասկանալի է:

Հարկ է նկատի ունենալ, որ Բարձր Դուռը որոշակի խոստումներ էր տվել Բասրայի կառավարչին նրա ապագայի վերաբերյալ, որը երաշխիքներ էր տալիս նրան Բասրայի և նրա շրջակա տարածքների կառավարիչ մնալու հարցում: Մինչդեռ նման խոստումներ նա չէր ստացել և չէր էլ կարող ստանալ պորտուգալացիներից:

Օսմանցիներին իր հպատակությունը հայտնելու շատ հետաքրքիր ձև ընտրեց շեյխ Ռաշիդը: Նա 1538 թ. հատուկ այդ նպատակով Ստամբուլ ուղարկեց իր որդուն, որը իր հոր անունից սուլթան Սուլեյման I հանձնեց Բասրայի բանալիները: Այսպիսով, օսմանյան սուվերենությունը կամավոր ընդունելու շեյխ Ռաշիդի այդ քայլով ամբողջ Իրաքն անցավ օսմանյան տիրապետության տակ:

Դրամից հետո ձևավորվեց երրորդ՝ Բասրայի վիլայաթը Իրաքում: Եվ նրա վարչատարածքային բաժանումը հիմնական գծերով պահպանվեց ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության կործանումը:

Բարձր Դուռն ըստ արժանվույն գնահատեց շեյխ Ռաշիդի ծառայությունները օսմանյան կայսրությանը և նրան նշանակեց Բասրայի կառավարիչ–վալի: Սակայն նա համարվում էր Ստամբուլի վասալը: Նա իրավունք ստացավ դրամ հատել սուլթանի պատկերով, սուլթանի անունը հիշվում էր աղոթքի ժամանակ և այլն: Մնացած հարցերում նա գործում էր ըստ իր հայեցողության և օգտվում բավականին լայն ազատություններից:

Հասկանալի է, որ նման իրավիճակը երկար ժամանակ չէր կարող շարունակվել: Ստամբուլը փորձում էր աստիճանաբար սեղմել օղակը Բասրայի շուրջը և ուժեղացնել իր վերահսկողությունը, իսկ շեյխ Ռաշիդը, ընդհակառակը, ցանկանում էր պահպանել օսմանյան տիրապետության ձևական բնույթը և պահպանել իր հարաբերական ինքնուրույնությունը: Հարաբերությունները նրանց միջև սրվեցին, որոնք 1546 թ. վերածվեցին զինված բախումների:

Բարձր Դուռը որպես բախումների առիթ օգտագործեց շեյխ Ռաշիդի հրաժարվելը թուրքերին հանձնել մի խումբ արաբների, որոնց թուրքերը համարում էին խռովարարներ: Շեյխը նրանց վերցրել էր իր հովանավորության ներքո: Ստամբուլը որոշեց, որ եկել է հարմար պահը պատժելու Ռաշիդին և իրեն ամբողջապես ենթարկել Բասրայի վիլայաթը: Այդ առաքելությունը Բարձր Դուռը դրեց Բաղդադի վալի էյաս փաշայի վրա: Ստանալով համապատասխան հրաման մայրաքաղաքից, Բաղդադի վալին իր զորքերով արշավեց Բասրայի վրա և «փայլուն» կերպով կատարեց իրեն տրված հանձնարարությունը: Ռաշիդը պարտվեց և ոչ միայն զրկվեց էմիրի՝ Բասրայի կառավարչի պաշտոնից, այլև արտաքսվեց Իրաքից:

Շեյխ Ռաշիդի ոդիսականը մի անգամ ևս վկայում է, որ սուլթաններին ծառայելը, նրանց հետ մոտ լինելը կամ նրանց բարեհաճությունը նվաճելը, դեռևս երաշխիք չէ քաղաքական հարատևության և դիրքերի պահպանման համար: Բայց, այդուհանդերձ, շեյխի բախտը բերեց, քանի որ նա զրկվեց իր պաշտոնից, սակայն ոչ գլխից, որը սորվորական երևույթ էր օսմանյան կայսրությունում:

Այսպիսով, Իրաքում հաստատվեց, իսկ շեյխ Ռաշիդին ասպարեզից հեռացնելուց հետո, ամրապնդվեց վիլայաթային վարչատարած-

քային համակարգը: Դա, անշուշտ, Օսմանյան կայսրության կարևոր նվաճումներից մեկն էր: Եվ եթե նկատի առնենք, որ Բարձր Դռանը հիմնականում հաջողվել էր իրեն ձեռնտու վարչատարածքային համակարգ հաստատել Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում, Պաղեստինի հետ հանդերձ, ապա կարող ենք ասել, որ Օսմանյան կայսրությունը կարողացավ կազմակերպչական առումով հիմնականում լուծել արաբական երկրների վրա իր տիրապետության հաստատման բավականին բարդ խնդիրը:

2. Թուրք–պարսկական նոր պատերազմներ Իրաքի համար

Սակայն արաբական երկրների վրա օսմանյան տիրապետության կայունության առումով, իրավիճակը նույնանման չէր արաբական բոլոր մասերում: Այդ համակարգում թույլ օղակը Իրաքն էր: Այստեղ բնակչության մեծ մասը շիա մուսուլմաններ էին: Իրաքում էին գտնվում, ինչպես բազմիցս նշել ենք, շիիզմի ամենակարևոր և հեղինակավոր սրբակենտրոնները՝ Նաջաֆը, Քերբելան և Կադիմայնը: Այդ առումով Իրաքը շիիզմի միջնաբերդն էր: Մինչդեռ թուրքերը սուննի էին և սուննիզմը Օսմանյան կայսրությունում համարվում էր պաշտոնական դավանանք: Ուրեմն դավանանքի հարցում Իրաքի շիաները և օսմանյան թուրքերը գտնվում էին տարբեր կողմերում և նրանց միջև գոյություն ունեցող գիծը ոչ թե միացնող, այլ բաժանարար գիծ էր:

Սակայն Իրաքի շիաները մշտապես Իրանի կողմն էին նայում, որովհետև այստեղ բնակչության մեծամասնությունը նույնպես շիաներ էին: Իրանը իր հերթին մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում Իրաքի շիաներին և նրա տարածքում գտնվող շիական սրբավայրերը: Ուրեմն այս դեպքում շիիզմը միացնում էր Իրաքի շիաներին և Իրանին, շիիզմի հետևորդ պարսիկներին:

Այս հանգամանքը լարվածության մշտական աղբյուր էր հանդիսանում Իրանի և Օսմանյան կայսրության փոխհարաբերություններում: Դրությունն ավելի էր բարդանում, եթե ասվածին ավելացնենք, որ Իրանը փայփայում էր նաև տերիտորիալ նկրտումներ և ցանկանում էր իր տիրապետությունը հաստատել Իրաքի վրա: Ուստի այս երկու պետությունների միջև հաճախ էր լարվածությունը վերածվում երկարատև ու արյունահեղ պատերազմական գործողությունների:

Իրանի շահ Աբբասը, օգտվելով Օսմանյան կայսրության ներքին դժվարություններից, 1623 թ. պատերազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ: Այս անգամ հաջողությունն ուղեկցեց պարսիկներին: Պարսկական բանակը պաշարեց Բաղդադը, որը որոշ ժամանակ անց, անձնատուր եղավ: Բաղդադը մոտ տասնհինգ տարի մնաց Պարսկաստանի տիրապետության տակ: Միայն 1638 թ. թուրքական սուլթան Մուրադ IV, ճնշելով ենիչերիների անհնազանդությունը և վերջ տալով ներքին խժդժություններին, ու ամրապնդելով իր դիրքերը, վերսկսեց պատերազմը Պարսկաստանի դեմ և պաշարեց Բաղդադը: Պաշարումը տևեց քառասուն օր, որից հետո թուրքական զորքերը գրոհով վերցրեցին Բաղդադը: Հաղթանակած թուրքերը շատ դաժան վարվեցին պարտություն կրած պարսիկների հետ: Նրանք գլխովին կոտորեցին քաղաքի պարսիկ տասհազարանոց կայազորը և երեսուն հազար պարսիկ շիաների: Այս զանգվածային մորթը զարհուրելի տպավորություն է թողել ականատեսների վրա:

Այդ հաղթանակից հետո, 1639 թ., Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև Կասր–ի–Շիրինում ստորագրվեց պայմանագիր, որով Իրաքն անցնում էր Օսմանյան տիրապետության ներքո:

Սակայն դրանով թուրք–պարսկական մրցակցությունը Իրաքի համար չվերջացավ: 1733 թ. տեղի ունեցավ թուրք–պարսկական նոր պատերազմ: Պարսիկներին հաջողվեց գրավել Բաղդադը, բայց դա երկար չտևեց և Բաղդադը կրկին անցավ անցավ թուրքական իշխանության ներքո և մնաց Օսմանյան կայսրության կազմում մինչև այս վերջինիս կործանվելը:

Բաղդադի անցնելը թուրքերի տիրապետության տակ հնարավորություն տվեց վերականգնել Իրաքում հաստատված վիլայաթական կարգավիճակն ամբողջությամբ: Բաղդադը կրկին վերականգնեց իր առաջատար դիրքերը երկրում:

3. Բաղդադի տեղական վալիների դիրքերի ամրապնդումը

Սակայն Իրաքում, այնուամենայնիվ, չհաստատվեց կայուն վիճակ: Դժգոհությունը թուրքերի տիրապետությունից և նրանց վարած քաղաքականությունից համակել էր երկրի բնակչությանը, հատկապես մի շարք ցեղերի և ցեղային միությունների: Դրանցից հիշատակության են արժանի 1651 թ. ապստամբությունը Բասրայում, և, հատկապես ազ-

դեցիկ մունթաֆիկ ցեղային միության հակաօսմանյան ապստամբությունը 1690 թ.:

Ճնշելով այդ ապստամբությունները և հակաօսմանյան հուզումները, թուրքական վալիները միաժամանակ փորձում էին ամրապնդել իրենց դիրքերը և նվազեցնել իրենց կախվածությունը Ստամբուլից, օգտվելով Օսմանյան կայսրության թուլացումից և նաև այն հանգամանքից, որ շատ հաճախ թուրքական սուլթանները զբաղված էին լինում բուն Թուրքիայում կարգ ու կանոն հաստատելով և իրենց անձնական իշխանությունը պահպանելու դժվարին խնդիրներով: Հատկապես իր դիրքերն ամրապնդեց Բաղդադի վալի Հասան փաշան, որը 1702–1724 թթ., մինչև իր մահը Բաղդադը կառավարում էր ինչպես մի փոքրիկ թագավոր, մեծ կշիռ ուներ Իրաքի կառավարման մեջ և այս երկրամասում ծագող խնդիրները լուծելու գործում: Նա այնքան հզորացավ, որ Բարձր Դռանը ստիպեց Բասրայի վալի նշանակել իր որդուն: Այսպիսով, Իրաքի երեք վիլայաթներից երկուսն անցան հոր և որդու իշխանության ներքո:

Բաղդադի ազդեցիկ վալիներից էր նաև Սուլեյման Բույուկը (1780–1802 թթ.), որը կյուլեմեն՝ մամլուք էր: Նա կարողացավ ստեղծել իր բանակը, հարկեր ու մաքսեր էր հավաքում, և հաշվի չէր նստում Բարձր Դռան հետ:

Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ չնայած առանձին փաշաների և վալիների նկրտումներին անտեսել Բարձր Դռանը կամ թուլացնել իրենց կախվածությունը նրանից, այդուհանդերձ, նրանք մնում էին Օսմանյան կայսրության կազմում: Իսկ դա Ստամբուլի համար շատ կարևոր էր, քանի որ նրան ոչ միայն պետք էր Իրաքը որպես այդպիսին, այլև նրա միջոցով Օսմանյան կայսրությունը ձգտում էր դուրս գալ Պարսից ծոց և ամրապնդվել այդ կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող շրջանում:

VII. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԽՃԱՆԿԱՐԸ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ

1. Հիջազը որպես մեկ վարչատարածքային միավոր: Օսմանյան սուլթանները՝ Մեքքա և Մադինա քաղաքների սպասավոր

Յուրահատուկ իրավիճակ էր ստեղծվել Արաբիայում: Այստեղ օսմանյան նվաճողներին այդպես էլ չհաջողվեց իրենց ենթարկել ամբողջ Արաբիան և այդ տարածքում հաստատել կառավարման միասնական կարգավիճակ, ինչպես արաբական մյուս մասերում: Այդ հարցում Արաբիայում խճանկար հիշեցնող մի խառնաշփոթ իրավիճակ էր առաջացել:

Օսմանյան տիրապետությունը շատ թե քիչ զգալի էր Հիջազում և նրա երկու կարևոր Մեքքա և Մադինա քաղաքներում: Վարչատարածքային առումով Հիջազը չկոտորակվեց առանձին տարածքային միավորների, ինչպես արաբական մյուս երկրները: Նա պահպանվեց որպես մեկ ամբողջական տարածքային միավոր, որի գլուխ կանգնած էր Հիջազի շերիֆը: Այդ պաշտոնը կարող էր զբաղեցնել միայն արաբ, մարգարե Մուհամմադի շառավիղներից, Հաշիմի տոհմից: Եվ օսմանյան սուլթանները երբեք չհանդգնեցին փոխել հնուց ի վեր եկող այդ կարգը կամ չփորձեցին Հիջազի կառավարիչ ուղարկել Ստամբուլից որևէ թուրքի, ինչպես նրանք դա անում էին Եգիպտոսի, Սիրիայի կամ Իրաքի պարագայում: Հիջազի շերիֆները անվանականորեն համարվելով սուլթանների վասալը, իրականում օգտվում էին ինքնուրույնության բավականին բարձր աստիճանից:

Այս հարցում իր դերը խաղաց այն հանգամանքը, որ սուլթանները Հիջազի կողմից ճանաչվեցին որպես օրինական տիրակալներ, որը նրանց առջև դուռ բացեց խալիֆայի տիտղոսը յուրացնելու համար: Բայց միայն դա չէր:

Օսմանյան սուլթանները, սկսած Սելիմ I, ձգտում էին դառնալ «թագավորների գլխավորը» կամ «արքայից արքայի» տիտղոսակիր: Սակայն դա հնարավոր էր, եթե նրանց Հիջազի շերիֆների կողմից տրվեր «երկու սուրբ քաղաքների ծառայի» տիտղոս, Մեքքայի և Մադինայի սպասավորի աստիճանակարգ: Եվ նման տիտղոս շնորհվեց Սելիմ I: 1517 թ. հունվարի 23–ին Կահիրեի մզկիթներից մեկում, աղոթքի ժամանակ խուտբայում արտասանվեցին հետևյալ բառերը Սելիմ I հասցեին. «Օգնություն ցույց տուր, օ, ալլահ, սուլթանին, սուլթանի որդուն, երկու

մայրցամաքների և երկու ծովերի թագավորին, երկու բանակների կործանողին, երկու Իրաքների սուլթանին, երկու սուրբ քաղաքների ծառային, հաղթական թագավոր Սելիմ շահին»:

Դրանից հետո նրան հաջորդող սուլթանները ինքնաբերաբար դառնում էին այդ տիտղոսի կրողները:

Ահա այս հանգամանքների բերումով յուրատեսակ ձևով լուծվեց Հիջազի վարչական բաժանման և կարգավիճակի հարցը: Եվ վերոնշյալ պարագաները ստիպում էին սուլթաններին Հիջազի նկատմամբ վարել ավելի մեղմ քաղաքականություն:

2. Եմենի իմամությունը

Խճանկարի մյուս բաղադրատարրը Եմենն էր: Արաբիայի հարավային մասը զբաղեցնող այդ երկիրը Հիջազի պես մի ինքնամփոփ երկիր էր: Նրա արաբ բնակչությունը հարում էր շիիզմի զեյդական ճյուղին: Զեյդը 740 թ. սպանված Հուսեյնի, որը թաղված էր Քերբելայում, թոռն էր, և նրա անունով այդ ճյուղը կոչվում էր զեյդական: Նրանց հոգևոր առաջնորդները և ցեղապետերը ուժեղ դիրքեր ունեին և տեղաբնիկները ավելի շատ նրանց էին լսում և նրանց հրամանները կատարում, քան թե այդ երկրում հայտնված թուրքերի: Ընդհանրապես օսմանյան տիրապետությունը Եմենում ամուր չի եղել, եղել է խախուտ և կրել է ձևական բնույթ: Հարաբերությունները մշտապես լարված են եղել և եմենցիները շատ հաճախ են հանդես եկել օսմացիների դեմ: Այդ պատճառով էլ օսմանյան իշխանությունները չեն կարողացել Եմենում հաստատվել հիմնովին և դրան համապատասխան չեն կարողացել Եմենում կիրառել հստակ ու կայուն կարգավիճակ:

1565 թ. ապստամբ եմենցիները դուրս քշեցին թուրքերին Եմենից: Ճիշտ է, 1570 թ. թուրքական խոշոր բանակին հաջողվեց կրկին մտնել Եմեն, սակայն եմենցիները երբեք չդադարեցրին պայքարը օսմանյան տիրապետության դեմ: Եմեն վերադառնալուց հետո Բարձր Դուռը չկարողացավ կառավարման որևէ հստակ համակարգ մտցնել: Օսմանյան իշխանություններն ավելի շատ զբաղված էին անհնազանդ Եմենը «խաղաղեցնելով», քան թե այլ խնդիրներով: Սակայն նրանք այս բնագավառում ևս որևէ դրական արդյունքի չհասան:

1633 թ. Եմենում մեծ հեղինակություն վայելող զեյդական առաջնորդ Կասիմը հերթական ապստամբությունը բարձրացրեց օսմանյան

տիրապետության դեմ: Պատերազմական գործողություններն ընդմիջումներով շարունակվեցին մինչև 1642 թ.: Եմենցիների հարվածների և ճնշման տակ օսմանյան կայազորները ստիպված էին հեռանալ Եմենից: Կասիմը հիմնեց իմամություն, որը կառավարման նոր ձև էր Եմենի համար, սակայն որը համապատասխանում էր շիական դոգմատիկային և մուսուլմանական պետություն կառուցելու նրանց հավատամքին:

3. Կրոնի ու սրի դաշինքը և վահաբիական պետության առաջացումը Կենտրոնական Արաբիայում

Բոլորովին այլ կարգավիճակ էր տիրում Արաբիայի կենտրոնական մասում: Օսմանցիները այստեղ երբեք չկարողացան ներխուժել և իրենց տիրապետությունը հաստատել Նաջդում, Ասիրում, Խասում և հարակից տարածքներում: Դրանք անկախ շրջաններ էին, որոնք խիստ նախանձախնդիր էին իրենց ինքնուրույնությունը պահպանելու հարցում: Օսմանյան լծի տակ երբեք չընկավ նաև Օմանը:

Ահա այսպիսին էր ընդհանուր գծերով կարգավիճակի և վարչական բաժանման խճանկարը Արաբիայում:

XVIII դարի առաջին կեսում կենտրոնական Արաբիայում սկսվեց արտաքուստ կրոնական, բայց խորքի մեջ նպև քաղաքական մի շարժում, որը կոչված էր առաջնակարգ դեր խաղալ Արաբիայի, և ոչ միայն Արաբիայի, ճակատագրում: Խոսքը վահաբիզմի առաջացման մասին է, որը ցնցեց ամբողջ Արաբիան:

Այդ շարժումը և նրա անվանումը կապված է Մուհամմադ իբն Աբդ ալ–Վահաբի (1703–1792 թթ.) անվան և գործունեության հետ: Նրա նախնիները, հայրը և պապը, ճանաչված ուլեմներ էին, որն իր կնիքն էր դրել երիտասարդ Մուհամմադի դաստիարակության և նախասիրությունների վրա: Փոքր հասակից ծանոթանալով իսլամական կրոնի հիմնադրույթների հետ, հետագայում նա հրապուրվում է այդ հարցերով և իրեն ամբողջապես նվիրում դրանց ուսումնասիրությանը: Դրան նպաստում է նաև իր ժամանակների համար նրա ստացած լավ կրթությունը, մի կողմից, և ճանապարհորդությունը արաբական երկրներ և այցելություններ նրա գիտական–մշակութային կենտրոններ, մյուս կողմից: Նա լինում է Հիջազում, նրա Մեքքա և Մադինա քաղաքներում, Իրաքում, Սիրիայում և արաբական այլ կենտրոններում, ուսումնասիրում է արաբական կրոնը և այլ գիտություններ, հանդիպում և երկարատև զրույցներ ու

բանավեճեր ունենում հայտնի աստվածաբան ուլեմների հետ: Հարստացած ձեռք բերած գիտելիքներով և տեսածով, նա վերադառնում է հայրենիք՝ Նաջդ: Բայց նա վերադարձել էր արմատապես փոփոխված, նոր հայացքներով ու ապագայի նկատմամբ նոր ծրագրերով:

Իր ճանապարհորդության արդյունքում Մուհամմադ իբն Աբդ ալ–Վահաբը ցնցված էր իսլամի նկատմամբ բնակչության ունեցած վերաբերմունքից: Բոլորը, իհարկե, գտնում էին որ իրենց կրոնը իսլամն է և իրենց համարում էին մուսուլման: Սակայն նա նկատում է, որ դա ձևական, մակերեսային և ոչ խորքային բնույթ է կրում, որ մարդիկ մոռացել են իսկական իսլամը: Շատերը հեռանալով նրանից, վերականգնել էին կռապաշտությունը: Իսլամի կողքին ցեղերն ունեին իրենց տեղական կուռքերը, տոտեմները և սրբերը: Կարծես թե չէր եղել Մուհամմադ մարգարեի անողոք պայքարը բազմաստվածության, տեղական սրբերի և կռապաշտության դեմ իսլամի ծագման արշալույսին: Այդ բոլորը համարելով նահանջ նախասկզբնական և մաքուր իսլամից, նա դրանով էր բացատրում բարքերը համընդհանուր անկումը, քաղաքական վայրիվերումները, նույնիսկ տնտեսական քաոսը: Աշխարհը թաղվել է մեղքերի մեջ: Փրկվելու համար Մուհամմադ իբն Անդ ալ–Վահաբը կոչ էր անում մաքրել կրոնը, վերադառնալ Կորանի դրույթներին և սուննային, նրա զուլալ ակունքներին, նրա այն ձևին, որը տիրապետող էր իսլամի գոյության առաջին երեք դարերում, հրաժարվել բազմաստվածության դրսևորումներից և իսլամի մեջ կատարած զանազան նորամուծություններից, որոնք հակասում էին Կորանի սկզբունքներին: Նրա քարոզը՝ վերադառնալ վաղնջական, անաղարտ և մաքուր իսլամին, հիմք է տվել նրան և նրա հետևորդներին՝ վահաբիներին, անվանել «Իսլամի պուրիտաններ»:

Նա քարոզում էր միաստվածություն, գտնելով, որ դա համոզվածությունն է առ այն, որ ալլահը միակ արարիչն է տվյալ աշխարհի, նրա տերը և օրենսդիրը: Ալլահը ոչ ոքու օգնության կարիքը չի զգում և միայն նրա ձեռքում է բարու և չարի ստեղծումը: Նա քննադատում էր բոլոր այն մուսուլմաններին, որոնք ալլահին բնորոշ ատրիբուտները վերագրում էին բույսերին, քարերին, սրբերին, մահարձաններին և այլն: Նա գտնում էր, որ դա ոչ մի կերպ չի կարող համատեղվել միաստվածության, այսինքն ալլահը որպես միակ արարիչը լինելու գաղափարի հետ: Նա կտրուկ կերպով մերժում էր «ալլահին ընկեր տալու» գաղափարը:

Շատ հետաքրքիր, անգամ զարմանալի է Մուհամմադ իբն Աբդ ալ–Վահաբի և նրա հետևորդների վերաբերմունքը Մուհամմադ մարգարեի նկատմամբ: Նրանք Մուհամմադին համարում էին մի սովորական մարդ, որին ալլահն ընտրել էր իր առաքյալը լինելու համար, և ոչ ավելին: Ելնելով այս տեսադրույթից, նրանք դեմ էին Մուհամմադի աստվածացմանը, որին չի կարելի երկրպագել կամ նրան դիմել ինչ–որ խնդրանքով: Մուհամմադի միակ առավելությունը մյուս մուսուլմանների համեմատ կայանում էր նրանում, որ նա դատաստանի օրը կարող էր միջնորդել ալլահի առջև այս կամ այն իսլամադավանի համար:

Նա դատապարտում և կոչ էր անում պայքարել մագիայի, կախարդության, գուշակության դեմ, դատապարտում էր անեծքները, համայիլներ, թալիսմանները և այլն, դրանք համարելով որպես հեթանոսության վերապրուկներ:

Վահաբիզմը պատկանում է իսլամի ամենաանհաշտ թևին, որը ժխտում է բոլոր տեսակի նորությունները (բիդա) և պահանջում է վերադառնալ Կորանին և սուննային՝ նրանց անխաթար կարգավիճակով:

Վահաբականներին պուրիտաններ կոչելը, ավելի հիմնավոր էր դարձնում նրանց դիրքորոշումը բարոյական սկզբունքների հարցում: Նրանց առաջնորդը գտնում էր, որ Արաբիայի, մանավանդ նրա անապատների դաժան պայմանները, պարտադրում են, որ արաբները բարքերում լինեն պարզ, կենցաղում սակավապետ և վարեն ասկետին բնորոշ զուսպ կյանք: Նա դեմ էր պերճանքին, երգին, պարին, ծխախոտ և գինի օգտագործելուն, որը նրա կարծիքով հակասում էր Կորանին, և որը նա համարում էր ավելորդ ու բեդվինի բնությանը անհարիր, չարդարացված շռայլություն:

Սակայն սխալ կլիներ վահաբիզմը գնահատել և նրա տեղը որոշել միայն կրոնական տեսանկյունից: Կրոնական ասպեկտը վահաբիզմի միայն մի կողմն էր: Նրա մյուս կողմը սոցիալական և քաղաքական ասպեկտներն էին:

Վահաբիզնի մեջ իր ուրույն տեղն ունի սոցիալական ներդաշնակության սկզբունքը, որը հավաստում է, թե «արաբաը հավասար է արաբին»: Նա ոչ միայն կոչ էր անում, այլև պահանջում էր էմիրներից, շեյխերից և մեծհարուստներից արդարամիտ լինել իրենց ենթակաների կամ հպատակների հետ, ցուցաբերել հոգատարություն ստրուկների, ծառաների և բոլոր տեսակի սպասավորների նկատմամբ, ընդգծում, որ աղքատներն ավելի հեշտ կընկնեն դրախտ, քան թե հարուստները: Նա գտ-

նում էր, որ իսկական մուսուլմանը պետք է լինի բարի, իր խոսքի տերը, չխաբի և չստի, օգնի կույրերին և այլն: Դրա հետ միասին, վահաբականները գտնում էին, որ մուսուլմանը պետք է լինի համբերատար, չմասնակցի խռովությունների, շնորհապարտ լինի իր մեծերին, էմիրներին, շեյխերին և այլն:

Բայց վահաբականները խիստ թշնամական դիրքորոշում ունեին այն բոլոր մուսուլմանների և մուսուլմանական ուսմունքների նկատմաբ, որոնք չէին ընդունում նրանց տեսակետները և չէին հետևում նրանց: Վահաբականներն այրում էին այն աստվածաբաների գրքերը, որոնց հայացքները չէին համընկնում նրանց տեսակետներին, կործանում էին հուշարձաններ, քանդում և ոչնչացնում գերեզմանաքարեր և այլն: Նրանք աչքի էին ընկնում մոլեռանդությամբ, «անհավատներ» հռչակելով բոլոր նրանց, անգամ այն մուսուլմաններին, ովքեր հակառակ էին իրենց դրույթներին: Նրանք նույնիսկ այլ կերպ էին մեկնաբանում ջիհադը՝ սրբազան պատերազմը, գտնելով, որ սրբազան պատերազմ պետք է մղել «բազմաստվածության» կողմնակիցների դեմ:

Այսպիսով, վահաբիզմն այդ մասով դառնում էր նվաճողական պայքարի և պատերազմների գաղափարախոսություն:

Արաբիայի հսկայական տարածքներում, ինչպես նշել ենք, այդ ժամանակաշրջանում չձևավորվեց և գոյություն չուներ որևէ, շատ թե քիչ աչքի ընկնող, պետական կառույց: Այդ տեսակետից նա փոքր ու աննշան, միմյանց դեմ մարտնչող տեղական շեյխությունների մի անկազմակերպ տարածք էր ներկայացնում:

Կար Հիջազը իր շերիֆով, որը թեև վայելում էր լայն ինքնավարություն ներքին հարցերում, այնուհանդերձ, նա թուրքական վասալ էր և ընդունակ չէր համաարաբական ֆունկցիաներ կատարել, չնայած նրա տարածքում Մեքքայի և Մադինայի առկայությանը:

Արաբիայի հարավային մասում Եմենն էր, որին հաջողվել էր XVII դարի երկրորդ կեսում վռնդել թուրքերին: Բայց նրա զեյդական ղեկավարներն ապրում էին տեղական, նեղ խնդիրներով և իրենց առջև որևէ համաարաբական խնդիր չէին դնում, և ըստ էության չէին կարող դնել, հաշվի առնելով, բացի այլ հանգամանքներից, նաև նրանց շիիզմի մի ճյուղին պատկանելու հանգամանքը և իմամությունն իրենց քաղաքական իդեալ ընդունելը:

Կենտրոնական Արաբիան մի ազատ տարածք էր այս բառի շատ լայն իմաստով: Այստեղ տիրակալ էին բեդվին ցեղերը՝ ազատ տեղա-

շարժվելու իրենց դարավոր իրավունքով, որը նրանցից ոչ ոք չէր կարող խլել: Նրանց գլխին գոյություն չուներ որևէ պետական կառույց, որը նրանք ընդունեին և որին ենթարկվեին: Դա ցեղերի և ցեղային միություններին ենթակա մի տարածք էր:

Այս իրադրությունը անհրաժեշտ էր դարձնում նրանց միավորումը և Արաբիայում հզոր, միասնական և անաղարտ իսլամի սկզբունքների վրա խարսխված արաբական պետության ստեղծումը: Միաստվածությունը՝ թաուհիդ, դարձավ վահաբիզմի գլխավոր քաղաքական պահանջը: Եվ դա վահաբիների մոտ ոչ թե տարերային, այլ մտածված, ծրագրային բնույթ ուներ: Այդ պատճառով էլ վահաբիներին անվանում էին «մուվահիդուն», այսինքն միաստվածության կողմնակիցներ:

Խոսելով վահաբիզմի քաղաքական ասպեկտի մասին, աչքաթող չպետք է անել նաև այն պարագան, որ վահաբիզմն ուներ նաև հակաթուրքական ուղղվածություն: Նա մուսուլմաններին բաժանում էր լավ և վատ մուսուլմանների: Վատերի մեջ վահաբիզմը մտցնում էր թուրքերին, մերժելով նրանց հատուկ զանազան կրոնական պաշտամունքներն ու սովորությունները, այդ թվում և միստիցիզմն ու դերվիշիզմը և, որ ամենակարևորն է, կոչ էր անում պայքարել թուրքական կեղծ սուլթան–խալիֆաների ու տեղերում նրանց ներկայացուցիչները հանդիսացող թուրքական փաշաների և վալիների դեմ: Նա թուրքական սուլթաններին չէր ճանաչում որպես խալիֆա:

Ուրեմն, վահաբիզմը կրոնական և քաղաքական պահանջների միասնությունն է: Միայն այս երկու կոմպոնենտների առկայության դեպքում խոսք կարող է լինել վահաբիզմի մասին:

Միաժամանակ կարևոր ենք համարում ընդգծել, որ վահաբիզմը կրոնական նոր ուսմունք չէր: Իսլամի մաքրության պահանջով հանդես են եկել և՛ մինչև վահաբիզմը, և՛ նրանից հետո: Նա ուղղակի արձագանք էր պատմական տվյալ պայմաններում Արաբիայում ստեղծված անբարենպաստ պայմանների և կոչ վերադառնալու իսլամական մաքրամաքուր դրույթներին, դա համարելով ծանր պայմաններից դուրս գալու միակ ելքը:

Սակայն Մուհամմադ Աբդ ալ–Վահաբը միայնակ չէր կարող լուծել այս բարդ խնդիրը, որքան էլ որ նա զարգացած ու ճարտասան լիներ: Նրան անհրաժեշտ էր քաղաքական գործընկեր, որի հետ դաշնակցած կարելի էր պայքարել վերոնշյալ կրոնա–քաղաքական իդեալների և ծրագրերի համար:

Արաբիայի համար այդ ճակատագրական պահին գտնվեց նաև այդ քաղաքական գործիչը՝ ի դեմս Մուհամմադ իբն Սաուդի (1765–1803 թթ): Աս–Սաուդը Նաջդի մի օազիսային գյուղի, Դիրայահի շեյխն էր, որը գտնվում էր ժամանակակից Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիյադից ոչ հեռու: Նա ծանոթանալով Աբդ ալ–Վահաբի հայացքների հետ, ամբողջությամբ ընդունեց դրանք: Աս–Սաուդը լավ էր հասկանում, որ Արաբիայի տարածքում հայտնված այդ բազում շեյխությունները միավորելու և միասնական պետություն ստեղծելու համար դրանից ավելի լավ զենք հազիվ թե գտնվեր: Վահաբիզմն ընկալվում էր որպես Արաբիայի միավորման գաղափարախոսություն: Իսկ քանի որ աս–Սաուդը ինքը հավակնություն ուներ դառնալու այդ պետության ղեկավարը, ուստի և ընդառաջ գնաց ալ–Վահաբիին: Նրանց միջև այդ համաձայնությունը կայացավ 1744 թ.:

Այսպիսով, տեղի ունեցավ կրոնի և սրի դաշինք, կամ, Ֆ. Հիթթիի դիպուկ բնորոշմամբ, կատարվեց «ամուսնություն կրոնի և սրի միջև»: Կրոնն ապահովում էր Մուհամմադ իբն Աբդ ալ–Վահաբը, իսկ սրի հոգսն իր վրա էր վերցնում Մուհամմադ իբն Սաուդը:

Մուհամմադ իբն Սաուդը, իսկ նրա մահից հետո Աբդ ալ–Ազիզ աս–Սաուդը (1765–1803 թթ.) վահաբիզմի դրոշի ներքո իրականացրին Նաջդի միավորումը (1773 թ.): Հետագայում, մինչև XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբները, նրանք իրենց ենթարկեցին ամբողջ Կենտրոնական Արաբիան, Խասը, Ասիրը և մի շարք հաղթանակներ տարան Հիջազի շերիֆի նկատմամբ: Նրանք 1801 թ. ներխուժեցին Իրաք, գրավեցին Քերբելան, իսկ 1803 մտան Մեքքա և Մադինա, կործանեցին բոլոր կուռքերի ու սրբերի հուշարձանները, ամենուր ամրապնդելով վահաբականների դիրքերը: Աբդ ալ–Ազիզին հաջորդած էմիր Սաուդի տիրապետության տարիներին՝ 1803–1814 թթ., արդեն կարելի է խոսել Արաբական թերակղզում արաբական ընդարձակ պետության կազմավորման մասին, որի մեջ մտնում էր համարյա ամբողջ Արաբական թերակղզին: Նրա պաշտոնական կրոնը դարձավ իսլամի վահաբական ուղղությունը, որի դրոշի ներքո նա ասպատակում էր Իրաքը և Սիրիան, հարձակումներ գործում Բաղդադի և Բասրայի, Դամասկոսի և Հալեբի վրա: Բայց նրան այդպես էլ չհաջողվեց գրավել այդ արաբական երկրները և նրանցում տարածել վահաբիզմը: Այդ երկրների, որոնց պայմանները միանգամայն տարբեր էին Արաբական թերակղզում տիրող իրականությունից, և նրանց արաբական բնակչության համար վահաբիզմն անընդունելի էր:

Ուստի վահաբիներին չհաջողվեց ամրանալ այդ երկրներում և ամեն անգամ այս կամ այն քաղաքը գրավելուց հետո, նրանք հարկադրված էին լինում հեռանալ այդ երկրներից ու վերադառնալ Արաբական թերակղզի:

Բացառություն կազմեցին Պարսից ծոցի երկրները: Այստեղ վահաբականներն ունեցան նշանակալի հաջողություններ և վահաբիզմն բավականին արագությամբ տարածվեց այդ տարածքում: 1803 թ. վահաբականների տիրապետության տակ հայտնվեցին Բահրեյնը, Քուվեյթը, ներքին Օմանը, իսկ մեկ տարի անց, որոշ դիմադրությունից հետո, որը ճնշվեց վահաբական լավ կազմակերպված և կարգապահ զորքերի կողմից, նաև Մասկատը:

Սկսվեց վահաբիզմի հաղթարշավը, որը առավել պտղաբեր եղավ հետագա տարիներին, XIX–XX դարերում:

VIII. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՂՐԻԲՈՒՄ

Մաղրիբում, ինչպես նշվեց, Օսմանյան տիրապետության տակ էին գտնվում Ալժիրը, Թունիսը և Տրիպոլիտանիան ու Կիրենաիկան կամ կրճատ՝ Տրիպոլին: Նրանցից և ոչ մեկում չկիրառվեց վիլայաթների բաժանման սկզբունքը: Նրանք տարածքային առումով պահպանվեցին որպես մեկ ամբողջություն կամ որպես տարածքային մեկ միավոր: Նրանց համար ավելի շատ կիրառելի էր փաշալիքի՝ փաշայության սահմանումը: XVI–XVIII դարերում առանձին փաշալիքի կարգավիճակ ուներ նաև Հաբաշը: Դա Կարմիր ծովի սոմալիական առափնյա մասն էր, որի բնակչության զգալի մասը արաբներ էին կամ արաբացած սոմալիցիներ:

Այս փաշայություններին բնորոշ էր նրանց թույլ կախված լինելը Ստամբուլից: Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից նրանք բոլորովին կապված չէին միմյանց հետ: Յուրաքանչյուրը գործում էր իբրև մեկ անկախ միավոր:

Մյուս էական յուրահատկությունն այն էր, որ ի տարբերություն Մաշրիկի արաբական երկրների, Մաղրիբի արաբական երկրներում հաստատվեց կառավարման դինաստիական սկզբունքը:

1711 թ. Տրիպոլիում կառավարման ղեկն իր ձեռքը վերցրեց Կարամանլի ընտանիքը, որը ենիչերիական ծագում ուներ: Կարամանլիները Տրիպոլիի կառավարող բեյերը եղան մինչև 1835 թ.: Նրանք այնքան հզոր էին, որ իրենց երկիրը կառավարում էին Ստամբուլից լրիվ անկախ և Բարձր Դուռը հաշտվել էր այդ կարգավիճակի հետ:

Դրանում իր դերը խաղաց, ոչ միայն Տրիպոլիի, այլև Ալժիրի և Թունիսի պարագայում, նաև այն հանգամանքը, որ XVII դարից սկսել էր թուլանալ թուրքական նավատորմը և դրան համապատասխան սահմանափակվել էին այդ երկրների վրա ներազդելու Թուրքիայի հնարավորությունները, որից փայլուն կերպով օգտվեցին Տրիպոլին, Ալժիրը և Թունիսը:

Թունիսում որպես կառավարող դինաստիա 1705 թ. հաստատվեցին Հուսեյնիները: Դինաստիան այդպես կոչվեց նրա հիմնադիր բեյի՝ Հուսեյն բեն Ալիի անունով: Այստեղ կատարվեց ևս մի նորամուծություն: Երկրի ղեկավարը, որը կրում էր թուրքական ծագումով «բեյ» տիտղոսը, վերանվանվեց «դեյի»: Նրանց միջև սկզբունքային տարբերություն չկար, երկուսն էլ նույն ֆունկցիաներն էին կատարում:

Թունիսի դեյերը նույնպես օգտվում էին մի այնպիսի ինքնավարությամբ, որն ավելի շատ անկախության կարգավիճակ էր հիշեցնում:

Իսկ ինչ վերաբերվում է Ալժիրին, ապա այստեղ կառավարման համակարգը մի փոքր տարբերվում էր հարևան Տրիպոլիում և Թունիսում հաստատված կարգավիճակից: Ալժիրում երկրի կառավարումն իր ձեռքը վերցրեց ենիչերիական ռազմական ավագանու խորհուրդը, որն իր շարքերից մեկին ընտրում էր Ալժիրի դեյ: Այստեղ նույնպես գործածական դարձավ բեյին փոխարինելու եկած դեյը: Այդ պաշտոնն Ալժիրում ցմահ էր: Սակայն նա ժառանգական չէր և չէր կարող հորից որդուն փոխանցվել:

Ալժիրի փոխհարաբերությունները Բարձր Դռան հետ նույն բնույթի էին, ինչպիսին Տրիպոլիի և Թունիսի փոխհարաբերությունները: Դեյը միայն ձևական էր ընդունում Ստամբուլի գերակայությունը: Դեյը և կառավարող ենիչերիական ավագանին զավթում էին գյուղացիների հողերը, տուրքեր էին նշանակում նրանց վրա, բարձր հարկեր էին դնում, որը ամբողջությամբ նրանք էին յուրացնում, այլ կերպ ասած, տնօրինում էին Ալժիրում այնպես, ինչպես իրենք էին ցանկանում, բնավ հաշվի չնստելով Բարձր Դռան հետ:

IX. ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻՈՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

1. Կապիտուլյացիոն ռեժիմի հաստատումը Օսմանյան կայսրությունում

XVI դարի երկրորդ կեսերից և հատկապես XVII դարի սկզբներից ակնհայտ դարձավ եվրոպական պետությունների, առաջին հերթին Պորտուգալիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, իսկ հետագայում նաև Ռուսաստանի և Ավստրիայի հետաքրքրությունը Օսմանյան կայսրության և նրա կազմի մեջ մտնող երկրների, այդ թվում և արաբական երկրների նկատմամբ, ինչպես առևտրական և տնտեսական, այնպես էլ քաղաքական առումով: Եվրոպան, որին հաջողվեց կասեցնել օսմանյան հարձակումները, իսկ ապա նաև հետ շպրտել թուրքերին, օսմանյան տիրապետությունից ազատել մի շարք երկրներ ու վերջ տալ թուրքերի հետագա ներթափանցումին Եվրոպա, ինքը սկսեց ներթափանցել Օսմանյան կայսրություն: Նա Օսմանյան կայսրության նկատմամբ որդեգրեց նոր ռազմավարություն՝ պաշտպանությունից անցավ հարձակման:

Դրան նպաստեց այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունն արդեն թևակոխել էր իր ռազմա–քաղաքական թուլացման շրջանը, որին հաջորդեց նրա տկարացման ու անկման փուլը: Անկում ապրող կայսրությունը ոչ միայն ի վիճակի չէր վարել նախկին նվաճողական քաղաքականությունը և գրավել նոր երկրներ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, այլև սկսեց տարածքային կորուստներ ունենալ, հատկապես Եվրոպայում, իսկ ասիական և աֆրիկյան արաբական երկրներում նրա դիրքերը զգալիորեն թուլացան: Դա իր արտացոլումը գտավ 1699 թ. Կարլովիցում ստորագրված պայմանագրում, որով պարտություն կրած Օսմանյան կայսրությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում մի շարք կարևոր տարածքներ զիջեց Ռուսաստանին, Ավստրիային, Վենետիկին և Լեհաստանին: Բարձր Դուռն այլևս անկարող էր իր դռները փակ պահել եվրոպական ներթափանցման դեմ և կանխել եվրոպացի-

ների մուտքը ոչ միայն կայսրության կենտրոնական, այլև ծայրամասային շրջանները:

Մյուս կողմից դրան նպաստեցին այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի էին ունենում եվրոպական երկրների տնտեսության բնագավառում, հատկապես արդյունաբերության և ֆինանսա–բանկային համակարգում: Տնտեսապես զարգացող Եվրոպային պետք էին շուկաներ և հումքի աղբյուրներ, ուստի նա չէր կարող իր տեսադաշտից և գործունեության ոլորտից դուրս թողնել մի այնպիսի վիթխարի տարածք, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր, որը և՛ անծայրածիր շուկա էր, և՛ տարատեսակ հումքի անսպառ աղբյուր:

Հարկավ, սխալ կլիներ եվրոպական հետաքրքրությունը սահմանափակել միայն առևտրա–տնտեսական ոլորտով: Այդ հետաքրքրությունը հավասարապես նաև քաղաքական էր: Հարցն այստեղ այն մասին է, որ առևտրա–տնտեսականը երբեմն առաջ էր ընկնում քաղաքականից և ուղի հարթում նրա համար:

Այս տեսակետից ուշագրավ երևույթ էր միջազգային հարաբերություններում կապիտուլյացիաների ինստիտուտը, որն առաջին անգամ հանդես եկավ թուրք–եվրոպական փոխհարաբերություններում դեռևս XIV դարի երկրորդ կեսում: Այդ ժամանակ կապիտուլյացիան սուլթանի կողմից միակողմանիորեն և կամավոր կերպով շնորհվող արտոնություններ էին: Եվ քանի որ սուլթանն էր դա շնորհում և նա հիմնված էր կամավորության սկզբունքի վրա, ապա սուլթանն իրավունք ուներ հետ վերցնել իր շնորհագիրը և տվյալ երկրին զրկել այդ արտոնությունից:

XVI դարից սկսած կապիտուլյացիաները շնորհվում և ձեռք էին բերվում սուլթանի և տվյալ պետության ղեկավարի՝ թագավորի, միջև կնքվող երկկողմանի պայմանագրերի հիման վրա:

Իսկ ավելի ուշ, երրորդ փուլում, կապիտուլյացիաներն արդեն պարտադրվում էին սուլթանին: Այդ փուլի բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ սուլթանն այլևս չէր կարող միակողմանիորեն չեղյալ հայտարարել և հետ վեցնել իր կողմից շնորհված արտոնությունները: Օրինակ, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական կառավարությունը հայտարարեց կապիտուլյացիայի ռեժիմի վերացման մասին, ապա այդ ռեժիմից օգտվող պետությունները հայտարարեցին, որ իրենք չեն ճանաչում նրա այդ որոշումը:

Կային նաև այլ արտառոց դեպքեր: Երբ Եգիպտոսն այլևս Օսմանյան կայսրության մաս չէր կազմում և այդ կայսրությունն այլևս գոյու-

թյուն չուներ, ապա միևնույն է, եվրոպական պետությունները մինչև 1937 թ. շարունակում էին եգիպտոսում օգտվել այդ ռեժիմից բխող բոլոր արտոնություններից:

Առաջին կապիտուլյացիաները թուրքական սուլթանի կողմից շնորհվեցին դեռևս XIV դարում իտալական Ճենովայի և Վենետիկի վաճառականներին:

1521 թ. սուլթան Սուլեյման I ստորագրեց մի պայմանագիր Վենետիկի դոժի հետ, որով նրան տրվում էին, ավելի ճիշտ սուլթանի կողմից նրան շնորհվում էին մի շարք արտոնություններ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքներում գործունեություն ծավալելու համար:

Սուլթան Սուլեյման Կանունին 1535 թ. նման պայմանագիր ստորագրեց ֆրանսիական Ֆրանցիսկ I թագավորի հետ, որով մի շարք արտոնություններ շնորհվեցին նաև Ֆրանսիային և նրա հպատակներին: Այս պայմանագիրն ընդունված է համարել առաջին երկկողմանի կապիտուլյացիոն պայմանագիրը:

Իսկ Անգլիան համանման արտոնություններ ստացավ 1580 թ. սուլթան Մուրադ III կողմից: Հետագայում Հոլանդիան և այլ երկրներ նույնպես օգտվեցին կապիտուլյացիաների ռեժիմից:

Իսկ ինչ բան էր կապիտուլյացիաների ինստիտուտը և ինչու էր նա կոչվում կապիտուլյացիոն ռեժիմ:

Կապիտուլյացիա բառը լատինական ծագում ունի: Այդ անվանումը ծագել է օսմանյան սուլթանների կողմից քրիստոնեական պետություններին շնորհվող գիր–հրովարտակներից, որոնք սովորաբար բաղկացած էին լինում մի քանի գլուխներից: Լատիներեն capitula նշանակում է գլուխ, և դրանից էլ առաջացել է capitulation՝ կապիտուլյացիա եզրը: Օրինակ, 1521 թ. Վենետիկին շնորհված հրովարտակը բաղկացած էր երեսուն գլուխներից: Սկզբնական շրջանում կապիտուլյացիան ընկալվում էր որպես այդ գլուխների, նրանցում գրանցված կամ արձանագրված դրույթների մեկ ամբողջություն կամ համակարգ: Սակայն հետագայում, ինչպես հաճախ է պատահում պատմության մեջ, այդ եզրն իմաստային առումով փոփոխություն կրեց և ձեռք բերեց առանձնահատուկ միջպետական հարաբերություններին առնչվող քաղաքական բովանդակություն:

Կապիտուլյացիաներն առաջին հերթին ընդգրկում էին իրավասությունների և դատաիրավական ոլորտը:

Ըստ այդմ, այն երկրների քաղաքացիները, որոնք թուրքական սուլթանից ստացել էին համանման շնորհներ, ամրապնդված նրա կողմից ստորագրված հրովարտակի համապատասխան գլխում («capitula»), նրանք ենթակա չէին օսմանյան իրավասությանը, օրենքներին ու սովորույթներին: Այդ քաղաքացիների վրա Օսմանյան կայսրությունում տարածվում էին միայն այդ օտարազգի քաղաքացու երկրի օրենքները: Եվ եթե այդ քաղաքացին Թուրքիայում թույլ էր տվել օրինազանցություն կամ կատարել հանցագործություն, միևնույն է թուրքական իշխանությունները նրան չէին կարող դատել և պատիժներ սահմանել ըստ Թուրքիայում գործող օրենքների: Եթե, ասենք, նա ֆրանսիացի էր, ապա նա կդատվեր ֆրանսիական օրենքների համաձայն և այլն: Նույնը նաև անգլիացիների, հոլանդացիների կամ վենետիկցիների դեպքում:

Ուրեմն, կապիտուլյացիայի առաջին և ամենակարևոր հատկանիշն այն է, որ օսմանյան իրավասությունը չէր տարածվում քրիստոնյա երկրի քաղաքացիների վրա, նրանք դուրս էին բերվում այդ իրավասության ազդեցության ոլորտից և օգտվում արտոնություններից դատաիրավական հարցերում:

1740 թ. օսմանյան սուլթան Մահմուդ I և Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XV ստորագրեցին մի նոր պայմանագիր, որի համաձայն թուրքական սուլթանը ճանաչում էր Ֆրանսիային որպես Թուրքիայում գտնվող կամ հայտնվող բոլոր քրիստոնյաների հովանավոր–պաշտպան: Անգամ, եթե որևէ քրիստոնյա, անկախ այն բանից, թե որ երկրի քաղաքացին էր նա, թեկուզ ամենակարճ ժամանակով հայտնվում էր Թուրքիայում, ապա հենց այդ պահից համարվում էր, որ նա գտնվում է Ֆրանսիայի հովանավորության և պաշտպանության ներքո:

Երկրորդ ոլորտը բնակություն հաստատելու, գույքային և հարկային արտոնությունների ոլորտն էր: Օտարերկրացիները կարող էին ունենալ իրենց կոմպակտ բնակավայրերը, իսկ քաղաքում իրենց առանձին թաղամասերը՝ սեթլմենտները, որը շատ հաճախ փակ էր տեղաբնիկների համար: Այդ թաղամասերն ապրում էին իրենց սեփական օրենքներով: Նման բազմաթիվ սեթլմենտներ առաջացան Հալեբում, որոնք սկզբնական շրջանում գլխավորապես վենետիկցիներն էին հիմնում: Հետագայում, հատկապես 1740 թ ֆրանս–թուրքական պայմանագրի ստորագրումից հետո, օտարերկրացիների բնակության նման կոմպակտ թաղամասեր հիմնվեցին Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում: Նրանք հիմնականում բնակեցված էին ֆրանսիացիներով: Վենե-

տիկցիներին և ֆրանսիացիներին հետևեցին անգլիացիները և այլ եվրոպացիներ:

Նրանց իրավունք տրվեց ազատորեն կատարել իրեն կրոնական ծիսակատարությունները, սահմանվեցին տեղացիների հետ համեմատած շատ ցածր հարկեր ու տուրքեր, և, որ կարևորագույններից մեկն է, նրանց տրվեցին գույքի ապահովման կայուն երաշխիքներ: Թուրքական իշխանություններն այլևս չէին կարող կոնֆիսկացնել նրանց ունեցվածքը և գույքը: Չպետք է մոռանալ, որ գույքի կամ ունեցվածքի ապահովությունը որպես կանոն բացակայում էր Օսմանյան կայսրությունում: Դրան փոխարինում էին քրիստոնյաների ունեցվածքի կամայական բռնագրավումներն ու թալանը:

Եվ, վերջապես, Ֆրանսիան իրավունք ստացավ, որ օսմանյան նավահանգիստները մտնող բոլոր նավերը, անկախ այն բանից նրանք ֆրանսիական նավեր էին, թե ոչ, պետք է մտնեին միայն ֆրանսիական դրոշի ներքո: Այսինքն, նրանք Օսմանյան կայսրության ջրային տարածքներում առևտուր կարող էին անել միայն ֆրանսիական դրոշի ներքո, վայելելով նրա հովանավորությունը և պաշտպանությունը:

Հասկանալի է, որ դա Ֆրանսիային դնում էր մենաշնորհյալ վիճակում, որի հետ չէին կարող հաշտվել մյուս երկրները, առաջին հերթին Ֆրանսիայի մրցակից Անգլիան: Եվ նա ճնշում էր գործադրում Բարձր Դռան վրա ստանալու նման արտոնություն: Ստամբուլը տեղի տվեց և 1604 թ. Անգլիայի, ինչպես նաև Վենետիկի հետ, կնքվեցին նավարկության մասին պայմանագրեր, որի հիմքում դրված էին թուրք–ֆրանսիական պայմանագրի դրույթները:

Հետագայում, Օսմանյան կայսրության թուլացմանը զուգընթաց, երբ եվրոպական պետություններն իրենց ավելի վստահ էին զգում, նրանք կապիտուլյացիաներն այլևս չէին ընկալում թուրքական սուլթանի կողմից իրենց տրված արտոնություն, անկախ այն բանից, թե դա հիմնված էր երկկողմ պայմանագրերի վրա, թե ոչ: Այդ արտոնությունները նրանք համարում էին իրենց յուրատեսակ բնական իրավունքները, որից նրանց ոչ մի ուժ, այդ թվում և սուլթանը, չէին կարող զրկել:

Այսպիսով, կապիտուլյացիաները յուրատեսակ իրավա–քաղաքական պայմաններ ստեղծեցին եվրոպական երկրների համար ներթափանցելու Օսմանյան կայսրություն, ծավալելու տնտեսական և առևտրական գործունեություն արտոնյալ պայմաններում, և տիրանալ

լծակների իրենց քաղաքական ազդեցությունը Թուրքիայի վրա ուժեղացնելու համար:

2. Կապիտուլյացիոն ռեժիմի տարածումը Օսմանյան կայսրության արաբական երկրների վրա և եվրոպական երկրների ներթափանցման սկիզբը

Կապիտուլյացիոն ռեժիմը, բնականաբար, գործում էր Օսմանյան կայսրության բոլոր տարածքներում, այդ թվում և արաբական երկրներում:

Արդեն նշեցինք, որ եվրոպացիները՝ իտալացիները Վենետիկից, Ճենովայից, Պիզայից և այլ քաղաքներից, ապա նաև ֆրանսիացիները, անգլիացիները և այլն, իրենց հատուկ թաղամասերը ստեղծելու իրավունք ստացան արաբական տարբեր քաղաքներում: Հետագայում եվրոպացի վաճառականները և գործարարներն իրենց գրասենյակները բացեցին Եգիպտոսում, Սիրիայում և հյուսիսաֆրիկյան արաբական մերձծովյա քաղաքներում: Նրանց հոսքը արաբական երկրներ այնքան մեծ է եղել, որ եվրոպացիներն սկսեցին իրենց հյուրանոցները կառուցել արաբական տարբեր քաղաքներում, որոնց կից կային պահեստներ եվրոպական ապրանքները պահեստավորելու համար: XVIII դարում արաբական երկրներում իր գործունեությունը ծավալեց անգլիական Արևելյան–Հնդկական ընկերությունը («Օստ–ինդիան կոմպանի»): Դա մի ազդեցիկ առևտրական ընկերություն էր, որն իր ֆակտորիաներն ուներ Արևելյան և Հարավ–Արևելյան Ասիայի տարբեր երկրներում: Այժմ նա ոտք էր դնում Մերձավոր Արևելք: Իրաքում նույնպես, Բաղդադ և Բասրա քաղաքներում, Արևելյան–Հնդկական ընկերությունը բացեց իր ֆակտորիաները, իր ձեռքը վերցնելով մի շարք ապրանքների առևտուրը:

Եվրոպական վաճառականները արաբական երկրներից Եվրոպա էին արտահանում հատիկային կուլտուրաներ, անմշակ և մշակված կաշվեղեն, մետաքսի հումք, բուրդ և բրդեղեն, բրդյա թել, տնայնագործական կտորեղեն, զանազան մրգեր, ծիթապտղի յուղ և այլն:

Իսկ արաբական երկրներ էին արտահանում գլխավորապես եվրոպական արդյունաբերական արտադրանք և պերճանքի առարկաներ՝ մահուդ Անգլիայից և Հոլանդիայից, մետաքս ու գինի Ֆրանսիայից, մորթի Ռուսաստանից, բյուրեղապակի Բոհեմիայից, իսկ Վենետիկից զանազան ապակյա իրեր: Արաբական ցեղային և ավատական ավագանին

մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Եվրոպայում արտադրվող զենքի տարբեր տեսակների նկատմամբ, որոնք կազմում էին Եվրոպայից արաբական երկրներ արտահանվող ապրանքների մի զգալի մասը:

Վերևում նշվեց, որ կապիտուլյացիոն ռեժիմի արդյունքում, եվրոպական վաճառականներն ավելի ցածր հարկ էին վճարում, քան արաբ վաճառականները: Այդ տարբերությունը երկուսից–երեք անգամ էր: Իսկ մաքսատուրք եվրոպացին վճարում էր ընդամենը մեկ անգամ, երբ նա մտնում էր արաբական տվյալ երկիրը: Մինչդեռ երբ արաբ վաճառականն էր այդ ապրանքները ներմուծում, ապա նա մաքս վճարում էր մի քանի անգամ, երբ մի ավատապետի տիրույթից անցնում էր մեկ այլ ավատապետի տիրույթը, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ուներ իր մաքսատունը և իր համար մաքսատուրք էր հավաքում:

Հասկանալի է, որ գոյություն ունեցող կարգն անհավասար պայմանների մեջ էր դնում եվրոպացի և արաբ վաճառականին՝ ի վնաս վերջինի, և նպաստում եվրոպացիների ներթափանցմանն ու դիրքերի ամրապնդմանը արաբական երկրներում:

Այս բոլորը, որի մասին խոսվեց, մենք բնութագրեցինք որպես ներթափանցում եվրոպական երկրների կողմից արաբական երկրներ: Դա դեռ չէր նշանակում արաբական երկրների նվաճում կամ նվաճման փորձ: Դա, անշուշտ, պետք է հաջորդեր ներթափանցմանը:

Այդ ուղղությամբ առաջին ցատկը կատարեց Փարիզը:

1798 թ. ֆրանսիական գեներալ Բոնապարտը, ապագա կայսր Նապոլեոն I, հայտնվեց Եգիպտոսում:

X. ԲՈՆԱՊԱՐՏԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

1. Բոնապարտի՝ եգիպտական արշավանքի դրդապատճառները և քաղաքական նպատակները

Ֆրանսիական քսանիննամյա գեներալ Բոնապարտի, որի ռազմական հանճարն արդեն փայլատակել էր հեղափոխական Ֆրանսիայի ռազմի դաշտերում, եգիպտական արշավանքը Ֆրանսիայի պատմության և գեներալի կենսագրության թերևս առեղծվածային էջերից մեկն է:

1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունը, որի տասը տարին նրա լավագույն զորահրամանատարներից մեկի Եգիպտոս նախաձեռնած

արշավանքի ժամանակ դեռևս չէր բոլորել, տապալեց Բուրբոնների դինաստիան, կառափնարան ուղարկեց իր թագավորին՝ Լյուդովիկոս XVI թագուհու՝ Մարիյա Թերեզայի հետ միասին, հռչակեց «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» և ալեկոծեց ողջ աշխարհը:

Նա կյանքի կոչեց նոր, համամարդկային վեհ սկզբունքներ, որոնք լայն աջակցություն գտան աշխարհի տարբեր ժողովուրդների լուսավոր գլուխների կողմից, դառնալով նրանց համար ոգևորության աղբյուր:

Նրա ծոցից դուրս եկավ տաղանդավոր զորահրամանատարների մի փայլուն փաղանգ, որը կարողացավ ամենադժվարին պայմաններում պաշտպանել հեղափոխությունը և նրա հռչակած սկզբունքները ընդդեմ Եվրոպայի բոլոր պահպանողական և հետադիմական ուժերի կոալիցիայի, որի գլուխ էր կանգնած հեղափոխական Ֆրանսիայի ոխերիմ թշնամի Անգլիան:

Ահա այս թոհուբոհի ժամանակ սրընթաց վերելք ունեցավ կորսիկացի կապրալ Նապոլեոն Բոնապարտը, հանճարը տաղանդների մեջ, որը կարճ ժամանակամիջոցում, տանելով մի շարք փայլուն հաղթանակներ Ֆրանսիայի հակառակորդների դեմ, հասավ գեներալի աստիճանի և մեծ հռչակ ձեռք բերեց ֆրանսիական ժողովրդի մոտ, միաժամանակ կասկածի և անհանգստության որոմը նետելով Ֆրանսիայի քաղաքական ղեկավարների սրտերում, որոնք նրա հետ համեմատած լավագույն դեպքում կարող էին միայն միջակություններ համարվել:

Արդ, ինչով էր պայմանավորված կամ թելադրված Բոնապարտի եգիպտական արշավանքը: Այս հարցն առաջանում է այն պարզ պատճառով, որ այդ ժամանակ, երբ հեղափոխական Ֆրանսիան դեռևս գտնվում էր շատ ծանր պայմաններում, երբ նրան դեռևս չէր հաջողվել վերացնել կամ ճեղքել նրա շուրջը ստեղծված թշնամի ուժերի օղակը, հանկարծ ֆրանսիական ռազմական ուժերի մի զորախումբ, որի թիվը հասնում էր երեսուն հազարի, հանվում է նրա համար կենսական նշանակություն ունեցող եվրոպական ճակատից և ֆրանսիական ամենալավագույն զորահրամանատարի ղեկավարությամբ ուղարկվում երկրից դուրս, Աֆրիկա, եգիպտական փարավոնների երկիրը, որը գտնվում էր մամլուք ավազակների լծի ներքո:

Այդ հարցին ճիշտ պատասխանելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ երեք գործոն:

Առաջին, Ֆրանսիան թեև ռազմական հաղթանակներ էր տանում կոնտինենտալ Եվրոպայի երկրների՝ Ավստրիայի, Պրուսիայի, իտալա-

կան զանազան պետությունների դեմ, բայց նրան չէր հաջողվում պարտության մատնել իր գլխավոր հակառակորդին՝ Անգլիային, որը, ինչպես նշվեց, հակաֆրանսիական ուժերի համախմբման գլխավոր ոգեշնչողն էր: Ֆրանսիան ի վիճակի չէր Լամանշն անցնել և ներխուժել Անգլիա: Իսկ դա նշանակում էր, որ նրա հիմնական հակառակորդը մնում էր անխոցելի: Դեռ ավելին, քանի դեռ Անգլիան չէր ջախջախվել, անընդհատ գլուխ էին բարձրացնելու պարտություն կրած Ավստրիան, Պրուսիան և եվրոպական մայրցամաքի այլ երկրներ:

Այսպիսի իրավիճակում Փարիզում խիստ կասկածելի որոշում է ընդունվում Անգլիային հարվածել նրա գաղութներից, ենթադրելով, որ եթե նա զրկվի արևելյան իր գաղութներից, առաջին հերթին Հնդկաստանից, ապա դա ծնկի կբերի նրան: Իսկ եթե դա տեղի ունենա, ապա Փարիզում հավատացած էին, որ դրանից հետո Ֆրանսիան այլևս լուրջ մրցակից չի ունենա կոնտինենտալ Եվրոպայում և կկարողանա նրա վրա իր հեգեմոնիան հաստատել:

Իսկ ընտրությունն ընկավ Եգիպտոսի վրա, հաշվի առնելով նրա աշխարհագրական բարենպաստ դիրքը: Նա կարևոր խաչմերուկ էր, որին տիրանալու դեպքում կարելի էր նվաճել կամ վերահսկողություն սահմանել արաբական մյուս երկրների՝ Սիրիայի, Արաբիայի, Պաղեստինի, Իրաքի, Հյուսիսային Աֆրիկայի վրա, կտրել Արևելքի հետ Անգլիային կապող կոմունիկացիաները, Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական ծով, իսկ այնուհետև, օգտագործելով արաբական բնական կամուրջը, ներխուժել Հնդկաստան և այդ երկիրը դուրս բերել Անգլիայի տիրապետության տակից: Ըստ Ֆրանսիան կառավարող Դիրեկտորիայի հաշվարկների, դա մահացու հարված կլիներ Անգլիայի համար:

Երկրորդ, հեղափոխական Ֆրանսիան, թեև հռչակեց ազատության և հավասարության լոզունգները, այդուհանդերձ, նա նույնպես հետամուտ էր գաղութային քաղաքականության: Ասիայում և Աֆրիկայում նոր գաղութներ ձեռք բերելը նրանք երբեք աչքաթող չէին անում, մանավանդ այն բանից հետո, երբ Ֆրանսիան կորցրեց Ամերիկայի իր գաղութների մեծ մասը և ցանկանում էր դրանք փոխհատուցել գաղութային նոր ձեռքբերումներով:

Երրորդ, պակաս նշանակություն չուներ անձնական գործոնը: Ապաշնորհ անձերից կազմված ֆրանսիական Դիրեկտորիայի կամ կառավարության անդամներին խիստ անհանգստացնում էր գեներալ Բո-

նապարտի օրեցօր աճող հեղինակությունը Ֆրանսիայում: Նա մեծ քանակությամբ համակիրներ ուներ ֆրանսիական ժողովրդի, զինվորականների, լուսավորիչների և քաղաքական գործիչների շրջաններում: Դիրեկտորիայի անդամները մտավախ էին, որ վճռական գործողությունների ընդունակ գեներալը կարող է գայթակղվել, պետական հեղաշրջում կատարել և իշխանությունը վերցնել: Բոնապարտի այդ հնարավոր քայլը կանխելու համար, Դիրեկտորիան հավանություն տվեց ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուս գեներալ Բոնապարտի հրամանատարությամբ Եգիպտոս ուղարկելու ծրագրին: Չպետք է բացառել այն ենթադրությունը, որ Դիրեկտորիան ավելի քան համոզված էր, որ Բոնապարտը հաջողության չէր հասնելու և ձախողություն էր կրելու: Իսկ այդ դեպքում դա հարմար առիթ կարող էր ծառայել նրան մեղադրելու, վարկաբեկելու և ասպարեզից հեռացնելու համար:

Ահա ասպիսին էին նրանց հաշվարկները:

Դիրեկտորիան սխալվեց բոլոր երեք հարցերում էլ: Սակայն դրան մենք կանդրադառնանք մի փոքր ավելի ուշ:

2. Բոնապարտի ներխուժումը Եգիպտոս և Եգիպտացիներին ուղղված նրա Մանիֆեստը

Բոնապարտի մասին շատ է գրվել: Բավականին շատ է գրվել նաև նրա եգիպտական արշավանքի մասին: Նրան նվիրվել են առանձին ուսումնասիրություններ, ինչպես, օրինակ, Աբդ ալ–Ռահման Ջաբարտիի «Եգիպտոսը Բոնապարտի էքսպեդիցիայի ժամանակ (1798–1801 թթ.)»: Այդ հարցն քննարկման առարկա է դարձել նաև Բոնապարտին նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում, որոնցից պետք է հիշատակել խորհրդային հեղինակներ Ե. Տարլեի «Նապոլեոն» և Մանֆրեդի «Նապոլեոն Բոնապարտ» մենագրությունները, և այլ աշխատություններ:

1798 մայիսին գեներալ Բոնապարտը իր երեսունհազարանոց էքսպեդիցիոն կորպուսի գլուխն անցած և նավատորմի ուղեկցությամբ դուրս եկավ Տուլոնից, և, հաջողությամբ խուսանավելով անգլիական նավատորմի հետ բախվելուց, որը գլխավորում էր անգլիական ծովակալ Նելսոնը, հուլիս 1–ին հասավ եգիպտական Ալեքսանդրիա նավահանգիստը: Նա առանց լուրջ դժվարության ճնշեց եգիպտացիների դի-

մադրությունը, գրավեց Եգիպտոսի պատմության մեջ մեծ դեր խաղացած այդ քաղաքը և պատրաստվեց շարունակել իր երթը դեպի Կահիրե:

Ոտք դնելով եգիպտական հողի վրա, Բոնապարտը հատուկ մանիֆեստով դիմեց եգիպտացիներին: Մանիֆեստը կազմված էր արաբերեն և տարածվել ամբողջ Եգիպտոսում: Ծանոթությունը մանիֆեստի հետ, որի ամբողջական տեքստը բերված է ալ–Ջաբարտիի վերոնշյալ աշխատության մեջ, վկայում է, որ գեներալը բավականին հանգամանորեն է աշխատել նրա վրա, հաշվի է առել Եգիպտոսի յուրահատկությունները, մամլուքյան դաժան իշխանության արհավիրքները, իսլամի գործոնը և այլ հանգամանքներ: Որոշ դրույթներ ձևակերպված էին մեծ զգուշությամբ, հատկապես այն պարագան, որ Եգիպտոսը Օսմանյան կայսրության մի մասն է և ինքը, Բոնապարտը, եկել է ոչ թե օսմանյան սուլթանի իրավունքները ոտնահարելու, այլ նրան պաշտպանելու համար: Սակայն նրանում կան մտքեր և ձևակերպումներ, որոնք ուղղակի զարմանք են առաջացնում:

Նրա մանիֆեստն ամբողջությամբ ուղղված է մամլուքների, նրանց տիրապետության և քաղաքականության դեմ: Նա մամլուքներին համարում է վատ մուսուլմաններ, ուզուրպատորներ, «որոնք զավթել են կյանքի բոլոր բարիքները և ուրախությունները», Եգիպտոսի երբեմնի մեծ քաղաքները, ջրանցքները և առևտուրը «կործանվել են մամլուքների բռնատիրության և ագահության հետևանքով» և այլ մեղադրանքներ: Բոնապարտը միանգամայն իրավացի էր այդ հարցերում մամլուքներին մեղադրելու մեջ:

Բայց երբ նա վատ մուսուլմանների հարցը քննարկելիս անցնում է լավ մուսուլմանների հարցին, ապա այստեղ կորցնում է ռեալականության հողը և ընկնում ֆանտաստիկայի գիրկը: Դրա մասին են վկայում մանիֆեստի հետևյալ տողերը.

«Եգիպտոսի բնակիչնե՛ր: Ձեզ կարող են ասել, որ ես իբր եկել եմ կործանելու ձեր կրոնը: Դա սուտ է: Չհավատաք դրան: Պատասխանեք այդ ստախոսներին, որ ես եկել եմ վերականգնելու ձեր իրավունքները, պատժելու բռնազավթիչներին, որ ես ավելի շատ եմ հարգում ալլահին, նրա մարգարեին և Կորանը, քան թե մամլուքները:

Շեյխե՛ր, կադիներ և իմամնե՛ր: Ասացեք ժողովրդին, որ ֆրանսիացիներն իսկական մուսուլմաններ են»:

Գեներալ Բոնապարտն իր խոսքերին և իր մանիֆեստին ավելի մեծ կշիռ տալու համար, նմանակել է մուսուլմանական հրովարտակնե-

րին, իմամների և ուլեմների ֆետվաներին, որոնք սովորաբար սկսվում են մուսուլմանական փաստաթղթերին և կոչերին հատուկ բանաձևով — «Բիսմիլլահ ռահման ռահիմ: Լա իլլահա իլլա լլահա»՝ «Հանուն գթասիրտ և գթառատ ալլահի: Չկա աստված, բացի ալլահից»: Այդ նույն բանաձևն է օգտագործել «մուսուլմաններից ավելի մուսուլման» ֆրանսիական գեներալը իր մանիֆեստի սկզբում:

Երբ Բոնապարտը փորձում է հավատացնել եգիպտացիներին, որ ինքն ավելի շատ է հարգում նրանց աստծուն՝ ալլահին և մուսուլմանական ատրիբուտիկան, քան թե մամլուքները, ապա դա կարելի է համարել որպես խորամանկ տակտիկական քայլ, նույնիսկ հավատալ նրան: Բայց երբ նա կոչով դիմում է եգիպտոսի մուսուլմանական հոգևոր առաջնորդներին համոզելու եգիպտացիներին, որ «ֆրանսիացիներն իսկական մուսուլմաններ են», ապա այստեղ նա ոչ միայն կորցնում է չափի զգացումը, այլև վիրավորում եգիպտական իմամներին, շեյխերին և կադիներին: Նա նրանց առաջարկում է կատարել մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը, և որի մասին շատ լավ գիտեին նրանք, իմամներն ու շեյխերը, հետևաբար դա նրանց համար սրբապղծություն էր ու անընդունելի: Արևելքում չպատճառաբանված վիրավորանքը երբեք չի ներվում: Ահա այս հարցում կոպիտ սխալ թույլ տվեց գեներալը, որը թեև եգիպտացիներին հաճոյանալու համար Կահիրեում գտնվելու ընթացքում սիրում էր հագնվել արևելյան զգեստներ, լինել մզկիթներում և լսել աղոթքներ, անգամ փոխեց իր անունը և իրեն անվանեց «Ալի Բունաբարդի փաշա», ավելի ճիշտ իր ֆրանսիական անվանակոչումը հարմարեցրեց արաբական–մուսուլմանական ձևին:

Այդ մանիֆեստում Բոնապարտը թույլ տվեց մի սխալ ևս: Խոսքը վերաբերում է օսմանյան սուլթանին: Նա փորձում էր հավատացնել, որ ինքը թուրքական սուլթանի մեծ բարեկամն է և եկել է նրան պաշտպանելու: Նման եզրակացության համար հիմք կարող են հանդիսանալ մանիֆեստի հետևյալ հատվածները: Դիմելով եգիպտացիներին և նրանց հոգևոր առաջնորդներին, Բոնապարտը հարցնում է «Մի՞թե մենք մշտապես չենք եղել օսմանյան սուլթանի բարեկամները (թող ալլահն իրագործի նրա մտահղացումները) և նրա թշնամիների թշնամիները: Մամլուքները, ընդհակառակը, չեն ենթարկվում սուլթանին և միշտ խռովություն են բարձրացնում նրա իշխանության դեմ»: Նա առաջարկում, որ «յուրաքանչյուր գյուղ, որը կենթարկվի ֆրանսիացիներին, պարտավոր է բարձարացնել նաև մեր բարեկամի՝ օսմանյան սուլթանի (թող ալլահը

նրան երկար կյանք պարգևի) դրոշը:» Վերջում մանիֆեստում ասվում էր. «Բոլոր եգիպտացիները, որոնք շնորհապարտ կլինեն ալլահին մամլուքների կործանման համար, թող բացականչեն «Փա՛ռք օսմանյան սուլթանին»:

Բոնապարտի սխալը կայանում էր նրանում, որ նա երբեք օսմանյան սուլթանի բարեկամը և նրա թշնամիների թշնամին չի եղել, այլ, ընդհակառակը: Եվ ոչ էլ նա եկել էր սուլթանին պաշտպանելու ընդդեմ մամլուքների: Նա եգիպտոս էր ներխուժել Ֆրանսիայի քաղաքական ծրագրերն իրականացնելու համար, որի մասին նշեցինք վերևում: Եվ հետաքրքիրն այն է, որ և՛ օսմանյան սուլթանը, և՛ եգիպտացիներն ու նրանց իմամները, շեյխերն ու կադիները, և՛ մամլուքները, և՛ ինքը Բոնապարտը շատ լավ գիտեին, որ ֆրանսիական գեներալը, մեղմ ասած, ճիշտ չի ասում: Դրա հաստատումը եղավ նաև այն հանգամանքը, որ օսմանյան սուլթանը հանդես եկավ Բոնապարտի դեմ, միանալով անգլիացիներին:

Ահա թե ինչու, եթե Բոնապարտը հույս ուներ այդ մանիֆեստի օգնությամբ բարենպաստ մթնոլորտ ստեղծել իր և իր զորքերի եգիպտոսում գտնվելու համար և շահել եգիպտացիների համակրանքն ու աջակցությունը, ապա նա շատ շուտով պետք է հիասթափվեր:

Մանիֆեստը մամլուքներին պատժելու սպառնալիքների հետ միասին պարունակում էր մի շարք խոստումներ եգիպտացիներին բարելավելու նրանց կյանքի պայմանները: Նրանում ընդգծված էր, որ այն բոլոր եգիպտացիները, որոնք կանցնեն Բոնապարտի կողմը և կպաշտպանեն ֆրանսիացիներին, նրանք «եռակի երջանիկ կլինեն»:

Դրա հետ միասին մանիֆեստը խիստ պատիժներ էր նախատեսում նրանց, որոնք կպաշտպանեն մամլուքներին ու հանդես կգան ֆրանսիացիների դեմ, ընդհուպ մինչև եգիպտական գյուղերի հրկիզումը:

3. Գիզայի ճակատամարտը, մամլուքների պարտությունը և Կահիրեի գրավումը Ֆրանսիացիների կողմից

Եգիպտոսը, ինչպես արդեն նշել ենք, այդ ժամանակ գտնվում էր Մուրադ և Իբրահիմ բեյերի համատեղ կառավարման ներքո: Երբ Կահիրե հասավ Բոնապարտի Ալեքսանդրիա մտնելու լուրը, ապա այստեղ գումարվեց մամլուքներից կազմված ռազմական խորհրդի նիստը որո-

շելու, թե ինչ քայլերի պետք է դիմել: Ընդունված որոշումների մեջ կար երկու հիմնական կետ: Առաջինը, օգնության համար դիմել օսմանյան սուլթան Սելիմ III, և, երկրորդ, բոլոր միջոցներով կազմակերպել Եգիպտոսի պաշտպանությունը: Այդ պարտականությունը դրվեց Մուրադ բեյի վրա: Որոշվեց այլևս չսպասել ֆրանսիական զորքերի առաջխաղացմանը Կահիրեի ուղղությամբ և ճակատամարտը տալ մինչև նրանց մոտենալը մայրաքաղաքին:

Մամլուքները, որոնք հստակ պատկերացում չունեին ֆրանսիական զորքերի և նրանց հրամանատարի մասին, լրիվ չէին գիտակցում այն վտանգը, որ կախվել էր նրանց գլխին:

Ի կատարումն ռազմական խորհրդի որոշման, Մուրադ բեյը իր զորքերի գլուխն անցած, Կահիրեից դուրս եկավ և շարժվեց ֆրանսիական զորքերին ընդառաջ: Նրա զորքը բաղկացած էր հեծելազորից, հետևակից և ռազմա–ծովային ուժերից, եթե այդպես կարելի է անվանել այն մի քանի նավերն ու նավակները, որոնք կային մամլուք բեյի տրամադրության տակ: Եգիպտական զորքերի տրամադրության տակ կար նաև հրետանի:

Ահա այս ամբողջ զորաբանակը Նեղոսի ափով շարժվում էր դեպի հյուսիս, Բոնապարտի զորքերին դեմ հանդիման:

Մուրադ բեյի հրամանով Մուգազա վայրի մոտ, Նեղոսի վրա երկաթյա շղթաներից եգիպտացիները պատնեշ կառուցեցին, կասեցնելու համար ֆրանսիական նավերի նավարկությունը Նեղոս գետի ջրերով: Նա այդտեղ, պատնեշի մյուս կողմում, տեղավորեց եգիպտական նավերը: Իսկ եգիպտական հետևակը և հեծելազորը Մուրադ բեյը դասավորեց Նեղոսի երկու ափերով, պատրաստ ճակատամարտի:

1798 թ. հուլիսի 13–ին ֆրանսիական զորքերը գրոհեցին եգիպտացիների վրա: Այդ ռազմական բախումը հազիվ թե կարելի կլինի ճակատամարտ անվանել, քանի որ նա տևեց ընդամենը մեկ ժամ: Ֆրանսիացիները պայթեցրին ու այրեցին եգիպտական նավերից մեկը, որը բավարար եղավ, որ եգիպտական բանակը խուճապի մատնվի: Խուճապի առաջացման մեջ մեղքի իր բաժինն ունեցավ նաև Մուրադ բեյը, որը սարսափած այդ տեսարանից, երկչոտաբար փախուստի դիմեց, բախտի քմահաճույքին թողնելով իր զորքերը, շունչն առնելով Կահիրեում:

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ նույն թվականի հուլիսի 21–ին Կահիրեից ոչ հեռու, Գիզայում, որտեղ գտնվում են Քեոպսի և եգիպտական այլ փարավոնների բուրգերը: Մամլուքյան զորքը

գլխովին ջախջախվեց: Մուրադ բեյը կրկին փախուստի դիմեց, այս անգամ դեպի Վերին Եգիպտոս, իսկ Իբրահիմ բեյը ապաստան գտավ Սիրիայում:

Ֆրանսիացիները դաժան հաշվեհարդար տեսան ոչ միայն մամլուքյան զինվորների հետ, որոնցից հազարավորները ընկան ճակատամարտում կամ մահապատժի ենթարկվեցին, այլև բնակչության հետ, որոնք մասնակցել էին Կահիրեի պաշտպանությանը և օժանդակել մամլուքյան բանակին: Սակայն եգիտացիների՝ գյուղացիների, արհեստավորների, քաղաքային բնակչության մասնակցությունը Կահիրեի պաշտպանությանը սխալ կլիներ դիտել որպես աջակցություն կամ պաշտպանություն մամլուքներին: Ո՛չ, նրանք պաշտպանում էին իրենց երկիրը և տները ընդդեմ օտար նվաճողների, ֆրանսիացիներին դիտելով որպես զավթիչներ:

Ֆրանսիացիները գրավեցին և կողոպուտի ենթարկեցին Կահիրեն:

4. Նապոլեոնի դժվարությունները Եգիպտոսում: Հակաֆրանսիական ապստամբությունը

Բոնապարտը երկար չվայելեց իր հաղթանակի պտուղները: Խաղի մեջ մտավ Անգլիան: Անգլիական նավատորմը ադմիրալ Նելսոնի գլխավորությամբ 1798 օգոստոսի 1–ին, Գիզայի հաղթանակից մոտ մեկ շաբաթ անց, Աբուկիրի ծովախորշում հարձակվեց այդտեղ կայանած ֆրանսիական նավատորմի վրա: Այդ ծովային մարտն ավարտվեց ֆրանսիական նավատորմի ոչնչացումով:

Աբուկիրում կրած պարտությունը ծանր հետևանքներ ունեցավ Բոնապարտի առաքելության վրա: Խզվեց ծովային կապը Ֆրանսիայի հետ, որի պատճառով նրա զորքերը այլևս չէին կարող համալրում ստանալ: Իսկ ցամաքային կապի մասին խոսելն ավելորդ է, դա գոյություն չուներ և նման կապի հաստատումը գործնականորեն բացառվում էր:

Անգլիացիների կողմից ֆրանսիական նավատորմի ոչնչացումից հետո, Բոնապարտն այլևս չէր կարող մտածել Հնդկաստանի մասին, նրան տիրանալու և Անգլիային ծնկի բերելու մասին: Նա այժմ ավելի շատ պետք է մտածեր իր և իրեն վստահված ֆրանսիական զորքերի փրկության մասին:

Ֆրանսիացիների դրությունը բարդանում էր նաև այն պատճառով, որ Եգիպտոսը փաստորեն վերածվեց թշնամական միջավայրի նրանց համար: Եգիպտացիները նրանց չընկալեցին որպես ազատարարների, որոնք եկել էին իրենց ազատագրելու մամլուքներից և օսմանյան սուլթանի տիրապետությունից, այլ նրանց դիտում էին որպես օտար նվաճողներ և զավթիչներ:

Եգիպտացիների հակաֆրանսիական զգացմունքների առաջացման մեջ իր դերն ունեցավ Բոնապարտի քաղաքականությունը: Նա հակառակ իր խոստումների, եգիպտացիների հետ վարվում էր շատ դաժան կերպով: Երբ նրա զորքերը ներխուժեցին Կահիրե, նրանք կողոպտում էին քաղաքի բնակչությանը, թալանում նրանց, հրկիզում նրանց տները և շատ–շատերին մահապատժի ենթարկում: Կահիրեն դա չներեց ֆրանսիացիներին: Բոնապարտը ծանր հարկեր դրեց եգիպտացիների վրա, որոնք շատ հաճախ ավելի ծանր էին, քան թե մամլուքների սահմանած հարկերը: Բանակի կարիքները բավարարելու համար նրա հրամանով գյուղացիներից բռնագրավվեցին հացահատիկը և անասնակերը: Այս քաղաքականությունը ֆրանսիացիների դեմ լարեց երկրի գյուղական և քաղաքային բնակչությանը:

Բոնապարտի վիճակը էլ ավելի վատացավ, երբ Աբուկիրի պարտությունից հետո խաղի մեջ մտավ նաև Օսմանյան կայսրությունը: Մինչ այդ Բարձր Դուռը, թեև շատ էր անհանգստացած, սակայն, սահմանափակվում էր միայն իրադարձություններին հետևելով, և խուսափում էր կոնկրետ գործողությունների դիմելուց: Բայց Աբուկիրում ֆրանսիացիների նկատմամբ անգլիացիների տարած հաղթանակից հետո, սուլթան Սելիմ III ոգի առավ և 1798 թ. սեպտեմբերին պատերազմ հայտարարեց Ֆրանսիային:

Կարելի է ասել, որ ֆրանսիացիների ոտքի տակ հողն այրվում էր: Շատ վայրերում զանգվածային շարժուներ էին ծավալվել, մանավանդ Բարձր Դռան կողմից Ֆրանսիային պատերազմ հայտարարելուց հետո: Հակաֆրանսիական շարժման մասնակիցները հարձակվում էին ֆրանսիական սպաների և զինվորների վրա և սպանում նրանց: Նույն ճակատագրին էին արժանանում եգիպտացիների համար ատելի ֆրանսիական հարկահավաքները: Այս շարժումը հատկապես լայն թափ էր ստացել Նեղոսի Դելտայում: Ուստի Բոնապարտը հարկադրված էր հատուկ ջոկատներ ուղարկել պատժելու համար Դելտայի փաստորեն ապստամբած գյուղական և քաղաքային բնակչությանը: Իսկ դա նրանք ա-

նում էին մեծ «վարպետությամբ»: Նրանք պատժում էին ոչ միայն առանձին անհատների, այլև հրկիզում ամբողջ գյուղեր: Բայց դա չօգնեց:

Ապստամբությունը տարածվեց Եգիպտոսի մյուս շրջաններում: 1798 թ. հոկտեմբերին ապստամբվեց նաև Կահիրեն, որը բավականին լավ էր նախապատրաստված: Կահիրցիները հարձակվում էին ֆրանսիական սպաների ու գեներալների վրա ոչ միայն փողոցներում և շուկաներում, այլև նրանց տներում ու սպանում նրանց: Ֆրանսիական բանակը պատրաստ չէր նման գործողությունների և չկարողացավ դիմագրավել ապստամբներին: Նա ստիպված էր լքել Կահիրեն: Անգամ Բոնապարտը հազիվ փրկվեց, փախուստ տալով մայրաքաղաքից: Նա ապաստան գտավ Նեղոսի կղզիներից մեկում, պատրաստվելով վճռական գործողությունների ապստամբների դեմ:

Պատրաստվում էին նաև ապստամբները, որոնք բնավ մտադիր չէին առանց մարտի զիջել ֆրանսիացիներին: Նրանք Կահիրեն ծածկեցին բարիկադների ցանցով: Ապստամբական շարժման կենտրոն դարձավ ալ–Ազհար մզկիթը, որը մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր մզկիթներից մեկն էր: Այստեղ հավաքվեց մոտ 15 հազար կահիրցի, պատրաստ պաշտպանելու իրենց քաղաքը: Ալ–Ազհարի անցնելը ապստամբների կողմը մեծ նշանակություն ունեցավ: Կահիրեին օգնության եկան գյուղացիները, մոտ հինգ հազար ֆելլահ, ինչպես նաև քոչվոր բեդվինները հարևան լիբիական անապատից:

Նեղոսի կղզիներից մեկում ապաստանած Բոնապարտը հիմնովին նախապատրաստվեց ապստամբությունը ճնշելու համար: Նա իր զորքերը բաժանեց երեք խմբի: Մի պատժիչ խումբը նա ուղարկեց ֆելլահների դեմ, երկրորդը՝ բեդվինների, իսկ երրորդը՝ պահեց իր անձնական հրամանատարության տակ, անմիջականորեն Կահիրեի ապստամբներին հարվածելու համար: Բոնապարտը, որ եգիպտացիներին ուղղված իր մանիֆեստում մամլուքներին համարում էր վատ մուսուլմաններ, իսկ իրեն և ֆրանսիացիներին լավ մուսուլմաններ, սառնասրտորեն հրամայեց հրետանակոծել ալ–Ազհար մզկիթը և նրանում կենտրոնացված մոտ 15 հազար հասարակ, հավատացյալ մուսուլմանների: Դա աննախադեպ արարք էր, որով իրեն վերջնականապես վարկաբեկեց Ալի Բունաբարդի փաշան ողջ մուսուլմանների աչքերում: Այդ ռմբակոծության զոհը դարձան հազարավոր մարդիկ, իսկ նրանք, ովքեր խելահեղ դուրս էին պրծնում մզկիթից, նրանց սրախողխող էին անում ֆրանսիական զինվորները: Ապստամբության ճնշելը վերածվեց իսկա-

կան սպանդի: Ֆրանսիացիները նույն կերպ վարվեցին նաև ապստամբներին օգնության եկած ֆելլահների և բեդվինների հետ: Իսկ նրանց վեց ղեկավարները գլխատվեցին:

Այսպիսի ողբերգական վախճան ունեցավ եգիպտացիների հակաֆրանսիական ապստամբությունը:

5. Բոնապարտի գաղտնի հեռանալը Եգիպտոսից և ֆրանսիական կորպուսի հետագա ճակատագիրը: Կահիրեի երկրորդ ապստամբությունը

Ապստամբությունը ճնշելուց հետո, երբ արյունաքամ եղած Եգիպտոսը մի որոշ ժամանակ «խաղաղվեց», Բոնապարտը, որն արդեն հույսը կորցրել էր Ֆրանսիայից որևէ օգնություն ստանալու և արդեն հասկանում էր հնդկական ուղղության ոչ իրատեսական լինելը, որոշեց փոխել իր գործողությունների և հարվածի ուղղությունը: Ստեղծված պայմաններում նա միակ ելքը տեսնում էր Եգիպտոսից դեպի հյուսիս շարժվելու, Սիրիա և այնուհետև Փոքր Ասիա ներխուժելու մեջ: 1799 թ. նա իր էքսպեդիցիոն կորպուսը տարավ դեպի Սիրիա: Նրան հաջողվեց գրավել Արիշը, Ղազան, Յաֆան ու Հայֆան: Հերթը հասավ Ակկա քաղաք ամրոցին: Նրա բոլոր փորձերը գրոհով վերցնել այդ կարևոր նշանակություն ունեցող կենտրոնը, ավարտվեցին անհաջողությամբ: Բոնապարտը հարկադրված էր վերացնել Ակկայի պաշարումը, որը տևեց յոթանասուն օր, և իր զորքերով վերադառնալ Եգիպտոս:

Բոնապարտը լավ էր հասկանում, որ ինքը Եգիպտոսում այլևս ոչ մի հեռանկար ու անելիք չունի: Նրա այդ կարծիքը չփոխվեց նույնիսկ այն բանից հետո, երբ նա 1799 թ. հուլիսի 25–ին ջախջախեց անգլո–թուրքական դեսանտը, որը հայտնվել էր Աբուկիրում: Գեներալը գիտակցում էր, որ դա արմատական փոփոխություն չի կարող մտցնել իրադրության մեջ: Ու նա ավելի ու ավելի է հակվում Եգիպտոսից հեռանալու և Ֆրանսիա վերադառնալու գաղափարին, որը նա իրագործում է 1799 թվականի օգոստոսի 22–ին:

Բոնապարտը Եգիպտոսից հեռացավ գաղտնի, նույնիսկ այդ մասին տեղյակ չէին նրա զորահրամանատարները, անգամ գեներալ Կլեբերը, որը Բոնապարտի Ֆրանսիա մեկնելուց հետո ստանձնեց ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատարությունը:

Իսկ ինչպես դասավորվեց ֆրանսիական կորպուսի հետագա ճակատագիրը: Գեներալ Կլեբերը հասկանում էր, որ անհրաժեշտ է փրկել այդ կորպուսը և միակ ելքը նրանց Ֆրանսիա վերադարձնելն է: Նա այդ հարցի վերաբերյալ բանակցությունների մեջ մտավ անգլիացիների և թուրքերի հետ, որոնք համաձայնվեցին թույլ տալ ֆրանսիացիներին վերադառնալ հայրենիք: Եվ երբ նրանք պատրաստվում էին մեկնելու, անգլիացիները և թուրքերը հայտարարեցին, որ իրենք թույլ կտան ֆրանսիական կորպուսին մեկնել Եգիպտոսից, եթե ֆրանսիացիները բոլոր զենքերը հանձնեն նրանց: Այս պահանջը ֆրանսիական հրամանատարության համար անընդունելի էր և նրանք մերժեցին անգլո–թուրքական պահանջը: Ի պատասխան, անգլո–թուրքական կողմը հրաժարվեց թույլատրել ֆրանսիացիներին Եգիպտոսից Ֆրանսիա մեկնել:

Այսպիսով, կորպուսը մնաց Եգիպտոսում և դա իր ազդեցությունն ունեցավ Եգիպտոսում հետագայում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Զինված բախումները ֆրանսիական զինված ուժերի և թուրքական զորքերի միջև շարունակվեցին և 1800 թ. մարտի 20–ին վերածվեցին արյունալի ճակատամարտի նրանց միջև, որը տեղի ունեցավ Կահիրեի մերձակա Հելիոպոլիսի մոտ: Ճակատամարտն ավարտվեց թուրքական զորքերի պարտությամբ:

Այդ ժամանակ տեղի ունեցավ երկրորդ ապստամբությունը Կահիրեում: Սկզբնական շրջանում հաջողությունն ուղեկցում էր ապստամբներին, որոնք ոչնչացրին Կահիրեում ֆրանսիական կայազորը: Ապստամբության թեժ պահին Սիրիայից Կահիրե վերադարձավ Եգիպտոսի կառավարիչ մամլուք Իբրահիմ բեյն իր զորքերով, որը զգալի օգնություն էր ապստամբներին: Սակայն մամլուքյան զորքը, թեև խիզախ, բայց միշտ անկարգապահ է եղել, չի սիրել հրամանների անթերի կատարում, և դա եղել է նրա թուլության և պարտության պատճառներից մեկը:

Այս անգամ ևս ֆրանսիական զորքերին հաջողվեց շրջապատել Կահիրեն և մեկ ամսվա պաշարումից հետո դաժանորեն ճնշել ապստամբությունը: Ֆրանսիացիները հիմնահատակ ավերեցին Կահիրեի արվարձաններից մեկը՝ Բուլակը, քանդեցին չորս հարյուր տուն, հրետանային կրակով և սվիններով սպանեցին մի քանի տասնյակ հազար մարդ, որը հարկադրեց Իբրահիմ բեյին ֆրանսիացիների ողորմածությանը հանձնել Կահիրեն, իսկ ինքը, մինչ այդ հասցրեց կրկին փախչել Սիրիա:

Այդ դեպքերից շատ չանցած, դավադրաբար սպանվեց գեներալ Կլեբերը: Ֆրանսիացիները դրան պատասխանեցին զանգվածային ջարդերով մայրաքաղաքում: Գազազած ֆրանսիական զինվորները սպանում էին ով պատահեր, այրում էին եգիպտացիների տները, նրանց ունեցվածքը, պատժում ով նրանց ձեռքն էր ընկնում:

6. Ֆրանսիացիների հեռանալը Եգիպտոսից

Կահիրեի երկրորդ ապստամբությունը, ինչպես և առաջինը, թեև շատ թանկ նստեց եգիպտացիների վրա, բայց ցույց տվեց, որ ֆրանսիացիները որևէ հենարան չունեն Եգիպտոսում մնալու, առավել ևս այն իրենց տիրապետության տակ պահելու համար:

1801 թվականի սկզբներից ֆրանսիական կորպուսի դրությունը Եգիպտոսում դառնում է օրհասական: Եգիպտոս է գալիս անգլիական քսանհազարանոց կորպուսը, որը նախ շրջապատում է Կահիրեն, ապա Ալեքսանդրիան: Ֆրանսիացիները հունիսին հանձնում են Կահիրեն, իսկ օգոստոսին Ալեքսանդրիան: Իսկ 1801 թ. սեպտեմբերին այն, ինչ մնացել էր ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսից, անգլիացիների թույլտվությամբ հեռանում է Եգիպտոսից և վերադառնում Ֆրանսիա: Նույն թվականի հոկտեմբերի 9–ին հաշտության պայմանագիր ստորագրվեց Ֆրանսիայի և Թուրքիայի միջև, որով Ֆրանսիան կորցրեց Եգիպտոսը, իսկ Օսմանյան կայսրությունը վերականգնեց իր տիրապետությունը Եգիպտոսի վրա:

Հիմա, երբ պատմական հեռուներից ենք նայում Բոնապարտի Եգիպտական արշավանքին, ապա դա արկածախնդրության տպավորություն է թողնում թե՛ իր նպատակներով, թե՛ իր իրականացման ձևերով ու մեթոդներով, և թե՛ իր անփառունակ վախճանով:

Ֆրանսիայի Դիրեկտորիան դառը պարտություն կրեց իր հետապնդած բոլոր երեք հիմնախնդիրներում: Ֆրանսիան չկարողացավ հաստատվել Եգիպտոսում և այն օգտագործել որպես ցատկահենարան Հնդկաստան դուրս գալու համար: Հօդս ցնդեց նոր գաղութներ նվաճելու Դիրեկտորիայի պատրանքները: Չիրականացան նաև Բոնապարտի հեղինակազրկման և քաղաքական ասպարեզից նրա հեռանալու Դիրեկտորիայի սպասելիքները: Բոնապարտի եգիպտական արշավանքը ձախողվեց, բայց դա չհանգեցրեց նրա քաղաքական կարիերայի կործանմանը: Ընդհակառակը, Բոնապարտը կարողանալով վերադառնալ

Ֆրանսիա, ցրեց Դիրեկտորիան, դարձավ Ֆրանսիայի առաջին կոնսուլը, դրանով իսկ հող նախապատրաստեց մի քանի տարի անց հռչակվելու Ֆրանսիայի կայսր՝ Նապոլեոն I:

XI. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. Սոցիալ–տնտեսական վիճակի առանձնահատկությունները: Հողը պետական սեփականություն

Նվաճումների հետևանքով Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցած արաբական երկրները հայտնվեցին նոր սոցիալ–տնտեսական իրավիճակում, որն ուներ իր մի շարք առանձնահատկությունները:

Օսմանյան տիրակալները չվերացրին և չէին էլ կարող վերացնել այն սոցիալ–տնտեսական համակարգը, որը ձևավորվել էր արաբական երկրներում դարերի ընթացքում, մասնավորապես Արաբական խալիֆայության ժամանակաշրջանում: Տնտեսական համակարգին ամբողջությամբ վերցրած, այդ թվում ագրարային հարաբերություններին, սեփականության ձևերին ու բնույթին, հարկերին և այլ տնտեսական կատեգորիաներին, հատուկ է պահպանողականությունը: Նրանք չեն կարող փոփոխության ենթարկվել ամեն օր կամ ամեն մի նոր նվաճողի հայտնվելուց հետո: Հասարակական–տնտեսական ոլորտում, ի տարբերություն քաղաքականի, նման բաներ տեղի չեն ունենում: Եվ եթե սոցիալ–տնտեսական հարաբերությունները փոփոխություն են կրում, ապա շատ դանդաղորեն և որոշակի պատմական ժամանակամիջոցում:

Օսմանյան նվաճողներն ըստ էության պահպանեցին արաբական երկրներում հաստատված ֆեոդալական համակարգը, հողատիրության և սեփականության ձևերը, որոնց մենք հանգամանորեն անդրադարձել ենք առաջին հատորում: Այստեղ անհրաժեշտություն չկա կրկին վերադառնալ այդ խնդրի լուսաբանությանը: Հիշատակելով նշենք, որ արաբական երկրներում գործում էին հողային սեփականության համայնքային–տոհմատիրական, մասնավոր սեփականատիրական և վակուֆային սեփականության ձևերը:

Սիրիայում և Լիբանանում հողային հիմնական ֆոնդը կենտրոնացված էր արաբ ֆեոդալների ձեռքում, որոնք թուրքական նվաճումից հետո պահպանեցին իրեն իրավունքները, դիրքերը և տիրույթները, հարկ էին վճարում սուլթանին և նրա ներկայացուցիչներ վալիներին կամ փաշաներին:

Հյուսիսային Իրաքում, որը հիմնականում բնակեցված էր քրդերով, հողային հիմնական ֆոնդը քուրդ բեկերի սեփականությունն էր և թուրք սուլթանները չկարողացան այստեղ որևէ էական փոփոխություն մտցնել:

Հարավային Իրաքում, Պաղեստինում, ինչպես նաև Սիրիայի որոշ մասերում, պահպանվել էին նահապետական հարաբերությունները և համայնքային հողօգտագործումը: Այդպիսին էր վիճակն ընդհանուր գծերով նաև Արաբիայում, մանավանդ այն շրջաններում, որոնք գտնվում էին քոչվոր–բեդվինական ցեղերի ենթակայության տակ:

Իրավիճակը պահպանվեց նաև Եգիպտոսում, որտեղ տեր ու տնօրեն էին մամլուքները, նրանց բնորոշ անհիշխանականության ու շահագործելու ամենաայլանդպկ ձևերով:

Սակայն օսմանյան տիրապետության հաստատումից հետո տեղի ունեցավ թերևս ամենակարևոր նորամուծությունը:

Կայսրության ամբողջ տարածքում, նրա բոլոր հատվածներում, հողը համարվեց պետական սեփականություն: Նրա գերագույն սյուզերենը սուլթանն էր: Արաբական երկրներում նույնպես հողը դարձավ պետական սեփականություն, որի գերագույն տնօրինողը թուրքական սուլթանն էր: Իրավական առումով այս պարագան նոր սոցիալ–տնտեսական վիճակ էր ստեղծում օսմանյան տիրապետության տակ գտնվող բոլոր երկրամասերում:

Բայց դա չէր նշանակում, թե հողը նրա նախկին տերերից կամ տնօրինողներից խլվեց և անցավ սուլթանի անմիջական տնօրինության տակ: Ինչքան էլ, որ նշենք, թե թուրքերը գտնվում էին զարգացման ցածր մակարդակի վրա և այդ առումով զիջում էին իրենց ենթակա ժողովուրդներին, այդ թվում և արաբներին, այդուհանդերձ, նրանք հասկանում էին, որ նման ցնցումների, անգամ մի այնպիսի բռնատիրական պետություն, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր, չէր դիմանա: Բայց դա ստեղծեց, ինչպես նշեցինք, նոր իրավական իրողություն, որի պայմաններում ուժեղանում էր բոլոր տեսակի սեփականատերերի ու հողօգտագործողների կախվածությունը թուրքական պետությունից և նրա

սուլթանից: Տնտեսական այդ լծակը հզոր քաղաքական զենք դարձավ սուլթանի և օսմանյան կառավարող վերնախավի ձեռքին ճնշում գործադրելու կայսրության, հատկապես նրա ոչ թուրքական բնակչության, այդ թվում և արաբական ֆեդալական ավագանու վրա և նրան թելադրելու իր կամքը:

Մյուս կարևոր փոփոխությունը տեղի ունեցավ համայնքային հողօգտագործման բնագավառում, նրանց սահմանափակման առումով: Համայնքային հողերը նույնպես համարվեցին օսմանյան պետության սեփականությունը: Դա հնարավորություն տվեց համայնքային հողերը խլել համայնքներից և գրանցել տոհմական ավագանու անունով: Հանուն արդարության պետք է նշել, որ այդ գործընթացը սկսվել էր դեռևս Արաբական խալիֆայության և նրան հաջորդած օտար նվաճողների ժամանակ: Սակայն այժմ դա իրավական հիմք էր ստանում և մեծ ծավալներ ձեռք բերում: Դրա հետևանքով համայնքի անդամները զգալի չափով զրկվեցին իրենց հասանելիք հողերից, իսկ քոչվոր անասնապահ բեդվինները՝ արոտավայրերից: Եվ դա դարձավ օսմանյան տիրապետության շրջանում նրանց տնտեսական վիճակի վատթարացման պատճառներից մեկը:

2. Վակուֆային հողային սեփականության ընդլայնումը

Տեղի ունեցավ նաև մեկ այլ ընդհանուր բնույթի փոփոխություն: Շատ հողատերեր, չդիմանալով ծանր հարկերին, նախընտրում էին իրենց հողերը դարձնել վակուֆ, այսինքն բարեգործապատկան, որոնք մուսուլմանական օրենքներով և ավանդույթի համաձայն ազատված էին հարկերից: Հողատիրության այս ձևի յուրահատկությունը կայանում էր նրանում, որ հողատերն իր հողը վակուֆ դարձնելու դեպքում չէր կորցնում այդ հողակտորը, նա շարունակում էր համարվել նրանը, սակայն նա այլևս չէր կարող տնօրինել ըստ իր հայեցողության, վաճառել, գնել, վարձակալության տալ և փոխանցել իր ժառանգներին:

Վակուֆային հողատիրությունն ուներ մի առանձնահատկություն ևս: Նա ավելի հուսալի էր, քանի որ ոչ մի ուժ, անգամ վալին, փաշան կամ օսմանյան այլ բարձրաստիճան պաշտոնյա, չէր կարող օտարել այն, բռնագրավել և սեփականացնել: Նրանք շարիաթի օրենքների համաձայն նաև ազատված էին հարկերից Այդ պատճառով էլ շատ մասնավոր (մուլք) հողատերեր, վախենալով փաշաների և վալիների ու այլ

պաշտոնյաների կամայականություններից, որոնց հանդեպ նրանք անզոր էին ու անպաշտպան, գերադասում էին իրենց մուլքը դարձնել վակուֆ: Բայց այդ դեպքում պակասում էր նրա եկամուտը, քանի որ եկամուտի մի մասը, երբեմն անգամ մեծ մասը, դառնում էր մզկիթների, բարեգործական զանազան հաստատությունների, մեդրեսեների և նման այլ հաստատությունների հասույթը: Իսկ հողատերը պայմանագրի համաձայն ստանում էր ավելի համեստ մի եկամուտ: Եվ չնայած այդ հանգամանքին, շատերը նախապատվությունը տալով ապահովությանը, գերադասում էին իրենց սեփականությունը համարվող հողերը վերածել վակուֆի:

Ամենայն հավանականությամբ մուլք հողերը վակուֆայինի վերածելն այնքան լայն տարածում էր գտել, որ Բարձր Դուռը շատ հաճախ միջամտում էր այն սահմանափակելու համար, քանի որ մուլք հողերը, որից գանձվող հարկերի մի մասը մտնում էր պետական գանձարանը, վերածվելով վակուֆի, ազատվում էին հարկ վճարելուց, հետևաբար պակասում էին պետական հասույթները:

3. Իլթիզամ կամ իկտա, թիմար և զեամաթ

XVI–XVII արաբական երկրներում գյուղատնտեսության մեջ, հողօգտագործման բնագավառում մեծ տարածում ստացավ իլթիզամի կամ իկտայի համակարգը: Դա, ըստ էության, նորություն չէր արաբական երկրների համար: Այդ ձևը գործածական էր դարձել, թեև սահմանափակ չափերով, դեռևս խալիֆայության շրջանում: Սակայն Օսմանյան կայսրությունում նա վերածվեց համակարգի և սկսեց շատ լայնորեն կիրառվել նրա բոլոր հատվածներում, այդ թվում և արաբական երկրներում, մասնավորապես Եգիպտոսում:

Իլթիզամի էությունը կայանում էր հետևյալում: Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում շատ քոչվորներ անցան զինվորական ծառայության: Դրա դիմաց նրանք պետությունից ստանում էին համապատասխան թիմարներ՝ հողակտորներ: Դրանք համարվում էին պայմանական ժառանգական տիրույթներ: Պայմանական, քանի որ այդ հողը տրվում էր զինվորական ծառայության դիմաց և կարող էր հորից անցնել որդուն, եթե նա հորից հետո նույնպես մտնում էր սուլթանի զինվորական ծառայության մեջ: Եթե որդին չէր ծառայում որպես զինվոր–սիփահի, ապա այդ հողակտորը նա կորցնում էր: Ստանալով հողա-

բաժինը թիմարիոտը կամ թիմարատերը իրավունք էր ծեռք բերում այդ հողաբաժնի վրա աշխատող գյուղացիներից հարկ հավաքել, որը դառնում էր նրա ապրուստի, հագուստի և ռազմական հանդերձանք ծեռք բերելու միակ աղբյուրը:

Սակայն կար մի էական տարբերություն՝ թիմարի և իկտայի միջև: Թիմարը համարվում էր ժառանգական և կարող էր հորից որդուն անցնել, եթե նա շարունակում էր հոր գործը, այսինքն շարունակում էր զինվորական ծառայությունը, իսկ իկտան հնարավոր չէր փոխանցել ժառանգականության սկզբունքով, յուրաքանչյուր անգամ այն պետք է վերանորոգվեր և վերահաստատվեր և իկտա կարող էր տրվել այլ մարդու:

Օսմանյան կայսրության ժամանակ լայն տարածուն ստացավ նաև հողօգտագործման մեկ այլ ձև՝ զեամաթը: Դա նույնն էր, ինչ որ թիմարը, սակայն իր չափերով նա ավելի մեծ էր, քան թիմարը: Նշենք մի տարբերություն ևս նրանց միջև: Եթե թիմարը տրվում էր շարքային սիփահիներին, ապա զեամաթը ստանում էին սիփահիների զորաջոկատների հրամանատարները:

Ամփոփենք: Թիմարը (զեամեթը և իկտան) հողային սեփականության ձև չէր, այլ զինվորական ծառայության դիմաց ստացած հողաբաժնից նրա վրա աշխատող գյուղացիներից գանձվող հարկը, որը տրվում էր թիմարիոտին, զաիմին և իկտադարին:

Իլթիզամի համակարգն ուներ ևս մի շատ էական կողմ, նույնիսկ կարելի է ասել տարբերակիչ հանգամանք: Թիմարիոտը և զաիմը իրենք անձամբ չէին զբաղվում տնտեսությամբ և հարկահավաքությամբ իրենց հողաբաժիններից: Գտնվելով զինվորական ծառայության մեջ մի պետությունում, որն անընդհատ պատերազմների մեջ էր այս կամ այն պետության հետ այս կամ այն մայրցամաքում, նրանք ոչ ժամանակ և ոչ էլ հնարավորություն ունեին զբաղվելու տնտեսությամբ և տնտեսական հարցերով: Ուստի նրանք իրենց հողաբաժինների վրա աշխատող ռայյա–գյուղացիների բոլոր աշխատանքների կազմակերպումը, վերահսկողությունը և հարկերի գանձումը հանձնարարում էին, ավելի ճիշտ կապալով, վարձակալությամբ տալիս էին համապատասխան անհատների, որոնք ստացան մուլթազիմ անունը:

Իլթիզամի սկզբունքի վրա հիմնված հողօգտագործման համակարգից ստացված եկամտի, առաջին հերթին հարկի մի մասը մտնում էր սուլթանական գանձարանը, մի մասը ստանում էր մուլթազիմն իր աշ-

խատանքի համար, իսկ մեծ մասը մտնում էր թիմարիոտների և զաիմների գրպանը նրանց զինվորական ծառայության դիմաց:

Թեև իլթիզամի համակարգը հիմնված էր հարկը կապալով տալու սկզբունքի վրա, բայց փաստորեն դա դարձավ ավատատիրական կալվածքի յուրահատուկ տարատեսակ:

Իլթիզամի համակարգը զգալի տարածում գտավ արաբական համարյա բոլոր երկրներում, Սիրիայում, Իրաքում, բայց հատկապես Եգիպտոսում:

Հավանաբար այդ համակարգն այնքան էր հրապուրել պատերազմների համար պատրաստված մամլուքներին, որ նրանցից շատերը իջնելով ձիերից և խնամքով պահ տալով իրենց մարտական զենքերը, դառնում էին կապալառու–մուլթազիմներ: Նրանք այն վերածում են եկամտաբեր պաշտոնի: Կան տվյալներ այն մասին, որ XVIII դարի կեսերին մամլուքները կազմել են Եգիպտոսի մուլթազիմների համարյա կեսը:

Մուլթազիմներն ուղղակի պատուհաս դարձան թիմարիոտներին և զաիմներին պատկանող հողաբաժինների վրա աշխատող գյուղացիների գլխին: Նրանք իրենց դաժանությամբ և անխիղճ վարվելաձևով ոչնչով չէին զիջում եգիպտական մամլուքներին: Նրանք ֆելլահների հետ վարվում էին այնպես, ինչպես իրենք էին ցանկանում, կարող էին անգամ նրանց ենթարկել մարմնական պատիժների, ծերբակալել և բանտ նետել: Եղել են նաև մահապատժի դեպքեր: Ֆելլահները կարող էին իրենց բնակատեղերից հեռանալ միայն մուլթազիմի գիտությամբ ու թույլտվությամբ: Իսկ եթե նրանք փախչում էին, ապա նրանց որոնում, հայտնաբերում, ծերբակալում և հետ էին վերադարձնում իր նախկին բնակատեղին, ենթարկելով դաժան պատիժների:

Արաբական մի շարք երկրներում իլթիզամի համակարգը շատ թույլ կերպով արմատավորվեց, իսկ որոշ երկրներում, ինչպես Լիբանանը, նա բոլորովին տեղ չգտավ: Լիբանանում տիրապետող մնաց ֆեոդալական համակարգն իր դասական ձևով:

4. Տեղական «Կանուն նամեները» կամ Օրինամատյանները

Օսմանյան ավանդույթի համաձայն Օսմանյան կայսրության բոլոր վիլայաթների համար ընդունվում էր առանձին Կանուն նամե կամ Օրինամատյան, որտեղ, բացի այլ հարցերից, շատ մեծ տեղ էր հատկաց-

վում հարկերին, նրա տեսակներին և չափերին, համապատասխան բացատրություններով և հիմնավորումներով: Այդպիսի Կանուն նամեներ հաստատվեցին Ադանայի, Դիարբաքրի, Էրզրումի, Վանի, Կեսարիայի, Ռումի, Տրապիզոնի, Գյուրջիստանի (Վրաստանի) և բազմաթիվ այլ վիլայաթների, անգամ լիվաների (սանջաքների) համար:

Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արաբական երկրներից ամենահայտնին Եգիպտոսի Կանուն նամեն է՝ «Կանուն նամե Մըսրի»: Դրա համաձայն օսմանյան պաշտոնյաները Եգիպտոսում անցկացրին հողերի հաշվառում: Հողերի հաշվառումը մշտապես համարվել է կարևոր միջոցառում, որի հետ սովորաբար հետագայում կապված էին լինում այլ գործառույթներ, ինչպես հողերի վերաբաշխում, հարկերի բարձրացում և այլն: Այդ պատճառով գյուղական բնակչությունը միշտ մեծ կասկածանքով է վերաբերվել և անվստահություն ցուցաբերել, երբ օսմանյան իշխանության ներկայացուցիչները դեֆտերները ձեռքերին հայտնվել են գյուղական վայրերում և հաշվառում անցկացրել, դրանից որևէ լավ բան իր համար չսպասելով: Եգիպտական Կանուն նամեի դրույթներին համաձայն, նաև երկու շատ կարևոր հաշվառում կատարվեց: Նախ սահմանվեցին հողօգտագործման ձևերը, իսկ ապա որոշվեցին հողատերերի իրավունքները:

Ըստ այդմ, սահմանվեց, որ հողօգտագործող են համարվում այն ֆելլահները, որոնք ապրում են համայնքներում և որոնց հողաբաժիններ-ը պարբերաբար ենթարկվում են վերաբաժանման: Պետք է նշել, որ դա համապատասխանում էր գյուղական համայնքների վերաբերյալ մյուս երկրներում գոյություն ունեցող պատկերացումներին և սկզբունքներին:

Կանուն նամեն հաստատեց գյուղական համայնքի կառուցվածքը, ըստ որի համայնքը ղեկավարում էր շեյխը, սակայն նա և նրա իրավասությունները հաստատվում էին վերադաս վարչական մարմնի կողմից: «Կանուն նամե Մըսրիի» մի քանի որոշումներ վերաբերում էին քաղաքներին, արհեստներին, առևտրին, վաճառականներին, նրանց միությունների կարգավիճակին, գործառույթներին և տնտեսական այլ հարցերի:

Կահիրեում և եգիպտական մյուս քաղաքներում գոյություն ունեին արհեստավորների և վաճառականների ցեխային սկզբունքի վրա կառուցված միություններ կամ էսնաֆներ, որոնք նույնպես գլխավորում էին շեյխերը: Սակայն Կահիրեի համար Կանուն նամեն հաստատեց մի փոքր այլ կարգավիճակ: Այստեղ կային թաղային համայնքներ, որոնք

նույնպես գլխավորում էին շեյխերը: Իսկ թաղային համայնքների կազմավորման հիմքում դրված էին մասնագիտական–արհեստավորական, հայրենակցական, դավանական սկզբունքները և այլն:

Ցեխային միությունները կամ էսնաֆները գտնվում էին օսմանյան կառավարության հսկողության ներքո և նրանց գործունեությունը կանոնակարգվում էր նրա կողմից: Կառավարությունն էր որոշում նրանց արտադրած ապրանքների քանակը և որակը, գինը, այդ ապրանքների վաճառման տեղը, նույնիսկ թե ինչ ճանապարհներով պետք է վաճառման տանեին իրենց ապրանքները և այլն:

Բավականին բարդ խնդիր էր արհեստավորների համար նոր արհեստանոց բացելը և կամ փոքր խանութ բացելը իրենց արտադրանքը վաճառելու համար: Արհեստավորն դրա թույլտվությունը կարող էր ստանալ էսնաֆի շեյխի համաձայնությամբ և միայն կադիի, մուսուլմանական դատավորի թույլտվության դեպքում: Ըստ էության այդ էսնաֆները ֆեոդալական ինստիտուտներ էին, որոնք կաշկանդում և արգելակում էին արտադրության զարգացումը:

5. Հարկային համակարգը

Օսմանյան տիրապետության հաստատումից հետո որոշ փոփոխություններ տեղի ունեցան հարկային համակարգում: Ճիշտ է, հարկի հիմնական տեսակները նույնությամբ պահպանվեցին: Մենք նկատի ունենք տասանորդը՝ ուշրը, խարաջը, ջիզիան և զաքաթը: Դրանք ընդունված է համարել օրինական հարկեր, քանի որ նրանք սրբագործված էին շարիաթով: Դրա հետ միասին ավելացավ հարկերի մի ամբողջ նոր, լրացուցիչ շարան, որը զարմացնում է իր անհեթեթությամբ, իսկ որոշ հարկեր էլ կարող են ոչ միայն զարմանք, այլև ծիծաղ առաջացնել:

Օսմանյան շրջանի՝ հարկերի և հարկատեսակների հարցը բավականին լավ է լուսաբանված արևելագիտական մասնագիտական գրականության մեջ, մասնավորապես դրանց վերաբերող օսմանյան կանոն նամեներում, ինչպես նաև զանազան բերաթներում և ֆերմաններում: Այդ հարցին մեծ ուշադրություն են դարձրել թուրք պատմաբանները, ինչպես պրոֆեսոր Օ. Բարկանը, Ի. Ուզունչարշըլը և ուրիշներ: Այդ հարցին անդրադարձել և հատուկ քննարկման առարկա են դարձրել նաև հայ արևելագետները՝ Ա. Սաֆրաստյանը, Մ. Զուլալյանը («Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI–XVII դդ. Կանուննամեներ)»,

Ա. Փափազյանը (Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XVI–XIX դարեր)» և ուրիշներ: Պետք է նշել նաև վրաց թուրքագետ Ս. Ջիքիայի աշխատությունները, մասնավորապես Գյուրջիստանի վիլայաթին վերաբերվող ուսումնասիրությունը և այլն:

Նոր կամ լրացուցիչ հարկերը շատ մեծ թիվ էին կազմում և նրանք մանրամասնորեն թվարկված են յուրաքանչյուր վիլայաթի և լիվայի կանոն նամեում: Եթե դրանք խմբավորելու լինենք, ապա դրա մեջ մտնում էին հետևյալ հարկերը.

Ոչխարի հարկ, ջրաղացի հարկ, մեղրի հարկ և առանձին փեթակի հարկ, յայլաղի հարկ, դարմանի հարկ, յուղի հարկ, ծխի հարկ, ամուրիության հարկ, ամուսնության հարկ, ըստ որում, տարբերություն էր մտցվում ամուսնացողն աղջիկ էր, թե այրի կին, եթե ամուսնացողն աղջիկ էր, ապա նրանից գանձվող հարկը երկու անգամ գերազանցում էր այրի կնոջից գանձվող հարկը, և այլն: Կային նաև կալի, չոբան բեկի, այգու, արոտի, անգամ հողն անմշակ թողնելու և նման այլ հարկեր:

Հարկերի որոշ տեսակներ կային, որոնց գանձումը կապված էր ապրանքների՝ կտորեղենի, հագուստի, սննդի, լծկանի վաճառքի հետ: Օրինակ, սահմանված էր, որ ձիու վաճառքի դեպքում հարկ վերցնում էին և՛ վաճառողից, և՛ գնորդից: Նույնն էր նաև մյուս ապրանքների վաճառքի պարագայում: Տարբերություն կար նաև այն դեպքում, թե ապրանքը քաղաքում էր վաճառվում, թե քաղաքից դուրս:

Մի շարք հարկեր կային, որ թեև նշված էին որպես հարկ, սակայն իրականում դրանք տուգանքներ էին: Դրանց մեջ պետք է նշել արյան դիմաց վճարվող տուգանք–հարկը: Հատուկ սահմանված էր, թե կռվի ժամանակ ատամը ջարդողը կամ երեսը չանգռողն ինչքան տուգանք էր վճարելու և այլն:

Այդ հարկատեսակները շատ–շատ են և հնարավոր չէ դրանք մեկ առ մեկ թվարկել: Սակայն բերված հարկատեսակներն էլ բավական են նշելու, որ Օսմանյան կայսրությունում մարդ կապկպված էր տարատեսակ հարկերի ամուր պարաններով, որոնցից նա ոչ մի կերպ չէր կարող ազատվել: «Օսմանյան կայսրությունը,— գրում է ռուս արևելագետ Ա. Վ. Վիտոլը,— XVIII դ. սկզբներին իրենից ներկայացնում էր մի հետամնաց ֆեոդալական երկիր: Գյուղացիները՝ երկրի գլխավոր արտադրական ուժը, գտնվում էր ծայրահեղ ծանր պայմաններում հարկերի չափազանց մեծ ծանրության պատճառով»:

Մեծ չափեր էին ընդունել անօրինական հարկերը: Անիշխանականությունն հասել էր այնտեղ, որ անգամ տեղական կառավարողները վիլայաթներում, սանջաքներում և կազաներում ինքնագլուխ հարկեր էին սահմանում, որն ամբողջապես նրանք էին յուրացնում: Կենտրոնական իշխանությունը, անշուշտ, տեղյակ էր այդ մասին, սակայն չէր ցանկանում կամ էլ անզոր էր դրանք արգելեու:

Օսմանյան կայսրությունում հաստատված հողային հարաբերությունները, հողօգտագործման ձևերը, բազմազան ծանր հարկերը պայմաններ չէին ստեղծում տնտեսական զարգացման և բնակչության վիճակի բարելավման համար: Դրան ավելացրած կայսրությունում հաստատված բռնատիրական համակարգը, անվերջ պատերազմները և այլն: Այդ բոլորը անտանելի պայմաններ էին ստեղծել կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում և արաբների համար:

6. Տնտեսական անկում և բնակչության վիճակի վատթարացում

Կայսրության ռազմական հզորության անկմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև տնտեսական անկում և քայքայում:

Այդ գործընթացի մեջ անխուսափելիորեն ներգրավվեցին նաև արաբական երկրները: Նրանց երբեմնի ծաղկուն քաղաքները, ինչպես Բաղդադը, Կահիրեն, Հալեբը և այլն, որոնք մի ժամանակ աշխույժ առևտրական և տնտեսական կենտրոններ էին, գիտական և կրթական զարգացած օջախներ, աստիճանաբար խամրեցին, կորցրեցին իրենց երբեմնի փայլը և վերածվեցին գավառական անշուք բնակավայրերի: Կյանքն ամենուր մեռած էր:

Գյուղացին, արաբական երկրների հիմնական արտադրողը, քայքայվեց: Գյուղացիները, չդիմանալով ծանր տնտեսական պայմաններին, զանգվածաբար լքում էին իրենց գյուղերն ու բնակավայրերը և փախչում քաղաքներն այն սին հույսով, թե այնտեղ կգտնեն կյանքի համեմատաբար լավ պայմաններ: Բայց երկար ժամանակ չէր պահանջվում նրանց համոզվելու, որ քաղաքները նույնպես գտնվում են ծանր պայմաններում և չեն կարող կերակրել նրանց: Պահպանվել են որոշ թվական տվյալներ արաբների գյուղերից հեռանալու վերաբերյալ: Դրանցից մեկը վերաբերում է Հալեբին, որը, շնորհիվ իր բարենպաստ բնակլիմայական պայմանների, ոչ միայն Սիրիայի, այլ արաբական մյուս երկրների համեմատաբար զարգացած շրջաններից մեկն էր: Ըստ

այդ տվյալների, XVII դարում Հալեբի վիլայաթում կար 3200 գյուղ, իսկ XVIII դարում մնացել էր ընդամենը 400 գյուղ: Նույնն էր պատկերը նաև Իրաքում, Պաղեստինում, Եգիպտոսում և արաբական այլ երկրներում: Ֆ. Հիթթին նշում է, որ «Հալեբի և Եփրատի միջև ընկած երբեմնի բարեբեր և ոռոգվող հարթավայրերը դարձան (XVIII դարում — Ն. Հ.) այն, ինչ որ են այսօր, վերածվեցին անապատի»: Պաղեստինն այն աստիճանի լքվեց իր բնակիչների կողմից, որ այդ նույն դարի կեսերին արդեն նշում էին նրա դեպոպուլյացիայի մասին:

Հալեբի վիլայաթում, ինչպես նաև արաբական մյուս երկրներում գյուղերի թվի կատաստրոֆիկ պակասելը միայն գյուղացիների փախուստով չի կարելի բացատրել: Դրա գլխավոր պատճառներից մեկը գյուղական բնակչության մահացության շատ բարձր մակարդակն էր, որն արդյունք էր տնտեսական ծանր վիճակի և հիվանդությունների: Նույնն էր պարագան նաև Պաղեստինում: Կարելի է ասել, որ բնակչության կատաստրոֆիկ անկումն արաբական երկրներում համընդհանուր էր: XVIII դ. վերջում–XIX դ. սկզբներին Երուսաղեմում բնակվում էր ընդամենը 12 հազար, Դամասկոսում 150 հազար, իսկ Հալեբում 17 հազար մարդ:

Առավել ծանր էր վիճակը Եգիպտոսում: Այստեղ, ի լրումն ընդհանուր համաօսմանյան բարդությունների և դժվարությունների, պետք է հաշվի առնել արյունռուշտ, ագահ և դաժան մամլուքների տիրապետությունը, որոնց համար ֆելլահները և բեդվինները սոսկ ստրուկներ էին, որոնց հետ նրանք վարվում էին այնպես, ինչպես իրենք էին ցանկանում: Եվ անպաշտպան ու սոված եգիպտական ֆելլահներն ու բեդվինները նույնպես իրենց փրկությունը տեսնում էին փախուստի մեջ: Բայց դա բոլորին չէ, որ հաջողվում էր: Շատ–շատերին բռնում և հետ էին վերադարձնում, նրանց ենթարկելով ամենադաժան կտտանքների:

Եգիպտոսում նույնպես բնակչության մահացածությունը սովի և հիվանդությունների պատճառով շատ մեծ չափերի էր հասնում: Հաշվված է, որ եթե հռոմեական տիրապետության շրջանում Եգիպտոսի բնակչությունը կազմում էր 9–10 մլն մարդ, ապա XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին այդ երկրում ապրում էր հազիվ 2,5–3 մլն մարդ:

Մամլուքների, ավատատերերի, մուլթազիմների համար, գյուղացիներին պատժելու տեսակետից, գործունեության լայն դաշտ ստեղծեցին օսմանյան սուլթանների հրամանները՝ ամեն գնով կանխել գյուղացիների փախուստն իրենց բնակատեղերից և փախուստի մեջ գտնվող

բոլոր գյուղացիներին պարտադիր փնտրել, գտնել, պատժել և հետ վերադարձնել իրենց տերերին:

Պետք է ընդգծել, որ ծանր տնտեսական և իրավական պատճառների հետևանքով գյուղացիների փախուստը իրենց բնակավայրերից բնորոշ չի եղել միայն արաբական երկրներին, այլ կրել է համաօսմանյան բնույթ, որը խիստ անհանգստացրել է սուլթաններին և ստիպել նրանց այդպիսի հրամաններ արձակել:

Սակայն նման հրամանները, չնայած նրանց խստությանը, չէին կարող փախուստների դեմն առնել և կանխել տնտեսական անկումը: Դրա համար անհրաժեշտ էին տնտեսական քայլեր, որը սուլթանը և օսմանյան կայսրության բոլոր երկրամասերի ավատականությունը չէին կարող ձեռնարկել:

Պատմական այս ժամանակաշրջանում օսմանյան կայսրության և նրա արաբական երկրամասերի համար սովորական երևույթ էր դարձել սովը, որը հնձում էր մարդկանց: Այդ հողի վրա առաջանում էին սովյալների խռովություններ, մանավանդ քաղաքներում, որտեղ դրությունն ավելի էր լրջանում գյուղերից փախած և քաղաքներում հաստատված նույնպես սովյալ ֆելլահների և բեդվիների կենտրոնացման պատճառով: Ա. Վիտոլը, որը հատուկ անդրադարձել է այդ հարցին, նշում է, որ նման խռովություններ («բունտեր») են տեղի ունեցել ինչպես Բալկաններում, Փոքր Ասիայում, այնպես էլ կայսրության արաբական մասերում: Սովյալների բունտեր են տեղի ունեցել 1695 թ. Կահիրեում, 1703 թ. Երուսաղեմում և Դամյաթում, 1720 թ. Տրիպոլիում և Հալեբում, 1721 թ. Բասրայում և այլն:

XVI–XVIII դարերում ստեղծված ծանր սոցիալ–տնտեսական դրությունը չէր նպաստում նաև արհեստների և առևտրի զարգացմանը: Եվ դա միանգամայն հանկանալի է: Արաբական երկրներում և օսմանյան մյուս երկրամասերում հաստատված քաղաքական իրադրությունը, դաժան և անարդարացի օրենքները, բազմատեսակ հարկերը և նրանց գանձման բարբարոսական ձևերը, կամայականությունները կառավարական ուղղահայաց բուրգի գագաթից մինչև հիմքերը, անձի և նրա ունեցվածքի երաշխիքների բացակայությունը և այլն, որոնք արաբական երկրներում տիրող բնորոշ երևույթներն էին, այս բոլորը հակացույց էին արհեստների զարգացմանը և առևտրի ծաղկմանը: Մարդկային գործունեության այդ երկու ոլորտները շատ զգայուն են օրինականության և տնտեսական ու քաղաքական կայունության բացակայու-

թյան հանդեպ: Տնտեսական անկման պայմաններում, կայունության բացակայության, օսմանյան մեծ ու փոքր պաշտոնյաների կամայականությունների, անձի ու գույքի ապահովության երաշխիքների բացակայության, բնակչության կողմից իր աշխատավայրերը և բնակատեղերը զանգվածաբար լքելու, լայն տարածում ստացած հիվանդությունների, ինչպես նաև հաճախ կրկնվող սովի ու բնակչության մեծ չափերի հասնող մահացածության պայմաններում տեղի ունեցավ նաև արհեստների ու առևտրի աննախադեպ անկում: Իսկ քանի որ արհեստները և վաճառականությունը քաղաքային բնակչության ամենալայն զանգվածների զբաղմունքի և գործունեության գլխավոր ոլորտն էր և ապրուստի միակ աղբյուրը, ապա նրանց անկումը հանգեցրեց քաղաքային կյանքի լճացմանը և քաղաքների անկմանը:

Ահա թե ինչու միանգամայն իրավացի էր արաբ հեղինակ Շակիկ Ղարբալը, երբ օսմանյան կայսրության լճացման և նեխման պատճառները քննարկելիս, նա մատնանշում էր այն պարագան, որ օսմանյան սուլթանները, վալիների ու փաշաների այդ մեծաթիվ կառավարող խավը, այդպես էլ չփորձեց ապավինել նոր գաղափարների և դրա հիման վրա վերակառուցվել, այլ կառչած մնաց կառավարման հին ձևերին, որոնք խարսխված էին բռնությունների ու հարստահարման վրա:

Իսկ դա կործանում տանող ամենաստույգ ուղին էր:

XII. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. Հայ համայնքների գոյության և զարգացման վրա ազդող բացասական գործոնները

Հայերը բնակություն են հաստատել արաբական երկրներում, ինչպես ցույց ենք տվել նախորդ հատորում, հնագույն ժամանակներից, նախքան օսմանյան տիրապետության հաստատումը արաբական երկրներում, և զգալի դեր են ունեցել նրանց քաղաքական, տնտեսական, զինվորական և մշակութային կյանքում: Նրանք ունեցել են իրենց վերելքի և անկման շրջանները, որոնք կապված են եղել ինչպես այդ երկրների ներքին զարգացումների, այնպես էլ արտաքին գործոնների, առաջին հերթին օտարերկրյա նվաճումների հետ: Այդ առումով, արաբական եր-

կրների վրա օսմանյան տիրապետությանը նախորդած 500 տարիները, թերևս ամենաանբարենպաստ պատմական ժամանակաշրջանն է եղել հայ համայնքների գոյության համար: Մեկը մյուսին հաջորդած սելջուկների, մոնղոլների, Լանկ Թիմուրի արշավանքները, իսկ Եգիպտոսի, մասամբ նաև Սիրիայի պարագայում, մամլուքների տիրապետության հաստատումը, ծանր հարվածներ էին արաբական երկրներին, որից, բնականաբար, չէր կարող անմասն մնալ այդ երկրներում հաստատված հայությունը: Նրանց հարվածների տակ փլվեցին հայերի ստեղծած փխրուն կառույցները: Հայերից շատերը, որոնց թիվն առանց այն էլ շատ մեծ չէր, խիստ պակասեց նվաճողների սրի հարվածներից, սովից, արտագաղթից և այդ տարածաշրջանում պարբերաբար մոլեգնող ժանտախտից ու այլ հիվանդություններից: Շատ քաղաքներում ընդհանրապես հայությունը վերացավ:

Օսմանյան կայսրությունը, ստանալով նման «ժառանգություն», իրեն բնորոշ բռնատիրական քաղաքականության պայմաններում, հասկանալի է, չէր կարող բարենպաստ պայմաններ ստեղծել հայ համայնքի վերընձյուղման և բարգավաճման համար: Դա բխում էր թուրքական այդ պետության բնույթից, որը շեշտը դրել էր նվաճումների, ավարի ու թալանի վրա: Նրանում համապատասխան տնտեսական և քաղաքական պայմաններ չկային տնտեսական գործունեությունը խթանելու, անհատի, նրա անձի, ունեցվածքի ու գույքի ապահովության համար: Իսկ քանի որ հայերը հիմնականում զբաղվում էին արհեստներով, վաճառականությամբ և շինարարությամբ, ապա Օսմանյան կայսրությունում տիրող պայմաններն առաջին հերթին խփում էին հենց այդ բնագավառներին, ուստի բարենպաստ չէին հայերի համար:

Մյուս կողմից պետք է նկատի ունենալ կրոնական–էթնիկական պատկանելության հարցը: Օսմանյան կառավարողները հանդուրժողական դիրքորոշում չունեին քրիստոնյաների և ոչ թուրք բնակչության, այդ թվում և հայերի նկատմաբ: Այդ անհանդուրժողականությունը ռայյաների նկատմաբ շատ հաճախ վերածվում էր հալածանքների ու ընդունում այլանդակ ձևեր:

Այդ գործոններն իրենց բացասական ազդեցությունն են ունեցել արաբական երկրներում հայ համայնքների կազմավորման կամ վերակենդանացման և գործունեության վրա:

2. Եգիպտահայերի ծանր վիճակը

Առանձնապես ծանր պայմաններ ստեղծվեցին եգիպտահայ համայնքի համար: Նրա անկումը հատկապես ցցուն էր երևում այն պատճառով, որ եգիպտահայությունը շատ կարևոր, իսկ երբեմն նույնիսկ վճռական դեր է խաղացել Ֆաթիմյանների ժամանակ: Նրա դերակատարումը նշանակալի է եղել նրանց հաջորդած Այյուբյանների, անգամ առաջին մամլուքների տիրապետության շրջանում:

Օսմանյան տիրապետության շրջանում, XVI–XVIII դարերում, եգիպտահայերի թիվը խիստ կրճատվել էր: Սիմեոն Լեհացու վկայությամբ, որը ճանապարհորդել էր արաբական երկրներով, նշված ժամանակաշրջանում Կահիրեում բնակվում էր ընդամենը 200 տուն: Մյուս վայրերում նրանք հազվագյուտ էին պատահում, որովհետև հայերը որպես կանոն կենտրոնացված էին մայրաքաղաքում: Եգիպտահայերը նախկին ստամբուլցիներ, դիարբեքիրցիներ և հալեբցիներ էին: Նրանք արհեստավորներ էին՝ զինագործներ, ոսկերիչներ, քարտաշներ և շինարարներ, ինչպես նաև վաճառականներ էին: Նրանք բավականին սերտ կապերի մեջ էին եվրոպացի առևտրականների ու գործարարների հետ, որոնք օգտվում էին Եգիպտոսում հաստատված քրիստոնյաների՝ սիրիացիների, հույների և հայերի ծառայություններից: Շատ սահմանափակ թվով հայեր եղել են անգամ պետական և զինվորական ծառայության մեջ, եղել են մամլուք սուլթանների բանագնացը, կատարել նրանց հատուկ հանձնարարությունները: Հայտնի փաստ է, որ հայերի ծառայությունից օգտվել է եգիպտոսի սուլթան Ալի բեյը: Երբ 1771 թ. նա հայտնվեց ծանր դրության մեջ, նա դիմեց Ռուսաստանի օգնությանը, որն այդ ժամանակ պատերազմում էր Թուրքիայի դեմ: Ռուսական նավատորմը հայտնվել էր լիբանանյան ջրերում, անգամ գրավեց Բեյրութը: Ալի բեյը ռուսական հրամանատարության մոտ որպես բանագնացներ ուղարկեց երկու հոգու, որոնցից մեկը Հակոբ անունով մի հայ էր: Նրանց առաքելությունը ավարտվում է հաջողությամբ և ռուսական իշխան Ա. Օռլովը մեծ քանակությամբ զենք, մասնավորապես թնդանոթներ, ու զինամթերք է տրամադրում Ալի բեյին: Ստանալով ռուսական զենքը, Ալի բեյը հաջորդ տարի, 1773 թ., վեցհազարանոց զորախմբի գլուխն անցած փորձեց պատժել իր դեմ ապստամբած մամլուքներին:

Աբդ առ–Ռահման ալ–Ջաբարտին, Բոնապարտի եգիպտական արշավանքին նվիրված իր ուսումնասիրության մեջ, հետաքրքիր տեղե-

կություններ է հայտնում այն մասին, որ Եգիպտոս ներխուժած ֆրանսիական բանակի դեմ կռվող եգիպտական բանակի հրամանատարների մեջ եղել են նաև հայեր:

Եգիպտոսում կային նաև մամլուքներ դարձած հայեր, թեև ոչ այն չափով, որքան վրացիներ: Բայց, հասկանալի է, այդ հայ մամլուքներին չի կարելի համարել եգիպտահայ համայնքի մաս, նրանք համայնքի հետ սովորաբար ոչ մի առնչություն չէին ունենում, իսկ շատ հաճախ չէին հիշում անգամ իրենց էթնիկական ծագումը:

Բոնապարտի ներխուժումը Եգիպտոս ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն ունեցավ եգիպտահայության համար: Եգիպտոսում գտնվելու ընթացքում նա յուրահատուկ քաղաքականություն էր վարում քրիստոնյաների նկատմամբ: Նա հենվում էր միայն ղպտիների վրա, որոնց նա հովանավորում էր առևտրի և տնտեսական այլ բնագավառներում: Նա ամենայն հավանականությամբ ոչ առանց ղպտիների հորդորանքների, վերացրեց ղպտի առևտրականների մրցակից հայ առևտրականների մենաշնորհները մի շարք բնագավառներում և սահմանափակեց նրանց գործունեությունը:

Սակայն միայն սրանով չի սահմանափակվում Բոնապարտի արշավանքի բացասական հետևանքները հայության համար: Նա հարված ստացավ նաև մուսուլման եգիպացիների կողմից: Նրանք, որոնց խիստ զայրացրել էր ֆրանսիացիների ներխուժումը Եգիպտոս և վերջիններիս խժդժությունները այդ երկրում և բնակչության նկատմամբ, խիստ լարվել էին քրիստոնյաների, այդ թվում և հայերի դեմ: Եգիպտացիները ֆրանսիական զինվորների վրա հարձակվելու ընթացքում հարձակվում էին նաև հայերի տների և թաղամասերի վրա, լոկ այն պատճառով, որ հայերը, ինչպես և ֆրանսիացիները, նույնպես քրիստոնյաներ էին, թեև հայերը ոչ մի առիթ չէին տվել իրենց հետ այդպես վարվելու համար:

Իսկ ֆրանսիացիների հեռանալուց հետո, մամլուքները և նրանց սատարող իսլամական մոլեռանդները ավելի անկառավարելի դարձան, որից մեծապես տուժեց նաև եգիպտահայությունը: Նա այն աստիճանի թուլացավ և թվաքանակի առումով այնքան նվազեց, որ XIX դարի սկզբներին հայտնվեց անհետացման շեմին:

3. Հայերը Սիրիայում, Լիբանանում և Իրաքում

XVI–XVIII դարերում հայկական համայնքներ գոյություն ունեին Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում և գյուղական վայրերում՝ Դամասկոսում, Հալեբում, Բեյրութում, Զմմառում, Լաթաքիայում և այլ վայրերում: Դրանց մեջ առանձնապես աչքի էր ընկնում Հալեբի հայ համայնքը: Դա ամենամարդաշատն էր, զարգացածը և տնտեսապես առավել ուժեղը: Սիմեոն Լեհացու տվյալներով, 1616 թ. Հալեբում ապրել է մոտ երեք հազար հայ: Այդ դարակեսին նույնիսկ նրա թիվը աճել և հասել է քսան հազարի: Սակայն հետագայում, XVII վերջերից, երբ ներքին խժդժությունների հետևանքով վատացավ քրիստոնյաների վիճակը, Հալեբի, ինչպես նաև Դամասկոսի հայությունն անկում է ապրում: 1745 թ. Հալեբում ապրում էր ընդամենը 6700 հայ:

Հալեբի և ընդհանրապես Սիրիայի և Լիբանանի հայերը հիմնականում էրզրումից, Բիթլիսից, Սեբաստիայից, Սասունից, Արաբկիրից, Զուղայից, Վանից, Ղարաբաղից, անգամ Երևանից և հայկական այլ վայրերից ներգաղթածներ էին: Նրանք հիմնականում արհեստավորներ ու վաճառականներ էին: Սակավ էին հողագործները: Արհեստներից, որով զբաղվում էին հայերը, հատկապես զարգացած էին ոսկերչությունը, դերձակությունը, կաշեգործությունը, մուշտակագործությունը, ներկարարությունը և այլն: Հայ արհեստավորների մեջ կային թուղթ կոկող, ձեռագիր կազմող և վերանորոգող հիանալի վարպետներ, որոնք մեծ հեղինակություն էին վայելում:

Հայ առևտրականներից հատկապես պետք է առանձանացնել մետաքսի առևտրով զբաղվող հայ խոջաներին, որոնց ձեռքում էր գտնվում մետաքսի արտահանման հիմնական լծակները և որոնք մեծ հաջողությամբ մրցակցում էին եվրոպական, մասնավորապես վենետիկցի վաճառականների հետ:

Հալեբում գործում էին երկու հայկական եկեղեցիներ, որոնք կառուցվել էին դեռևս XV դարում: Դրանք էին ս. Աստվածածին և Քառասուն մանկաց եկեղեցիները, որոնք մեծ համարում ունեին ամբողջ Սիրիայում և նրա սահմաններից դուրս:

Հիշատակության է արժանի Լիբանանում Զմմառի և նրա շրջակա գյուղերի հայ համայնքը: Զմմառում XVIII դարում հիմնվեց մինչև օրս կանգուն ու գործող վանքը իր բավականին հարուստ հայ միջնադարյան

ձեռագրերի հավաքածուով: Փաստորեն դա մի հոգևոր–մշակութային կենտրոն էր:

Խոսելով Լիբանանում հայերի հաստատման մասին, պետք է նկատի առնել հատկապես Մաանների տիրապետության շրջանը, մանավանդ Ֆախր ադ–Դին II կառավարման տարիները՝ XVI դարի վերջերը և XVII դարի սկիզբները: Ինչպես նշել ենք, դա մի ինքնուրույն կառավարվող և ապահով երկրամաս էր, որը իրեն էր ձգում բռնության ենթակա զանազան ժողովուրդների Օսմանյան կայսրության տարբեր մասերից: Այդ հանգամանքը Լիբանանը հրապուրիչ էր դարձնում նաև հայերի համար: Եվ Ֆախր ադ–Դին II կառավարման տարիներին զգալի թվով հայեր ներգաղթեցին Լիբանան Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից:

Հայեր կային նաև Իրաքում, գլխավորապես Բաղդադում, ինչպես նաև Բասրայում և Մոսուլում: Սակայն նրանց թիվը քննարկվող ժամանակաշրջանում մեծ չի եղել: Նրանք համալրվում էին մի կողմից Հայաստանի՝ ղափանցի, ագուլիսցի, տիգրանակերտցի, սղերթցի և այլ վայրերի տարագիրների, իսկ մյուս կողմից, Պարսկաստանի տարբեր վայրերից՝ Նոր Ջուղայից, Քերմանշահից, Համադանից և այլ քաղաքներից գաղթածների հաշվին: Իրաքի հայերի կյանքում նշանակալի դերակատարություն ունեին Նոր Ջուղայի վաճառականները, որոնք առևտրական գործերով հաճախ էին այցելում Բաղդադ և Բասրա:

Սակայն պետք է նշել, որ XVI–XVII դարերում հայության թիվը մեծ չի եղել Իրաքում, կարելի է ասել անգամ աննշան է եղել: Ա. Ալպոյաջյանը «Իրաքի հայերը» գրքում բերում է տվյալ ժամանակաշրջանին վերաբերող մի քանի թվական տվյալներ, հենվելով զանազան օտար աղբյուրների և օտար ճանապարհորդների ուղեգրություններում պարունակվող հաղորդագրությունների վրա: Նա վկայակոչում է Պեդրո Տեքսիերա անունով մի իսպանացի թե պորտուգալացի ճանապարհորդի, որը 1604 թ. եղել է Բաղդադում և նշել, որ այդ ժամանակ Բաղդադում կար ընդամենը տասը հայ: Հետագայում, անշուշտ, որոշ փոփոխություններ տեղի են ունեցել հայերի թվաքանակի մեջ, բայց ընդհանուր առմամբ հայերը Իրաքում, լինի Բաղդադում կամ Բասրայում, երբեք մեծ թիվ չեն կազմել, ինչպես, ասենք, Հալեբում: Ահա թե ինչու հայ գաղթավայրերի պատմության մի այնպիսի գիտակ, ինչպիսին Ա. Ալպոյաջյանն է, գրում է, որ Իրաքում «ժէ դարուն ընթացքին հայոց թիւը մեծ բան մը չէր, ուստի հայերը, նոյնիսկ անոնք, որ հավատարիմ կմնային իրենց մայրենի եկեղեցիին, չունէին իրենց սեփական եկեղեցին և թրքական տիրապե-

տութեան առաջին հարիւրամեակին կ'օգտվեին կաթոլիկ վարդապետներու եկեղեցիէն: Այդ սակաւաթիւ հայերը, որոնք Պաղտատ կը գտնուին, մեծ մասամբ առևտրականներ են»:

Հետագայում, XVIII դարի վերջերին նկատվեց որոշ աշխուժություն իրաքահայության շրջանում, երբ զարգացան առևտրական կապերը Փոքր Ասիայի և Պարսից ծոցի, ու նրա միջոցով ասիական մայրցամաքի տարբեր երկրների միջև: Հայության թիվն Իրաքում ավելացավ, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին հասնելով մոտ յոթ հարյուրի, նրանք նույնիսկ իրենց եկեղեցին ունեցան: Սակայն դա երկար չտևեց: Նրանց մեծ մասը, մոտ 673 հոգի, հերթական ժանտախտի զոհը դարձավ: Իրաքի հայության կյանքը կրկին խամրեց:

Ծանոթությունը արաբական երկրներում հաստատված հայության XVI–XVIII դարերի կյանքին և գործունեությանը ցույց է տալիս, որ միայն մեծ վերապահումով կարելի խոսել նրանց՝ որպես կազմակերպված համայնքների մասին: Նրանք ավելի շուտ եղել են մի հավաքականություն, որը չի ունեցել իր ազգային, թեմական, եկեղեցական, կրթական և մշակութային կառույցները, որը համակարգեր, ղեկավարեր և ուղղություն տար հայության կյանքին, ապահովեր հայության որպես օտար ափերում հայտնված մի ուրույն էթնոսի ինքնությունն ու ապահովությունը: Դրա համար, հավանաբար, անհրաժեշտ էր ժամանակ և ազգային, քաղաքական–տնտեսական և մշակութային որակապես այլ միջավայր, մի բան, որը թեև աստիճանաբար, բայց երևան եկավ XIX դարի երկրորդ կեսերից, սակայն ավելի բնորոշ եղավ XX դարի համար:

Գլուխ չորրորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

I. ՈՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. Արաբական ազգային ինքնագիտակցության արթնացման ազդակները

XIX դարն առանձնահատուկ տեղ է գրավում արաբների բազմադարյան պատմության մեջ, մասնավորապես նրա օսմանյան տիրապետության տակ գտնվելու ժամանակահատվածի պատմության մեջ:

Այս դարաշրջանում արաբների մոտ ձևավորվում և ուժեղանում է համաարաբական ազգային ինքնագիտակցությունը, իրենց որպես առանձին, ինքնուրույն էթնոսի գոյության ընկալումը և նրա տարբերակումը այլ էթնոսներից՝ մուսուլմանական համընդհանուր օվկիանոսում: XIX դարում և նրան հաջորդած ժամանակաշրջանում մուսուլմանական համընդհանուր դոգմաները աստիճանաբար կորցնում են էթնիկական առանձնահատկությունները վարագուրելու իրենց առաջնայնությունը, և, ընդհակառակը, իրենք են ստիպված լինում հարմարվել նորաստեղծ քաղաքական և ազգային իրողություններին:

Արաբների ինքնագիտակցության մեջ այս որակական տեղաշարժերը և օսմանյան տիրապետության նկատմամբ սկզբունքային նոր դիրքորոշում գրավելու անհրաժեշտությունը նախ և առաջ արդյունք էր արաբական երկրներում տեղի ունեցած սոցիալ–քաղաքական զարգացումների:

Արաբական երկրներում տեղի ունեցած յճացումը և անկումը, որն ընդգրկում էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտները, նրանց երբեմնի ծաղկուն քաղաքների խամրումն ու գավառականացումը, միջազգային հռչակ վայելող կրթական–մշակութային կենտրոնների վերացումը և այլ բացասական երևույթներ, որոնք հանդիսանում էին արաբական իրականության մեջ տիրապետող բնորոշ գծերը, խոր վրդովմունք ու վիշտ էին պատճառում նրանց, մի ժողովրդի, որը հանդիսանում էր արաբա–մուսուլմանական քաղաքակրթության ստեղծողներից ու կրողներից մեկը, և որը հայտնվել էր իրենից զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող թուրքերի տիրապետության ներքո:

Իրենց դերը խաղացին նաև եվրոպական լուսավորիչների առաջադեմ գաղափարները: Շփումները եվրոպական երկրների հետ, եվրոպական լուսավոր գաղափարների ներթափանցումը արաբական երկրներ, արաբական իրականության մեջ այդ գաղափարների ջերմեռանդ կրողները հանդիսացող և եվրոպական համալսարաններում իրենց կրթությունը ստացած արաբական մտավորական խավի ձևավորումը և այլն, զորավոր ազդակներ հանդիսացան արաբական ազգային ինքնագիտակցության արթնացման և զարգացման գործում:

2. Օսմանյան տիրապետությունից ազատագրվելը որպես արաբական ազգային ինքնագիտակցության կենտրոնական գաղափար

Ազգայնական գաղափարների ձևավորումը և տարածումը, այդ բնագավառում տեղի ունեցող կուտակումները անխուսափելիորեն պետք է առաջացնեին և իրոք առաջացրին որակական նոր տեղաշարժեր արաբական հասարակության ընդերքում, որի պայթյունածին դրսևորումը եղավ արաբական Նահդան, արաբական ազգային–մշակութային զարթոնքը, որը հրաբուխի պես ժայթքեց XIX դարի կեսերին,

իր զարգացումներն ու խորացումներն ունենալով հետագա տասնամյակներում:

Եվ, վերջապես, իր նշանակությունն ունեցավ արաբների կողմից այն իրողության ըմբռնումը, որ օսմանյան պետությունը իր բնույթով, ունակ չէ քաղաքական և սոցիալ–տնտեսական արմատական փոփոխությունների, ոչ թուրք ժողովուրդների իրավունքները հարգելու և նրանց հետ հարաբերությունները հավասարության հիման վրա վերակառուցելու: Այդ պետությունը պատմության թատերաբեմում հայտնվել էր բռնությամբ և իր գոյությունը շարունակում էր որպես բռնատիրություն: Սա այն դեպքը չէր, երբ կարելի էր հուսալ ու համբերել, որ թունելի վերջում երբևիցե կարող էր լույս երևալ:

Այս նոր իրողությունները չէին կարող չսրել արաբա–թուրքական հարաբերությունները: Արաբներն այլևս չէին ցանկանում հաշտվել իրենց ռայյայի կարգավիճակի հետ և գիտակցում էին օսմանյան տիրապետությունից ազատագրվելու անհրաժեշտությունը որպես իրենց ազգային–էթնիկական ինքնության ապահովման և զարգացման նախապայման:

Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրությունում ռայյա էին համարվում ոչ միայն ոչ մուսուլման ժողովուրդները, ինչպես քրիստոնյաները, այլև մուսուլման ոչ թուրք ժողովուրդները, այդ թվում և արաբները:

Եվ այս շրջանի, XIX դարում ծավալված հակաթուրքական պայքարը սկզբունքորեն տարբերվում էր նախորդ երկու դարերի ընթացքում տեղի ունեցած հակաօսմանյան ելույթներից, որոնք ավելի ճիշտ կլինի բնութագրել որպես ընդվզումներ, բայց ոչ երբեք կազմակերպված պայքար, որը նպատակաուղղված լիներ օսմանյան լուծը տապալելուն:

Արժանին հատուցելով արաբների նախորդ դարերի հակաօսմանյան ընվզումների մասնակիցներին և բյուրավոր նահատակներին, դրա հետ միասին պետք է նշել, որ նրանք առաջ չէին քաշում համաարաբական հակաօսմանյան քաղաքական պահանջներ: XVI–XVIII դարերում մենք չենք տեսնում օսմանյան տիրապետությունից ազատագրվելու համաարաբական ծրագրեր: Նրանք դեռ հասունացած չէին նման պահանջներ առաջադրելու համար, իսկ արաբական հանրությունն էլ հազիվ թե ընկալեր և պաշտպան կանգներ նման պահանջներին, նույնիսկ նրանց առկայության դեպքում: Արաբների պայքարն այդ շրջանում հիմնականում նպատակաուղղված էր իրենց վիճակի թեթևացմանը, հետապնդում էր օսմանյան վատ կառավարիչներին ու պաշտոնյաներին

«լավերով» փոխարինելու միամիտ նպատակներ, լավագույն դեպքում ներքին ինքնավարություն ձեռք բերելու իղձերի իրականացում, և ոչ ավելին:

Եվ, այսպես, արաբների պայքարն իրենց ազգային գոյության և ազատության համար ընդդեմ օսմանյան տիրապետության XIX դարում թնակոխեց նոր փուլ, օսմանյան տիրապետությունից ազատագրվելու փուլը:

Օսմանյան բռնատիրությանն առաջին բացահայտ ծեռնոց նետողը եղավ Եգիպտոսը իր տաղանդավոր կառավարչի՝ Մուհամմադ Ալիի գլխավորությամբ:

II. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՒՍԱԿԱԼ

1. Ուժերի նոր հարաբերակցություն Եգիպտոսում XIX դարի սկզբներին

1801 թ. ֆրանսիացիների Եգիպտոսից անփառունակ հեռանալուց հետո, Եգիպտոսում խաղաղություն չհաստատվեց: Եգիպտոսը չդադարեց պատերազմի թատերաբեմ լինելուց: Միայն թե այժմ դերակատարները փոխվեցին: Եգիպտոսում հաստատվեց ուժերի նոր հավասարակշռություն:

Ֆրանսիացիների Եգիպտոսում գտնվելու վերջին շրջանում գործում էին չորս ուժեր: Մի կողմում ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսն էր, իսկ մյուս կողմում՝ անգլիացիները, որոնք ներխուժել էին ֆրանսիացիներին Եգիպտոսից դուրս մղելու համար, թուրքական զորքերը, որոնք Եգիպտոսում էին իրավական հիմունքներով, քանի որ Եգիպտոսը պաշտոնապես Օսմանյան կայսրության մասն էր կազմում, և մամլուքները, Եգիպտոսի կառավարողները մինչև ֆրանսիացիների ներխուժումը: Այս վերջինները տվյալ պահին օգտվում էին եգիպատցիների աջակցությունից և վայելում նրանց օգնությունը, քանի որ նրանք ֆրանսիական զինվորներին համարում էին զավթիչներ և պայքարում էին նրանց դեմ որպես նվաճողների:

Ֆրանսիացիների պարտությունից ու Եգիպտոսից հեռանալուց հետո, Եգիպտոսը հայտնվեց երեք ուժերի՝ անգլիացիների, թուրքերի և

մամլուքների հսկողության ներքո: Բայց թող այն տպավորությունը չստեղծվի, թե նրանք, այդ տրիումվիրատը, եգիպտոսը կառավարում էր համերաշխորեն, իշխանությունը միմյանց միջև բաժանելով հավասարության սկզբունքերով: Հենց սկզբից անգլիացիները բացահայտորեն ցույց տվեցին, թե ով է այդ եռյակի առաջին ջութակը: Նրանք կարող էին իրենց թույլ տալ նման բացահայտում ոչ միայն այն պատճառով, որ ներկայացնում էին հզոր Անգլիան, այլև այն պատճառով, որ այդ պահին եգիպտոսում անգլիական զորքերի թիվը, որը շատ լավ էր զինված և աչքի էր ընկնում իր կարգապահությամբ, հասնում էր քսան հազարի, համեմատած թուրքական քառասուն հազարի և մամլուքների չորս հազարի հասնող զորքերի հետ:

Ճիշտ է, անգլիական զորքերը թվական առումով զիջում էին թուրքերին, սակայն նրանց գերազանցում էին իրենց մարտունակությամբ, կազմակերպվածությամբ և մարտավարությամբ: Դա գիտեին ոչ միայն իրենք անգլիացիները, այլև քաջ հայտնի էր հենց իրենց թուրքերին, որը ստիպում էր նրանց զգույշ լինել անգլիացիների հետ իրենց փոխհարաբերություններում: Դրա փայլուն օրինակն է հանդիսանում հետևյալ միջադեպը անգլիական հրամանատարի և թուրքական ծովակալի միջև: Անգլիական գեներալը իրեն պահում էր ամբարտավան և շատ կոպիտ էր իր փոխահարաբերություններում թուրքական ծովակալի հետ, նույնիսկ այն աստիճան, որ ամենակոպիտ ձևով նրանից պահանջելով եգիպտական ջրերից դուրս բերել թուրքական նավատորմը, սպառնաց նրան, որ հակառակ պարագայում նրան շղթայակապ կուղարկի Լոնդոն:

Ֆրանսիացիների հեռանալուց հետո եգիպտոսում տեղի չունեցավ որևէ բարելավում: Անգլիացիները և թուրքերը մամլուքների հետ միացած, նոր տառապանքներ պատճառեցին եգիպտացիներին՝ հարկերի քառապատիկ գանձում, քարավանների կողոպուտ, շեյխերի ձերբակալում, կանանց բռնաբարում և բազում այլ կամայականություններ, ահա նրանց քաղաքականության ոչ լրիվ պատկերը:

Իսկ ի՞նչ նպատակներ էին հետապնդում այս փուլում անգլիացիները, թուրքերը և մամլուքները:

Անգլիացիների նպատակն էր ֆրանսիացիներին դուրս մղելուց հետո հաստատվել եգիպտոսում և այն դարձնել իրենց գաղութը: Վերջին հաշվով նրանք եգիպտոս չէին մտել լոկ ֆրանսիացիներից այդ երկիրը ազատագրելու և ձեռնունայն Ալբիոն վերադառնալու համար:

Թուրքերի նպատակն էր, օգտվելով ֆրանսիացիների պարտությունից, վերականգնել օսմանյան տիրապետությունը Եգիպտոսում և իրենց ձնական իշխանությունը դարձնել իրական:

Մամլուքների ձգտումն էր վերահաստատել իրենց իշխանությունը և դառնալ Եգիպտոսի անսահմանափակ կառավարողները, ինչպես նախքան Բոնապարտի ներխուժումն էր: Սակայն նրանց քաղաքականության մեջ կար մի նրբություն: Նրանք հասկանում էին, որ իրենք ինքնուրույն, առանց անգլիացիների կամ թուրքերի աջակցության, չեն կարող իրականացնել իրենց երազանքները, մանավանդ այն բանից հետո, երբ 1801–1802 թթ, նրանց բիրտ քաղաքականությունը առաջացրել էր եգիպտացիների, ի մասնավորին կահիրցիների ցասումի հասնող դժգոհությունը: Ուրեմն նրանք պետք է համագործակցեին կամ անգլիացիների, կամ էլ թուրքերի հետ:

2. Թուրք–մամլուքյան ռազմական բախումները

Այս երեք ուժերը տարբեր և կարելի է ասել միմյանց հակառակ քաղաքական նպատակներ էին հետապնդում, որը վերջի վերջո պետք է հասցներ նրանց պառակտմանը, և, իրոք, նրանք պառակտվեցին:

Նրանց մրցապայքարում մամլուքյան զորքն իրենց կողմը գրավելու հարցում, ավելի հաջողակ գտնվեցին անգլիացիները: Նրանց վերջնականապես իրենց կողմը գրավելու համար, անգլիական գեներալը պահանջեց թուրքական փաշայից մամլուքներին վերադարձնել նրանց կալվածքները և նրանց վերականգնել իրենց պետական նախկին պաշտոններում: Օսմանյան սուլթան Սելիմ III լավ էր հասկանում, որ դա նշանակում էր Եգիպտոսի կառավարումը հանձնել մամլուքներին, որն այդ ժամանակ հակասում էր Ստամբուլի շահերին: Նա չէր ցանկանում այդ հարցում զիջել անգլիացիներին նաև այն պատճառով, որ մամլուքներն անցել էին անգլիացիների կողմը: Ուստի մամլուքներին զիջել, նրանց վերադարձնել կալվածքները կամ վերականգնել պետական պաշտոններում, կնշանակեր ուժեղացնել անգլիացիների դիրքերը Եգիպտոսում, նրանց վերածելով Եգիպտոսի իրական կառավարողների: Այդ պատճառով օսմանյան սուլթանը ցուցաբերեց համառություն և իր փաշային հրամայեց մերժել անգլիացիների պահանջը: Դեռ ավելին, սուլթանը լավ էր հասկանում, որ քանի դեռ մամլուքներն իրենցից ուժ են ներկայացնում, օսմանյան տիրապետությունը Եգիպտոսում երբեք

կայուն չի լինի: Այդ պատճառով խորամանկ Սելիմ III, կարգադրելով իր փաշային չբավարարել անգլիացիների պահանջը, միաժամանակ նրան հրամայեց ոչնչացնել մամլուքյան չորսհազարանոց զորքը:

Թուրքական փաշան կարելի է ասել բավականին հաջող սկսեց մամլուքների զանգվածային ոչնչացումը: Թուրքական զորքերը շրջապատեցին մամլուքներին և սկսեցին անխնա կոտորել նրանց: Հավանաբար նրանց կհաջողվեր կոտորել մինչև վերջին մամլուքը, եթե չմիջամտեին անգլիացիները: Անգլիական գեներալը վերջնագրի ձևով պահանջեց թուրքերից դադարեցնել կոտորածը և ազատ արձակել մամլուքներին, սպառնալով հակառակ պարագայում հրետանակոծել Կահիրեն: Թուրքերը հարկադրված տեղի տվեցին անգլիական սպառնալիքների առջև: Այդուհանդերձ, նրանց հաջողվեց չորս հազար մամլուքյան զորքից սպանել 1500–ին, ազատ արձակելով կենդանի մնացած 2500 մամլուքին:

Թվում էր, թե Անգլիան մոտ էր Եգիպտոսում հաստատվելու իր գաղութատիրական ծրագրերի իրականացմանը: Սակայն 1802 թ. ստիպված էր սկսել իր զորքերը դուրս բերել Եգիպտոսից:

Այդ կապակցությամբ կցանկանայինք ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ անգլիացիների հեռանալը Նեղոսի ափերից վճռվեց ոչ թե Եգիպտոսում, այլ Ամյենում, Ֆրանսիայում: 1802 թ. մարտի 27–ին Ամյենում ստորագրվեց հաշտության պայմանագիր մի կողմից Ֆրանսիայի և նրա դաշնակիցներ Իսպանիայի ու Բատավիայի հանրապետության (Հոլանդիայի), իսկ մյուս կողմից Անգլիայի միջև: Շնորհիվ այդ պայմանագրի քայքայվեց հակաֆրանսիական երկրորդ կոալիցիան, որը գլխավորում էր Անգլիան: Ֆրանսիայի կողմից պայմանագիրը ստորագրեց Նապոլեոն Բոնապարտի եղբայրը՝ Ժոզեֆ Բոնապարտը, իսկ անգլիական կողմից՝ լորդ Կորնվալիսը: Պայմանագիրը պարունակում էր 22 հոդված, որոնցից մեկի համաձայն Անգլիան պարտավորվում էր հեռանալ Միջերկրական ծովի կղզիներից ու նավահանգիստներից, իսկ մեկ այլ հոդվածի համաձայն պայմանագիրը ստորագրած կողմերը երաշխավորում էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը նրա մինչպատերազմյան սահմաններում: Իսկ դա նշանակում էր, որ և՛ Ֆրանսիան, և՛ Անգլիան պաշտոնապես ընդունում էին, որ այլևս անելիք չունեն Եգիպտոսում: Քանի որ ֆրանսիացիներն արդեն հեռացել էին, ուստի մնում էր հեռանալ անգլիացիներին: Եվ նրանց հեռացումը Եգիպտոսից ավարտվեց 1803 թ. մարտ ամսին:

Ֆրանսիացիների, ապա նաև անգլիացիների հեռանալուց հետո, Եգիպտոսում մնացին թուրքական զորքերը և մամլուքները: Նրանք լեզու չգտան Եգիպտոսը համատեղ կառավարելու հարցում և պայքարը նրանց միջև վերսկսվեց: Թուրքական զորքերը վստահ էին իրենց հաղթանակի մեջ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էին մամլուքների նկատմամբ տարած հաղթանակները և այն հանգամանքը, որ մամլուքներին վերջնական պարտությունից փրկեցին անգլիացիները: Բայց անգլիացիներն արդեն մեկնել էին: Բացի դրանից թուրքերն ապավինում էին մամլուքների նկատմամբ իրենց զորքերի թվական գերազանցությանը:

Սակայն տեղի ունեցավ երկու կարևոր փոփոխություն, որը խառնեց թուրքերի հաշիվները:

Մամլուքները, դասեր քաղելով նախորդ պատերազմում իրենց կրած պարտությունից, բավականին անսպասելի քայլերի էին դիմել իրենց ուժերն ամրապնդելու ուղղությամբ: Նրանք, նախ, կարողացան իրենց հարաբերությունները կարգավորել բեդվինական ցեղերի և նրանց ցեղապետ–շեյխերի հետ: Զանազան խոստումների շնորհիվ, նրանց հաջողվեց բեդվինական առաջնորդներին իրենց կողմը գրավել ընդդեմ թուրքերի, և կազմավորել բեդվինական մի մեծ բանակ, որը գտնվում էր նրանց հրամանատարության ներքո: Բացի դրանից նրանք բարելավեցին իրենց հարաբերությունները նաև հարևան նուբիացիների հետ, որի արդյունքում մամլուքները կարողացան ձևավորել նուբիացիներից բաղկացած մի զորախումբ:

Այսպիսով, թուրքական զորքերի դեմ կանգնած էին մամլուքների, եգիպտական բեդվինների և նուբիացիների միացյալ զորքերը:

Թուրքերը, որոնք, ինչպես արդեն նշել ենք, ձգտում էին վերջնականապես լուծել մամլուքների հարցը, 1802 թ. ներխուժեցին Վերին Եգիպտոս, որտեղ կենտրոնացված էին մամլուքների և նրանց դաշնակիցների հիմնական ուժերը: Պատերազմական գործողությունները հենց սկզբից անհաջող դասավորվեցին թուրքական զորքերի համար, որոնք առաջին բախման ժամանակ անհաջողության մատնվեցին և նահանջեցին: Մամլուքները սրընթաց առաջ նետվեցին, ճանապարհին, ինչպես բնորոշ էր նրանց, թալանելով ու հրկիզելով այն ամենը, ինչ կարելի էր: Դամանհուրի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը, որն ավարտվեց յոթհազար հոգուց բաղկացած թուրքական բանակի

խայտառակ պարտությամբ: Մարտի դաշտում նրանք թողեցին հինգ հազար դիակ:

Մամլուքները, այդուհանդերձ, չհամարձակվեցին զարգացնել իրենց գործողությունները և մտնել Կահիրե: Նրանք վստահ չէին, թե իրենց կհաջողվի գրավել Եգիպտոսի մայրաքաղաքը, բայց հնարավոր է, որ կարող էին կրել շատ ծանր պարտություն: Այդ պատճառով էլ նրանք կրկին վերադարձան Վերին Եգիպտոս և ամրապնդեցին իրենց դիրքերը:

Իսկ Կահիրեում դրությունը լարված էր: Մամլուքներից կրած պարտությունը խոր հետք էր թողել, ապակայունացրել վիճակը մայրաքաղաքում և նպաստել տարաձայնությունների առաջացմանը թուրքական կառավարող վերնախավի շարքերում: Այդ վերնախավը պառակտված էր: Դրա արտահայտություններից մեկն էլ այն եղավ, որ ընդամենը մեկ ամսվա ընթացքում Բարձր Դուռը Եգիպտոսում հարկադրված երեք փաշա փոխարինեց:

3. Մուհամմադ Ալիի հայտնվելը քաղաքական ասպարեզում

Եվ ահա այս պայմաններում հրապարակում հայտնվեց Մուհամմադ Ալին, որին համարյա կես դար վիճակված էր առաջնակարգ դեր խաղալ Եգիպտոսում, Մերձավոր Արևելքում, մեծ անհանգստություն պատճառելով, իսկ երբեմն նաև տագնապահար անելով եվրոպական մեծ տերություններին՝ Անգլիային, Ֆրանսիային, Ռուսաստանին և Ավստրիային:

Իսկ ո՞վ էր Մուհամմադ Ալին:

Նա ծնվել է 1769 թ., Մակեդոնիայում, ալբանական ընտանիքում: Վաղ հասակում կորցնելով ծնողներին, երիտասարդ Մուհամմադ Ալին, փոքր հասակից, իր գոյությունը պահպանելու համար, կատարում է զանազան աշխատանքներ, զբաղվում ծխախոտի առևտրով և այլն: Սակայն այդ բոլորը երիտասարդ ալբանացուն չի գոհացնում, որը փառասիրական մեծ երազանքներ էր փայփայում: Եվ երբ առիթը ներկայացավ, ապա նա առանց վարանելու որոշեց օգտվել ճակատագրի կողմից նրան ընձեռված հնարավորությունից:

Սուլթան Սելիմ III, պատրաստվելով պատերազմել Եգիպտոս ներխուժած ֆրանսիացիների դեմ, 1799 թ. հրաման արձակեց կայսրության տարբեր վայրերից նոր զորաջոկատներ կազմավորել և դրանք Եգիպտոս ուղարկել: Այդ հրամանը տարածվեց նաև մակեդոնական Կավալլա

քաղաքի վրա, որտեղ ծնվել և բնակվում էր Մուհամմադ Ալին: Սահմանված էր, որ այստեղ պետք է կազմավորվեր 300 հոգուց բաղկացած ալբանական մի զորախումբ: Մուհամմադ Ալին մտավ այդ զորախմբի մեջ, միանգամից նշանակվելով հրամանատարի օգնական: Զորախմբի կազմում նա մեկնեց Եգիպտոս և մասնակցեց ֆրանսիացիների դեմ մղված մարտերում: Նա այդ մարտերում իրեն դրսևորեց հիանալի, աչքի ընկավ խիզախությամբ և ցուցաբերեց մեծ բանիմացություն ռազմական գործերում: Շուտով նա նշանակվեց թուքական բանակում գործող ալբանական բոլոր զորքերի հրամանատար: Այսպես սկսվեց նրա ռազմական, ապա նաև քաղաքական գործունեության վերելքը, որը, ի վերջո, նրան հասցրեց իշխանական բուրգի ամենաբարձր գագաթները:

Մուհամմադ Ալին տեսնում և շատ լավ էր հասկանում, թե ինչ է կատարվում Կահիրեում և ընդհանրապես թուրքական ճամբարում: Նա մեծապես հիասթափված ու դժգոհ էր Բարձր Դռան քաղաքականությունից և ելք էր որոնում: Եվ նա ընդունում է անսպասելի և մեծ ռիսկի հետ կապված որոշում, որը ճակատագրական եղավ նրա ամբողջ կյանքի համար: Նա իր ալբանական ամբողջ զորաջոկատով անցավ մամլուքների կողմը՝ ընդդեմ թուրքերի: Դա փոխեց ուժերի հարաբերակցությունը ի վնաս թուրքերի:

1803 թ. մայիսին վերսկսվեցին պատերազմական գործողությունները: Ալբանական և մամլուքյան միացյալ ուժերը գրավեցին Կահիրեն և վռնդեցին թուրքական փաշային: Իշխանությունն անցավ նրանց ձեռքը: Երկիրը կառավարելու համար ստեղծվեց եռապետություն, որի մեջ մտան Մուհամմադ Ալին և երկու մամլուք բեյեր: Նրանք կարողացան վերակազմավորել ու ամրապնդել իրենց ուժերը և հաղթանակ հաղթանակի հետևից տանել թուրքերի դեմ, որը 1804 թ. հունվարին ավարտվեց թուրքերի նոր, խոշոր պարտությամբ:

Եգիպտոսում ստեղծվեց յուրահատուկ իրավիճակ, որը հղի էր մեծ վտանգներով Մուհամմադ Ալիի համար:

Թուրքերի դեմ 1804 հունվարին տարած հաղթանակից հետո մամլուքները հավատացած էին, որ կրկին եկել է նրանց աստեղային ժամը և նրանք կարող են անել այն, ինչ ուզում են: Եվ անցան գործի: Սկսվեց բռնությունների նոր ալիք եգիպտացիների՝ ֆելլահների, բեդվինների, արհեստավորների և եգիպատական այլ խավերի նկատմամբ: Մամլուքները բարձրացրին հարկերը, զավթեցին արաբներին պատկանող կալվածքները և այլն:

Դա լցրեց եգիպտացիների համբերության բաժակը և կահիրցիներն ապստամբվեցին: Այս ապստամբությունն ուներ մի կարևոր առանձնահատկություն: Այն գլխավորեց ալ–Ազհարի մուսուլմանական հոգևորականությունը: Իսկ ալ–Ազհարը, ինչպես նշել ենք, ոչ միայն Եգիպտոսի, այլև ամբողջ մուսուլմանական աշխարհի ամենաազդեցիկ մուսուլմանական կենտրոններից մեկն էր: Ուստի նրանց կողմից ապստամբության ղեկն իրենց ձեռքը վերցնելը այդ ապստամբությանը հատուկ բնույթ էր տալիս, ապստամբությունը դարձնում ավելի կազմակերպված, զանգվածային ու համառ: Դա նշանակում էր նաև, որ մամլուքների համար այս անգամ շատ դժվար էր լինելու այդ ապստամբությունը ճնշելու գործը:

Ալ–Ազհարի որոշմամբ, ապստամբները հրաժարվեցին ենթարկվել մամլուքներին և կապտարել նրանց որոշումները, մասնավորապես նրանք հրաժարվեցին վճարել հարկերը և սկսեցին հաշվեհարդար տեսնել մամլուքների ուղարկած հարկահավաքների հետ, որոնցից շատերը հենց փողոցներում սպանվեցին: Այնուհետև սկսվեցին փողոցային մարտերը: Մամլուք բեյ Օսման Բարդիսին, որի պալատը պաշարեցին ապստամբները, հազիվ կարողացավ դուրս պրծնել և փախուստ տալով Կահիրեից, հաստատվել Վերին Եգիպտոսում: Նրա պալատն անցավ ապստամբների ձեռքը:

4. Մուհամմադ Ալիի ճակատագրական քայլը

Ապստամբության ժամանակ շատ վտանգավոր վիճակում հայտնվեց Մուհամմադ Ալին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա երկու մամլուք բեյերի հետ մտնում էր եռապետության կազմում: Ապաստամբության մասնակիցները հանդես էին գալիս ոչ միայն մամլուքների դեմ, այլև Մուհամմադ Ալիի և նրա ալբանական զորախմբի դեմ, նրանց դիտելով որպես մամլուքների դաշնակիցներ և համախոհներ: Մուհամմադ Ալիի համար պահը օրհասական էր և նրա հետագա ճակատագիրը կախված էր այն բանից, թե նա ինչպիսի ելք կգտներ ստեղծված վտանգավոր վիճակից: Եվ նա գտավ այդ ելքը, այս անգամ ևս կատարելով անսպասելի քայլ:

Մուհամմադ Ալին, ինչպես որ 1802–1804 թթ թուրք–մամալուքյան պատերազմի վճռական պահին լքեց թուրքերին և իր ալբանական զորախմբով անցավ մամլուքների կողմը, այնպես էլ այժմ, նա լքեց մամ-

լուքներին և անցավ եգիպտական ապստամբների կողմը: Դա շատ լավ մտածված և հեռատես քայլ էր, որը նրան հնարավորություն տվեց ոչ միայն խուսափել մամլուքների ճակատագրից, այլև մեկ խոշոր քայլ ևս կատարել իշխանական աստիճանակարգի վերին սանդղակը գրավելու համար:

Մուհամմադ Ալին ապստամբության թեժ պահին, երբ իր և իր ալբանական զորախմբի դեմ ուղղված ապստամբների սպառնալիքներն ընդունում էին ահավոր չափեր, կատարեց բոլորի, այդ թվում և իր մերձավորների համար անսպասելի քայլ, որի նշանակությունն անհնար է գերագնահատել: Նա անձամբ գնաց Ալ–Ազհար և ներկայացավ Եգիպտոսի հոգևոր առաջնորդներին: Նրան հնարավորություն տրվեց հանդես գալ շեյխերի համաժողովի առջև: Օգտվելով այդ հնարավորությունից, Մուհամմադ Ալին իրեն հայտարարեց եգիպտական ապստամբ ժողովրդի պաշտպան: Միաժամանակ նա շեյխերին և նրանց միջոցով եգիպտացիներին տեղյակ պահեց, որ կանի ամեն ինչ չեղյալ հայտարարելու մամլուքների կողմից մտցրած անօրինական և բարձր հարկերը: Նրա հրամանով ալբանական զորքերը մարտի մեջ մտան մամլուքյան զորքերի, մամլուքյան իշխանապետերի և ավատականության դեմ:

Մուհամմադ Ալիի այս քայլը ըստ արժանվույն գնահատվեց Ալ–Ազհարի ղեկավարության կողմից, որը խանդավառությամբ ընդունեց եգիպտացիների իրավունքները պաշտպանելու, մամլուքների հետ կապերը խզելու և մամլուքների դեմ պատերազմի մեջ մտնելու նրա պատրաստակամությունը:

Ելնելով նոր իրադրությունից, ալ–Ազհարի շեյխերի ժողովը փոփոխություն մտցրեց Եգիպտոսի կառավարման համակարգում: Եռապետությունը վերացվեց և մամլուքներն այլևս ոչ մի իրավունք չէին կարող ունենալ Եգիպտոսի կառավարման համակարգում: Ժողովը Եգիպտոսի կառավարիչ ընտրեց թուրք Խուրշիդ փաշային, որը մինչ այդ Ալեքսանդրիայի կառավարիչն էր: Թուրքին Եգիպտոսի փաշա ընտրելը կատարվեց ամենայն հավանականությամբ այն նկատառումով, որպեսզի չգրգռեն Բարձր Դռանը և ցույց տան, որ Եգիպտոս–Ստամբուլ փոխհարաբերություններում պաշտոնապես որևէ փոփոխություն տեղի չի ունենում և օսմանյան սուլթանը շարունակում է համարվել Եգիպտոսի, որպես Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրամասի վեհապետը: Թեև այս դեպքում Եգիպտոսի փաշային նշանակեց ոչ թե սուլթան Սելիմ III, ինչ-

պես ընդունված էր, այլ եգիպտացիների, տվյալ դեպքում ալ–Ազհարի շեյխերի ժողովը:

Եվ, վերջապես, ալ–Ազհարում գումարված ժողովը Մուհամմադ Ալիին ընտրեց Եգիպտոսի կառավարչի՝ փաշայի տեղակալ: Այս բարձր պաշտոնը նոր հեռանկարներ էր բացում ալբանացու առջև:

Հետագա դեպքերը և Մուհամմադ Ալիի քայլերն ավելի բարձրացրին նրա հեղինակությունը: Նա շատ հմտորեն ղեկավարեց մամլուքների կողմից պաշարման մեջ հայտնված Կահիրեի պաշտպանությունը: Մամլուքները, որ ապստամբության ժամանակ մի կերպ ճողոպրել էին և փախել Կահիրեց, նոր զորքեր հավաքելով, կրկին վերադարձան և հարձակվեցին Կահիրեի վրա: Նրանց չհաջողվեց գրոհով վերցնել մայրաքաղաքը, բայց կարողացան այն վերցնել պաշարման օղակի մեջ, որը տևեց չորս ամիս: Կահիրեն, շնորհիվ Մուհամմադ Ալիի ջանքերի և մտածված քայլերի, խուճապի չմատնվեց: Պաշարման մեջ հայտնված կահիրցիները Մուհամմադ Ալիի գլխավորությամբ, կազմակերպված ու համախմբված դիմակայում էին մամլուքներին, որոնք ոչ մի հաջողության չկարողացան հասնել և չորսամսյա պաշարումից հետո ծեռնունայն հեռացան Կահիրեից ու վերադարձան իրենց ոստանը, Վերին Եգիպտոս:

Դրանից հետո Մուհամմադ Ալին հայտնվեց երկու տարբեր կողմերի շահերի խաչմերուկում: Եգիպտացիները ցնծության մեջ էին և բարձր էին գնահատում Մուհամմադ Ալիին, նրա մատուցած մեծ ծառայությունների համար Եգիպտոսին և արդեն նրան ընկալում էին իրենց ամենաարժանավոր և միակ ղեկավարը, որի հետևից նրանք պատրաստ էին ընթանալ:

Սակայն բոլորովին այլ էր Ստամբուլի մոտեցումը: Սուլթան Սելիմին մտահոգում էր Ալիի սրընթաց առաջխաղացումը և նրա հեղինակության աննախադեպ բարձրացումը: Նա դա վտանգավոր էր համարում իր և ընդհանրապես կայսրության համար: Ամենայն հավանականությամբ սուլթանը կռահում էր, որ Մուհամմադ Ալին ձգտում էր դառնալ Եգիպտոսի կառավարիչ և շատ մոտ էր իր այդ փափագի իրականացմանը: Նա մտավախություն ուներ նաև, որ դառնալով Եգիպտոսի տիրակալը, Մուհամմադ Ալին կփորձի այդ կարևոր երկրամասը դուրս բերել օսմանյան ենթակայությունից և դարձնել անկախ պետություն:

Սուլթան Սելիմ III չէր սխալվում իր հաշվարկներում: Այդ պատճառով էլ նա որոշեց պարզություն մտցնել այդ հարցում և կանխել եգիպ-

տական դեպքերի հետագա զարգացումը վերոնշյալ ուղղությամբ: Նա պահանջեց, որ Մուհամմադ Ալին Եգիպտոսը թողնի և անհապաղ վերադառնա Ստամբուլ:

Բայց այստեղ կատարվեց անսպասելին: Իմանալով Մուհամմադ Ալիին հետ կանչելու սուլթանի հրամանի մասին, եգիպտացիները ոտքի ելան ի պաշտպանություն իրենց կուռքի: Կահիրեում ժողովուրդը ցույցի ելավ, խանութները և արհեստանոցները, որպես բողոքի նշան, փակվեցին: Եգիպտացիները պատրաստ էին ամեն ինչի, միայն թե թույլ չտան Մուհամմադ Ալիի հեռանալը Եգիպտոսից: Եվ Ստամբուլը ստիպված էր զիջել:

Այս միջադեպը հարթելուց հետո, Մուհամմադ Ալին վերսկսեց մամլուքներին հետապնդելու և պատժելու իր գործողությունները, այս անգամ Կահիրեից դուրս, նրանց որջում, Վերին Եգիպտոսում: 1804 թ. ձմռանը և 1805 թ. սկզբներին նա մի շարք ծանր հարվածներ հասցրեց մամլուքներինն զգալիորեն թուլացրեց նրանց դիրքերը և ազդեցությունը Եգիպտոսում:

5. Մուհամմադ Ալին Եգիպտոսի կառավարիչ–կուսակալ

Մինչ նա զբաղված էր մամլուքներին Կահիրեից դուրս պատժելու կարևոր գործողություններով, դրությունը լարվեց մայրաքաղաքում, որի պատճառը Խուրշիդ փաշայի գործողություններն էին: Նրա, որպես թուրքական փաշայի, տրամադրության տակ կային ենիչերիական զորաջոկատներ, որոնք ամենուր, այդ թվում և Եգիպտոսում, աչքի էին ընկնում իրենց անկարգապահությամբ, դաժանությամբ, կողոպուտներով և այլն: Խուրշիդ փաշան հենվելով իր ենիչերիների վրա, սկսեց վերականգնել մի այնպիսի ծանր մթնոլորտ, որը Վ. Լուցկին իրավացիորեն բնութագրում է «մամլուքների սարսափելի ճնշումների վերակենդանացում»: Դրա մասին են վկայում քաղաքացիների ծանր հարկադրումը, ալան–թալանը, գյուղացիներից մեկ տարի առաջ հաջորդ տարվա ամբողջ հարկերի գանձումը բռնությամբ, քաղաքացիներից պատանդներ վերցնելը, նրանց կողոպտելը, զանազան բռնությունների ենթարկելը, անգամ սպանությունները և այլն: Եգիպտացիները այդ անարդարությունների կիրառումը թուրքական փաշայի կողմից ընկալեցին որպես մամլուքների յուրատեսակ վերադարձ, որն առաջացրեց նրանց խոր վր-

դովմունքը: Եվ նրանք կրկին ապստամբվեցին, իսկ Մուհամմադ Ալին կրկին հայտնվեց երկընտրանքի առջև:

Նա այս անգամ ևս ճիշտ կողմնորոշվեց և պաշտպանեց ապստամբներին ընդդեմ թուրքական փաշայի և ենիչերիական բանդիտների: 1805 թ. ապստամբության հետևանքով Եգիպտոսի կառավարիչ Խուրշուդ փաշան տապալվեց, իսկ ենիչերիները դուս վռնդվեցին Եգիպտոսից: Դրանից հետո ոչ ոքի մոտ տարակուսանք չառաջացավ, թե ով պետք է փոխարինի Խուրշուդ փաշային: Կար միայն մեկ թեկնածու: Դա Մուհամմադ Ալին էր: Եվ ալ–Ազհարի շեյխերի ժողովը Եգիպտոսի կառավարումը վստահեց Մուհամմադ Ալիին: Սուլթան Սելիմ III սրտի կսկիծով Մուհամմադ Ալիին հաստատեց այդ պաշտոնում: 1805 թ. մայիսին Մուհամմադ Ալին դարձավ Եգիպտոսի փաշան, այսինքն Եգիպտոսի կառավարիչ:

Այսպիսով, Մակեդոնիայի Կավալլա քաղաքում ալբանական ընտանիքում ծնված Մուհամմադ Ալին, որը 1799 թ., երեսուն տարեկան հասակում, դուրս գալով իր հայրենի քաղաքից և կյանքում առաջին անգամ ոտք դնելով Եգիպտոս, ընդամենը վեց տարի անց կատարեց աներևակայելի թռիչք և դարձավ Եգիպտոսի տիրակալը: Դա նրա քաղաքական երազանքների և ծրագրերի իրականացման գագաթնակետն էր:

Մուհամմադ Ալին որևէ կրթություն չստացած և անգրագետ մարդ էր: Նա գրել և կարդալ չգիտեր: Եվ նման թռիչք կատարեց շնորհիվ իր բնատուր տաղանդի, որը թե՛բարեկամները, թե՛ թշնամիները չէին վիճարկում, բարդ իրադրություններում արագ կողմորոշվելու, ճիշտ, իսկ երբեմն նաև միակ որոշումներն ընդունելու կարողության, դաշնակիցների հարցում ազատ ընտրություն կատարելու տակտիկայի, իր վճռականությամբ, անձնական խիզախությամբ, որը նա փայլուն կերպով դրսևորում էր նաև ռազմական գործողությունների ժամանակ, և այլ հատկանիշների, որով բնությունը շռայլորեն օժտել էր նրան:

Դառնալով Եգիպտոսի անսահմանափակ տիրակալը, Մուհամմադ Ալին երկաթյա ձեռքով կառավարեց Եգիպտոսը մոտ 40 տարի, որը Եգիպտոսի բազմադարյան պատմության փառավոր ժամանակաշրջաններից մեկն էր, և որը պատմության մեջ մտել է որպես «Մուհամմադ Ալիի դարաշրջան»:

Մուհամմադ Ալին, անվիճելի է, բացառիկ դերակատարում է ունեցել Եգիպտոսի XIX դարի պատմության մեջ, որը շատ բարձր է գնահատված պատմագրության մեջ: Դա միանգամայն հասկանալի և ընդու-

նելի է: Սակայն պատահում են գնահատականներ, որոնք այլ կերպ, քան ծայրահեղական, հնարավոր չէ որակել: Դրա տիպիկ օրինակն է հանդիսանում Ֆ. Հիթթիի տրված գնահատականը: Նա նույնպես բարձր է գնահատում Մուհամմադ Ալիի ջանքերը նոր, ուժեղ և անկախ Եգիպտոս ստեղծելու գործում: Սակայն դրա հետ միասին նա հակված է ամեն ինչ բացառապես ալբանացի փաշային վերագրել: Նա գտնում է, որ «Մուհամմադ Ալին ինքն իրեն դարձրեց Եգիպտոսը տերը»: Չբավարարվելով այս վիճելի կարծիքն արտահայտելով, Ֆ. Հիթթին այնուհետև շեշտում է, որ «Եգիպտոսի տասնիններորդ դարի առաջին կեսի պատմությունն իրապես մեկ մարդու (Մուհամմադ Ալիի — Ն. Հ.) պատմությունն է»: Կարծում ենք, որ այս գնահատականը արդարացի չէ: Ինչքան էլ որ առաջատար ու վճռորոշ է եղել Մուհամմադ Ալիի դերը Եգիպտոսի պատմության մեջ, այդուհանդերձ, Եգիպտոսի նման մեծ, կարևոր և բարդ երկրի պատմությունը համարել միայն մեկ մարդու, թեկուզ և Մուհամմադ Ալիի նման ուժեղ անձնավորության պատմություն, նշանակում է գլորվել ֆանտազիայի գիրկը: Այդ գնահատականի հեղինակը զարմանալիորեն չի տեսնում Մուհամմադ Ալիի համախոհներին, նրա իսկ ստեղծած սոցիալական նոր խավին, որը նրա հուսալի հենարանն էր, զինվորականների, քաղաքական և պետական գործիչների, կրթական և լուսավորչական բնագավառի այն ստվար խավը, որը, ճիշտ է, ձևավորվեց և ասպարեզ իջավ շնորհիվ Մուհամմադ Ալիի բարենորոգումների, բայց առանց որի հնարավոր չէր լինի ստեղծել ուժեղ և նոր Եգիպտոս:

Կարծում ենք, որ այդ իրողության ընդունումը բնավ էլ չի կարող նսեմացնել Մուհամմադ Ալիի ծառայությունները Եգիպտոսի առջև, որոնք, իրոք, բացառիկ էին: Բայց մյուս կողմից չպետք է մեղանչել նաև պատմական ճշմարտության դեմ:

6. Ծանր փորձություններ Եգիպտոսի նոր կուսակալի համար 1805–1807 թթ.

Դառնալով Եգիպտոսի կառավարիչը, Մուհամմադ Ալին ենթարկվեց մի շարք ծանր փորձությունների, որոնք նրա համար եղան նաև քննություններ պետություն կառավարելու հարցում: Այդ առումով հատկապես ծանր տարիներ եղան 1805–1807 թվականները:

Նոր էր Մուհամմադ Ալին նշանակվել Եգիպտոսի փաշա, երբ 1805 թ. օգոստոսին սկսվեց անգլո–ֆրանսիական հերթական պատերազմը,

որը թեև ընթանում էր Եվրոպայում, սակայն իր ազդեցությունն ունեցավ նաև Եգիպտոսի վրա: Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականությանը Նապոլեոնյան պատերազմների ժամանակ հատուկ էր միմյանց հարվածներ հասցնել ոչ միայն անմիջապես ճակատային գծերում, այլև պատերազմի թատերաբեմից հեռու գտնվող երկրներում, որոնք նրանց կարծիքով կարող էին ինչ–որ դերակատարում ունենալ, և օգտվելով առիթից, կանխել հակառակորդին և իրենց տիրապետությունը հաստատել այդ երկրներում: Անգլիան և Ֆրանսիան, որոնց զորքերը ոչ հեռավոր անցյալում արդեն եղել էին Եգիպտոսում, կրկին հիշեցին նրա գոյությունը և փորձեցին ակտիվացնել իրենց գործողությունները այդ երկրում: Նրանք այս անգամ անմիջապես զորք չմտցրին Եգիպտոս, այլ ջանացին գործել իրենց հավատարիմ մամլուք բեյերի օգնությամբ:

Անգլիայի շահերի պաշտպանի դերում հանդես եկավ Մուհամմադ էլֆի բեյը, որին անգլիացիներն իրենց հետ տարել էին Անգլիա, երբ 1803 թ. նրանք հեռացան Եգիպտոսից: Նրանք այդ ընթացքում այդ մամլուք բեյին պահում էին որպես պահուստային ուժ, սպասելով հարմար պահի նրան կրկին օգտագործելու իրենց նպատակների համար: Եվ Մուհամմադ էլֆի բեյը անգլիացիների հանձնարարությամբ 1806 թ. Եգիպտոսում փորձեց հանդես գալ ի նպաստ անգլիացիների:

Ֆրանսիան նույնպես ուներ իր մամլուքը, որպիսին հանդիսանում էր Օսման Բարդիսին, որի պալատը, ինչպես նշել ենք, ապստամբած կահիրցիները 1804 թ. գրավեցին և նա փախուստ տվեց Կահիրեից: Նա հանդես եկավ ընդդեմ Մուհամմադ էլֆիի և ի պաշտպանություն Ֆրանսիայի շահերի:

Երկու բեյերի տնօրինության տակ կային նշանակալի զորախմբեր, որոնք կազմված էին մամլուքներից: Սկսվեցին զինված բախումները նրանց միջև:

Մուհամմադ Ալին, որ ուշադիր հետևում էր այդ երկու մամլուք բեյերի գործողություններին, որոշեց օգտվել նրանց հակամարտությունից, այդ բեյերին օգտագործել միմյանց դեմ և ավելի ամրապնդել իր դիրքերը ու կանխել օտարերկրյա ուժերի ներխուժումը Եգիպտոս:

Նա որոշեց առաջինը վերացնել Մուհամմադ էլֆիին: Այդ նպատակով նա համագործակցության մեջ մտավ Օսման Բարդիսիի հետ և ջախջախեց Մուհամմադ էլֆիին, որը շատ չանցած մահացավ, հավանաբար ոչ առանց Մուհամմադ Ալիի կողմնակիցների օգնության: Շուտով նույն ճակատագրին արժանացավ նաև Օսման Բարդիսին:

Մուհամմադ Ալիի հերթական հաղթանակն ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը: Եգիպտացիները երախտապարտ էին նրան իրենց երկիրը օտարերկրյա վտանգից փրկելու համար: Նրանք իրենց փաշային շնորհակալ էին նաև այն բանի համար, որ նա իրենց ազատեց երկու ատելի ոչ շարքային մամլուք բեյերից, մանավանդ որ Մուհամմադ Ալին չբավարարվեց դրանով և շարունակեց հետապնդել մամլուքյան զորաջոկատներին մինչև Վերին Եգիպտոս:

1807 թ. պատերազմի մեջ մտավ նաև Թուրքիան որպես Ֆրանսիայի դաշնակից: Դա ստեղծեց նոր իրադրություն նաև Եգիպտոսի համար: Անգլիան Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը իր հակառակորդ Ֆրանսիայի կողմում, հարմար պատրվակ օգտագործեց կրկին Եգիպտոս ներխուժելու համար: Անգլիական զորքերը, թվով հինգ հազար մարդ, 1807 թ. մարտի 17–ին ներխուժեցին Եգիպտոս և ամրացան Ալեքսանդրիայում: Նրանք ենթադրում էին, որ արագ ու հեշտ հաղթանակներ ձեռք կբերեն և Եգիպտոսը կդարձնեն իրենց ենթակա երկիր: Սակայն նրանք հաշվի չէին առել, որ ժամանակները փոխվել էին և Եգիպտոսն ուներ նոր ու խելացի ղեկավար, ընդունակ համարձակ և ոչ սովորական գործողությունների, որպիսին Մուհամմադ Ալին էր, իսկ նրա բանակն էլ մամլուքների նախկին անկազմակերպ ու ակարգապահ, լուրջ ռազմական գործողությունների անընդունակ զորքը չէր:

Մուհամմադ Ալին չվախեցավ անգլիական զորքերից և անմիջապես մարտի մեջ մտավ նրանց հետ: Եգիպտական և անգլիական զորքերի առաջին մարտը տեղի ունեցավ մարտ ամսվա վերջերին Ռոզետտա քաղաքում: Մինչև Մուհամմադ Ալիի գլխավորությամբ եգիպտական զորքերի մոտենալը, անգլիական երկուհազարանոց զորախումբը կարողացել էր ներխուժել այդ քաղաքը: Մուհամմադ Ալիին հաջողվեց ջախջախել անգլիական զորախումբը և նրանց դուրս շպրտել քաղաքից: Մարտի նման ելքը միանգամայն անսպասելի էր անգլիացիների համար և նրանք կրկնապատկելով իրենց ուժերը նորից անցան հարձակման: Ռոզետտայի մոտ տեղի ունեցած երկրորդ մարտը նույնպես ավարտվեց անգլիացիների պարտությամբ:

Եգիպտացիների այդ երկու հաղթանակն ունեցավ նաև մեկ այլ նշանակություն: Անգլիացիները ծրագրել էին արշավել Կահիրեի վրա: Սակայն կրած պարտությունները ստիպեցին նրանց հրաժեշտ տալ այդ մտքին և, նահանջելով ամրապնդվել Ալեքսանդրիայում: Սակայն դա նրանց չփրկեց: Մուհամմադ Ալին չէր սիրում որևէ գործ թողնել անա-

վարտ: Բացի դրանից նա հասկանում էր, որ անգլիացիների ներկայությունը Եգիպտոսում և Ալեքսանդրիայի վերածումը անգլիական հենակետի, շատ վտանգավոր իրադրություն կստեղծեր Եգիպտոսում, մանավանդ, որ անգլիացիները փորձեր էին անում Մուհամմադ Ալիի դեմ հանել մամլուքներին:

Այդ պատճառով, Մուհամմադ Ալին առանց հապաղելու, իր զորքերի գլուխն անցած շարժվեց Ալեքսանդրիայի ուղղությամբ և հայտնվեց նրա մատույցներում: Անգլիական զորքերի հրամանատարը, հավանաբար հաշվի առնելով նախորդ երկու դառը պարտությունների դասերը, հրաժարվեց նոր ճակատամարտ տալու մտքից և բանակցությունների մեջ մտավ Մուհամմադ Ալիի հետ հաշտության և անգլիական զորքերի ազատ մեկնելու վերաբերյալ: Եգիպտոսի կառավարիչը հեռատեսորեն բավարարեց անգլիական կողմի երկու պահանջներն էլ: Հաշտությունը ստորագրվեց և անգլիական զորքերը իրենց նավերով 1807 թ, սեպտեմբերին հեռացան Եգիպտոսից: Մուհամմադ Ալին իր զորքերով մտավ իր նշանակությամբ Եգիպտոսի երկրորդ քաղաքը՝ Ալեքսանդրիա, որի բնակչությունը մեծ ցնծությամբ ընդունեց նրանց:

Սակայն այդ ցնծությունը միայն Ալեքսանդիրայում չէր, այլ համայն Եգիպտոսում: Եգիպտացիները հպարտ էին, որ իրենց հաջողվել էր սեփական ուժերով հաղթանակ տանել մի այնպիսի օտար նվաճողի նկատմամբ, ինչպիսին Անգլիան էր:

Անգլիացիների դեմ տարած հաղթանակը և Եգիպտոսը գրավելու անգլիացիների փորձերի ձախողումը կարևոր փուլ հանդիսացավ Մուհամմադ Ալիի իշխանության և Եգիպտոսի անկախության ամրապնդման ուղղությամբ: Նա նաև կարևոր քայլ էր Ստամբուլից Եգիպտոսի կախվածության թուլացման ճանապարհին:

Մուհամմադ Ալիի համար մյուս ծանր փորձությունը, որը կարող էր նրա համար ճակատագրական լիներ, կապված էր նրան պաշտոնազուրկ անելու սուլթան Սելիմ III նոր փորձերի հետ:

Օսմանյան սուլթան Սելիմը III, որը թեև 1805 թ. ֆերմանով Մուհամմադ Ալիին նշանակել էր Եգիպտոսի փաշա, այսինքն կառավարիչ, 1807 թ. նրան պաշտոնանկ անելու և Եգիպտոսից հեռացնելու նս մի փորձ կատարեց: Ինչպես երևում է սուլթանի մոտ Մուհամմադ Ալիի նկատմամբ եղած կասկածները չէին վերացել և նրան շարունակում էր մտահոգել Մուհամմադ Ալիի բարձր հեղինակությունը և նրա շատ հեռուն գնացող քաղաքական ծրագրերը: Դրա վառ վկայությունը հանդի-

սացավ Մուհամմադ Ալիի փայլուն ռազմական հաղթանակները նախ մամլուքյան երկու ազդեցիկ բեյերի, ապա Եգիպտոս ներխուժած անգլիացիների դեմ: Դա լցրեց սուլթանի համբերության բաժակը: Նա այլևս չէր կարող հանդուրժել նման հեղինակավոր և ազդեցիկ գործչի հետագա ներկայությունը Եգիպտոսի ղեկավարի պաշտոնում: Բայց սուլթանն այս անգամ ևս անհաջողության մատնվեց: Մուհամմադ Ալիին թիկունք կանգնեց ամբողջ Կահիրեն և ի տես այդ իրողության սուլթանը նահանջեց:

Դա եղավ Մուհամմադ Ալիին իշխանությունից հեռացնելու նրա վերջին փորձը: Շատ չանցած նրան տապալեցին ենիչերիները, որոնց հետ Սելիմ III հարաբերությունները մշտապես լարված բնույթ ունեին, և սպանեցին նրան:

Դժվար է ասել, թե հետագայում ինչպես կդասավորվեին սուլթան–փաշա հարաբերությունները, սակայն փաստը մնում է փաստ, որ ճակատագիրը ենիչերիների ձեռքով մեծ նվեր մատուցեց Մուհամմադ Ալիին:

III. ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Մուհամմադ Ալին շատ ծանր ժառանգություն ստացավ: Եգիպտոսն իրենից ներկայացնում էր մի հետամնաց երկիր, քայքայված տնտեսությամբ, կառավարման բարդ ու խճողված հետադիմական համակարգով, օսմանյան սուլթանների, նրա տեղական պաշտոնյաների և մամլուքների կամայականությունների ու բռնությունների վրա խարսխված իշխանությամբ, տնտեսական արխայիկ և ավատական հարաբերությունների բարդ հանգույցով:

Դա մի երկիր էր, որտեղ օսմանյան մենտալիտետը և մամլուքյան ավազակաբարո իշխանությունը արգելակում էին լուսավորության ու կրթության տարածումը, արաբների ազգային ինքնագիտակցության զարգացումը, որտեղ արաբներն իրենց սեփական երկրում արհամարհված էին և համարվում էին ոչ լիարժեք մարդիկ: Եվ եթե այս բոլորին ա-

վելացնելու լինենք եգիպտացիների՝ ֆելլահների, բեդվինների, արհեստավորների և մյուս չքավոր խավերի տնտեսական անմխիթար վիճակը, ապա հասկանալի կլինի, թե ինչպիսի բարդ խնդիրների առջև էր կանգնած Եգիպտոսի ծագումով ալբանացի փաշան:

Այս խնդիրները որպես քննարկման առարկա հառնում են հետազոտողի առջև այն պարզ պատճառով, որ Մուհամմադ Ալին սովորական և հերթական կառավարողը չէր, որը հայտնվել էր Եգիպտոսում իր սեփական ժողովրդին կողոպտելու և վայելքների համար և որպես այդպիսին իր «անգնահատելի» լուման ներդնելու Եգիպտոսի հետագա քայքայման գործում, ինչպես դա արել էին նրա նախորդները:

Նա, գալով իշխանության գլուխ, սկզբից նեթ, գուցե և նախքան իշխանությունն իր ձեռքը վերցնելը, ծրագրել էր Եգիպտոսը հանել խավարից և քայքայման ու անիշխանականության ճիրաններից և վերածել տնտեսապես զարգացած, առաջադեմ և հզոր երկրի: Նրա վերջնական նպատակն էր ստեղծել համապատասխան քաղաքական, տնտեսական և ռազմական նախադրյալներ Եգիպտոսը օսմանյան տիրապետության տակից դուրս բերելու և անկախ պետություն հռչակելու համար: Ընդ որում, նրա քաղաքական հավակնություններն այնքան հեռուն էին գնում, որ նա ցանկանում էր Եգիպտոսը տեսնել ոչ միայն անկախ, այլև մերձավորարևելյան տարածաշրջանի և միջերկրածովյան ավազանի ամենաուժեղ պետություններից մեկը կամ նույնիսկ ամենաուժեղ պետությունը, որը կարևոր դերակատարում պետք է ունենար ժամանակի միջազգային հարաբերություններում:

Եվ, վերջապես, նրա նպատակն էր արաբական բոլոր երկրները միավորել և ստեղծել մեկ միասնական արաբական պետություն իր գերիշխանության ներքո:

Մուհամմադ Ալին հասկանում էր, որ իր ստացած ժառանգության հիման վրա հնարավոր չէ իրագործել իր երազանքները: Դրա համար անհրաժեշտ էին բարենորոգումներ, անգամ արմատական բնույթի, որն ընդգրկեր պետական, քաղաքական, տնտեսական, ռազմական, մտավոր–կրթական կյանքի բոլոր կողմերը:

Եվ նա մի զարմանալի հետևողականությամբ ձեռնամուխ եղավ Եգիպտոսի բազմադարյան պատմության մեջ իր նախադեպը չունեցող համակարգային բարեփոխումների, կանգ չառնելով ո՛չ նյութական, և ո՛չ էլ մարդկային զոհողություններ առջև:

Այդ բարենորոգումների առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նա իրագործվում էր վերևից, անձամբ Մուհամմադ Ալիի կողմից: Իսկ մյուս առանձնահատկությունը նրանում էր, որ նա համակարգային բնույթ էր կրում: Նա չէր շոշափում միայն մեկ ոլորտ, այլ ընդգրկում էր առանց բացառության բոլոր բնագավառները:

Մուհամմադ Ալիի մեծությունը կայանում էր նրանում, որ նա հասկացավ, որ Եգիպտոսի առջև կանգնած հիմնախնդիրները ներքնապես սերտորեն միահյուսված են, փոխկապակցված, և չի կարելի մի բնագավառում կատարել բարեփոխում, իսկ մյուսները թողնել անփոփոխ: Նման մոտեցումը կնշանակեր բարեփոխումները նախօրոք դատապարտել ձախողման:

1. Կառավարման համակարգի և պետական ապարատի վերակառուցումը

Մուհամմադ Ալիի իրագործած բարեփոխումների մեջ իր նշանակությամբ առանձնանում են բարեփոխումները պետական կառավարման և պետական ապարատի համակարգում:

Դա առանցքային նշանակություն ունեցող բնագավառ էր, որից սկսելով կարելի էր իրագործել վերակառուցումները նաև մյուս ոլորտներում:

Այս խնդիրը շատ բարդ էր և Մուհամմադ Ալիի առջև կանգնած էին մի շարք դժվարություններ:

Առաջինը Կահիրե–Ստամբուլ փոխհարաբերությունների խնդիրն էր: Այս հարցում Մուհամմադ Ալին ցուցաբերեց զգուշավորություն և նպատակահարմար չգտավ անմիջապես խզել իր ենթակայական կապերը Բարձր Դռան հետ: Նա հասկանում էր, որ դրա ժամանակը դեռևս չէր եկել: Ուստի նա ձևականորեն, իրավական տեսակետից փոփոխության չենթարկեց իր հարաբերությունների բնույթը Ստամբուլի հետ:

Ի՞նչը մենք նկատի ունենք:

Մուհամմադ Ալին պահպանեց Եգիպտոսի որպես Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրամասի կամ նահանգի կարգավիճակը, որի դեպքում ինքը որպես Եգիպտոսի փաշա կամ կուսակալ մնում էր օսմանյան սուլթանի վասալը: Պահպանվում էր սուլթանի իրավունքը ինվեստիտուրայի հարցում, այսինքն սուլթանն էր իր ֆերմանով Մուհամմադ Ալիին և նրա հաջորդներին հաստատում որպես Եգիպտոսի փաշա:

Մուհամմադ Ալին պարտավորվում էր յուրաքանչյուր տարի հարկ վճարել սուլթանին և նրա անունը հիշել խուտբայի ժամանակ: Դրանից այն կողմ օսմանյան սուլթանի իրավունքները Մուհամմադ Ալիի օրոք Եգիպտոսի վրա չէին տարածվում: Իսկ վերոնշյալներն էլ իրենց խորքում ձևական բնույթ էին կրում: Մուհամմադ Ալին իրեն զգում էր անկախ: Նախ, նա Բարձր Դռան կողմից եկող հրահանգները կատարում էր ընտրովի, միայն այնպիսիները, որոնք չէին վնասում Եգիպտոսին և չէին հակասում նրա շահերին: Իսկ Բարձր Դուռը տեղյակ լինելով այդ մասին, չէր կարող պարտադրել նրան իր կամքը կամ պատժել Մուհամմադ Ալիին: Նա այլևս այն ուժը և լծակները չուներ, որպեսզի կարողանար իր բոլոր հրահանգների կատարումը պարտադրել Կահիրեին:

Երկրորդ, Մուհամմադ Ալին ոչ միայն Ստամբուլից եկող բոլոր հրահանգները չէր կատարում, այլև իրեն լրիվ ազատ ու անկախ էր պահում Եգիպտոսի ներքին կառավարման բոլոր հարցերում՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, անգամ արտաքին քաղաքական հարցերում: Նա ընդունում էր որոշումներ և կատարում քայլեր, առանց հարկ համարելու դրանց մասին նախօրոք Բարձր Դռանը տեղյակ պահելու կամ հարցերը նրա հետ համաձայնեցնելու:

Ժամանակակիցներին, որոնք այցելել են Եգիպտոս, զարմացրել է Եգիպտոսի Ստամբուլից անկախ լինելու և ինքնուրույն գործելու բարձր աստիճանը: Շատերը Եգիպտոսը համարել են լրիվ անկախ պետություն, որը լոկ ձևականորեն էր Օսմանյան կայսրության մասը կազմում:

Լուծելով Եգիպտոսի կարգավիճակի հարցը ի նպաստ Եգիպտոսի, Մուհամմադ Ալին ձեռնամուխ եղավ պետական ապարատի վերակառուցմանը, ավելի ճիշտ նրա ստեղծմանը, քանի որ այն, ինչ նա ժառանգեց մամլուքներից, հազիվ թե ժամանակակից հասկացողությամբ հնարավոր լիներ անվանել պետական կառավարման ապարատ: Դա մամլուքների վարչակարգն էր, որի հիմնական խնդիրը մամլուք բեյերի և տեղական զանազան մակարդակի կառավարիչների կամայականությունների ապահովումը, ֆելլահներին, բեդվիններին և արհեստավորներին ստրկական վիճակում պահելը, անպատիժ կերպով բնակչությանը բռնությունների և չարչարանքների ենթարկելը, կողոպտելը և այլ անօրինականություններ կատարելն էր: Դա ոչ թե կառավարման վարչակարգ էր նրա ընդունված հասկացողությամբ, այլ յուրատեսակ պատժիչ ապարատ:

Մուհամմադ Ալիի առջև կանգնած էր մամլուքյան այդ վարչակարգի և հենց իրենց մամլուքների ոչնչացման խնդիրը: Եվ նա այդ խնդրի լուծումը սկսեց մամլուքների ֆիզիկական ոչնչացումից:

Մենք արդեն նշել ենք մամլուքների հետ Մուհամմադ Ալիի լարված հարաբերությունների, նրանց հետ բազմաթիվ ռազմական բախումների և նրանց նկատմամբ տարած հաղթանակների մասին: Սակայն այդ հաղթանակները վերջնականապես արմատախիլ չէին անում մամլուքներին և նրանց չէին վերացնում որպես կառավարման համակարգ կամ ինստիտուտ: Նրանց արմատներն այնքան խորն էին և Եգիպտոսում նրանց հաստատած վարչակարգն այնպիսին էր, որ այդ համակարգն անընդհատ ինքն իրեն վերարտադրում էր և իրեն վերականգնում իր «իրավունքների» մեջ: Այդ բանը լավ հասկացավ Մուհամմադ Ալին և նա եկավ այն եզրակացության, որ մամլուքներին պարտության մատնելը, թեկուզ և դաժանորեն, հարցի լուծում չէ: Մամլուքների և նրանց ստեղծած վարչակարգի լուծումը Մուհամմադ Ալին տեսնում էր նրանց ֆիզիկական ոչնչացման մեջ: Եվ նա մեծ գաղտնապահությամբ ու խնամքով նախապատրաստվեց իր այդ ծրագրի իրագործմանը: Նա գիտակցում էր, որ բարեփոխումների իր ամբողջ ծրագիրը և Եգիպտոսը անկախ ու հզոր պետության վերածելու իր քաղաքականության ճակատագիրը շատ բանով կախված էր այն բանից, թե որքանով նրան կհաջողվի ասպարեզից վերջնականապես հեռացնել մամլուքներին:

Մուհամմադ Ալին մամլուքների զգոնությունը բթացնելու համար դիմեց խորամանկության և արտաքուստ բարելավեց իր հարաբերությունները մամլուք բեյերի հետ: 1811 թ. նա Կահիրեի միջնաբերդում կազմակերպեց մեծ ընդունելություն ի պատիվ եգիպտական տասհազարանոց բանակի, որը նրա 16–ամյա որդու՝ Թուսունի հրամանատարության ներքո, մեկնելու էր Արաբիա վահաբիների շարժումը ճնշելու համար: Հրավիրված էին Եգիպտոսի բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, զինվորականները, հոգևոր առաջնորդները, այդ թվում 470 մամլուքներ իրենց բեյերի գլխավորությամբ: Առատ հյուրասիրությունից հետո հյուրերին սուրճ մատուցվեց, որից հետո մամլուքները մի նեղ միջանցքով ուղղվեցին դեպի միջնաբերդի գլխավոր դարպասը միջնաբերդից դուրս գալու համար: Հենց այստեղ Մուհամմադ Ալիի զինվորները նախօրոք խնամքով պատրաստված պլանի համաձայն հարձակվեցին մամլուքների վրա և կոտորեցին, ավելի ճիշտ մորթեցին նրանց: Բայց մամլուքների սպանդը դրանով չսահմանափակվեց: Պայմանավորվա-

ծության համաձայն, միջնաբերդում մամլուքների ոչնչացման լուրը ազդանշան ծառայեց ամբողջ Եգիպտոսում մալուքներին սպանելու համար: Մուհամմադ Ալիի զորքերը և մարդիկ այդ խնդիրը կատարեցին հաջողությամբ:

Դրա հետ միասին լուծվեց ևս մի կարևոր խնդիր: Մամլուքների ամբողջ գույքը, ունեցվածքը և հարստությունը բռնագրավվեց և անցավ կուսակալի կամ փոխարքայի, ինչպես սկսեցին Մուհամմադ Ալիին կոչել, տնօրինության տակ:

Չնայած դաժան մեթոդների կիրառմանը, մամլուքների ոչնչացումը դրական երևույթ էր Եգիպտոսի համար: Դա մի այնպիսի չարիք էր, որ վեց դար շարունակ խոշտանգում էր Եգիպտոսը: Առանց նրանց վերացման անհնար էր զարգացման նոր, քաղաքակիրթ հեռանկարների բացումը Եգիպտոսի համար, թեև նրանց վերացումը նույնպես իրագործվեց ոչ քաղաքակիրթ մեթոդներով, ճիշտ այնպես, ինչպես իրենք, մամլուքներն էին վարվում ուրիշների հետ:

Մամլուքների կառավարման վարչակարգը վերացվեց:

Մուհամմադ Ալին իր նոր պետական կառուցվածքը և պետական ապարատը ստեղծելիս հանգամանորեն ուսումնասիրում էր եվրոպական պետությունների՝ Անգլիայի, հատկապես Ֆրանսիայի փորձը, և շատ բան վերցրեց նրանցից, երբեմն ուղղակի ընդօրինակեց նրանց որոշ կառույցները:

Եգիպտոսի պետական կառուցվածքի հիմքում դրվեց ուղղաձիգ և կենտրոնացված պետական կառավարման սկզբունքը: Կառավարման բուրգի վերևում գտնվում էր Եգիպտոսի կառավարիչը, որին թուրքերն անվանում էին փաշա իսկ եվրոպացիները փոխարքա կամ սուլթանի փոխանորդ Եգիպտոսում: Նա օժտված էր անսահմանափակ իշխանությամբ Եգիպտոսի ներքին կառավարման հարցերում: Ճիշտ է, նա ձևականորեն շարունակում էր մնալ սուլթանին ենթակա, բայց դա, ինչպես արդեն նշել ենք, ձևական բնույթ էր կրում և բնավ էլ չէր խանգարում, նրա, որպես Եգիպտոսի անսահմանափակ տիրակալի լիազորությունների կատարմանը:

Բուրգի հաջորդ, միջին սանդղակը գրավում էր Եգիպտոսի կառավարությունը: Դա միանգամայն նորություն էր Եգիպտոսի և ընդհանրապես արաբական երկրների պատմության մեջ, և նոր օղակ Եգիպտոսի կառավարման համակարգում: Նրանում բացակայում էր վարչապետի

պաշտոնը և կառավարությունը գործում էր փոխարքայի անմիջական ղեկավարության ներքո ու նրա հրահանգներով:

Ընդօրինակելով եվրոպական պետական կառուցվածքը, Մուհամմադ Ալին առաջին անգամ ստեղծեց մինիստրություններ (նախարարություններ): Դա նույնպես նորություն էր: Հիմնվեցին ֆինանսների, առևտրի, լուսավորության, ռազմական, ներքին գործերի և արտաքին գործերի նախարարություններ, որը պետք է համարել շատ կարևոր քայլ Եգիպտոսում ժամանակակից պետական կառավարման համակարգ հաստատելու ուղղությամբ:

Մուհամմադ Ալին այս հարցին շատ լուրջ էր մոտենում և գտնում էր, որ կառավարության գործունեության հաջողության գրավականներից մեկը նրա ֆունկցիաների հստակ սահմանումն էր: Ըստ այդմ, հստակ կերպով սահմանվեցին բոլոր նախարարությունների ֆունկցիաները և գործունեության ոլորտները: Հաշվի առնելով Եգիպտոսի առջև կանգնած հիմնախնդիրները, Մուհամմադ Ալիի կողմից որոշվեց, որ ռազմական նախարարությունը զբաղվելու է Եգիպտոսի բանակի՝ ցամաքային և ծովային ուժերի, առևտրի մինիստրությունը՝ Եգիպտոսում նորաստեղծ մենաշնորհների և արտաքին առևտրի, ֆինանսների նախարարությունը՝ հարկերի, լուսավորության նախարարությունը, որը պաշտոնապես կոչվում էր Ժողովրդական լուսավորության նախարարություն, դպրոցների, ինչպես նաև մշակույթի հարցերով: Իսկ ինչ վերաբերում է ներքին և արտաքին գործերի նախարարություններին, ապա նրանք զբաղվում էին, ինչպես հուշում են նրանց անվանումները, առաջինը ներքին կարգ ու կանոնի, իսկ եկրորդը՝ արտաքին հարաբերությունների հարցերով:

Մուհամմադ Ալին չսահմանափակվեց միայն նախարարություններ ստեղծելով և նրանց հիմնական ֆունկցիաները որոշելով: Դարձյալ ընդօրինակելով եվրոպական փորձը, նա նախարարություններում ստեղծեց համապատասխան բաժիններ և վարչություններ, իսկ առանձին դեպքերում նաև կոլեգիաներ, որի շնորհիվ նախարարությունների գործունեությունը դարձավ ավելի կազմակերպված ու ընդգրկուն:

Եգիպտոսի կառավարման բուրգի ներքևի սանդղակը գրավեց տեղական կառավարման համակարգը:

Մամլուքների տիրապետության շրջանում ևս կար տեղական կառավարման ինչ–որ համակարգ: Բայց դա կաշիֆների կամ տեղական վարչական միավորների ղեկավարների տիրույթն էր, որի շրջանակնե-

ռում նրանք, մանավանդ եթե պատկանում էին ազդեցիկ մամլուքյան որևէ կլանի, լրիվ ազատ էին վերահսկողությունից և գործում էին ըստ իրենց հայեցողության:

Մուհամմադ Ալին վերացրեց այդ համակարգը: Նա հասկանում էր, որ դրա համար անհրաժեշտ էր Եգիպտոսի նոր տարածքային–վարչական բաժանում, որը հնարավորություն կտար վերջնականապես վերացնել մամլուքների հենարանները նահանգներում: Նա Եգիպտոսը բաժանեց յոթ նահանգների, որոնք հետայսու կոչվեցին մուդիրիյաներ: Նրանց գլխավորում էին մուդիրները, որոնց նշանակում էր Եգիպտոսի փոխարքան: Մուդիրը անմիջականորեն ենթարկվում էր նրան և կառավարությանը:

Մուդիրն օգտվում էին բավականին լայն լիազորություններով: Նա տվյալ մուդիրիյայի ընդհանուր ղեկավարն էր, որը պատասխանատու էր հարկերի հավաքման համար, նրա հսկողության ներքո էին գտնվում պետական մանուֆակտուրաների կառավարումը և նրանց գործունեության ապահովումը: Մուդիրը շատ անելիքներ ուներ նաև գյուղատնտեսության բնագավառում: Նա պարտավոր էր հետևել ոռոգման համակարգին, ժամանակին գյուղատնտեսական աշխատանքները սկսելուն և ավարտելուն, ջրանցքները և ճանապարհները կարգին վիճակում պահելուն և բազում այլ հարցերի:

Նահանգները բաժանվում էին ավելի փոքր տարածքային միավորների, որոնք կոչվում էին մարքազներ (բառացի՝ կենտրոն), և նահիյաների: Մարքազները ղեկավարում էին մա'մուրները, իսկ նահիյաները՝ նազիրները:

Այսպիսին էր Մուհամմադ Ալիի կողմից Եգիպտոսում հաստատված նոր պետական կառավարման համակարգը:

Այդ համակարգն ուներ նս մեկ կարևոր սկզբունք: Նա խարսխված էր ենթակայության սկզբունքի վրա, որը շատ խստորեն էր կիրառվում: Մուհամմադ Ալին գտնում էր, որ այդ համակարգը կարող է արդյունավետ գործել միայն ենթակայության վրա հիմնված պետական կարգապահության դեպքում: Այդ պատճառով էլ այդ հարցում նա անողոքության աստիճանի խստապահանջ էր:

Սակայն Մուհամմադ Ալին հասկանում էր, որ եգիպտացիներից շատերը չունեին նախարարություններ ղեկավարելու և պետական այլ բարձր պաշտոններում 'աշխատելու համապատասխան փորձառություն: Այդ պատճառով էլ նա համապատասխան մասնագետներ էր հրա-

վիրում եվրոպական զանազան երկրներից, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում ֆրանսիացիները: Նրանք իրենց փորձն էին հաղորդում եգիպտացի մասնագետներին և սովորեցնում նրանց պետություն կառավարելու արվեստին:

Այս համակարգը, անշուշտ, ծառայում էր Եգիպտոսը ժամանակակից պետության վերածելու Մուհամմադ Ալիի նպատակներին: Սակայն նրա կողմից ստեղծված համակարգն ուներ նաև մի կարևոր յուրահատկություն:

Մուհամմադ Ալիի ստեղծած նախարարությունների մեջ էին նաև արտաքին գործերի և զինվորական նախարարությունները: Այդպիսի նախարարություններ սովորաբար կարող են ունենալ անկախ պետությունները: Նույնիսկ ֆեդերալ հիմունքների վրա կառուցված երկրներում, որոնց կազմում գոյություն ունեն ինքնավար պետական միավորներ, և որոնք սովորաբար ունենում են լուսավորության, կրթության, մշակույթի, ֆինանսների, տնտեսության և այլ նախարարություններ, զրկված են զինվորական և արտաքին գործերի նախարարություններ ունենալու իրավունքից: Այդ իրավունքը պատկանում է միայն կայսրությանը կամ ֆեդերալ պետությանը: Դա նրանց առանձնաշնորհությունն է՝ պրեռոգատիվը: Տվյալ դեպքում դա Օսմանյան կայսրության պրեռոգատիվն էր, որը Մուհամմադ Ալին գիտակցաբար խախտել էր: Իր այդ քայլով նա ցանկանում էր ընդգծել, որ նա անկախ է ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության և ռազմական հարցերում: Դա, անշուշտ, մարտահրավեր էր Բարձր Դռանը, որը լարվածություն ստեղծելով Կահիրեի և Ստամբուլի միջև, վաղ, թե ուշ, պետք է բախման հանգեցներ նրանց:

Այսպիսով, Մուհամմադ Ալին վերցնելով ժամանակակից եվրոպական պետական կառուցվածքի մոդելը, և որոշ փոփոխությունների ենթարկելով, այդ մոդելը տեղափոխեց արևելյան, եգիպտական իրականություն, պահպանելով կառավարման արևելյան մեթոդները, մանավանդ բուրգի անենավերին սանդղակում:

Չնայած այդ հանգամանքին, մամլուքյան վարչական համակարգի վերացումը և նոր, եվրոպական գաղափարների վրա հիմնված պետական կառավարման սկզբունքների ներդրումը Եգիպտոսում, պետք է համարել Մուհամմադ Ալիի պատմական անանց ծառայություններից մեկը:

2. Բարենորոգումները հողային կամ ագրարային հարաբերությունների ոլորտում

Մուհամմադ Ալիի բարենորոգումների շարքում արտակարգ նշանակություն ունեին այս բնագավառում իրականացված բարեփոխումները:

Տարբեր ժողովուրդների պատմական փորձը վկայում է, որ բարենորոգումներ իրականացնել այնպիսի բնագավառում, ինչպիսին ագրարային հարաբերություններն են, դժվարագույն խնդիրներից մեկն է, որը կապված է մեծ վտանգների հետ: Քիչ չեն եղել այն դեպքերը, երբ այդ բարենորոգումները ձախողվել են, իսկ նրանց հեղինակները կամ նախաձեռնողները կորցրել են իրենց դիրքերը, ստիպված են եղել հրաժեշտ տալ իրենց քաղաքական և պետական գործունեությանը:

Մուհամմադ Ալին հստակ պատկերացնում էր իր առջև կանգնած այդ խնդրի ոչ միայն բարդությունը, այլև վտանգավորությունը: Բարեփոխություններն ագրարային հարաբերություններում շոշափում էին Եգիպտոսի բոլոր այն խավերի շահերը, որոնք ներգրավված էին այդ ոլորտում, սկսած հողագործ ֆելլահներից ու քոչվոր բեդվիններից, վերջացրած ցեղապետերով ու շեյխերով, մուլթազիմներով ու մամլուք հողատերերով: Իսկ եթե հաշվի առնենք, որ Եգիպտոսը ագրարային երկիր էր և բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված էր ագրարային ոլորտում, ապա հասկանալի կդառնա խնդրի բարդության աստիճանը և վտանգավորության ծավալները:

Չնայած դրան, Մուհամմադ Ալին չէր կարող ընկրկել դժվարությունների ու վտանգների առջև: Դա կնշանակեր խաչ քաշել Եգիպտոսը ուժեղ, ժամանակակից և առաջադեմ պետության վերածելու իր ամբողջ քաղաքականության վրա, մի բան, որը նա չէր կարող թույլ տալ:

Ու նա ձեռնամուխ եղավ բարենորոգումների իրագործմանը ագրարային ոլորտում: Նա դա իրականացրեց աստիճանաբար, 1808–1815 թվականների ընթացքում:

Մուհամմադ Ալին, ինչպես միշտ, այս անգամ ևս գործեց որոշակի զգուշավորությամբ, որը, սակայն, չէր նշանակում վճռականության պակաս: Նա սկսեց նրանից, որ 1808 թ. բռնագրավեց այն մուլթազիմների կալվածքները, որոնք հարկեր չէին ուզում վճարել և չէին վճարել: Այլ կերպ ասած, նա իր հարվածն սկզբում ուղղեց ոչ թե մուլթազիմների ամբողջ հզոր խավի դեմ, այլ միմիայն նրա այն հատվածի դեմ, որն իրավա-

կան առումով խախտում էր Օսմանյան ամբողջ կայսրությունում հաստատված օրենքները, որոնք գործում էին նաև Եգիպտոսում: Այլ կերպ ասած, նրանք դիտվում էին որպես օրինազանցներ և ծնականորեն չէին կարող որևէ գանգատ ներկայացնել Մուհամմադ Ալիին կամ Բարձր Դռանը: Եվ այդ մեթոդն աշխատեց: Նրանք ոչինչ չկարողացան անել և ստիպված համակերպվեցին, սակայն իրենց սրտում պահելով ոխ և ատելություն կուսակալի նկատմամբ:

Հաջորդ տարի Մուհամմադ Ալին նս մեկ կարևոր քայլ կատարեց: Նա կիսով չափ պակասեցրեց այդ նույն մուլթազիմների ֆայզը: Իսկ ի՞նչ բան էր դա: Ֆայզը կամ արաբերեն մալ ալ–հուրրը, մուլթազիմների կողմից գյուղացիներից գանձվող դրամական ռենտան էր: Կիսով չափ կրճատելով ֆայզը, Մուհամմադ Ալին իր այդ քայլով միանգամից երկու նապաստակ խփեց: Մի կողմից նա թուլացրեց մուլթազիմների տնտեսական հզորությունը, իսկ մյուս կողմից նա որոշ չափով թեթևացրեց գյուղացիների բեռը, ինչպես նաև մեծացրեց պետական գանձարան մուտք գործող հասույթները:

1812 թվականն ականատես եղավ ագրարային ոլորտում Մուհամմադ Ալիի քաղաքականության նոր հաջողությունների, որը ցնցեց իր համարձակությամբ: Մամլուքները օրինականորեն կամ անօրինական ճանապարհներով, զանազան պատրվակներով ու ձևերով, իրենց ձեռքում էին կենտրոնացրել հսկայական կալվածքներ: Մուհամմադ Ալին մեկ հարվածով բռնագրավեց նրանց պատկանող և նրանց տնօրինության տակ գտնվող բոլոր այդ կալվածքները: Դրա հետևանքով մամլուքները ծանր ու անուղղելի հարված ստացան տնտեսական ոլորտում, որից հետո նրանք այդպես էլ ուշքի չկարողացան գալ:

Նման հաջողություններից հետո, Մուհամմադ Ալիին այլևս ոչինչ չէր կրող խանգարել ընդհանրապես մամլուքներին զրկել հողերից և վերացնել իլթիզամի համակարգը, որը նա իրականացրեց 1814 թ.:

Մուլթազիմների ձեռքում մնացին միայն այսպես կոչված ուսիյա հողերը: Դրանք նախկին համայնքային հողերն էին, որոնք ժամանակի ընթացքում յուրացվել էին կալվածատերերի կողմից:

Իսկ ինչպե՞ս դասավորվեց մուլթազիմներին պատկանող հողերի վրա աշխատող ֆելլահների հետագա ճակատագիրը:

Ֆելլահները, հասկանալի է, ազատվեցին մուլթազիմներին հարկեր վճարելու պարտականությունից, բայց ընդհանրապես չազատվեցին հարկեր վճարելուց: Նրանք շարունակում էին աշխատել նույն հո-

ղակտորի վրա, որն այժմ դարձել էր պետական սեփականություն: Ուստի նա այժմ հարկը վճարում էր պետությանը:

Մյուս կարևոր փոփոխությունը կայանում էր նրանում, որ ֆելլահների կախվածությունը մուլթազիմներից նույնպես վերացվեց: Այդ առումով նրանք դարձան ազատ:

Եվ, վերջապես, Մուհամմադ Ալին համայնական հողերը բաժանեց գյուղացիներին և բեդվիններին:

Այս ամենը, հարկավ, որոշ չափով բարելավեց գյուղացու վիճակը:

Բայց դա չէր նշանակում, որ Եգիպտոսում վերացվեցին ֆեոդալական հարաբերությունները: Ֆեոդալական արտադրաեղանակը պահպանվեց, միայն թե, եթե ֆելլահը նախկինում աշխատում էր առանձին ֆեոդալին պատկանող հողաբաժնի վրա և ռենտան հարկի ձևով նրան վճարում, ապա այժմ, մամլուքներին և մուլթազիմներին պատկանող հողերի պետականացումից հետո, այդ նույն հողերի վրա աշխատող գյուղացին հարկը վճարում էր պետությանը: Պետությունը նոր պայմաններում հանդես էր գալիս հավաքական ֆեոդալի դերում:

Մուհամմադ Ալին փոփոխություններ մտցրեց նաև վակուֆային հողերի պատկանելության հարցում: Այդ նույն ժամանակաշրջանում, 1809–1815 թթ., նա բռնագրավեց վակուֆային հողերը, որոնք դարձրեց պետականապատկան: Մուսուլման հոգևորականության դժգոհությունը կանխելու համար, Մուհամմադ Ալիի որոշմամբ անհամար մզկիթների և մուսուլման հոգևորականության պահպանման ծախսերը եգիպտական պետությունը վերցրեց իր վրա: Սակայն դա չգոհացրեց հոգևորականությանը: Ամենայն հավանականությամբ վակուֆային հողերի պետականացումից հետո նրանց եկամուտները պակասել էին: Բացի դրանից, պետականացումից հետո նրանց կախվածությունը պետությունից մեծանում էր: Ահա այս հողի վրա որոշակի դժգոհություն առաջացավ հոգևորականության մոտ, ուղղված Մուհամմադ Ալիի դեմ: Նրանք հիշեցրին նրան, որ նա իշխանության գլուխ էր եկել իրենց շնորհիվ և սպառնացին, որ կարող են նրան տապալել: Մուհամմադ Ալին չէր սիրում նման անհնազանդության դրսևորումներ և խիստ պատժեց հոգևորականությանը, իսկ նրա առավել աչքի ընկնող ղեկավարներին աքսորեց Կահիրեից:

Մուհամմադ Ալիի բարեփոխումները ագրարային բնագավառում առաջացրին նաև մամլուքների դժգոհությունը, որոնք 1809–1810 թթ. երկու անգամ ապստամբեցին: Մուհամմադ Ալին երկու անգամ էլ ճզմեց

նրանց ապստամբությունը: Հենց նրանց այս ելույթները Մուհամմադ Ալիին հանգեցրին մամլուքներին ամբողջապես ոչնչացնելու գաղափարին, որը նա, ինչպես արդեն նշել ենք, փայլուն կերպով իրագործեց 1811 թ.:

Հողօգտագործման ձևերի ու պատկանելության փոփոխությունը և մամլուքների դասի վերացումը Մուհամմադ Ալիի ձեռք բերած ամենակարևոր փոփոխություններն էին ագրարային ոլորտում: Նա դրանով վերացրեց իրեն թշնամի սոցիալական խավի գոյությունը: Քանի դեռ կար այդ խավը և պահպանվում էր նրա տնտեսական հենարանը՝ հողօգտագործման նախկին ձևերը, Մուհամմադ Ալին ապահովագրված չէր իր դեմ ուղղված թշնամական ելույթներից, խռովություններից և ապստամբություններից:

Այդ խավի վերացումը և նրան պատկանող կալվածքների պետականացումը, Մուհամմադ Ալիի առջև լայն հնարավորություն բացեցին լուծելու իր համար կենսական նշանակություն ունեցող մի հարց ևս: Խոսքը սեփական սոցիալական հենարան ստեղծելու մասին է, որը պիտի ամրապնդեր նրա դիրքերը երկրի ներսում, ստեղծեր կայունություն և ապահովություն իր իշխանության համար: Այս խնդրի լուծումը նույնպես մտնում էր ագրարային բարեփոխումների շրջանակների մեջ:

Մուհամմադ Ալին դրա իրականացմանը ձեռնամուխ եղավ 1820–ական թվականների վերջերին և 1830–ական թվականների սկզբներին: Դրա համար կային բոլոր նախադրյալները՝ և՛ հողային տարածքներ, և՛ համապատասխան մարդիկ:

Հողային տարածքները, որոնք ենթակա էին նոր վերաբաժանման, դրանք բռնագրավված և պետականացված հողերն էին, որոնց մասին նշեցինք վերևում:

Իսկ ինչ վերաբերում է մարդկանց խմբերին, որոնցից պետք է ձևավորվեր Մուհամմադ Ալիի նոր սոցիալական հենարանը և որը պետք է հավատարմությամբ ծառայեր փոխարքային, ապա դա բաժանվում էր մի քանի կատեգորիայի:

Առաջին կատեգորիայի մեջ մտնում էին նրա ազգականները, որոնք լավ էին հասկանում, որ նրանց ոչ միայն նյութական բարեկեցությունը և հասարակական դիրքը, այլև կյանքը կախված է Մուհամմադ Ալիի որպես Եգիպտոսի տիրակալի երկարակեցությունից:

Երկրորդ կատեգորիան կազմում էին Մուհամմադ Ալիի մերձավորները, նրանք, ովքեր գրավում էին բարձր պաշտոններ, կազմում էին նրա

արքունիքի կորիզը և մտնում էին Եգիպտոսի բարձրագույն ղեկավարության կազմի մեջ:

Եվ, վերջապես, երրորդ կատեգորիան կազմված էր զինվորական սպայական վերնախավից: Դրանք առաջին հերթին իր ալբանական զորախմբի, ապա նաև չերքեզական, քրդական և թուրքական զորախմբերի զորահրամանատարներն էին:

Մուհամմադ Ալին սկսեց տարբեր չափերի հողակտորներ բաժանել նրանց: Տվյալներ կան, որ նրանց բաժանվել է մի քանի հարյուր հազար ֆեդդան: (1 ֆեդդանը հավասար է 0,42 հա): Բայց նրանք չստացան դատարկ հողեր: Այդ հողերի վրա աշխատում էին հարյուր հազարավոր ֆելլահներ, որոնք անցան նոր հողատերերին:

Այսպիսով, Մուհամմադ Ալին ագրարային հարաբերություններում կատարած բարեփոխումների արդյունքում, կարողացավ վերացնել իլթիզամի համակարգը և ֆեոդալիզմի իր դարն ապրած եղանակները, իրեն թշնամի մուլթազիմների և մամլուքների դասը, և նորություններ մտցնելով ֆեոդալական հողօգտագործման ու եղանակների մեջ, ստեղծել իր համար նոր և հուսալի սոցիալական հենարան:

Ագրարային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները նպաստեցին գյուղատնտեսության զարգացմանը: Մեծ թափ ստացան ոռոգման աշխատանքները, հին ջրանցքների վերականգնումն ու վերանորոգումը, նոր ջրանցքների ու ջրամբարների կառուցումը, անգամ Նեղոսի վրա կառուցվեց ջրամբարտակ: Դրա արդյունքում նշանակալիորեն ավելացան ջրովի հողերը և մոտ 50 տոկոսով ընդարձակվեցին մշակելի հողատարածքները, մի կողմից, և ավելացավ բերքատվությունը, մյուս կողմից:

Մուհամմադ Ալին հատուկ ուշադրություն էր դարձնում այն գյուղատնտեսական կուլտուրաների մշակմանը, որոնք արտահանման մեծ պահանջարկ և հեռանկարներ ունեին: Դրանց թվին էին պատկանում բրինձը, բամբակը և այլն: Նա բամբակի մշակումը Եգիպտոս ներմուծեց Սուդանից: Եգիպտոսում բամբակը մշակվում էր Նեղոսի դելտայում: Մուհամմադ Ալիի բարենորոգումները պահանջում էին ֆինանսական մեծ ծախսեր, հատկապես արդյունաբերության զարգացման և բանակի կարիքները բավարարելու համար: Գյուղատնտեսական մթերքների արտահանումից ստացված եկամուտների զգալի մասը գնում էր այդ պահանջները բավարարելու համար:

Մի կարևոր դիտողություն ևս: Թեև եգիպտացի ֆելլահները ագրարային բարեփոխումների շնորհիվ ազատվեցին մուկթազիմներից և մամլուքներից, վերջ տրվեց նրանց կախվածությանը ֆելլահների համար ատելի այդ երկու միմյանց հարազատ սոցիալական խմբերից, այդուհանդերձ, միամտություն կլիներ ենթադրել, թե գյուղացիներն ընդհանրապես դարձան ազատներ: Նրանք դարձյալ մնացին հողակտորին ամրագրված, միայն թե այս անգամ այն հողակտորին, որը պատկանում էր պետությանը, իսկ ապա նաև այն հողակտորներին, որ փոխարքան բաժանել էր վերևում մեր կողմից նշված իր մերձավորների երեք կատեգորիաներին: Նրանք այժմ նույն հարկերը վճարում էին պետությանը կամ նորաթուխ ֆեոդալներին: Բացի դրանից, ֆելլահները տարեկան երկու ամիս պարտավոր էին ձրիաբար աշխատել անձամբ Մուհամմադ Ալիին պատկանող կալվածքներում: Քանի որ Մուհամմադ Ալին առաջնակարգ նշանակություն էր տալիս իր բանակին և ոչինչ չէր խնայում նրա համար և շահագրգռված էր նրա թվական կազմի մեծացման մեջ, նրա հրամանով գյուղացիներին նույնպես սկսեցին պարտադիր բանակ զորակոչել, որտեղ ծառայության ժամկետը բավականին երկար էր:

Գյուղացիների վիճակի վատթարացման վրա մեծապես ազդեց պետական որոշումը, որը պարտադրում էր նրանց իրենց ստացած բերքի և գյուղատնտեսական մթերքների մեծ մասը հանձնել պետական գնորդներին: Այսինքն ֆելլահը զրկվեց իր բերքն ազատորեն վաճառելու իրավունքից:

Դա խոր դժգոհություն առաջացրեց ֆելլահների շրջանում, որոնք 1820–ական թվականներին, հաճախ միավորված քաղաքային բնակչության, մասնավորապես արհեստավորների հետ, որոնք նույնպես գտնվում էին ծանր պայմաններում, բազմիցս ապստամբել են իշխանությունների դեմ: Դա բողոքի արտահայտություններից մեկն էր, որի դրսևորման այդ ձևին, սակայն, բոլորը չէին, որ պատրաստ էին մասնակցել: Կար նաև բողոքի այլ ձև՝ գյուղացիների փախուստը Եգիպտոսից արաբական մյուս երկրներ, մասնավորապես Սիրիա և Սուդան:

Մուհամմադ Ալին ճնշում էր գյուղացիական ելույթները, իսկ փախածներին ստիպում էր վերադարձնել Եգիպտոս: Եվ քանի որ Սիրիան ու Սուդանը չէին հանդգնում մերժել Մուհամմադ Ալիին, ապա փախստական եգիպտացի ֆելլահների մեծ մասը վերադարձվում էր Եգիպտոս, որտեղ նրանք ենթարկվում էին դաժան պատիժների:

3. Բարեփոխումներ զինվորական բնագավառում

Եգիպտոսը հզոր և անկախ պետություն վերածելու Մուհամմադ Ալիի ծրագրի ամենակարևոր օղակներից մեկը բանակային գործի կարգավորումն էր, որը հնարավոր էր միայն այդ բնագավառում բարեփոխումներ իրականացնելու ուղիով: Ընդ որում, Մուհամմադ Ալիին այդ բարեփոխումները պետք էին ոչ միայն Եգիպտոսը ուժեղացնելու և Ստամբուլից կախվածությունը թուլացնելու, այլև նվաճողական քաղաքականության համար: Նա հասկանում էր, որ եթե ուզում է իր երկիրը վերածել ուժեղ պետության, որի հետ հաշվի կնստեն այլ երկրներ, ապա դրա համար պետք է դուրս գալ եգիպտական շրջանակներից և դառնալ տարածաշրջանային ազդեցիկ գործոն:

Մուհամմադ Ալին զինվորական բարեփոխումների մասին թեև մտածում էր իշխանության գլուխ գալու առաջին օրվանից, սակայն նա անմիջապես չսկսեց դրանից, համենայն դեպս դրանք լայն թափ չստացան: Դա պահանջում էր համապատասխան նախապատրաստական աշխատանքներ տանել և երկիրը նյութապես ու բարոյապես պատրաստել դրան: Այդ գործին նպաստեցին երեք կարևոր հանգամանք:

Առաջին, պետական կառավարման բարեփոխումը, որի շնորհիվ ստեղծվեց զինվորական նախարարություն: Նա դարձավ այն կառույցը, որը հատուկ զբաղվում էր եգիպտական ռազմական ուժերի ստեղծման և զարգացման հարցերով:

Երկրորդ, բարեփոխումները ագրարային հարաբերություններում, որը համապատասխան նյութական հիմքեր ստեղծեց շատ հարցերում եգիպտական բանակի պահանջները բավարարելու և բանակի թվաքանակը մեծացնելու համար:

Երրորդ, մամլուքների վերացումը, քանի որ նրանք իրենց գոյությամբ, եգիպտոսում գրաված իրենց դիրքերով և Մուհամմադ Ալիի դեմ ուղղված ելույթներով լուրջ խոչընդոտ էին հանդիսանում զինվորական բարեփոխումների իրականացման ճանապարհին:

Իրադրությունը կտրուկ փոխվեց հօգուտ Մուհամմադ Ալիի մամլուքներին ֆիզիկապես ոչնչացնելուց և արմատախիլ անելուց, պետական ապարատում և ագրարային հարաբերություններում բարեփոխումներ իրականացնելուց հետո: Այնուհետև զինվորական բարեփոխումները շատ արագ տեմպերով ընթացան:

Մուհամմադ Ալին մշակեց զինվորական բարեփոխումների իր հայեցակարգը: Արդյո՞ք դա պետք է լիներ օտարներից, ոչ եգիպտացիներից կազմված բանակ, թե՞ ազգային եգիպտական բանակ: Այդ հարցն ուներ սկզբունքային, կարելի է ասել առանցքային նշանակություն, քանի որ եգիպտացիներին բանակ չէին վերցնում: Նրանց չէին վստահում և նրանց վրա վերնից, նույնիսկ արհամարհականորեն էին նայում, գտնելով, որ նրանցից մարտունակ բանակ չի ստացվի: Եգիպտացիների մասին այս տեսակետի հեղինակները և տարածողները մամլուքները և օսմանցիներն էին: Մուհամմադ Ալին հավանաբար իր իշխանության ամենասկզբնական փուլում նույնպես ինչ–որ չափով տուրք է տվել այդ տեսակետին: Դրա օգտին է խոսում այն հանգամանքը, որ մինչև բարեփոխումներին անցնելը, նրա ռազմական ուժերի մեջ բացակայում էին եգիպտացիները, նրանց բանակ չէին վերցնում: Եգիպտական բանակը հիմնականում բաղկացած էին Մուհամմադ Ալիին հարազատ ալբանացիների զորախմբերից, ինչպես նաև չերքեզական, քրդական և մասամբ նաև թուրքական զորաջոկատներից:

Զինվորական բարեփոխումների բնագավառում Մուհամմադ Ալիի հապաղելու մեջ, բացի առարկայական պայմաններից, կար նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Նա ստիպված էր զգուշություն ցուցաբերել, մանավանդ այն բանից հետո, երբ 1808 թ. գազազած ենիչերիները հոշոտեցին սուլթան Սելիմ III և նրա համախոհ Մուստաֆա Բայրակդարին, որոնք ցանկանում էին Օսմանյան կայսրությունում բարեփոխումներ իրականացնել, այդ թվում և զինվորական բնագավառում: Իսկ որ Եգիպտոսում նույնպես կային ուժեր, որոնք թուրքական ենիչերիների նման պատրաստ էին և կարող էին նույն կերպ վարվել իր հետ, դա շատ լավ հայտնի էր Մուհամմադ Ալիին: Մենք նկատի ունենք մամլուքներին: Ահա թե ինչու նա նախահարձակ եղավ մամլուքների հարցում, և 1811 թ. չսպասելով, որ նրանք իրեն վերացնեն, Կահիրեի միջնաբերդում ինքը կոտորեց նրանց:

Մուհամմադ Ալին, որպես խելացի մարդ, հասկանում էր, որ այդպես շարունակել անհնար է: Եկել էին նոր ժամանակներ և Եգիպտոսի առջև նոր ու բարդ խնդիրներ էին ծառացել, որոնք անհնար էր լուծել օտար, ոչ բնիկներից կազմված բանակով: Ու նա ընդունեց իր դարաշրջանի համար համարձակ որոշում՝ ստեղծել ազգային, եգիպտական բանակ: Եվ այս սկզբունքը դրվեց նրա զինվորական բարեփոխումների հայեցակարգի հիմքում: Եվ նա չսխալվեց: Եգիպտացիներից ստացվեց

հիանալի զինվոր և Մուհամմադ Ալին ստեղծեց մարտունակ բանակ, որը ոչ միայն ի վիճակի էր ապահովել Եգիպտոսի անվտանգությունը և տարածքային ամբողջականությունը, այլև նրա հրամանատարությամբ վարել հաղթական պատերազմներ Եգիպտոսի տարածքներից դուրս:

Մուհամմադ Ալին նախապաշարմունքներց ազատ անձնավորություն էր, որը նա դրսևորեց նաև իր բանակի ստեղծման պարագայում: Չգտելով ստեղծել արդիական բանակ, նա հասկանում էր, որ կազմակերպական առումով ինքն իր սեփական ուժերով դա չի կարող անել: Եգիպտոսում չկային համապատասխան մասնագետներ: Ուստի նա իր հայացքը կրկին ուղղեց Եվրոպայի կողմը: Մենք նկատի ունենք երկու պարագա:

Առաջին, նա ընդօրինակեց եվրոպական բանակների կառուցվածքային սկզբունքները և զորատեսակները, և երկրորդ, հրավիրեց եվրոպական ռազմական մասնագետներ եգիպտական բանակը վերակառուցելու և վարժեցնելու համար:

Մասնագետների հարցում նա առաջնությունը տվեց ֆրանսիական զինվորական մասնագետներին: Եվ դա հասկանալի է, քանի որ այդ ժամանակ բոլորը, այդ թվում և Մուհամմադ Ալին, գտնվում էին Նապոլեոնի փայլուն հաղթանակների տպավորության տակ, որը միաժամանակ նրա ռազմական արվեստի գերազանցության անհերքելի վկայությունն էր: Բացի ֆրանսիացիներից, իհարկե, Մուհամմադ Ալին հրավիրեց նաև եվրոպական այլ ռազմական մասնագետներ, ինչպես իտալացիները:

Եգիպտական նոր բանակի կայացման գործում մեծ երախտիք ունի ֆրանսիական բանակի գնդապետ Սեը: Նա շատ սիրեց այդ երկիրը, նույնիսկ այն աստիճան, որ կրոնափոխ եղավ և ընդունեց իսլամ, համապատասխանաբար հրաժարվելով իր ֆրանսիական Սև անունից, նրան գերադասելով արաբական Սուլեյման անունը՝ փաշայի մակդիրով: Նա դարձավ Մուհամմադ Ալիի մերձավորագույններից մեկը, որոնք մոտ էին ընտանիքներով, նույնիսկ այն աստիճանի, որ նրանց ժառանգների միջև եղան ամուսնություններ:

Այս տաղանդավոր գնդապետը փայլուն կերպով կարողացավ իրականացնել եգիպտական բանակի վերակառուցումը եվրոպական սկզբունքների հիման վրա և այն դարձնել արդիական բանակ: Նրա հիմքը կազմում էր հետևակը: Դրա հետ միասին ստեղծվեցին նաև այլ զո-

ռատեսակներ՝ հեծելազորային և հրետանային: Կանոնավոր զորամիավորների շարքում ստեղծվեց գվարդիա, որը միավորում էր 14 գնդեր:

Եգիպտական բանակը, ինչպես վայել է ամեն մի լուրջ բանակի, ունեցավ իր զինվորական Կանոնադրությունը: Սակայն Մուհամմադ Ալին չստեղծեց նորը, այլ վերցրեց ֆրանսիական բանակի զինվորական Կանոնադրությունը և ֆրանսերենից թարգմանելով արաբերեն, նույնությամբ օգտագործեց իր բանակի համար:

Եգիպտական բանակի կողմից օգտագործող զենքի որոշ տեսակներ արտադրվում էին Եգիպտոսում, սակայն մեծ մասը, իսկ հրետանին ամբողջությամբ, ներմուծվում էր Եվրոպայից:

Բացի գնդապետ Սև–Սուլեյման փաշայից, եգիպտական բանակի արդիականացման և հզորացման գործում նշանակալի դեր է խաղացել մեկ այլ ֆրանսիացի զինվորական մասնագետ, որը ծովային ինժեներ էր և որի անվան հետ է կապված եգիպտական ազգային նավատորմի ստեղծումը որպես եգիպտական ռազմական ուժերի նոր զորատեսակ: Մուհամմադ Ալին սկզբում ռազմական նավեր գնում էր Մարսելի, Լիվորնոյի և Տրիեստի նավաշինական գործարաններից, որոնք համարվում էին լավագույնները Եվրոպայում: Դրա հետ միասին նա ձեռնամուխ եղավ նավերի արտադրությանը Եգիպտոսում, նավաշինական գործարան հիմնելով Միջերկրականի ափին գտնվող Ալեքսանդրիա նավահանգստային քաղաքում: Եգիպտացիները չունեին համապատասխան փորձ արդիական ռազմանավեր կառուցելու բնագավառում, ուստի սկզբնական շրջանում Ալեքսանդրիայի նավաշինական գործարանում հիմնականում աշխատում էին եվրոպական երկրներից բերած մասնագետները և բանվորները:

Սակայն շատ չանցած, եգիպտացիներն այնպես հմտացան այդ գործում, որ նրանք ազատորեն փոխարինեցին եվրոպացիներին, որից աշխատանքները բնավ չտուժեցին:

Նավերի արտադրության կազմակերպման հետ միասին, Մուհամմադ Ալին մեծ ուշադրություն էր դարձնում եգիպտական նավաստիներ պատրաստելուն, դարձյալ օգնականներ ունենալով եվրոպական մասնագետներին: Այս գործում ևս եգիպտացիները մեծ հմտություն ցուցաբերեցին:

Այսպիսով, եգիպտական վերակառուցված և արդիականացված բանակը բաղկացած էր հետևակից, հեծելազորից, գվարդիայից, հրե-

տանային զորամիավորումից և նավատորմից: Նրա թվաքանակը հասնում էր մոտավորապես 200 հազարի:

Այստեղ խոսքը եգիպտական կանոնավոր բանակի մասին է: Բացի դրանից կար նաև ոչ կանոնավոր զորաբանակ, որի թիվը կազմում էր մոտ 40 հազար: Այս վերջինն ավելի շատ ներքին օգտագործման համար էր:

Այսպիսի բազմազան զորատեսակ ունեցող և մեծաթիվ բանակի ստեղծումը հրամայական դարձրեց ազգային սպայական կազմի ստեղծումը: Հնարավոր չէր նման բանակը մշտապես թողնել օտար զինվորական մասնագետների հրամանատարության ներքո: Այդ պատճառով էլ Մուհամմադ Ալին զարկ տվեց ազգային միջին սպայական կազմի պատրաստմանը, դա համարելով իր զինվորական բարեփոխումների ամենաէական բաղկացուցիչներից մեկը, որից զգալիորեն կախված էր իսկապես ազգային մարտունակ բանակի ստեղծումը:

Նա այդ հարցի լուծման երկու ուղի գտավ: Առաջին ուղին բուն Եգիպտոսում տարբեր պրոֆիլի ռազմական դպրոցների հիմնումն էր: 1820–ական թվականներին Մուհամմադ Ալին սպայական կազմի պատրաստման համար հետևակային դպրոց բացեց Դամիյաթում, հրետանային՝ Թուրում, որը գտնվում էր Կահիրեի մերձակայքում, հեծելազորային՝ Գիզայում: Այնուհետև նա կատարեց հաջորդ քայլը: Եգիպտոսում բացվեց եգիպտական ռազմական ուժերի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան, որը պատրաստում էր ավելի բարձր աստիճանի սպաներ, քան թե վերևում նշված ռազմական դպրոցները:

Սպայական կադրեր և ընդհանրապես մասնագետներ պատրաստելու Մուհամմադ Ալիի ընտրած երկրորդ ուղին եվրոպական երկրների ուսումնական հաստատություններ եգիպտացիներին ուղարկելն էր: 1813–1849 թթ., այսինքն բարեփոխումների համարյա սկզբնական փուլից մինչև Մուհամմադ Ալիի մահը, Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա և Ավստրիա է ուղարկվել 311 հազար եգիպտացի, ուսանելու և մասնագետ դառնալու համար: Նրանք հիմնականում ուսումնասիրում էին ռազմական գործը, նավաշինությունը, մաթեմատիկա, երկրաչափություն, ինժեներություն, բժշկություն, դեղագործություն, զանազան արհեստներ, արվեստներ և այլ առարկաներ: Նրանց ուղարկելու, սովորելու, տեղում բնակվելու և ապրուստի բոլոր ծախսերը հոգում էր պետությունը, որը նշված ժամանակաշրջանում այդ նպատակների համար ծախսել է մոտ 274 հազար ֆունտ ստերլինգ: Մուհամմադ Ալիի կառավարությունն այն-

քան մտահոգ էր իր ուսանողների համար լավագույն պայմաններ ստեղծելու հարցով, որ նա Փարիզում գնել էր մի առանձին շենք իր հարմարություններով, որտեղ բնակվում էին Եգիպտոսից Ֆրանսիա մեկնած ուսանողները:

Եվրոպայում լավագույն կրթություն ստացած եգիպտացի ուսանողները, վերադառնալով հայրենիք, իրենց ողջ գիտելիքները ծառայեցրին Եգիպտոսի զարգացմանն ու առաջընթացին ռազմական բնագավառում, տնտեսության, լուսավորության և մշակույթի ասպարեզներում: Իսկ դա մեծ գոհունակություն էր պատճառում նրան ոչ միայն Եգիպտոսի զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու առումով, այլև մարդկայնորեն: Ինչպես նշել ենք, Մուհամմադ Ալին գրագետ անձնավորություն չէր, նա չէր սովորել և ավարտել որևէ դպրոց, թեկուզ տարրական: Նրան նման բախտ չէր վիճակվել: Բայց այդ մարդն արտակարգ հարգանք ուներ կրթության և գիտության նկատմամբ, կրթված և գիտուն մարդկանց ունակությունների և կարողությունների նկատմամբ: Նա ըմբռնում էր այն կարևոր դերը, որ նրանք կարող էին խաղալ իր երազած հզոր Եգիպտոսը ստեղծելու գործում: Ահա այստեղից էլ նրա վճռականությունը եգիպտական ազգային կրթված խավ ստեղծելու գործում, դա համարելով Եգիպտոսի զարգացման և հզորության գրավականներից մեկը:

Սխալ կլիներ Մուհամմադ Ալիի զինվորական բարեփոխումներին մոտենալ միայն ռազմական տեսանկյունից: Իհարկե դա առաջնային էր, սակայն այդ բարեփոխումները միայն դրանով չէին սահմանափակվում:

Զինվորական բարեփոխումները, մոտ 200 հազարանոց ազգային բանակի ստեղծումը իր զորատեսակներով, դրանց զինումը, համապատասխան հանդերձանքով և զենքի տեսակներով ապահովելը, զինվորական կադրերի պատրաստումը և այլն, խթանեցին եգիպտական ողջ տնտեսության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտրի, ինչպես նաև կրթության ու մշակույթի զարգացումը:

Գյուղատնտեսության մասին խոսեցինք նախորդ էջերում և իմաստ չունի կրկին անդրադառնալ դրան:

Ուստի կանդրադառնանք զինվորական բարեփոխումների ազդեցությանը արդյունաբերության զարգացման վրա:

Մուհամմադ Ալին հստակ պատկերացնում էր, որ առանց զարգացած ռազմական արդյունաբերության չի կարող ունենալ ուժեղ բանակ, ապահովված սեփական զենքի արտադրությամբ: Նա նաև լավ էր հաս-

կանում, որ զենքի, մանավանդ նրա բարդ տեսակների ծեռք բերումը արտասահմանյան, եվրոպական երկրներից խոցելի էին դարձնում նրա ռազմական ուժերը և կախման մեջ գցում Եգիպտոսը օտար երկրներից: Իսկ դա, ինչպես բազմիցս նշել ենք, հակասում էր հզոր և անկախ Եգիպտոս կառուցելու նրա հայեցակարգին: Հարկ է նշել նաև, որ արտասահմանյան զենքի գնումը թանկ էր նստում Եգիպտոսի վրա և անընդհատ պահանջում լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ինչը իր հերթին բացասաբար էր անդրադառնում Եգիպտոսի տնտեսության վրա:

Մուհամմադ Ալին հաշվի առնելով այդ հանգամանքները, որոշեց ստեղծել սեփական ռազմական արդյունաբերություն: Կահիրեում, Ալեքսանդրիայում և Ռոզետտում կառուցվեցին մի շարք ֆաբրիկաներ, արհեստանոցներ և ցեխեր: Ալեքսանդրիայում կառուցվեցին ծուլարանի ցեխեր, դարբնոցներ, փականագործական արհեստանոցներ և այլն: Մետաղածուլարաններ կառուցվեցին նաև Բուլակում և Մարսուդում: Նրանք կոչված էին բավարարելու եգիպտական բանակի պահանջները, այդ թվում և նավաշինության բնագավառում: Այդ նպատակին էր ուղղված նաև առագաստների համար հատուկ կտորեղենի արտադրության մանուֆակտուրայի կառուցումը: Այս բոլորի պատճառով եգիպտական այդ նավահանգիստը ստացավ «Ալեքսանդրյան զինանոց» անվանումը:

Կահիրեում և Ռոզետտում կառուցվեցին զենքի արտադրության երեք, վառոդի և բորակի գործարաններ, ինչպես նաև թուջի գործարան, որը տարեկան արտադրում էր իր ժամանակի համար բարձր ցուցանիշ համարվող երկու հազար տոննա թուջ:

Այս գործարանները, որոնք կառուցվել էին ֆրանսիական նախագծերով և ֆրանսիական մասնագետների օգնությամբ, կարևոր դեր էին խաղում զենքի մի քանի տեսակների, ինչպես նաև նավաշինության բնագավառում Եգիպտոսի պահանջները բավարարելու գործում:

Մի շարք գործարանների կառուցումը պայմանավորված էր հանդերձանքի բնագավառում եգիպտական բանակի պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ: Դրանք հիմնականում մահուդի, բամբակ և վուշե գործվածքեղենի արտադրության ֆաբրիկաներ էին, որոնց արտադրանքը գնում էր զինվորներին և սպաներին համազգեստ կարելու համար: Նույնիսկ կառուցվեց ֆեսի արտադրության ֆաբրիկա, հաշվի առնելով, որ դա եգիպտական ազգային տարազի անբաժանելի մասն էր և եգիպտական զինվորները և սպաները սովորական գլխարկների փոխարեն նախընտրում էին ֆեսը:

Արդյունաբերական արտադրության մյուս ճյուղը սննդարդյունաբերությունն էր: Այդ տարիներին Եգիպտոսում կառուցվեցին շաքարի, բուսական յուղի արտադրության և այլ գործարաններ:

Կառուցվեցին նաև կաշվի, ապակու և թղթի արտադրության գործարաններ: Եգիպտոսում, գործարանային արդյունաբերության մեջ, սկսեց օգտագործվել շոգեուժը, որն ընդհանրապես նորություն էր և անգամ եվրոպական արդյունաբերության մեջ շոգեուժի օգտագործումն առաջին քայլերն էր կատարում և դեռևս լայն տարածում չէր ստացել:

Ընդհանուր գծերով այսպիսին էր Եգիպտոսի արդյունաբերության ընդհանուր պատկերը, որը ձևավորվեց նաև բանակի պահանջները բավարարելու համար:

Արդյունաբերական ֆաբրիկաները և գործարանները պատկանում էին պետությանը, իսկ նրանց արտադրությունը, ինչպես նաև արհեստավորական և գյուղատնտեսական արտադրանքը գտնվում էր կառավարության հսկողության տակ: Մուհամմադ Ալիի նորամուծություններից մեկն էլ տնտեսության բնագավառում այսպես կոչված պետական մենաշնորհների կամ մոնոպոլիաների հաստատումն էր, որն իրագործվեց 1816–1820 թթ: Մենաշնորհները դրանք կառավարական պաշտոնյաներից կազմված վերահսկիչ և կարգադրիչ մի ապարատ էր, որը վերահսկում էր ամբողջ արտադրությունը, կարելի է ասել տնտեսական կյանքը քաղաքում և գյուղում: Մենաշնորհները ոչ միայն վերահսկում և կարգավորում էին արտադրությունը, այլև նրանց էր վերապահված արտադրանքի՝ գյուղական, արհեստավորական և ֆաբրիկա–գործարանային, գնումը և վաճառքը: Նրանք էին սահմանում արտադրանքի չափերը, տեսակները և գները:

Կային մենաշնորհներ նաև առևտրի բանագավառում: Այդ ոլորտը նույնպես գտնվում էր պետության վերահսկողության տակ: Միայն մենաշնորհները իրավունք ունեին ապրանքներ մատակարարել ներքին շուկայում և արտահանել արտասահման, որոշելով նրանց ծավալները և սահմանելով նրանց գները:

Եգիպտոսում, իհարկե, պահպանվեցին մանրավաճառները, հատկապես Կահիրեում, Ալեքսանդրիայում, ինչպես նաև այլ քաղաքներում: Բայց նրանք ինքնուրույն չէին կարող գործել, ասենք, ազատ գնել ապարանքներ և իրենց ուզած վայրերում և իրենց ցանկացած գներով դրանք վաճառել: Նրանք վաճառման համար ապրանքներ կարող էին

գնել միայն ու միայն պետությունից և նրան պատկանող ապրանքը վաճառել նրա կողմից սահմանված գներով:

Այսպիսով, եթե մի կողմից զինվորական բարեփոխումները և դրա հետ կապված եգիպտական բանակի աճը և հզորացումը խթանեցին արտադրությունը քաղաքում և գյուղում, ապա մյուս կողմից մոնոպոլիաների առաջացումը որպես պետական վերահսկողության կամ խնամակալության ձև, հանդիսացան յուրատեսակ կապանքներ, որոնք կաշկանդում էին Եգիպտոսի տնտեսական զարգացումը, և պատճառ հանդիսացան նրա ապագա տնտեսական դժվարությունների համար:

Զինվորական բարեփոխումների շնորհիվ Եգիպտոսը դարձավ մերձավորարևելյան տարածաշրջանի ամենահզոր պետությունը և մի շարք հարցերում անգամ գերազանցում էր Օսմանյան կայսրության միջուկը հանդիսացող բուն Թուրքիային:

4. Բարեփոխումներ կրթության մարզում

Մուհամմադ Ալիի բարեփոխումների շարքում իր ուրույն տեղն ունեին բարեփոխումները կրթության և մշակույթի մարզում: Մուհամմադ Ալին, ինչպես նշել ենք, բարեփոխումներին մոտենում էր որպես մեկ ամբողջական համակարգի, գտնելով, որ եթե բարեփոխումների ամբողջական շղթայում թեկուզ և մեկ օղակ չվերակառուցվի, ապա դա կհանգեցնի ընդհանրապես նրա բարեփոխումների քաղաքականության ձախողմանը և Եգիպտոսը երբեք չի դառնա այն երկիրը, որի մասին նա երազում էր: Կարելի է ասել, որ Մուհամմադ Ալիի բարեփոխումների քաղաքականությունը հիմնված էր չորս սյուների վրա՝ բարեփոխումներ ա) պետական–կառավարական ոլորտում, բ) ագրարային հարաբերություններում, գ) զինվորական մարզում և դ) կրթական–մշակութային ասպարեզում: Եթե նրանցից մեկը չլիներ, ապա կառույցը կփլվեր: Դրանով է բացատրվում Մուհամմադ Ալիի բացառիկ ուշադրությունը նաև կրթության և մշակույթի բնագավառում անցկացվող բարեփոխումներին:

Մուհամմադ Ալին, ծեռնամուխ լինելով այս բարեփոխումներին, իր սովորության համաձայն մշակեց համապատասխան հայեցակարգ: Այդ հայեցակարգի հիմքը նա համարեց դպրոցական կրթությունը, նրա մակարդակի բարձրացումը և նրա ոլորտի ընդլայնումը, այն հաշվով, որպեսզի ինչքան հնարավոր է ավելի շատ երեխաներ ընդգրկվեն դպրոցական կրթության մեջ և Եգիպտոսում ավելանա կրթված մարդկաց ու

մասնագետների թիվը: Նա լավ էր հասկանում, որ միայն կրթություն ստացած եգիպտացին կկարողանա ապահովել Եգիպտոսի առաջընթացը բոլոր մարզերում՝ պետական կառավարման, տնտեսության և զինվորական, և Եգիպտոսը դարձնել մի կենսունակ օրգանիզմ:

Նա ստեղծեց երկու կարգի դպրոցներ՝ ընդհանուր կրթական և մասնագիտական:

Նրա որոշմամբ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ բացվեցին աշխարհիկ դպրոցներ: Դրանք եռաստիճան դպրոցներ էին: Առաջին աստիճանը, որը կարելի է համարել տարրական, ընդգրկված էին 8–12 տարեկան հասակի աշակերտները: Այս էտապում նրանց դասավանդվող հիմնական առարկաներն էին արաբերեն լեզուն և թվաբանությունը:

Երկրորդ աստիճանը փաստորեն միջնակարգն էր, որտեղ սովորում էին 12–16 տարեկանները: Այստեղ ավելի լուրջ առարկաներ էին անցնում, ինչպես մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն և այլ առարկաներ, իսկ լեզուներից ավելանում էր թուրքերեն լեզվի ուսուցումը:

Իսկ երրորդ աստիճանը հատուկ ուսումնարաններն էին, որը կարող էին շարունակել միջնակարգն ավարտած աշակերտները: Ուսման տևողությունն այդ ուսումնարաններում չորս տարի էր:

Այսպիսով, մինչև 20 տարեկան դառնալը եգիպտացի պատանին կարող էր ստանալ տարրական, միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն: Դա, իհարկե, մեծ նվաճում էր Եգիպտոսի համար, որի զուգահեռը չկար մոտիկ և հեռու հարևան որևէ երկրում:

Այստեղ կար նաև մի կարևոր նրբություն: Մուհամմադ Ալին, որը կրթությունը մեծապես հարգող անձնավորություն էր, կրթություն, թեկուզ և տարրական, ստանալու դռները լայնորեն բացեց նաև տարեցների առջև, որոնք գրել և կարդալ չգիտեին: Նա նրանց համար հնարավորություն ստեղծեց գեթ ինչ–որ չափով վերացնել այդ բացը և հաղորդակից լինել գրաճանաչությանը: Եվ ինքը տվեց դրա օրինակը: Մենք արդեն նշել ենք, որ Մուհամմադ Ալին անգրագետ մարդ էր, կարդալ և գրել չգիտեր, որից նա շատ էր նեղվում աշխատանքային ասպարեզում կամ պարզապես կենցաղում: Նա որոշեց վերացնել այդ բացը և 45 տարեկան հասակում կարդալ, ապա և գրել սովորեց: Նրա օրինակը շատ վարակիչ եղավ:

Ուսուցման գործը հեշտացնելու և աշակերտներին լիարժեք գիտելիքներ և տեղեկատվություն հաղորդելու նպատակով, Մուհամմադ Ալիի կարգադրությամբ եվրոպական լեզուներից արաբերեն թարգմանվեցին և հրատարակվեցին դասագրքեր և զանազան ձեռնարկներ, իսկ հետագայում դասագրքեր պատրաստվեցին արդեն Եգիպտոսում:

Ընդհանուր աշխարհիկ դպրոցներ բացելուն զուգահեռաբար հիմնվեցին նաև նեղ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Մենք արդեն նշել ենք տարբեր բնույթի զինվորական ուսումնարաններ հիմնելու մասին: Հետագայում հիմնվեցին նաև այլ մասնագիտական ուսումնարաններ: Մուհամմադ Ալին 1816 թ. հիմնեց Եգիպտոսում առաջին ինժեներական, ապա բժշկական ուսումնարան, որը նույնպես առաջինը եղավ Եգիպտոսում: Նրա իշխանության տարիներին հիմնվեցին նաև գյուղատնտեսական և անասնաբուժական, տեխնիկական (մեխանիկական), լեզվաբանական, երաժշտական, անգամ քաղաքագիտական և այլ մասնագիտությունների գծով ուսումնարաններ:

Ուսուցումը ձրի էր, պետությունն անգամ նրանց թոշակ էր վճարում, իսկ գյուղական վայրերից Կահիրե և այլ քաղաքներ եկածները ապահովվում էին կացարանով՝ ժամանակակից տերմինալոգիայով ասած, հանրակացարաններով և սնունդով:

Դպրոցներ բացվեցին ոչ միայն Կահիրում և մյուս քաղաքներում, այլև գյուղական վայրերում, կարելի է ասել ամբողջ Եգիպտոսում: Այսպես, օրինակ, Վերին Եգիպտոսում գործում էին 26, իսկ Ստորին Եգիպտոսում՝ 40 նորաբաց տարրական դպրոցներ: Իսկ ուսումնարանները տեղավորված էին գլխավորապես Կահիրեում և Ալեքսանդրիայում:

Հասկանալի է, որ նման քանակի նոր դպրոցների և ուսումնարանների բացումը շատ սուր բնույթ էր հաղորդում դպրոցները համապատասխան քանակի ուսուցիչներով ապահովելու հարցին: Ո՞րտեղից գտնել այդքան մասնագետ ուսուցիչներ: Այդ հարցը լուծվեց երկու ճանապարհով: Զգալի թվով ուսուցիչներ հրավիրվեցին եվրոպական երկրներից: Նրանց ներգրավելը ուսուցման ոլորտ ունեցավ նաև մեկ այլ հետևանք՝ դա նպաստեց օտար լեզուների, առաջին հերթին ֆրանսերեն լեզվի տարածմանը Եգիպտոսում:

Դպրոցները ուսուցիչներով ապահովելու խնդրի լուծման մյուս ուղին եղավ եգիպտացիներին եվրոպական ուսումնական հաստատություններում պատրաստելը, որոնց թիվը, ինչպես արդեն նշել ենք, շատ մեծ էր: Ավարտելով ուսումը և վերադառնալով Եգիպտոս, նրանք ոչ

միայն աշխատանքի էին անցնում պետական ապարատում որպես պաշտոնյաներ կամ բանակում ծառայում որպես սպաներ, այլև լրացնում էին ուսուցիչների շարքերը:

Կրթության բնագավառում բարեփոխումները կազմակերպված անցկացնելու և դպրոցների առջև կանգնած խնդիրները հաջողությամբ լուծելու գործում նշանակալի էր կրթության նախարարության դերը:

Այս ոլորտում կատարված բարեփոխումների շարքում պետք է նշել եգիպտական ազգային տպագրության և դրա հետ կապված գրահրատարակչության հանդես գալը:

Դպրոցական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բանակի համար անհրաժեշտ կանոնադրությունների և պաշտոնական այլ փաստաթղթերի հրատարակությունը պահանջում էր ունենալ տպարան: Եվ Մուհամմադ Ալին 1822 թ. հիմնեց այդ տպարանը, որը եղավ առաջին նման հաստատությունը Եգիպտոսում: Հետագայում ևս հիմնվեցին այլ տպարաններ, բայց 1822 թ. մտել է Եգիպտոսի պատմության մեջ, որպես տպարանական գործի սկզբնավորման տարի: Այդ առաջին տպարանն ուներ տառատեսակներ երեք լեզուներով՝ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն: Դրանից հետո գրահրատարակությունը, թարգմանական և ազգային գրականության հրատարակությունը, զարգացավ բավականին արագ կերպով և իր ուրույն տեղը գրավեց եգիպտական ազգային մշակութային կյանքում:

Տպարանների հիմնումը նպաստեց Եգիպտոսում ազգային մամուլի հանդես գալուն: Մուհամմադ Ալիի հիմնած առաջին արաբական տպարանում հրատարակվեց առաջին եգիպտական «Ալ–Վակաի ալ–Մըսրիյա»՝ «Եգիպտական իրադարձություններ» թերթը: Դրանով Եգիպտոսը մտավ ազգային մամուլ ունեցող փոքրաթիվ երկրների շարքը:

5. Մուհամմադ Ալիի բարեփոխումները և Եգիպտահայությունը

Մուհամմադ Ալիի կիրառած բարենորոգումները չէին կարող չանդրադառնալ Եգիպտոսում բնակվող հայերի, հրեաների, հույների և այլ ոչ արաբ բնակչության վրա:

Նրանց նկատմամբ Մուհամմադ Ալիի քաղաքականությունը խարսխված էր հանդուրժողականության, տոլերանտիզմի վրա, որը դրսևորվում էր կրոնահամայնքային, լեզվամշակութային, աշխատանքային և

մնացած բոլոր բնագավառներում: Այդ տեսակետից Եգիպտոսը Մուհամմադ Ալիի կառավարման տարիներին շահեկանորեն տարբերվում էր Թուրքիայում տիրող մթնոլորտից և կիրառվող մոտեցումներից:

Հանդուրժողականությունը գործունեության անհամեմատ լայն ասպարեզ բացեց եգիպտահայության համար և հնարավորություն ստեղծեց ավելի լավ կազմակերպել ներհամայնքային կյանքը, մի կողմից, և իր լուման ներդնել Մուհամմադ Ալիի բարենորոգումների քաղաքականության իրականացման գործում, մյուս կողմից:

Եգիպտահայերի թվաքանակի մասին, հասկանալի պատճառներով, ստույգ տեղեկություններ չկան: Դա բացատրվում է նրանով, որ այդ տարիներին կանոնավոր մարդահամարներ չէին անցկացվում, և հայերի թվաքանակն էլ կայուն չէր: Միայն հայտնի է, որ բարենպաստ քաղաքական և տնտեսական պայմանների դեպքում նրանց թվաքանակը մեծանում էր ի հաշիվ ներգաղթածների, իսկ պայմանների վատթարացման դեպքում տեղի էր ունենում արտագաղթ, որի հետևանքով նրանց թիվը նվազում էր: Եգիպտահայությունը կազմավորվում էր հիմնականում Օսմանյան կայսրության տարբեր վայրերից, գլխավորապես Ստամբուլից, Զմյուռնայից և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից Եգիպտոս ներգաղթած հայերի հաշվին:

Տարբեր հետազոտողներ (Ա. Ալպոյաճյան, Ն. Աղազարմ, Ա. Գարտաշյան, Հ. Նալբանդյան և ուրիշներ) ամենահավանականը համարում են, որ Եգիպտոսում XIX դարի կեսերին բնակվել է մոտ 2000 հայ: Այդ նույն թիվն է մատնանշում նաև այդ տարիներին եգիպտական բանակում ծառայած ֆրանսիական սպա, Մ. Ժոմառը «Եգիպտոսի նկարագրությունը» ֆրանսերեն լեզվով հրատարակած իր աշխատության մեջ:

Հայերը հիմնականում կենտրոնացված էին Կահիրեում և Ալեքսանդրիայում: Ոչ մեծաթիվ հայեր էին բնակվում նաև Ռոզետտում, Դամիյաթում, Թանթայում, Զակազիկում, Ասյութում և այլ քաղաքատիպ վայրերում:

Զգալի թվով հայեր են աշխատել Մուհամմադ Ալիի վերակազմավորված պետական ապարատում: Ինչպես նշել ենք, Մուհամմադ Ալին մեծ թվով եգիպտացի ուսանողներ էր ուղարկում եվրոպական երկրներ ուսանելու համար: Դրանց թվում էին ոչ միայն արաբներ, այլև մյուս ազգությունների ներկայացուցիչներ, այդ թվում և հայեր: Ուսումնառությունն ավարտելուց և Եգիպտոս վերադառնալուց հետո, Մուհամմադ Ալին զգալի թվով հայերի է աշխատանքի վերցնում իր ապարատում և

զանազան մինիստրություններում: Դրանք լավ պատրաստված, պարտաճանաչ մարդիկ էին, որոնք շատ շուտով աչքի ընկան պետական ծառայության մեր: Մուհամմադ Ալին մեծ վստահությամբ էր վերաբերվում նրանց, հաշվի առնելով նրանց գործնական բարձր հատկանիշները և նրանց նվիրվածությունը բարեփոխումների քաղաքականությանը: Նրանք, ինչպես և հույները, նորաստեղծ կառավարության և տարբեր նախարարություններում աշխատում էին որպես խորհրդականներ, քարտուղարներ, ոմանք էլ որպես թարգմանիչներ, որն այդ շրջանում նույնպես համարվում էր կարևոր պաշտոն: Հայերի մեջ գտնվեցին մարդիկ, որոնք հասան շատ բարձր պաշտոնների:

Դրանց մեջ առանձնանում է Պողոս Յուսուֆյանը, որին համարձակորեն կարելի է դասել Մուհամմադ Ալիի ամենամերձավորների շարքը: Սկսելով որպես Մուհամմադ Ալիի թարգմանիչ, նա շուտով դառնում է նրա խորհրդականը, իսկ շատ չանցած գլխավորում է Եգիպտոսի Եվրոպական կամ արտաքին գործերի նախարարությունը: Իրականում նրա գործունեության դաշտն ավելի լայն էր և ընդգրկում էր համարյա բոլոր կարևոր բնագավառները: Ալեքսանդրիայում լույս տեսած «Արաքս» թերթը հետևյալ մեջբերումն է կատարել եգիպտական ֆրանսիատառ «Լա Բուրս էժիպսիեն» հեղինակավոր պարբերականից. «Իրականին մեջ, Պողոս բեյը իր ձեռք առած էր երկրի արտաքին, ներքին, ելևմտական, առևտրական և մինչև անգամ զինվորական բոլոր գործերը, ինչ որ կկատարվեր տերության ընդարձակածավալ սահմաններում մեջ՝ Ասուանեն մինչև Կրետե, մինչև Տավրոս կնիքը կկրեր իր վճիռներուն»:

Մուհամմադ Ալին նախքան կարևոր որոշումներ ընդունելը և հայեցակարգային բնույթի հիմնախնդիրները սահմանելը, միշտ խորհրդակցել է Պողոս Յուսուֆյանի հետ և հաշվի առել նրա հեղինակավոր կարծիքը:

1844 թ. Պողոս Յուսուֆյանի մահից հետո, արտաքին գործերի նախարարի պաշտոնը Մուհամմադ Ալին վստահում է երիտասարդ Արթին Չրաքյանին, որը Ֆրանսիա ուսանելու ուղարկած իր սաներից էր: Նա մինչ այդ պետական ապարատում աշխատելու որոշ փորձ էր կուտակել, բարձր պաշտոններ զբաղեցնելով լուսավորության նախարարությունում, լինելով լուսավորության գերագույն խորհրդի անդամ:

Արտաքին գործերի, ինչպես նաև որոշ այլ նախարարությունների վարչությունների և բաժանմունքների մեծ մասի ղեկավարները նույն-

պես հայեր էին, որոնք շատ հաճախ Եգիպտոսը ներկայացնում էին արտասահմանյան երկրների հետ ունեցած շփումների կամ բանակցությունների ժամանակ: Նշենք, որպես օրինակ, որ 1841 թ. Լոնդոնի կոնֆերանսում, որը բախտորոշ եղավ Եգիպտոսի և անձամբ Մուհամմադ Ալիի համար, եգիպտական պատվիրակությունը գլխավորում էր Արթին Չրաքյանը:

Հայերի դերակատարումը Եգիպտոսի պետական ապարատում Մուհամմադ Ալիի իշխանության տարիներին աննկատ չի մնացել ժամանակակիցների, ինչպես նաև հետագայում ուսումնասիրողների տեսադաշտից: Այդ մասին շատ է գրվել: Դրանցից հիշատակենք ֆրանսիացի հեղինակ Պ. Համոնի դեռևս 1843 թ. Փարիզում հրատարակված Մուհամմադ Ալիի տիրապետության տարիներին Եգիպտոսի պատմությանը նվիրված աշխատության առաջին հատորը, որտեղ հեղինակը հայերի դերակատարությանն այսպիսի տողեր է նվիրել. «Հայերը մուտք են գործել ամեն տեղ: Նրանցից շատերը ամենաբարձր պաշտոններն են զբաղեցնում փոխարքայի կաբինետում և դիվաններում», ապա ավելացնում, որ «Հայկական համայնքն ամենազոր է փոխարքայի արքունիքում»:

Եգիպտահայերը Մուհամմադ Ալիին աջակից եղան նաև մյուս բնագավառներում: Այդ տեսակետից հիշատակության է արժանի նրանց գործունեությունը տնտեսական ոլորտում: Հայերը հիանալի արհեստավորներ էին և նրանք առաջնակարգ դիրքեր ունեին այնպիսի արհեստների բնագավառում, ինչպես ոսկերչությունը, ներառյալ արծաթագործությունը և ակնագործությունը, դերձակությունը, կոշկակարությունը, մուշտակագործությունը և այլն: Հատկապես ուժեղ էին եգիպտահայերի դիրքերը ոսկերչության բնագավառում, որի կենտրոնը Կահիրեի Խան ալ–Խալիլ շուկան էր: Հայ ոսկերիչների վարպետության մասին հիանալի են արտահայտվել ժամանակակիցները: Պատահական չէ, որ նրանք էին բավարարում Մուհամմադ Ալիի, նրա ընտանիքի և շրջապատի պահանջներն այդ բնագավառում:

Եգիպտահայերը կարևոր դիրքեր ունեին նաև լումայափոխության բնագավառում: Հայ լումայափոխները՝ սառաֆները, սոսկ դրամափոխներ չէին: Նրանց գործունեությունը շատ ընդհանուր բաներ ուներ բանկային գործունեության հետ: Նրանց մոտ կուտակված ֆինանսական միջոցները և ֆինանսական ոլորտում նրանց հմտությունը, հայ լումայափոխներին հնարավորություն տվեց1837 թ. Կահիրեում հիմնել եգիպ-

տոսում առաջին բանկը: Դա հնարավորություն տվեց հայ լումայափոխներին ընդլայնել ֆինանսական աջակցությունը Մուհամմադ Ալիին նրա բարեփոխումներն իրականացնելու գործում:

Մուհամմադ Ալիի լայնախոհ և հանդուրժողական քաղաքականության շնորհիվ Եգիպտոսում հայտնվեցին նաև հայ հողատերեր: Սովորաբար հողատիրությունն այն բնագավառն է, որտեղ եկվորները, այլ էթնոսին պատկանողները մուտք չունեն և զրկված են հողային սեփականություն ձեռք բերելու և՛ իրավունքից, և՛ հնարավորությունից: Մուհամմադ Ալին խախտեց այդ անսասան թվացող օրենքը: Ոչնչացնելով մամլուքներին և վերացնելով իլթիզամի համակարգը, Մուհամմադ Ալին նրանց հողերը հայտարարեց պետական և բաժանեց իր մերձավորներին: Սակայն նա վարձակալության իրավունքով հողաբաժիններ տրամադրեց նաև այն պաշտոնյաներին, վաճառականներին և սառաֆներին, որոնք արաբներ չէին և որոնց ինքը, Մուհամմադ Ալին վստահում էր: Դրանց թվում հայտնվեցին նաև հայեր, որոնք վարձակալման սկզբունքներով ստացան հողաբաժիններ: Նրանք պարտավոր էին մշակել իրենց տրված հողաբաժինները և հարկ վճարել կառավարությանը ըստ սահմանված կարգի, բայց իրավունք չունեին վարձով տալ կամ վաճառել իրեն տրված կալվածները: Հայ կալվածատերեր նախընտրում էին իրենց հողակտորներում մշակել տեխնիկական կուլտուրաներ, որոնք արտահանման մեծ պահանջարկ ունեին: Այդ պատճառով էլ հայ կալվածատերերի մեծամասնության հողաբաժինները վերածվեցին բամբակի պլանտացիաների:

Մուհամմադ Ալիի բարենորոգումներին աջակցելու և Եգիպտոսի ինքնուրույնությունը պաշտպանելու գործում նշանակալի էր նաև հայ առևտրական դասի դերը: Այս հարցում հայ վաճառականների դիրքորոշումը սկզբունքային բնույթ ուներ: Արդեն սկսվել էր մրցակցությունը արտասահմանյան առևտրական կապիտալի հետ, որը փորձում էր ոչ միայն ներթափանցել Եգիպտոս, այլև նվաճել եգիպտական շուկան և դառնալ այնտեղ տիրապետող: Այդ ուղղությամբ հատկապես մեծ ջանքեր էին դրսևորում անգլիացիները և, իրոք, նրանք լուրջ վտանգ էին ներկայացնում Եգիպտոսին: Պայքարը նրանց ոտնձգությունների դեմ, եգիպտական շուկան եվրոպական ապրանքների մրցակցությունից պաշտպանելը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն, համապատասխանում էր Եգիպտոսի պետական և նրա առևտրական դասի, այդ թվում և հայ առևտրականների, շահերին: Եվ

այդ պայքարում հայ վաճառականությունը դարձավ Մուհամմադ Ալիի հենարաններից մեկը:

Եգիպտահայությունն իր ներդրումն ունեցավ նաև լուսավորության բնագավառում Մուհամմադ Ալիի բարեփոխումների բնագավառում: Նախ, դրանից օգտվեցին իրենք եգիպտահայերը: Զգալի թվով եգիպտահայեր Մուհամմադ Ալիի կողմից ուղարկվեցին եվրոպական երկրներ ուսանելու: Մյուս կողմից, բացվեցին նոր հայկական դպրոցներ: Այսպես, 1828 թ. Կահիրեում հիմնվում է եղիազարյան դպրատունը, 1840–ական թվականներին Ալեքսանդրիայում սկսում է գործել Արամյան վարժարանը և այլն: Այդ դպրոցներում հայ աշակերտներին ուսուցանում էին հայերեն, արաբերեն և ֆրանսերեն լեզուներ, կրոն, հայոց պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, երաժշտություն, գեղագրություն և այլ առարկաներ:

Հայերի գործունեությունը չէր սահմանափակվում միայն հայկական դպրոցներով: Եվրոպայում կրթություն ստացած և Եգիպտոս վերադարձած հայերի մի մասն իրեն նվիրեց կրթական գործին, կարևոր դիրքեր գրավելով հատկապես ուսումնարանների կազմավորման և ղեկավարման գործում: Նրանց ջանքերով Կահիրեում ստեղծվեց երկրաչափական, վարչական և թարգմանությունների ուսումնարաններ: Այստեղ մեծ էին Արթին Չրաքյանի և Ստեփան Դեմիրճյանի ծառայությունները: Երկար ժամանակ հայերն են ղեկավարել Կահիրեի արվեստի, արհեստի և մետաղագործական ուսումնարանները, Նաբուդայի և Շուբրայի գյուղատնտեսական ուսումնարանը, շատ հաճախ նրանք են կազմել այդ ուսումնական հաստատությունների ծրագրերը, դասավանդվող առարկաների ցանկը և մշակել դասավանդման մեթոդիկան:

Մենք արդեն նշել ենք, որ Եգիպտոսի Լուսավորության գերագույն խորհրդի անդամներ են եղել Արթին Չրաքյանը և Ստեփան Դեմիրճյանը, որոնք այդ խորհրդի անդամ իրենց արաբ և ֆրանսիացի գործընկերների հետ միասին ղեկավարում էին կրթական գործը Եգիպտոսում: Նրանց գործունեությունն այդ բնագավառում շատ արդյունավետ է եղել: Բավական է նշել, որ նրանց ջանքերով բացվել են 66 դպրոցներ, չհաշված մասնագիտական ուսումնարանները, որտեղ սովորում էին ավելի քան հինգ հազար աշակերտներ: Դա փոքր թիվ չէր, մանավանդ եթե հաշվի առնենք, թե մինչ այդ ինչ անմխիթար վիճակ էր տիրում կրթական ասպարեզում:

Եգիպտահայերը իրենց լուման ունեցան նաև թարգմանական գրականության սկզբնավորման և զարգացման բնագավառում: Այդ բեռը հիմնականում իրենց ուսերի վրա վերցրեցին Եվրոպայում Մուհամմադ Ալիի հոգածության շնորհիվ կրթություն ստացած հայերը: Նրանք գլխավորապես թարգմանում էին ֆրանսերենից, ինչպես գեղարվեստական, այնպես էլ քաղաքական գրականություն, որոնց հանդեպ Մուհամմադ Ալին առանձնակի հետաքրքրություն ուներ: Հենց նրա հանձնարարությամբ Արթին Չրաքյանը թարգմանում է XV–XVI դարերի իտալացի քաղաքական գործիչ և դիվանագետ Նիկկոլո դի Բերնարդո Մաքիավելլիի հանրահայտ «Իշխանը» գործը:

Այսպիսով, կարծում ենք, որ ոչ միայն ուշադրության է արժանի, այլև նշանակալի է եգիպտահայության ներդրումը Մուհամմադ Ալիի բարեփոխումների քաղաքականության մեջ և Եգիպտոսի անկախությունն ու ինքնուրույնությունն ամրապնդելու գործում: Այդ հարցի լուսաբանությունն ավելի ամբողջական են դարձնում մեր պատկերացումները Մուհամմադ Ալիի, որպես Եգիպտոսի XIX դարի առաջին կեսի ամենաականավոր և իրեն հավասարը չունեցող ղեկավարի և նրա գործունեության մասին:

* * *

Մուհամմադ Ալիի ռեֆորմները համապատասխանում էին ժամանակի պահանջներին և ոգուն, պայմանավորված էին Եգիպտոսի առջև կանգնած քաղաքական, սոցիալական և տնտեսական խնդիրներով: Դա մի գերմարդկային ճիգ էր Եգիպտոսը դուրս կորզել օսմանյան ճահճից, խավարից ու բռնատիրական ճիրաններից: Դա մի փորձ էր Եգիպտոսը դուրս բերել զարգացման նոր ուղիներ, օգտագործելով նաև եվրոպական փորձն ու արժեքները, այնքանով, որքանով դրանք կիրառելի էին Եգիպտոսի, իր հիմքում արևելյան հասարակության պայմաններում, այնքանով, որքանով դրանք համապատասխանում էին արևելյան մարդու մենտալիտետին, սովորույթներին, բարքերին ու բարոյականությանը:

Բարձր գնահատելով Մուհամմադ Ալիի գործունեությունը և նրա կիրառած բարեփոխումները, միաժամանակ պետք է դրանց գնահատական տալիս սթափ մոտեցում ցուցաբերել, նկատելով նրա և՛ լուսավոր, և՛ ստվերոտ կողմերը:

IV. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Մուհամմադ Ալիի քաղաքական հավակնությունները չէին սահմանափակվում միայն Եգիպտոսով: Եգիպտոսը նրա նպատակների վերջնակետը չէր: Եգիպտոսը վերածելով իր ժամանակի հզոր պետություններից մեկին Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, և ամրապնդելով իր իշխանությունը Եգիպտոսում, որը նա կառավարում էր որպես անսահմանափակ տիրակալ, Մուհամմադ Ալին ոչ միայն երազում, այլև լրջորեն նախապատրաստվում էր նոր տարածքային ձեռքբերումների համար, մտածում դուրս գալ Եգիպտոսի սահմաններից, նվաճել նոր երկրներ և ստեղծել մի կայսրություն, որը մասնագետները կոչել են Եգիպտա–ասիական կայսրություն:

Իր տիրապետությունը ընդարձակելու ուղղությունը որոշելիս Մուհամմադ Ալիի ընտրությունն ընկավ հյուսիս–արևելյան ուղղության վրա: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ արևմտյան ուղղությունը նրա համար փակ էր և որոշ իմաստով անմատչելի: Արևմտյան ուղղության դեպքում, նա առաջին հերթին պետք է ընդհարվեր Թուրքիայի, այսինքն Օսմանյան կայսրության հետ, որի մի մասն էր կազմում Եգիպտոսը, թեկուզ և ձևականորեն, այնուհանդերձ, իրավաբանորեն օսմանյան սուլթանը Մուհամմադ Ալիի սյուզերենն էր: Ուրեմն օսմանյան ուղղությունը կապված էր որոշակի բարդությունների հետ և նա դա լավ էր հասկանում: Մանավանդ պարզ չէր, թե այդ պարագայում ինչպիսին կլիներ եվրոպական պետությունների դիրքորոշումը:

Մուհամմադ Ալին նախընտրեց հյուսիս–արևելյան ուղղությունը, որոշելով իր տիրույթներն ընդարձակել նախ և առաջ հարևան արաբական երկրների հաշվին: Բայց այս դեպքում կարող է տարակուսանք առաջանալ այն կապակցությամբ, որ այդ արաբական երկրները նույնպես Օսմանյան կայսրության մասն էին կազմում: Դա միանգամայն ճիշտ է: Սակայն այս պարագայում պետք է երկու հանգամանք նկատի ունենալ:

Նախ, Մուհամմադ Ալին գործում էր շատ խորամանկորեն: Մեծ մասամբ նա իր գործողությունները արաբական երկրների նկատմամբ ներկայացնում էր որպես թուրքական սուլթանի «հանձնարարություններ-

րի» կատարում: Եվ, իրոք, հաճախ սուլթանը, որն արդեն իր հզորության գագաթնակետին գտնվող կայսրության սուլթանը չէր, այլ բավականին տկար դարձած պետության ղեկավարը, և հնարավորություն չուներ ընդարձակ կայսրության համարյա բոլոր մասերում բռնկվող հակաօսմանյան ելույթները սեփական, թուրքական ուժերով ճնշելու, հարկադրված դիմում էր իր այս կամ այն հզոր վասալին, «հանձնարարելով» նրան «խաղաղացնել» սուլթանին անհնազանդ այդ երկիրը:

Երկրորդ, օրեցօր հզորացող Եգիպտոսի կուսակալը երբեմն ինքն էր նախաձեռնություն ցուցաբերում, վստահ, որ թուրքական սուլթանը համապատասխան ուժ և լծակներ չունի իրեն ետ պահելու նվաճողական քաղաքականությունից կամ պատժելու դրա համար:

Երկու պարագայում էլ, հանգամանքներն ավելի նպաստավոր էին դասավորված Մուհամմադ Ալիի, քան թե թուրքական սուլթանի համար:

1. Արաբիան Մուհամմադ Ալիի տիրապետության ներքո (1811–1840 թթ)

1811 թ. օսմանյան սուլթան Մահմուդ II հանձնարարեց Մուհամմադ Ալիին վերջ տալ վահաբականների Իրաքի և Սիրիայի դեմ ուղղված ասպատակություններին ու հարձակումներին, որոնց մասին մենք արդեն նշել ենք աշխատության նախորդ հատվածներում: Մուհամմադ Ալին իրեն ձնացնելով թուրքական սուլթանին հավատարիմ վասալ, հանձն առավ կատարելու իր սյուզերենի՝ փադիշահի հրամանը:

Սուլթանը դիմեց այդ քայլին, քանի որ նրան շատ էին անհանգստացնում վահաբիները: Վահաբիզմը որպես իսլամական ուղղություն, իր բնույթով տարբերվում էր օսմանյան կայսրությունում հաստատված ուղղությունից: Իսկ նման հարցերը միջնադարում սովորաբար միշտ սուր բնույթ էին կրում:

Կար անհանգստանալու ևս մի շատ կարևոր հանգամանք: Վահաբականները թուրքական սուլթանին չէին ճանաչում որպես օրինական խալիֆա և նրան համարում էին կեղծ խալիֆա: Իսկ դա նշանակում էր, որ նրանք մարտահրավեր էին նետում սուլթանին և նրան չէին ընդունում որպես աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ:

Դրան պետք է ավելացնել նաև այն պարագան, որ վահաբականները ոչ միայն իրենք չէին ենթարկվում թուրքական սուլթանին, այլև կոչ էին անում բոլոր արաբներին տապալել օսմանյան տիրապետությունը:

Նրանք նաև արաբական երկրներում վահաբիզմը տարածելու և այդ ուղիով նրանց իրենց տիրապետության ներքո դնելու հեռուն գնացող նպատակներ էին հետապնդում: Եվ նրանց հարձակումները Սիրիայի և Իրաքի վրա նաև այդ նպատակներն էին հետապնդում:

Այս հանգամանքներով էին պայմանավորված սուլթան Մահմուդ II որոշումը պատժել վահաբիներին և Արաբիան լրիվ ենթարկել Ստամբուլին:

Իսկ ինչ վերաբերում է Մուհամմադ Ալիին, ապա նա նույնպես մեծապես շահագրգռված էր օսմանյան սուլթանի հանձնարարությունը կատարելու պատրվակով ներխուժել Արաբիա և այն վերածել իրեն ենթակա երկրամասի: Նրա շահագրգռվածությունը պայմանավորված էր առնվազն երեք հանգամանքներով:

Առաջին, Մուհամմադ Ալիին նույնպես անհանգստացնում էին վահաբականներն իրենց կրոնական հայացքներով: Նրա համար անընդունելի էր իր անմիջական հարևանությամբ ուժեղ և միավորված պետության հանդես գալը, որպիսին կարող էր դառնալ Արաբիան վահաբիների իշխանության ներքո:

Երկրորդ, Արաբիա ներխուժելը և ըստ էության նրա գրավելը համապատասխանում էր Մուհամմադ Ալիի քաղաքական հավակնություններին՝ իր տիրապետության ներքո միավորել արաբական երկրները և ստեղծել մի նոր կայսրություն: Արաբիայի գրավումը հանդիսանալու էր առաջին քայլը նրա այդ քաղաքական ծրագրերի իրագործման ճանապարհին: Ճիշտ է, Մուհամմադ Ալին իր այդ քայլը ներկայացնում էր որպես փադիշահի հանձնարարություն, սակայն նա լավ գիտեր, որ Արաբիան գրավելու դեպքում, նա այն պահելու էր իր անմիջական տիրապետության տակ, և ոչ թե սկուտեղի վրա մատուցելու էր թուրքական սուլթանին:

Երրորդ, իր դերը խաղաց տնտեսական գործոնը: Մուհամմադ Ալիին պետք էին Արաբիայի շուկան և բնական հարստությունները, որը կխթանեին եգիպտական տնտեսության և առևտրի զարգացումը: Ահա թե ինչու Մուհամմադ Ալիի Արաբիան գրավելու քաղաքականությունը ջերմեռանդ աջակցություն գտավ եգիպտական վաճառականության և լումայական կապիտալի մեծահարուստների կողմից, որոնք ֆինանսավորեցին նրա ռազմական այդ արշավանքը:

Այսպիսով, կարելի է ասել, որ Արաբիայի վրա արշավելու հարցում, մի շարք կարևոր կետերում թուրքական սուլթանի և եգիպտական կուսակալի շահերը համընկնում էին:

Եգիպտական 10 հազարի հասնող զորաբանակը, բաղկացած հետևակից, հեծելազորից և հրետանային զորամիավորումից, զինամթերքով, սնունդով և ջրով բեռնավորված քարավանների ուղեկցությամբ, 1811 թ. սեպտեմբերին, Մուհամմադ Ալիի կրտսեր որդու Թուսունի հրամանատարությամբ ներխուժեց Արաբիա: Երիտասարդ և ռազմական գործերում անփորձ Թուսունին ուղեկցում էին մի քանի զինվորական խորհրդականներ:

Եգիպտական բանակը կարելի է ասել առաջին օրվանից հայտնվեց բավականին ծանր վիճակում: Նկատի ունենք բնակլիմայական ծանր պայմանները և տեղական արաբական բնակչության թշնամական վերաբերմունքը եգիպտական զինվորների նկատմամբ, որոնց տեղացիներն ընկալում էին որպես զավթիչներ: Ուստի եգիպտական բանակի կորուստները շատ մեծ էին:

Այդուհանդերձ, 1811 թ. հոկտեմբերին եգիպտացիները տարան առաջին կարևոր հաղթանակը: Նրանք գրավեցին Կարմիր ծովի ափին գտնվող Յանբո նավահանգիստը, որը նրանք վերածեցին կարևոր հենակետի կապը Եգիպտոսի հետ պահպանելու և այնտեղից համալրում ստանալու համար:

Եգիպտական հարձակումը ծավալվում էր շատ դանդաղ: Բավականին թվով եգիպտացի զինվորներ դարձան անապատների ավազուտների զոհ, շատերը մահանում էին ծարավից և անտանելի շոգից: Այդ տեսակետից արշավանքը լավ չէր նախապատրաստված և բոլոր հանգամանքները հաշվի չէին առնված: Դրան պետք է ավելացնել տեղական պայմաններին վարժ արաբների հանկարծակի հարձակումները եգիպտացիների պահակակետերի վրա, նրանց վճռականությունը ոչ մի թիզ հող չզիջել եգիպտացիներին առանց դիմադրության և այլն:

Ահա այսպիսի պայմաններում եգիպտական զորքերի հրամանատարությունը որոշեց դուրս գալ Յանբոյից և սկսել Հիջազի կարևոր կենտրոնների գրավումը: Դրանց մեջ նրանք մեծ կարևորություն էին տալիս Մադինային և 1812 թ. հունվարին եգիպտական բանակը փորձեց գրավել այն: Սակայն դա նրան չհաջողվեց: Դեպի Մադինա շարժվելու ճանապարհին, եգիպտական բանակը, Սաֆրայի մոտ անակնկալ հարձակման ենթարկվեց վահաբական բանակի կողմից և ծանր պարտու-

թյուն կրեց: Նրանք կորցրեցին հինգ հազար զինվոր և հարկադրված նահանջեցին ու վերադարձան Յանբո:

Դրան հաջորդած հարկադրական դադարը եգիպտական բանակի հրամանատարությունն օգտագործեց զորքերը համալրելու, բանակի շարքերը և հոգեկան վիճակը վերականգնելու համար: Եգիպտոսից Արաբիա եկան թարմ ուժեր, զենքեր, այդ թվում և հրետանի: Մեծ ծավալի աշխատանք կատարվեց արաբական որոշ ցեղերի շեյխերին կաշառելու և եգիպտացիների կողմը գրավելու ուղղությամբ և պետք է նշել, որ եգիպտացիները այդ առումով հասան մեծ հաջողությունների:

Ալս նախապատրաստական աշխատանքներից հետո, 1812 թ. նոյեմբերին եգիպտական զորքերը վերսկսեցին հարձակումը: Նրանք այս անգամ եղան ավելի հաջողակ: Նոյեմբեր ամսին նրանք արդեն Մադինայում էին: Զարգացնելով հաջողությունները, նրանք 1813 թ. հունվարին գրավեցին նաև Մեքքան, Թաիֆը և Ջիդդան: Այսպիսով, եգիպտացիների տիրապետության տակ անցավ ամբողջ Հիջազը:

Թեև Հիջազի գրավումը պետք է համարել մեծ հաջողություն, բայց վահաբիները անձնատուր չեղան: Նրանք շարունակում էին իրենց հարձակումները եգիպտական զորքերի վրա, որոնց կորուստները Արաբիա ներխուժելուց մեկ տարի անց արդեն հասնում էր ութ հազարի:

Վահաբիները վերադասավորելով իրենց ուժերը, նույնիսկ կարողացան շրջապատել Մադինան:

Ահա այսպիսի պայմաններում Մուհամմադ Ալին, որն այնքան էլ գոհ չէր պատերազմական գործողությունների արդյունքներից և եգիպտացիների կրած մեծ կորուստներից, 1813 թ. ժամանեց Արաբիա: Նա իր հետ բերել էր թարմ ուժեր և իր ձեռքը վերցրեց ռազմական գործողությունների ղեկավարությունը:

Մուհամմադ Ալին ընտրեց նոր մարտավարություն: Ժամանելով Ջիդդա, նա անմիջապես ռազմական գործողություններ չծավալեց: Նա իր առաջնակարգ խնդիրը համարեց ամրապնդել իր տիրապետությունը Հիջազում: Այդ նպատակով նա նախ հեռացրեց Հիջազի գործող շերիֆ Ղալիբին, որին փոխարինեց Մուհամմադ Ալիին նվիրված մեկ այլ անձնավորություն: Նա մեծ գումարներ նվիրաբերեց իրեն նվիրված ցեղապետերին, դրանով գնելով նրանց հավատարմությունը:

Այնուհետև նա փորձեց ներթափանցել Արաբիայի խորքերը, բայց դա նրան չհաջողվեց: Մուհամմադ Ալին փոխեց հարվածի ուղղությունը և սկսեց գործել հարավային ուղղությամբ, Ասիրում, որտեղ նա, 1815 թ.

հունվարի 20–ին Թաիֆից հարավ, ջախջախիչ հարված հասցրեց վահաբական երեսունհազարանոց բանակին: Մուհամմադ Ալին մտադիր էր ներխուժել Եմեն, սակայն ստիպված էր վերադառնալ Եգիպտոս:

1815 թ. ընթացքում հաջողությունն ուղեկցեց եգիպտացիներին նաև Արաբիայի հյուսիսային շրջանում, որտեղ նրանք Թուսունի հրամանատարությամբ մի շարք ծանր հարվածներ հասցրեցին վահաբիների բանակին, որոնց գլխավորում էր էմիր Աբդալլահը: Նա էմիր էր դարձել 1814 թ., էմիր Սաուդի մահվանից հետո: Կրած պարտություններից հետո, էմիր Աբդալլահը հարկադրված էր 1815 թ. հաշտության պայմանագիր ստորագրել, որի համաձայն Հիջազը մնում էր եգիպտացիների տիրապետության տակ, սակայն Աբդալլահը պահպանում էր Նաջդը և Կասիմը: Աբդալլահը իրեն ճանաչում էր թուրքական սուլթանի վասալ, բայց անմիջականորեն ենթարկվում էր Մադինայի կառավարչին, որին նշանակել էր Մուհամմադ Ալին: Նա նաև պարտավորվում էր սուլթանի առաջին իսկ կանչի դեպքում մեկնել Ստամբուլ, ապահովել ուխտագնացության ազատությունը, հետ վերադարձնել Մեքքայի սրբակենտրոններից կողոպտած գանձերը և այլն:

Կցանկանայինք հատկապես ընդգծել հաջի՝ ուխտագնացության, անվտանգության ապահովման կետը: Դա շատ կարևոր հարց էր Արաբիայի դեմ Մուհամմադ Ալիի արշավանքն սկսելու պարագայում, որն անմիջապես առնչվում էր եգիպտական վաճառականության հետ՝ ուղղված տնտեսական զարգացմանը: Ուխտագնացության անվտանգության ապահովումը կավելացներ հաջ գնացողների թվաքանակը, իսկ դա իր հերթին կաշխուժացներ առևտուրը և կբարձրացներ եգիպտական վաճառականների շահույթները: Այս գործոնը իր ժամանակին կարևոր դեր խաղաց արշավանքն սկսելու և Մուհամմադ Ալիին համապատասխան ֆինանսներով ապահովելու գործում:

Հաշտության պայմանագիրը երկար չգործեց, քանի որ նա չէր բավարարում վահաբիներին, որոնք այդ համաձայնագրի պայմանները իրենց համար համարում էին անընդունելի, անգամ ստորացուցիչ: Ու նրանք եռանդուն կերպով պատրաստվում էին նոր մարտերի:

Նոր պատերազմական գործողությունների էր պատրաստվում նաև Մուհամմադ Ալին, որը էմիր Աբդալլահին մեղադրում էր հաշտության պայմանագիրը խախտելու մեջ: Վերջինս զանազան պատրվակներով հրաժարվում էր Ստամբուլ մեկնել և ծնկի գալ սուլթան–խալիֆայի առջև, որին վահաբիները կեղծ խալիֆա էի համարում, ինչպես նաև չէր

շտապում հետ վերադարձնել հասցեատիրոջը իր զինակից վահաբիների կողմից Մեքքայից թալանած հարստությունները:

1816 թ. Արաբիա մտավ եգիպտական նոր բանակ և սկսվեց պատերազմական գործողությունների նոր փուլը: Սակայն այժմ արդեն դա ղեկավարում էր ոչ թե Թուսունը, որն առանձնապես աչքի չէր ընկել ռազմական գործողություններ վարելու մեջ, այլ նրա ավագ եղբայր Իբրահիմը: Մուհամմադ Ալիի ավագ որդին իր հոր նման տաղանդավոր անձնավորություն էր: Նրա տաղանդը դրսևորվում էր համարյա բոլոր բնագավառներում, բայց հատկապես ռազմական ասպարեզում: Նա աչքի էր ընկնում կազմակերպչական մեծ ունակություններով և իր նպատակին հասնելու վճռական կամքով: Նրա գործունեությանը բնորոշ գծերից մեկն էլ այն էր, որ իր նպատակին հասնելու համար նա ոչնչի առջև կանգ չէր առնում: Իբրահիմը իրեն հենց այդպես դրսևորեց Արաբիայում: Իբրահիմի նշանակումը Արաբիայում եգիպտական զորքերի հրամանատար վկայում էր, որ Մուհամմադ Ալին որոշել էր ավարտել Արաբիայի գրավումը և նրա կցումը Եգիպտոսին:

Նա 1816–1818 թթ. անողոքության հասնող դաժանությամբ ճզմեց ապստամբական կենտրոնները, պարտության մատնեց վահաբիական զորքերը և հողին հավասարեցրեց բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, այդ թվում և Սաուդյանների նստավայր Դարիյան: Էմիր Աբդալլահը անձնատուր եղավ Իբրահիմին, հուսալով այդ կերպ փրկել իր կյանքը: Սակայն նա սխալվեց իր սպասումների մեջ: Իբրահիմը նրան շղթայակապ ուղարկեց Կահիրե, որտեղ նա Մուհամմադ Ալիի հրամանով գլխատվեց, ի ուրախություն նաև սուլթան Մահմուդ II.

Իբրահիմը գրավեց Նաջդը, Կատիֆը և Ասիրը, և 1818 թ. ամբողջացրեց Արաբիայի գրավումը ու նրան Եգիպտոսին հպատակեցնելը:

Ընդհանուր առմամբ դրա համար պահանջվեց յոթ տարի:

Արաբիայի հիմնական մասի գրավումով, Մուհամմադ Ալին լուրջ հայտ ներկայացրեց իր կայսրությունը ստեղծելու ճանապարհին: Ըստ որում, նրան հաջողվեց իրագործել իր մտահղացումը: Չնականորեն Արաբիան մնում էր Օսմանյան կայսրության կազմում: Դրանով իսկ Մուհամմադ Ալին հանգստացրեց սուլթանին, պահպանեց գերակայության և ենթակայության կանոնները և չեզոքացրեց Ստամբուլի հնարավոր հակազդեցությունը: Իսկ իրականում Արաբիայի տեր ու տնօրենը դարձավ ինքը՝ Մուհամմադ Ալին:

Մուհամմադ Ալին Արաբիայում մտցրեց կառավարման նոր համակարգ: Արաբիան փաստորեն վերածվեց մեկ ամբողջական եգիպտական նահանգի, որի գլուխ էր կանգնած Մուհամմադ Ալիի կողմից նշանակվող փաշան: Նա ենթակա էր անմիջապես՝ Մուհամմադ Ալիին և անվերապահորեն կատարում էր նրա բոլոր հրամանները:

Պահպանվեց Հիջազի շերիֆների ինստիտուտը, որպես Մեքքայի կառավարիչներ: Մուհամմադ Ալին, ինչքան էլ հզոր լիներ, չէր կարող վերացնել այդ ինստիտուտը, թեկուզ այն պատճառով, որ շերիֆները, ըստ ավանդության, սերում էին Հաշիմիներից, այն տոհմից, որին պատկանում էր նաև ինքը՝ Մուհամմադ մարգարեն: Ուստի ձեռք բարձրացնել այդ ինստիտուտի վրա, կնշանակեր ձեռք բարձրացնել մարգարեի թողած ժառանգության վրա, մի բան, որ չհանդգնեցին անել անգամ օսմանյան սուլթանները նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք գտնվում էին իրենց հզորության բարձրակետում: Սակայն Մուհամմադ Ալին կարողացավ հասնել մի կարևոր բանի: Նա իրավունք ստացավ ըստ իր հայեցողության նշանակել շերիֆներին, իհարկե, նույն Հաշիմյաններից: Այդ առումով նրանք ընկան կախման մեջ Մուհամմադ Ալիից:

Նաջդում մտցվեց եգիպտական փաշայի տեղակալի ինստիտուտը: Նա նշանակվում էր Կահիրեի կողմից որպես Մուհամմադ Ալիի փոխանորդ: Առաջին այդպիսի նշանակումը կատարեց Իբրահիմը նախքան 1819 թ. Արաբիայից հեռանալը: Նա իր հոր համաձայնությամբ այդ պաշտոնում նշանակեց գլխատված էմիր Աբդալլահի եղբորը՝ էմիր Մաշարիին, որը որպես անձնավորություն իրենից ոչինչ չէր ներկայացնում և վահաբիների մոտ հեղինակություն չէր վայելում:

Եմենում արտաքուստ նկատելի փոփոխություն տեղի չունեցավ այն առումով, որ պահպանվեց նրա ինքնավարությունը, իսկ զեյդական իմամները մնացին նրա կառավարողները: Եգիպտացիներին չէր հաջողվել ներթափանցել Եմենի խորքերը: Իբրահիմին 1819 թ. հաջողվել էր գրավել միայն նրա առափնյա տարածքները: Սակայն նման կարգավիճակը բավարարում էր երկու կողմերին էլ, քանի որ զեյդական իմամները համաձայնվեցին իրենց համարել թուրքական սուլթանների վասալները, որով բավարարվեցին թուրքական սուլթանի հավակնությունները, և հարկ վճարել Եգիպտոսին, որով բավարարվում էին Մուհամմադ Ալիի նկրտումները:

Արաբիան եգիպտական տիրապետության տակ մնաց մոտ քսան տարի, մինչև 1840 թ.: Այդ տարիները կարելի է համարել վահաբիների

համարյա անընդմեջ ապստամբությունների տարիներ, հատկապես Նաջդում, ինչպես նաև Ասիրում, Կասիմում, Շամմարում և այլն: Այդ տարիները նույն հաջողությամբ կարելի է անվանել նաև վահաբիական ապստամբությունների անընդհատ ճնշելու տարիներ:

Ամեն ինչ վկայում էր, որ վահաբիականները մոլեռանդորեն նվիրված էին իրենց գաղափարներին և ոչ մի զոհողություն, Մուհամմադ Ալիի և նրա որդիների կողմից կիրառվող ոչ մի բռնություն կամ պատիժ, չէր կարող նրանց ստիպել հրաժարվել իրենց իդեալներից ու անկախ ապրելու ոգորումներից:

Ամեն ինչ վկայում էր, որ հողն այրվում էր եգիպտացիների ոտքերի տակ: Մուհամմադ Ալին հայտնվել էր իր համար բոլորովին նոր իրադրության մեջ, որն իր խնդիրներով միանգամայն տարբեր էր այն խնդիրներից, որ նրա առջև ծառացել էին Եգիպտոսում 1805 թ. իշխանության գլուխ գալուց հետո:

1820–ական թվականներին հակաեգիպտական մի շարք ապստամբություններ տեղի ունեցան Կենտրոնական Արաբիայում, Նաջդի շրջանում: Սկզբում եգիպտացիներին հաջողվում էր ճնշել դրանք: Բայց հետո, հաջողության նժարը կամաց–կամաց թեքվեց վահաբիականների կողմը: Հատկապես պետք է նշել գլխատված էմիր Աբդալլահի ազգականներից մեկի, Տուրկուի 1821 թ. գլխավորած ապստամբությունը: Այսինքն վահաբիների պայքարը շարունակում էր գլխավորել Սաուդյան ընտանիքը: Նրա առաջին քայլը եղավ Մաշարիի տապալումը, որին չէին հարգում Նաջդում, համարելով նրան Մուհամմադ Ալիի դրածո: Տուրկուն իշխանությունն իր ձեռքը վերցրեց, մայրաքաղաքը հիմնահատակ կործանված Դարյայից տեղափոխեց Ռիյադ և փաստորեն վերականգնեց վահաբիական պետությունը Նաջդի սահմաններում: Եգիպտացիների փորձերը վերականգնել իրենց իշխանությունը և պատժել իրեն էմիր հայտարարած Տուրկուին, ավարտվեցին անհաջողությամբ: Վահաբիները կարողացան իրենց ձեռքում պահել Նաջդի տարածքների մեծ մասը, բացառությամբ Կասիմի և Շամմարի: 1827 թ. նրանց հաջողվեց եգիպտացիներին դուրս մղել նաև այդ շրջաններից, իսկ 1830 թ. իրենց տիրապետությունը վերահաստատել ալ–Խասում:

Եգիպտացիների անհաջողությունների մեջ իր նշանակությունն ունեցավ այն հանգամանքը, որ Մուհամմադ Ալին այդ ժամանակ մխրճվել էր հունական և սիրիական բարդ խնդիրների մեջ և հնարավորություն չուներ անհրաժեշտ ուշադրություն դարձնել Արաբիային, մասնա-

վորապես Նաջդին: Եգիպտական ռազմական ուժերը զբաղված էին հունական և սիրիական ճակատներում, որը նույնպես սուլթանական «հանձնարարություն» էր Մուհամմադ Ալիին:

Լավ, թե վատ, ավարտելով իր գործերն այդ ճակատներում, Մուհամմադ Ալին կրկին կենտրոնացավ Նաջդի խնդրի վրա, նպատակ ունենալով իր տիրապետությունը վերահաստատել Կենտրոնական Արաբիայի վրա: Դա նրան հաջողվեց իրագործել 1834 թ., երբ եգիպտացիները կարողացան գրավել Սաուդյանների նոր մայրաքաղաք Ռիյադը, տապալել և սպանել էմիր Տուրկուին: Թվում էր, թե եգիպտացիների հաղթանակն այս անգամ վերջնական է: Բայց բոլորի խաղաքարտերը խառնեց Տուրկուի որդին, Ֆեյսալը, որը հանկարծակի հարձակումով գրավեց Ռիյադը, տապալեց եգիպտացիներ նշանակած էմիրին և գլխավորեց վերականգնված վահաբիական պետությունը Նաջդում:

Մուհամմադ Ալին խիստ վրդովվեց այս անհաջողությունից, հասկանալով, որ դա կարող է բացասաբար անդրադառնալ իր հեղինակության վրա: Սակայն նա, հավատարիմ իր բնավորությանը, բոլորովին չվհատվեց: 1836 թ. եգիպտական մի նոր մեծ բանակ կրկին ուղղություն վերցրեց դեպի Ռիյադ: Երկու տարի տևած պատերազմական շատ ծանր գործողություններից հետո, եգիպտացիները վերջապես մտան Ռիյադ, գահընկեց արեցին և ծերբակալեցին էմիր Ֆեյսալին, գրավեցին ամբողջ Նաջդը, ալ–Խասան և Կատիֆը:

Բայց այս անգամ ևս Մուհամմադ Ալիին վիճակված չէր երկար ժամանակ իր տիրապետության տակ պահել Արաբիան: 1840 թ. նա ստիպված էր վերջնականապես հեռանալ Արաբիայից: Միայն թե դա տեղի ունեցավ ոչ թե ռազմական գործողությունների արդյունքում, ոչ թե տանուլ տված ճակատամարտի պատճառով, այլ միջազգային բարդ հարաբերությունների հետևանքով, որոնք շատ սուր բնույթ կրեցին XIX դարի 30–ական թվականների վերջերին: Դրանում մեծ էր Մուհամմադ Ալիի գլխավոր մրցակից և վտանգավոր հակառակորդ Անգլիայի դերակատարումը:

Եգիպտացիների հեռանալուց հետո, XIX դարի երկրորդ կեսում պահպանվեց Արաբիայի քաղաքական խճանկարը: Այդ կիսաթերակղզին իրենից ներկայացնում էր առանձին պետական կազմավորումների կոնգլոմերատ:

Նախկինի պես իրենց հարաբերական ինքնուրույնությունը պահպանեցին Հիջազը և Եմենը: Հիջազի Հաշիմի շերիֆները պահպանեցին

իրենց իշխանությունը Մեքքայի և Մադինայի վրա, որոնք որպես սրբակենտրոններ ապահովում էին նրանց կրոնական հեղինակությունը, իսկ որպես ուխտագնացության կենտրոններ՝ ապահովում էին նրանց նյութական բարեկեցությունը:

Եմենում իրենց իշխանությունը պահպանեցին զեյդական իմամները: Նրանք կարողացան ոչ միայն պահպանել իրենց իշխանությունը, այլև Եմենի անկախությունը: Նրան գլխավոր սպառնալիքը գալիս էր Թուրքիայից, որը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել Եմենի փաստական անկախության հետ և փորձեր էր կատարում նրան դնել իր ուղղակի կառավարման ներքո: Առանձնապես լուրջ վտանգ Եմենի գլխին կախվեց 1849 թ., երբ թուրքական զորքերը փորձեցին նվաճել Եմենը: Սակայն նրանք պարտություն կրեցին և ստիպված էին առժամանակ հրաժեշտ տալ Եմենն իրենց ենթարկելու մտքին:

Եգիպտացիների հեռանալուց հետո նոր իրադրություն ստեղծվեց Նաջդի համար: Վահաբիները, չնայած իրենց կրած ծանր պարտություններին, կարողացան վերականգնել իրենց պետությունը: Դրանում մեծ դերակատարում ունեցավ էմիր Ֆեյսալը, որը, ինչպես նշվել է, 1836 թ. պարտություն կրելով, գերի էր վերցվել եգիպտացիների կողմից: Նա գերության մեջ մնաց երկու տարի և 1838 թ. կարողացավ փախչել ու թաքնվել Դամասկոսում: Եգիպտացիների հեռանալուց հետո, նա վերադարձավ առ–Ռիյադ և վերականգնեց վահաբիական պետությունը: Սակայն դա դեռևս նախկին հզոր Նաջդը չէր, այլ խիստ թուլացած մի էմիրություն, որն անգամ ստիպված եղավ ընդունել Թուրքիայի գերիշխանությունը և հարկատու դառնալ նրան: Մյուս կողմից Ֆեյսալին չհաջողվեց վերականգնել Նաջդ էմիրությունն իր նախկին սահմաններում, որն անհանգստացնում էր Սաուդյան ընտանիքին և վահաբիականներին: Իհարկե, նա փորձեց դուրս գալ Նաջդի և ալ–Խասի սահմաններից և վերականգնել իր տիրապետությունը Կասիմի վրա, սակայն անհաջողության մատնվեց: Կասիմի ամբողջ բնակչությունը դեմ էր դրան և, հենվելով Հիջազի օգնության վիա, կարողացավ ծախողել էմիր Ֆեյսալի նվաճողական ձգտումները: Ֆեյսալը հարկադրված էր 1855 թ. ճանաչել Կասիմի անկախությունը:

Միայն Կասիմը չէր, որ հոգս էր պատճառում Ֆեյսալին և նրա վահաբիական շրջապատին: Հրապարակի վրա հայտնվել էր ևս մեկ վահաբիական էմիրություն՝ Շամմարի ֆեոդալական իշխանապետությունը: Նա կազմավորվեց եգիպտացիների հեռանալուց հետո Նաջդի հյուսի-

սային մասում: Այստեղ որպես կառավարող դինաստիա հաստատվել էին Ռաշիդները: Սկզբնական շրջանում դա Նաջդից վասալական կախման մեջ գտնվող մի էմիրություն էր: Սակայն օգտվելով այն հանգամանքից, որ Նաջդը թուլացել էր և լուրջ խնդիրներ ուներ Հիջազի և Կասիմի հետ, Ռաշիդները իրենց կախվածությունը Նաջդից XIX դարի կեսերին վերածեցին ձնականության: Իրականում նրանք անկախ էին Նաջդի Սաուդյաններից:

Շամմարների պետության ամրապնդման գործում հատկապես պետք է նշել էմիր Թալալի (1847–1868 թթ.) ծառայությունները: Նա կարողացավ կարգ ու կանոն հաստատել էմիրությունում, վերջ տվեց ավազակություններին ճանապարհների վրա, խթանեց առևտրի և տնտեսության զարգացումը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ էմիր Թալալը, լինելով վահաբիական, ավելի հանդուրժողական քաղաքականություն էր վարում կրոնի հարցերում, քան թե Նաջդը, որտեղ իշխում էր վահաբիական ֆանատիզմը: Շամմարն արդեն լուրջ մարտահրավեր էր նետում Նաջդին: Սաուդյան էմիրը էմիր Թալալին հրավիրեց առ–Ռիյադ, որտեղ և նա մահացավ, թունավորվելով Սաուդյանների կողմից:

Բայց դա սպասելի արդյունքը չտվեց և չհանգեցրեց Շամմարի էմիրության քայքայմանը և կործանմանը: Ընդհակառակը, Թալալին հաջորդած էմիրները, մերձենալով Թուրքիայի հետ և համապատասխան օգնություն ու աջակցություն ստանալով նրանից, շարունակեցին պայքարը Նաջդի դեմ, սակայն ոչ թե գոյության համար, այլ հետապնդելով ամբողջ Արաբիայի ամենաուժեղ պետությունը դառնալու քաղաքական հավակնոտ նպատակներ:

XIX դարի երկրորդ կեսում իր տիրապետությունը և ազդեցությունը պահպանեց Անգլիան Արաբիայի առափնյա տարածքների և Պարսից ծոցի իշխանապետությունների՝ Օմանի, Պայմանագրային Օմանի, Մասկատի, Բահրեյնի, Հարավային Եմենի՝ Ադենով հանդերձ, և այլ տարածքների վրա:

2. Արևելյան Սուդանի գրավումը և կցումը Եգիպտոսին

Մուհամմադ Ալին 1811–1818 թթ. հիմնականում ավարտելով Արաբիայի նվաճումը, նախապատրաստվեց գրավել Եգիպտոսի անմիջական հարևան Սուդանը, ավելի կոնկրետ Արևելյան Սուդանը: Եգիպտա–սուդանական հարաբերություններն իրենց արմատներով գնում են

պատմության խորքերը, հասնում մինչև փարավոնների դարաշրջանը: Սուդանը մշտապես հետաքրքրել է Եգիպտոսի կառավարողներին իր բնական հարստություններով, որպես ստրուկների մատակարարման անսպառ աղբյուր և այլն:

Սուդանի գրավումը լրիվ տեղավորվում էր արաբական երկրների վրա Եգիպտոսի տիրապետությունը հաստատելու վերաբերյալ Մուհամմադ Ալիի հայեցակարգի շրջանակներում: Բացի հայեցակարգային մոտեցումից իրենց դերը խաղացին նաև Արաբիան գրավելու ժամանակ Եգիպտոսի կրած մարդկային և նյութական կորուստները: Այդ արշավանքը շատ ծանր նստեց Եգիպտոսի վրա: Յոթ տարի տևած պատերազմը և դրա հետ կապված ռազմական վիթխարի ծախսերը համարյա դատարկել էին պետական գանձարանը: Մուհամմադ Ալին մտածում էր Եգիպտոսի ֆինանսական վիճակը բարելավելու արտաքին աղբյուրների մասին: Նրա կարծիքով այդ առումով ամենահարմար թեկնածուն Սուդանն էր, որը, ինչպես նշեցինք, հռչակված էր իր բնական հարստություններով: Իսկ նրա ոսկու պաշարների մասին առասպելներ էին պատմում:

Ուրեմն տնտեսական գործոնը, քաղաքականից հետո, դարձավ Արևելյան Սուդանը գրավելու երկրորդ դրդապատճառը:

Կար նաև մի հանգամանք, որը վերապահումով կարելի է համարել անձնական բնույթի: Դա մամլուքների հարցն էր: Զգալի թվով մամլուքներ Մուհամմադ Ալիի իշխանության գալուց հետո, խուսափելով նրա հալածանքներից, հաստատվել էին Սուդանում: Մուհամմադ Ալին նրանց համարում էր իր անձնական թշնամիները: Մամլուքները փոխադարձաբար նույն կերպ էին վերաբերվում Եգիպտոսից իրենց արտաքսած ալբանացի կուսակալին: Մուհամմադ Ալին հույս ուներ Սուդանը գրավելու դեպքում լուծել Սուդանում հաստատված այդ մամլուքների հարցը: Իսկ թե ինչպես էր լուծում նրանց հարցը, մենք արդեն տեսանք աշխատության նախորդ հատվածներում:

Ահա, ուրեմն, Արևելյան Սուդանը գրավելու դրդապատճառների հիմքում ընկած էին քաղաքական և տնտեսական գործոններ:

Արևելյան Սուդանի նվաճումը Մուհամմադ Ալին սկսեց 1820 թ. աշնանը: Նրա քսանհազարանոց բանակը հոկտեմբերին ներխուժեց Սուդան: Այդ զորաբանակը գլխավորում էր Մուհամմադ Ալիի երրորդ որդին՝ Իսմայիլ փաշան, որին օգնում էր Մուհամմադ Ալիի փեսան՝ Դեֆտերդար բեյը:

Սուդանում այդ ժամանակ գոյություն չուներ մեկ միասնական պետություն: Կային առանձին, տարբեր չափերի ու հզորության պետական միավորումներ, որոնք միմյանց հետ որևէ կապ չունեին: Այդ հանգամանքը բավականին հեշտացնում էր եգիպտացիների գործը:

Դրան նպաստում էր նաև տարբեր ցեղային և էթնիկական խմբերի գոյությունը, որոնք Սուդանի ոչ թե միավորման կամ համախմբման, այլ բաժանման գործոն էին հանդիսանում: Այսպես, օրինակ, Սուդանի հյուսիսային մասը հիմնականում բնակեցված էր արաբա–բերբերական ցեղերով: Կենտրոնական Սուդանում տիրապետող էին հանդիսանում նեգրերը՝ առանձին կամ արաբների հետ խառը, իսկ հարավային Սուդանը հանդիսանում էր այսպես կոչված նիլոտների տիրույթը:

Միասնական պետության բացակայությունը և ցեղային–էթնիկական տարանջատվածությունը նպաստավոր պայմաններ էին ստեղծում եգիպտացիների համար Արևելյան Սուդանը գրավելու համար:

Եվ, իրոք, եգիպտական բանակի համար առանձին դժվարություն չներկայացրեց Արևելյան Սուդանը գրավելը: Այդ առումով ոչ մի համեմատություն Արաբիայի հետ, որտեղ եգիպտացիները հանդիպեցին շատ ուժեղ դիմադրության և ունեցան շատ մեծ կորուստներ:

Եգիպտական բանակը քայլ առ քայլ գրավում էր Արևելյան Սուդանի շրջանները, ինչպես Հյուսիսային Նուբիան, Դոնղոլան, Խարտումը, Ֆազօղլուն, Սեննարը և այլն: 1822 թ. եգիպտացիները հիմնականում ավարտեցին Արևելյան Սուդանի գրավումը:

Սակայն թող այն տպավորությունը չստացվի, թե սուդանցիները ոչ մի դիմադրություն ցույց չէին տալիս եգիպտացիներին: 1822 թ. բավականին մեծ ապստամբություն սկսվեց Սեննարում, որն արտակարգ դաժանությամբ ճնշեց Իսմայիլ փաշան, սպանվեց մի քանի հազար մարդ: Սուդանցիները դա չներեցին Իսմայիլին և մտածում էին նրանից վրեժ լուծելու հնարների մասին: Ամենահնարամիտը եղավ մելիք Նիմրը, որը տեղական ցեղերից մեկի ճանաչված առաջնորդն էր: Նա խնճույքի թեժ պահին, որը կազմակերպվել էր Իսմայիլ փաշայի պատվին Սուդանի բնակլիմայական պայմանների համար բնորոշ ծղոտից կառուցված իր խրճիթում, երբ բոլորը, այդ թվում և Իսմայիլ փաշան, արդեն հարբել էին ինչպես հարկն է, Նիմրը հրկիզեց իր խրճիթը և բոլորը, այդ թվում Իսմայիլ փաշան ու նրա հետ հրավիրված մյուս եգպտական հրամանատարները, ողջակիզվեցին:

Եգիպտացիները, հասկանալի է, չէին կարող ներել սուդանցիներին նման ոճիրը: Եգիպտական զորքերը Դեֆտերդար բեյի հրամանատարությամբ մտան Սեննար և սարսափելի ջարդ կազմակերպեցին, սպանելով մոտ 30 հազար մարդ, համարյա լրիվ ամայացնելով և անմարդաբնակ դարձնելով այդ շրջանը: Հետագայում նույնպես լինում էին հակաեգիպտական ելույթներ, բայց եգիպտական զորքերը դրանք ճնշում էին առանց որևէ դժվարության:

Նրանք միաժամանակ շարունակեցին նոր տարածքներ գրավել Սուդանի հարավային շրջաններում, այդ թվում կարևոր նշանակություն ունեցող Ֆաշոդան և այլ տարածքներ, Կարմիր ծովի ափին գտնվող Սուակին և Մասավա նավահանգիստները, իսկ հետագայում նաև Կասալայի և Տակայի մարզերը:

Կարելի է ասել, որ եգիպտական բանակը հաջողությամբ կատարեց իր խնդիրը և Արևելյան Սուդանն անցավ Եգիպտոսի տիրապետության տակ:

Մուհամմադ Ալին, որը շատ գոհ էր բանակի գործողություններից, 1838 թ. եկավ Սուդան անձամբ հսկելու հետագա գործողությունները և որոշելու Արևելյան Սուդանի կառավարման խնդիրները:

Արևելյան Սուդանում Մուհամմադ Ալին նշանակեց եգիպտական կառավարիչ, որը պաշտոնապես համարվում էր նրա տեղակալը: Նա նստում էր Խարտումում: Նվաճված տարածքները բաժանվեցին յոթ շրջանների՝ Սեննարի, Խարտումի, Տակայի, Ֆազօղլուի, Բերբերի, Դոնղոլայի և Կորդոֆանի: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր կառավարիչը, որոնք անմիջականորեն ենթարկվում էին Մուհամմադ Ալիի տեղակալին:

Սուդանի վրա դրվեց մեծ հարկ, երկրից պարտադիր կերպով Եգիպտոս էին արտահանվում հազարավոր գլխաքանակ խոշոր եղջերավոր անասուններ, ստրուկներ և այլն: Բավական է նշել, որ միայն 1839 թ. Սուդանից Եգիպտոս է տարվել 200 հազար ստրուկ:

Այսպիսով, Արևելյան Սուդանի գրավումով, Մուհամմադ Ալին ավելի ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում, բարձացավ Եգիպտոսի հեղինակությունը և կատարվեց ևս մեկ կարևոր քայլ նրա քաղաքական ծրագրերի իրագործման ուղղությամբ:

3. Եգիպտոսի ներգրավումը հունական գործերին և Մուհամմադ Ալիի նկատառումները

Այդ ծրագրերի իրագործման հետ, թեև ոչ անմիջականորեն, կապված էր Մուհամմադ Ալիի ներգրավումը հունական գործերին:

Արևելյան Սուդանի գրավման ժամանակ, 1821 թ. գարնանը, Հունաստանում սկսվեց հզոր ազգային–ազատագրական շարժում, որի նպատակն էր օսմանյան լծի տապալումը և անկախության նվաճումը: Սուլթան Մահմուդ II ամեն ճիգ ու ջանք գործադրեց հունական ապստամբությունը ճնշելու և Հունաստանն ամբողջությամբ իր տիրապետության տակ պահելու համար: Բայց դա նրան չէր հաջողվում: Ապստամբները տարան մի շարք փառավոր հաղթանակներ:

Հուսահատված սուլթանը, ճարահատյալ, կարելի է ասել սրտի կսկիծով դիմեց Մուհամմադ Ալիի օգնությանը, հանձնարարելով նրան ճնշել հույների ազգային–ազատագրական շարժումը Մորեայում՝ Հարավային Հունաստանում, և սահմանամերձ կղզիներում:

Մուհամմադ Ալին ուրախությամբ ընդունեց սուլթանի այդ առաջարկությունը:

Ի՞նչու:

Մուհամմադ Ալիի նպատակներից, եթե չասենք երազանքներից մեկն էր այն աստիճանի հզորացնել Եգիպտոսը, որ նրան ընդունեն որպես ինքնուրույն ուժ, որի հետ հարկադրված լինեն հաշվի նստել մյուս պետությունները, առաջին հերթին Թուրքիան, ապա նաև եվրոպական պետությունները: Մահմուդ II դիմումը Մուհամմադ Ալին հենց այդպես ընկալեց: Ընդունելով այդ առաջարկը և համաձայնելով իրագործել այն, Մուհամմադ Ալին ցանկանում էր ցույց տալ աշխարհին, որ այն, ինչ ի վիճակի չէ կատարել Թուրքիան, կարող է կատարել ծնականորեն նրա վասալը հանդիսացող հզորացած Եգիպտոսը:

Մուհամմադ Ալիի հաշվարկները շատ նրբին էին և հեռուն գնացող: Նա իր այդ քայլը կապում էր արաբական աշխարհում իր տիրապետությունը հաստատելու բարդ խնդրի դրական լուծման հետ: Նա հավատացած էր, որ իր կողմից Մորեայի հարցի լուծումը կարող էր նպաստել այն բանին, որ եվրոպական երկրները խոչընդոտ չստեղծեն Եգիպտոսի համար արաբական երկրների վրա իր տիրապետությունը հաստատելու ճանապարհին և հաշտվեն այդ մտքի հետ:

Եթե այս հեռահար հաշվարկը չլիներ, ապա Մուհամմադ Ալին հազիվ թե համաձայնվեր մասնակցել Հունաստանի դեմ ուղղված ռազմական գործողություններին: Նա կարող էր և հրաժարվել, ինչպես նա դա արդեն արել էր մի անգամ, երբ թուրք–պարսկական պատերազմի ժամանակ սուլթանն առաջարկեց Մուհամմադ Ալիին իր զորքերն ուղարկել ռազմի դաշտ, սակայն նա մերժեց սուլթանի այդ առաջարկը, և վերջինս ոչինչ չկարողացավ անել:

Եգիպտական կորպուսը, որը այս անգամ ևս գլխավորում էր Իբրահիմ փաշան, 1824 թ. հուլիսին, իր կազմում ունենալով 16 հազար զինվոր, 63 ռազմական նավերի ուղեկցությամբ շարժվեց դեպի Մորեա: Ճանապարհին նա գրավեց Կրետե կղզին, իսկ 1825 թ. փետրվարին նա արդեն Մորեայում էր: Իբրահիմը շատ դաժան էր վարվում ապստամբ հույների հետ: Հույներով բնակեցված բնակավայրերի հրկիզումը, ցանքատարածությունների ոչնչացումը, գերի վերցված ապստամբների խոշտանգումը և այլն, սովորական երևույթներ էին Իբրահիմի մարտավարության մեջ: 1825 թ. վերջում ամբողջ Մորեան արդեն գտնվում էր եգիպտական զորքերի տիրապետության տակ: Թվում էր թե եգիպտացիներն իրենց խնդիրը կատարել են և կբավարարվեն դրանով: Սակայն Իբրահիմ փաշայի զորքերը թուրքական զորքերի հետ համագործակցելով, ներխուժեցին Միջին Հունաստան և այստեղ նույնպես տարան մր շարք հաղթանակներ: 1827 թ. հունիսի 5–ին եգիպտական զորքերը մտան Աթենք:

Աթենքի անկումը լցրեց եվրոպական պետությունների համբերության բաժակը և առաջացրեց նրանց միջամտությունը: Առանձնապես ակտիվ էին Ռուսաստանը և Անգլիան, որոնք համաձայնության եկան համատեղ գործողությունների վերաբերյալ: Նրանք սուլթանից պահանջեցին ինքնավարություն տրամադրել Հունաստանին: Սուլթանը հրաժարվեց բավարարել Ռուսաստանի և Անգլիայի այդ պահանջը, քանի որ տվյալ պահին, շնորհիվ Իբրահիմ փաշայի հաղթանակների, ուժերի փոխհարաբերությունը եգիպտա–թուրքական զորքերի կողմն էր:

Շուտով Անգլիային և Ռուսաստանին միացավ Ֆրանսիան, որոնք սուլթանին մեկ ամիս ժամանակ տվեցին իրենց պահանջները կատարելու համար: Սուլթանը կրկին մերժեց: 1827 թ. հոկտեմբերի 20–ին, անգլո–ֆրանս–ռուսական միացյալ նավատորմը մտավ Նավարինի ծովախորշը և շրջափակման մեջ վերցրեց ծովախորշում կենտրոնացված թուրքական և եգիպտական նավատորմը: Այդ նույն օրը տեղի ունեցավ

պատմության մեջ մտած Նավարինի հռչակավոր ծովային ճակատամարտը, որն ավարտվեց թուրք–եգիպտական նավատորմի խայտառակ պարտությամբ: Նրանց ռազմական նավերի ընդհանուր թիվը կազմում էր հարյուր ութսուներկու նավ, որից իննսունչորսը պատկանում էր եգիպտացիներին: Ճակատամարտից հետո դրանցից մնաց ընդամենը քսանինը, որոնցից միայն մեկն էր եգիպտական:

Մուհամմադ Ալին ստիպված էր իր զորքերը դուրս բերել Մորեայից, իսկ հունական գերիներին, որոնց գերի էր վերցրել Իբրահիմ փաշան և ուղարկել Եգիպտոս, հետ վերադարձնել Հունաստան:

Այսպիսով, Մուհամմադ Ալիին թեև հաջողվեց ցուցադրել Եգիպտոսի հզորությունը ցամաքային գործողությունների ժամանակ և, իրոք, որոշակի տպավորություն գործել եվրոպական երկրների վրա, բայց հարկադրված էր ձեռնունայն վերադառնալ, կորցնելով իր ամբողջ ռազմական նավատորմը, հսկայական զոհեր տալով և կրելով վիթխարի նյութական–ֆինանսական կորուստներ:

Մուհամմադ Ալիի հույների դեմ թուրքերի հետ համատեղ ձեռնարկած արշավը ավելի շուտ կարելի է համարել անսկզբունքային արկածախնդրություն: Նա միացավ սուլթանի զորքերին հույների ազատագրականն շարժումը ճշելու համար, որոնք պայքարում էին օսմանյան տիրապետությունից ազատագրվելու համար, այն նույն օսմանյան տիրապետությունից, որից Եգիպտոսը և արաբական մյուս երկրները ազատագրելու ծրագրեր էր փայփայում նաև ինքը՝ Մուհամմադ Ալին:

Դա Մուհամմադ Ալիի թույլ տված կոպիտ սխալներից մեկն էր:

V. ԵԳԻՊՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՎՐԱ: ԵԳԻՊՏԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (1832–1833, 1839–1840 թթ.)

1. Եգիպտական զորքերի ներխուժումը Պաղեստին և Սիրիա

Երբ Թուրքական սուլթան Մահմուդ II Մուհամմադ Ալիին առաջարկեց իր զորքերն ուղարկել հույների ապստամբությունը ճնշելու հա-

մար, նա դրա դիմաց, որպես փոխհատուցում և խայծ, Եգիպտոսի իր կուսակալին խոստացավ Սիրիայի և Մորեայի կառավարումը:

Հունական արշավանքը, ինչպես նշեցինք, վերջացավ անհաջողությամբ: Հունաստանը դարձավ անկախ երկիր՝ Մորեայով հանդերձ: Այդ պատճառով Մուհամմադ Ալին պատերազմի ավարտից հետո, որի պայմաններից մեկը Մորեայից եգիպտական զորքերի դուրս բերումն էր, բնականաբար, չէր կարող Մորեայի հարցում թուրքական սուլթանին որևէ պահանջ ներկայացնել:

Իսկ ինչ վերաբերում է սուլթանի խոստումին Սիրիայի հարցում, ապա Մահմուդ II չէր շտապում, ավելի ճիշտ, չէր ցանկանում կատարել իր խոստումը և Սիրիան հանձնել Մուհամմադ Ալիի կառավարմանը:

Եգիպտոսի կուսակալը հայտնվեց երկընտրանքի առջև: Ի՞նչ անել, հնազանդվել սուլթանին և հրաժարվել Սիրիայի նկատմամբ իր հավակնություններից, թե՞ կրկին մարտահրավեր նետել իր սյուզերեն սուլթանին և, ի հարկին, խնդիրը լուծել զենքի միջոցով:

Առաջին տարբերակի դեպքում նա կկորցներ ոչ միայն Սիրիան, այլև ստիպված կլիներ հրաժեշտ տալ արաբական երկրները իր իշխանության ներքո միավորելու և մեկ ընդհանուր արաբական պետություն, թագավորություն կամ կայսրություն, ստեղծելու տասնամյակներ շարունակ փայփայած իր ծրագրերից, որի համար քիչ արյուն չէր թափվել: Ուրեմն, այդ տարբերակն ընդունելի չէր:

Նա, ստեղծված իրադրության հիմնավոր վերլուծությունից հետո, կանգ առավ երկրորդ տարբերակի վրա՝ գրավել Սիրիան, թեկուզ և Թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու գնով:

Մուհամմադ Ալին այդ հարցում շատ ինքնավստահ էր: Նրա վերլուծությունը ցույց էր տվել, որ այդ պահին ռազմական և տնտեսական առումով Եգիպտոսն ավելի ուժեղ էր, քան թե Թուրքիան: Պատերազմ ծագելու դեպքում նա չէր կասկածում իր հաղթանակի մեջ:

Նա հաշվի էր առնում նաև այն հանգամանքը, որ հունական պատերազմից հետո, Թուրքիան բարոյալքված էր և վարկաբեկված: Նրա միջազգային հեղինակությունն ավելի ընկավ 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում կրած խայտառակ պարտությունից հետո: Ի դեպ նշենք, որ Մահմուդ II ամեն կերպ փորձում էր այդ պատերազմի մեջ ներգրավել նաև Մուհամմադ Ալիին: Բայց Մուհամմադ Ալին շատ հեռատեսորեն հրաժարվեց մասնակցել դրան, դասեր քաղելով Մորեայի տխուր հետևանքներից:

Որոշ իմաստով ի նպաստ Եգիպտոսի էր նաև միջազգային իրադրությունը: Եգիպտոսի և Ֆրանսիայի միջև հաստատվել էին բավականին սերտ հարաբերություններ, և Մուհամմադ Ալին ակնկալում էր, որ բարդություններ առաջանալու դեպքում ինքը կարող է հենվել Ֆրանսիայի վրա և նրա օգնությամբ չեզոքացնել Անգլիային կամ Ռուսաստանին, եթե նրանք որոշեին միջամտել:

Հաշվի առնելով այս պարագաները, Մուհամմադ Ալին գտավ, որ իրադրությունը նպաստավոր էր իր համար և կարող էր ծեռնամուխ լինել Պաղեստինի և Սիրիայի գրավմանը:

Սակայն դրա համար պատրվակ էր պետք: Պատրվակը նույնպես գտնվեց:

1831 թ. զորակոչից խուսափել և Պաղեստինում, Ակկայի փաշալիքում, ապաստան էր գտել մոտ վեց հազար եգիպտացի՝ ֆելլահ, արհեստավոր և բեդվին: Մուհամմադ Ալին պահանջեց նրանց ետ վերադարձնել: Ակկայի փաշա Աբդալլահը հրաժարվեց կատարել Մուհամմադ Ալիի պահանջը, պատճառաբանելով, որ նրանք միևնույն, Օսմանյան կայսրության հպատակներն էին և ազատ էին ապրելու կայսրության բոլոր այն մասերում, որտեղ կցանկանային: Աբդալլահը գուցե ծնականորեն ճիշտ էր, իրականում նա այդ փաստարկն օգտագործեց, որովհետև չէր ցանկանում ընդառաջել Եգիպտոսի տիրակալին, որի հետ հարաբերությունները լարված էին և որի հետագա հզորացումը խիստ անհանգստացնում էր հարևան արաբական երկրների որոշ ղեկավարների: Բացի այդ, Աբդալլահը հասկանում էր, որ Մուհամմադ Ալիի պահանջների բավարարումն իր կողմից լավ չէր ընդունվի Ստամբուլում: Իսկ նա չէր ցանկանում իր հարաբերությունները փչացնել Բարձր Դռան հետ:

Աբդալլահի բացասական պատասխանից հետո, Մուհամմադ Ալին 1831 թ. հոկտեմբերին հրաման արձակեց մտնել Պաղեստին և Սիրիա:

Այս գործը համարելով շատ կարևոր, Մուհամմադ Ալին զորքերի հրամանատար նշանակեց դարձյալ իր ավագ որդուն՝ Իբրահիմ փաշային: Նա իր սովորության համար շատ խնամքով էր նախապատրաստվել պաղեստինա–սիրիական արշավանքին: Նրա զորքերը հոկտեմբեր ամսվա ընթացքում, չհանդիպելով լուրջ դիմադրության, գրավեցին Ղազան, Հայֆան և Յաֆան ու նոյեմբերին մոտեցան Ակկա քաղաք–ամրո-

ցին, որին տիրացան վեցամսյա պաշարումից հետո, 1831 թ. մայիսի 27–ին:

2. Եգիպտա–թուրքական առաջին պատերազմը (1832–1833 թթ.)

Իսկ ինչպիսին էր Ստամբուլի դիրքորոշումը: Մուհամմադ Ալիի ենթադրությունները ճիշտ դուրս եկան: Բարձր Դուռը, թեև շատ մտահոգ էր եգիպտացիների գործողություններից, բայց իրեն դեռևս թույլ էր զգում և չէր համարձակվում պատերազմական գործողություններ սկսել Մուհամմադ Ալիի դեմ: Բայց Իբրահիմի զորքերի հաղթանակներն այն աստիճան անհանգստացրին սուլթանին, որ նա տեսնելով, որ արդեն վտանգը կախվում է բուն Թուրքիայի վրա, որոշեց խաղի մեջ մտնել: Սակայն նա դա արեց շատ հետաքրքիր ձևով: Սուլթանը պաշտոնապես պատերազմ չհայտարարեց Եգիպտոսին: Հավանաբար Ստամբուլում կարծում էին, և ոչ առանց հիմքի, որ եթե սուլթանը պատերազմ հայտարարի Մուհամմադ Ալիին, ապա դա կընկալվի որպես Եգիպտոսը անկախ պետության ճանաչում: Հասկանալի է, որ Ստամբուլը նման սխալ չէր կարող թույլ տալ: Այդ պատճառով սուլթան Մահմուդ II 1832 թ. 23–ին հրապարակեց ֆերման, որով Մուհամմադ Ալիին հայտարարեց խռովարար և ազատեց նրան զբաղեցրած բոլոր պաշտոններից:

Մուհամմադ Ալին շատ ճիշտ կերպով դա ընդունեց որպես պատերազմի հայտարարություն, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Իսկ այդ ժամանակ, մինչև Ակկայի գրավումը, եգիպտական զորքերի մի մասը, որը ներգրավված չէր Ակկայի պաշարման մեջ, Սիրիայի տարածքով առաջ էր շարժվում հյուսիսային ուղղությամբ: 1832 թ. հուլիսի 8–ն սիրիական Հոմս քաղաքի մոտ տեղի ունեցավ առաջին ճակատամարտը եգիպտական և թուրքական զորքերի միջև, որն ավարտվեց թուրքական զորքերի խայտառակ պարտությամբ: Խայտառակ, քանի որ թուրքերը մարտի դաշտում թողեցին չորս հազար սպանված, իսկ Իբրահիմի կորուստները կազմում էին ընդամենը հարյուր մարդ: Եգիպտացիներին որպես ռազմական ավար անցավ թուրքական այդ զորախմբի ունեցած ամբողջ հրետանին:

Իբրահիմը մտավ Հոմս և սրընթաց շարժվեց դեպի հյուսիս, ճանապարհին գրավելով նաև Համա և Հալեբ սիրիական քաղաքները: Նրա հաջորդ հանգրվանը եղավ Բեյլանի լեռնանցքը, որը հանդիսանում էր Փոքր Ասիայի դարպասները: Երկու կողմերն էլ գիտակցում էին այդ լեռ-

նանցքի ռազմաստրատեգիական նշանակությունը: Պատահական չէր, որ Թուրքիան այստեղ էր կենտրոնացրել իր հիմնական ուժերը Հուսեյն փաշայի գլխավորությամբ, քաջ գիտակցելով, որ Բեյլանի անկումը եգիպտացիների առջև ճանապարհ կբացի Փոքր Ասիայի խորքերը, սպառնալով Թուրքիայի ամենակենսական կենտրոններին: Այստեղ 1832 թ. հուլիսի 29–ին տեղի ունեցավ եգիպտա–թուրքական երկրորդ ճակատամարտը, որը նույնպես ավարտվեց եգիպտացիների փայլուն հաղթանակով: Թուրքերի կորուստները շատ մեծ էին և Հուսեյն փաշայի տրամադրության տակ մնացին միայն թուրքական երբեմնի մեծ բանակի փշրանքները, որոնց հետ նա գլխապատառ փախավ մինչև պատմական հայկական Ադանա քաղաքը:

Անատոլիայի դռները բաց էին Իբրահիմ փաշայի առջև և եգիպտական բանակն առաջին անգամ մտավ Փոքր Ասիա: Նա առանց դժվարության գրավեց Ադանան: Իբրահիմի ծրագիրը պարզ էր: Նա ձգտում էր ինչքան հնարավոր է խորանալ Փոքր Ասիա և ստիպել թուրքական սուլթանին կատարել Եգիպտոսի պահանջները: Իսկ գլուխը կորցրած սուլթանը ելքը որոնում էր իր զորքերի հրամանատարներին փոխելու մեջ: Պարտություն կրած և խայտառակված Հուսեյն փաշայի փոխարեն Մահմուդ II եգիպտական զորքերի դեմ կռվող իր զորքերի հրամատար նշանակեց իր լավագույն համարվող զորահրամանատարներից մեկին՝ Մեհմեդ Ռեշիդ փաշային: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, դա չփրկեց Թուրքիային պարտությունից:

Իբրահիմ փաշան Ադանան գրավելուց հետո, առանց որևէ բարդությունների առաջ էր շարժվում և շուտով իր 30 հազարանոց բանակով մոտեցավ Կոնիային:

Թուրքական հրամանատարությունը որոշեց այստեղ տալ հերթական գլխավոր ճակատամարտը, եգիպտացիներին դուրս շպրտել Փոքր Ասիայից և պատերազմական գործողությունները տեղափոխել արաբական երկրներ, առաջին հերթին Սիրիայի տարածքը: Թուրքերին նման լավատեսություն էր ներշնչում այն հանգամանքը, որ եգիպտական բանակի դեմ, որը ինչպես նշվեց, իր կազմում ուներ 30 հազար զինվոր, կանգնած էր նրան թվական առումով երկու անգամ գերազանցող 60 հազարի հասնող թուրքական բանակը:

Ճակատամարտը սկսվեց 1832 թ. դեկտեմբերի 21–ին: Իբրահիմ փաշան կարողացավ հմուտ գործողություններով և իր բարձր ռազմական արվեստով թուրքական զորքերին դնել անելանելի դրության մեջ,

շրջապատել և գլխովին ջախջախել նրանց: Կոնիայի ճակատամարտը հանդիսացավ երրորդ և վերջին եգիպտա–թուրքական ճակատամարտը, որը նոր փառք բերեց եգիպտական բանակին:

Իբրահիմի առջև բաց էր Ստամբուլ տանող ճանապարհը և նրան ոչինչ չէր կարող խանգարել գրավել Օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Նման վստահության համար հիմք է հանդիսանում այն փաստը, որ Հոմսի, Բեյլանի և Կոնիայի ճակատամարտերը տանուլ տալուց հետո, թուրքական սուլթանն այլևս զորք չուներ, որը կարողանար կասեցնել եգիպտական բանակի առաջխաղացումը: Եվ Իբրահիմն ընդհուպ մոտեցավ խուճապի մատնված Ստամբուլին, ճամբարելով Կյութահիյայում:

3. Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միջամտությունը

Սուլթանը դիմեց իր սովորական դարձած հնարամտությանը: Նա դիմեց եվրոպական երկրների օգնությանը, ջանալով միաժամանակ խաղալ նրանց հակասությունների վրա: Նա ցանկանում էր նրանց օգնությամբ ոչ միայն կանխել Ստամբուլի գրավումը, այլև ստիպել եգիպտական զորքերին հեռանալ Փոքր Ասիայից:

Եվրոպական երկրները տարբեր դիրք գրավեցին:

Ֆրանսիան, որը շատ լավ հարաբերությունների մեջ էր Մուհամմադ Ալիի հետ, հրաժարվեց պաշտպանել սուլթանին և օգնել նրան: Ընդհակառակը, նա բացեիբաց պաշտպանում էր Մուհամմադ Ալիին:

Ռուսաստանը շատ անսպասելիորեն պատրաստակամություն հայտնեց պաշտպանել սուլթանին ընդդեմ Մուհամմադ Ալիի: Առաջին հայացքից Թուրքիայի հետ բազմիցս պատերազմի մեջ գտնված, որոնցից վերջինն ավարտվել էր ընդամենը երեք տարի առաջ՝ 1829 թ., Ռուսաստանի այդ տարօրինակ դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ նա թույլ Թուրքիային, որին նա կարող էր թելադրել իր կամքը, գերադասում էր ավելի հզոր Եգիպտոսից: Ռուսաստանին ավելի ձեռնտու էր հարևան ունենալ թույլ Թուրքիայի նման երկիր: Իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ Եգիպտոսի թիկունքում կանգնած էր Ֆրանսիան: Իսկ դա նշանակում էր, որ Եգիպտոսի հաղթանակի և Թուրքիայի վերջնական պարտության դեպքում Մերձավոր Արևելքում, Կովկասի մատույցներում և Միջերկրականի ավազանում, ինչպես ենթադրում էին

Սանկտ–Պետերբուրգում, ուժեղանալու էին Ֆրանսիայի դիրքերը, որը հակասում էր ցարական Ռուսաստանի շահերին:

Անգլիայի դիրքորոշման մեջ վճռական նշանակություն ունեցավ Ռուսաստանի բացահայտ պրոթուրքական դիրքորոշումը: Նա միանգամայն իրական էր համարում եգիպտա–թուրքական պատերազմի շարունակության դեպքում Ռուսաստանի միջամտությունը հօգուտ Թուրքիայի: Լոնդոնում մտավախ էին, որ դա կարող է հանգեցնել Օսմանյան կայսրության տրոհմանը առնվազն երկու մասի՝ թուրքական և եգիպտական: Հասկանալի է, որ դեպքերի նման զարգացման դեպքում, երբ Ռուսաստանը հանդես էր գալիս Թուրքիայի փրկչի դերում, նա էլ տիրապետող կդառնար տրոհվող օսմանյան կայսրության թուրքական մասում: Անգլիան ոչ մի դեպքում չէր կարող համաձայնվել դրա հետ:

Մյուս կողմից, Անգլիան, հաշվի առնելով, որ Ֆրանսիան լավ հարաբերություններ ուներ Մուհամմադ Ալիի հետ և եգիպտա–թուրքական կոնֆլիկտում բացահայտորեն նրան էր պաշտպանում, ավելի քան հավատացած էր, որ տրոհված Օսմանյան կայսրության եգիպտական–արաբական ամբողջ մասը կընկներ Ֆրանսիայի ազդեցության տակ, որը նույնպես հակասում էր նրա շահերին: Ուստի Լոնդոնում որոշեցին անպատախան թողնել սուլթան Մահմուդ II խնդրանքը և գրավել սպասողական դիրք: Սակայն ակնհայտ էր, որ Անգլիան նախընտրում էր Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը և դեմ էր նրա տրոհմանը և նրա վրա Ռուսաստանի կամ Ֆրանսիայի տիրապետության հաստատմանը: Բայց Անգլիայի սպասողական դիրք գրավելը չէր նշանակում, որ նա ձեռքերը ծալած պասիվ կերպով սպասում էր դեպքերի զարգացմանը:

Ահա այսպիսին էր երեք եվրոպական գլխավոր պետությունների դիրքորոշումը եգիպտա–թուրքական ռազմա–քաղաքական ճգնաժամի նկատմամբ: Ստամբուլին պարզ դարձավ, որ նա կարող է ապավինել միայն իր ոխերիմ թշնամի Ռուսաստանին և նրանից օգնություն խնդրեց: Վերջինս հուսախաբ չարեց թուրքական սուլթանին և նույնպես պաշտոնապես նրան տեղյակ պահեց, որ պատրաստ է Թուրքիային ռազմական օգնություն ցույց տալ ընդդեմ Մուհամմադ Ալիի:

Այսպիսով, թուրքական սուլթանն իր այդ քայլով Մուհամմադ Ալիից խլեց նախաձեռնությունը, որը սկզբում անցավ ցարական Ռուսաստանին, ապա նաև Անգլիային և Ֆրանսիային:

Նիկոլայ I ցարը շտապ կերպով գեներալ Մուրավյովին հատուկ առաքելությամբ ուղարկեց Եգիպտոս, որը Ալեքսանդրիայում եգիպտական ղեկավարության հետ բանակցությունների ժամանակ Մուհամմադ Ալիին ներկայացրեց ռուսական ինքակալի պահանջները, որոնք հիմնականում հանգում էին հետևյալին. հրաժարվել Ստամբուլը գրավելու ծրագրից, դադարեցնել ռազմական գործողությունները թուրքական սուլթանի դեմ և նրան ընդունել որպես իր սյուզերենը և ենթարկվել նրան:

Ռուսական պահանջները ծանր դրության մեջ դրեցին Մուհամմադ Ալիին: Նա կամ պետք է ընդուներ այդ պահանջները կամ մերժել և շարունակել պատերազմական գործողությունները և գրավել Ստամբուլը: Ինչքան էլ, որ գայթակղիչ լիներ երկրորդ տարբերակը, Մուհամմադ Ալին գիտակցում էր, որ դա իր համար հղի է շատ ծանր հետևանքներով, որովհետև պատերազմի մեջ մտնել ռուսական կայսրության դեմ Եգիպտոսի ուժերից վեր էր: Եվ Մուհամմադ Ալին ընդունեց գեներալ Մուրավյովի միջոցով ներկայացված Նիկոլայ I պահանջները, որոնք, պետք է ենթադրել, վերջնագրի բնույթ էին կրում:

Թվում էր, թե ստեղծվել էին եգիպտա–թուրքական կոնֆլիկտի լուծման նախադրյալները: Բայց դեպքերի զարգացումն անակնկալ բնույթ կրեցին:

Այդ պահին կայսրության փոքրասիական մասերում մեծ հուզումներ առաջացան, որոնք մի շարք վայրերում վերածվեցին ապստամբությունների: Այս հարցի լուսաբանությանը նվիրված գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ դրանց մեջ խառն էր Իբրահիմ փաշան և որ այդ ապստամբությունները նա էր հրահրել իր հավատարիմ մարդկանց միջոցով, կանգ չառնելով մեծ գումարներ ծախսելու առջև: Մենք չենք բացառում դրա հնարավորությունը, որովհետև Արևելքի պատմությունը, այդ թվում և արաբների ու թուրքերի պատմությունը, հարուստ է նման դեպքերով:

Օգտվելով այդ խառնակ իրավիճակից, Իբրահիմ փաշան գրավեց Կյութահիյան, որը տեղի ունեցավ 1833 թ. փետրվարի 2–ին: Եգիպտական զորահրամանատարի մտադրությունն ակնհայտ էր. նրա հաջորդ նշանակետը լինելու էր օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Ամենայն հավանականությամբ դա արվել էր Մուհամմադ Ալիի գիտությամբ, որովհետև դժվար է պատկերացնել, որ Իբրահիմ փաշան

կարող էր դիմել նման վտանգավոր քայլի առանց իր հոր գիտության և համաձայնության:

Մուհամմադ II, առանց հապաղելու, անմիջապես հաջորդ օրը, փետրվարի 3–ին, ստիպված էր դիմել ռուսական ցարին, նրանից խնդրելով ռազմական օգնություն և աջակցություն: Սանկտ–Պետերբուրգի պատասխանը եղավ դրական և շատ արագ: Փետրվարի 20–ին ռուսական ռազմական նավատորմը հայտնվեց Բոսֆորի ասիական ափերին: Թուրքական սուլթանին օգնելու համար Նիկոլայ I ուղարկեց 20 հազար հոգուց բաղկացած մի զորաբանակ: Չբավարարվելով դրանով, նա օգնության նպատակով ուղարկեց նաև ցամաքային զորքեր, որոնք Բալկաններից պետք է ուղևորվեին դեպի Ստամբուլ: Այսպիսով, ռուսական զորքերը փակեցին Իբրահիմի զորքերի առջև Ստամբուլ մտնելու հնարավորությունը:

Սուլթանը մի փոքր հանգստացավ, սակայն խուճապը թուրքական մայրաքաղաքում չվերացավ, քանի որ չկար բացարձակ վստահություն, թե ռուսական զորքերը կկարողանան կասեցնել Իբրահիմի զորքերի հետագա առաջխաղացումը:

Մինչ պետական պաշտոնյաները և զինվորականները դատողություններ կանեին այդ հարցի շուրջը, կոնֆլիկտին միջամտեցին Անգլիան և Ֆրանսիան: Դրա համար առիթ հանդիսացավ ոչ թե Կյութահիյայի գրավումը եգիպտացիների կողմից, այլ ռուսական ծովային և ցամաքային ուժերի հայտնվելը Թուրքիայի տարածքում՝ սուլթանի խնդրանքով:

Նրանց միջամտության հիմնական նպատակն էր Ռուսաստանից խլել նախաձեռնությունը և նրան զրկել կոնֆլիկտը միանձնյա լուծելու հեռանկարից, որի արդյունքը լինելու էր միայն մեկը՝ ռուսական ազդեցության և վերահսկողության հաստատումը ամբողջ Օսմանյան կայսրության վրա: Իսկ դա հակասում էր Անգլիայի և Ֆրանսիայի շահերին, ուստի և նրանք ոչ մի դեպքում չէին կարող թույլ տալ, որ Ռուսաստանը հաստատվի Բոսֆորի ափերին:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ Ֆրանսիայի դիրքորոշման փոփոխության վրա:

Երբ ծագեց եգիպտա–թուրքական կոնֆլիկտը և եգիպտական զորքերը հայտնվեցին Ստամբուլի պատերի տակ ու սուլթանը դիմեց եվրոպական պետությունների օգնությանը, աղերսելով նրանց միջամտությունն իրեն փրկելու համար, ապա Ֆրանսիան, ինչպես արդեն նշել

ենք, հրաժարվեց օգնության ձեռք մեկնել սուլթանին և հայտարարեց, որ ինքը պաշտպանում է Եգիպտոսին և կանգնած է Մուհամմադ Ալիի կողքին: Տվյալ պահին նման դիրքորոշումն էր առավելագույնս համապատասխանում նրա ազգային շահերին, քանի որ դա կարող էր ապահովել Մուհամմադ Ալիի հաղթանակը, որի հետ նա շատ մոտ և բարեկամական հարաբերությունների մեջ էր:

Իսկ այժմ, երբ ռուսական զինված ուժերը հայտնվել էին Թուրքիայում և Մուհամմադ Ալին այլևս չէր կարող որևէ բան անել, Ֆրանսիայի, ինչպես և Անգլիայի խնդիրը դարձավ ամեն ինչ անել, որպեսզի Ռուսաստանը միակողմանիորեն և հօգուտ իր շահերի չտնօրինի թուլացած Թուրքիայի ճակատագիրը, և օր առաջ հեռանա Թուրքիայից: Իսկ դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի հաշտություն կնքվի Եգիպտոսի և Թուրքիայի միջև, եգիպտական զորքերը հեռանան Փոքր Ասիայից և այդ կերպ վերանա ռուսական զորքերի Թուրքիայում մնալու դրդապատճառը:

Անգլիան և Ֆրանսիան հանդես եկան միջնորդի դերում և խաղաղության վերահաստատման ջատագովներ, հայտարարելով, որ նրանց նպատակն է եգիպտական կուսակալին հաշտեցնել թուրքական սուլթանի հետ: Իրենց «նվիրվածությունը» հաշտության և խաղաղության գաղափարներին հավաստելու և Մուհամմադ Ալիի վրա ճնշում գործադրելու նպատակով, Անգլիան և Ֆրանսիան իրենց նավատորմն ուղարկեցին Եգիպտոսի ջրերը: Մյուս կողմից նրանք ուժեղ ճնշում գործադրեցին նաև սուլթան Մահմուդ II վրա, ստիպելով նրան շուտափույթ կերպով հաշտվել Մուհամմադ Ալիի հետ:

4. Կյութահիյայի և Հունքիյար Իսքելեսիի պայմանագրերը և եգիպտա–թուրքական առաջին պատերազմի արդյունքները

Ի վերջո, անգլո–ֆրանսիական առաքելությունը պսակվեց հաջողությամբ և 1833 թ. մայիսի 4–ին հաշտություն կնքվեց Եգիպտոսի և Թուրքիայի միջև: Մուհամմադ Ալին այլընտրանք չուներ և հարկադրված էր զիջել ու դիմել այդ քայլին: Իսկ ինչ վերաբերում էր թուրքական սուլթանին, ապա վերջինիս ուրախությամբ դիմեց այդ քայլին, որովհետև նա ևս այլընտրանք չուներ: Նրա ռազմական ռեսուրսները սպառվել էին և Թուրքիայի փրկության միակ ուղին հաշտության պայմանագրի կն-

քումն էր, որը ստորագրվեց Կյութահիյայում, տերությունների միջնորդությամբ:

Ինչ ձեռք բերեցին և ինչ կորցրեցին Եգիպտոսը և Թուրքիան համապատասխանաբար Կյութահիյայի պայմանագրով:

Բարձր Դուռը, Անգլիայի, Ռուսաստանի՝ և Ֆրանսիայի հավանությամբ, ճանաչեց Մուհամմադ Ալիի իրավունքները և տիրապետությունը ոչ միայն Եգիպտոսի, այլև նրա կողմից նվաճած Արաբիայի, Սուդանի և Կրետե կղզու նկատմամբ: Մուհամմադ Ալին փաստորեն իր տիրապետությունը հաստատեց նաև Պաղեստինի, Սիրիայի և Կիլիկիայի վրա, թեև նա կոչվում էր կառավարիչ: Այսպիսով, Մուհամմադ Ալին ոչ միայն պահպանեց իր իշխանությունը Եգիպտոսում, այլև ընդարձակեց իր տիրապետության սահմանները:

Եգիպտոսը պատերազմից դուրս եկավ ավելի հզորացած և իր սահմաններն ավելի ընդարձակած: Դա այլևս նախապատերազմյան Եգիպտոսը չէր: Այդ բանը ընդունում էր ինչպես սուլթանը, այնպես էլ եվրոպական այնպիսի հզոր պետություններ, ինչպես Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան:

Սուլթանը շահեց այնքանով, որքանով նրան հաջողվեց պահպանել իր գահը, ստիպել Մուհամմադ Ալիին հեռանալ Փոքր Ասիայից, պահպանել իր կայսրության ամբողջականությունը և վերականգնել իր, որպես սյուզերենի, իրավունքները Մուհամմադ Ալիի վրա: Նրա անմիջական տիրապետության տակ մնացին Փոքր Ասիան, Իրաքը և Բալկանների մի քանի շրջանները:

Սակայն երկու կողմերն էլ ունեցան կորուստներ:

Մուհամմադ Ալիին չհաջողվեց լուծել Օսմանյան կայսրության վերացման և Եգիպտոսի անկախության խնդիրները, իսկ սուլթանը չկարողացավ ջախջախել Եգիպտոսին կամ վերածել նրան թույլ և իրենից կախված պետության: Նա փաստորեն ունեցավ տարածքային կորուստներ, քանի որ Մուհամմադ Ալիի տիրապետության տակ անցած երկրների վրա իրականում նա որևէ իրավունքներ, էլ չենք խոսում իշխանության մասին, չուներ: Սուլթանն ունեցավ նաև բարոյական կորուստներ: Նա հեղինակազրկվեց, որը թուլացրեց նրա դիրքերը ամբողջ կայսրությունում և մուսուլմանական աշխարհում:

Այսպիսով, եգիպտա–թուրքական առաջին պատերազմի արդյունքում, որն իր արտացոլումը գտավ Կյութահիյայի հաշտության պայմանագրում, Օսմանյան կայսրությունը, թեև պահպանեց իր ամբողջակա-

նությունը, իրականում վերածվեց երկու մասի: Մեկ մասը կարելի է պայմանականորեն անվանել եգիպտական, իսկ մյուսը՝ թուրքական: Դրանցից ավելի ընդարձակը, հզորը և կենսունակը եգիպտական մասն էր Մուհամմադ Ալիի գլխավորությամբ, որը ցանկանում էր ազատվել օսմանյան կոչված ճահճից և դուրս գալ զարգացման ավելի առաջադեմ ուղու վրա: Իսկ մյուսը, թուրքական մասը, ավելի թույլ էր, որը կառչած էր իր դարը վաղուց ապրած արժեքներին և խոչընդոտում էր անգամ աննշան առաջընթաց կայսրության որ մասում էլ, որ լիներ:

Սակայն Օսմանյան կայսրության շրջանակներում երկու կենտրոնների առաջացումը չստացավ իրավաբանական ձևակերպում և չվերածվեց դուալիստական պետության, ինչպես ավստրիական կայսրությունը, որը XIX դարում դարձավ դուալիստական Ավստրո–Հունգարական կայսրության:

Սակայն այս պատմությունն ունեցավ իր շարունակությունը: Իբրահիմ փաշան իր զորքեր դուրս բերեց Փոքր Ասիայից և տեղավորեց Տավրոս լեռնաշղթայից այն կողմ: Դրանից հետո Ռուսաստանին ոչինչ չէր մնում անել, քան իր ցամաքային և ծովային ուժերը դուրս բերել Թուրքիայից, որի վրա պնդում էին Անգլիան և Ֆրանսիան: Բայց նա չցանկացավ հեռանալ հենց այնպես, առանց փոխհատուցման Թուրքիային մատուցած իր ծառայությունների դիմաց: Նրան հաջողվեց, նախքան իր զորքերը դուրս բերելը, սուլթանի հետ կնքել մի նոր պայմանագիր, որը ձեռնտու էր Ռուսաստանին և ուժեղացնում էր նրա դիրքերը Թուրքիայում և նեղուցների գոտում:

Պայմանագիրը ստորագրվեց 1833 թ. հուլիսի 8–ին Հունքիյար Իսքելեսում: Դա սուլթանի ամառային նստոցն էր, որը նա տրամադրել էր ռուսական հրամանատարությանը, ռուսական զորքերի Թուրքիա ժամանելուց հետո:

Պայմանագիրը, որը կոչվում էր «Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև պաշտպանական դաշինքի մասին», Ռուսաստանի կողմից ստորագրեցին կոմս Ա. Օռլովը, որը ցարի արտակարգ դեսպանն էր, և Թուրքիայում Ռուսաստանի դեսպանորդ Ա. Բուտենևը: Իսկ Թուրքիայի կողմից պայմանագրի տակ իրենց ստորագրությունները դրեցին մեծ վազիր Խոսրով Մեհմեդ փաշան, սուլթանական գվարդիայի հրամանատար, մարշալ Ֆեվզի Ահմեդ փաշան և արտաքին գործերի նախարար Հաջի Մեհմեդ Ակիֆ էֆենդին:

Պայմանագիը բաղկացած էր երկու մասից: Առաջին մասը հայտնի կամ հրապարակային մասն էր: Նրա առաջին հոդվածում արձանագրված էր, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև «հավերժորեն գոյություն կունենա խաղաղություն և դաշինք»: Կողմերը պայմանավորվում էին, որ նրանք կհամաձայնեցնեն իրենց քայլերը բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են նրանց «հանգստությանը և անվտանգությանը և այդ կապակցությամբ ցույց կտան փոխադարձ էական օգնություն և կտրամադրեն ամենագործնական օգնական ուժ»: Ռուսաստանը, պայմանագրի երրորդ հոդվածի համաձայն, պարտավորվում էր Թուրքիային տրամադրել անհրաժեշտ քանակությամբ ռազմական ուժեր, «եթե կրկին առաջանա այնպիսի իրադրություն, որը Բարձր Դռանը դրդի դիմել Ռուսաստանին զինվորական և ծովային օգնության պահանջով»:

Այս հոդվածը, ինչպես դժվար չէ կռահել, նկատի ուներ առաջին հերթին Մուհամմադ Ալիին: Եգիպտա–թուրքական նոր պատերազմի դեպքում, Ռուսաստանը պարտավորվում էր ռազմական օգնություն ցույց տալ թուրքական սուլթանին: Ռուսական կողմը պատրաստ էր նրան նման օգնություն ցույց տալ նաև համանման այլ պարագաներում:

Պայմանագիրն ուներ նաև գաղտնի մաս, ըստ որի, Թուրքիան ազատվում էր Ռուսաստանին օգնություն ցույց տալուց, որն արձանագրված էր պայմանագրի ոչ գաղտնի մասի առաջին հոդվածով: Բայց դրա փոխարեն Թուրքիան պարտավորվում էր փակել Դարդանելի նեղուցը և «թույլ չտալ որևէ օտար պետության ռազմական նավերի մտնել նեղուց, ինչ պատրվակի տակ էլ, որ լինի»:

Այսպիսով, Հունքիյար Իսքելեսի պայմանագիը կարելի համարել Ռուսաստանի դիվանագիտական հաղթանակը, որով ամրապնդվեց նրա ռազմական հաղթանակը եգիպտա–թուրքական ճգնաժամի ժամանակ:

Պայմանագիրը ստորագրվել էր ութ տարի ժամանակով:

Հունքիյար Իսքելեսում ստորագրված ռուս–թուրքական պաշտպանական դաշինքի մասին պայմանագիրը մեծ վրդովմունք առաջացրեց Փարիզում և Լոնդոնում: Այնտեղ լավ էին հասկանում, որ այդ պայմանագրի հետևանքով Թուրքիան կախման մեջ էր ընկնում իրենց մրցակից Ռուսաստանից: Պայմանագիրը անհանգստացրեց նաև Կահիրեին: Այնտեղ լավ էին հասկանում նրա հակաեգիպտական ուղղվածությունը: Դա մի նախազգուշացում էր Մուհամմադ Ալիին առ այն, որ նրա նոր արշավանքի դեպքում, որը կարող էր սպառնալիք ստեղծել Օսմա-

նյան կայսրությանը կամ հարցականի տակ դնել նրա գոյությունը, Ռուսաստանը դարձյալ ռազմական օգնություն ցույց կտա թուրքական սուլթանին:

Անգլիան և Ֆրանսիան չբավարարվեցին միայն իրենց դժգոհությունն արտահայտելով: Նրանք իրենց միացյալ ռազմածովային էսկադրիլիան ուղարկեցին թուրքական ջրերը՝ սուլթանի վրա ճնշում գործադրելու նպատակով: Միաժամանակ Սանկտ–Պետերբուրգում Անգլիայի և Ֆրանսիայի գործերի հավատարմատարները բողոքի նոտա հանձնեցին Ռուսաստանին, շարադրելով իրենց կառավարությունների դիրքորոշումը ոչ միայն տվյալ պայմանագրի նկատմամբ, այլև այն դեպքում, եթե Ռուսաստանը փորձի օգտվել նրանում նախատեսվող իրավունքներից: Այդ կապակցությամբ անգլիական և ֆրանսիական համատեղ նոտայում ասված էր. «եթե այդ ակտի պայմանները հետագայում հարուցեն Ռուսաստանի ռազմական միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, ապա անգլիական և ֆրանսիական կառավարություններն իրենց լիակատար իրավունք կվերապահեն վարվել այնպես, ինչպես եթե հիշյալ տրակտատը գոյություն չունենար»:

Ռուսաստանի կառավարությունը պարտքի տակ չմնաց և Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարություններին պատասխանեց նույն վճռականությամբ: Ռուսական պատասխան նոտայում, որը ստորագրել էր ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Կ. Նեսելռոդեն, վերստին հաստատվում էր Ռուսաստանի հավատարմությունը Հունքիյար Իսքելեսի պայմանագրի հոդվածներին և շեշտվում, որ Ռուսաստանը «կվարվի այնպես, կարծես թե անգլիական և ֆրանսիական գործերի հավատարմների նոտաները ընդհանրապես գոյություն չեն ունեցել»:

Դիվանագիտական այս դուելը մի կողմից Անգլիայի և Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև ավարտվեց առանց արյունահեղության: Կողմերը կարծես թե հաշտվեցին ստեղծված իրադրության հետ, ուշադիր հետևելով մեկը մյուսի գործողություններին և սպասելով պայմանագրի ժամկետը լրանալուն:

5. Սիրիան և Պաղեստինը եգիպտական տիրապետության տարիներին (1832–1840 թթ.)

Սիրիան և Պաղեստինը, ինչպես նշվեց, Կյութահյայի պայմանագրով դրվեցին Մուհամմադ Ալիի կառավարման ներքո: Թեև արաբական այդ երկու երկրները չէին համարվում Մուհամմադ Ալիի տիրույթները, ինչպես Եգիպտոսը, Արաբիան կամ Սուդանը, Մուհամմադ Ալին Սիրիան և Պաղեստինը կառավարում էր ինչպես իրեն պատկանող երկրները, և այդ տեսակետից նա ոչ մի տարբերություն չէր դնում նրանց և, ասենք Արաբիայի կամ Սուդանի միջև:

Մեծ կարևորություն տալով Սիրիային, Մուհամմադ Ալին իր ավագ որդուն՝ Իբրահիմ փաշային նշանակեց Սիրիայի կառավարիչ, նրան օժտելով ամենալայն իրավունքներով:

Պատահականություն չէր Իբրահիմին այդ բարձր և կարևոր պաշտոնում նշանակելը: Նա ամենից խելացին էր Մուհամմադ Ալիի որդիների մեջ, որը նրան ամենամոտ կանգնածն էր, և որին Մուհամմադ Ալին պատրաստում էր որպես իր արժանի փոխանորդ:

Այդ երկու ականավոր գործիչներին միացնում էր նաև նրանց գաղափարական ընդհանրությունը արաբական աշխարհի քաղաքական ապագայի նկատմամբ: Երկուսն էլ փայփայում էին արաբական մեծ և հզոր թագավորություն կամ կայսրություն ստեղծելու երազանքը, պատրաստ ամեն ինչ զոհել այդ քաղաքական իդեալի կենսագործման համար:

Այդ բանը նկատել են դեռևս նրանց ժամանակակիցները, այդ թվում և XIX դարի անգլիական այնպիսի ականավոր պետական գործիչ և դիվանագետ, ինչպես լորդ Պալմերստոնը, և շատ ուրիշներ: Անգլիական լորդը համոզված էր, որ Իբրահիմի վերջնական նպատակն է «ստեղծել արաբական թագավորություն, որի մեջ մտնեն բոլոր երկրները, որոնց լեզուն արաբերենն է»: Փաստորեն Պալմերստոնն այստեղ նկատի ունի ոչ միայն Արաբական Արևելքի, այլև Արաբական Արևմուտքի կամ Հյուսիսային Աֆրիկայի երկրները: Եթե Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրները միավորելու մասին այդքան վստահորեն չի կարելի ասել, ապա արևելյան արաբական երկրները միավորելու և միասնական պետություն կազմավորելու մասին կարել ի է խոսել միանգամայն հավաստիորեն:

Այդ տեսակետից պակաս հետաքրքրություն չի ներկայացնում մեկ ուրիշ աչքի ընկնող գործչի՝ բարոն Բուալեկոնտի կարծիքը: Արժե նրա կարծիքին անդրադառնալ, քանի որ նա երկար ժամանակ եղել է Իբրահիմի կողքին որպես ֆրանսիական ներկայացուցիչ, և լավ ծանոթ էր նրա հայացքներին: Ահա թե ինչ է նշում ֆրանսիական բարոնը: «Իբրահիմը,— գրում է նա,— գաղտնի չի պահում, որ նրա նպատակն է վերակենդանացնել արաբական ազգային գիտակցությունը, արաբների մեջ ներդնել իսկական հայրենասիրության զգացմունքը և նրանց հետ լիակատար համագործակցել ապագա կայսրությունը կառավարելու հարցում»:

Ուրեմն, Իբրահիմը արաբական միասնական պետության ստեղծման ամենագլխավոր նախապայմանը համարում էր արաբական ազգային գիտակցությունը, դա այն շաղախն էր, որը ցեմենտելու էր արաբական լայնածավալ աշխարհի տարբեր մասերը և ստեղծելու էր մի նոր միասնական կառույց: Իբրահիմը ակտիվորեն քարոզում էր այդ գաղափարները և արաբներին ոգեկոչում արաբական պատմության փառավոր օրինակներով ու էջերով: Նա իր շուրջն էր համախմբել իր նման մտածողների մի խումբ, որն օժանդակում էր Իբրահիմին արաբական գիտակցությունն արթնացնելու և զանգվածների մեջ արմատավորելու գործում:

Սակայն պետք է նշել, որ այդ ժամանակ դա շատ բարդ խնդիր էր, թեկուզ և այն պատճառով, որ արաբների ինքնագիտակցությունը XIX դարի սկզբներին դեռևս խանձարուրում էր գտնվում: Նա դեռևս նոր էր ձևավորվում, միս ու արյուն ստանում: Դեռ շատ ժամանակ էր պահանջվում, որ նա տարածվեր ու խորանար, համակեր միլլիոնավոր արաբների: Կարելի է ասել, որ Իբրահիմն ու նրա համակիր բարեկամները իրենց ժամանակից առաջ էին ընկնել: Արաբական գիտակցությունն սկսեց արագորեն զարգանալ XIX դարի կեսերից, հատկապես դարի երկրորդ կեսին, երբ նա ձևավորվեց որպես ինքնուրույն աշխարհիկ ուղղություն, տարանջատվելով համաիսլամական ընդհանուր գաղափարախոսությունից:

Այդուհանդերձ, մենք կարող ենք խոսել XIX սկզբում արաբական գիտակցության կամ ինքնագիտակցության գործընթացի սկզբնավորման մասին, որի հետ այդքան մեծ հույսեր էր կապում Իբրահիմը և նրա մերձավորագույն շրջապատը:

Եվ, այսպես, Իբրահիմը դարձավ Սիրիայի և Պաղեստինի կառավարիչ բավականին հստակ ազգային, քաղաքական և տնտեսական ծրագրերով, որոնք դրվեցին նրա գործունեության հիմքում:

Հաշվի առնելով իր հոր, Մուհամմադ Ալիի փորձը Եգիպտոսում, Իբրահիմը որոշեց բարեփոխումներ իրականացնել իրեն հանձնված երկրամասում: Նա, ինչպես և Մուհամմադ Ալին, բարեփոխումները սկսեց կառավարման ոլորտից: Եվ դա պատահական չէր, քանի որ արևելյան հասարակություններում, յուրահատուկ պայմանների հետևանքով, բացառիկ է կառավարության դերը:

Իբրահիմն իր առաջնահերթ խնդիրը համարեց վերացնել տեղական կառավարիչների անջատողականությունը, սահմանափակել նրանց իրավունքները, նրանց ենթարկել իրեն, իսկ չենթարկվողներին հեռացնել կամ պատժել, երկրում հաստատել խիստ կարգապահություն և իրագործել կառավարման համակարգի կենտրոնացում: Երկրամասում հաստատվեց կառավարման ուղղաձիգ ենթակայության համակարգ: Բոլորը պարտավոր էին ենթարկվել Սիրիայի և Պաղեստինի գլխավոր կառավարիչին, այսինքն Իբրահիմ փաշային:

Կենտրոնական ապարատի ամրապնդմանը հաջորդեց երկրամասի նոր տարածքային վերաբաժանումը, որը նույնպես առնչվում էր կառավարման կենտրոնական ապարատի և համակարգի ամրապնդմանը: Իբրահիմը Սիրիան, Պաղեստինը և Կիլիկիան բաժանեց վեց մարզերի կամ նահանգների, որոնք, ինչպես և Եգիպտոսում, կոչվեցին մուդիրիյա, իսկ նրանց ղեկավարները մուդիրներ: Նրանց նշանակում և ազատում էր Իբրահիմը և նրանք լրիվ կախված էին նրանից: Կառավարման համակարգում մեծ տեղ հատկացվեց քաղաքներին: Դրա մասին է վկայում այն փաստը, որ կենտրոնական կառավարությունը քաղաքներում նշանակում էր կառավարիչներ, որոնք հանդիսանում էին նրա ներկայացուցիչները: Նրանք կոչվում էին մութասալիմներ: Քաղաքները ի դեմս մութասալիմների, կառավարման որոշակի իրավունքներ ձեռք բերեցին շրջակա գյուղերի վրա: Գյուղերի ղեկավարները լիազորությունների և անվանակոչման առումով, փոփոխության չենթարկվեցին: Նրանք նախկինի պես կոչվում էին շեյխեր: Միայն թե այժմ նրանք ենթարկվում էին մութասալիմին:

Իբրահիմը ստեղծեց քաղաքային իշխանության կառավարման մի յուրահատուկ մարմին՝ մեջլիս, որը մութասալիմին կից էր և գործում էր նրա նախագահությամբ: Բավականին հետաքրքիր էր նրա կազմը, ո-

ը նույնիսկ կարելի է ասել ներկայացուցչական էր: Քաղաքային մեջլիսի կամ խորհրդի անդամ էին տեղական հոգևորականության, վաճառականության և հողատերերի ներկայացուցիչները: Մեջլիսը օգտվում էր խորհրդակցական մարմնի իրավունքներից և ինքնուրույն վճիռներ արձակել չէր կարող: Իբրահիմը քաղաքային կառավարման այս համակարգը վերցրել էր եվրոպական քաղաքների կառուցվածքից, որի համակիրն էր նա:

Մեջլիսը միայն մի հարցում էր իրավասու վճիռներ արձակելու: Դա վերաբերում էր դատական ոլորտին, քանի որ նրա վրա, բացի մութասալիմին կից խորհրդական մարմինը լինելուց, դրվեցին նաև քաղաքացիական դատարանի ֆունկցիաներ: Սակայն նա զուրկ էր քրեական և քաղաքական գործառույթից: Իսկ ընդհանրապես բարձրագույն դատական իշխանությունը պատկանում էր Իբրահիմին, որի վճիռները վերջնական էին:

Ստեղծելով ուժեղ կենտրոնացված կառավարման համակարգ, լայն իրավունքներից օգտվող պետական ապարատ և ավարտելով նոր վարչատարածքային բաժանումը և տեղական կառավարման համակարգի հաստատումը, Իբրահիմ փաշան իր կարևոր խնդիրը համարեց Սիրիայում, Պաղեստինում և Կիլիկիայում անվտանգության հաստատումը: Նա նկատի ուներ անվտանգության ապահովում ինչպես ամբողջ վեց մուդիրիյաներում, այնպես էլ ճանապարհներում, այդ թվում և բոլոր քարավանային ուղիներում, որոնք անցնում էին անապատներով: Այդ երկրամասերում վերջ տրվեց ավազակային հարձակումներին, քարավանների կողոպուտին ու թալանին, և մարդիկ իրենց ապահով էին զգում:

Դրանով լուծվում էր ոչ միայն անվտանգության խնդիր, գույքի և ունեցվածքի ապահովության հարցը, այլև տնտեսական և առևտրական հարցեր: Անվտանգության հաստատումը երկրում և ճանապարհներում, այդ թվում և տարանցիկ, նպաստում էր առևտրի զարգացմանը և ընդլայնմանը, որն իր հերթին խթանում էր Սիրիայի տնտեսական վերելքը: Աշխուժացավ առևտուրը Բաղդադի և Դամասկոսի միջև, եվրոպական ապրանքները Սիրիայի ճանապարհներով հոսում էին Իրաք, իսկ հնդկական և պարսկական ապրանքները՝ դարձյալ սիրիական ճանապարհներով, եվրոպական երկրներ:

Այնուհետև Իբրահիմը ձեռնամուխ եղավ փոփոխությունների իրականացմանը ագրարային ոլորտում: Այստեղ նա հետապնդում էր ո-

որոշակի ստրատեգիական նպատակ, որը այդ ժամանակ նույնիսկ կարող էր ոչ այնքան հավանական թվալ: Իբրահիմը ձգտում էր զարկ տալ գյուղատնտեսությանը և բարձրացնել բերքատվությունն այն աստիճան, որ Սիրիան դառնար ապագա արաբական կայսրության հացահատիկի և գյուղատնտեսական այլ մթերքների հիմնական մատակարարողը: Այդ խնդրի լուծման հիմնական օղակը նա համարեց հարկերի գանձման համակարգի փոփոխությունը: Նա հաստատեց հարկերի գանձման կայուն չափաբաժին, փակելով դուռը ֆելլահներից հարկերի կամայական գանձման առջև: Իսկ սովորաբար այդ քայլին դիմում էին ֆեոդալները և հարկահավաքները: Դա հանգեցնում էր գյուղացիների քայքայմանը և գյուղատնտեսության անկմանը:

Իբրահիմը դիմեց նաև մի քայլի, որն այլ կերպ, քան համարձակ, չես անվանի: Սիրիայում, ինչպես նաև Պաղեստինում, մասամբ նաև Կիլիկիայում, կային այսպես կոչված անմշակ և խոպան հողեր: Ֆելլահները այդ հողերը մշակելու ոչ մի շահագրգռվածություն չունեին, քանի որ, նախ, դրա միջոցները չունեին, և ապա դրա համար պարտավոր էին հարկեր վճարել: Իբրահիմը որոշեց խոպան հողերը մշակելու համար տրամադրել ֆելլահներին, նրանց երկար ժամանակով ազատելով որևէ հարկի վճարումից: Այդ քայլը նպաստեց ցանքատարածությունների ընդարձակմանը և գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը: Բայց նա միայն դրանով չբավարարվեց: Իբրահիմ փաշան պարտադրաբար խոպան հողերի վրա բնակեցրեց քոչվոր բեդվիններին, որոնք ստիպված էին վարժվել նստակյաց կյանքին և զբաղվել բացի անասնապահությունից, նաև հողագործությամբ: Բնականաբար, այս քայլը նույնպես նպաստեց մշակվող հողատարածքների ընդլայնմանը:

Իբրահիմ փաշայի իշխանությանը ենթակա այս երկրամասում, մանավանդ կառավարման միջին և ցածր օղակներում, դեռևս մեծ թիվ էին կազմում թուրք պաշտոնյաները: Նրանք կաշառակերության, կամայականությունների, թալանի, անօրինական հարկերի և այլ թալանչիական գործողությունների կրողներն էին: Բայց այն բանից հետո, երբ Իբրահիմ փաշան սահմանեց հարկերի կայուն չափեր և որոշակի արտոնություններ տվեց խոպան հողերը մշակող ֆելլահներին և նստակյաց կյանքի անցած բեդվիններին, դրանից հետո խիստ սահմանափակումներ դրվեցին թուրք պաշտոնյաների անօրինական գործողությունների առջև: Այժմ հողագործներն իրենց ավելի ապահով ու պաշտպանված էին զգում, նրանք համոզված էին, որ իրենց գույքը, ստացած բերքը և

այլն, այլևս ոչ ոք անօրինական ճանապարհով չի կարող խլել իրենցից: Նրանք արդեն գիտեին, որ հարկերի սահմանված քանակը բնամթերքով վճարելուց հետո, իրենց մնացած ամբողջ արտադրանքն իրենք ազատ էին տնօրինել ըստ իրենց հայեցողության: Այս պարագան նույնպես դարձավ տնտեսությունը խթանող ազդակ:

Իբրահիմը կարգ ու կանոն հաստատեց նաև մաքսերի գանձման բնագավառում և մաքսատների աշխատանքներում: Ամենակարևորն այս բնագավառում այն էր, որ եթե մինչև բարենորոգումները մաքսատները գտնվում էին կապալառուների ձեռքում և մաքսերի գանձումը իրականացվում էր կամայականորեն, ապա այժմ, Իբրահիմը վերջ տվեց դրանց: Մաքսատները առան կապալառուների ձեռքից և դրվեցին Իբրահիմ փաշայի հսկողության տակ:

Այս քայլը նույնպես ծառայեց տնտեսական զարգացմանը:

Իբրահիմի բարեփոխումները նպաստեցին ոչ միայն գյուղատնտեսության զարգացմանը, այլև աշխուժացրին քաղաքները և քաղաքային կյանքը: Ավելացավ քաղաքային բնակչությունը, զարգացան արհեստները, առևտուրը և այլն:

Իբրահիմի ռեֆորմների մեջ հիշատակության են արժանի նաև բարենորոգումները լուսավորության մարզում: Հիմք դրվեց տարրական կրթության համակարգին և դրան համապատասխան տարրական դպրոցներ բացվեցին համարյա բոլոր քաղաքներում և շրջաններում, իսկ Դամասկոսում, Հալեբում և Անտիոքում, դրանց զուգահեռ բացվեցին նաև միջնակարգ դպրոցներ:

Այս դպրոցներում ուսուցումը տարվում էր արաբերեն լեզվով, որը համապատասխանում էր Իբրահիմի արաբական ազգային գիտակցության զարգացման հայեցակարգին:

Իսկ մնացած հարցերում կրթական համակարգը Սիրիայում պատճենն էր Եգիպտոսում Մուհամմադ Ալիի կողմից հաստատված համակարգի: Աշակերտները ապահովվում էին հանրակացարանով, սնունդով, պարտավոր էին դպրոց հաճախել համապատասխան համազգեստներով և այլն:

Իբրահիմ փաշան, հավատարիմ իր հոր հանդուրժողական քաղաքականությանը քրիստոնյա և այլ ոչ մուսուլմանն բնակչության նկատմամբ, համանման տոլերանտ մոտեցում որդեգրեց նաև Սիրիայում, Պաղեստինում և Կիլիկիայում բնակվող քրիստոնյաների հանդեպ: Նա վերացրեց նրանց նկատմամբ մի շարք արգելքներ: Հանրահայտ է, որ

քրիստոնյաներին արգելվում էր ձի նստել, կրել սպիտակ, կանաչ և կարմիր գույնի գլխաշոր, գրավել պաշտոններ կառավարման համակարգում և այլն: Իբրահիմ փաշան այդ բոլոր նվաստացուցիչ արգելքները և սահմանափակումները վերացրեց: Սիրիայում և հարակից տարածքներում բնակվող քրիստոնյաները արդեն կարող էին ձի հեծած հայտնվել, ասենք, Դամասկոսի կամ Անտիոքի հասարակական վայրերում: Նրանց իրավունք շնորհվեց կառավարման համակարգում զբաղեցնել անգամ պատասխանատու պաշտոններ: Բնակչության այդ հատվածի սոցիալական պաշտպանվածության բարելավումը իր կայունացող դերն ունեցավ ամբողջ երկրամասի համար: Չպետք է մոռանալ, որ քրիստոնյաները նշանակալի թիվ էին կազմում Սիրիայում և հատկապես Պաղեստինում ու Կիլիկիայում: Նրանց թվում էին արաբ քրիստոնյաները, հայերը, ասորիները և այլն:

Բայց XIX դարի 30–ական թվականների կեսերից զգալի փոփոխություններ տեղի ունեցան Իբրահիմի ներքին քաղաքականության մեջ, որը կարելի է նահանջ համարել բարենորոգումների նրա սկզբնական քաղաքականությունից: Եվ երկրում սկսվեց կուտակվել դժգոհություն: Դժգոհության մի մասը հասկանալի և սպասելի էր: Դրանք նախ և առաջ ֆեոդալ կալվածատերերն էին: Իբրահիմը, ճիշտ է, նրանց կալվածքներին ձեռք չտվեց, սակայն սահմանափակեց նրանց քաղաքական իրավունքները և զրկեց նրանց շատ լծակներից: Դա կարելի է համարել դժգոհների մի խավը:

Մյուս խավը կազմում էին ավազակները և թալանչիները, որոնք մասնագիտացել էին քարավանային ճանապարհների վրա ավազակության և կողոպուտի մեջ: Իբրահիմը երկրում կարգ ու կանոն հաստատելու, ճանապարհների անվտանգությունը բարձրացնելու և վաճառականների ու արհեստավորների պաշտպանվածությունն ապահովելու իր քաղաքականությամբ զրկեց այդ խավին, որի մեջ էին մտնում անգամ առանձին քոչվորական ցեղեր, հեշտ եկամուտների աղբյուրից:

Բայց քանի դեռ նրա միջոցառումները ծառայում էին ֆելլահների և արհեստավորների շահերին, վերոնշյալ խավերի դժգոհությունն առանձին սոցիալական վտանգ չէր ներկայացնում Իբրահիմի և նրա հաստատած կառավարման համակարգի համար:

Իրադրությունը կտրուկ փոխվեց, երբ նա ձեռնարկեց այնպիսի քայլեր, որոնք շոշափում էին արդեն բնակչության ամենալայն խավերի շահերը:

Մուհամմադ Ալին և Իբրահիմ Ալին լավ էին հասկանում, որ հարաբերությունները Թուրքիայի հետ հուսալիորեն կարգավորված չէին և Կյութահյայի հաշտության պայմանագիրը չէր կարող կայուն երաշխիք հանդիսանալ խաղաղության կամ զինադադարի պահպանման համար: Պատերազմի վերսկսումը, Սիրիայի, Պաղեստինի և Կիլիկիայի վերագրավումը Թուրքիայի կողմից նրանք անխուսափելի էին համարում, ուստի և ամիրաժեշտ էին համարում դրան նախապատրաստվել: Իսկ դրա համար անհրաժեշտ էին լրացուցիչ միջոցներ: Դա հանգեցրեց բնակչությունից, առաջին հերթին ֆելլահներից, բեդվիններից, ինչպես նաև արհեստավորներից ու այլ խավերից գանձվող հարկերի բարձրացմանը: Ընդհանուր առմամբ հարկերը, ծավալների առումով, բարձրացվեցին երեք անգամ: Դա անասելի բեռ էր, որ ընկավ բնակչության հիմնական մասի ուսերին: Այսպիսով, Իբրահիմ փաշայի դեմ ուղղված դժգոհությունը համակեց նաև գյուղի և քաղաքի բնակչության ցածր եկամուտներ ունեցող խավերին:

Դժգոհության մյուս պատճառը եղավ պաշտպանական կառույցների, գլխավորապես ամրոցների շինարարության մեջ գյուղացիներին պարտադիր կերպով, հարկադրաբար ներգրավելու քաղաքականությունը: Թուրքիայի դեմ առաջիկա պատերազմին նախապատրաստվելու համար, Իբրահիմը ձեռնարկեց պաշտպանական բնույթի լայն շինարարություն, կառուցում էր ամրոցներ, ամրացնում էր լեռնանցքները, փակում հակառակորդի բանակի առաջխաղացման բոլոր հնարավոր ուղիները և այլն: Այդ բոլորը կատարվում էր գյուղացիների ձեռքերով, որը ավելի շատ տաժանակիր աշխատանք էր հիշեցնում:

Իբրահիմը պաշտպանական կառույցների հետ միասին մեծացնում էր իր բանակը: Իսկ դա հնարավոր էր իրագործել դարձյալ ֆելլահների ու բեդվինների հաշվին: Այդ պարտադիր զորահավաքը և բանակային ծառայությունը, որի պայմանները շատ ծանր էին, նույնպես նրանց խոր դժգոհությունը և զայրույթն էր առաջացնում:

Բնակչությունը դժգոհությամբ ընդունեց նաև այսպես կոչված զինաթափման մասին օրենքը, որն ընդունվեց 1834 թ.: Հարցն այն էր, որ ժողովրդի մոտ կուտակված շատ զենք կար և շատ հաճախ էին լինում զինված բախումները տարբեր մասերում:

Այսպես, ուրեմն, ձևավորվել էր տարատեսակ անբավարարության և դժգոհությունների մի բարդ հանգույց և ստեղծվել պայթյունավտանգ իրադրություն: Առաջին պայթյունը տեղի ունեցավ 1834 թ. Պաղեստի-

նում: Պաղեստինցիները հատկապես դժգոհ էին պարտադիր զինակոչումից: Ապստամբությունը տարածվեց նաև Սիրիայի մյուս մասերում:

Հատկանշական է, որ ապստամբների դեմ ուղարկվեցին եգիպտական զորքեր, որոնք առաջին բախման ժամանակ պարտություն կրեցին, իսկ Իբրահիմ փաշան հայտնվեց շրջապատման մեջ Երուսաղեմում: Իր որդուն շրջապատումից փրկելու համար մի մեծ զորախմբի գլուխ անցած Պաղեստին մտավ ինքը, Մուհամմադ Ալին: Նա ջախջախիչ հարված հասցրեց պաղեստինցի ապստամբներին, խստորեն պատժեց նրանց և շրջապատումից ազատեց Իբրահիմ փաշային:

Ապստամբության համառ կենտրոնի վերածվեց Հաուրանը Սիրիայում: Այստեղ 1837 թ. ապստամբվեցին դրուզները, որոնց միացավ նաև Անդրլիբանանի դրուզական գյուղացիությունը: Սկզբնական շրջանում այստեղ ամեն ինչ հանգիստ էր: Տեղական բնակչությունը Իբրահիմի հրամանով հինգ տարի ժամանակով ազատված էին զինվորական պարտականություններից և դրուզներին բանակ չէին վերցնում: Սակայն այդ ժամկետը լրացավ 1837 թ., այն ժամանակ, երբ Իբրահիմը արդեն լայն նախապատրաստական աշխատանքներ էր ծավալել, այդ թվում և բանակի մեծացման ուղղությամբ, թելադրված Թուրքիայի հետ առաջիկա հնարավոր պատերազմի անհրաժեշտությունից: Ուստի նա չերկարացրեց Հաուրանի դրուզներին զինծառայությունից ազատելու արտոնությունը, այլ նրանց զորակոչի ենթարկելու որոշում ընդունեց: Հենց դա էլ ապստամբության պատճառ հանդիսացավ:

Ապստամբները ամրացան ալ–Լեջա կոչված վայրում, որը գտնվում էր անապատում, սակայն իրենից բնական ամրոց էր ներկայացնում: Ապստամբները մեծ հաջողությամբ հետ էին մղում եգիպտացիների գրոհները, որոնք շատ մեծ կորուստներ ունեցան: Ի վերջո, 1838 թ. Իբրահիմին արտակարգ դաժան, անմարդկային միջոցներ կիրառելու գնով հաջողվեց կոտրել ապստամբների դիմադրությունը:

Այդ և այլ ընդվզումների ճնշումը, իհարկե, հանգստություն չբերեցին և չէին էլ կարող բերել Պաղեստինին, Սիրիային և Կիլիկիային:

Ահա այսպիսի պայմաններում վերսկսվեցին պատերազմական գործողությունները Թուրքիայի հետ:

6. Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը (1839–1840 թթ.)

Առաջին եգիպտա–թուրքական պատերազմի արդյունքներից դժգոհ էին երկու կողմերն էլ, ինչպես Թուրքիան, այնպես էլ Եգիպտոսը: Թուրքական սուլթանը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ իր կայսրության մեծ մասը գտնվում էր Մուհամմադ Ալիի տիրապետության տակ: Ճիշտ է, նա համարվում էր եգիպտական կուսակալի սյուզերենը, բայց փաստը մնում էր փաստ, որ արաբական երկրները դուրս էին եկել օսմանյան տիրապետության տակից և գործնականում սուլթանը ոչինչ չէր կարող անել դրա հետ: Հարցի լուծումը խաղաղ ճանապարհով բացառվում էր, քանի որ Մուհամմադ Ալին ոչ մի դեպքում այդ տարածքները կամովին չէր վերադարձնի թուրքական սուլթանին: Մնում էր հարցի լուծման միայն ռազմական տարբերակը, այսինքն պատերազմական գործողությունները: Եվ թուրքական սուլթանը 1833 թ. Կյութահյայի հաշտության համաձայնագրի ստորագրումից հետո ընկած ժամանակաշրջանում իր ուշադրության կենտրոնում մշտապես պահում էր նոր պատերազմին պատրաստվելու հարցը: XIX դ. 30–ական թվականների վերջերին նա արդեն ուներ 100 հազարանոց լավ զինված բանակ:

Բավարարված չէր նաև Մուհամմադ Ալին, քանի որ նա իրավական առումով գտնվում էր օդում կախված վիճակում: Նրան չհաջողվեց լուծել եգիպտոսի անկախության հարցը: Կյութահյայի համաձայնագրից հետո, Մուհամմադ Ալին բազմաթիվ փորձեր կատարեց հասնելու Եգիպտոսի անկախության ճանաչմանը Թուրքիայի և Եվրոպական երկրների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, ինչպես նաև Ավստրիայի կողմից: Բայց ապարդյուն:

Մուհամմադ Ալիին անհանգստացնում էր նաև իր իշխանության դինաստիական–ժառանգականության հարցը: Սիրիան, Պաղեստինը, Կիլիկիան և Կրետեն, ըստ Կյութահյայի համաձայնագրի, նրան էր հանձնված միայն կառավարելու իրավունքով: Իսկ դա նշանակում էր, որ նրանից հետո, մահվան կամ այլ պարագաներում, նրա հաջորդները կարող էին զրկվել այդ իրավունքից: Նույնը նաև Եգիպտոսի, Արաբիայի և Սուդանի պարագայում: Ճիշտ է, վերոնշյալ համաձայնագրում դրանք նշված էին որպես Մուհամմադ Ալիի տիրույթներ, բայց դա դեռևս չէր նշանակում, որ նրա հաջորդները կարող էին օգտվել ժառանգականության իրավունքից և ինքնաբերաբար նույնպես դառնալ նրա տիրակալները: Դրա համար անհրաժեշտ էին միջազգային իրավունքին համա-

պատասխան ծնակերպումներ կամ որոշումներ, որոնք չկային: Դրա համար ենք ասում, որ Մուհամմադ Ալին իր իրավունքների միջազգային ճանաչման և դինաստիական–ժառանգության հարցում, օդից էր կախված: Գոյություն ունեցող ստատուս քվոն չէր կարող բավարարել Մուհամմադ Ալիին: Ահա թե ինչու նա 1834 թ. այդ հարցով դիմեց եվրոպական պետություններին, իսկ 1836–1837 թթ. թուրքական սուլթանին, խնդրելով բավարարել իր պահանջները: Երեք դեպքում էլ նա ստացավ բացասական պատասխան:

Ելնելով ստեղծված իրավիճակից, Մուհամմադ Ալին նույնպես չէր բացառում հարցի լուծման ռազմական տարբերակը: Եվ նա իր որդի Իբրահիմ փաշայի հետ միասին տենդորեն պատրաստվում էին պատերազմական գործողություններին, այդ գերագույն խնդրին ենթարկելով տնտեսական զարգացման և բարեկարգումների բոլոր հարցերը:

Նախքան պատերազմական գործողությունների լուսաբանությանն անցնելը, անհրաժեշտ է անդրադառնալ եվրոպական պետությունների դիրքորոշմանը պատերազմական գործողությունների միջոցով եգիպտա–թուրքական կոնֆլիկտի կարգավորման հարցին: Դա անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ փաստորեն XIX դարի սկզբներից եվրոպական գործոնը դառնում է կարևոր, առանց որի հաշվառման անհնար է գտնել շատ հարցերի ճշգրիտ պատասխանը: Մանավանդ, որ այդ գործոնը դառնում է մշտական և իր նշանակությունը պահպանում մինչև մեր օրերը:

Եգիպտա–թուրքական նոր կոնֆլիկտի նախապատրաստման և նրան հաջորդած շրջանում, գլխավոր դերակատարը դառնում է Անգլիան, որը պետք է լուծեր մի քանի հարցեր:

Նախ նա չպետք է թույլ տար Մուհամմադ Ալիի հետագա հզորացումը ի հաշիվ թուրքական սուլթանի: Այդ խնդիրը դառնում է անկյունաքարային Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Ինչո՞ւ:

Լոնդոնում լավ էին հասկանում, որ Եգիպտոսի հետագա ուժեղացումը, որի արդյունքում պետք է անմիջականորեն թուլանար Օսմանյան կայսրությունը, ձեռնտու էր իր երկու գլխավոր ախոյաններին՝ Ռուսաստանին և Ֆրանսիային: Ռուսաստանը Թուրքիայի հետ կնքել էր Հունքիյար Իսքելեսի պայմանագիրը և դրա շնորհիվ ուժեղացրել իր ազդեցությունը և դիրքերը Օսմանյան կայսրությունում: Եվս մի քայլ, և Օսմա-

նյան կայսրությունը կհայտնվեր լրիվ կախվածության մեջ Ռուսաստանից, որի վերահսկողության տակ կարող էին անցնել նաև նեղուցները: Լոնդոնը դա դիտում էր մահացու հարված իր քաղաքական, ռազմական և առևտրական շահերին: Ուստի նա չէր կարող թույլ տալ, որ դա տեղի ունենա: Իսկ դրա կանխումը կապված էր այն բանի հետ, թե արդյո՞ք նրան կհաջողվի կանխել Եգիպտոսի հաղթանակը առաջիկա պատերազմում, թե՞ ոչ:

Իսկ ինչ վերաբերում էր Անգլիայի մյուս ախոյանին՝ Ֆրանսիային, ապա Եգիպտոսի հաղթանակը նոր կոնֆլիկտի դեպքում կուժեղացներ նաև նրա դիրքերը: Ֆրանսիան, չնայած այն հանգամանքին, որ Եգիպտա–թուքական առաջին պատերազմի ավարտի վերջում նույնպես միացավ եվրոպական մյուս պետություններին և պահանջեց Մուհամմադ Ալիից դադարեցնել ռազմական գործողությունները և զինադադարի համաձայնագիր կնքել թուրքական սուլթանի հետ, այնուամենայնիվ, լավ հարաբերություններ էր պահպանում Եգիպտոսի հետ: Եգիպտա–ֆրանսիական հարաբերությունները սկզբունքորեն չտուժեցին:

Հետևաբար, անգլիական հաշվարկների համաձայն, Եգիպտա–թուրքական նոր կոնֆլիկտի մեջ Եգիպտոսի հաղթանակի դեպքում, կշահեր նաև Ֆրանսիան, քանի որ դա կհանգեցներ նրա դիրքերի ուժեղացմանը Մերձավոր Արևելքում, մի բան, որը Անգլիան չէր կարող թույլ տալ:

Լոնդոնի տեսակետից չարիքի աղբյուրը Կահիրեն էր: Անգլիայի հարաբերությունները Մուհամմադ Ալիի հետ լարված էին ոչ միայն օսմանյան կայսրության հետագա ճակատագրի և դրանում Եգիպտոսի դերակատարման կապակցությամբ: Անգլիային անհանգստացնում էր Մուհամմադ Ալիի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Արևելյան Միջերկրականում: Այստեղ նրանց շահերը խաչաձևվում էին: Անգլիան ձգտում էր չեզոքացնել ոչ միայն Ռուսաստանի և Ֆրանսիայի ազդեցությունը, այլև թուլացնել նաև Եգիպտոսին, որը իր հզորությամբ և հավակնություններով լուրջ խոչընդոտ էր հանդիսանում այդ տարածաշրջանում Անգլիայի անբաժան տիրապետության հաստատման ճանապարհին: Մուհամմադ Ալիի համառության պատճառով, Անգլիային չէր հաջողվում իր մի շարք ծրագրերն իրականացնել: Բայց նրան առանձնապես գրգռում էր Մուհամմադ Ալիի քաղաքականությունը Պարսից ծոցի ավազանում: Անգլիան ձգտում էր վերջնականապես և անբաժան

կերպով հաստատվել այդտեղ: Իսկ դա խորապես անհանգստացնում էր Եգիպտոսին, որն ինքն էր ձգտում հաստատվել Պարսից ծոցի շրջանում:

Ինչպես տեսնում ենք, եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմի նախօրյակին ստեղծվել էր բավականին յուրահատուկ իրադրություն:

Կոնֆլիկտի անմիջական երկու մասնակիցները՝ Եգիպտոսը և Թուրքիան, ձգտում էին գոյություն ունեցող ստատուս քվոյի փոփոխությանը, հետապնդելով տարբեր նպատակներ:

Ռուսաստանը, անկախ փոփոխություններից, կցանկանար պահպանել Հունքիյար Իսքելեսի պայմանագրով ձեռք բերված իր գերակայող դիրքերը Օսմանյան կայսրությունում:

Ֆրանսիան մտադիր էր Մուհամմադ Ալիի օգնությամբ ոչ միայն պահպանել իր բավականին ուժեղ դիրքերը, այլև ավելի ամրապնդել դրանք և կանխել տվյալ պահին իր գլխավոր մրցակցի՝ Անգլիայի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում:

Անգլիան միակ պետությունն էր, որի շահերին համապատասխանում էր գոյություն ունեցող ստատուս քվոյի արմատական փոփոխությունը: Իսկ դրան կարելի էր հասնել, եթե հաջողվեր թուլացնել Թուրքիայի վրա Ռուսաստանի ազդեցությունը՝ Հունքիյար Իսքելեսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու ուղիով, կանխել Ֆրանսիայի դիրքերի հետագա ուժեղացումը ւտարածաշրջանում, որը հնարավոր էր իրագործել, եթե հաջողվեր Եգիպտոսին պարտության մատնել, և, վերջապես, հասնել այն բանին որ Թուրքիան կախման մեջ ընկնի իրենից:

Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը սկսվեց 1839 թ. ապրիլի 21–ին: Նախահարձակը Թուրքիան էր: Անցնելով Եփրատը, թուրքական բանակը, որի թիվը հասնում էր 100 հազարի, մտավ Սիրիայի տարածքը, նպատակ ունենալով ջախջախել եգիպտական բանակը և վերականգնել օսմանյան սուլթանի տիրապետությունը Սիրիայի, Պաղեստինի, Կիլիկիայի և արաբական մյուս տարածքների վրա:

Եգիպտական կողմը պատրաստ էր և Իբրահիմը, որը գլխավորում էր եգիպտական զորքերը, անակնկալի չեկավ: Նա կազմ ու պատրաստ դիմավորեց թուրքական բանակին, պատրաստ վճռական ճակատամարտի:

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1839 թ. հուլիսի 24–ին, Հյուսիսային Սիրիայի Նիզիբ բնակավայրի մոտ: Այն ավարտվեց

թուրքական բանակի լիակատար պարտությամբ, պատերազմի դաշտում մնացին տասնյակ հազարավոր թուրք զինվորներ:

Մահմուդ II–ը Մուհամմադ Ալիի դեմ Ալեքսանդրիա էր ուղարկել իր նավատորմը, որը սակայն մարտի մեջ չմտավ եգիպտական նավատորմի հետ: Նավարինի ծովային ճակատամարտում կրած պարտությունից հետո, երբ համարյա ամբողջապես ոչնչացվել էր թուրքական նավատորմը, սուլթանը կարողացել էր վերականգնել իր նավատորմը անգլիացիների օգնությամբ: Ահա այդ նավատորմը ադմիրալ Ահմեդ Ֆավզի փաշայի գլխավորությամբ դավաճանեց սուլթանին և անցավ Մուհամմադ Ալիի կողմը: Բանակը կորցնելուց հետո, դա երկրորդ ծանր հարվածն էր, որ ստացավ Թուրքիան:

Սակայն Թուրքիայի միակ կորուստը դա չեղավ: Այդ օրերին մահացավ թոքախտով տառապող հյուծված սուլթան Մահմուդ II, որին ամերիկյան հեղինակ էդվին Մանսել Բլիսը նմանեցնում է «վանդակի մեջ հայտնված արծվի հետ»: Սակայն նրա «բախտը բերեց» այնքանով, որ երբ իր երկու մեծ կորուստների լուրը հասավ Ստամբուլ, նա այլևս կենդանի չէր:

Մահմուդ II փոխարինեց Աբդ ալ–Մաջիդը: Իբրահիմի առջև կրկին, ինչպես եգիպտա–թուրքական առաջին պատերազմի ժամանակ, բաց էր Ստամբուլ տանող ուղին և օսմանյան կայսրությսն մայրաքաղաքը գրավելու հնարավորությունը: Այդուհանդերձ, Իբրահիմը չէր մտածում Ստամբուլ մտնելու մասին: Նրան այս անգամ դա պետք չէր և եգիպտական զորքերը սահմանափակվեցին Ուրֆայի և Մարաշի գրավումով:

Ո՞րոնք էին Իբրահիմ փաշայի նման պահվածքի պատճառները:

Առաջին, Մուհամմադ Ալին շատ լավ էր հիշում Հունքիյար Իսքելեսի ռուս–թուրքական պայմանագրի գոյության մասին, որը իրավունք էր տալիս Ռուսաստանին ռազմական օգնություն ցույց տալ Թուրքիային, անգամ իր զորքերն ուղարկել նրան օգնելու համար, եթե վտանգ կախվեր Օսմանյան կայսրության գլխին: Իբրահիմը իր հոր համաձայնությամբ չէր ցանկանում առիթ տալ ռուսական միջամտության համար, որը կփոխեր իրադրությունը և կարող էր շատ ծանր հետևանքներ ունենալ Եգիպտոսի համար: Այդ նույն տեսակետին էր նաև Ֆրանսիան, որը հորդորեց Մուհամմադ Ալիին առիթ չտալ Ռուսաստանին կրկին իր զորքերը մտցնել Թուրքիա:

Երկրորդ, Եգիպտոսն այս անգամ նոր տարածքներ գրավելու նպատակներ չէր հետապնդում: Նրան ինչ որ պետք էր, արդեն գրավել

էր առաջին պատերազմի ժամանակ: Մուհամմադ Ալիի տիրապետության տակ էին անցել բոլոր այն արաբական տարածքները, որոնց միավորման հիմքի վրա նա ցանկանում էր ստեղել միասնական և ուժեղ արաբական պետություն:

Երրորդ, եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմի գլխավոր նպատակը քաղաքական էր: Մուհամմադ Ալին ցանկանում էր լուծել Եգիպտոսի անկախության և դինաստիական հարցեր: Մուհամմադ Ալին ուզում էր, որ Ստամբուլը ճանաչի իր դինաստիական իրավունքները բոլոր այն արաբական երկրների նկատմամբ, որոնք այդ պահին գտնվում էին իր տիրապետության տակ: Խոսքը Եգիպտոսի, Սուդանի, Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի, Արաբիայի և Պարսից ծոցի շրջանում գտնվող որոշ տարածքների մասին էր: Իրաքը թեև չէր մտնում դրանց մեջ, բայց Մուհամմադ Ալին հավատացած էր, որ վաղ, թե ուշ, նրա հարցն էլ էր լուծվելու հօգուտ իրեն:

Մուհամմադ Ալին հավատացած էր, որ Բարձր Դուռը պատրաստ էր բավարարել իր պահանջները: Նրա վստահությունը հիմնված էր այն հանգամանքի վրա, որ Թուրքիան կորցրել էր իր բանակը և նավատորմը, իսկ սուլթան Մահմուդ II օսմանյան գահի փոխարինած նորընծա սուլթան Աբդ ալ–Մաջիդը դեռ դրության տերը չէր և իր առաջնակարգ խնդիրն էր համարում իր դիրքերի ամրապնդումը երկրի ներսում և ոչ թե պատերազմի շարունակումը, մանավանդ, որ նա դրա հնարավորությունը չուներ: Ճիշտ է, կար Ռուսաստանի հետ կնքված պայմանագիրը, բայց նա մտադիր չէր օգտվել դրանից, որի հետևանքում ռուսական զորքերը կրկին կարող էին հայտնվել Թուրքիայում և բանակել Ստամբուլից ոչ հեռու:

Այդ պատճառով էլ Կահիրեն և Ստամբուլը պատրաստ էին ուղղակի բանակցություններ սկսել Մուհամմադ Ալի ժառանգական իրավունքների հարցի շուրջը:

Բայց կրկին միջամտեցին եվրոպական պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Պրուսիան և Ֆրանսիան: Թուրքիայի սուլթանին ուղղված իրենց համատեղ նոտայում նրանք զգուշացրեցին նրան առանց իրենց հետ խորհրդակցելու ոչ մի որոշում չընդունել:

Հավանաբար զարմանք կարող է առաջացնել այն հանգամանքը, որ եվրոպական չորս պետություններին միացել էր նաև Ֆրանսիան, որն իրեն համարում էր Եգիպտոսին բարեկամ, անգամ դաշնակից երկիր, և սուլթան Աբդ ալ–Մաջիդին ուղղված նոտայի տակ կար նաև Ֆրանսիա-

կան ստորագրությունը: Ֆրանսիայի նման պահվածքի պատճառը, որը նա առաջին անգամ չէ, որ դրսևորում էր Եգիպտոսի նկատմամբ, պետք է փնտրել իր սեփական շահերը պաշտպանելու մտահոգության մեջ: Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միավորումը և համատեղ հնարավոր դեմարշը վախեցրեց Փարիզին, որ նա կարող է հայտնվել մեկուսացման մեջ, որից կարող են օգտվել նշված եվրոպական չորս պետությունները և այնպիսի որոշումներ պարտադրել թուրքական սուլթանին, որոնք կարող էին ծանր հարված հասցնել նրա դիրքերին տարածաշրջանում: Ֆրանսիան, իհարկե, միաժամանակ փորձում էր Մուհամմադ Ալիին հավատացնել, որ ինքը այդպես վարվելով, կփորձի պաշտպանել նաև Եգիպտոսի շահերը:

Ինչևէ, եվրոպական երկրները եգիպտա–թուրքական կոնֆլիկտի կարգավորման խնդիրը նորից վերցրեցին իրենց ձեռքը: Նրանք մոտ մեկ տարի Լոնդոնում բանակցում էին, առանց մասնակից անելու Թուրքիային և Եգիպտոսին, թեև նրանց վերաբերող հարցերն էին քննարկվում: Իրականում դրանք ոչ թե քննարկումներ էին, այլ առևտուր կամ գործարք:

Ֆրանսիան կոնֆլիկտի խաղաղ լուծման համար որպես հիմք առաջարկում էր ճանաչել Մուհամմադ Ալիի ժառանգական իրավունքները միայն Եգիպտոսի և Սիրիայի նկատմամբ: Մնացած բոլոր արաբական տարածքները Մուհամմադ Ալին պետք է հետ վերադարձներ Թուրքիային:

Ավստրիան և Պրուսիան համաձայն էին ճանաչել Մուհամմադ Ալիի ժառանգական իրավունքները Եգիպտոսի վրա, իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա այդ հարցում նրանք առաջարկում էին փոխզիջումային լուծում՝ Մուհամմադ Ալիի իրավունքները տարածել Սիրիայի միայն մի մասի վրա, իսկ մյուս մասը վերադարձնել սուլթանի կառավարման ներքո:

Ռուսաստանը հստակ դիրքորոշում չգրավեց այդ հարցում, կարծես թե նրա համար միևնույն էր, թե որ մասը կմնա Մուհամմադ Ալիի տիրապետության տակ, և որ մասը կանցնի սուլթան Աբդ ալ–Մաջիդի կառավարման ներքո: Ռուսաստանի գլխավոր մտահոգությունը Հունքիյար Իսքիլեսի պայմանագրի պահպանման հարցն էր: Ռուսական դիվանագիտությունը անտեղյակ էր և չէր կռահում, որ Անգլիան արդեն նախապատրաստական աշխատանքներ էր տանում, որպեսզի, երբ 1841 թ.

լրանա նրա գործողության ժամկետը, ապա անել այնպես, որ Թուրքիան հրաժարվի երկարաձգել այն:

Անգլիան գրավել էր արմատական և անզիջում դիրք: Նա պնդում էր, որ Մուհամմադ Ալիին պետք է թողնել միայն Եգիպտոսը, իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա Մուհամմադ Ալիին պետք է զրկել նրա նկատմամբ որևէ իրավունքից և այն ամբողջապես դնել թուրքական սուլթանի կառավարման տակ: Նա ցանկանում էր դրանով վերջնականապես թուլացնել Եգիպտոսին և վերջ դնել արաբական աշխարհի լիդերը դառնալու Մուհամմադ Ալիի հավակնություններին:

Մինչ Լոնդոնում շարունակվում էին բանակցությունները, Ֆրանսիան մի փորձ ևս արեց համաձայնության հասնելու Եգիպտոսի և Թուրքիայի միջև իր առաջարկած պայմանների հիման վրա: Եվ, իրոք, Կահիրեն և Ստամբուլը համաձայնության եկան առ այն, որ սուլթանը ճանաչում էր Մուհամմադ Ալիի ժառանգական իրավունքները միայն Եգիպտոսի և Սիրիայի նկատմամբ, որը ընդունելի եղավ նաև Մուհամմադ Ալիի համար:

Թվում էր, թե հարցը մոտ էր լուծման: Բայց գործին միջամտեցին եվրոպական տերությունները, որոնք դժգոհ էին, որ Ֆրանսիան բանակցությունների մեջ էր մտել Եգիպտոսի և Թուրքիայի հետ առանց նրանց տեղյակ պահելու և իր առաջարկությունները նրանց հետ նախօրոք համաձայնեցնելու:

Այդ պահից կոնֆլիկտի լուծումը մտավ նոր փուլ: Նախ, տերություններն ամեն ինչ արեցին, այդ թվում և բացահայտ ճնշում գործադրեցին սուլթան Աբդ ալ–Մաջիդի վրա, Եգիպտոսի և Թուրքիայի միջև ձեռք բերված նախնական համաձայնությունը վիժեցնելու համար: Քաղաքական քայլերի հետ միասին նրանք դիմեցին նաև այլ քայլերի: Նրանց դրդմամբ Սիրիայում և հատկապես Լիբանանում տեղի ունեցան խոշոր հուզումներ, որոնք ծանր դրության մեջ դրեցին Իբրահիմին և նրա եգիպտական զորքերին: Ճիշտ է, Իբրահիմին հաջողվեց ճնշել դրանք և ապստամբների առաջնորդներին խիստ պատժել, բայց ակնհայտ դարձավ, որ Սիրիայում, Պաղեստինում և Լիբանանում խոր դժգոհություն էր կուտակվել:

Մինչ Իբրահիմը զբաղված էր հուզումները ճնշելով, տերությունները վերջապես համաձայնության եկան կոնֆլիկտը լուծելու խնդրի շուրջը: 1840 թ. հուլիսի 15–ին Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան մի կողմից, և Թուրքիան մյուս կողմից, Լոնդոնում ստորագ-

րեցին մի համաձայնագիր, որը օգոստոսի 19–ին ներկայացվեց Մուհամմադ Ալիին, սակայն ոչ թե քննարկման, այլ անվերապահորեն ընդունելու համար: Համաձայնագիրը Մուհամմադ Ալիին ժառանգության իրավունքով թողնում էր միայն Եգիպտոսը, իսկ Պաղեստինը՝ ցմահ կառավարման իրավունքով: Նա պետք է թուրքական սուլթանին վերադարձներ մնացած բոլոր տարածքները: Սահմանված էին այդ պայմաններն ընդունելու ժամկետները: Ըստ այդմ, եթե տաս օրվա ընթացքում Մուհամմադ Ալին տեղյակ չպահեր եվրոպական տերություններին և Թուրքիային այդ պայմաններն ընդունելու իր համաձայնության մասին, ապա նա կզրկվեր Պաղեստինը ցմահ կառավարելու իրավունքից, իսկ եթե քսան օր պնց չընդուներ, ապա նա կտապալվի տերությունների միացյալ ուժերով և կզրկվի իր բոլոր տիրույթներից, այդ թվում և Եգիպտոսից:

Այսպես, ուրեմն, Մուհամմադ Ալիին վերջնագիր էր ներկայացված և Մուհամմադ Ալին պետք է որոշեր իր հետագա անելիքները:

Սակայն Մուհամմադ Ալին Մուհամմադ Ալի չէր լինի, եթե նա հենց այնպես, առանց մարտի, ընկրկեր տերությունների առաջ և կատարեր նրանց պահանջները: Դա կնշանակեր մի հարվածով խաչ դնել իր ամբողջ գործունեության, բազում պատերազմների, կրած զոհերի և արաբական միասնական պետություն ստեղծելու իր քաղաքականության վրա: Նա մերժեց իրեն ներկայացված վերջնագիրը: Նրա պատասխանը եվրոպական քառյակին շատ հետաքրքիր ձևով արտահայտվեց: «Ես պատրաստ եմ,— հայտարարեց Մուհամմադ Ալին,— սրով պաշտպանել այն, ինչ սրով է ձեռք բերված»: Քաղաքական երկարատև պայքարում և մարտերում թրծված իսկական մարտիկին վայել արժանի պատասխան:

Նման պատասխանից հետո, Անգլիան, Ավստրիան և Թուրքիան իրենց սպառնալիքներից անցան ռազմական գործողությունների:

Ինչպես տեսնում ենք այդ գործողություններին Մուհամմադ Ալիին ներկայացրած պետություններից չէին մասնակցում Ռուսաստանը և Պրուսիան: Ռուսաստանը, ինչպես նշել ենք, որոշակիորեն անտարբեր էր այն հարցում, թե ինչ տարածքներ կմնան Մուհամմադ Ալիի կառավարման ներքո: Նրա մտահոգության առարկան 1833 թ. ռուս–թուրքական պայմանագրի և դրա օգնությամբ Թուրքիայի վրա իր ազդեցության պահպանումն էր և ոչ թե՝ռազմական գործողություններով ընդդեմ Մուհամմադի Ալիի, Անգլիայի շահերի պաշտպանումը:

Իսկ ինչ վերաբերում էր Պրուսիային, որն առաջին քայլերն էր անում մեծ քաղաքականության ասպարեզում և փորձում իր տեղը գրավել այդ բնագավառում, ապա նա դեռ պատրաստ չէր Հյուսիսային Աֆրիկայում արդյունավետ ռազմական գործողությունների համար:

Անգլիան, Ավստրիան և Թուրքիան ռազմական գործողություններ ծավալեցին Միջերկրական ծովում, թեև անգլիական և ավստրիական ռազմանավերն անմիջապես չուղևորվեցին Եգիպտոսի ափերի մոտ, այլ դեսանտ իջեցրին Բեյրութի մոտ: Թուրքիան, որը չուներ ռազմական նավատորմ, քանի որ եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ այն անցել էր Մուհամմադ Ալիի կողմը, պատերազմական գործողություններին իր մասնակցությունն ապահովեց դեսանտի համար զինվորներ մատակարարելով: Ընդ որում, դեսանտայինների մեծ մասը, մոտ ութ հազար զինվոր, թուրքերն էին, իսկ անգլիացիները՝ ընդամենը հազար հինգ հարյուր մարդ:

Բեյրութի մոտ դեսանտ իջեցնելու նպատակը պարզ դարձավ շատ չանցած: Նրանք հրահրեցին լեռնալիբանանցիների հակաեգիպտական ելույթները, առատորեն նրանց զինելով զենքի տարբեր տեսակներով: Նրանց հաջողվեց մի շարք հաղթանակներ տանել եգիպտական զորքերի դեմ և գրավել Միջերկրական ծովի ափին գտնվող մի շարք լիբանանյան քաղաքներ, ինչպես Տյուրոսը, Սիդոնը, Հայֆան, Բատրունը և Ջուբեյլը: Ապստամբները դեսանտայինների և անգլիական ու ավստրիական ռազմանավերի աջակցությամբ կարողացան ստիպել Իբրահիմի զորքերին նահանջել և Բեյրութը, Լաթաքիան ու Ալեքսանդրետն անցան անգլո–ավստրիական–թուրքական զորքերի տիրապետության տակ: Շուտով ընկավ նաև Ակկան: Այդ կարևոր քաղաք–ամրոցի անկումը առաջ բերեց հակաեգիպտական հուժկու ելույթներ Պաղեստինում և հարավային Սիրիայում: Փաստորեն Իբրահիմը կորցրեց վերահսկողությունը Սիրիայի վրա, ներառյալ Պաղեստինը և Լիբանանը:

Իսկ ինչ դիրք էր գրավել Ֆրանսիան, որը համարվում էր Եգիպտոսի դաշնակիցը: Ֆրանսիական պետական և քաղաքական գործիչները և նրանց շահերն արտահայտող մամուլը անգլո–ավստրիական–թուրքական ինտերվենցիայի սկզբում չտեսնված աղմուկ բարձրացրին, ամպագորգոռ հայտարարություններ անելով ի պաշտպանություն Եգիպտոսի, հանդես գալով ընդդեմ ինտերվենտների և խոստանալով միայնակ չթողնել Մուհամմադ Ալիին: Մուհամմադ Ալին հավատ ընծայելով այդ հայտարարություններին, մեծ հույսեր էր կապում Ֆրանսիայի հետ: Եվ

այդ հանգամանքն իր դերն ունեցավ նրան ներկայացված վերջնագրի նկատմամբ կոշտ դիրք գրավելու հարցում: Սակայն Ֆրանսիական «օգնությունը» դատարկ հայտարարություններից այն կողմ չանցավ: Ֆրանսիան վախենում էր Եգիպտոսի պատճառով եվրոպական մեծ պատերազմ բորբոքելուց, մանավանդ, որ նա վստահ չէր, թե ինչպիսի ելք կունենար նա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա իր դեմ կունենար Անգլիային, Ավստրիային, Պրուսիային և Թուրքիային:

7. Սուլթան Աբդ ալ–Մաջիդի 1841 թ. հունիսի 1–ի ֆերմանը

Մուհամմադ Ալին հասկանում էր, որ նման պայմաններում պատերազմը շարունակելը անիմաստ է դառնում և կարող է մեծ վտանգ ներկայացնել նրա համար, ընդհուպ Եգիպտոսի կորուստը: Ահա թե ինչու նա որոշեց ընդունել Ալեքսանդրիային մոտեցած անգլիական էսկադրայի հրամանատար Չարլզ Նեպիրի նոր վերջնագիրը, որը սպառնում էր հակառակ դեպքում հրետանակոծել Եգիպտոսի գլխավոր նավահանգիստը: Ըստ այդ վերջնագրի, Մուհամմադ Ալին պարտավորվում էր իր բոլոր զորքերը դուրս բերել Սիրիայից և Պաղեստինից, Թուրքիային վերադարձնել նրա ռազմական նավատորմը, որը նրան էր անցել ծովակալ Ահմեդ Ֆեվզի փաշայի դավաճանության հետևանքով: Այդ բոլորի դիմաց Մուհամմադ Ալիին խոստանում էին ժառանգական իրավունքներ Եգիպտոսի վրա:

Մուհամմադ Ալին, համաձայն այդ պայմանների, հրամայեց Իբրահիմ փաշային անհապաղ դուրս բերել եգիպտական զորքերը Սիրիայից և Պաղեստինից, որը նա սկսեց իրականացնել 1840 թ. դեկտեմբերի վերջերին:

Բայց այս բոլորն անհրաժեշտ էր ձևակերպել իրավաբանորեն: Նեպիրի վերջնագիրը և նրա ընդունումը Մուհամմադ Ալիի կողմից դեռևս իրավական ուժ չուներ: Այդ պատճառով էլ բանակցություններ էին գնում, որոնք բավականին երկար ժամանակ խլեցին: Ի վերջո, կողմերը համաձայնության եկան, որի հիման վրա սուլթան Աբդ ալ–Մաջիդը 1841 թ. հունիսի 1–ին արձակեց հատուկ ֆերման, որը որոշ կետերում տարբերվում էր Նեպիրի վերջնագրում ներկայացված պահանջներից: Այդ ֆերմանով թուրքական սուլթանը Մուհամմադ Ալիին ժառանգականության իրավունքներ շնորհեց Եգիպտոսի և Սուդանի նկատմամբ: Մնացած բոլոր տարածքները՝ Սիրիան, Պաղեստինը, Արաբիան,

Կիլիկիան և Կրետե կղզին, վերադարձվում էին թուրքական սուլթանին և անցնում նրա ուղղակի կառավարման ներքո: Թուրքիային էր վերադարձվում նրա նավատորմը: Հատուկ կետով սահմանափակվում էին Մուհամմադ Ալիի իրավունքները բանակի հարցերում: Նրա բանակը կարող էր իր շարքերում ունենալ ոչ ավել, քան 18 հազար զինվոր: Բանակում չէին կարող լինել հրամանատարներ գեներալի կոչումով: Մուհամմադ Ալիին արգելվում էր ունենալ սեփական նավատորմ:

Սուլթանական ֆերմանի համաձայն Մուհամմադ Ալին իրեն ճանաչում էր որպես սուլթանի վասալ և վճարում նրան որպես հարկ իր եկամուտների մեկ քառորդը:

Ահա այսպես ավարտվեց մոտ 35 տարի տևած Մուհամմադ Ալիի պայքարը Եգիպտոսի անկախության, Եգիպտոսը Մերձավոր Արևելքի և արևելյան Միջերկրականի հզոր պետության վերածելու և միասնական արաբական պետություն, թագավորություն կամ կայսրություն, ստեղծելու համար:

Նա այդ պայքարում պարտություն կրեց, սակայն, ոչ թե Թուրքիայից, այլ իր դեմ միավորված եվրոպական պետություններից: Չլիներ եվրոպական պետությունների միջամտությունը և նրանց ռազմական օգնությունը թուլացած, նեխման վիճակում գտնվող և ժողովուրդների բանտ հանդիսացող Օսմանյան կայսրությանը, այդ կայսրությունը կընկներ Մուհամմադի Ալիի հարվածների տակ: Համենայն դեպս, նա երկու անգամ շատ մոտ էր դրան:

Եվրոպական պետությունները, որոնք գործում էին բացառապես հօգուտ իրենց եսասիրական շահերի, պատմության դեմ մեծ հանցանք գործեցին, փրկելով անկման եզրին հայտնված Օսմանյան կայսրությունը: Թեև պատմությունը «եթե» չի սիրում, բայց այս այն դեպքն է, երբ կարող ենք վստահաբար ասել, որ եթե Եվրոպան իր անհեռատես քաղաքականությամբ XIX դարում չփրկեր Օսմանյան կայսրությունը վերջնական փլուզումից, ապա պատմության զարգացումը, համենայն դեպս Փոքր Ասիայում, Անդրկովկասում, Հյուսիսային Աֆրիկայում, Միջերկրականի ավազանում, և, ինչու չէ, նաև Եվրոպայում, այլ կերպ կընթանար, իսկ Օսմանյան կայսրության լծի ներքո գտնվող ժողովուրդների ճակատագիրը բոլորովին ուրիշ կերպ կդասավորվեր:

VI. ԻՐԱՔԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. Ընդհանուր իրադրությունը երկրում և հարաբերությունները Իրաքի կառավարիչների և Բարձր Դռան միջև

Եթե բնութագրելու լինենք ընդհանուր վիճակն Իրաքում, ապա պետք է նշենք, որ Իրաքը տիպաբանորեն պատկանում էր արաբական այն երկրամասերին, որտեղ տիրապետում էր անկայունությունը, որը պարբերաբար վերածվում էր քաոսային և խառոնաշփոթ իրադրության, անհնազանդության իշխանությունների նկատմամբ, որտեղ միջցեղային բախումները սոցիալական կյանքի բնորոշ երևույթներն էին:

Այդ բոլորը շատ ծանր էր անդրադառնում Իրաքի և նրա բնակչության տնտեսական դրության վրա, լարված հարաբերություններ ստեղծում սոցիալական տարբեր խմբերի միջև, մի կողմից, և տեղական կառավարիչների ու Բարձր Դռան միջև, մյուս կողմից:

Հարաբերությունները Իրաքի տեղական կառավարիչների, մասնավորապես Բաղդադի փաշաների և օսմանյան սուլթանների միջև, ավանդաբար եղել են ոչ նորմալ, շատ հաճախ նույնիսկ թշնամական:

Իրաքում, ինչպես նշել ենք, XVIII դարի սկզբում հաստատվեց Հասան փաշայի տիրապետությունը: Ճիշտ է, նա Բաղդադի փաշան էր, որին նա կարողացել էր տիրանալ զանազան հնարանքներով, կաշառելով ու գնելով օսմանյան սուլթանի մերձավորագույն շրջապատի մի քանի աչքի ընկնող գործիչների: Սակայն նա կարողացավ իր իշխանությունը տարածել ամբողջ Իրաքի, այդ թվում նրա հարավային տարածքների վրա, որի կենտրոնը Բասրան էր, և Հյուսիսային շրջանների վրա, ներառյալ Քրդստանը: Հասան փաշան իր պաշտոնը, բնականաբար, ստացել էր օսմանյան սուլթանից և նա համարվում էր սուլթանի վասալը: Բայց դա ձևական բնույթ էր կրում և նա Իրաքը կառավարում էր ըստ իր հայեցողության: Նման հարաբերություններ Բարձր Դռան հետ պահպանվեցին նաև նրա հաջորդների ժամանակ: Իրաքում հաստատվել էր Հասան փաշայի յուրահատուկ դինաստիա, որի ներկայացուցիչները Իրաքը կառավարեցին մինչև 1780 թ. ըստ այն մոդելի, որ հաստատել էր դինաստիայի հիմնադիր Հասան փաշան:

Իրաքում իրենցից զգալի ուժ էին ներկայացնում կյուլեմենները կամ մամլուքները, որոնք, միգուցե ոչ այնքան հզոր, ինչպես Եգիպտո-

սում, բայց բավականին կարևոր դերակատարում ունեին: Համենայն դեպս, նրանք շատերին էին վախ ներշնչում:

1780 թ. կյուլեմենները կատարեցին հեղաշրջում իրենց հրամանատարի ղեկավարությամբ, որը կրում էր Բույուկ Սուլեյման անունը: Նրանք տապալեցին Հասան փաշայի դինաստիան և իշխանությունը վերցրեցին իրենց ձեռքը: Բույուկ Սուլեյմանը դարձավ Բաղդադի փաշա և հաստատեց իր դինաստիան: Մինչև XIX դարի կեսերը նրանք էին տոն տվողը Իրաքի քաղաքական կյանքում:

Կյուլեմենների տիրապետության շրջանում, որը տևեց մոտ կես դար՝ 1780 թ, մինչև 1831 թ. Իրաքը մի ինքնավար պետություն էր հիշեցնում: Օսմանյան սուլթանին այդպես էլ չհաջողվեց իրեն ենթարկել կյուլեմեններին և նրանց թելադրել իր քաղաքական կամքը:

Կյուլեմեններին, իրենց հերթին, չհաջողվեց Իրաքում հաստատել կայուն իրադրություն: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ նրանք փորձում էին սանձահարել ցեղերին և ցեղային միություններին, առանձին ֆեոդալ–հողատերերի, որոնց բնորոշ էր կենտրոնական իշխանություններին անտեսելու հակումներ, և այլն:

Իրաքում տիրող խառնաշփոթ վիճակի պահպանման, անգամ խորացման մեջ իր բացասական դերն էր խաղում անողոք պայքարը կյուլեմենների զանազան կլանային խմբերի միջև ազդեցության և իշխանության համար: 1802 թ. իր բնական մահով մահացավ, որը շատ հազվադեպ էր պատահում մամլուքների մոտ, Բույուկ Սուլեյմանը: Նրան որպես Բաղդադի փաշա հաջորդեց Հաֆիզ Ալին՝ Բույուկ Սուլեյմանի դինաստիայից: Նա կառավարեց ընդամենը հինգ տարի և սպանվեց 1807 թ.: Բաղդադի փաշա, որը նշանակում էր ողջ Իրաքի կառավարիչ, դարձավ նրա ազգականը՝ Քուչուկ Սուլեյմանը: Սակայն նրան թույլ չտվեցին երկար ժամանակով վայելել իշխանության քաղցրությունը: Երեք տարի չանցած, 1810 թ. նրան տապալեցին: 1812–1814 թթ. Բաղդադի փաշայի «գահին «էր նստած Աբդալլահը, իսկ 1812–1817 թթ. Իրաքը կառավարում էր դինաստիայի հիմնադիր Բույուկ Սուլեյմանի որդին՝ Սաիդ փաշան: Ինչպես տեսնում ենք, տասնհինգ տարվա ընթացքում Բաղդադի փաշա է եղել հինգ մարդ: Դրանցից միայն Բույուկ Սուլեյմանն էր, որ մահացել էր իր անկողնում, մնացածները կամ գահընկեց էին արվել, կամ սպանվել:

Այդ պարագան խիստ բացասաբար էր անդրադառնում Իրաքի ընդհանուր վիճակի վրա: Յուրաքանչյուր փաշայի տապալումը կամ

սպանությունը խորը ցնցում էր առաջացնում Իրաքում: Դա իր հետ բերում էր փոփոխություններ կառավարող ընտրանու շարքերում, նոր սպանություններ, հալածանքներ քաղաքական հակառակորդների նկատմամբ և այլն:

Միայն մի բանն էր կայուն: Խոսքը Բաղդադի փաշաների վերաբերմունքն էր օսմանյան սուլթանների նկատմամբ: Այդ հարցում նրանց քաղաքականությունը փոփոխություն չէր կրում: Նրանք շատ նախանձախնդիր էին իրենց իրավունքները և արտոնությունները պահապանելու հարցում: Նրանք այդպես էլ չթողեցին, որ Բարձր Դուռը ազդեցիկ իշխանություն ունենա Իրաքում և իրական մասնակցություն արաբական այդ երկրամասի կառավարմանը:

Իրաքի առանց այդ էլ խիստ բարդ և խճողված դրության, ներքին կյանքի վրա բացասական ազդեցություն ունեցան վահաբիները:

Նրանք, ինչպես արդեն նշել ենք, մեծ հավակնություններ ունեին համայն արաբական երկրների վրա, ձգտում էին նրանց միավորել վահաբիզմի դրոշի ներքո և ստեղծել միասնական արաբական թագավորություն: Սակայն նրանք չէին ցանկանում դրան հասնել իրենց գաղափարները երկարատև և համբերատար քարոզելու ճանապարհով: Այն բանից հետո, երբ վահաբիները շատ, թե քիչ ամրապնդեցին իրենց դիրքերն Արաբիայում, նրանք ակտիվացրին իրենց գործողություններն Արաբիայից դուրս, առաջին հերթին իրենց հարևան արաբական երկրներում, այդ թվում Իրաքում: Նրանք դարձան ագրեսիվ և իրենց ծրագրերն իրագործելու համար շեշտը դնում էին ռազմական միջամտության կամ բացահայտ պատերազմական գործողությունների վրա:

Ի կատարումն իրենց նոր ռազմավարության, վահաբիները 1801 թ, ներխուժեցին Իրաք: Նրանց հարձակման նշանակետ եղավ շիաների կենտրոն Քերբելան: Այստեղ նրանք մեծ ավերածություններ գործեցին: Վահաբիները, որոնք մեծ թշնամանքով ու արհամարհանքով էին վերաբերվում շիաներին, ներխուժում էին նրանց մզկիթները, թալանում դարերով կուտակված գանձերը, սրբապղծում շիական մասունքները և նշխարները, նվաստացնում շիաներին և վիրավորում նրանց կրոնական զգացմունքները: Վահաբիների գործողությունները, որոնք իրենց բնույթով ասպատակություններ էին հիշեցնում, խոր թշնամություն և ատելություն առաջացրին Իրաքի շիաների մոտ նրանց նկատմամբ:

Վահաբիները չամրապնդվեցին Քերբելայում, այլ կողոպուտի ենթարկելով, հեռացան այդ սրբակենտրոնից:

Բայց վահաբիները չդադարեցրին իրենց ասպատակությունները Իրաքում: 1808 թ. նրանց զորքերը կրկին հայտնվեցին Իրաքում: Այս անգամ նրանց հարձակումն ուղղված էր Բաղդադի դեմ և ավելի մեծ վտանգ էր ներկայացնում, քան նախորդը: Բաղդադի պաշտպանությունը ղեկավարում էր Քուչուկ Սուլեյման փաշան: Իսկ դա այնքան էլ դյուրին գործ չէր, քանի որ Բաղդադի վրա հարձակվող վահաբիների զորքերի թիվը հասնում էր 60 հազարի: Այդուհանդերձ, Քուչուկ Սուլեյմանը կարողացավ հետ մղել նրանց հարձակումները: Նրանց այդպես էլ չհաջողվեց մտնել Բաղդադ:

Իրաքը նվաճելու վահաբիների բոլոր փորձերն ավարտվեցին անհաջողությամբ: Դա պետք է բացատրել ոչ միայն իրաքցիների խիզախությամբ, թեև դա իր կարևոր նշանակությունն ունեցավ, այլև իրաքցիների, հասարակ ժողովրդի, սոցիալական բոլոր խավերի բացասական վերաբերմունքով վահաբիների ծրագրերի և քաղաքականության նկատմամբ: Վահաբիներն իրենց գործունեության և գաղափարների համար այստեղ բարյացակամ միջավայր չգտան: Դեռ ավելին, Արաբիայից եկած վահաբիներին, նրանց շարքերում միավորված բեդվիններին ու ֆելլահներին, նրանք դիմավորում էին որպես զավթիչների, որոնք եկել էին տիրանալու իրենց հողերին ու արոտավայրերին, իրենց ունեցվածքին: Իսկ այդ հարցում իրաքյան ցեղերը և ցեղային միությունները շատ զգայուն էին:

2. Դաուդ փաշան և Իրաքի վերանվանումը «Բաբելոնի երջանիկ թագավորության»:

1817 թվականը Իրաքը դիմավորեց հերթական հեղաշրջումով, որը կատարեց կյուլեմեն Դաուդը: Նա Բաղդադի փաշա Բույուկ Սուլեյմանի մամլուքն էր: Նվաճելով նրա համակրանքը և վստահությունը, Դաուդը դառնում է նրա քարտուղար–օգնականը և ամուսնանում նրա աղջկա հետ: Դա օգնեց նրա արագ բարձրացմանը և ազդեցության ուժեղացմանը: Սակայն Բույուկ Սուլեյմանի մահից հետո, նա կորցրեց իր դիրքերը և երկար ժամանակ ստվերի մեջ էր գտնվում: Բայց այդ տարիները նա պարապ չանցկացրեց, այլ համախոհներ էր ձեռք բերում և նրանց հավաքում իր շուրջը, սպասելով հարմար պահի իշխանության գլուխ վերադառնալու համար: Զգալով, որ ինքն արդեն բավարար չափով ուժեղացրել է իր դիրքերը, Դաուդը տապալեց Բաղդադի փաշա, Բույուկ Սու-

լեյմանի որդի Սաիդ փաշային, որը նրա աներորդին էր, և գլխատեց նրան: Բաղդադում և Իրաքում ամբողջ իշխանությունն անցավ Դաուդի ձեռքը, որը արդեն ոչ թե նախկին կյուլեմեն–մամլուք Դարուդն էր, այլ Դաուդ փաշա: Դա տեղի ունեցավ, ինչպես նշեցինք, 1817 թ.:

Նա Իրաքը կառավարեց 14 տարի, մինչև 1831 թ.: Այդ տարիները նշանակալի հետք են թողել Իրաքի պատմության մեջ, որպես Իրաքը զարգացած երկրի վերածելու փորձաշրջան, երբ Դաուդ փաշան, իր աչքի առաջ ունենալով Մուհամմադ Ալիի օրինակը Եգիպտոսում, փորձում էր համանման բարեփոխումներ կատարել նաև Իրաքում: Ընդհանրապես պետք է նշել, որ Դաուդ փաշան շատ հարցերում էր ձգտում ընդօրինակել, նմանվել ամենազոր Մուհամմադ Ալիին և դառնալ «իրաքյան Մուհամմադ Ալի»: Նա, իհարկե, չկարողացավ այնպիսի հաջողությունների հասնել, ինչպես Եգիպտոսի կուսակալը, բայց մի հարցում նա ետ չմնաց Մուհամմադ Ալիից: Դա փոխհարաբերություններն էին Բարձր Դռան հետ: Ինչպես Մուհամմադ Ալին էր Եգիպտոսը կառավարում առանց հաշվի նստելու Ստամբուլի հետ, այնպես էլ Դաուդ փաշան 14 տարի Իրաքը կառավարեց ինքնուրույն, բնավ հաշվետու չլինելով Բարձր Դռանը, թեև օսմանյան սուլթանը ձևականորեն համարվում էր նրա սյուզերենը:

Դաուդ փաշան իր գլխավոր խնդիրը համարեց ստեղծել կենտրոնացված ուժեղ կառավարման ապարատ, վերջ դնել խոշոր հողատերերի և ցեղային միությունների անջատողական ձգտումներին և իրեն ենթարկել բոլորին: Այդ խնդիրը նա իրագործում էր շատ դաժան ձևերով, արյան մեջ խեղդելով ամեն մի անհնազանդության դրսևորում, հատկապես ցեղերի ապստամբությունները: Նա առաջին անգամ լայնորեն կիրառեց անհնազանդ շեյխերին իշխանազրկելու քաղաքականությունը: Նա այդ քաղաքականությունը կիրառում էր մունթաֆիկ, շամմար, անազե և այլ արաբական ցեղերի իրեն հակառակորդ շեյխերի նկատմամբ, ուղղակի հեռացնելով նրանց ցեղապետի պաշտոնից և նրանց փոխարեն նշանակելով իրեն հավատարիմ մարդկանց:

Դաուդ փաշային հաջողվեց ստեղծել կենտրոնացված կառավարման ապարատ, ուժեղ հսկողություն սահմանել ցեղերի և ցեղային միությունների վրա և սանձահարել ֆեոդալների անջատողական, կենտրոնական կառավարությանը չենթարկվելու նրանց նկրտումները:

Ստեղծելով կառավարման կենտրոնացված համակարգ և ամրապնդելով իր իշխանությունը ոչ միայն Բաղդադի վիլայաթում, այլև

ամբողջ Իրաքում, Դաուդ փաշան բացահայտ մարտահրավեր նետեց օսմանյան սուլթանին: Նա հրաժարվեց նրան հարկ վճարելուց: Սուլթանին սյուզերեն ընդունելը և նրան հարկ վճարելը այն երկու բարակ թելերն էին, որոնք ուժեղացող արաբական վիլայաթները ինչ–որ չափով կապում էին թուլացող սուլթանների հետ և պահպանում ենթակայության պատշաճությունը: Դաուդ փաշան իր այդ քայլով կտրում էր օսմանյան սուլթանին իր ենթակայության կարևոր կապերից մեկը և դառնում ավելի ինքնիշխան Իրաքի կառավարման հարցերում:

Դրանից հետո Դաուդ փաշան կատարեց իր հաջորդ անսպասելի քայլը, առաջացնելով շատերի զարմանքը: Նա Իրաքը կոչեց «Բաբելոնի երջանիկ թագավորություն»: Դա շատ համարձակ և հավակնոտ քայլ էր, հղի անկանխատեսելի հետևանքներով: Հետամնաց Իրաքում, ցեղերի և ցեղային միությունների միջցեղային անընդհատ բախումների պայմաններում, գոյություն ունեցող ագրարային հարաբերությունների շրջանակներում, երբ գյուղական և քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը տառապում էր շահագործումից և աղքատությունից, խոսել երջանկության մասին և պետությունը հռչակել «երջանկության» պետություն, դա ոչ այլ ինչ էր, քան քաղաքական արկածախնդրություն, որը դատապարտված էր ձախողման: Եվ այդպես էլ եղավ: Նրան չփրկեց և չէր էլ կարող փրկել երբեմնի հզոր Բաբելոնին վկայակոչելը: Սակայն Դաուդ փաշայի այդ հետաքրքրաշարժ հայտը պատմության մեջ մտել է որպես հավակնոտ և ոչ ճիշտ հաշվարկած քայլ:

Դաուդ փաշայի իշխանության տարիներին փորձեր արվեցին կիրառել մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակաուղղված էին Իրաքի կախվածությունը ոչ միայն Ստամբուլից, այլև անգլիական Արևելյան–Հնդկական ընկերությունից (ԱՀԸ) թուլացնելուն: Անգլիական այդ ընկերությունը մի շատ հզոր կառույց էր, որն ուներ վիթխարի ֆինանսական հնարավորություններ, սեփական նավատորմ և բանակ, որոնք լուրջ լծակների էին նրա ձեռքում իր ազդեցությունը հաստատելու Հնդկական օվկիանոսի և Պարսից ծոցի ավազանների և հարակից շրջանների վրա: Այդ ընկերությունը բավականին ուժեղ դիրքեր ուներ նաև Իրաքում և օգտվում էր քաղաքական և տնտեսական բնույթի մի շարք արտոնություններից:

Դաուդ փաշան, որը հետևողականորեն վարում էր Իրաքի ինքնուրույնությունն ամրապնդելու քաղաքականություն, մարտահրավեր նետեց ԱՀԸ–ին կապիտուլյացիաների հարցում: Մենք արդեն խոսել ենք

կապիտուլյացիաների ռեժիմի մասին, որ կիրառվում էր Օսմանյան կայսրությունում, նրա բոլոր երկրամասերում, այդ թվում և արաբական երկրներում, որը հարկերի, մաքսերի, դատաիրավական մի շարք հարցերում արտոնություններ էր շնորհում եվրոպացիներին, նրանց վաճառականներին, գործարարներին և ընկերություններին:

Դաուդ փաշան շատ լավ էր տեսնում, որ կապիտուլյացիաների ռեժիմի պատճառով շատ էին տուժում իրաքյան վաճառականները, որոնք ավելի աննպաստ պայմաններում էին գտնվում անգլիական վաճառականների համեմատ և տանուլ տալիս մրցակցության մեջ: Նա 1821 թ. ընդունեց օրենք, որով ԱՀԸ–ն և նրա գործակալները զրկվում էին բոլոր տեսակի արտոնություններից: Այլ կերպ ասած, նրանք դրվում էին այնպիսի պայմանների մեջ, ինչպես իրաքցի վաճառականները:

Դաուդ փաշայի այդ քայլը մեծ գոհունակությամբ ընդունվեց իրաքյան առևտրականների կողմից, քանի որ դա ամրապնդում էր նրանց տնտեսական դիրքերը և նպաստավոր պայմաններ ստեղծում մրցակցության ասպարեզում:

Իսկ Արևելյան–Հնդկական ընկերությունը սվիններով դիմավորեց Դաուդ փաշայի այդ օրենքը և բոլորովին էլ մտադիր չէր անծնատուր լինել: Ընդհակառակը, նա անցավ հակահարձակման, Իրաքի գետերը Պարսից ծոցի կողմից մտցրեց իր ռազմական նավերը, սպառնալով Բասրային: Դա մի փորձ էր ճնշում գործադրել Դաուդ փաշայի վրա: Ի պատասխան, Դաուդ փաշան նոր հարված հասցրեց ԱՀԸ–ին: Նա բռնագրավեց նրան պատկանող և Իրաքի տարածքում գտնվող ապրանքները, շրջապատման մեջ վերցրեց ընկերության նստավայրը, փակեց նրան պատկանող բոլոր հիմնարկները և այլն: Չբավարարվելով դրանով, Բաղդադի փաշան Իրաքից արտաքսեց ԱՀԸ–ի բոլոր աշխատակիցներին, որն իր համարձակությամբ չլսված բան էր: Թվում էր, թե Դաուդ փաշան մոտ էր հաղթանակի, որը կարող էր նշանակալի քայլ հանդիսանալ Իրաքի ինքնուրույնության հետագա ամրապնդման ճանապարհին: Բայց չստացվեց: ԱՀԸ–ի ձեռնարկած մի շարք ակտիվ հակաքայլերի շնորհիվ, որոնց մեջ առաջնային տեղ էին գրավում ռազմական բնույթի սպառնալիքները, ստիպեցին Դաուդ փաշային նահանջել: Նա վերականգնեց ԱՀԸ–ի բոլոր իրավունքները, որ նա ուներ կապիտուլյացիոն ռեժիմի շնորհիվ, վերաբացվեցին նրա հաստատությունները Բաղդադում, իսկ երկրից արտաքսված աշխատակիցներն էլ վերադարձան Իրաք:

Սակայն այդ անհաջողությունը չվհատեցրեց Դաուդ փաշային և նա շարունակեց Իրաքի զարգացման և ինքնուրույնության ամրապնդման իր քաղաքականությունը: Նա, հետևելով Մուհամմադ Ալիին, Իրաքում մտցրեց մոնոպոլիաներ՝ մենաշնորհներ, մի շարք կարևոր ապրանքների արտադրության և վաճառման բնագավառում: Մասնավորապես պետական մենաշնորհներ հաստատվեցին ցորենի, գարու և արմավի մշակման և արտահանման վրա: Դրանք Իրաքի ավանդական գյուղատնտեսական կուլտուրաներն էին: Միաժամանակ նա, դարձյալ Մուհամմադ Ալիի օրինակով, սկսեց խրախուսել Իրաքում բամբակի մշակումը, որպես նոր և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող տեխնիկական կուլտուրա:

Դաուդ փաշայի առջև կանգնած էր նաև մեկ այլ, ոչ դյուրին խնդիր՝ Հյուսիսային Իրաքում իր իշխանությունն ամրապնդելու խնդիրը: Նրան հաջողվեց ինչ–որ չափով իրեն ենթարկել ցեղերին և ֆեոդալներին Կենտրոնական և Հարավային Իրաքում: Սակայն իր տիրապետությունը կատարյալ դարձնելու և կառավարման ուղղաձիգ համակարգը ամենուր հաստատելու հարցը մնում էր չլուծված Հյուսիսային Իրաքում, հատկապես Քրդստանում: Այդ խնդիրն ինքնին բարդ էր, սակայն Հյուսիսային Իրաքում նա ավելի բարդ բնույթ էր կրում այն պատճառով, որ քրդական բեկերի թիկունքում կանգնած էր Պարսկաստանը, որի օգնությամբ նրանք հակազդում էին Դաուդ փաշայի քաղաքականությանը: Պարսկաստանը, որը տնական ճգնաժամից դուրս էր եկել և բավականին հզորացել XIX դարի սկզբներին, Իրաքը գրավելու լուրջ նպատակներ ուներ: Այդ գործում նրանց համար նշանակալի օժանդակող ուժ կարող էին հանդիսանալ քրդերը: Ահա թե ինչու պարսկական Ֆաթալի շահը, մեծ խոստումների գնով կարողացավ իր կողմը գրավել քրդական ցեղերի ավագանուն և բեկերին, որոնք իրենց հայտարարեցին պարսկական շահի վասալներ: Պարսկական շահն էր Իրաքի քրդաբնակ վայրերում նշանակում տեղական կառավարիչներ և նրանցից հարկեր հավաքում: Ստեղծվել էր տարօրինակ վիճակ: Իրաքը հանդիսանում էր մեկ այլ պետության՝ Օսմանյան կայսրության մասը: Տվյալ պարագայում նշանակություն չուներ թե օսմանյան սուլթանի իշխանությունը Իրաքի վրա ուժեղ էր, թե թույլ: Դա տվյալ երկրի ներքին գործն էր: Բայց մեկ այլ պետություն՝ Պարսկաստանն ինքն էր կառավարիչներ նշանակում և հարկեր հավաքում իրեն չպատկանող երկրի մի հատվածում: Դա գոյու-

թյուն ունեցող միջազգային բոլոր տեսակի օրենքների կոպիտ խախտում էր:

Ահա թե ինչու, Դաուդ փաշան փորձեց իր վերահսկողությունը հաստատել Հյուսիսային Իրաքի քրդաբնակ վայրերի վրա, որոնք հիմնականում մտնում էին Մոսուլի վիլայաթի մեջ:

1821 թ. պարսկական շահը քրդական բեկերից մեկին նշանակեց Քրդստանի կառավարիչ: Դա լցրեց Դաուդ փաշայի համբերության բաժակը և նա մի մեծ զորաբանակի գլուխ անցած շարժվեց դեպի Քրդստան, նպատակ ունենալով տապալել պարսկական շահի կողմից նշանակված բեկին և վերջապես իր իշխանությունը հաստատել այդ տարածքի վրա: Նրա այդ քայլը հավանություն և պաշտպանություն գտավ թուրքական սուլթան Մահմուդ II կողմից, քանի որ նրա հաղթանակի դեպքում իրավաբանորեն վերականգնվելու էր թուրքական սուլթանի տիրապետությունը Իրաքյան Քրդստանի վրա: Սակայն Դաուդ փաշայի բանակը, որը կռվում էր քրդական և պարսկական միացյալ ուժերի դեմ, պարտություն կրեց:

Դաուդ փաշան իր վրեժը լուծեց Իրաքում գտնվող պարսիկներից, որոնց դեմ նա կիրառեց մի շարք բռնություններ, մասնավորապես նրանցից շատերին ձերբակալեց և բանտ նետեց, իսկ շատ–շատերին էլ սպանեց, որոնք վախից ապաստան էին գտել շիական մզկիթներում, ապավինելով այն ավանդույթին, որ մզկիթներում ապաստան գտածներին չէին սպանում: Սակայն մամլուք Դաուդ փաշայի համար նման ավանդույթները ոչ մի նշանակություն չունեին: Միաժամանակ նա բռնագրավեց պարսիկներին պատկանող գույքը և Քերբելայում ու Նաջաֆում գտնվող շիա հոգևորականությանը պատկանող հարստությունը: Այս հողի վրա 1821 թ. պայթեց թուրք–պարսկական հերթական պատերազմը, որը 1823 թ. ավարտվեց պարսկական կողմի հաղթանակով: Պարսիկները գրավեցին Մոսուլը, Սուլեյմանիան և Կիրկուկը: Սակայն նրանք գրաված տարածքներում երկար ժամանակ չմնացին: Վրա հասած համաճարակը ստիպեց նրանց հեռանալ Իրաքից: Օսմանյան կայսրության տիրապետությունը Հյուսիսային Իրաքի վրա կրկին վերահաստատվեց:

Պատերազմը Պարսկաստանի դեմ, Դաուդ փաշայի համար, չնայած նրա պարտությանը, ապաարդյուն չանցավ: Նա հասկացավ, որ հաղթելու համար պետք է հիմնովին վերակառուցել բանակը ըստ եվրոպական ռազմական սկզբունքների, բանակը զինելով արդիական զենքերով: Այդ հարցում Պարսկաստանը հասցրել էր առաջ անցնել Օսմա-

նյան կայսրությունից և նրա մեջ մտնող արաբական երկրներից, բացառությամբ Եգիպտոսի: Նրա հաղթանակը 1821–1823 թթ. պատերազմի ժամանակ դրա խոսուն վկայությունն էր:

Բաղդադի փաշան հասկանում էր, որ ինքը սեփական ուժերով չի կարող վերակառուցել և վերազինել իր բանակը: Դրա համար անհրաժեշտ էն եվրոպական որևէ պետության օգնությունը: Այդպես էին վարվել Եգիպտոսը և Պարսկաստանը: Այդպես վարվեց նաև Դաուդ փաշան: Իր այդ մտադրությունն իրականացնելու համար նա նախապատվությունը տվեց անգլիական զինվորական մասնագետներին: Իսկ Անգլիան մեծ ուրախությամբ ընդառաջ գնաց Դաուդ փաշայի խնդրանքին, քանի որ դա նպաստելու էր Անգլիայի դիրքերի հետագա ամրապնդմանը Իրաքում:

Անգլիական զինվորական հրահանգիչների օգնությամբ բավականին կարճ ժամանակամիջոցում Դաուդ փաշան ունեցավ կանոնավոր զինվորական բանակ: Դա այլևս նախկին վատ մարզված, կարգապահությամբ չփայլող և վատ զինված զորաջոկատները չէին, որոնք ավելի շատ հիշեցնում էին թալանի դուրս եկած աշխարհազորայինների զորաջոկատներ: Ջորքի այդ տեսակի ժամանակներն արդեն անցել էին: Այդ նորաստեղծ, լավ մարզված և կարգապահ բանակը, որը կառուցված էր անգլիական, ավելի ճիշտ նրա անգլո–հնդկական մոդելով, Դաուդ փաշան զինեց ժամանակակից հրետանիով, որը դարձել էր զենքի սարսափելի տեսակ, մանավանդ նապոլեոնյան պատերազմներից հետո: Բաղդադում կառուցվեց ժամանակակից զինանոց:

Այդ բոլորի համար անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ: Դրանց հայթայթման համար նաև մտցվեցվին մենաշնորհներ մի շարք ապրանքների արտադրության և վաճառաման համար: Դրանից ստացվող եկամուտները փաշան օգտագործեց բանակի վերակառուցման և վերազինման հետ կապված ծախսերը հոգալու համար: Իսկ վաճառականներին խրախուսելու և արտահանումը զարգացնելու համար, Դաուդ փաշան ստեղծեց ծովային և գետային առևտրական նավատորմ:

Այսպիսով, Դաուդ փաշան նշանակալի քայլ կատարեց որոշ ուղղություններով Իրաքի առաջընթացն ապահովելու և իր դիրքերն ամրապնդելու համար: 1820–ական թվականների վերջերին և 1830–ական թվականների սկզբներին նա արդեն իրեն ավելի ուժեղ էր զգում, քան թե իշխանության գալու առաջին տարիներին:

Դա հնարավորություն տվեց նրան ավելի անկախ պահել իրեն թուրքական սուլթանի հետ փոխհարաբերություններում, մանավանդ 1827–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում նրա կրած ծանր պարտությունից հետո: Եվ դա ցուցադրելու առիթը հենց ինքը սուլթանը տվեց, ինչպես Մուհամմադ Ալիին, այնպես էլ Դաուդ փաշային:

3. Թուրք–իրաքյան «պատերազմը» և կյուլեմենների իշխանության տապալումը Իրաքում

Ռուսաստանի դեմ պատերազմում կրած պարտությունից հետո, Թուրքիան պարտավորվեց մեծ ռազմատուգանք վճարել Ռուսաստանին: Բայց նա այդ հնարավորությունը չուներ: Ուստի սուլթան Մահմուդ II որոշեց վճարման ամբողջ ծանրությունը գցել կայսրության մեջ մտնող տարբեր երկրների վրա, պահանջելով նրա կառավարիչ փաշաներից համապատասխան վճարումներ կատարել: Նման պարտավորություն դրվեց նաև Դաուդ փաշայի, ինչպես նաև Մուհամմադ Ալիի վրա: Երկուսն էլ հրաժարվեցին կատարել սուլթանի պահանջը, որը կսնանկացներ նրանց, թե Իրաքը, և թե Եգիպտոսը:

Դաուդ փաշան որոշեց այդ հարցում գնալ մինչև վերջ: Եվ երբ Բաղդադ եկավ սուլթանի ներկայացուցիչը նրա հրամանը ռազմատուգանքի հարցում Իրաքում կենսագործելու համար, Դաուդ փաշան ոչ միայն ցանկություն չունեցավ նրան ընդունել և լսել, այլև նրան սպանել տվեց:

Նույնիսկ թուլացած Բարձր Դուռը այլևս չէր կարող ներել նրա կարծիքով չափն անցկացրած Դաուդ փաշային: Պատրվակ բռնելով իր հատուկ ներկայացուցչի սպանությունը անծամբ Դաուդ փաշայի հրամանով, սուլթան Մահմուդ II նրան մեղադրեց իր սյուզերենին չհնազանդվելու մեջ և նրան հայտարարեց խռովարար: Սուլթանը, սակայն, չբավարարվեց միայն դրանով, այլ որոշեց պատերազմական գործողություններ սկսել Դաուդ փաշայի դեմ, նրան զրկել իշխանությունից և իր լիիրավ տիրապետությունը վերականգնել Իրաքի վրա: Բայց նա որոշեց անմիջականորեն չմասնակցել պատերազմական գործողություններին, այլ դրա «պատիվը» տվեց Հալեբի փաշա Ալի Ռիզային:

Օսմանյան կայսրությունում սուլթանների կողմից հաճախ էր կիրառվում այդ ձևը, երբ որևէ անհնազանդ փաշային կամ կուսակալին պատժելը հանձնարարվում էր մեկ ուրիշ փաշայի կամ այլ աստիճանի

կառավարչի, իրենց վերապահելով վճռական պահին միջամտելու և վերջնական հարվածը հասցնելու իրավունքը: Եվ հազվադեպ է եղել, երբ այն փաշան, որին սուլթանը տվել է նման հանձնարարություն, համարձակվեր չկատարել սուլթանի հրամանը:

Հալեբի վիլայաթի փաշա Ալի Ռիզան նույնպես հանձն առավ պատերազմի դուրս գալ Դաուդ փաշայի դեմ: Դա, բացի սուլթանի հրամանը կատարելուց, ուներ նաև այլ պատճառներ: Դաուդ փաշային հաղթելու դեպքում, նա, ինչպես խոստացել էր սուլթանը, դառնալու էր Բաղդադի փաշան: Դա շոյում էր նրա ինքնասիրությունը, քանի որ գավառական Հալեբի փոխարեն նա դառնալու էր ավելի կարևոր նշանակություն ունեցող Բաղդադի փաշա: Բացի դրանից, նա լավ գիտեր, որ Բաղդադի փաշան ինքնաբերաբար դառնալու էր ամբողջ Իրաքի կառավարիչ: Ուրեմն նա ավելի համեստ նշանակություն ունեցող Հալեբի փաշայի փոխարեն դառնալու էր Իրաքի կառավարիչ: Դա խթանիչ հանգամանք էր թուրքական սուլթանի հրաման–կարգադրությունն առանձնակի եռանդով կատարելու համար:

Ալի Ռիզան իր բազմաքանակ զորքի գլուխն անցած շարժվեց Իրաքի ուղղությամբ, պատրաստ պատերազմելու Դաուդ փաշայի հետ:

Դաուդ փաշան պատրաստ էր պատերազմի և նա օսմանյան սուլթանի հանձնարարությամբ իր դեմ դուրս եկած Ալի Ռիզայի բանակի դեմ հանեց իր բավականին հզոր բանակը, որն ավելի ուժեղ էր և ավելի լավ պատրաստված: Դա անգլիացիների օգնությամբ ստեղծված նրա կանոնավոր բանակն էր: Նրա տրամադրության տակ էր նաև 20 հազարանոց ոչ կանոնավոր բանակը, կազմված հետևակից ու հեծելազորից, և 50 հազարի հասնող աշխարհազորայինները:

Ճակատամարտից առաջ, ինչպես հայտնի է, երկու կողմերն էլ սովորաբար հայտարարում են իրենց համոզվածության մասին իրենց հաղթանակի վերաբերյալ: Այս դեպքում նս բացառություն չեղավ: Ալին Ռիզան չէր կասկածում իր հաղթանակի մեջ, իսկ Դաուդ փաշան ավելի քան հավատացած, որ հաղթողն ինքն է լինելու, որը կունենա ավելի հեռուն գնացող հետևանքներ:

Սակայն ճակատամարտը նրանց միջև այդպես էլ չկայացավ: Պատերազմի ելքը տնօրինեց բնությունը, ավելի ճիշտ, բնական արհավիրքները: Նախ 1830 թ. ջրհեղեղը, որը հեղեղեց Իրաքի դաշտերը, անհնար դարձնելով զորքերի, հատկապես հեծելազորի և հրետանու տեղաշարժը: Դա ուղեկցվեց համաճարակով և զանգվածային տենդով, իսկ

1831 թ. վերջնական հարվածը Իրաքի բանակին հասցրեց ժանտախտը: Իրաքի բանակը դադարեց գոյություն ունենալ:

Մեծ կորուստներ կրեց քաղաքացիական բնակչությունը: Երկիրը դատարկվեց: Բաղդադի 150 հազար բնակչությունից կենդանի մնաց մոտ 20 հազարը: Պակաս չէին Բասրայի կորուստները: Երբ սկսվեց ժանտախտը, ապա Բասրայի մութասալիմը կարգադրեց փակել քաղաքի դարպասները բնակչության գլխովին փախուստը քաղաքից կանխելու համար: Այդ «հնարամիտ» քայլի պատճառով ժանտախտը հնձեց քաղաքում մնացածներին: 80 հազար բնակչությունից կենդանի մնաց ընդամենը 5 հազարը: Բավական շատ էին այնպիսի քաղաքները, որտեղ բոլորը ժանտախտի բաժին դարձան, ինչպես Հիլլայի բնակչությունը, որտեղ 10 հազար մարդուց կենդանի մնաց մի քանի հոգի:

Եվ երբ վերջացավ ժանտախտը, ապա Դաուդ փաշան, ինչպես նշեցինք, գործնականում այլևս բանակ չուներ:

1831 թ. Ալի Ռիզան մտավ Բաղդադ: Սեպտեմբերին Դաուդ փաշան գահընկեց արվեց, ձերբակալվեց և ուղարկվեց Ստամբուլ՝ սուլթանին ընծա:

Դաուդ փաշայի գահընկեց արվելուց հետո, Իրաքում վերացավ կյուլեմենների կառավարման դարաշրջանը: Սակայն դա միակ փոփոխությունը չէր, որ տեղի ունեցավ Իրաքում: Բարձր Դուռն ուժեղացրեց իր դիրքերը Իրաքում: Հետայսու Բաղդադի փաշային արդեն նշանակում էր միայն և միայն Ստամբուլը: Նա այլևս նախկին ինքնիշխան կառավարիչը չէր, այլ վերածվեց օսմանյան սովորական պաշտոնյայի: Դրանով վերացվեց Իրաքի հարաբերական ինքնուրույնությունը:

Դաուդ փաշան կորցրեց ամենի ինչ:

Իսկ ժանտախտից ամայացած և մարդաթափ եղած «Բաբելոնի երջանիկ թագավորությունից» պատմության մեջ միայն մի դառը հուշ մնաց:

4. Իրաքը խռովահույզ ժամանակներում (1830–1840–ական թվականներ):

Ալի Ռիզային շատ ծանր ժառանգություն հասավ, որը նա անգամ երևակայել չէր կարող: Պատերազմի դուրս գալով Դաուդ փաշայի դեմ և ակնկալելով դառնալ Բաղդադի փաշա, նա հավատացած էր, որ կստանար մի հարուստ երկիր: Դրա փոխարեն նրան բաժին ընկավ մի ամա-

յացած և քայքայված երկիր: Եվ նա ակամայից մտորում էր, թե արժեր դրա համար Հալեբի փաշայությունից հրաժարվել, մանավանդ, որ Բաղդադի փաշան այլևս նախկին լիազորությունները ունեցող և համարյա լրիվ ինքնուրույն Իրաքի կառավարողը չէր, այլ սուլթանի կողմից նշանակվող և նրան լրիվ ենթակա մի պաշտոնյա:

Կյուլեմենների տիրապետության ժամանակ, մանավանդ Դաուդ փաշայի կառավարման տարիներին, հաջողվել էր ստեղծել ուժեղ և կենտրոնացված կառավարման համակարգ, որը սանձած էր պահում ցեղերին և հողատերերին: Նրանց տապալումից հետո, դրությունն արմատապես փոխվեց: Կրկին գլուխ բարձրացրին ցեղերը, սկսվեցին միջցեղային հակամարտությունները, վրա հասան խառը ժամանակներ: Եթե դրան ավելացնենք ջրհեղեղից ամայացած դաշտերն ու այգիները, և ժանտախտից ամայացած քաղաքներն ու գյուղերը, ապա ծանր վիճակում հայտնված Իրաքի պատկերը կատարյալ կդառնա:

Առանձին վտանգ էին ներկայացնում միջցեղային հակամարտությունները և բախումները: Իրաքում գտնվող ցեղերից ամենաազդեցիկներն էին մունտաֆիկը, շամմարը, անեզեն, որոնք ցեղային հզոր միություններ էին, զուբեյրը և մյուսները: Նրանք ոչ միայն միմյանց դեմ էին պայքարում, այլև չէին ցանկանում ենթարկվել Բաղդադի փաշային: Ալի Ռիզան այդքան ուժեղ չէր նրանց դեմ պայքարելու և ստիպելու նրանց իրեն ենթարկվել: Այդ պատճառով նա վերադարձավ հին և փորձված մարտավարությանը–ցեղերին և ցեղային միություններին լարել միմյանց դեմ և նրանց ձեռքով լուծել իր հարցերը:

Ալի Ռիզան սկզբում դաշինքի մեջ մտավ Ձերբի շամմարների հետ, որը առաջացրեց նրանց ոխերիմ հակառակորդ մունտաֆիկ ցեղախմբի խիստ դժգոհությունը, որը վերածվեց անհնազանդության և ապա ապստամբության: Նա կարողացավ գժտություն առաջացնել մունտաֆիկի շարքերում և նրանց առաջնորդ շեյխ Աջիլի դեմ հանել նրա եղբորը, որը դեռևս ժանտախտի ժամանակ Բաղդադից փախել էր Ալի Ռիզայի ճամբարը: Այժմ, երբ Աջիլն իր անհնազանդությունն էր հայտնել Ալի Ռիզային և սպառնում էր նրա իշխանությանը, Ալի Ռիզան որոշեց եղբորը հանել եղբոր դեմ: Նա օգնեց իր ճամբարում գտնվող եղբորը բավականին մեծ և ուժեղ բանակ ստեղծել, որը դուրս եկավ Աջիլին հավատարիմ մնացած իր ցեղակիցների դեմ: Վճռական ճակատամարտը երկու եղբայրների գլխավորած մունտաֆիկի ցեղախմբերի միջև տեղի ունեցավ հինավուրց Վասիտի ավերակների մոտ և ավարտվեց Աջիլի

պարտությամբ: Ձիուց պատահականորեն վայր ընկած Աջիլին նիզակախող արեցին նրա եղբոր վրա հասած մարտիկները:

Դրանից հետո մունտաֆիկ ցեղային միության շարքերում պայքարը չդադարեց: Վասիտի ճակատամարտը, երբ երկու կողմերից էլ եղան բազմաթիվ զոհեր, նրանց միջև նոր հակամարտության պատճառ դարձավ: Բաղդադի նոր փաշան ամեն կերպ նպաստում էր պայքարի բորբոքմանը նրանց միջև, քանի որ նրանք զբաղված էին միմյանց դեմ պայքարելով և չէին կարող միավորվել և Բաղդադի դեմ հանդես գալ:

Շուտով գլուխ բարձրացրեց մյուս հզոր ցեղային միությունը՝ Ձերբի շամմարները: Ալի Ռիզան Դաուդ փաշայի դեմ պատերազմի նախապատրաստվելիս, կարողացել էր զանազան մեծ խոստումներով իր կողմը գրավել շամմար ցեղախումբը, որը օգնեց նրան Բաղդադը գրավելու գործում: Դաուդին տապալելուց և Ալի Ռիզայի Բաղդադի փաշա նշանակվելուց հետո, շամմարների շեյխ Սուֆուկը Ալի Ռիզայից պահանջեց կատարել իր խոստումը և իրենց վճարել համապատասխան պարգև և տալ զանազան արտոնություններ: Ալի Ռիզան միանգամից չմերժեց նրանց պահանջները, այլ մտավ բանակցությունների մեջ, ջանալով չափավորել նրանց հավակնությունները: Բայց դա նրան չհաջողվեց և փաշան, ի վերջո, հրաժարվեց կատարել իր տված խոստումները: 1833 թ. Սուֆուկն իր հզոր ցեղային միության գլուխն անցած շարժվեց Բաղդադի վրա և պաշարեց այն: Պաշարումը տևեց երեք ամիս և Սուֆուկը այն վերացրեց վրա հասած ձնռան և ցրտերի պատճառով: Կասկած չկար, որ գարնանը նա կվերսկսեր իր հարձակումը Բաղդադի վրա: Դա շատ լավ գիտեր Ալի Ռիզան և նա որոշեց կանխարգելիչ քայլերի դիմել, մանավանդ, որ նա բավարար քանակությամբ զորքեր չուներ միայնակ ետ մղելու շամմարների հարձակումը:

Նա այս անգամ որոշեց շամմարների դեմ հանել անեզե ոչ պակաս հզոր և ռազմատենչ ցեղախումբը: Նրա ընտրությունն ընկավ անեզե ցեղախմբի վրա, քանի որ նա տեղյակ էր նրանց միջև վաղուց գոյություն ունեցող թշնամության մասին: Իսկ դրա պատճառը հետևյալն էր: Երկու ցեղային միություններն էլ տեղափոխվել էին Արաբիայից, Նաջդի շրջանից: Շամմարներն ավելի շուտ էին դուրս եկել, քան անեզե ցեղախումբը: Դրանից հետո նրանց միջև բացահայտ պայքար է սկսվում Սիրիական անապատին տիրանալու և այնտեղ հաստատվելու համար: Այդ պայքարում անեզե ցեղախմբին հաջողվեց շամմարներին դուրս մղել Սիրիական անապատից, որից հետո նրանք հաստատվեցին Միջա-

գետքում: Բայց թշնամությունը նրանց միջև մնացել էր և բախումները դարձել էին սովորական երևույթ:

Ալի Ռիզան շփումների մեջ մտավ անեզե ցեղախմբի շեյխերի հետ, որոնք խոստացան օգնել նրան ընդդեմ շամմարների:

Ալի Ռիզան միայն դրանով չբավարարվեց: Նա որոշեց երկպառակություն մտցնել շամմարների շարքերում: Նա Սուֆուկին զրկեց շամմարների ցեղախմբի շեյխությունից և նրա փոխարեն շեյխ նշանակեց Սուֆուկի ազգական Շլոշին: Այս վերջինին ավելի սիրաշահելու և իր կողմը գրավելու համար Ալի Ռիզան անգամ նրան շնորհեց փաշայի տիտղոս, որն ընդհանրապես աննախադեպ երևույթ էր:

Սուֆուկը, իրեն հավատարիմ մնացած ցեղակիցներով 1834 թ. պատրաստվում էր վերսկսել հարձակումը Բաղդադի վրա: Բայց այդ նույն ժամանակ ասպարեզ իջավ անեզե ցեղախումբը 35 հազար մարտիկներով, որը նույնպես շարժվում էր Բաղդադ Ալի Ռիզային պաշտպանելու համար:

Սուֆուկն իմանալով այդ մասին, որոշեց չհարձակվել Բաղդադի վրա և նահանջեց Բաղդադից հյուսիս:

Միջցեղային հակասությունների վրա խաղալն այս անգամ նս իրեն արդարացրեց:

Սակայն շամմարի նահանջից հետո ծագեց անեզե ցեղախմբի հարցը: Նա մտադրություն չուներ վերադառնալ անապատ առանց փոխհատուցման: 1834 թ. նրանք անգամ մի անհաջող փորձ կատարեցին թալանել ժանտախտից դեռ ուշքի չեկած Բաղդադը: Ալի Ռիզան ստիպված էր մարտի մեջ մտցնել իր զորքերը, միաժամանակ օգնության կանչելով Շլոշին: Վերջինս հուսախաբ չարեց Ալի Ռիզային և իր զորախմբով օգնության աճապարեց նրան և անեզեի դեմ մարտի մեջ մտավ Բաղդադի պատերի տակ: Սակայն նրա զորախումբը պարտություն կրեց և ինքն էլ զոհվեց մարտի դաշտում: Բայց այստեղ կատարվեց անսպասելին:

Կրկին ասպարեզում հայտնվեց Սուֆուկը իր շամմար ցեղակիցներով: Ստանալով իր ազգական Շլոշի մահվան և նրա շամմարական զորախմբի պարտության լուրը, Սուֆուկը դա համարեց ընդհանրապես շամմար ցեղին նրան ոխերիմ թշնամու կողմից հասցված վիրավորանք: Նա որոշեց իրենց հասցված խայտառակության համար պատժել անեզե ցեղին: Նրան հաջողվեց օգնության եկած դաշնակից զուբեյր ցեղի հետ միասին պարտության մատնել անեզեներին, որոնք ստիպված էին հեռանալ անապատ:

Սուֆուկի հաղթանակը նրան մեծ հեղինակություն բերեց և Իրաքի շատ արաբական ցեղեր ցանկություն հայտնեցին դաշնակցել նրա հետ: Նրա դիրքերն Իրաքում օրեցօր ամրապնդվում էին, որը խիստ անհանգստացնում էր Ալի Ռիզային, որը կրկին հայտնվեց ծանր դրության մեջ և կանգնեց Սուֆուկի և նրա շամմարների ցեղախմբի հարցը լուծելու անհրաժեշտության առջև:

Այս անգամ նա դաշնակցեց իր երեկվա հակառակորդ և շամմարին թշնամի մունտաֆիկ ցեղախմբի հետ: Մունտաֆիկը պառակտված էր և Բաղդադի փաշան սկսեց նրանից, որ փորձեց հաշտեցնել հակառակորդ խմբերին, որով վերականգնվեց նրա շարքերի միասնականությունը: Դա նրան հաջողվեց շնորհիվ նրա, որ նա պաշտպանեց շեյխ Իսայի թեկնածությունը մունտաֆիկ ցեղախմբի ղեկավար ընտրելու հարցում: Նրա թեկնածությանը համաձայն էին ցեղախմբի անդամ բոլոր ցեղերի առաջնորդները: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ Իսան խիզախ էր, տրամադրված էր մարտականորեն, հյուրասեր էր և առատաձեռն: Սրանք այնպիսի հատկանիշներ էին, հատկապես հյուրընկալ և առատաձեռն լինելը, որոնք ավանդաբար արաբների մոտ բարձր են գնահատվում: Այդ կապակցությամբ նշենք, որ ամեն օր մորթվում էր 30–40 գլուխ ոչխար և պատրաստվում, կարելի է ասել անսահմանափակ քանակությամբ բրնձով փլավ Իսայի վրանում ճաշող նրա ցեղակիցների համար:

Շեյխ Իսան համաձայնվեց օգնել Ալի Ռիզային, հարձակվեց շամմար ցեղախմբի վրա և պարտության մատնեց նրանց: Դրանով նա մեծ ծառայություն մատուցեց Ալի Ռիզային և փրկեց Բաղդադը վերահաս վտանգից:

Բայց դա վերջ չտվեց և չէր էլ կարող տալ միջցեղային բախումներին, որոնք պատուհաս էին դարձել Իրաքի բնակչության համար:

Բաղդադի փաշաների համար մեծ խնդիր էին ոչ միայն արաբական ցեղերը և նրանց միջցեղային հակամարտությունները, այլև քրդական ցեղերը, որոնք հատկապես աշխուժացան Դաուդ փաշայի ձերբակալվելուց և Ստամբուլ ուղարկվելուց հետո: Նա կարողանում էր երկաթյա բռունցքով ճնշել քրդերի ընդվզումները և նրանց իրեն ենթարկել: Սակայն նրան գահընկեց անելուց հետո վերացավ քրդական ցեղերին զսպող ձեռքը և նրանք նորից գլուխ բարձրացրին: Նրանք հրաժարվում էին հարկեր վճարելուց, չէին ենթարկվում Բաղդադի փաշաներին և չէին կատարում թուրք պաշտոնյաների հրամանները:

Այս անգամ քրդական ցեղերը աջակցություն էին ստանում ոչ միայն Պարսկաստանից, որը դարձել էր ավանդական, այլև Եգիպտոսի կուսակալ Մուհամմադ Ալիից, որը Իրաքը նույնպես դիտում էր իր ղեկավարությամբ ապագա արաբական միասնական պետության օրգանական մասը: Դա կազմում էր Պարսից ծոցում և տարանցիկ առևտրի ճանապարհների վրա հաստատվելու նրա քաղաքական ծրագրի մի մասը: Այդ պատճառով Մուհամմադ Ալին պաշտպանում էր Իրաքում ծագող և հակաօսմանյան ուղղվածություն ունեցող ամեն մի շարժում, ելնելով այն հիմնադրույթից, որ դա կթուլացնի Թուրքիայի դիրքերը Իրաքում և կհեշտացնի Իրաքի կցումը իր արաբական տիրույթներին:

Ստամբուլը, անշուշտ, տեղյակ էր այս ամենին և հետևում էր իրադարձությունների զարգացմանը Իրաքյան Քրդստանում: 1831–1849 թթ. եղել են քրդական բազմաթիվ ելույթներ, որոնք, սովորաբար Թուրքիային հաջողվում էր ճնշել: Բայց Քրդստանը հանդարտեցնել և վերջնականապես իրեն ենթարկել Ստամբուլին այդպես էլ չհաջողվեց: Սակայն եղավ մի պահ, երբ թվում էր, թե Թուրքիան կորցնում է Իրաքյան Քրդստանը: Դա 1841 թվականին էր, երբ Պարսկաստանը պաշտպանեց քրդական բեկերի ապստամբությունը, նրանց օգնելու պատրվակով ներխուժեց Քրդաստան և անգամ գրավեց Սուլեյմանիան, որը շատ լուրջ մարտահրավեր էր Թուրքիայի տիրապետությանը: Թուրքիան և Պարսկաստանը դարձյալ հայտնվեցին պատերազմի շեմին: Պահանջվեց Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունը և երկար տարիների համառ աշխատանք պատերազմը կանխելու և թուրք–պարսկական կոնֆլիկտը, կապված Քրդստանի հետ, խաղաղ ճանապարհով լուծելու համար: Վերջապես, 1847 թ. կնքվեց թուրք–պարսկական պայմանագիրը, որով կողմերը համաձայնության եկան սահմանների հարցում, մասնավորապես Պարսկաստանը իր զորքերը դուրս բերեց Սուլեյմանիայից, այն ճանաչելով որպես Օսմանյան կայսրությանը պատկանող քաղաք, որի դիմաց որոշ տարածքային զիջումներ կատարեց Թուրքիան հօգուտ Պարսկաստանի:

Կողմերը համաձայնության եկան Պարսկաստանի համար կարևոր նշանակություն ունեցող ևս մի հարցում: Խոսքը վերաբերում է շիա ուխտագնացներին: Պարսկաստանում տիրապետողը, ինչպես բազմիցս նշվել է, իսլամի շիական ուղղությունն էր, իսկ շիիզմի սրբակենտրոնները, Քերբելան և Նաջաֆը, գտնվում են Իրաքի տարածքում: Շիա պարսիկները մշտապես ուխտագնացության էին մեկնում Իրաք:

Բայց դա սովորաբար կապված էր լինում որոշակի բարդությունների հետ, հատկապես թուրք–պարսկական հարաբերությունների լարվածության ընթացքում: Իսկ քանի որ հարաբերությունները Թուրքիայի և Պարսկաստանի միջև համարյա միշտ լարված էին և պատերազմները նրանց միջև նույնպես հաճախ էին բռնկվում, ուստի դրանք անդրադառնում էին նաև ուխտագնացության հնարավորությունների վրա: Ահա թե ինչու, 1847 թ. մայիսի 31–ին կնքված թուրք–պարսկական պայմանագրի մեջ մտցվեց հատուկ հոդված պարսիկների ուխտագնացությունը Իրաք կարգավորելու և ուխտագնացներին դյուրություններ տրամադրելու մասին:

Այս շրջանում, մանավանդ Դաուդ փաշայի տապալվելուց հետո, Իրաքում տիրապետող դիրքեր նվաճեց Անգլիան: Ճիշտ է, Դաուդ փաշայից հետո զգալիորեն ամրապնդվեցին, ինչպես նշել ենք արդեն, սուլթանի դիրքերը, բայց առանց Անգլիայի գիտության և հավանության Իրաքում ոչինչ չէր կատարվում: Անգլիայի ազդեցության տակ էր գտնվում իրաքյան բանակը, իսկ Արևելյան Հնդկական Ընկերությունը, որն անգլիական ընկերություն էր, իրականում պետություն էր պետության մեջ: Նա առաջատար դերակատարություն ուներ Իրաքի առևտրում, օգտագործելով ոչ միայն Պարսից ծոցի, այլև Տիգրիս ու Եփրատ գետերի հնարավորությունները: Նա իր գրասենյակներն ուներ Իրաքի տարբեր քաղաքներում, իսկ նրա աշխատակիցները իսկական գործակալներ էին, Անգլիայի աչքերն ու ականջները, որոնք տեղյակ էին այն ամենի մասին, ինչ կատարվում էր Իրաքում:

Անգլիացիները XIX դարի 40–ական թվականներին զգալի ուշադրություն դարձրեցին կապի զարգացմանը Իրաքում: Նրանք Իրաքը հեռագրային կապով կապեցին Հնդկաստանի հետ, ապա հեռագրային ուղղակի կապ հաստատվեց Բաղդադի և Ստամբուլի միջև, որը 50–ական թվականներին շարունակվեց մինչև Իրաքի երկրորդ քաղաք Բասրա և Պարսից ծոցի ափին գտնվող Ֆաո նավահանգիստը: Հաշվի առնելով, որ հեռագրային կապը պատկանում է ստրատեգիական նշանակություն ունեցող ինֆրաստրուկտուրային, Անգլիայի օգնությամբ հեռագրային կապ հաստատվեց նաև Իրաքի ներսում, տարբեր շրջանների և քաղաքների միջև:

XIX դարի առաջին կեսը Իրաքի պատմության ամենաբարդ ու խառնակ ժամանակաշրջաններից մեկն է: Դա հեղաշրջումների, դավադրությունների, ցեղերի և ֆեոդալ–բեկերի անհիշխանականության,

միջցեղային արյունահեղ հակամարտությունների և պատերազմների դարաշրջան էր: Այդուհանդերձ, այդ ժամանակաշրջանի ամենացնցող իրադարձությունը ժանտախտն էր, որի հետևանքներն իրենց զգացնել էին տալիս մինչև XIX դարի 50–ական թվականների վերջերը:

VII. ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՏԸ: ԱՐԹԻՆ ԴԱՈՒԴՅԱՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄՈՒԹԱՍԱՐԻՖ

1. Բաշիր II Շիհաբը Լիբանանյան իշխանապետության էմիր (1788–1840 թթ.):

Լիբանանյան իշխանապետության XIX դարի առաջին կեսի պատմությունը սերտորեն կապված է նրա կառավարիչ, էմիր Բաշիր II Շիհաբի անվան ու գործունեության հետ:

XIX դարի առաջին կեսը արաբների պատմության մեջ հետաքրքիր ժամանակաշրջան է նաև այն առումով, որ քաղաքական ասպարեզում հայտնվեցին մի շարք ականավոր պետական գործիչներ, որոնք իրենց հիմնական նպատակներից մեկը համարում էին իրենց վերահսկողության տակ գտնվող երկրներում ստեղծել ուժեղ և կենտրոնացված պետական կառավարման համակարգ, առավելագույնս թուլացնել կապն ու կախվածությունը Ստամբուլից, և հող նախապատրաստել արաբական երկրների անկախության համար: Այդ տիպի գործիչներ մեկը մյուսից հետո հայտնվեցին Եգիպտոսում, Իրաքում և Լիբանանում: Եգիպտոսում այդ գործիչը եղավ Մուհամմադ Ալին, Իրաքում Բաղդադի Դաուդ փաշան, իսկ Լիբանանում էմիր Բաշիր II: Կարելի է ասել, որ թեև մի փոքր այլ պայմաններում և այլ ձևերով, նույն դերակատարումն ունեին Նաջդի Սաուդյան էմիրները Արաբիայում:

Բաշիրը իշխանապետ դարձավ Լիբանանի համար վերին աստիճանի ծանր ու խառնակ մի ժամանակ: Լիբանանը պառակտված էր ֆեոդալական տների միջև անընդհատ ընթացող ռազմական բախումների ու պատերազմների հետևանքով, որոնք արյունաքամ էին անում երկի-

ը: Դրանց միջամտում էին Ակկայի փաշա արյունառուշտ Ջազարը և թուրքերը:

Ջազարը սկզբում Սայդայի փաշան էր, այնուհետև դարձավ նաև Տրիպոլիի և Դամասկոսի վիլայաթների փաշան, ձեռք բերելով անսահմանափակ իշխանություն ամբողջ Սիրիայի, Պաղեստինի, մասամբ նաև Լիբանանի վրա: Նա իր ընդարձակ տիրույթների կենտրոնը դարձրեց Ակկա քաղաք–ամրոցը, այդ պատճառով հաճախ կոչվում էր նաև Ակկայի փաշա:

Ջազարը չկարողացավ վերացնել Լիբանանի իշխանապետությունը և նրա ներքին ինքնավարությունը, թեև շատ կցանկանար դրան հասնել: Բայց Լիբանանյան իշխանապետությունը Ստամբուլի գիտությամբ, հարկադրաբար, թե լռելյայն համաձայնությամբ, կախման մեջ ընկավ Ակկայի փաշայից, որը արտաքուստ թվում էր թե Բարձր Դռան հանձնարարությունն էր կատարում: Իրականում նա շատ հաճախ գործում էր ինքնուրույնաբար և քիչ չէին դեպքերը, երբ նա անտեսում էր սուլթանին և նրան դնում անհարմար դրության մեջ:

Ջազարի բիրտ և դաժան քաղաքականությունն անընդհատ ընվզումներ ու ապստամբություններ էր հարուցում նրա տիրապետության տակ գտնվող Սիրիայում և Պաղեստինում: Թեև նրան հաջողվում էր դրանք ճնշել, այդուհանդերձ, նրան չէր հաջողվում իր ենթակայության տակ գտնվող արաբական երկրամասերում հաստատել անդորրություն:

1780 թ. հուժկու գյուղացիական ապստամբություն բռնկվեց Լիբանանում, որի պատճառը լիբանանցի գյուղացիներից գանձվող հարկերի բարձրացումն էր Ջազարի կողմից, որը այլևս չդիմանալով առանց այն էլ ծանր հարկերից, ոտքի ելավ նրա դեմ: Այդ ապստամբությունների առանձնահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ նրանք պառակտում էին մտցնում լիբանանյան ֆեոդալական վերնախավի շարքերում: Քիչ չէին դեպքերը, երբ Ջազարից դժգոհ որոշ ֆեոդալներ միանում էին ապստամբներին, հաճախ նաև նրանք էին ղեկավարում այդ ապստամբությունները, իսկ ոմանք էլ անցնում էին փաշայի կողմը, ակնկալելով դրա դիմաց իրենց տարածքների ընդարձակումը և այլ արտոնություններ:

1780 թ. ապստամբության ժամանակ, Լիբանանյան իշխանապետության էմիր Յուսուֆ Շիհաբը, որը թույլ անձնավորություն էր և անընդհատ տատանվում էր սուլթանի և փաշայի, փաշայի և լիբանանյան վերնախավի միջև, անցավ թուրքերի կողմը և դաժանորեն ճնշեց ապս-

տամբությունը: Ապստամբության ընթացքում պառակտում էր առաջացել Շիհաբների ընտանիքում: Էմիր Յուսուֆի եղբայրը և մի քանի մոտ ազգականներ անցել էին ապստամբների կողմը: Ապստամբությունը ճնշելուց հետո նա շատ դաժանորեն վարվեց իր հարազատների հետ: Նա իր եղբայրներից մեկի լեզուն պոկեց, հարազատներից մեկին կուրացրեց, իսկ մյուսին խեղդամահ արեց:

Նման քայլերը թուլացնում էին Յուսուֆի դիրքերը, որին մեծապես նպաստում էր նաև Ջազարի քաղաքականությունը:

80–ական թվականներին տեղի ունեցան նաև մի շարք այլ ելույթներ, որին անընդհատ միջամտում էր Ակկայի փաշան և նորանոր զիջումներ ձեռք բերում Յուսուֆից, որոնք անխուսափելիորեն թուլացնում էին վերջինիս դիրքերը իր իշխանապետության ներսում: Թուլացած և հեղինակազրկված Յուսուֆ Շիհաբի դեմ ապստամբած լիբանանյան ֆեոդալական ավագանին, Ջումբլաթների հեղինակավոր տոհմի գլխավորությամբ, 1788 թ. նրան գահընկեց արեց և Լիբանանյան իշխանապետության նոր էմիր ընտրեց նրա ազգականին՝ Բաշիր II Շիհաբին:

Իսկ ո՞վ էր Բաշիրը և որտեղից էր հայտնվել նա:

Նա նույնպես պատկանում էր Շիհաբների տոհմին, որը փոխարինել էր Մաաններին: Նա իր ծնողներին կորցրել էր փոքր հասակում և ունեցել բավականին դժվար մանկություն: Նա մեկնում է Դայր ալ–Կամար, էմիր Յուսուֆ Շիհաբի նստոցը, և ծառայության անցնում նրա մոտ, որը նրան փաստորեն հորեղբայր էր գալիս: Այնուհետև նա ամուսնանում է իր հարազատ քեռու այրու հետ, որը մեծահարուստ մի կին էր: Իր այդ քայլով նա բավականին բարելավում, նույնիսկ կարելի է ասել, ամրապնդում է իր տնտեսական դրությունը, որը շատ կարևոր հանգամանք էր քաղաքական նպատակներ հետապնդող երիտասարդի ապագայի համար:

Բաշիրն աչքի էր ընկնում իր խելամտությամբ, խիզախությամբ, անհրաժեշտ և բարձրաստիճան մարդկանց հետ լավ հարաբերություններ հաստատելու հատկությամբ, իսկ հետագայում դրսևորում է նաև դիվանագիտական, փոխզիջումների դիմելու և ծանր իրավիճակներից դուրս գալու որակներ, որոնք նրան շատ են պետք գալիս անհաղթահարելի թվացող խոչընդոտները հաղթահարելու և իր իշխանապետության շահերը պաշտպանելու տեսակետից:

Շնորհիվ իր այս հատկանիշների, նա շատ շուտ իր վրա հրավիրեց լիբանանյան ֆեոդալական ավագանու ուշադրությունը, որից շատ բան էր կախված նոր էմիրի ընտրության հարցում:

Եվ ահա, ինչպես նշեցինք, այդ ավագանին, դժգոհ Յուսուֆի քաղաքականությունից, էմիր ընտրեց երիտասարդ, քսան տարին նոր բոլորած, եռանդուն և քաղաքական մեծ նպատակներ հետապնդող Բաշիրին, որը պաշտոնապես ընդունեց էմիր Բաշիր II Շիհաբ տիտղոսը:

Լիբանանյան ավագանին դիմելով այդ քայլին, հույսեր էր փայփայում, որ Բաշիր II–ին կհաջողվի հարաբերությունները կարգավորել Ջազարի և Բարձր Դռան հետ:

Ջազարը համաձայնվեց լիբանանյան ավագանու այդ որոշման հետ և Բաշիր II–ին ճանաչեց Լիբանանյան ամիրայության էմիր: Նա իր այդ քայլով և այդքան հեշտ համաձայնվելով Յուսուֆի տապալման և նոր էմիրի նշանակման հետ, հետապնդում էր իր սեփական նպատակները և փորձում դրանից ստանալ լրացուցիչ շահույթներ:

Բաշիր II ընդհատումներով Լիբանանի ամիրայությունը կառավարել է համարյա կես դար՝ 1788–1840 թթ.: Նա հաճախ է ստիպված եղել լքել իր աթոռը, նույնիսկ՝ Լիբանանը, և ապաստան գտնել իր երկիրց դուրս: Դրա պատճառները տարբեր են եղել՝ հակամարտությունները Ակկայի փաշայի և Բարձր Դռան հետ, հակասությունները իր տոհմի տարբեր թևերի հետ, բախումները սեփական ժողովրդի հետ տարբեր հարցերի կապակցությամբ և այլն:

Դեռ նոր էր ավարտվել Բաշիր II էմիր հաստատելու արարողությունը և նրա կողմնակիցները դեռևս տոնական տրամադրության մեջ էին, երբ Բաշիր II Ջազարից ստացավ իր առաջին կարևոր հանձնարարությունը: Նա հրամայեց նորընծա էմիրին ձերբակալել փախուստի մեջ գտնվող գահընկեց Յուսուֆին: Այդ առաքելությունը կատարելու համար, նա Բաշիր II–ի տրամադրության տակ դրեց երկուհազարանոց մի զորաջոկատ: Սակայն Յուսուֆը դեռևս ուներ կողմնակիցներ և մտադիր չէր առանց պայքարի անձնատուր լինել: Բախումը հին և նոր էմիրների միջև անխուսափելի էր, որը տեղի ունեցավ 1789 թ. դժվարանցանելի լեռնային Շուֆի շրջանում և ավարտվեց Յուսուֆի զարմիկի՝ Բաշիր II–ի հաղթանակով: Բայց նրան չհաջողվեց գերևարել Յուսուֆին և նրան հանձնել Ջազարին: Յուսուֆը խույս տվեց հետապնդումից և ապաստան գտավ Սիրիայում, Հաուրանի շրջանում:

Յուսուֆը դեռ հույսը չէր կտրել Լիբանանյան իշխանապետությանը կրկին տիրանալու և էմիրի աթոռին նստելու համար: Նա ուղիներ գտավ Ջազարի հետ շփումների մեջ մտնելու և 1790 թ. նույնիսկ գնաց Ակկա փաշայի հետ հանդիպելու և նրա հետ իշխանության իր վերադարձի հարցերը քննարկելու համար: Յուսուֆը, շատ լավ իմանալով, որ Օսմանյան կայսրությունում ամեն ինչ գնվում և վաճառվում է, Ջազարին առաջարկեց նրան տարեկան որպես հարկ վճարել 600 հազար պիաստր կամ ղուրուշ, դրա դիմաց աղաչելով իրեն վերադարձնել Լիբանանի ամիրայությունը: Եվ Ջազարը համաձայնվեց բավարարել Յուսուֆի խնդրանքը:

Բայց քնած չէր նաև Բաշիր II–ը, որին իր մարդկանց միջոցով հաջողվել էր իմանալ Յուսուֆ–Ջազար գործարքի մասին: Այդ գործարքը խափանելու համար, նա նույնպես աճապարեց Ակկա և Ջազարի հետ հանդիպման ժամանակ նրան առաջարկեց կրկնակի գումար, այսինքն 1 մլն 200 հազար ղուրուշ: Հասկանալի է, Ջազարը նախապատվությունը տվեց ավելի շատ առաջարկողին: Կ. Բազիլին, հենվելով արաբական որոշ աղբյուրների վրա, իր Սիրիան և Պաղեստինը թուրքական կառավարման ներքո շատ հետաքրքիր և արժեքավոր աշխատության մեջ հաղորդում է, որ Բաշիր II չի բավարարվել միայն իր ախոյանի իշխանության վերադառնալը խափանելով, այլ պահանջել է, պատկերավոր ասած, նրա գլուխը, որը Ջազարը բավարարել է: Նա նույնիսկ հաղորդում է այնպիսի մանրամասնություն, ինչպես այն, որ Բաշիր II Ակկայի ամրոցից դուրս գալիս ոտնակոխ է արել իր երբեմնի բարերարի դիակը:

Դե, ինչ արած, բարքերն այդ ժամանակ այդպիսին էին և ամենախելամիտներն անգամ չէին դիմանում նրանց ենթարկվելու գայթակղությանը:

Բաշիր II քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը ֆեոդալական երկպառակությանը վերջ տալը, լիբանանյան հողային արիստոկրատիային իրեն ենթարկելը և ուժեղ պետական կառավարման համակարգ հաստատելն էր: Նա դաժանորեն, կանգ չառնելով ոչ մի բռնարարքների առջև, ճնշում էր մանր, միջին ու խոշոր ավատատերերի անվերջ թվացող խռովությունները, հաշտեցնում նրանց, իսկ չենթարկվողներին խստորեն պատժում, զրկելով նրանց հողակտորներից, անգամ կյանքից: Երկաթյա բռունցքով Բաշիր II կարողացավ նրանց ենթարկել իրեն և իր իշխանությունը հաստատել Լիբանանում: Նրա այս գործողությունների քաղաքական արդյունքը եղավ Լիբանանի միավո-

րումը, որն ուներ մեկ հզոր կառավարիչ ի դեմս Բաշիր II, որին ենթարկվում էին բոլորը: Լիբանանյան իշխանապետությունը զորացավ և դարձավ նշանակալի ուժ:

Ջազարը Ակկայում նստած անհանգստությամբ էր հետևում Բաշիր II քաղաքականությանը և Լիբանանյան իշխանապետության ուժեղացմանը: Դա դուր չէր գալիս նրան, ի դեմս այդ իշխանապետության տեսնելով մի նոր մրցակցի: Եվ նա որոշեց անցնել գործի իր լիբանանյան մրցակցին ասպարեզից հեռացնելու համար:

Ջազարը Բաշիր II–ից դժգոհելու մի պատճառ ևս ուներ: Բոնապարտը, ինչպես նշել ենք, իր արշավանքի ժամանակ պաշարեց Ակկան և փորձեց գրավել այն: Ծանր դրության մեջ հայտնված Ջազարը օգնության կանչեց Բաշիր II: Իսկ դա չէր մտնում էմիրի պլանների մեջ և նա հրաժարվեց կատարել Ակկայի փաշայի հրամանը: Էմիրը Ակկայի փաշային օգնելուց հրաժարվելը բացատրեց այն հանգամանքով, որ նրա իշխանությունը Լիբանանի ամիրայությունում դեռևս բավարար չափով ամուր չէ, ժողովուրդը չի կարող լրացուցիչ հարկեր վճարել և դեմ է զինվորագրվել ու ֆրանսիական զորքերի դեմ հանդես գալ: Իհարկե, դա լոկ պատրվակ էր էմիրի ձեռքում Ջազարի կանչը մերժելու համար: Նրա օգնությունը սահմանափակվեց Ջազարի զորքերին պարենամթերք և անասնակեր ուղարկելով:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Բաշիր II–ին փորձեց օգտագործել նաև Բոնապարտը, նրան ուղղելով հատուկ ուղերձ և տալով մեծ խոստումներ:

Սակայն խոհեմ Բաշիր II մերժեց նաև Բոնապարտին: Լիբանանյան իշխանապետը չէր ցանկանում որևէ մեկի ջրաղացին ջուր լցնել, և գերադասում էր սպասողական դիրք գրավել ու նայել, թե որ կողմը կհաղթանակի: Բոնապարտին ամենասիրալիր կերպով մերժելով հանդերձ, Բաշիր II մի քանի տակառ լիբանանյան ընտիր գինի ուղարկեց ֆրանսիական զինվորներին:

Բոնապարտին չհաջողվեց գրավել Ակկան և նա հեռացավ ու կրկին վերադարձավ Եգիպտոս: Իսկ Ջազարը, Բաշիր II–ին մեղադրելով դավաճանության մեջ, հրաման արձակեց նրան պաշտոնազրկելու մասին: Իրականում, նա Ակկայի հետ կապված իրադարձությունները օգտագործեց հաշվեհարդար տեսնելու Բաշիր II–ի հետ:

Էմիրը հայտնվեց ծանր դրության մեջ: Նա լավ էր հասկանում, որ չնայած Լիբանանյան իշխանապետության ուժեղացմանը, նա դեռևս

այնքան հզոր չէր, որ միայնակ, առանց դաշնակիցների դիմակայեր Ջազարին: Եվ այդ դաշնակիցը գտնվեց, որպիսին եղավ թուրքական սուլթան Սելիմ III: Բարձր Դռան և Ակկայի միջև հարաբերությունները վաղուց լարված էին և սուլթանը վաղուց էր ուզում այդ վտանգավոր, իր շուրջը ահ ու սարսափ տարածող, արյունարբու փաշայից ազատվել, սակայն դա նրան չէր հաջողվում:

Օգտվելով Ակկայի փաշայի և լիբանանյան էմիրի միջև ծագած կոնֆլիկտից, թուրքական սուլթանը հանդես եկավ էմիրի պաշտպանությամբ: Նա չեղյալ հայտարարեց Ջազարի հրամանը Բաշար II պաշտոնազրկելու մասին և նրան վերականգնեց իր էմիրական իրավունքների մեջ: Սուլթանը կատարեց հաջորդ, սկզբունքային բնույթի քայլը: Նրա որոշումով Լիբանանյան իշխանապետության էմիրը հետայսու անմիջապես ենթարկվում էր սուլթանին: Դրանով Բարձր Դուռ–Լիբանան փոխհարաբերություններում վերանում էր միջնորդ օղակը, որպիսին երկար ժամանակ հանդիսանում էր Ակկայի փաշան: Դա նշանակում էր, որ Ջազարը կորցնում էր իր իրավունքները Լիբանանի վրա և չէր կարող միջամտել նրա ներքին գործերին, մի կողմից, և բարձրանում էր Լիբանանյան իշխանապետության և նրա էմիրի կարգավիճակը Օսմանյան կայսրության համակարգում, մյուս կողմից:

Սակայն դա դեռ բոլորը չէր: Սուլթանը ճանաչեց Բաշիր II իրավունքները Լիբանանյան իշխանապետության վրա և, ի հավելումն, նրա իրավունքները տարածեց նաև Սայդայի, Բիքաայի, Բաալբեկի, Ջուբեյլի և Անդրլիբանանի վրա: Այդ պահից սկսած, իրոք, կարելի է խոսել այն մասին, որ Բաշիր II իշխանությունը տարածվեց ամբողջ Լիբանանի վրա:

Ջազարը ստիպված էր համակերպվել սուլթանի որոշումով ստեղծված նոր իրադրությանը և համբերությամբ սպասել ավելի բարեհաջող պահի, Բաշիրին պատժելու և նախկին ստաուս քվոն վերականգնելու համար:

Եվ այդ պահը վրա հասավ: Դա կապված էր Սիրիայում գտնվող թուրքական զորքերի Եգիպտոս մեկնելու հետ: Նրանք Եգիպտոս մեկնեցին Բոնապարտի ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի դեմ պատերազմելու և նրանց Նեղոսի ափերից դուրս մղելու համար:

Հենց որ թուրքական վերջին զինվորը հեռացավ Սիրիայի տարածքից, ուղղություն վերցնելով դեպի Եգիպտոս, Ջազարը գտավ, որ հասել է հարմար պահը Բաշիր II պատժելու համար: Նա Բաշիր II նորից

հեռացրեց էմիրի պաշտոնից և նրա փոխարեն այդ երկրամասի կառավարիչ նշանակեց նախկին էմիր Յուսուֆի երկու որդիներին՝ Սաադ և Հուսեյն Շիհաբներին: Նրանց ընտրությունը պատահական չէր: Ջազարը հաշվի էր առել այն հանգամանքը, որ նրանք վրեժով լցված իրենց հորը տապալած Բաշիր II նկատմամբ, իրեն հավատարմորեն կծառայեն և ամեն ինչ կանեն, որպեսզի կանխեն Բաշիր II վերադարձը:

Ակկայի փաշան իրեն թույլ տվեց այդպիսի համարձակ քայլ, որը վերջին հաշվով ուղղված էր օսմանյան սուլթանի դեմ նաև այն պարզ պատճառով, որ Սիրիայից թուրքական զորքերի հեռանալուց հետո, իրեն այլևս ոչինչ չէր սպառնում: Սելիմ III ոչ մի լծակ չուներ նրա վրա ճնշում գործադրելու և հարկադրելու նրան իր հրամանները կատարել: Ճիշտ է, ենիչերիական մի գունդ թուրքական զորքերի հրամանատար Յուսուֆ Դիայի կարգադրությամբ փորձեց օգնել Բաշիրին, սակայն Ջազարին հաջողվեց պարտության մատնել նրան: Դա զայրացրեց Յուսուֆ Դիային, համարելով դա վիրավորանք Բարձր Դռանը: Եվ նա Ջազարին պատժելու և Բաշիրին օգնելու համար նոր զորքեր տրամադրեց Բաշիրին: Չբավարարվելով դրանով, Յուսուֆ Դիան հատուկ կոչով դիմեց լիբանանցիներին հավատարիմ մնալ իրենց օրինական էմիրի Բաշիրին և չենթարկվել Ջազարին:

Բաշիրը ստանալով օգնական ուժեր թուրքական զորահրամանատարից, դիմեց լիբանանցիներին կազմել աշխարհազոր և իրեն օգնեն Ջազարի դեմ մղվող պայքարում: Ամենայն հավանականությամբ պետք է ենթադրել, որ Բաշիրին Յուսուֆ Դիայի տրամադրած զորքն այնքան էլ մեծաթիվ չի եղել և դա այն պատճառներից մեկն էր, որ նա դիմեց լիբանանցիներին կազմել աշխարհազոր գնդեր: Սակայն Բաշիրի կոչը մեծ արձագանք չգտավ և շատ փոքրաքանակ աշխարհազոր ջոկատներ կազմավորվեցին:

Բախումը ջազարականների և բեշիրականների միջև անխուսափելի էր, որը տեղի ունեցավ 1800 թ.: Բաշիրը պարտություն կրեց և ապաստան գտավ Ջուբեյլում:

Ջազարի նշանակած նոր երկու էմիրները խոհեմ և հեռատես մարդիկ չէին: Նրանք ամեն ինչ անում էին ցույց տալու համար իրենց հավատարմությունը Ջազարին, բարձրացրեցին հարկերը, կանգ չէին առնում բռնությունների և խարդախությունների առաջ, որով բարձրացավ դժգոհության ալիք նրանց դեմ: Հատկապես դժգոհ էին լեռնաբնակ գյուղա-

ցիները, որոնց կյանքի պայմանները միշտ էլ ավելի ծանր է եղել, քան թե հարթավայրային շրջանների հողամշակներինը:

Լիբանանցիների համբերության բաժակը լցրեց հատկապես այն հանգամանքը, որ Սաադ և Հուսեյն Շիհաբները փորձեցին մի տարվա մեջ երկու անգամ հարկ հավաքել: Դա նրանք, իհարկե, անում էին Ջազարի պահանջով:

Հիասթափված գյուղացիները 1800 թ. ապստամբվեցին երկու էմիրների դեմ: Նրանք պատվիրակություն ուղարկեցին Տրիպոլիում գտնվող Բաշիրին, խնդրելով նրան վերադառնալ և ստանձնել էմիրի պարտականությունները: Նրանք խոստացան Բաշիրին հավատարիմ մնալ նրան և երդվեցին, որ լիբանանյան լեռնականները նրանից բացի ուրիշ իշխանավորի չեն ճանաչի: Նրանք երդվեցին նաև նրան զորավիգ կանգնել ընդեմ Ջազարի:

Ոգևորված լեռնալիբանանցիների այդ դիրքորոշումից, Բաշիրն ընդունեց նրանց առաջարկությունը և 1800 թ. վերադարձավ Շուֆ: Նրա վերադարձը կարելի է համարել հաղթական, նրան ոչ միայն ժողովուրդն ընդունեց խանդավառությամբ, այլև շեյխերն անցան նրա կողմը: Սաադ և Հուսեյն Շիհաբները հենց առաջին ճակատամարտում պարտություն կրեցին և լքելով Դեյր ալ–Կամարը, որը նրանց կենտրոնատեղին էր, փախան Բեյրութի կողմերը:

Պայքարը մի կողմից Բաշիրի, և մյուս կողմից Ջազարի ու Շիհաբ երկու եղբայրների միջև շարունակվեց որոշ ժամանակ ևս: Նրանց այդպես էլ չհաջողվեց պարտության մատնել Բաշիրին և Ջազարը ստիպված 1803 թ. հաշտություն կնքեց Բաշիրի հետ: Անշուշտ, Ջազարը դա դիտում էր որպես զինադադար, ժամանակ շահելու միջոց, նոր դավեր նյութելու Բաշիր II դեմ, սակայն նա չհասցրեց որևէ բան անել:

1804 թ. նա մահացավ: Ջազարի, այդ դաժան, նենգ, ագահ, խորամանկ բոսնիացի «մսագործի» մահը փրկություն էր Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի համար: Նրանք ազատվեցին նրա խարդավանքներից, թալանչիական արշավանքներից ու կողոպուտից: Նրա մահը գոհունակությամբ ընդունվեց Ստամբուլում, որը այդպես էլ չկարողացավ սանձահարել նրան:

Հասկանալի է, Ջազարի մահը մեծ գոհունակությամբ ընդունվեց Բաշիր II կողմից, որի պատճառով նա հաճախ հալածական էր դառնում:

1803 թ. հաշտության պայմանագրով, Բաշիրի իշխանությունը վերականգնվեց իշխանապետության միայն մի մասի վրա: Նրա տիրապե-

տությունից դուրս էր մնացել Լիբանանի կենտրոնական և հարավային մասերը: Բաշիրը, թեև մեծ դժվարությամբ, կարողացավ իր տարածքներին միացնել Զուբեյլը, Բիքաան և Լիբանանի այլ մասեր:

Զազարի մահից հետո Սիրիայում և Պաղեստինում վրա հասավ մի ժամանակաշրջան, որը պատմության մեջ մտել է «ֆեոդալական անիշխանականության ժամանակաշրջան» հորջորջումով: Ճիշտ, ինքը՝ Զազարը, մի դաժան անձնավորություն էր, սակայն երկաթյա ձեռքով իրեն էր ենթարկում տեղական ֆեոդալներին և շեյխերին: Նրա մահվան հետ վերացավ այդ երկաթյա ձեռքը, որը ազատություն տվեց ֆեոդալներին ու նրանց միջև սկսվեց մի սարսափելի պայքար: Ակկան, Դամասկոսը, Հալեբը, Տրիպոլին և այլ կենտրոններ վերածվեցին արյունահեղ պատերազմների ասպարեզի: Այստեղ փաշաներն արագորեն փոխարինում էին մեկը մյուսին, հիմնական միջոց դարձնելով իշխանության գլուխ գտնվող փաշային տապալելը և սպանելը:

Պատկերն այլ էր Լիբանանում իշխանապետության ղեկը կրկին Բաշիր II ձեռքն անցնելուց հետո: Նա կարողացավ մոտ կես դար կառավարել Լիբանանը, երբեմն կարճ ժամանակով կորցնելով իր «գահը», սակայն ոչ իր գլուխը, ինչպես դա տեղի էր ունենում իր հարևան վիլայաթների փաշաների հետ:

Նա ուներ շատ հստակ նպատակ՝ իր տիրապետության ներքո գտնվող Լիբանանը վերածել կենտրոնացված ուժեղ պետության: Իսկ դա նշանակում էր առանց միջոցների մեջ խտրություն դնելու վերացնել ֆեոդալական երկպառակությունները, վերացնել բոլոր այն ուժերին, այն հին ու նոր ֆեոդալական տները, որոնք կկանգնեին նրա այդ գերագույն նպատակի իրագործման ճանապարհին: Այդ խնդրի իրականացման համար նա ցուցաբերում էր և՛ կամք ու վճռականություն, և՛ խորամանկություն ու նենգություն, և դաժանություն ու անմարդկայնություն: Իր այդ «արարչագործության» համար նա ստացավ «ահեղ» մականունը, որը նա իր երկարամյա կառավարման տարիներին լիովին արդարացրեց:

Բնավ չպետք է զարմանալ, որ Բաշիր II գործում էր նման մեթոդներով: Չմոռանանք, որ այդ դաժան գործելակերպը բնորոշ էր ֆեոդալական դարաշրջանին, որի ծնունդն էր նաև ինքը, և բացի այդ մեթոդներին նրան ծանոթ ու մատչելի չէին այլ մեթոդներ:

Պայքարելով ֆեոդալական երկպառակությունների և անջատողականության դեմ, իրեն ենթարկելով ֆեոդալական հայտնի տոհմերին,

իսկ երբեմն էլ, ի հարկին, բնաջնջելով կամ վերացման եզրին հասցնելով նրանց, Բաշիր II բնավ չէր մտածում ֆեոդալիզմը կամ ֆեոդալական դասը վերացնելու մասին: Նրա նպատակն էր, մի անգամ ևս շեշտենք, սանձել նրանց ու անվերապահորեն իրեն ենթարկել, և ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն: Նա XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին ուղղակի բնաջնջեց մի քանի ֆեոդալական ընտանիքներ, իր կալվածքներին բռնակցելով նրանց հողաբաժինները:

Նա օգտագործեց նաև նոր տակտիկա: Նա բռնագրավում էր ֆեոդալների կալվածքները տվյալ վայրում, և այնտեղ բնակեցնում մարդկանց Լիբանանի այլ վայրերից, որոնք կրոնական այլ պատկանելություն ունեին: Այդպես վարվեց նա Հարավային Լիբանանի խոշոր դրուզ ֆեոդալների հետ, որոնցից բռնագրված հողերի մի մասը ինքը զավթեց, իսկ մյուս մասն էլ բաժանեց Հյուսիսային Լիբանանից տեղափոխված մարոնի գյուղացիությանը: Դրանով նա թուլացնում էր դրուզական հզոր ֆեոդալների դիրքերը, նրանց կախման մեջ գցելով իրենից, իսկ մյուս կողմից այդտեղ բնակեցնելով մարոնի գյուղացիությանը, էմիրն իր համար սոցիալական հուսալի հենարան էր ստեղծում: Դրան նպաստում էր նաև այն պարագան, որ Բաշիր II այդ հողատարածքները վարձակալությամբ էր տալիս և դրա համար բավականին ցածր վարձակալական գումար գանձում:

Ընդհանրապես նա վարում էր գյուղացիներին պարտադրվող ֆեոդալական պարհակների կրճատման քաղաքականություն, որը, ինչպես նշում են ժամանակագիրները, հնարավորություն տվեց գյուղացիությանը ազատ շնչել: Դա խթանեց գյուղատնտեսությունը:

Բաշիր II վարում էր խիստ քաղաքականություն ոչ միայն դրուզ անհնազանդ ֆեոդալների նկատմամբ, այլև մարոնի ֆեոդալների նկատմամբ: Այսպես, օրինակ, Հարավային Լիբանանի դրուզների նկատմամբ խիստ միջոցների կիրառմանը հաջորդեցին համանման գործողություններ Քեսրվանի մարոնի ֆեոդալների նկատմամբ, որոնք աչքի էին ընկնում իրենց կամայականություններով: Բաշիրի երկաթյա ձեռքը հասավ նաև նրանց:

Արևելքում միշտ կարևոր նշանակություն է ունեցել ճանապարհների վրա անվտանգության հաստատելու խնդիրը, որը ոչ միայն անձնական ապահովության հարց է եղել, այլև տնտեսական նշանակություն ունեցող խնդիր: Ճանապարհների ապահովությունը նշանակում էր կա-

պերի զարգացում տվյալ երկրի տարբեր շրջանների միջև, առևտրական փոխանակություն և այլն:

Այդ նույն հարցը կանգնած էր, նույնիսկ ավելի սուր կերպով, Լիբանանում, քան թե այլ երկրներում: Դրա պատճառը նրա լեռնային ռելիեֆն էր, որը դժվարանցանելի էր դարձնում ճանապարհները, որոնք ավելի նպաստավոր էին ավազակային հարձակումների կամ դարանակալելու համար: Մյուս պատճառն այն էր, որ շատ վայրերում ավազակային խմբեր կազմակերպողները և ղեկավարները իրենք ֆեոդալներն էին, որոնք կողոպուտը դարձրել էին իրենց հարստացման կարևոր աղբյուրներից մեկը, իսկ ոմանք նույնիսկ գլխավոր աղբյուրը:

Ուժեղ լիբանանյան պետություն ստեղծելու հետամուտ Բաշիր II լավ էր հասկանում անվտանգ ճանապարհների կարևորությունը իր այդ գերխնդրի իրականացման գործում: Ահա թե ինչու նա ամենադաժան միջոցներ կիրառելով հասավ այն բանին, որ Լիբանանյան իշխանապետության սահմաններում հաստատվեց լիակատար անվտանգություն: Նա ճանապարհների երկայնքով, նրանց հատկապես վտանգավոր մասերում, հաստատեց պահակակետեր, որոնց խնդիրն էր անվտանգության ապահովումը: Վաճառականներն այլևս մտավախ չէին իրենց կյանքի և ապրանքների ապահովության հարցում: Ավազակությունը Բաշիր Ահեղի սարսափից ճանապարհներից վերացավ: Այս բոլորի արդյունքում ծաղկեց առևտուրը, ամրապնդվեցին տնտեսական կապերը Լիբանանի տարբեր շրջանների միջև, վերելք ապրեց տնտեսությունը:

Հատուկ դրվատանքի է արժանի Բաշիր II գործունեությունը շինարարության ոլորտում: Նա կառուցեց կամուրջներ և իջևանատներ: Նա իր նստավայրը Դեյր ալ–Կամարից տեղափոխեց Բեյթ ադ–Դին: Դա մի գյուղ էր, որ նա գնել էր մի շեյխից: Նա բարեկարգեց ու կառուցապատեց այդ գյուղը, այն վերածելով քաղաքատիպ ավանի: Նրա զարդը հանդիսացավ էմիրի պալատի կառուցումը, որը ճարտարապետական մի հիասքանչ շինություն է, որը համարյա անփոփոխ կանգուն է մինչև օրս և հիացմունք է պատճառում այցելուին: Նա պալատական կյանքի կենտրոնատեղին էր, անվերջ վայելքների ու ժամանցների վայր, որտեղ հյուրընկալվում էին նաև բանաստեղծները, գիտունները և այլ մտավորականներ: Դա մի իսկական արքունիք էր՝ թեև Բաշիր II չէր կրում արքայի տիտղոս, այլ լոկ մի էմիր էր:

Բաշիր II հանդուրժողական էր տարբեր կրոնների և կրոնական համայնքների նկատմամբ: Լիբանանում այլ կերպ հնարավոր էլ չէր: Նա

տարբեր կրոնների և դավանանքների մի խառնարան էր, որտեղ ամեն մի անզգույշ քայլ կարող էր պայթյունավտանգ հետևանքներ ունենալ:

Բացի հանդուրժողականությունից, Բաշիր II իր վերաբերմունքը տարբեր կրոնների նկատմամբ դրսևորեց միանգամայն յուրօրինակ ձևով, որը պատմության մեջ շատ քիչ է հանդիպում: Նա պաշտոնապես իրեն համարում էր մուսուլման, բայց միայն արտաքնապես: Իրականում նա, ժամանակակիցների վկայությամբ, եղել էր դավանափոխ և գաղտնի ընդունել քրիստոնեություն: Դա անգամ մեր օրերում պատմում էին Բաշիրի փառահեղ մայրաքաղաք՝ Բեյթ ադ–Դին այցելողներին, նշելով, որ նա ունեցել է ինչ–որ գաղտնի եկեղեցի, որտեղ նա իր ընտանիքի անդամների հետ, բոլորի աչքից հեռու, կատարել է քրիստոնեական ծիսակատարություններ: Իսկ ֆրանսիական մեծ գրող Լամարթինը, որը այցելել է Բեյթ ադ–Դին, հանդիպումներ ու զրույցներ ունեցել էմիրի հետ, այն տպավորություններ ստացել, որ նա կրոնի հարցերում անտարբեր է եղել, ավելացնելով, որ նա դրուզի հետ դրուզ էր, մուսուլմանի հետ՝ մուսուլման և քրիստոնյայի հետ՝ քրիստոնյա:

Եթե նա կրոնի հարցերում իր անձնական կյանքում մոլեռանդ չի եղել, այդ դեպքում, ի՞նչ նպատակներ էին հետապնդում Բաշիր II մուսուլմանի հետ մուսուլման, դրուզի հետ դրուզ լինելու և քրիստոնյայի հետ քրիստոնյա լինելու նրա քաղաքականությունը:

Բոլոր հետազոտողները, որոնք անդրադարձել են այս հարցին, միահամուռ են այն տեսակետում, որ Բաշիր II դրանով միայն քաղաքական նպատակներ է հետապնդել, ելնելով նպատակահարմարության հանգամանքից: Գաղտնի դավանելով քրիստոնեություն, Բաշիր II, որի մասին լուրերի տարածմանը նպաստում էր ինքնը՝ էմիրը, ցանկանում էր իր հարաբերությունները բարելավել մարոնի քրիստոնյա համայնքի հետ, որի դերն արդեն բարձրանում էր Լիբանանի քաղաքական կյանքում: Հատկապես ամրանում էին մարոնի եկեղեցու դիրքերը, որի տնօրինության տակ էին գտնվում խոշոր հողամասեր: Կարելի է ասել, որ մարոնի եկեղեցին դարձել էր խոշոր հողային սեփականատեր, իսկ դա Լիբանանում ուժի և ազդեցության գլխավոր, եթե ոչ հիմնական, աղբյուրներից մեկն էր: Էմիրը հասկանում էր, որ մինչև մարոնիներին իր կողմը չգրավի, իրեն չի հաջողվի իրագործել իր իշխանությունը միավորված Լիբանանի վրա ամրապնդելու խնդիրը:

1820–ական թվականներին հերթական անգամ դրությունը սրվեց Լիբանանում, նույնիսկ այն աստիճանի, որ Բաշիրը հարկադրված հեր-

թական անգամ փախավ Լիբանանից: Դա կապված էր Ակկայի նոր փաշա Աբդալլահի գործունեության հետ: Դեռևս 1804 թ. մահացած Ջազարին Ակկայի փաշայի պաշտոնում փոխարինել էր նրա բանակի հրամանատար Սուլեյման փաշան, որը մահացավ 1819 թ.: Եվ այստեղ կատարվեց աներևակայելին, որը կարող էր տեղի ունենալ միայն Օսմանյան կայսրությունում: Սուլեյման փաշայի մերձավորներից մեկը կապալով սուլթանից գնեց Ակկայի փաշայությունը և այն «նվիրեց» մամլուք Աբդալլահին: Նա պարտավոր էր իր «բարերար» կապալառուին վճարել հարկ: Բայց նա այնքան ագահ էր, որ անընդհատ Աբդալլահից պահանջում էր նորանոր հարկեր, իսկ վերջինս բարձրացնում էր հարկերը, բեռը գցելով իրենից այս կամ այն չափով կախման մեջ գտնվող արաբական երկրների բնակչության վրա:

Երբ կապալառուն հերթական անգամ Աբդալլահից պահանջեց նոր, արտակարգ հարկագումար, ապա վերջինս այդ բեռը դրեց Լիբանանի վրա, հանձնարարելով Բաշիր II–ին հավաքել և իրեն հանձնել այդ գումարը: Ճարահատյալ Բաշիր II փորձեց հավաքել այդ հարկը, բայց հանդիպեց լիբանանցիների դիմադրությանը, որը 1820 թ. վերածվեց ապստամբության: Նրա կենտրոնը դարձավ Անթիլիասը: Մար Իլիաս եկեղեցում հավաքված ապստամբների ներկայացուցիչները որոշեցին չվճարել արտակարգ հարկեր, իսկ հողահարկը և գլխահարկը վճարել ընդունված կարգի համաձայն տարին մեկ անգամ: Ապստամբները երդվեցին հավատարիմ մնալ իրենց որոշմանը և պայքարել մինչև վերջ: Նրանք միաժամանակ մի նամակ հղեցին Աբդալլահին, իրենց դժգոհությունը հայտնելով Բաշիր II քաղաքականության դեմ, հատկապես հարկահավաքության հարցում:

Մեթնի և Քեսրվանի ապստամբ գյուղացիությունը միամտաբար իր դժգոհությունն էր հայտնում մի մարդու, որն ինքն էր այդ քաղաքականության նախաձեռնողը, որն ինքն էր նման հանձնարարություն տվել Լիբանանի իշխանապետության էմիրին:

Աբդալլահը, ի պատասխան Անթիլիասից իրեն ուղղված բողոք–խնդրագրին, պատասխանել էր, որ, իբր, ինքը ոչ մի կարգադրություն չի իջեցրել էմիրին լրացուցիչ հարկեր գանձելու վերաբերյալ, փաստորեն մեղքը բարդելով Բաշիր II վրա:

Աբդալլահի նման երկդիմի քաղաքականությունը Բաշիր II–ի նկատմամբ բնավ նորություն չէր: Դա ըստ էության Ջազարի քաղաքականության կրկնությունն էր, որը նպատակաուղղված էր սեպ խրել լի-

բանանցիների և Բաշիր II–ի միջև, թուլացնել նրա դիրքերը, ուժեղացնել նրա կախվածությունը Ակկայի փաշայից և խափանել Լիբանանը ուժեղ պետության վերածելու էմիրի քաղաքականությունը:

Բաշիր II դժվար թե չկռահեր Աբդալլահի այդ եկդիմի քաղաքականության և իր թիկունքում նրա դեմ կատարվող խաղերի մասին: Սակայն նա այլ ելք չուներ և իրեն ծնացնելով Ակկայի փաշայի բարեկամ, փորձում էր կատարել նրա հանձնարարությունները:

Բաշիր II չկարողանալով ճնշել ապստամբների համառությունը, նորից լքեց Լիբանանը: Դրանից հետո, Աբդալլահն ինքը՝ հայտնվեց ծանր դրության մեջ: Բաշիրի փոխարեն իր կողմից նշանակված մարդիկ չկարողացան ճնշել լիբանանցիների ապստամբությունը և ստիպել նրանց վճարել հարկը: Այդ ժամանակ նա որոշեց օգնել Բաշիրին վերադառնալու Լիբանան: Եվ նա վերադարձավ: Սակայն ճանապարհին, Ջուբեյլում, նա շրջապատվեց ապստամբների կողմից, և հայտնի չէ, թե ինչպես կավարտվեր այդ բոլորը, եթե ժամանակին Բաշիր II–ին իր զորքով օգնության չհասներ շեյխ Ջումբլաթը: Նրանց հաջողվեց ամենայն դաժանությամբ պատժել ապստամբներին: Բաշիր II նորից դարձավ դրության տերը:

Սակայն դա երկար չտևեց:

Ակկայի փաշա Աբդալլահը արկածախնդրական հակումներ ունեցող մարդ էր, որից կարելի էր ամեն ինչ սպասել: Նա զզված իր կապալառու «բարեկամի» անվերջ պահանջներից, նախ վերջ տվեց նրա կյանքին, խեղդամահ անելով նրան: Կորցնելով չափի զգացումը և չափազանց գերագնահատելով իր հնարավորությունները, Աբդալլահն անգամ խռովություն բարձրացրեց սուլթան Մահմուդ II դեմ:

Բաշիր II անզգուշություն ունեցավ մասնակցել հակասուլթանական այդ խռովությանը, որի ծախողումից հետո, վախենալով սուլթանի զայրույթից և պատժից, 1822 թ. փախավ Լիբանանից և ապաստան գտավ Եգիպտոսում, Մուհամմադ Ալիի մոտ:

Մուհամմադ Ալին ապաստան տալով Լիբանանյան իշխանապետության էմիրին, միաժամանակ միջնորդեց օսմանյան սուլթան Մահմուդ II ներում շնորհել էմիրին, ինչպես նաև Ակկայի փաշա Աբդալլահին, որը նույնպես գտնվում էր փախուստի մեջ:

Եգիպտոսի տիրակալի աջակցությունը Բաշիրին ու Աբդալլահին, և նրա միջնորդությունը սուլթանին, բնավ էլ անշահախնդիր չէր: Մուհամմադ Ալիի այդ քայլը պետք է գնահատել արաբական պետություն

ստեղծելու նրա քաղաքականության տեսանկյունից: Այդ պետությունն անհնար էր ստեղծել առանց Սիրիայի և Լիբանանի: Մուհամմադ Ալին, ինչքան էլ, որ հզորանում էր, այդուհանդերձ, իր այդ համաարաբական քաղաքանության կենսագործման համար դաշնակիցների կարիք էր զգում: Նրա հաշվարկներով թե՛ Աբդալլահը, և թե՛ Բաշիրն իրենցից որոշակի ուժ էին ներկայացնում: Եվ միջնորդելով սուլթանի առջև նրանց ներում շնորհելու հարցում, որը, ի դեպ, սուլթանը բավարարեց, դրանով իսկ Եգիպտոսի կուսակալը գնեց նրանց պատրաստակամությունը օգնել նրան, երբ այդ պահը գա:

Ստանալով սուլթանի ներումը, Բաշիր II 1823 թ. վերադարձավ Լիբանան: Իհարկե, բոլորը չէին, այդ թվում և ֆեոդալները, որ ուրախ էին նրա վերադարձին: Հաստատվելով իր աթոռին, նա դաժան հաշվեհարդար տեսավ մի շարք ֆեոդալական ընտանիքների հետ, այդ թվում Ջունբլաթների, Արսլանների և այլն, որոնք հանդես էին եկել իր դեմ: Դրանից հետո նա մոտ 17 տարի ևս, մինչև 1840 թ. մնաց Լիբանանում, պահպանելով էմիրի իր պաշտոնը:

2. Լիբանանյան իշխանապետությունը Եգիպտոսի տիրապետության տարիներին

Իշխանավորության այս փուլում Բաշիր II գործունեությունը և քաղաքական ճակատագիրը կապված էր Եգիպտոսի և նրա կուսակալ Մուհամմադ Ալիի հետ:

Լիբանանյան իշխանապետությունը Եգիպտոսին պաշտպանեց 1831 թ. սկսված եգիպտա–թուրքական առաջին պատերազմի ժամանակ: Ճիշտ է, Բաշիր II միանգամից պատրաստակամություն չհայտնեց օգնության հասնել Իբրահիմին, երբ վերջինս պաշարեց Ակկան: Նա սկզբում գերադասեց սպասողական դիրք գրավել, անգամ այն բանից հետո, երբ Իբրահիմ փաշան նրան դիմեց, հիշեցնելով համագործակցության վերաբերյալ այն համաձայնության մասին, որ ձեռք էր բերվել նրա հոր՝ Մուհամմադ Ալիի, և Լիբանանյան իշխանապետության էմիր Բաշիր II միջև, վերջինիս Եգիպտոսում ապաստան գտնելու ժամանակ: Էմիրը իր հապաղելը փորձում էր հիմնավորել և արդարացնել այն պատճառաբանությամբ, որ Լիբանանում նոր էին տեղի ունեցել խռովություններ, որոնք նա ճնշել էր և այդ պատճառով ժամանակ էր պահանջվում իր ուժերը վերականգնելու համար:

Իբրահիմն այնքան միամիտ չէր, որ հավատար լիբանանցու այդ բացատրությանը: Նա մի նոր նամակ հղեց էմիրին, որն այս անգամ, ի տարբերություն նախորդի, հագեցված էր սպառնալից նախազգուշացումներով, ընդհուպ մինչև այն աստիճանի, որ Իբրահիմը սպառնում էր Բաշիր II վերացնել Ակկայի պաշարումը և իր բանակը նետել Լիբանանյան իշխանապետության դեմ, եթե նա անհապաղ իր զորքերով չժամանի Ակկայի մոտ գտնվող իր ռազմական ճամբարը և միանա իրեն:

Նա միաժամանակ, ցույց տալու համար, որ լի է վճռականությամբ իր սպառնալիքները իրականացնելու համար, չորսհազարանոց մի զորախումբ ուղարկեց Լիբանանի ծովափնյա շրջանները, ընդհուպ մոտենալով Լեռնանլիբանանին: Պետք չէր հանճարեղ ստրատեգ լինել, հասկանալու համար Իբրահիմի այդ ռազմական դեմարշի իմաստը:

Արաբական երկրներում բոլորն այդ ժամանակ շատ լավ գիտեին, որ կատակ անել Իբրահիմի հետ և չկատարել նրա «հրավեր»–պահանջը, նշանակում էր ճակատագրական սխալ թույլ տալ: Իբրահիմի տրամադրության տակ էր գտնվում լավ զինված մի հզոր բանակ: Բացի այդ, նա աչքի էր ընկնում արտակարգ դաժանությամբ և այդ առումով նա չէր զիջում իր ժամանակակիցներից որևէ մեկին:

Իբրահիմի սպառնալիքներն իրենց ներգործությունն ունեցան և շատ չանցած Բաշիր II Ակկայի պատերի տակ էր, Իբրահիմի ռազմական ճամբարում:

Այստեղ շատ հետաքրքիր հարաբերություններ հաստատվեցին Իբրահիմի և Բաշիր II միջև: Սկզբնական շրջանում էմիրը հայտնվեց յուրատեսակ պատանդի վիճակում, որը նրա նկատմամբ Իբրահիմի անվստահության արտահայտություն էր: Իբրահիմն էմիրին պահեց իր մոտ, սակայն հանձնարարեց նրա որդուն իր զորքերով ազատագրել Լիբանանի առափնյա քաղաքները թուրքական զորքերից, ավելի ճիշտ թուրքական կայազորներից, որոնք տեղակայված էին լիբանանյան Բեյրութ, Սայդա և Սուր նավահանգստային քաղաքներում: Էմիրի որդին հաջողությամբ կատարեց Իբրահիմի այդ հանձնարարությունը և Բեյրութը, Սայդան ու Սուրն անցան ձնականորեն էմիրի, իսկ իրականում Իբրահիմի տիրապետության տակ: Ծովափնյա քաղաքներից մնաց միայն Տրիպոլին, որտեղ դեռևս գտնվում էին թուրքական զորքեր: Լիբանանցիներն ի վիճակի չէին սեփական ուժերով գրավել այդ քաղաքը: Ուստի նրանց օգնության եկան Իբրահիմի զորքերը, որոնք և գրավեցին Տրիպոլին:

Այսպիսով, ամբողջ լիբանանյան ծովեզրը, հյուսիսից հարավ, Տրիպոլիից մինչև Սուր, անցավ էմիրի և Իբրահիմի իշխանության ներքո:

Իբրահիմին հաջողվեց գրավել նաև Ակկան, Բաշիր II աջակցությամբ, որով վերջ տրվեց Աբդալլահի իշխանությանը արաբների նոր պատմության մեջ կարևոր դեր խաղացած այդ քաղաքի վրա: Աբդալլահը, որ, ինչպես և Բաշիր II, ներում էր ստացել թուրքական սուլթանից Մուհամմադ Ալիի միջնորդության շնորհիվ, ի տարբերություն էմիրի, հավատարիմ չգտնվեց Մուհամմադ Ալիին և եգիպտա–թուրքական առաջին պատերազմի հենց սկզբից անցավ սուլթանի կողմը, և ամրանալով Ակկայում, դիմադրում էր Իբրահիմի զորքերին:

Այս ընթացքում խռովություններ բարձրացան եգիպտացիների դեմ, ինչպես Սիրիայում, այնպես էլ Լիբանանում: Խռովության մեջ ներգրավվեցին մուսուլմանները, երբ մուսուլման կրոնապետները Մուհամմադ Ալիին հավատուրաց հայտարարեցին այն բանի համար, որ նա հանդուրժողական վերաբերմունք էր ցույց տալիս քրիստոնյաների նկատմամբ, թույլատրում էր նրանց ձի նստել, զենք կրել և այլն: Լիբանանի որոշ շրջաններում մուսուլմանական բնակչության խռովությունը սիրիական համամուսուլմանական խռովության մի մասն էր կազմում: Լիբանանում այդ խռովության կենտրոններն էին Տրիպոլին և Դեյր ալ–Կամարը: Տրիպոլիում խռովությունն ուղղված էր եգիպտա–լիբանանյան կայազորի դեմ: Այդ կայազորը Տրիպոլիում հաստատվել էր թուրքական կայազորը այնտեղից դուրս մղելուց հետո: Իսկ Դեյր ալ–Կամարում խռովությունն ուղղված էր Բաշիր II դեմ, որի կորիզը կազմում էին էմիրից դժգոհ դրուզները: Այդ խռովություններն ըստ երևույթին լուրջ սպառնալիք են ներկայացրել, որի մասին վկայում է այն հանգամանքը, որ դրանք ճնշելու գործում անձամբ մասնակցեց Իբրահիմը և նրա չորսհազարանոց թիկնապահ զորքը:

Լիբանանցիների մասնակցությունը Ակկայի գրավմանը, նրանց կողմից Բեյրութի, Սայդայի և Սուրի գրավումը, վերջապես Տրիպոլիի և Դեր ալ–Կամարի դեպքերը վկայում էին, որ այդ պահից Լիբանանյան իշխանապետության ապագան կախված էր Եգիպտոսից և նրա տիրակալ Մուհամմադ Ալիից:

Էմիրն ավելի ու ավելի էր մխրճվում եգիպտա–թուրքական պատերազմի մեջ: Նրա զորքերը 1832 թ. մասնակցեցին Դամասկոսի գրավմանը և նրա փաշայի տապալմանը, իսկ հուլիսի 9–ին բավականին ակտիվ դերակատարում ունեցան Հոմսի գրավմանը, որը կարևոր հանգր-

վան էր եգիպտա–թուրքական պատերազմի ելքը հօգուտ Եգիպտոսի վճռելու գործում:

Ինչպես նշել ենք, Կյութահյայի 1833 թ. պայմանագրով, Սիրիան և Լիբանանյան իշխանապետությունը կառավարման իրավունքով անցան Եգիպտոսի տիրապետության տակ: Այստեղ Իբրահիմը վերացրեց վիլայաթները և Սիրիան դարձավ մեկ ամբողջություն՝ Դամասկոս կենտրոնով, որի կառավարողը դարձավ Իբրահիմ փաշան: Սակայն Լիբանանի ինքնուրույնությունը որպես առանձին միավոր, որպես իշխանապետություն, պահպանվեց, իսկ Բաշիր II մնաց նրա էմիրը, բայց Իբրահիմի, այսինքն Եգիպտոսի հսկողության, նույնիսկ կարելի է ասել ենթակայության պայմաններում: Նա Իբրահիմին պետք է վճարեր հարկ՝ սահմանված կայուն չափաքանակով: Իսկ ներքին, կառավարման, տնտեսական և այլ հարցերում, Բաշիրը Լիբանանյան իշխանապետությունը կառավարում էր լրիվ անկախ, չափազանց լայն լիազորություններ ստանալով Իբրահիմից:

Եգիպտոսի ազդեցության գոտում գտնվելու տարիները դրական ազդեցություն ունեցան Լիբանանյան իշխանապետության սոցիալ–տնտեսական զարգացման վրա: Զգալի տեղաշարժեր կատարվեցին երկրամասի սոցիալական շերտավորման ոլորտում: Նախ և առաջ մեծ զարգացում ապրեց առևտրական խավը, շնորհիվ այն նպաստավոր պայմանների, որ ստեղծվեցին առևտրի զարգացման և ապրանքային փոխանակության համար այն վիթխարի տարածքում, որը գտնվում էր Մուհամմադ Ալիի տիրապետության տակ: Իսկ այդ տարածքը կազմում էին Եգիպտոսը, Սուդանը, Արաբիան, Սիրիան Պաղեստինով հանդերձ, նրան էր հարում Իրաքը Դաուդ փաշայի տիրապետության տարիներին: Միասնական տարածքի ձևավորումը, վիլայաթների և անհամար մաքսատների վերացումը, այդ երկրամասերի սահմաններում ճանապարհների զարգացումը և անվտանգության ապահովումը, այս ամենը մեծապես խթանեց առևտրի զարգացումը: Առանձնապես շահեցին լիբանանցիները, փյունիկցիների արժանի ժառանգորդները, որոնք առևտրի ասպարեզում մրցակիցներ չունեին:

Ստեղծված յուրահատուկ պայմաններում առևտուրը դարձավ Լիբանանի տնտեսական զարգացման լոկոմոտիվը, որն իր հետևից քաշեց տնտեսության մյուս ճյուղերը: Ձևավորվեցին մի շարք հայտնի առևտրական տներ, որոնց մի մասը գոյություն ունի և մինչև օրս գործում է Լիբանանում: Ասպարեզում հայտնված այդ խոշոր առևտրական

տներից հիշատակության են արժանի Թրատի, Թաբետի, Բուտրոսի, Սուրսոքի, Թուեյնիի, Նաուֆալի և այլ տներ: Նրանց շարքում հիշատակելի են նաև հայ վաճառականներ Ղուկասը, Նաումը և այլն:

Ներքին և արտաքին առևտրի զարգացումն իր հերթին խթանեց ընդհանրապես տնտեսության զարգացումը: Մեծ վերելք ապրեց Լիբանանի գյուղատնտեսությունը: Արագ թափով զարգացան արդյունաբերության համար հումք արտադրող նրա ճյուղերը, առաջին հերթին մետաքսագործությունը: Վերելք ապրեց նաև այգեգործությունը:

Եգիպտական տիրապետության տարիներին վերացվեցին թուրքական և տեղական փաշաների կողմից հաստատված համակարգը, որը հիմնված էր կամայականությունների, թալանի ու կողոպուտի վրա: Փաստորեն առևտրի համար ստեղծվեցին նախանձելի լիբերալ պայմաններ: Իսկ դա արտակարգ նպաստավոր պայմաններ ստեղծեց Լիբանանի ծովափնյա քաղաքների բարգավաճման համար: Գույքի և անձի ապահովության և ճանապարհների անվտանգության պայմաններում անգամ ամենահեռավոր և ամենաբարձրադիր լիբանանյան բնակավայրերից գյուղացիներն առանց վախենալու իրենց գյուղատնտեսական մթերքները բերում էին Բեյրութի, Տրիպոլիի, Սայդայի և այլ ծովափնյա քաղաքների շուկաներում վաճառելու համար:

Աճեց քաղաքային բնակչությունը և աշխուժացավ քաղաքային կյանքը: Հատկապես տպավորիչ էր Բեյրութի թռիչքաձև զարգացումը: Նրա բնակչությունը, որը XVIII դարի վերջերին կազմում էր վեց հազար մարդ, 1838 թ. արդեն 15 հազար էր, իսկ 5–6 տարի անց հասավ մոտ 30 հազարի: Բեյրութը բացառություն չէր: Հայտնվեցին նոր քաղաքներ, ինչպես Զահլեն, Բեյթ ադ–Դինը, Դեյր ալ–Կամարը և այլն:

Առևտրի և քաղաքների զարգացումը, նրանց բնակչության արագ աճը նպաստեցին արհեստների և արդյունաբերության զարգացման, որը հանգեցրեց սոցիալական նոր տեղաշարժերի լիբանանյան հասարակության ներսում: Սկիզբ դրվեց կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորմանը, գործունեության ավելի լայն ասպարեզ ստեղծվեց վաշխառուական կապիտալի գործունեության համար: Դրամական հարաբերությունները մուտք գործեցին տնտեսական կյանքի բոլոր անկյունները:

Այս բոլորը նոր երևույթներ էին Լիբանանի քաղաքական և տնտեսական կյանքում:

Նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան նաև ֆեոդալական համակարգում: Նա, իհարկե, չվերացվեց և չէր էլ կարող վերացվել, քանի որ Մուհամմադ Ալին, Իբրահիմը կամ Բաշիր II իրենք այդ համակարգի ներկայացուցիչներն էին: Միայն թե նրանք ավելի լայնախոհ էին և հասկանում էին բարեփոխումների անհրաժեշտությունը:

Եգիպտական պայմանականորեն ասված տիրապետության տարիներին Լիբանանի ֆեոդալները կառավարման համակարգում այլևս չունեին այն առաջատար, մենաշնորհ դիրքերը, որից օգտվում էին նրանք նախկինում: Դա կապված էր Իբրահիմի բարեգործությունների և ընդհանուր քաղաքականության հետ, որ նա կիրառում էր ամբողջ Սիրիայում: Նրանց արգելվեց ունենալ իրենց սեփական զինված ուժերը, որոնք մշտական բախումների, խռովությունների, արյունահեղության աղբյուր էին հանդիսանում, ֆեոդալներին դարձնում էին ինքնիշխան ու անհնազանդ: Նրանցից ոմանք այնքան էին ուժեղանում, որ ձեռնոց էին նետում էմիրներին և չէին ենթարկվում նրանց: Սեփական զինված զորախմբերից զրկվելը ավատատերերին դարձնում էր ավելի ենթարկվող և վերին իշխանությունների հետ հաշվի նստող:

Թուլացան նաև ավատատերերի տնտեսական դիրքերը: Դրանում վճռական նշանակություն ունեցան երկու գործոն: Վերջ տրվեց ֆեոդալական անարխիային և կամայականություններին, նրանց ազատությանը իրենց ենթակա հողատարածքներում, անգամ նրանց պատկանող ամբողջ գյուղերում, վարվել այնպես ինչպես իրենք էին ցանկանում: Իսկ մյուս պարագան դա յուրատեսակ եկամտահարկի նորամուծությունն էր հարկերի գանձման ոլորտում: Այստեղ առաջին անգամ կիրառվեց ֆիրդեն՝ չափահաս տղամարդկանցից գանձվող միասնական եկամտահարկը: Նրա հիմքում դրվեց ունեցվածքի չափը և ստացվող եկամուտների քանակը, որի պայմաններում մեծահարուստներն ավելի բարձր հարկեր էին պարտավոր վճարել: Հատկանշական է, որ այս օրենքը կիրառվում էր բոլոր հպատակների նկատմամբ, անկախ նրանց կրոնական պատկանելությունից: Այս առումով տարբերություն չկար մուսուլմանի և ոչ մուսուլմանների միջև: Ֆիրդեի կիրառումը փակեց դուռը հարկերի գանձման բնագավարում բազում կամայականությունների ու անարդարությունների առջև:

Ավատատերերն իրենք էլ էին սկսում հարմարվել դրամական հարաբերություններին և բուրժուական կյանքին բնորոշ նորամուծություններին: Բնամթերքով կատարվող հաշվարկները և հարկավճարումներն

աստիճանաբար իրենց տեղը զիջում էին դրամական հաշվարկներին ու վճարումներին:

Այս բոլորի անուղղակի հետևանքը եղավ գյուղացիական զանգվածների տնտեսական և սոցիալական դրության զգալի բարելավումը:

Եգիպտացիների օրոք Լիբանանյան իշխանապետությունը մի կարևոր նվաճում ևս արձանագրեց: Խոսքը նրա տարածքների ընդարձակման մասին է: Դեռևս 1786 թ. Բարձր Դռան կողմից Լիբանանից անջատվել և Դամասկոսի փաշայությանն էր միացվել Բիքաայի դաշտավայրը: Էմիրների կողմից փորձեր էին արվում այդ բարեբեր դաշտավայրը վերագրավել, սակայն, դա չէր հաջողվում կամ ժամանակավոր բնույթ էր կրում: Այժմ, օգտվելով եգիպտացիների աջակցությունից և Սիրիայի վարչա–տարածքային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններից, Բաշիր II Բիքաայի դաշտավայրը Բաալբեկով և 70 բնակավայրերով միացրեց Լիբանանյան իշխանապետությանը: Դա նպաստեց նրա տնտեսական դրության ամրապնդմանը, մանավանդ հացահատիկի արտադրության բնագավառում, որով աչքի էր ընկնում Բիքաան:

Մյուս տարածքային ձեռքբերումը հանդիսացավ Զուբեյլի միացումը Լիբանանյան իշխանապետությանը: Նա օսմանցիների կողմից մտցված էր Տրիպոլիի վիլայաթի կազմում: Իբրահիմի կողմից ինչպես մյուս վիլայաթների, այնպես էլ Տրիպոլիի վիլայաթի վերացումից հետո, Զուբեյլի ամբողջ շրջանը միացվեց Լիբանանյան իշխանապետությանը: Դրա շնորհիվ իշխանապետությունը ոչ միայն ընդարձակվեց, որն ինքնին կարևոր հանգամանք էր, այլև հնարավորություն ստացավ Զունիի ծոցի միջոցով անմիջականորեն կապվել Միջերկրական ծովի հետ:

Այսպիսին էր ընդհանուր դրությունը Լիբանանյան իշխանապետությունում մինչև եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը, որը սկսվեց 1839 թ. ապրիլին և ավարտվեց 1840 թ. նոյեմբերին, ու տակնուվրա արեց ամեն ինչ:

Լիբանանյան իշխանապետությունը և նրա էմիր Բաշիր II, բնականաբար, եգիպտոսի կողմն էին: Սակայն շուտով, հատկապես նրա ավարտական փուլում, իշխանապետության շատ շրջաններ, առաջին հերթին լեռնային մասերը, հանդես եկան եգիպտացիների դեմ: Հակաեգիպտական ելույթների անմիջական պատճառ հանդիսացավ Իբրահիմի հրամանը զինաթափման և զինվորագրման մասին, որին լիբանանցիները, հատկապես Լեռնալիբանանում, կտրուկ դեմ էին: Իբրահիմն

այդ քայլին դիմեց, որովհետև նրա բանակը պատերազմի ընթացքում զգալի կորուստներ էր ունենում և համալրման կարիք ուներ: Նա փորձեց բանակը համալրել նոր զորակոչով, զինվորագրում իրականացնելով, ինչպես Սիրիայի տարբեր մասերում, այնպես էլ Լիբանանյան իշխանապետությունում:

Լեռնալիբանանցիները սկզբում մերժեցին թեկուզ մեկ զինվոր տրամադրել Իբրահիմին: Իբրահիմը հրամայեց Բաշիր II ի կատար ածել իր հրամանը: Էմիրը կրկին հայտնվեց ծանր դրության մեջ: Նրա բոլոր փորձերը բանակցությունների ուղիով հասնել հարցի կարգավորմանը և թեկուզ խորհրդանշական ինչ–որ քանակի զինվորներ տրամադրել եգիպտական փառապանծ զորավարին, ավարտվեցին անհաջողությամբ:

Լեռնալիբանանցիների դիմակայությունը 1840 թ. մայիսին վերածվեց հակաեգիպտական ապստամբության, որը շուտով ընդունեց նաև հակաբաշիրյան ուղղվածություն: Այդ նույն թվականի հունիսի 8–ին իշխանապետության կրոնական բոլոր համայնքների՝ սուննի, շիա, դրուզ, մարոնի, հույն ուղղափառ և կոթոլիկ, ներկայացուցիչները որոշում ընդունեցին զենքը ձեռքին պայքարել եգիպտացիների դեմ: Ապստամբությունը ղեկավարելու համար ընտրվեց հինգ հոգուց բաղկացած ղեկավարություն: Այդ հավաքին, որ կրկին տեղի էր ունեցել Անթիլիասում, մասնակցել էին նաև ավատատերերի ներկայացուցիչները: Դրանք այն ավատատերերի շահերն արտահայտող ներկայացուցիչներն էին, որոնք հարվածներ էին ստացել եգիպտացիներից և նրանց առաջնորդ Իբրահիմից, որի պատճառով նրանց տնտեսական և քաղաքական դիրքերը խիստ թուլացել էին իշխանապետությունում: Նրանք միաժամանակ դժգոհ էին Բաշիր II քաղաքականությունից և իրենց դեմ կիրառած բռնություններից:

Նրանք, իհարկե, հիմքեր ունեին էմիրից դժգոհ լինելու, մանավանդ այն բանից հետո, երբ նա 1839 թ. բռնի զորակոչի ենթարկեց 900 դրուզների: Վերջիններիս դիմադրությունը կոտրելու համար Բաշիր II օգտագործեց մարոնիներին: Դա ճակատագրական սխալ էր, որ թույլ տվեց էմիրը: Լիբանանի չգրված օրենքով արգելվում էր որևէ հարց լուծելիս մի համայնքը հանել մյուսի դեմ, օգտագործել միմյանց դեմ: Դա կարելի էր, եթե տվյալ համայնքը, ելնելով ինչ–ինչ նկատառումներից, ինքը կամավոր դիմեր այդ քայլին: Բաշիր II խախտեց այդ օրենքը, որը դրուզները նրան չներեցին: Նրա հեղինակությունը խիստ ընկավ և նրա

դեմ գլուխ բարձրացրին նաև ավատատերերի մի մասը, որը եգիպտացիների վախից համակերպվել, բայց չէր հաշտվել իր նոր կարգավիճակի հետ:

Այսպիսով, ատելությունը եգիպտացիների և էմիրի դեմ միահյուսվեց և դարձավ մի վտանգավոր հանգույց: Ապստամբությունը ընդունեց մեծ չափեր և սպառնում էր եգիպտացիների տիրապետությանը և էմիրին: Նրանք ամրապնդելով իրենց դիրքերը Լիբանանի լեռնային մասերում, այնուհետև շարժվեցին Բեյրութի վրա, փորձելով այն գրավել: Այդ պահին վճռականորեն գործեց Մուհամմադ Ալին: Նա ապստամբության ճնշելը հանձնարարեց իր մեկ այլ զորավարի՝ Սև–Սուլեյմանին, որին խորհրդական էր նշանակել իր երիտասարդ թոռանը՝ Աբբասին: Հուլիսի 10–ին եգիպտական զորքերն անցան հակահարձակման Բեյրութի շրջանում և ճնշեցին ապստամբությունը: Այնուհետև նրանք ներխուժեցին լեռնային շրջանները և գրավեցին ապստամբության կարևոր կենտրոններից մեկը՝ Մեթնը: Շուտով ճնշվեցին նաև ապստամբական մյուս կենտրոնները:

Այդ օրերին Բաշիր II լրիվ անցավ եգիպտացիների կողմը: Նա միաժամանակ ամեն ինչ արեց երկպառակություն մտցնելու ապստամբության ղեկավարության շարքերում, ղեկավարության և ապստամբների միջև, որը նշանակալի դեր խաղաց ապստամբությունը ճնշելու գործում: Էմիրը, հավատարիմ իր սկզբունքներին, այս անգամ էլ հայտնվեց հաղթողների կողքին և ստեղծված իրավիճակն օգտագործեց իր հակառակորդների հետ նոր հաշվեհարդար տեսնելու համար: Նա, մասնավորապես, Բազիլիի հաստատմամբ, ձերբակալեց բոլոր այն ավատատերերին, որոնց նա համարում էր իր հակառակորդ:

Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմի ավարտական փուլում, ինչպես նշել ենք, ակտիվորեն մասնակցեցին եվրոպական պետությունները, հատկապես Անգլիան, ինչպես նաև Ավստրիան: Նրանք մի կողմից ճնշում էին գործադրում Մուհամմադ Ալիի վրա՝ ընդունել նրան ներկայացված պահանջները, իսկ մյուս կողմից ուղղակի մասնակցություն ունեցան ապստամբներին խրախուսելու և եգիպտական ուժերին Լիբանանյան իշխանապետության տարածքում ռազմական պարտության մատնելու և երկրից դուրս մղելու համար: 1840 թ. սեպտեմբերի 11–ին անգլիական և թուրքական զորքերը հայտնվեցին Բեյրութի մերձակայքում: Չբավարարվելով դրանով, անգլիացիները և ավստրիացիները լիբանանցիներին բացահայտորեն հրահրում էին նոր ապստամ-

բության, որը նրանց հաջողվեց, մանավանդ այն բանից հետո, երբ նրանք լեռնաբնակ լիբանանցիներին մեծ քանակությամբ զենք մատակարարեցին և դրամ տրամադրեցին: Իրենց առաքելությունը հաջողությամբ կատարեցին նաև նրանց ռազմական հրահանգիչները, որոնք անվարժ լեռնալիբանանցիներին սովորեցնում էին հրազենից օգտվել և մարտավարության ամենատարրական գիտելիքներ հողորդում:

Եգիպտական բանակն այլևս չէր կարողանում ճնշել մեծ թափ առած ապստամբությունը և զգալի կորուստներ կրելով նահանջում էր: Ապստամբները, ստանալով անգլիացիների և ավստրիացիների ռազմական աջակցությունը գրավեցին Ջուբեյլ, Բատրուն, Սայդա, Սուր լիբանանյան և Հայֆա պաղեստինյան նավահանգստային քաղաքները: 1840 թ. հոկտեմբերի 10–ին Բեյրութի մոտ կրած պարտությունից հետո, Իբրահիմը հարկադրված էր հեռանալ Լեռնալիբանանից և Բեյրութից: Բեյրութի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրած պարտությունն այնքան զգալի էր, որ Իբրահիմը հարկադրված եղավ իր զորքերը դուրս բերել նաև Լաթաքիայից և Ալեքսանդրետից: Շուտով ընկավ նաև Ակկան: Ապստամբների ձեռքն անցան նաև Բիքաան և Անդրլիբանանը: Ապստամբության ալիքն իր մեջ առավ նաև Պաղեստինը: Իբրահիմի բանակի պարտությունը Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում կատարյալ էր: Դիմադրելն այլևս անիմաստ էր և Մուհամմադ Ալին 1840 թ. նոյեմբերի 27–ին հայտնեց, որ ընդունում է եվրոպական պետությունների առաջարկությունները:

Մուհամմադ Ալիի պարտությունը կանխորոշեց նաև Լիբանանյան իշխանապետության էմիր Բաշիր II քաղաքական ճակատագիրը:

Սակայն նախքան Եգիպտոսի կուսակալի կապիտուլյացիան, 1840 թ. սեպտեմբերի 3–ին սուլթան Աբդ ալ–Մաջիդի ֆերմանով Բաշիր II պաշտոնանկ արվեց: Նա մեղադրվում էր դավաճանության մեջ: Սուլթանը Լիբանանյան իշխանապետության էմիր նշանակեց Բաշիր Բին Կասեմին, որը Բաշիր II հորեղբորորդին էր: Նա ցուցադրել էր իր հակառակությունն իր էմիր հորեղբորորդու նկատմամբ և շահել անգլիացիների ու թուրքերի վստահությունը:

Բաշիր II անձնատուր եղավ անգլիացիներին Սայդայում: Նա պարտավոր էր լքել Լիբանանը և ցանկություն հայտնեց բնակություն հաստատել Ֆրանսիայում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա Անգլիայում: Սակայն երկու առաջարկություններն էլ մերժվեցին: Նրան առաջարկվեց բնակություն հաստատել Մալթա կղզում, որը համաձայնեցված էր

սուլթան Աբդ ալ–Մաջիդի հետ: Էմիրն այլընտրանք չուներ և իր ընտանիքով, իր հետ ունենալով մեծաքանակ գանձեր և հարստություն, մեկընդմիշտ հեռացավ Լիբանանից:

Ավարտվեց Լիբանանի պատմության բաշիրյան դարաշրջանը:

3. Լիբանանյան իշխանապետության վերացումը և թուրքական ուղղակի կառավարման հաստատումը

Բաշիր Բին Կասեմ Շիհաբը Լիբանանյան իշխանապետության կառավարումն ստանձնեց կրելով Բաշիր III տիտղոսը: Նա իշխանապետություն վերադարձավ Յաֆայից և հաստատվեց ոչ թե Բեյթ ադ–Դինում, այլ Բաաբդայում, Բեյրութից ոչ հեռու:

Բաշիր III Լիբանան ժամանեց առանց որևէ զինական ուժի, քանի որ դեռևս Պաղեստինում գտնվելու ժամանակ նա զորացրել էր իրեն հավատարիմ աշխարհազորը, որը նա կազմակերպել էր նախկին էմիրի հետ հակամարտության մեջ մտնելու ընթացքին: Նա իր աշխարհազորի զորացրումը, իհարկե, իր կամքով չէր արել, այլ կատարել էր թուրքական սուլթանի պահանջով:

Այդ հանգամանքը, ինչպես նաև այն պարագան, որ հետագայում նս նրան չհաջողվեց ստեղծել իրեն նվիրված շատ թե քիչ նշանակալի զինված ուժեր, իր բացասական դերն ունեցավ երկրի ներսում նրա դիրքերի ամրապնդման և շեյխերի ու ավատատերերի հետ ունեցած նրա փոխհարաբերություններում: Նա համարվում էր թույլ մարդ, որն ավելի ակնառու էր դառնում զինական ուժ չունենալու պարագայում, և բոլոր հատկանիշներով զիջում էր Բաշիր II:

Նոր էմիրը ծանր ժառանգություն էր ստացել, կապված 1839–1840 թթ. խառնակությունների ու ապստամբությունների և նրանց թողած հետևանքների հետ: Դրանից տուժել էր տնտեսությունը՝ առևտուրը, գյուղատնտեսությունը և արհեստները, որոնք զգալի անկում էին կրել: Հասարակ, աշխատավոր ժողովուրդը հայտնվել էր տնտեսական աննախանձելի վիճակում: Նրանց սպառնում էր սովը: Լիբանանի ցորենը երբեք չի բավարարել նրա կարիքները և այդ պատճառով նա մշտապես ցորեն է ներմուծել տարբեր երկրներից: Վերջին տարիներին ցորենի ներկրման հիմնական աղբյուրը Եգիպտոսն էր: Սակայն 1839–1840 թթ. Եգիպտա–թուրքական պատերազմը և դրան հաջորդած Մուհամմադ Ալիի կապիտուլյացիան եվրոպական պետությունների առջև, ծանր դրու-

թյան մեջ դրեցին Եգիպտոսը, որի հետևանքով նա ժամանակավորապես դադարեց Լիբանանին ցորեն մատակարարող երկիր լինելուց: Նա չէր կարող ցորեն ներկրել Սիրիայից, քանի որ նա նույնպես հայտնվել էր ծանր տնտեսական վիճակում:

Նոր էմիրի գործադրած ջանքերը այդ հարցը լուծելու և սպառնացող սովի վտանգը կանխելու ուղղությամբ չտվեցին սպասված արդյունքները: Դա մեծ հարված էր նրա հեղինակությանը:

Աշխատավոր ժողովուրդը և չքավոր խավն այդ կենսականորեն կարևոր հարցի լուծումն վերցրեց իր ձեռքը: Գյուղացիները և արհեստավորները հարկադրված էին դիմել իրենց համար շատ ծանր քայլի: Նրանք իրենց զենքը և զինամթերքը փոխանակում էին պաղեստինցիների ալյուրի հետ: Դա մեծ ինքնազոհություն է լեռնեցի լիբանանցիների համար, քանի որ զենքը նրա անվտանգության ու ապահովության գրավականն էր, մանավանդ այդ տարիներին, երբ խիստ սրվել էին ներհամայնքային հարաբերությունները և բախումները նրանց միջև հաջորդում էին մեկը մյուսին: Բայց լիբանանցին այլընտրանք չուներ և դիմում էր այդ քայլին: Դրա հետևանքով նրա աչքում էմիրն ավելի ընկավ:

Սակայն Բաշիր III համար ճակատագրական փորձություն եղավ դրուզ շեյխերի վերադարձը Լիբանան, իրենց նախկին կալվածքներին տիրանալու նրանց ձգտումը և այդ հողի վրա առաջացած ներհամայնքային, մարոնի–դրուզական արյունալի բախումները:

Սույն հատորում մենք բազմիցս նշել ենք «մարոնի» և «դրուզ» անունները: Կարծում ենք ժամանակն է նրանց մասին ընթերցողին տալ համառոտակի տեղեկություններ:

Ե՛վ մարոնիները, և՛ դրուզները արաբներ են և պատկանում են միևնույն էթնոսին: Սակայն նրանք տարբերվում են իրենց կրոնադավանական պատկանելությամբ, որը սովորական, շատ տարածված երևույթ է արաբների մոտ:

Մարոնի կամ մարոնական անունը սերում է սիրիական Օրոնտես գետի մոտ գտնվող սուրբ Մարոնի վանքի անունից: Ուրեմն մարոնիները քրիստոնեական բազմաթիվ աղանդներից մեկն են, Մարոնի հետևորդները, որոնց մասին հիշատակություններ եղել են արդեն VIII դարում: Նրանց բնակության հիմնական արեալը Սիրիան և Լիբանանն են, հատկապես նրանց լեռնաբնակ վայրերը:

Դավանական առումով մարոնիները քրիստոնյա մոնոֆելիթներ են, որոնք Քրիստոսի բնույթի վերաբերյալ գոյություն ունեցող վեճում

կանգնած են այն տեսակետի վրա, որ Քրիստոսն ունի երկու բնություն՝ աստվածային և մարդկային, և մեկ միասնական կամք: Նրանք, լինելով կրոնական կղզյակ անծայրածիր մուսուլմանական աշխարհում, միշտ իրենց հայացքը հառել են Եվրոպային, նրա քրիստոնեական կենտրոններին և ձգտել սերտ կապեր հաստատել նրանց հետ: Դա հաջողվեց իրագործել միջին դարերում, մանավանդ խաչակրաց արշավանքների ժամանակ, XI–XIII դարերում, երբ մարոնիները կապեր հաստատեցին խաչակիր ասպետների և նրանց ուղեկցող կաթոլիկ հոգևորականության հետ: Այդ արշավանքների և մուսուլմանների դեմ մղվող պատերազմների ժամանակ նրանք բացահայտորեն պաշտպանում և օգնում էին խաչակիրներին ընդդեմ իրենց արյունակից մուսուլման արաբների:

Խաչակրաց արշավանքների կազմակերպիչ և ոգեշնչող Վատիկանն ի դեմս մարոնիների գտավ հուսալի համակիրների, որն այնուհետև վերածվեց սերտ դաշինքի: Պոնտիֆիկը նրանց շրջանում, ինչպես համայն Սիրիայում և Լիբանանում, կաթոլիկության տարածման ակտիվ քաղաքականություն էր վարում: Արդեն XVI դարում նրանք հասան զգալի հաջողությունների, իսկ XVII դարը շրջադարձային եղավ Վատիկան–մարոնի փոխհարաբերություններում: Մարոնի հոգևոր ղեկավարությունը Հռոմի պապին ճանաչեց մարոնի եկեղեցու պետ: Սակայն դա չէր նշանակում, որ նրանք դարձան Վատիկանին ենթակա կաթոլիկներ: Նրանք իրենց ինքնուրույնությունը լրիվ պահպանեցին, միայն կապ հաստատեցին Վատիկանի հետ, նրա հոգևոր առաջնորդին ընդունեցին իբրև իրենց եկեղեցու գլխավոր: Դրան զուգահեռ մարոնի եկեղեցին պահպանեց իր սեփական ղեկավարությունը, որը լրիվ ինքնիշխան է իր եկեղեցու և մարոնի համայնքի ղեկավարման ներքին հարցերում: Մարոնի եկեղեցապետը պաշտոնապես կրում է «Անտիոքի և Արևելքի պատրիարք» տիտղոսը:

Այս եկեղեցու ծիսակատարությունների մեջ կան շատ արխայիկ բաներ, որոնք գալիս են քրիստոնեության տարածման վաղնջական ժամանակներից:

Մարոնի եկեղեցին մեծ ազդեցություն ունի իր հետևորդ հավատացյալ մարոնիների վրա և ոչ միայն նրանց հոգևոր–կրոնական, այլև քաղաքական առաջնորդն է: Նա է ներկայացնում մարոնի համայնքը միջպետական հարաբերություններում: Նա դարեր շարունակ ստեղծել և մինչև օրս պահպանել է կրթական և մշակութային, ինչպես նաև քարոզչական ամուր համակարգ, դպրոցների և լուսավորական կենտրոն-

ների տարածված ցանց: Այս կուռ կառույցները կարևոր լծակներ են մարոնի եկեղեցու ձեռքում և հանդիսանում են նրա ազդեցության և ուժի աղբյուրներից մեկը:

Դրուզները հայտնվել են ավելի ուշ, XI դարում: Նրանք շիիզմի աղանդներից մեկն են, որոնք ասպարեզ իջան իսմաիլիզմի երկփեղկումից հետո:

Իսմաիլիզմի, այդ ծայրահեղական շիական ուղղության մասին, մանրամասն խոսվել է նախորդ հատորում:

Իսմաիլիզմից անջատված մի խումբ Ֆաթիմյան խալիֆա ալ–Հաքիմին, որը կառավարել է 996–1021 թթ., և անհայտացել առեղծվածային պայմաններում, ճանաչեց որպես մարդկային կերպարում մարմնավորված աստված: Սակայն նրա աստվածության հարցում նրանք հետևորդներ չունեցան Եգիպտոսում: Բայց այդ ուսմունքն անսպասելիորեն մեծ հաջողություններ գտավ Լիբանանի և Սիրիայի լեռնաբնակ արաբների մոտ: Այդ ուսմունքի մոլեռանդ կողմնակիցն էր Դարազին, որի անունից և ծագեց դրուզ աղանդի կոչումը: Գրականության մեջ մինչև մեր օրերը «դրուզի» հետ հանդիպում է նաև «դարազի» ձևը, սակայն առավել գործածական է դրուզը:

Դրուզների միասնական աստվածը Հաքիմն է և նրանց ուսմունքի համաձայն լինելու է նրա երկրորդ գալուստը, որը երջանկություն կբերի միայն նրանց, ովքեր նրա հետևորդներն են: Նրանց ուսմունքի մեջ առանցքային նշանակություն ունի հոգիների գաղթի կամ վերաբնակեցման տեսադրութը, ըստ որի, խիստ որոշակի քանակի հոգիներ կարող են վերաբնակվել մի մարմնից մյուս մարմինը: Բայց խոսքը վերաբերում է ոչ թե բոլոր մարդկանց մարմիններին, այլ միայն դրուզներին պատկանող մարմիններին: Նրանք հավատացած են, որ երբ մահանում է որևէ դրուզ, ապա ճիշտ այդ պահին անպայման ծնվում է մի նոր դրուզ, և մահացած դրուզի հոգին մահացած մարմնից գաղթում է այդ նորածնի մարմինը:

Դրուզների ուսմունքի մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա դրույթների համաձայն, միայն դրուզական համայնքի անդամներն են ի վիճակի ճշտորեն ընկալել այդ ուսմունքն ամբողջությամբ: Ահա թե ինչու, ի տարբերություն մյուս կրոնների և կրոնական աղանդների, դրուզները չեն զբաղվում կրոնական քարոզչությամբ և բնավ իրենց շարքերն ընդլայնելու նպատակ չեն հետապնդում:

Դրուզները բաժանվում են գիտունների և անգետների: Գիտունները համեմատաբար փոքր շերտն է, որն անցել է հատուկ պատրաստվածություն և հասու է ուսմունքի գաղտնիքներին: Իսկ անգետները դրուզների հիմնական զանգվածն է:

Դրուզները, չնայած այն հանգամանքին, որ պատկանում են իսլամի ծայրահեղական աղանդներին, իրենց կրոնական պարտականությունների կատարման հարցում շատ պարզ են: Բացի այն, որ դրուզական ծիսակատարությունները պարզ են և հասարակ մարդկանց կամ անգետներին միանգամայն մատչելի, նրանք չեն պարտադրում դրուզական համայնքի անդամներին անպայման մասնակցել ժամասացության և կատարել կրոնական համապատասխան ծիսակատարություն: Միայն գիտուններն են, որոնք տեղյակ կամ հաղորդակից են աստվածային գաղտնիքին, հինգշաբթի օրերը, երեկոյան հավաքվում են հալվաներում՝ պաշտամունքային կենտրոններում, և այնտեղ կատարում հավուր պատշաճի ծիսակատարություն:

Այս երկու համայնքները՝ դրուզները և մարոնիները առաջատար դեր են խաղացել Լիբանանում, նրա ներքաղաքական կյանքում: Եվ իշխանապետության քաղաքական կայունությունն ուղղակի կախված էր նրանց փոխհարաբերություններից:

Այժմ անդրադառնանք Բաշիր II տապալումից հետո դրուզների Լիբանանյան իշխանապետություն վերադառնալու հարցին, որը ոչ միայն սուր գլխացավանք ստեղծեց Բաշիր III համար, այլև հանգեցրեց իշխանության կորստյան:

Բաշիր II իր կառավարման տարիներին մեկ անգամ չէ, որ բախվել էր դրուզական ազդեցիկ կլանների հետ, ճնշել նրանց դիմադրությունը, շատերին դաժանորեն պատժել, անգամ մահվան դատապարտել, խլել նրանց հողատարածքները, դրանք բաժանել յուրայիններին, այդ թվում և իր որդիներին: Նրանցից շատերը իրենց կյանքը փրկելու համար փախել էին Լիբանանյան իշխանապետությունից: Դրանց թվում էին Ջումբլաթները, Արսլանները, Թալհուքները, Նակիտները և այլ երևելի ընտանիքների ներկայացուցիչներ:

Այդ հարցն ուներ նաև մի այլ կողմ: Վերոնշյալ ընտանիքների անդամներին արտաքսելով Լիբանանյան իշխանապետությունից և բռնագրավելով նրան պատկանող կալվածքները, Բաշիր II այդտեղ վերաբնակեցրեց հյուսիսային շրջաններից տեղափոխած մարոնիներին, մեծ մասամբ գյուղացիների: Դրանով փոխվել էր համայնքային–դավանական

գոյություն ունեցող հավասարակշռությունը, որն ինքնին վերցրած շատ վտանգավոր քայլ էր Լիբանանի պայմաններում:

Եվ ահա, երբ Բաշիր II տապալումից թեթև շունչ քաշած և ուրախացած Նաաման և Սաիդ Ջունբլաթները, Ամին Արսլանը, Աբու Նակիտը և մյուսները վերադարձան Լիբանանյան իշխանապետություն, ապա նրանք երկու գլխավոր նպատակ էին հետապնդում: Առաջին, վերստանալ իրենց կալվածքները, և, երկրորդ, վերականգնել նաև իրենց իրավունքները, այդ թվում և քաղաքական: Երկուսն էլ շատ դժվար էր իրագործել, ժամանակները փոխվել էին, հաստատվել էին այլ իրողություններ, որոնք վերադարձած դրուզ ավագանին ոչ մի կերպ չէր ցանկանում հաշվի առնել:

Մեծ բարդությունների հետ էր կապված հատկապես առաջին խնդրի իրագործումը, կապված դրուզ ավատատերերի իրավունքներն իրենց նախկին հողաբաժինների վրա վերականգնելու հետ: Այդ կալվածքները, նախ, ազատ, այսինքն անմարդաբնակ չէին, այլ բնակեցված էին, և երկրորդ, դրանք վերաբնակեցված էին ոչ թե դրուզներով, այլ դրուզների մշտական մրցակից, անգամ կարելի է ասել նրանց հակառակորդ մարոնիներով: Փորձել մարոնիներին տեղահանել և արտաքսել նախկին էմիրի կողմից նրանց հանձնված հողերից, անխուսափելիորեն դրուզ–մարոնի հակամարտություն էր առաջացնելու: Էլ չենք խոսում այն մասին, որ նոր էմիր Բաշիր III ոչ ուժ և ոչ էլ հնարավորություն ուներ նման քայլի դիմելու:

Էմիրի այդ դիրքը ավելի ուժեղացրեց նրանց հակաշիհաբական տրամադրությունները, հաշվի առնելով, որ Բաշիր III նույնպես Շիհաբ տոհմից էր, որին ատելով ատում էին դրուզները:

Սակայն դրուզները ոչ մի կերպ չէին ցանկանում զիջել և պատրաստ էին գնալ մինչև վերջ: Նրանք կապեր հաստատեցին այլ վայրերի դրուզների հետ, ինչպես Հաուրանի շրջանի, նրանցից ստանալով հավաստիացումներ անհրաժեշտ օգնություն ցույց տալ իրենց լիբանանյան եղբայրներին: Առաջ անցնելով նշենք, որ նրանք եղան իրենց խոստումների տերը:

Լիբանանյան իշխանապետությունում հասունանում էր նոր կոնֆլիկտ, որի նկատմամբ անտարբեր չգտնվեցին Անգլիան և Ֆրանսիան, որոնք որոշել էին ամեն մի հնարավորություն օգտագործել իրենց դիրքերը այդ տարածաշրջանում ամրապնդելու համար: Բայց նրանք հանդես էին գալիս ոչ թե որպես դաշնակիցներ, այլ մրցակիցներ: Անգլիան ա-

ջակցում էր դրուզներին, նրանց զենք ու զինամթերք մատակարարում և հենվում նրանց վրա, իսկ Ֆրանսիան՝ մարոնիներին: Նրանց այդ դիրքորոշումը չփոխվեց հետագա տարիներին, ընդհուպ համարյա մինչև մեր օրերը, երբ անգլիացիները շարունակաբար հանդես էին գալիս դրուզների, իսկ ֆրանսիացիները մարոնիների հովանավորներ:

Մարոնիները զգալով, որ բախումը դրուզների հետ անխուսափելի է, իրենք նույնպես սկսեցին զինվել և պատրաստվել դիմադրության:

Դրուզ–մարոնիական բախումները սկսվեցին 1841 թ, հոկտեմբերին և շարունակվեցին մինչև նոյեմբեր: Նախահարձակը դրուզներն էին, որոնք նախ շրջապատեցին էմիրի պալատը, ապա ներխուժեցին մարոնիների գյուղերը, կազմակերպելով զանգվածային կոտորածներ: Նրանք բռնագրավում էին հողատարածքները, հրկիզում մարոնիների տները, ոչնչացնում այգիները և թույլ տալիս այլ բռնություններ և ոճրագործություններ:

Իր պալատում թիկնապահ զորքով պաշարված էմիրը օգնություն խնդրեց Բեյրութում տեղակայված թուրքական իշխանություններից, մարոնիների պատրիարքից և Շիհաբներից, բայց նրանք չէին շտապում օգնության հասնել նրան: Նրանցից յուրաքանչյուրն իր խաղն էր խաղում: Թուրքերին ձեռնտու չէր էմիրի ուժեղացումը և ասպարեզում մի Բաշիրի փոխարեն մեկ այլ Բաշիրի հանդես գալը: Նրանք ցանկանում էին վերջնականապես թուլացնել ու վարկաբեկել Բաշիր III և լուծել Լիբանանյան իշխանապետության հարցը: Մարոնիները փայփայում էին աքսորյալ Բաշիրին վերադարձնել Լիբանան և կրկին բազմեցնել էմիրի աթոռին:

Մարոնիները, ի տես դրուզների ոճրագործությունների, կազմակերպեցին ինքնապաշտպանական զինված ջոկատներ և հարձակման անցնելով, ներխուժեցին դրուզների գյուղերը և նրանց հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես դրուզներն էին վարվել նրանց հետ:

Այս բախումների ընթացքում երկու կողմից եղան հազարավոր զոհեր, ավելի մեծ քանակի վիրավորներ, քանդվեցին ու հրկիզվեցին հարյուրավոր տներ, անգամ ամբողջ գյուղեր: Հաղթանակի նժարը թեքվեց դրուզների կողմը, որոնք կարողացան իրենց վերահսկողությունը հաստատել Հարավային Լիբանանի վրա:

Թուրքերը, որոնք ականատես էին այս բոլորին, չէին շտապում միջամտել և դադարեցնել արյունահեղությունը: Նրանք ուրախությամբ դիտում էին, թե ինչպես են իրենց հակառակորդները միմյանց կոտորում և

փոխադարձաբար միմյանց թուլացնում, որն ի շահ թուրքերի էր: Սայդայի թուրք փաշան բարձունքներից հեռադիտակով դիտում էր տեղի ունեցող իրադարձությունները և մեծ բավականություն ստանում դիտելով այրվող գյուղերից բարձրացող ծուխը:

Անարգվեց նաև էմիր Բաշիր III–ի Դեյր ալ–Կամարը և նրանում գտնվող պալատը՝ դրուզների կողմից: Նրանք կողոպտեցին և կտտանքների ենթարկեցին պալատից դուրս եկած և Բեյրութ ուղևորվող մարդկանց, էմիրի թիկնապահներին, որոնք արդեն կրակել էին վերջին փամփուշտները և ըստ էության անզեն էին: Նրանք իրենց ատելությունը թափեցին նաև էմիր Բաշիր III–ի վրա և ստորացրին նրան՝ լրիվ շորահան անելով ի տես բոլորի:

Եվ երբ թուրքական իշխանությունները գտան, որ հասել է հարմար պահը, ապա միջամտեցին և իրենց կամքը թելադրեցին լիբանանցիներին:

Սուլթանը խոշոր զորաբանակ ուղարկեց Բեյրութ կայսրության զինվորական մինիստր Մուսթաֆա Նուրի փաշայի գլխավորությամբ: Նրա առջև սուլթանը երկու խնդիր էր դրել: Առաջինը, դադարեցնել մարտերը և վերջ տալա դրուզ–մարոնիական կոտորածներին, որը Մուսթաֆա Նուրին կատարեց հաջողությամբ: Ասենք դա այնքան էլ դժվար խնդիր չէր «խաղաղացնել» արյունաքամ և քայքայված մի երկիր:

Երկրորդ խնդիրը, էմիր Բաշիր III պաշտոնանկ անելն էր: 1842 թ. հունվարի 13–ին Մուսթաֆա Նուրին իր մոտ զրույցի հրավիրեց էմիրին, որին նա ընդունեց շատ սիրալիր և հարգալից: Զրույցի ընթացքում նա կտրուկ փոխելով թեման, առաջարկեց հրաժարվել Լիբանանյան իշխանապետության էմիրի պաշտոնից, նկատելով, որ տեղի ունեցած արյունալի իրադարձություններից հետո այլևս նպատակահարմար չէ նրա գտնվելը այդ պաշտոնում: Սուլթանի առաջարկությունն ընդունելու դեպքում նրան խոստանում էին ժառանգական իրավունքով Զուբեյլի շրջանը: Բաշիր III, որին մեղադրում էին թուլամորթության մեջ, խրոխտ կերպով մերժեց այդ առաջարկը: Մուսթաֆա Նուրին 1842 հունվարի 13–ին նրան սուլթանի անունից պաշտոնանկ արեց, ձերբակալեց և անմիջապես ուղարկեց Ստամբուլ:

Սակայն այս պատմությունը դրանով չվերջացավ: Օսմանյան զինվորական մինիստրը 1842 թ. հունվարի 16–ին իր մոտ հրավիրեց մարոնի և դրուզ համայնքների ղեկավարներին և նրանց պաշտոնապես հայտնեց, որ 1841 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած

իրադարձությունները գլխավոր մեղավորը էմիր Բաշիր III էր և այդ պատճառով նա պաշտոնանկ է արվել: Նա նաև նրանց հայտնեց մի կարևոր նորություն նս. սուլթանի որոշմամբ վերջ է տրվել Շիհաբների իրավունքներին Լիբանանյան իշխանապետության նկատմամբ և Լիբանանի կառավարումը հանձնված է թուրք Օմար փաշային:

Լիբանանյան իշխանապետությունը վերացվեց: Նա դարձավ Բարձր Դռանը ուղղակի ենթակա թուրքական նահանգներից մեկը:

4. Լիբանանի երկատումը մարոնական և դրուզական հատվածների և երկու կայմակամների կառավարման համակարգի հաստատումը

Ստամբուլում հավատացած էին, որ Շիհաբներին իշխանությունից զրկելը, Լիբանանը թուրքական կառավարմանը ենթարկելը և Օմար փաշային Լիբանանի կառավարիչ նշանակելը, անհրաժեշտ նախադրյալներ կստեղծեն Լիբանանում խաղաղություն և անդորրություն հաստատելու համար: Բարձր Դուռը վստահ էր, որ գտնվել է Լիբանանյան կնճիռը լուծելու և այդ երկրամասը կառավարելու ճիշտ ձև: Օսմանյան կառավարությունը համոզված էր նաև, որ Օմար փաշան այն մարդն է, որը կկարողանա լուծել այդ խնդիրները:

Օմար փաշան օսմանյան կայսրության զինվորական նախարար Մուսթաֆա Նուրիի ֆավորիտն էր և վայելում էր նրա ամենալայն աջակցությունը: Նա ծագումով սլավոն էր, խորվաթ, որը դավանափոխ լինելով, դարձել էր մուսուլման: Քանի որ այդ ժամանակ Խորվաթիան մտնում էր Ավստրիական կայսրության մեջ, այդ պատճառով էլ Օմարը արաբների կողմից ստացավ Օմար ան–Նամսաուի, այսինքն Ավստրիացի Օմար անվանումը:

Օմարը ձեռնամուխ եղավ իր խնդիրների իրագործմանը, որոնց մեջ կարևորը բոլոր համայնքներին, առաջին հերթին դրուզական և մարոնական, Ստամբուլին ենթարկելը և կենտրոնացված քաղաքականություն կիրառելն էր: Օմարը հասկանում էր, որ ինքը հաջողության կարող է հասնել, եթե պահպանի հավասարակշռությունը համայնքների, մասնավորապես երկու գլխավոր համայնքների՝ քրիստոնյա մարոնիների և դրուզների միջև, և կանխի նոր բախումները, որոնք այդ պահին Ստամբուլի շահերին չէին համապատասխանում:

Օմար փաշան սկզբում ճանաչեց Շիհաբների կողմից հալածված և երկրից վտարված, բայց նրանց տապալումից հետո Լիբանան վերադարձած դրուզ իշխանների և հողատերերի իրավունքները: Նա դրանով ուզում էր նրանց իր կողմը գրավել և դարձնել իր սոցիալական հենարաններից մեկը:

Նա ճանաչեց նաև մարոնի այն ավատատերերի համանման իրավունքները և արտոնությունները, որոնք զանազան պատճառներով հակաշիհաբական դիրքորոշում էին ունեցել և նույնպես հալածանքների էին ենթարկվել նախկին էմիր երկու Բաշիրների կողմից:

Սակայն շուտով սրվեցին հարաբերությունները Օմար փաշայի և դրուզ ազնվականության վերնախավի միջև, որի գլխավոր պատճառը դրուզների ամբարտավան պահվածքն էր:

Դրուզական ավագանին Շիհաբների տապալումը և իշխանազրկումը դիտեց որպես իրենց հաղթանակ և մարոնիների պարտություն: Նրանք, արբեցած դրանից, իրենց պահում էին ամբարտավան, թույլ էին տալիս կամայականություններ և բռնություններ քրիստոնյաների նկատմամբ, հրաժարվում էին քրիստոնյաներից խլված ունեցվածքը հետ վերադարձնել, որը Բարձր Դռան և եվրոպական հյուպատոսների պահանջն էր:

Մարոնի համայնքը դժգոհ էր, որ Օմար փաշան սիրաշահում էր դրուզ ավագանուն և նրանց կարգի չէր հրավիրում:

Դրուզ ավագանին իրեն այնքան արտոնյալ էր զգում, որ անգամ սկսել էր իր կամքը պարտադրել փաշային, իսկ իրենց անկարգությունները և բռնությունները, որոնց մեջ առանձնապես «փայլում» էր Նասիֆ Աբու Նակիտը, արդարացնում էին օսմանյան կառավարությանն իրենց «նվիրվածությամբ»:

Օմարը հասկացավ, որ դրուզ առաջնորդներն անցել են ամեն մի սահման և եթե կտրուկ քայլերի չդիմի, ապա կարող են նոր բախումներ լինել, որը Բարձր Դուռը նրան չի ների: Եվ նա դիմեց կտրուկ քայլի:

1842 թ. ապրիլին Օմար փաշան Բեյթ ադ–Դինի իր պալատում ճաշի հրավիրեց դրուզ ղեկավարներ Ահմեդ Արսլանին, Նաաման Ջունբլաթին, Սաիդ Ջունբլաթին, Հուսեյն Թալհուքին, Հաթթար Իմադին և Նասիֆ Աբու Նակիտին: Իրականում ճաշկերույթը պատրվակ էր: Օմար փաշայի հրամանով նրանք բոլորը ձերբակալվեցին:

Դրուզական ավագանու ձերբակալումը գոհունակությամբ ընդունվեց մարոնի համայնքի կողմից: Դա դուռ բացեց դրուզական ջար-

դերից ճողոպրած մարոնիների առջև հետ վերադառնալ Լիբանան և տեր դառնալ իրենց կալվածքներին, որ նրանցից խլել էին դրուզները մարոնի–դրուզական վերջին կոտորածների ժամանակ:

Օմարի դրությունը ծանրացավ նաև այն պատճառով, որ եվրոպական պետությունները դատապարտեցին Բարձր Դռան որոշումը Լիբանանյան իշխանապետությունը վերացնելու վերաբերյալ: Նրանք կողմնակից էին, որ Լիբանանի այդ կարգավիճակը վերականգնվի: Իսկ Ֆրանսիան, ի հավելումն, պահանջում էր վերականգնել Շիհաբների իշխանությունը, առաջարկելով անգամ թույլ տալ Բաշիր II Մալթայից վերադառնալ և ստանձնել էմիրի պարտականությունները: Սակայն ֆրանսիական առաջարկության դեմ վճռականորեն հանդես էր գալիս Անգլիան, այդ առաջարկության մեջ տեսնելով Լիբանանի վրա ֆրանսիական վերահսկողությունը հաստատելու վտանգ:

Իսկ Բարձր Դուռն ընդհանրապես դեմ էր վերականգնել կառավարման հին կարգը: Նա Թուրքիայի կարևոր հաղթանակն էր համարում Լիբանանի վրա թուրքական ուղղակի կառավարում հաստատելը, ուստի ամեն կերպ դիմադրում էր եվրոպական երկրներին, անկախ այն բանից, Շիհաբները կվերադառնան կառավարման ղեկին, թե ոչ:

Փակուղուց դուրս գալու ելք համարվեց, այսպես կոչված, հանրաքվեի անցկացումը Լիբանանում, որը տեղի ունեցավ 1842 թ. ամռան ընթացքում: Հանրաքվեի ընթացքում, լիբանանցիները պետք է իրենց կարծիքն արտահայտեին այն հարցի կապակցությամբ, թե արդյո՞ք նրանք համաձայն են հաստատված նոր վարչակարգին, այսինքն Լիբանանի վրա թուրքական ուղղակի կառավարման հաստատմանը, թե՞ նորից քրիստոնեական կառավարիչ նշանակել, որը հավասար էր իշխանապետության վերականգնմանը քրիստոնյա էմիրի ղեկավարության ներքո:

Դրուզները սկզբից նեթ հստակ հայտարարեցին, որ նրանք դեմ են, որ Լիբանանում քրիստոնյա կառավարիչ նշանակվի: Նրանք անգամ հատուկ նամակ հղեցին Ստամբուլ Բարձր Դռանը, սպառնալով, որ եթե քրիստոնյա կառավարիչ հաստատվի, ապա նրանք կհեռանան Լիբանանից:

Իսկ մարոնիները նույնպես նախքան հանրաքվեին գնալը, կողմնորոշվել էին հօգուտ քրիստոնյա կառավարչի:

Հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ դրուզները քվեարկել էին հօգուտ թուրքական ուղղակի կառավարման, որը նշանակում էր, որ նրանք դեմ էին իշխանապետության վերականգնմանը:

Իսկ մարոնիները շատ հստակ կերպով իրենց ձայնը տվել էին իշխանապետության վերականգնման օգտին՝ քրիստոնյա–մարոնի էմիրի ղեկավարության ներքո: Ըստ որում, նրանք չէին թաքցնում, որ ցանկանում են էմիր նշանակվի Շիհաբ տոհմից որևէ մեկը, դեմ չլինելով նաև Բաշիր II թեկնածությանը:

Այսպիսով, հանրաքվեի արդյունքներով Լիբանանը մնաց պառակտված:

Հանրաքվեն դեռ նոր էր ավարտվել և արդյունքները նոր էին հայտնի դարձել, երբ կրկին ապստամբեցին դրուզները: Նրանք այս ապստամբության հիմնական պատճառ համարեցին իրենց շեյխերի ձերբակալումը Օմար փաշայի կողմից: Բայց կարծում ենք, որ դա միակ պատճառը չէր: Նրանց մոտ դժգոհություն էր կուտակվել Օմար փաշայի դեմ նրանց նկատմամբ նրա քաղաքականության փոփոխության կապակցությամբ: 1841 թ. ապստամբությունից և դրուզ շեյխերի ու ավատատերերի Լիբանան վերադառնալուց հետո, ինչպես, նշվեց, բավականին ջերմ հարաբերություններ էին հաստավել դրուզների և Օմար փաշայի միջև, որը երկար չշարունակվեց: Դա նրանց մոտ տագնապ էր առաջացրել: Տագնապ առաջացրեցին նաև հանրաքվեի արդյունքները: Դրուզները կատարյալ վստահություն չունեին, որ Լիբանանում քրիստոնյա ղեկավար չի հաստատվի: Ուստի կարելի է ենթադրել, որ դրուզների նոր ապստամբությունը նախազգուշացում էր, հասցեագրված Օմար փաշային և Բարձր Դռանը: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ ապստամբության ընթացքում դրուզները պահանջում էին ոչ միայն իրենց առաջնորդների ազատ արձակումը, այլև Օմար փաշայի հրաժարականը:

1842 թ. հոկտեմբերին դրուզները իրենց ղեկավար Շիբլի Արիանի գլխավորությամբ բարձրացրին ապստամբության դրոշը: Իրենց աջակից ունենալով Հաուրանի և Անդրլիբանանի դրուզներին, նա Բիքայից ներխուժեց Շուֆի շրջան, շրջապատեց Բեյթ ադ–Դինը և այնտեղ գտնվող Օմար փաշային ներկայացրեց հետևյալ պահանջները. ազատ արձակել դեռևս ապրիլ ամսին Օմար փաշայի կողմից ձերբակալված դրուզների առաջնորդներին, լեռնեցի դրուզներից ոչ ոքի չզինվորագ-

րել, հրաժարվել լեռնեցիներին զինաթափելուց, երեք տարով ազատել հարկեր վճարելուց և, ի վերջո, հրաժարական տալ:

Սայդայի փաշա Ասադը, որի վրա էր սուլթանը դրել Լիբանանի ընդհանուր հսկողությունը և որին անմիջապես ենթարկվում էր Օմար փաշան, բավարարեց ապստամբների միայն մի պահանջը, ցանկանալով որոշ չափով լիցքաթափել լարվածությունը: Նրա հրամանով ազատ արձակվեցին ձերբակալված դրուզ առաջնորդներից միայն երեքը, այդ թվում Ջումբլաթ եղբայրներից Սաիդ Ջումբլաթը, նրանց ապահով հասցնելով Արիանին: Նա միաժամանակ հայտնեց Շիբլի Արիանին, որ շուտով կբավարարի նաև նրա մյուս պահանջը և պաշտոնազուրկ կանի Օմար փաշային:

Բայց նրա արձակած շեյխերը վերադառնալով Արիանի ճամբարը, ոչ թե համոզեցին նրան դադարեցնել ապստամբությունը և վերացնել Բեյթ ադ–Դինի շրջափակումը, այլ միացան ապստամբներին, որը շատ վրդովեցրեց Ասադին: Նա լրացուցիչ ռազմական ուժեր, այդ թվում և հրետանի, տեղափոխեց Շուֆի շրջան, կենտրոնացնելով դրանք Բեյթ ադ–Դինի մոտ, պատրաստվելով վճռական գրոհի: Նրան օգնության եկավ նաև մարոնի զինյալների մի գունդ: Նրանք միասնական ուժերով գրոհեցին Շիբլի Արիանի զորքերի վրա: Մարտերի թեժ պահին, իր զորքերի գլուխն անցած ամրոցից դուրս եկավ Օմար փաշան և միանալով Ասադի ուղարկած ուժերին սարսափելի պարտության մատնեցին Արիանին, որը մարտի դաշտում թողեց հազար դիակ:

Դրուզների այս ապստամբությունը ճնշվեց, ինչպես և նախորդները: Օմար փաշան ներխուժեց Ջումբլաթների տոհմական գյուղը՝ Մուխթարան և հրկիզեց դրուզ համայնքի ամենաառաջատար և ամենաազդեցիկ ընտանիքի՝ Ջումբլաթների հորենական այդ կալվածքը: Դրուզները ստացան հերթական ծանր հարվածը:

Բարձր Դուռը հասկացավ, որ անհնար է Լիբանանի վրա պահպանել թուրքական ուղղակի կառավարումը: Սուլթանին այդ ճշմարտությունն ըմբռնելուն օգնեցին նաև եվրոպական պետությունները: Նա ստիպված էր հրաժարվել կառավարման այդ ձևից և եվրոպական պետությունների հետ կանգ առնել Լիբանանը երկատելու տարբերակի վրա:

Դրա գաղափարն առաջին անգամ տվել էր Ավստրիական կայսրության արտաքին գործերի նախարար Մետերնիխը, ժամանակի Եվրոպայի ամենափայլուն դիվանագետներից մեկը, որն աչքի էր ընկնում

նաև իր նենգությամբ, դավեր նյութելու վարպետությամբ և այլ բացասական հատկանիշներով: Նա դեռևս 1842 թ. մայիսի 17–ին այն տեսակետն էր հայտնել, որ լիբանանյան հարցը բռնությամբ լուծելը միակ տարբերակը չէ, և որպես նոր տարբերակ առաջարկել էր դրուզների և մարոնիների համայնքները դնել երկու, այսինքն համապատասխանաբար նրանց ղեկավարների կառավարման ներքո:

Եվրոպական պետությունները երկար քննարկումներից հետո, վերջապես կանգ առան Լիբանանը երկու մասի բաժանելու ավստրիական մոդիֆիկացիայի ենթարկված տարբերակի վրա, որի հետ համաձայնվեց նաև Բարձր Դուռը: Դա տեղի ունեցավ 1842 թ. դեկտեմբերի 7–ին:

Ըստ այդմ, սուլթանը Լեռնալիբանանի դրուզական և քրիստոնեական հատվածների վարչական կառավարման համար ղեկավար էր նշանակում համապատասխանաբար դրուզ և քրիստոնյա երկու կայմակամների: Մինչ այդ նրանք համաձայնության էին եկել, որ քրիստոնյա կայմակամը ոչ մի դեպքում չի կարող լինել Շիհաբ ընտանիքից: Միաժամանակ սահմանվում էր, որ կայմակամներից յուրաքանչյուրը պետք է նստի Լեռնալիբանանում, իր կրոնակից–դավանակից համայնքի միջավայրում:

Կայմակամները վարչական կառավարողներ էին, իսկ սուլթանն իր գերիշխանությունն իրականացնելու էր որևէ վազիրի միջոցով, որն սուլթանի անունից ընդհանուր վերահսկողություն էր իրականացնելու Լեռնալիբանանում:

Այդ նույն օրը, դեկտեմբերի 7–ին պաշտոնանկ արվեց Օմար փաշան, որը եվրոպական երկրների հետ համաձայնության նախապայմաններից մեկն էր:

1843 թ. հունվարի 11–ին, Սայդայի փաշան Բարձր Դռան հանձնարարությամբ, քրիստոնյա կայմակամ նշանակեց Հայդար Աբու Լամային, իսկ դրուզների կայմակամ՝ Ահմեդ Արսլանին: Երկուսի թեկնածություններն էլ Ասադ փաշան համաձայնեցրել էր մարոնի բարձրագույն հոգևորականության ու ավատատերերի, և դրուզական շեյխերի ու հոգևոր առաջնորդների հետ:

Ահմադ Արսլանի հարցում կար զավեշտական մի պահ: Նա Օմար փաշայից ծերբակալված դրուզ ղեկավարների թվում էր: Նշանակվելով կայմակամ, նա ազատ չարձակվեց, այլ ցերեկները բանտից գալիս էր իր աշխատատեղը, իսկ երեկոյան բարեխղճորեն վերադառնում բանտ:

Այսպիսով, Լեռնալիբանանը բաժանվեց երկու մասի, հյուսիսային՝ մարոնի, և հարավային՝ դրուզական: Նրանց միջև բաժանարար գիծ հանդիսացավ Բեյրութ–Դամասկոս ճանապարհը: Կայմակամներից յուրաքանչյուրը պատասխանատու էր իրեն ենթակա հատվածի համար:

Նման բաժանումը շատ թե քիչ համընկնում էր կրոնական այդ երկու համայնքների կուտակմանը հյուսիսում, ինչպես Քեսրվանը, և հարավում, ինչպես Շուֆը, որտեղ քրիստոնյաները և դրուզները համապատասխանաբար կազմում էին մեծամասնություն, թեև հյուսիսային մասում կային նաև դրուզներ, իսկ հարավային մասում՝ քրիստոնյաներ:

Բայց կար Լեռնալիբանանի կենտրոնական մասը, Մեթնը իր խառը բնակչությամբ: Այստեղ չկար որևէ համայնքի բացարձակ մեծամասնություն, այլ կար հարաբերական, և դրուզներն ու քրիստոնյաներն ապրում էին մեկընդմեջ: Դա չտեսնված բարդություններ էր ստեղծում, որոնք իրենց մեջ մեծ վտանգ էին պարունակում: Դրուզները չէին ցանկանում ենթարկվել մարոնի կայմակամին, իսկ քրիստոնյաները՝ դրուզ կայմակամին: Այդ պատճառով էլ երկու կողմից փորձ արվեց բոլոր դրուզներին դնել դրուզ կայմակամի ենթակայության ներքո, անկախ այն բանից, թե նրանք որտեղ են բնակվում, իսկ քրիստոնյաներին ենթակա դարձնել միայն քրիստոնյա կայմակամին, անկախ նրանց բնակավայրից: 1843 թ. հունվարի 29–ին նման առաջարկությամբ հանդես եկան մարոնի հոգևոր առաջնորդները, դիմելով եվրոպական դեսպաններին, խնդրելով միջամտել Ստամբուլի առաջ մարոնի կայմակամի իրավասության տակ դնել Լեռնալիբանանի տարբեր մասերում բնակվող բոլոր քրիստոնյաներին:

Իհարկե, այդ և համանման մյուս առաջարկությունները մերժվեցին, քանի որ դա գործնականում հնարավոր չէր կիրառել և անխուսափելիորեն անլուծելի բարդություններ ու հակասություններ կառաջացներ:

Բայց դա խթան հանդիսացավ որպեսզի այդ խճողված հարցին տրվի մեկ այլ լուծում: Բարձր Դուռը եվրոպական տերությունների համաձայնությամբ Լեռնալիբանանի երկու հատվածներում էլ 1844 թ. սեպտեմբերին մտցրեց վաքիլների կամ ներկայացուցիչների պաշտոն:

Այդ որոշման համաձայն, բոլոր այն գյուղերում և բնակավայրերում, որոնք ունեին խառը բնակչություն, այսինքն, եթե տվյալ գյուղում կողք–կողքի ապրում էին դրուզ և քրիստոնյա, նշանակվում էին երկու վաքիլ, մեկը դրուզ, իսկ մյուսը քրիստոնյա: Եթե դա մտնում էր դրուզ

կայմակամի կառավարման գոտում, ապա քրիստոնյան ենթարկվում էր դրուզ կայմակամին, սակայն եթե նա ունենում էր հարցեր, կապված, ասենք, հողային սեփականության, դատավարության, հարկերի և այլ հարցերի հետ, ապա այդ հարցերի լուծման համար դիմում էր քրիստոնյա վաքիլին, որն էլ իր հերթին այդ հարցը փոխանցում էր Լեռնալիբանանի երկրորդ, քրիստոնյա կայմակամին: Նա արդեն շփման մեջ էր մտնում դրուզ կայմակամի հետ և փորձում հարթել ծագած խնդիրը: Նույնը տեղի էր ունենում, երբ հարցը վերաբերում էր քրիստոնյա կայմակամի հատվածում գտնվող դրուզի հետ:

Այս մոդելը, իհարկե, չի կարելի համարել իդեալական: Նա կառավարման փոխզիջումային տարբերակ էր, թելադրված Լեռնալիբանանի յուրահատուկ պայմաններից, որտեղ տիրապետող էին հանդիսանում համայնքային հարաբերությունները, նրանց հատուկ կամ բնորոշ բարդություններով, անվստահությամբ և հակասություններով:

Ժամանակը պետք է ցույց տար, թե այդ մոդելը կենսունակ էր, թե ոչ, կարող էր նա Լեռնալիբանանը դուրս բերել էթնո–կրոնական և քաղաքական հարատև ճգնաժամից: Պետք էնշել, որ հենց սկզբից կային շատ թերահավատներ, և ինչպես ցույց տվեց կյանքը, նրանք չէին սխալվել:

5. Դրուզ–մարոնի 1845–1860 թվականների կոտորածները

Շատ ժամանակ չպահանջվեց համոզվելու համար, որ 1842 թ. ընդունված որոշումը երկու կայմակամների, և 1844 թ. որոշումը երկու վաքիլների վերաբերյալ չեն կարող Լիբանանին բերել խաղաղություն և վերացնել արյունալի բախումները քրիստոնյաների և մուսուլմանների, ու նրանց ամենաազդեցիկ երկու համայնքների՝ դրուզների ու մարոնիների միջև: Դրուզ–մարոնի կոտորածները դարձան Լիբանանի XIX դարի 40–ական թվականների երկրորդ կեսի և 60–ական թվականների սկզբների պատմության ամենաարյունոտ էջը:

Հարաբերությունները դրուզների և մարոնիների միջև այնքան էին լարված և կրքերն այն աստիճանի էին բորբոքված, որ ամեն մի շարժում, որ դրսևորվում էր մի կողմից, հակառակ կողմն այն ընկալում էր որպես սպառնալիք իր գոյությանը, որն ապահովելու համար նա բացի զենքից ու զինված պայքարից այլ միջոց չէր տեսնում և չէր ընդունում:

Ասվածի ապացույցը հանդիսացան 1845 թ. գարնան իրադարձությունները Հարավային Լիբանանում, որը գտնվում էր դրուզ կայմակամի կառավարման ներքո:

Կառավարման նոր համակարգի հաստատումից հետո դրուզ շեյխերը, դույզն իսկ չկասկածելով իրենց իրավունքները նախկին ծավալով և նախկին տիրույթներում վերականգնելու մասին, վերադարձան Հարավային Լիբանան, որը նրանք համարում էին իրենց պատկանող շրջան, եթե ոչ պետական կազմավորում: Նրանց վերադառնալը և հավակնություններն իրենց նախկին կալվածքների վերաբերյալ, խոր տագնապ առաջացրեց դրուզ կայմակամի կառավարման ներքո գտնվող Հարավային Լիբանանի մարոնիների մոտ, առաջին հերթին գյուղացիների: Ելնելով նախկին փորձից, հատկապես 1840–1841 թթ. կոտորածների դառը պատմությունից, մարոնի գյուղացիությունն արագորեն սկսեց զինվել, պատրաստ զինված դիմադրություն ցույց տալ դրուզ շեյխերին, պաշտպանելու իր իրավունքները, այդ թվում և հողաբաժիններ ի նկատմամբ: Իսկ քանի որ դրուզները բնավ մտադիր չէին որևէ չափով զիջման դիմելու, ապա լարվածությունն արագ շիկացավ և 1845 թ. մայիսին վերածվեց ապստամբության:

Այս ապստամբությունը որոշ իմաստով տարբերվում էր նախորդներից:

Առաջին, նա չսահմանափակվեց միայն Հարավային Լիբանանով և շատ արագ կերպով ընդգրկեց ամբողջ Լիբանանը: Այդ պատճառով 1845 թ. մայիսյան ապստամբությունը պատմության մեջ մտել է նաև քաղաքացիական պատերազմ անունով:

Երկրորդ, ապստամբությունն ուղղվեց ոչ թե միայն դրուզ շեյխերի և ավատատերերի, այլ ընդհանրապես դրուզների դեմ, որը ապստամբ մարոնիների թույլ տված ամենակոպիտ սխալներից մեկն էր: Դա ստվեր գցեց ապստամբության սոցիալական բնույթի վրա, որը փոխվեց կրոնական հիմունքների վրա կառուցված միջհամայնքային պայքարի:

Մարոնի ապստամբներն իրենց աշխարհազորը վերակառուցեցին ռազմական սկզբունքներով, կազմավորելով տասնյակներից ու հարյուրյակներից բաղկացած զորաջոկատներ: Ընդհանուր ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց ապստամբության ղեկավարության կոմիտեն, որը կոչվում էր «Ժողովրդական դավադրության ընկերություն»: Դա մի գաղտնի մարմին էր, որի կենտրոնատեղին գտնվում էր Դեյր ալ–Կամարում:

Հաշվի առնելով երկրամասի լեռնային բնույթը և տարբեր շրջանների միջև կապ պահպանելու դժվարությունները, ապստամբության ղեկավարման կենտրոնական մարմինն իր բաժանմունքներն էր ստեղծել տեղերում:

Համադրելով առկա մատչելի աղբյուրներն ու նյութերը, կարելի է ասել, որ նրա ղեկավար մարմնի նպատակն էր կազմակերպել մարոնի գյուղացիների ապստամբությունը վերջ տալու դրուզ ֆեոդալական ավագանու գերիշխանությանը, վերացնելու դրուզական ճորտատիրական իրավունքը, դատաստան տեսնել դրուզական ավատատերերի հետ և հասնել ազատության իրենց բնակված վայրերում:

Վախը դրուզների նկատմամբ ստիպել էր մարոնիների շուրջը համախմբվել նաև մյուս քրիստոնյա համայնքներին, թեև նրանք բոլորը չէին, որ անվերապահ համերաշխ էին մարոնիների հետ: Նրանք մի շարք հարցերում տարաձայնություններ ունեին նրանց հետ: Մյուս կողմից, հակասություններն այդ քրիստոնյա համայնքների և դրուզների միջև այնպես ուժեղ չէին արտահայտված, ինչպես մարոնիների և դրուզների միջև: Այդուհանդերձ, նրանք ենթարկվելով ընդհանուր մթնոլորտին, միացան մարոնիներին ընդդեմ դրուզների:

Դրուզները, անշուշտ, այդ բոլորի մասին լավատեղյակ էին և իրենք նույնպես պատրաստվում էին զինված պայքարի: Դրուզ ավագանին գաղտնի ժողովներ էր գումարում Մուխթարայում, որոշում ընդունելով զինվելու մասին: Դրուզները զանգվածաբար ձեռք էին բերում զինամթերք, անգամ խրամատներ էին փորում:

Ինչպես միշտ, այս անգամ ևս լիբանանյան իրադարձությունները մեկուսի չէին զարգանում: Այդ բոլորը տեղի էր ունենում թուրքական իշխանությունների աչքի առջև, սակայն նրանք ոչ մի քայլի չդիմեցին լարվածությունը լիցքաթափ անելու և զինյալ բախումները կանխելու համար: Նրանք այս անգամ ևս հետևում էին իրենց ավանդական քաղաքականությանը՝ թուլացնել արաբներին միջհամայնքային բախումների միջոցով: Նույնիսկ Անգլիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի և Պրուսիայի դիվանագիտական ներկայացուցիչները բախումների նախօրյակին, 1845 թ. մայիսի 3–ի հուշագրում Բարձր Դռանը մեղադրում էին «հանցագործ անգործության» մեջ:

Իսկ եվրոպական պետությունները, առաջին հերթին Անգլիան և Ֆրանսիան, նույնպես ունեին մեղքի իրենց բաժինը: Անգլիան կանգնած էր դրուզների, իսկ Ֆրանսիան՝ մարոնիների թիկունքում: Նրանց

մտահոգության գլխավոր առարկան ոչ այնքան բախումները կանխելն էր, որքան թույլ չտան հանկարծ մեկի դիրքերն ամրապնդվեն մյուսի հաշվին:

Կան տարբեր տեսակետներ, թե ով է եղել նախահարձակ: Որոշ աղբյուրներում նշվում է, որ ամեն ինչ սկսվել է դրուզների անմտածված քայլի հետևանքով: Ըստ այդմ, իբր, դրուզ շեյխերից մեկը փորձ է կատարել զինաթափել Հարավային Լիբանանի Բթեթար գյուղի մարոնի քրիստոնյաներին: Գյուղացիները հրաժարվել են կատարել դրուզ շեյխի կամքը և զինված դիմադրություն են ցույց տվել նրան և նրա զինախմբին: Լուրն անմիջապես տարածվել է և մարոնիներին օգնության են եկել հարևան գյուղերի մարոնիները: Այսպես կայծը վերածվում է հրդեհի:

Իսկ մեկ այլ աղբյուրի համաձայն, իբր, Բեյրութ–Սայդա ճանապարհի վրա վեճ է առաջանում ճանապարհին միմյանց հանդիպած դրուզ և մարոնի ջորեպանների միջև: Տեղի է ունենում փոխհրաձգություն: Նրանց օգնության են գալիս դրուզ և մարոնի գյուղացիները և, դարձյալ կայծը վերածվում է հրդեհի:

Անկախ այն բանից, թե այս վարկածներից որն է ճիշտ, մի բան պարզ է, որ հարաբերություններն այնքան լարված են եղել և մթնոլորտն էլ այնքան շիկացած, որ կարող էր ամեն մի ծիծաղաշարժ, եթե ոչ անհեթեթ բանից, արյունալի պատերազմ ծագել երկու համայնքների միջև:

Միջհամայնքային արյունալի ողբերգությունն իր մեջ առավ Մեթնի, Շուֆի, Ձեզինի, Մանասիֆի, Արքուբի և այլ շրջաններ: Լավ նախապատրաստված մարոնիները Ձեզինում հարձակվեցին դրուզների վրա և, մեծ մասին սպանեցին, իսկ մնացածներն իրենց գլուխը փրկեցին փախուստի դիմելով: Այդ հաղթանակի շնորհիվ մարոնիները ներխուժեցին Շուֆ, նպատակ ունենալով գրավել Ջունբլաթների ամրոցը Մուխթարայում: Սպանելով մեծաքանակ դրուզների և հիմնահատակ կործանելով կամ հրկիզելով դրուզական տասնյակ գյուղեր, մարոնիների զինված ջոկատները մոտեցան Ջունբլաթների նստոցին: Մինչ այդ պահը մարոնիները բախումների ժամանակ թվական գերակշռություն ունեին դրուզների նկատմամբ: Նրանք ամենայն հավանականությամբ կգրավեին Մուխթարան և նա նույնպես հրդեհի ճարակ կդարձնեին, եթե չմիջամտեր թուրքական մի զորախումբ, որը օգնության հասավ պաշարման մեջ գտնվող Ջունբլաթներին: Նրանց ձեռնտու չէր այդ տոհմի ոչնչացումը, որը չափից ավելի կուժեղացներ մարոնիներին: Դրանից

հետո ի հայտ եկավ, որ թուրքերը ընդհանրապես պաշտպանում են դրուզներին:

Նույն իրավիճակն էր տիրում Մեթնում, որտեղ գերակշռությունը մարոնիների կողմն էր, որոնք, ինչպես վկայում է Կ. Բազիլին, հրկիզում էին դրուզների գյուղերը, սպանում նրանց և թալանում նրանց ունեցվածքը:

Այս անմարդկային սպանդի առաջին շաբաթը մարոնիների օգտին էր:

Սակայն դրուզներին հաջողվեց կազմակերպել իրենց ուժերը, ստանալ օգնություն Հաուրանի և Ուադի աթ–Թայմի դրուզներից և անցնել հակահարձակման: Այս փուլում թուրքական զորքերը բացահայտ կերպով պաշտպանում են դրուզներին ընդդեմ մարոնիների: Դրուզներն մարոնիների հետ անում են այն նույն բանը, ինչ մարոնիներն բախումների առաջին շաբաթվա ընթացքում արել էին նրանց հետ: Նրանք ավերում և հրկիզում են մարոնիներին պատկանող գյուղերը և զանգվածաբար սպանում նրանց: Թուրքերի թողտվությամբ, դրուզները ահավոր ջարդեր կազմակերպեցին Մեթնում: Քիչ չէին այն դեպքերը, երբ թուրքերն իրենք էին սպանում իրենց անձնատուր եղած քրիստոնյաներին, իսկ նրանց զենքերը բաժանում դրուզներին:

Եվրոպական երկրների հյուպատոսների ճնշման տակ Բեյրութի Վեջիհի թուրք փաշան հարկադրված էր 1845 թ. մայիսի 23–ին միջամտել և խորհրդակցության հրավիրել երկու համայնքների ղեկավարներին: Նա դիմեց այդ քայլին, քանի որ դրուզները կարողացել էին հաղթող դուրս գալ, պահպանել իրենց իշխանությունը Հարավային Լիբանանում և հաստատվել իրենց կալվածքներում: Իսկ մարոնիները, չնայած բախումների սկզբնական փուլում իրենց հաղթանակներին, ոչ միայն ծանր կորուստներ կրեցին, այլև խիստ վատթարացրին իրենց վիճակը:

Հանդիպման հիմնական նպատակը արյունահեղությունը դադարեցնելն էր, որն ընդունել էր սպառնալից չափեր, հարաբերությունների կարգավորման ինչ–որ մոդել գտնելն էր: Հունիսի 2–ին, երբ արյունահեղությունն արդեն դադարել էր, խորհրդակցության մասնակիցները ստորագրեցին մի համաձայնագիր, որով նրանք պարտավորվում էին ձեռնպահ մնալ որևէ հարձակողական գործողությունից, ցրել զինված ջոկատները, ձերբակալել թալանով զբաղվողներին, ապաստան տալ անօթևաններին և գաղթականներին, Դամասկոսի, Սայդայի, Դեյր ալ–Կամարի, Տրիպոլիի ճանապարհների վրա տեղակայել թուրքական զոր-

քեր, իսկ մյուս մասերում անվտանգությունն ապահովել տեղական ազգաբնակչության կողմից:

Այս համաձայնագիրը հարցի յուրատեսակ միջանկյալ լուծում էր: Դրան հետևեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեհմեդ Շեքիր էֆենդիի այցը Բեյրութ 1845 թ. օգոստոսին, որը սուլթանի հանձնարարությամբ պետք է կիրառեր մի շարք միջոցառումներ Լիբանանում խաղաղություն հաստատելու համար:

Դրանց մեջ թերևս ամենակարևորը կառավարման համակարգում մի նոր օղակի ստեղծումն էր: Շեքիր էֆենդին տեղյակ պահեց համայնքների ղեկավարներին և օտարերկրյա հյուպատոսներին, որ պահպանվելու է արդեն գոյություն ունեցող երկու կայմակամների և երկու վաքիլների համակարգը: Բայց կայմակամներին կից ստեղծվում էին խորհուրդներ, որոնց նախագահները հենց իրենք կայմակամներն էին, որոնց ֆունկցիաների մեջ մտնում էին երկու կարևոր խնդիրներ՝ դատական և հարկերի արդար բաշխման և գանձման, որն ավելի շատ վերահսկողական ֆունկցիա կարելի է համարել:

Խորհուրդը բացի նախագահից, ուներ նաև տեղակալ, որին նշանակում էր կայմակամը, և համապատասխան համայնքների՝ դրուզ, մարոնի, սուննի, շիա, հույն ուղղափառ և հույն կաթոլիկ համայնքների կողմից ընտրված անդամներ, որոնց հաստատում էր կայմակամը:

Խորհրդի ստեղծումն ավելի խճողեց առանց այդ էլ գոյություն ունեցող կառավարման համակարգը: Նա չէր նպատակաուղղված լուծելու մարոնի գյուղացիության և դրուզ ավատատերերի, դրուզ գյուղացիության և մարոնի ավատատերերի միջև գոյություն ունեցող հակասությունները, որոնք սոցիալական բնույթ ունեին: Իսկ խորհուրդների մեջ տարբեր կրոնադավանական համայնքների ներկայացուցիչների ներգրավումը միջհամայնքային անհասկացողության և հակասությունների նոր դաշտ ստեղծեց:

Կայմակամներին մեծ դժվարություններով, սպառնալիքներով, զանազան խոստումներով և խորամանկությամբ հաջողվեց կանխել նոր, լայնածավալ արյունալի ընդհարումները քրիստոնյաների և դրուզների միջև, թեև առանձին դեպքեր միշտ էլ լինում էին: Դա հնարավորություն տվեց բուժել 1845 թ. արյունալի վերքերը, որոշ չափով վերականգնել քայքայված տնտեսությունը, ավերված և հրկիզված տները: Շատ փախստականներ հետ վերադարձան իրենց բնակավայրերը և տները: Իսկ զինաթափումը շատ հետաքրքիր ձևով տեղի ունեցավ: Գյու-

ղացիները երկու կողմից էլ հանձնեցին զենքի միայն մի աննշան մասը, իսկ մեծ մասը նրանք գաղտնի թաղեցին հողի տակ և այլ թաքստոցներում, հավանաբար սպասելով նոր ընդհարումների: Եվ նրանք չէին սխալվում:

1859 թ. գյուղացիները կրկին ոտքի ելան: Բայց այս անգամ և՛ պատճառները, և՛ նպատակներն այլ էին: 1859 թ. գյուղացիական ապստամբությունը, որը տեղի ունեցավ Քեսրվանում, Հյուսիսային Լիբանանում, ուղղակի կապ ուներ Օսմանյան կայսրությունում կիրառվող ռեֆորմների՝ թանզիմաթի երկրորդ փուլի հետ, որի վերաբերյալ թուրքական սուլթանը որոշում էր ընդունել դեռևս 1856 թ.: Ընդհանրապես այսպես կոչված բարեփոխումները արաբական երկրներում գնում էին մեծ դժվարությամբ, կրում էին ձևական բնույթ և նպաստում սոցիալական լարվածության առաջացմանը, որից չխուսափեց նաև Լիբանանը: Դժբախտությունը կայանում էր նրանում, որ գյուղացիությունը մի անբացատրելի պատճառով, կամ ավելի ճիշտ հավատ ընծայելով սուլթանական հրովարտակին, թղթի վրա գրվածին, այդ ռեֆորմներն ընկալեց որպես կայսրության բոլոր խավերի միջև հավասարության հաստատում և խտրականության վերացում: Շատերի ուրախությանը սահման չկար, մանավանդ այն գյուղացիների, որոնք կարծում էին, թե արդեն վերացվում է նրանց կախվածությունը ավատատերերից:

Բայց շատ շուտով նրանց մեծ հիասթափություն էր սպասում: Իսկ այն բանից հետո, երբ նրանք հուսախաբ եղան նաև հարկերի գանձման և ֆեոդալական պարհակների վերացման հարցում, ապա նրանց համակեց դժգոհությունը: Նրանցից հարկերը գանձում էին, ինչպես մինչև սուլթանական հրովարտակը, նույնիսկ ավելի խստացվեց, որն ուղեկցվում էր ավատատերերի և հարկահավաքների կամայականություններով:

Քեսրվանի դժգոհ գյուղացիության ավելի քան 300 ներկայացուցիչներ 1858 թ, սկզբին մի հավաք գումարեցին Զուք գյուղում, որտեղ ընդունվեց բողոքագիր, ուղղված Բեյրութի կառավարիչ Խուրշիդ փաշային, ինչպես նաև մարոնի հոգևորականության ղեկավարներին: Նրանք այդ բողոքագրում իրենց դժգոհությունն էին արտահայտում հարկերի ավելացման և խստացման կապակցությամբ և պահանջում ավատատիրական պարհակների վերացում:

Դրա մասին են վկայում բողոքագրի այնպիսի պահանջներ, ինչպես ամեն մի խտրականության և արհամարհական վերաբերմունքի վե-

ռացում, շեյխերի հավասարեցում ժողովրդին, այսինքն հասարակ մարդկանց, նրանց պատասխանատվության ենթարկում հանցագործություն կատարելու դեպքում այնպես, ինչպես հասարակ մարդկանց, շեյխերի կողմից իրենց հասանելիք հարկերի վճարումն իրենց կողմից և ոչ թե նրանց գանձումը ժողովրդից և այլն:

Նրանց պահանջների էական և խիստ կարևոր մասն էր կազմում պահանջների այն խումբը, որն ընդգծված հակաֆեոդալական բնույթ էր կրում, ինչպես տոնանվերների, հարսանյաց հարկի, տերունական հողակտորների վաճառումից գանձվող հարկի և այլ ապօրինի պարհակների վերացումը:

Խուրշիդ փաշան, բնականաբար, մերժեց Հյուսիսային Լիբանանի գյուղացիության պահանջները: Նա այն մարդը չէր, որ կարող էր դիմել մի այնպիսի հեղափոխական քայլի, ինչպես ֆեոդալական պարհակների վերացումը:

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո, Քեսրվանի գյուղացիությունը 1859 թ. հունվարին դիմեց զինված ապստամբության: Ապստամբները զենքի, մանավանդ հրացանների պակաս չէին զգում: Նրանք հիշեցին 1845 թ. իրադարձություններից հետո իրենց պահած զենքերի մասին, թաքստոցներից հանեցին դրանք և զինվեցին: Ապստամբության առաջնորդն էր դարբին Թանիուս Շահինը, գյուղացի Ռեյֆուն գյուղից, որը նոր էր ընտրվել վաքիլներից մեկի պաշտոնում:

Ապստամբական շարժումը հենց սկզբից ընդունեց հակաֆեոդալական բնույթ և վերածվեց գյուղացիական պայքարի մարոնի ֆեոդալների դեմ: Դա հիմք է տվել ուսումնասիրողներին, ինչպես Վ. Լուցկուն, Ի Սմիլյանսկայային և խորհրդային այլ պատմաբանների, Քեսրվանի ապստամբությունը համարել լիբանանյան գյուղացիների դասակարգային պայքար լիբանանյան ֆեոդալների դեմ:

Ապստամբները հասան մեծ հաջողությունների: Նրանք կարողացան Քեսրվանում հաստատել իրենց իշխանությունը, մարոնի ավատատերերին, առաջին հերթին Խազիններին, արտաքսել Քեսրվանից և գրավել նրանց հողերը: Այնուհետև նրանց տնօրինության տակ անցավ նաև մարոնի ավատատերերի ամբողջ գույքը՝ և ունեցվածքը: 1859 թ. հունվարի 2–ին ապստամբ 30 գյուղերի գյուղացիներ իրենց վերահսկողությունը հաստատեցին գրաված հողերի վրա:

Ստեղծվեց կառավարման նոր մարմին, որը պաշտոնապես կոչվեց հանրապետության կառավարություն՝ ալ–Հուքումա ալ–ջումհուրի-

յա, որը գլխավորում էր Թանիուս Շահինը: Հիմնվեց նս մի մարմին՝ վաքիլների ժողովը, որն օժտված էր օրենքներ ընդունելու իրավասությամբ: Շեյխերն ունեզուրկ լինելու հետ միասին, նաև իշխանազուրկ եղան: Հռչակվեց սոցիալական հավասարություն, հաստավեց կարգ ու կանոն, վերջ տրվեցին կամայականություններին, այդ թվում և գյուղացու համար մի այնպիսի կենսական կարևոր նշանակություն ունեցող հարցում, ինչպիսին հարկագանձումն էր: Գյուղացին իրեն ապահով էր զգում, թե՛ անձի, և՛ թե գույքի առումով:

Այս իշխանությունը գոյություն ունեցավ մինչև 1860 թ. հուլիսի 29–ը:

Թանիուս Շահինի ղեկավարած ապստամբությունը և նրա գլխավորած հանրապետական կառավարության ազդեցությունը չսահմանափակվեց միայն Քեսրվանի շրջանակներով: Նա հուզեց ամբողջ Լիբանանը, մասնավորապես դրուզ կայմակամի կառավարման ներքո գտնվող տարածաշրջանի մարոնի գյուղացիությանը, որը սկսեց զինվել: Կրկին Լիբանանի վրա կախվեց միջհամայնքային բախումների ուրվականը: Դա ավելի իրական դարձավ, երբ դրուզները նս սկսեցին զինվել: Այստեղ մեղքի իրենց բաժինն ունեցան, մի կողմից, մարոնի հոգևոր դասի ղեկավարությունը, որը խրախուսում էր դրուզական շրջաններում բնակվող մարոնի գյուղացիությանը զինվելու հարցում, և դրուզ շեյխերն ու մեծահարուստ ավատատերերը, որոնք նախապատրաստում էին դրուզ գյուղացիության հակաքրիստոնյա ելույթները, մյուս կողմից:

Մարոնի–դրուզ նոր ռազմական բախումները, որոնք անմիջապես կոտորածների բնույթ ընդունեցին, սկսվեցին 1860 թ. մայիսի ամսին: Առիթ հանդիսացավ մայիսի 22–ին Բեյրութում մի խումբ մարոնիների և դրուզների ընդհարումը, որի ժամանակ մարոնիները կրակ բացեցին դրուզների վրա և սպանեցին նրանցից մեկին: Դա կարծես թե ազդանշան հանդիսացավ, որ ընդհարումներ սկսվեն երկու համայնքների միջև ամբողջ Լիբանանում: Այդ ընդհարումները, որի հետևանքով Բեյրութի շրջանում մայիսի 29–31–ին ավերվեց 60 գյուղ՝և սպանվեցին հարյուրավոր մարդիկ, տարածվեցին Սայդա, Ռաշայյա, Հասբիյյա, Անդրլիբանան, ապա նաև Դեյր ալ–Կամար, Զահլե, Բիքաա և այլ շրջաններ: Դրուզները, որոնք աջակցություն էին ստանում անգլիացիներից և թուրքերից, մեկը մյուսի հետևից գրավում էին մարոնիներով բնակեցված գյուղերը և զանգվածաբար սպանում նրանց: Մայիսի 30–ին նրանք գրոհեցին Բաաբդայի վրա և սպանեցին տեղացի երևելիներին, Շիհաբ տոհ-

մի ներկայացուցիչներին, այդ թվում Լիբանանյան իշխանապետության գահընկեց արված էմիր Բաշիր III: Աղբյուրներում նշվում է, որ դրուզներին այդ ոճրագործության էր մղել Սայդայի փաշա թուրք Խուրշիդը: 1860 թ. մայիս–հուլիս ամիսներին ընդհանուր առմամբ ավերվեց 360 գյուղ, 560 եկեղեցի, 42 վանք և այլն: Մարոնիները տվեցին մոտ 7 հազար զոհ, 3 հազար կանայք առևանգվեցին, 70 հազար մարդ մնաց անօթևան: Ինչ վերաբերում է դրուզների կորուստներին, ապա դրանք անհամեմատ քիչ էին: Օրինակ, նրանց զոհերի թիվը կազմում էր հազար երեք հարյուր մարդ:

1860 թ. հունիսի 6–ին և 19–ին եվրոպական երկրների հյուպատոսները Խուրշիդ փաշայից պահանջեցին վճռական քայլերի դիմել սպանդը դադարեցնելու համար: Սակայն նա ամեն կերպ վիժեցնում էր հյուպատոսների պահանջի կատարումը, իսկ դրուզներն էլ մեղադրելով մարոնիներին նախահարձակ լինելու մեջ, հայտարարեցին, որ հնարավոր չէ վերացնել բախումները, քանի դեռ մարոնիները ձգտում են տիրանալ իրենց հողերին:

Լիբանանում տեղի ունեցած սարսափելի դեպքերը ցնցեցին եվրոպական հասարակայնությանը, որոնք պահանջում էին կտրուկ քայլերի դիմել արյունահեղությունը դադարեցնելու համար: Իսկ Ֆրանսիայում ավելի ու ավելի բարձր էին հնչում զինված միջամտության պահանջները: Դա ունեցավ իր ազդեցությունը: Անգլիացիները և Բարձր Դուռը լուրջ անհանգստացան, որ ֆրանսիական զինված միջամտությունը կարող է փոխել իրադրությունը հօգուտ ֆրանսիացիների և մարոնիների, որը նրանք չէին կարող թույլ տալ: Ուստի և Անգլիայի հավանությամբ Բարձր Դուռը կարգադրեց Խուրշիդ փաշային դիմել ամենաարդյունավետ քայլերի բախումները դադարեցնելու և կողմերի միջև զինադադար կնքելու համար: Դա հաջողվեց նրան և 1860 թ. հուլիս 6–ին մարոնիների և դրուզների միջև կնքվեց զինադադարի համաձայնագիր: Քրիստոնյա կողմը հարկադրված էր իր համաձայնությունը հայտնել դրուզ շեյխերի և ավատատերերի իրավունքները պահպանելու հետ, և հրաժարվեցին հանցագործներին պատժի ենթարկելու իրենց պահանջից: Նրանք ստիպված հրաժարվեցին նաև կրած վնասների համար դրուզներից փոխհատուցում ստանալու պահանջից: Թուրքական կողմը գլխավոր պատասխանատու հայտարարեց երկու կայմակամներին, նրանց մեղադրելով թուլության մեջ: Դա դարձնելով պատրվակ,

Բարձր Դուռը Լիբանանում իշխանությունը փոխանցեց Սայդայի փաշա Խուրշիդին:

Այսպիսով, համաձայնագրով ամրագրվեց դրուզների հաղթանակը միջհամայնքային պայքարում: Ակնհայտ էր, որ ուժեղացավ նաև Բարձր Դռան իշխանությունը Լեռնալիբանանում:

6. Լուի Նապոլեոն III Բոնապարտի կողմից Ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի առաքումը Սիրիա

Հուլիսի 6–ի զինադադարի համաձայնագրից անցել էր ընդամենը երեք օր, երբ միջահամայնքային բախումների նոր ճակատ բացվեց, այս անգամ Դամասկոսում: Դա, կարելի է ասել, որ լիբանանյան դեպքերի արձագանքներն էին Սիրիայում:

1860 թ. հուլիսի 9–11–ը, երեք օր շարունակ մահմեդականներն անխնա կոտորում էին քրիստոնյաներին, ավերում կամ հրկիզում նրանց եկեղեցիներն ու տաճարները: Սպանվեց մոտ 20 հազար քրիստոնյա: Զոհերի թիվն ու վնասներն ավել շատ կլինեին, եթե ի պաշտպանություն քրիստոնյաների հանդես չգար Աբդ ալ–Կադիրը, Ալժիրի ազատագրական շարժման ղեկավարը, որը մեծ հեղինակություն էր վայելում մուսուլմանների շրջանում: Նա իր ղեկավարած ապստամբության ճնշումից հետո հաստատվել էր Սիրիայի մայրաքաղաքում: Շնորհիվ նրա ջանքերի ու արիության, հնարավոր եղավ մոլեռանդ ամբոխին հետ պահել հետագա ջարդերից:

Դամասկոսյան դեպքերը առիթ հանդիսացան եվրոպական երկրների նոր միջամտության համար, որի նախաձեռնությունը պատկանում էր Ֆրանսիային: Փարիզն առաջարկեց Անգլիային, Ռուսաստանին, Ավստրիային և Պրուսիային հետաքննություն անցկացնել սիրիական իրադարձությունների կապակցությամբ և համապատասխան քայլերի դիմել կանխելու նման դեպքերի կրկնությունը, թեև չէին նշվում թե ինչպիսի կոնկրետ քայլերի պետք է դիմել: Իսկ Ֆրանսիայի կայսր Լուի Նապոլեոն III Բոնապարտը թուրքական սուլթան Աբդ ալ–Մաջիդից պահանջեց կտրուկ քայլերի դիմել Օսմանյան կայսրությունում կարգ հաստատելու ուղղությամբ:

Լուի Նապոլեոնը Նապոլեոն Բոնապարտի զարմիկն էր, որը Ֆրանսիայի կայսր էր դարձել 1852 թ. դեկտեմբերի 2–ին, փորձում էր ամեն բանում նմանվել իր մեծ հորեղբորը, չունենալով նրա տաղանդը ոչ

քաղաքական և ոչ էլ ռազմական հարցերում: Սակայն նա Նապոլեոն I գերազանցում էր իր հավակնություններով, որոնք ավել շատ արկածախնդրություն էին հիշեցնում, որոնք հետագայում շատ ծանր նստեցին Ֆրանսիայի վրա, հատկապես 1870 թ. ֆրանս–պրուսական պատերազմի ժամանակ կրած պարտությունից հետո, որը վերջակետ դրեց նրա քաղաքական կարիերային:

Սուլթան Աբդ ալ–Մաջիդը, ի պատասխան Նապոլեոն III պահանջի, 1860 թ. հուլիսի 16–ին հայտնում է նրան, որ արդեն իր կողմից ձեռք են առնվել համապատասխան քայլեր կարգը վերահաստատելու և հանցավորներին պատժելու համար: Այդ նպատակով սուլթանը Դամասկոս ուղարկեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Քեչեչի–զադե Ֆուադ փաշային, օժտելով նրան ամենալայն լիազորություններով: Նա հուլիսի 17–ին արդեն Բեյրութում էր: Նրան ուղեկցում էր մի զորախումբ, որի առջև դրված էր պատժիչ առաքելություն, և մի հանձնաժողով, որը պետք է օգներ Ֆուադ փաշային հետաքննություն անցկացնելու գործում:

Նա դիմեց լիբանանցիներին պահպանել անդորրը, սպառնալով, որ անդորրը խախտող յուրաքանչյուրին նա կհամարի ապստամբ, և նրան խստորեն կպատժի որպես ապստամբի: Միաժամանակ նա կարգադրեց նյութական օգնություն ցույց տալ քրիստոնյա գաղթականներին, որոնք ապաստան էին գտել Բեյրութում և այլ վայրերում: Նա մի կարևոր քայլ ևս կատարեց, որը մեծ տպավորություն գործեց: Նրա հրամանով ձերբակալվեց Սայդայի էյալաթի գլխավոր ամենազոր Խուրշիդ փաշան, որը մեղսակից էր մարոնի–դրուզ միջհամայնքային բախումների հրահրման մեջ:

Ֆուադ փաշան իր գործը Բեյրութում ավարտելուց հետո, մեկնեց Դամասկոս: Այստեղ նա ցուցադրեց, թե ինչի է ընդունակ Բարձր Դուռը ցանկության դեպքում: Ֆուադ փաշայի հրամանով ձերբակալվեց Դամասկոսի վիլայաթի մուշիր (ղեկավար, կառավարիչ) Ահմեդ փաշան: Իրենց պաշտոններից զրկվեցին և կալանավորվեցին նաև Դամասկոսի, ինչպես նաև Հասբայյայում և Ռաշայյայում տեղակայված թուրքական զորախմբերի հրամանատարները, բազմաթիվ զինվորականներ, կրոնապետեր և այլ ականավոր դեմքեր, նրանց մեղադրելով ջարդերի կազմակերպման կամ մասնակցության մեջ:

Այստեղ նույնպես Ֆուադ փաշան հրամայեց նյութական միջոցներ և օթևան տրամադրել քիրստոնյա տուժածներին:

Սուլթանի անունից Ֆուադ փաշան հիմնեց ռազմական ատյան, որի նախագահն էր ինքը: Ռազմական ատյանի որոշումով մահվան դատապարտվեցին և գնդակահարվեցին Ահմեդ փաշան, բազմաթիվ բեյեր, ընդամենը 111 մարդ, կախաղան հանվեց 57 մարդ, տաժանակիր աշխատանքի և աքսորի դատապարտվեց մոտ 500 մարդ:

Այդ հարցը լուսաբանելիս, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Պատժվեցին միայն ու միայն մուսուլմանները՝ դրուզներ, սուննիներ և շիաներ, և ոչ մի քրիստոնյա: Մահապատիժներն իրականացվում էին հանրության ներկայությամբ և քրիստոնյա թաղամասերում:

Բնականաբար հարց է ծագում, թե ինչո՞ւ մուսուլմանական Թուրքիայում իշխանությունները պատժեցին միայն մուսուլմաններին և նյութական օգնությունը ցուցաբերեցին բացառապես քրիստոնյաներին, հատկապես մարոնիներին:

Դա արվում էր մի կողմից եվրոպական հասարակայնությանը հանգստացնելու, նրանց աչքերին թոզ փչելու համար, ցույց տալու, որ Օսմանյան կայսրությունն, իբր, կանոնավոր պետություն է, որտեղ գործում է իրավունքը և եթե հանցանքը կատարել է մուսուլմանը, ապա նա կպատժվի, առանց հաշվի առնելու նրա կրոնական պատկանելությունը: Սա մի կողմից:

Իսկ մյուս, առավել կարևոր դրդապատճառը քաղաքական էր: Եվրոպայում շատ լուրջ կերպով խոսում էին միջամտության մասին՝ հանձնաժողով ուղարկել Սիրիա և Լիբանան, իսկ Ֆրանսիան բացահայտ կերպով հայտարարեց իր ռազմական ուժերն տարածաշրջան ուղարկելու մասին: Ֆուադ փաշային Դամասկոս ուղարկելով և հանձնարարելով նրան ամենադաժան միջոցները կիրառել մարոնի–դրուզ արյունահեղության միայն մուսուլմանական կողմի մեղավորների նկատմամբ, Բարձր Դուռը դրանով փորձում էր կանխել եվրոպական միջամտությունը և ցույց տալ, որ նման միջամտության համար ոչ մի հիմք չկա, քանի որ Լիբանանում և Սիրիայում տիրում է անդորր, իսկ մուսուլման մեղավորներն արդեն շատ խիստ կերպով պատժվել են:

Երբ Նապոլեոն III 1860 թ. հուլիսի 6–ին նամակ հղեց թուրքական սուլթանին, պահանջելով կարգ ու կանոն հաստատել Սիրիայում և Լիբանանում, ապա դրա հետ միասին նա հրամայեց իր ծովային նախարարությանը ֆրանսիական նավերն ուղարկել Բեյրութ, պատրաստ ափ իջնելու: Նա, տակտիկական նկատառումներից եկնելով, առաջարկեց

Անգլիային և Ավստրիային համատեղ ռազմական միջամտություն: Ահա այս հանգամանքներն էին, որ տագնապ էին առաջացրել Ստամբուլում և հարկադրել Բարձր Դռանը այնպիսի դաժան ձևով պատժել մուսուլման մեղավորներին, որոնց մասին խոսվեց վերևում: Որոշ տեղեկությունների համաձայն սուլթանն այդպիսի որոշում էր ընդունել անգլիացիների խորհրդով, ձգտելով դրանով իսկ կանխել ֆրանսիական հնարավոր միջամտությունը:

Այնուամենայնիվ, դա չփրկեց Օսմանյան կայսրությանը եվրոպական միջամտությունից: Երկար և բավականին դժվար բանակցություններից հետո, որն ընթանում էր Ֆրանսիայի, Անգլիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Պրուսիայի և Թուրքիայի միջև, ի վերջո, 1860 թ. սեպտեմբերի 5–ին նրանք ստորագրեցին պայմանագիր եվրոպական զորքեր Սիրիա ուղարկելու մասին: Նրանում նշվում էր, որ պայմանագիրը ստորագրած պետությունների մտահոգությունը Սիրիայում խաղաղություն հաստատելն է, որի համար նրանք նպատակահարմար են գտնում Սիրիա ուղարկել մի զորաբանակ, բաղկացած ոչ ավել, քան 12 հազար զինվորներից: Ֆրանսիան համաձայնվեց դրա կեսը, այսինքն մոտ 6 հազարը, տրամադրել ինքը, իսկ մնացածը պետք է տրամադրեին մյուս եվրոպական պետություններն ըստ անհրաժեշտության, որոշելով, թե նրանց ով ինչքան զինվոր կարող էր տրամադրել: Կողմերը համաձայնության եկան մի կարևոր հարցի շուրջը ևս: Սիրիա ուղարկվող զորքերը այդ երկրում մնալու էին ոչ ավել, քան վեց ամիս, ելնելով այն ենթադրությունից, որ 180 օրը միանգամայն բավարար էր նրանց առջև կանգնած խնդիրները լուծելու համար:

Այդ պայմանագրով, նախ, սահմանափակվեց Սիրիա ուղարկվող ֆրանսիական զորքերի քանակը, և, երկրորդ, սահմանվեց նրանց Սիրիայում մնալու ժամկետը՝ վեց ամիս, այն դեպքում, երբ Ֆրանսիան չէր ցանկանում, որ ժամկետի հարցում որևէ սահմանափակում լինի:

Սեպտեմբերի 5–ի պայմանագրով ստեղծվում էր նաև միջազգային խառը հանձնաժողով, կազմված վերոնշյալ պայմանագիրը ստորագրած պետությունների ներկայացուցիչներից, որոնք բացի մեղավորներին հայտնաբերելուց և պատժի ենթարկելուց, պետք է մշակեին այնպիսի միջոցառումներ, որոնք կանխեին նման բախումների հնարավորությունը: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում էր Լիբանանի նոր ստատուտի՝ կարգավիճակի հաստատումը:

Այսպիսով, այդ օրերին առաջին անգամ հնչեց Լիբանանի նոր կառավարման հաստատման կամ ստատուտի հարցը:

Սակայն Ֆրանսիան, չսպասելով պայմանագրի ստորագրմանը, դեռևս օգոստոսի 16–ին Բեյրութ էր ուղարկել իր էքսպեդիցիոն կորպուսը, որի հրամանատար նշանակվեց մարկիզ Բոֆոր դ'Օպուլին, մի մարդ, որը ժամանակին եղել էր Մուհամմադ Ալիի որդի Իբրահիմ փաշայի սպայակույտի պետ, համարվում էր, որ նա լավ գիտի Սիրիան, նրա բարքերը և սովորությունները: Բեյրութում խարիսխ գցեցին ֆրանսիական հինգ ռազմանավեր: Եվրոպական պետությունները նույնպես շտապեցին իրենց ռազմանավերն ուղարկել և շուտով Բեյրութի ծովախորշում հայտնվեցին նաև անգլիական հինգ, ռուսական յոթ, ավստրիական երկու, սարդինիական երկու և թուրքական երկու ռազմանավեր:

Իսկ ի՞նչպես դիմավորեցին լիբանանցիները եվրոպական երկրների զինված ուժերի հայտնվելը Բեյրութում և նրա ջրերում:

Մարոնիները և մյուս քրիստոնյաները մեծ խանդավառությամբ դիմավորեցին ֆրանսիացիներին: Եվ դա հասկանալի է, քանի որ ֆրանսիացիները մարոնի–դրուզ հակամարտության ողջ ընթացքում նախապատվությունը տվել էին մարոնիներին և հանդես էին գալիս որպես նրանց հովանավորներ:

Իսկ դրուզները և սուննիները, մարոնիների ջարդերի հիմնական կիրառողները, հատկապես առաջինները, բնականաբար, չէին թաքցնում իրենց հիասթափությունը և մտավախությունը ֆրանսիացիների ժամանման կապակցությամբ և նրանց նկատմամբ թշնամական դիրք գրավեցին: Նրանք մտավախություն ունեին, որ ֆրանսիացիները կարող են հետաքննություն կատարել, որը կբացահայտեր նրանց ոճրագործությունները և կարող էին պատասխանատվության կանչել նրանց:

Ֆուադ փաշան շտապեց կանխել ֆրանսիացիներին, նրանցից առաջ ընկնելով դրուզ շեյխերին պատժելու գործում: Այդ նպատակով նա Դամասկոսից ժամանեց Բեյրութ և ռազմական ատյանի որոշմամբ ցմահ բանտարկություն տվեց Խուրշիդ փաշային և մի շարք այլ քաղաքական ու ռազմական գործիչների, ապա 1860 թ. սեպտեմբերի 14–ին իր մոտ հրավիրեց դրուզների ղեկավար շեյխերին և ավատատերերին: Նա նրանց հրավիրեց ոչ թե զրույց ունենալու, այլ հարցաքննելու այն դերակատարության մասին, որ նրանք ունեցել էին ջարդերի ժամանակ: Նրանց մեծ մասը Ֆուադ փաշային ներկայանալու փոխարեն փախավ Սիրիայի Հաուրան շրջանը, որը բնակեցված է դրուզներով: Ներկայա-

ցան միայն տասնչորսը, այդ թվում դրուզ կայմակամ Ահմեդ Արսլանը: Նա և տասն այլ դրուզ շեյխեր դատապարտվեցին մահվան, սակայն միջամտեցին դրուզների ավանդական հովանավորներ անգլիացիները, որոնց ճնշման արդյունքում մահապատիժը փոխարինվեց ցմահ բանտարկության:

Ֆրանսիական զորքերը փաստորեն բան չունեին անելու, Լիբանանում և Սիրիայում, քանի որ Ֆուադ փաշան արդեն հասցրել էր ձերբակալել և զանազան պատիժների ենթարկել դրուզ–մարոնի բախումների դրուզ գլխավոր մեղավորներին և անդորր հաստատել այդ երկու երկրամասերում: Ուստի ֆրանսիացիներն իրենց ուշադրությունը կենտրոնացրին Հյուսիսային Լիբանանի, այսինքն Քեսրվանի վրա, որտեղ հաստատվել էր հանրապետական կառավարություն Թանիուս Շահինի գլխավորությամբ: Նրանց նպատակն էր ճնշել ապստամբությունը Քեսրվանում: Ի տես ֆրանսիական զորքերի առաջխաղացման, Թանիուս Շահինը փախավ Քեսրվանից և Լիբանանի Հյուսիսային կամ քրիստոնյա–մարոնի շրջանի կայմակամ դարձավ Յուսուֆ Քարամը: Նրան հաջողվեց ֆրանսիացիների օժանդակությամբ իր իշխանությունը տարածել Քեսրվանի վրա, գյուղերը «հանդարտեցնել» և վերականգնել մարոնի կալվածատերերի իրավունքները: Սակայն Յուսուֆ Քարամը համարվում էր ժամանակավոր կայմակամ:

Ֆուադ փաշայի կողմից դրուզ կայմակամի և դրուզական մյուս ղեկավարների ձերբակալումից հետո Հարավային Լիբանանը կամ դրուզական կայմակամությունը մնացել էր առանց ղեկավարի: Ֆուադ փաշան Հարավային Լիբանանը բաժանեց չորս գոտիների, նրանց ղեկավար նշանակելով օսմանյան բանակի սպաների: Նրանց կից ստեղծվեցին ժամանակավոր վարչություններ, որոնք պետք է կառավարիչ նշանակված անփորձ սպաներին օգնեին նրանց ենթակայության տակ գտնվող տարածաշրջանի կառավարման գործում:

Այսպիսով Լիբանանի երկու հատվածներում կառավարման տեսանկյունից հաստատվեց երկու միմյանցից տարբեր իրադրություն: Հյուսիսային կամ քրիստոնյա մասում, շնորհիվ ֆրանսիացիների ակտիվ գործողությունների, 1860 թ. նոյեմբերի 18–ին նշանակվեց նոր կայմակամ ի դեմս Յուսուֆ Քարամի, իսկ Հարավային կամ դրուզական մասում, թեև կայմակամի պաշտոնը չվերացվեց, սակայն նա մնաց թափուր, և որպես ելք ստեղծված իրավիճակից, կազմավորվեցին չորս գո-

տիներ, որոնք գտնվում էին ոչ թե լիբանանցիների, այլ թուրքերի կառավարման ներքո:

7. Լիբանանի օրգանական ստատուտը

Ֆրանսիական զորքերի Սիրիա և Լիբանան մնալու ժամկետը լրանում էր 1861 թ. մարտի 5–ին: Սակայն Ֆրանսիան հրաժարվում էր կատարել 1860 թ. սեպտեմբերի 5–ի պայմանագրի այդ պահանջը, որի տակ կար նաև նրա ներկայացուցչի ստորագրությունը: Նա իր նոր դիրքորոշումը պատճառաբանում էր նրանով, որ քրիստոնյաներին կոտորելու վտանգը լիովին չի վերացել, տեղի են ունենում կողոպուտ և թալան: Իրոք, այդպիսի դեպքեր տեղի էին ունեցել Բաալբեկում, Հասբայյայում և այլ վայրերում: Մարտականորեն տրամադրված որոշ դրուզներ չէին հանդարտվում, և մերթ ընդ մերթ զինված հարձակումներ էին գործում քրիստոնյաների վրա: Ուստի Ֆրանսիան, իր զորքերը դուրս բերելու ժամկետը լրանալուց առաջ, 1861 թ. հունվարի 18–ին դիմեց եվրոպական պետություններին, առաջարկելով նրանց քննարկել Սիրիայում և Լիբանանում իր զորքերի մնալու ժամկետը երկարացնելու հարցը: Նրա այդ պահանջը բավարարվեց և փետրվարի 19–ին Փարիզում իր աշխատանքները սկսեց Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի և Թուրքիայի դեսպանների ժողովը: Քննարկումների ընթացքում պարզվեց, որ մասնակից պետություններն ունեն տարբեր դիրքորոշում:

Ֆրանսիան առաջարկում էր ժամկետը երկարածգել մինչև, որ ընդունվի Լիբանանի կառավարման նոր համակարգ, որը ոչ ոք չգիտեր, թե երբ է ընդունվելու:

Անգլիական դեսպան Կոուլը և թուրքական դեսպան Ահմեդ Վեֆիքը կտրուկ կերպով հանդես եկան ժամկետը երկարացնելու ֆրանսիական առաջարկի դեմ և պահանջեցին ֆրանսիական զորքերը դուրս բերել 1861 թ. մարտի 5–ին:

Ռուսական դեսպան Կիսելյովը, ընդհակառակը, պաշտպանեց Ֆրանսիային:

Ավստրիայի ներկայացուցիչը փոխզիջումային տարբերակ առաջարկեց: Նա գտնում էր, որ ֆրանսիական զորքերի դուրս բերումը չպետք է պայմանավորել Լիբանանի նոր ստստուտի որոշման հետ: Ուստի նա գտնում էր, որ, այդուհանդերձ, պետք է սահմանել կոնկրետ ժամ-

կետ: Նա առաջարկեց ֆրանսիական զորքերի մնալը երկարաձգել մինչև 1861 թ, հունիսի 1–ը: Կողմերը համաձայնվեցին ավստրիական առաջարկության հետ:

Բայց այնուհետև նա չնչին փոփոխության ենթարկվեց և մարտի 19–ին ստորագրվեց նոր համաձայնագիր, որով Սիրիայից ֆրանսիական զորքերի դուրս բերման վերջնական ժամկետ նշանակվեց 1861 թ. հունիսի 5–ը:

Ֆրանսիան այլևս այլընտրանք չուներ և սահմանված ժամկետում ավարտեց իր զորքերի դուրս բերումը: Դրանով ձախողվեց Սիրիայի վրա Ֆրանսիայի տիրապետությունը հաստատելու Լուի Նապոլեոն III քաղաքականությունը, որը մեծ հարված էր կայսրի հեղինակությանը:

Մնում էր լուծել ամենակարևոր հարցը՝ Լիբանանի կարգավիճակի, նրա կառավարման համակարգի հարցը: Դրանով զբաղվում էր հատուկ հանձնաժողովը, որը կոչվում էր նաև միջազգային հանձնաժողով: Նրա աշխատանքները ձևականորեն գլխավորում էր Ֆուադ փաշան: Նրա անդամներն էին Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի դիվանագիտական ներկայացուցիչները: Հանձնաժողովի աշխատանքները սկսվել էին դեռևս 1860 թ. հոկտեմբերի 5–ին և ընդմիջումներով շարունակվեցին մինչև 1861 թ. հունիսի 9–ը:

Այս առանցքային հարցում պետությունների ներկայացուցիչները գրավեցին միանգամայն տարբեր դիրքեր:

Ֆրանսիան հանդես էր գալիս հօգուտ միասնական Լիբանանի կարգավիճակի վերականգնման, որը գոյություն ուներ մինչև 1840 թ., մինչև թուրքական ուղղակի կառավարման հաստատումը, իսկ այնուհետև Լիբանանի երկատումը և երկու կայամակամությունների բաժանումը: Նա գտնում էր, որ Լիբանանը պետք է լինի միասնական մեկ տերիտորիա՝ տեղացի քրիստոնյայի կառավարման ներքո: Առաջարկվում էր քրիստոնյա կառավարիչ ընտրել Շիհաբ ընտանիքից որևէ մեկին: Ֆրանսիայի պատվիրակ, Ալեքսանդրիայում հյուպատոս Բեգլարն այնքան հեռուն էր գնում, որ անգամ մտածում էր բոլոր դրուզներին տեղահանել և Լիբանանը վերածել մաքուր քրիստոնեաբնակ մի տարածքի:

Անգլիայի ներկայացուցիչ լորդ Դաֆֆերինը պաշտպանում էր Սիրիան փոխարքայության վերածելու տեսակետը, որի փոխարքան պետք է լիներ Ֆուադ փաշան: Նրա կարծիքով Լիբանանը կարելի էր վերածել էյալաթի սիրիական փոխարքայության կազմում: Կա տեսակետ, որ այս ծրագիրը, իբր, անգլիական լորդն իր նախաձեռնությամբ էր առաջադ-

րել, առանց անգլիական արտաքին գործերի մինիստրության հետ համաձայնեցնելու: Կարծում ենք, որ դա խաղ էր, քանի որ դա անգլիական դիվանագիտության պրակտիկայում աննախադեպ երևույթ էր, և Դաֆֆերինն էլ այնքան անփորձ չէր, որ իր անձնական տեսակետը փորձեր ներկայացնել որպես իր պետության պաշտոնական տեսակետ: Կարծում ենք Անգլիան դիմել էր այդ քայլին բացահայտելու, թե ինչպես տերությունները կարձագանքեն այդ առաջարկությանը:

Տերությունների արձագանքը լորդ Դաֆֆերինի ծրագրի նկատմամբ խիստ բացասական եղավ և Անգլիայի արտաքին գործերի մինիստրության հանձնարարությամբ նա ներկայացրեց նոր առաջարկություն: Անգլիական նոր պլանը հիմնված էր Լիբանանը երեք մասի՝ դրուզական, մարոնի և ուղղափառ կայմակամությունների բաժանելու սկզբունքի վրա:

Անգլիան դրանով շատ մտածված քայլ էր արել: Առաջ քաշելով մարոնի և դրուզ կայմակամությունների կողքին նաև ուղղափառ քրիստոնյաների կայմակամություն ստեղծելու գաղափարը, Անգլիան փորձում էր դրանով, նախ, սիրաշահել Ռուսաստանին, որը հավակնություն ուներ հանդես գալ որպես ուղղափառ քրիստոնյաների հովանավոր, և նրան իր կողմը գրավել ընդդեմ Ֆրանսիայի: Մյուս կողմից, երրորդ կայմակամության կազմավորումը, ըստ անգլիացիների հաշվարկների, պետք է նսեմացներ մարոնիների դերը Լիբանանում, որը, իր հերթին, կոչված էր թուլացնել Ֆրանսիայի դիրքերը Լիբանանում:

Ռուսաստանը, ինչպես նշեցինք, հավակնում էր դառնալ բոլոր ուղղափառ քրիստոնյաների հովանավոր: Եվ միջազգային հանձնաժողովում Ռուսաստանի ներկայացուցիչ Նովիկովը համապատասխան հրահանգ էր ստացել իր կառավարությունից: Այդ պատճառով էլ նա հանդես եկավ անգլիական վերջին նախագծի պաշտպանությամբ, այսինքն, Լիբանանը երեք կայմակամությունների՝ մարոնի, ուղղափառ և դրուզ, բաժանելու օգտին, հուսալով, որ ինքը տիրապետող դիրքերի կհասնի ուղղափառ կայմակամությունում:

Ի վերջո, հանձնաժողովի անդամները, հակառակ Ֆրանսիայի դիմադրությանը, արտահայտվեցին հօգուտ այն առաջարկության, որը ստացավ անգլո–ռուսական նախագիծ անվանումը: 1861 թ. մարտի 20–ին միջազգային հանձնաժողովը հավանության արժանացրեց անգլո–ռուսական առաջարկությունների փաթեթը: Նա նախատեսում էր Լեռնալիբանանը բաժանել մարոնի, դրուզ և ուղղափառ կայմակամությունները

ների, կայմակամներին ընտրելու էր տվյալ շրջանի բնակչությունը, բայց նրանք հաստատվելու էին Բարձր Դռան կողմից, յուրաքանչյուր կայմակամությունում ստեղծվում էր տեղական ոստիկանություն և, վերջապես, բոլոր լիբանանցիները հայտարարվում էին հավասար օրենքի առջև:

Ֆրանսիան թեև հարկադրված եղավ ստորագրել այդ համաձայնագիրը, սակայն շարունակեց պայքարը նրա վերանայման համար: Նրա պայքարի նշանակետը դարձավ Լեռնալիբանանը երեք մասի բաժանելու խնդիրը: Նա դարձյալ պնդում էր, որ այն միասնական լինի քրիստոնյա կառավարչի ղեկավարության ներքո: Բայց ղեկավարի թեկնածության հարցում նա գնաց զիջման: Ֆրանսիան համաձայնվեց, որ այդ թեկնածուն չլինի Շիհաբ ընտանիքից, որին եռանդուն կերպով դեմ էին Անգլիան և Թուրքիան: Փարիզը համապատասխան հուշագրեր ուղարկեց Ռուսաստանի, Ավստրիայի, Անգլիայի և Պրուսիայի արտաքին գործերի նախարարներին, որտեղ նշելով, որ Լիբանանի բաժանումը երեք մասի իր մեջ մեծ վտանգ էր պարունակում, հայտարարում էր, որ Ֆրանսիան պատրաստ է հանել Շիհաբի որպես միասնական Լիբանանի հավանական ղեկավարի թեկնածությունը:

Ֆրանսիայի այս նոր դիրքորոշումը նպաստավոր ազդեցություն ունեցավ մյուս պետությունների դիրքորոշման վրա, որոնք վերախմբագրեցին մարտի 20–ին ստորագրված տեքստը և նոր փաստաթուղթն իր հիմնական տեսքով արդեն պատրաստ էր 1861 թ. մայիսի 1–ին:

Բանակցությունների ավարտական փուլը տեղի ունեցավ Ստամբուլում, որտեղ թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Օսմանյան կայսրության մեծ վազիր Ալի փաշան: Այս փուլում վեճը գնում էր մի հարցի շուրջը, թե ով պետք է լինի Լիբանանի կառավարողը: Բոլորը համաձայնվեցին, որ նա քրիստոնյա պետք է լինի: Սակայն ֆրանսիական կողմը պնդում էր, որ նա պետք է անպայման լինի տեղաբնիկ քրիստոնյա: Անսպասելիորեն նրան պաշտպանեցին Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի ներկայացուցիչները:

Այդ տեսակետին առարկում էին Անգլիան և Թուրքիան: Թունդ վիճաբանության ընթացքում Պրուսիայի ներկայացուցիչը հանդես եկավ մի առաջարկությամբ, որն ընդունելի եղավ բոլոր կողմերի համար: Նա առաջարկեց տեքստում չնշել «ոչ տեղաբնիկ» բառերը, բայց պայմանավորվել ընտրության ժամանակ տեղաբնիկ քրիստոնյայի չընտրել:

Դրանով վերացվեց Լեռնալիբանանի նոր կարգավիճակի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթի ստորագրման ճանապարհին ընկած վերջին խոչընդոտը:

1861 թ. հունիսի 9–ին Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան Պրուսիան և Թուրքիան ստորագրեցին «Լիբանանին տրված կանոնադրությունը», որը մասնագիտական գրականության մեջ ավելի շատ հայտնի է որպես «Լիբանանի օրգանական ստատուտ»:

Դա մի Կանոնադրություն էր, որը ներառնում էր Լեռնալիբանանին վերաբերող բոլոր էական կողմերը՝ վարչակառավարման, օրենսդրական, դատական, տնտեսական, զինական, տեղական մարմինների և այլն:

Լեռնալիբանանը համարվում էր մեկ ամբողջական տարածք, որը «կառավարվելու է Օսմանյան կայսրության կողմից նշանակված և ուղղակի Բարձրագույն դռնից կախում ունեցող մի քրիստոնյա Մութասարիֆի կողմից: Մութասարիֆի նշանակումը ցմահ չէ և ենթակա է պաշտոնանկության»: Սահմանված էր, որ «Կառավարչի պաշտոնում Մութասարիֆը պետք է հսկի, որպեսզի պահպանվի կարգ ու կանոնն ու խաղաղությունը Լեռնալիբանանի բոլոր կողմերում և ապահովվի հարկերի գանձումը»: Մութասարիֆի իրավասությունների մեջ էր մտնում իր պատասխանատվությամբ «նշանակել տեղական պաշտոնյաներ և դատավորներ»: Նրա վրա էր դրվում դատավորների կողմից օրենքի հիման վրա տրված բոլոր վճիռների գործադրումը:

Կանոնադրության համաձայն, մութասարիֆը «ամբողջ Լեռնալիբանանի կառավարման համար կազմելու է մի Գործադիր մեծ ժողով հետևյալ 12 երեսփոխաններից»: Դրանք երկուական երեսփոխաններ էին հետևյալ վեց կրոնական համայնքներից՝ մարոնի, դրուզ, սուննի, շիա, հույն ուղղափառ և հույն կաթոլիկ: Գործադիր մեծ ժողովի նախագահն ինքը մութասարիֆն էր, որի ներկայացրած հարցերը քննարկվելու էին այս ժողովում և ընդունվելու էին համապատասխան որոշումներ: Գործադիր ժողովը հետևելու էր հարկերի հավաքմանը և ֆինանսական գործերին:

Կանոնադրության 3–րդ և 4–րդ հոդվածները վերաբերում էին Լեռնալիբանանի վարչատարածքային բաժանմանը և նրա ղեկավարներին: Լեռնալիբանանը բաժանվեց 6, իսկ 1864 թ. բարեփոխված կանոնադրությամբ՝ 7 կազաների: Հիշյալ կազաներում պետք է ընտրվեր մեկ կառավարիչ, որը հաստատվում էր մութասարիֆի կողմից: Կառավարիչ-

ներն ընտրվում էին միևնույն կրոնին պատկանող և մեծամասնություն կազմող բնակչության կողմից:

Կազաները բաժանվում էին նահիյաների, որտեղ կազայի կառավարչի հավանությամբ և մութասարիֆի հաստատմամբ նշանակվում էին մեկական տեսուչներ: Իսկ «յուրաքանչյուր գյուղում բնակչության կողմից հաստատված մեկական գյուղապետ է լինելու»:

Շատ կարևոր էր և արևելյան հասարակության համար նորություն Կանոնադրության 5–րդ հոդվածը, որտեղ ամրագրված էր, որ «Օրենքի առաջ բոլորն էլ հավասար են: Կատարելապես վերանում են երկրամասի մեծամեծներին և հատկապես մուկատաջիներին տրված բոլոր արտոնությունները»: Հասկանալի է, որ նման հոդվածի հայտնվելը Օսմանյան հետադիմական կայսրությանը ենթակա Լեռնալիբանանի Կանոնադրության մեջ, արդյունք էր եվրոպական պետությունների, առաջին հերթին Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքական և իրավական մտքի ազդեցության:

Կանոնադրության 6–13 հոդվածները կարգավորում էին դատական հարցերը: Լիբանանում հաստատվեցին երեք առաջին աստիճանի դատարաններ, որոնք բաղկացած էին մութասարիֆի կողմից նշանակված մեկ դատավորից, մեկ տեղակալից և ժողովրդի կողմից ընտրված 6 պաշտոնական փաստաբաններից: Ստեղծվեց նաև Գերագույն դատարան, որի կազմը խարսխված էր կրոնադավանական ներկայացուցչությունը պահպանելու սկզբունքի վրա: Նա կազմված էր մութասարիֆի կողմից նշանակված համայնքների մեկական ներկայացուցիչներից և «յուրաքանչյուր համայնքի կողմից ընտրված 6 փաստաբաններից»: Գերագույն դատարանի նախագահը նշանակվում էր մութասարիֆի կողմից: Իսկ առևտրական հարցերի հետ կապված բոլոր դատական խնդիրները քննարկվում էին Բեյրութի մեջլիսում:

Սահմանվեց, որ բոլոր աստիճանակարգի դատարաններում դատավարությունը տեղի էր ունենալու հրապարակայնորեն և կազմվելու էր արձանագրություն:

Ստեղծվում էր նաև տեղական ոստիկանություն «խաղաղությունն ու օրենքը պահպանելու համար»: Ոստիկանական զորաբաժինը լինելու էր խառը, այսինքն հիմնված չէր լինելու կրոնահամայնքային սկզբունքի վրա: Նա ստեղծվում էր մութասարիֆի կողմից «մոտավորապես 1000 բնակչին 7 ոստիկանի հաշվով»: Այստեղ կար մի նրբություն: Կանոնադրությունը նախատեսում էր, որ հաշվի առնելով ոստիկանա-

կան զորաբաժնի ծանրաբեռնվածությունը, Բեյրութ–Դամասկոս և Սայդա–Տրիպոլի ճանապարհների վրա հսկողությունը պիտի կատարեին Օսմանյան կայսրության զինվորները, բայց նրանք պետք է գտնվեին լիբանանյան մութասարիֆի տրամադրության տակ և կարելի է ասել, որ պետք է նրան ենթարկվեին: Իսկ եթե ստեղծվում էր արտակարգ վիճակ, որը Լեռնալիբանանը չէր կարողանալու սեփական ուժերով հաղթահարել, ապա մութասարիֆը Գործադիր մեծ ժողովի համաձայնությամբ «կարող էր օգնության կարգով պահանջել Սիրիայում գտնվող զորքը», այսինքն օսմանյան բանակային զորամիավորումները: Բայց այդ դեպքում, Լեռնալիբանան ժամանած զորքի հրամանատարը չէր կարող գործել ըստ իր հայեցողության, այլ պարտավոր էր ամեն ինչ նախօրոք համաձայնեցնել Լեռնալիբանանի մութասարիֆի հետ և գործել նրա հրամանով: Իր խնդիրն ավարտելուց հետո, այդ զորքը պետք է հեռանար, երբ որ մութասարիֆն այդ մասին պաշտոնապես տեղյակ պահեր նրա հրամանատարին:

Այս Կանոնադրությունը կամ Օրգանական ստատուտը հրապարակվեց որպես սուլթանի հրովարտակ և այդ մասին պաշտոնապես տեղյակ պահվեցին եվրոպական հինգ մեծ տերությունները:

Թեև Կանոնադրությունից պարզ հետևում էր, որ Լեռնալիբանանի մութասարիֆն ուղղակի ենթակա է Բարձր Դռանը, այնուհանդերձ, մեծ վազիր Ալի փաշան հանդես եկավ հայտարարությամբ, որ Լեռնալիբանանի մութասարիֆը հավասար է Դամասկոսի և Սայդայի էյալաթների կառավարիչներին և ոչ մի դեպքում նրանց ենթակա կամ ստորադաս չէ:

Սահմանվեց, որ մութասարիֆի մշտական նստավայրը և Լեռնալիբանանի մայրաքաղաքը Դեյ ալ–Կամարն է:

Մութասարիֆի կառավարման ժամկետ սահմանվեց երեք տարի, իսկ1864 թ. բարեփոխված Կանոնադրությամբ նրա կառավարման ժամկետը երկարաձգվեց և սահմանվեց հինգ տարի: Հետագայում այդ ժամկետները մի քանի անգամ փոփոխվեցին:

Սահմանվեց նաև, որ գործող մութասարիֆի ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ Ստամբուլը բանակցություններ էր սկսում եվրոպական հինգ մեծ պետությունների հետ հաջորդ մութասարիֆի թեկնածության շուրջը:

Մենք մինչև այժմ օգտագործում էինք մութասարիֆ տերմինն այնպես, ինչպես գրված է Կանոնադրության կամ Օրգանական ստատուտի մեջ: Նա բառացիորեն նշանակում է «փոխանորդ», կամ «փոխարինող»,

սակայն քաղաքական իմաստով նշանակում է փոխարքա, սուլթանի փոխանորդ: Կարծում ենք, որ երեք տերմիններն էլ հավասարապես ճիշտ է օգտագործել, դրան ավելացնելով նաև հայ ընթերցողի համար ավելի հասկանալի կամ ընդունելի «կուսակալը»:

8. Կարապետ–Հարություն Դաուդյանը ինքնավար Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ–կուսակալ

Կանոնադրության կամ օրգանական ստատուտի հաստատումից հետո գլխավորը խնդիրը մնաց Լեռնալիբանանի մութասարիֆի ընտրությունը: Ինչպես նշվեց, կողմերը համաձայնության էին եկել, որ նա պետք է լինի քրիստոնյա, սակայն Կանոնադրության մեջ չնշվի նրա «ոչ տեղաբնիկ» լինելու հանգամանքը: Նրանք միաժամանակ համաձայնվել էին, որ ընտրության ժամանակ նրանք կընտրեն ոչ տեղաբնիկ քրիստոնյայի:

Կանոնադրությունը գործողության մեջ դնելու և նրա կիրառմանը հետևելու նպատակով 1861 թ. հունիսի 22–ին Ստամբուլից Բեյրութ վերադարձավ միջազգային հանձնաժողովը: Բայց միայն հանձնաժողովի անդամները չէին, որ վերադարձան: Նրանց հետ Բեյրութ ժամանեց սուլթանի կողմից նշանակված Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ Կարապետ–Հարություն Դաուդյանը: Նրա թեկնածության ընտրությունը հեշտ չէր անցել, եղել էին վիճաբանություններ: Սակայն հայազգի Դաուդյանի թեկնածության վրա հատկապես պնդել էին Ռուսաստանն ու Պրուսիան, իսկ մյուս պետությունները, ի վերջո, տեղի էին տվել և համաձայնվել նրա թեկնածության հետ: Ստանալով եվրոպական տերությունների համաձայնությունը, սուլթանը, ըստ Կանոնադրության առաջին հոդվածի, Կարապետ–Հարություն Դաուդյանին նշանակեց Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ՝ փոխարքա:

Նա պատմության մեջ մտել է որպես Դաուդ փաշա, երբեմն հիշատակվում է նաև Արքին Դաուդ փաշա հորջորջումով:

Իսկ ո՞վ էր նա, որ արժանացել էր այդպիսի բարձր պաշտոնի և ղեկավարելու էր ըստ էության ինքնավար պետության կարգավիճակ ունեցող մի օտար երկիր:

Նա ծնվել էր 1816 թ. Կոնստանդնուպոլիսում, հայ կաթոլիկ էր: Ստացել էր հիանալի եվրոպական կրթություն, իրավաբան էր, իրավաբանական գործունեության հետ միաժամանակ զբաղվում էր հետազո-

տական աշխատանքներով: Նա հեղինակ էր մի քանի ուսումնասիրությունների, որը նրան իրավունք էր տվել ընտրվել Բեռլինի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, նրան շնորհվել էր Վիեննայի համալսարանի իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան: Մինչև մութասարիֆ նշանակվելը եղել էր դիվանագիտական աշխատանքի Պրուսիայում և Ավստրիայում: Նա վերին աստիճանի զարգացած և կրթված անձնավորություն էր, ծանոթ եվրոպական քաղաքական կյանքին և մշակույթին: Եվ պատահական չէ, որ նա համարվում էր իր ժամանակի Օսմանյան կայսրության ամենալուսավոր դեմքերից մեկը: Նրան բնորոշ էր նաև պետական գործչին այնքան անհրաժեշտ հավասարակշռված մոտեցումը հիմնախնդիրների լուծմանը, պատասխանատվությունն իր վրա վերցնելու կամք և այլն:

Կարապետ Արթին Դաուդյանի նշանակումը Լեռնալիբանանի կուսակալ մեծ բարեբախտություն էր լիբանանցիների համար: Եվ շատ չանցած նա երկիր կառավարելու իր ունակությունները դրսևորեց փայլուն կերպով: Նա իր գլխավոր խնդիրը համարեց հաշտության հաստատումը տարբեր համայնքների միջև, շատ լավ հասկանալով, որ առանց դրա Լիբանանն ապագա չունի: Դաուդ փաշան շնորհիվ իր արդարամտության, անկանխակալ մոտեցումների, համբերատարության և դիվանագիտական մեծ արվեստի, կարողացավ լուծել Լիբանանի արյունալի պատմության կողմից ժառանգություն ստացած մի շարք առանցքային հարցեր, որոնց մեջ առաջին հերթին պետք է նշել զանազան կրոնադավանական համայնքների միջև հաշտության հաստատումը, վերջ տալով արյունալի բախումներին: Նա զանազան ծներով սիրաշահում էր համայնքների հոգևոր և քաղաքացիական առաջնորդներին, Գործադիր մեծ ժողովի անդամներին, նրանց մերձեցնում միմյանց, հաշվի նստում նրանց շահերի ու կարծիքների հետ, մի խոսքով ստեղծում համերաշխության մթնոլորտ, ներշնչում տարբեր համայնքներին պատկանող պաշտոնյաներին, որ նրանք կարևոր պետական գործիչներ են և նրանցից շատ բանով է կախված երկրի ապագան:

Դրական մեծ արձագանք գտավ նրա լավ հաշվարկված մի քայլը: Նա հրաժարվեց նախագահել Գործադիր մեծ ժողովում, որը սահմանված էր Կանոնադրության առաջին հոդվածով, և ստեղծեց Գործադիր մեծ ժողովի նախագահի տեղակալի պաշտոն և այդ պաշտոնում նշանակեց մարոնի համայնքի ներկայացուցչին: Դրանով նա մեծ զիջում էր կատարում մարոնիներին, որոնք մշտապես մեծ հավակնություն են ու-

նեցել ամեն բանում լինել առաջինը, այդ թվում և իշխանության հարցում: Փոխարքա Դաուդյանը գիտակցաբար դիմեց այդ քայլին, միանգամից թույլ տալով Կանոնադրության երկու խախտում: Նախ, ինքը հրաժարվեց Կանոնադրությամբ նախատեսված իր մի շատ կարևոր պաշտոնից, և, երկրորդ, ստեղծեց Գործադիր մեծ ժողովի նախագահի տեղակալի պաշտոն, որը Կանոնադրությամբ նախատեսված չէր և համաձայնեցված չէր Բարձր Դռան հետ: Նրա այդ քայլն իրեն արդարացրեց, գոնե սկզբնական շրջանում, քանի որ մարոնիները որոշ չափով զսպեցին իրենց հակադաուդյան զգացմունքները:

Նրա կառավարման տարիներին ընդհանուր առմամբ խաղաղություն էր տիրում, երկրում հաստատվել էր կարգ ու կանոն, կյանքը դարձել էր անվտանգ, վերջ էր տրվել կամայականություններին, այդ թվում և հարկահավաքի բնագավառում: Լինելով մասնագիտությամբ իրավաբան, կուսակալ Դաուդյանն արտակարգ ուշադրություն էր դարձնում օրենքների հետևողական կիրառմանը և երկրամասում օրինականության հաստատմանը:

Այդ բոլորի հետևանքով Լեռնալիբանանում մթնոլորտն առողջացավ, թշնամությունն աստիճանաբար սկսեց իր տեղը զիջել համերաշխությանն ու համագործակցությանը, որն աննախընթաց նպաստավոր պայմաններ ստեղծեց տնտեսության վերելքի, առևտրի, արհեստների և գյուղատնտեսության զարգացման համար:

Սակայն թող այն տպավորությունը չստացվի, թե ամեն ինչ ընթանում էր սահուն, չկային դժվարություններ և խոչընդոտներ նրա ճանապարհին: Կային, իհարկե, անգամ թշնամություն, հատկապես Լեռնալիբանանի մարոնի հատվածի նախկին կայմակամ Յուսուֆ Քարամի կողմից, որը չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ փոխարքայությունը տրված է մի հայի: Նա անգամ փորձեց ապստամբել և քիչ գլխացավանք չպատճառեց հայազգի կուսակալին:

Արթին Դաուդյանը հիմնականում կարողացավ լուծել իր առջև կանգնած դժվարագույն խնդիրները: Ուստի և, երբ 1864 թ. լրացավ նրա պաշտոնավարության ժամկետը, ապա եվրոպական հինգ պետությունները և Բարձր Դուռը միաձայն որոշեցին Դաուդ փաշային վերահաստատել Լեռնալիբանանի փոխարքայի պաշտոնում, այս անգամ արդեն հինգ տարի ժամանակով, քանի որ Կանոնադրության մեջ1864 թ. կատարված փոփոխության համաձայն, փոխարքայի պաշտոնավարության ժամկետը 3 տարվա փոխարեն սահմանվեց 5 տարի:

Կարապետ–Հարություն Դաուդյանը որպես Լեռնալիբանանի փոխարքա պաշտոնավարեց 1861–1868 թթ.: Նա հրաժարական տվեց իր պաշտոնավարության ժամկետն ավարտվելուց մի փոքր շուտ, հոգնած ու զզված Յուսուֆ Քարամի և նրա շուրջը համախմբված որոշ մարոնի ղեկավարների դավերից:

Նրա պաշտոնավարության ժամանակաշրջանը Լիբանանի պատմության մեջ մտել է որպես ամենահետաքրքիր ժամանակաշրջաններից մեկը, որի բնորոշ գծերն էին խաղաղությունը, անդորրությունը, հաշտությունը կրոնադավանական տարբեր համայնքների միջև, համագործակցության և հաշտ ապրելու գաղափարների տարածումը բնակչության մեջ, տնտեսական նշանակալի վերելքը: Նա այդպիսի ժառանգություն թողեց իր հաջորդ յոթ փոխարքաներին:

Մասնագետների մեծ մասը, որ ուսումնասիրել է Լիբանանի նշված ժամանակահատվածի պատմությունը, գովեստով է խուսում կուսակալ Դաուդյանի մասին և բարձր գնահատում նրա գործունեությունը կուսակալի պաշտոնում:

Լիբանանի պատմության հմուտ մասնագետ, բազմաթիվ աշխատությունների հեղինակ Քամալ Սալիբին նրան համարում է Օսմանյան կայսրության առավել ընդունակ գործիչներից մեկը: Նրան բնութագրելով որպես ամենալուսավորյալ պաշտոնյաներից մեկը, լիբանանցի պատմաբանն իր «Լիբանանի պատմության ուրվագծեր» աշխատության մեջ այն կարծիքն է արտահայտում, որ նրա ընտրությունը միանգամայն ճիշտ էր և «Հազիվ թե կարելի լիներ ավելի հաջող ընտրություն կատարել»: Նման բարձր կարծիք է հայտնում արաբական երկրների, այդ թվում և Լիբանանի ու Սիրիայի ճանաչված մասնագետ Ֆիլիպ Հիթթին, որն այդ հարցին անդրադարձել է իր եկու աշխատություններում: Պատմաբանն իր «Արաբների պատմությունը» ստվարածավալ հատորում, հատկապես ընդգծում է հայազգի կուսակալի գործունեությունը լուսավորության և կրթության բնագավառում, մատնանշելով, որ առաջին մութասարիֆի անվան հետ է կապված 1862 թ. հիմնված տղաների քոլլեջը Աբայհում, որը գոյություն ունի մինչև մեր օրերը և դարձել է Դրուզական ինստիտուտ: Պատմաբանն իր մյուս՝ «Սիրիայի՝ ներառյալ նաև Լիբանանի և Պաղեստինի պատմությունը» ուսումնասիրության մեջ նրան բնութագրում է «Արտակարգ ընդունակ մարդ»: Նույնպիսի բարձր գնահատականների են արժանացրել հայազգի կուսակալին և նրա գործունեությունը ֆրանսիացի հեղինակ Հ. Լամմենզը, որն ա-

ռանձնացնում է նրա կարևոր դերակատարումը Լեռնալիբանանի տնտեսական և մշակութային վերածնունդի մեջ: Իսկ Թարբինը շեշտում է Արթին Դաուդյանի հոգածությունն իրեն վստահված երկրի նկատմամբ, այն համարելով կատարյալ: Որոշ հեղինակներ մատնանշում են, որ նրա կառավարման տարիներին Լեռնալիբանանը կատարյալ անկախ երկիր էր: Նրա մասին գովեստով են խոսում նաև Ա. Կրիմսկին իր «Արաբական նոր գրականության պատմությունը XIX դ.–XX դարի սկզբում», Ն. Դահդահը «Լիբանանյան ազգի էվոլյուցիան» աշխատություններում և այլ հեղինակներ:

Կան, իհարկե, նաև հեղինակներ, որոնք անդրադառնալով Լիբանանի մութասարիֆության շրջանի պատմությանը, անգամ չեն հիշատակում նրա անունը, կարծես թե այդ երկրամասը ղեկավար չի ունեցել: Այդպես է վարվում խորհրդային պատմաբան Վ. Լուցկին, որի «Արաբական երկրների նոր պատմությունը» աշխատությունը ողողված է բազմաթիվ անուններով, այդ թվում տարբեր երկրորդական ու անարժան շեյխերի, ցեղապետերի, կայմակամների, սանջաքբեյերի և այլ ոչ նշանավոր մարդկանց անուններով, որոնք եթե չհիշատակվեին, ապա գիրքը դրանից ոչինչ չէր կորցնի, իսկ մի այնպիսի դեմք, ինչպիսին Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ Կարապետ–Հարություն Դաուդյանը չի արժանացել անգամ սոսկ հիշատակման: Կարծում ենք, որ դրանից նրա գիրքը տուժել է միայն:

Կան նաև հեղինակներ, որոնք մեղանչելով ճշմարտության առջև, ոչ բարյացակամ մոտեցում ունեն առաջին կուսակալի գործունեության հանդեպ: Դրանք եվրոպական առանձին հեղինակներ են, որոնք ղեկավարվելով իրենց երկրի շահերով, համակիր չեն եղել կուսակալի ձգտմանը, որքան հնարավոր է անկախ քաղաքականություն վարել և նպաստել Լեռնալիբանանի վերելքին:

Բայց կարևորը, այդուհանդերձ, արաբ հեղինակներն են, որոնք, ինչպես նշեցինք, շատ բարձր են գնահատում Կարապետ–Հարություն Դաուդյանի գործունեությունը:

Կուսակալի պաշտոնում Արթին Դաուդյանին փոխարինեց դարձյալ հայ կաթոլիկ Ֆրանկո Նասրին, որը Հալեբից էր: Նա լավ գիտեր Լիբանանի խնդիրները և ծանոթ էր նրանում տիրող իրավիճակին: Երբ Ֆուադ փաշան սուլթանի հանձնարարությամբ 1840 թ. հուլիսի 17–ին ժամանեց Բեյրութ, ապա նրան ուղեկցողների մեջ կային մի շարք հայեր, որոնց թվում էր նաև Ֆրանկո Նասրին, որին հանձնարարված էր ա-

ղետի ենթարկված և տուժած քրիստոնյաներին օգնություն կազմակերպելը և գաղթականների վերաբնակեցումը: Այդ խնդիրները տվյալ պահին ամենակարևորներից էին, որի լուծումից շատ բանով կախված էր Լիբանանի հարցի կարգավորումը:

Ֆրանկո Նասրին Լեռնալիբանանի կուսակալի պաշտոնը զբաղեցրեց1868 թ. մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 1872 թ.:

Լեռնալիբանանն ընդհանուր հաշվով ունեցավ ութ կուսակալ, որոնցից չորսը հայեր էին, այդ թվում ոչ միայն առաջինը, այլև վերջինը՝ Հովհաննես Կույումջյանը: Հատկանշական է, որ նրա թեկնածությունն առաջադրել էր Թուրքիայի արտաքին գործերի նախարար Գ Նորատունկյանը: Հ. Կույումջյանի նախորդը նույնպես հայ էր, Ֆրանքո Նասրի որդի Յուսուֆ Նասրին: Իսկ մնացած չորսը եղել են իտալացի, ալբանացի, ֆրանսիացի և լեհացի:

Լեռնալիբանանի մութասարիֆությունը գոյություն ունեցավ մինչև 1915 թ., երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օգտվելով պատերազմի հետևանքով ստեղծված նոր իրադրությունից, երբ Թուրքիան և Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը հայտնվեցին թշնամի ճամբարներում, սուլթանի ֆերմանով վերջ տրվեց Լեռնալիբանանի ինքնավար կարգավիճակին և ըստ այդմ վերացավ նաև մութասարիֆի պաշտոնը:

Դրանով փակվեց Լիբանանի պատմության մի կարևոր էջը և Լիբանանը թևակոխեց իր զարգացման նոր փուլը:

VIII. ԹԱՆԶԻՄԱԹԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1. Սուլթան Աբդուլ Մաջիդը ակամա ռեֆորմատոր

Օսմանյան կայսրությունն ապրում էր խոր ճգնաժամ, որը համակարգային բնույթ էր կրում: Այն համակել էր բոլոր ոլորտները՝ կառավարման, վարչական, տնտեսական, ռազմական, մշակութային–կրթական, ինչպես նաև արտաքին քաղաքականության: Կայսրությունը դժվար կառավարելի էր դարձել, խիստ թուլացել էր կենտրոնի հսկողությունը ծայրագավառների վրա, որտեղ օրեցօր ուժեղանում էին անկախական շարժումները, հակաօսմանյան ելույթները և ապստամբություն-

ները: Ստամբուլի համար ավելի ու ավելի էր դժվարանում այդ ապստամբությունները ճնշել և հպատակ ժողովուրդներին իր լծի ներքո պահել: Հին մեթոդներով այլևս հնարավոր չէր պահպանել կայսրության ամբողջականությունը:

Հետամնաց Օսմանյան կայսրությունը, ապավինելով հին մեթոդներին, տնտեսավարման իր դարն ապրած եղանակներին, չէր կարողանում հաղթահարել տնտեսական հետամնացությունը, որն ավելի տեսանելի էր դառնում Եվրոպայում իրականացվող արդյունաբերական հեղափոխության ընդհանուր համապատկերում: Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային հետամնացությունը եվրոպական երկրներից ոչ թե կրճատվում, այլ ավելի էր մեծանում և խորանում:

Թուրքիայում կային ուժեր, հատկապես նոր ձևավորվող և դեռևս թույլ ազգային բուրժուազիան, որոնք հասկանում էին, որ Օսմանյան կայսրության գոյությունը հարցականի տակ է դրվում, եթե չձեռնարկվեն արտակարգ միջոցներ: Դա հասկանում էին նաև կառավարող վերնախավի առանձին հեռատես գործիչներ:

Քայքայվող կայսրությունը փրկելու համար օսմանյան կառավարողները ստիպված էին դիմել բարեփոխումների:

Այդ բարեփոխումները ծրագրվեցին սուլթանական, ֆեոդալական, բյուրոկրատական կառավարող վերնախավի ընդերքում, նրա ներկայացուցիչների կողմից, որն իր յուրահատուկ կնիքը դրեց բարեփոխումների բնույթի, ծավալների և տեմպերի վրա:

Բարեփոխումները կիրառվեցին երկու փուլով: Առաջին փուլի մասին պաշտոնապես հայտարարվեց 1839 թ. նոյեմբերի 3–ին սուլթան Աբդուլ Մաջիդի կողմից՝ նրա Վարդերի պալատում՝ Գյուլհանեում: Այդ պատճառով էլ նա ստացավ Գյուլհանեի Հատտի–շերիֆ անվանումը: Դա բարեփոխումների կամ թանզիմաթի առաջին փուլն էր, որը սկսվեց սուլթանական հրովարտակով: Իսկ երկրորդ փուլը սկսվեց 1856 թ. փետրվարի 18–ին՝ կայսերական նոր գրով՝ Հատտի հումայունով, եվրոպական պետությունների պարտադրանքով:

Սուլթանական հրովարտակի նախաբանում փորձ էր արվում բացահայտել Օսմանյան կայսրության ճգնաժամի մեջ հայտնվելու պատճառները: Նրանում ասված էր. «Բոլորին հայտնի է, որ Օսմանյան կայսրության ծագման օրվանից, Ղուրանի փառավոր պատգամները և շարիաթի օրենքները կիրառվում էին կատարյալ կերպով: Դրա համար էլ

Օսմանյան կայսրության ուժն ու հզորությունը, բոլոր հպատակների բարեկեցությունը հասել էր գերագույն աստիճանի:

Բայց վերջին 150 տարիների ընթացքում երկարատև պատերազմների և զանազան դեպքերի հետևանքով դադարեցին հարգվել մահմեդականության սրբազան օրենքները և այդ օրենքների հիման վրա ստեղծված կանոնները, այդ պատճառով թուլացավ [Օսմանյան կայսրության] վաղեմի հզորությունը և վատթարացավ [ժողովրդի] բարեկեցությունը: Եվ այն երկիրը, որը չի կառավարվում սրբազան օրենքներով, բնական է, որ կորցնելու է իր հզորությունը» (Տես, Ա. Փափազյան, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ–մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թթ.), Երևան, 2002):

Այսպես ուրեմն, Օսմանյան կայսրության ղեկավարները կայսրության թուլացումը, ռազմական, քաղաքական և տնտեսական անկման պատճառները տեսնում էին ոչ թե գոյություն ունեցող և իր դարն ապրած ֆեոդալական, միլիտարիստական համակարգի պահպանման մեջ, ոչ թե բռնությունների, հալածանքների և ջարդերի քաղաքականության մեջ, այլ Կորանի հիմնադրույթներից և շարիաթի օրենքներից շեղվելու մեջ:

Ելնելով այդ կեղծ հիմնադրույթից, բարեփոխումների հեղինակները գտնում էին, որ «Օսմանյան տերության աշխարհագրական դիրքը, հողի բարեբերությունը, բնակչության ընդունակությունն ու կարողությունը, հանգեցնում են այն համոզման, որ Աստծո ողորմածությամբ անհրաժեշտ միջոցառումներ նախաձեռնելու դեպքում, կարելի է 5–10 տարվա ընթացքում հասնել ցանկալի արդյունքների»:

Ինչպես տեսնում ենք, դարձյալ ոչ մի խոսք կայսրությունում գոյություն ունեցող և հոգևարքի մեջ գտնվող պետական–քաղաքական և սոցիալ–տնտեսական հարաբերությունների կամ նրանց փոփոխությունների մասին:

Իսկ ի՞նչ էր առաջարկում սուլթանը: «Այսուհետև, հույս դնելով Ամենաբարձրյալի և մարգարեի օգնության վրա, մենք նպատակահարմար գտանք ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ և [հրապարակել] նոր օրենքներ, որպեսզի բարելավվի Օսմանյան երկրների կառավարումը:

Այս օրենքների հիմնական դրույթներն են լինելու.

1) Կյանքի, պատվի, ունեցվածքի ապահովումը:

2) Հարկերի համահավասար բաշխումն ու գանձումը:

3) Զորակոչիկների ճիշտ հավաքագրումը և ծառայության ժամկետի ճշտումը»:

Այնուհետև ներկայացված երեք հիմնարար կետերի մասին տրվում էին լրացուցիչ հավելումներ, որոնք բացատրության բնույթ էին կրում: Մասնավորապես, առաջին կետի համար ասվում էր, որ «Եվ քանի որ Փադիշահի շնորհած հրովարտակը վերաբերում է տերության բոլոր հպատակներին՝ անկախ նրանց դավանանքից, ուստի կյանքի, պատվի և ունեցվածքի խնդիրը, առանց բացառության, հավասարապես տարածվելու է բոլորի վրա»:

«Թանզիմաթի խեյրիյե», այսինքն «բարերար ռեֆորմների» մասին սուլթանական որոշումները ոչ միայն ուրախությամբ չընդունվեցին բուն Թուրքիայում, այլև կառավարող ֆեոդալական վերնախավի և բյուրոկրատական ապարատի խոր դժգոհությունն առաջացրին, որոնց բարեկեցությունը և իշխանությունը հիմնված էր սեփականատիրական և կառավարման հին, ավանդական ձևերի վրա: Բայց ամենահետաքրքիրն այն էր, որ ինքը՝ սուլթան Աբդել Մաջիդը, որը ստորագրել էր ռեֆորմների վերաբերյալ երկու հրովարտակներն էլ՝ «Հատտի–շերիֆը» և «Հատտի հումայունը», ինքը նույնպես դժգոհ էր հռչակված բարեփոխումներից, որը նա չէր թաքցնում հատկապես իր մերձավոր պալատականներից, նրանց հետ ունեցած զրույցների ժամանակ: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ նա հետևողական չէր իր իսկ ստորագրած հրովարտակներում ամրագրված նպատակների կենսագործման հարցում, աշխատում էր զանազան խոչընդոտներ հարուցել, ձգձգել նրանց կիրառումը և այլն: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ թանզիմաթի հիմնադրույթների մեծ մասը մնաց թղթի վրա: Եվ այդ հարցում մասնագետները միակարծիք են:

Ահա թե ինչու, սուլթան Աբդուլ Մեջիդին շատ սազական եղավ «ակամա բարենորոգիչ» մակդիրը:

2. Թանզիմաթի կիրառման փորձերը Սիրիայում և Իրաքում

Բարենորոգումների քաղաքականությունը շատ թե քիչ շոշափելի արդյունքներ տվեց իշխանության բաժանման, բանակի վերակառուցման և դատավարության բնագավառներում:

Թուրքական բանակը, ռեֆորմից հետո, բաղկացած էր վեց կորպուսից, որոնցից երկուսը տեղակայվեցին արաբական երկրներում: Հինգերորդ կորպուսը, որը ստացավ «Արաբստան օրդուսի», այսինքն Արաբական բանակ կամ զորք անվանումը, տեղակայվեց Սիրիայում և Պաղեստինում, իսկ նրա շտաբը՝ Դամասկոսում: Վեցերորդ կորպուսը տեղակայվեց Իրաքում, իսկ նրա շտաբը հանգրվանեց Բաղդադում:

Այն հանգամանքը, որ վեց կորպուսներից երկուսը տեղակայվեցին Բալկաններում, երկուսը Փոքր Ասիայում, իսկ երկուսը՝ արաբական (արևելյան) երկրներում, խոսում էր այն կարևորության մասին, որ արաբական երկրները շարունակում էին գրավել Օսմանյան կայսրության քաղաքականության մեջ: Նրանց նշանակությունն առանձնապես բարձրացավ այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրությունը կորուստներ ունեցավ Բալկաններում (Հունաստան, Սերբիա), իսկ Հյուսիսային Աֆրիկայում, ներառյալ Եգիպտոսը և Սուդանը, նրա դիրքերը խիստ թուլացել էին, այստեղ նա համարյա ազդեցություն չուներ և նրա տիրապետությունը ձևական էր: Այսպիսի պայմաններում օսմանյան պետության գոյությունը որպես կայսրություն, նրա կայսրություն կոչվելու իրավունքն ավելի շատ պայմանավորված էր նրա կազմում Արաբական Արևելքի երկրների առկայությամբ: Ահա թե ինչու, Ստամբուլը որոշեց իր վեց կորպուսներից երկուսը տեղակայել Սիրիայում, Պաղեստինում և Իրաքում, նպատակ ունենալով բոլոր միջոցներով արաբական երկրները պահել իր տիրապետության տակ:

Սիրիայում թանզիմաթի ունեցած արձագանքներից պետք է նշել նաև նահանգապետ–փաշաների ֆունկցիաների ճշգրտումը: Մինչև թանզիմաթը, Սիրիայի և կայսրության մյուս մասերի էյալաթների փաշաները իրականացնում էին վարչա–կառավարական, ֆինանսա–տնտեսական և ռազմական ֆունկցիաներ: Թանզիմաթի դրույթների համաձայն փաշան զրկվեց ռազմական և ֆինանսական իրավունքներից: Ֆինանսներն անցան դրա համար ստեղծված պաշտոնյաների՝ դեֆթերդարների տնօրինությանը, որոնք անմիջապես ենթարկվում էին ֆինասների նախարարությանը:

Իսկ Սիրիայում գտնվող հինգերորդ կորպուսի հրամանատարը՝ մուշիրը, և նրան ենթակա ռազմական ուժերը, ոչ մի առնչություն չունեին փաշայի հետ, և անմիջապես ենթարկվում էին Ստամբուլում նստած ռազմական նախարարին:

Նույնատիպ փոփոխություններ, բնականաբար, տեղի ունեցան նաև Իրաքում:

Թանզիմաթի առաջին փուլում որոշ փոփոխություններ տեղի ունեցան պատմական Սիրիայի վարչատ–արածքային կառուցվածքում: 1841 թ. Տրիպոլիի և Սայդայի փաշայությունները միավորվեցին մեկ էյալաթի մեջ, որի կենտրոնը դարձավ Բեյրութը: Փաստորեն Լիբանանի այն տարածքները, որոնք չէին մտնում Լեռնալիբանանի ինքնավար մարզի՝ մութասարիֆության մեջ, ծայր հյուսիսից՝ Տրիպոլիից, մինչև հարավ՝ Սայդա, միավորվեցին մեկ վարչա–տարածքային միավորի՝ Բեյրութի նահանգի մեջ: Իսկ այն տարածքը, որը սովորաբար կոչվում էր Պաղեստին, կազմավորվեց որպես Երուսաղեմի սանջաք, որն անմիջապես ենթակա էր Բեյրութի նահանգապետին:

Թանզիմաթը Սիրիայում և արաբական մյուս երկրներում տնտեսական հարաբերությունների ոլորտը չներառավ: Թանզիմաթի ժամանակ իրականացված փոփոխությունները խորքային, արմատական բնույթ չէին կրում: Դրանք իրականացվում էին կիսատ–պռատ և մակերեսային էին, ուստի և Սիրիայում, Պաղեստինում և Իրաքում չվերացրին ավատատիրությունը: Ֆեոդալ–հողատերերը և շեյխերն ամեն կերպ դիմադրում էին նորամուծություններին, որոնք Ստամբուլն առանց այդ էլ մի առանձին եռանդով չէին կենսագործում:

Սակայն Սիրիայի և Պաղեստինի հասարակ գյուղացիությունը միամտորեն թանզիմաթն ընկալեց որպես ազատություն ձեռք բերելու հնարավորություն: Այդ հողի վրա տեղի ունեցան մի շարք հակաֆեոդալական ապստամբություններ, ինչպես Հաուրանիի 1852–1853 թթ. և Հալեբի 1859 թ. ապստամբությունները, որոնք դաժանորեն ճնշվեցին:

Բարենորոգումներն ավելի դանդաղ էին ընթանում Իրաքում: Փաստորեն այստեղ 1839 թ., երբ ընդունվեց Հատտի շերիֆը, մինչև 1848 թթ., ոչինչ չարվեց, կատարվեցին լոկ աննշան տեղաշարժեր: Միայն 1848 թ. Իրաքում զինվորական իշխանությունն անջատվեց քաղաքացիականից և ստեղծվեցին մի քանի մասնագիտական վարչություններ:

Բարենորոգումներն Իրաքում համեմատաբար մեծ ծավալ ստացան 1860 թ., երբ Բաղդադի նահանգապետ նշանակվեց Միդհատ փաշան: Նա Օսմանյան կայսրության այն հազվագյուտ պետական գործիչներից էր, որն աչքի էր ընկնում իր լայնախոհությամբ և ըմբռնում բարենորոգումների անհրաժեշտությունը Օսմանյան կայսրությունը կործա-

նումից փրկելու համար: Միդհատ փաշան իր առաքելությունն Իրաքում տեսնում էր թուրքական տիրապետությունն այստեղ ամրապնդելու մեջ:

Նրա ջանքերով Իրաքում մեծ ծավալներ ընդունեց ճանապարհների շինարարությունը, դատական իշխանություններն անջատվեցին քաղաքացիականից, ստեղծվեցին տեղական՝ կառավարման՝ մունիցիպալ խորհուրդներ, բացվեցին մի շարք դպրոցներ և այլն: Ցեղապետերին և ֆեոդալական ավագանուն իր կողմը գրավելու և երկրում խաղաղություն հաստատելու նպատակով, նա պետական հողերը բաժանեց նրանց, քայլեր ձեռնարկեց բեդվիններ նստակյաց դարձնելու ուղղությամբ և այլն:

Բայց թանզիմաթը չլուծեց արաբական երկրների սոցիալ–տնտեսական և հասարակական կառուցվածքում արմատական փոփոխություններ կատարելու, բնակչության տնտեսական վիճակը բարելավելու, մարդկանց անվտանգության, նրանց անձի ու գույքի ապահովության հիմնախնդիրները: Էլ չենք խոսում այն մասին, որ մի շարք արաբական երկրներ, ինչպես Եգիպտոսը, Սուդանը, Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն, ընդհանրապես դուրս մնացին այդ գործընթացից:

IX. ՆԱՀԴԱ

1. Նահդայի առաջացման նախադրյալները և բնույթը: Նահդայի առաջին՝ գրական–մշակութային փուլը

XIX դարը արաբների պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հարուստ պատմական իրադարձություններով, պատմական որոշ ժամանակահատվածում Եգիպտոսի Մերձավոր Արևելքում ամենաուժեղ և զարգացած պետությունը դառնալու իրողությամբ, Լիբանանի ինքնավար կուսակալության հաստատման փաստով, հակաօսմանյան տրամադրությունների ուժեղացումով և ապստամբական շարժումների վերելքով, այլև լուրջ տեղաշարժերով ազգային մշակույթի և ինքնագիտակցության աննախընթաց զարգացումով:

XIX դարը արաբների պատմության մեջ մտել է նաև որպես արաբական Նահդայի՝ արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի արթնացման կամ զարթոնքի դարաշրջան: Նահդա արա-

բերեն բառը հենց այդպիսի բովանդակություն ունի՝ զարթոնք, վերածնունդ, բարձրացում:

Նահդան նախապատրաստվել էր շնորհիվ երկու կարևոր գործոնների:

Առաջին, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, թեկուզ և դանդաղ, բայց, այդուհանդերձ, որոշ սոցիալ–տնտեսական տեղաշարժեր էին տեղի ունենում արաբական երկրներում, առաջին հերթին, Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում: Մուհամմադ Ալիի ռեֆորմները, սկզբում Եգիպտոսում, ապա նաև Սիրիայում և Պաղեստինում, փոփոխությունները Լիբանանում, հող նախապատրաստեցին սոցիալ–քաղաքական նոր երևույթների առաջացման և ազգային–քաղաքական նոր գաղափարների հրապարակ իջնելու համար: Սկսել էր ձևավորվել արաբական առևտրական բուրժուազիայի թեկուզ և ոչ մեծ շերտ, բայց, այդուհանդերձ, սոցիալական նոր խավ, որը նոր պահանջներ էր առաջադրում և նոր գաղափարների ու մշակույթի կարիք ուներ:

Իր դերը խաղաց նաև եվրոպական կրթություն ստացած նոր խավի ձևավորումը՝ շնորհիվ Մուհամմադ Ալիի քաղաքականության, որը արաբ երիտասարդներին եվրոպական երկրներ ուսումնառության էր ուղարկում: Վերադառնալով հայրենիք, նրանք իրենց հետ բերում էին ոչ միայն ակադեմիական գիտելիքներ, այլև նոր, լուսավոր գաղափարներ ու մշակույթ, դառնալով նրանց տարածողները և ջերմեռանդ հետևորդները արաբական իրականության մեջ:

Երկրորդ, եվրոպական լուսավորական գաղափարների թափանցումը արաբական երկրներ: Շփումները եվրոպական երկրների հետ, եվրոպական կապիտալի ու միսիոներների ներթափանցումը Արաբական Արևելք, այս վերջիններիս ակտիվ և լայնածավալ գործունեությունը, եվրոպական զանազան ընկերությունների ու ֆիրմաների հիմնումը և այլն, այս բոլորը ներազդում էր արաբների մտածողության վրա, բացում նրանց աչքերը, նրանց հանում դարավոր թմբիրից և ընկալուչ դարձնում եվրոպական գաղափարների ու արժեքների նկատմամբ:

Այս հողի վրա արաբական մտավորականության մոտ ուժեղացավ նոր գաղափարների որոնումը, ձգտումը դուրս պրծնել արաբական երկրներում տիրող հեղձուցիչ մթնոլորտից, ինչպես նաև մուսուլմանական կաշկանդող կապանքներից:

Նահդան դարձավ այդ մտայնության արտահայտությունը և հայտնվեց որպես արաբական իրականությունը նոր գաղափարական հիմքերի վրա վերակառուցելու շարժում:

Այդպիսով, նահդան, լինելով արաբների ազգային ինքնագիտակցության արտահայտման նոր ձև, երկու կարևոր նպատակներ էր հետապնդում: Առաջին, արաբների մոտ սեր արթնացնել իրենց պատմական, հոգևոր–մշակութային արժեքների՝ արաբական լեզվի, գրականության, գիտության, պատմության հերոսական էջերի և հայրենիքի նկատմամբ, խթանել արաբական մշակույթի զարգացումը և կրթական գործը: Երկրորդ, արաբական հասարակությանը ծանոթացնել եվրոպական մշակույթի և առաջավոր հասարակական–գաղափարական մտքի հետ և օգտագործել այն պայքարելու արաբական իրականության մեջ տիրապետող հետամնացության, խավարամոլության, թուրքական բռնատիրության դեմ, նպաստել լուսավորության տարածմանը, ֆեոդալական կապանքներից ազատագրվելուն և արաբական երկրների անկախության նվաճմանը:

Նահդայի հարցերը գտնվել և շարունակում են գտնվել արաբագետների ուշադրության կենտրոնում: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ նա իր էությամբ, իր բնույթով, մի կողմից, եզակի, իսկ մյուս կողմից՝ արտակարգ բարդ ու խճողված երևույթ է: Նրա համակողմանի և խորքային ուսումնասիրության, նրա էության բացահայտման համար պահանջվում են տարբեր երկրների մասնագետների ջանքեր, երկարատև ու քրտնաջան աշխատանք, լեզուների իմացություն և աղբյուրների մատչելիություն հետազոտողի համար:

Այս թեմային նվիրված հետաքրքիր աշխատություններ են գրել Ջ. Անտոնիուսը, Նաջիբ Ազուրին, Ի. Կրաչկովսկին, Ա. Կրիմսկին, Ջ. Լևինը, Ն. Կոտլովը, Ա. Դոլինան, Ե. Նաջարյանը, տողերիս հեղինակը և այլ ուսումնասիրողներ:

Ծանոթությունն այդ աշխատությունների հետ ցույց է տալիս, որ նրանցից ոմանք նահդան դիտում են բացառապես գրական–մշակութային երևույթ: Այդ տեսակետի կողմնակիցներ են Ի. Կրաչկովսկին, Ա. Կրիմսկին, Ա. Դոլինան և ուրիշներ: Հետագայում, նահդա հասկացողության շրջանակներն ընդլայնեցին Ջ. Լևինը և Ն. Կոտլովը: Նրանց կարծիքով, նահդան իր մեջ, հետագա տարիներին, ներառել է նաև հասարակական–քաղաքական, անգամ ազգային–ազատագրական շարժման հարցեր: Ե. Նաջարյանը նույնպես ցուցաբերել է ունիվերսալ մոտեցում

և նահդայի էությունը բացահայտելիս, կուլտուր–լուսավորականի հետ միասին հաշվի է առել նաև սոցիալ–տնտեսական և հասարակական–քաղաքական ասպեկտները:

Մեր կարծքով, անհնար է ճիշտ գնահատական տալ նահդային կամ նահդայական շարժմանը, կենտրոնանալով միայն գրական–մշակութային հարցերի վրա: Հարկավ, գրական–մշակութային ասպեկտը, թերևս, նահդայի ամենահզոր շիթն էր, ամենաուժեղ կողմը, մանավանդ նրա սկզբնավորման փուլում, XIX դարի 40–60–ական թվականներին: Այդ միտումները գերակայող էին նահդայական շարժման վաղորդայնին: Սակայն, հետագայում, 70–ականների վերջերին և 80–ականների սկզբներին, նահդայական շարժման մեջ ուժեղանում է քաղաքական ասպեկտը և առաջին պլանի վրա մղվում քաղաքական պայքարի, հայրենիքի ազատության ու ազգային անկախության խնդիրները: Հանուն ազատության, անկախության և հավասարության հանդես են գալիս նահդայի այնպիսի ականավոր դեմքեր, ինչպես Ադիբ Իսհակը, Իբրահիմ Յազիջին և ուրիշ գործիչներ:

Նահդայական շարժման կարևոր կենտրոններ էին Եգիպտոսը, Սիրիան և Լիբանանը, որտեղ բարեփոխումների շնորհիվ ավելի շոշափելի տեղաշարժեր էին կատարվել: Նրանք մտավոր ավելի մեծ ներուժ ունեին, քան արաբական մյուս երկրները, ինչպես Իրաքը կամ Արաբիան: Ակադեմիկոս Ի. Կրաչկովսկին այն կարծիքն է արտահայտել, որ Իրաքը նահդայական շարժման մեջ ոտք դրեց Եգիպտոսից և Սիրիայից մի դար ուշ, իսկ ինչ վերաբերում է Արաբիային, ապա նա շատ էր հեռու նահդայական գործընթացներից, քանի որ այնտեղ միջնադարն էր տիրում: Այս հարցում ավելի կտրուկ է Ֆ. Հիթթին, որը նշում է, թե այս մշակութային գործընթացում «Իրաքը ոչ մի նշանակալի բաժին չուներ»:

Ուրեմն, նահդայական շարժումը ծնավորվեց, արմատներ գցեց և զարգացավ, անցնելով երկու փուլերով, Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում, որոնք դարձել էին Մերձավոր Արևելքի արաբական երկրների առաջատարները քաղաքական, սոցիալ–տնտեսական և մշակութային բնագավառներում:

Նահդայի ամենաերևելի դեմքերն էին Բուտրուս ալ–Բուստանին, Նասիֆ ալ–Յազիջին, Իբրահիմ Յազիջին, Ամին Շմայիլը, Միքայել Մշակկան, Խալիլ ալ–Խուրին, Սուլեյման Բուստանին, Ֆրանսիս Ֆաթհալլահ Մարրաշը, Յուսուֆ ալ–Ասիրը, Սելիմ ալ–Բուստանին, Ֆարիս Նիմրը, Նաջիբ ալ–Հադդադը, Ադիբ Իսհակը, Ոզգալլահ Հասունին, Ամին

առ–Ռեյհանին, Յակուբ Սարրուֆը, Նոֆալ Նամաթալլահ ատ–Տարաբ-լուսին և ուրիշներ:

Նահդայական առաջին սերնդի ջանքերով բացվեցին բազմաթիվ ազգային դպրոցներ Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում: Ուշագրավն այն էր, որ XIX դարում բացվեցին դպրոցներ նաև աղջիկների համար: Հիմնվեցին մի շարք գիտական և գրական ընկերություններ: 1847 թ. Բեյրութում հիմնվեց «Գիտության տարածման և արվեստի զարգացման Սիրիական ընկերությունը», 1857 թ. դարձյալ Բեյրութում հիմնվեց «Սիրիական գիտական ընկերությունը», 1882 թ.՝ Արևելյան ակադեմիան և այլն, որոնք կարևոր դեր խաղացին Սիրիայում և Լիբանանում արաբական հասարակական մտքի զարգացման գործում:

Այդ ընկերություններում քննարկվում էին ազգային մշակույթի, արաբերեն լեզվի գործառույթի, արաբական գրականության և մշակութային կյանքի այլ հարցեր: Կարևոր նշանակություն ունեցավ 1866 թ. Սիրիական բողոքական կոլլեջի հիմնումը, որի վրա հետագայում կազմավորվեց մինչև օրս գործող Բեյրութի Ամերիկյան Համալսարանը: Իսկ 1874 թ. դարձյալ Բեյրութում հիմնվեց ֆրանսիական Սեն–Ժոզեֆ համալսարանը: 1861 թ. Կահիրեում բացվեց աղջիկների ամերիկյան կոլլեջ, իսկ 1865 թ.՝ ամերիկյան կոլլեջ եգիպտական ոչ մեծ Ասյուտ քաղաքում: Նշենք նաև, որ Կահիրեում հիմնվեց ազգային գրադարան, բացվեց օպերա և այլն:

Ազգային կրթական դպրոցների և գրական ու գիտական ընկերությունների կողքին մեծ ծավալ ստացավ ազգային մամուլի՝ օրաթերթերի ու ամսագրերի, տպարանների և գրադարանների հիմնումը: Սույն հատորի նախորդ բաժիններում արդեն նշել ենք, որ դեռևս 1828 թ. Եգիպտոսում լույս տեսավ Մուհամմադ Ալիի կողմից հիմնադրված առաջին արաբական թերթը՝ «Ալ–Վակայի ալ–Մըսրիյա» («Եգիպտական իրադարձություններ»): Սիրիական առաջին ազգային լրագիրը լույս տեսավ 1852 թ.: Նրա հրատարակիչն էր Խալիլ ալ–Խուրին: Թերթը լույս էր տեսնում «Հադիքատ ալ–Ախբար» («Լուրերի պարտեզ») խորագրով:

Այդ շրջանում լուսավորական, գրական և հրապարախոսական ակտիվ գործունեություն ծավալեց արաբական նահդայի ամենաերևելի դեմքերից մեկը՝ Բուտրուս ալ–Բուստանին: Հատկապես նշանակալի է նրա գործունեությունը արաբական ազգային մամուլի զարգացման բնագավառում: Նրա ջանքերով հիմնադրվեց «Ալ–Ջանան» («Հոգի») քաղաքական–գրական հանդեսը, «Նաֆիր Սուրիյա» («Սիրիայի շեփո-

ը») և «Ալ–Ջիննա» շաբաթաթերթերը: Նրա ամենամեծ ծառայությունը պետք է համարել արաբական հանրագիտարանի՝ «Դաիրաթ ալ–Մաարիֆ», հրատարակությունը: Նրա կենդանության օրոք հրատարակվեց յոթ հատոր, իսկ մահից հետո, որը տեղի ունեցավ 1883 թ., նրա գործը շարունակեց նրա հորեղբորորդին՝ Սուլեյման ալ–Բուստանին: Նա հայտնի է նաև որպես Հոմերոսի «Իլիականի» հունարենից արաբերենի թարգմանիչ:

Բուտրուս ալ–Բուստանին, նրա մերձավոր համախոհ Նասիֆ Յազիջին և այլ նահդայականներ մեծ տեղ էին հատկացնում խավարամոլության և կրոնական մոլեռանդության դեմ պայքարին: Նրանք այնքան էին հավատում գրավոր խոսքին, որ վստահ էին, որ ֆեոդալիզմը, նրա քարացած և հետամնաց ավանդույթները կարելի է հաղթահարել խոսքի ուժով, կրթություն, գիտելիքներ և լուսավորություն տարածելու միջոցով, բայց ոչ երբեք բռնի ուժի գործադրումով:

Հիշեցնելու կարգով կրկին նշենք, որ այս փուլում նահդայի մեջ տիրապետող էր գրական–լուսավորական ուղղությունը, և եթե հնչում էին քաղաքական բնույթի ելույթներ կամ պահանջներ, ապա դրանք ավելի շատ բացառություններ էին կամ առանձին անհատների նախաձեռնություն, որը միայն հետագայում, երկրորդ փուլում, պետք է դառնար ուղղություն, և այն էլ տիրապետող, նահդայական շարժման մեջ:

2. Նահդայի երկրորդ փուլը՝ ազգային–հայրենասիրական ուղղությունը

Նահդայի երկրորդ փուլը պայմանականորեն կարելի է անվանել արաբական ազգային–հայրենասիրական ուղղության փուլ, երբ տիրապետող է դառնում արաբիզմը՝ ուրուբան, որպես մի երևույթ, որպես էթնո–մշակութային, գաղափարական, հասարակական–քաղաքական մի ինքնատիպ համակարգ, մի աշխարհ, որը տարբեր էր մյուս աշխարհներից, և առաջին հերթին թուրքական աշխարհից: Դեռ ավելին, որոշ նահդայականներ այնքան հեռու էին գնում, որ անգամ պնդում էին, որ այդ երկու աշխարհները՝ արաբական և թուրքական, միմյանց հակադիր էին:

Այս ուղղության ընդերքում ծնունդ առան ազատության, հակագաղութատիրության, արաբների միասնության և արաբական աշխարհի անկախության գաղափարները, որոնք գաղափարական առումով նորություն էին արաբական աշխարհում:

Արաբական ազգային–հայրենասիրական մտքի ռահվիրաները եղան արաբական աշխարհի քրիստոնյաները, որոնք, ի տարբերություն արաբ–մուսուլմանների, ավելի ազատ էին իրենց դատողությունների և հայացքների մեջ, ավելի լայնախոհ մոտեցում էին ցուցաբերում արաբների առջև կանգնած ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային հարցերում, այդ թվում և մի այնպիսի առանցքային հարցում, որպիսին թուրքական սուլթանի հետ արաբների ընդհանրության հարցն էր: Այդ հարցը տվյալ պատմական ժամանակաշրջանում շատ կարևոր հարց էր: Արաբ–մուսուլմաններն ավելի կաշկանդված էին իրենց հայացքների մեջ, քանի որ նրանք որոշ իմաստով հանդիսանում էին ավանդույթների և կրոնական դոգմաների պատանդը և ընդունում էին թուրքական սուլթանի հետ արաբների ընդհանրությունը: Դրանում իր դերն էր խաղում, անշուշտ, երկու ժողովուրդների իսլամադավան լինելու հանգամանքը և թուրքական սուլթանի մուսուլմանների հոգևոր առաջնորդը կամ խալիֆան լինելու պարագան: Արաբական իսլամադավան զանգվածը տեղյակ չէր կամ դժվարությամբ էր կողմնորոշվում մի այնպիսի նուրբ հարցում, ինչպիսին թուրքական սուլթանների կեղծ խալիֆա լինելն էր:

Իսլամադավան արաբների այդ դիրքորոշումն ամենացցուն կերպով դրսևորվել է սիրիական մուսուլմանական շրջաններում մեծ հեղինակություն վայելող Շեկիբ Արսլանի մոտ: Նրա կարծիքով «Օսմանների խալիֆայությունը երաշխիք է Արևելքի համար, առանց որի նա կորբանա: Իսլամը չի անարգվի այնքան ժամանակ, քանի դեռ նրա գլխին մնում է դարաշրջանի խալիֆ Աբդուլ Համիդը»: Այս խոսքերն ասվել են XIX դարի 90–ական թվականների վերջերին, երբ Օսմանյան կայսրության սուլթանն էր Աբդուլ Համիդ II, որի տիրապետության շրջանը հենց արաբների կողմից կոչվել է զուլումի դարաշրջան, իսկ ինքը՝ Աբդուլ Համիդ II, համարվել է «աս–սուլթան ալ–ահմար»՝ «կարմիր սուլթան»՝ նրա արյունահեղ չարագործությունների համար, այդ թվում և ընդդեմ արաբների:

Քրիստոնյա նահդայականներն ազատ էին նման կաշկանդումներից և բացեիբաց հանդես էին գալիս թուրքական սուլթանի հետ արաբների ընդհանրության անհիմն գաղափարի դեմ, որը հետագայում իր հետևորդներն ունեցավ նաև մուսուլման արաբների մեջ: Դա հնարավորություն ընձեռեց նրանց կատարելու հաջորդ սկզբունքային բնույթի

քայլը՝ հանդես գալ թուրքական տիրապետության դեմ, անգամ առաջ քաշել հեղափոխության գաղափարը:

Երկրորդ ուղղության ձևավորման մեջ իր նշանակությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ քրիստոնյա նահդայականները կապված էին եվրոպական իրականության հետ և սնվում էին եվրոպական առաջադիմական գաղափարներով, որտեղ կենտրոնական դերակատարում ունեին ազատության և բռնության դեմ պայքարի գաղափարները: Նրանցից ոմանք, ինչպես Միխաիլ Մուդավարը, Ֆրանսիս Մարրաշը, Լուիս աս–Սաբունջին և ուրիշներ, եվրոպական երկրներին, առաջին հերթին Ֆրանսիային և Անգլիային, համարում էին արաբների բնական դաշնակիցները:

Արաբների անկախության հարցը դառնում է երկրորդ ուղղության հիմնախնդիրներից մեկը: Առաջիններից մեկը, որ հանդես եկավ արաբների անկախության պահանջով, հայազգի Ռզգալլա Հասունն էր: Նման պահանջով 1868 թ. հանդես եկան Սիրիական գիտական ընկերության ութ անդամներ նրանց մի փակ ժողովում: Այստեղ էր, որ Իբրահիմ Յազիջին կարդաց իր կասիդներից մեկը, որը մի ձոն էր վերածնունդ ապրող արաբ ազգին: Հետո նա, իր համախոհների մի այլ հավաքում կարդաց իր մեկ այլ կասիդը, որը ցնցեց արաբներին իր արմատական կոչերով, ուղղված արաբ ազգին: Ահա այն տողերը, որոնք հետագայում դարձան գործողության ծրագիր արաբ հայրենասիրական երիտասարդության համար. «Արթնացե՛ք, ապստամբվե՛ք, օ, արաբներ»: Զարգացնելով իր մտքերը թուրքական տիրապետության տապալման և արաբների անկախության նվաճման հարցում, Իբրահիմ Յազիջին նշում է. «Մեծ նպատակներին հասնում են սրով, փնտրիր այն, եթե ուզում ես հասնել նրանց»:

Նահդայական երկրորդ ուղղության բնույթն ու նպատակներն ըմբռնելու տեսակետից, կարևոր նշանակություն ունի արաբական մի քաղաքական ընկերության դիրքորոշումը: Այդ ընկերությունը կազմվել էր 1875 թ. Սիրիական բողոքական կոլլեջի հինգ անդամների կողմից: Նրանց բաց թողած թռուցիկներում հստակորեն շարադրված են այդ ընկերության ծրագրային պահանջները: Նա, նախ և առաջ, խստորեն քննադատում էր օսմանյան կառավարությանը և նրա քաղաքականությունը արաբական երկրներում: Սիրացիներին ուղղված կոչում ասված էր. «Սիրիայի զավակնե՛ր: Անհնար է թուրքերին ուղղել: Ի՞նչ էր խանգարում նրանց ուղղվել այս վերջին 20 տարիներին: Նրանք բազմիցս խոստա-

ցել էին իրենց ռայյաներին իրագործել տարբեր բարեփոխումներ: Ի՞նչ կարելի է սպասել նրանցից»: Նրանք պահանջում էին Սիրիայի և Լեռնալիբանանի անկախությունը, իրենց հայրենիքի պաշտպանությունը, արաբերեն լեզուն պաշտոնական լեզու հռչակելը և այլն: Հատկանշական էր, որ այդ թռուցիկներից մեկը վերջանում էր Իբրահիմ Յազիջիի վերևում նշված կասիդի «Արթնացե՛ք, ապստամբվե՛ք, օ, արաբներ» բառերով:

Արաբների առջև կանգնած հիմնախնդիրները հեղափոխական ճանապարհով լուծելու տարբերակի մասին արտահայտվել են, բացի Իբրահիմ Յազիջիից, նաև հայազգի Ադիբ Իսհակը, ինչպես նաև Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբին, թեև Ադիբ Իսհակն ու ալ–Կավակիբին պատկանում էին նահդայական շարժման տարբեր թևերի:

3. Հայերի մասնակցությունը և ներդրումը արաբական նահդայում

Նահդայական շարժման բնորոշ գծերից մեկը կայանում էր նրանում, որ նա իր շարքերում համախմբում էր բոլոր նրանց, ովքեր կիսում էին նրա սկզբունքները, հիմնական գաղափարները և իդեալները: Այդ պատճառով էլ նրա դռները բաց էին բոլորի առջև, անկախ նրանց կրոնական և էթնիկական պատկանելությունից: Նման լայնախոհ մոտեցումը հանդիսանում էր նահդայական շարժման ուժի աղբյուրներից մեկը:

Նահդայական շարժման ամենաակտիվ մասնակիցներից էին արաբական երկրներում հաստատված հայերը, հատկապես Լիբանանի և Սիրիայի հայերը, որոնցից շատերը կանգնած են եղել նահդայի առաջացման ակունքներում, առաջնակարգ դեր են խաղացել նրա գաղափարական ուղղությունների ձևավորման ու ղեկավարման բնագավառում: Դրա մասին կան բազմաթիվ վկայություններ և գրավոր աղբյուրներ:

Արաբ պատմաբան Յուսուֆ Յազբեկը, որը նահդայի աչքի ընկնող հետազոտողներից մեկն է, գրում է. «Ազնիվ հայերի մի խումբ մասնակցեց գրական վերածնունդին, որը սկսվեց մեզ մոտ անցյալ դարում»: Նա առաջիններից մեկը հիշատակում է դոկտոր Գրիգոր Վարդապետին, որին նա համարում է Սիրիական բողոքական ֆակուլտետի հիմնադիրներից մեկը, որն այժմ հայտնի է որպես Բեյրութի Ամերիկյան համալսարան: Նա միաժամանակ եղել է 1847 թ. Լիբանանում հիմնված սիրիա-

կան «Գիտության տարածման և արվեստի զարգացման ընկերության» հիմնադիրներից մեկը: Սակայն նա այդ ընկերության անդամ միակ հայը չի եղել: Այդ ընկերության հիմնադիրների մեջ հարկ է նշել նաև Միքայել Ֆարրաջալլահին: Յուսուֆ Յազբեկը վկայում է, որ սիրիական «Գիտության տարածման և արվեստի զարգացման ընկերությունը» գործել է հայ Միքայել Ֆարրաջալլահի տանը: Այստեղ են նրանք հավաքվել և քննարկել զանազան հարցեր, վիճաբանել նահդայի հիմնական խնդիրների շուրջը:

Արաբ հեղինակը Նահդայի շարժման հայ մասնակիցների մեջ նշում է նաև «գիտնականներ, դոկտոր Հաննա Աբգարիոսին և Հովսեփ Բաքոսին»:

Նահդայական շարժման խոշոր դեմքերից էր հալեպահայ Աստվածատուր Հասունյանը, որն արաբական միջավայրում ավելի շատ հայտնի էր Ռզգալլա Հասուն անունով: Նրա արժանիքները նահդայական շարժմանը շատ բարձր գնահատականի է արժանացել Ֆիլիպ դի Թարազիի, Զուրջի Զեյդանի, Ի. Կրաչկովսկու, Ա. Կրիմսկու և ուրիշ հեղինակների կողմից: Նրանք Ռզգալլա Հասունին համարել են արաբերեն լեզվով ստեղծված հրապարակախոսության նահապետը և արաբական քաղաքական ազատ լրագրության ռահվիրան: Արաբական ոչ պաշտոնական և ազատ քաղաքական մամուլի լավագույն նմուշը հանդիսանում է 1855 թ. նրա հրատարակած «Միրաթ ալ–Ահուալ» («Իրադրության հայելի») շաբաթաթերթը, որտեղ հրապարակված նյութերը պարունակում էին խիստ քննադատություն օսմանյան կառավարության քաղաքականության հասցեին:

Ռզգալլա Հասունը, սկսելով գրական–մշակութային ասպարեզից, այնուհետև հարում է նահդայական շարժման այն թևին, որի համար առաջնայինը՝ քաղաքականը և գաղափարականն էր: Ն. Կոտլովը նրան դնում է նահդայական շարժման այն գործիչների կողքը, որոնք «լուրջ ազդեցություն են ունեցել նոր արաբական գրականության, առաջադիմական հրապարակախոսության, ժամանակակից հասարակական մտքի առաջացման ու զարգացման վրա՝ համաարաբական մասշտաբով»:

XIX դարի 70–80–ական թվականներին ձնավորվում է նահդայական շարժման այն թևը, որը, կարելի է ասել, հստակորեն կանգնում է հակաթուրքական դիրքերում, թուրքական տիրապետությունից ազատագրվելու մեջ է տեսնում արաբների վերածննդի, ազատության, տնտեսական վերելքի և մշակութային զարգացման հնարավորությունները

և հեռանկարները: Այդ թևի միջուկը և գաղափարախոսներն էին Իբրահիմ Յազիջին, Ադիբ Իսհակը, Ռուշեյդ Դահդահը, Ռզգալլա Հասունը և ուրիշներ: Նույնիսկ չափավորական Բուտրուս ալ–Բուստանին և Նասիֆ ալ–Յազիջին սահմանազատվում են արաբական այն գործիչներից, որոնք դավաճանելով նահդայական վեհ սկզբունքներին, գլորվեցին թուրքական սուլթանին և օսմանյան ռեժիմը փառաբանելու ճահիճը: Դրանց թվին էր պատկանում Ֆարիս աշ–Շիդյակը, որը սկզբնական փուլում հարում էր Բուտրուս ալ–Բուստանիի և Նասիֆ ալ–Յազիջիի խմբակին: Բայց երբ նա ներբողական նվիրեց սուլթան Աբդուլ Մաջիդին և սուլթանական փողերով հրատարակվող իր թերթում կոչ արեց մուսուլմանական աշխարհին համախմբվել սուլթանի դրոշի ներքո, այնժամ նրա հետ կապերը խզեցին Բուտրուս ալ–Բուստանին, Ադիբ Իսհակը, Նասիֆ ալ–Յազիջին, Ռզգալլա Հասունը, Իբրահիմ Յազիջին և ուրիշ նվիրյալ նահդայականներ: Նրանք հայտնվեցին բարիկադների հակադիր կողմերում: Այդ կապակցությամբ Ն. Կոտլովը նշում է, որ «արաբական անկախության առաջին պրոպագանդիստներից մեկը հանդես եկավ Հալեբում ծնված, քրիստոնյա Ռզգալլա Հասունը»:

Հասունը, խույս տալով օսմանյան հետապնդումներից, հարկադրված էր լքել արաբական աշխարհը և տարագրվել արտասահման, սկզբում Ռուսաստան, ապա Ֆրանսիա, և վերջնականապես հաստատվել Լոնդոնում, մինչև իր մահը՝ 1880 թ., երբեք չդավաճանելով իր սկզբունքներին և չդադարեցնելով պայքարը օսմանյան տիրապետության դեմ: Ենթադրվում է, որ նա թունավորվել էր օսմանյան սուլթանի գործակալների կողմից:

Արաբական նահդայի ամենախոշոր դեմքը, թերևս, Ադիբ Իսհակն էր՝ Ադիբ Զուլմաթյանը (1856–1884 թթ.): Նա ծնվել էր Դամասկոսում, հայ պաշտոնյայի ընտանիքում, որոնց արմատները գալիս էին Արևելյան Հայաստանից: Նա շատ վաղ հասակից նետվեց գրական, հասարակական և քաղաքական պայքարի հորձանուտը, դառնալով նահդայի քաղաքական, ազգային–հայրենասիրական հոսանքի անվիճելի պարագլուխը:

1871 թ. Իսհակների ընտանիքը տեղափոխվում է Բեյրութ, որտեղ երիտասարդ Ադիբը անմիջապես շփման մեջ է մտնում տեղի նահդայականների հետ, դառնում նրանցից մեկը, ապա նաև ականավոր պարագլուխներից մեկը: Նա անդամակցում է «Զահրաթ ալ–Ադաբ» («Գրականության ծաղիկը») բուստանիական ընկերությանը, որը հիմնվել էր 1873

թ.: Մեկ տարի անց, նա դառնում է այդ ընկերության ղեկավարը: Արդեն այդ ժամանակ Ադիբ Իսհակը չի սահմանափակվում միայն լուսավորական, գրական–մշակութային խնդիրներով, և իր հրապարախոսական ելույթներում բարձրացնում է կրոնական մոլեռանդության դեմ՝ լինի մուսուլմանական, թե քրիստոնեական, հատկապես կաթոլիկական, պայքարի, արաբների համախմբման և նմանատիպ այլ հարցեր, որոնք իրենց բնույթով արդեն դուրս էին գալիս զտարյուն լուսավորական շարժման շրջանակներից:

Ադիբ Իսհակն ակտիվորեն աշխատակցում է «աթ–Թակադդում» թերթին, որը «Զահրաթ ալ–Ադաբի» օրգանն էր: Նա այստեղ իրեն դրսևորում է այնպես փայլուն կերպով, որ 1874 թ. տարեվերջին դառնում է նրա խմբագիրը:

Բեյրության շրջանը կարևոր փուլ հանդիսացավ Ադիբ Իսհակի որպես գրական–մշակութային, ապա նաև հրապարակախոսի ու ազգային–քաղաքական գործչի ձևավորման ու կայացման գործում:

Բայց Բեյրութն արդեն նեղ էր գալիս նրան և Ադիբ Իսհակը 1876 թ. տեղափոխվում է Կահիրե: Եգիպտոսն իր բուռն քաղաքական զարգացումներով, հակագաղութային պայքարով, նոր գաղափարներով, եգիպտական նահդայականների ավելի արմատական դիրքորոշումով, լայն ասպարեզ է բացում Ադիբ Իսհակի առջև, որն իր նոր գաղափարներով, արտակարգ եռանդով ու բազմաբեղուն գործունեության շնորհիվ կանգնում է նահդայական շարժման ազգային–հայրենասիրական ուղղության առաջին շարքերում, նոր թափ հաղորդում այդ շարժմանը, նպաստում այդ ուղղության հստակ ձևավորմանը, խնդիրների բյուրեղացմանը, և ապա դառնում նրա ամենահեղինակավոր ղեկավարներից մեկը:

Ադիբ Իսհակը արաբական միջավայրում սերմանում է արաբների, որպես անհատների և ժողովրդի հպարտության գաղափարները, զարգացնելով այն միտքը, որ նախընտրելի է արթնանալ և սուրը ձեռքին զոհվել որպես ապստամբ, քան թե ապրել որպես մի շղթայակապ և նվաստացած հպատակ: Ընդհանրապես պայքարի, ապստամբության և հեղափոխության գաղափարներն այս շրջանում դառնում են Ադիբ Իսհակի քաղաքական հայացքների ու պրակտիկ գործունեության կենտրոնական հարցերից մեկը:

Նրա հայացքների մեջ առանցքային տեղ են գրավում նաև օսմանյան լուծը բռնի տապալելու և արաբական պետության ստեղծման գա-

ղափարները, որոնց հոլովույթում պետք է դիտարկել նրա կողմից առաջ քաշված «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը:

Սակայն Ադիբ Իսհակին և նրա գործունեությունը գնահատելու համար, նախընտրում ենք խոսքը տալ օտար, ոչ հայ հեղինակներին:

Մեր կողմից արդեն հիշատակված Յուսուֆ Յազբեկը գրում է, որ եթե թվարկելու լինենք նահդայի դրոշի ներքո հանդես եկած խոշոր գործիչներին, «ապա հարկ է հիշել տաղանդավոր լրագրող, հռետոր, գրող և թարգմանիչ Ադիբ Իսհակին, որը մահացավ, չհասնելով 30–ամյա տարիքին: Նա մասնակցեց եգիպտական ազգային ապստամբությանը, ուղղված անգլիական օկուպացման դեմ, և շնորհիվ իր հոդվածների հայտնի դարձավ Փարիզում և Լոնդոնում ու Արևելքի բոլոր մասերում»:

Մեկ ուրիշ արաբ հեղինակ՝ Նաջի Ալլուշը, նրան համարում է արաբների «մշակութային ու քաղաքական Վերածննդի պարագլուխներից ամենաերևելին»:

Պանիսլամիզմի տեսաբան–հիմնադիր և հոգևոր հայր Մուհամմադ Ջամալ ադ–Դին ալ–Աֆղանին, որի հայացքները Ադիբ Իսհակը ոչ միայն չէր կիսում, այլև վճռականորեն պայքարում էր դրանց դեմ, վեհանձնաբար անտեսելով այդ պարագան, Ադիբ Իսհակին, ծագումով հայ այդ տաղանդավոր գործչին և մտավորականին, համարում էր «արաբների տիպար»: Իհարկե, նա նկատի ուներ արաբների այն նոր սերունդը, որոնք համախմբվել էին նահդայի դրոշի ներքո և որը կարոտ էր նոր, առաջադիմական գաղափարների և գործելակերպի:

Իր գնահատականների մեջ ոչ այնքան շռայլ Ի. Կրաչկովսկին, Ադիբ Իսհակին համարում է «տրիբունի տիպի տաղանդավոր հռետոր, որը հանդիսացավ նաև հիմնադիրը նոր հրապարակախոսական ոճի»:

Զ. Լևինը, արաբական հասարակական–գաղափարական հոսանքների, այդ թվում և արաբական նահդայի, լավագույն գիտակներից մեկը, ցավով նշելով, որ «Իսհակի կյանքը կարճատև եղավ», ավելացնում է, որ «սակայն դա եղավ ազատության մարտիկի, սահմանադրության և ժողովրդական իրավունքների ջատագովի կյանք»: Իսկ մեկ այլ առիթով, Զ. Լևինը բարձր գնահատելով Ադիբ Իսահակի հայացքները և դերը արաբական նացիոնալիզմի ձևավորման և զարգացման մեջ, նրան համարում է «արաբական նացիոնալիզմի առաջին իսկական ազդարար»: Արաբական մի աղբյուր Ադիբ Իսհակին համարում է մի գործիչ, որը բարձրացրել է «արաբների պետության ստեղծման հարցը»: Իսկ Ն.

Կոտլովը Ադիբ Իսհակին բնութագրել է որպես նահդայական շարժման երկրորդ փուլի՝ ազգային–հայրենասիրական ուղղության պիոներ:

Լայպցիգի համալսարանի ռեկտոր, հայտնի արաբագետ Լոթար Ռաթմանն ի դեմս Ադիբ Իսհակի, տեսնում է արաբական վերածնության շարժման ղեկավարի, որը խստորեն քննադատում էր օսմանյան տիրապետությունը և հանդես էր գալիս օսմանյան բռնատիրությունից արաբական վիլայաթների ազատագրման պահանջով:

Ուշագրավ են Ադիբ Իսհակի մահվանից հետո «Բաշր ալ–Բաշիր» վերնագրով լույս տեսած մի պամֆլետում արաբ հեղինակի գնահատականի խոսքերը, որն իր աշխատության մեջ հիշատակում է Ե. Նաջարյանը. «Արտասվում էին Լիբանանի մայրիները, որովհետև կայծակնահար ընկել էր իրենցից մեկը, ամենից հաստաբունը: Թեև ծագումով հայ, նա ամենից տաղանդավորն էր այս երկրի զավակների շարքում... Եվ Ադիբը (նաև ետմահու) շարունակում է ծառայել այս երկրին ու մեզ՝ նրա զավակներին, շարունակում է որպես ուսուցիչ, սովորեցնել մեզ»:

Հարկ ենք համարում անդրադառնալ Ադիբ Իսհակի մասին ևս մեկ արաբ հեղինակի՝ էմիլ Թումայի, կարծիքին, քանի որ ոչ ոք այնպիսի ամբողջական մոտեցում չի ցուցաբերել Ադիբ Իսհակի գործունեության արժեքավորմանը, այնպիսի խորությամբ չի վերլուծել ու գնահատել նրա տեսադրույթները, և այնպիսի հիմնավոր կերպով չի որոշել նրա տեղը նահդայական շարժման մեջ, ինչպես նա:

Նա, իր «Ազգային–ազատագրական շարժումը և արաբական միասնության հիմնախնդիրը» արժեքավոր աշխատության մեջ, շատ բարձր է գնահատում Ադիբ Իսհակի դերը XIX դարի երկրորդ կեսում արաբների քաղաքական կյանքում: Էմիլ Թուման Ադիբ Իսհակին համարում է XIX դ. արաբական մտքի գաղափարական ուղղության ճանաչված լիդերը: Նրա կարծիքով, «XIX դարի արաբական մտքի պիոներները, ելնելով Օսմանյան կայսրության դրության իրենց հասկացողությունից, և քաղաքական–սոցիալական բարեփոխումների իրենց ձգտումից, ընթանում էին երկու ուղղությամբ՝ իսլամական միասնության գաղափարների քարոզչության ուղիով, և արաբական, մաքուր ազգային գաղափարախոսության մշակման ուղիով»: Էմիլ Թուման առաջին, այսինքն իսլամական միասնության, ուղղության առաջնորդ համարում է ալ–Կավակիբիին: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ ուղղությանը, ապա այստեղ էմիլ Թուման առաջինը նշում է երիտասարդ հայ Ադիբ Իսհակին: «Արաբական ազգային ուղղության առավել աչքի ընկնող ներկա-

յացուցիչներից մեկը,— գրում է Էմիլ Թուման,— Ադիբ Իսհակն էր (1856–1885)»: (Մահվան տարեթիվը պետք է լինի 1884 թ.): Էմիլ Թուման Ադիբ Իսհակին համարում է մտածող, որը յուրացրել էր ֆրանսիական հեղափոխության գաղափարները, ազատության և հավասարության համար պայքարող մարտիկ:

Էմիլ Թումայի կարծիքով, «Ադիբ Իսհակը հանդիսանում է արաբական առաջին մտածողներից մեկը, որոնք կոնկրետ կերպով քննարկում էին ազգի և հայրենիքի հիմնախնդիրները, և փորձում էին հասնել նրա ամբողջական ըմբռնմանը»: Ընդգծելով, որ «Ադիբ Իսհակը կանգ չառավ հանուն ազատության նվաճման բռնի գործողությունների դիմելու ուղղակի կոչի առջև», Էմիլ Թուման Ադիբ Իսհակի ծառայություններից մեկն էլ համարում է այն, որ նա «առաջին ժամանակակից գրողներից մեկն էր, որոնք որոշեցին արաբական աշխարհի աշխարհագրական սահմանները»: Հայտնի է, որ Ադիբ Իսհակը արաբական աշխարհի մեջ մտցնում էր Աֆրիկայից մինչև Իրաք ընկած ամբողջ տարածքը, որը համարյա համընկնում է արաբական աշխարհի այսօրվա հասկացողության և սահմանների հետ:

Այս մեջբերումներից, որոնց շարքը կարելի էր շարունակել, ուշադիր ընթերցողի համար դժվար չէ կռահել, թե ինչպիսի առաջնակարգ դերակատարում և անգնահատելի ներդրում է ունեցել Ադիբ Իսհակն այն հզոր և պատմական բացառիկ նշանակություն ունեցող համաարաբական շարժման մեջ, որը կոչվում է արաբական ազգային–մշակութային և քաղաքական զարթոնք՝ Նահդա, և որի պատմության մեջ ոսկե տառերով գրված է նաև «Ադիբ Իսհակ» անունը:

X. ԵԳԻՊՏՈՍԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ

1. Քաղաքական իրադրությունը հետմուհամմադալիական Եգիպտոսում

Մուհամմադ Ալին Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմից և 1841 թ. հունիսի 1–ի սուլթանական ֆերմանից հետո ապրեց նս մոտ տասը տարի: Ինչպես արդեն նշել ենք, նա կորցրեց համարյա այն բոլորը, որ նա նվաճել էր երկարատև պատերազմների հետևանքով, պահպանելով իր իշխանությունը միայն Եգիպտոսի և Արևելյան Սուդանի

վրա: Նա շատ ծանր տարավ այդ պարտությունը, որը նրան հասցրել էին ոչ թե պատերազմի դաշտում, և ոչ թե թուրքերը, այլ դիվանագիտական ճակատում՝ եվրոպական պետությունները: Մուհամմադ Ալին այդպես էլ չհաշտվեց այն մտքի հետ, որ տապալվեցին Եգիպտոսը ուժեղ, զարգացած և բարեփոխված պետություն դարձնելու և արաբական կայսրությունը վերականգնելու նրա քաղաքական ծրագրերը: Կորուստները շատ ծանր էին, որի տակ նա կքեց՝ սկզբում ֆիզիկապես, ապա նաև հոգևոր–մտավոր առումով: Ու նա հեռացավ երկրի կառավարումից, ամեն ինչ հանձնելով իր ավագ որդուն՝ Իբրահիմ փաշային, թեև նա ձևականորեն մնում էր Եգիպտոսի կառավարիչ:

Իբրահիմ փաշան իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ երկարատև պատերազմներից քայքայված երկիրը վերականգնելուն՝ նոր սահմաններում և նոր քաղաքական–տնտեսական պայմաններում, որոնք անհամեմատ ավելի ծանր էին, քան դրան նախորդած տարիներին: Նա սկսեց պետական ապարատի աշխատանքները կարգի բերելուց: Նրան շատ էր անհանգստացնում պետական ապարատում գլուխ բարձրացրած աշխատանքային անկարգապահությունը, պաշտոնյաների անպատասխանատվությունը, չարաշահումները, կաշառակերությունը և այլ բացասական երևույթներ: Նա պետական ապարատի աշխատանքների կարգավորումն իրականացրեց իրեն հատուկ հետևողականությամբ, կանգ չառնելով ամենադաժան պատիժների առջև:

Դրան հաջորդեց ֆինանսները բարելավելու խնդիրը: Եգիպտոսի ֆինանսները գտնվում էին ողբալի վիճակում: Եվ դա բնական էր, քանի որ պատերազմները, զինվորական բարեփոխումները, նոր, ավելի մեծ ու ավելի լավ զինված բանակ պահելու հետ կապված վիթխարի ծախսերը, կլանում էին երկրի տնտեսությունից և առևտրից ստացվող եկամուտները: Նա դիմեց մի շարք քայլերի երկրի ֆինանսական վիճակը բարելավելու ուղղությամբ, որոնց մեջ, թերևս, ամենանշանակալին պետական կանոնավոր բյուջե սահմանելն էր, որտեղ հստակորեն սահմանված էին եկամուտների աղբյուրներն ու չափերը և ծախսերի ծավալները:

Լինելով բարեփոխումների ջերմեռանդ կողմնակից և արևմտյան մոդելի երկրպագու, Իբրահիմը այդ խնդրին ավելի մոտիկից և հիմնավոր կերպով ծանոթանալու նպատակով, 1845–1846 թթ. այցելեց Եվրոպա, եղավ Ֆրանսիայում, Անգլիայում և Իտալիայում: Այդ շրջագայության ընթացքում Իբրահիմին ուղեկցում էր նրա քարտուղար Նուբար

Նուբարյանը, Եգիպտոսի ապագա բարձրացող աստղը, որին վիճակված էր առաջատար դեր խաղալ Եգիպտոսի պետական–քաղաքական կյանքում, նրա պատմության ամենապատասխանատու շրջանում: Նուբար Նուբարյանը հիանալի կրթություն ստացած, մի քանի լեզուների տիրապետող, լայնախոհ և խելացի անձնավորություն էր, օժտված դիվանագիտական ճկուն մտածողությամբ և վարվելաձևով: Կասկած չկա, որ նման մարդու մշտական ներկայությունը Իբրահիմ փաշայի կողքին՝ նրա եվրոպական ուղևորության ընթացքում, եղել է շատ օգտակար փաշայի համար:

Իբրահիմն ուներ շատ հեռուն գնացող ծրագրեր և գաղափարներ բարեփոխումների և Եգիպտոսի հզորությունը վերականգնելու հարցում, որը նա հույս ուներ իրագործել, երբ ինքը պաշտոնապես փոխարիներ իր հորը և դառնար Եգիպտոսի ոչ միայն փաստացի, այլ իրավական ղեկավարը:

Սակայն ճակատագրին հաճո եղավ դեպքերի զարգացումն այլ կերպ տնօրինել: Իբրահիմ փաշան, թեև 1848 թ. պաշտոնապես դարձավ Եգիպտոսի ղեկավարը, բայց չհասցրեց երկիրը կառավարել: 1848 թ. նոյեմբերի 10–ին, իր նշանակումից երեք ամիս անց, Կոնիայի և Նեզիբի հերոսը հանկարծամահ եղավ, իսկ մի քանի ամիս անց, 1849 թ. օգոստոսի 2–ին որդուն հետևեց հայրը՝ հիրավի առասպելական Մուհամմադ Ալին:

Նրանց մահով ավարտվեց մի ամբողջ դարաշրջան, որը արաբական Եգիպտոսի պատմության ամենափառավոր դարաշրջաններից մեկն է:

Մուհամմադ Ալիին փոխարինելու եկան նրա թոռները, որդին և դինաստիայի այլ գործիչներ: Բայց նրանք բոլորը, առանց բացառության, իրենց կարողություններով, չափանիշներով, խելքով ու եռանդով շատ հեռու էին դինաստիայի հիմնադիր Մուհամմադ Ալիից և ոչ մի կերպ, անգամ հեռավոր կերպով, չէին կարող համեմատվել նրա հետ:

Կարելի է վստահաբար պնդել, որ Մուհամմադ Ալիից մինչև Գամալ Աբդել Նասերը, որը ճակատագրի իրոնիայով հանդիսացավ Մուհամմադ Ալիի դինաստիայի տապալողը, համարյա մեկ հարյուրամյակ, Եգիպտոսի պետական–քաղաքական արենայում չի եղել արժանի պետական գործիչ, որն անմնացորդ նվիրված լիներ Եգիպտական ազգային գաղափարին, մտահոգ նրա ապագայով և ընդունակ լիներ դիմելու ոչ ստանդարտ քաղաքական քայլերի՝ Եգիպտոսի փառքը և

առաջնակարգ դերակատարումն արաբական աշխարհում վերականգնելու համար:

Մուհամմադ Ալիի մահից հետո նրա գահին նստեց նրա թոռը՝ Աբբաս Հիլմի I, որը Եգիպտոսը կառավարեց 1849–1854 թթ., հինգ տարուց մի փոքր պակաս: Նա իր քաղաքականությամբ, մտածելակերպով և գաղափարներով եղավ Մուհամմադ Ալիի հակապատկերը, մեծ պապի փոքր թոռնիկը:

Պատմության չբացահայտված գաղտնիքներից մեկը պետք է համարել այն, որ շատ հաճախ մեծություններին, նրանց հեռանալուց անմիջապես հետո, իշխանական բուրգի բարձունքներում գալիս են փոխարինելու միջակությունները, խելքով տկարները, աշխարհահայացքով սահմանափակները, որոնք արագ կերպով քանդում են այն կառույցը, որը ստեղծել էին նրա նախորդները երկար տարիների համառ ու տքնաջան աշխատանքով: Նրանց, այդ միջակություններին արտակարգ կերպով հաջողվում է բարենորոգումներից սահել, իր հետևից քարշ տալով նաև իրենց բաժին հասած երկիրը, դեպի հետադիմության ճահիճը:

Հենց նման բան պատահեց Եգիպտոսի հետ, երբ Մուհամմադ Ալիին փոխարինելու եկավ նրա անարժան թոռը, որը պատմության մեջ մտել է որպես ռետրոգրադ՝ հետադիմական:

Ի՞նչ բերեց Աբբասն I իր հետ:

Եթե վերցնելու լինենք քաղաքական կողմը, ապա նորաթուխ փաշան առաջին հերթին հրաժեշտ տվեց Եգիպտոսի անկախության գաղափարին: Սա մենք համարում ենք առանցքային, քանի որ և՛ Մուհամմադ Ալին, և՛ նրա որդի Իբրահիմը, Եգիպտոսի անկախացման հարցը համարում էին գլխավորագույնն իրենց ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Դրան էր նպատակաուղղված նրանց ամբողջ գործունեությունը: Իսկ Աբբաս I գործնականում հրաժարվելով իր երկու մեծ նախորդների քաղաքականությունից, դրա փոխարեն մշտապես շեշտում էր իր կախվածության հանգամանքը օսմանյան սուլթանից, ընդգծելով, որ ինքը նրա վասալն է: Նա անհրաժեշտ էր համարում վերադարձը հին, ավանդական պատկերացումներին, որի մեջ կենտրոնական տեղ էր գրավում փադիշահի՝ որպես բոլոր մուսուլմանների հոգևոր և քաղաքական առաջնորդը լինելը, և նրան անվերապահորեն ենթարկվելը:

Աբբաս I դադարեցրեց բարենորոգումների քաղաքականությունը: Չբավարարվելով դրանով, նա ամեն ինչ արեց վերացնելու համար Մուհամմադ Ալիի իրագործած բարեփոխումների արդյունքները: Նա դա ա-

րեց և՛ տնտեսության, և՛ մշակույթի ու լուսավորության բնագավառներում: Նա փակեց իր պապի կողմից երկրի տարբեր վայրերում բացված համարյա բոլոր դպրոցները: Նա մի առանձին ատելություն էր տածում կրթության և լուսավորության դեմ, մանավանդ երբ փորձում էին այդ ոլորտի մեջ ներգրավել նաև աղջիկներին: Ժամանակագիրները նրան համարում էին տգետ: Եվ նա հանգիստ շունչ քաշեց, երբ փակվեցին դպրոցները և տասնյակ հազարավոր աշակերտներ և աշակերտուհիներ զրկվեցին դպրոց հաճախելու հնարավորությունից:

Իսկ ինչ վերաբերում է բարեփոխումների ճակատագրին տնտեսության ոլորտում, ապա Աբբաս I փաշան այստեղ ևս դրսևորեց այնպիսի «հետևողականություն», ինչպես կրթության հարցում: Նրա հրամանով փակվեցին մանուֆակտուրաները, որոնք Մուհամմադ Ալիի տնտեսական բարեփոխումների անկյունաքարն էին կազմում, նպաստելով ազգային արդյունաբերության ստեղծմանը, որը կոչված էր բավարարելու և՛ ժողովրդի և՛ եգիպտական ազգային բանակի պահանջները: Դեռ ավելին. անհավատալի է, բայց փաստ է, որ նրա հրամանով դադարեցվեց Նեղոսի վրա ամբարտակի շինարարությունը, իսկ ինչ որ կառուցվել էր քանդվեց:

Նրա հետադիմական քայլերից չխուսափեց նաև եգիպտական ազգային բանակը, Մուհամմադ Ալիի և Իբրահիմ փաշայի հպարտության առարկան, եգիպտոսի պաշտպանական վահանը: Նա բանակին հարված հասցրեց երկու կողմից: Նախ, նա կրճատեց բանակը, հիմնականում ազատվելով եգիպտացիներից, ֆելլահներից, որոնք համալրում էին բանակի թվական կազմը: Այնուհետև, նա հիմնական դերակատարումը հանձնեց ալբանացիներին, չերքեզներին և բնակչության թրքախոս հատվածին, դրանով իսկ վերացնելով եգիպտական բանակի ազգային բնույթը, որն այնքան մեծ դժվարությամբ հաջողվել էր հաստատել Մուհամմադ Ալիին: Աբբաս I փաշան եգիպտական բանակն ըստ էության վերածեց իր թիկնապահ զորքի:

Նա չէր թաքցնում իր ատելությունը արևմտյան մշակույթի և արժեքների, ու նրա կրողների նկատմամբ: Նա հալածանքներ սկսեց նրանց դեմ և շատ գործիչներ, այդ թվում և հայ, որոնք հավատարմորեն ծառայել էին եգիպտոսին, Մուհամմադ Ալիին և մեծապես նպաստել նրա բարենորոգումների քաղաքականության իրականացմանը, ձերբակալվեցին կամ հարկադրված հեռացան եգիպտոսից, ապաստան գտնելով այլ երկրներում: Նա ոգեկոչեց մուսուլմանական հետադեմ խավերի

կրոնական մոլեռանդությունը, ապավինելով թուրքական հնաոճ մեթոդներին և ձևերին:

Աբբաս I փաշան հատկապես ատում էր ֆրանսիական կրթություն ստացած և ֆրանսիական կողմնորոշում ունեցող գործիչներին, իր պապի գործընկերներին: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ նա, չնայած իր ժխտական վերաբերմունքին արևմտյան մշակույթի և արժեքների նկատմամբ, այդուհանդերձ, անգլիական կողմնորոշում ուներ, հավանաբար հետապնդելով զուտ պրագմատիկ նպատակներ: Դրա վկայությունն է հանդիսանում այն փաստը, Աբբաս I, Ալեքսանդրիա–Կահիրե–Սուեզ ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթուղու կառուցման կոնցեսիան 1851 թ. տվեց Անգլիային:

Նրա քաղաքականությունը խոր դժգոհություն էր առաջացրել Եգիպտոսում: Նրանից դժգոհ էին բարեփոխումների բոլոր մասնակիցները, կիրառողները և ղեկավարները, որոնք բավականին մեծ թիվ էին կազմում Եգիպտոսում: Դժգոհների մյուս խումբը կազմում էր եգիպտական առևտրական, վաշխառուական և բուրժուական խավը, որը եթե Մուհամմադ Ալիի ժամանակ օգտվում էր պետական աջակցությունից, ապա այժմ, Աբբասի I տնտեսական քաղաքականության պատճառով զրկվել էր զարգացման հնարավորություններից:

Իր դերակատարումն ուներ նաև Ֆրանսիան, որը չէր կարող հանդուրժել իր կողմնակիցների նկատմամբ կիրառվող հալածանքները: Մյուս կողմից Ֆրանսիան չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ Եգիպտոսում ամրապնդվում էին Անգլիայի դիրքերը: Եվ ի հակադրություն Անգլիային երկաթուղու կառուցման կոնցեսիա տալուն, պահանջում էր իրեն տալ կոնցեսիա՝ կառուցելու Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ կապող Սուեզի ջրանցքը:

Այսպիսով, Աբբաս I տիրապետության հնգամյա շրջանում Եգիպտոսը բոլոր ասպեկտներով շնչահեղձ էր լինում:

Ստեղծված վիճակից ելքը գտնվեց շատ հեշտ կերպով: Աբբաս I հարցը լուծվեց ավանդական ձևով: 1854 թ. հուլիսի 2–ին, Բենհայի պալատում, նա սպանվեց իր թիկնապահների կողմից:

Եգիպտոսը վիճելի հարցերն այդ ձևով լուծելու շատ մեծ փորձ ուներ կուտակած:

Աբբաս Հիլմի I փոխարինեց Մուհամմադ Ալիի կրտսեր որդին՝ Սաիդ փաշան: Մուհամմադ Ալին թողել էր մեծաթիվ ժառանգներ՝ որդիներ, դուստրեր, թոռներ և ծոռներ, որոնց թիվը հասնում էր մոտ հարյու-

րի: Սաիդ փաշան Եգիպտոսի կառավարիչ դարձավ 1854 թ. հուլիսի 14–ին և երկիրը կառավարեց մինչև 1863 թ.: Սաիդ փաշան Ֆրանսիայում կրթություն ստացած, զարգացած և ֆրանսիամետ համարում ունեցող գործիչ էր: Ի տարբերություն իր նախորդի՝ Աբբաս I փաշայի, լուսամիտ անձնավորություն էր և իր հայացքներով շատ մոտ էր իր հորը՝ Մուհամմադ Ալիին, մանավանդ բարենորոգումների հարցում:

Նա իր կառավարման տարիներին երկու նշանակալի գործ կատարեց: Առաջինը, 1854 թ. նոյեմբերի 3–ին Սուեզի ջրանցքի կառուցման կոնցեսիայի տրամադրումն էր ֆրանսիացի Ֆերդինանդ դը Լեսեպսին: Պետք է նշել, որ նա այդ հարցում չհետևեց իր հորը, Մուհամմադ Ալիին, որը ժամանակին մերժել էր նման առաջարկություններն այն մտավախությամբ, որ դա այնպիսի բացասական դեր կարող է խաղալ Եգիպտոսի համար, ինչպես Դարդանելը Օսմանյան կայսրության համար: Այսինքն, նա վախենում էր, որ դա կնպաստի եվրոպական պետությունների ներթափանցմանը Եգիպտոս և միջամտությանը նրա ներքին գործերին ու նրանց դիրքերի ամրապնդմանը Նեղոսի ափերին, որից Մուհամմադ Ալին մշտապես ջանացել է խուսափել:

Դժվար թե Սաիդ փաշան չիմանար իր հոր ժխտական դիրքորոշման մասին Սուեզի ջրանցքի կառուցման հարցում: Այդուհանդերձ, նա դիմեց այդ քայլին, հավանաբար ենթադրելով, որ ժամանակները փոխվել են և ինքը կկարողանա խուսափել Եգիպտոսը եվրոպական երկրներից կախման մեջ գցելուց, մանավանդ որ ինքը, ինչպես և իր հայրը, կողմնակից էր Եգիպտոսի անկախության ամրապնդմանը: Չպետք է բացառել նաև Սաիդ փաշայի և Լեսեպսի միջև բարեկամական հարաբերությունների առկայության հանգամանքը:

Սակայն Սաիդ փաշան սխալվեց իր հաշվարկների մեջ: Սուեզի ջրանցքի կոնցեսիոն պայմանները կազմված էին թալանչիական սկզբունքներով, որոնք Եգիպտոսին և նրա կառավարիչներ Սաիդ փաշային, իսկ նրա մահից հետո Իսմայիլ փաշային դրեցին շատ ծանր կացության մեջ: Նա հանդիսացավ Եգիպտոսի ֆինանսական սնանկացման պատճառներից մեկը: Բավական է նշել, որ Սաիդ փաշան պարտավորվել էր մինչև 25 հազար ֆելլահներ տրամադրել ջրանցքի կառուցման աշխատանքներին, որոնք պետք է աշխատեին ձրիաբար: Շատերը չդիմացան այդ տաժանակիր աշխատանքներին և զոհվեցին սովից, շոգից և ծարավից: Ջրանցքի կառուցման ժամանակ մահացել են մոտ 20 հազար եգիպտացիներ: Աններելի սխալներ թույլ տրվեցին նաև Սուեզի ջրանցքի

ընկերության բաժնետոմսերի բաժանման ու տոկոսների վճարման և այլ հարցերում:

Երկրորդը, դա Սաիդ փաշայի վերադարձն էր բարենորոգումների քաղաքականությանը:

Նա, ի տարբերություն Աբբաս I, վերսկսեց իր հոր քաղաքականությունը Եգիպտոսը լիակատար անկախ պետություն դարձնելու ուղղությամբ: Նա մտածում էր, որ Եգիպտոսը, ի տարբերություն Օսմանյան կայսրության արաբական մյուս շրջանների, ուներ իր կառավարությունը, զինված ուժերը, անկախ էր ներքին քաղաքականության հարցերում, իսկ ինչու չպետք է ինքնուրույն լիներ նաև արտաքին քաղաքականության հարցերում: Ահա այս մտայնությունն էր ընկած Բարձր Դռան հետ նրա քաղաքականության հիմքում:

Նա հասավ նրան, որ Ստամբուլը համաձայնվեց մեծացնել եգիպտական բանակը, որը համարյա կրկնապատկվեց՝ 18 հազարից հասնելով 30 հազարի:

Բանակի հարցում նա հասավ մեկ այլ կարևոր նվաճման: Դարձյալ հետևելով իր հոր օրինակին, նա վճռական քայլեր ձեռնարկեց եգիպտական բանակը ազգային բանակի վերածելու ուղղությամբ: Այդ նպատակով նա, մի կողմից, բանակը սկսեց համալրել եգիպտական ֆելլահների հաշվին, իսկ մյուս կողմից, առաջին անգամ նա սպայական կոչումներ շնորհեց բանակում ծառայող եգիպտացիներին:

Սաիդ փաշան որոշակի բարեփոխումներ կիրառեց նաև տնտեսության ոլորտում: 1858 թ. հողային օրենքով թույլատրվեց հողաբաժիններ ունեցող գյուղացիներին վաճառել, գնել կամ վարձակալության տալ իրենց հողաբաժինները: Նրանք դարձան հողի մասնավոր սեփականատերեր: Դրամական հարկը փոխարինվեց բնական հարկով, որը վճարում էր յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն առանձին վերցրած, իսկ հարկ հավաքելու իրավունքը տվյալ գյուղի շեյխից անցավ պետական պաշտոնյաներին:

Սահմանվեց առևտրի ազատություն, որին մեծապես նպաստեց ներքին մաքսատների վերացումը, ինչպես նաև գյուղացիներին տրված իրավունքը մշակել այնպիսի գյուղատնտեսական կուլտուրաներ, ինչպես իրենք էին ցանկանում, և իրենց գյուղատնտեսական արտադրանքը վաճառել այնտեղ, որտեղ իրենք էին ուզում: Այս բոլորը, անշուշտ, նպաստում էր ապրանքային արտադրության աճին և կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը Եգիպտոսում:

Վերջապես, Սաիդ փաշան վերսկսեց բարեփոխումները կրթական և մշակութային ոլորտում: Վերաբացվեցին Աբբաս I ժամանակ զանգվածաբար փակված դպրոցները, մի կողմից, և բացվեցին նոր դպրոցներ, մյուս կողմից:

Այս բնագավառում Սաիդ փաշան ընդունեց ևս մի շատ կարևոր և սկզբունքային որոշում: Նրա հատուկ հրամանով արաբերեն լեզուն հայտարարվեց պաշտոնական լեզու, դուրս մղելով թուրքերենը: Այն դարձավ նաև կրթություն ստանալու մայրենի լեզու: Բոլոր ուսումնական հաստատությունները պարտավոր էին եգիպտական պետական դպրոցներում դասավանդումն անցկացնել արաբերեն լեզվով:

Սաիդ փաշան վախճանվեց 1863 թ. հունվարի 18–ին: Իշխանությունն անցավ Իբրահիմ փաշայի որդուն՝ Իսմայիլին, որը երկիրը կառավարեց 1863–1879 թթ:

Նրա կառավարման տարիները եղան Եգիպտոսի նոր շրջանի պատմության իրադարձություններով հարուստ և, թերևս, ամենադրամատիկական շրջանը:

Իսմայիլը հիանալի կրթություն էր ստացել Ֆրանսիայում, տիրապետում էր լեզուների և համակիր էր ֆրանսիական արվեստին ու քաղաքական կուլտուրային: Նա եգիպտական առաջին այդպիսի բարձրակարգ գործիչն էր, որ հայտարարեց ի լուր ամենքի, որ Եգիպտոսի ապագան կապված է Եվրոպայի հետ և նրա քաղաքական նպատակն է «Եգիպտոսը դարձնել Եվրոպայի մասը»:

Նա իր նախորդից ստացավ մի ժառանգություն, որը շատ բանով կանխորոշեց նրա հետագա գործունեությունը: Դրա մեջ, անկասկած, առաջնայինը Սուեզի ջրանցքի կառուցման հարցն էր, որ սկսվել էր Սաիդ փաշայի ժամանակ: Նա դեմ չէր այդ ջրանցքի կառուցմանը, թեև պետք է նշել, որ եթե անգամ դեմ լիներ, ապա ոչինչ չէր կարող փոխել, քանի որ Լեսեպսին 1854 թ. տրված կոնցեսիայից հետո արդեն անցել էր ինը տարի և շատ մեծ աշխատանք էր կատարվել: Սակայն նա ունեցավ քաջություն հայտարարելու, որ կոնցեսիայով շատ մեծ արտոնություններ և իրավունքներ են տրված Լեսեպսին, մի կողմից, և կոնցեսիայի պայմանները չափազանց ծանր են եգիպտական կողմի համար, մյուս կողմից: Իսմայիլը, իշխանության գլուխ գալուց հետո դեռ երկու շաբաթ էլ չէր անցել, երբ 1863 հունվարի 30–ին առաջին փոփոխությունը մտցրեց Սուեզի ջրանցքի կոնցեսիոն պայմանագրի մեջ, արգելելով հարկադրական աշխատանքի կիրառումը ջրանցքի կառուցման հա-

մար: Ինչպես նշել ենք, Սաիդ փաշան համաձայնվել էր տրամադրել 25–40 հազար եգիպտացի գյուղացիներ Լեսեպսին, որոնք աշխատում էին լրիվ ձրի, առանց որևէ վճարման: Իսկ դա նշանակում էր, որ Լեսեպսը շինարարական աշխատանքների վրա ոչ մի սու չէր ծախսում, որը չտեսնված երևույթ էր կոնցեսիաների պատմության մեջ: Դա, բնականաբար, խիստ դժգոհություն էր առաջացրել եգիպտացիների, և ոչ միայն ֆելլահների, մոտ:

Իսմայիլն իր այդ որոշումով ծանր ֆինանսական հարված էր հասցնում Լեսեպսին: Բայց վերջինս մտադիր չէր զիջել, և դատական գործ բացեց Իսմայիլի դեմ: Հարցը հանձնվեց միջնորդական դատարանին, որտեղ որպես չեզոք «դատավոր» հանդես եկավ Ֆրանսիայի կայսր և Լեսեպսի ազգական Նապոլեոն III: Հարցը լուծվեց հօգուտ Լեսեպսի: Իսմայիլը ոչ միայն չկարողացավ վերացնել եգիպտական ֆելլահների հարկադիր և ձրի աշխատանքը ջրանցքի վրա, այլև նրան պարտավորեցրին վճարել 84 մլն ֆրանկ Սուեզի ընկերությանը որպես «վնասի հատուցում»:

Սուեզի ջրանցքի վրա աշխատանքներն ավարտվեցին 1869 թ.: Նույն տարվա նոյեմբերի 17–ին մեծ շուքով և հանդիսությամբ տեղի ունեցավ ջրանցքի պաշտոնական բացումը: Դրա հետ կապված երկու կարևոր հանգամանք է արժանի հիշատակման:

Առաջինն այն է, որ Սուեզի ջրանցքի կառուցումը Եգիպտոսի վրա նստեց 400 մլն ֆրանկ, որն իր ժամանակի համար շատ մեծ գումար էր: Եվ երբ մի քանի տարի անց ֆինանսական ծանր դրության մեջ հայտնված Եգիպտոսի կառավարությունը հարկադրված էր վաճառել իրեն պատկանող ակցիաները, ապա նա կարողացավ հազիվ դրանք վաճառել 100 մլն ֆրանկի, կորցնելով 300 մլն ֆրանկ:

Երկրորդ, միակ լուսավոր կետն այս պատմության մեջ այն էր, որ ֆրանսիական մշակույթի ոգով դաստիարակված և եվրոպական կուլտուրային լավ ծանոթ Իսմայիլը, ջրանցքի բացման հանդիսավոր արարողության համար իտալական աշխարհահռչակ կոմպոզիտոր, օպերային արվեստի անգերազանցելի գագաթ հանդիսացող Ջուզեպե Վերդիին պատվիրել էր գրել «Աիդա» օպերան, որը իտալական մաեստրոն կատարեց, աշխարհին պարգևելով իր հանճարեղ ստեղծագործություններից մեկը:

Իսմայիլը շարունակեց իր պապի՝ Մուհամմադ Ալիի, և հոր՝ Իբրահիմի, քաղաքականությունը բարեփոխումների հարցում, նախ տնտե-

սության, ապա նաև մշակույթի և կրթության բնագավառում: Եգիպտոս վերադարձան շատ գործիչներ, որոնք դեռևս Աբբաս I օրոք, խուսափելով նրա բռնությունների քաղաքականությունից, հեռացել էին երկրից:

Նա հավատարիմ մնաց նաև Եգիպտոսի անկախությունն ամրապնդելու իր պապի և հոր քաղաքականությանը: 1866 թ. հիմնվեց Մեջլիս ուլ–Նիյաբի՝ Ներկայացուցչական պալատ, բաղկացած 75 դեպուտատներից: Նա, որ հայտնի էր նաև որպես «Երևելիների պալատ» անվանումով, կոչված էր պառլամենտի դեր կատարելու:

Իսմայիլը զգալի ջանքեր գործադրեց իր նոր տիտղոսի հաստատման հարցում, աջակից ունենալով Նուբար Նուբարյանին:

Եգիպտոսի պատմության մեջ արտակարգ դեր կատարած Նուբար Նուբարյանը, որը հայտնի է նաև Նուբար փաշա մեծարումով, ծնվել է 1825 թ. Զմյուռնիայում, որտեղ, հայկական դպրոցում, ստացել է իր նախնական կրթությունը: Այնուհետև նա տեղափոխվում է Եգիպտոս և հաստատվում Ալեքսանդրիայում: 1844–1849 թթ. նա, Մուհամմադ Ալիի կողմից Ֆրանսիա ուսման ուղարկվող եգիպտացի երիտասարդների շարքում, մեկնում է Փարիզ, որտեղ և ավարտում է իր ուսումնառությունը: Վերադառնալով Եգիպտոս, նա զբաղեցնում է զանազան պաշտոններ պետական վարչակարգում, այդ թվում Եգիպտոսի երկաթուղիների վարչության պետի, ապա և մինիստրի պաշտոնները: Նա երկար տարիներ ղեկավարել Եգիպտոսի արտաքին քաղաքականությունը, չորս անգամ զբաղեցնելով Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնը՝ 1866–1874 թթ., 1875–1876 թթ., 1878–1879 թթ. և 1884–1888 թթ.:

Նուբար Նուբարյանի քաղաքական կարիերայի բարձրակետը հանդիսացավ Եգիպտոսի պրեմիեր մինիստրի պաշտոնը, որը նա զբաղեցրել է երեք անգամ՝ 1878–1879 թթ., 1884–1889 թթ. և 1894–1895 թթ.: Նա մահացել է 1899 թ. և թաղված է Ալեքսանդրիայում:

Նա եղել է Եգիպտոսի կառավարիչների, հատկապես Սաիդ փաշայի և Իսմայիլի, անփոխարինելի խորհրդատուն: Լինելով վերին աստիճանի զարգացած և գործունյա անձնավորություն, Նուբար Նուբարյանը իր ողջ ունակություններն ու եռանդը դրեց ի նպաստ իր նոր հայրենիքի՝ Եգիպտոսի, զարգացմանը, բարգավաճմանը և անկախության ամրապնդմանը, պայքարելով թե՛ Բարձր Դռան, և թե՛ անգլիական գաղութարարների դեմ: Նա խոր հետք է թողել Եգիպտոսի XIX դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության մեջ:

Նուբար Նուբարյանի խորհրդով, Իսմայիլը թուրքական սուլթանի առջև հարց բարձրացրեց իր տիտղոսի առնչությամբ, նպատակ ունենալով պաշտոնապես օգտվել մի այնպիսի տիտղոսից, որը նրան առանձնացներ Օսմանյան կայսրությունում առկա բազմաթիվ վալիներից ու փաշաներից: Մուհամմադ Ալին, ճիշտ է, օսմանյան սուլթանից ստացավ Եգիպտոսը և Սուդանը կառավարելու ժառանգական իրավունք, բայց տիտղոսի հարցում, նրա և մյուս փաշաների կամ կուսակալների միջև ձևականորեն ոչ մի տարբերություն չկար: Մուհամմադ Ալին դեռևս իր կենդանության օրոք փորձեր էր կատարում այդ հարցում ինչ–որ առանձնաշնորհում ստանալ սուլթանից, բայց ոչ մի հաջողության չհասավ:

Եվ ահա այժմ, այդ հարցի լուծումն իր ձեռքը վերցրեց Նուբար Նուբարյանը, որը Ստամբուլում երկարատև դժվարին բանակցություններից հետո, իր նուրբ դիվանագիտական քայլերի շնորհիվ կարողացավ այնպես մոլորեցնել թուրքական դիվանագետներին, որ ստացավ իր ուզածը: Սուլթանը համաձայնվեց Իսմայիլին և նրա հաջորդներին շնորհել «խդիվ» տիտղոսը, որը պարսկերեն մի քանի իմաստ ունի և նշանակում է «վեհապետ», «տեր» կամ «իշխան»: Իսմայիլից սկսած, Եգիպտոսի բոլոր կառավարիչները սկսեցին կրել խդիվ տիտղոսը՝ նրա «վեհապետ» իմաստով:

Հարկ է նշել, որ պայքարը տիտղոսի հարցի շուրջը սոսկ անձնական ամբիցիայի կամ ձևական հավակնությունների հարց չէր, այլ քաղաքական խոր իմաստ ունեցող պայքար Եգիպտոսի նոր կարգավիճակի հաստատման համար, որպես մի երկրի, որն իր քաղաքական հասունացման և անկախության մակարդակով ավելի բարձր էր կանգնած, քան թե Օսմանյան կայսրության որևէ այլ երկրամաս:

Իսմայիլի և Նուբար Նուբարյանի համագործակցության մյուս կարևոր բնագավառը հանդիսացավ Եգիպտոսում խառը դատարանների ստեղծումը, որը սահմանափակում էր եվրոպացիների արտոնությունները Եգիպտոսում, հյուպատոսական դատարանների իշխանությունը, կարգավորում օտարերկրացիների ու եգիպտացիների միջև դատական հայցերի ու խնդիրների քննարկումը: Դա ծառայում էր Եգիպտոսի սուվերենության ամրապնդմանը մի այնպիսի բնագավառում, որպիսին դատաիրավական ոլորտն էր:

Այս հարցի լուծումը արտակարգ ճիգ ու ջանք պահանջեց պրեմիեր մինիստր Նուբար Նրուբարյանից, որը տարիներ շարունակ հետա-

մուտ եղավ այդ կարևոր խնդրի լուծմանը, որը պսակվեց նրա հաղթանակով: Դա նպաստեց Նուբար Նուբարյանի հեղինակության բարձրացմանը երկրի ներսում, մի կողմից, և նրա նկատմամբ անբարյացակամ, անգամ թշնամական զգացմունքներ ուժեղացմանը եվրոպական որոշ շրջանակներում, մյուս կողմից:

Իսմայիլը զարկ տվեց լայնածավալ շինարարությանը: Սուեզի ջրանցքի հետ միասին, կառուցվում էին ոռոգման ջրանցքներ, կամուրջներ, երկաթուղիներ, զանազան գործարաններ, դպրոցական շենքեր և այլն: Այդ բոլորը պահանջում էր ֆինանսական մեծ միջոցներ, որոնք ձեռք բերելու համար խդիվ Իսմայիլը դիմում էր ֆրանսիական և անգլիական բանկիրներին: Նրանք մեծ հաճույքով էին տալիս այդ վարկերը, քանի որ դրանք տրվում էին շատ ծանր պայմաններով և բարձր տոկոսներով: Բացի դրանից, նրանք կատարում էին զանազան բանկային խորամանկություններ, հատկապես խաղում էին դրամական կուրսերի տարբերության վրա, որի պատճառով Եգիպտոսն իրականում ստանում էր ոչ թե այն, ինչ գրված էր փոխառություն ստանալու մասին պայմանագրում, այլ անհամեմատ ավելի պակաս: Եգիպտոսի համար ավելի ու ավելի դժվարանում էր փոխառությունների դիմաց վճարումներ կատարելը: Եվ եկավ մի պահ, որ եգիպտական կառավարությունն այլևս ի վիճակի չէր եվրոպական բանկիրներին որևէ բան վերադարձնել: Ստեղծված պայմաններում, խդիվ Իսմայիլը 1876 թ. ապրիլի 8–ին պաշտոնապես հայտարարեց, որ Եգիպտոսն ի վիճակի չէ մարել իր պարտքերը և սնանկ հայտարարվեց:

Իսմայիլի այդ հարկադրական քայլից հիանալի օգտվեցին եվրոպական պետությունները, առաջին հերթին Անգլիան և Ֆրանսիան, և իրենց հսկողությունը սահմանեցին Եգիպտոսի ֆինանսների և ընդհանրապես ամբողջ տնտեսության վրա: Նրանք այն աստիճանի անարդար գտնվեցին, որ այդ բոլորի մեջ մեղադրեցին խդիվ Իսմայիլին, պարսավելով նրան, որ նա չի կարողանում երկիրը ղեկավարել, բնավ «չտեսնելով» մեղքի իրենց բաժինը:

Անգլիան և Ֆրանսիան աստիճանաբար իրենց ձեռքը վերցրեցին երկրի կառավարումը, հետին պլան մղելով խդիվ Իսմայիլին: 1878 թ. ապրիլին ստեղծվեց Եգիպտոսի, կամ ինչպես անվանում էին, խդիվի պարտքի միջազգային հանձնաժողով, որի մեջ մտնում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրիայի ներկայացուցիչները: Օգտվելով ստեղծված ծանր իրադրությունից, միջազգայի հանձնաժողովը, կարելի

է ասել ինքն իրեն օժտեց չափազանց լայն լիազորություններով, ընդհուպ մինչև այն, որ սահմանեց խդիվի և նրա ընտանիքի անձնական ծախսերի չափաբաժինը, յուրատեսակ մի թոշակ, խդիվից խլեց նրա անձնական կալվածքները, որոնք անցան հայտնի հրեա բանկիր Ռոտշիլդին, որպես գրավ նոր փոխառություններ տրամադրելու դիմաց: Այդ բոլորից հետո, միջազգային հանձնաժողովը կատարեց հաջորդ քայլը, որն ավել շատ քաղաքական, քան թե տնտեսական–ֆինանսական բնույթի էր: Նա բավականին կոպիտ կերպով պահանջեց Իսմայիլից այլևս անմիջականորեն չզբաղվել երկրի կառավարման գործերով, ցրել գոյություն ունեցող կառավարությունը և կազմել նոր կառավարություն: Խդիվ Իսմայիլը հարկադրաբար հնազանդվեց եվրոպական վերահսկիչների պահանջին և նրա 1878 թ. օգոստոսի 28–ի դեկրետով կազմվեց նոր կառավարություն:

Կառավարությունն իր կազմի առումով, ուղղակի ապշեցնում է, դա իր նախադեպը չունեցող երևույթ էր: Նրանում ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցրեց անգլիացի Վիլսոնը, իսկ ֆրանսիացի դը Բլիները՝ հասարակական աշխատանքների նախարարի պաշտոնը: Ավստրիայի ներկայացուցիչը դարձավ գլխավոր վերահսկիչը, իսկ Իտալիայի ներկայացուցիչը գրավեց ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնը: Այդ պատճառով էլ այս կառավարությունը ստացավ «եվրոպական կաբինետ» անվանումը: Պրեմիեր մինիստր նշանակվեց Նուբար Նուբարյանը:

Շրջապատված լինելով եվրոպացի մինիստրներով, Նուբար Նուբարյանը մեծ հնարամտությամբ և նրբին դիվանագիտությամբ փորձում էր պաշտպանել եգիպտոսի ազգային շահերը, չափավորել Վիլսոնի, դը Բլիների և մյուս եվրոպացիների ոտնձգությունները եգիպտոսի սուվերենության նկատմամբ, նրանց ամեն մի սահման անցնող միջամտությունը եգիպտոսի ներքին գործերին:

«Եվրոպական կաբինետի» ստեղծումը ընդհանրապես լավ չընդունվեց եգիպտացիների կողմից, մանավանդ այն բանից հետո, երբ պարտքերը վճարելու պատճառով խիստ ծանրացան գյուղացիներից, արհեստավորներից և վաճառականներից գանձվող հարկերը: Դժգոհությունը համակեց նաև զինվորականությանը: 1879 թ. մարտի 9–ին Նուբար Նուբարյանը հրաժարական տվեց: Իսմայիլը նոր պրեմիեր մինիստր նշանակեց իր որդուն՝ Թոֆիկին: Նոր կաբինետում իրենց դիրքե-

ը պահպանեցին Վիլսոնը և դը Բլիները, իսկ թուլամորթ Թոֆիկը խաղալիք էր նրանց ձեռքում:

2. Գնդապետ Ահմադ Արաբիի ապստամբությունը

Նոր կառավարության ստեղծումը հանգստություն չբերեց Եգիպտոսին: Դժգոհությունը եվրոպական կաբինետի և նրա ֆինանսական քաղաքականության դեմ շարունակվում էր:

Ավելի ակտիվ սկսեցին հանդես գալ բանակի արաբ սպաները, որոնք գրավում էին միջին և ցածր սպայական պաշտոնները, և գտնվում էին տնտեսական վատթար վիճակում, ի տարբերություն այսպես կոչված «չերքեզների», որոնք ազգությամբ արաբներ չէին ու գրավում էին բանակի բարձր հրամանատարական պաշտոնները, և գտնվում նյութական ավելի ապահով դրության մեջ:

Կարելի է ասել, որ Եգիպտոսի համարյա բոլոր սոցիալական խավերը, զայրացած եվրոպացիների ու նրանց շահերի արտահայտիչ եվրոպական կաբինետի քաղաքականությունից, որն ընկալվում էր որպես հակաեգիպտական, պահանջում էին նրա վերացումը և քաղաքականության փոփոխություն:

Այդ նույն տրամադրություններն էին համակել անգամ Երևելիների կամ Ներկայացուցչական պալատի անդամներին, թեև նրանք մեծ մասամբ պատկանում էին հողատերերի և մուսուլմանական հոգևորականության դասին: Բայց քաղաքական մթնոլորտը Եգիպտոսում այնքան շիկացած էր, եվրոպական երկրների կողմից Եգիպտոսի ազգային արժանապատվությանը հասցրած վիրավորանքն այնքան խորը, որ անգամ պահպանողական համարվող կալվածատիրական խավը, համենայն դեպս նրա այն թևը, որ համարվում էր լիբերալ, անգամ նա ընդվզեց:

Եթե ի մի բերելու լինենք այդ ժամանակ արտահայտված պահանջները, ապա դրանք հանգում էին հետևյալին. Եգիպտոսի անկախություն, սահմանադրության ընդունում, սահմանադրական կարգի հաստատում, գործունյա օրենսդիր մարմին՝ կառլամենտ, և ազգային կառավարություն:

Ահա այսպիսի մթնոլորտում, խդիվ Իսմայիլը հանդես բերեց վճռականություն և 1879 թ. ապրիլի 7–ին իր նստավայր՝ Աբդինի պալատ, հրավիրեց Եգիպտոսի ականավոր դեմքերին և Կահիրեում հավատար-

մագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին ու նրանց տեղյակ պահեց եվրոպական կաբինետը ցրելու և նոր կառավարություն կազմելու մասին, որը բաղկացած էր լինելու, խդիվի խոսքերով ասած, իսկական եգիպտացիներից: Միաժամանակ նա հայտարարեց իր մտադրության մասին՝ եգիպտոսում հաստատել պառլամենտական կարգ:

Հավատարիմ իր խոստմանը, խդիվ Իսմայիլը ստեղծեց եգիպտացիներից կազմված ազգային կառավարություն, որը նրա դեկրետով գլխավորեց լիբերալ կալվածատեր Շերիֆ փաշան: Նրա կառավարությունն անմիջապես ձեռնամուխ եղավ մի շարք սկզբունքային բնույթի քայլերի իրագործմանը՝ կառավարական ապարատից հեռացվեցին բազմաթիվ օտարերկրյա պաշտոնյաներ, որոշվեց բանակի թիվը հասցնել 60 հազարի, մշակեց և երնելիների պալատի հաստատմանը ներկայացրեց Սահմանադրության և Ընտրությունների մասին օրենքի նախագծերը և այլն: 1879 թ. հունիսի 8–ին պալատը հաստատեց և՛ Սահմանադրությունը, և՛ Ընտրական օրենքը: Մնում էր, որ նրանք հաստատվեին խդիվ Իսմայիլի կողմից: Վերջինս պատրաստ էր հաստատել դրանք, սակայն չհասցրեց:

Անգլիան և Ֆրանսիան, որոնք ակնդետ հետևում էին դեպքերի զարգացմանը, ոչ մի կերպ չէին կարող հաշտվել այն իրողության հետ, որ նրանց ներկայացուցիչները դուրս էին մնացել Շերիֆ փաշայի կառավարությունից, և թողնել, որ խդիվ Իսմայիլն իրագործի իր նախատեսած ծրագրերը: Անգլիան և Ֆրանսիան 1879 թ. հունիսի 19–ին վերջնագիր ներկայացրին խդիվ Իսմայիլին, պահանջելով հրաժարվել գահից և հեռանալ Եգիպտոսից: Անգլիային և Ֆրանսիային պաշտպանեցին Ավստրիան, Գերմանիան, Իտալիան և Ռուսաստանը:

Այսպիսով, եվրոպական վեցյակը կրկին բացասական դեր խաղաց Եգիպտոսի ճակատագրում, ինչպես ժամանակին Մուհամմադ Ալիի պարագային:

Նրանց միացավ նաև թուրքական սուլթան Աբդուլ Համիդ II, որի ֆերմանով, 1879 թ. հունվարի 25–ին խդիվ Իսմայիլը գահընկեց հայտարարվեց: Միաժամանակ այդ նույն ֆերմանով սուլթանը Եգիպտոսի խդիվ նշանակեց Իսմայիլի որդուն՝ Թոֆիկին: Իսմայիլը հունիսի 30–ին հեռացավ Եգիպտոսից, ուղղություն վերցնելով դեպի Իտալիա:

Այսպիսով, Անգլիան ու Ֆրանսիան հերթական անգամ իրենց կամքը փաթաթեցին Եգիպտոսին: Իշխանության գլուխ եկած Թոֆիկը,

ինչպես արդեն նշել ենք, կամազուրկ մի անձնավորություն էր՝ պատրաստ կատարելու Անգլիայի և Ֆրանսիայի ամեն մի պահանջ: Պատահականություն չէր, որ նրա առաջին քայլերից մեկը եղավ Շերիֆ փաշային պաշտոնանկ անելը: Պրեմիր մինիստր նշանակվեց Ռիյադ փաշան, որը միանգամայն բավարարում էր անգլիացիներին ու ֆրանսիացիներին: Լուծարվեց Իսմայիլի ժամանակ ձևավորված ազգային կառավարությունը: Հասկանալի է, որ Թոֆիկը չհաստատեց Սահմանադրությունը:

Եգիպտոսում հաստատվեց հետադիմական վարչակարգ և երկիրը մտավ խոր քաղաքական ճգնաժամի մեջ:

Բայց եթե անգլիացիներին և ֆրանսիացիներին հաջողվեց իշխանությունից հեռացնել իրենց համար անցանակալի Իսմայիլին և ցրել ազգային եգիպտական կառավարությունը և Եգիպտոսի կառավարման ղեկը հանձնել իր խամաճիկներին, ապա դա դեռևս չէր նշանակում, որ նրանք կարողացան վերացնել ընդդիմությունը և իրենց կամքին ենթարկել Եգիպտոսը: Եգիպտական ընդդիմությունը, ուղղված եվրոպական քաղաքական և ֆինանսական տիրապետության դեմ, ոչ միայն պահպանվեց, այլև վերադասավորելով իր ուժերը, ավելի կազմակերպված ու վճռական դարձավ:

Այդ պահից սկսած, եգիպտական ընդդիմադիր ուժերի մեջ մտնում էին եգիպտական ազգային բուրժուազիան, զինվորականությունը, հատկապես միջին սպայական կազմը, մտավորականությունը, որն առաջ էր քաշել «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը, հայրենասիրաբար տրամադրված լիբերալ կալվածատերերը և հոգևորականությունը, մանավանդ նրա այն թևը, որը կանգնած էր բարեփոխումների դիրքերում: 1881 թ. հիմնվեց «Հիզբ ալ–Վաթան» կուսակցությունը, որը փաստորեն արտահայտում էր այդ խավերի արմատական շահերը:

Զինվորականների մեջ իր հեղինակությամբ առանձնանում էր գնդապետ Ահմադ Արաբին, որի շուրջը համախմբվեցին հայրենասեր զինվորականները: Նրանք պաշտպանում էին «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը և կանգնած էին Եգիպտոսի քաղաքական անկախության նվաճման դիրքերում:

1881 թ. սեպտեմբերի 9–ին Կահիրեում տեղի ունեցավ եգիպտական բանակի զինված ելույթը Արաբիի գլխավորությամբ: Դրան առիթ ծառայեց խդիվ Թոֆիկի կարգադրությունը Կահիրեի կայազորի հեղափոխականորեն տրամադրված գնդերը դուրս բերել մայրաքաղաքից և

տեղավորել Եգիպտոսի տարբեր շրջաններում: Հասկանալով Խդիվի և նրա թիկունքում կանգնած անգլիացիների իսկական նպատակները, զինվորականները ոչ միայն չենթարկվեցին Թոֆիկի այդ հրամանին, այլ բարձրացրին ապստամբության դրոշը: 1881 թ. սեպտեմբերի 9–ին զինվորականները շրջապատեցին Խդիվի պալատը և գնդապետ Արաբին Թոֆիկից պահանջեց Ռիայդի կառավարության հրաժարականը, սահմանադրության ընդունում և եգիպտական ազգային բանակի թվական կազմի ավելացում:

Արաբիի այս պահանջները մեծ խանդավառություն առաջացրին ամբողջ երկրում: Խդիվը և անգլիացիները հայտնվեցին ծանր դրության մեջ և ստիպված էին զիջել ու մասամբ կատարել ապստամբների պահանջները: Մասնավորապես, բավարարվեց Ռիյադի կառավարության հրաժարականի պահանջը: Խդիվը Եգիպտոսի նոր վարչապետ նշանակեց Շերիֆ փաշային, որն արդեն մեկ անգամ գլխավորել էր եգիպտական կառավարությունը: Իսկ ինչ վերաբերում էր սահմանադրությունը գործողության մեջ դնելու և եգիպտական բանակի թվաքանակն ավելացնելու պահանջներին, ապա բրիտանական ներկայացուցիչ Կոլվինը դիմեց խորամանկ քայլի: Նա առաջարկեց այդ հարցերի քննարկումը հանձնել օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II: Տվյալ պարագայում նա օգտագործում էր այն հանգամանքը, որ սուլթանը Եգիպտոսի սյուզերենն էր և իրավական առումով այդ հարցերը ենթակա էին նրա իրավասությանը: Արաբին համաձայնվեց Կոլվինի առաջարկի հետ, որը մեր կարծիքով սխալ էր: Դա·մի ծուղակ էր, որը չնկատեց Արաբին և նրա շուրջը համախմբված վաթանի զինվորականները: Ապստամբությունների ժամանակ սկզբունքային հարցերը նման կոմպրոմիսներով չեն լուծվում: Հարցի հանձնումը Բարձր Դռանը նշանակում էր ձգձգել նրա լուծումը և, ի վերջո, թաղել այն:

Իսկ ինչ վերաբերում է Շերիֆ փաշային, ապա նրա հայացքներում առաջին վարչապետությունից հետո ընկած ժամանակամիջոցում տեղի էին ունեցել զգալի փոփոխություններ: Նա այլևս չէր թաքցնում իր արհամարհական վերաբերմունքը ֆելլահների ծոցից դուրս եկած զինվորականների և նրանց հրամանատարների նկատմամբ: Բանը հասավ նույնիսկ այնտեղ, որ սկզբում նա հրաժարվեց ընդունել Թոֆիկի և անգլիացիների առաջարկությունը՝ զբաղեցնելու վարչապետի պաշտոնը այն պատճառաբանությամբ, որ իր համար վիրավորական է բունտ բարձրացրած բանակի դրածո վարչապետը լինել: Խդիվը և Կոլվինը

կարողացան նրան համոզել մի կողմ դնել իր ամբիցիաները և ստանձնել վարչապետի պաշտոնը: Սակայն նա համաձայնվեց մի պայմանով, որ Արաբիի զորքերը և ինքը՝ Արաբին հեռանան Կահիրեից:

Արաբին տեսնում էր այս բոլորը և փորձեց հակադրվել Շերիֆ փաշային, պաշտպանություն փնտրելով Կահիրեի երևելիների մոտ, ժողովի հրավիրելով նրանց: Բայց նա սխալվեց իր սպասումներում և անակնկալի եկավ, երբ հրավիրյալները պաշտպանեցին ոչ թե իրեն, այլ վարչապետին: Նրա սխալը կայանում էր նրանում որ նա չէր տեսնում, որ եգիպտական այսպես կոչված լիբերալ կալվածատիրությունը և հողային արիստոկրատիան խորշում էր զինվորական համազգեստ հագած եգիպտական ֆելլահների ընդվզումներից, առավել ևս զինված ապստամբությունից:

Արաբին և նրա կողմնակիցները կոնֆլիկտի մեջ մտան Շերիֆ փաշայի և նրա ղեկավարած՝ կառավարության հետ: Կոնֆլիկտն ուժեղացավ հատկապես այն բանից հետո, երբ Շերիֆ փաշան հրաժարվեց գործողության մեջ դնել իր իսկ կողմից մշակված և 1879 թ. հունիսին նախկին խդիվ Իսմայիլին հաստատման ներկայացրած սահմանադրությունը, մի կողմից, և փորձեց բանակին զրկել եգիպտոսի քաղաքական կյանքում որևէ դերակատարում ունենալու իրավունքից, մյուս կողմից:

Անսպասելիորեն Շերիֆ փաշայի դեմ հանդես եկավ եգիպտոսի Ներկայացուցչական կամ Երևելիների պալատը, երբ նա իրեն իրավունք վերապահեց հաստատել եգիպտական բյուջեն: Վարչապետը չկարողացավ տարհամոզել պալատի դեպուտատներին: Իսկ Անգլիան և Ֆրանսիան պալատի այդ մտադրության մեջ տեսան մարտահրավեր անգլո–ֆրանսիական ֆինանսական վերահսկողությանը, որը նրանք ոչ մի դեպքում չէին կարող թույլ տալ:

Ակամայից ստեղծվեց դաշինք Արաբիի, նրա գլխավորած զինվորականների, ու Ներկայացուցչական պալատի միջև: Վերջինիս պահանջով Շերիֆ փաշան 1882 թ. փոտրվարի 5–ին հրաժարական տվեց: Դա ապստամբական ուժերի կարևոր հաղթանակն էր, որն ավելի ցայտունորեն դրսևորվեց նոր կառավարություն կազմելու փաստի մեջ: Շերիֆ փաշայի կառավարությանը փոխարինելու եկավ Մահմուդ Սամի–Արաբիի կառավարությունը: Մահմուդ Սամի ալ–Բարուդին դարձավ վարչապետ, իսկ Արաբին՝ զինվորական նախարար:

Սամի–Արաբիի կառավարությունն առանց հապաղելու ընդունեց մի շարք կարևոր օրենքներ ու որոշումներ, որոնք սկզբունքային բնույթ

ունեին: Կառավարությունն իր ծնավորումից շատ չանցած հրապարակեց Երևելիների պալատի կողմից ընդունված Օրգանական օրենքը, վերացրեց անգլո–ֆրանսիական ֆինանսական վերահսկողությունը, նախապատրաստեց օրենքի նախագիծ բահրան վերացնելու մասին, որը անգնահատելի օգնություն էր լինելու ֆելլահներին: Գյուղատնտեսությունը խթանելու համար որոշում ընդունվեց հիմնել գյուղատնտեսական բանկ, արգելվեց որպես գյուղացիներին պատժելու գործիք օգտագործել մտրակը՝ կուրբաշը, ուժեղ վերահսկողություն սահմանվեց օտարերկրյա այսպես կոչված խորհրդատուների վրա, ձգտելով վերջ տալ նրանց կամայականություններին ու չարաշահումներին:

Սամի–Արաբիի կառավարության իշխանության գլուխ գալը և նրա արագ գործողություններն ի նպաստ եգիպտական ժողովրդի և Եգիպտոսի իրավունքների պաշտպանության, մեծ գոհունակությամբ ընդունվեց բնակչության կողմից, հատկապես գյուղական վայրերում: Ներքին Եգիպտոսում փաստորեն սկսվեցին գյուղացիական ելույթներ, որոնք ուղղված էին կալվածատերերի ու բարձր հարկերի դեմ, նույնիսկ պետական պարտքի վերացման պահանջ առաջադրվեց:

Այս բոլորը հանգեցրեց ուժերի նոր սահմանազատմանը եգիպտական հասարակության ներսում: Հետադիմական ուժերի խորհրդանիշը դարձավ խդիվ Թոֆիկը, որի շուրջը համախմբվեցին ավատատերերը, գյուղացիական ելույթներից վախեցած լիբերալ–կալվածատերերը և բանակի սպայական բարձրագույն կազմը, որը բաղկացած էր թուրքերից, ալբանացիներից և չերքեզներից:

Մյուս կողմում վաթանիստներն էին՝ հայրենասեր զինվորականները, գյուղացիական զանգվածները, քաղաքային բնակչության աղքատ խավերը, նահդայական ծագում ունեցող մտավորականությունը, առևտրական բուժուազիայի առանձին խավեր, ինչպես նաև լիբերալ կալվածատերերի այն շերտը, որը հավատարիմ էր մնացել հայրենասիրության գաղափարներին: Նրանց համար խորհրդանիշ էր հանդիսանում Արաբին, որին նրանք ընդունում էին որպես իրենց առաջնորդ և համախմբվել էին նրա շուրջը:

Պայքարը նրանց միջև գնում էր անզիջում: Աջակողմյան, հետադիմական ուժերը կանգ չառան անգամ ահաբեկչության առաջ, փորձելով սպանել Արաբիին, որը նրանց չհաջողվեց: Արաբիի դեմ մահափորձը հարկադրեց վաթանիստներին դիմել ավելի արմատական քայլերի: Այդպիսին հանդիսացավ խդիվին տապալելու պահանջը, որը Արաբին

պաշտոնապես բարձրացրեց Երնելիների պալատում: Ի պատասխան, խդիվը Երնելիների պալատի նստաշրջանի հրավիրումը համարեց անօրինական: Դրանից հետո նա կատարեց հաջորդ քայլը՝ պահանջեց նրա լուծարումը: Ակնհայտ էր, որ խդիվը գնում էր լարվածության էսկալացիայի ուղիով, եվ եթե դա էր նրա նպատակը, ապա կարելի է ասել, որ նա հասավ իր նպատակին: Ի պատասխան Երնելիների պալատը ցրելու խդիվի պահանջի, այս անգամ հրաժարական տվեց վարչապետ Մահմուդ Սամի ալ–Բարուդին, որն ավելի շուտ բողոքի նշան էր ընդդեմ Թոֆիկի քայլի:

Ալ–Բարուդիի հրաժարականից հետո, նույն քայլին չդիմեցին նրա կաբինետի անդամ նախարարները: Նրանք որդեգրեցին շատ խորամանկ և հեռահար քաղաքականություն, հայտարարելով, որ հրաժարական կտան, եթե դա իրենցից պահանջի Երնելիների պալատը: Նման հայտարարությունից հետո բավականին ծանր դրության մեջ հայտնվեց Երնելիների պալատը, որը տատանվում էր խդիվի և վաթանիստների միջև և չգիտեր ինչպիսի դիրքորոշում գրավել: Ի վերջո, պալատը հրաժարվեց պահանջել կառավարության անդամների հրաժարականը, դրանով հարցի լուծումը փոխանցեց խդիվին: Իսկ վերջինս հարկադրված նահանջեց և մայիսի 16–ին որոշում ընդունեց Սամիին թողնել վարչապետի պաշտոնում: Առժամանակ կառավարական ճգնաժամը լուծվեց:

Այդ ընթացքում Անգլիան և Ֆրանսիան լրջորեն քննարկում էին ռազմական ինտերվենցիայի հարցը, սակայն համաձայնության չեկան և առժամանակ հրաժեշտ տվեցին այդ տարբերակին: Բայց անսպասելիորեն նման ցանկություն դրսևորեց սուլթան Աբդուլ Համիդ II, սակայն նա հանդիպեց Անգլիայի և Ֆրանսիայի դիմադրությանը և ստիպված էր նահանջել:

Անգլիան և Ֆրանսիան իբր թուրքական ինտերվենցիան կանխելու նպատակով, 1882 թ. մայիսի 20–ին Ալեքսանդրիա ուղարկեցին իրենց ռազմական էսկադրան: Այդ էսկադրիայի ժամանումը Ալեքսանդրիա այլ կերպ ընդունեցին քաղաքի բնակիչները և վաթանիստները: Նրանք դա համարեցին սպառնալիք և ճնշում գործադրելու միջոց: Եվ նրանք սխալված չէին, թեև, պետք է ենթադրել, նրանք տեղյակ չէին Անգլիայի և Ֆրանսիայի կողմից խդիվ Թոֆիկին ներկայացված պահանջների մասին: Այդ պահանջները, որոնք վերջնագրի բնույթ էին կրում բաղկացած էին երկու կետից՝ Արաբիի և նրա մերձավոր զինվորական հա-

մախոհների արտաքսում Եգիպտոսից և Սամիի կառավարության հեռացում: Խդիվը բավարարեց վերջնագրի պայմանը՝ Մահմուդ Սամիի կառավարության հրաժարականի վերաբերյալ և տվեց համապատասխան հրաման:

Մայիսի 27–ին, երբ այդ մասին իմացան Ալեքսանդրիայի կայազորի սպաները, որոնք վաթանիստներ էին, սպառնալից հեռագիր ուղարկեցին խդիվին՝ փոխել իր որոշումը, և մտածելու համար նրան տվեցին 12 ժամ: Հեռագրում ասված էր, որ նրանք չեն ընդունում Արաբիի հրաժարականը և 12 ժամից հետո, իրենց պահանջը չբավարարելու դեպքում, իրենք պատասխանատու չեն հասարակական անդորրի համար:

Հայրենասեր զինվորականների ակնարկը միանգամայն հասկանալի էր: Դա նշանակում էր զինված ապստամբություն խդիվի դեմ: Խդիվը հենց այդպես էլ ընկալեց վաթանիստների հեռագրի բովանդակությունը և սարսափի մատնվեց: Ճարահատյալ նա դիմեց Երևելիների պալատի նախագահ Սուլթան փաշայի օգնությանը: Վերջինս չվարանեց օգնության հասնել Թոֆիկին և դիմեց վաթանիստներին հրաժարվել ապստամբության գաղափարից և հնազանդվել խդիվին: Բայց վաթանիստներն իրենց հերթին իրադրության զարգացմանը միանգամայն այլ ընթացք տվեցին: Նրանք ոչ միայն մերժեցին Սուլթան փաշայի կոչը, այլև հակապահանջ ներկայացրին: Նրանք խդիվին հայտարարեցին դավաճան և պահանջեցին նրան գահընկեց անել, ինչպես ժամանակին արել էին նրա հորը՝ խդիվ Իսմայիլին:

Շուտով այս հարցը դադարեց կաբինետային քննարկման մենաշնորհ լինելուց և դուրս հորդեց փողոցներ և հրապարակներ: Զայրացած ժողովուրդը, տասնյակ հազարավոր ցուցարարներ, հանդես էին գալիս ի պաշտպանություն վաթանիստների և Ահմադ Արաբիի: Նրանց պահանջների մեջ կենտրոնական հարցերից մեկը խդիվի գահընկեց անելու հարցն էր: Այսպիսով, Թոֆիկի չմտածված քայլը հանգեցրեց Արաբիի և վաթանիստների դիրքերի ամրապնդմանը: Խդիվը և նրա թիկունքում կանգնած Անգլիան ու Ֆրանսիան ականատես եղան այն լայն աջակցությանը, որ եգիպտացիները ցուցաբերեցին ի պաշտպանություն ազգային առաջնորդ դարձած Արաբիի: Մյուս կողմից, այդ դեպքերը համոզիչ կերպով ցույց տվեցին խդիվի և նրա պալատական շրջապատի անօգնականությունը և դիրքերի թուլությունը:

Խդիվը հարկադրված էր նահանջել: Նա համաձայնվեց Արաբիին թողնել որպես ռազմական նախարար: Շատերին թվում էր, թե գտնվել է

կոնֆլիկտի լուծման բանալին: Բայց նրանք սխալվեցին: Սխալվեց նաև խդիվը: Արաբին դիմեց անսպասելի քայլի: Նա մնաց ոչ միայն Եգիպտոսի ռազմական նախարարը, այլև դարձավ միակ նախարարը, այսինքն Եգիպտոսի փաստական կառավարիչը, իր ձեռքում կենտրոնացնելով ամբողջ իշխանությունը: Խդիվի և անգլիացիների ու ֆրանսիացիների համար ստեղծվեց անելանելի վիճակ: Եգիպտոսը եռում էր, Կահիրեն դարձել էր հեղափոխության կենտրոն: Խդիվը ելքը գտավ 1882 թ. հունիսի 13–ին փախուստ տալով Կահիրեից Ալեքսանդրիա, պաշտպանություն փնտրելով Ալեքսանդրիայում խարիսխ նետած անգլիական և ֆրանսիական ռազմական նավերի մոտ: Նրա հետ Ալեքսանդրիա փախան նրան հավատարիմ մի քանի գործիչներ և այստեղ խդիվը կազմեց նոր կառավարություն, որը գլխավորեց Ռագիբ փաշան:

Այսպիսով, Եգիպտոսում կազմավորվեց երկու քաղաքական կենտրոն: Մեկը՝ հետադիմականը, Ալեքսանդրիայում, որը գլխավորում էր խդիվը, իսկ մյուսը՝ հեղափոխականը, Կահիրում, որի գլուխ էր կանգնած Ահմադ Արաբին:

Հասկանալի է, որ նման վիճակը երկար ժամանակ չէր կարող պահպանվել և կողմերից մեկը պետք է դիմեր վճռական քայլերի: Այդ նախաձեռնությունն իր վրա վերցրեց Անգլիան: Պատրվակ բռնելով այն հանգամանքը, որ Ալեքսանդրիայի ծովեզերյա մասում եգիպտացիները վերանորոգում էին առափնյա պաշտպանական կառույցները, անգլիական ծովակալ Սեյմուրը պահանջեց դադարեցնել այդ աշխատանքները: Ստանալով բացասական պատասխան, նա 1882 թ. հուլիսի 11–ին հրամայեց նավերից ռմբակոծել Ալեքսանդրիան: Անպաշտպան քաղաքը ավերվեց, իսկ շատ թաղամասեր հրկիզվեցին:

Արաբին կարգադրեց Ալեքսանդրիայում տեղակայված կայազորին հեռանալ քաղաքից: Եգիպտական զորքերի հետ միասին Ալեքսանդրիան լքեցին նաև նրա բնակիչները: Հուլիսի 15–ին անգլիական զորքերը մտան Ալեքսանդրիա:

Ալեքսանդրիայի ռմբակոծումը և գրավումը անգլիացիների կողմից հանդիսացավ անգլո–եգիպտական պատերազմի սկզբնական փուլը: Պատերազմի սկսման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Անգլիայի վրա, որը Եգիպտոսի նվաճումը դիտում էր որպես իր համընդհանուր գաղութային քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Երկրորդ փուլի ընթացքում պատերազմական գործողությունները ծավալվեցին Եգիպտոսի ցամաքային տարածքում: Այս փուլում ռազմա-

կան գործողությունների իրականացման համար Եգիպտոս ուղարկվեց անգլիական էքսպեդիցիոն կորպուսը՝ գեներալ Ուոլսլիի հրամանատարության ներքո: Դա արդեն բացահայտ պատերազմ էր, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ էքսպեդիցիոն կորպուսի Եգիպտոս ուղարկելու և ֆինանսավորելու որոշումն ընդունեց Մեծ Բրիտանիայի համայնքների պալատը:

Խդիվ Թոֆիկը, ոգի առած անգլիացիների ռազմական գործողություններից և Ալեքսանդրիայի տակ ձեռք բերած նրանց հաղթանակներից, հրամայեց Արաբիին որպես ռազմական նախարարի, անհապաղ դադարեցնել դիմադրությունը անգլիացիներին:

Արաբին հայտնվեց ծանր ընտրության առջև, սակայն իր մեջ ուժ գտավ ճիշտ որոշում ընդունելու համար: Նա, նախ, մերժեց կատարել վարկաբեկված և անգլիացիների շահերին ծառայող խդիվի հրամանը և չդադարեցրեց պատերազմական գործողություններն անգլիացիների դեմ: Ապա կատարեց հաջորդ միանգամայն ճիշտ քայլը՝ դիմեց եգիպտական ժողովրդին, բացատրելով իր քաղաքականության իմաստը և խդիվի դավաճանական դիրքորոշումը: Ժողովուրդը վաղուց էր սպասում իր առաջնորդի խոսքին: Արաբին պարզորոշ հայտարարեց, որ Եգիպտոսի և Անգլիայի միջև գնում է անհաշտ պատերազմ և Եգիպտոսը պայքարում է իր անկախության ու ազատության համար: Նա իրավացիորեն Անգլիային ներկայացրեց որպես մի երկիր, որը փորձում է նվաճել Եգիպտոսը: Միաժամանակ Արաբին իր խոսքում նշեց, որ յուրաքանչյուր եգիպտացի պետք է որոշի իր տեղը այդ պատերազմում, վստահ լինելով, որ բոլոր հայրենասեր եգիպտացիները կանգնած են ի պաշտպանություն «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսի: Նա միաժամանակ ընդգծեց, որ բոլոր նրանք, ովքեր դավաճանել են և անցել անգլիացիների կողմը, որպես դավաճաններ կպատժվեն: Արաբին անթաքույց կերպով ակնարկում էր նաև խդիվ Թոֆիկին:

Դրանից հետո դեպքերը զարգացան կայծակնային արագությամբ, որը վերջնական պարզություն մտցրեց Արաբիի և Թոֆիկի հարաբերություններում: Խդիվը 1882 թ. հուլիսի 23–ին, այն բանից հետո, երբ Արաբին չկատարեց անգլիացիների դեմ պատերազմական գործողությունները դադարեցնելու նրա հրամանը, նա Արաբիին հայտարարեց խռովարար և ազատեց ռազմական նախարարի պարտականություններից: Արաբին, ի պատասխան, խդիվին հայտարարեց դավաճան: Իսկ դա նշանակում էր, որ նրա վրա տարածվելու էր Արաբիի կող-

մից մինչ այդ կատարած նախազգուշացումն այն մասին, որ բոլոր նրանք, ովքեր կդավաճանեն հայրենիքը, կկանգնեն ռազմական դատարանի առջև:

Արաբին, որը վճռականորեն էր տրամադրված անգլիացիների դեմ պատերազմը շարունակելու հարցում, քանի դեռ, ինչպես ինքն էր ասում, «մեր մեջ բաբախում է սիրտը», դիմեց ակտիվ քայլերի անգլիացիներին հակազդելու ուղղությամբ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպչական և ռազմական:

Կազմակերպչական միջոցառումը թելադրված էր այն հանգամանքով, որ երկրում, ըստ էության, կառավարություն չկար: Սամիի կառավարության հրաժարականից հետո մնացել էր միայն Արաբին որպես ռազմական մինիստր, որին խդիվը մայիսի 23–ի որոշումով նույնպես պաշտոնանկ էր արել: Կար խդիվի հրամանով ստեղծված Ռագիբիի կառավարությունը, որը նստած էր քանդված Ալեքսանդրիայում և որի լիազորություններն Ալեքսանդրիայից այն կողմ չէին տարածվում և որին չէր ընդունում Արաբին: Ի միջի այլոց, Արաբին Ռագիբ փաշային նույնպես հայտարարեց դավաճան, ինչպես Թոֆիկին:

Ուստի Արաբին որոշեց ստեղծել կառավարման նոր մարմիններ, որոնք ընդունված է համարել հեղափոխական իշխանություններ: Ստեղծվեցին Ռազմական խորհուրդ և Արտակարգ խորհուրդ: Ռազմական խորհրդի մեջ մտան Արաբիին հավատարիմ գեներալներ և բարձրաստիճան սպաներ: Այդ խորհուրդը պետք է զբաղվեր զուտ ռազմական գործերով՝ մարտական գործողությունների ծրագրերի մշակում, բանակի մարտունակության բարձրացում, զենքի և հանդերձանքի հայթայթում և այլն: Իսկ ինչ վերաբերում է Արտակարգ խորհրդին, ապա նրա կազմը բավականին խայտաբղետ էր: Այստեղ, բնականաբար, ներկայացված էին վաքանիստները, եգիպտական հասարակության երևելի անձեր, շեյխեր, աստվածաբաններ և այլ քաղաքացիական անձնավորություններ: Խորհուրդն իրավասու էր ընդունելու ամեն տեսակի որոշումներ, որոնք կարող էին ամրապնդել եգիպտացիների համախմբվածությունը անգլիացիների դեմ մղվող պատերազմում:

Բայց Արտակարգ խորհրդի կազմում կային մարդիկ, որոնք, կարելի է ասել, մինչև վերջ նվիրված չէին եգիպտոսի ազատության գաղափարին և պատրաստ չէին մինչև վերջ գնալ անգլիացիների դեմ: Քիչ չէին նաև տատանվողները: Այս հանգամանքները այդ խորհրդին դարձնում էին խիստ խոցելի, անգամ անվստահելի: Համենայն դեպս, երբ

խոսք է գնում Արտակարգ խորհրդի գնահատականի մասին, ապա պետք է հաշվի առնել այս հանգամանքները և չմոռանալ, որ նրա որոշ անդամների հաջողվեց փախչել Կահիրեից Ալեքսանդրիա և միանալ խդիվին: Իսկ դա նշանակում էր Եգիպտոսի համար մղվող պայքարում անցնել անգլիացիների կողմը:

Ինչ վերաբերում է ռազմական միջոցառումներին, ապա Արաբին ընթացք տվեց եգիպտացիների խանդավառությանը կամավոր կերպով մտնել եգիպտական բանակի շարքերը և զենքը ձեռքին պայքարել անգլիական գաղութարարների դեմ: Արաբին հույս ուներ, որ աշնանը նա արդեն կարող էր ունենալ լավ մարզված և զինված բանակ և բեկում առաջացնել պատերազմական գործողությունների մեջ՝ հօգուտ Եգիպտոսի: Արաբին ձեռնարկեց նաև պաշտպանական բնույթի մի քանի այլ քայլեր:

3. Արաբիի ապստամբության ճնշումը և Եգիպտոսի նվաճումն անգլիացիների կողմից

Անգլիացիները 1882 թ. հուլիսի վերջին և օգոստոսի սկզբներին, Ռոլսլիի գլխավորությամբ, վերսկսեցին ռազմական գործողությունները: Այդ պահին Արաբին և նրա գեներալները թույլ տվեցին սխալ և չկարողացան ճիշտ հաշվարկել անգլիական բանակի հարվածի ուղղությունը, որից փայլուն կերպով օգտվեց զինվորական գործի մի այնպիսի պրոֆեսիոնալ, ինչպիսին անգլիական գեներալ Ուոլսլին էր: Նա շրջանցելով եգիպտական միջերկրյածովյան ամրությունները, եգիպտացիների համար անսպասելիորեն հայտնվեց Սուեզի մոտ, որն առանց մարտի գրավեց 1882 թ. օգոստոսի 2–ին: Անգլիական գեներալին դրանից հետո մեկ անգամ ևս հաջողվեց մոլորեցնել Արաբիին և նրա հրամանատարներին, ու օգոստոսի 20–ին գրավել նաև Պորտ–Սաիդն ու Իսմայիլիան:

Ամեն ինչ վկայում էր այն մասին, որ հասունանում էր վճռական ճակատամարտը անգլիական և եգիպտական զորքերի միջև: Երկու կողմերն էլ պատրաստվում էին դրան: Այդ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1882 թ. սեպտեմբերի 13–ին՝ Թել ալ–Քաբիրի մոտ: Դա խիստ պայմանականորեն կարելի է անվանել ճակատամարտ: Նախ, նա տևել է ընդամենը մոտ կես ժամ: Երկրորդ, բառի բուն իմաստով, լուրջ դիմադրության առումով, մարտ տեղի չունեցավ: Անգլիական լավ զինված կանոնավոր զորամիավորումների դեմ կանգնած էին երեկվա բեդվիններից

կազմված, վատ մարզված ու զինված, կարգապահության հարցում խիստ թույլ եգիպտական զորքեր: Բեդվինները «փայլեցին» փախուստ տալու մեջ: Պատերազմի դաշտում հայտնված խեղճ գնդապետ Ահմադ Արաբին փորձում էր կանգնեցնել խուճապահար բեդվիններին, բայց դա չհաջողվեց: Նրան չօգնեցին ո՛չ իր բարձր հեղինակությունը և ո՛չ էլ հայրենասիրական ճարտասանությունը: Ինչևէ, Թել ալ–Քաբիրի մոտ տեղի ունեցած կարճատև մարտը համարվում է անգլո–եգիպտական գլխավոր ճակատամարտը, որն ավարտվել է անգլիացիների հաղթանակով:

Չնայած այդ հանգամանքին, դեռ ամեն բան կորած չէր և դեռ կարելի էր պայքարը շարունակել: Դա հասկանում էր Արաբին և նա պատերազմի դաշտից շտապեց Կահիրե, նպատակ ունենալով ամրապնդել Կահիրեի պաշտպանությունը:

Կահիրեում նրա առաջին գործը եղավ գումարել Արտակարգ խորհրդի նիստ, նրա քննարկմանը դնելով պատերազմը շարունակելու կամ դադարեցնելու հարցը: Հանդես գալով խորհրդի անդամների առջև, Արաբին պնդում էր անգլիացիների դեմ պատերազմը շարունակելու վրա: Նրա այդ տեսակետը և դիրքորոշումը աջակցություն ստացավ խորհրդի անդամներ և իր զինակիցներ Աբդալլահ Նադիմից, Մահմուդ Սամիից և Աբդ ալ–Ալից:

Սակայն խորհրդի անդամ եգիպտական նոտաբլները կամ երևելիները, կալվածատերերը և նրանց համախոհները, դեմ արտահայտվեցին պատերազմը շարունակելու Արաբիի առաջարկությանը: Ձայների մեծամասնությամբ նրանք քվեարկեցին հօգուտ պատերազմի դադարեցման և եգիպտոսի անձնատուր լինելուն:

Փոքրամասնության մեջ հայտնված Արաբին ենթարկվեց Արտակարգ խորհրդի կողմից 1882 թ. սեպտեմբերի 13–ի այդ որոշմանը:

Արդյո՞ք ճիշտ վարվեց Ահմադ Արաբին: Այս հարցը քննարկվում է մինչև օրս և ունի թեր և դեմ կողմեր: Փոքրամասնության ենթարկվելը մեծամասնությանն ընդհանուր սկզբունք է և թերևս ճիշտ է այլ պարագաներում, սակայն ոչ հեղափոխական կամ ազգային–ազատագրական պատերազմների ժամանակներում, երբ այլ սկզբունքներ են գործում: Իսկ, եգիպտոսը, ինչպես նշել ենք, ազգային–ազատագրական պատերազմ էր մղում անգլիական գաղութարարների դեմ, երբ պետք է գործեին խաղի այլ կանոններ:

Մյուս կողմից, դեռևս պատերազմական գործողությունների մեջ չէր մտել լավ զինված և մարզված եգիպտական կանոնավոր բանակը,

որը տեղակայված էր հյուսիսում, որին շրջանցել էր անգլիական գեներալ Ուոլսլին: Կարելի էր մարտի մեջ մտցնել այդ բանակը, Կահիրեն ամրապնդելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ կիրառել, ինչպես նաև օգտագործել այլ պահուստային հնարավորություններ, որը չարվեց և որին համոզիչ բացատրություն գտնելը համարյա անհնար է: Դա, անշուշտ, Արաբիի կողմից անհետևողականության դրսևորում էր: Կարելի է ասել, որ այդ պահին Արաբին, որն, իրոք, մինչև վերջ նվիրված էր հայրենիքի ազատության գաղափարին, այդ պահին բարձրության վրա չգտնվեց, որը շատ թանկ նստեց Եգիպտոսի վրա:

1882 թ. սեպտեմբերի 14–ին անգլիացիները մտան Կահիրե, իսկ մինչև ամսվա վերջ գրավեցին ամբողջ Եգիպտոսը: Սեպտեմբերի 24–ին Ալեքսանդրիայից Կահիրե վերադարձավ խդիվ Թոֆիկը իր կողմնակիցների հետ միասին:

Գնդապետ Ահմադ Արաբին, սեպտեմբերի 14–ին, երբ անգլիական զորքերը մտան Կահիրե, անձնատուր եղավ անգլիական ռազմական իշխանություններին: Դեկտեմբերին նա դատապարտվեց մահվան, որը փոխարինվեց ցմահ աքսորով Ցեյլոն կղզի: Համապատասխան պատիժներ ստացան նաև ապստամբության մյուս մասնակիցները: Հետաքրքիր է, որ դատավճիռներն ընդունում էր անգլիական հանձնաժողովը, որը գլխավորում էր Թուրքիայում անգլիական դեսպան լորդ Դաֆֆերինը: Ստամբուլից տեղափոխվելով Կահիրե, անգլիական լորդը մեկը մյուսի հետևից մահվան վճիռներ էր արձակում եգիպտական հայրենասերների նկատմամբ: Հենց այդ հանձնաժողովի որոշմամբ Արաբին դադապարտվեց մահվան: Սակայն լորդ Դաֆֆերինը, վախենալով, որ եթե Արաբիի նկատմամբ մահապատիժն ի կատար ածվի, դա կարող է նոր շատ լուրջ բարդություններ առաջացնել, անձամբ փոխեց դատավճիռը, և Եգիպտոսի ազգային հերոսին ցմահ աքսորյալի վիճակով արտաքսեց անգլիական գաղութ Ցեյլոն կղզի:

Եգիպտոսում հաստատվեց անգլիական օկուպացիոն ռեժիմ, որը համարվում էր ժամանակավոր: Եգիպտական կանոնավոր բանակը ցրվեց: Ձևականորեն, իրավական առումով, Եգիպտոսի կարգավիճակը չփոխվեց, նա չբռնակցվեց և չհայտարարվեց անգլիական թագին պատկանող գաղութ: Նա մնաց որպես Օսմանյան կայսրության մի մաս, որի սյուզերենը թուրքական մուլթանն էր:

Եգիպտոսում պահպանվեց կառավարման յուրահատուկ կարգը: Իր «իշխանությունը» պահպանեց խդիվը, երկիրն ուներ իր կառավարու-

թյունը: 1883 թ. խդիվը հաստատեց հիմնական օրենքը, որով Եգիպտոսում հիմնվում էին Օրենսդիր խորհուրդ և Գլխավոր կամ Ընդհանուր ժողով, խիստ սահմանափակ իրավունքներով: Սակայն ամբողջ իշխանությունը պատկանում էր անգլիացիներին և նրանց կողմից նշանակված դիվանագիտական ներկայացուցչին, որին սովորաբար մասնագիտական գրականության մեջ անվանում են «Եգիպտոսի կառավարիչ»: Բայց պաշտոնապես նա նման ոչ մի տիտղոս չուներ, այլ համարվում էր Անգլիայի Գլխավոր հյուպատոսը Եգիպտոսում: Զուգահեռաբար օգտագործվում էր նաև Գլխավոր ռեզիդենտ տերմինը: Եգիպտոսի փաստական ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր նրա ձեռքում և առանց նրա գիտության ու հավանության Եգիպտոսում ոչինչ չէր կարող կատարվել:

1883 թ. այդ պաշտոնում նշանակվեց մայոր Բերինգը, որը շուտով ստացավ լորդի աստիճան և կոչվեց լորդ Կրոմեր: Նա այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1907 թ.:

Ինչ վերաբերում է խդիվ Թոֆիկին, ապա նա այդ պաշտոնում մնաց մինչև 1892 թ., մինչև իր մահը: Նրան փոխարինեց նրա որդին՝ Աբբաս II Հիլմին, որն այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1914 թ., մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Իսկ Եգիպտոսի «ժամանակավոր օկուպացված երկրի» կարգավիճակը պահպանվեց մինչև 1914 թ., երբ Եգիպտոսը հայտարարվեց անգլիական պրոտեկտորատ:

XI. ՀՅՈՒՍԻՍԱՖՐԻԿԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ

1. Ալժիրի դեյի հովհարով հարվածը ֆրանսիական հյուպատոսին և Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից

Հյուսիսաֆրիկյան արաբական երկրներում թուրքական տիրապետությունն այնքան ամուր չի եղել, որքան Արևելքի արաբական երկրներում և ընդունված տեսակետ է, որ օսմանյան տիրապետությունն այդտեղ ծնական բնույթ ուներ: Այդ հանգամանքն իր դերն ունեցավ, որ աֆրիկյան աշխարհամասի հյուսիսային մասում գտնվող արաբական երկրներն առաջիններից մեկը դարձան եվրոպական պետությունների

նվաճողական հետաքրքրությունների կենտրոնում: Այստեղ առաջնությունը պատկանում էր Ֆրանսիային:

Դեռևս Նապոլեոն I շատ լուրջ մտածում էր հաստատվել Ալժիրում: Նա արտակարգ ուշադրություն էր դարձնում ֆրանսիական բուրժուազիային նոր շուկաներով ապահովելու հարցին: Թեև նա չհասցրեց գործնական քայլերի դիմել Ալժիրը նվաճելու ուղղությամբ, սակայն այդ խնդիրը երբեք չհանվեց կայսրին հաջորդած ֆրանսիական կառավարությունների քաղաքականության օրակարգից:

Ալժիրի վրա կենտրոնանալու հարցում, բացի նոր շուկաներ ձեռք բերելուց, իր նշանակությունն ունեցավ նաև ֆրանսիական ազնվականության այն մասի դիրքորոշումը, որը ֆրանսիական 1789 թ. հեղափոխությանը հաջորդած փոթորկոտ ժամանակաշրջանում, հեղափոխական դեկրետներով զրկվել էր իր ժառանգական կալվածքներից: Ֆրանսիական կառավարությանը մղելով Ալժիրը նվաճելուն, ազնվականության այդ խավը այնտեղ նոր հողեր ձեռք բերելու և իր տնտեսական վիճակը բարելավելու լուրջ հույսեր էր փայփայում:

Բուրբոնները, որոնք Նապոլեոն I անկումից հետո նորից էին վերադարձել Ֆրանսիա և վերականգնել իրենց թագավորական իրավունքները, հայտնվել էին ծանր քաղաքական դրության մեջ: Նրանց գահը կրկին երերում էր և նրանք փորձում էին արտաքին քաղաքականության բնագավառում որևէ հաջողությամբ ամրապնդել իրենց դիրքերը երկրի ներսում:

Ահա այս երեք հանգամանքները կանխորոշեցին Ալժիրը նվաճելու Ֆրանսիայի քաղաքականությունը:

Մնում էր գտնել համապատասխան պատրվակ: Դա նույնպես գտնվեց: Ֆրանսիացիները որպես առաջին պատրվակ օգտագործեցին ծովահենների հարցը, որը ժամանակին մեծ ծավալ էր ստացել այդ տարածաշրջանում և Միջերկրական ծովի ջրերում: Դա անհանգստացնում էր եվրոպական պետություններին և անգլիական նավատորմը 1816 թ. հրետակոծեց Ալժիրի առափնյա շրջանները: Թեև դա թուլացրեց ծովահենների դիրքերը, բայց ծովահենությունը շարունակվում էր:

Օգտվելով այդ հանգամանքից, Ֆրանսիան Ալժիրի դեմ մեղադրեց ծովահեններին հովանավորելու մեջ: Որոշ իմաստով դա շինծու մեղադրանք էր, քանի որ ծովահենությունը Ալժիրում XIX դարի սկզբներին իր հոգևարքի մեջ էր, հետևաբար նա որևէ լուրջ վտանգ չէր ներկայաց-

նում: Բայց դա ֆրանսիական գաղութարարների համար ոչ մի նշանակություն չուներ, քանի որ նրանք որոշել էին անպայման նվաճել Ալժիրը:

Երկրորդ պատրվակը տվեց ինքը, Ալժիրը: Դա կապված էր այն իրողության հետ, որ ինչպես ֆրանսիական հեղափոխության շրջանում, այնպես էլ Նապոլեոն Բոնապարտի ռազմական արշավանքների ժամանակ, Ալժիրը տնտեսական ծանր վիճակում և շրջափակման մեջ հայտնված Ֆրանսիային մատակարարել էր պարեն, հատկապես ցորեն, և անասնակեր, որը զգալի օգնություն էր ֆրանսիացիներին: Դրանց մի մասը տրվել էր անհատույց, իսկ մի մասը որպես կրեդիտ, որը Ֆրանսիան պարտավորվել էր հետագայում վճարել: Սակայն անցնում էին տարիները և Ֆրանսիան իր պարտքերը վճարելու ոչ մի մտադրություն չուներ: Խոսքը գնում էր միլիոնավոր ֆրանկների մասին, որն իր ժամանակի համար մեծ գումար էր: Դեյը պնդում էր, որ Ֆրանսիան վճարի իր պարտքերը: Իսկ Ֆրանսիան չէր ցանկանում: Ալժիրի գրավումը, ինչպես ֆրանսիական կառավարությունն էր ենթադրում, այդ հարցն օրակարգից կհաներ:

Ֆրանս–ալժիրյան տարաձայնությունների մեջ իր լուման ներդրեց Ալժիրում ֆրանսիական հյուպատոսը, որը չէր թաքցնում իր արհամարհական վերաբերմունքը ալժիրցիների և անձնապես դեյի նկատմամբ, որը համբերությունից հանում էր դեյին: Եվ հերթական հանդիպման ժամանակ, երբ ամբարտավան ֆրանսիական հյուպատոսը խիստ վիրավորեց դեյին, ապա վերջինս իր ձեռքի հովհարով, որը նա օգտագործում էր աներես ճանճերին քշելու համար, հարվածեց աներես հյուպատոսին:

Անշուշտ, դա դիվանագիտական էթիկետի կոպիտ խախտում էր, բայց նույնքան կոպիտ խախտում էր նաև ֆրանսիական հյուպոտոսի կողմից զրույցի ժամանակ դեյին վիրավորանք հասցնելը: Այս դեպքը տեղի է ունեցել 1827 թ. ապրիլի 29–ին:

Հովհարային հարվածը ֆրանսիական կողմը վարպետորեն ներկայացրեց Ալժիրի դեմ ուղղված իր հետագա քայլերի արդարացման համար: Ֆրանսիայում բարձրացվեց չտեսնված աղմուկ: Պետական գործիչները և մամուլը դա համարեցին Ֆրանսիային հասցրած վիրավորանք, որի համար պահանջում էին պատժել Ալժիրին:

Ֆրանսիան խզեց ամեն տեսակի կապերը Ալժիրի հետ և նրան ծովային շրջափակման ենթարկեց: Ապա սկսեց լրջորեն պատրաստվել Ալժիր ներխուժելու համար: Դա տեղի ունեցավ 1830 թ. հունիսի 14–ին:

Ֆրանսիական բանակը, բաղկացած մոտ 40 հազար զինվորներից, գեներալ դը Բուրմոնի հրամանատարությամբ, ներխուժեց Ալժիր, առանց դժվարության ճնշեց թուրքական զորքերի դիմադրությունը, որը հիմնականում կազմված էր ենիչերիներից, և հուլիսի 4–ին ստիպեց դեյին անձնատուր լինել: Ընդհարումների ժամանակ թուրքերը կորցրեցին 10 հազար մարդ, իսկ ֆրանսիացիների կորուստները կազմեցին ընդամենը 400 մարդ:

Դեյը և թուրքական մնացած զինվորները ընդմիշտ լքեցին Ալժիրը: Ֆրանսիական նվաճողների ձեռքն անցավ դեյի գանձարանը: Չբավարարվելով դրանով, ֆրանսիական զինվորները գրավեցին ալժիրցիների տներն ու գույքը, ինչպես նաև նրանց պատկանող հողերը, որը, ինչպես նշել ենք, ֆրանսիական աղքատացած հողային արիստոկրատիայի գլխավոր պահանջն էր: Ֆրանսիացիների տիրապետության տակ անցան Ալժիր քաղաքը, Օրանը, Մոստագանը և այլ ծովեզրյա բնակավայրեր:

1834 թ. ֆրանսիական թագավոր Լուի Ֆիլիպի դեկրետով Ալժիրը հայտարարեց միացված Ֆրանսիային: Նրա հրամանով ստեղծվեց «Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական տիրույթների վարչություն», որի անմիջական կառավարման ներքո անցավ Ալժիրը: Ստեղծվեց գեներալ–նահանգապետի պաշտոն, որի տնօրինության տակ պետք է գտնվեր Ալժիրը:

Սակայն այստեղ ուշադրություն է գրավում մի կարևոր հանգամանք: Նորաստեղծ վարչությունը կոչվում էր «Հյուսիսային Աֆրիկայում ֆրանսիական տիրույթների», թեև այդ ժամանակ Ֆրանսիայի ուղղակի տիրապետության տակ գտնվում էր միայն Ալժիրը, այն էլ ոչ ամբողջապես: Վարչության նման անվանակոչումը վկայում էր այն մասին, որ Ֆրանսիան մտադիր չէր բավարարվել միայն Ալժիրով, այլ նպատակ ուներ իր տիրապետությունը հաստատել ամբողջ Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների վրա:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, դեռ վաղ էր խոսել Ալժիրը Ֆրանսիային կցելու մասին, ինչպես հայտարարել էր ֆրանսիական թագավորը: Շուտով Ալժիրում ծայր առավ հակաֆրանսիական ազգային–ազատագրական հզոր շարժում, որը տևեց տասնամյակներ և թանկ նստեց ֆրանսիացիների վրա:

Ալժիր քաղաքի և մյուս ծովեզրյա բնակավայրերի գրավումը ֆրանսիացիների կողմից, ազդանշան ծառայեց ալժիրցիների՝ բերբերների և արաբների համար, ոտքի ելնելու ընդդեմ նոր նվաճողների:

Ստեղծվեց ապստամբական երկու կենտրոն՝ արևմտյան, որը ղեկավարում էր Աբդ ալ–Կադիրը, և արևելյան՝ Ահմեդ բեյի գլխավորությամբ:

Աբդ ալ–Կադիրը բերբերական հայտնի ընտանիքից էր, որի անդամները հայտնի էին իրենց համառ պայքարով թուրքերի տիրապետության դեմ և մեծ հեղինակություն էին վայելում իրենց ցեղակիցների շրջանում: Աբդ ալ–Կադիրը մեծացել և ծնավորվել էր ազգային–հայրենասիրական մթնոլորտում: Այդ հանգամանքը և նրա բնատուր տաղանդը և անձնական խիզախությունը, շուտով նրան դարձրին Ալժիրի հակաֆրանսիական ազատագրական պայքարի հեղինակավոր առաջնորդը: Իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ նա հայտնի մարաբուտ էր՝ Հյուսիսային Աֆրիկայում տարածված կրոնական եղբայրության առաջնորդ: 1832 թ. ֆրանսիացիների դեմ պայքարի ելած Արևմտյան Ալժիրի ցեղերը նրան ընտրեցին իրենց առաջնորդ, նրան վստահելով հակաֆրանսիական պայքարի ընդհանուր ղեկավարությունը:

Աբդ ալ–Կադիրին հաջողվեց իր ղեկավարության ներքո միավորել տարբեր ցեղերի և ցեղային միությունների, հասնել համերաշխության հաստատմանը մրցակից ցեղերի միջև, զսպել ֆեոդալների սեպարատիստական նկրտումները և ստեղծել բավականին մարտունակ մի զորաբանակ, ընդունակ մարտնչելու ֆրանսիական գաղութարարների դեմ: Եվ շուտով այդ ուժերը տարան մի շարք հաղթանակներ ֆրանսիական զորքերի նկատմամբ: Ֆրանսիան հարկադրված 1834 թ. փետրվարին Աբդ ալ–Կադիրի հետ կնքեց համաձայնագիր հաշտության վերաբերյալ: Այդ պայմանագրով նրա տիրապետության տակ էին մնում մերձծովյա քաղաքները, իսկ մնացած ամբողջ Արևմտյան Ալժիրը Ֆրանսիան ճանաչում էր որպես Աբդ ալ–Կադիրին ենթակա տարածք:

Դա պետք է համարել Արևմտյան Ալժիրի մեծ հաղթանակը: Աբդ ալ–Կադիրն իրեն հայտարարեց էմիր ալ–մումինին, այսինքն հավատացյալների վեհապետ, և սկսեց իր տիրապետության տակ գտնվող տարածքը կառավարել որպես ինքնիշխան պետություն: Նա ստեղծեց բավականին լավ կազմակերպված կանոնավոր բանակ, որի շարքերում համախմբվել էր 10 հազար մարդ: Նրան այդ գործում օգնեցին մարոկկոյական և թունիսցի զինվորական հրահանգիչները, անգամ առանձին ֆրանսիական ռազմական մասնագետներ: Կար նաև աշխարհազոր, բաղկացած 70 հազար աշխարհազորայիններից: Նա կառուցեց ամրոցներ, բանակի կարիքները հոգալու համար ծուլարան, վառոդի գործա-

րաններ և այլն: Նրա զորքերի միջուկը կազմում էին բեդվինները, նրան մեծ աջակցություն էր ցույց տալիս հոգևորականությունը:

Աբդ ալ–Կադիրը ժամանակին եղել էր Եգիպտոսում և մեծապես տպավորված էր Մուհամմադ Ալիի բարենորոգումների քաղաքականությամբ: Եվ նա սկսեց, կարելի է ասել, համանման բարենորոգումներ կիրառել Արևմտյան Ալժիրում: Նա սահմանափակեց ֆեոդալների իրավունքները, վերջ տալով նրանց կամայականություններին հարկերի գանձման և պարհակների պարտադրման հարցում: Նա երկիրը բաժանեց ինը մարզերի, ղեկավար նշանակելով իր տեղապահներին, որոնք ենթարկվում էին անմիջապես իրեն, վերացրեց պաշտոնների վաճառքը, որը մինչ այդ լեգալ բնույթ էր կրում, և ձեռնարկեց այլ քայլեր երկրում կարգ ու կանոն հաստատելու, հողագործ գյուղացիների և անասնապահ բեդվինների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

1835 թ. ֆրանսիացիները, ենթադրելով, որ իրենք արդեն բավականին ուժեղ են և ծանոթացել են տեղական պայմաններին, սկսեցին պատերազմական գործողությունները, որը տևեց երկու տարի: Նրանց չհաջողվեց գրավել Արևմտյան Ալժիրը և վերջ տալ Աբդ ալ–Կադիրի իշխանությանը, և 1837 թ. կնքեցին նոր պայմանագիր, որն ավելի ամրապնդեց Աբդ ալ–Կադիրի դիրքերը: Ֆրանսիան ճանաչեց նրա իշխանությունը ոչ միայն Արևմտյան, այլև Կենտրոնական Ալժիրի վրա:

Այդ պայմանագրի ստորագրումից հետո, ֆրանսիացիները կենտրոնացան Արևելյան Ալժիրը գրավելու վրա: Չնայած Աբդ ալ–Կադիրի բոլոր ջանքերին միավորել ալժիրցիների ուժերը, դա չհաջողվեց նրան: Արևելյան Ալժիրի ղեկավար Ահմեդ բեյը գործում էր անջատ և ոչ մի ցանկություն չուներ միանալ Արևմտյան Ալժիրի հետ և ենթարկվել Աբդ ալ–Կադիրին: Ալժիրցիների այդ երկպառակությունից փայլուն կերպով օգտվեցին ֆրանսիացիները, որոնք 1836 թ. պատերազմական գործողություններ ծավալեցին Արևելյան Ալժիրում և հաջորդ տարի, ճնշելով ալժիրցիների կատաղի դիմադրությունը, գրավեցին այդ տարածաշրջանի գլխավոր քաղաք Կոնստանտինը: Ահմեդ բեյը լքեց քաղաքը և ապաստանեց երկրի խորքերը, որոնք դեռ մատչելի չէին ֆրանսիական զինվորներին: Իսկ վերջիններս իրենց լիակատար ազատություն տվեցին Արևելյան Ալժիրի բնակչությանը թալանելու, հողերը զավթելու և այլ բռնություններ կիրառելու մեջ: Նրանց այդ անմիտ գործողությունները ցեղերի դժգոհության նոր ալիք առաջացրեց:

Այդ պահից տեղի ունեցան հետաքրքիր տեղաշարժեր: Ահմեդ բեյի կողմից լքված և դժգոհությամբ համակված ցեղերը Աբդ ալ–Կադիրին հայտարարեցին իրենց առաջնորդ և դիմեցին նրան իրենց ղեկավարելու համար ուղարկել իր մարդկանց: Դա, անշուշտ, վկայություն էր Աբդ ալ–Կադիրի հեղինակության մասին, որով հիացած էին ցեղերը և ցեղապետերը, տեսնելով, թե նա ինչպիսի հմտությամբ և խիզախությամբ է ղեկավարում Արևմտյան Ալժիրի բնակչության պայքարը ֆրանսիական նվաճողների դեմ:

Սակայն արևելյան ալժիրցիների դիմումը Աբդ ալ–Կադիրին, Ֆրանսիան օգտագործեց նրա դեմ, նրան մեղադրելով արևելյան ալժիրցիներին աջակցելու և դրանով իսկ 1837 թ. պայմանագիրը խախտելու մեջ: 1839 թ. Ֆրանսիան պատերազմական գործողություններ սկսեց Աբդ ալ–Կադիրի դեմ, իսկ վերջինս ֆրանսիացիներին «սրբազան պատերազմ» հայտարարեց: Դա եղավ երկարատև և հյուծիչ պատերազմ, որի ընթացքում երկու կողմերն էլ մեծ կորուստներ ունեցան: Ֆրանսիական 70 հազարանոց բանակը ոչ մի կերպ չէր կարողանում կոտրել ալժիրցիների դիմադրությունը: Ֆրանսիական զորքերի հրամանատար մարշալ Բյուժոն կաշառում էր ցեղապետերին, որոնք դավաճանում էին Աբդ ալ–Կադիրին և անցնում ֆրանսիացիների կողմը, իսկ այն ցեղերը, որոնք հավատարիմ էին նրան, ֆրանսիացիներն ամբողջությամբ ոչնչացնում էին: Նրանք շատ դաժան էին վարվում գերի վերցրած կանանց ու երեխաների հետ: Անընդհատ Ֆրանսիայից ստանալով համալրում, ի վերջո, ֆրանսիացիներին հաջողվեց քայլ առ քայլ նվաճել Արևմտյան Ալժիրը: Սակայն Աբդ ալ–Կադիրն անձնատուր չեղավ ֆրանսիացիներին, այլ 1844 թ. անցավ Մարոկկո, որի սուլթանը նրա համակիրն էր և ֆրանսիացիների դեմ ալժիրցիների հակամարտության ամբողջ ժամանակաշրջանում մշտապես օգնում էր Աբդ ալ–Կադիրին, թե՛ զենքով, և թե՛ նյութապես:

Ֆրանսիացիներին անհանգստացնում էր Աբդ ալ–Կադիրի ապաստանելը Մարոկկոյում և նրանք պահանջեցին Մարոկկոյի սուլթան Մուլայ Աբդ առ–Ռահմանից Ալժիրի ապստամբության ղեկավարին իրենց հանձնել: Վերջինս հրաժարվեց բավարարել նրանց պահանջը, դա համարելով իր համար նվաստացուցիչ: Ֆրանսիական բանակը մարշալ Բյուժոյի հրամանատարությամբ ներխուժեց Մարոկկո: 1844 թ. օգոստոսի 14–ին տեղի ունեցած վճռական ճակատամարտում, ֆրանսիական զորքերը պարտության մատնեցին Մարոկկոյի բանակին: Սակայն անգ-

լիական սպառնալիքները ստիպեցին Ֆրանսիային դադարեցնել պատերազմական գործողությունները և սեպտեմբերի 10–ին Տանժերում կնքվեց հաշտության պայմանագիր: Սուլթանը պարտավորվեց դադարեցնել ամեն տեսակի օգնություն ալժիրցի ապստամբներին, իսկ Աբդ ալ–Կադիրին հայտարարեց օրենքից դուրս:

Աբդ ալ–Կադիրն այլևս չէր կարող մնալ Մարոկկոյում և հարկադրված էր հեռանալ ու վերադառնալ Ալժիր, թաքնվելով անմատչելի վայրերում, տեղափոխվելով մի վայրից մյուսը, խուսափելով ֆրանսիական պատժիչ ջոկատների հետապնդումից:

Իսկ Ալժիրում իրադրությունը կրկին լարված էր, որի պատճառը ֆրանսիացիների դաժան պահվածքն էր բնակչության նկատմամբ, նրանց բռնությունները և կամայականությունները: Ալժիրցիներին հատկապես զայրացրեց նրանց պատկանող հողերի բռնագրավումը ֆրանսիացիների կողմից և նրանց հանձնումը գաղութարարներին: Եվ 1845 թ. նրանք կրկին ապստամբեցին, ղեկավար ունենալով հովիվ Բու Մազային: Այս հասարակ ու ազնիվ հովիվը գերադասեց հրավիրել Աբդ ալ–Կադիրին և նրան հանձնել Արևմտյան Ալժիրում սկսված նոր ապստամբության ղեկավարությունը: Վերջինս ստանձնեց ապստամբության ղեկավարությունը, պատրաստվելով ճակատամարտի ֆրանսիացիների դեմ: Նա հասկանում էր, որ ֆրանսիացիներն իրեն հանգիստ չեն տալու և փորձելու են արյան մեջ խեղդել այդ ժողովրդական նոր ընդվզումը:

Պատրաստվում էին նաև ֆրանսիացիները, որոնք նոր համալրում ստացան Ֆրանսիայից: Նրանց զորքերի թիվը հասավ մոտ 110 հազարի: Համեմատության համար նշենք, որ 1837 թ. ֆրանսիական զորքերի թիվը կազմում էր մոտ 40 հազար մարդ:

Ֆրանսիացիներն անընդհատ հետապնդում էին Աբդ ալ–Կադիրին, որը պարտիզանական պատերազմ մղելով, անընդհատ տեղաշարժվում էր և ֆրանսիացիներին ոչ մի կերպ չէր հաջողվում նրան բռնել: Սակայն կրկին հրապարակի վրա հայտնվեց Մարոկկոյի սուլթանը, որի մատնությամբ ֆրանսիացիները 1847 թ. կարողացան գերի վերցնել Աբդ ալ–Կադիրին, որը պատմության մեջ մտել է որպես Ալժիրի ազգային հերոս: Նրան տեղափոխեցին Ֆրանսիա, որտեղ որպես գերի հինգ տարի մնալուց հետո, իրավունք ստացավ լքել Ֆրանսիան և հաստատվեց Դամասկոսում: Այստեղ նա, ինչպես նշել ենք, շատ կարևոր դեր խաղաց 1860 թ. քրիստոնյա–մուսուլման կոտորածները դադարեցնելու

գործում: Նա մինչև իր կյանքի վերջն ապրեց Դամասկոսում, որտեղ և 1883 թ. կնքեց իր մահկանացուն:

1850–ական թվականները նույնպես եղան պայքարի տարիներ: Ալժիրում մեկը մյուսի հետևից, մերթ այստեղ, մերթ այնտեղ, բռնկվում էին հակաֆրանսիական ելույթներ: Այսպես, օրինակ, 1851 թ. ապստամբվեց Կաբիլիան, 1852 թ. Լագուատի օազիսը, իսկ 1854–1857 թթ. դարձյալ Կաբիլիան: Կաբիլիայի ապստամբության ճնշումով, փաստորեն ավարտվեց Ալժիրի գրավումը ֆրանսիացիների կողմից:

Ֆրանսիական տիրապետությունն Ալժիրում ունեցավ մի առանձնահատկություն, որը ոչ մի տեղ չի դիտարկվել: Դա ֆրանսիական բնակչության հոսքն էր Ալժիր, որոնց թիվը գնալով ավելանում էր: Ալժիր էին ձգտում աղքատացած և սնանկացած ֆրանսիացիները, ինչպես հողատերերը, այնպես էլ այլ խավերը, առևտրականները, արդյունաբերողները, զինվորականները, պաշտոնյաները, արկածախնդիրները, խաբեբաները և մութ անցյալի տեր այլ մարդիկ: Մեծ տարածք ունեցող և նոսր բնակեցված Ալժիրը գործունեության լայն ասպարեզ էր հանդիսանում նրանց համար: XIX դարի 50–90–ական թվականներին մեծ ծավալ ընդունեց հողերի բռնագրավումը ալժիրյան ցեղերից, բեդվիններից, համայնքներց և այլ հողատերերից, ու նրանց հանձնումը ֆրանսիական կոլոնիստներին: Սկզբում առաջնությունը պատկանում էր առափնյա հարթավայրերի հողերի բռնագրավմանը և բաժանմանը ֆրանսիացիներին: Այդ քաղաքականությունը պետական քաղաքականություն էր, որը վարում էր սկզբում երկրորդ հանրապետության, իսկ ապա երկրորդ կայսրության կառավարությունը: Այդ քաղաքականությունը լայն աջակցություն էր գտնում մարշալ Բյուժոյի և նրան հաջորդած ֆրանսիական գեներալների ու պաշտոնյաների կողմից: Կարելի է ասել, որ այդ քաղաքականության արդյունքում, արդեն 1860–ական թվականներին Ալժիրի լավագույն հողերի մեծ մասը գտնվում էր ֆրանսիական կոլոնիստների ձեռքում և նրանք դարձան տիրապետող ուժ հողային սեփականության ասպարեզում: Նշենք, որ այդ ժամանակ Ալժիրի բնակչությունը կազմում էր 2,1 մլն մարդ, իսկ Ալժիրում բնակվող ֆրանսիացիների թիվն արդեն հասնում էր 270 հազարի և աճելու միտում ուներ:

Հարկ է ավելացնել, որ ֆրանսիական իշխանություններն Ալժիրն օգտագործում էին նաև որպես աքսորավայր, ուր ուղարկում էին հեղափոխական շարժումների մեջ ներգրավված բանվորներին, դեմոկրատներին, մտավորականությանը, որոնց թիվը հասնում էր մի քանի հազա-

րի: Նրանք նույնպես ունեին իրենց դերակատարումը Ալժիրում, հատկապես ճգնաժամային պահերին:

Ալժիրում իրենց միանգամայն ազատ էին զգում ֆրանսիական գործարարները: Նրանց էժան ապրանքները հորդեցին Ալժիր, քայքայելով ալժիրցիների արհեստագործական թույլ արդյունաբերությունը: Մեծ ծավալներ ընդունեց նաև հումքի արտահանումն Ալժիրից: Ալժիրը, նրա տնտեսությունը դառնում էր Ֆրանսիայի և ֆրանսիական տնտեսության կցորդը:

Լուի Նապոլեոն III, հավանաբար զգալով, որ կարող են լինել նոր հուզումներ, փորձեց ինչ–որ չափով կարգավորել հողերի կոնֆիսկացիայի գործընթացը, մասնավորապես նա փորձեց ցեղերին պատկանող հողերը պաշտպանել ֆրանսիական կոլոնիստների անսանձ զավթումից: Բացի դրանից նա հանդես եկավ ի պաշտպանություն ալժիրցիներին ֆրանսիական քաղաքացիություն տալու օգտին, որը առաջ բերեց ֆրանսիական կոլոնիստների և Ֆրանսիայի հետադիմական ուժերի խոր դժգոհությունը: Եվ երբ 1870 թ. ֆրանս–պրուսական պատերազմն ավարտվեց Ֆրանսիայի պարտությամբ և երկրորդ կայսրության կործանումով, ապա Ալժիրում հաստատված ֆրանսիացիները, ավելի ճիշտ նրա այն խավը, որը ներկայացնում էր ֆրանսիական բուրժուազիային, բանկիրներին և այլ մեծահարուստներին, վռնդեցին կայսերական պաշտոնյաներին: Նրանք, որ արդեն բավականին ուժեղացել էին և ամրապնդել իրենց դիրքերը, դժգոհ էին Փարիզից, որ նա նրանց մասնակից չէր անում Ալժիրի կառավարմանը, այլ ամեն ինչ հանձնվել էր այնտեղից նշանակված և այնտեղից ժամանած գեներալներին և պաշտոնյաներին: Նրանք ուզում էին Ալժիրի կառավարման ղեկն իրենց ձեռքը վերցնել:

Փարիզի քաղաքականությունից դժգոհ էին նաև Ալժիրում աշխատող ֆրանսիական բանվորները և մտավորականությունը:

Ալժիրում ֆրանսիացիները ստեղծեցին զանազան կազմակերպություններ, որոնց գործունեությունն ողղված էր միապետական գործիչների և ինստիտուտների դեմ, այդ թվում պաշտպանության կոմիտեներ, Ալժիրի հանրապետական ասոցիացիա, ազգային գվարդիա և այլն: Բայց ամբողջ հարցն այն էր, որ ֆրանսիացիների «հեղափոխական» շարժումներն ընթանում էին միայն Ալժիրում հաստատված ֆրանսիացիների շրջանում, պարփակված էր բացառապես ֆրանսիական տարբեր ուժերի ներգրավումով: Նրանք լրիվ անջատված էին տե-

ղական բնակչությունից, նրանց հետ ոչ մի կապ չունեին, հաշվի չէին առնում նրանց շահերը և պահանջները, և գործում էին որպես մի ինքնաբավ մարմին: Դեռ ավելին, որոշ ուժեր անգամ գրավեցին հակաարաբական դիրքորոշում: Այսպես, օրինակ, Ալժիրի հանրապետական ասոցիացիայի տպագիր օրգանը, սահմանելով այդ օրերին ազգային գվարդիայի խնդիրները, նրանց մեջ որպես ամենակարևորներից մեկը նշում էր «պայքարը տեղական բնակչության ապստամբությունների դեմ»: Ըստ որում, այդ ասոցիացիան համարվում էր դեմոկրատական, որի շարքերում միավորվել էին մանրբուրժուական հեղափոխականներ, մտավորականներ, անգամ բանվորներ: Ալժիրի ֆրանսիացիների մեջ կային ուժեր, որ բացեիբաց հանդես էին գալիս ալժիրցիներին ֆրանսիացիներ դարձնելու, այսինքն ձուլելու պահանջով: Իսկ որոշ ուժեր էլ անգամ առաջադրում էին Ալժիրում ֆրանսիական հանրապետություն հիմնելու խնդիր:

Ֆրանսիացիների նման դիրքորոշումը հանգեցրեց նրան, որ տեղաբնիկները ոչ միայն չմիավորվեցին եկվոր ֆրանսիացիների հետ, այլև ավելի խորացավ անջրպետը նրանց միջև:

Ֆրանսիացիները շարունակելով տեղացիներից անջատ իրենց գործողությունները, կատարեցին հաջորդ քայլը: Ալժիրի հանրապետական ասոցիացիան 1870 թ. նոյեմբերի 7–ին կայացած նիստում որոշում ընդունեց ստեղծել կոմունա և այն տեսադրույթն առաջ քաշեց, որ Ալժիրը պետք է դառնա կոմունաների դաշնություն: Սակայն այդ որոշումը մնաց թղթի վրա: Ֆրանսիական կառավարությունը չճանաչեց կոմունայի վերաբերյալ որոշումը, և նրա նախաձեռնողներին հայտարարեց ուզուրպատորներ, իշխանության անօրինական ճանապարհով զավթիչներ: Ֆրանսիայից ժամանած նոր քաղաքացիական կոմիսար դյու Բուզեն ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը, իսկ անօգնական «հեղափոխականները» չկարողացան անգամ իրենց պահանջների թեկուզ ամենաանշան մասը կատարել իշխանության հարցում և ցրվեցին: «Կոմունայից» մնաց միայն մի հուշ:

Այն ժամանակ, երբ ֆրանսիացիներն առաջադրում էին զանազան «հեղափոխական» լոզունգներ, շարունակվում էր արաբների և բերբերների հարստահարումը, իրավունքների ոտնահարումը, նրանց նկատմամբ բռնությունների կիրառումը: Երկիրը հայտնվել էր տնտեսական խոր ճգնաժամի մեջ, որն այս անգամ ուղեկցվում էր սովով և ժանտախտով, որոնք հնձում էին տեղական բնակչությանը: Երկրի բնակչությունը

կրճատվեց համարյա կես միլիոն մարդով: Բնակչության թվաքանակի մեջ իրենց ներդրումն ունեցան նաև Ալժիրի ֆրանսիական իշխանությունները և նրանց պատժիչ ուժերը:

Այդ պատճառով էլ ապստամբությունները և ընդվզումները գործնականում երբեք չեն դադարել: Միայն թե դրանք տեղական բնույթ էին կրում, վատ էին կազմակերպված, թույլ էր կապը ապստամբական տարբեր կենտրոնների միջև:

1871 մարտի 14–ին Ալժիրում սկսվեց նոր և լայնածավալ ապստամբություն, որը գլխավորեց Մուհամմադ ալ–Մուկրանին, որին ենթակա էին 30 ցեղեր Կաբիլիայում: Ապրիլի 8–ին նրանց միացավ Ռահմանիյա կրոնական եղբայրությունը, որը միավորում էր 250 ցեղ: Այս եղբայրությունը շատ ազդեցիկ ուժ էր Ալժիրում, որը ի վիճակի էր 100 հազար զորք դուրս բերել: Եթե հաշվի առնենք, որ ալ–Մուկրանիի ցեղերը կարող էին 25 հազար մարտիկ տրամադրել, ապա կարելի է ասել, որ ապստամբների տրամադրության տակ կային զորավոր ուժեր, որոնք սրբազան պատերազմի դուրս եկան ֆրանսիական զավթիչների դեմ:

Ապստամբներն իրենց գլխավոր նպատակը համարեցին բոլոր ֆրանսիացիներին դուրս քշելը իրենց երկրից: Ապստամբության առաջին փուլում ապստամբներն հաղթանակ հաղթանակի հետևից էին տանում: Նրանք կարողացան ազատագրել Ալժիրի արևելյան շրջանները համարյա ամբողջությամբ: 1871 թ. մայիսին զոհվեց ալ–Մուկրանին և ապստամբության ղեկն իր ձեռքը վերցրեց նրա եղբայրը, Ահմեդ Բու Մեզրագը:

Սակայն պատերազմական գործողությունների ընթացքը փոխվեց ի վնաս ապստամբների, երբ ֆրանսիական կառավարությունը ճնշելով Փարիզի Կոմունան, հնարավորություն ստացավ լրացուցիչ զորքեր տեղափոխել ապստամբների դեմ: Ֆրանսիական ռազմական ուժերի համալրումն իրեն շատ շուտով զգացնել տվեց, և 1871 թ. հուլիսին ապստամբությունն արդեն ճնշված էր, թեև առանձին վայրերում որոշ ժամանակ ևս շարունակվում էր դիմադրական պայքարը:

«Հաղթողները» շատ դաժան վարվեցին պարտված ալժիրցիների հետ: Նրանք կազմակերպել էին հատուկ պատժիչ ջոկատներ, որոնց գործողությունների լայն ազատություն էր տրվել: Նրանք մի քանի ճակատներով էին գործում՝ մահապատժի ենթարկեցին հազարավոր ապստամբների, տասնյակ հազարավորներ հայտնվեցին բանտերում, մեծ թիվ էին կազմում նրանք, ում ուղարկեցին տաժանակիր աշխատանքնե-

րի, ավերում և հրկիզում էին ապստամբների գյուղերը, ոչնչացնում ցանքատարածությունները, զանգվածաբար սպանում էին անպաշտպան կանանց ու երեխաներին: Ապստամբների վրա դրվեց մեծ ռազմատուգանք, որն ավելի վատթարացրեց կործանման եզրին հայտնված գյուղացիներին և բեդվիններին: Կարծես թե դա դեռ քիչ էր, ֆրանսիացիները Ալժիրի գյուղացիներից խլեցին 500 հազար հեկտար հողեր:

1871 թ. ապստամբությունը XIX դարում ալժիրցիների վերջին ամենախոշոր հակաֆրանսիական ելույթն էր: Ճիշտ է, դրանից հետո էլ լինում էին առանձին ընդվզումներ, ինչպես 1879 կամ 1881 թթ., բայց դրանք իրենց թափով և ծավալներով զիջում էին 1871 թ. ապստամբությանը:

Ալժիրի վրա ֆրանսիական տիրապետության հաստատումով սկսվեց Ալժիրի ներգրավումը Ֆրանսիայի տնտեսական հարաբերությունների ոլորտը և տեղի ունեցան զգալի տեղաշարժեր Ալժիրի տնտեսության բնագավառում: Ֆրանսիական կապիտալին հետաքրքրում էր նախ և առաջ լեռնահանքային արդյունաբերությունը և Ալժիրի օգտակար հանածոների, երկաթի և ֆոսֆորի մշակումը: Արդյունահանության այդ ճյուղն ամբողջությամբ անցավ ֆրանսիական արդյունաբերողների ձեռքը: Իրենց գործունեությունը ծավալեցին ֆրանսիական բանկերը, որոնց հետ սերտորեն կապված էին արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչները:

Մեծ թափ ստացավ երկաթուղիների կառուցումը, որն իր հերթին խթանեց արդյունաբերության մյուս ճյուղեր զարգացումը: 1870–1880–ական թվականներին կառուցվեց մոտ 2000 կմ երկարության երկաթուղի, որը միմյանց էր միացնում Ալժիրի բոլոր կարևոր՝ քաղաքները՝ Ալժիրը Օրանի և Կոնստանտինի, Կոնստանտինը Ֆիլիպվիլի հետ և այլն: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև ցամաքային ճանապարհների, կամուրջների և նավահանգիստների շինարարությանը: Հայտնվեցին նաև մանր ձեռնարկություններ, որոնք հիմնականում զբաղված էին գյուղատնտեսական հումքի մշակմամբ:

Այս բոլորը զգալի փոփոխություններ առաջացրին Ալժիրի սոցիալական կառուցվածքում: Աստիճանաբար ձևավորվում էր ալժիրյան բանվոր դասակարգը, իսկ գյուղատնտեսության մեջ կիրառվում էր վարձու աշխատանքը: Սակայն ֆրանսիացի բանվորը գտնվում էր ավելի նախապատվելի վիճակում, համեմատած արաբ և բերբեր բանվորների հետ, որոնք ավելի ցածր աշխատավարձ էին ստանում, քան թե նրանց

ֆրանսիացի գործընկերները: Բացի դրանից կապ գոյություն չուներ երկու ազգությունների բանվորների միջև, ուստի և XIX դարի վերջերում դեռևս վաղ էր խոսել նրանց դասակարգային համերաշխության մասին:

Դրան խանգարում էր նաև ֆրանսիական օրենսդրությունը, որը Ալժիրի բնակչությունը բաժանում էր քաղաքացիների, որը տարածվում էր միայն Ալժիրում բնակվող ֆրանսիացիների վրա, և հպատակների, որի տակ հասկանում էին տեղական արմատական բնակչությանը՝ արաբներին և բերբերներին: Քաղաքացիները, այսինքն ֆրանսիացիները, օգտվում էին լայն իրավունքներից, ինչպես, օրինակ, նրանք կարող էին ֆրանսիական պառլամենտի կամ տեղական մարմինների՝ մունիցիպալիտետների դեպուտատներ ընտրել և այլն, մինչդեռ հպատակների կատեգորիային պատկանողները զրկված էին այդ իրավունքներից: Ֆրանսիական իշխանություններն ընդունեցին մի ամոթալի որոշում ևս, որը ստացավ «բնիկների օրենսգիրք» արհամարհական անվանումը: Այդ կոդեքսն իրավունք էր տալիս ֆրանսիական իշխանություններին զանազան պատիժներ կիրառել բնիկների նկատմամբ, ձերբակալել նրանց, բանտարկել, աքսորել Սահարայի անապատները կամ բռնագրավել նրանց ունեցվածքը՝ առանց դատ ու դատաստանի: Արգելվում էր արաբներին արաբերեն լեզվով թերթ հրատարակել, ստեղծել իրենց կուսակցությունները և արհմիությունները: Կիրառվում էր կոլեկտիվ համապարտության վաղուց իր դարն ապրած սկզբունքը: Եթե որևէ արաբ կամ բերբեր ոչ միայն հանցանք, այլև զանցանք էր կատարում, ապա դրա համար պատասխանատվության էր ենթարկվում նրա բնակավայրը, ամբողջ գյուղը կամ շրջանը:

Ալժիրցիները չհաշտվեցին «բնիկների օրենսգրքի» գոյության հետ: Ուստի XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին արաբները և բերբերները հետևողական պայքար էին մղում ֆրանսիական իշխանությունների գաղութային քաղաքականության, բռնությունների ու կամայականությունների դեմ, իրենց իրավունքները հարգելու և բնիկների խայտառակ օրենսգրքի վերացման համար:

2. Թունիսը ֆրանսիական պրոտեկտորատ

1830 թ. Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից և նրա վերածումը գաղութի վկայում էր Հյուսիսային Աֆրիկայում Ֆրանսիայի տիրապետության հաստատման և ստրատեգիական առումով այդ կարևոր տա-

ռածաշրջանը իր հսկողության տակ վերցնելու նրա լուրջ մտադրությունների մասին: Ալժիրից հետո հերթը հասավ Թունիսին:

Թունիսի բեյերը խիստ տագնապ էին ապրում Ալժիրի գրավումից հետո և շատ լավ էին պատկերացնում, թե ինչ վտանգ էր իրենց երկրին սպառնում: Եվ դրանից հետո նրանք մոտ կես դար մաքառում էին այն բանի համար, որ Թունիսը խուսափի Ալժիրի քաղաքական ճակատագրից: Ահմեդ բեյը, որը Թունիսը կառավարում էր 1837–1855 թթ., փորձեց կիրառել մի շարք բարեփոխումներ, այդ թվում, վերակառուցել թունիսյան ռազմական ուժերը եվրոպական ստանդարդներին համապատասխան, գիտակցելով, որ իր բանակը, որը խարսխված էր արևելյան երկրներին բնորոշ միջնադարյան սկզբունքների վրա, ի զորու չէր դիմագրավել եվրոպական երկրների լավ զինված և այլ մարտավարություն կիրառող բանակներին, և կանխել եվրոպական երկրների ներթափանցումը Թունիս:

Չբավարարվելով միայն ռազմական բարեկարգումներով, Ահմեդ բեյը որոշ քայլերի դիմեց թունիսյան հասարակության ազատականացման ուղղությամբ: Դրա նպատակն էր թուլացնել ներքին ընդդիմությունը և պայմաններ ստեղծել թունիսյան հասարակության համախմբման ու կոնսոլիդացիայի համար, որը եվրոպական երկրների ճնշումներին դիմակայելու երաշխիքներից մեկը պետք է լիներ:

Սակայն այդ բարեփոխումները նա հետևողականորեն չէր անցկացնում: Բացի դրանից, բանակի վերակառուցումը պահանջում էր վիթխարի ֆինանսական ծախսեր, որի աղբյուրներից զուրկ էր Թունիսը: Եվ Ահմեդ բեյը ստիպված պարտքեր էր վերցնում եվրոպական երկրներից և բանկերից, առաջին հերթին ֆրանսիական, որը սկիզբ դրեց Թունիսի ֆինանսական կախվածությանըՖրանսիայից:

Մուհամմադ բեյը, որը 1855 թ. հաջորդեց Ահմեդ բեյին և երկիրը կառավարեց մի կարճ միջոցի, ընդամենը չորս տարի, շարունակեց բարեփոխումների քաղաքականությունը: Սակայն դա նա կամովին չարեց, ինչպես իր նախորդը, այլ եվրոպական պետությունների ճնշման տակ, երբ Օսմանյան կայսրությունում հռչակվեցին բարեկարգումների՝ թանզիմաթի սկզբունքները: Թունիսում նույնպես հռչակվեցին հավասարության վերաբերյալ սկզբունքներ, որոնք, սակայն, որպես կանոն, մնացին թղթի վրա:

Թունիսի ներքաղաքական կյանքում 1860 թ. սկզբներին, Մուհամմադ աս–Սադիկ բեյի կառավարման տարիներին (1859–1882 թթ.) տեղի

ունեցավ կարևոր իրադարձություն՝ ընդունվեց Սահմանադրություն, որն առաջին փորձն էր Թունիսում գործադիր իշխանությունը բաժանել օրենսդրական իշխանությունից, ապահովել դատական մարմինների անկախությունը, ստեղծել օրենսգիրք և այլն: Թեև այդ Սահմանադրությունը երկար կյանք չունեցավ և 1864 թ. վերացվեց, այդուհանդերձ, նա վկայում էր այն լուրջ խմորումների մասին, որոնք տեղի էին ունենում թունիսյան հասարակության ընդերքում, և որը զգալի հետք է թողել Թունիսի քաղաքական պատմության մեջ:

1860–70–ական թվականներին առաջացան մի շարք բարդություններ Թունիսի ներքաղաքական կյանքում: Մուհամմադ աս–Սադիկ բեյը բարձրացրեց գանձվող հարկերը, առաջացնելով մի քանի ցեղերի դժգոհությունը, որն այնուհետև վերածվեց ապստամբությունների: Ֆրանսիայից և այլ եվրոպական պետություններից վերցված հսկայական փոխառությունները և դրանց դիմաց վճարվող տոկոսները քայքայեցին երկրի տնտեսությունը, և Թունիսը կանգնեց ֆինանսատնտեսական ճգնաժամի առջև: Ստեղծված անելանելի պայմաններում, որի մեջ իրենց մեծ բաժինն ուներ Ֆրանսիան, եվրոպական պետությունները՝ Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան 1869 թ. Թունիսի վրա հաստատեցին միջազգային ֆինանսական վերահսկողություն, որը հարկադրված ընդունեց բեյը: Դա ավելի ուժեղացրեց առաջին հերթին Ֆրանսիայի դիրքերը Թունիսում և վերջինիս քաղաքական, տնտեսական և ֆինանսական կախվածությունը նրանից:

Ֆրանսիայում ավելի ու ավելի բարձր էին հնչում Թունիսը գրավելու ձայները, որոնք պատկանում էին խոշոր արդյունաբերական և առևտրական բուրժուազիային, բանկային կապիտալի ներկայացուցիչներին, Ֆրանսիայի ծավալապաշտական քաղաքականության և նոր տարածքներ գրավելու բոլոր կողմնակիցներին: Եվ Ֆրանսիայի կառավարությունը 1880–ական թվականների սկզբներին դիմեց ֆրանսիական այդ ուժերի պահանջների բավարարմանը, ուժեր, որոնց պատկանում էր իրական իշխանությունը Ֆրանսիայում:

Ֆրանսիան XIX դարի 80–ականներին դիմեց այդ քայլին, քանի որ միջազգային իրադրությունն արդեն բարենպաստ էր Ֆրանսիայի համար: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ուժեղացել էր մրցակցությունը և պայքարը եվրոպական պետությունների միջև Ասիայի և Աֆրիկայի երկրների նվաճման և գաղութացման համար: Թունիսը գրավելու Ֆրանսիայի ձգտումներին դիմադրում էին առաջին հերթին Անգլիան, ապա

Ավստրիան, Գերմանիան և միջազգային ասպարեզում իր առաջին քայլերը կատարող Իտալիան: Սակայն իրադրությունը փոխվեց 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, որը հանդիսանում է որոշակի սահմանաբաժան այդ երկրների գաղութային քաղաքականության մեջ: Բեռլինի կոնգրեսում և կոնգրեսի աշխատանքներից դուրս եվրոպական առաջատար երկրները փոխզիջման գնացին գաղութային ձեռքբերումների հարցում: Ֆրանսիան համաձայնվեց Կիպրոսը Անգլիայի տիրապետության տակ անցնելու հետ, որը որոշ չափով մեղմացրեց անգլո–ֆրանսիական հակամարտությունը: Բացի դրանից, իր նշանակությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Անգլիան մտադիր էր գրավել Եգիպտոսը և այդ խնդրի իրականացման գործում նրան անհրաժեշտ էր Ֆրանսիային չեզոքացնել: Այդ պատճառով բրիտանական կառավարությունը տեղյակ պահեց ֆրանսիական կառավարությանը, որ նա չի առարկի, եթե Ֆրանսիան իրագործի իր ծրագրերը Թունիսի հանդեպ: Ֆրանսիան ըմբռնումով մոտեցավ Բոսնիան և Հերցեգովինան Ավստրիայի կողմից բռնակցելուն և ցարական Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Բալկաններում, դրա դիմաց ստանալով նրանց «ըմբռնումով» մոտեցումը Թունիսի հարցում:

Մի փոքր տարբեր էր պարագան Գերմանիայի դեպքում: Ֆրանս–պրուսական 1870 թ. պատերազմից և նրանում Ֆրանսիայի պարտությունից հետո, հարաբերությունները երկու երկրների միջև շարունակում էին մնալ լարված: Ֆրանսիան չէր հաշտվել այդ պարտության և տարածքային կորուստների հետ: Ֆրանսիայում շատ ուժեղ էին հնչում ռևանշիստական ձայները, որոնք անհանգստություն էին առաջացնում Բեռլինում: Ուստի այդ ժամանակ Ֆրանսիայի հանդեպ Գերմանիայի քաղաքականության մեջ կարևոր տեղ էր գրավում ամեն կերպ Ֆրանսիային գործողությունների մղել Ասիայում կամ Աֆրիկայում, խրախուսել նրա նվաճողական նկրտումները Եվրոպայից դուրս, ձգտելով դրանով շեղել նրա ուշադրությունը Գերմանիայից: Այլ հարց է, թե դա որքանով էր ճիշտ և արդարացված, բայց իրողությունն այն է, որ Գերմանիան այդ ժամանակ հետևում էր այդ քաղաքականությանը:

Ինչ վերաբերում է Իտալիային, որը ձգտում էր ինքը գրավել Թունիսը, ապա նա այդ ժամանակ դեռ իրենից լուրջ ուժ չէր ներկայացնում և Ֆրանսիան նրան հաշվից դուրս նետեց:

Նա հաշվի չառավ նաև Թուրքիայի դիրքորոշումը և բողոքները, հիմնված այն ձնական մոտեցման վրա, որ Թունիսը Օսմանյան կայս-

ության մաս է կազմում, իսկ նրա բեյը համարվում է թուրքական պաշտոնյա և ոչ ավելի:

Եվ, այսպես, Ֆրանսիան բավականին ուժեղացնելով իր դիրքերը Թունիսում, ապահովելով մեծ տերությունների բարեհաճ դիրքորոշումը և ստեղծելով բարենպաստ միջազգային ֆոն, ձեռամուխ եղավ իր քաղաքական ծրագրերի իրականացմանը Թունիսում:

1881 թ. ապրիլի 12–ին, Ֆրանսիան, պատրվակ բռնելով զինված բախումները ալժիրա–թունիսյան սահմանի վրա, որի հրահրմանը ինքն անմասն չէր, իր զորքերը, մոտ 30 հազար զինվոր, մտցրեց Թունիս: Ֆրանսիական մեկ այլ, ութհազարանոց բանակն էլ մտավ Բիզերտա: Մայիսին նրանք, չհանդիպելով որևէ լուրջ դիմադրության, հայտնվեցին Թունիսի մայրաքաղաք Թունիս քաղաքի մատույցներում, շրջապատելով նրա Բարդո արվարձանում գտվող բեյի Կասր Սաիդ ամրոցը: Պաշարման մեջ գտնվող բեյը՝ Մուհամմադ Սաիդը, ֆրանսիական զորքերի հրացանների փողի ներքո 1881 թ. մայիսի 12–ին հարկադրված ստորագրեց ֆրանսիացիների կողմից կազմված պայմանագրի տեքստը՝ Կասր Սաիդի կամ Բարդոյի պայմանագիրը: Դա առաջին պայմանագիրն էր, որը «իրավական» հիմք ստեղծեց Ֆրանսիայի կողմից Թունիսը նվաճելու համար: Պայմանագրով բեյն անվանականորեն մնում էր Թունիսի կառավարող, սակայն ռազմական, ֆինանսական և արտաքին գործերն անցան ֆրանսիացիների տնօրինության տակ: Պայմանագիրը պարունակում էր մի կետ, որն առաջին հայացքից թվում էր նպաստավոր բեյի համար: Այնտեղ արձանագրված էր, որ Ֆրանսիան իր վրա էր վերցնում բեյի անվտանգության ապահովումը և պարտավորվում էր նրան ցույց տալ անհրաժեշտ օգնություն նրա և նրա ընտանիքի անդամներին վտանգ սպառնալու դեպքում, այդ թվում և դինաստիական հարցերում: Իրականում բեյը դառնում էր ֆրանսիացիների յուրատեսակ պատանդը, որի կյանքի ապահովության և դինաստիայի պահպանության հարցերն ամբողջապես կախված էր ֆրանսիացիների կամքից և գտնվում էր նրանց ձեռքում:

Շրջադարձային նշանակություն ունեցավ 1883 թ. Մերսայում ստորագրված նոր ֆրանս–թունիսյան պայմանագիրը, որը Թունիսի կողմից ստորագրեց նոր բեյը՝ Ալի IV: Այդ պայմանագրով Ֆրանսիան պաշտոնապես իր պրոտեկտորատը հաստատեց Թունիսի վրա:

«Պրոտեկտորատ» բառացիորեն նշանակում է «հովանավորություն», «պաշտպանություն», իսկ այն երկիրը, որի վրա տարածվում է

պրոտեկտորատը կոչվում է «ենթահովանավորյալ» կամ «հովանավորվող»: Դա կախվածության յուրահատուկ ձև է համաշխարհային գաղութային համակարգում, որն իր որոշ գծերով տարբերվում է գաղութային տիրապետության այլ տեսակներից: Պրոտեկտոր պետությունը ենթահովանավորյալ պետությանը պարտադրում է հատուկ պայմանագիր, որով այս վերջինս ենթարկվում է նրան նախ և առաջ արտաքին քաղաքականություն վարելու հարցում, ավելի ճիշտ, ենթահովանավորյալ պետությունն իր պրոտեկտորին է զիջում իր արտաքին քաղաքականությունը վարելու իրավունքը, որը նշանակում է զիջում սուվերենության հարցում: Իսկ ինչ վերաբերում է ներքին հարցերին, ապա պրոտեկտորատի տեսության և պրակտիկայի համաձայն, պրոտեկտոր պետությունն իր ենթահովանավորյալ պետությունում նշանակում է խորհրդական կամ ղեկավար ներքին հարցերի գծով, որը կոչվում է «ռեզիդենտ»: Նրա «խորհուրդները» քննարկման կամ առարկության ենթակա չեն կարող լինել, այլ պարտադիր կատարվում են:

Պրոտեկտորատի մյուս բնորոշ գիծը կայանում է նրանում, որ ենթահովանավորյալ պետությունը ձևականորեն պահպանում է իր գոյությունը որպես պետություն, նա որպես պետություն չի վերացվում, իսկ նրա ղեկավարն էլ՝ թագավոր, էմիր, սուլթան կամ բեյ, գահընկեց չի արվում: Սակայն խիստ սահմանափակվում են նրա գործառույթները, որոնք դառնում են զուտ ձևական, քանի որ երկիրը փաստորեն կառավարվում է պրոտեկտոր պետության կողմից:

Միշտ չէ, որ պրոտեկտորատը հաստատվում է երկկողմ պայմանագրի միջոցով: Պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ որևէ պետություն իր պրոտեկտորատը այս կամ այն երկրի վրա հաստատում է միակողմանիորեն, այդ մասին անելով համապատասխան հայտարարություն: Եթե վերցնելու լինենք արաբական երկրները, ապա նման պրոտեկտորատի հաստատման օրինակ կարող է հանդիսանալ Եգիպտոսը, երբ Անգլիան 1914 թ., Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո, հայտարարեց Եգիպտոսի վրա իր պրոտեկտորատը հաստատելու մասին:

Թունիսը տիպաբանորեն պատկանում էր պրոտեկտորատի առաջին տեսակին, որը հաստատվել էր երկկողմ պայմանագրի հիման վրա: Սակայն չմոռանանք ընդգծել, որ դա Թունիսի կողմից չէր կատարվել կամովին, այլ պարտադրվել էր նրան: Ուրեմն պրոտեկտորատի պարագայում, անկախ այն բանից, թե նա միակողմանիորեն է հաստատվել, թե

երկկողմ պայմանագրի հիման վրա, պարտադրանքի պահը մշտապես առկա է, և միայն այդ ուղիով է նա հաստատվում:

Թունիսում պահպանվեց բեյի պաշտոնը, նա ոչ վերացվեց, և ոչ էլ գահընկեց արվեց: Նրան կից պահպանվեց կառավարման մի ոչ մեծ մարմին, ընդամենը երկու նախարար, փոքրիկ վարչակազմ, շատ սահմանափակ իրավունքներով:

Ֆրանսիան նշանակեց Գլխավոր ռեզիդենտ, որը և հանդիսանում էր Թունիսի փաստական կառավարողը: Բեյը ոչ մի բան չէր կարող կատարել առանց ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտի գիտության և համաձայնության: 1884 թ. դադարեցրեց իր գոյությունը միջազգային ֆինանսական հանձնաժողովը և ֆինանսների, պարտքերի, փոխառությունների, տոկոսների վճարման շատ կարևոր հարցերն անցան Գլխավոր ռեզիդենտի տնօրինության տակ: Պետական եկամուտները նույնպես տնօրինում էր Գլխավոր ռեզիդենտը, որի վերաբերյալ բեյը ոչ մի իրավունք չուներ: Ֆրանսիան բեյին, նրա ընտանիքի անդամներին և արքունիքին նշանակվեց տարեկան 1 մլն 250 հազար ֆրանկ: 1891 թ. որոշման համաձայն Թունիսի դրամն ամբողջապես հիմնվեց ֆրանսիական ֆրանկի վրա, որով ամբողջացավ նաև Թունիսի ֆինանսական լիակատար կախվածությունը Ֆրանսիայից:

Գլխավոր ռեզիդենտը մի կարևոր քայլ ևս կատարեց՝ վերացվեցին եվրոպական քաղաքացիների արտակարգ էքստերիտորիալ մենաշնորհները Թունիսում: Միայն ֆրանսիական քաղաքացիները և գործարարները կարող էին օգտվել նման առանձնաշնորհումներից:

Ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտի տնօրինությանն անցան նաև Թունիսում տեղակայված ֆրանսիական ցամաքային և ծովային ուժերը:

Հաստատվեց նաև տեղական կառավարման նոր համակարգ, որն ամբողջապես կախված էր Գլխավոր ռեզիդենտից: Տեղերում նա մտցրեց ֆրանսիական քաղաքացիական վերահսկիչների պաշտոն: Նրանք օժտված էին շատ լայն լիազորություններով: Թունիսի այն մասը, որը գտնվում էր Գլխավոր ռեզիդենտի կառավարման ներքո, բաժանվեց 13 մարզերի, որոնց գլուխ կանգնած էին ֆրանսիական քաղաքացիական վերահսկիչները: Նրանց նշանակում և աշխատանքից ազատում էր ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտը: Նրանց նկատմամբ բեյը որևէ իրավունք չուներ: Իսկ մարզերը բաժանվում էին ավելի փոքր ենթաշրջանների, այսպես կոչված Կաիդաների, որոնց ղեկավարներին՝ կաիդներին,

նշանակում էր Թունիսի բեյը տեղական բնակչությունից, թունիսցիներից: Սակայն բեյը դա չէր կարող անել իր ցանկացած ձևով, այլ նա պարտավոր էր նրանց թեկնածությունները նախօրոք համաձայնեցնել Գլխավոր ռեզիդենտի հետ: Դա դեռ բավական չէր, նրանք գտնվում էին ֆրանսիական քաղաքացիական վերահսկիչների ամենօրյա հսկողության ներքո, որոնք նրանց հրամաններ և հանձնարարականներ տալու իրավունք ունեին:

Այսպիսով, վարչական կառավարման համակարգը ևս գտնվում էր ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտի հսկողության տակ: Իսկ Թունիսի այն շրջաններում, գլխավորապես հարավային, որոնք գտնվում էին այնտեղ տեղակայված ֆրանսիական զինվորների հսկողության տակ, այնտեղ վարչա–տերիտորիալ բաժանում չկատարվեց և այդ շրջանների բնակիչներն անմիջապես ենթարկվում էին ֆրանսիական բարձրաստիճան զինվորականներին:

Ֆրանսիան, ստեղծելով պետական, քաղաքական, ռազմական, ֆինանսական և վարչական կառավարման իր շահերին ծառայող համակարգ, սկսեց Թունիսի գաղութացումը նույն ձևով և մեթոդներով, ինչպես Ալժիրը, թեև Թունիսն իր գաղութային կարգավիճակով ձևականորեն գտնվում էր ավելի բարձր մակարդակի վրա: Այստեղ նույնպես ֆրանսիական գաղութարարները սկսեցին թունիսցիներին պատկանող հողերի, այդ թվում և համայնական, բռնագրավումից և ֆրանսիացիներին բաժանումից: Ինչպես և Ալժիրի պարագայում, Թունիս ներխուժեց ֆրանսիական կոլոնիստների հոծ բազմություն, որը տիրացավ տեղական բնակչությունից խլված հողատարածքներին: Սակայն այս պարագայում կար նաև մի տարբերություն համեմատած Ալժիրի հետ: Թունիս Ֆրանսիական կոլոնիստների հետ միասին ներխուժեցին նաև իտալական կոլոնիստներ: Իտալիան ոչ մի կերպ չէր համակերպվում Թունիսը կորցնելու գաղափարի հետ և ֆրանս–իտալական լարվածությունը պահպանվում էր: Ցանկանալով ինչ–որ չափով մեղմել լարվածությունը, Ֆրանսիան թույլատրեց նաև իտալական կոլոնիստներին հաստատվել Թունիսում և իտալացիներին տվեց այլ արտոնություններ, ինչպես Թունիսում իրենց դպրոցները բացելու, ազատ տեղաշարժվելու, անշարժ գույք ունենալու և այլն: Դրա դիմաց Իտալիան 1896 թ. ճանաչեց Թունիսը որպես ֆրանսիական պրոտեկտորատ:

Շուտով ֆրանսիական և իտալական կոլոնիստների ձեռքում կուտակվեցին վիթխարի հողային տարածքներ: Այսպես, օրինակ, եթե

ֆրանսիացիների ձեռքում 1881 թ. կար 107 հազար հեկտար, ապա 1912 թ. նրանք տնօրինում էին 882 հազար հեկտար, իսկ իտալացիներն այդ նույն տարի տնօրինում էին 135 հազար հեկտար:

Ֆրանսիական արդյունաբերողները և կոնցեսիոներներն իրենց ձեռքը վերցրեցին Թունիսի լեռնահանքային արդյունաբերությունը, հատկապես արճճի, ֆոսֆորի և երկաթի արդյունահանումը և հետագա մշակումը, ստանալով վիթխարի շահույթներ, որից անմասն էր մնում Թունիսը: Ֆրանսիան երկիրը ողողեց իր էժան արդյունաբերական ապրանքներով, քայքայելով տեղական արտադրությունը և ավելացնելով գործազուրկների բանակը: Ֆրանսիացիները զգալի ուշադրություն դարձրեցին ինֆրաստրուկտուրայի զարգացմանը, երկաթուղու և խճուղային ճանապարհների շինարարությանը, նավահանգիստների կառուցմանը, ֆինանսաբանկային համակարգի ստեղծմանը և ընդլայնմանը: Այսինքն կիրառվում էր դասական գաղութատիրության գլխավոր սկզբունքը՝ գաղութները դիտել որպես վաճառահանման շուկա, էժան աշխատուժի օգտագործման և էժան հումքի արտահանման աղբյուր:

Այդպիսի քաղաքականության արդյունքում անխուսափելիորեն տեղի էր ունենում բնակչության աղքատացում և սոցիալ–տնտեսական վիճակի կտրուկ վատթարացում:

Դա, իհարկե, անխուսափելիորեն պետք է ազդեր տեղական բնակչության քաղաքական տրամադրությունների վրա և ուժեղացներ նրանց հակաֆրանսիական զգացմունքները:

Այդ գործում իր դերը խաղացին նաև այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան արաբների ազգային ինքնագիտակցության մեջ: Ազգային գիտակցության արթնացումը և ձևավորումը, որը նկատվեց XIX դարի կեսերից սկսած, ի վերջո, իր մեջ առավ նաև Հյուսիսային Աֆրիկայի արաբ բնակչությանը, այդ թվում և թունիսցիներին, ալեկոծելով նրանց միտքն ու սիրտը: XX դարի սկզբներին Թունիսում հայտնվեցին առաջին քաղաքական կազմակերպությունները, ինչպես 1907 թ. հիմնված Հիզբ Թունիսի կուսակցությունը, որի առաջնորդներն էին Ալի Բաշ Համբան և Բշիր Սֆարը, որի վերջնական նպատակը Թունիսը ֆրանսիական տիրապետությունից ազատագրելը և անկախ պետություն հռչակելն էր: Նա դեմ էր թունիսցիների ուծացման քաղաքականությանը, որը դեռևս 1905 թ. հիմնված Հանրապետական կուսակցության պահանջն էր: Մերժելով ուծացման գաղափարը, այդ կուսակ-

ցությունը, ի հակադրություն, պաշտպանում էր ալժիրա–թունիսյան ազգի գաղափարը:

1908 թ. քաղաքական ասպարեզ իջան երիտասարդ թունիսցիները: Դա արաբական մի շարժում էր, որն իր անունը թեև վերցրել էր նմանակելով երիտասարդ թուրքերին, բայց հանդես էր գալիս բեյի իշխանությունը վերականգնելու և Թունիսում դեմոկրատական ինստիտուտներ հաստատելու պահանջներով:

Թունիսի ազգային–հայրենասիրական կազմակերպությունները մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ղեկավարեցին թունիսցիների քաղաքական ելույթները և թունիսցի բանվորների գործադուլային շարժումները, որոնք նպատակաուղղված էին ֆրանսիական իշխանությունների խտրական քաղաքականության դեմ՝ հանուն Թունիսում ֆրանսիացիների և թունիսցիների իրավահավասարության հաստատման:

3. Մարոկկոն պետությունների պայքարի խաչմերուկում

Օսմանյան կայսրությունը, ինչպես նշել ենք, XVII դարի սկզբներից ընդարձակելով իր տիրույթները արաբական երկրների հաշվին և հիմնականում կարողանալով հասնել իր նպատակներին, այդպես էլ չկարողացավ իրեն ենթարկել Մարոկկոն, թեկուզ ձևականորեն, ինչպես որոշ այլ պետություններ: Մարոկկոն պահպանեց իր անկախությունը և երբեմն իրեն համարում էր կայսրություն: Նրա զարգացումն ընթանում էր այլ կերպ:

Նախքան օսմանցիների հայտնվելը, Մարոկկոյում, հատկապես նրա արևմտյան ափերի որոշ շրջաններում, հաստավել էին պորտուգալացիները, որոնց տիրապետության տակ էին անցել Սեուտուն, Տանժերը, Աղադիրը, Մարաղան և այլ բնակավայրեր ու շրջաններ:

Ազատատենչ մարոկկոցիների մոտ կուտակվել էր խոր դժգոհություն, ինչպես նրանք էին անվանում այդ ժամանակ, իսպանացիների դեմ, որը շատ շուտով վերածեց դիմադրական շարժման: Դիմադրական շարժումը խմորվում էր նախ և առաջ իսլամական կրոնական շրջաններում, մարաբութների, կրոնական եղբայրությունների և «շորֆաների» մոտ: «Շորֆաները» կամ դրա գրական ձևը հանդիսացող «շարիֆականները» Մուհամմադ մարգարեի շառավիղներն էին, որոնք բացառիկ հարգանք էին վայելում մուսուլմանական աշխարհում և օգտվում էին մեծ

հեղինակությամբ: Ահա այս երեք իսլամական ուժերը XVI դ. սկզբում ղեկավարեցին մուսուլմանների ջիհադը՝ սրբազան պատերազմը քրիստոնյաների, տվյալ դեպքում պորտուգալացիների դեմ: Շարիֆականներից ծնունդ առավ Սաադիների ռեժիմը, որը սկզբնական շրջանում հաստատվեց Վադի Դռաայի շրջանում, Ատլասյան լեռների Սահարահայաց կողմերում: Նրանք բացահայտ պատերազմ սկսեցին պորտուգալացիների դեմ և 1520 թ. գրավեցին Ֆեսը, Մարոկկոյի կարևոր կրոնական և քաղաքական կենտրոնը: 1548 թ. նրանք իրենց տիրապետությունը հաստատեցին Մարոկկոյի մյուս կարևոր կենտրոնի՝ Մարակեշի վրա: Սաադիները կամ շարիֆականներն իրենց այս հաղթանակներով բավականին ամրապնդեցին իրենց հեղինակությունը և իշխանությունը Մարոկկոյում: Դրան, կասկածից դուրս է, նպաստեց նաև նրանց ծագումնաբանական կապը Մուհամմադ մարգարեի Հաշիմի տոհմի հետ: Նրանց պայքարը պորտուգալացիների դեմ ավարտվեց հաղթանակով, մանավանդ այն բանից հետո, երբ 1578 թ. Ալկազարքվիվիրի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում նրանք պարտության մատնեցին պորտուգալացիներին և նրանց դուրս քշեցին Մարոկկոյից:

Սաադիների դինաստիան մի կարևոր ծառայություն ևս մատուցեց Մարոկկոյին, որը կապված է Շարիֆ Ահմադ ալ–Մանսուրի (1578–1603) անվան հետ: Նա փայլուն կերպով կարողացավ կազմակերպել Մարոկկոյի դիմադրությունը օսմանյան թուրքերին, որոնք աջակից ունենանալով ալժիրցիներին, սպառնում և ճնշում էին գործադրում Մարոկկոյի ղեկավարության վրա, ձգտելով Մարոկկոն ներառնել իրենց կայսրության մեջ: Օսմանցի թուրքերի բոլոր փորձերը ձախողվեին և Մարոկկոն կարողացավ պահպանել իր անկախությունը:

Ահմադ ալ–Մանսուրը, սակայն, պորտուգալացիների և օսմանցիների դեմ մղած պայքարից մի կարևոր եզրահանգում կատարեց և դրան համապատասխան փոփոխություն մտցրեց երկրի իշխանական համակարգում: Լինելով խելացի մարդ և օժտված լինելով վերլուծական մտածողությամբ, նա նկատեց, որ ի տարբերություն նախկինում կառավարած դինաստիաների, Սաադիների դինաստիան և վարչակարգը չունի ցեղերի ուժեղ աջակցություն և համապատասխան հենարան: Իսկ դա, հաշվի առնելով Մարոկկոյի սոցիալական կառուցվածքը, որը խարսխված էր ցեղերի և ցեղային միությունների բաժանման սկզբունքի վրա, մեծ վտանգ էր ներկայացնում նրա դինաստիայի համար: Մարոկկոյի նման սոցիալական կառուցվածք ունեցող երկրներում չէր կարող

հաստատվել որևէ կայուն դինաստիա, եթե նա չէր հենվում որևէ ցեղային միության վրա: Ահմադ ալ–Մանսուրը, վերակազմավորելով իշխանական համակարգը, Սաադիների վարչակարգը հիմնեց նոր հիմքի վրա, որը կոչվեց Մախզան: Դրա էությունը կայանում էր հետևյալում: Ցեղերն ազատվում էին հարկ վճարելուց, բայց դրա դիմաց նրանք պետք է զինվորական ծառայություն մատուցեին պետությանը:

Այս համակարգն ինքնին չէր կարող ապահովել պետության հզորությունը, իսկ կառավարող դինաստիան էլ չէր կարող դրանով ինքնաբերաբար ամրապնդել իր իշխանությունը: Շատ բան կախված էր Մարոկկոյի սուլթանից, նրա հմտությունից, կամքից և վճռականությունից, ցեղերին կարգապահ դարձնելու նրա կարողությունից: Սուլթանի թույլ լինելու պարագայում սրվում էր միջցեղային պայքարը, ինչպես նաև պայքարը նստակյաց և քոչվոր ցեղերի միջև:

Մախզանի համակարգը Մարոկկոյի ոչ բոլոր շրջաններում ընդունվեց և կիրառվեց: Այն ցեղերը, որոնք բնակվում էին Ատլասի լեռների շրջանում և համարվում էին այլախոհներ, ստեղծեցին իրենց ցեղերի ինքնավարությունը՝ ի հակադրություն Մախզանի համակարգն ընդունած ցեղերի: Այստեղ արտառոց ոչ մի բան չկա, քանի որ միջցեղային պառակտվածությունը, հակադրությունը, անգամ արյունալի բախումները, սովորական երևույթներ են ցեղային կառուցվածք ունեցող բոլոր երկրների համար:

Չնայած այդ հանգամանքին, սաադիների կամ շարիֆների դինաստիայի տիրապետության շրջանը համարվում է Մարոկկոյի պատմության հետաքրքիր ժամանակաշրջաններից մեկը, երբ արձանագրվեցին զգալի տեղաշարժեր երկրի տնտեսական զարգացման ոլորտում:

1668 թ. այդ դինաստիան իր տեղը զիջեց Ալավիների կամ Հասանիների դինաստիային: Նրա յուրահատկությունը կայանում էր նրանում, որ նա բերբերական ծագում ուներ և սերում էր Սահարայի Թաֆիլալետ օազիսից:

Ալավիների դինաստիան ամրապնդվեց և ուժեղացավ հատկապես Մուլայ Իսմայիլի կառավարման տարիներին (1672–1727 թթ.): Այդ ժամանակաշրջանում Մարոկկոյում անդորրն էր տիրապետում, որն արդյունք էր միջցեղային հակամարտության նվազեցման, երկիրը ավելի միասնական էր, քան երբևէ: Իր իշխանությունն ամրապնդելու և անջատողական ձգտումները կասեցնելու նպատակով, Մուլայ Իսմայիլը ստեղծեց նեգրերից կազմված լավ զինված ու մարզված, կարգապահ

զորաբանակ, որի մի մասը տեղակայված էր Մարոկկոյի այդ ժամանակվա մայրաքաղաք Մեկնեսի մոտ, իսկ մյուսները Մարոկկոյի կարևոր հանգույցներում, ապահովելով երկրի անդորրը և կանխելով հնարավոր դավադրությունները:

Մուլայ Իսմայիլի կառավարման շրջանում Մարոկկոն ազատագրեց իրեն պատկանող մի քանի կարևոր քաղաքներ և հենակետեր, որոնք գտնվում էին եվրոպացիների տիրապետության տակ: 1684 թ. նա ազատագրեց Տանժերը, որն անգլիացիների տիրապետության տակ էր գտնվում 1662, թվականից, իսկ հինգ տարի անց, 1689 թ. իսպանացիներից հետ խլեց Լառաշը: Իսկ 1682 թ. առևտրական պայմանագիր կնքեց Ֆրանսիայի հետ:

Նրա մահից հետո որոշ ժամանակ խառնաշփոթ իրավիճակ էր տիրում Մարոկկոյում: Դրությունը կայունացավ, երբ 1757 թ. սուլթանի գահին բարձրացավ Շարիֆ,Մուհամմադ բին Աբդալլահը, որը երկիրը կառավարեց մինչև 1790 թ.: Նա իրեն դրսևորեց որպես եռանդուն, խելամիտ և ունակ ղեկավար, որի տիրապետության շրջանում Մարոկկոն հասավ զգալի հաջողությունների տնտեսական զարգացման, երկրի անկախության ամրապնդման և այլ բնագավառներում: Նրա օրոք, 1765 թ., հիմնվեց Մագադոր քաղաքը, որը հետագայում զգալի դեր խաղաց Մարոկկոյի տնտեսական կյանքում: Նա 1769 թ. պորտուգալացիներից ազատագրեց Մազագանը, կարողացավ կարգավորել հարաբերությունները Իսպանիայի հետ: Դրա վկայությունն էր հանդիսանում 1767 թ. Իսպանիայի հետ կնքված Բարեկամության և առևտրի վերաբերյալ պայմանագիրը: Նրա և նրա հաջորդներ Մուլայ Սուլեյմանի (1792–1822 թթ.) և Մուլայ Աբդ առ–Ռահմանի (1822–1859 թթ.) ջանքերն ուղղված էին անհնազանդ ցեղերի վրա կենտրոնական կառավարության հսկողությունը պահպանելուն: Նրանց մյուս կարևոր խնդիրն էր կանխել օտարերկրյա միջամտությունը Մարոկկոյի ներքին գործերին, որը շատ բարդ ու դժվարին խնդիր էր, քանի որ եվրոպական պետությունները, առաջին հերթին Ֆրանսիան, Անգլիան և Իսպանիան բացահայտ պայքար էին մղում Մարոկկոյի վրա իրենց տիրապետությունը հաստատելու համար: Եվ այդ խնդրի իրականացման համար նրանք շատ հաճախ դիմում էին կենտրոնական կառավարությանն ընդդիմադիր ուժերի, ցեղերի և նրանց առաջնորդների օգնությանը, օգտագործելով կաշառքը, խոստումները և այլն:

Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից 1830 թ., կարելի է ասել, որ ուղղակի անդրադարձ ունեցավ Մարոկկոյի ճակատագրի վրա, մանավանդ այն բանից հետո, երբ Ալժիրի ապստամբական շարժման ղեկավար Աբդ ալ–Կադիրը, պարտություն կրելով ապաստան գտավ Մարոկկոյի սուլթան Մուլայ Աբդ ալ–Ռահմանի մոտ: Նա, ինչպես նշել ենք, ալժիրցիների ապաստամբության առաջին փուլում համարձակորեն ամենալայն օգնություն, էր ցույց տալիս, այդ թվում և ռազմական, Աբդ ալ–Կադիրին: Դա պատճառ հանդիսացավ ֆրանս–մարոկկոյական պատերազմի համար, որը տեղի ունեցավ 1844 թ., և որն ավարտվեց Մարոկկոյի պարտությամբ: Բայց Ֆրանսիային չհաջողվեց ամրանալ Մարոկկոյում: Օտարերկրյա, առաջին հերթին Անգլիայի, ճնշման տակ, Ֆրանսիան 1844 թ. հարկադրված էր իր զորքերը դուրս բերել Մարոկկոյից:

Մարոկկոն մեկ պատերազմ ևս մղեց, այս անգամ Իսպանիայի հետ 1860 թ., կապված Սեուտայի սահմանների հետ: Այդ քաղաքնի իր շրջանով գտնվում էր Իսպանիայի տիրապետության տակ: Իսպանիան ցանկանում էր այդ անկլավի սահմաններն ընդլայնել, որին, բնականաբար, դեմ էր Մարոկկոն: Վճռական ճակատամարտը, որը տեղի ունեցավ Լոս Կաստիլյոսի մոտ, ավարտվեց մորոկկոյական զորքերի պարտությամբ: Իսպանիան կարողացավ ոչ միայն իր տիրապետության տակ պահել Սեուտան, այլև գրավեց Տետուանը: Կնքված հաշտության պայմանագրով, Իսպանիան ընդարձակեց Սեուտանի սահմանները, Մարոկկոն պարտավորվեց որպես ռազմատուգանք Իսպանիային վճարել 100 մլն պեսետա և նրան զիջեց ևս մի անկլավային տարածք Ատլանտյան օվկիանոսի ափերին:

4. Ֆրանսիական պրոտեկտորատի հաստատումը Մարոկկոյի վրա

XIX դարի երկրորդ կեսից, հատկապես 80–90–ական թվականներից, Մարոկկոյի ճակատագրում սկսում է ավելի ակտիվ դեր խաղալ Ֆրանսիան: Ալժիրի նվաճումն ու գաղութացումը և Թունիսի վրա իր պրոտեկտորատի հաստատումը, Ֆրանսիային դարձրել էին ավելի ագրեսիվ և վճռական Հյուսիսային Աֆրիկայի այդ երկրի վրա նույնպես իր տիրապետությունը հաստատելու հարցում:

Բայց, ի տարբերություն Ալժիրի և Թունիսի, այդ խնդիրը Մարոկկոյում ավելի դժվար էր լուծել և կապված էր մեծ բարդությունների հետ: Խոսքն առաջին հերթին եվրոպական տարբեր պետությունների հետ լեզու գտնելն ու նրանց համաձայնությունը կորզելն էր: Իսկ նրանք՝ Անգլիան, Իսպանիան, Իտալիան, ինչպես նաև Գերմանիան, Մարոկկոյի հարցում ավելի անզիջում էին, քանի որ նրանք իրենք էին ցանկանում հաստատվել այնտեղ: Այդ պարագան ֆրանսիական դիվանագիտությունից պահանջում էր ավելի նուրբ աշխատանք, զիջումների գնալու ավելի մեծ պատրաստակամություն, մրցակից պետություններից յուրաքանչյուրի շահերի հետ հաշվի նստելու կամքի դրսևորում և այլ հանգամանքներ: Կարելի է ասել, որ ֆրանսիական դիվանագիտությունը հիմնականում կարողացավ լուծել այդ բարդ խնդիրները:

Կարևոր հարցերից մեկը դարձավ Մարոկկոյում կապիտուլյացիոն ռեժիմից եվրոպական բոլոր պետությունների հավասարապես օգտվելու հարցը: Ֆրանսիան, ապա նաև Իսպանիան, դեռևս XVIII դարում Մարոկկոյի հետ կնքել էին համապատասխան պայմանագրեր, ստանալով մեծ արտոնություններ իրենց քաղաքացիների, վաճառականների, արդյունաբերողների գործունեության և այլ հարցերում: Եվրոպական մյուս պետությունները ևս ցանկանում էին օգտվել ճիշտ այնպիսի արտոնություններից, ինչպես Ֆրանսիան և Իսպանիան: Երկար բանակցություններից հետո, 1880 թ. Մադրիդում գումարվեց միջազգային կոնֆերանս հատուկ նվիրված այդ հարցին: Կողմերը ստորագրեցին մի կոնվենցիա, որը Մարոկկոյում կապիտուլյացիոն ռեժիմից օգտվելու համանման իրավունքներ Ֆրանսիայի և Իսպանիայի հետ միասին, տվեց Անգլիային, ԱՄՆ–ին, Իտալիային Գերմանիային, Հոլանդիային, Պորտուգալիային և մի քանի այլ երկրների: 1881 թ. Մադրիդի կոնվենցիային միացավ նաև ցարական Ռուսաստանը:

Սակայն Ֆրանսիային անհրաժեշտ էր առաջին հերթին համաձայնության գալ Իտալիայի, Անգլիայի և Իսպանիայի հետ, որոնք Ֆրանսիայի ամենալուրջ մրցակիցներն էին: Առանց այդ հարցի լուծման Ֆրանսիան չէր կարող որևէ ձևով իր տիրապետությունը հաստատել Մարոկկոյում: Ֆրանսիան, քայլ առ քայլ, մեծ համբերատարությամբ կարողանում էր առաջ շարժվել և իր մրցակիցներին զիջումներ կատարելու գնով, վերացնել նրանց առարկությունները և հասնել իր նպատակին:

Առաջինը նա համաձայնության եկավ Իտալիայի հետ: 1900 թ. դեկտեմբերին նրանք համաձայնության եկան առ այն, որ Ֆրանսիան գործողությունների ազատություն էր տալիս Իտալիային Տրիպոլիում, նշելով, որ դա իր ազդեցության գոտուց դուրս է, իսկ Իտալիան իր հերթին հավաստում էր, որ ինքը ոչ մի հավակնություն չունի Մարոկկոյի նկատմամբ և դեմ չէ Ֆրանսիայի ապագա գործողություններին Մարոկկոյում:

Այսպիսով, Ֆրանսիան Իտալիային գործողությունների ազատություն էր տալիս Տրիպոլիում՝ Լիբիայում, իսկ Իտալիան համանման ազատություն Ֆրանսիային Մարոկկոյում: Դրանով Ֆրանսիան հաղթահարեց Մարոկկոյի վրա իր տիրապետությունը հաստատելու ճանապարհին առաջին խոչընդոտը:

Ավելի կարևոր էր իր նշանակությամբ երկրորդ համաձայնագիրը, որը ստորագրվեց 1904 թ. ապրիլի 8–ին Լոնդոնում: Ինչպես առաջին՝ ֆրանս–իտալական, այնպես էլ այս՝ անգլո–ֆրանսիական համաձայնագիրը, բացահայտ գործարքի բնույթ ուներ: Այս համաձայնագրով Ֆրանսիան պարտավորվում էր Անգլիայի առջև խոչընդոտներ չհարուցել Եգիպտոսի հարցում, որը դեռևս 1882 թ. անցել էր Անգլիայի տիրապետության ներքո, իսկ Անգլիան ճանաչում էր Ֆրանսիայի իրավունքները Մարոկկոյում:

1904 թ. հոկտեմբերին Մարոկկոյի հարցի շուրջը համաձայնության եկան նաև Ֆրանսիան և Իսպանիան: Նրանք ճանաչում էին միմյանց ազատ գործելու իրավունքներն իրենց համապատասխան ազդեցության գոտիներում: Իսպանիային անցնում էր ազդեցության երկու գոտի՝ մեկը հյուսիսային, իսկ մյուսը՝ հարավային Մարոկկոյում:

Այս փուլում Գերմանիան հայտարարեց, որ ինքը որևէ հետաքրքրություն և շահեր չունի Մարոկկոյում: Հասկանալի է, որ Ֆրանսիան, ինչպես նաև Իսպանիան, գերմանական հայտարարությունն ընկալեցին որպես նշան այն բանի, որ նա նույնպես խոչընդոտներ չի հարուցի և իրենք կարող են ազատորեն գործել:

Սակայն շատ չանցած Գերմանիայի դիրքորոշումը կտրուկ փոխվեց, որը մեծ անհանգստություն պատճառեց ոչ միայն Ֆրանսիային, այլև եվրոպական մյուս պետություններին: 1905 թ. մարտի 31–ին գերմանական կայզեր Վիլհելմ II հայտնվեց Տանժերում և հայտարարեց, որ Մարոկկոյի սուլթանն իր ընկերն է և ինքը կպաշտպանի այդ երկրի սուվերենությունը: Նա միաժամանակ նշեց, որ Գերմանիան շահեր ու-

նի Մարոկկոյում և ինքը իր երկրի շահերը նույնպես անպայման կպաշտպանի:

Այսպիսով, իրադրությունը Մարոկկոյի շուրջը Գերմանիայի պատճառով սրվեց և շահագրգիռ պետությունները հարկադրված էին գումարել հատուկ միջազգային կոնֆերանս, նվիրված Մարոկկոյի հարցին: Կոնֆերանսը բացվեց 1906 թ. հունվարի 15–ին իսպանական Ալխեսիրաս քաղաքում և տևեց մոտ երեք ամիս: Կոնֆերանսի ընդունված որոշման մեջ նշվում էր, որ նրա մասնակիցները ճանաչում են Մարոկկոյի շարիֆական կայսրության անկախությունը և տերիտորիալ ամբողջականությունը: Սակայն մյուս կողմից նա բավարարեց Ֆրանսիայի հիմնական պահանջները: Ֆրանսիան և Իսպանիան 1907 թ. սկսեցին Մարոկկոյի նվաճումը, յուրաքանչյուրն իր ազդեցության գոտում:

Ֆրանսիական զորքերի ներխուժումը ալեկոծեց ամբողջ Մարոկկոն: Նրանց դժգոհությունն ուղղված էր ոչ միայն ֆրանսիացիների, այլև Մարոկկոյի սուլթան Աբդ ալ–Ազիզի դեմ, նրան անգամ մեղադրելով դավաճանության մեջ: Մարակեշում գումարված ցեղապետերի ժողովը 1907 թ. օգոստոսի 16–ին գահընկեց արեց Աբդ ալ–Ազիզին և նոր սուլթան հռչակեց Մուլայ Խաֆիդին: Սկսվեց քաղաքացիական պատերազմ նախկին և նոր սուլթանի կողմնակիցների միջև, որի ընթացքում Աբդ ալ–Ազիզը ջախջախիչ պարտություն կրեց:

Ֆրանսիան գրավեց Մարոկկոյի մեծ մասը:

1908 թ., վերջապես համաձայնություն կայացավ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև: Գերմանիան ճանաչեց Ֆրանսիայի քաղաքական շահերը Մարոկկոյում, իսկ Ֆրանսիան Գերմանիայի տնտեսական շահերը:

Ֆրանսիան աստիճանաբար ամրապնդում էր իր դիրքերը Մարոկկոյում, նախքան վերջնականապես այնտեղ հաստատվելը: Սակայն ներքաղաքական դրությունը Մարոկկոյում հանգիստ չէր, որի գլխավոր պատճառը սուլթան Մուլայ Խաֆիդի քաղաքականությունն էր, մասնավորապես ցեղերի նկատմամբ, մոռանալով, որ ինքը սուլթան հռչակվեց շնորհիվ ցեղապետերի աջակցության: Նա ցեղերի շահերին կպավ նրանց համար մի այնպիսի զգայուն հարցում, ինչպես հարկերն էին, հրաման արձակելով բարձրացնել ցեղերից գանձվող հարկերը: Այդ հողի վրա 1911 թ. սկսվեց ցեղերի նոր ապստամբությունը, այս անգամ արդեն ուղղված Մուլայ Խաֆիդի դեմ:

Ֆրանսիան պատրվակ բռնելով դա, սկսեց Մարոկկոյի ներքին շրջանների գրավումը: Մինչ այդ նա հիմնականում գրավել էր մերձծովյա շրջանները, խուսափելով ներխուժել ներքին շրջանները, որոնք անհամեմատ ավելի դժվար էր յուրացնել և հնազանդ պահել: Ֆրանսիան գրավեց Ֆեսը, իսկ ապա նաև Մեկնեսը: Իսպանացիներն իրենց հերթին գրավեցին Լառաշը և Կսար աս–Սաղիրը:

Այս խառնաշփոթ իրադրությունից որոշեց օգտվել Գերմանիան, որը 1911 թ. Մարոկկոյի ափերի մոտ ուղարկեց իր ռազմանավերից մեկը՝ «Պանտերան», նպատակ ունենալով գրավել Աղադիրը: Պարզ դարձավ, որ Գերմանիան, չնայած նրա բազմիցս արած հայտարարություններին, որ ինքը ոչ մի հետաքրքրություն չունի Մարոկկոյի նկատմաբ, հատկապես տերիտորիալ հարցերում, իրականում իր բաժին կարկանդակն էր ուզում ստանալ: Այդ հարցը քննարկման առարկա դարձավ 1911 թ. հուլիսի 10–ին Բեռլինում սկսված ֆրանս–գերմանական բանակցությունների ժամանակ: Կողմերը երկար ու դժվարին բանակցություններից հետո, որի ժամանակ քննարկվում էին տերիտորիալ պահանջների մի քանի տարբերակներ, 1911 թ. նոյեմբերի 4–ին եկան համաձայնության: Գերմանիան համաձայնվեց Մարոկկոյի վրա ֆրանսիական մանդատի հաստատման հետ, իսկ Ֆրանսիան Գերմանիային էր զիջում Կոնգոյի մի մասը: Ահա այսպես լուծվեց Աղադիրի ճգնաժամը: Դրանով վերացավ ֆրանսիական պրոտեկտորատի հաստատման ճանապարհին վերջին արգելքը:

Ֆրանսիան առանց ժամանակ կորցնելու անցավ Մարոկկոյի նկատմամբ իր ծրագրերի իրականացմանը: 1912 թ. մարտի 30–ին Ֆեսում ստորագրվեց ֆրանս–մարոկկոյական պայմանագիր Մարոկկոյի վրա Ֆրանսիայի պրոտեկտորատը հաստատելու մասին: Ֆրանսիայի կողմից պայմանագիրը ստորագրեց ֆրանսիական դեսպանորդ Ռենոն, իսկ Մարոկկոյի կողմից՝ նրա սուլթան, Մուլայ Խաֆիդը:

Մարոկկոյի վրա Ֆրանսիայի պրոտեկտորատի հաստատումը, ինչպես և Թունիսի պարագայում, իրագործվեց երկկողմ պայմանագրի ձևով, և այս դեպքում ևս առկա էր հարկադրանքի պահը, քանի որ պայմանագիրը սուլթանը ստորագրեց ոչ կամովին, այլ ենթարկվելով ֆրանսիական քաղաքական և ռազմական ճնշմանը:

Բովանդակության առումով Ֆեսի պայմանագիրը սկզբունքային որևէ նոր բան չէր պարունակում և նրա համար որպես նախատիպ ծառայեց Թունիսի հետ կնքված պայմանագիրը:

Պահպանվում էր մարոկկոյական սուլթանությունը որպես պետություն: Պահպանվեց նաև սուլթանի պաշտոնը և Մուլայ Խաֆիդը ձնականորեն հանդիսանում էր Մարոկկո պետության ղեկավարը: Սակայն փաստական ամբողջ իշխանությունն անցավ ֆրանսիացիներին՝ ի դեմս նրա Գլխավոր ռեզիդենտի: Ֆրանսիական առաջին Գլխավոր ռեզիդենտ նշանակվեց գեներալ Լիոտեն, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1925 թ.: Նա կարողացավ հաստատել ուժեղ վերահսկողություն Ֆրանսիային ենթակա տարածքների վրա, սկզբում, մինչև 1914 թ., Մարոկկոյի դաշտավայրերի և ցածրադիր սարահարթերի վրա՝ Ֆեսից մինչև Ատլասի լեռները Մարակեշից հարավ, ապա, մինչև 1918 թ.՝ արևմտյան Ատլասի, Ալժիրի հետ միացնող Թազա միջանցքի և հյուսիսային բարձրավանդակի որոշ մասերի վրա: Դա շատ դժվար խնդիր էր, որը մեծ փորձ ունեցող և Մարոկկոն շատ լավ իմացող գեներալ Լիոտեն կատարեց հաջողությամբ: Դրանով Ֆրանսիան իրագործեց Ֆեսի պայմանագրում ամրագրված «Մարոկկոյի տարածքի գրավումը»:

Մարոկկոյի կառավարման հարցում Գլխավոր ռեզիդենտն օժտված էր ամենալայն իրավունքներով: Նա գործում էր Ֆրանսիական Հանրապետության անունից, որին փաստորեն ենթարկվում էր նաև սուլթանը: Դրա մասին է վկայում պայմանագրի այն կետը, որով Գլխավոր ռեզիդենտին իրավունք էր տրված իր համաձայնությունը՝ վիզան, դնել սուլթանի որոշումների վրա, որից հետո միայն այդ որոշումները կարող էին օրինականության ուժ ստանալ և կատարվել:

Մարոկկոն զրկվեց օտարերկրյա պետությունների հետ անմիջականորեն հաղորդակցվելու իրավունքից: Նա դա կարող էր անել միայն Գլխավոր ռեզիդենտի միջոցով: Մարոկկոն զրկվեց նաև արտասահմանյան երկրներում դիվանագիտական ներկայացուցչություն ունենալու իրավունքից: Այդ պարտականությունները դրվեցին տվյալ երկրում ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների վրա, որոնց լիազորություններն ընդրածակվեցին այն առումով, որ նրանք պետք է սպասարկեին նաև մարոկկացիներին և պաշտպանեին նրանց շահերը:

Ֆեսի պայմանագրով Մարոկկոյում հաստատվում էր կառավարման նոր ռեժիմ: Սուլթանը, ինչպես նշեցինք, ձնականորեն պահպանում էր իր գահը: Պահպանվում էին նաև իսլամական կրոնի կարգավիճակը, ազգային ավանդական սովորությունները, այդ թվում և «հարգանքը սուլթանի անձի նկատմամբ»: Դա միայն այսպես կոչված «նոր ռեժիմի»

առաջին մասն էր: Երկրորդ մասը նախատեսում էր բարենորոգումների կիրառում վարչական, դատական, կրթական, ֆինանսական, տնտեսական և ռազմական մարզերում: Բայց այդտեղ կար մի կարևոր նրբություն: Այդ բարենորոգումների բնույթը, ժամկետը և նպատակահարմարությունը բացառապես կախված էր Ֆրանսիայից, այսինքն դրա իրավունքը տրվում էր Ֆրանսիային: Իսկ ինչ վերաբերում էր սուլթանին, ապա նրա մասին ասված էր, որ նա «համաձայնվում էր այդ բարենորոգումների անցկացմանը»:

Ֆրանսիան իրավունք ուներ Մարոկկոյի տարածքում իրագործել ոստիկանական գործողություններ, որն ինքը նպատակահարմար կգտներ, առանց դրանց մասին սուլթանին նախօրոք տեղյակ պահելու, առավել ևս դրանք սուլթանի հետ համաձայնեցնելու:

Եվ, վերջապես, Ֆրանսիան «բարեհաճ» գտնվեց իր վրա վերցնել սուլթանին օգնություն ցույց տալու «հոգսը» բոլոր այն դեպքերում, երբ վտանգ կարող էր սպառնալ նրան և նրա գահին:

Ֆրանսիան չափազանց մեծ նշանակություն էր տալիս ֆինանսական հարցերին և դրանք նույնպես իրենց համարժեք արտացոլումն էին գտել պրոտեկտորատի մասին Ֆեսի պայմանագրում: Այս կապակցությամբ երկու հանգամանքի վրա էր ուշադրություն դարձվում: Նախատեսվում էր Մարոկկոյի ամբողջ ֆինանսական համակարգն այնպես վերակառուցել, որպեսզի Մարոկկոն դառնա վճարունակ երկիր արտասահմանյան փոխառությունների և պարտքերի վճարման հարցում: Իսկ այդ փոխառությունների և պարտքերի տերը Ֆրանսիան էր, նրա բանկերը և բանկիրները: Ուրեմն, Ֆրանսիան ինքը պետք է վերակառուցեր Մարոկկոյի ֆինանասական համակարգն այնպես, որ հետ ստանար շահույթներով հանդերձ, իր սեփական փողերը:

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ Մարոկկոյի սուլթանը չէր կարող առանց Ֆրանսիայի գիտության և համաձայնության փոխառությունների վերաբերյալ պայմանագրեր կնքել օտարերկրյա պետությունների ու բանկերի հետ: Սուլթանը զրկվում էր նաև առանց ֆրանսիական իշխանությունների համաձայնության կոնցեսիաներ տրամադրել օտարերկրյա պետություններին և ընկերություններին:

Ֆեսի պայմանգրի հոդվածների վերլուծությունը կասկածի տեղիք չի թողնում, որ, իրոք, Մարոկկոն կորցրեց իր անկախությունը, իսկ նրա սուլթանի գահի վրա մնալը լոկ ձևական բնույթ էր կրում: Պայմանագրում ամրագրված դրույթները, իրոք, հաստատում են այն տեսակետը,

որ Մարոկկոյում ամբողջ իշխանությունն անցավ Ֆրանսիային և նա էր Մարոկկոյի իսկական տերն ու տիրակալը:

Ֆրանսիան լուծելով Մարոկկոյի վրա իր պրոտեկտորատը հաստատելու հարցերը, այնուհետև ձեռնամուխ եղավ Իսպանիայի հետ տերիտորիալ հարցերի հետ կապված խնդիրների կարգավորմանը, որոնք բխում էին Ֆեսի պայմանագրի ոգուց և դրույթներից:

Ինչպես նշել ենք, դեռևս 1904 թ. ֆրանս–իսպանական համաձայնագրով, Ֆրանսիան համաձայնվել էր Իսպանիային զիջել ազդեցության երկու գոտիներ՝ հյուսիսային և հարավային: Ի զարգացումն այդ համաձայնագրի, Ֆրանսիան և Իսպանիան 1912 թ. նոյեմբերի 27–ին կնքեցին նոր համաձայնագիր, որով ճշգրտվեցին Իսպանիային անցնող հյուսիսային և հարավային գոտիների սահմանները, որոնց վրա հաստատվում էր իսպանական պրոտեկտորատ:

Այս քայլով սկիզբ դրվեց Մարոկկոյի մասնատմանը, որը այնուհետև իր զարգացումը ստացավ նաև Տանժերը միջազգային գոտի հայտարարելու մեջ: Այդ հարցի վերաբերյալ 1912 թ. վերջերին բանակցություններ սկսվեցին Ֆրանսիայի, Անգլիայի և Իսպանիայի միջև: Բանակցությունների ժամանակ ի հայտ եկան խոր տարաձայնություններ կողմերի միջև, որը նրանք չկարողացան հաղթահարել և բանակցություններն ընդհատվեցին վերահաս Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով: Հիմնական առարկողը Անգլիան էր, որը պնդում էր Տանժերում հաստատել հատուկ ռեժիմ, տարբեր Մարոկկոյի ֆրանսիական և իսպանական գոտիներում հաստատված ռեժիմից:

Բանակցությունները վերսկսվեցին պատերազմի ավարտից հետո և, ի վերջո, կողմերը 1923 թ. դեկտեմբերի 18–ին հանգեցին փոխզիջումային լուծման: Փարիզում ստորագրված Տանժերյան համաձայնագրով, Տանժերը հայտարարվեց միջազգային գոտի: Դա Անգլիայի գլխավոր պահանջն էր: Միաժամանակ մատնանշվեց, որ Տանժերը որպես միջազգային գոտի պետք է մշտապես պահպանի չեզոքություն: Դրանով մերժվեց Իսպանիայի հավակնությունները Տանժերի միջազգային գոտում գերակայող ազդեցություն ունենալու վերաբերյալ: Տանժերն անվանապես մնում էր Մարոկկոյի սուլթանի սուվերենության ներքո և ստանում էր վարչական և օրենսդրական ինքնավարություն, առանց, սակայն, արտաքին կապեր իրականացնելու իրավունքի, որը 1912 թ. պայմանագրով հանձնված էր միայն Ֆրանսիային, ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտ–կոմիսարին:

Այսպիսով, կարելի է ասել, որ Մարոկկոյում հաստատվեց յուրահատուկ պրոտեկտորատ և ստեղծվեց առանձնահատուկ կարգավիճակ:

Նախ, նրանում հաստատվեց երկու՝ ֆրանսիական և իսպանական, պրոտեկտորատ: Ճիշտ է, նրանք իրենց ծավալներով և նշանակությամբ համարժեք չէին, քանի որ առաջնայինը և կարևորը ֆրանսիականն էր, որի ներկայացուցչի ձեռքում էր կենտրոնացված ամբողջ փաստական իշխանությունը: Իսպանական պրոտեկտորատը ինչ–որ իմաստով ածանցյալ էր ֆրանսիականից:

Երկրորդ, փաստորեն չպահպանվեց Մարոկկոյի տերիտորիալ ամբողջականությունը: Նա բաժանվեց երեք մասերի՝ ֆրանսիական և իսպանական պրոտեկտորատների և Տանժերի միջազգային չեզոք գոտու:

Մարոկկոյում իսկական կառավարողը հանդիսանում էր ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտը, որի պարտականությունների մեջ էր մտնում նաև հետևել սուլթանին և նրա գործողություններին, կասեցնել և կանխել նրա բոլոր այն գործողությունները, որոնք կհակասեին Ֆրանսիայի շահերին: Եվ, իրոք, գեներալ Լիոտեն ցույց տվեց սուլթան Մուլայ Խաֆիդին, թե ով է երկրի իսկական կառավարողը: Նկատելով, որ սուլթանն անկախ քաղաքականության հակումներ է ցուցաբերում, ֆրանսիական Գլխավոր ռեզիդենտը 1912 թ. նրան գահընկեց արեց և սուլթանի գահին բազմեցրեց նրա եղբորը, որի ամենագլխավոր առավելությունը կայանում էր նրանում, որ նա շատ թուլամորթ և կամազուրկ անձնավորություն էր: Եվ Ֆրանսիայի ընտրությունը հենց դրա համար էլ ընկել էր նրա՝ Մուլայ Յուսուֆի թեկնածության վրա, որը լրիվ արդարացրեց ֆրանսիական իշխանությունների սպասելիքը:

5. Սուդանը Եգիպտոսի տիրապետության տարիներին: Մահդիական պետությունը (1885–1898 թթ.)

Սուդանը, ինչպես նշել ենք, Մուհամմադ Ալին վերջնականապես գրավեց և Եգիպտոսին միացրեց 1822 թ., իսկ 1841 թ. սուլթանական ֆերմանով, նա, ավելի կոնկրետ, նրա արևելյան մասը, Եգիպտոսի հետ միասին համարվեց Մուհամմադ Ալիի ժառանգական տիրույթ: Այդ հիման վրա, նրա մահանալուց հետո էլ, որը տեղի ունեցավ 1849 թ., Սուդանը շարունակում էր մնալ Մուհամմադ Ալիի հաջորդների կառավարման ներքո և ենթակա էր Եգիպտոսին: Նրա այդ կարգավիճակը պահ-

պանվեց մինչև 1885 թ., երբ Սուդանի տարածքում հայտնվեց անկախ սուդանական պետություն, որը պատմության մեջ ավելի հայտնի է որպես Սուդանի մահդիական պետություն:

Մուհամմադ Ալին Սուդանի վրա նայում էր երեք տեսանկյունից: Առաջին, որպես կարևոր օղակ արաբական կայսրության ստեղծման համակարգում, երկրորդ, որպես ոսկով հարուստ երկիր, և, երրորդ, ստրուկների հայթայթման կարևոր աղբյուր:

Առաջին հարցում Սուդանը չարդարացրեց նրա վրա դրված հույսերը, և դա բնավ էլ նրա մեղքը չէր: Մուհամմադ Ալիի քաղաքական պարտությունը, որի մեջ գլխավոր դերակատարները եղան եվրոպական մեծ պետությունները, օրակարգից հանեց արաբական կայսրության ստեղծման հարցը և հնարավորությունները: Եվ այդ պահից, Սուդանը արաբական կայսրության կարևոր օղակ լինելուց վերածվեց Մուհամմադ Ալիի ժառանգական ախորժակներին ինչ–որ չափով հագուրդ տալու միջոցի: Նրան այդպես էին վերաբերվում նաև Մուհամմադ Ալիի ժառանգորդները:

Ինչ վերաբերում է մյուս երկու հարցերին, ապա Սուդանը լիուլի բավարարեց Եգիպտոսի սպասելիքները, մանավանդ ստրուկների հարցում:

Սուդանը դարձավ Եգիպտոսի նահանգներից մեկը, որը ղեկավարում էր Կահիրեից նշանակված հաքիմդարը կամ գլխավոր նահանգապետը: Նրան էին ենթարկվում Սուդանի մարզային ղեկավարները, իսկ մարզերը բաժանվում էին ավելի փոքր շրջանների, որոնց սահմանները համընկնում էին ցեղերի կամ ցեղային միությունների ավանդական սահմանների հետ: Այդ նոր վարչատարածքային բաժանումների աշխատակազմը, ինչպես նշում է եգիպտական աղբյուրներից մեկը, «բաղկացած էր օսմանյան–եգիպտական բանակի չերքեզական, թուրքական, եվրոպական և հայկական սպաներից, որոնց օգնում էին, հատկապես ստորին օղակներում, սուդանական շեյխերը և ցեղային առաջնորդները»:

Եգիպտոսի տիրապետության տարիներին Սուդանը հայտնվեց անտանելի տնտեսական և սոցիալական պայմաններում: Բազմաթիվ շրջաններ վեր էին ածվել ստրկավաճառության կենտրոնների, որի մեջ ներգրավված էին ոչ միայն եգիպտացիները և թուրքերը, այլև եվրոպացիները: Դա շատ եկամտաբեր բնագավառ էր, մանավանդ կանանց և երեխաների ստրկավաճառությունը:

Լայն տարածում ստացավ սուդանցիներին պատկանող հողերի զավթումը եգիպտական, թուրքական փաշաների և պաշտոնյաների, ինչպես նաև եվրոպացիների կողմից, որոնց հոսքը Սուդան մեծ ծավալներ ընդունեց XIX դարի 50–60–ական թվականներից: Իսկ այդ եվրոպացիների մեջ քիչ չէին զանազան խարդախ և անազնիվ պաշտոնյաներ, զինվորականներ, անգամ բացահայտ ավազակներ, որոնք հարստանալու մոլուցքով տարված, ոչնչի առջև կանգ չէին առնում սուդանցիներին կողոպտելու համար: Ժողովուրդը տնքում էր ծանր հարկերի տակ:

Այս ֆոնի վրա ուժեղացավ պայքարը եվրոպական պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և մյուս երկրների միջև, Սուդանում հաստատվելու կամ ազդեցիկ դիրքեր նվաճելու համար, որն ավելի բարդացրեց իրավիճակը:

Եգիպտոսի իշխանությունները հասկանում էին ստրկավաճառության սահմանափակման, նույնիսկ վերացման անհրաժեշտությունը, ընդունելով, որ այդ ամոթաբեր գործարքը, որը հանդիսանում էր Նեղոսի հովտի սոցիալական համակարգի օրգանական մասը, անպատվաբեր, բարոյալքող և հասարակությունը կազմալուծող երևույթ էր: Խդիվ Իսմայիլը, ինչպես 1867 թ. սկսեց կոչվել Եգիպտոսի ժառանգական կառավարողը Մուհամմադ Ալիի դինաստիայից, մտադիր էր վերջնականապես վերացնել ստրուկների առևտուրը: Բայց դա դյուրին գործ չէր, քանի որ դրան ակտիվորեն մասնակցում էին անգլիացիներ, ֆրանսիացիները, գերմանացիները, իտալացիները, ավստրիացիները և եվրոպական այլ երկրների առևտրականներ և արկածախնդիրներ:

Սուդանում կուտակվել էր խոր դժգոհություն և մեծ խմորումներ էին ընթանում, որոնք 1881 թ. պայթյունի ծն ընդունեցին: Սկսվեց սուդանցիների ամենահզոր ապստամբություններից մեկը:

Ի՞նչ ապստամբություն էր դա և ո՞վ էր ղեկավարում նա: Այդ ապստամբությունն իր բնույթով գյուղացիական ապստամբություն էր, որը հանդես էր գալիս կրոնական քողի տակ: Նա ուղղված էր ինչպես եգիպտա–թուրքական, այնպես էլ եվրոպացիների ճնշումների դեմ: Նրա ղեկավարն էր Մուհամմադ Ահմադ Աբդուլլան, որը Սամանիյա կրոնական եղբայրության անդամ էր և թափառաշրջիկ դերվիշ, որը բավականին լավ էր ուսումնասիրել աստվածաբանությունը: Այնուհետև նա հաստատվում է Սպիտակ Նեղոսի Աբբա կղզում, որը գտնվում է Խարթումից հարավ, և փաստորեն այն դարձնում իր քարոզչական կենտրոնը: Նրա

աշակերտները այդտեղից էին իրենց մուալիմի գաղափարները և հայացքները տարածում Սուդանի տարբեր կողմերում:

Մուհամմադ Ահմադի քարոզչության հիմքում ընկած էր ժուժկալության, ասկետիզմի գաղափարը: Նա կոչ էր անում վերադառնալ նախասկզբնական իսլամի մաքուր ակունքներին և հաստատել հավասարություն ու եղբայրություն: Նրա կարծիքով իսլամը աղավաղել և բարքերն էլ փչացրել են, և դրա մեջ նա մեղադրում էր ինչպես եվրոպացիներին, այնպես էլ եգիպտացի և թուրք կառավարողներին: Նա իր մեղադրանքների մեջ այնքան հեռու գնաց, որ եգիպտացիներին և թուրքերին հայտարարեց կեղծ մուսուլմաններ, որոնք դավաճանել են իսլամին և նահանջել նրա հիմնադրույթներից: Մուհամմադ Ահմադը ելքը տեսնում էր մաքուր իսլամին վերադառնալու, նրա անաղարտ դրույթներին հետևելու, իսլամական ումմայի մեջ հողային և գույքային հավասարություն հաստատելու մեջ: Նա մատնանշում էր դրան հասնելու ուղիները, առաջարկելով կատարել եգիպտացի, թուրք և սուդանցի հողատերերի ունեցվածքի, գույքի և կալվածքների վերաբաժանում, անգամ բռնագրավում:

1881 թ. մարտին Մուհամմադ Ահմադն իրեն հայտարարեց Մահդի՝ Փրկիչ, և կոչ արեց սուդանցիներին միանալ իրեն և հանդես գալ թուրքերի դեմ՝ հանուն իսլամի բարեփոխումների:

Նա ցուցաբերեց առաջնորդին անհրաժեշտ հատկանիշներ, կազմակերպչական մեծ ընդունակություններ, մարդկանց համոզելու և իր հետևից տանելու արվեստ:

Եգիպտական իշխանությունները ապստամբությունը ճնշելու համար Աբբա կղզի ուղարկեցին մի զորաջոկատ, որը գլխովին ջախջախվեց: Դրանից հետո ապստամբության առաջնորդը դուրս եկավ կղզուց և իր կողմնակիցների հետ հաստատվեց Կորդոֆանում, որը միանգամայն ճիշտ որոշում էր: Դա նրան տալիս էր գործողությունների ավելի լայն դաշտ և նոր կողմնակիցներ գրավելու հնարավորություններ: Եվ, իրոք, նրա կողմնակիցների շարքերը համալրվեցին տասնյակ հազարավոր մարդկանցով՝ գյուղացիներով, քոչվոր–անասնապահներով, արհեստավորներով և ստրուկներով: Նրա ապստամբական ոչ մեծ ջոկատը վերածեց մեծաքանակ բանակի: Դա հնարավորություն տվեց Մուհամմադ Ահմադին հայտարարել սրբազան պատերազմ:

Իր հեղինակությունը բարձրացնելու համար, նա ամեն բանում փորձում էր նմանվել Մուհամմադ մարգարեին, շատ բան վերցնելով

նրա զինանոցից: Այսպես, օրինակ, նա իր կողմնակիցներին անվանեց անսարաներ, ինչպես Մուհամմադ մարգարեն, երբ նա իր փոքր կողմնակիցների հետ Մեքքայից փախավ Մադինա: Դրանով Մուհամմադ Ահմադն ուզում էր շեշտած լինել իր վերադարձը նախնական, անաղարտ իսլամին, որը հիմնել էր Մուհամմադ մարգարեն: Նա վերադարձավ Մուհամմադ մարգարեի հռչակած սկզբունքներին պատերազմի հարցում, հայտարարելով, որ սրբազան պատերազմում ընկածներին սպասում է հավերժական երանություն, իսկ կենդանի մնացած հաղթողներին հասնում է ավարի չորս հինգերորդականը:

Ապստամբների վրա այդ բոլորը, ինչպես նաև Մահդիի հասարակ, աղքատ դերվիշ լինելը, մոգական ազդեցություն էր գործում: Նրանք միաժամանակ հպարտ էին, որ իրենց ղեկավարը, որը ցանկանում է անկախ պետություն հիմնել, սուդանցի է, որը նշանակում էր, որ Սուդան պետության ղեկավարը լինելու էր ոչ թե օտար, այլ իրենց հարազատ սուդանցի:

Մուհամմադ Ահմադը Կորդոֆանում հիմնեց իր ռազմակայանը և Կորդոֆանը վերածեց ռազմական ճամբարի, որտեղ հավաքվում էին երկրի տարբեր վայրերից զենք կրելու ընդունակ մարդիկ: Վստահությունն ու հավատը նրա նկատմամբ այնքան ուժեղ էր, որ ապստամբներից շատերը Կորդոֆանի ռազմական ճամբար գալիս էին իրենց ընտանիքներով:

Ապստամբները ամբողջ 1881–1883 թթ. ճեկը մյուսի հետևից հաղթանակներ էին տանում նրանց դեմ ուղարկված զորաջոկատների դեմ: 1883 թ. փետրվարին ապստամբները գրավեցին Կորդոֆանի մայրաքաղաք ալ–Օբեյդան, որից հետո ապստամբական ալիքը տարածվեց Սուդանի տարբեր կողմերում: 1883 թ. համարվում է մեծ հաղթանակների տարի: Ապստամբները ութ ամիս տևած մարտերից հետո պարտության մատնեցին անգլո–եգիպտական մի մեծ բանակ, որի ժամանակ զոհվեց հրամանատար, անգլիական գեներալ Հինքսը: Նույն թվականի վերջերին նրանք իրենց հսկողությունը հաստատեցին Սուդանի համարյա բոլոր մասերի վրա:

Ի տես ապստամբների այս տպավորիչ հաղթանակների, անգլիացիները որոշեցին դիմել խորամանկ քայլի, որի հեղինակը Սուդանի անգլիացի կառավարիչ Գորդոնն էր: Ծրագրի նպատակն էր Սուդանը հայտարարել Եգիպտոսից անկախ պետություն, Մուհամմադ Ահմադին ճանաչել Սուդանի սուլթան, իսկ Գորդոնը լինելու էր Սուդանի գլխավոր

նահանգապետը: Ծրագրի խայծը կայանում էր նրանում, որ անգլիացիները, իբր, բավարարում էին սուդանցիների գլխավոր պահանջը՝ Սուդանը հռչակել որպես անկախ պետություն, որի համար նրանք բարձրացրել էին ապստամբություն:

Գորդոնը 1884 թ. փետրվարի 18–ին Խարթումում Սուդանը հայտարարեց անկախ պետություն, Մուհամմադ Ահմադին նշանակեց Կորդոֆանի սուլթան, իսկ իրեն վերապահեց Սուդանի գլխավոր նահանգապետի պաշտոնը, որը նշանակում էր լինել Սուդանի փաստական կառավարողը: Դիմելով այս քայլին, Գորդոնն ակնկալում էր պատասխան քայլ Մահդիից՝ դադարեցնել ապստամբությունը:

Բայց նա, որի թիկունքում կանգնած էին անգլիական իշխանությունները, սխալվեց իր հաշիվներում: Նա մեծամտորեն հավատացած էր, որ սուդանցիներն ի վիճակի չէին հասկանալու անգլիացիների քայլի իսկական նպատակներ՝ Սուդանը ձնականորեն եգիպտոսից անկախ հռչակելով, վերածել անգլիական գաղութի: Մահդին բարեբախտաբար հասկացավ, թե ինչ է թաքնված «Գորդոնի պլանի» հետևում և մերժեց գործարքի մեջ մտնել անգլիացիների հետ:

Ապստամբները վերսկսեցին պատերազմական գործողությունները և 1884 թ. մարտին շրջապատեցին Խարթումը, որտեղ գտնվում էր նաև Գորդոնը: 1885 թ. հունվարի 23–ին քաղաքն արդեն ապստամբների ձեռքում էր: Գորդոնը գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց:

Սկսվեց կարևոր փուլ Սուդանի նոր շրջանի պատմության մեջ: Սուդանն, իրոք, դարձավ անկախ պետություն, որը կառավարում էին իրենք՝ սուդանցիները:

Մահդի Մուհամմադ Ահմադը երկար չվայելեց անկախության պտուղները: Նա մահացավ 1885 թ. հունիսին՝ 42 տարեկան հասակում: Նրան փոխարինեց Աբդալլահը, որը Մահդիի ամենամերձավոր ու նրա գաղափարներին նվիրված օգնականն էր: Նա իրեն հռչակեց խալիֆա և Սուդանը որպես անկախ պետություն կառավարեց 13 տարի, մինչև 1898 թ.:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում մահդիական պետությունը և որքանո՞վ էր նա հանդիսանում հանգուցյալ Մահդիի գաղափարների մարմնավորումը:

Հանգամանքների բերումով, կապված այն իրողության հետ, որ Սուդանը բոլոր կողմերից շրջապատված էր թշնամական ուժերով, նա իրենից ներկայացնում էր շրջափակման օղակում հայտնված ռազմա-

կան ճամբար: Սուդանի պաշտպանությունը դարձավ այդ պետության առաջին և ամենակարևոր խնդիրը, որին ենթարկված էին մնացած բոլոր հարցերը: Պետության միջոցների առյուծի բաժինը գնում էր բանակի պահպանման, զենքի և զինամթերքի արտադրության կամ ձեռքբերման վրա:

Մահդիական պետության գոյության առաջին տարիներին զգալի քայլեր կատարվեցին գույքային անհավասարությունը վերացնելու և սոցիալական հավասարություն հաստատելու ուղղությամբ:

Հարկերի գանձումը բնակչությունից խիստ կրճատվեց, պայքար հայտարարվեց հարստանալու դեմ, իսկ ասկետիկ կյանքը համարվեց ապրելածնի միակ ընդունելի կերպը, որին պարտավոր էին հետևել և հետևում էին քաղաքացիական պաշտոնյաները և զինվորականները:

Կիրառվում էին նաև այլ քայլեր, որոնք նպատակաուղղված էին հավասարության սկզբունքների հաստատմանը, հասարակ մարդկանց կյանքը ավելորդ բարդություններից բեռնաթափելուն: Այսպես, օրինակ, Մահդին խորհուրդ էր տալիս ոսկին, ոսկեղենը և թանկարժեք քարերից պատրաստված զարդերը տանը չպահել, այլ հանձնել պետական գանձարան և դրանք օգտագործել տնտեսական նպատակների համար: Հետաքրքիր էր նաև մեկ այլ հանձնարարական, որը Մահդին առաջարկում էր սուդանցի նորապսակներին: Նա սահմանել էր, որ հարսանիքի ժամանակ չպետք է մորթել մեկ ոչխարից ավելի:

Իսկ ավազակները և թալանչիները, հավասարության սկզբունքները կոպիտ խախտողները ենթարկվում էին խիստ պատիժների:

Սակայն հետագայում, Սուդանում սկսեցին գլուխ բարձրացնել բացասական երևույթները, որոնք կապված էին այն հանգամանքի հետ, որ Սուդանում չէր դրվում գոյություն ունեցող ավատատիրության վերացման հարցը: Ավատատերերը ապստամբության սկզբնական փուլում, նրա հաղթանակների շրջանում, համակերպվում էին նորաստեղծ պայմաններին, սպասելով ավելի «լավ» ժամանակների, որոնք շուտով վրա հասան: Նրանք կարողացան պահպանել իրենց կալվածքները և ունեցվածքը, ապա սկսեցին նոր հարստություն դիզել: Կառավարող վերնախավը աստիճանաբար վերասերվեց, պաշտոնյաները՝ քաղաքացիական և զինվորական, նույնպես չդիմացան քննությանը և աստիճանաբար սկսեցին իրենց դիրքերը զիջել և ասկետիկ կյանքից անցնել հարուստներին վայել կյանքի: Հավասարության սկզբունքը խախտվեց: Չնայած հռչակված հավասարությանը, ստրկատիրությունն այդպես էլ

չվերացվեց, նա ինչ–որ չափով սահմանափակվեց, բայց ոչ ավելին: Չպետք է մոռանալ, որ մահդիական շարժման և նրա հաղթանակների մեջ իրենց որոշակի ներդրումն ունեին ստրուկները, որոնք հավատալով Մուհամմադ Ահմադի հավասարության վերաբերյալ խոստումներին, ակտիվորեն մասնակցում էին պատերազմական գործողություններին, զոհեր տալիս, բոլորի հետ հավասարապես տանում ամեն տեսակի դժվարություններ, այն հույսով, որ իրենք ազատություն կստանան: Ստրուկները, որոնք դեռևս երեկ պաշտպանում էին մահդիական շարժումը, հայտնվելով անելանելի դրության մեջ, ապստամբվեցին մահդիական վարչակարգի դեմ:

Պառակտվեցին նաև Մահդիի և նրան փոխարինած՝ խալիֆա Աբդալլահի կողմնակիցների շարքերը, որոնք միասնական էին շարժման սկզբում: Կրկին գլուխ բարձրացրին միջցեղային հակասությունները, որոնք վերածվեցին ցեղամիջյան բախումների:

Դրանից թուլանում էր Սուդանի մահդիական պետությունը, որը ձեռնտու էր նրա բազում հակառակորդներին՝ եգիպտական վերնախավին, որը չէր մոռացել, որ սուլթանական ֆերմանով Սուդանը Մուհամմադ Ալիի դինաստիական տիրույթն էր, եվրոպական պետություններին, մասնավորապես Անգլիային և Ֆրանսիային, որոնք իրենց առանձին շահերն ունեին այդ երկրում և տարածաշրջանում:

6. Եգիպտոսի ռեկոնկիստան և անգլո–եգիպտական կոնդոմինիումը՝ համատիրությունը Սուդանում (1898–1899 թթ.)

Այդ ուժերը XIX դարի 90–ական թվականների վերջերին ակտիվացրին իրենց գործողությունները Սուդանում, նպատակ ունենալով վերացնել մահդիական պետությունը և իրենց ուղղակի տիրապետությունը հաստատել Սուդանի վրա: Անգլիացիները եգիպտական կառավարող վերնախավի հետ խաղացրին Եգիպտոսի օրինական իրավունքները Սուդանում վերականգնելու խաղաքարտը, որը ստացավ ռեկոնկիստա՝ վերանվաճում անվանումը:

Այդ քայլով Անգլիան նպատակ ուներ չեզոքացնել եվրոպական պետությունների դիմադրությունը, ցույց տալով, որ Սուդանում հաստատվում է ոչ թե անգլիական տիրապետություն, այլ վերականգնվում է Եգիպտոսի օրինական դինաստիական իրավունքները, հաստատված եվրոպական մեծ պետությունների կողմից դեռևս 1841 թ.:

Անգլո–եգիպտական զորքերը անգլիական գեներալ Հերբերտ Կիտչեների հրամանատարությամբ 1896 թ. սկսեցին Սուդանի ռեկոնկիստան, որը տևեց երեք տարի: 1898 թ. սեպտեմբերի 2–ին նրանք արդեն հայտնվեցին Սուդանի մայրաքաղաք Օմդուրմանի մոտ: Այստեղ կայացավ վերջին ճակատամարտը, որն ավարտվեց մահդիական ուժերի պարտությամբ: Մահդիական պետությունը վերացվեց և ավարտվեց Սուդանի ռեկոնկիստան:

Այդուհանդերձ, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, անգլիական մոտիվացիան Սուդանում եգիպտական տիրապետությունը վերականգնելու և ոչ թե այն Անգլիայի կողմից նվաճելու վերաբերյալ, հավանաբար ֆրանսիացիներին այնքան էլ համոզիչ չէր թվացել և լրիվ չէր վերացրել հակադրությունը Անգլիայի և Ֆրանսիայի միջև Սուդանի հարցում: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ֆրանսիական զորքերը գեներալ Մարշանի հրամանատարությամբ, 1898 թ. հուլիսի 10–ին, շարժվելով արևմուտքից, մոտեցան Սուդանի Ֆաշոդա բնակավայրին: Իսկ Կիտչենները, պարտության մատնելով մահդիական զորքերին, որոշեց ոչ թե հետապնդել նրանց մնացորդներին, այլ նույնպես շարժվեց Ֆաշոդայի ուղղությամբ, ֆրանսիական զորքերին ընդառաջ, գտնելով, որ տվյալ պահին կարևոր է կանխել ֆրանսիական բանակի ներխուժումը Սուդան: Նա Ֆաշոդայում հայտնվեց սեպտեմբերի 19–ին: Այսպիսով, երկու բանակները, լրիվ սպառազինված, կանգնեցին դեմ–դիմաց, պատրաստ պատերազմական գործողությունների: Ամբողջ աշխարհն ուշադիր հետևում էր, թե ինչպես կլուծվի Ֆաշոդայի ճգնաժամը: Բարեբախտաբար, այն լուծվեց ոչ թե ռազմի դաշտում, այլ եվրոպական կաբինետներում: Այստեղ վճռական դեր խաղաց այն հանգամանքը, որ այդ ժամանակ ընթանում էին անգլո–գերմանական բանակցություններ և Ֆրանսիան վախենում էր, որ անգլո–գերմանական մերձեցումը վտանգի տակ կդնի նրա անվտանգությունը Եվրոպայում: Ուստի նա որոշեց չգնալ Անգլիայի հետ հարաբերությունների հետագա սրման ուղիով, այլ, ընդհակառակը, փորձել մերձենալ նրա հետ, վերացնելով գոյություն ունեցող հակասությունները և արգելքները: Այդ նկատառումներից ելնելով, Ֆրանսիան 1898 թ. նոյեմբերի 4–ին հետ կանչեց իր զորքերը Ֆաշոդայից: Իսկ որոշ ժամանակ անց, ստորագրվեց անգլո–ֆրանսիական համաձայնագիր, որով Ֆրանսիան վերջնականապես ճանաչում էր Արևելյան Սուդանը որպես անգլիական ազդեցության գոտի:

Անգլո–ֆրանսիական կոնֆլիկտի կարգավորումից հետո, Անգլիան ձեռնամուխ եղավ լուծելու Սուդանի կարգավիճակի հարցը: Դրա լուծման համար կար երկու տարբերակ:

Առաջինը, Սուդանի վրա հաստատել ուղղակի անգլիական տիրապետություն և Սուդանը վերածել անգլիական գաղութի: Դա տեխնիկապես դժվար չէր, քանի որ այդ պահին ամբողջ Արևելյան Սուդանը օկուպացված էր անգլիական զորքերի կողմից և Կիտչեները լիիրավ տեր ու տնօրեն էր այնտեղ: Սակայն այս տարբերակը կապված էր մի բարդության հետ: Հարցն այն էր, որ Արևելյան Սուդանը միջազգային պայմանագրերով ժառանգական–դինաստիական առումով պատկանում էր Եգիպտոսին, իսկ Եգիպտոսն էլ, թեև ձևականորեն, այնուամենայնիվ, մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ: Արևելյան Սուդանը գրավելու և գաղութի վերածելու պարագայում, Անգլիան արդեն գործ էր ունենալու Թուրքիայի հետ, քանի որ ստացվում էր, որ Անգլիան նվաճում է նրան պատկանող երկիր: Նա գործ էր ունենալու նաև եվրոպական այն երկրների հետ, որոնք իրենց համաձայնությունն էին տվել Սուդանը Մուհամմադ Ալիի և նրա ժառանգորդների տիրույթը համարելու հարցում:

Հասկանալի է, այս տարբերակի դեպքում, Անգլիան կունենար մեծ բարդություններ, նրա դեմ կարող էին միավորվել Թուրքիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Ավստրիան և Իտալիան: Իսկ դա ձեռտու չէր Անգլիային:

Երկրորդ, կար մեկ ուրիշ տարբերակ, որի հիմքում ընկած էր արտաքուստ պահպանել միջազգային պայմանագրերով հաստատված կարգավիճակը պահպանելու գաղափարը, սակայն դա իրագործել մի այնպիսի ձևով, որ Սուդանի իսկական տերը դառնա Անգլիան:

Ֆորին Օֆիսը նախապատվությունը տվեց երկրորդ տարբերակին, Անգլիային ազատելով գլխացավանքից: Այսպես լույս աշխարհ եկավ Սուդանը Եգիպտոսի հետ համատեղ կառավարելու գաղափարը, որը ստացավ «Անգլո–եգիպտական կոնդոմինիում» անվանումը:

Սուդանը համատեղ կառավարելու մասին Անգլիայի և Եգիպտոսի միջև 1899 թ. հունվարի 19–ին ստորագրվեց առանձին համաձայնագիր: Անգլիայի կողմից համաձայնագիրը ստորագրեց Սուդանը նվաճած անգլիական զորքերի հրամանատար Կիտչեները, իսկ եգիպտական կողմից համաձայնագրի տակ իր ստորագրությունը դրեց Բուտրոս Ղալին:

Համաձայնագիրը կազմված էր շատ խորամանկ ձևով, որը նույնիսկ վիրավորական որոշ ակնարկներ էր պարունակում Եգիպտոսի հասցեին: Համաձայնագրի պրեամբուլայում ուղղակի ասված էր, որ Եգիպտոսը Սուդանը կորցրել էր վատ ղեկավարելու պատճառով: Այնուհետև այն միտքն էր անցկացվում, որ Եգիպտոսը Սուդանը հետ է ստանում շնորհիվ անգլիական ջանքերի: Իսկ Անգլիային, ի դիմաց նրա օգնության, զոհողությունների և գործադրած ջանքերի, Եգիպտոսը համաձայնվում է թույլ տալ մասնակցելու Սուդանի կառավարմանը: Ինչպես տեսնում ենք, համաձայնագրում ոչ մի խոսք չկար անգլիական գաղութային քաղաքականության, Սուդանը անգլիական գաղութի վերածելու ջանքերի, ինչպես նաև Անգլիայի կողմից Եգիպտոսի վրա ճնշում գործադրելու մասին, այլ ամբողջ գործն այնպես էր ներկայացվում, որ, կարծես, Եգիպտոսը կամավոր կերպով ինքն էր խնդրում Մեծ Բրիտանիայից «գալ և կառավարել» Սուդանը:

Արևելյան Սուդանը, որն անցավ անգլո–եգիպտական համատեղ կառավարման ներքո, պաշտոնապես կոչվեց «Անգլո–եգիպտական Սուդան»:

Սահմանվեց նրա կառավարման համակարգը: Սուդանը կառավարելու էր գլխավոր նահանգապետը, որն ուներ այնպիսի լայն լիազորություններ, որոնց կնախանձեր անգամ բացարձակ միապետը: Նրա ձեռքում էր կենտրոնացված գործադիր, օրենսդրական, քաղաքացիական և ռազմական ամբողջ բարձրագույն իշխանությունը: Գլխավոր նահանգապետի թեկնածությունն առաջադրում էր Մեծ Բրիտանիան և նա հաստատվում էր այդ պաշտոնում Եգիպտոսի խդիվի հրամանով: Խդիվն իր նախաձեռնությամբ չէր կարող նշանակել գլխավոր նահանգապետ և կամ ազատել նրան: Նա ազատման հրամանը կարող էր տալ, եթե բրիտանական կողմը կանխավ համաձայն էր դրան կամ ինքն էր խդիվին խորհուրդ տալիս գլխավոր նահանգապետին ազատել իր զբաղեցրած պաշտոնից:

Եգիպտոսում ընդունված օրենքները և որոշումները կարող էին տարածվել Անգլո–եգիպտական Սուդանի վրա և այնտեղ գործողության մեջ դրվել, եթե դրան համաձայն էր գլխավոր նահանգապետը և կար նրա թույլտվությունը:

Սուդանի նահանգները կառավարվում՝ էին նահանգապետների կողմից, որոնց թեկնածությունը առաջադրվում էր Մեծ Բրիտանիայի կողմից և նրանք որպես կանոն անգլիացիներ էին:

Այս ֆոնի վրա, շատ աննշան էին Եգիպտոսի իրավունքները Անգլո–եգիպտական Սուդանում: Եգիպտոսը Սուդանում կարող էր ունենալ միայն մեկ գումարտակ, իսկ եգիպտացիները կարող էին գրավել կառավարման ապարատում ոչ կարևոր պաշտոններ: Բայց նա կրում էր Սուդանում հաստատված վարչակարգի պահպանման ֆինանսական բոլոր ծախսերը:

Այսպիսին էր Անգլո–եգիպտական համատիրությունը Սուդանում, որտեղ բոլոր կարևոր լծակները գտնվում էին անգլիական գաղութարարների ձեռքում, իսկ Եգիպտոսին հատկացված էր անգլիական գաղութատիրությունը քողարկելու դերակատարում:

Գլուխ հինգերորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՆ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ԶՈՒԼՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1876–1908 թթ.)

I. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II–Ի ԲԱՆՏ

1. «Աս–սուլթան ալ–ահմար»

1876 թ. սուլթանական գահի վրա նստեց 34–ամյա Աբդուլ Համիդ II, որի անվան հետ է կապված Օսմանյան կայսրության պատմության ամենամռայլ և ամենադաժան ժամանակաշրջաններից մեկը: Նրա գահակալման 33 տարիները կայսրության բոլոր ժողովուրդների համար եղել են ահ ու սարսափի, բռնությունների, զանգվածային կոտորածների ու ջարդերի տարիներ, երբ ռասիզմի և պանիսլամիզմի վրա խարսխված հալածանքների ու ոչ թուրք ժողովուրդների կոտորածները դադարեցին լինել առանձին փաշաների ու վալիների քաղաքականություն և դարձան սուլթան Աբդուլ Համիդ II պետական քաղաքականությունը:

Դաժանությունը, նենգությունը, խորամանկությունը, անհավատարմությունը, հակումը արյունահեղությանը, ներքաղաքական ինտրիգները եղել են նրա բնավորության հիմնական գծերը, որոնք բնավորությունից անցել են քաղաքականության ոլորտը և պատճառ դարձել նրա հպատակ ժողովուրդների՝ քրիստոնյա, թե մուսուլման, անլուր տառապանքների:

Աբդուլ Համիդ II համար միանգամայն բնութագրական է այն հանգամանքը, որ նա իր գահ բարձրանալը «նշանավորեց» իր բոլոր եղբայրների ու նրանց ընտանիքի անդամների ոչնչացումով: Դրանից

հետո նա երբեք «հրաժեշտ» չտվեց սպանություններ գործելուն, լինեն դրանք անհատներ, թե ժողովուրդներ: Նա անընդհատ «կատարելագործվում» էր այդ բնագավառում և պետք է խոստովանենք, որ հասավ «փայլուն» արդյունքների: Նա որպես այդպիսին է մտել Օսմանյան կայսրության և նրա կազմի մեջ գտնված ժողովուրդների պատմության մեջ:

Հիմք ընդունելով նրա բնավորության այդ գիծը, քաղաքական կենսագրությունը և պետական քաղաքականությունը, արաբ պատմաբանները նրան կոչել են «աս–սուլթան ալ–ահմար»՝ «կարմիր սուլթան»: Նրան այդպես են կոչում Ֆուադ Հասան Հաֆիզը, Մրվան Մուդավարը, Մուսա Պրենսը, Օսման աթ–Թուրքը, Սալիհ Զահր ադ–Դինը, Սամիր Արբաշը և այլ արաբ, և ոչ միայն արաբ, հեղինակներ: Նա «կարմիր սուլթան» կոչվեց անմեղ մարդկանց և ժողովուրդների արյունը հեղելու, զանգվածային կոտորածներ կազմակերպելու համար ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում: Նա Լիբանանյան հանրագիտարան է մտել հենց այդպես՝ «կարմիր սուլթան»: Մրվան Մուդավարն ընդգծում է, որ «այդ սուլթանը, որը իրավացիորեն կոչվում է նաև աս–սուլթան ալ–ահմար, 33 տարի կառավարում էր Օսմանյան կայսրությունը երկաթյա ձեռքով»: Ֆուադ Հասան Հաֆիզը, այդ տեսակետի համոզված հեղինակներից մեկը, բացատրում է, որ «նրա (Աբդուլ Համիդ II — Ն. Հ.) անունը «կարմիր սուլթան էր», որովհետև նա արյունալի ջարդերի կազմակերպիչն էր»:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արաբներն անձամբ նրան են համարում ջարդերի ու մարդասպանությունների կազմակերպիչ: Այդ ասելով, նրանք, սակայն, բնավ մտադիր չեն նրան անջատել օսմանյան քրեածին և դաժան համակարգից: Այդ համակարգն իր էությամբ, դավանանքով, սկզբունքներով ու գաղափարներով, բռնությունների ու սպանությունների նպաստավոր միջավայր էր, եթե կուզեք ճիշտն իմանալ՝ մի միջնաբերդ: Սակայն, անգամ այդ պարագաներում, Աբդուլ Համիդ II առանձնանում է իր անմարդկային, գազանային կեցվածքով: Ուրեմն, «կարմիր սուլթան» անվանակոչումը ոչ միայն Աբդուլ Համիդ II անհատական կամ անձնական անվանակոչումն էր, այլև դա հավասարապես վերաբերում էր օսմանյան կառավարման ամբողջ համակարգին՝ նրա գոյության ողջ ընթացքում:

2. Ճուլում

Աբդուլ Համիդ II գահակալության առաջին տարին արտաքուստ թվում էր լիբերալ կառավարման շրջան: Նման տպավորություն ստեղծվել էր այն պատճառով, որ գալով իշխանության գլուխ, նա 1876 թ. գործողության մեջ դրեց Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին սահմանադրությունը: Սակայն ամբողջ հարցն այն է, որ նա դա չարեց կամովին՝ որպես իր քաղաքական հայացքների ու համոզմունքների դրսևորում, այլ հարկադրաբար: Հարկադրողները եղան թուրքական նացիոնալիզմի առաջին կրողները, որոնք կոչվում էին նոր օսմաններ՝ ենի օսմանլըլար: Նրանց գաղտնի կազմակերպությունը ստեղծվել էր 1865 թ., որի հիմնական քաղաքական պահանջն էր սահմանադրական միապետության հաստատումը Օսմանյան կայսրությունում և բուրժուական բարենորոգումների իրականացումը: Նրանք դա համարում էին կայսրությունը կործանումից փրկելու հուսալի միջոց: Նոր օսմանների գաղափարախոսության մեջ կենտրոնական հիմնադրույթներից մեկը դարձավ օսմանական ազգի «տեսությունը», ըստ որի, Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ժողովուրդները՝ թուրքերը, արաբները, հայերը, քրդերը, հույները, սլավոնները և այլն, պետք է համարվեն մեկ ազգ՝ օսմաններ կամ օսմանական ազգ: Դա պահանջում էր համընդհանուր ծուլում թուրքերի հետ և թուրքական լեզուն որպես կայսրության միակ լեզու հայտարարելը:

Այս գաղափարների իրագործման համար XIX դարի 70–ական թվականներին սկսված շարժումը, որը հայտնի է նաև որպես սահմանադրական շարժում, 1876 թ. մայիսի 30–ին հանգեցրեց սուլթան Աբդուլ Ազիզի տապալմանը: Պետական հեղաշրջումն իրականացրեց նոր օսմանների հետ կապված սպաների մի խումբ, որի հրամանով էլ գահընկեց արված սուլթան Աբդուլ Ազիզը 1876 թ. հունիսի 2–ին սպանվեց:

Սուլթանի գահը հանձնվեց Աբդուլ Ազիզի եղբորը՝ Մուրադ V: Դա մտավոր տկարությամբ և հոգեկան հիվանդությամբ տառապող մի անձնավորություն էր, որն այնպիսի արարքներ էր թույլ տալիս սուլթանի գահին նստելուց հետո, որ հեղաշրջման կազմակերպիչները ստիպված էին կրկին մտածել գահի նոր թեկնածուի մասին: Ի վերջո, նրանք հանգեցին Մուրադ V գահից զրկելու գաղափարին, որը և իրագործեցին 1876 թ. օգոստոսի 31–ին: Մուրադ V տապալվեց և սուլթան հռչակվեց նրա եղբայր Աբդուլ Համիդ II: Դրանում մեծ դերակատարություն ունեցավ Միդ-

հատ փաշան, որին և նորընծա սուլթանը նշանակեց մեծ վազիր: Ահա այսպիսի խառնաշփոթ պայմաններում, հեղաշրջման արդյունքում սուլթան դարձած Աբդուլ Համիդ II ստիպված էր բավարարել հեղաշրջումը կատարած նոր օսմանների պահանջը և հայտարարել Օսմանյան կայսրությունում սահմանադրության ընդունման մասին:

Այդ սահմանադրության հեղինակ սովորաբար համարվում է Միդհատ փաշան, օսմանյան կայսրության երևելի դեմքերից մեկը, որը երկար տարիներ եղել էր Իրաքի կուսակալ: Սահմանադրությունը ստեղծելու գործում նրան մեծապես օգնել էր Գրիգոր Օտյանը, Ստամբուլում ծնված և ուսումը Փարիզում ստացած մի հայ հասարակական և քաղաքական գործիչ, որի գիտելիքները խիստ օգտակար եղան այդ կարևոր փաստաթուղթը կազմելու գործում:

Սահմանադրությամբ կայսրությունում հաստատվեց երկու պալատից բաղկացած պառլամենտ, որոշ չափով սահմանափակվեցին սուլթանի իրավունքները և հռչակվեցին ընդհանուր քաղաքացիական ազատություններ և իրավունքներ: Նա որոշ իմաստով կրկնում էր թանզիմաթի՝ Հատտի շերիֆի և Հատտի հումայունի հռչակած սկզբունքները, որոնք համարյա բոլորն էլ մնացել էին թղթի վրա: Այս սահմանադրության կարևոր նորություններից մեկն այն էր, որ նրա VIII հոդվածով «Կայսրության բոլոր հպատակները կոչվում են օսմանցիներ՝ առանց դավանանքի խտրության»: Հատուկ հոդված կար այն մասին, որ իսլամը պետական կրոն է, իսկ թուրքերենը՝ պաշտոնական լեզու: Ելնելով դրանից, շեշտվում էր, որ կայսրությունում հասարակական պաշտոններ գրավելը պայմանավորված էր թուրքերեն լեզվի իմացությամբ, պառլամենտի դեպուտատ չէին կարող ընտրվել նրանք, ովքեր թուրքերեն չգիտեին, պառլամենտում քննարկումները և վիճաբանությունները կարող էին տեղի ունենալ միայն թուրքերենով և այլն:

Այսպիսով, այս փաստաթուղթը, որը, ինչպես ընդունված է, համարվում է տվյալ երկրի հիմնական օրենքը, հակասություններ պարունակող փաստաթուղթ էր: Նա մի կողմից կայսրությունում մտցնում էր պառլամենտ, սահմանափակում էր, թեկուզ և աննշան չափով, սուլթանի անսահմանափակ իշխանությունը, որը դրական երևույթ էր, իսկ մյուս կողմից, ամրագրում էր կայսրության բոլոր մուսուլման և քրիստոնյա ժողովուրդների ծուլումը և արհեստական «օսմանական ազգի» ստեղծումը:

Սակայն նոր օսմանների պարտադրած անգամ այդ թերի, կիսատ–պռատ, նորամուծությունների հետ Աբդուլ Համիդ II չէր կարող համակերպվել և հարմար պահի էր սպասում դրանցից ձերբազատվելու համար: Նման առիթ նրան ընձեռեց 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմը, որից օգտվելով սուլթանը դադարեցրեց սահմանադրության գործողությունը, ցրեց մեջլիսը՝ պառլամենտը, սկսեց հալածանքներն ու բռնությունները նոր օսմանների և կայսրության բոլոր ժողովուրդների առաջադեմ մտածողների ու գործիչների դեմ, ու, ինչպես նշում է Դ. Երեմենը, իրեն «հայտարարեց անսահմանափակ միապետ»: Պաշտոնանկ արվեց և Արաբիա աքսորվեց Միդհատ փաշան, որտեղ և հետագայում նա սուլթանի հրամանով սպանվեց: Ձերբակալվեցին և աքսորվեցին արաբների, հայերի, հույների, սլավոնների բազմաթիվ ազգային հայրենասիրական երևելի դեմքեր: Շատերը վտարանդի դարձան և ապաստան գտան եվրոպական երկրներում, խուսափելով նենգ սուլթանի վրիժառությունից, որոնց թվում էր նաև Գրիգոր Օտյանը, օսմանյան առաջին սահմանադրության ստեղծման մասնակիցը և Միդհատ փաշայի աջակիցը, որն իր կյանքի վերջին տարիները հարկադրված անցկացրեց Փարիզում:

Փակվեցին բազմաթիվ թերթեր, որոնք ասպարեզում հայտնվել էին 70–ական թվականներին, երբ մի պահ թվաց, թե լիբերալիզմն իր համար ուղի է հարթում հետադիմական կայսրությունում: Հետապնդվում էր զանազան հասարակական, մշակութային, գրական և այլ կազմակերպությունների գործունեությունը: Մեծ ծաղկում ապրեց լրտեսությունն ու մատնությունը, մարդկանց ու կազմակերպությունների վրա գաղտնի և բացահայտ հսկողության սահմանումը: Երկրում հաստատվեց հեղձուցիչ մթնոլորտ:

Նահդայական շարժումից հեռացած և օսմանիզմի ու թուրքական սուլթանների պաշտապանության դիրքերն անցած Ահմադ Ֆարիս ալ–Շիդյակի որդին, որ շատ հարցերում կիսում էր հոր տեսակետները և ամենայն հավանականությամբ օգտվում էր սուլթանական բարիքներից, 1884 թ., մի անգլիացու հետ ունեցած զրույցի ժամանակ, այնուամենայնիվ, հարկադրված էր ասել, որ «Աբդուլ Համիդն անտեղյակ էր աշխարհից և եթե ասելու լինենք ամբողջ ճշմարտությունը, նա խելագար է (he is crazy)»:

Օսմանյան կայսրությունում Աբդուլ Համիդ II հաստատած ռեժիմը ստացավ զուլում անվանումը:

Զուլումն արաբերեն բառ է, որը բառացի նշանակում է դիկտատուրա, դեսպոտիզմ, բռնակալություն: Սակայն նա տարիների ընթացքում ձեռք բերեց նաև նոր երանգավորում: Պահպանելով իր նախասկզբնական իմաստը որպես դիկտատուրա, զուլում բառի մեջ Օսմանյան կայսրության ժողովուրդները դրեցին նաև դժբախտության և ողբերգության իմաստ: Այդ բառն սկսեցին այդպես ընկալել արաբները: Այդ բառն միչև օրս այդպես են ընկալում նաև հայերը, որի արևմտյան հատվածը դարձավ Աբդուլ Համիդ II զուլումի արյունոտ քաղաքականության զոհերից մեկը:

Արաբական «զուլում» բառն իր հաստատուն տեղն է գրավել ժամանակակից քաղաքական լեքսիկոնում:

Արաբ հեղինակները, բնականաբար, հանգամանորեն անդրադարձել են զուլումի քաղաքականությանը և նրա էության բացահայտմանը: Յուսուֆ Յազբեկն ընդգծելով, որ ամբողջ կայսրությունը տնքում էր զուլումի ռեժիմի լծի տակ, այդ կայսրությունը համարում է «Սուլթան Աբդուլ Համիդի բանտ»: Լիբանանյան պատմաբան Զեյն Զեյնի կարծիքով, աբդուլհամիդյան զուլումի ռեժիմը տարեց տարի դառնում էր ավելի դաժան: Այդ հարցին ավելի հանգամանորեն է անդրադարձել արաբ մեկ այլ հեղինակ՝ Էմիլ Թուման, որը գրում է. «Կայսրության տարբեր ազգությունների հակաաբսոլյուտիստական խմբավորումները քանի գնում, այնքան ավելի էին համոզվում միավորվելու անհրաժեշտության մեջ, և, վերջիվերջո, երկրում ստեղծվեց զուլումի դեմ հանդես եկող հիմնական ուժերի բլոկ»: Այդ նույն ոգով են արտահայտվել նաև Ֆուադ Հասան Հաֆիզը, Օսման աթ–Թուրքը և արաբ այլ հեղինակներ:

Այս բոլորը հիմք է տալիս հաստատելու, որ սուլթան Աբդուլ Համիդ II և նրա ռեժիմին տրված գնահատականները և բնութագրությունները տիրապետող են հանդիսանում արաբական պատմագիտության մեջ, որը, իր հերթին, հարազատ արտացոլումն է արաբական աշխարհում տիրող քաղաքական համոզմունքների ու մոտեցումների:

Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչի հիման վրա են արաբ հեղինակներնը հանգել նման հետևության:

Կասկածից վեր է, որ նրանք աբդուլհամիդյան ռեժիմն այդպես բնութագրելու համար չէին կարող հենվել մեկ առանձին դեպքի վրա կամ էլ ելնել կայսրության մեկ առանձին ժողովրդի փորձից: Նրանք հանգամանորեն ուսումնասիրել են կայսրության բոլոր ժողովուրդների, քրիստոնյաների և մուսուլմանների, այդ ժամանակահատվածի պատ-

մությունը, նրանց քաղաքական և սոցիալ–տնտեսական իրավիճակը և դրա հիման վրա կատարել իրենց եզրահանգումները: Ասվածը հաստատելու համար բերենք արաբական մի քանի հեղինակների կարծիքներ:

Արդեն հիշատակված Զեյն Զեյնը նշում է, որ Օսմանյան կայսրությունում չկար հավասարություն քրիստոնյաների և մուսուլմանների միջև, թեև «անհավասարությունը ծնականորեն վերացվել էր, այսինքն «թղթի վրա», 1856 թ. Հատտի Հումայունի դեկրետով: Իրականում հին «միլլեթների համակարգը» շարունակում էր գոյություն ունենալ ամբողջ տասնիններորդ դարի ընթացքում»: Նրա կարծիքով, հույների, հայերի և մյուս ժողովուրդների ռայյայի կարգավիճակը փոփոխության չէր ենթարկվել:

Հիշատակության է արժանի Ստամբուլում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի հաղորդումը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին, թվագրված 1894 թ., որի լրիվ տեքստը մեջբերում է Զեյնն իր «Արաբական նացիոնալիզմի ծագումը» գրքում»: Դեսպանը «հայկական հարցի կապակցությամբ հաղորդում է, որ իրադրությունը յուրահատուկ էր ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար՝ ծայրից ծայր. հույները, ալբանացիները, արաբները գանգատվում են արդարության բացակայությունից, կառավարական պաշտոնյաների կոռումպացված լինելուց և կյանքի ապահովության բացակայությունից»:

Այս նույն միտքն արտացոլված է Մրվան ալ Մուդավարի կողմից: Աբդուլ Համիդ II ռեժիմը դիտարկելով որպես բռնակալական ռեժիմ, նա ընդգծում է, որ «բռնությունը տարածվում էր կայսրության բոլոր ժողովուրդների վրա, մասնավորապես, արաբական ժողովուրդների, բալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի վրա»: Եվ, վերջապես ուշադրության է արժանի Ֆուադ Հասան Հաֆիզի տեսակետը: Նա համոզված է, որ «Աբդուլ Համիդ II ներքին քաղաքականության բնագավառում վախենում էր ժողովրդից»: Հետևաբար, ջարդերի, բռնությունների ու հալածանքների քաղաքականությունը, որ սուլթանը կիրառում էր արաբների, հայերի և կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ, դա ոչ թե «սուլթան ալ–ահմարի» քմահաճույքն էր կամ անհավասարակշռվածության դրսևորում, այլ լավ կշռադատված և մտածված, պետական քաղաքականության մակարդակի բարձրացված գործողություն: Այդ քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում էր հույների, հայերի, բալկանյան ժողովուրդների, արաբների, ալբանացիների ու այլ ժողովուրդների նկատմամբ, որը և հիմք տվեց արաբական պատմաբաննե-

ին Օսմանյան կայսրությունում հաստատված ռեժիմն անվանել զուլում, իսկ նրա կիրառողին անվանել «կարմիր», այսինքն «արյունարբու սուլթան»:

Զուլումի քաղաքականության զոհերից մեկը, օսմանյան կայսրության այլ ժողովուրդների կողքին, դարձան արաբները: Շագրենի կաշվի պես կրճատվող Օսմանյան կայսրության կառավարողները, Բալկաններում ունեցած տարածքային կորուստներից հետո, ավելի մեծ ուշադրություն էին դարձնում կայսրության կազմի մեջ մտնող արաբական երկրներին:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զուլումի քաղաքականությունը միակերպ չդրսևորվեց արաբական բոլոր երկրներում: Նա համեմատաբար թույլ արտահայտվեց արաբական այն երկրներում, որոնց վրա Ստամբուլի տիրապետությունը թույլ էր կամ ձևական բնույթ էր կրում:

Դրա լավագույն օրինակը կարող է հանդիսանալ Եգիպտոսը, որը Մուհամմադ Ալիից սկսած ձևականորեն էր հանդիսանում Թուրքիայի վասալը: Այդուհանդերձ, սուլթան Աբդուլ Համիդ II հնարավորության դեպքում առիթը բաց չէր թողնում իր իրավունքները դրսևորել Եգիպտոսի նկատմամբ, մանավանդ բարդ իրադրությունների ժամանակ, և իր հետադիմական քաղաքականությունը կիրառել Եգիպտոսում: Դա ցայտուն կերպով դրսևորվեց 1879 թ., երբ ներքին լարվածությունն ուժեղացել էր Եգիպտոսում՝ կապված ֆինանսական դժվարությունների և խդիվ Իսմայիլի բարենորոգումների քաղաքականության հետ: Աբդուլ Համիդ II, որը բնածին ատելություն էր տածում ամեն տեսակ նորարարությունների ու առաջադիմական քայլերի դրսևորումների դեմ, վճռական դեր խաղաց խդիվ Իսմայիլին 1879 թ. գահընկեց անելու գործում: Հենց նրա ֆերմանով Իսմայիլը զրկվեց գահից և խդիվի աթոռն անցավ նրա որդուն՝ Թոֆիկին: Բայց հարցը միայն բարեփոխումները չէր, այլ նաև այն հանգամանքը, որ Իսմայիլը իրեն անկախ էր պահում Ստամբուլից, Եգիպտոսը համարում էր Եվրոպայի մի մասը, մինչդեռ նրա թուլամորթ և անսկզբունքային որդին, ամեն ինչ անում էր ընդգծելու Եգիպտոսի վասալական կախվածությունը Թուրքիայից: Իր թշնամանքը առաջադիմական բարեփոխումների նկատմամբ:

Սուլթանի քայլը իշխանափոխության հարցում զուլումի դիկտատորական և հետադիմական քաղաքականության յուրատեսակ կիրառումն էր Եգիպտոսում, որը Աբդուլ Համիդ II իրականացրեց Անգլիայի և

Ֆրանսիայի գիտությամբ, հավանությամբ և թույլտվությամբ: Տվյալ կոնկրետ պարագայում Անգլիայի և Ֆրանսիայի շահերը համընկան թուրքական սուլթանի շահերի հետ: Անգլիան և Ֆրանսիան, որոնք ևս օր առաջ ձգտում էին ազատվել Իսմայիլից, իրենց այդ նպատակն իրականացնելու համար «հանկարծ հիշեցին», որ թուրքական սուլթանը եգիպտոսի սյուզերենն է և խդիվին գահընկեց անելու և նոր խդիվ նշանակելու «օրինական» իրավունքը պատկանում է նրան: Եվ նրանք էլ սուլթանին թույլ տվեցին օգտագործել իր այդ իրավունքը, որը, կրկնում ենք, նշանակում էր զուլումի սկզբունքների կիրառում Նեղոսի ափերում:

Այս նույն տեսանկյունից պետք է մոտենալ Աբդուլ Համիդ II փորձերին զորքեր մտցնել եգիպտոս Արաբի փաշայի ապստամբության ժամանակ: Նա իր այդ քայլով երկու նպատակ էր հետապնդում: Զինված ուժերի կիրառումով իր տիրապետությունը հաստատել եգիպտոսի վրա, մի կողմից, և ճնշել եգիպտական ժողովրդի ազգային–ազատագրական շարժումը, մյուս կողմից: Բոլոր դեպքերում, նրա այդ մտադրությունն ամբողջապես տեղավորվում էր նրա զուլումի քաղաքականության շրջանակների մեջ: Եվ եթե նրան չհաջողվեց այս անգամ իրագործել իր այդ մտադրությունը, որը կարող էր շատ ծանր հետևանքներ ունենալ եգիպտական ժողովրդի համար, ապա «մեղքը» Անգլիայինը, ինչպես նաև Ֆրանսիայինն էր, որոնք ընդդիմացան եգիպտոսի դեմ ռազմական միջամտություն կազմակերպելու Աբդուլ Համիդ II քաղաքականությանը: Անգլիան թուրքական միջամտության կարիքը չէր զգում, քանի որ ինքն էր շահագրգիռ ճնշելու Ահմադ Արաբիի ապստամբությունը և իր անբաժան տիրապետությունը հաստատել եգիպտոսում:

Եգիպտոսի նվաճումը և անգլիական տիրապետության հաստատումը երկակի դեր խաղաց եգիպտոսի կյանքում: Նա, մի կողմից, ակամայից եգիպտոսը զերծ պահեց զուլումի անմիջական և ամենօրյա քաղաքականության ազդեցությունից, իսկ մյուս կողմից՝ աստիճանաբար պայմաններ ստեղծվեցին եգիպտական ազգային գաղափարախոսության նոր դրսևորումների համար: Դրա կրողները հանդիսացան Մուհամմադ Աբդոն, Աբդ առ–Ռահման Կավակիբին և Մուսթաֆա Քամիլը:

Մուհամմադ Աբդոն, որը համագործակցել էր Ջամալ ադ–Դին ալ–Աֆղանիի հետ և մեծապես ազդվել նրա պանիսլամիստական գաղափարներից, համարվում է մուսուլմանական բարենորոգիչներից մեկը: Բացի մաքուր իսլամին վերադառնալու պահանջներից, որն արդեն նորություն չէր արաբական և մուսուլմանական իրականության մեջ,

Մուհամմադ Աբդոն հանդես էր գալիս իսլամի նորացման և մուսուլմանական սկզբունքներն ու դոգմաները նոր ժամանակներին հարմարեցնելու պահանջներով: Իսկ նոր ժամանակներ ասելով, հասկացվում էին արաբական իրականության մեջ ձևավորվող բուրժուական հարաբերությունները: Անգամ դառնալով Եգիպտոսի մուֆթին՝ հոգևոր առաջնորդը, նա չվարանեց քարոզել իսլամի սկզբունքները եվրոպական բուրժուական երկրներում տիրապետող ազատությունների հետ ներդաշնակելու անհրաժեշտությունը, որպես պատվանդան օգտագործելով այն դրույթը, որ իսլամն իր բնույթով դեմոկրատական կրոն է և չի հակասում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական ազատություններին:

Մուհամմադ Աբդոյի և նրա սերնդակիցների ու համախոհների մեծագույն ծառայություններից մեկը կայանում է նրանում, որ նրանք հստակ կերպով հանդես եկան արաբների թուրքացման քաղաքականության դեմ, որն իր արտահայտությունն էր գտել նաև նոր օսմանների ծրագրային դրույթներում, որտեղ առաջ էր քաշվում Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին, այդ թվում և արաբներին, ծուլելու և մեկ միասնական օսմանյան ազգի ստեղծման պահանջը:

Արաբական ազգի ինքնության հաստատման և պահպանման տեսակետը, որ ջերմեռանդորեն առաջ էր քաշում Աբդոն, իր սուր ծայրով ուղղված էր Աբդուլ Համիդ II զուլումի քաղաքականության դեմ:

Իր գործունեությունը վերսկսեց Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբին, որը ձերբակալվել և բանտ էր նետվել Սիրիայում Աբդուլ Համիդ II կողմից: 1898 թ. ազատվելով բանտից, ալ–Կավակիբին, այլևս չէր կարող մնալ իր ծննդավայր Հալեբում, որտեղ ամենաայլանդակ ձևով մոլեգնում էր սուլթանի զուլումի քաղաքականությունը, և հարկադրաբար հեռացավ Սիրիայից ու հաստատվեց Կահիրեում: Ալ–Կավակիբին, ինչպես նշել ենք, նահդայի ականավոր գործիչներից էր և մեծ հետք է թողել արաբական ազգային մտքի զարգացման և արաբների ինքնագիտակցության արթնացման գործում:

Ա. Հաուրանին՝ «Արաբական միտքն ազատական դարաշրջանում. 1798–1939 թթ.» արժեքավոր ուսումնասիրության մեջ, ալ–Կավակիբիին բնութագրում է որպես «Աբդուլ Համիդի զուլումի ուժեղ հակառակորդ»: Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբիի գրչին է պատկանում «Դեսպոտիզմի բնությունը» աշխատությունը, որը արաբ ազգային գործիչների մի քանի սերունդների ուղեցույցն ու սեղանի գիրքն է եղել: Նա, լինելով արաբական անկախ պետության ստեղծման կողմնակիցներից մե-

կը, ինչպես և Ադիբ Իսհակն ու նահդայական այլ գործիչներ, միաժամանակ գտնում էր, որ այդ պետությունը պետք է խարսխված լինի դեմոկրատական սկզբունքների վրա ու պաշտպանի չքավորների ու աղքատների շահերը: Նրա հայացքների մեջ կարևոր տեղ էր գրավում Հայրենիքի գաղափարը, որը նրա կարծիքով վեր էր ամեն ինչից, անգամ կրոնից: Նա զարգացնում էր արդարացի իսլամական պետության և բռնակալական (դեսպոտիկ) պետության գաղափարը: Նրա կարծիքով «բռապետությունը որպես այդպիսին այլասերում է ամբողջ հասարակությունը», նպաստում նրա փտելուն:

Շարադրելով իր տեսակետները արդարացի պետության վերաբերյալ, ալ–Կավակիբին գրում էր. «Արդարացի պետությունը, որի մեջ մարդիկ իրականացնում են իրենց, այն պետությունն է, որտեղ անհատն ազատ է և ազատորեն ծառայում է հասարակությանը, որտեղ պետությունը հսկում է այդ ազատության վրա, բայց ինքն էլ վերահսկողության է ենթարկվում բնակչության կողմից: Սա է իսկապես Իսլամական Պետությունը»:

Իսկ ինչ վերաբերում է բռնակալական պետությանը, ապա ալ–Կավակիբին գտնում էր, որ «դա ճիշտ հակառակն է», այսինքն հակառակն է իսկապես իսլամական պետությանը: Բռնակալական պետությունը «ոտնձգություն է կատարում քաղաքացիների իրավունքների նկատմամբ, նրանց տգիտության և պասիվության մեջ է պահում, ժխտում է կյանքում ակտիվ մասնակցություն ունենալու նրանց իրավունքը: Ի վերջո, նա ոչնչացնում է կառավարողների բարոյական հարաբերությունները կառավարվողների հետ և քաղաքացիների հարաբերությունները միմյանց հետ: Նա խեղում է անհատի բարոյական կառուցվածքը, վերացնում է արիությունը, ինքնությունը, կրոնական և ազգային պատկանելության զգացմունքը»:

Այս արատներից ազատվելու համար ալ–Կավակիբին բավարար չի համարում օրենքների մեջ փոփոխություններ մտցնելը կամ հատուկ կրոնական կրթություն տալը, «այլ պետք է ևս ինչ–որ բան՝ ուժերի հավասարակշռության փոփոխություն ումմայի ներսում՝ թուրքականից վերադարձ արաբականին: Միայն արաբները կարող են փրկել իսլամը փտումից»:

Այստեղ ամենակարևորն այն է, որ ալ–Կավակիբին թուրքականության շրջանակներում, ուժերի այնպիսի փոխհարաբերությունների պայմաններում, երբ կենտրոնը համարվում է թուրքականը և Թուրքիան,

այդպիսի պայմաններում ելք չէր տեսնում: Ճգնաժամից ելքը նա տեսնում էր վերադարձն այն ամենին, ինչ արաբական էր: Սա շատ համարձակ դիրքորոշում էր, սակայն միանգամայն հասկանալի, քանի որ թուրքականությունը խեղդում էր ամեն ինչ, նրա շրջանակներում ոչ միայն վերելք, այլև առաջադիմություն քաղաքականության, տնտեսության, հասարակական հարաբերությունների ոլորտում և մշակույթի բնագավառում անհնար էր: Մենք հեռու ենք իդեալականացնելուց այն ամենը, ինչ որ արաբական էր, բայց այս դեպքում, կարծում ենք, որ խոսքն ավելի շուտ գնում էր թուրքերից արաբների անկախության, արաբական արժեքների պահպանման և նրանց վերադառնալու մասին, որը, անհամեմատ, ավելի նպաստավոր պայմաններ կարող էր ստեղծել արաբների ազգային, քաղաքական, սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային զարգացման համար:

Բայց չմոռանանք, որ ալ–Կավակիբին իր դարաշրջանի ծնունդն էր և տուրք էր տալիս նրան հատուկ գաղափարներին, սովորույթներին ու ավանդույթներին, ինչպես, օրինակ, պանիսլամիզմը: Սակայն պանիսլամիզմը նրա մոտ երբեք չի եղել խավարամտության և ագրեսիայի դրսևորում, կամ այլ կրոնների պատկանող ժողովուրդների նկատմամբ ատելություն, առավել ևս թշնամություն հրահրելու գործիք:

Այս շրջանում, Եգիպտոսում գործող ազգային հայրենասերների շարքերում, առանձնանում է Մուստաֆա Քամիլը, որն առաջնակարգ դեր է խաղացել եգիպտական քաղաքական մտքի ձևավորման ու զարգացման մեջ: Նրա քաղաքական հայացքները ձևավորվել էին ֆրանսիական քաղաքական մտքի բարերար ազդեցության ներքո: Երկար տարիներ ապրելով Ֆրանսիայում, մոտիկից շփվելով ֆրանսիական քաղաքական գործիչների հետ, նա որդեգրեց հստակ հակաանգլիական դիրքորոշում, որը հետագայում վերածվեց ընդհանրապես հակագաղութային դիրքորոշման:

Գաղութատիրության դեմ պայքարը Մուստաֆա Քամիլը համարում էր Եգիպտոսի անկախության նվաճման առաջին և կարևոր պայմանը:

Սակայն նա լավ էր հասկանում, որ միայն դա բավարար չէ այդ վեհ խնդրի իրականացման համար: Ուստի նա մեծ տեղ էր հատկացնում ազգային գաղափարների տարածմանը եգիպտացիների շրջանում, ընդունելով Ֆրանսիայում ձեռք բերած այն տեսակետը, որ գաղափար-

ներն են շարժման մեջ դնում զանգվածներին: Եվ այդ հանգամանքը նա դիտում էր Եգիպտոսի անկախության նվաճման երկրորդ պայմանը:

Նա իր այդ գաղափարները զանգվածներին հասցնելու համար որպես ամբիոն օգտագործեց «Ալ–Լիվա»՝ («Դրոշակ») թերթը, որը մեծ հեղինակություն էր վայելում արաբական առաջադիմական ուժերի շրջաններում:

Սակայն հետագայում Մուստաֆա Քամիլի գործունեության մեջ տեղի ունեցան փոփոխություններ, որոնք տարակուսանք են առաջացրել նրա բարեկամների մոտ: Հիասթափված Անգլիայի, ապա նաև Ֆրանսիայի քաղաքականությունից, Մուստաֆա Քամիլը որդեգրեց նոր քաղաքական կողմնորոշում, որի էությունը սուլթան Աբդուլ Համիդ II–ին և նրա միջոցով Գերմանիային ու Ավստրո–Հունգարիային մերձենալն էր: Նա գիտակցում էր, որ Եգիպտոսն իր սեփական ուժերով չի կարող ազատագրվել անգլիական տիրապետությունից: Սկզբում նա հույսեր էր կապում, որ Ֆրանսիան կարող է լինել Եգիպտոսի դաշնակիցը:

Բայց Ֆաշոդայից հետո, երբ տեղի ունեցավ անգլո–ֆրանսիական մերձեցում, որն իր տրամաբանական շարունակությունն ունեցավ 1904 թ. կնքված անգլո–ֆրանսիական համաձայնագրի ստորագրման մեջ, որով հիմք դրվեց Անտանտին, Մուստաֆա Քամիլն իր հայացքն ուղղեց թուրքական սուլթանին, զուլումի քաղաքականության հայր Աբդուլ Համիդ II–ին և կայզերական Գերմանիային ու Ավստրո–Հունգարիային: Նա իր հույսը դրեց այդ երեք պետությունների վրա, քանի որ այդ ժամանակ իր ավարտին էր մոտենում եվրոպական պետությունների բաժանումը երկու հակադիր ռազմա–քաղաքական բլոկների և հստակորեն նշմարվում էր, որ Օսմանյան կայսրության տեղը գերմանա–ավստրիական բլոկի մեջ է: Սակայն նրանց աջակցությունը ստանալու համար պետք էր ինչ–որ բան վճարել: Եվ Մուստաֆա Քամիլը վճարեց: Նա հրաժարվեց Եգիպտոսի լիակատար անկախության գաղափարից և կանգնեց Եգիպտոսը Օսմանյան կայսրության կազմում պահելու տեսակետին: Իսկ դրա համար նա նահանջ կատարեց մի կարևոր հարցում նաև՝ գաղափարական ոլորտում: Նա կանգնեց պանիսլամիզմի դիրքերում, որը դարձել էր սուլթանի սրտին մոտ ամենանվիրական գաղափարախոսությունը: Դրանով իսկ նա դավաճանեց եվրոպական արժեքների վրա խարսխված դեմոկրատիայի ու ազատության իր սկզբունքներին և որոնց ջատագովն էր նա հրապարակ իջել: Մինչդեռ նա լավ գիտեր, որ սուլթանը, օգտագործելով բոլոր մուսուլմանական ժողովուրդների

միասնության վերաբերյալ Ջամալ ադ–Դին ալ–Աֆղանիի պանիսլամիստական գաղափարները, ձգտում էր իր մականի ներքո միավորել աշխարհի բոլոր մուսուլմանական երկրներն ու ժողովուրդները, այդ թվում Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան, Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Ուրալի, Վոլգայի և Հնդկաստանի մուսուլմաններին, և դրա հիման վրա ստեղծել իսլամական խալիֆայության նման մի բան:

Իր գաղափարական նահանջի համար Մուստաֆա Քամիլը խստորեն քննադատվել է իր ժամանակակիցների, մասնավորապես «Արաբական հայրենիքի Լիգայի» հիմնադիր, XIX դարի վերջի և XX դարի սկզբների արաբական ազգային հայտնի գաղափարախոս Նաջիբ Ազուրիի կողմից: Նա Մուստաֆա Քամիլի նացիոնալիզմը բնութագրում էր որպես «կեղծ եգիպտական նացիոնալիզմ», և այն համարում էր «պրո–իսլամական» և «պրո–օսմանյան»:

Մուստաֆա Քամիլը դեռ որոշ ժամանակ ևս շարունակեց իր քաղաքական գործունեությունը, որի մեջ նշանակալի էր 1907 թ. դեկտեմբերին նրա կողմից հիմնադրված «Հիզբ ալ–վաթան» կուսակցությունը:

Բարեբախտաբար նա մահացավ 1908 թ. փետրվարին և ականատես չեղավ իր քաղաքական ծրագրերի կործանմանը:

Սուլթան Աբդուլ Համիդ II–ի զուլումի քաղաքականությունն ամենացայտուն կերպով դրսևորվեց Սիրայում՝ Պաղեստինով ու Լիբանանով հանդերձ, ինչպես նաև Իրաքում:

Դադարեցնելով սահմանադրության գործունեությունը և ցրելով մեջլիսը, Աբդուլ Համիդ II կայսրությունում հաստատեց բացարձակ միապետություն, որի հենարանը օսմանյան խոշոր ավատատիրությունն էր, որի մեջ առաջատար դեր էր պատկանում քրդական, չերքեզական, ալբանական, ինչպես նաև արաբական ֆեոդալներին, որոնք պատրաստ էին հանուն իրենց շահերի ծառայել թուրքական սուլթանին: Իրենց առանձնահատուկ դերակատարությունն ունեին պալատական կառավարող վերնախավը, բարձրաստիճան զինվորականությունը, մուսուլման հոգևորականության վերնախավը, գաղտնի ոստիկանությունը և կայսրության այլ հետադիմական ուժեր: Նրանց վրա հենվելով և նրանց միջոցով էր արյունարբու սուլթանն իրականացնում իր զուլումի քաղաքականությունը:

Աբդուլ Համիդի ձեռքին ահավոր զենք դարձավ քրդերից կազմված հեծելազորը, որը նրա անունով կոչվեց «համիդիե»: Նա կոչված

էր կատարելու ամենաարյունալի և սարսափազդու հանձնարարություններ:

3. Հակազուլումյան շարժման և պայքարի դրսևորումներն արաբական երկրներում

Աբդուլ Համիդ II մշտական վախ ուներ ժողովրդի հանդեպ և սարսափում էր արաբների և կայսրության մյուս ժողովուրդների ազատագրական ձգտումներից: Նրա մտքով անգամ չէր անցնում ինչ–որ չափով հաշվի առնել նրանց այդ ձգտումները, առավել ևս բավարարել դրանք: Նա նրանց հետ խոսելու միայն մեկ միջոց էր ճանաչում՝ բռնություններին, զենքի, ժողովրդական և հասարակական ընդվզումներն արյան մեջ խեղդելու մեթոդը: Նա անխնա ճնշում էր ազատագրական միտումների ամենափոքր դրսևորումն անգամ, զնդան նետում արաբ ազատախոհներին: Խիստ հալածանքի էր ենթարկվում արաբերեն լեզուն, պաշտոնական հիմնարկներում, դատարաններում, բանակում, դպրոցներում և մշակույթի ոլորտում տիրապետողը թուրքերենն էր: Թերթերը և գրականությունը ենթակա էին գրաքննության: Ամենից շատ գաղտնի գործակալները վխտում էին այդ ոլորտում, մատնությունն ու լրտեսությունն ամենաշատը տարածված էին հենց այդ բնագավառում, քանի որ սուլթանը և նրա պալատական շրջապատը ամենից շատ վախենում էին ազատ խոսքից, ազատորեն արտահայտված մտքից, ազատախոհ մտավորականությանը համարելով կայսրության ամենավտանգավոր թշնամին:

Ազատության դեմ Աբդուլ Համիդ II պայքարում էր ոչ միայն գրաքննությամբ, ձերբակալություններով և հալածանքներով, այլև զենքով: Այդ պատճառով էլ զուլումի տարիներին ջարդերն ու կոտորածները, ապստամբությունները և այլ բնույթի ընդվզումներն արյան մեջ խեղդելը, դարձել էր Օսմանյան կայսրության ներքաղաքական կյանքի բնորոշ գծերից մեկը: Սուլթանը 1894–1896 թթ. հրահրեց հայկական կոտորածները, որոնց մասին ավելի հանգամանորեն կխոսվի ստորև, 1896 թ. տեղի ունեցան հույների կոտորածներ Կրետե կղզում, մակեդոնացիների զանգվածային ջարդեր Մակեդոնիայում և այլն:

Հերթը հասավ նաև արաբներին, որոնք, ինչպես և կայսրության մյուս ժողովուրդները, չդիմանալով զուլումի անտանելի ռեժիմին, շատ հաճախ ապստամբվում էին: Արաբները զուլումի տարիներին ապստամբվել են բազմիցս: Դրանցից նշենք դրուզների ապստամբությունը

սիրիական Ջեբել Դրուզ լեռնային շրջանում 1886 թ. Շիբլի Աթրաշի գլխավորությամբ, որի արդյունքում ապստամբ գյուղացիները կարողացան ստիպել Բարձր Դռանը փոխել Ջեբել Դրուզի կառավարիչին և նրա էմիր նշանակել Շիբլի Աթրաշին, որը մեծ հեղինակություն էր վայելում դրուզ բնակչության շրջանում: Դրուզները կրկին զենքի դիմեցին, երբ 1896 թ. սուլթանը փորձեց պարտադիր զինապարտության անվան տակ դրուզ տղամարդկանց բանակ զորակոչել և հեռացնել նրանց իրենց բնակավայրերից: Այս անգամ նս թուրքական իշխանություններին չհաջողվեց հասնել իրենց նպատակին: Դրուզները երեք տարի անց նորից ապստամբեցին և իսկական ճակատամարտ տվեցին նրանց դեմ ուղարկված թուրքական զորքերին, որի ժամանակ վերջիններս տվեցին մի քանի հարյուր զոհեր: Չնայած այդ կորուստներին, թուրքական զորքերին հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը, բայց չհաջողվեց նրան վերջնականապես հնազանդեցնել դրուզներին, քանի որ նրանք 1906 թ. նորից զենքի դիմեցին:

Ապստամբական կարևոր կենտրոնի վերածվեց Հալեբը: 1895 թ. այստեղ բռնկվեց բավականին լավ նախապատրաստված ապստամբություն, որը արաբական երկրներում քաղաքային բնակչության առաջին ամենախոշոր ելույթն էր: Ապստամբության հիմնական մասնակիցները արհեստավորները, առևտրականները և քաղաքային բնակչության չքավոր խավերն էին, որոնք այլևս չէին դիմանում թուրքական իշխանությունների կամայականություններին: Թուրքերին, իհարկե, հաջողվեց արյան մեջ խեղդել հալեբցիների ապստամբությունը: 1903 թ. նույն բախտին արժանացավ Բեյրութի քաղաքային բնակչության ապստամբությունը:

Հուզումներ էին տեղի ունենում նաև Պաղեստինում, Իրաքում և արաբական այլ երկրներում:

Հակազուլումյան շարժումները, հասկանալի է, միայն ապստամբություններով չէ, որ արտահայտվում էին: Արաբական երկրներում տեղի էին ունենում զանազան հավաքներ, գաղտնի ժողովներ, քննարկումներ և այլն, որի ընթացքում արաբները, հատկապես մտավորականությունը, գրողները, լրագրողները, ուսուցիչները, ազգային առաջադեմ զինվորական սպաները և այլ խավեր, իրենց տեսակետներն էին արտահայտում Աբդուլ Համիդ II–ի վարչակարգի, զուլումի ճիրաններից ազատագրվելու ուղիների և ձևերի մասին:

Հակազուլումյան շարժման մեջ կարևոր փուլ հանդիսացավ արաբական երկրներում և արտասահմանում արաբական զանազան կազմակերպությունների և միությունների, այդ թվում և գաղտնի ընկերությունների, ձևավորումը, որոնք բավականին արդյունավետ գործունեություն ծավալեցին և նպաստեցին ազատագրական գաղափարախոսության հասունացմանը և տարածմանը արաբական բնակչության շրջաններում:

Սիրիական և լիբանանյան գործիչները, որոնք հաստատվել էին Եգիպտոսում, և որոնց հասանելի չէին Աբդուլ Համիդ II շոշափուկները, շարունակում էին բացահայտորեն պաշտպանել սահմանադրական գաղափարները: Լիբանանյան գրողների կողմից Կահիրեում հրատարակվող «Ալ–Մուկադդամ» և «Ալ–Ահրամ» թերթերը անդուլ կերպով հարձակվում էին սուլթանի, նրա ներքին քաղաքականության և զուլումի ռեժիմի վրա: Այդ թերթերը դարձել էին հակազուլումյան ուժերի խոսափողը:

Բեյրութից օսմանյան պառլամենտի անդամ ընտրված Խալիլ Ղանիմը, որը սուլթանի կողմից պառլամենտը ցրելուց հետո, 1878 թվականից հաստատվել էր Փարիզում, պայքարում էր լիբերալ գաղափարները կենդանի պահելու համար: Նա դարձել էր օսմանյան կառավարության ընդդիմախոսը, անողոք քննադատելով նրա բռնատիրական քաղաքականությունը: Ֆրանսիայի մայրաքաղաքում շարունակելով զբաղվել գրականությամբ և լրագրությամբ, նա հատուկ գիրք գրեց օսմանյան սուլթանների մասին, որտեղ առանձին մաս էր նվիրել արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II կյանքին ու գործունեությանը: Այդ գրքում նա անդրադառնում է նաև «օսմանյան ազգի» հարցին: Հավաստելով, որ «օսմանյան ազգը» կործանվեց, Խալիլ Ղանիմը երկու գլխավոր պատճառ է մատնանշում՝ «Առաջինը զուլումն էր», իսկ «երկրորդը Իսլամը, որը սկզբում լիբերալ էր, բայց շուտով դարձավ բռնակալական»: Խալիլ Ղանիմի համար ամենայն չարիքի աղբյուրը զուլումն էր, դեսպոտիկ ռեժիմը և «թուրքերի անհանդուժողականությունը (intolerance)»:

Ստեղծված իրավիճակից ելքը նա տեսնում էր 1876 թ. սահմանադրությանը վերադառնալու մեջ: Սակայն նա տուրք տալով իր ժամանակի հասկացողություններին, գտնում էր, որ բացի սահմանադրական կարգերին վերադառնալուց, պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել և հոգատար վերաբերմունք ցուցաբերել օսմանյան իշխանների կրթությանը և այն բարոյական միջավայրին, որի պայմաններում նրանք դաս-

տիարակվում էին: Թեև դա միամտություն էր, այդուհանդերձ, արտահայտում էր Խալիլ Ղանիմի մտահոգությունն այն երկրի վերաբերյալ, որի մասին երազում էին արաբները:

Աբդուլ Համիդ II զուլումի քաղաքականությունը ստիպեց շատ արաբ գործիչների, անգամ լուսավորական, նահդայական շարժման ղեկավարների, վերանայել իրենց դիրքորոշումը «Վաքան»՝ «Հայրենիք» հասկացողության նկատմամբ: Դրա ցայտուն օրինակն է հանդիսանում ալ–Բուստանիի «Ալ–Ջինան» պարբերականը: Սկզբնական շրջանում այդ պարբերականի շուրջը համախմբված արաբ գործիչներն անվերապահորեն ընդունում էին «Օսմանյան հայրենիքի» գաղափարը և պաշտպանում էին նրա միասնության սկզբունքը: Սակայն զուլումի քաղաքականության պայմաններում, նրանք որոշակի ուղղումներ մտցրեցին իրենց մոտեցումների մեջ: Չհրաժարվելով «Օսմանյան վաքանի» և նրա միասնության գաղափարից, բուստանիականները, հաշվի առնելով արաբների տեղայնական զգացմունքները, առաջ քաշեցին և պաշտպանեցին «բիլադի», այսինքն «երկրի» գաղափարը: Ըստ այդմ, կար ընդհանուր հայրենիքը՝ Օսմանյան վաքանը, և միաժամանակ կար, այսպես ասած, տեղական հայրենիք–երկիրը՝ բիլադը: Այդ կապակցությամբ «ալ–Ջինանը» գրում էր.'«Կայսրությունը (Օսմանյան) մեր վաքանն է, բայց մեր երկիրը (բիլադ)՝ Սիրիան է»:

Բուստանիական այս դիրքորոշումը, անշուշտ, տարբերվում էր արաբական արմատականների դիրքորոշումից, որոնք կանգնած էին արաբական երկրները Օսմանյան կայսրությունից անաջատելու և անկախ պետություն ստեղծելու դիրքերում: Բայց, մյուս կողմից, բուստանիական մոտեցումը վկայում էր այն մասին, որ արաբական հասարակությունում դեռևս կային ուժեր կամ խավեր, որոնք պատրաստ չէին թուրքերից անջատվելուն, որոնք դեռևս չէին հասունացել այդ գաղափարի համար, և նրանց բավարարում էր օսմանյան ընդհանուր վաքանի շրջանակներում ունենալ իրենց սեփական երկրները՝ Սիրիա, Իրաք, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս և այլն:

1875 թ. Բուտրուս ալ–Բուստանիի շուրջը հավաքված արաբները ստեղծեցին գաղտնի ընկերություն, որի գործունեությունը հատկապես ակտիվացավ 1870–ական թվականների վերջերին և 1880–ական թվականների սկզբներին: Նրանց հիմնական քաղաքական պահանջներն էին՝ միացյալ Սիրայի և Լիբանանի ինքնավարություն Օսմանյան կայսրության սահմաններում, արաբերեն լեզվի ճանաչում որպես պաշտո-

նական լեզու, սահմանափակումների վերացում գիտելիքներ ձեռք բերելու և ազատ արտահայտվելու հարցերում:

Ենթադրում են, որ բեյրության այս գաղտնի կազմակերպությունը կապեր է ունեցել Միդհատ փաշայի հետ, երբ վերջինս 1878 թ. պաշտոնանկ արվեց և արտաքսվեց Ստամբուլից Դամասկոս:

Բեյրության ընկերությունը, որի գլուխ էին կանգնած նահդայականներ Իբրահիմ Յազիջին և Ֆարիս Նիմրը, իր բաժանմունքներն ուներ նաև Դամասկոսում, Սուվեյդիայում՝ Զեբել Դրուզում, և Հյուսիսային Լիբանանում՝ Տրիպոլիում:

Սակայն Սիրայում կային ուժեր, որոնց չէր բավարարում Սիրիայի ինքնավարությունը՝ Լիբանանի հետ, այլ պահանջում էին պատմաաշխարհագրական Սիրիայի ինքնավարությունը, որը կընդգրկեր Տավրոսի լեռներից մինչև Սինայի անապատներն ընկած տարածքները, և որը կհամախմբեր մուսուլմաններին, քրիստոնյաներին, դրուզներին և հրեաներին: Նկատի էր առնվում, որ նրանց միջև հաստատվելու էր համագործակցության և հավասարության մի այնպիսի բարձր աստիճան, որի պայմաններում մեծամասնություն և փոքրամասնություն հասկացությունները դառնալու էին առարկայազուրկ:

Սակայն նման առաջարկությունների նկատմամբ որոշ վերապահություն, անգամ մտավախություն ունեին քրիստոնյա արաբները: Ինչպես նշում է Ա. Հաուրանին, քրիստոնյա արաբները «վստահ չէին, որ արաբական նացիոնալիզմը չի վերածվի իսլամական ինքնահաստատման մի նոր ձևի»: Նման մտավախության համար հիմք էր տալիս այն իրողությունը, որ շատ մուսուլման արաբներ, ինչպես Իբրահիմ ալ–Յազիջին կամ Զուրջի Զեյդանը, չափազանց մեծ ուշադրություն էին դարձնում արաբների անցյալի պատմությանը, նրա հերոսապատումին, «արաբական հպարտությանը», մեծ տեղ հատկացնում նրա գովերգությանը, հորինում պատմվածքներ ու վիպակներ, նվիրված արաբների պատմական անցյալին: Զուրջի Զեյդանը, խանդավառված անգլիական վիպասան Վալտեր Սկոտի պատմական վեպերով, փորձում էր նրան հետևելով, ստեղծել արաբների ռոմանտիկ պատկերը: Ահա այս հանգամանքը բոլորին չէ, որ դուր էր գալիս և կասկածների տեղիք էր տալիս:

Արաբական քաղաքական ասպարեզում զուլումի տարիներին հայտնված և հետևողական հակազուլումյան դիրքորոշում ունեցող կազմակերպություններից էր արաբական ազատագրական շարժման գործիչ Նաջիբ Ազուրիի կողմից 1904 թ. Փարիզում հիմնված «Արաբա-

կան Հայրենիքի լիգան»: Լիբանանցի այս քրիստոնյա արաբն իր կրթությունը ստացել էր Բեյրութում, իսկ այնուհետև Փարիզում: 1898–1904 թթ. եղել է Երուսաղեմի կառավարչի օգնական, որը նա թողել է 1904 թ. և անցել Փարիզ: Հետագայում նա հաստատվում է Կահիրեում, որտեղ և մահանում է 1916 թ.:

Նա Ֆրանսիայում գտնվելու ժամանակ ծավալում է բավականին ակտիվ գործունեություն, հրապարակում և տարածում է քաղաքական բնույթի մանիֆեստներ, պամֆլետներ, իսկ 1907–1908 թթ. հրատարակում նաև «L'Independence arabe» «Արաբական անկախություն» ամսագիրը: Սակայն նրա քաղաքական հայացքներն ավելի ամփոփ տեղ են գտել նրա «Le Reveil de la nation arabe»՝ «Արաբ ազգի արթնացումը» գրքում: Այս գրքում մեկնաբանվում է «արաբ ազգ»՝ հասկացողությունը: Նաջիբ Ազուրին գտնում էր, որ կա մեկ արաբ ազգ, որը հավասարապես ներառնում է քրիստոնյաներին և մուսուլմաններին: Նրա կարծիքով կրոնական հիմնախնդիրը իրականում քաղաքական հարց է, որն արհեստականորեն հարուցել են արտաքին ուժերն իրենց սեփական նպատակների համար: Քրիստոնյաները ոչ պակաս արաբներ են, քան մուսուլմանները: Նա տվել է նաև արաբ ազգի աշխարհագրական սահմանները, որն ընդգրկում է Ասիայի բոլոր արաբախոս երկրները, բացառությամբ Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկայի:

Շարունակելով իր հայացքների պարզաբանումը, Նաջիբ Ազուրին գտնում էր, որ «Արաբ ազգը պետք է անկախ լինի թուրքերից»: Դա նրա քաղաքական հայացքների բարձրակետն էր, նրա կյանքի և քաղաքական պայքարի գերագույն իմաստը, որով և նա լրիվ հակադրվում էր Աբդուլ Համիդ II զուլումի քաղաքականությանը, որի կարևոր բաղադրամասերից մեկը կայսրության բոլոր ազգերի ծուլումն էր: Իր տեսակետն ավելի հիմնավոր դարձնելու համար, նա ընդգծում է, որ «Թուրքերը կործանեցին արաբներին: Առանց նրանց արաբները կարող էին լինել աշխարհի ամենաքաղաքակիրթ ազգերի մեջ»: Շարունակելով իր դատողությունները, Նաջիբ Ազուրին պնդում է, որ «արաբները բոլոր բնագավառներում ավելի լավն են, քան՝ թուրքերը»:

Նաջիբ Ազուրին քննարկում է նաև Օսմանյան կայսրությունը բարեփոխելու հարցը և գալիս այն եզրակացության, որ «անհնար է հավատալ կայսրության ինքն իրեն բարեփոխելու և արաբներին ավելի լավ դիրքեր շնորհելու հնարավորությանը»: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Նաջիբ Ազուրին չի վարանել նաև դրա պատասխանը տալու: Նա գտնում

էր, որ «Աբդուլ Համիդը երբեք չի փոխի իր քաղաքականությունը»: Այլ խոսքով, «աս–սուլթան ալ–ահմարը» երբեք չէր հրաժարվի զուլումի քաղաքականությունից և Օսմանյան կայսրությունը երբեք չէր դադարի, Յուսուֆ Յազբեկի բնորոշմամբ, «Աբդուլ Համիդի բանտը լինելուց»:

Ուրեմն, ստեղծված վիճակից միակ ելքը Նաջիբ Ազուրիի կարծիքով արաբների անկախության նվաճումն էր, և, ըստ այդմ, նա ձևակերպեց «Արաբական երկրները՝ արաբներին» քաղաքական բանաձևը:

Նա գտնում էր, որ դրան կարելի էր հասնել, եթե արաբները, հայերը և քրդերը միավորվեին և միասնական ճակատով հանդես գային Աբդուլ Համիդի ռեժիմի դեմ, մի կողմից, և ստանային եվրոպական երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի օգնությունը, մյուս կողմից: Նաջիբ Ազուրին 1905 թ. «Արաբական երկրները՝ արաբներին» կոչի մեջ՝ ուղղված Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի քաղաքակիրթ, լուսավորյալ և մարդասեր ազգերին, այն միտքն էր արտահայտում, որ «Թուրքիայից մեր (արաբների — Ն. Հ.) անջատման փաստի շնորհիվ, ճնշված բոլոր ազգերը՝ քրդերը, հայերը, ալբանացիները և այլն, և այլն, իրենց ազատությունը պիտի ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ սանձահարում են ալբանացիներին, և ալբանացիների ձեռքով է, որ ճզմում են բուլղարներին: Դարձյալ արաբների ձեռքով է, որ նրանք ճզմում են քրդերին, և քրդերի ձեռքով է, որ ջարդում են հայերին: Հետևաբար, հենց որ մենք լքենք սուլթանին, ամեն ազգ պիտի իր անկախությունը հռչակի և աշխարհը պիտի փրկվի երկպառակության այն աղբյուրից, որ արևելյան հարց է կոչվում»:

Նաջիբ Ազուրին ուրվագծել է նաև անկախ արաբական պետության կառուցվածքը: Նա գտնում էր, որ անկախություն նվաճած արաբական պետությունը պետք է լիներ «Սահմանադրական լիբերալ սուլթանություն», որի գլուխ պետք է կանգնած լիներ մուսուլման սուլթանը: Հիջազը պետք է լիներ արաբական թագավորություն՝ խալիֆայի գլխավորությամբ: Իսկ Լիբանանը, Նաջդը և Եմենը պետք է ստանային ինքնավարության կարգավիճակ:

Արաբական ազգային–քաղաքական գործիչների կողմից ներկայացրած հակազուլումյան ծրագրերի մեջ, Նաջիբ Ազուրիի ծրագիրը, անշուշտ, ամենահստակը և ամբողջականն էր:

4. Դարձյալ թուրքական սուլթանների անօրինական խալիֆաներ լինելու հարցի մասին

Աբդուլ Համիդի զուլումի դեմ ուղղված պայքարի ընթացքում, թուրքական սուլթանն անսպասելի հարված ստացավ մի այնպիսի հարցում, որը նա, հավանաբար, չէր սպասում: Խոսքը թուրքական սուլթանների, այդ թվում և Աբդուլ Համիդ II անօրինական սուլթան լինելու մասին է, որը զուլումի տարիներին դարձավ քննարկման սուր առարկա արաբական մտավոր և ազգային–քաղաքական շրջաններում:

Ա. Հաուրանին, որը հատուկ քննարկել է այս հարցը, օգտագործելով արաբական հազվագյուտ աղբյուրներ, որոնք շատ–շատերին մատչելի չեն, մեր կողմից արդեն հիշատակված «Արաբական միտքը լիբերալ դարաշրջանում» գրքում ընդգծում է, որ արաբները արաբական նացիոնալիզմի առաջացումը կապում էին թուրքական սուլթանի խալիֆա լինելու պարագայի հետ: «Արաբ մուսուլմանների մեջ,— գրում է նա,— թերևս գլխավոր ուժը, որ նրանց մղեց դեպի այդ ուղղությունը (նացիոնալիզմը — Ն. Հ.) թուրքական հավակնությունն էր խալիֆայության նկատմամբ»: Արաբների մոտ դա բացասական պատասխան առաջացրեց: Արաբական ազգային ղեկավարները նշում էին, որ արաբներն իրենց նախնիներից տեղյակ էին խալիֆայության իսկական դոկտրինայի մասին: Նրանք սուլթանին կարող էին ընդունել որպես սուլթան, բայց ոչ ավելին: Անգլիական արևելագետ Ջ. Ֆինը դեռևս 1878 թ. հրատարակած «Հուզիչ ժամանակներ» աշխատության մեջ, անդրադառնալով այս հարցին, նշում է, որ արաբները «չէին կարող հասկանալ, թե ինչպես թուրքերի սուլթանը, Թաթարիայից եկած օտար ռասայի ներկայացուցիչը, կարող էր իսկապես համարվել արաբական Կուրեյշ ցեղից Մուհամմադի (մարգարեի — Ն. Հ.) խալիֆան (հաջորդը)»:

Արաբներն այն աստիճանի չէին սիրում խալիֆայության հավակնող թուրքական սուլթաններին, որ նրանք սուլթանների «խան» տիտղոսն արտասանում էին այն կերպ, որ դա, կարծես թե, ծագում է արաբական «խանա» բառից, որը նշանակում է «դավաճանել»: Օրինակ, նրանք արտասանում էին «Աբդուլ Համիդ ալ–Խաին», որը ստացվում էր ոչ թե «Աբդուլ Համիդ Խան»՝ ըստ պաշտոնական տիտղոսակարգի, այլ «Դավաճան Աբդուլ Համիդ»: Իսկ արաբ լրագրող Լուիս Սապունջին, որը 1877 թ. Լոնդոնում հրատարակում էր «Մեղու» պարբերականը, Աբդուլ Համիդին համարում էր «Խալիֆայի տիտղոսի ուզուրպատոր»: Նույն

գաղափարներն էր պաշտպանում նաև 1879 թվականից Նեապոլում լույս տեսնող «Ալ–Խալիֆա» պարբերականը:

XIX դարի վերջերին, արաբների մոտ հասունանում է իսլամի կենտրոնը Թուրքիայից Արաբիա տեղափոխելու գաղափարը, որն օսմանյան կայսրության ներսում, արաբական շրջաններում արծարծվում էր գաղտնի կերպով, իսկ արտասահմանում՝ բացահայտորեն: Դրա հիմնավորումը կապված էր թուրքական սուլթանների ոչ լեգիտիմ խալիֆա լինելու իրողության հետ: Դա մի կողմից: Իսկ մյուս փաստարկն այն էր, որ արաբներն են իսլամի հիմնադիրը, Կորանը գրված է արաբերեն, աղոթքը պարտադիր բոլոր մուսուլմանական երկրներում կատարվում է արաբերեն լեզվով, արաբներն են իսլամի և նրա դոգմաների անաղարտության պահապանները, մինչդեռ թուրքերն աղավաղել և վարկաբեկել են իսլամը:

Այս ամենն առաջին հայացքից կարող էր թվալ կրոնական խնդիր կամ արաբների ու թուրքերի միջև կրոնական տարաձայնությունների արտահայտություն: Իրականում դա քաղաքական ենթատեքստ ուներ և քաղաքական պայքարի մի յուրահատուկ դրսևորում էր հանդիսանում: Դա իսլամը և արաբների կողմից նրա ստեղծված լինելու հանգամանքը քաղաքական նպատակներին ծառայեցնելու մի փորձ էր, հավելյալ կռվան արաբների ձեռքում Թուրքիայից անջատվելու և անկախ արաբական պետություն ստեղծելու նրանց պայքարում:

Մեր կողմից արդեն հիշատակված որդի Շիդյակը, 1884 թ. անգլիացիների հետ ունեցած զրույցի ժամանակ իր համոզմունքն է հայտնում, որ «Խալիֆայությունը մի օր վերադառնալու է Արաբիա»:

Մի շարք արաբ մտավորականներ և ուլեմաներ այն կարծիքն էին պաշտպանում, որ իսլամի բարեկորոգումը լրիվ կախված է արաբներից, նրանց ուլեմներից, բայց նրանք ոչինչ չեն կարող անել, «քանի դեռ խալիֆայությունը չի վերադարձվել արաբներին»: Իսկ դրա հնարավորությունը նրանք կապում էին Օսմանյան կայսրության փլուզման հետ, գտնելով, որ «երբ կայսրությունը վերջնականապես կործանվի, ուլեմների խորհուրդ կհրավիրվի Մեքքայում, արաբ խալիֆա ընտրելու համար»: Առաջարկվում էր արաբ խալիֆայի թեկնածություն ընտրել Մեքքայի շերիֆների ընտանիքի անդամներից որևէ մեկին:

Սակայն, նրանք այս հարցում մի կարևոր վերապահում ունեին: Նրանք գտնում էին, որ «արաբ խալիֆան պիտի դառնար ամբողջ մուսուլմանական աշխարհի խալիֆան, բացառությամբ թուրքերի: Նա

պետք է հաշտեցներ բոլոր աղանդները և ազատեր իսլամը թուրքական լծացման բեռից»: Այլ կերպ ասած, նրանք Թուրքիային արտաքսում էին մուսուլմանական աշխարհից որպես «վատ» մուսուլմաններ, որոնք իրենց վարքագծով և սխալ քաղաքականությամբ վարկաբեկել էին իսլամի հեղինակությունը:

Խալիֆայությունը Թուրքիայից Արաբիա տեղափոխելու տեսակետն էր պաշտպանում նաև Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբին: Նա հավատացած էր, որ արաբները կարող են փրկել իսլամը նեխումից, քայքայումից ու անկումից, որին հասցրել են թուրքերը և սուլթանները, այդ թվում և Աբդուլ Համիդ II: Իսկ դրա համար, նշում էր ալ–Կավակիբին, «Ծանրության կենտրոնը պետք է հետ վերադարձնել Արաբիա: Այնտեղ պետք է լինի մի արաբական խալիֆա Կուրեյշիներից՝ ընտրված ումմայի ներկայացուցիչների կողմից»:

Բայց թող այն տպավորությունը չստացվի, թե բոլոր արաբները, արաբական հասարակության բոլոր սոցիալական խավերն ամբողջապես արդեն կանգնել էին այս տեսակետների վրա: Այս հայացքների հեղինակները և ջերմ պաշտպանները արաբական ազգային–քաղաքական մտքի սերուցքն էր, որն ազատվելով իսլամական ընդհանրության կաղապարներից, որը բոլոր մուսուլմաններին համարում էր մեկ ումմա, ընդունում էր արաբական ազգի ինքնությունը, ճանաչում նրա առանձին, թուրքերից տարբեր էթնոս լինելը: Հենց այդ թեզի վրա էր խարսխված նրանց պայքարը արաբների անկախության համար՝ ընդդեմ թուրքերի տիրապետության, թուրքական սուլթանների ոչ լեգիտիմ խալիֆա լինելը և խալիֆայությունն արաբներին վերադարձնելու պահանջը:

Դրա կողքին արաբական հասարակության ներսում կային այնպիսի ուժեր կամ սոցիալական խավեր, որոնք կանգնած էին կապերը Թուրքիայի և թուրքական սուլթանից չխզելու դիրքերում: Դրանք, նախ և առաջ, ավատատիրական–կալվածատիրական շրջաններն էին, օսմանյան պաշտոնյաներ, զինվորականներ, որոնք իրենց բարեկեցությունը և իշխանության պահպանումը կապում էին թուրքական սուլթանների, նրանց ծառայելու և նրանց աջակցությունը ստանալու մեջ: Այդ նույն տեսակետի վրա էին կանգնած նաև մուսուլմանական հետադիմական հոգևորականության այն մասը, որը սուլթանի մեջ շարունակում էր տեսնել «իսլամի պաշտպանի», ենթադրելով, որ եթե կապը խզեն թուրքական սուլթանի հետ, ապա իսլամը որպես կրոն, և մուսուլմանները որպես այդ կրոնի հետևողներ, կմնան անպաշտպան: Այս միամիտ տեսա-

կետներին դեռևս տուրք էին տալիս նաև զգալի թվով շարքային արաբ հավատացյալներ:

5. Արաբական պատմագրության անդրադարձը հայերի 1894–1896 թթ. աբդուլհամիդյան կոտորածներին

Արաբ պատմաբանները, ուսումնասիրելով արաբական պատմության աբդուլհամիդյան շրջանը և արյունարբու սուլթանի զուլումի քաղաքականությունը, չեն փորձել այդ հարցը հետազոտել մեկուսի, մեկուսացված Օսմանյան կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների պատմությունից, նրանց ազգային–քաղաքական իրավիճակից անջատ: Ընդհակառակը, նրանք զարմանալի հեռատեսություն ցուցաբերելով, արաբների ազգային խնդիրները, նրանց հիմնախնդիրները զուլումի պայմաններում, սերտորեն հանգուցում են մյուս՝ քրիստոնյա և մուսուլման ժողովուրդների, հիմնախնդիրների հետ, և իրենց եզրահանգումները կատարում օսմանյան իրականությունում տիրող հարաբերությունների համատեքստում

Արաբների ազգային–քաղաքական հիմնախնդիրները աղերսելով մյուս ժողովուրդների հիմնախնդիրների հետ, արաբ պատմաբանները, տեսաբանները և լրագրողները, այդ ժողովուրդներին հստակորեն բաժանում են երկու խմբի: Մի խմբի մեջ նրանք մտցնում են այն ժողովուրդներին, որոնց պայմանականորեն կարելի է համարել զուլումի քաղաքականության զոհեր, իսկ մյուս խմբի մեջ մտցնում են կայսրության այն ոչ թուրք ժողովուրդներին, որոնք թուրքերի հետ միասին հանդիսանում էին զուլումի քաղաքականության ջերմեռանդ կիրառողներ, իրենց խստությունլներով, դաժանությամբ և արյունածարավությամբ բնավ չժիջելով թուրք խավարամոլ զանգվածին:

Առաջին խմբի՝ զոհերի խմբի մեջ, մտնում էին հայերը, հույները, ասորիները, բալկանյան ժողովուրդները, մասնավորապես բուլղարները, մակեդոնացիները, սերբերը և այլն: Իսկ երկրորդ խմբի՝ դահիճների խմբի մեջ, բացի թուրքերից, մտնում էին գլխավորապես քրդերը և չերքեզները:

Անդրադառնալով հայերի կոտորածների հարցին, արաբ հեղինակներն ուշադրություն էին դարձնում այն հանգամանքի վրա, որ հայերը Օսմանյան կայսրության բարեփոխումների ջերմ կողմնակիցներ էին: Եվ որպես ապացույց նրանք նշում են այն հանգամանքը, որ

Արևմտյան Հայաստանի հայերը խանդավառությամբ ընդունեցին սահմանադրության հռչակումը 1876 թ: «Օսմանյան հայերը,— գրում է Ֆուադ Հաֆիզը,— ամենաուժեղները օսմանյան քրիստոնյաների մեջ, ուրախացել էին սահմանադրության հռչակման կապակցությամբ»:

Սակայն հայերի հույսերը, ինչպես նաև կայսրության մյուս ժողովուրդների հույսերը, դառնությամբ նշում է եգիպտացի պատմաբանը, չարդարացան: Սահմանադրության կիրառման դեմ հանդես եկան կայսրության բոլոր հետադիմական ուժերը, որոնց վրա հենվելով, ըստ էմիլ Թումայի դիպուկ բնութագրման, «սուլթանական հակահեղափոխությունն անցավ հարձակման»: Եվ սկսվեց հետադիմության խրախճանքը:

Մրվան ալ–Մուդավարը նշում էր, որ բռնությունները տարածվել էին մասնավորապես արաբների, հայերի և բալկանյան ժողովուրդների վրա: Զարգացնելով նրա միտքը, մեկ այլ արաբ հեղինակ՝ Ֆուադ Հասան Հաֆիզը, բռնությունների այդ քաղաքականությունը համարելով Աբդուլ Համիդ II ներքին քաղաքականության ամենաբնորոշ գիծը, ընդգծում էր, որ «Սուլթան Աբդուլ Համիդ II–ի հայկական քաղաքականությունը, այլ կերպ ասած, ջարդերի քաղաքականությունը, բոլոր դեպքերում, նրա ներքին քաղաքականության բաղկացուցիչ մասն էր կազմում»: Ուրեմն նա ծրագրված քաղաքականություն էր, որը Աբդուլ Համիդ II կիրառում էր աննախադեպ հետևողականությամբ:

Քննարկելով հայերի կոտորածների հարցը, արաբ հեղինակները հատուկ անդրադարձել են ռուս–թուրքական 1877–1878 թթ. պատերազմին, հայկական հարցի վերաբերյալ Սան–Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի կողմից ընդունված որոշումներին, իրավացիորեն գտնելով, որ դրանք ճակատագրական դեր խաղացին արևմտահայերի կյանքում: Հայտնի է, որ Սան–Ստեֆանոյում ընդունված որոշումները նպաստավոր էին հայերի համար, քանի որ նրանք նախատեսում էին բարեփոխումների կիրառում հայկական վեց վիլայաթներում: Դրական գնահատելով այդ պարագան, արաբ պատմաբանները որպես սկզբունքային կարևոր նշանակություն ունեցող հանգամանք ընդգծում էին այն պարագան, որ ռուսական զորքերը հայկական վիլայաթներից հեռանալու էին միայն այն բանից հետո, երբ սուլթան Աբդուլ Համիդ II կիրականացներ բարեփոխումները: Դրանում նրանք իրավացիորեն տեսնում էին երաշխիքներ բարեփոխումների իսկապես կիրառման համար:

Հայտնի է, որ այդ բարեփոխումները արյունարբու սուլթանը չիրականացրեց, որի համար արաբ հեղինակները մեղադրում են ոչ միայն Աբդուլ Համիդին, այլև եվրոպական մեծ տերություններին, առաջին հերթին Անգլիային և Գերմանիային: «Անգլո–գերմանական մրցակցությունը և բիսմարկյան մաքիավելիզմը,— գրում է Մուսա Պրենսը,— թույլ չտվեցին կենսագործել Սան–Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածը»: Հենց այդ հոդվածում էր ամրագրված հայկական վիլայաթներում բարեփոխումներ անցկացնելու և մինչև նրանց ավարտը ռուսական զորքերը հայկական վիլայաթներում պահելու մասին դրույթը: Բեռլինի կոնգրեսում ընդունված որոշումը պարտադրեց Ռուսաստանին իր զորքերը դուրս բերել հայկական տարածքներից, որից հետո, ինչպես ճիշտ նկատել է սիրիացի պատմաբան Օսման աթ–Թուրքը, հայկական վիլայաթներում բարեփոխումների մասին հայտարարությունը մնաց որպես «տեսական ցանկություն»:

Բոլոր արաբ հեղինակաները միակարծիք են, որ Բեռլինի կոնգրեսի որոշումները ծանր հարված էին հայերին: Նրանք միակարծիք են իրենց գնահատականների մեջ առ այն, որ «Այդ պետությունները (եվրոպական — Ն. Հ.) անկեղծ չէին հայերին թուրքական ստրկությունից ազատագրելու հարցում»:

Արաբ հեղինակներն անդրադարձել են նաև մի շատ կարևոր հարցի՝ թե ի՞նչ էին ուզում արևմտահայերը: Սա կարևոր հանգամանք է, քանի որ նրանք գտնվելով միևնույն կայսրության շրջանակներում և շփվելով միմյանց հետ, լավատեղյակ էին հայերի քաղաքական ձգտումներին և նպատակներին: Բացի դրանից, այդ հարցի պատասխանը կարող է բանալի հանդիսանալ պատասխանելու այն հարցին, թե արդյո՞ք հայերը որևէ առիթ տվել են նրանց նկատմամբ ջարդերի քաղաքականություն կիրառելու համր:

Հենվելով փաստերի վրա և հանգամանորեն ուսումնասիրելով հայերի պահանջները, արաբ հեղինակները հաստատ համոզված են, որ արևմտահայերը չեն դրել Օսմանյան կայսրության կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու պահանջներ: Նրանց պահանջները հանգում էին Օսմանյան կայսրության կազմում վարչական ինքնավարություն ստանալուն: Եվ հայերի համար օրինակ էր ծառայում Լիբանանի 1861 թ. Օրգանական ստատուտը վարչական ինքնավարության մասին, որի գլուխ կանգնած էր օսմանյան սուլթանի կողմից նշանակված քրիստոնյա մութասարիֆը: Այդ հարցը հիմնովին ուսումնասի-

ռած լիբանանցի արաբ ականավոր պատմաբան Մուսա Պրենսը, «Un genocide impuni: L'Armenocide» («Մի անպատիժ գենոցիդ. Արմենոցիդ») արժեքավոր մեծածավալ մենագրության հեղինակը, այդ հարցի կապակցությամբ գրում է հետևյալը. «Ոգևորված լիբանանյան նախադեպով, հայերը ցանկանում էին ստանալ մի համեստ վարչական ինքնավարություն, նվազ հավակնորդ, քան Լեռնալիբանանի կարգավիճակը»: Նույն տեսակետին է նաև եգիպտացի պատմաբան Ֆուադ Հասան Հաֆիզը: Նշելով, որ թեև հայկական պատվիրակությանը կաթողիկոս Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ թույլ չտվեցին մասնակցել Բեռլինի կոնգրեսին, այդուհանդերձ, նա կարողացավ կոնգրեսի մասնակիցներին հանձնել հայերի պահանջները պարունակող հուշագիր: Ելնելով այդ հուշագրի բովանդակությունից, Ֆուադ Հաֆիզը, ինչպես և Մուսա Պրենսը, արդարացիորեն պնդում է, որ հայերը հանդես չէին գալիս Օսմանյան կայսրությունից անջատվելու պահանջով, այլ ուզում էին «ինքնավար քրիստոնեական վարչություն՝ միջազգային երաշխիքներով, նման 1861 թ. ստեղծված լիբանանյան վարչության»: Ահա դա է եղել հայերի հիմնական պահանջը և հայերին անջատողական ձգտումներ վերագրելու ամեն մի փորձ մտացածին էր, որի նպատակն էր արդարացնել Աբդուլ Համիդի և նրա հետնորդների հայկական կոտորածների քաղաքականությունը:

Արաբ հեղինակները ցույց են տալիս, որ սուլթան Աբդուլ Համիդը և նրա շրջապատը հայերի ջարդերն արդարացնելու համար օգտագործում էին զանազան հնարովի և շինծու պատրվակներ: Նրանք հատկապես ուշադրություն են դարձրել օսմանյան կառավարողների կողմից օգտագործված երկու, այսպես կոչված, «պատճառների» վրա:

Առաջին, օսմանյան կառավարողները հակահայկական արշավ ծավալելու համար օգտագործում էին ռուսահպատակ հայերի՝ որպես ռուսական բանակի զինվորների, մասնակցությունը 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմին: Այս կապակցությամբ Ֆուադ Հասան Հաֆիզը սրամտորեն նկատում է, որ «օսմանյան հայերը պատասխանատու չէին Հայաստանը օսմանյան պետության և ցարական Ռուսաստանի միջև բաժանելու համար, որը տեղի էր ունեցել այդ պատերազմից շատ առաջ, ինչպես նաև այն բանի համար, որ ռուսահայերը դարձել էին ցարական Ռուսաստանի հպատակներ»: Սուլթանը և նրա խորհրդատուները, անկասկած, իրազեկ էին այդ մասին, սակայն, նրանք միտումնա-

վոր անտեսում էին այդ անհերքելի իրողությունը, և ուժեղացնում էին հայերին ճնշելու և հալածելու իրենց քաղաքականությունը:

Երկրորդ, հայերին հալածելու և նրանց նկատմամբ սանձարձակ բռնություններ կիրառելու Աբդուլ Համիդի քաղաքականությունն առաջ բերեց, և չէր էլ կարող չառաջացներ, հայերի դիմադրությունն իրենց կյանքը, գույքն ու ունեցվածքը, իրենց պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու համար: Բայց, այդ միանգամայն բնական երևույթը, ինչպես պարզաբանում է Ֆուաադ Հաֆիզը, «վախեցրեց Աբդուլ Համիդ II, որը վախենում էր, որ դա կարող է հանգեցնել օսմանյան հայերի անկախությանը և նրանց անջատմանը օսմանական պետությունից»: Եվ ահա, թե՛ սուլթանը, և թե՛ նրա խորհրդականները գտնում են, որ դա ոչ մի գնով չի կարելի թույլ տալ, որովհետ «օսմանյան կայսրության մի մասից զրկվելը հօգուտ հայերի, կնշանակեր նրա սրտի կորուստ և մայրամուտ»: Եգիպտացի հեղինակը, ինչպես նաև արաբ մյուս պատմաբանները, շատ ճիշտ են նկատել այն կարևորությունը, որ Արևմտյան Հայաստանն ուներ Օսմանյան կայսրության և նրա պահպանման համար: Հիրավի, դա կայսրության սիրտն էր, որից սուլթանը և օսմանյան կառավարող վերնախավը ոչ մի կերպ չէր կարող զրկվել: Ահա այս հողի վրա աստիճանաբար հասունանում է հայերին կոտորելու միտքը, որպեսզի նրանցից ազատվեն և չկորցնեն Արևմտյան Հայաստանը, ինչպես կորցրել էին Հունաստանը, Սերբիան, Բուլղարիան, Ռումինիան, Եգիպտոսը կամ Թունիսը: Սիրիացի պատմաբան Մրվան ալ–Մուդավարը «Հայերը պատմության ընթացքի մեջ» մեծածավալ, հետաքրքիր և փաստերով հագեցված իր գրքում մեջբերում է Աբդուլ Համիդ II այժմ բոլորին հայտնի դաձած այն խոսքերը, որ «Հայկական հարցին վերջ տալու համար պետք է նախ և առաջ վերջ տալ հայերին»:

Այսպիսով, արաբական պատմագրության կողմից հայկական հարցի խորազննին ուսումնասիրությունը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ սուլթանն իր հրեշավոր ծրագրերն իրականացնելու համար, իրոք, օգտագործում էր շինծու պատճառներ:

Արաբ պատմաբանները հայկական ջարդերի պատմությունն ուսումնասիրելիս, զգալի տեղ են հատկացրել այն հարցի բացահայտմանը, թե ինչ ուժերով էր սուլթան Աբդուլ Համիդն իրականացնում իր ջարդարարական քաղաքականությունը հայերի նկատմաբ: Նրանք բոլորն ընդգծում են, որ սուլթանն իր ծրագրերի իրականացման համար օգտագործում էր քրդական ցեղերին և չերքեզներին: Առանձնահատուկ

մռայլ դերակատարում է ունեցել քրդական «համիդիե» կոչված հեծելազորը՝ «ֆուրսան ալ–համիդիեն», որը կազմավորվել էր 1891 թ., գլխավորապես քրդերից, ինչպես նաև չերքեզներից ու կարա–փափախներից՝ հատուկ, ինչպես վկայում է Ֆուաադ Հաֆիզը, հայկական կոտորածների համար:

Այդ մասին տեղեկություններ է տալիս նաև լիբանանյան հանրագիտարանը, որտեղ կարդում ենք, որ «տասնյակ հազարավոր քուրդ–քոչվորներ մտնում էին հայկական տարածքներ՝ Մուշ, Վան, Էրզրում: Հետո նրանց զինում էին (օսմանյան կառավարողները — Ն. Հ.) և կազմում ռազմական ջոկատներ, որոնք հայտնի էին «համիդիե» անունով, որոնք կառավարության թողտվությամբ ավերում էին Հայաստանը»:

Համիդիեի առանձնահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ այդ հեծելազորը, ինչպես նշում է Օսման աթ–Թուրքը, թուրքական բանակի համակարգի մաս չէր կազմում, այլ գոյություն ուներ որպես անկախ միավոր և ենթակա էր անմիջապես սուլթանին և նրա հրամաններն էր կատարում: Նրա կենտրոնակայանը հայկական Երզնկա քաղաքն էր: Նրանք մշտական հարձակումներ էին գործում հայկական գյուղերի և քաղաքների վրա, սպանում անպաշտպան մարդկանց, թալանում նրանց գույքն ու ունեցվածքը: Թալանը և կողոպուտը, սպանությունների հետ միասին, «համիդիեի» պրոֆեսիոնալ մասնագիտությունն էր:

Հայերի կոտորածներն իրենց գագաթնակետին հասան 1894–1896 թթ., երբ Աբդուլ Համիդը ձեռնամուխ եղավ հայկական հարցը հայերին բնաջնջելու ճանապարհով լուծելու բանաձևի կիառմանը: Ջարդերը տեղի ունեցան ոչ միայն հայկական շրջաններում, այլև Ստամբուլում և կայսրության հայաբնակ այլ վայրերում: Մոտավոր հաշիվներով կոտորվեց 300 հազար հայ:

Արաբական պատմագրության մեջ բավականին հանգամանորեն են լուսաբանվել հայկական կոտորածները, որոնք սկսվելով 1894 թ. Սասունում, այնուհետև տարածվեցին, ինչպես նշում է Ֆուաադ Հաֆիզը, բոլոր վեց հայկական վիլայաթների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սվասի, Խարբերդի և Դիյարբաքրի վրա: Օսման աթ–Թուրքի կարծիքով, այդ ջարդերը նախապատրաստվել էին հանգամանորեն: Նա թվարկում է այն քաղաքներն ու գյուղերը, որտեղ տեղի էին ունեցել արյունալի կոտորածներ: Սիրիական հեղինակ Խեյրի Համան այդ ջարդերն անվանել

է գազանային: Նման գնահատական է տալիս նաև լիբանանյան պատմաբան դոկտոր Ջամիլ Հաբրը: Մուսա Պրենսը 1894–1896 թթ. կոտորածները համարում է հայոց ցեղասպանության սկիզբը, իսկ նրա իրականացնող Աբդուլ Համիդին անվանում է «մեծ ոճրագործ»: Նման տեսակետ է արտահայտել նաև Ֆուադ Հաֆիզը, որի կարծիքով 90–ական թվականների ջարդերը «սուլթան Աբդուլ Համիդ II առաջին փորձն էր իր հայական քաղաքականությունն իրականացնելու ուղղությամբ, որը նախագծվել էր մինչ այդ, այն է՝ ոչնչացնել հայերին իր պետությունում»:

Ջանգվածային ջարդերն առաջ բերեցին հայ գաղթականների նոր ալիք: Հայերը կոտորածներից փրկվելու համար լքում էին իրենց բնակավայրերը և ապաստան գտնում օտար վայրերում: Նրանց մի մասն արտագաղթեց արաբական երկրներ, բնակություն հաստատելով Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և Իրաքում: Այդ կապակցությամբ լիբանանյան պատմաբան Ջամիլ Հաբրը «Հայերը և Լիբանանը» իր աշխատության մեջ նշում է, որ հայերի արտագաղթն արաբական երկրներ «արդյունք էր այն հալածանքների, որ այդ ժողովուրդը ենթարկվում էր օսմանյան լծի ներքո, իսկ դա սկսվեց սուլթան Աբդուլ Համիդի կառավարության ժամանակաշրջանում, երբ կատարվեցին բարբարոսական ջարդեր 1894–1896 թթ., և հազարավոր հալածյալներ հորդեցին հարևան երկրներ, և Լիբանանը դրանցից մեկն էր»:

Արաբները զգայուն, մարդասիրական վերաբերմունք ցուցաբերեցին հայ գաղթականների նկատմամբ, և նրանց օգնության ձեռք մեկնեցին, թեև իրենք ևս տառապում էին զուլումի արհավիրքներից:

Ամփոփելով, կցանկանայինք վկայակոչել Ֆուադ Հասան Հաֆիզի կարծիքը, որը կարելի է համարել բնորոշ այս հարցի լուսաբանությանը նվիրված արաբական պատմագրության համար: Ահա թե ինչ է գրում եգիպտացի պատմաբանը. «Ճշմարտությունը կայանում է նրանում, որ հայերի ջարդը օսմանյան կառավարության անարդարացի և անօրինական պատասխանն էր նրանց՝ (հայերի — Ն. Հ.) միջազգային հանրության կողմից ճանաչված արդարացի և օրինական պահանջներին»:

Այս բանաձևում բացահայտված է ամբողջ ճշմարտությունը՝ սուլթան Աբդուլ Համիդ II և օսմանյան կառավարության գործողությունները չունեին իրավական, քաղաքական և բարոյական ոչ մի հիմք և արդարացում:

Արաբների և արևմտահայերի գտնվելը միևնույն՝ օսմանյան կայսրության տիրապետության ներքո, միևնույն քաղաքական և սոցիալ–տն-

տեսական պայմաններն ու մթնոլորտը, զուլումի հասցրած արհավիրքները, հալածանքները, բռնությունները և կոտորածները, այս ամենը նպաստում էր նրանց մերձեցմանը: Նրանք ավելի ու ավելի էին զգում իրենց բախտակից ժողովուրդներ լինելու հանգամանքը և ըմբռնում այն անժխտելի իրողությունը, որ նրանց թշնամին մեկն է՝ օսմանյան բռնակալական լուծը, որից ազատագրվելը պահանջում էր արաբների և հայերի, ինչպես նաև կայսրության մյուս ճնշված ժողովուրդների, ազգային–ազատագրական շարժումների միավորումը: Նրանք պոտենցիալ դաշնակիցներ էին: Այս իրողության ըմբռնումը պետք է համարել արաբական և հայկական ազգային–քաղաքական մտքի պատմական նշանակություն ունեցող նվաճումը:

Եվ պետք է հավաստել, որ և՛ արաբների, և՛ հայերի մոտ գնալով ավելանում էր ազգային այն գործիչների թիվն ու քաղաքական կշիռը, որոնք այդ գաղափարների կրողներն ու իրենց ազգային միջավայրերում նրանց տարածողներն էին հանդիսանում:

Դրա փայլուն օրինակն է հանդիսանում մեր կողմից արդեն հիշատակված արաբական ազգային գործիչ Նաջիբ Ազուրին, որը Փարիզում գտնվելու միջոցին կապեր էր հաստատել Ֆրանսիայի մայրաքաղաքում գտնվող հայ ազգային և մշակութային գործիչների հետ և նրանց հետ մտքեր էր փոխանակում հայերի և արաբների համագործակցությունն ամրապնդելու և դրանց ուղիների վերաբերյալ: Մասնավորապես, նա 1905 թ. ապրիլի 15–ին հատուկ նամակով դիմում է հայ գրող, ազգային հասարակական–քաղաքական գործիչ, «L'Armenie» թերթի խմբագիր Մինաս Չերազին:

Նրան նամակով դիմելու դրդապատճառը ոչ միայն կարծիքներ փոխանակելու անհրաժեշտությունն էր, այլև հայերին երախտագիտություն հայտնելն այն բանի համար, որ նրանք հանդես էին գալիս արաբների ազգային իղձերի պաշտպանությամբ: Հույս հայտնելով, որ Մինաս Չերազը իր նամակը կհրատարակի «L'Armenie» թերթում, Նաջիբ Ազուրին նշում է, որ նամակով «ցանկանում եմ հրապարակորեն արտահայտել իմ շնորհակալությունը Ձեզ և Ձեր աշխատակիցներին այն խանդավառության համար, որով դիմավորեցիք արաբների հայրենիքի զարթոնքը և այն վեհանձն կամպանիայի համար, որ բարեհաճել եք ձեռնարկել ի նպաստ մեր ազգային շարժման»: Կարծում ենք, որ Նաջիբ Ազուրին, նշելով հայերի կողմից արաբների ազգային զարթոնքը խանդավառությամբ ընդունելու փաստը, հավանաբար, նկատի ուներ ոչ միայն Մինաս

Չերազի հրատարակած թերթում արտահայտված արաբամետ տեսակետները: Հայտնի է, որ արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունների մասին հայ ընթերցողին կանոնավոր կերպով տեղյակ էին պահում կովկասյան, հատկապես Պոլսահայ մամուլը: Չպետք է բացառել այդ մասին արաբ գործիչների, այդ թվում և Նաջիբ Ազուրիի տեղյակ լինելու հնարավորությունը: Հօգուտ այդ տեսակետի են խոսում Նաջիբ Ազուրիի նամակի հետևյալ տողերը. «Նույն շնորհակալությունը հղում եմ ձեր բոլոր հայրենակիցներին, որոնք, հիմք ունեմ կարծելու, նույն զգացմունքն ու համակրանքն ունեն մեր հանդեպ»:

Նաջիբ Ազուրիի նամակի հաջորդ տողերը մեծ կարևորություն են ներկայացնում Նաջիբ Ազուրիի և նրա նման մտածող արաբ ազգային գործիչների տեսակետները հասկանալու համար, մանավանդ այնպիսի հարցերում, ինչպես հայերի դերն ու ներդրումը օսմանյան բռնակալության դեմ մղվող պայքարում, ինչպես նաև այն առումով, թե արաբներն ինչպես են գնահատում հայերի այդ դերակատարումը: «Քաջաբար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արաբներին թուրքական պետության դեմ,— գրում է Նաջիբ Ազուրին,— մյուս կուսակցություններից առաջ հայերը մի անգամ ևս ցույց տվեցին, որ գիտակցում են մեր շահերը: Նրանք նույնպես ցույց տվեցին իրենց արժանիքը մյուս ազգությունների համեմատ, որոնք օսմանյան կայսրություն կոչված այդ անհետևողական կառավարության ճնշման տակ են գտնվում»:

Զարգացնելով իր միտքը, Նաջիբ Ազուրին շատ հետաքրքիր տեսակետ է արտահայտում, որը կարևոր է Օսմանյան կայսրությունում կատարվող գործընթացները հասկանալու և այդ գործընթացներում հայերի տեղը որոշելու առումով: Ահա թե ինչ է գրում նա իր հայ բարեկամին. «Այս արժանիքը բավականին ճանաչված չէ: Իմ կարծիքով այդ արժանիքը կայանում է նրանում, որ հայերը չեն վախեցել տասը տարի առաջ արթնացնելու իրենց ազգային զգացմունքն ասիական ժողովուրդների մեջ թուրք–չերքեզական բռնակալության դեմ, այնպես, ինչպես հույները XIX դարի սկզբում համարձակություն ունեցան ազդանշան տալ բալկանյան ժողովուրդներին ազատագրվելու քմահաճ փաղիշահների դաժան բռնակալությունից: Եվ թուրքերը երբեք չեն կարող ջարդերի մեջ խեղդել հայերի օրինական ձգտումները, ինչպես Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միացյալ ուժերը չկարողացան խեղդել հունական ապստամբությունը, որի բարիքները տարածվեցին ամբողջ Բալկանների վրա»:

Այնուհետև նա գրում է, որ «Հայ հերոսների արյունով թրջված հողից բարձրացել է մի այնպիսի մեծ հսկա, ինչպես... արաբների հայրենիքը»:

Նաջիբ Ազուրին իր նամակն ավարտում է, արտահայտելով հետևյալ կարևոր մտքերը. «պետք է ճանաչենք և հասկանանք իրար և պետք է միանանք հարձակվելու համար ընդհանուր թշնամու դեմ, որն այնքան շատ օգտվեց մինչև հիմա մեր անհամաձայնությունից մեզ առանձին–առանձին ջախջախելու համար... Ոչ մի ազգ Թուրքիայում չի ցանկանում այլևս ստրուկ լինել, քանի որ բոլորն էլ ապստամբվել են մեկը մյուսի հետևից: Իրար չհասկանալն է նրանց պահում ատելի լծի տակ... Հայերն արդեն միացել են մեզ հետ: Ուրիշ խմբավորումները նույնպես միանում են մեզ և ազատության օրն այնքան հեռու չէ, որքան կարող են կարծել»:

Մինաս Չերազին ուղղված Նաջիբ Ազուրիի նամակը ոչ միայն փաստում է կատարված իրողությունները, հայերի և արաբների շահերի համընկնումը և նրանց հետագա մերձեցման պատմական անհրաժեշտությունը, այլև պարունակում է հետագա գործողությունների ծրագիր ընդհանուր թշնամու՝ օսմանյան լուծը տապալելու կոչ:

Այդ նամակը սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող քաղաքական կարևոր փաստաթուղթ է:

Գլուխ վեցերորդ

ԱՐԱԲՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ. ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1908–1914 թթ.)

I. ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իշխանության անցումը երիտթուրքերին

Զուլումի ռեժիմը, չնայած բռնություններին, հալածանքներին և կոտորածներին, չկարողացավ լուծել ներքին և արտաքին քաղաքականության և ոչ մի հարց: Ընդհակառակն, նա ավելի խորացրեց այն ճգնաժամը, որը համակարգային բնույթ էր կրում և արդեն սպառնալի չափեր էր ընդունել՝ վտանգի տակ դնելով Օսմանյան կայսրության գոյությունը: Ա. Հաուրանիի դիպուկ բնորոշմամբ, կայսրությունում առաջացել էր «ռեժիմը փոխելու համընդհանուր շահագրգռվածություն»:

Դրանում շահագրգռված էին կայսրության համարյա բոլոր խավերը՝ բուժուազիան, ոչ միայն արաբ, հույն, հայ, հրեա, այլև թուրքական նորաստեղծ և դեռևս թույլ բուրժուազիան, զինվորականության, մտավորականության անգամ ֆեոդալ–կալվածատերերի այն մասը, որը դժգոհ էր զուլումի քաղաքականությունից: Փոփոխություն կատարելու մեջ, իհարկե, խիստ շահագրգռված էին զուլումի ռեժիմի տակ հեծող բոլոր ոչ թուրք ժողովուրդները՝ արաբները, հայերը, հույները, ասորիները, բալկանյան ժողովուրդները և այլն:

Դիկտատորական ռեժիմի և օսմանյան յուրահատուկ պայմանների բերումով Օսմանյան կայսրությունում անհնար էր քաղաքական կառուցվածքային փոփոխություններ իրականացնել եվրոպական մեթոդներով և ձևերով՝ ժողովրդական շարժումների միջոցով կամ ժողովրդա-

կան հեղափոխության ճանապարհով: Օսմանյան հասարակությունը ոչ միայն դեռևս չէր հասունացել դրա համար, այլև շատ հեռու էր դրանից:

Արևելյան նմանատիպ հասարակություններում հեղափոխական բնույթի փոփոխությունները՝ ներառյալ հեղափոխական նշանակություն ունեցող պետական հեղաշրջումները, հնարավոր էին միայն վերնախավային հեղաշրջման ճանապարհով կամ ստեղծված իրավիճակից դժգոհ բանակի ու նրա սպայական կազմի միջոցով: Տիպաբանորեն նման փոփոխություն տեղի ունեցավ Օսմանյան կայսրությունում 1908 թ. հուլիսին: Նրա իրականացնողները եղան զինվորականները, ավելի ստույգ՝ նրա այն հատվածը կամ խմբավորումը, որը միավորվել էր դեռևս XIX դարի վերջերին հիմնված «Միասնություն և առաջադիմություն»՝ «Իթիհադ վե թերակի» գաղտնի կազմակերպության մեջ: Նրանք հայտնի են նաև որպես իթիհադականներ և երիտասարդ թուրքեր անվանակոչումով: Նրանց դիրքերը հատկապես ուժեղ էին Մակեդոնիայում տեղակայված թուրքական բանակում:

Իրադրությունն երկրում փոխվեց 1906 թվականից սկսած, երբ կայսրությունում իրենց գործունեությունը վերսկսեցին երիտասարդ թուրքերը: Արաբ պատմաբան Ա. Հաուրանին ընդգծում է, որ «զինվորական սպաների մի խումբ հիմնեց մի գաղտնի հեղափոխական կազմակերպություն, որը կապեր հաստատեց Փարիզում վտարանդիների հետ և վերցրեց նրանց կազմակերպության անվանումը՝ «Իթիհադ վե թերակի»: Այդ կազմակերպությունը 1907 թ. Փարիզում հրավիրեց սուլթանական ռեժիմից դժգոհ ուժերի և կազմակերպությունների համաժողով, որին, բացի նրանից մասնակցում էին նաև այլ կազմակերպություններ, ինչպես լիբերալ հայացքների տեր իշխան Սաբահէդդինի «Ապակենտրոնացման և մասնավոր նախաձեռնության լիգան», և մի քանի ոչ թուրքական կազմակերպություններ՝ արաբական «Հայֆեթ» ազգայնական կազմակերպությունը, մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը, Հայ հեղափախական դաշնակցությունը և հրեական «Լավարա» կոմիտեն: Նրանք եկան նախնական համաձայնության իրենց ծրագրերի և համատեղ գործողությունների վերաբերյալ: Այդ ծրագրի կենտրոնական պահանջներն էին՝ սահմանադրության վերականգնում, քաղաքական ինքնորոշում, որը, սակայն, չէր նշանակում Օսմանյան կայսրության կազմից արաբների, հայերի, բալկանյան և մյուս ժողովուրդների դուրս գալու պահանջ: Նրանք բավարարվեցին Օսմանյան կայսրության կազմում վարչական և մշակութային ինքնավարության պահանջներով,

որի հետ համաձայնվեցին իթիհադական երիտթուրքերը: Նրանց ծրագրի մեջ ընդգրկվեցին նաև խոսքի, մամուլի, ազգային մշակույթի զարգացման և այլ ազատությունների հաստատման պահանջները:

Փարիզի կոնգրեսում որոշվեց, որ հարվածային ուժը բանակն է, որը և պետք է իրագործեր ապստամբությունը:

Զինվորականների ապստամբությունը սկսվեց 1908 թ. հուլիսի 3–ին Մակեդոնիայում: Նրանք գրավեցին Մոնաստիր քաղաքը: Ապստամբների այդ խմբին, որին ղեկավարում էր Ռեսնա ամրոցի պարետ Նիյազին, միացան այլ զորաջոկատներ: Նրանք պատրաստվեցին շարժվել Ստամբուլի վրա: Աբդուլ Համիդ II հայտնվեց ծանր դրության մեջ: Նա կարող էր ապստամբական ոչ այնքան մեծ ուժերի դեմ հանել կայսրության փոքրասիական մասում տեղակայված իր բանակին, եթե վստահ լիներ նրանց հավատարմության և իր հրամանները կատարելու մեջ: Բայց նա գիտեր, որ չի կարող հենվել նրանց, ինչպես նաև Ստամբուլում գտնվող զորքերի վրա, ուստի գերադասեց նահանջել և ընդունել ապստամբների պահանջը: Իթիհադականները վերևում նշված իրենց պահանջների իրականացումը տեսնում էին առաջին հերթին 1876 թ. սահմանադրությունը վերականգնելու մեջ, հավատացած, որ դա դուռ կբացի նրանց մյուս պահանջների բավարարման համար:

Աբդուլ Համիդը 1908 թ. հուլիսի 24–ին հայտարարեց սահմանադրությունը վերականգնելու իր որոշման մասին: Այդ օրը համարվում է հեղափոխության հաղթանակ, որը պատմության մեջ մտել է «երիտթուրքերի հեղափոխություն» անունով:

Արյունարբու սուլթանը գահընկեց չարվեց, պահպանվեց նաև նրա կառավարությունն՝ աննշան փոփոխությամբ: Հանդես գալով պալատում հավաքվածների առջև և նրանց տեղեկացնելով սահմանադրությունը վերականգնելու իր որոշման մասին, Աբդուլ Համիդը հայտարարեց, որ նա «ավելի քան 33 աշխատել է այդ պահի համար»:

Սուլթանի հայտարարությունից այն տպավորությունն էր ստացվում, որ նա է փաստորեն կայսրության ժողովուրդներին սահմանադրությունը «շնորհել» և, իբր, 33 տարի, գիշեր ու ցերեկ, մտածել է այդ մասին, կարծես թե չի եղել 33 տարիների զուլումի մղձավանջը: Օսմանյան դահիճը՝ «կարմիր սուլթանը, որը 1878 թ. դադարեցրել էր սահմանադրության գործողությունը, իսկ նրա հեղինակին մահվան դատապարտել, 33 տարի շարունակ անողոքությամբ վարել զուլումի քաղա-

քականությունը, այժմ անամոթաբար հանդես էր գալիս՝ որպես ժողովրդին սահմանադրություն «շնորհողի» դերում:

Պատմության ինչպիսի ծաղր:

Զինվորականների ճնշման տակ, սուլթանը նաև որոշում ընդունեց մեջլիսի ընտրություններ անցկացնելու, խոսքի, մամուլի և միությունների ազատության և գրաքննության վերացման մասին:

Պատմության մեջ՝ որպես հեղափոխություն մտած այս իրադարձությունը, իրականում զինվորական հեղաշրջում էր: Այդպես է գնահատում այդ իրադարձությունը Ջ. Անտոնիուսն իր «Արաբների զարթոնքը» գրքում: Նա դա համարում է «հանկարծակի պետական հեղաշրջում»՝ («sudden coup d'etat»), որը բանակը հայտարարեց հեղափոխություն»:

Թեև շատ հեղինակներ օգտագործում են «հեղափոխություն» տերմինը, բայց՝ նախ նրանք դա չեն ընդունում անվերապահորեն, և շատ հաճախ օգտագործում են պետական հեղաշրջման իմաստով կամ ուղղակի դա դիտում են՝ որպես շարժում: Այդ տեսակետից բնորոշ է Դ. Երեմեևի մոտեցումը, որը գտնում է, որ «Երիտասարդ թուրքերի շարժումը կղերա–ֆեոդալական կարգի ծայրահեղությունների դեմ ուղղված լիբերալ շարժում էր»: Այնուհետև՝ օգտագործելով հանդերձ «հեղափոխություն» եզրը, նա գտնում է, որ «Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը չէր նշանակում Թուրքիայի վերափոխում բուրժուական պետության: Երիտասարդ թուրքերը, հասնելով սահմանադրության վերականգնմանը, շարժումը համարում էին ավարտված: Նրանք ընդունակ չէին լուծելու բուրժուա–դեմոկրատական հեղափոխության խնդիրները, թույլ չտվեցին ագրարային հեղափոխությունը ծավալվելու և դաժան հաշվեհարդար տեսան սկսված բանվորական շարժման հետ»:

2. Արաբ–թուրքական «եղբայրության» մեղրամիսը և խաբկանքը

Այս վերնագիրը պատահական չի ընտրված: Նրա հանդես գալը պայմանավորված է այն մթնոլորտով և իրադրությամբ, որ ստեղծվեց Օսմանյան կայսրությունում 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջումից անմիջապես հետո: Կայսրության ժողովուրդներն ընդհանուր առմամբ մեծ ոգևորությամբ ընդունեցին սահմանադրության վերականգնման լուրը և երիտթուրքերի խոստումները: Դրան նպաստեց նաև վերջիններիս 1908 թ. հուլիսյան կոչը՝ ուղղված կայսրության ժողովուրդնե-

րին, որտեղ երիտթուրքերի կողմից «բուլղարները, հայերը, արաբները անվանված են եղբայրներ»:

Արաբ ազգային որոշ գործիչներ գայթակղություն ունեցան հավատ ընծայելու երիտթուրքերին՝ թուրքերի հետ իրենց եղբայր լինելու հարցում և շտապեցին հիմնել մի կազմակերպություն, որը ստացավ «Ալ–իխա ալ–արաբի ալ–օսմանի»՝ «Արաբ–օսմանյան եղբայրություն» անունը:

Սակայն, նախքան այդ ընկերության գործունեությանն անդրադառնալը, հարկ ենք համարում համառոտակի կանգ առնել այն հարցի լուսաբանության վրա, թե ինչպես կայսրության ոչ թուրք ժողովուրդները՝ այդ թվում և արաբները, ընկալեցին հեղափոխության լուրը:

Արաբները, հայերը, հույները, ասորիները, բալկանյան և մյուս ժողովուրդները մեծ խանդավառությամբ դիմավորեցին երիտթուրքերի իրագործած հեղափոխությունը: Նրանք հավատացած էին, որ նոր էջ է բացվում Օսմանյան կայսրության պատմության մեջ և կայսրության ժողովուրդների փոխհարաբերություններում, որը բնութագրելու համար ամենից հաճախ գործածվող բառը՝ «եղբայրությունն» էր»: Դա հաստատում են բոլոր աղբյուրները և ականատեսները: Էմիլ Թուման՝ անդրադառնալով այդ խնդրին, մատնանշում է, որ «Հեղափոխությունը իր հաղթանակը տարավ ազատություն, արդարություն և հավասարություն լոզունգի ներքո, և հասկացողություն ու աջակցություն գտավ տարբեր ազգությունների ժողովրդական լայն զանգվածների կողմից»: Տարբեր ազգությունների պատկանող մարդիկ՝ արաբները, հայերը հույները և թուրքերը, ինչպես նշում է Մուսա Պրենսը, փողոցներում կազմակերպում էին տոնակատարություններ, ողջագուրվում էին, իրենց խանդավառությունն արտահայտում: Նրանք հայտնվել էին էյֆորիայի մեջ:

Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ սահմանադրության վերականգնման հետ միասին, սկզբնական փուլում թույլատրվեցին որոշ ազատություններ: Մարդիկ հավաքներ էին կազմակերպում, բոցավառ ելույթներ ունենում, ստեղծում էին զանազան միություններ, ընկերություններ ու կազմակերպություններ, հրատարակում թերթեր և այլ պարբերականներ: Բավական է նշել, որ 1908 թ. հուլիսից հետո Բեյրութում լույս է տեսել 60, իսկ Բաղդադում՝ 40 նոր պարբերականներ: Ճիշտ է, դրանք երկար կյանք չէին ունենում, բայց այդ փաստն ինքնին քաղաքականության մեջ անփորձ մարդիկ ընկալում էին որպես ազատության և ժողովրդավարության դարաշրջանի խոստումնաբեր ապացույց:

Ահա այսպիսի իրադրության մեջ, էյֆորիայի պայմաններում, 1908 թ. սեպտեմբերի 2–ին լույս աշխարհ եկավ «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը, որի անդամներն էին արաբ պաշտոնյաներ, զինվորականներ, մտավորականներ և ուսանողներ: Նա հիմնվեց Ստամբուլում, բայց իր մասնաճյուղերն ուներ կայսրության արաբաբնակ բոլոր շրջաններում: Արաբական ազգայնականներից կազմված այդ նորաստեղծ կազմակերպության քաղաքական հիմնարար սկզբունքը հռչակվեց համագործակցությունը երիտթուրքերի հետ: Նրա հիմնադրման առաջին օրվանից հստակորեն հայտարարվեց, որ կազմակերպությունը կիսում է երիտթուրքերի հայացքները և նրանց մոտեցումները կայսրությունում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման նկատմամբ: Հիմնադիր ժողովում, որին մասնակցում էին նաև երիտթուրքերի ներկայացուցիչները, հայտարարվեց, որ կազմակերպությունն ընդունում է «օսմանյան ազգի» վերաբերյալ երիտթուրքերի հիմնադրույթը՝ առանձին միլլեթների գոյությամբ հանդերձ: Միլլեթը, ինչպես նշել ենք, չէր համարվում առանձին ազգ, այլ դիտվում էր՝ որպես մի կրոնաէթնիկական ընդհանրություն, համայնք, որոնցից մեկը համարվեց արաբական միլլեթը: Կազմակերպությունն ընդունելով միլլեթի տեսությունը, նահանջ կատարեց արաբական ազգի գոյության սկզբունքից, որի մասին խոսում էին արաբական նահդայական գործիչները, ապա նաև նրանց փոխարինելու եկած արաբական ազգային մտավորականությունը և ազգային գործիչները:

Բայց կազմակերպության նահանջը միայն դրանում չարտահայտվեց: Նա սկզբունքային բնույթի նահանջ կատարեց նաև մի այնպիսի առանցքային հարցում, ինչպիսին արաբական երկրների անկախության հարցն էր, որը լայնորեն քննարկվում էր արաբական երկրներում XIX դարի վերջերից և որը դարձել էր արաբական ազգային տարբեր ուժերի և հոսանքների գլխավոր պահանջը: Արաբների անկախության մասին անգամ չէր հիշատակվում կազմակերպության հիմնադիր ժողովում ընդունված ծրագրային բնույթի փաստաթղթում: Սովորաբար, երբ նահանջ է կատարվում անկախության պահանջից, ապա այն փոխարինվում է ինքնավարության՝ քաղաքական, վարչական կամ մշակույթային, պահանջով: Կազմակերպության ընդունված ծրագրում դա էլ չարվեց: Դրա մասին ոչ մի հիշատակություն չկար: Դրա փոխարեն «Արաբ–օսմանյան եղբայրություն» ընկերության գլխավոր պահանջը դարձավ, ինչ-

պես նշում է Ջ. Անտոնիուսը, «սահմանադրության պաշտպանությունը, բոլոր ռասաների միացումը հանուն սուլթանի»:

Արաբականության կամ արաբների իրավունքների վերաբերյալ ծրագրում, անշուշտ, կար հիշատակություն, բայց դա ընդհանուր բնույթ էր կրում: Նրա հեղինակները պահանջում էին կայսրության ժողովուրդների իրավահավասարության հաստատում, արաբների ազգային ավանդությունների և սովորույթների պահպանում, դպրոցներում արաբերեն լեզվով դասավանդում և այլն, որոնք թեև նույնպես անհրաժեշտ պահանջներ էին, սակայն, դրանք չէին գլխավորը պատմական այդ ժամանակաշրջանում:

«Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության ղեկավարն էր թուրքական բանակի սպա, երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիր անդամ Սադիկ ալ–Ազըմը, որի զինակիցները նույնպես իթիհադականներ էին:

Կարծում ենք, որ դա «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության կողմից բացահայտ երիտթուրքամետ ծրագրի ընդունման պատճառներից մեկն էր:

Երիտթուրքերի հետ սերտ համագործակցություն հաստատեցին նաև արաբ պատգամավորները, որոնք օսմանյան նոր պառլամենտի անդամ էին ընտրվել սահմանադրությունը վերականգնելուց հետո. 1908 թ. աշնանը կայացած երկաստիճան ընտրությունների ժամանակ: Ընտրությունների կազմակերպիչները երիտթուրքերն էին և նրանք ամեն ինչ արեցին պառլամենտում մեծամասնություն կազմելու համար: Նրանց մյուս կարևոր խնդիրը կայանում էր նրանում, որ արաբներից ընտրել այնպիսի պատվիրակներ, որոնք նրանց համախոհներն էին և կիսում էին երիտթուրքերի քաղաքական հայացքները: Երկու հարցում էլ նրանք հասան հաջողության: Դրա մասին են վկայում հետևյալ տվյալները: 1908 թ. Օսմանյան կայսրության բնակչությունը կազմում էր 22 մլն մարդ: Թվով ամենամեծաքանակը արաբներն էին՝ 10,5 մլն մարդ: Թուրքերի թիվը կազմում էր ընդամենը 7,5 մլն: Չնայած այդ հանգամանքին, թուրքերը պառլամենտում, որը բաղկացած էր 245 դեպուտատներից, զբաղեցրին 150 տեղ, մինչդեռ արաբներին հասավ ընդամենը 60 մանդատ: Արաբ դեպուտատները, որոնք իրենց հայացքներով մոտ էին երիտթուրքերին, ամեն բանում նրանց էին պաշտպանում և հնազանդորեն հետևում նրանց: Նրանք մեջլիսում այդպես էլ չբարձրացրեցին ա-

ռաբների համար կենսական նշանակություն ունեցող որևէ քաղաքական կամ այլ բնույթի հարց:

Պատկերն ավելի մռայլ էր սենատում: Սենատը բաղկացած էր 40 սենատորներից, որոնց բոլորին նշանակում էր սուլթանը: Այդ 40–ից միայն երեքն էին արաբ:

Արաբների մեջ կային նաև գործիչներ, որոնք հրապարակավ պաշտպանում էին երիտասարդ թուրքերին և նրանց քաղաքականությունը, «ելնելով այն համոզմունքից, որ կայսրությունը պետք է ամեն գնով պահպանվի»: Խոսքը գնում էր այն կայսրության պահպանման մասին, որն իրենք՝ արաբ պատմաբանները և ազգային գործիչները, համարում էին «Աբդուլ Համիդի բանտ»: Կայսրության պահպանման ամենաջերմ կողմնակից էր օսմանյան բանակի բաղդադցի սպա, ծագումով վրացի՝ Մահմուդ Շևքեթ փաշան, որը սպանվեց 1913 թ.:

Այսպիսով՝ երիտթուրքերի իշխանության գլուխ գալու առաջին շրջանում, որը մասնագետները անվանել են «արաբ–թուրքական մեղրամիս», երբ կայսրությունում տիրապետող էր համընդհանուր ոգևորությունը և էյֆորիան, արաբ ազգային գործիչները չկարողացան անմիջապես ճիշտ կողմնորոշվել, առաջադրել ու պաշտպանել արաբների համար առանցքային նշանակություն ունեցող որևէ արմատական, առանցքային հարց: Չխորանալով երիտթուրքերի հռչակած սկզբունքների իրական բնույթի մեջ, ընկնելով նրանց դատարկ խոստումների ծուղակը, արաբ ազգային գործիչները, գոնե նրանց մեծամասնությունը, «հանուն թուրքերի հետ եղբայրության» մոռացության տվեցին արաբների հիմնական պահանջները՝ առաջին հերթին անկախության վերաբերյալ, և կանգնեցին օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու դիրքերի վրա, այն կայսրության, որի սուլթանն այդ ժամանակ դեռևս զուլումի ռեժիմի հիմնադիր արյունարբու Աբդուլ Համիդն II էր:

Բայց էյֆորիան երկար չտևեց, և նրան փոխարինելու եկավ, ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, դառն իրականությունը: Դա ունեցավ իր պատճառները:

Սթափվելով, արաբները, հայերը, հույները և մյուս ժողովուրդները տարակուսում էին, որ հեղափոխությունը չտապալեց զուլումի հիմնադիր և նրա խորհրդանիշը հանդիսացող, դահիճ Աբդուլ Համիդ II–ին, որը շարունակում էր բազմել սուլթանական գահին: Նրա հետ միասին իշխանության լծակները շարունակում էին իրենց ձեռքում պահել հետադիմական ֆեոդալական և կղերական ուժերը: Էմիլ Թուման նշում է,

որ «հեղափոխությունը չխորացավ և չպայքարեց հակահեղափոխության դեմ»:

Աբդուլ Համիդ II, օգտվելով երիտթուրքերի անհետևողականությունից, և հենվելով իրեն հավատարիմ հետադիմական ուժերի վրա, որոնց մեջ բացի ֆեոդալներից և կղերականներից կային նաև զինվորականներ, 1909 թ. ապրիլի 13–ին կատարեց պետական հեղաշրջում: Երիտթուրքերը Ստամբուլից փախան Մակեդոնիա: Այդուհանդերձ, աբդուլհամիդյան ուժերը Ստամբուլում սպանեցին արդարադատության նախարարին, Սիրիայից պառլամենտի անդամ, դրուզ էմիր Մուհամմադ Արսլանին և ուրիշների:

Անդրադառնալով այդ հեղաշրջմանը, Մուսա Պրենսը հաստատում է, որ «սուլթանը խրախուսում էր հետադիմական և մոլեռանդ ուժերին, մոլլաներն իրենց գործը կատարեցին նրա համիդիե հեծելազորում, իսկ դերվիշական օրդենները քրդերի ձեռքը յաթաղան դրեցին»: Մրվան ալ–Մուդավարի բնութագրմամբ՝ հօգուտ սուլթանի կատարված հակահեղափոխությունը երկիրը վերադարձրեց «ջարդերի ռեժիմին», որի առաջին զոհերը եղան հայերը: Հակահեղափոխական հեղաշրջման հաջորդ օրը՝ ապրիլի 14–ին, սկսվեցին հայերի կոտորածները Կիլիկիայում, որոնք տևեցին երկու շաբաթ: Այդ ընթացքում Ադանայում, Անտիոքում, Մարաշում, Մերսինում, Հաջնում, անգամ Լաթաքիայում, սպանվեց մոտ 30 հազար հայ: Հետաքրքիր էր սուլթանական պաշտոնական բացատրությունը Կիլիկիայի կոտորածների պատճառների վերաբերյալ: Սուլթանը և նրա շրջապատը, ինչպես հաստատում է սիրիացի հեղինակ Օսման աթ–Թուրքը, «հայերին մեղադրում էին վերջին հեղաշրջումը (նկատի ունի 1908 թ. հուլիսյան երիտթուրքական հեղաշրջումը — Ն. Հ.) կազմակերպելու նախաձեռնության մեջ, որը փաստորեն իշխանությունից զրկեց Աբդուլ Համիդ II–ին, ինչպես նաև այն բանի համար, որ նրանք խախտել էին օրենքը և զենք էին կրում՝ ինքնապաշտպանության նպատակով»:

Ադանայի կոտորածները ցնցող տպավորություն թողեցին նաև կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների՝ այդ թվում և արաբների վրա: Դա նրանց համար մտածելու և անհանգստանալու լուրջ պատճառ հանդիսացավ, մանավանդ սուլթանի մեղադրանքը հայերի հասցեին 1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը մասնակցելու համար: Արաբները անհանգստացան, քանի որ իրենք նույնպես մասնակցել էին 1908

թ. շարժմանը, և մտահոգ էին, որ սուլթանը կարող էր համանման մեղադրանքներ ներկայացնել նաև իրենց և պատժել դրա համար:

Բայց սուլթանը երկար գահի վրա չմնաց: Երիտթուրքերը ուշքի գալով հեղաշրջումից, վերակազմավորելով իրենց ուժերը, և, հենվելով Սալոնիկում գտնվող ու իրենց հավատարիմ զորքերի վրա, շարժվեցին Ստամբուլի վրա, կարողացան 1909 թ. ապրիլի 24–ին ճնշել սուլթանական խռովությունը և վերագրավել իշխանությունը: Աբդուլ Համիդը այս անգամ գահընկեց արվեց և սուլթանական գահն անցավ Մուհամմադ (Մեհմեդ) V Ռաշադին:

Կրկին վերցնելով իշխանությունը, երիտթուրքերն այս անգամ կազմեցին իրենց սեփական կառավարությունը, որը դարձավ նրանց գաղափարների իրականացման գլխավոր զենքը: Երիտթուրքերը դեն նետեցին լիբերալիզմի դիմակը և կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարության կողմնակիցների քղամիդը: Նրանք հասարակության առջև հանդես եկան իրենց իսկական դեմքով՝ որպես մոլի ազգայնամոլներ, շովինիստներ ռասիստներ, որոնք սկզբունքորեն չէին տարբերվում օսմանյան սուլթաններից ու նրանց վարած քաղաքականությունից:

Նրանց նոր քաղաքականության առաջին զոհերից մեկը հանդիսացավ «Արաբ–օսմանյան եղբայրություն» արաբական կազմակերպությունը: 1909 թ. երիտթուրքերն արգելեցին նրա գործունեությունը: Փակվեին նաև հայկական, ալբանական, հունական զանազան նման այլ կազմակերպություններ, որոնք այլևս պետք չէին երիտթուրքերին:

Էմիլ Թուման՝ քննարկելով միությունները, ընկերությունները և քաղաքական կազմակերպություններն արգելելու մասին 1909 թ. երիտթուրքերի ընդունած օրենքը, անդրադառնում է այդ կապակցությամբ օսմանյան պառլամենտում հայ պատգամավոր Վարդգեսի ելույթին, որպես երիտթուրքերի քաղաքականությունը լավագույնս մերկացնող ելույթի: «Այդ օրենքը դեպուտատների պալատում քննարկելու ժամանակ,— գրում է նա,— տարբեր ազգությունների դեպուտատներ հանդես եկան խիստ քննադատությամբ: Հայ դեպուտատ Վարտակիսը (Վարդգեսը — Ն. Հ.) արտահայտեց ընդդիմության կարծիքը, երբ հայտարարեց. «Օսմանյան ժողովուրդներին իրենց ազգությունը, ռասայական (իմա՝ էթնիկական — Ն. Հ.) պատկանելությունը և լեզուն պահպանելու արգելքը՝ նպատակ ունի նրանց ներքաշել մի միության մեջ, որը հեռու է արդարությունից և ազատությունից... Ազգը չի կարող գոյություն ունենալ՝

չպահպանելով իր ռասայական պատկանելությունը, և նա թույլ չի տա, որ այն խլեն իրենից: Կազմակերպությունները, որոնց լուծարումը դուք ցանկանում եք, դրանք այն կազմակերպություններն են, որոնք ձեզ հետ միասին պայքարել են սահմանադրության վերականգնման համար»:

Այսպիսով՝ արաբների և կայսրության մյուս ժողովուրդների հետ երիտթուրքերի «եղբայրություն» խաղն արդեն սպառել էր իրեն: Մեղրամիսն ավարտվեց:

Դրա կարիքը նրանք այլևս չէին զգում:

Դրա կարիքը չէին զգում նաև արաբները և կայսրության մյուս ժողովուրդները: Նրանց աչքերը բացվում էին և նրանք աստիճանաբար հասկանում էին երիտթուրքերի ու նրանց գլխավորած շարժման իսկական էությունը: Նրանք պատրանքաթափ էին լինում:

Այսպիսով՝ ավարտվեց խաբկանքը՝ Օսմանյան կայսրության «եղբայրություն» խաղալու դարաշրջանը, և սկսվեց մի նոր փուլ՝ հակադրության, դիմակայության և, ի վերջո, պայքարի փուլը:

II. ԲՌՆԻ ԹՈՒՐՔԱՑՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԸ

1. Արաբները թուրքական նացիոնալիզմի և պանթուրքիզմի արանքում

Երիտթուրքերի կողմից սուլթանական խռովությունը ճնշելուց և նրանց կողմից իրենց կառավարությունը կազմելուց հետո, տեղի ունեցավ պառակտում սահմանադրության վերականգնման կողմնակիցների միջև, որոնք համախմբված էին երիտթուրքերի շուրջը: Պառակտումն առավել ակնառու դրսևորվեց կայսրության թուրք և ոչ թուրք ժողովուրդների միջև: Դրա համար գլխավոր մեղքն ընկնում է երիտթուրքերի վրա, որոնք հասնելով իշխանությունը գրավելու իրենց գլխավոր նպատակին, դրժեցին 1907 թ. Փարիզի կոնգրեսում արաբներին, հայերին, բալկանյան և կայսրության մյուս ժողովուրդներին ազատության ու հավասարության վերաբերյալ տրված իրենց խոստումը, և որդեգրեցին բոլորովին հակառակ քաղաքականություն:

Ա. Հաուրանին՝ բնութագրելով այդ գործընթացը, շեշտում էր, որ «ճեղքվածքը թուրքերի և ոչ թուրքերի միջև դառնում էր ավելի լայն»:

Դրա պատճառներից մեկն այն էր, որ երիտթուրքերը ջանում էին պահպանել կայսրությունը և ստեղծել կենտրոնացված կառավարություն՝ թուրքերի գերակայությամբ: Այդ գերխնդիրը լուծել օսմանիզմի դոկտրինայի հիման վրա հնարավոր չէր, որովհետև օսմանիզմը, ինչպես նշում է Ա. Հաուրանին, «չափազանց փխրուն և արհեստական զգացում էր, որը վերջին հաշվով ոչ մի բանի չէր ապավինում՝ բացի կառավարող ընտանիքին հավատարիմ լինելուց»: Ուրեմն՝ օսմանիզմը չէր կարող շաղախի դեր կատարել և ծառայել կայսրության ամրապնդմանը: Այդ գործը, ինչպես նշում են արաբ հետազոտողները, կարող էր կատարել միայն մեկ այլ ազգային զգացում կամ ավելի արդյունավետ նացիոնալիզմ, որը հիմնված լիներ լեզվի կամ ռասայական ընդհանրության, իսկ ավելի լավ՝ թե՛ մեկի, և թե՛ մյուսի վրա: Այդպես, ինչպես նշում է Ա. Հաուրանին, «Օսմանյան նացիոնալիզմն աստիճանաբար վերածվեց թուրքական նացիոնալիզմի»: Երիտթուրքերի կարծիքով «կայսրության հիմքը պետք է լիներ ազգային միասնությունը, որը կիսում էին բոլոր նրանք, ովքեր խոսում էին թուրքերեն կամ ունեին թուրքական ծագում»: Այստեղից մինչև ոչ թուրք ժողովուրդներին բռնի թուրքացումը մի քայլ էր միայն: Եվ երիտթուրքերի քաղաքականությունը բացահայտորեն դրան էր նպատակաուղղված: Դա ավելի սրեց հարաբերությունները մի կողմից թուրքերի, իսկ մյուս կողմից կայսրության ոչ թուրք ժողովուրդների միջև:

Արաբ պատմաբանները միակարծիք են այն հարցում, որ ստեղծված իրադրության համար մեղքը բացառապես ընկնում է երիտթուրքերի քաղաքականության վրա: Էմիլ Թուման արաբների, հայերի և մյուս ժողովուրդների «Իթիհադ վե թերակի» կուսակցությունից և նրա գործողություններին աջակցություն ցույց տալուց հեռանալու պատճառը «համարում է «Իթիհադ վե թերակիի» ղեկավարների շովինիստական քաղաքականությունը և ոչ թուրք ազգությունների թուրքացման նրանց կուրսը»:

Բռնի թուրքացման և թուրքական շովինիզմի քաղաքականության վրա ուշադրություն է հրավիրում սիրիացի պատմաբան Օսման աթ–Թուրքը: Նրա կարծիքով երիտթուրքերն իրենց նախկինում հռչակած սկզբունքներից այն աստիճան հեռացան, որ «նույնիսկ ոչ թուրք իսլամական ժողովուրդներին՝ արաբներին, պարսիկներին, եգիպտացիներին և հնդիկներին (նկատի ունի մուսուլմանադավաններին — Ն. Հ.), նրանք վերաբերվում էին որպես թուրքերին ոչ հավասարների»:

Բռնի թուրքացման մասին է հավաստում նաև Լիբանանյան հանրագիտարանը, որտեղ գրված է, որ «Իթիհադ վե թերակի» կուսակցության «գլխավոր քաղաքականությունն ամբողջ Օսմանյան կայսրության թուրքացումն էր»:

Այդ հարցը բավականին հանգամանորեն է քննարկում Զիհադ Սալիհը «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» իր հետաքրքիր աշխատության մեջ: Նա երիտթուրքերի ազգային քաղաքականության հիմքը համարում է «մոլեռանդ նացիոնալիզմը՝ խարսխված ենթակայության և բռնի թուրքացման սկզբունքների վրա»:

Համանման տեսակետներ են արտահայտում նաև Զեյն Զեյնը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Ալբերտ Հաուրանին, Մուսա Պրենսը, Մրվան ալ–Մուդավարը և այլ արաբ հեղինակներ:

Այսպիսով՝ օսմանյան կայսրության ժողովուրդների՝ արաբների, հայերի, հույների, ասորիների, քրդերի, բալկանյան և այլ ժողովուրդների բռնի թուրքացումը հանդիսանում էր երիտթուրքերի ազգային քաղաքականության հիմնաքարը և վերջնական նպատակը:

Բռնի թուրքացման քաղաքականությանը նպատակը թուրքական ռասայի տիրապետության ապահովումն էր Օսմանյան կայսրությունում և նրանում բնակվող բոլոր ժողովուրդների ու ազգությունների վրա:

Երիտթուրքերի ազգային քաղաքականության մյուս ոչ պակաս կարևոր ասպեկտը պանթուրանիզմը կամ պանթուրքիզմն էր: Եթե թուրքացման քաղաքականությունը նպատակաուղղված էր օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ծուլմանը, ապա պանթուրքիզմը հասցեագրված էր կայսրության սահմաններից դուրս գտնվող թուրքախոս ժողովուրդներին:

Երիտթուրքերի առաջնորդները իշխանության գլուխ անցնելով, փայփայում էին պանթուրանիզմի ցնորամիտ գաղափարներ, ձգտելով իրենց տիրապետության ներքո համախմբել թուրքական բոլոր ժողովուրդներին:

Դժվար չէ տեսնել այն կապը, որ գոյություն ուներ երիտթուրքերի ներքին քաղաքականության՝ կայսրության բոլոր ժողովուրդների թուրքացման և ազգային հարցում երիտթուրքերի արտաքին քաղաքականության մեջ: Միանգամայն իրավացի է Դ. Երեմեանը, երբ նա «Թուրքերի ծագումը» գրքում ընդգծում է, որ «Կայսրության ներսում պանթուրքիզմը կոչ էր անում ֆիզիկապես ոչնչացնել կամ վերջնականապես թուրքացնել ազգային փոքրամասնություններին: Պանթուրքիստական գա-

ղափարախոսությունը զարգանում էր երիտասարդ թուրքական նացիոնալիզմի բազայի վրա, որը սկզբում ընդունել էր «թյուրքչյուլյուք» կամ «թյուրքիզմ» անունը»: Դրանք միևնույն մեդալի երկու կողմերն էին:

Արաբներին անհանգստացնում էր երիտթուրքերի ոչ միայն թուրքացման, այլև պանթուրքիզմի քաղաքականությունը, որը շատ հստակորեն արտացոլված է արաբական պատմագրության մեջ: «Երիտթուրքերը,— գրում է Մրվան ալ–Մուդավարը,— սկսեցին իրականացնել թուրանիզմի քաղաքականությունը («աս–սիյասա աթ–թուրանիյա») և քարոզում էին ի նպաստ դրա, ձգտում էին ստեղծել նոր կայսրություն՝ կազմված թուրքական ժողովուրդներից, որոնք բնակվում են Կովկասյան լեռներից մինչև Թուրքեստան»: Եվ այդ կապակցությամբ արաբական հեղինակը մի շատ կարևոր դիտողություն է անում. «Նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուրդների՝ ինչպես արաբները և հայերը»: Այստեղից բխում է տրամաբանական հետևություն այն մասին, որ պանթուրքիզմի ճանապարհին ընկած էին արաբական և հայկական արգելքները, որոնք անհրաժեշտ էին վերացնել, հակառակ պարագայում անհնար էր իրականացնել աս–սիյասա աթ–թուրանիյա:

Կարծում ենք հետաքրքիր է նաև մեկ այլ արաբ պատմաբանի՝ Ալբերտ Հաուրանիի տեսակետը, որը ավել շուտ ընդհանուր եզրահանգման բնույթ է կրում: Նա մեջբերում է երիտասարդ թուրքերի այն կարծիքը, որ «կայսրությունը (նոր թուրանական — Ն. Հ.) պիտի լինի բոլոր թուրքերի տունը»: Իսկ այդ տան մեջ, բնականաբար, տեղ չէր կարող լիներ օտարների, այս դեպքում՝ արաբների, հայերի և այլ ժողովուրդների համար:

Հենց այդ հանգամանքները նաև նկատի ունի մեր կողմից արդեն հիշատակված Ջիհադ Սալիհը, երբ նա տալիս է պանթուրանիզմի իր սահմանումը՝ «Թուրանիզմը ռասայական, շովինիստական, ֆաշիստական շարժում է»:

Երիտթուրքերի պանթուրանական քաղաքականության ասպեկտին անդրադարձած հեղինակները, բացի արաբների և հայերի գործոններից, անդրադարձել են նաև Ռուսաստանի հարցին, իրավացիորեն շեշտելով, որ պանթուրանիզմն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ, քանի որ Կովկասի լեռնային շրջաններից մինչև Թուրքեստան ընկած տարածքները, որոնք պետք է կազմին ծրագրվող նոր թուրանական կայսրության միջուկը, Ռուսական կայսրության մասն էին կազմում:

Երիտթուրքերի պանթուրքիզմի քաղաքականության մասին պատկերացումները թերի կլինեին, եթե չնշեինք նաև պանիսլամիզմի պարագան, որոնք սերտորեն շաղկապված էին միմյանց հետ: Այդ հարցին անդրադարձել են ոչ միայն արաբագետները, այլև թուրքագետները: Ընդ որում, նրանք այդ հարցը դիտարկում են արաբների հետ նրա առնչության համատեքստում: Դրա անենացայտուն օրինակը տվել է Դ. Երեմեևը: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Երիտասարդ թուրքերի պանթուրքիզմը սերտորեն միահյուսվում էր պանիսլամիզմի հետ: Եվ դա հասկանալի է, քանի որ, նախ, պանթուրքիստական պրոպագանդայի մեջ երիտասարդ թուրքերն իրենց նպատակների համար օգտագործում էին նաև թուրք մուսուլմանների կրոնական զգացումները, իսկ երկրորդ, օսմանական սուլթան–խալիֆների նման, նրանք փորձում էին հենվել պանիսլամիզմի վրա՝ անկախության համար արաբների ազգային շարժման դեմ մղված պայքարում»:

Այսպիսով՝ արաբներն ակամայից հայտնվեցին թուրքական ծագում ունեցող երկու թշնամական ուժերի արանքում: Այդ ուժերից մեկը թուրքիզմն էր, արաբների (ինչպես նաև մյուս ոչ թուրք ժողովուրդների) բռնի թուրքացումը, որի վերջնական արդյունքը պետք է լիներ արաբական էթնոսի վերացումը, անգամ ֆիզիկապես ոչնչացնելու ուղիով: Մյուս ուժը՝ պանթուքիզմն էր, որի իրագործման ճանապարհին արաբ ժողովուրդը կանգնած էր որպես լուրջ արգելք, այդ պատճառով էլ նա այս տեսանկյունից ևս ենթակա էր վերացման:

Արաբները դրվեցին ստեղծված անելանելի թվացող իրավիճակից ելք որոնելու պատմական անհրաժեշտության առջև:

2. Արաբները ապակենտրոնացման և անկախության երկընտրանքի առջև

Երիտթուրքերի իշխանության գլուխ գալուց մեկ տարի էլ չէր անցել, երբ նրանք մահացու հարված հասցրեցին թուրքերի հետ եղբայրանալու արաբական որոշ շրջանների սպասումներին և արաբ–օսմանյան եղբայրության գաղափարին: Մեկ տարի էլ չէր անցել այն օրվանից, երբ նրանք հրապարակավ հրաժարվեցին ազատության և հավասարության իրենց իսկ հռչակած կարգախոսներից ու անցան արաբների ու կայսրության մյուս ժողովուրդների բռնի թուրքացման քաղաքականությանը՝

նրանց ծուլելու, իսկ դրա չհաջողվելու դեպքում՝ ֆիզիկապես ոչնչացնելու ուղիով:

Հասկանալի է, որ արաբները չէին կարող նստել ձեռքերը ծալած և սպասել, թե երիտթուրքերն ինչպես են իրագործելու իրենց ռասայական քաղաքականությունը, որի արդյունքում անպայման արաբների վերացումն էր լինելու:

Արաբական ազգային քաղաքական շրջանակներում եռանդուն քննարկում էր գնում այն հարցի շուրջը, թե նրանք ինչպիսի քաղաքականություն պետք է ընտրեին, որն ապահովեր արաբների՝ որպես էթնոսի, պահպանումը և զարգացումը: Ի վերջո, նրանք բաժանվեցին երկու գլխավոր հոսանքների:

Առաջին հոսանքը կազմեցին նրանք, որոնք, չնայած երիտթուրքերի պանթուրքիստական քաղաքականությանը, դեռևս պատրաստ չէին վերջականապես խզելու թուրքերի հետ և կանգնելու նրանց դեմ բացահայտ պայքարի դիրքերում: Դրանք այն ուժերն էին, որոնք բազմաթիվ թելերով կապված էին թուրքերի, թուրքական իշխանությունների և Օսմանյան կայսրության հետ:

Դրանց մեջ մտնում էին ֆեոդալ–կալվածատերերի որոշ շրջաններ, որոնք իրենց բարեկեցությունը, տեղերում իրենց իշխանությունն ու հեղինակությունը պահելը կապում էին Օսմանյան կայսրության պահպանման հետ

Այդ խմբում բավական ազդեցիկ ուժ էր ներկայացնում մուսուլմանական կղերը, որը մտավախություն ուներ, որ անջատումը կայսրությունից կամ կայսրության փլուզումը կհարվածեր իսլամին ու նրա հեղինակությանը, և կթուլացներ նրա դիրքերը թե՛ երկրի ներսում, և թե՛ երկրից դուրս:

Չինվորականների մեջ նույնպես կային զգալի թվով մարդիկ, որոնք երիտթուրքերի հետ ծառայել էին միևնույն բանակում, մասնակցել «Իթիհադ վե թերակի» կազմակերպության ստեղծմանը և իրենց ծառայողական ապագան կապում էին կայսրության և նրա ռազմական կառույցի պահպանման հետ:

Այս հոսանքի շարքերը համալրում էին արաբ պաշտոնյաները, որոնք պաշտոնավարում էին ինչպես արաբական մարզերում՝ վիլայաթներում, սանջաքներում, կազաներում և նահիյաներում, այնպես էլ կենտրոնական ապարատում, մշտապես գտնվելով մայրաքաղաքում,

շփվելով բարձրաստիճան իշխանավորների հետ, ստանալով լավ վարձատրություն և վայելելով իշխանություն ունենալու բերկրանքը:

Այդ հոսանքն ուներ իր շարքային անդամների բավականին ստվար ժողովրդական զանգվածը, հասարակ մարդկանց, որոնք հեռու էին քաղաքականությունից, գլուխ չէին հանում քաղաքական, սոցիալ–տնտեսական և ազգային բարդ խնդիրներից, բայց շատ հաճախ կուրորեն հետևում էին իրենց շեյխերին, մոլլաներին, ազդեցիկ մարդկանց ու պաշտոնյաներին և կատարում նրանց ասածը:

Ի հավելումն, նշենք նաև, որ այս հոսանքին պատկանում էր նաև լիբերալ մտավորականության մի ոչ մեծ շերտ: Դրանք բարենորոգումների դիրքերում կանգնած գործիչներ էին, որոնք խորշում էին արմատական, հեղափոխական գործողություններից՝ նախապատվությունը տալով էվոլյուցիոն զարգացմանը:

Այս հոսանքի մեջ մտնող բոլոր խավերը՝ քաղաքական գործիչները, իսլամական ռեֆորմատորները, տեղական երևելիները, անգամ մեջլիսի առանձին դեպուտատներ, միտում էին իրենց ընդդիմադիր կեցվածքը դրսևորել սահմանադրական համակարգի շրջանակներում՝ համաձայնության գալով օսմանյան լիբերալ գործիչների հետ, որոնք կանգնած էին ապակենտրոնացման սկզբունքներով Օսմանյան կայսրության վերակառուցման դիրքերում: Ինչպես արդեն նշել ենք, օսմանյան իրականության մեջ այդ հոսանքի հեղինակավոր առաջնորդը իշխան Սաբահեդդինն էր:

Արաբական իրականության մեջ ծնավորված այս հոսանքը, անշուշտ, դեմ էր արաբների և կայսրության մյուս ժողովուրդների բռնի թուրքացման երիտթուրքական քաղաքականությանը: Այդ հարցը գլխավոր ջրբաժան գիծն էր նրա և երիտթուրքական պարագլուխների և այդպես կոչված «գաղափարախոսների» միջև: Նրանք, ի հակադրություն երիտթուրքերի, առաջադրում էին Օսմանյան կայսրության ապակենտրոնացման քաղաքականությունը, դա համարելով հուսալի պատվար՝ ընդդեմ բռնի թուրքացման, արաբ էթնոսի պահպանման հուսալի միջոց, որը նաև զարգացման համապատասխան պայմաններ կստեղծեր արաբների համար:

Այս հոսանքն ունեցավ իր քաղաքական կազմակերպությունը՝ կուսակցությունը, որը ձևավորվեց 1912 թ. դեկտեմբերին Կահիրեում: Նա կոչվում էր՝ «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակ-

ցություն»՝ «Հիզբ ալ–լամարքազիա ալ–իդարիյա ալ–օսմանի», որը հաճախ, կրճատ ձևով, կոչվում է Լամարքազիա:

Նախքան այդ կուսակցության ծրագրին ու գործունեությանն անդրադառնալը, հարկ է համառոտակի լուսաբանել «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության արգելվելուց հետո մինչև Լամարքազիայի հանդես գալը հրապարակի վրա հայտնված արաբական մի քանի, առավել կարևոր կազմակերպությունների ծրագրային պահանջները և դիրքորոշումը՝ ազգային–քաղաքական հարցերի նկատմամբ:

Դրանց մեջ ուշադրության է արժանի «Գրական ակումբը», որը հիմնվեց 1909 թ. ամռանը Ստամբուլում՝ «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը իշխանությունների կողմից արգելվելուց հետո: Նրա նախաձեռնողներն եղան պաշտոնյաները, պառլամենտի դեպուտատները, մտավորականները և ուսանողները: Նա ծառայում էր որպես հանդիպման վայր Ստամբուլում բնակվող և արաբական մարզերից մայրաքաղաք ժամանող արաբների համար, որոնք հանդիպում, մտքերի փոխանակություն էին կատարում, իրենց տեսակետները հայտնում արաբներին հուզող տարբերի հարցերի շուրջը: Նրա պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նա հրաժեշտ տվեց իր նախորդի քաղաքական մոլորությանը՝ օսմանների հետ արաբների եղբայրության գաղափարին, և կանգնեց օսմանյան բռնություններին դիմակայելու դիրքերում, որը, սակայն, քողարկված ձևով էր արտահայտվում:

Մի քանի հազար անդամներ հաշվող և իր բաժանմունքները Սիրիայում և Իրաքում ունեցող այդ կազմակերպությունը, որը պաշտոնապես գործում էր լեգալ կերպով և այդ պատճառով էլ ստիպված էր զգույշ լինել, ուներ նաև իր գաղտնի կազմակերպությունը: Նրա ծոցից դուրս եկավ ալ–Կահիքանիա կազմակերպությունը, որի միջուկը կազմում էին թուրքական բանակի արաբ զինվորականները: Նա ստեղծվեց 1909 թ. վերջերին: Նրա անդամներն ընտրվում էին մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո, որոնց հայրենասիրությունը կասկած չէր հարուցում, որոնց կարելի էր անվերապահորեն վստահել, հատկապես գաղտնիք պահելու հարցում: Նա բաժանմունքներ ուներ, բացի Ստամբուլից, նաև հինգ կենտրոններում: Նրա ղեկավարն էր եգիպտացի Ազիզ ալ–Մըսրին, որը թուրքական բանակի սպա էր:

Ալ–Կահիքանիան ազգային և քաղաքական հարցերը Օսմանյան կայսրությունում լուծելու համար առաջարկեց բավականին մի ինքնատիպ ծրագիր, որը ոչ մի կազմակերպության կողմից չէր արտահայտվել

մինչ այդ և չի էլ արտահայտվել դրանից հետո: Դա Օսմանյան կայսրությունը Արաբ–օսմանյան դուալիստական կայսրության կամ պետության վերակազմավորելու պահանջն էր: Այս ծրագիրը ներկայացնելիս, նրա հեղինակներն առաջնորդվել էին Ավստրո–Հունգարական դուալիստական կայսրության նախադեպով: Դա նախկին Ավստրիական կայսրությունն էր, որը հունգար ժողովրդի երկարատև պայքարի հետևանքով XIX դարում վերածվեց Ավստրո–Հունգարական դուալիստական կայսրության: Ալ–Կահիրանիայի ծրագրի համապատասխան՝ ընդհանուր Օսմանյան կայսրության սահմաններում արաբական երկրները պետք է կազմեին թագավորություն՝ որպես կայսրության հավասարազոր մի անդամը: Սուլթանը պահպանում էր իր դիրքերը և համարվում էր Արաբ–օսմանյան կայսրության սուլթանը՝ միաժամանակ համարվելով արաբական թագավորության թագավորը: Նախատեսվում էր, որ արաբական թագավորությունն ունենալու էր իր կառավարությունն ու պառլամենտը, իսկ արաբերեն լեզուն համարվելու էր թագավորության պաշտոնական լեզուն:

Այս ծրագիրը կարևոր քայլ էր «Արաբ–օսմանյան եղբայրություն» կազմակերպության ծրագրային պահանջներից հեռանալու, անգամ նրանց հակադրվելու ուղղությամբ: Ուստի՝ այդ երկու կազմակերպությունները չպետք է շփոթել միմյանց հետ:

Նա միաժամանակ մի նոր աստիճան էր արաբական ազգային–քաղաքական մտքի զարգացման ճանապարհին:

Բայց, այդուհանդերձ, այդ կարճատև կյանք ունեցած կազմակերպության նշանակությունը չպետք է գերագնահատել, քանի որ նրան չհաջողվեց գործնական քայլեր կատարել առաջին հայացքից հրապուրիչ թվացող արաբ–օսմանյան դուալիստական պետություն ստեղծելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ ալ–Կահիրանիայի կողմից ներկայացված տարբերակը չէր կարող ընդունելի լինել թուրքական կողմի համար: Չպետք է մոռանալ, որ ալ–Կահիրանիան իր ծրագիրն առաջադրեց մի այնպիսի ժամանակ, երբ օսմանյան երիտթուրքական կառավարությունն արդեն կանգնել էր կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և արաբների, թուրքացման ուղու վրա, և ոչ միայն կանգնել, այլև գործնական քայլեր էր կատարում իր այդ ռասսայական քաղաքականությունն իրագործելու համար:

Ալ–Կահքանիան իր գործունեությունը դադարեցրեց, երբ հայտնի դարձավ, որ նրա անդամներից մեկը դավաճանել է:

Լամարքազիային նախորդած արաբական ազգային–քաղաքական կազմակերպությունների մեջ ուշադրության է արժանի նաև 1911 թ. Փարիզում հիմնված «Երիտասարդ արաբների ընկերությունը»: Ընկերության հիմնադիրներն էին յոթ երիտասարդ արաբներ: Բարեբախտաբար հայտնի են նրանց անունները, որոնք արաբական տարբեր երկրներից էին: Դրանք էին՝ Աունի Աբդ ալ–Հադին՝ Ջեհինից, Ջամիլ Մարդամը՝ Դամասկոսից, Մուհամմադ ալ–Միհմիսանին՝ Բեյրութից, Ռուստամ Հայդարը՝ Բաալբեկից, Թոֆիկ ալ–Նաթուրը՝ Բեյրութից, Ռաֆիկ Թամիմին՝ Նաբլուսից և Աբդ ալ–Ղանիմ ալ–Ուրայիսին՝ Բեյրութից: Նրանցից ոմանք, ինչպես Ջամիլ Մարդամը և Ռուստամ Հայդարը, հետագայում դարձան արաբական ազգային–ազատագրական շարժման ականավոր դեմքերից, իսկ Ջամիլ Մարդամը՝ անկախ Սիրիայի վարչապետ:

Ինչպես կազմակերպության անունն է հուշում, դժվար է անալոգիա չանցկացնել երիտթուրքերի հետ: Նրանք ձգտում էին արաբների ազգային–քաղաքական կյանքում նույն դերակատարումն ունենալ, ինչ որ երիտթուրքերը՝ թուրքերի կյանքում: Բայց խոսքը քաղաքականության կրկնության կամ նույնության մասին չէ, քանի որ դա անհնար էր: Երիտթուրքերը տիրապետող թուրք ազգի ներկայացուցիչներն էին, որ դարձան նրա առաջնորդները և կայսրությունը փրկելու համար կանգնեցին ոչ թուրք ժողովուրդներին իրենց ազգային ինքնությունից զրկելու, անգամ նրանց այս կամ այն ձևով, ինչպես արդեն նշել ենք, վերացնելու ճանապարհին:

Երիտարաբների նմանությունը երիտթուրքերին կայանում է միայն մի բանում՝ նրանք ցանկանում էին դառնալ արաբ ժողովրդի ազդեցիկ և հեղինակավոր առաջնորդը, ինչպես երիտթուրքերը դարձան թուրքերի ղեկավարը, և նրան ազատել թուրքական ճնշումից, առանց մտադրություն և հավակնություն ունենալու ոտնահարել մյուս ժողովուրդների պատիվն ու իրավունքները: Նրանք ոչ թե ավերիչ ու կործանարար ուժ էին, ինչպես երիտթուրքերը, այլ ուզում էին լինել փրկիչ ու կառուցողական ուժ արաբների համար: Այս սկզբունքային տարբերությունը հարկ է միշտ նկատի ունենալ:

Կազմակերպության ղեկավարությունը 1913 թ. Փարիզից տեղափոխվեց Բեյրութ, ապա Դամասկոս:

Իսկ ինչ վերաբերում է երիտարաբների ծրագրային պահանջներին, ապա նրանք չձևավորվեցին միանգամից: Նրա ղեկավարները հավանաբար եղել են բավականին իրատես և գործնական մարդիկ, որոնք կազմակերպության ծրագրային պահանջները ձևակերպել են աստիճանաբար, հաշվի առնելով իրադրությունը, արաբների քաղաքական տրամադրությունները, պայքարի պատրաստ լինելու նրանց ներուժն ու մակարդակը և այլ հանգամանքներ:

Երիտարաբների ծրագրային պահանջներն անցել են երեք փուլ:

Առաջին փուլում ընդհանուր գծերով խոսվել է արաբների ազգային զարթոնքի մասին: Հիմնական խնդիրն այս փուլում համարվել է խորացնել այդ զարթոնքը և նրա ոլորտի մեջ ներգրավել հնարավորին լայն զանգվածներ: Այլ կերպ ասած, շեշտը դրվում էր զանգվածային շարժման համար համապատասխան հող պատրաստելու վրա, որն ամեն մի շարժման հաջողության նախապայմանն է:

Երկրորդ փուլում ծրագիրն ընդունում է ավելի կոնկրետ բովանդակություն՝ առաջադրվում է օսմանյան կայսրության ապակենտրոնացման պահանջը և արաբների ազգային–քաղաքական հիմնախնդիրների լուծումն այդ շրջանակներում:

Ապակենտրոնացման իր պահանջով «Երիտարաբական ընկերությունը» մոտենում է մի փոքր ավելի ուշ կազմակերպված Լամարքազիային:

Երրորդ փուլում «Երիտարաբական ընկերությունը» կանգնում է ավելի արմատական դիրքերում և իր գլխավոր ծրագրային պահանջը դարձնում արաբների անկախության նվաճումը: Դրանով նա մի քայլով առաջ անցավ Վարչական ապակենտրոնացման՝ Լամարքազիա կուսակցությունից:

Հիմնականում այս կազմակերպություններն էին գործում արաբական իրականության մեջ1909–1912 թթ., մինչև Լամարքազիայի ասպարեզ իջնելը:

Լամարքազիան ստեղծվեց սիրիացիների նախաձեռնությամբ, որոնց այնուհետև միացան լիբանանցիները, իրաքցիները, պաղեստինցիները և եգիպտացիները: Նրա ղեկավարն էր Ռաֆիկ ալ–Ազըմը, որը բավականին հարուստ կենսագրություն ուներ: Նա համագործակցել էր նահդայական շարժման ականավոր գործիչ Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբիի հետ և իր վրա կրում էր նրա հայացքների ազդեցությունը, այդ թվում և արաբների ազգային–պետական կյանքի կառուցման հարցում:

Նա արաբական մտավորականների շրջանում ճանաչված հրապարակախոս ու փիլիսոփա էր: Նրա տեղակալն էր նույնպես մեծ ճանաչում ունեցող մտավորական Աբդ Համիդ ազ–Զահրավին: Հոմսում ծնված այդ լուսավոր հայացքների տեր արաբը, որը իր հայրենի քաղաքում հրատարակել էր «ալ–Մինբար», իսկ Ստամբուլում «ալ–Հադարա», թերթերը, հետագայում դարձավ արաբական ազգային–ազատագրական շարժման ակնավոր ղեկավարներից մեկը և իր մի շարք ընկերների հետ միասին 1916 թ. Դամասկոսում կախաղան հանվեց երիտթուրքերի առաջնորդներից մեկի՝ Ջեմալ փաշայի հրամանով: Կուսակցությունն ուներ իր մասնաճյուղերը արաբական երկրների մեծ մասում՝ Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Պաղեստինի տարբեր քաղաքներում ու նահանգներում: Նրա շարքերում հաշվվում էր 10 հազար անդամ, որն իր ժամանակի համար մեծ թիվ էր, հաշվի առնելով արևելյան երկրների յուրահատուկ պայմանները և սովորույթները:

Կառուցվածքային առումով նույնպես Լամարքազիան շահեկանորեն տարբերվում էր արաբական իրականության մեջ գործող այլ կազմակերպություններից, կոմիտեներից և ընկերություններից: Նրա կառուցվածքն աչքի էր ընկնում ղեկավար մարմինների ֆունկցիաների հստակ սահմանազատումով և խնդիրների հստակ բաժանումով: Նրա գլխավոր մարմինը կոմիտեն էր, որի անդամներն էին 20 հոգի և որի նստավայրը Եգիպտոսն էր: Նա պատասխանատու էր կուսակցության քաղաքականության, հիմնադրույթների և ծրագրերի մշակման համար: Ջ. Անտոնիուսն այդ կոմիտեն համարում էր «զորավոր»: Մյուս կարևոր օրգանը Գործադիր կոմիտեն էր՝ կազմված 6 անդամներից: Նա պատասխանատու էր Կենտրոնական կոմիտեի որոշումների կատարման համար և ղեկավարում էր կուսակցության առօրյա գործունեությունը:

Այժմ անդրադառնանք այդ կազմակերպության ծրագրային հիմնական պահանջներին, որոնք դարձան արաբական մի ամբողջ հոսանքի գործունեության գլխավոր ուղեցույցը:

Լամարքազիան՝ ըստ պաշտոնական հայտարարությունների, հետապնդում էր ոչ թե քաղաքական, այլ վարչական նպատակներ, թեև այն խնդիրները, որ նա առաջադրում էր, ըստ էության նույնքան քաղաքական էին, որքան և վարչական: Նրա պահանջների մեջ կենտրոնական տեղ էին գրավում կայսրության արաբական վիլայաթներին հատուկ նահանգային ինքնավարությունների կարգավիճակ տալու պահանջը: Որպեսզի դա ծնական բնույթ չկրեր, ապակենտրոնացման կողմ-

նակիցները գտնում էին, որ այդ ինքնավարությունները պետք է ունենային իրենց կառավարությունները և նահանգային ժողովները՝ օժտված լայն իրավունքներով՝ այդ թվում օտարերկրյա խորհրդատուներ նշանակել տվյալ ինքնավար նահանգում ոստիկանությունը, ժանդարմերիան, արդարադատությունը և ֆինանսները վերակառուցելու համար: Տեղական մարմիններում պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը պետք է արաբներ լինեին:

Այս հարցի հետ ուղղակի առնչություն ուներ կուսակցության պահանջն առ այն, որ արաբներն ավելի լայն ներկայացուցչություն ունենային օսմանյան կայսրության կառավարությունում, սենատում և մեջլիսում, և ապահովվեր նրանց գործունյա մասնակցությունը երկրի կառավարմանը:

Լամարքազիայի ծրագրային պահանջների մեջ իր պատվավոր տեղն ուներ արաբերեն լեզվի հարցը: Նա պետք է համարվեր պաշտոնական լեզու արաբական ինքնավար նահանգներում, գործավարությունը վարվեր այդ լեզվով: Արաբերեն լեզվով պետք է իրականացվեր կրթությունը դպրոցներում:

Էական էին նաև մի շարք այլ պահանջներ, ինչպես խաղաղ տարիներին արաբ զինվորները տեղերում ծառայելու, եկամուտների մի մասը տեղական մարմիններին հատկացնելու և նման այլ պահանջներ:

Ահա այսպիսին էր Օսմանյան կայսրությունը ապակենտրոնացման (լամարքազիայի) սկզբունքի վրա վերակառուցելու Ապակենտրոնացման կուսակցության ծրագիրը: Դա կարևոր փաստաթուղթ է, որն արտահայտում էր արաբական հասարակության այն խավերի համոզմունքները, որ արաբների ազգային ինքնությունը և ֆիզիկական գոյությունը կարելի էր ապահովել Օսմանյան կայսրությունը պահպանելով և նրա սահմաններում՝ բայց վերակազմավորված ապակենտրոնացման սկզբունքների հիման վրա:

Լամարքազիան գործում էր լեգալ ձևով և եռանդուն աշխատանք ծավալեց իր ծրագրային պահանջները արաբական զանգվածներին հասցնելու և նրանց համակրանքն ու աջակցությունը նվաճելու ուղղությամբ: Եվ պետք նշել, որ նա ունեցավ զգալի հաջողություններ: Մարդիկ հազարներով մասնակցում էին նրա կազմակերպած հավաքներին, որոնք զանգվածային բնույթ էին կրում: Իր դերակատարումն ունեցավ կուսակցության կողմից ժողովրդին մատչելի լեզվով բաց թողնված

թռուցիկները, աշխատանքների դեմոկրատական ոճը, մարդկանց հետ շփվելու և հաղորդվելու կարողությունը և այլն:

Լամարքազիան չանջրպետվեց արաբական այլ ազգային կազմակերպություններից և ընկերություններից: Նրա ղեկավարությունը լավ էր հասկանում արաբների, նրանց համակիր կազմակերպությունների համագործակցության և միասնական ճակատով հանդես գալու կարևորությունը: Նա հատկապես մոտիկ կապեր էր հաստատել այն կազմակերպությունների հետ, որոնց պահանջներում նույնպես առկա էին վարչական վերափոխումների պահանջը կամ դրականորեն էին վերաբերվում նման պահանջներին: Նա, օրինակ, նման հարաբերություններ էր հաստատել մեր կողմից արդեն հիշատակված «Գրական ակումբի», Սիրիայում, Իրաքում և Լիբանանում կազմավորված բարեփոխումների ընկերությունների հետ, որոնք՝ ի դեպ, ձևավորվել էին Լամարքազիայի ծրագրային պահանջների և քարոզչական գործունեության ազդեցության տակ:

Լամարքազիան կապեր հաստատեց և համագործակցեց նաև հայերի հետ, որոնք հայկական հարցի լուծումը հնարավոր էին համարում կայսրության ապակենտրոնացման սկզբունքների հիման վրա: Այդ կապակցությամբ արաբ պատմաբան Մուսա Պրենսը նշում է, որ հայ անվանի գրող և ազգային գործիչ, թուրքական պառլամենտի անդամ Գրիգոր Զոհրապը և հայկական կուսակցությունների առաջնորդները «երազում էին միասնական պետություն ստեղծելու մասին, որտեղ ազգային տարբերությունները կփոխարինվեին միայն վարչական ինքնավարությամբ»: Արաբ հեղինակը կատարում է մի շատ հետաքրքիր դիտարկում: Նա նշում է, որ հայերն այդ պահանջը ներկայացնում էին այն ժամանակ, երբ Թուրքիան արդեն կորցրել էր Հունաստանը, Սերբիան և Բուլղարիան, և այդ առումով պահը շատ հարմար էր առաջադրելու Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրությունից անջատելու պահանջը: Բայց նրանք չդիմեցին այդ քայլին: «Հայերը,— գրում է Մուսա Պրենսը,— ուզում էին զարգացնել իրենց մտավոր կյանքը և տնտեսությունը»:

Եվ, վերջապես, ինչպես վկայում են աղբյուրները, Լամարքազիան առաջին օրվանից անմիջական կապերի մեջ էր՝ Ալբերտ Հաուրանիի բնորոշմամբ, «թուրք լիբերալների հետ», որոնց գլուխ կանգնած էր իշխան Սաբահէդդինը: Եվ դա պատահականություն չէր, քանի որ նա նույնպես հանդես էր գալիս հանուն Օսմանյան կայսրության ապա-

կենտրոնացման և այդ հարցում լուրջ տարաձայնություններ ուներ երիտթուրքերի ռասիաստական և շովինիստական թևի հետ:

Լամարքազիան արդեն մեծ հեղինակություն էր նվաճել արաբական ազգային կազմակերպությունների և արաբ զանգվածների մեջ: Դրա արտահայտություններից մեկն էլ եղավ այն, որ նա իր վրա վերցրեց Արաբական առաջին կոնգրեսի գումարման պատասխանատվությունը: Հատկանշական է, որ մի շարք կազմակերպություններ նրան էին դիմել կոնգրես հրավիրելու առաջարկությամբ:

Քննարկման առարկա դարձավ կոնգրեսի գումարման վայրը՝ Շվեյցարիայում, թե Ֆրանսիայում գումարել: Ընտրությունն ընկավ Ֆրանսիայի վրա:

Կոնգրեսի նպատակն էր միավորել արաբական տարբեր ազգային կազմակերպությունների ջանքերը, մշակել ընդհանուր, բոլորի համար ընդունելի ծրագիր, ռազմավարություն ու մարտավարություն:

Կոնգրեսի աշխատանքները սկսվեցին 1913 թ. հունիսի 18–ին՝ Փարիզում, Սեն–Ժերմեն բուլվարում գտնվող մի դահլիճում, և տևեցին մինչև հունիսի 23–ը: Նրա աշխատանքներին մասնակցելու համար գրանցվել էր 25 մարդ, բայց մասնակցում էին 24–ը՝ արաբներ գլխավորապես Սիրիայից, ինչպես նաև Իրաքից, Լիբանանից, ԱՄՆ–ի արաբական համայնքից: Մեծ թիվ էին կազմում արաբ հյուրերը, մեծամասամբ արաբներ՝ մոտ 200 մարդ: Հյուրերի մեջ կար մեկ հայ: Մասնակիցների կեսը մուսուլմաններ, իսկ մյուս կեսը քրիստոնյաներ էին: Կոնգրեսի նախագահ ընտրվեց Աբդ Համիդ ազ–Զահրավին:

Կոնգրեսի աշխատանքները և հարցերի քննարկումներն անցնում էին շատ բուռն: Ելույթ ունեցողները հայտարարում էին, որ «Մենք՝ արաբներս, ուզում ենք բարեփոխել կայսրությունը, որովհետև մենք ցանկանում ենք մասնակցել ժամանակակից քաղաքակրթությանը, և մենք նայում ենք Եվրոպային՝ օգնության համար»: Չնայած այդ հանգամանքին, այնուհանդերձ, կոնգրեսը կամ չափավոր ազգայնականների համաժողովը, իր հավատարմությունն արտահայտեց Օսմանյան կայսրությանը՝ ցանկանալով այն տեսնել ուժեղ պետություն: Նրանց կողմից անջատման պահանջ չդրվեց: Բայց պատվիրակների կողմից արվեց մի վերապահում՝ նրանց հավատարմությունն Օսմանյան կայսրությանը պայմանավորված է այն հանգամանքով, թե կայսրությունն ինչպես կվերաբերվի իրենց: Նրանք միաժամանակ այն տեսակետն էին արտահայտում, որ պետության ուժը կախված է կառավարման համակարգից և

ընդգծում, որ օսմանյան կառավարությունը պետք է լինի իսկապես դեմոկրատական:

Հիմք ընդունելով այդ մոտեցումները, կոնգրեսն ընդունեց որոշում, որի հիմքում ընկած էր Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության ծրագիրը, և հաշվի էին առնված կոնգրեսի ժամանակ պատվիրակների ելույթներում արտահայտված տեսակետները: Նրանք պահանջում էին արաբների արդյունավետ մասնակցություն օսմանյան կենտրոնական կառավարությանը, արաբական յուրաքանչյուր նահանգի ինքնավարություն, արաբերեն լեզվի ընդունում՝ որպես պաշտոնական լեզու ոչ միայն կրթության բնագավառում, այլև պառլամենտում և տեղական կառավարությունում, քրիստոնյա և արաբ մուսուլմաններին դիտել որպես արաբական մեկ ամբողջություն:

Կոնգրեսի աշխատանքներին, ինչպես նշել ենք, մասնակցում էր հայերի ներկայացուցիչը, որը հայ ժողովրդի անունից լիակատար աջակցություն հայտնեց արաբներին, նրանց պայքարին և պահանջներին: Կոնգրեսը՝ իր հերթին, քննարկեց հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում և անդրադարձավ նրանց ազգային պահանջներին: Կոնգրեսի նախագահ ազ–Զահրավին՝ ելույթ ունենակով այդ հարցի կապակցությամբ, նշեց. «Մեր հայ եղբայրների դրությունը նման է մեր դրությանը: Նրանք այնպիսի մարդիկ են, ինչպես մենք ենք, նրանք մտածում են այնպես, ինչպես մենք ենք մտածում, նրանք պահանջում են՝ ինչպես մենք: Եվ մենք հաջողություն ենք ցանկանում ինչպես մեզ, այնպես էլ նրանց: Մենք միասնական ենք Օսմանյան կայսրության ապակենտրոնացման պահանջի հարցում»: Կոնգրեսի ընդունած որոշումներում հատուկ կետ էր հատկացված հայկական պահանջներին՝ 8–րդ կետը, որտեղ ասված էր «Կոնգրեսը հավանություն է տալիս օսմանյան հայերի պահանջներին, որոնք հիմնված են ապակենտրոնացման սկզբունքների վրա»: Այդ կետը քննարկվել է առանձին և ընդունվել միաձայն: Կոնգրեսը հարկ համարեց հայ ներկայացուցչի միջոցով իր ողջույնները հղել հայ ժողովրդին:

Ի հավելումն այս հիմնարար որոշումների, կոնգրեսն ընդունեց ևս երկու որոշում, որոնք ավելի շատ հրահանգի իմաստ ունեին:

Հավելյալ որոշումներից առաջինում ասված էր. «Եթե չկենսագործվեն այս որոշումները, որոնց հավանություն է տվել կոնգրեսը, ապա արաբական ռեֆորմների կոմիտեների անդամները առանց այդ կոմիտեների հատուկ համաձայնության, կհրաժարվեն Օսմանյան կայս-

ության մեջ որևէ պաշտոն գրավելուց»: Այս նախազգուշացումն իր «եթե չկենսագործվեն մասով» հասցեագրված էր Օսմանյան կառավարությանը և երիտթուրքերի ղեկավարությանը:

Հավելյալ որոշումից երկրորդը՝ որպես հրահանգ, հասցեագրված էր արաբներին, որտեղ ամրագրված էր՝ «Այս որոշումները քաղաքական ծրագրեր պետք է հանդիսանան օսմանյան արաբների համար և պառլամենտական ընտրություններում նրանք կարող են աջակցել ամեն մի թեկնածուի միայն այն դեպքում, եթե նա պարտավորվի պաշտպանել և կենսագործել այդ ծրագրերը»:

Կան տեղեկություններ այն մասին, որ երիտթուրքերի կառավարությունը, իբրև թե, համաձայնվել է արաբական կոնգրեսի վերոնշյալ բոլոր որոշումների հետ: Այդ տեսակետին է Վ. Լուցկին, որը նշում է, թե Ֆրանսիայի կառավարության ճնշման տակ Փարիզ է ժամանել «Իթիհադ վե թերակի» կուսակցության քարտուղար Միդհատ բեյը և երիտթուրքերի անունից համաձայնագիր ստորագրել Արաբական կոնգրեսի նախագահ Աբդ Համիդ ազ–Զահրավիի հետ, որով երիտթուրքերը պարտավորվում էին կատարել Արաբական առաջին կոնգրեսի բոլոր որոշումները:

Այդ նույն հարցին անդրադարձել է նաև արաբ պատմաբան Ալբերտ Հաուրանին: Բայց, նրա ներկայացրած տարբերակը շատ կետերում չի համընկնում ռուս հեղինակի ներկայացրած նյութին: Մասնավորապես, նա ընդհանրապես չի հիշատակում երիտթուրքերի վրա Ֆրանսիայի գործադրած ճնշման մասին, և ոչ էլ դա կապում է Բարձր Դռան կողմից Ֆրանսիային տրված երկաթուղային և նավահանգստային կոնցեսիաների հետ, ինչպես գրում է Վ. Լուցկին: Այդ մասին ոչ մի խոսք չկա նաև Ջ. Անտոնիուսի մոտ:

Այդ հարցում Ալբերտ Հաուրանին ավել զգույշ է: Նա, որին ավելի մատչելի են եղել արաբական փաստաթղթերը, քան որևէ այլ ոչ արաբ հեղինակի, գրում է, որ «Սկզբում թվում էր, թե կառավարությունը մտադիր էր լուրջ ընդունել այս առաջարկությունները: Նրանք մի պատվիրակ ուղարկեցին խորհրդակցելու առաջնորդների (արաբական կոնգրեսի — Ն. Հ.) հետ»: Բայց, շարունակում է նա, «շուտով պարզ դարձավ, որ այն զիջումները, որին նրանք պատրաստ էին դիմել, շատ սահմանափակ և պատրանքային էին»: Միայն այսքանը, որից հետևում է, որ երիտթուրքերի խոստումները չպետք է գերագնահատել: Մանավանդ խիստ կասկածելի է Վ. Լուցկու այն պնդումը, թե Միդհատ բեյի և

ազ–Զահրավիի միջև ստորագրված «պայմանագրով երիտթուրքերը պարտավորվեցին կատարել Առաջին արաբական կոնգրեսի բոլոր որոշումները»:

Այդ պահը, երբ երիտթուրքերն ինչ–որ խոստումներ տվեցին արաբներին, բայց կրկին դրժեցին, շրջադարձային, կարելի է նույնիսկ ճակատագրական համարել ապակենտրոնացման տեսության ու շարժման համար: Նա դատապարտվեց մահվան, քանի որ, դարձյալ խոսքը տանք Ալբերտ Հաուրանիին, «արաբներն ըմբռնեցին, որ ապակենտրոնացման մեթոդներն անօգուտ են և նրանց պահանջները շատ հեռուն չեն տանում»:

Դրանից հետո արաբները կանգնեցին իրենց հիմնախնդիրների լուծման երկրորդ տարբերակի վրա: Նրանք ընտրեցին անկախության ուղին՝ Օսմանյան կայսրությունից անջատվելու և սեփական ազգային անկախ պետությունը ստեղծելու ուղին, որը միակ ճիշտ ուղին էր: Դա էլ հանդիսացավ արաբների ազգային–քաղաքական երկրորդ հոսանքի գործունեության հիմնական ուղենիշը:

Հարկ է նշել, որ երկրորդ՝ անկախության ուղին, արաբները չընտրեցին ապակենտրոնացման քաղաքականության ձախողումից հետո միայն: Մինչ այդ էլ արաբական հասարակության ներսում կային բավականին ազդեցիկ ուժեր, որոնք չէին հավատում ապակենտրոնացմանը, ժխտում էին պայքարի այդ ուղին, և կանգնած էին անկախության համար պայքարի տեսակետի վրա: Միայն թե այժմ, երբ բոլորի համար ակնհայտ դարձավ, որ արաբներին և կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդներին բռնի թուրքացման ձգտող երիտթուրքերը երբեք չեն համաձայնվի կայսրության ապակենտրոնացմանը և տեղական ինքնավարությունների ստեղծման հետ, այդ պահից ուժեղացավ անկախության համար շարժումը, որն աստիճանաբար դարձավ տիրապետող հոսանք արաբական ազգային–քաղաքական պայքարի մեջ: Շատ արաբ գործիչներ, որոնք ապակենտրոնացման կողմնակից էին, անցան արաբների անկախության կողմնակիցների շարքերը:

Արաբական իրականության մեջ երկրորդ հոսանքը հստակ կերպով հիմնված էր արաբական երկրների անկախության նվաճման սկզբունքի վրա, որին նրանք կարող էին հասնել միայն ուժի միջոցով: Այդ մասին շատ որոշակիորեն է ասված արաբական մի փաստաթղթում՝ «Արաբները պետք է անկախություն ունենան և դա կարող են ձեռք բերել, եթե պատրաստակամ լինեն ուժ գործադրելու»:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել մի էական հանգամանքի վրա:

Ի տարբերություն առաջին հոսանքի, որն ուներ իր ամենաազդեցիկ կազմակերպությունը՝ ի դեմս Լամարքազիա կուսակցության, որն առաջնորդի դեր էր կատարում և որի շուրջը համախմբվել էին ապակենտրոնացման կողմնակից բոլոր ուժերը, երկրորդ հոսանքը չուներ նման մի ազդեցիկ կազմակերպություն՝ ընկերություն, միություն կամ կուսակցություն, որին հետևեին անկախության կողմնակից բոլոր կազմակերպությունները և ուժերը: Դա միայն նվազ կազմակերպվածությամբ չի կարելի բացատրել: Մեր կարծիքով, իր բացասական դերն էր խաղում այն հանգամանքը, որ անկախության համար մարտնչող կազմակերպությունները հարկադրված էին գործել գաղտնի, ոչ լեգալ պայմաններում: Նրանք կազմված էին համախոհների նեղ կազմից և կոնսպիրացիան ստիպում էր նրանց պահպանել գաղտնապահության կանոնները, հակառակ դեպքում՝ նրանք կձերբակալվեին և կհայտնվեին զնդաններում: Սակայն, այդ հանգամանքը հիմք չի կարող հանդիսանալ թերագնահատելու այս հոսանքի կարևորությունը, ուժն ու գործունեությունը: Նրա ներկայությունը արաբական հասարակությունում եղել է զգալի, իսկ երբեմն էլ ազդեցիկ, և մեծապես նպաստել արաբական երկրներում անակախության գաղափարների տարածմանը, նրանց կենդանի պահելուն և անկախության նվաճմանը միտված շարժման ծավալմանը:

Առկա արաբական աղբյուրները վկայում են, որ արաբների անկախության վերաբերյալ առաջին կարևոր փաստաթղթերից մեկը վերաբերում է 1911 թ.: Դա շատ կարևոր և ծանրակշիռ փաստաթուղթ է, որի տակ Օսմանյան պառլամենտի 35 արաբ անդամների ստորագրությունն է դրված: 1911 թ. Օսմանյան պառլամենտի արաբ 35 դեպուտատներ Բասրայի երևելի քաղաքական գործիչ և իրենց համախոհ Սայիդ Տալիբի միջոցով նամակ են ուղարկում Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիին, որը Մուհամմադ մարգարեի տոհմի ուղղակի շառավիղներից էր: Մեքքայի շերիֆները, ինչպես բազմիցս նշել ենք, մեծ հեղինակություն էին վայելում արաբական աշխարհում և օրինապահ մուսուլմանները հավատում էին նրանց ու բարձր գնահատում նրանց դերը: Նամակում արաբ դեպուտատները հաղորդում էին Մեքքայի շերիֆ Հուսեյնին, որ «Արաբներն արդեն պատրաստ են ոտքի ելնել քեզ հետ, եթե դու ցանկանում ես փշրել այն լուծը, որ ծանրացել է նրանց վրա»:

Նրանք տեղյակ էին պահում Հուսեյնին, որ արաբները «ճանաչում են քեզ որպես մարգարեի խալիֆա (փոխանորդ — Ն. Հ.), միակ մարդը, որը պատասխանատու է արաբական բոլոր երկրների շահերի համար»:

Սա նոր երևույթ էր արաբական իրականության մեջ: Եթե նախկինում՝ 1908 թ., արաբ դեպուտատները երիտթուրքերի համախոհներն էին և հնազանդորեն գնում էին նրանց հետևից, ապա այժմ՝ 1911 թ., սահմանադրության վերականգնումից հետո Օսմանյան կայսրության մեջլիսի առաջին ընտրություններից երկու–երեք տարի անց, արաբ դեպուտատները, արաբական քաղաքական առաջնորդների սերունդը, կանգնել էր անկախության ուղու վրա և ինքն էր առաջարկում Մեքքայի շերիֆին ապստամբվել՝ արաբներին թուրքական լծից ազատելու համար: Դա, իրոք, որ, շրջադարձային պահ էր արաբների ազգային–ազատագրական պայքարի պատմության մեջ:

Առաջ անցնելով նշենք, որ հետագայում՝ 1916 թ., Հուսեյն իբն Ալին գլխավորեց համաարաբական ապստամբությունն ընդեմ օսմանյան տիրապետության: Չի կարելի բացառել, որ թուրքական բռնակալության դեմ ապստամբություն բարձրացնելու Մեքքայի շերիֆի որոշման ընդունման մեջ իր դրական դերն է խաղացել նաև Օսմանյան պառլամենտի 35 դեպուտատների՝ նրան հասցեագրված ուղերձը:

Արաբների անկախության ցանկության և ապստամբվելու տրամադրությունների մասին կարևոր փաստաթուղթ է հանդիսանում արաբական մի գաղտնի կազմակերպության կողմից դարձյալ 1911 թ. հրապարակված մի կոչ՝ ուղղված արաբական ժողովուրդներին, որ հրատարակել է իտալացի պատմաբան Է. Ռոսին՝ արաբական հարցի վերաբերյալ արաբական փաստաթղթերի իր հրատարակած գրքում: Հաշվի առնելով այդ կոչում արծարծվող հարցերի կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում ընդարձակ մեջբերում կատարել նրանից. «Թուրքերը մեր դժբախտությունն են: Նրանք ճնշել են մեր մշակույթը և կանխել տնտեսական առաջադիմությունը: Բոլոր ազգերը, որ խզել են նրանց հետ, սկսել են եռանդուն կյանք, մինչդեռ նրանք, ովքեր մնացել են նրանց հետ, դատապարտված են աղքատության և լճացման: Ներկա կառավարությունը զոհաբերում է երկիրը օտարներին և նույնիսկ իսլամին չի հավատում: Արաբները պետք է խզեն՝ եթե պետք է՝ ուժով»: Թուրքիայի հետ կապերը խզելու և նրանից անջատվելու այս կոչն ավարտվում է հետևյալ բառերով՝ «Մուսուլման արաբնե՛ր, այս բռնակալ պետությունը (Օսմանյան կայսրությունը — Ն. Հ.) մուսուլմանական

պետություն չէ: Քրիստոնյա արաբնե՛ր և հրեանե՛ր, միացեք ձեր մուսուլման եղբայրներին»:

Արաբական գաղտնի կազմակերպությունները, որոնք կանգնած էին արաբական հարցը Թուրքիայից անջատվելու և արաբական անկախության նվաճման ուղիով լուծելու տեսակետի վրա, 1910–ական թվականներին, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, աճում էին, ինչպես սունկը անձրևից հետո:

1911 թ. ձևավորվեց «Երիտասարդ արաբների ընկերությունը», որը, որոշ ժամանակ անց կանգնեց արաբների անկախության կողմնակիցների դիրքերում: Դա ընդհատակյա կազմակերպություն էր, որը հիանալի էր տիրապետում կոնսպիրացիայի արվեստին և մեծ դեր է խաղացել արաբական ազգային–քաղաքական երկրորդ հոսանքի կայացման մեջ: Նրան է պատկանում արաբական բոլոր ազգային հայրենասիրական ուժերի միավորման պահանջը, որով նա հանդես եկավ 1913 թ.: Նրա նպատակն էր անկախության համար պայքարող բոլոր կազմակերպությունների գործունեության համադրումը, ելնելով այն հանրահայտ ճշմարտությունից, որ արաբական հակաթուրքական ուժերի միավորումը կմեծացնի թուրքական լուծը թոթափելու հավանականությունը:

1913 թ. վերջերին կազմավորվեց «Ալ–Ահդ»՝ «Պատգամ» գաղտնի զինվորական կազմակերպությունը (որոշ աղբյուրների համաձայն այն հիմնվել է 1914 թ. — Ն. Հ.): Նրա հիմնադիրն էր մայոր, ծագումով եգիպտացի, Ազիզ ալ–Մըսրին, որը գաղտնի աշխատանքների մեծ փորձ ուներ և առաջին անգամը չէր, որ հիմնում էր նման կազմակերպություն: Ազիզ ալ–Մսրին 1909 թ. «Գրական ակումբի» ընդերքում ձևավորված ալ–Կահթանիա գաղտնի կազմակերպության հիմնադիրներից ու ղեկավարներից մեկն էր: Այդ կազմակերպության աշխատանքների ժամանակ ձեռք բերած փորձը նա օգտագործեց «Ալ–Ահդի» կազմակերպման և ղեկավարման ժամանակ: Ալ–Կահթանիայից հետո ընկած ժամանակաշրջանում զգալի փոփոխությունների էին ենթարկվել նրա քաղաքական հայացքները: Նա այժմ ամուր կանգնած էր արաբների անկախության և այդ անկախությունը զինված պայքարով նվաճելու դիրքերում, որը նրա հետ կիսում էին կազմակերպության 4 հազար անդամները, որոնք համախմբված էին Բաղդադում, Մոսուլում, Դամասկոսում և Հալեբում գործող նրա մասնաճյուղերում:

Օսմանյան ոստիկանությունը 1914 թ. բացահայտեց այս կազմակերպության գոյությունը, ձերբակալեց նրա ղեկավարին՝ Ազիզ

ալ–Մըսրիին, երբ նա դուրս էր գալիս Ստամբուլի Թոքատլյան հյուրանոցից, և նրան դատապարտեց մահվան: Ի պաշտպանություն Ազիզ Մըսրիի լայն շարժում ծավալվեց արաբական երկրներում, մասնավորապես Եգիպտոսում: Ստեղծվեց Ազիզ Մըսրիի պաշտպանության կոմիտե ալ–Ազհարի ռեկտորի գլխավորությամբ: Տեղի ունեցան զանգվածային ցույցեր, մամուլը դատապարտեց օսմանյան դատարանի որոշումը, պահանջելով վերացնել այն: Դրությունն ավելի սրվեց, երբ արաբ սպաները երդվեցին արյունով վրեժ լուծել, եթե Ազիզ ալ–Մըսրիի մահվան դատավճիռն ի կատար ածվի: Միջամտեց նաև Մեծ Բրիտանիան: Ի վերջո, սուլթանը հարկադրված էր նահանջել և 1914 թ. ապրիլի 21–ին նրան ներումն շնորհեց: Ազատ արձակված Ազիզ Ալի ալ–Մըսրին մեկնեց Եգիպտոս:

Կարելի է ասել, որ նշանակալի է եղել «Ալ–Ահդի» և Ազիզ ալ–Մըսրիի դերը արաբական հասարակության մեջ անկախության գաղափարն ամրապնդելու գործում և, որ պակաս կարևոր չէ, այդ անկախությունը զինված պայքարի միջոցով ձեռք բերելու միտքը արաբական լայն խավերի համար ընդունելի դարձնելու մեջ:

Այդ շրջանում ստեղծվեցին նաև մի շարք այլ նմանատիպ գաղտնի ռազմական կազմակերպություններ և ընկերություններ Մոսուլում, Կահիրեում և այլ վայրերում: Բայց դրանք փոքր կազմակերպություններ էին և այն դերակատարումը չունեցան, ինչ «Երիտասարդ արաբների ընկերությունը» և «Ալ–Ահդը», թեև դա տվյալ պարագայում այնքան էլ մեծ նշանակություն չուներ, քանի որ այդ մանր կազմակերպությունների առաջացումն ինքնին վկայում էր, որ անկախության գաղափարը, այն էլ զինված պայքարի միջոցով, համակել էր արաբների ամենալայն զանգվածներին և դադարել էր առանձին անհատների կամ խմբերի գործը լինելուց:

Այդ գաղափարների հաղթանակի մասին էր վկայում նաև այն իրողությունը, որ շատ կազմակերպություններ, որոնք կանգնած էին արաբական հարցն ապակենտրոնացման միջոցով լուծելու տեսակետի վրա, այդ թվում և Լամարքազիան, համոզվելով, որ երիտթուրքերը երբեք չեն հրաժարվի արաբներին թուրքացնելու իրենց ծրագրերից և արաբներին ինքնավարություն չեն շնորհի, փոխեցին իրենց տեսակետները, և նույնպես կանգնեցին զինված ապստամբության միջոցով արաբական անկախությունը նվաճելու քաղաքականության դիրքերում: Աստիճանաբար այդ դիրքերի վրա կանգնեցին նաև իրաքյան, սիրիական և լիբա-

նանյան բարենորոգումների ընկերությունները՝ Բեյրութի Բարենորոգումների լիգան, Լիբանանյան զարթոնքը, Բասրայի բարենորոգումների ընկերությունը և այլն:

Անկախության կողմնակից արաբական կազմակերպությունների համար մեծ խթան հանդիսացան արաբների հակաթուրքական ելույթները: Այդպիսի ելույթներ տեղի ունեցան Բեյրութում, Իրաքի և Սիրիայի տարբեր քաղաքներում: Հակաթուրքական պայքարի մեջ էր ներգրավվել Եմենը: Երիտթուրքերը 1913 թ. ապրիլի 8–ին ձերբակալեցին Բեյրութի Բարենորոգումների լիգայի ղեկավարությանը և դադարեցրին նրա գործունեությունը: Սակայն բեյրութցիները չհամակերպվեցին երիտթուրքերի այդ բռնարարքի հետ և փողոց դուրս եկան՝ բողոքելու այդ կամայականության դեմ:

Բեյրության իրադարձությունների կապակցությամբ հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքի վրա: Օսմանյան կառավարության ապրիլի 8–ի որոշումը՝ Բեյրութի Բարենորոգումների լիգան արգելելու մասին, ընդունվեց այդ լիգայի կողմից կառավարման բոլոր հարցերը տեղական ինքնավարություններին հանձնելու պահանջի կապակցությամբ: Այսինքն՝ լիգան դեռևս անկախության պահանջ չէր առաջադրում: Այդուհանդերձ, երիտթուրքերն արգելեցին նրա գործունեությունը: Իսկ դա խոսում էր այն մասին, որ նրանց համար Օսմանյան կայսրության սահմաններում ներքին բարեփոխումների պահանջերն անգամ անընդունելի էին դարձել և նրանց համար արաբների ու մյուս ոչ թուրք ժողովուրդների թուրքացումից բացի ուրիշ ոչ մի քաղաքականություն այլևս ընդունելի չէր:

Երիտթուրքերի այս դիրքորոշումը վճռական խթան հանդիսացավ, որպեսզի բարենորոգումների ընկերությունները նույնպես վճռականորեն կանգնեն անկախության կողմնակիցների կողքին:

Արաբական երկրներում առկա էին թուրքական տիրապետության դեմ ուղղված զինված ապստամբության բոլոր նախադրյալները:

Վրա հասած 1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմը միայն որոշ ժամանակով հետաձգեց ապստամբությունը, բայց չկարողացավ կանխել այն:

Գլուխ յոթերորդ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՇԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՒՅՑ (1914–1918 թթ.)

I. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ (1914–1916 թթ.)

1. Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը և հակադիր բլոկների ռազմաքաղաքական նպատակները

Պատերազմներով չափազանց հարուստ մարդկության պատմությունը, այդուհանդերձ, դեռևս ականատես չէր եղել մի այնպիսի համաշխարհային ողբերգության, ինչպիսին 1914–1918 թթ. պատերազմն էր, որը պատմության մեջ մտել է որպես Առաջին համաշխարհային պատերազմ: Աշխարհն անկասելիորեն դեպի այդ համաշխարհային սպանդն էր գնում XIX դարի 70–ական թվականներից, երբ մոլորակի հզոր պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական, տարածքային, տնտեսական սուր, անհաշտելի հակասությունները, և աշխարհը վերաբաժանելու քաղաքական կիրքը, հանգեցրին երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների կազմավորմանը:

Առաջին խմբավորումը, որը կազմավորվեց 1879–1882 թթ. և ստացավ Եռյակ դաշինք անվանումը, կազմված էր Գերմանիայից, Ավստրո–Հունգարիայից և Իտալիայից:

Երկրորդ խմբավորումը՝ Անտանտը, ձևավորվեց 1893–1907 թթ. և կազմված էր Անգլիայից, Ֆրանսիայից ու Ռուսաստանից:

Հետագայում երկու դաշինքներն էլ համալրվեցին նոր անդամներով՝ ի հաշիվ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրների: Եռյակ դաշինքին միացան Օսմանյան կայսրությունը և Բուլղարիան, իսկ Անտանտին՝ ԱՄՆ–ը, Ճապոնիան և այլ երկրներ:

Ընդհանուր առմամբ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցել է 33 երկիր, 1,5 մլրդ մարդ կամ աշխարհի բնակչության 75%, մարտնչող բանակներում մոբիլիզացված էր 75 մլն մարդ: Զոհվածների թիվը կազմել է 10 մլն, իսկ վիրավորներինը՝ 20 մլն մարդ: Պատերազմող բոլոր երկրների ուղղակի ռազմական ծախսերը կազմել են 208 մլրդ դոլար՝ իր ժամանակի համար մի աստղաբաշխական թիվ:

Եթե խոսելու լինենք ընդհանուր գծերով, ապա այդ երկու հակադիր խմբավորումների հիմնական դերակատարներից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նպատակները:

Անգլիան ցանկանում էր ոչ միայն պահպանել իր կայսրությունը, այլև ընդարձակել իր գաղութային տիրապետությունն՝ ի հաշիվ նոր տարածքային ձեռքբերումների՝ գլխավորապես Ասիայում և Աֆրիկայում: Նա ձգտում էր դառնալ աշխարհի ամենահզոր պետությունը: Նրա գլխավոր նպատակներից մեկը բարձրացող և օրեցօր հզորացող Գերմանիայի ջախջախումն էր, որը հանդիսանում էր բրիտանական կայսրությանը սպառնացող ամենավտանգավոր պետությունը:

Ֆրանսիան՝ աշխարհի երկրորդ գաղութատեր պետությունը, նույնպես ձգտում էր պահպանել իր գաղութային տիրույթները, ամրապնդվել արդեն նվաճած երկրներում և նոր գաղութներ ձեռք բերել ինչպես Ասիայում, այնպես էլ Աֆրիկայում: Սակայն Ֆրանսիայի համար խիստ կարևոր էր, կարելի է ասել, առաջնայինը՝ գերմանական հարցն էր: 1870 թ. ֆրանս–պրուսական պատերազմի ժամանակ կրած պարտությունից հետո, Ֆրանսիան երազում էր ռևանշի և այդ պատերազմի ժամանակ Գերմանիային զիջած իր տարածքները՝ Էլզասը և Լոթարինգիան, հետ վերադարձնելու մասին: Նա միաժամանակ փայփայում էր Գերմանիային այնպիսի ջաջխջախիչ հարված հասցնելու ծրագրեր, որ նա չկարողանար այլևս ոտքի կանգնել և սպառնալիք ներկայացնել Ֆրանսիայի համար: Դրա հետ միասին Ֆրանսիան ձգտում էր դառնալ կոնտինենտալ Եվրոպայի ամենահզոր պետությունը և իր հեգեմոնիան հաստատել այդ մայրացամաքում:

Անգլո–ֆրանսիական ծրագրերի մի խոշոր մասի իրագործումը կապված էր Օսմանյան կայսրության տրոհման հետ:

Ռուսաստանի հետաքրքրությունների ոլորտը սահմանափակվում էր հիմնականում Եվրոպայով և Փոքր Ասիայով: Եվրոպայում նրա շահերին համապատասխանում էր Գերմանիայի և Ավստրո–Հունգարիայի՝ իր հիմնական մրցակիցների, թուլացումը: Իսկ Փոքր Ասիայում նրա տարածքային պահանջները պետք է լուծվեին Օսմանյան կայսրության հաշվին: Նա հիմնականում ձգտում իր տիրապետությունը հաստատել Բյուզանդական կայսրության երբեմնի մայրաքաղաք Կոնստանդնուպոլսի՝ Ստամբուլի, նեղուցների և Արևմտյան Հայաստանի տարածքների վրա:

Կայզերական Գերմանիային, որը հանդիսանում էր Եռյակ դաշինքի ամենահզոր պետությունը և կատարում էր առաջին ջութակի դերը, չէր բավարարում ուժերի այն հավասարակշռությունը, որը հաստատվել էր գլխավորապես Անգլիայի և Ֆրանսիայի ջանքերով և ի նպաստ այդ երկու պետությունների: Ռազմական և քաղաքական առումով հզորացած և տնտեսապես ուժեղացող Գերմանիան չէր կարող հաշտվել այդ իրողության հետ և ձգտում էր զենքի միջոցով վերատեսության ենթարկել հաստատված աշխարհակարգը: Նա ցանկանում էր պարտության մատնել Անգլիային, զրկել նրան վիթխարի գաղութներից, որոնք հանդիսանում էին նրա հզորության գլխավոր աղբյուրներից մեկը, տիրանալ այդ գաղութներին և առաջատար դեր ստանձնել միջազգային հարաբերություններում:

Նրա ռազմաքաղաքական ծրագրերում մեծ տեղ էր գրավում Ֆրանսիան: Գերմանիայում լավատեղյակ էին այն մասին, որ Ֆրանսիան նախապատրաստվում էր ռևանշի: Ուստի՝ նրա հիմնական նպատակներից մեկն էր Ֆրանսիային հասցնել այնպիսի ջախջախիչ հարված, որպեսզի նա այլևս ուշքի չկարողանար գալ, ինչպես նաև տիրանալ նրա գաղութներին:

Գերմանիայի նպատակն էր նաև ծնկի բերել Ռուսական կայսրությանը և նրան տնտեսական կախման մեջ գցել իրենից:

Այսպիսով՝ Գերմանիան խնդիրներ ուներ և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում, ուստի պատերազմի առաջին օրվանից նա պայքարում էր երկու ճակատներով, որը նրան, անկասկած, դրեց ծանր դրության մեջ:

Իրենց համանման նպատակներին էին հետամուտ նաև Ավստրո–Հունգարիան և Իտալիան, որոնք ձգտում էին պահպանել իրենց թուլացող դիրքերը Եվրոպայում, ուժեղանալ՝ ի հաշիվ իրենց հակառա-

կորդների պարտության, տարածքային կորուստների, և նոր ձեռքբերումների:

1917 թ., պատերազմի ավարտից մոտ մեկուկես տարի առաջ, Անտանտի կողմում պատերազմի մեջ մտած ԱՄՆ–ը, հաղթահարելով ավանդական մեկուսացման քաղաքականությունը, առաջին լուրջ հայտն էր ներկայացնում համաշխարհային քաղաքականության մեջ առաջատար դեր գրավելու գործում:

Նրա շահերին չէր համապատասխանում գերմանական բլոկի հաղթանակը, որն աչքի էր ընկնում իր ագրեսիվությամբ և փորձում էր դառնալ միջազգային հարաբերություններում թելադրող ուժ:

ԱՄՆ–ի՝ Անտանտի կողմում հանդես գալու գործում, իր որոշակի դերը խաղաց այն հանգամանքը, որ գերմանական բլոկին էր միացել Օսմանյան կայսրությունը, մի պետություն, որը հանդիսանում էր միջնադարյան քաղաքական մտածելակերպի, բարքերի, սովորույթների, ամբողջ ժողովուրդների կոտորելու և բռնի թուրքացնելու միջնաբերդը, բռնակալության, հետամնացության և կրոնական անհանդուրժողականության ամրոցը: Նման բլոկին միանալը, առավել ևս՝ իր վիթխարի ռազմական ներուժը և անսպառ տնտեսական հնարավորությունները ու ֆինանսական միջոցները այդ բլոկի հաղթանակին ի սպաս դնելը, անհասկանալի և անընդունելի կլիներ ամերիկյան հասարակության համար, որը խարսխված էր դեմոկրատական սկզբունքների վրա: Թող որ այդ դեմոկրատիան կոչվեր բուրժուական, թող որ նա տառապեր զանազան թերություններով ու սահմանափակումներով, այդուհանդերձ, ԱՄՆ–ը դեմոկրատական երկիր էր և չէր կարող ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտնել պրուսական յունկերների իդեալների մարմնացումը հանդիսացող կայզերական Գերմանիայի կամ արյունարբու սուլթանների ու երիտթուրքական ոճրագործների հայրենիք Թուրքիայի հետ:

Սակայն, մյուս կողմից, չպետք է կարծել, որ ԱՄՆ–ը պատերազմի մեջ մտավ՝ ապահովելու Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նվաճողական քաղաքականության հաղթանակը: Պետական կառուցվածքի, հասարակական–քաղաքական իդեալների և դեմոկրատիայի առումով, ԱՄՆ–ը, իհարկե, տիպաբանորեն ավելի մոտ էր Անգլիային և Ֆրանսիային, քան թե պատերազմի մեջ մտած 33 պետություններից որևէ մեկին: Դրա հետ միաժամանակ, նա ձգտում էր թուլացնել այդ երկու երկրների միջազգային դիրքերը, օգտվել դրանից և դառնալ համաշխարհային քաղաքականության եթե ոչ ամենակարևոր կենտրոնը, ապա այդ կենտ-

րոններից մեկը: Նա բոլորովին էլ շահագրգռված չէր անգլիական կամ ֆրանսիական գաղութային համակարգերի պահպանմամբ: Ընդհակառակը, նա, հետապնդելով «բաց դռների» քաղաքականություն, որն առավել բարենպաստ պայմաններ կարող էր ստեղծել ամերիկյան ապրանքների և կապիտալի ներթափանցման համար ասիական և աֆրիկյան երկրներ, ձգտում էր նրանց կախվածության թուլացմանը դասական գաղութատեր երկրներից: Այդ նպատակին էր միտված նաև ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջը, որն առաջադրեց ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Երկու բլոկների ռազմաքաղաքական, ստրատեգիական ծրագրերի մեջ բավականին մեծ տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրությանը, որի մասին խոսք կգնա աշխատության հաջորդ բաժնում:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմն իր բնույթով զավթողական, թալանչիական և անարդարացի պատերազմ էր: Նրա գլխավոր նպատակներից մեկը արդեն բաժանված աշխարհի վերաբաժանումն էր, որի հիմքում ընկած էին ոչ թե արդարության և բարոյականության սկզբունքները, այլ ուժի իրավունքը:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թ. օգոստոսի 1–ին, երբ Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Օգոստոսի 3–ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային, իսկ 4–ին՝ պատերազմի մեջ մտավ Անգլիան՝ պատերազմ հայտարարելով Գերմանիային:

2. Արաբական գործոնը

Օսմանյան կայսրությունն անմիջապես պատերազմի մեջ չմտավ: Նա ձևականորեն չհարեց որևէ կողմի և հայտարարեց իր չեզոքության մասին: Սակայն պատերազմը սկսվելու հաջորդ օրը՝ 1914 թ. օգոստոսի 2–ին, Օսմանյան կայսրությունում հայտարարվեց ընդհանուր մոբիլիզացիա:

Արաբական երկրները պատերազմի մեջ ներգրավվեցին ակամայից, ոչ թե որպես ինքնուրույն կամ անկախ ուժ՝ իրենց սեփական ընտրությամբ, այլ որպես Օսմանյան կայսրության մի մասը՝ կամոքն փադիշահի:

Պատերազմն սկսվելու պահին արաբական որևէ անկախ պետություն գոյություն չուներ: Արաբական երկրները՝ մի մասը ձևականորեն, իսկ մի մասն էլ իրապես, գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո: Ինչպես նշել ենք, նրանց կարգավիճակը տարբեր էր: Եգիպտոսը և Սուդանը նվաճվել էին Անգլիայի կողմից և գտնվում էին նրա ուղղակի կառավարման ներքո, թեև ձևականորեն նրանց սյուզերենը դեռևս համարվում էր թուրքական սուլթանը: Ալժիրը, Թունիսը և Մարոկկոն ֆրանսիական տիրույթներ էին՝ պրոտեկտորատի կարգավիճակով, որտեղ սուլթանի իրավունքները նույնպես թվացյալ էին: 1912 թ. Իտալիան գրավեց Լիբիան և այն վերածեց իր գաղութի:

Պետք է նշել, որ Իտալիան պատրաստվում էր գրավել այդ երկիրը XIX դարի 80–ական թվականներից ի վեր, սակայն դա նրան հաջողվեց իրագործել միայն 1911–1912 թթ իտալա–թուրքական պատերազմի ընթացքում: Պարտություն կրած Թուրքիան 1912 թ. Լոզանում կնքված հաշտության պայմանագրով պարտավորվեց իր զորքերը դուրս բերել երկրից, բայց այդպես էլ պաշտոնապես չճանաչեց Իտալիայի գերիշխանությունը Լիբիայի վրա: Բայց դա վերջինիս համար ոչ մի նշանակություն չունեցավ: Լիբիան փաստորեն դարձավ Իտալիայի գաղութը: Իսկ ինչ վերաբերում է երկրի նոր՝ «Լիբիա» անվանմանը, ապա նա հունական ծագում ուներ և միավորում էր Տրիպոլիտանիան, Կիրենաիկան և Ֆեցան:

Օսմանյան ուղղակի տիրապետության տակ էին գտնվում Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Իրաքը: Այստեղ օսմանյան սուլթանի դիրքերը համեմատաբար ավելի շոշափելի էին: Կարելի է ասել, որ համարյա նույնն էր պարագան Արաբիայում, մասնավորապես Հիջազում, թեև Արաբիայի կենտրոնական մասերում (ան–Նաջդ և այլն) և հարավային Արաբիայում՝ Եմենում, սուլթանի իշխանությունն ավելի շատ ձևական, քան թե իրական բնույթ էր կրում:

Այս պարագան իր կնիքը դրեց պատերազմի և օսմանյան իշխանությունների նկատմամբ արաբների դիրքորոշման վրա:

Թուրքիայի չեզոքության մասին հայտարարությունն ըստ էության լուրջ չընդունվեց պատերազմի մասնակից երկրների կողմից:

Անտանտի երկրները լուրջ չընդունեցին թուրքական հայտարարությունը, քանի որ չափազանց ակնհայտ էին Թուրքիայի ռազմական, քաղաքական և տնտեսական կապերը Եռյակ դաշինքի անդամ երկրների, և առաջին հերթին Գերմանիայի հետ: Այդ կապերն ավելի խորացան,

երբ 1913 թ. եիրտթուրքական «Իթիհադ վե թերակի» կուսակցության ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրեցին Թալեաթը, Էնվերը և Ջեմալը, որոնք համապատասխանաբար դարձան ներքին գործերի, ռազմական և ռազմա–ծովային նախարարներ: Օսմանյան կայսրությունում հաստատվեց նրանց եռապետությունը: Դրա մեջ ռազմական նախարար Էնվերի դիրքերն այնքան ուժեղ էին և նա այն աստիճանի սերտ հարաբերությունների մեջ էր Գերմանիայի հետ, որ այդ տարիներին ընդունված էր Թուրքիան անվանել «Էնվերլանդիա»:

Եռյակ դաշինքի երկրները, առավել քան Անտանտի երկրները, նույնպես հավատացած էին, որ թուրքական հայտարարությունը չեզոքության վերաբերյալ, ձևական բնույթ էր կրում և արվել էր ժամանակ շահելու նպատակով, և վաղ թե ուշ, նա կմիանար իրենց:

Թուրքիան շատ սպասեցնել չտվեց և 1914 թ. հոկտեմբերի 29–ին մտավ պատերազմի մեջ՝ միանալով Եռյակ դաշինքին, այսինքն՝ Գերմանիային, Ավստրո–Հունգարիային և Իտալիային:

Ուրեմն՝ նրա միանալը Եռյակ դաշինքին անակնկալ չէր ո՛չ Անտանտի, և ո՛չ էլ Եռյակի դաշինքի համար: Դա կապված էր ստրատեգիական այն հիմնախնդիրների հետ, որոնց հետամուտ էր Թուրքիան: Դրանք երկուսն էին:

Առաջին՝ արաբական գործոնը: Ստամբուլն իր հիմնական նպատակը համարում էր Օսմանյան կայսրության պահպանումը, ընդ որում, օսմանյան կառավարողները նկատի ունեին ոչ միայն տերիտորիալ ամբողջականության պահպանումը, այլև թուրքական իշխանության վերականգնումը կայսրության այն մասերի վրա, որտեղ օսմանյան տիրապետությունը ձևական էր և փաստացի իշխողները օտար երկրներ էին: Դրանց մեջ առաջին հերթին մտնում էին արաբական երկրները, որոնք գտնվում էին Անգլիայի և Ֆրանսիայի ուղղակի տիրապետության տակ կամ նրանց ազդեցության գոտում: Թուրքիան, բնականաբար, իր այդ ստրատեգիական խնդիրը լուծելու համար պետք է միանար այն խմբավորմանը, որը կապահովեր նրա այդ նպատակների իրագործումը: Իսկ դա կապված էր այն խմբավորման հետ, որը պատերազմում էր Անգլիայի և Ֆրանսիայի՝ այսինքն Անտանտի երկրների դեմ: Այդպիսի հակաանտանտյան խմբավորում էր, ինչպես նշել ենք, Եռյակ դաշինքը, որի հաղթանակի դեպքում, Թուրքիան հույս ուներ իրականացնել ստրատեգիական բնույթի իր առաջին հիմնախնդիրը՝ կապված արաբական գործոնի հետ:

Երկրորդ, ստրատեգիական հիմնախնդիրը, որին հետամուտ էր Օսմանյան կայսրության կառավարող երիտթուրքական եռապետությունը, դա երիտթուրքական պանթուրանիստական ծրագրերի իրականացումն էր: Ուրեմն՝ երիտթուրքերը ոչ միայն ցանկանում էին պահպանել կայսրության ամբողջականությունը և վերականգնել իրենց կատարյալ իշխանությունը արաբական երկրների վրա, այլև ընդարձակել այն՝ ի հաշիվ թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքների: Եվ դա պետք է արվեր հիմնականում Ռուսական կայսրության հաշվին: Թուրքական ծրագրերի մեջ մտնում էր Անդրկովկասի, Կովկասի, Ստորին Պովոլժիեի, Ղրիմի և Թուրքեստանի նվաճումն ու կցումը Օսմանյան կայսրությանը:

Հարկ է նշել, որ իրականում դա ոչ թե «մաքուր» օսմանյան ծրագիր էր, այլ՝ գերմանա–թուրքական, քանի որ առանց Գերմանիայի գիտության ու հավանության «էնվերլանդիան», որը դարձել էր կայզերական Գերմանիայի խամաճիկը, չէր կարող իրականացնել մի այդպիսի բարդ, գործնականում անհնարին ծրագիր: Իսկ Գերմանիան հավանություն տալով երիտթուրքերի այդ ծրագրին, իր սեփական նպատակներն էր հետապնդում: Նրա շահերին համապատասխանում էր Ռուսաստանին հարված հասցնել ոչ միայն եվրոպական կոնտինենտում, որ նա իրականացնում էր Ավստրո–Հունգարիայի հետ միասին, այլև արևելքից, որը, ըստ նրանց հաշվարկների, պետք է ծանր դրության մեջ դներ Ռուսաստանին, եթե կայսրության թուրքալեզու ժողովուրդները ապստամբեին ռուսական իշխանությունների դեմ և անցնեին Թուրքիայի կողմը:

Այսպիսով՝ արաբական գործոնը ոչ երկրորդական դեր խաղաց (պանթուրքական գործոնի հետ միասին) Թուրքիայի տեղը հակամարտ բլոկների մեջ կանխորոշելու հարցում՝ նրա միանալուն Եռյակ դաշինքին:

Արաբական գործոնն իր ուրույն տեղն ունի Առաջին համաշխարհային պատերազմի ծագման և երկու հակադիր բլոկների ձևավորման մեջ:

Ջ. Անտոնիուսը, անդրադառնալով արաբական հարցին՝ կապված Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հետ, նշել է, որ «Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելով, արաբական հարցն ինքնաբերաբար հայտնվեց եվրոպական քաղաքական ուղեծրում»: Այս տեսակետի մեջ, անշուշտ, կա ճշմարտություն: Դրա հետ միաժամանակ ցանկանում ենք ա-

նել, մեր կարծիքով, մի կարևոր դիտողություն, որը սկզբունքային նշանակություն ունի արաբական գործոնի լուսաբանության տեսանկյունից:

Արաբական հարցը, որի տակ տվյալ պարագայում պետք է հասկանալ արաբական գործոնը, եվրոպական քաղաքական ուղեծրում հայտնվեց ոչ թե Թուրքիայի պատերազմի մեջ մտնելով, այլ մինչ այդ: Արաբական աշխարհին, նրա բնական հարստություններին և մարդկային ռեսուրսներին տիրանալու ձգտումը, դեռ վաղուց դարձել էր եվրոպական գլխավոր պետությունների պայքարի հիմնական խնդիրներից մեկը, և այդ իմաստով Առաջին համաշխարհային պատերազմի առաջացման պատճառներից մեկը: Եթե ուզում ենք լրիվ խորամուխ լինել պատերազմը ծնած հիմնապատճառների մեջ, ապա անպայման պետք է հաշվի առնել արաբական աշխարհին տիրանալու համար այն պայքարը, որ բացահայտ ու գաղտնի կերպով ընթանում էր Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, այսինքն պետք է նկատի ունենալ արաբական գործոնը:

Անգլիայի տիրապետության տակ էին գտնվում Եգիպտոսը և Արևելյան Սուդանը, նրա ազդեցությանն էին ենթակա Պարսից ծոցի արաբական երկրները և Արաբիայի որոշ հատվածներ: Անգլիան ոչ մի գնով չէր ցանկանում այդ տարածքները վերադարձնել Օսմանյան կայսրությանը կամ որևէ այլ եվրոպական պետության: Նկատի ունենք Գերմանիան, որը բոլոր ուղղություններով, այդ թվում և արաբական, հարձակվում էր Անգլիայի դիրքերի վրա: Բայց Անգլիայի խնդիրը միայն պահպանողական չէր: Նրա գաղութային ախորժակները չէին բավարարվում միայն այդ տարածքներն իր տիրապետության կամ վերահսկողության տակ պահելով: Նա ձգտում էր նոր տարածքների նվաճման, մասնավորապես, Միջագետքում և իր դիրքերի հետագա ամրապնդմանը արաբական աշխարհում, այդ թվում Հորդանանում ու Պաղեստինում:

Անգլիայի ներթափանցումը և դիրքերի ամրապնդումն Իրաքում, ինչպես նշել ենք, սկսվել էր դեռևս XIX դարի 30–ական թվականներից: Անգլիացիները Իրաքում կազմակերպել էին շոգենավային ընկերություն, հիմնել առևտրական ֆիրմաներ: Անգլիական կապիտալը կարևոր դեր էր խաղում Իրաքի ֆինանսական կյանքում: Անգլիական հայտնի «Իստերն բենկը» իր մասնաճյուղն էր բացել Բաղդադում: Անգլիան արդեն մինչև Առաջին համաշխարհային պատերազմը տիրապետող դիրքեր ուներ Իրաքի արտաքին առևտրի մեջ: Դրան պետք է ավելացնել

նավթի հարցը, որն արդեն հայտնվել էր ասպարեզում, որը ավելի սուր բնույթ հաղորդեց արաբական աշխարհին տիրապետելու համար միջիմպերիալիստական պայքարին:

Արաբական գործոնն առաջնակարգ նշանակություն ուներ նաև Ֆրանսիայի համար, որի տիրապետության տակ էին գտնվում Հյուսիսային Աֆրիկայի մի քանի երկրներ՝ Ալժիրը, Թունիսը և Մարոկկոն: Ֆրանսիան, ինչպես և Անգլիան, չէր բավարարվում ունեցածով և ձգտում էր ավելիին, առաջին հերթին ասիական արաբական տարածքներում: Դեռևս XIX դարի կեսերին նրա քաղաքական հետաքրքրությունների կենտրոնում հայտնվել էին Սիրիան և Լիբանանը: Դրան հաջորդած ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը, Ֆրանսիան բոլոր միջոցներով ձգտում էր ամրապնդել իր ազդեցությունը արաբական այդ երկու կարևոր երկրներում, հուսալով նրանց վրա ևս իր տիրապետությունը հաստատել:

Սակայն, Անգլիայի և Ֆրանսիայի շահերը բախվում էին Գերմանիայի՝ համեմատաբար ավելի երիտասարդ այդ գիշատչի շահերի հետ, որը ձգտում էր նրանց դուրս մղել Օսմանյան կայսրության արաբական տարածքներից և ինքն ամրանալ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ տարածքներում: Գերմանիան մեծ հույսեր էր կապում Պարսից ծոցի և Հնդկական օվկիանոսի միջև ընկած տարածքներին տիրանալու հետ: Թուրքիայի արաբական տարածքների նկատմամբ կայզերական Գերմանիայի նպատակները հիանալի և սպառիչ է ձևակերպել բարձրացող գերմանական իմպերիալիզմի հայտնի գաղափարախոս Պ. Ռորբախը, որը գտնում էր, որ «Գերմանիայի ապագան Արևելքում է՝ Փոքր Ասիայում, Սիրիայում, Իրաքում, և Պաղեստինում: Նինվեի հարևանությամբ, այնտեղ, որտեղով անցնում է Բաղդադի երկաթուղագիծը, գտնվում է աշխարհում նավթի ամենահարուստ աղբյուրներից մեկը: Տավրոսի լեռնաշղթայի ընդերքի խորքերում գտնվում են պղնձի և այլ մետաղների վիթխարի հանքեր: Բաբելոնի հարթավայրը կարող է դառնալ աշխարհում հացի և բամբակի մեծագույն մատակարարողը: Իրաքում կան արոտավայրեր միլիոնավոր գլուխ ոչխարների համար: Այստեղ մենք ունենք մեզ անհրաժեշտ հումքի մեծ մասը, ընդ որում՝ հավաքված մի տեղում»: Ամեն ինչ շատ հստակ է ասված: Եվ Գերմանիան գործնականում սկսել էր իր ծրագրերի իրականացումը, այդ թվում և բացառիկ ստրատեգիական նշանակություն ունեցող Բաղդադի երկաթուղագծի շինարարությունը:

Գերմանիան Միջագետքում հարձակումն իրականացնում էր լայն ճակատով, նպատակ ունենալով հաստատվել նրա տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում՝ արտաքին առևտրի և նավագնացության մեջ, ֆինանսների ոլորտում և այլն:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա: Անգլիական և ֆրանսիական, ինչպես նաև ռուսական ծրագրերի իրականացումը հնարավոր էր միայն Օսմանյան կայսրությունը բաժանելու դեպքում: Եվ Անտանտի երկրները պատերազմի ժամանակ նաև դրան էին ձգտում:

Ահա այս բարդ իրադրության առաջացման, միջիմպերիալիստական պայքարի սրման և Թուրքիան որպես պետություն մասնատելու մեջ իր որոշակի, կարելի է ասել կարևոր դերակատարումն է ունեցել արաբական գործոնը:

Արաբական գործոնի դերը մեծ եղավ, եթե չասենք վճռական նշանակություն ունեցավ, Օսմանյան կայսրության կողմից հայտարարված ջիհադի՝ սրբազան պատերազմի, ձախողման գործում:

Ջիհադը Թուրքիայի կողմից հայտարարվեց նրա պատերազմի մեջ մտնելուց համարյա մեկ շաբաթ անց՝ 1914 թ. նոյեմբերի 7–ին: Դա համարվում է նրա առաջին փուլը: Այդ օրը Օսմանյան կայսրության շեյխ ուլ–իսլամը՝ բարձրագույն հոգևոր պաշտոնյան, արձակեց համապատասխան որոշում՝ ֆետվա, որով աշխարհի բոլոր մուսուլմանների, այդ թվում և նրանց, ովքեր բնակվում էին անգլիական, ֆրանսիական և ռուսական կայսրություններում, սրբազան պարտքն էր համարվում միանալ իսլամի երեք գլխավոր թշնամիների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ, «զենք վերցնել նրանց ու նրանց դաշնակիցների դեմ, ոչ մի պարագայում, անգամ մահվան սպառնալիքի դեպքում, չօգնել Անտանտի կառավարություններին՝ Օսմանյան կայսրության և նրա պաշտպաններ Գերմանիայի ու Ավստրո–Հունգարիայի վրա նրանց հարձակումների ժամանակ»:

Շեյխ ուլ–իսլամի ֆետվային հաջորդեց սուլթան Մեհմեդ V–ի 1914 թ. նոյեմբերի 11–ի հրովարտակը՝ ուղղված թուրքական բանակին և նավատորմին, որը համարվում է ջիհադի երկրորդ փուլը: Սուլթանը կոչ էր անում օսմանյան բանակին պայքարել «ստրկացված իսլամի ազատագրման համար, ինչպես նաև ի պաշտպանություն վտանգի ենթարկված Օսմանյան կայսրության»:

Սուլթանի հրովարտակին՝ 1914 թ. նոյեմբերի 23–ին, հաջորդեց մի նոր մանիֆեստ, որը ստորագրել էին շեյխ ուլ–իսլամը և իսլամական աշխարհի 28 երևելի մուսուլման հոգևորականներ: Դա համարվում է ջիհադի նախապատրաստման և կոչի երրորդ փուլը: Այս նոր մանիֆեստը կոչ էր անում աշխարհի բոլոր մուսուլմաններին՝ ենթարկվել Սուրբ Գրքի՝ Կորանի պահանջներին և մասնակցել իսլամի և նրա սրբազան վայրերի պաշտպանությանը:

Ահա այսպիսին էր երեք փուլի ընթացքում վերջնականապես ձևավորված և սուլթանի ու շեյխ ուլ–իսլամի կողմից հաստատված ջիհադի՝ քրիստոնյաների դեմ մուսուլմանների սրբազան պատերազմի, կոնկրետ պահանջներն ու խնդիրներն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Մասնագիտական գրականության մեջ նկատված է, որ ջիհադի կոչն ուղղված էր ոչ այնքան բուն Թուրքիայում բնակվող թուրքերին, որքան Իրանի, Աֆղանստանի, Հնդկաստանի մուսուլմաններին և, առաջին հերթին, արաբներին: Դա բացատրվում է նրանով, որ թուրքերի կողմից ջիհադի ջերմեռանդ և մոլագար պաշտպաններ լինելը ոչ մի կասկած չէր հարուցում, որը նրանք ապացուցեցին պատերազմի տարիներին՝ հայերի, ասորիների, հույների և արաբների կոտորածներով:

Իսկ ինչ վերաբերում է արաբներին, ապա օսմանյան իշխանությունների և մուսուլմանական ղեկավարության կողմից արաբներին առանձնահատուկ տեղ հատկացնելը ջիհադի իրագործման մեջ, բացատրվում է այն կարևոր գործոնով, որ նրանք՝ արաբները կարող էին խաղալ՝ առնվազն երկու պատճառով:

Առաջին, արաբներն էին այն ժողովուրդը, որը հանդիսանում է իսլամի հիմնադիրը, արաբերեն լեզվով է գրված մուսուլմանների սուրբ գիրքը՝ Կորանը, և արաբերեն լեզվով են կատարվում աղոթքները մզկիթներում: Այդ հանգամանքը մշտապես առանձնահատուկ կշիռ և հեղինակություն է տվել արաբներին մուսուլմանական աշխարհում: Ուստի՝ ջիհադի ընդունումը կամ մերժումը մուսուլմանական ժողովուրդների կողմից և նրանց պայքարը Անտանտի երկրների դեմ մեծապես կախված էր արաբների դիրքորոշումից, այն բանից, թե նրանք կընդունե՞ն թուրքական սուլթանի կոչը ջիհադի վերաբերյալ, պաշտպան կկանգնե՞ն նրան, թե ոչ:

Երկրորդ, Արաբիայում, այսինքն արաբների տարածքներում են գտնվում իսլամական աշխարհի երկու կարևոր սրբավայրերը՝ Մեքքան

և Մադինան, որոնք գտնվում էին Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի կառավարման ներքո: Դրա շնորհիվ շատ բարձր էր նրա ազդեցությունը և հեղինակությունն ամբողջ մուսուլմանական աշխարհում և ջիհադի ճակատագիրը շատ բանով կախված էր նրա դիրքորոշումից: Ստամբուլում լավ էին գիտակցում, որ Հուսեյնի կողմից ջիհադի պաշտպանությամբ հանդես գալը ուղի կհարթեր, որ սուլթանական այդ կոչին միանային նաև մյուս մուսուլմանական ժողովուրդներն՝ անկախ այն բանից, թե որտեղ են նրանք բնակվում:

Ահա այս հանգամանքների բերումով, սուլթանն ու շեյխ ուլ–իսլամն առանձնահատուկ դեր էին հատկացնում արաբներին, դրանով իսկ, ընդունելով արաբական գործոնի կարևոր նշանակությունը, իսկ այս դեպքում՝ անգամ նրանց վճռական դերակատարումը:

Իսկ ի՞նչ դիրք գրավեցին արաբները, նրանք ազգային և քաղաքական գործիչները, հոգևոր առաջնորդները, այդ թվում և Հիջազի կառավարիչ Հուսեյնը, ու ժողովրդական զանգվածները ջիհադի հարցում:

Միանգամից նշենք, որ ջիհադի վերաբերյալ սուլթանական կոչը պարարտ հող չգտավ արաբական միջավայրում: Նա ոչ միայն խանդավառությամբ չընդունվեց արաբների կողմից, այլև արժանացավ շատ սառն ընդունելության:

Օսմանյան սուլթանը ջիհադի կոչով դիմեց համայն մուսուլմանական աշխարհին, որպես մուսուլմանների հոգևոր առաջնորդ՝ խալիֆա և իմամ: Ստամբուլում հաշվի չառան այն հանգամանքը, որ արաբները թուրքական սուլթանին չէին համարում օրինական, լեգիտիմ խալիֆա, այլ դիտում էին որպես ուզուրպատոր՝ բռնազավթիչ, որին մենք հանգամանորեն անդրադարձել ենք սույն աշխատության նախորդ էջերում: Կեղծ խալիֆայի կոչը չէր կարող օրինական ուժ ունենալ և արաբներին ոգեկոչեր սրբազան պատերազմի, որը նրանք տվյալ կոնկրետ դեպքում իրենց պատերազմը չէին համարում: Այս պարագան խոշոր սխալ էր Ստամբուլի կողմից:

Սուլթանի, նրա արքունիքի և բարձրագույն հոգևորականության կողմից աններելի վրիպում էր ժամանակի ընտրության հարցը՝ ջիհադ հայտարարելու տեսակետից: Ջիհադ հայտարարվեց այն ժամանակ, երբ արաբական քաղաքական միտքը, ազգային և կուսակցական գործիչները, հոգևորականության մեծամասնությունը, քաղաքական կուսակցությունները, լեգալ և գաղտնի կազմակերպությունները և ընկերությունները, նախապատերազմյան տարիներին, երկար դեգերումներից

հետո, արդեն կանգնել էին արաբական երկրների անկախության նվաճման ուղու վրա, անկախության հասնելը և արաբական ինքնուրույն պետություն ստեղծելը համարելով իրենց գերագույն ազգային և քաղաքական խնդիրը: Այդ գաղափարները և նրանց հետևում կանգնած ուժերը, որոնք տիրապետող էին հանդիսանում արաբական իրականության մեջ, բնականաբար, չէին կարող պաշտպան կանգնել արաբական երկրներին բռնության մեջ պահող թուրքական սուլթանի սրբազան պատերազմի կոչին: Եվ եթե նկատի ունենանք, որ նրանց հետևից էր գնում արաբ ժողովրդի մեծամասնությունը՝ գյուղացիությունը, ցեղերը, քաղաքային բնակչությունը, մտավորականությունը և կազմավորվող բուրժուազիան, ապա հասկանալի կդառնա արաբական հասարակության ճնշող մեծամասնության ժխտական դիրքորոշումը ջիհադի հանդեպ:

Արաբական հասարակության ներսում, իհարկե, կային ուժեր, տարբեր սոցիալական խավերի շահերը ներկայացնող ոչ մեծ խմբավորումներ, որոնք հանդես եկան ի պաշտպանություն ջիհադի: Այդ խմբի ղեկավարներից էր արաբական ազգային շարժման ականավոր դեմքերից մեկը՝ Աբդ առ–Ռահման Շահբանդերը: Ի նպաստ ջիհադի նրա և նրա ղեկավարած խմբի կողմնորոշման մեջ իր դերը խաղաց այն հանգամանքը, որ նրանք վախենում էին, որ պատերազմում Անգլիայի և Ֆրանսիայի հաղթանակի դեպքում շատ կուժեղանային նրանց դիրքերը և արաբական երկրները կընկնեին նրանց տիրապետության տակ: Ելնելով դրանից, Շահբանդերի խումբը նախապատվությունը տալիս էր Թուրքիային, հույս ունենալով, պատերազմից հետո արաբական երկրները Թուրքիայի ձեռքից կստանան ինքնավարություն: Շահբանդերին նման խոստումներ էր տալիս Ջեմալ փաշան, որը պատերազմի ժամանակ համարվում էր Սիրիայի անսահմանափակ կառավարիչը: Այդ պատճառով էլ Շահբանդերի խմբավորումը նպատակահարմար էր գտնում աջակցել Թուրքիային, ուստի և հանդես էր գալիս ի պաշտպանություն ջիհադի:

Կարծում ենք, որ աններելի միամտություն էր հավատ ընծայել Ջամալ փաշայի և օսմանյան մյուս ղեկավարների խոստումներին՝ արաբական երկրների ինքնավարության վերաբերյալ: Մյուս կողմից, Շահբանդերի մտավախությունը, որ պատերազմի ավարտից հետո արաբական երկրները կարող էին օկուպացվել Անգլիայի և Ֆրանսիայի կողմից և ընկնել նրանց տիրապետության կամ ազդեցության տակ, իր մեջ, անշուշտ, ճշմարտություն պարունակում էր: Սակայն չպետք է ժխտել նաև

այն տարբերակը, որ գերմանական բլոկի հաղթանակի դեպքում՝ Գերմանիան կարող էր օկուպացնել կամ իր վերահսկողությունը հաստատել արաբական երկրների վրա: Եվ Թուրքիան, նույնիսկ եթե ցանկանար էլ, ապա չէր կարող կանխել դա՝ լինելով գերմանական բլոկի ամենաթույլ օղակը և մեծապես կախված լինելով նրանից:

Իրադարձությունների զարգացումը ստիպեց Շահբանդերին և նրա կողմնակիցներին ավելի սթափ գնահատել իրականությունը և զարգացման հեռանկարները ու վերանայել իրենց դիրքորոշումը Թուրքիայի և ջիհադի հարցում: 1915 թ. սկզբներին նրանք հրաժարվեցին ջիհադը պաշտպանելու իրենց քաղաքականությունից:

Իսկ ինչ վերաբերում է Հիջազի կառավարիչ, Մեքքայի շերիֆ Հուսեյնին, որն առանցքային դերակատարում ուներ ջիհադի հարցում, ապա նա նույնպես, ի վերջո, կանգնեց ջիհադը չպաշտպանելու դիրքերում:

Պետք է նշել, որ Հուսեյնի հարաբերությունները Բարձր Դռան հետ միշտ էլ լարված են եղել: Նա մի քանի տարի, մինչև 1908 թ., եղել էր Ստամբուլում յուրատեսակ «պատվավոր» պատանդի վիճակում: Նրան՝ որպես մարգարեի տոհմի շառավիղ, արտաքուստ մեծ հարգանքներ էին մատուցում: Սուլթանի հրամանով նա նշանակվել էր սենատի անդամ: Բայց նա չէր կարող լքել Ստամբուլը: Սուլթանը նրան չէր վստահում: Սակայն 1908 թ. երիտթուրքերը նրա թեկնածությունն առաջարկեցին Հիջազի կառավարչի պաշտոնում՝ դժգոհ լինելով նրա նախորդից: Ամեն հարցում կասկածամիտ սուլթան Աբդուլ Համիդ II, դեմ էր նրա նշանակմանը, գտնելով, որ նա՝ վերադառնալով Մեքքա, ոչ թե Թուրքիայի բարեկամը կլինի, այլ կդառնա նրա թշնամին: Սակայն երիտթուրքերը, որոնք ամեն բանում հակադրվում էին սուլթանին, դեռևս գահընկեց չարված Աբդուլ Համիդ II–ին, պնդեցին Հուսեյնի թեկնածության վրա և նա նշանակվեց Հիջազի Մեծ շերիֆ՝ ի տարբերություն իր նախորդների, որոնք պարզապես շերիֆներ էին կոչվում:

Վերադառնալով Մեքքա, Հուսեյնը ձեռնարկեց մի շարք քայլեր իր իշխանությունն ուժեղացնելու ուղղությամբ, որը նշանակում էր Ստամբուլի իշխանության թուլացում: Մասնավորապես, նա կարողացավ վերականգնել շերիֆական ավանդական հեգեմոնիան Հիջազի ցեղերի վրա և փորձեց իր իշխանությունը տարածել մի շարք այլ ցեղերի վրա, որոնց նկատմամբ հավակնություններ ուներ Նաջդի տիրակալ Իբն Սաուդը: Իսկ երբ Իթիհադ վե թերակի կոմիտեն պահանջեց Հուսեյնից

ենթարկվել երիտթուրքերի կողմից մտցված կառավարման կենտրոնացված համակարգին, ինչպես մյուսները, Հուսեյնը հրաժարվեց կատարել նրանց պահանջը: Լարվածությունը հասավ այն աստիճանի, որ Կոմիտեն անգամ մտադիր էր Հուսեյնին գահընկեց անել: Բայց տեսնելով, որ դա հնարավոր չէ, քանի որ նա բավականին ամրացրել էր իր դիրքերը Հիջազում, և հասկանալով, որ դա կապված է մեծ բարդությունների հետ, իթիհադականները հրաժարվեցին այդ գաղափարից, և դրա փոխարեն որպես պատժամիջոց ընտրեցին՝ ուրիշ քայլ: Ստամբուլը Մեքքա ուղարկեց մի պաշտոնյայի՝ գլխավոր կառավարչի կամ վալիի աստիճանակարգով, որը պետք է վերահսկեր Հուսեյնին և նրան ստիպեր խոնարհաբար կատարել երիտթուրքերի բոլոր հրամանները և կարգադրությունները: Բայց շերիֆ–գլխավոր կառավարիչ մենամարտում հաղթող դուրս եկավ շերիֆը, որը կարողացավ նրան ենթարկել իրեն: Դա արտահայտվեց 1914 թ. գարնանը տեղի ունեցած մի իրադարձության ժամանակ: Գլխավոր կառավարիչը որպես շերիֆի հետ հաշտվելու նշան, հրապարակավ, արարողության ժամանակ, համբուրեց Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի հագուստի փեշը: Իսկ դա արդեն ոչ այնքան հաշտության, որքան ենթակայության խորհրդանշան էր:

Ահա այսպիսին էին Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյնի հարաբերությունները Ստամբուլի և իթիհադականների հետ, երբ հրապարակվեց օսմանյան ֆետվան ջիհադի վերաբերյալ: Թուրքիան անմիջապես դիմեց Հուսեյնին պահանջելով նրա դրական պատասխանը ջիհադի հարցում:

Սակայն Հուսեյնը հենց սկզբից որդեգրեց զգուշավոր քաղաքականություն, թեև Ստամբուլն ուժեղացրեց իր ճնշումը նրա վրա՝ պահանջելով նրանից ակտիվ կերպով պաշտպանել ջիհադը: Ստամբուլն ուղղակի ռմբակոծում էր Մեքքան հեռագրերով, որ նրան ուղարկում էին Օսմանյան կայսրության մեծ վազիրը, ռազմական նախարար Էնվերը, ներքին գործերի նախարար Թալեաթը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Այդ բոլոր հեռագրերը նույն բովանդակությունն ունեին: Նրանք պահանջում էին Հուսեյնից անհապաղ հանդես գալ ի պաշտպանություն սուլթանի հռչակած ջիհադի:

Շուտով նրանց միացավ նաև Ջեմալ փաշան, Սիրիայում տեղակայված թուրքական IV բանակի գլխավոր հրամանատարը, Թուրքիայի ռազմածովային նախարարը և Սիրիայի ամենակարող կառավարիչը: Վերջինս, տեսնելով Հուսեյնի խուսափողական վարքագիծը, նրանից

կտրուկ կերպով պահանջում էր, որ Հիջազի շերիֆը բացահայտորեն, հրապարակավ հայտարարի ջիհադը պաշտպանելու իր որոշման մասին: Նա դրան ավելացրեց ևս երկու պահանջ՝ Դամասկոս ուղարկել Մուհամմադ մարգարեի դրոշը և Հիջազի ցեղերից պատրաստել մի բանակ և այն դուրս բերել հանուն սրբազան պատերազմի:

Հուսեյնը հայտնվեց ծանր երկընտրանքի առջև: Նա շատ լավ էր գիտակցում, որ իր որոշումից շատ բանով է կախված սրբազան պատերազմի կայանալու կամ չկայանալու ճակատագիրը: Այդ բանը քաջ գիտակցում էր նաև օսմանյան ղեկավարությունը:

Հուսեյնը, հասկանալի է, չէր կարող խուսափել իրեն ուղղված հարցերին ու պահանջներին պատասխանելուց: Եվ նա պատասխանեց: Ստամբուլ՝ կայսրության ղեկավարներին ուղղված նամակում, նա գրում էր, որ նա «ամբողջ սրտով կպաշտպանի սրբազան պատերազմը և իր հոգում աղոթում է նրա հաջողության համար, և դրան լռելյայն տալիս է իր օրհնանքը:» Ինչ վերաբերում է սրբազան պատերազմը բացահայտ, հրապարակայնորեն պաշտպանելուն, ապա շերիֆը գտնում էր, որ դա քննարկման հարց չի կարող դառնալ՝ վախենալով թշնամու պատասխան հարվածներից: Եվ ի հաստատումն իր փաստարկների, Հուսեյնը մատնանշում է, որ Կարմիր ծովում տիրապետում է Անգլիան, Ջիդան և Հիջազի ամբողջ ծովեզրը գտնվում են անգլիացիների ողորմածության տակ: Եվ եթե այս պայմաններում ինքը, ինչպես գրում էր Հուսեյնը, «բացեիբաց իրեն կապի ջիհադի հետ, ապա Անգլիան կհակազդի շրջափակումով և Հիջազի նավահանգիստների հավանական ռմբակոծումով, սննդի մատակարարումը ծովից կդադարի և բնակչությունը շատ շուտով կզգա պակասություն (սննդամթերքի — Ն. Հ.) և ժամանակի ընթացքում սով կլինի»: Շարունակելով իր փաստարկները, Հուսեյնը դարձյալ շեշտում է, որ ամբողջ սրտով կպաշտպանի սրբազան պատերազմը, «բայց ոչ նրա հրապարակային պաշտպանությամբ»: Այստեղ նա մի հավելում է կատարում, ընդգծելով, որ «սովը Հիջազում կառաջացնի ցեղերի ապստամբություն»:

Այս էր Հուսեյնի դիրքորոշումը ջիհադի հարցում, որը, դժվար չէ նկատել, բացասական էր, և որից նա երբեք չհրաժարվեց, հակառակ Ստամբուլի բացահայտ ճնշումների:

Մերժելով օսմանյան ղեկավարությանը սրբազան պատերազմում աջակցություն ցույց տալու հարցում, մնացած, երկրորդական հարցերում նա բավարարեց Ստամբուլի պահանջները, մասնավորապես

մարգարեի դրոշը Դամասկոս՝ Ջեմալ փաշային ուղարկելու խնդրում: Այդ դրոշը, որ Ջ. Անտոնիուսն ուղղակի լաթ է համարում, Հուսեյնը մեծ հանդիսավորությամբ Մադինայից, որտեղ նա պահվում էր, ուղարկեց Դամասկոս, որը պետք է ծառայեր որպես օրհնանք՝ եգիպտոս ներխուժելու պատրաստվող թուրքական բանակի համար: Նա նաև փորձեց Հիջազի ցեղերից զինվորներ պատրաստել, որոնք կոչվեցին մուջահեդիններ՝ այսինքն ջիհադի համար մարտնչողներ, որոնք, իբր, պետք է մասնակցեին սրբազան պատերազմին:

Դրա հետ միասին նա դիմեց նաև մի շարք նախազգուշական քայլերի: Նա խիստ գաղտնապահության պայմաններում իր վստահելի հանձնակատարներին ուղարկեց՝ համապատասխան նամակներով, Ասիրի էմիր Իդրիսիին, Նաջդի էմիր Իբն Սաուդին, Շամարի էմիր Իբն Ռաշիդին և Եմենի իմամ Յահայային: Այդ նամակներում Հուսեյնը ջիհադի վերաբերյալ իր տեսակետների մասին էր նրանց տեղյակ պահում, մի կողմից, և փորձում էր նրանց տեսակետներն իմանալ այդ հույժ կարևոր խնդրի վերաբերյալ, մյուս կողմից: Նրանց պատասխանները տարբեր եղան: Եմենը, որտեղ տեղակայված էր երկու թուրքական դիվիզիա, նպատակահարմար գտավ հանդես գալ, գոնե ձևականորեն, հօգուտ ջիհադի պաշտպանության: Թուրքական առաջարկությունը պաշտպանեց նաև Իբն Ռաշիդը, որը սուր պայքարի մեջ էր գտնվում Նաջդի էմիր Իբն Սաուդի հետ: Այս վերջինս, ինչպես և Ասիրի էմիր Իդրիսին, հրաժարվեցրին պաշտպանել ջիհադի վերաբերյալ օսմանյան առաջարկությունը: Այսպիսով՝ Արաբիայի պետական հինգ կազմավորումներից երկուսը՝ Եմենը և Շամարը, հանդես եկան հօգուտ սրբազան պատերազմին աջակցելու, իսկ երեքը՝ Հիջազը, Ասիրը և Նաջդը՝ դեմ արտահայտվեցին: Նրանց միացավ նաև Քուվեյթի էմիր շեյխ աս–Սաբահը, ապա նաև Սուդանի առաջնորդ Սայիդ Ալի ալ–Միրղանին:

Ստամբուլը իր հանձնակատարներին՝ գաղտնի կերպով, ուղարկել էր նաև եգիպտոս, Ալժիր, Թունիս և Մարոկկո, որոնք գտնվում էին Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետության ներքո: Նրանք այնտեղ պետք է քարոզչական աշխատանք տանեին հօգուտ այդ երկրների միացման սրբազան պատերազմին: Բայց արդյունքները հուսադրիչ չեղան:

Օսմանյան հանձնակատարներ ուղարկվեցին նաև մուսուլմանական այլ երկրներ, որտեղ համեմատաբար ավելի ազատ էր գործելը: Որպես այդպիսիներ՝ գնում էին քարոզիչներ, կրոնագետ–գիտնականներ,

ագիտատորներ, անգամ գերմանական արևելագետներ: Սակայն, նրանք նույնպես նշանակալի հաջողության չհասան:

Հուսեյնի հրաժարվելը բացահայտորեն սրբազան պատերազմը պաշտպանելուց, ինչպես նաև նրա գործունեությունը, որի մասին թեև ոչ լրիվ, բայց, այդուհանդերձ, տեղյակ էին Ստամբուլում, խիստ զայրացրեց իթիհադականների բարձրագույն ղեկավարությանը: Իթիհադականները որոշեցին տապալել Հուսեյնին և նրա փոխարեն այնպիսի մեկին նշանակել, որը բարեկամաբար տրամադրված լիներ Թուրքիայի հանդեպ: Դրա վերաբերյալ համապատասխան հրահանգ ստացավ իթիհադականների կողմից Հիջազում նշանակված գլխավոր կառավարիչը: Նրան հրահանգվեց ձերբակալել Հուսեյնին, բայց այնպես անել, որ դա չհարուցի Հիջազի ցեղերի ապստամբությունը:

Հուսեյնին հրավիրեցին Դամասկոս՝ խորհրդակցության Ջեմալ փաշայի հետ, սակայն նա հրաժարվեց այդ հանդիպումից: Երկար տարիներ ապրած լինելով Ստամբուլում և շատ լավ ծանոթ լինելով թուրքական բարքերին, նա խելամտորեն չէր ցանկանում հեռանալ Հիջազից և մեկնել Սիրիա, որտեղ երիտթուրքական եռապետության անդամներից մեկը՝ Ջեմալը, լիակատար տեր ու տնօրեն էր և կարող էր անել ամեն բան, ինչ ցանկանար:

Դրա փոխարեն նա, ինչպես նշեցինք, ուղարկեց մարգարեի դրոշը, որը գնացքով Դամասկոս հասավ 1914 թ. դեկտեմբերի 15–ին: Դրոշը դիմավորեցին աննախընթաց հանդիսավորությամբ: Դիմավորելու էին գնացել Ջեմալ փաշան, Դամասկոսի վալին, քաղաքացիական և հոգևոր բարձրագույն ղեկավարությունը, երևելի անձնավորություններ, պատվիրակություններ Սիրիայի տարբեր մասերից: Ասկյարները դրոշը դիմավորեցին մերկացրած սրերով, իսկ Ջեմալ փաշան ծնկաչոք համբուրեց դրոշը: Այդ պահին ամբոխը բղավեց՝ «Ալլահ աքբար»՝ «Ալլահն ամենամեծն է»:

Բանակին ոգևորելու համար մարգարեի դրոշը տարան նաև այլ զորամասեր, այդ թվում և Երուսաղեմ: Եվ ամենուր նրան ուղեկցում էր Ջեմալ փաշան, իսկ զինվորական ամբոխը բղավում էր «Ալլահ աքբար»:

Ջ. Անտոնիուսը այս բոլոր կատակերգությունը համարում է վրիպում, սակայն, գտնում էր, որ դրա «պատմական գլխավոր հետաքրքրությունը կայանում է նրանում, որ նա ցուցադրում է այն կարևորությունը, որ թուրքերը (և նրանց հետևում՝ գերմանացիները) ջիհադի կոչի հաջողությունը կապում էին արաբական երկրների հետ»: Այսինքն, դրոշի

հետ կապված ամբողջ պատմությունը վկայում էր արաբական գործոնի կարևորությունը ջիհադի հարցում, որին՝ արաբական գործոնին, հարկադրաբար, այնքան մեծ տեղ էին հատկացնում իթիհադականները:

Թուրքիայի ղեկավարությանը չհաջողվեց գահընկեց անել և ծերբակալել Հուսեյնին: Թուրքերի ջանքերը՝ շարժման մեջ դնել մուսուլմանական տասնյակ միլիոնավոր զանգվածներին և ջիհադը կոչից վերածել իրողության, չպսակվեցին հաջողությամբ: Նրանց հիմնական մասը չմիացավ այդ շարժմանը և ոտքի չելավ սրբազան պատերազմի՝ ընդդեմ քրիստոնյաների:

1915 թ. առաջին կեսերին բոլորի համար ակնհայտ դարձավ, որ սրբազան պատերազմը դեռևս չսկսված, ձախողվել է:

Դրանում իր կարևոր ներդրումն ունեցան արաբները: Դա վկայությունն էր արաբական գործոնի մեծ ներուժի մասին:

Արաբական գործոնը իր ծանրակշիռ ներդրումն ունեցավ նաև թուրքական բանակների պարտության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հատկապես 1916 թվականից, երբ սկսվեց արաբական հակաթուրքական ապստամբությունը: Սերտորեն համագործակցելով անգլիական զորքերի հետ, արաբական ապստամբ բանակը երկրից դուրս էր մղում թուրքական զորքերին և քայլ առ քայլ ազատագրում սեփական հայրենիքը: Արաբական զորքերի ներդրումը թուրքական զորքերի պարտության և պատերազմը հօգուտ Անտանտի երկրների ավարտելու մեջ, արաբական գործոնի նշանակությունն ըստ արժանվույն է գնահատվել Անտանտի երկրների պետական և ռազմական գործիչների կողմից:

Այսպիսով՝ ամփոփելով, կարող ենք ասել, որ արաբական գործոնն իր կարևոր դերակատարումն է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նրա նշանակությունը՝ ֆունկցիոնալ առումով, դրսևորվել է չորս ոլորտներում. ա) նա իր որոշակի դերն է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի պատճառների մեջ, բ) այլ գործոնների հետ միասին պատճառ հանդիսացել, որ Օսմանյան կայսրությունը պատերազմի ժամանակ միանա Եռյակ դաշինքին կամ գերմանական բլոկին, գ) վճռական ազդեցություն է ունեցել օսմանյան սուլթանի կողմից ջիհադի՝ սրբազան պատերազմի ձախողման գործում, և դ) անգնահատելի ներդրում է ունեցել արաբական ռազմաճակատներում թուրքական բանակի պարտության և արաբական հայրենիքի ազատագրման մեջ: Իսկ դա նշանակում է, որ արաբական գործոնն իր, թե-

կուզ և համեստ, բայց ոչ արհամարհելի ներդրումն է ունեցել Օսմանյան կայսրության կործանման պատմական իրադարձության մեջ:

Առանց հաշվի առնելու արաբական գործոնը, նրա դերակատարումը և ազդեցությունը, հնարավոր չէ հարազատորեն լուսաբանել 1914–1918 թթ. պատմական գործընթացները:

3. Եգիպտոսը՝ անգլիական պրոտեկտորատ

Անգլիան, ինչպես նշել ենք, 1882 թ. գրավեց Եգիպտոսը, որը ստացավ ժամանակավորապես օկուպացված երկրի կարգավիճակ: Բայց իրավական առումով, նա դեռ շարունակում էր Օսմանյան կայսրության մասը կազմել, իսկ օսմանյան սուլթանը համարվում էր նրա սյուզերենը: Դա սոսկ ձևական բնույթ էր կրում, քանի որ Անգլիան Եգիպտոսը կառավարում էր այնպես, ինչպես նրա տիրապետության տակ գտնվող գաղութային կախյալ մյուս երկրները:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Եգիպտոսն Անգլիայի համար անմիջապես ձեռք բերեց ստրատեգիական մեծ կարևորություն: Նրա ռազմա–քաղաքական ծրագրերի իրագործումը արաբական աշխարհում, Մերձավոր Արևելքում և Հնդկական օվկիանոսի մատույցներում և ավազանում, զգալի չափով կախված էր նրա դիրքերի ամրությունից Նեղոսի ափերում փռված այդ երկրում: Այդ պահից սկսած Եգիպտոսը դադարեց սովորական իմաստով գաղութային կախյալ երկիր լինելուց, և վերածվեց բրիտանական կարևոր ռազմական նշանակություն ունեցող հենարանի, որը նշանակալի դեր խաղաց պատերազմի տարիներին:

1914 թ. օգոստոսի 5–ին, Անգլիայի և Գերմանիայի միջև պատերազմը սկսվելուց երկու օր անց, եգիպտական կառավարությունը հրապարակեց մի դեկլարացիա, որն արգելում էր որևէ հարաբերություններ պահպանել Գերմանիայի հետ, որն այնուհետև տարածվեց նաև Ավստրո–Հունգարիայի և Թուրքիայի վրա: 1914 թ. օգոստոսի 6–ին Եգիպտոսի վարչապետ Հուսեյն Ռուշդին հայտարարեց, որ թուրքական գերիշխանությանը վերջ է տրվում և, անկախ այն բանից, թե կրոնական ու սոցիալական ինչպիսի կապեր գոյություն ունեն եգիպտացիների ու թուրքերի միջև, «Եգիպտոսն այսուհետև չի կազմելու Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասը»: Հասկանալի է, որ եգիպտական կառավարության այս որոշումն ընդունվել էր ոչ միայն Անգլիայի գիտությամբ ու

հավանությամբ, այլև որոշակի ճնշման ներքո: Սակայն ինքը՝ անգլիական կառավարությունը ձեռնպահ մնաց նման հայտարարությամբ հանդես գալուց, գտնելով, որ դրա պահը դեռևս չի եկել: Այստեղ մենք նկատի ունենք այն պարագան, որ Թուրքիան դեռևս պաշտոնապես պատերազմի մեջ չէր մտել: Սակայն եգիպտական վարչապետի հայտարարությունը ազդանշան էր Թուրքիային այն մասին, թե դեպքերն ինչ ուղղությամբ կարող են զարգանալ, եթե Թուրքիան պատերազմում հանդես գար Եռյակ դաշինքի կողմում:

Եգիպտական վարչապետի պաշտոնական հայտարարությունը Գերմանիայի և Անգլիային թշնամի մյուս պետությունների հետ կապերը խզելու մասին, իրավունք էր տալիս Անգլիային ազատորեն օգտվել եգիպտական տերիտորիայից, երկաթուղային և ցամաքային ճանապարհներից ու նավահանգիստներից ռազմական նպատակների համար և կոչ անել եգիպտացիներին պաշտպանել ու օգնություն ցույց տալ Մեծ Բրիտանիային: Եգիպտական կառավարության հայտարարությունը մի շարք սահմանափակումներ մտցրեց, մասնավորապես նա արգելում էր եգիպտական նավերին մտնել Անգլիային թշնամի երկրների նավահանգիստները, այդ երկրների հետ առևտուր անել: Անգամ արգելվում էր եգիպտացիներին նամակագրություն հաստատել կամ պահպանել Անգլիային թշնամի երկրների բնակիչների հետ:

Պատերազմն Անգլիայի և Թուրքիայի միջև դեռևս չէր սկսվել, սակայն, ոչ ոք չէր կասկածում, որ այն վաղ թե ուշ սկսվելու է: Այդ պատճառով Անգլիան ձեռք առավ որոշ նախազգուշական միջոցառումներ: 1914 թ. նոյեմբերի 2–ին, Անգլիայի և Թուրքիայի միջև պատերազմ հայտարարելուց չորս օր առաջ, Եգիպտոսում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Ջոն Գրենվիլ Մաքսուելը Եգիպտոսում ռազմական դրություն մտցրեց: Այդ պահից ամբողջ իշխանությունը Եգիպտոսում անցավ նրա ձեռքը և կառավարման բոլոր մարմինները պարտավոր էին անվերապահորեն և առանց առարկության, ենթարկվել նրա հրամաններին ու կատարել նրա կողմից ընդունված որոշումները: Այնուհետև նա հրապարակեց Անգլիայի կողմից Եգիպտոսը պաշտպանելու վերաբերյալ դեկլարացիա: Երկրում մտցվեց գրաքննություն և եգիպտացիներին խստիվ պատվիրվեց ենթարկվել ռազմական իշխանություններին: Ներքին անդորրությունը պահպանելու նպատակով, արգելվեցին զանգվածային հավաքները, էլ չենք խոսում ցույցերի մասին:

Բրիտանական ռազմական իշխանությունների հանձնարարությամբ, Եգիպտոսի կառավարությունը հետաձգեց Օրենսդիր ժողովի գումարումը՝ սկզբում երկու ամիս ժամանակով, իսկ այնուհետև՝ պատերազմի ժամանակ այն ընդհանրապես չգումարվեց:

Այդ բոլորը կարելի է համարել նախապատրաստական քայլեր Մեծ Բրիտանիայի կողմից Եգիպտոսի կարգավիճակի հարցում արմատական որոշում ընդունելու ուղղությամբ: Եվ այդ քայլը նա կատարեց:

1914 թ. դեկտեմբերի 18–ին անգլիական կառավարությունը հայտարարեց Եգիպտոսի վրա իր պրոտեկտորատը հաստատելու մասին: Անգլիայի արտաքին գործերի նախարարության հաղորդագրության մեջ ասված էր, որ Եգիպտոսն անջատվում է Թուրքիայից, որի վրա հաստատվում է բրիտանական պրոտեկտորատ:

Պրոտեկտորատի հաստատումը Անգլիայի կողմից կատարվեց միակողմանիորեն, առանց հանրաքվեի կամ խորհրդակցության՝ եգիպտական քաղաքական ուժերի հետ:

Անդրադառնալով այդ հարցին, եգիպտական պատմաբան Աբդ առ Ռահման առ–Ռաֆիին «Ապստամբությունը Եգիպտոսում 1919 թ.» իր հետաքրքիր աշխատության մեջ նշում է, որ «ծպտյալ պրոտեկտորատը, որ Անգլիան պարտադրել էր Եգիպտոսին 1882 թ., իր տեղը զիջեց ակնհայտ, ոչնչով չքողարկված պրոտեկտորատին»: Իսկ եգիպտական մեկ այլ պատմաբան, բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ Ամին Սաիդը, «Արաբների ապստամբությունները XX դարում» իր գրքում նկատել է, որ անգլիական պրոտեկտորատի հաստատումով, կտրվեց վասալական կախվածության այն «բարակ թելը», որը դեռ Եգիպտոսը կապում էր Թուրքիայի հետ, և Եգիպտոսն անցավ անգլիական տիրապետության տակ գտնվող երկրների շարքը:

Պրոտեկտորատի հաստատումը ձնական քայլ չէր: Նա համապատասխան փոփխություն առաջ բերեց Եգիպտոսի կարգավիճակում և կառավարման համակարգում: Անգլիան մտցրեց նոր՝ գլխավոր կոմիսարի պաշտոնը, որը համարվում էր ամենաբարձր պաշտոնյան Եգիպտոսում՝ օժտված ամենալայն լիազորություններով: Մինչ այդ՝ 1882 թվականից, Եգիպտոսում Անգլիայի բարձրագույն ներկայացուցիչը համարվում էր գլխավոր հյուպատոսը, որը միաժամանակ համարվում էր բրիտանական դիվանագիտական ներկայացուցիչ Եգիպտոսում: Այժմ դա վերացվում էր և նրան փոխարինելու էր գալիս գլխավոր կոմիսարը, որը ոչ թե դիվանագիտական, այլ վարչական պաշտոն էր: 1914 թ., պրո-

տեկտորատի հաստատումից հետո, Եգիպտոսում Անգլիայի առաջին գլխավոր կոմիսար նշանակվեց Մակ–Մահոնը, որն այդ պաշտոնը վարեց մինչև 1916 թ.:

Պրոտեկտորատի հաստատումից հետո վերացվեց Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը, իսկ հետագայում ցրվեց Օրենսդիր ժողովը և այլն:

1914 թ. դեկտեմբերի 19–ին անգլիացիները գահընկեց արեցին խդիվ Աբբաս II Հիլմիին, որը թուրքական ու գերմանական կողմնորոշում ուներ, և նրա փոխարեն գահ նստեցրին Հուսեյն Քամիլին, նրան շնորհելով սուլթանի տիտղոս:

Անգլիական պրոտեկտորատի հաստատումը եգիպտացիներն ընդունեցին մեծ դժգոհությամբ: Չմոռանանք, որ շատ եգիպտացիներ եղել են նահդայական շարժման ակտիվ մասնակիցներ ու դեմքեր, արաբական ազգային զարթոնքի ռահվիրաներ, իսկ ոմանք ամուր կանգնած էին արաբների անկախության նվաճման դիրքերում: Օսմանյան տիրապետության դեմ պայքարող այդ գործիչների և ուժերի համար հավասարապես անընդունելի էր նաև անգլիական պրոտեկտորատը, քանի որ նրանք պայքարում էին ոչ թե օսմանյան տիրապետությունը եվրոպական, տվյալ դեպքում՝ անգլիական տիրապետությամբ փոխարինելով, այլ արաբական աշխարհի ազատագրման համար:

Ժողովրդի դիմադրությունը կոտրելու և հնարավոր հուզումները կանխելու համար, անգլիական ռազմական իշխանությունները դիմեցին բռնի միջոցների: Ազգային գործիչների մի մասը ձերբակալվեց, իսկ մյուս մասը աքսորվեց Եգիպտոսից: Արգելվեցին բոլոր տեսակի ժողովները և հավաքույթները, ուժեղացվեց գրաքննությունը: 1915 թ. փետրվարի 18–ին պրոտեկտորատի հաստատման դեմ իրենց բողոքը հայտնեցին Կահիրեի իրավաբանական ուսումնարանի ուսանողները: Այդ նույն թվականին եգիպտական հայրենասերները երկու անգամ մահափորձ կատարեցին սուլթան Հուսեյն Քամիլի դեմ, որին համարում էին անգլիացիների դրածո և կամակատար, վարչապետ Հուսեյն Ռուշդի փաշայի, վակուֆների նախարարի դեմ և այլն:

Պատերազմը և պրոտեկտորատի հաստատումը ծանր անդրադարձավ Եգիպտոսի տնտեսության և բնակչության վիճակի վրա: Պատերազմի առաջին օրվանից Անգլիան ձգտում էր Եգիպտոսի տնտեսությունը հարմարեցնել Անգլիայի պահանջների բավարարմանը: Նախ, նա օգտագործեց Եգիպտոսի ոսկու պաշարները, շրջանառությունից

հանվեցին ոսկյա և արծաթյա դրամները և գործածության մեջ դրվեցին արժեզրկվող թղթադրամը: Դա հանգեցրեց ամենաանհրաժեշտ ապրանքների և սննդամթերքի գների բարձրացմանը, որը ծանր հարված էր եգիպտական բնակչությանը և նրա անապահով խավերին:

Եգիպտական տնտեսությանը ծանր հարված հասցրեցին եգիպտական բյուջեից կատարվող հատկացումները՝ ռազմական շինարարության, խրամատների, ճանապարհների, ամրությունների կառուցմանը: Դա արվեց անգլիականիշխանությունների պարտադրանքով, թեև պատերազմի սկզբին Անգլիան պաշտոնապես հայտարարեց, որ պատերազմի բեռը նա վերցնում է իր վրա: Բայց այդպես չեղավ: Ընդհակառակն, Անգլիան ամեն ինչ անում էր պատերազմի ծանրությունը եգիպտացիների ուսերին գցելու համաւ, և դա հաջողվում էր նրան:

Ռազմական ծախսերը ծածկելու համար և լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու համար, բարձրացվեցին հարկերը:

Անգլիական զինվորական իշխանությունները գյուղացիներից խլում էին հացը և գյուղատնտեսական այլ մթերքներ՝ Եգիպտոսում տեղակայված անգլիական 275 հազարի հասնող բանակի պարենային պահանջները բավարարելու համար: Դրանով էր պայմանավորված նաև անգլիական իշխանությունների որոշումը Եգիպտոսից ընդհանրապես մթերքների արտահանումն արգելելու մասին:

Պատերազմի տարիներին անգլիացիները Եգիպտոսում ստեղծեցին այսպես կոչված աշխատանքային բանակ կամ կորպուս, որի շարքերում հաշվվում էր մոտ 1,5 մլն մարդ՝ ֆելլահներ, բեդվիններ, արհեստավորներ և բնակչության այլ չունևոր խավեր: Դա իբր կատարվում էր կամավորության սկզբունքներով, իրականում դա իրականացվում էր հարկադրանքով, քանի որ աշխատանքային բանակի մասնակիցներին պարտադրում էին կատարել ամենադժվար, ավելի ճիշտ կլինի ասել, տաժանակիր աշխատանքներ: Մարդիկ չէին դիմանում աշխատանքային սարսափելի պայմաններին և շատերը փորձում էին փախչել: Սակայն ոստիկանները փնտրում և գտնում էին նրանց, հետ վերադարձնում ու նորից դատապարտում տաժանակիր աշխատանքի: Աշխատանքային կորպուսների անդամների վրա դրված էր խրամատներ փորելու, երկաթուղային գծեր և ջրատարներ կառուցելու պարտականությունները, որոնք նրան ստիպված էին կատարել անապատներում, կիզիչ արևի տակ, մշտապես տառապելով թերասնումից, անգամ սովից: Նրանցից

շատերը, տասնյակ հազարավորներ մահանում էին՝ չդիմանալով դժոխային պայմաններին:

Դրա հետ միասին պետք է նշել, որ պատերազմը որոշակիորեն նպաստեց եգիպտական արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացմանը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ խիստ կրճատվեց արդյունաբերական ապարանքների ներմուծումը Եգիպտոս: Եգիպտական արդյունաբերողների համար մրցակցության դաշտը թուլացավ, օտար ապրանքների ներմուծման կրճատումը պայմաններ ստեղծեց տեղական արդյունաբերության ընդլայնման համար: Զարգացավ հատկապես կաշվեղենի, կարի, տեքստիլ, կոշիկի, շաքարի, կահույքի և այլ ճյուղեր, բացվեցին մանր և միջին ձեռնարկություններ, որոնք սպասարկում էին Եգիպտոսում գտնվող անգլիական զորքերի կարիքը, մի կողմից, և բավարարում տեղական բնակչության պահանջները, մյուս կողմից: Ավելացավ արդյունաբերության մեջ ներգրավված աշխատողների թվաքանակը: Պատերազմի ավարտին այդ բնագավառում զբաղված էր մոտ կես միլիոն մարդ:

Հասկանալի է, որ այդ ոլորտում զբաղված արդյունաբերողներն աննախընթաց չափերով հարստացան: Պատերազմը հարստանալու հիանալի պայմաններ ստեղծեց նաև խոշոր հողատերերի և վաճառականների համար, որոնք կապված էին անգլիական բանակի կարիքները բավարարելու հետ: Զուգահեռաբար մեծ ծաղկում ապրեց «սև շուկան» և սպեկուլյացիան:

Այդ բոլորը տեղի էր ունենում եգիպտացիների հիմնական մասի զանգվածային աղքատացման ընդհանուր ֆոնի վրա:

Պրոտեկտորատի հաստատումից հետո, ներքին դրությունը Եգիպտոսում մնում էր լարված և ուժեղանում էր դժգոհությունն անգլիացիների քաղաքականության նկատմամբ: Սակայն դա չվերածվեց հակաբրիտանական ժողովրդական լայն շարժման: Անգլիացիները հմտորեն կարողանում էին վերահսկել իրադրությունը, անշեղորեն գործում էին ցույցերի և հավաքների արգելման վերաբերյալ օրենքը, գրաքննությունը, որը եգիպտական մամուլի բերանը փակելու հուսալի զենք էր անգլիական իշխանությունների ձեռքում: Թուլացել էր ազգայնական ուժերի գործունեությունը: Նրանց ղեկավարների և ակտիվիստների մի մասը ձերբակալված էր, իսկ մի մասն էլ արտաքսված էր երկրից և ապաստան էր գտել արտասահմանում՝ Բեռլինում, Ժնևում և այլուր: Ճիշտ է, նրանք այնտեղ ինչ–որ գործունեություն ծավալեցին, բայց դա չէր կա-

րող զգալի ներգործություն ունենալ Եգիպտոսի ներքաղաքական կյանքի վրա: Իր նշանակությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ եգիպտական արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի այն խավերը, որոնք համագործակցում էին անգլիական իշխանությունների ու գործարարների հետ, մեծ շահույթներ ստանում և հարստություն կուտակում, նրանք շահագրգռված չէին հակաբրիտանական պայքարի, առավել ևս այդ պայքարի ուժեղացման մեջ:

1916–1918 թթ. փոփոխություններ տեղի ունեցան Եգիպտոսի ղեկավարության մեջ: 1916 թ., Մակ–Մահոնի փոխարեն, Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար նշանակվեց Ռեջինալդ Ուինգեյթը, որը մինչ այդ Սուդանի գլխավոր կառավարիչն էր: Նա, ավելի քան երեսուն տարի՝ որպես բրիտանական պաշտոնյա, ծառայել էր Սուդանում և մոտիկից ծանոթ էր նաև Եգիպտոսի և արաբական ընդհանուր խնդիրներին, աչքի էր ընկնում կամային մեծ հատկանիշներով և բրիտանական քաղաքականությունն արաբական երկրներում իրականացնելու վճռականությամբ:

1917 թ. մահացավ սուլթան Հուսեյն Քամիլը: Անգլիական իշխանությունները եգիպտական սուլթանի գահն առաջարկեցին նրա որդուն՝ Քամալ ադ–Դին Հուսեյնին, ցանկանալով պահպանել դինաստիական հաջորդայնությունը: Սակայն, տեղի ունեցավ անսպասելին: Նա հրաժարվեց զբաղեցնել սուլթանական գահը, որը բացատրվում է նրա հակաանգլիական տրամադրություններով: Նա չէր ցանկանում դառնալ անգլիական գաղութարարների խամաճիկը: Շտապ պետք էր մի նոր թեկնածու գտնել: Անգլիացիների ընտրությունն ընկավ իշխան Ահմադ Ֆուադի վրա՝ դարձյալ Մուհամմադ Ալիի տոհմից, որին Մեծ Բրիտանիան 1917 թ. հոկտեմբերի 9–ին առաջարկեց Եգիպտոսի սուլթանի գահը, որն անհապաղ ընդունեց այդ անսպասելի «նվերը»:

Ահմադ Ֆուադը խդիվ Իսմայիլի կրտսեր որդին էր և Մուհամմադ Ալիի թոռը: Սակայն նա կյանքի մեծ մասն անց էր կացրել Եգիպտոսից դուրս, գլխավորապես Իտալիայում, նույնիսկ ծառայել իտալական բանակում: Նա համարյա կապված չէր Եգիպտոսի և եգիպտական իրականության հետ, վատ գիտեր երկիրը: Եգիպտոսի ներսում նա չուներ լուրջ սոցիալական հենարան, որի վրա կարողանար հենվել և շատ թե քիչ անկախ քաղաքականություն վարեր: Անգլիական կառավարությունը վստահ էր, որ դա խոցելի է դարձնում Ահմադ Ֆուադին և կախման մեջ գցում սուլթանին բրիտանական իշխանություններից:

Եվ Մեծ Բրիտանիայի կառավարությունը չսխալվեց:

4. Պատերազմի անդրադարձը Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի ներքին դրության վրա

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը, հասկանալի է, չէր կարող չանդրադառնալ արաբական երկրների, տվյալ դեպքում Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի քաղաքական մթնոլորտի, տնտեսական դրության և ընդհանուր վիճակի վրա, որտեղ, մասամբ նաև Արաբիայում, Թուրքիան դեռևս իշխանություն և ազդեցություն ուներ, ի տարբերություն Եգիպտոսի, Քուվեյթի, Պարսից ծոցի արաբական շեյխությունների, որոնք գտնվում էին Անգլիայի հսկողության տակ, կամ Ալժիրի, Թունիսի և Մարոկկոյի, որոնք Ֆրանսիային ենթակա երկրներ էին:

Արաբական այդ երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը և Արաբիան, բացառիկ նշանակություն ունեին Թուրքիայի և նրա հետևում կանգնած Գերմանիայի համար և հանդիսանում էին թուրք–գերմանական բլոկի գլխավոր հենարանը: Նրանք չէին կարող ակտիվ գործունեություն ծավալել արաբական այլ երկրներում, քանի որ նրանք գտնվում էին, ինչպես նշեցինք, Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետության տակ կամ ազդեցության գոտում, ուստի և մատչելի չէին նրանց: Պատմաաշխարհագրական Սիրիան, մասամբ նաև Իրաքը, դարձան այն միակ տարածքը, որը Թուրքիան և Եռյակ դաշինքի առաջատար երկիրը հանդիսացող Գերմանիան, կարող էին օգտագործել իրենց ստրատեգիական ծրագրերի իրականացման համար: Նրանք այդ տարածքը ծրագրում էին օգտագործել նախ և առաջ Եգիպտոսի դեմ պատերազմական գործողություններ ծավալելու համար, նպատակ ունենալով այն վերագրավել Անգլիայից, ծանր հարված հասցնել բրիտանական դիրքերին և դուրս մղել նրան Արաբական արևելքից, այնուհետև ներթափանցել Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկա:

Ելնելով ստրատեգիական այդ խնդրից, Թուրքիան Գերմանիայի օգնությամբ փորձեց Սիրիան վերածել ռազմական ամրոցի:

Պատերազմի սկզբում Սիրիայում տեղակայված էր բանակային երկու կորպուս, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր երեք–չորս դիվիզիաներից: Նրանց զորքերի ընդհանուր թվաքանակը կազմում էր 60–70 հազար մարդ: Համեմատելու համար նշենք, որ այդ ժամանակ Եգիպտոսում անգլիական զորքերի թիվը հասնում էր վեց հազարի,

իսկ Սուդանում տեղակայված անգլիական կայազորի հետ միասին՝ 13 հազարի:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, Սիրիայում և Պաղեստինում տեղակայված թուրքական բանակը վերակազմավորվեց և ստեղծվեց թուրքական IV բանակը, որի ղեկավարման կենտրոնի՝ գլխավոր շտաբի նստավայրը, դարձավ Դամասկոսը: Այդ բանակի հրամանատար նշանակվեց երիտթուրքական եռապետության անդամ, Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշան: Շտաբի պետը դարձավ գերմանական բանակի գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնը: Նա միակ գերմանացի սպան չէր այդ շտաբում: Այնտեղ զանազան պաշտոններ էին գրավում գերմանական այլ սպաներ: Եվ դա պատահականություն չէր, քանի որ Թուրքիայում վաղուց էր գտնվում գերմանական ռազմական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ, որը կարողացել էր իր վերահսկողությունը սահմանել թուրքական բանակի վրա, նպատակ ունենալով այն օգտագործել իր ռազմաքաղաքական նպատակների համար: Թուրքական ռազմական գործողությունների, անգամ երկրորդական բնույթի, ծրագրերը հաստատվում էին գերմանական ռազմական մասնագետների կողմից և միայն դրանից հետո նրանք գործողության մեջ դրվում:

Կրես ֆոն Կրեսենշտայնի հետ միասին Սիրիա ժամանեցին նաև գերմանական ռազմական ինժեներներ, որոնց թիվն այնքան շատ էր, որ Ջ. Անտոնիուսն անգամ օգտագործում է «ինժեներական կորպուս» արտահայտությունը: Նրանք հիմնականում զբաղված էին Սիրիայի հարավում ճանապարհների և երկաթուղագծերի շինարարությամբ, որոնք պետք է հեշտացնեին Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակի ռազմական երթը դեպի Եգիպտոս:

Այսպիսով՝ թուրքական հիմնական ռազմական ուժերը կենտրոնացված էին պատմաաշխարհագրական Սիրիայում:

Թուրքիայի և Գերմանիայի համար, անշուշտ, կարևոր էր նաև Իրաքը: 1914 թ. գերմանական կապիտալի շնորհիվ և գերմանական կառավարության ակտիվ աջակցությամբ ավարտվեց Բաղդադի երկաթուղու մի կարևոր՝ Բաղդադ–Սամարա հատվածը, որը բավականին ուժեղացրեց Գերմանիայի դիրքերը Իրաքում: Սակայն Իրաքը Գերմանիայի և Թուրքիայի կողմից 1914 թ. չէր դիտվում որպես բրիտանական անմիջական հարձակման ենթակա երկիր, այդ պատճառով էլ նրա պաշտ-

պանության հարցերին այնպիսի մեծ տեղ չէր հատկացվում, ինչպես Սիրիային:

Թուրքական ռազմական ուժեր կային տեղակայված նաև Արաբական թերակղզում, որոնք ընդգրկված էին չորս դիվիզիաներում: Նրանք տեղակայված էին Հիջազի, Ասիրի և Եմենի միջև ընկած վիթխարի տարածքում: Հասկանալի է, որ այդ ուժերը բավարար չէին պատերազմի դեպքում իրենց հսկողության տակ պահել Արաբիան, առավել ևս ապահովել նրա տարածքում ձևավորված կազմավորումների մասնակցությունը պատերազմում՝ Թուրքիայի կողմից: Իսկ դա կարևոր էր Եգիպտոսը գրավելու թուրք–գերմանական ծրագրերի իրականացման տեսանկյունից:

Այստեղ մեծ դերակատարում ուներ Հիջազի շերիֆ Հուսեյնը: Նա մեծ ազդեցություն ուներ ցեղերի և ցեղապետերի վրա և ցանկության դեպքում կարող էր, ըստ թուրքական հաշվարկների, մեծ քանակի զորք՝ ընդհուպ մինչև 40 հազար մարդ, դուրս բերել Եգիպտոսի վրա հարձակվելու համար: Թուրքերը ոչ միայն տեղյակ էին այդ մասին, այլև գիտակցում էին, որ առանց Հուսեյնի բարի կամքի և աջակցության, նրանք չէին կարող ենթարկել արաբական ցեղերին իրենց և օգտագործել նրանց իրենց նպատակների համար:

Ինչ վերաբերում է բուն թուրքական զորքերին, ապա չորս դիվիզիաներից երկուսը տեղակայված էին Հիջազում և Ասիրում: Բայց նրանց վիճակն այստեղ նախանձելի չէր: Նրանց հարաբերություններն այնքան լարված էին ցեղերի հետ, որ նրանք հազվադեպ էր պատահում, որ դուրս գային իրենց ռազմական ճամբարներից, նախընտրելով պատսպարվել այնտեղ, քան թե դուրս գալ և ենթարկվել ցեղերի հարձակումներին: Ուրեմն՝ պատերազմի դեպքում, թուրքերը այդ ցեղերին կարող էին օգտագործել, եթե նրանց հաջողվեր ապահովել Հուսեյնի բարյացակամ վերաբերմունքը և համագործակցություն հաստատել նրա հետ: Միայն այդ դեպքում նրանք կկարողանային իրենց զորքերը նետել Սուեզի ջրանցքի գոտին և հարվածել Եգիպտոսին այդ կողմից:

Սակայն նման համագործակցություն Հուսեյնի և Թուրքիայի միջև բացառվում էր, քանի որ, ինչպես ցույց կտրվի աշխատության մեջ, Հուսեյնն այդ ժամանակ արդեն սկսել էր իր գաղտնի շփումներն Անգլիայի հետ՝ համագործակցության և հակաթուրքական ապստամբության վերաբերյալ:

Ասիրի ստրատեգիական նշանակությունը՝ հաշվի առնելով նրա էմիր Իդրիսի թշնամական վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ, կապված էր այն հանգամանքի հետ, որ նա կարող էր սպառնալ թուրքական զորքերին թիկունքից, եթե թուրքական զորքերը հարձակվեին Ադենի վրա, որը հանդիսանում էր անգլիական կարևոր հենակետը Արաբական թերակղզու հարավային հատվածում: Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից՝ Ասիրի նշանակությունն առավել կարևորվում էր նրանով, որ նա շատ օգտակար կարող էր լինել Անգլիայի համար՝ ծովեզրյա մասը պաշտպանելու տեսակետից:

Ինչ վերաբերում էր Նաջդին և Շամարին, ապա այստեղ չկային թուրքական զորքեր և օսմանյան պաշտոնյաներ: Այդ առումով նրանք համարվում էին ազատ թուրքական վերահսկողությունից և ազդեցությունից: Բայց նրանց հակաթուրքական դիրքորոշումը հանրահայտ էր, և պատերազմական գործողությունների դեպքում թուրքական կողմը չէր կարող ակնկալել որևէ աջակցություն և օգնություն նրանցից:

Արաբիայում տեղակայված թուրքական չորս դիվիզիաներից երկուսը գտնվում էին Եմենում: Նրանք լուրջ վտանգ էին ներկայացնում Ադենին երկու պատճառով: Նախ, այդ զորամասերը համեմատաբար լավ էին պատրաստված ու զինված, ապա հարաբերությունները թուրքական հրամանատարության և Եմենի իմամի միջև այդ շրջանում նորմալ էին՝ ուստի և տպավորությունն այնպիսին էր, որ նրանք պատրաստ էին համագործակցության:

Ահա այսպիսին էր ընդհանուր ռազմական իրադրությունը Ասիայի արաբական երկրներում:

Արաբական երկրների տնտեսությունը, հասարակական և քաղաքական կյանքը հարմարեցվեց պատերազմի պայմաններին, այդ պատերազմում Թուրքիայի և Գերմանիայի պահանջների բավարարմանը: Այդ խնդիրն իրականացնելու համար Ստամբուլը կարևոր փոփոխություն իրագործեց Սիրիայի կառավարման համակարգում: Ջեմալ փաշան, ինչպես արդեն նշել ենք, նշանակվել էր Սիրիայում և Պաղեստինում տեղակայված թուրքական IV բանակի հրամանատար: Բայց դա բավարար չէր Սիրիան թուրքական պահանջների բավարարմանը ծառայեցնելու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ դարձավ նրան օժտել նոր և ամենալայն լիազորություններով նաև քաղաքացիական կառավարման ոլորտում, որը և Բարձր Դուռը կատարեց 1914 թ. վերջերին: Ռազմականի հետ միասին Ջեմալ փաշայի ձեռքում կենտրոնացվեց

նաև ամբողջ քաղաքացիական իշխանությունը: Նա դարձավ պատմաաշխարհագրական Սիրիայի անսահմանափակ տեր ու տնօրենը: Նրա հրամանով նրա կառավարման ներքո գտնվող արաբական երկրներում մտցվեց ռազմական դրություն, ամեն ինչ անցավ թուրք զինվորականների հսկողության տակ: Այդ ուղղությամբ կարևոր քայլ համարվեց արաբական վիլայաթների այսպես կոչված խորհուրդների վերացումը: Դրանք առանց այն էլ լայն լիազորություններ չունեին և էական դեր չէին խաղում վիլայաթներում, սակայն թուրքերը մտածում էին, որ այդ իշխանազուրկ մարմինների ձևական գոյությունն անգամ արաբների մոտ կարող էր ստեղծել սեփական իշխանություն ունենալու պատրանք և սնել ազգային զգացմունքներ՝ արաբների ազգային ինքնության և անկախության հարցերում:

Ջեմալ փաշան ամենածանր հարվածը հասցրեց Լիբանանին՝ վերացնելով Լեռնալիբանանի Օրգանական ստատուտը, որը հաստատվել էր 1861 թ.: Այդ ստատուտով Լեռնալիբանանին շնորհվել էր ինքնավարության՝ մութասարիֆության կարգավիճակ: 1915 թ. այդ կարգավիճակը միակողմանիորեն վերացվեց: 1915 թ. մայիսի 26–ին Ջեմալ փաշայի հրամանով լուծարվեց Լիբանանի Վարչական խորհուրդը, իսկ հունիսի 15–ին պաշտոնաթող եղավ կուսակալը՝ Օհանես (Հովհաննես) Կույումջյանը: Դա միջազգային իրավունքի կոպիտ խախտում էր, քանի որ Լեռնալիբանանի ինքնավարության կարգավիճակը հաստատվել էր եվրոպական մեծ տերությունների և Թուրքիայի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա: Ուստի Բարձր Դուռն իրավունք չուներ միակողմանիորեն, առանց հարցը նախօրոք նրանց հետ համաձայնեցնելու, դիմել նման քայլի: էլ չենք խոսում Լեռնալիբանանի բնակչության կարծիքը հաշվի առնելու մասին: Թուրքական կառավարությունը լրիվ անտեսեց լիբանանցիների կարծիքը և վերացրեց երկրամասի ինքնավարությունը: Լիբանանը կրկին հայտնվեց օսմանյան ուղղակի կառավարման ներքո: Բնականաբար, վերացվեց նաև Լեռնալիբանանի կառավարչի՝ կուսակալի–մութասրիֆի պաշտոնը: Ինչպես նշվել է, Լեռնալիբանանի առաջին կուսակալը եղել է հայ՝ Արթին Կարապետ Դաուդյանը: Ճակատագրի բերումով, նրա վերջին կուսակալը նույնպես եղավ հայ՝ Հովհաննես Կույումջյանը:

Երիտթուրքերը վերացնելով Լիբանանի առանձնահատուկ, արտոնյալ կարգավիճակը՝ մութասրիֆությունը„ սակայն, պահպանեցին կառավարչի պաշտոնը, որը մինչև 1918 թ., հաջորդաբար գրավեցին Ա-

լի Մունիֆ բեյը, Հակկի բեյը և Մունթազ բեյը: Բայց նրանք այլևս նախկին կառավարիչները չէին, այլ Բեյրութի թուրք վալիին ենթակա կատարածուներ:

Այսպիսով, պատերազմի ընթացքում՝ 1914 թ., արմատական փոփոխություն տեղի ունեցավ արաբական երկու երկրների քաղաքական կարգավիճակում՝ Եգիպտոսի, որը հայտարարվեց անգլիական պրոտեկտորատ, և Լեռնալիբանանի, որը զրկվեց ինքանավար կարգավիճակից և վերածվեց թուրքական տիրապետության տակ գտնվող սովորական տարածքի:

Պատերազմը շատ ծանր անդրադարձավ արաբական երկրների տնտեսական վիճակի վրա: Անտանելի դրություն ստեղծվեց Սիրիայում, Իրաքում, Լիբանանում և Պաղեստինում: Ջեմալ փաշայի հրամանով արաբներից բռնագրավվեց պարենը, անասունները և գյուղատնտեսական մթերքները: Հատկապես ծանր իրադրություն ստեղծվեց հացահատիկի բնագավառում: Սիրիան միշտ էլ ինքն է ներմուծել հացահատիկ սեփական պահանջները բավարարելու համար: Չնայած այդ հանգամանքին, թուրքական իշխանությունները բռնագրավում էին հացահատիկի պաշարները և նրանց մի մասը վերցնում էին թուրքական բանակի պահանջները բավարարելու համար, իսկ մի մասն էլ նույնիսկ արտահանում էին Գերմանիա: Բայց նրանք նման քաղաքականություն էին վարում ոչ միայն հացահատիկի, այլև պարենի և գյուղատնտեսական մյուս մթերքների հարցում:

Գյուղատնտեսությանը մեծ հարված հասցվեց նաև այն պատճառով, որ այգիները զանգվածաբար ոչնչացվում էին՝ ծառերը որպես վառելիք օգտագործելու համար:

Նման պայմաններում խիստ կրճատվեց գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրությունը, բարձրացան ապրանքների գները: Բնակչությունը սովի մատնվեց: Սովը և հիվանդությունները հնձում էին մարդկանց: Մահացան հարյուր հազարավոր մարդիկ: Աղբյուրներից մեկը հաղորդում է, որ «Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Իրաքում սով սկսվեց, որը ուղեկցվում էր խոլերայի, ժանտախտի և տիֆի էպիդեմիաներով, որոնցից մահացան տասնյակ հազարավոր իրաքցիներ»: Նույնն էր դրությունը նաև Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Սիրիայում 1917 թվականին սովից մահացածների թիվը կազմել է երկրի բնակչության մեկ տասներորդը, իսկ Լիբանանում

մոտ 100 հազար մարդ: Տասնյակ հազարների էր հասնում սովից ու հիվանդություններից մահացածների թիվը Պաղեստինում:

Լայն տարածում էր գտել արաբներին բռնի կերպով տաժանակիր աշխատանքների մեջ ներգրավելը: Նրանց հանձնարարվում էին ամենադժվար աշխատանքները՝ կապված ռազմական շինարարության հետ:

Այդ բոլորը հիմք է տալիս ասելու, որ Սիրիան, Իրաքը, Լիբանանը և Պաղեստինը տնտեսական փլուզման մեջ էին հայտնվել:

Արաբական երկրներում թուրքական իշխանությունների, մասնավորապես Ջեմալ փաշայի դաժան քաղաքականության մասին ավելի լիակատար պատկերացում կազմելու համար, անդրադառնանք ևս մեկ հարցի:

Դա արաբներին բռնությամբ բանակ զորակոչելն էր: Արաբներն ամեն կերպ խուսափում էին թուրքական բանակում ծառայելուց: Նրանք ատում էին թուրքերին, որոնք վերևից էին նայում արաբների, այդ թվում և արաբ զինվորների վրա, ուղղակի արհամարհում նրանց: Այդ պատճառով էլ մեծ էր այն արաբների թիվը, որոնք լքում էին թուրքական բանակը, իսկ հաճախ նաև անցնում անգլիացիների կողմը և անձնատուր լինում նրանց:

Ամենայն հավանականությամբ դա այնպիսի մեծ ծավալներ էր ընդունել, որ Ջեմալ փաշան հարկադրված էր պահանջել Ստամբուլից իր բանակը համալրել թուրք զինվորներով և սպաներով: Նա այլևս չէր վստահում արաբ զինվորներին: Օրինակ, նրա դիվիզիաներից մեկը ամբողջապես համալրված էր սիրիացի արաբներից, իսկ մյուսն էլ՝ Մոսուլի վիլայաթի արաբներից:

Թուրքերի դեմ կուտակված արաբների դժգոհությունը քանի գնում ուժեղանում էր և նա անպայման պետք է պոռթկար: Եվ այդպես էլ եղավ: Թուրքական իշխանությունների դեմ արաբների ելույթները, չնայած Ջեմալ փաշայի մտցրած ռազմական դրությանը և դաժան քաղաքականությանը, համակել էր թե՛ քաղաքացիներին և թե՛ զինվորականներին: 1915 թ. ըմբոստացան Սիրիայի և Պաղեստինի խաղաղ բնակիչները: Նրանք ունեին երկու հիմնական պահանջ՝ հաց և խաղաղություն: Սովի մատնված արաբներն ուրիշ բան չէին ուզում, բացի օրվա հացից և խաղաղության հաստատումից, որը հնարավորություն կստեղծեր որդիների տուն վերադառնալուն: Այդ նույն տարի հուզումներ տեղի ունեցան Նաջաֆում ու Քերբելայում, որը վերածվեց ապստամբության:

Շիական այդ երկու կենտրոնների բնակչության համբերությունը վերջացել էր և նրանք այլևս չէին դիմանում թուրքական հալածանքներին և Ջեմալ փաշայի բռնություններին: Նրանց դժգոհության մեջ կար նաև կրոնական–դավանական պահը: Սուննի թուրքերը վերևից էին նայում շիա արաբների վրա, նրանց համարելով ոչ լիարժեք մուսուլմաններ: Այդ պարագան առանձնահատուկ սրություն էր հաղորդում նաջաֆցիների և քերբելացիների հակաթուրքական դժգոհությանը, սակայն թուրքական իշխանությունները հաշվի չէին առնում այդ դժգոհությունները և շարունակում էին իրենց քաղաքականությունը, որը միտված էր արաբական երկրների մարդկային և նյութական ռեսուրսները մինչև վերջ օգտագործել թուրքական բանակի կարիքների և թուրքական ծրագրերի իրականացման համար: Այդ պատճառով էլ արաբների հակաթուրքական ելույթները շարունակվում էին: Այսպես, օրինակ, 1916 թ. կրկին ապստամբվեցին Նաջաֆի և Քերբելայի բնակիչները:

Այս ընթացքում ի հայտ եկան նաև պայքարի նոր ձևեր: Խոսքը արաբների պարտիզանական շարժման մասին է, որը 1916 թ. լայն թափ ստացավ Ջեբել Դրուզում՝ արաբական ավանդական ապստամբական շարժման կենտրոններից մեկում, Հյուսիսային Լիբանանում և Դամասկոսի վիլայաթում:

Թուրքական իշխանությունների դրությունը Սիրիայում, կարելի է ասել, որ բավականին բարդ էր: Համենայն դեպս այն կայուն ոչ մի դեպում չէր կարելի համարել: Այդ պարագան իր բացասական ազդեցությունն ունեցավ թուրքական բանակի ռազմական գործողությունների վրա, հատկապես եգիպտական ճակատում:

Ինչպես նշվել է, թուրք–գերմանական ծրագրերում Սիրիային մեծ տեղ էր հատկացվում Եգիպտոսի դեմ պատերազմական գործողություններ սկսելու դեպքում: Նա նույնիսկ համարվում էր հիմնական բազան հարավային Սիրիայից Եգիպտոս ներխուժելու համար: Առաջ անցնելով, ասենք, որ Սիրիան, այսինքն նրա արաբ բնակչությունը, չարդարացրեց իր վրա դրված հույսերը: Նա հուսալի թիկունք չեղավ թուրք–գերմանական զորքերի համար:

Թուրքերը Եգիպտոսի վրա հարձակումը սկսեցին 1915 թ. հունվարի 10–ին՝ Սինայի ճակատում, որը նրանք շատ էին կարևորում: Թուրքական կողմից ռազմական գործողություններին մասնակցում էր ութ դիվիզիա, որոնք Սինայի թերակղզուց շարժվելով երկու կողմերից՝ Ղազա–Ղանթարա և Մաան–Սուեզ գծով, նպատակ ունեին գրավել Սուեզի

ջրանցքը և շրջակա գոտին: Կտրելով մոտ 400 կմ տարածք Սինայի անապատով, 16–րդ օրը թուրքական զորքերը հասան Սուեզի ջրանցքի արևելյան ափը, փետրվարի 3–ին սկսեցին գրոհը: Նրանց դեմ կանգնած էր անգլիական 50 հազարի հասնող բանակը, որին օգնում էին ջրանցք մտած անգլիական և ֆրանսիական ռազմանավերը: Թուրքական բանակը, որը բոլոր կողմերով՝ մարտունակությամբ, պատրաստվածությամբ և զինվածության մակարդակով, զիջում էր անգլիական բանակին, խայտառակ պարտություն կրեց: Նրա մնացորդները նահանջելով, վերադարձան Պաղեստին և Սիրիա:

Այդ անհաջողությունից հետո, թուրքական հրամանատարությունը, որն ամեն բանում լսում ու հետևում էր գերմանական ռազմական մասնագետներին, այս վերջիններիս խորհրդով փոխեց մարտավարությունը: Կանոնավոր բանակի փոխարեն, նրանք գործողության մեջ դրեցին թուրքական IV բանակում հավաքագրված բեդվիններին, որոնք, հասկանալի է, լուրջ ռազմական գործողություններ չէին կարող վարել: Նրանց առջև խնդիր էր դրված անսպասելի հարձակումներ գործել անգլիական դիրքերի վրա, որը ռազմական արվեստի տեսակետից, մանավանդ արդյունքների առումով, խիստ կասկածելի, եթե ոչ անիմաստ, քայլ էր:

Բեդվինները, որոնք ընդհանրապես չեն սիրում կարգապահություն, չունեն համբերություն երկարատև զինվորական վարժանքների համար, առանձնապես մեծ անհանգստություն չկարողացան պատճառել անգլիական զորքերին, մանավանդ որ նրանք առանձնապես ջանք չէին դրսևորում մարտի դաշտում: Իրենց չարդարացրին թուրքերի հույսերը. որ արաբ բեդվիններն աջակցություն կգտնեն Եգիպտոսի արաբների կողմից: Ընդհանրապես արաբական միջավայրը ակնհայտորեն դրսևորեց իր թշնամանքը թուրքերի նկատմամբ և վերջիններս հարկադրված էին խոստովանել, որ արաբների վրա հենվելու և նրանց օգտագործելու իրենց քաղաքականությունը հիմնազուրկ էր:

Անգլիացիները ոչ միայն կարողացան հետ մղել բեդվինների հարձակումները, այլև օգտագործելով հարաբերական դադարը, ամրացրին իրենց դիրքերը Սուեզի գոտում: Բավական է նշել, որ 1916 թ. այստեղ անգլիական զորքերի թիվը հասավ 275 հազարի: Անգլիական զորամասերի հետ միասին Սուեզի ջրանցքի գոտում կենտրոնացված էին նաև ավստրիալական, նորզելանդական և հնդկական զորամասեր:

1916 թ. թուրքական զորքերը նոր հարձակում սկսեցին Սուեզի գոտում, որն այս անգամ անմիջապես ղեկավարում էին թուրքական IV բանակի շտաբի պետ գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնը և նրա գերմանական սպաները: Բայց դա ևս չօգնեց թուրքերին: Նրանք նորից պարտություն կրեցին, ինչպես նաև դրանից հետո ձեռնարկած նոր հարձակման ժամանակ: Թուրքերը պարտություն կրեցին նաև ծովային մարտում:

Հաջողությունն անգլիացիներին ուղեկցեց նաև Հարավային Արաբիայում: Թուրք–եմենական զորքերի համատեղ ջանքերը՝ գրավել Ադենը, ավարտվեց լրիվ անհաջողությամբ: Այստեղ անգլիացիներին շոշափելի օգնություն ցույց տվեցին Ասիրի էմիր Իդրիսի զորքերը:

Թուրք–գերմանական ռազմական արշավանքը Եգիպտոս կարևոր էր ոչ միայն իր ռազմական արդյունքներով, որոնք ողբալի եղան նրանց համար, այլև քաղաքական տեսակետից: Նա համոզիչ կերպով ցույց տվեց, որ Թուրքիան պատերազմական գործողությունների ժամանակ չի կարող հենվել արաբների վրա՝ վերջիններիս հակաթուրքական դիրքորոշման պատճառով:

5. Կախաղաններ Բեյրութում և Դամասկոսում

Սիրիայում, Իրաքում, Լիբանանում և Պաղեստինում տիրող ընդհանուր մթնոլորտը, արաբների ժխտական վերաբերմունքը սրբազան պատերազմի՝ ջիհադի նկատմամբ, նրանց դիրքորոշումը Եգիպտոսի վրա հարձակվելու թուրք–գերմանական ռազմական ծրագրերի նկատմամբ, որը նույնպես կարելի է համարել հակաթուրքական, այդ բոլորը վկայում էր այն մասին, որ արաբները թուրքերի կողքին չէին: Դա արդեն պարզ էր թուրքերի համար: Նրանց համար նաև ակնհայտ էր, որ արաբների ճնշող մեծամասնությունը, նրանց ազգային առաջնորդները և մտավորականությունը ոչ միայն կանգնած չեն Թուրքիայի կողքին, այլև համակրում են Անգլիային և Ֆրանսիային, ցանկանում նրանց հաղթանակը գերմանա–թուրքական բլոկի դեմ՝ հուսալով, որ Անտանտի հաղթանակն իրենց ազատություն կբերի օսմանյան տիրապետությունից:

Մյուս կողմից իթիհադական ղեկավարությունը, որն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին չէր հրաժարվել արաբներին և կայսրության մյուս ժողովուրդներին թուրքացնելու քաղաքականությունից, գիտեր, որ արաբական ազգային գործիչները, որոնք կանգնած էին

արաբների անկախության և ինքնուրույն պետություն ստեղծելու դիրքերում, պատերազմի տարիներին նույնպես չէին հրաժարվել իրենց այդ սկզբունքային քաղաքականությունից: Ակնհայտ էր, որ հասունանում էր նոր ճգնաժամ արաբ–թուրք հարաբերություններում, որը՝ ի տարբերություն նախորդ ճգնաժամերից, լինելու էր ավելի սուր ու վճռական:

Այդ բանն ամենից լավ գիտեր ու հասկանում էր Ջեմալ փաշան, Սիրիայի անսահմանափակ և դաժան տիրակալը: Նա տեղյակ էր, որ արաբական ազգային–քաղաքական կազմակերպությունները, որոնք պաշտոնապես արգելված էին, իրականում, այս կամ այն կերպ պահպանում էին իրենց գոյությունը և շարունակում իրենց գործունեությունը խիստ գաղտնի պայմաններում՝ ուղղորդելով արաբական զանգվածների հակաթուրքական պայքարը: Նրանց ղեկավարների մի մասը, որը հաստատվել էր արտասահմանում, հատկապես Կահիրեում, չէր դադարեցրել իր աշխատանքները: Նրանք գրականություն էին առաքում Սիրիա, Լիբանան և Պաղեստին, այնտեղ լինում էին նրանց գաղտնի ներկայացուցիչները, որոնք տեղերում կապ էին պահպանում իրենց համակիրների հետ և անում ամեն բան՝ արաբների մոտ պահպանելու և բորբոքելու հակաթուրքական տրամադրությունները: Այդ գործում նրանք որոշակի աջակցություն էին ստանում անգլիացիներից: Անգլիական ինքնաթիռներից արաբական երկրների վրա տարածվում էին արաբ ազգային գործիչների կողմից արաբերեն լեզվով գրված գրականություն, որը կոչ էր անում նրանց պատրաստվել հակաթուրքական ապստամբության:

Այդ ուղղությամբ էին աշխատում նաև Ապակենտրոնացման կուսակցության ղեկավարները: Նրանք այլևս ոչ մի պատրանք չունեին Օսմանյան կայսրության ապակենտրոնացման և արաբական վիլայաթներին վարչական ինքնավարություն տրամադրելու հարցում: Նրանք ամուր կանգնած էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը և արաբական մյուս մարզերը վերջնական ու անվերադարձ կերպով Թուրքիայից անջատելու տեսակետի վրա: Նրանց քաղաքականությունն այդ խնդրին էր ծառայում:

Ջեմալ փաշան, որի հրամանով Սիրիայում մտցված էր ռազմական դրություն, և որն իթիհադական ղեկավարության կողմից օժտված էր ամենալայն լիազորություններով, որոշեց չսպասել և նախահարձակ եղավ, նպատակ ունենալով ջախջախիչ հարված հասցնել արաբական անկախության շարժմանը, նրա կողմնակիցներին, նրանց զրկել ղեկա-

վարությունից և արաբական երկրները շարունակել պահել Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Ջեմալ փաշան նման քաղաքականություն վարելու մեծ փորձ ուներ: Արաբ պատմաբան Ասադ Դաղիրը «Արաբական ապստամբությունը» գրքում բնութագրելով Ջեմալ փաշային, նշում է, որ նա վաղուց էր հայտնվել սպանությունների և արյուն թափելու ճանապարհի վրա: Նա Ջեմալին համարում է «Ադանայում հայերի կոտորածների ղեկավար... Եվ նա իթիհադականների դավադրությունների կազմակերպիչն էր»: Ասադ Դաղիրը հիշեցնում է, որ նա այն անձնավորությունն էր, որ Ստամբուլում հարյուրավոր մարդկանց կոտորեց Մահմուդ Շևքեթ փաշային սպանելուց հետո:

Այս հեղինակի վկայություններն արժեքավոր են նախ և առաջ այն տեսակետից, որ նա դեպքերի ականատեսն ու մասնակիցն է եղել: Նրա «Արաբական ապստամբությունը» գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1916 թ. վերջերին:

Արյունալի փառավոր անցյալ ունեցող երիտթուրքական եռապետության անդամ Ջեմալ փաշան մեծ եռանդով, իրեն հատուկ ոճով, ձեռնամուխ եղավ արաբներին պատժելու գործին: Ասադ Դաղիրի վկայությամբ, Ջեմալ փաշան «բացեց բանտերի դռները և աքսորի ճանապարհները»: Տասնյակ հազարավոր մարդիկ բանտ նետվեցին և աքսորվեցին: Ասադ Դաղիրը՝ որպես ականատես, հաստատում է, որ աքսորվեցին արաբական ազգային ղեկավարներից շատ–շատերը: Աքսորյալների մեջ մեծ թիվ էին կազմում ծերունիները, երեխաները և կանայք: Նրանց աքսորում էին Անատոլիայի խորքերը: Դա նույն բռնագաղթն էր, որ երիտթուրքերը համարյա այդ նույն ժամանակ կիրառում էին հայերի նկատմամբ, հայերի ցեղասպանությունն իրագործելիս, որի մասի կխոսվի սույն հատորի՝ այդ հարցին նվիրված հատուկ բաժնում: «Հազար–հազարավոր արաբներ Սիրիայից և Իրաքից,— գրում է Ասադ Դաղիրը,— դեմ առ դեմ հանդիպեցին մահվանը»: Շատերը մահացան կտտանքներից, սովից և հիվանդություններից:

Ջեմալ փաշան բացահայտ և գաղտնի խիստ վերահսկողություն էր սահմանել արաբական ազգային գործիչների և մեծ հեղինակություն վայելող մտավորականության վրա: Նրա տեսադաշտում էին նաև թուրքական բանակի արաբ սպաները, որոնց Ջեմալ փաշան չէր վստահում: Նրա հրամանով փակվեցին դեռևս իրենց գոյությունը պահպանող մի շարք կազմակերպություններ, ընկերություններ և ակումբներ: Դրանց

թվում էր «Սպայի սուր» անունը կրող գրադարանը (բյուրոն, գրասենյակը), որը հիմնվել էր Դամասկոսում պատերազմը սկսվելուց հետո: Նրա անդամներն էին ավելի քան 500 արաբ սպաներ, որոնց մեծ մասը ձերբակալվեց:

Շուտով հերթը հասավ նախապատերազմյան տարիներին Օսմանյան կայսրությունում գործած արաբական ազգային հայրենասիրական կուսակցությունների և կազմակերպությունների ղեկավարներին: Դրանց մեծ մասի գործունեությունը օսմանյան իշխանություններն արգելել էին, բայց նրանք շատ լավ գիտեին, թե ովքեր են նրանց ղեկավարները: Ջեմալ փաշայի հրամանով նրանք ձերբակալվեցին և կանգնեցին ռազմական ատյանի առջև: Դատավարական նորմերի պահպանման մասին խոսելն ավելորդ է: Զինվորական դատարաններն ընդունում էին այն որոշումները, որ նրանց թելադրում էին Ջեմալ փաշան և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ Ստամբուլից:

Դատաստանը արաբական ազգային գործիչների, մտավորականների, օսմանյան պառլամենտի արաբ անդամների, արաբ սպաների, քաղաքական և կուսակցական գործիչների նկատմամբ, հանդիսանում է արաբների նկատմամբ երիտթուրքերի և նրանց ղեկավարների, մասնավորապես Ջեմալ փաշայի ոճրագործության գագաթնակետը: Թուրքական «դատարանը»՝ մեկը մյուսի հետևից արձակում էր մահվան վճիռներ: Դրանք որպես կանոն ի կատար էին ածվում կախաղանի միջոցով:

Արաբ ազգային հայրենասիրական գործիչների առաջին խումբը կախաղան բարձրացվեց 1915 թ. օգոստոսին՝ Բեյրութի Բուրջ հրապարակում: Այդ օրը կախաղան հանվեցին արաբ 10 առաջնորդներ՝ Աբդ ալ–Քարիմ ալ–Խալիլը, Մուհամմադ ալ–Համսանին, Աբդ ալ–Կադիր ալ–Խարսան, Նուր ադ–Դին ալ–Կադին, Սալիհ Հայդարը և ուրիշներ:

1916 թ. մայիսի 6–ին Դամասկոսում կախաղան հանվեցին արաբական ազգային շարժման 7 առաջնորդներ: Նրանց մեջ էր Ապակենտրոնացման կուսակցության ղեկավար և արաբական առաջին կոնգրեսի նախագահ, արաբական ազգային–ազատագրական շարժման ականավոր ղեկավար Աբդ ալ–Համիդ ալ–Զահրավին, որը մեծ ժողովրդականություն էր վայելում արաբական աշխարհում, Շակիկ Մուվայիդ ալ–Ազզմը, որը Օսմանյան պառլամենտում ներկայացնում էր Դամասկոսը, Շուքրի Ասալին՝ իրավաբան և Օսմանյան պառլամենտի անդամ. Խալիմ ալ–Ջազաիրին՝ բարձրաստիճան սպա՝ թուրքական բանակի գեներալ,

դիվիզիայի հրամանատար, որը մասնակցել էր պատերազմական գործողությունների Եմենից մինչև Բալկաններ, և ուրիշներ:

Այդ նույն օրը՝ 1916 թ. մայիսի 6–ին, 14 ականավոր արաբական ազգային–ազատագրական շարժման ղեկավարներ կախաղան բարձրացվեցին Բեյրութի նույն՝ Բուրջ հրապարակում:

Նրանք բոլորը մեղադրվում էին դավաճանության, ապստամբություն պատրաստելու և հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը չկատարելու մեջ: Ծիծաղելի մեղադրանք էր դա մի ազգի զավակների նկատմամբ, որոնց հայրենիքը նվաճել էին թուրքերը, և որոնք պայքարում էին իրենց հայրենիքի ազատագրման համար Օսմանյան դաժան լծից:

Ընդհանուր առմամբ մահապատժի ենթարկվեց 800 մարդ, իսկ արաբական երկրներից Անատոլիա բռնի տեղահանված ընտանիքների թիվը հասնում էր հազարների:

Արաբական ազատագրական շարժման ղեկավարության սերուցքի գլխատումը ցնցող տպավորություն գործեց: Եթե իթիհադականների ղեկավարությունը կարծում էր, թե արաբական ականավոր դեմքերի ֆիզիկական ոչնչացումը կհանգեցնի արաբական ազատագրական շարժման թուլացմաը և կնպաստի թուրքերի դիրքերի ամրապնդմանը արաբական երկրներում, ապա նրանք չարաչար սխալվեցին: Նրանց աննեռելի ոճրագործությունը նոր լիցք հաղորդեց արաբների հակաթուրքական տրամադրություններին և ավելի վճռական դարձրեց նրանց՝ ամեն գնով թուրքական տիրապետությունը տապալելու և անկախ արաբական պետություն հիմնելու հարցում:

Եվ երբ 1916 թ. հունիսին սկսվեց արաբական ապստամբությունը Հիջազում, որը շուտով դարձավ համաարաբական, ապա Արաբիայի, Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի արաբները զանգվածաբար միացան ապստամբներին՝ համալրելով նրանց շարքերը:

Արաբական պատմագրության մեջ այն տեսակետը գոյություն ունի, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքերը, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, փորձեցին վերացնել արաբներին որպես էթնոս, որպես մի ինքնատիպ ժողովուրդ, ինչպես հայերին: Արաբ հայտնի պատմաբան Ամին Սաիդը գրում է, որ «Նրանք (Թուրքիայի ղեկավարները — Ն. Հ.) որոշեցին, որ հասել է հարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային շարժումներին՝ արաբական ազգայնականների շարժմանը Սիրիայում, Իրաքում և Հիջազում, և հայկական շարժմանը՝ Արևելյան Անատոլիայում»: Իսկ եգիպտացի

պատմաբան Ֆուաադ Հասան Հաֆիզն ավելի որոշակի է արտահայտվում՝ ընդգծելով, որ երիտթուրքերը ցանկանում էին ցեղասպանություն իրագործել Օսմանյան կայսրության երկու ժողովուրդների՝ արաբների ու հայերի նկատմաբ:

Արաբները երիտթուրքական ղեկավարությանը երբեք չներեցին նրանց այդ ծանր և ոչնչով չարդարացված հանցագործությունը: Դա խոր հետք է թողել արաբների պատմական հիշողության մեջ, իսկ արյունարբու Ջեմալ փաշայի անունը դարձել է ամենաատելի անունը և ոճրագործության խորհրդանիշ արաբների համար:

II. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Մեքքա–Լոնդոն նախնական շփումները

Արաբական երկրներում, ինչպես ցույց տրվեց նախորդ էջերում, ձևավորվել էր ապստամբական իրադրություն՝ հասունացել էին ապստամբության ազգային, քաղաքական, տնտեսական և գաղափարական ու հոգեբանական նախադրյալները, կուտակվել էր խորը դժգոհություն, որը համակել էր գործնականում սոցիալական բոլոր խավերին, առկա էր ժողովրդական զանգվածների պատրաստակամությունը պայքարել օսմանյան տիրապետության տապալման համար: Մնում էր ապստամբությունը ղեկավարելու միասնական կամ համաարաբական կենտրոնի ձևավորման հարցը: Այս ուղղությամբ ևս քայլեր կատարվում էին: Բոլորի մոտ այն մտայնությունն էր տիրապետողը, որ այդ կենտրոնը լինելու է Սիրիան՝ հաշվի առնելով սիրիացիների ակտիվ մասնակցությունը ազգային շարժմանը, նրանց ներդրումը արաբական ազգային կազմակերպությունների, կոմիտեների և ընկերությունների ստեղծման գործում, առաջատար դերը այդ շարժման ղեկավարության մեջ և այլ հանգամանքներ, այդ թվում և նրա հարմար, կենտրոնական աշխարհագրական դիրքը:

Սակայն Սիրիան չկարողացավ իրագործել ճակատագրի կողմից նրա վրա դրված պատմական առաքելությունը՝ դառնալ ապստամբության բարձրացման և ղեկավարման կենտրոն: Եվ դրանում սիրիացիներն ու նրանց քաղաքական–ազգային ղեկավարները մեղավոր չէին:

Սիրիայի կարևորությունը մշտապես լավ են հասկացել ու գնահատել թուրքական սուլթանները, իսկ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց հետո՝ նաև երիտթուրքերը: Այդ պատճառով էլ պատերազմի մեջ մտնելով, Թուրքիան իր ուշադրության կենտրոնում պահում էր առաջին հերթին Սիրիան, այն դարձնելով իր ռազմաքաղաքական ծրագրերի իրականացման հենարանը: Այստեղից էր նա ծրագրում սկսել Եգիպտոսի նվաճումը, իր դիրքերի ամրապնդումն արաբական բոլոր երկրներում, իսկ հետագայում՝ ներխուժումը Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկա: Այդ պատճառով էլ նա արևելքում իր հիմնական ռազմական ուժերը կենտրոնացրել էր Սիրիայում:

Այսպիսի պայմաններում Սիրիայի համար շատ դժվար էր, եթե ոչ անհնար, դառնալ համաարաբական ապստամբական կենտրոն: Այդ բանն ակնհայտ դարձավ, երբ օսմանյան իշխանությունները և Ջեմալ փաշան, տեղյակ լինելով Սիրիայում տարվող ապստամբության նախապատրաստական աշխատանքների մասին, նախահարձակ եղան և զանգվածային ձերբակալությունների, աքսորի և կախաղանների օգնությամբ, գլխատեցին ապստամբության ղեկավարությունը և կանխեցին սիրիացիների հակաթուրքական զինված ելույթները:

Դրանից հետո, համաարաբական ապստամբության կենտրոնը վերջնականապես տեղափոխվեց Արաբիա, Հիջազ, որի կառավարիչը՝ շերիֆ Հուսեյնը, դարձավ նրա ղեկավար:

Հուսեյնը մինչ այդ էլ, խիստ գաղտնի պայմաններում, որոշակի աշխատանքներ էր տանում ապստամբություն նախապատրաստելու ուղղությամբ: Սակայն սիրիական կենտրոնի վերացումից հետո, ապստամբության ղեկավարությունն ամբողջապես նա վերցրեց իր ձեռքը:

Հուսեյնը, որը խելացի, փորձառու և ամեն ինչ լավ հաշվարկող գործիչ էր, սթափ էր գնահատում արաբների ուժերը և հնարավորությունները: Նա հասկանում էր, որ օսմանյան տիրապետությունից ազատագրվելու դժվարագույն խնդիրը հնարավոր չէր բարեհաջող լուծել սեփական ուժերով: Նա գիտակցում էր, որ արաբներին անհրաժեշտ էր հզոր դաշնակից՝ պատրաստ օժանդակելու նրանց թուրքական լուծը թոթափելու համար: Եվ նրա ընտրությունը կանգ առավ Անգլիայի վրա: Դա պատահականություն չէր, քանի որ, Անտանտի երկրներից ամենաուժեղ դիրքերն Արաբական Արևելքում ուներ Մեծ Բրիտանիան: Նա այստեղ ուներ առանձնահատուկ շահեր, որոնց իրագործումը հնարա-

վոր էր միայն թուրքական տիրապետությունն արաբական աշխարհում վերացնելուց հետո:

Ուրեմն, շահերի առումով բավարար հիմքեր կային արաբների և Մեծ Բրիտանիայի միջև համագործակցություն հաստատելու համար: Մնում էր համապատասխան նախաձեռնություն ցուցաբերելը:

Նախաձեռնությունը եկավ Հուսեյնի կողմից, որի տեսակետները կիսում և որին մեծ աջակցություն էին ցույց տալիս նրա չորս որդիները՝ Ալին, Աբդալլահը, Ֆեյսալը և Զայդը: Անգլիայի ներկայացուցիչների հետ կապեր հաստատելու խնդիրը նա հանձնարարեց իր երկրորդ որդուն՝ էմիր Աբդալլահին:

Հուսեյնի ընտանիքի կենսագիրները նշում են, որ նրա ավագ որդին՝ Ալին, շատ մեղմ բնավորություն ուներ, համեստ էր և վստահ չէր սեփական ուժերի նկատմամբ: Երրորդ որդին՝ Ֆեյսալը, ավելի շատ ռազմական հակումներ ուներ և իրեն հետագայում փայլուն դրսևորեց հենց այդ բնագավառում: Ամենակրտսերը՝ Զայդը, նոր էր կյանք մտնում և դեռ իրեն որևէ բնագավառում ակնհայտորեն չէր դրսևորել:

Աբդալլահն առանձնանում էր իր անկախ մտածելակերպով ու ոգով, վերին աստիճանի հպարտ էր իր ծագումով, որի արմատները հասնում էին մինչև Մուհամմադ մարգարեն: Նա Հեջազյաններից ամենամեծ ժողովրդականություն վայելողն էր ու մեծ հմայք ուներ: Աբդալլահը մի «թուլություն» ուներ: Դա արաբական դասական պոեզիան էր: Նա անգիր գիտեր բազմաթիվ բանաստեղծություններ և իր խոսքը համեմում էր մեջբերումներ կատարելով արաբական պոեզիայից, որոնք մի առանձին հմայք էին տալիս նրա մտքերին:

Աբդալլահը երկար տարիներ հոր հետ միասին գտնվել էր Ստամբուլում, շփվել Օսմանյան կայսրության առաջին դեմքերի հետ, լավ էր ճանաչում թուրքերին, նրանց մտածելակերպը և սովորույթները: 30–ամյա էմիրը թուրքական մեջլիսի անդամ էր և արդեն ոտք էր դրել մեծ քաղաքականության ասպարեզ: Այս բոլոր հատկանիշների պատճառով՝ Հուսեյնը նրան շատ էր վստահում և նրան հանձնարարում էր պատասխանատու գործեր:

Երիտթուրքերը լավատեղյակ էին Աբդալլահի ունակություններին և իր հոր՝ Հուսեյնի վրա նրա ունեցած ազդեցության մասին: Այդ պատճառով նրանք փորձ կատարեցին նրան իրենց կողմը գրավել և այդ ուղիով չեզոքացնել նրան: 1914 թ. սկզբներին նրան առաջարկվեց նախարարական պորտֆել օսմանյան կառավարությունում, ապա՝ Եմենի գլ-

խավոր նահանգապետի պաշտոնը: Աբդալլահը կռահեց նման առաջարկների ենթատեքստը և շատ քաղաքավարի ձևով հրաժարվեց երկու առաջարկություններից: Կենսագիրների կողմից ճիշտ է նկատված, որ նա, ինչպես և հայրը, տարիներ շարունակ երազում էին ինքնավար Հիջազի մասին, որն արաբական բոլոր երկրներին ժամանակի ընթացքում առաջնորդելու էր դեպի անկախություն:

Հոր և որդու բնավորությունների միջև, իհարկե, կային նաև տարբերություններ: Հուսեյնն ավելի զգույշ էր, համբերատար, սպասում էր հարցի հասունանալուն, որից հետո նա ամբողջապես նետվում նրա լուծմանը: Իսկ Աբդալլահը, ընդհակառակը, անհամբեր էր, ինքնավստահ, շտապող և չուներ երևույթների մեջ խորանալու և ապագան կանխատեսելու Հուսեյնի ունակությունը:

Եվ, ահա այժմ, Հուսեյնի ընտրությունը կրկին ընկավ Աբդալլահի վրա՝ նրան հանձնարարելով կապեր հաստատել անգլիացի պաշտոնյաների հետ: Աբդալլահը, կարելի է ասել, անվախորեն նետվեց իր հոր հանձնարարությունը կատարելուն, որը ոչ միայն դժվար, այլև վտանգավոր գործ էր:

1914 թ. փետրվարին, Աբդալլահը Ստամբուլից Մեքքա վերադառնալու ճանապարհին, կանգ առավ Կահիրեում և ցանկություն հայտնեց քաղաքավարական այց կատարել Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի դիվանագիտական գործակալ, հյուպատոս, իրականում Եգիպտոսի փաստացի կառավարիչ Կիտչեներին: Նրա ցանկությունը Կիտչեները բավարարեց և նրա հետ զրույց ունեցավ, որին ներկա էր նաև Եգիպտոսում բրիտանական դիվանագիտական ներկայացուցչության Արևելյան հարցերի քարտուղար Ռոնալդ Սթորսը, որը հետագայում նշանակալի դերակատարում ունեցավ Հիջազի հետ կապերը հաստատելու և խորացնելու գործում:

Աբդալլահը, առանց երկար սպասեցնելու Կիտչեներին, նրան տեղյակ պահեց, որ լարված հարաբերություններ են ստեղծվել Թուրքիայի իթիհադական ղեկավարության և իր հոր միջև: Այնուհետև նա ավելացրեց, որ Իթիհադ վե թերակին որոշել է գահընկեց անել իր հորը, ընդգծելով, որ, եթե դա պատահի, ապա հնարավոր է, որ ապստամբություն տեղի ունենա Հիջազում: Զգուշորեն նա փորձեց իմանալ, թե ինչպիսին կլինի Անգլիայի դիրքորոշումը, եթե արաբների և թուրքերի միջև կոնֆլիկտը բացահայտ բնույթի կրի:

Կիտչեների պատասխանը Աբդալլահի համար հուսադրիչ չէր: Նա, ընդգծելով, որ ինքն արտահայտում է իր անձնական տեսակետը, ասաց Աբդալլահին, որ իր երկրի ավանդական քաղաքականությունն է պահպանել բարեկամությունը Թուրքիայի հետ և իր երկիրը պատրաստ չէ կոնֆլիկտին միջամտել:

Կիտչեների պատասխանի կապակցությամբ, հարկ է նկատի ունենալ երեք հանգամանք:

Առաջին, Աբդալլահ–Կիտչեներ հանդիպումը և Կիտչեների հայտարարությունը տեղի է ունեցել 1914 թ. փետրվարի սկզբերին, երբ Առաջին համաշխարհային պատերազմը դեռևս չէր սկսվել:

Երկրորդ, Թուրքիան դեռ պատերազմի մեջ չէր մտել Անտանտի հակառակորդ Եռյակ դաշինքին միանալով: Այսինքն, Թուրքիան դեռև պաշտոնապես չէր հայտնվել Անգլիային հակադիր ռազմաքաղաքական ճամբարում:

Ինչպես հայտնի է, պատերազմը սկսվեց 1914 թ. օգոստոսի 1–ին, իսկ Թուրքիան պատերազմի մեջ մտավ 1914 թ. հոկտեմբերի 29–ին:

Երրորդ, Աբդալլահի այցը և Կիտչեների հետ նրա զրույցը նախօրոք համաձայնված չէր: Դա անակնկալ էր, որ Աբդալլահը Կիտչեներին մատուցեց Ստամբուլից Կահիրեով Մեքքա վերադառնալու ճանապարհին: Հետևաբար, Կիտչեները նախօրոք Աբդալլահի հարցի պատասխանը չէր համաձայնեցրել իր կառավարության հետ և չէր էլ կարող համաձայնեցնել, քանի որ ինքն էլ չգիտեր, թե Աբդալլահը ինչ է ուզում իրենից և ինչ հարցեր է պատրաստվում քննարկել իր հետ: Ինչպես նշեցինք, Աբդալլահը միայն տեղյակ էր պահել, որը ինքը ցանկանում է քաղաքավարական այց կատարել անգլիական հյուպատոսին, իսկ վերջինս բավարարել էր նրա խնդրանքը, դրանով ցանկանալով իր հարգանքը դրսևորել Հիջազի կառավարիչ Հուսեյնի նկատմամբ:

Այսպիսի պայմաններում, Կիտչեները, բնականաբար, չէր կարող սպառիչ պատասխան տալ մի այնպիսի հարցի, ինչպես Անգլիայի պատրաստակամությունն օգնել Հուսեյնին՝ արաբների և թուրքերի միջև կոնֆլիկտ առաջանալու դեպքում: Դա մի այնպիսի հարց էր, որ ենթակա էր բրիտանական կառավարության իրավասությանը:

Կիտչեները, լինելով փորձառու դիվանագետ, հասկանում էր, որ, այդուհանդերձ, սխալ կլիներ դուռը փակել Մեքքայի հետ հետագա շփումների առջև: Մանավանդ, որ նա ճիշտ կերպով կռահել էր, որ Աբդալլահը ինչ–որ այլ հարցեր ևս կցանկանար քննարկել իր հետ: Ուս-

տի նա հրահանգեց Սթորսին պատասխան այցելություն կատարել Աբդալլահին և փորձել ավելի հանգամանորեն իմանալ նրա մտադրությունների մասին:

Ի կատարումն այդ հրահանգի, Սթորսը երկու օր անց այցելեց դեռևս Կահիրեում գտնվող էմիր Աբդալլահին: Նրանց զրույցն ավելի բացահայտ բնույթ կրեց, համենայն դեպս Աբդալլահի կողմից: Աբդալլահն ավելի հանգամանորեն անդրադարձավ Կիտչեների հետ ունեցած զրույցի ժամանակ իր կողմից բարձրացրած հարցերին, ընդգծելով իր հոր կողմից տարվող նախապատրաստական աշխատանքները և Հիջազում տիրող դրությունը, բացատրելով Սթորսին արաբական շարժման նպատակները, միաժամանակ մատնանշելով այդ շարժման ղեկավարներին համակած հուսահատությունը: Վերջում Աբդալլահն անսպասելիորեն Սթորսին ուղղակի հարցնում է, թե արդյո՞ք Կիտչեները կօգնի իր հորը գնդացիրներ ձեռք բերելու գործում:

Սթորսի պատասխանը նույնը եղավ, ինչ Կիտչեներինը՝ Աբդալլահի հետ նրա առաջին հանդիպման ժամանակ: Անգլիան այս անգամ ևս որևէ հուսադրող խոստում չտվեց Աբդալլահին:

1914 թ. ապրիլին Աբդալլահը կրկին եղավ Կահիրեում, բայց ցանկություն չունեցավ հանդիպել Կիտչեների հետ: Նա հանդիպեց միայն Սթորսի հետ, որը կրկին Աբդալլահին և նրա միջոցով Հուսեյնին հուսադրիչ ոչ մի բան չասաց:

Թեև այս նախնական զրույցները կոնկրետ արդյունք չտվեցին, բայց անհետևանք չանցան: Կիտչեներն ավելի հստակ պատկերացում ունեցավ արաբական աշխարհում, այդ թվում և Հիջազում տիրող դրության, արաբական ղեկավարների ծրագրերի ու նրանց հակաթուրքական դիրքորոշումների մասին: Նա հասկացավ, որ արաբ–թուրքական թշնամանքը, իրոք, խորն է և արաբ առաջնորդները լի են վճռականությամբ՝ արաբական երկրների անկախության նվաճման հարցում:

Այստեղից Լոնդոնում այն եզրակացության եկան, որ անհրաժեշտության դեպքում կարող են հենվել արաբների վրա և նրանց հակաթուրքական կողմնորոշումն օգտագործել հօգուտ իրենց: Բրիտանական մայրաքաղաքում նույնիսկ այն տեսակետն էր արտահայտվում, որ հարմար պահին հնարավոր կլինի արաբ–անգլիական ամբարտակը կանգնեցնել ընդդեմ թուրք–գերմանական մակընթացության:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց շատ չանցած Կիտչեները նշանակվեց Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար:

Սթորսը մնաց Կահիրեում և գործունեության ավելի լայն ազատություն ստացավ: Թե՛ Կիտչեները, և թե՛ Սթորսը հիշեցին իրենց նախնական շփումները Հիջազի կառավարիչ շերիֆ Հուսեյնի և Աբդալլահի հետ և նոր լույսի ներքո մոտեցան նրանց առաջարկություններին: Նրանք հասկացան, որ արաբական հակաթուրքական ապստամբությունը մեծ նշանակություն կարող է ունենալ Անգլիայի համար՝ ընդդեմ թուրք–գերմանական բլոկի: Կիտչեները հրահանգեց Սթորսին կապի մեջ մտնել Հուսեյնի հետ և նրանից պարզաբանել հետևյալը՝ եթե Թուրքիան պատերազմի մեջ մտնի Գերմանիայի կողմից, արդյո՞ք Հուսեյնը կհետևի նրան, թե՞ կմիանա Մեծ Բրիտանիային՝ ընդդեմ Թուրքիայի:

Նկատենք որ այս հարցը Հիջազի կառավարչին հասցեագրողը արդեն ոչ թե Եգիպտոսում բրիտանական դիվանագիտական գործակալ և հյուպատոս Կիտչեներն էր, այլ բրիտանական կառավարության մեջ առանցքային նախարարական պորտֆել զբաղեցնող ռազմական նախարար Կիտչեները: Իսկ դա վկայում էր այն մասին, որ անգլիական կառավարությունն աստիճանաբար նոր քաղաքականություն էր որդեգրում արաբական հարցում:

Արևելյան հարցերի գծով քարտուղար Ռոնալդ Սթորսը կարողացավ վստահելի անձնավորության միջոցով փոխանցել Կիտչեների այս նամակը Հուսեյնին և նրանից ստացավ պատասխան նամակ, որը, սակայն, ստորագրել էր նրա որդին՝ Աբդալլահը: Այս նախազգուշական քայլերը ձեռնարկվել էին գաղտնապահությունն ապահովելու համար, քանի որ երկու կողմերն էլ զգույշ էին և խուսափում էին, որ նրանց շփումները ժամանակից շուտ հայտնի չդառնան հանրությանը:

Այս հարցն առավել հանգամանորեն, քան որևէ այլ հեղինակ, ուսումնասիրած Ջ Անտոնիուսը, որի ձեռքի տակ եղել են հազվագյուտ և եզակի փաստաթղթեր, որոնք մատչելի չեն այլ հեղինակներին, և որը ժամանակին այս հարցի շուրջը մասնավոր զրույցներ է ունեցել արդեն Հիջազի թագավոր դարձած Հուսեյնի, Իրաքի թագավոր դարձած նրա որդու Ֆեյսալի, Անդրհորդանանի էմիր դարձած նրա մյուս որդու՝ Աբդալլահի հետ, նշում է, որ Կիտչեների ուղերձը Հուսեյնին դրեց ծանր դրության մեջ և կանգնեցրեց երկընտրանքի առջև: Հուսեյնը ստիպված էր ընտրություն կատարել հետևյալ երկու տարբերակների միջև՝ «կանգնել Թուրքիայի կողքին նրա համար օրհասական պահին և շահել նրա երախտագիտությունը, թե՞ ապստամբվել նրա դեմ և իրենց ազատությունը փնտրել սրով»:

Այս հարցին պատասխան գտնելու համար նա խորհրդակցում է իր որդիներից երկուսի՝ Ֆեյսալի և Աբդալլահի հետ, որոնք տարբեր տեսակետների էին:

Ֆեյսալն առաջին տարբերակի, այսինքն՝ արաբների Թուրքիայի կողմում հանդես գալու կողմնակից էր: Ի պաշտպանություն իր տեսակետի, նա հետևյալ փաստարկներն էր բերում: Նա նշում էր, որ Ֆրանսիան հավակնում է Սիրիային, իսկ Անգլիան՝ Իրաքի հարավային շրջաններին, և Կիտչեների առաջարկությունը ոչ մի երաշխիքներ չի պարունակում այդ վտանգի դեմ: Ֆեյսալի մյուս փաստարկը կայանում էր նրանում, որ նա հավատացած չէր, որ արաբները բավարար չափով պատրաստված են ապստամբությանը, և վախ էր արտահայտում, որ այդ ապստամբությունը կարող է վրիպում լինել:

Աբդալլահը հակառակ տեսակետի էր: Նա, որ արաբական գաղտնի կազմակերպություններից մեկի անդամ էր, գտնում էր, որ արաբների ապստամբական տրամադրությունները շատ ուժեղ են և վստահ էր, որ ապստամբության կոչի դեպքում, Դամասկոսն ու Բաղդադը դրականորեն կարձագանքեն դրան: Նա միաժամանակ գտնում էր, որ սխալ կլիներ մերժել Կիտչեների առաջարկը որպես ոչ բավարար, այլ անհրաժեշտ է շարունակել բանակցությունները Լոնդոնի հետ և պարզել, թե արդյո՞ք Կիտչեներն իր կառավարության անունից պատրաստ է բացարձակ երաշխիքներ տալ արաբներին անկախության հարցում:

Ինչպես տեսնում ենք, երկու եղբայրների տեսակետները արաբների համար սկզբունքային նշանակություն ունեցող այս հարցում, տրամագծորեն հակառակ էին միմյանց:

Սակայն, վերջին խոսքը պատկանում էր նրանց հորը՝ Հուսեյնին, և նա պետք է վերջնական որոշումն ընդուներ, թե որ տարբերակին է նա նախապատվություն տալիս:

Հուսեյնը երկմտանքի մեջ էր, գտնելով, որ իր զավակներից յուրաքանչյուրի ասածի մեջ կա որոշակի ճշմարտություն: Բայց նա ոչ մի կերպ չէր ցանկանում հիասթափեցնել Լոնդոնին և խզել կապերը Մեքքայի և Լոնդոնի միջև: Նա որոշում ընդունեց իր հանձնակատարներին ուղարկել Սիրիա և արաբական ազդեցիկ ղեկավարների մոտ՝ պարզելու արաբների իսկական զգացմունքները և պատրաստակամությունը ապստամբության հարցում, մի կողմից, և այնպիսի պատասխան ուղարկել Անգլիայի ռազմական նախարար Կիտչեներին, որպեսզի նրան

խրախուսի մնալ խաղի մեջ՝ այսինքն շարունակի գաղտնի բանակցությունները, մյուս կողմից:

Հուսեյնն իր պատասխան նամակը Կիտչեներին, որը ստորագրել էր Աբդալլահը, հենց այդ ոգով էր կազմել: Նրանում նշվում էր, որ Մեքքան ցանկանում է հասկացողության գալ Մեծ Բրիտանիայի հետ, բայց դեռևս ի վիճակի չէ հրաժարվել չեզոքությունից, որը նրան պարտադրում է նրա դիրքը իսլամում: Այնուհետև, Հուսեյնն ակնարկում էր, որ ինքը կարող է հնարավոր համարել առաջնորդել իր անմիջական հետևորդներին դեպի ապստամբություն, եթե թուրքերը գործը հասցնեն դրան, և եթե Անգլիան խոստանա արդյունավետ աջակցություն:

Սթորսը Հուսեյնի պատասխան նամակն ստանալուն պես, անմիջապես այն հեռագրով փոխանցեց Լոնդոն՝ Կիտչեներին:

Հավանաբար Կիտչեների պատասխանի վրա իր ազդեցությունն ունեցավ Եգիպտոսում անգլիական զորքերի հրամանատար Ջոն Մաքսուելլի նամակը, որը Կիտչեներին էր հասել հենց այն նույն օրը, ինչ Հուսեյնի նամակը: Ջոն Մաքսուելլը գրում է ռազմական նախարարին՝ «Ես չգիտեմ թե, որն է Ֆորին Օֆիսի քաղաքականությունը, բայց ես կարծում եմ, որ պետք է մերձենալ Մեքքայի և Եմենի արաբներին և պատրաստել նրանց թուրքերի դեմ»: Այս հանգամանքն ավելի է համոզում Կիտչեներին Մեքքայի շերիֆի հետ հարաբերությունները ոչ միայն պահպանելու, այլև ավելի խորացնելու անհրաժեշտության մեջ:

1914 թ. հոկտեմբերի 3–ին Կիտչեներն իր պատասխան նամակն է ուղարկում Սթորսին, հանձնարարելով նրան, այն անհապաղ փոխանցել Աբդալլահին: Նամակում, Կիտչեները Հուսեյնին տեղյակ պահելով, որ Թուրքիան արդեն պատերազմի մեջ է մտել, խոստանում է նրան, որ եթե Հուսեյնը և իր հետևորդները կանգնեն Անգլիայի կողքին՝ ընդդեմ Թուրքիայի, ապա բրիտանական կառավարությունը կերաշխավորի Մեծ Շերիֆի՝ Հուսեյնի, բոլոր իրավունքներն ու առանձնաշնորհումները, և «կպաշտպանի նրան արտաքին բոլոր ագրեսիաներից»: Նա հայտնում էր նրան, որ Անգլիան խոստանում է «ընդհանրապես օգնել արաբներին՝ ազատությունն ապահովելու նրանց ձգտումների մեջ, պայմանով, որ նրանք կդաշնակցեն Անգլիայի հետ»: Կիտչեների նամակն ավարտվում է մի կարևոր խոստումով, որը սկզբունքային նշանակություն ուներ Հուսեյնի՝ որպես Մեքքայի շերիֆի և Հիջազի կառավարչի համար: Նա ակնարկում է, որ Շերիֆի կողմից իրեն խալիֆա հռ-

չակելու դեպքում, նա կարող է հույս ունենալ, որ նրա այդ քայլը Անգլիայի կողմից ճանաչում կգտնի:

Կիտչենների նամակը Աբդալլահին հասավ 1914 թ. նոյեմբերի 16–ին, որն, այնուհետև, այն փոխանցեց իր հորը:

Մեքքայի արծագանքը Կիտչենների ուղերձին ընդհանուր առմամբ դրական էր: Փաստորեն նրանց հիմնական պահանջները Լոնդոնը խոստանում էր բավարարել: Այդ պատճառով էլ Աբդալլահը խորհուրդ է տալիս հորը վարել Անգլիայի հետ դաշնակցելու քաղաքականություն: Հուսեյնը, ի վերջո, նույնպես կանգնում է այդ դիրքերում:

2. Հուսեյն–Մակ–Մահոն նամակագրությունը և ապագա արաբական անկախ պետության սահմանների գծումը

Արաբա–բրիտանական նախնական շփումներն ավարտվեցին դրական արդյունքներով: Այդ փուլը կարելի է համարել երկու կողմերի միմյանց տեսակետներին ծանոթանալու փուլ, որի հիմնական նպատակն էր պարզելու, թե արդյո՞ք գոյություն ունի համապատասխան հիմք և քաղաքական կամք արաբա–բրիտանական համագործակցության համար: Այդ շփումների նպատակների մեջ էր մտնում պարզել նաև նրանց համագործակցության դաշտը և սահմանները:

Առաջին փուլում դրվեց արաբա–բրիտանական դաշնակցության հիմնաքարը:

Դրան հաջորդեց երկրորդ փուլը, որի ժամանակ Հիջազի կառավարիչ Հուսեյնի և Մեծ Բրիտանիայի կառավարության առջև կանգնած էր այդ համագործակցության պայմանները կոնկրետացնելու և կողմերից յուրաքանչյուրի պահանջներն ու պարտականությունները ճշտորոշելու հիմնախնդիրը: Այդ բոլորը պետք է արվեր, ի տարբերություն առաջին փուլի, ոչ թե դեկլարացիայի ձևով, այլ կոնկրետ պայմանավորվածություններով:

Պատրաստվելով այդ խնդրի լուծմանը, Հուսեյնը որոշեց իր որդուն՝ Ֆեյսալին, ուղարկել Դամասկոս, նրան հանձնարարելով պարզել սիրիական ազգային գործիչների դիրքը Մեծ Բրիտանիայի հետ դաշնակցելու և արաբական ապստամբություն բարձրացնելու հարցերում:

Սակայն, Ֆեյսալին Սիրիա ուղարկելն այնքան էլ դյուրին խնդիր չէր, հաշվի առնելով, որ Ջեմալ փաշան և նրա գործակալներն ակնդետ

հետևում էին Հուսեյնի և նրա որդիների քայլերին: Ուրեմն պետք էր հարմար պատրվակ գտնել:

Հուսեյնը շատ վարպետորեն օգտվեց իրեն ընձեռված մի արտակարգ հնարավորությունից: Նա նկատել էր, որ Հիջազում Թուրքիայի վալիի՝ Վեհիբ բեյի, վերաբերմունքն իր նկատմամբ փոխվել էր դեպի վատը և նա դա կապում էր Ստամբուլից ստացած հրահանգների հետ: Նա հանձնարարեց իր գործակալներին հետևել Վեհիբ բեյին: Վերջինիս Մադինա ճանապարհորդելու ժամանակ, նրա ուղեբեռից անհայտացավ մի ճամպրուկ, որն այնուհետև հայտնվեց Հուսեյնի մոտ: Այդ ճամպրուկը պարունակում էր կարևոր փաստաթղթեր, որոնց մեջ Հուսեյնը հայտնաբերեց փաստաթուղթ թուրքերի կողմից իր կյանքի դեմ պատրաստվող դավադրության մասին:

Հուսեյնը չկորցրեց իրեն, այլ, ընդհակառակը, որոշեց օգտվել դրանից և դիմել գործնական քայլերի: Նա հեռագրեց Ստամբուլ Օսմանյան կայսրության մեծ վազիրին, որ ինքը ցանկանում է նրան հաղորդել մի շատ կարևոր տեղեկություն, և խնդրեց, որ թույլ տան իր որդուն՝ Ֆեյսալին, այդ նպատակով ժամանի Ստամբուլ: Ոչինչ չկասկածող մեծ վազիրը, արտոնեց Ֆեյսալին ժամանելու մայրաքաղաք:

Հուսեյնի ընտրությունը Ֆեյսալի վրա էր ընկել այն կապակցությամբ, որ նա Թուրքիայի հետ համագործակցելու համբավ ուներ, մի հանգամանք, որը պետք է բթացներ թուրքերի զգոնությունը:

Ֆեյսալը Ստամբուլ մեկնելու ճանապարհին, 1915 թ. մարտի 26-ին ժամանեց Դամասկոս, իր հետ տանելով ոչ միայն Հուսեյնին սպանելու վերաբերյալ գաղտնի փաստաթղթերը, այլև հոր հանձնարարությունը՝ օգտվել հնարավորությունից և հանդիպումներ ունենալ սիրիական ազգային ականավոր գործիչների հետ: Նա այդ հանձնարարությունը կատարեց հիանալի և բազմաթիվ հանդիպումներ ու հանգամանալի զրույցներ ունեցավ սիրիական առաջնորդների հետ, որոնք նրա հետ տեսակցում էին քաղաքավարական այց կատարելու պատրվակով:

Նա հանդիպումներ ունեցավ «ալ-Ֆաթաթ» և «ալ-Ահդ» կազմակերպությունների ղեկավարների հետ և նրանց տեղյակ պահեց Կիտչենների առաջարկությունների, իր և Աբդալլահի տեսակետների տարբերությունների և Հուսեյնի զգուշավորության մասին: Կազմակերպության ղեկավարներն իրենց հերթին նրան հայտնեցին իրենց դիրքորոշման մասին, մասնավորապես «ալ-Ֆաթաթի» ղեկավարները հայտնեցին,

որ իրենք ընդունել են հետևյալ բովանդակության մի որոշում՝ «Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հետևանքով, Օսմանյան կայսրության արաբական նահանգների ճակատագիրը լրջորեն վտանգված է և ամեն ջանք պետք է գործադրվի նրանց ազատությունն ու անկախությունն ապահովելու համար»: Բայց, ասված էր այդ որոշման մեջ, եթե եվրոպական պետությունները փորձեն իրենց նվաճողական ծրագրերն իրագործել արաբական երկրների նկատմամբ, ապա այդ դեպքում «ընկերությունը հարկադրված կլինի հանդես գալ Թուրքիայի կողմում, որպեսզի դիմադրեն օտարերկրյա ներթափանցմանը՝ ինչ ձևով էլ, որ նա իրականացվի»:

Իսկ «ալ–Ահդի» անդամները, որոնք գլխավորապես զինվորականներ էին, հաղորդեցին Ֆեյսալին, որ «բանակը ապստամբության հանելն իրենց իշխանության ներքո է»: Նրանք տեղեկացրին Հուսեյնի որդուն, որ Սիրիայում գտնվող օսմանյան դիվիզիաների ճնշող մեծամասնությունը կազմված է արաբներից, իսկ սպաները, որոնք համարյա բոլորը «ալ–Ահդ» ընկերության անդամ են, միայն ազդանշանի են սպասում կենտրոնից, որպեսզի իրենց զորքերը շարժման մեջ դնեն:

Ֆեյսալն ընդհանուր առմամբ գոհ էր իր հանդիպման արդյունքներից և «ալ–Ֆաթաթ» ու «ալ–Ահդ» ընկերությունների գործունեությունից: Դրա մասին է խոսում նաև այն փաստը, որ նա դարձավ այդ երկու գաղտնի ընկերությունների անդամը:

Ֆեյսալը մեկնեց Ստամբուլ, պայմանավորվելով, որ մինչև իր վերադարձը, այդ երկու ընկերությունները համակողմանի կքննարկեն բոլոր հարցերը և կնախապատրաստեն համապատասխան փաստաթուղթ:

Արաբա–թուրքական հարաբերություններն այս փուլում՝ ճիշտ գնահատելու առումով, հետաքրքրություն է ներկայացնում Ֆեյսալի այցը Ստամբուլ և նրա զրույցները օսմանյան ղեկավարության հետ: Նրան երկու անգամ ընդունում է սուլթանը, ապա նա հանդիպումներ է ունենում նաև մեծ վազիր Սաիդ Հալիմի, ներքին գործերի նախարար Թալեաթի և ռազմական նախարար էնվերի հետ, ու նրանց ներկայացնում իր հետ տարած փաստաթղթերը Հուսեյնի կյանքի դեմ նախապատրաստվող դավադրության վերաբերյալ: Հետաքրքիր է թուրքական կողմի պահվածքը: Նրանք զրույցը տեղափոխում են Հիջազում տիրող դրության հարցի շուրջը, և հասկացնում Ֆեյսալին, որ Հիջազում ոչ մի խնդիր չի ծագի, եթե նրա կառավարիչ Հուսեյնը հստակ ու որոշակիորեն

հանդես գա ի պաշտպանություն սրբազան պատերազմ՝ ջիհադի: Եվ նրանք այդ բովանդակությամբ նամակ են ուղարկում Ֆեյսալի միջոցով Հուսեյնին:

1915 թ. մայիսի 23–ին Ֆեյսալը կրկին Դամասկոսում էր, որտեղ հանդիպում է «ալ–Ֆաթաթի» և «ալ–Ահդի» ղեկավարության հետ: Նրանք Ֆեյսալի բացակայության ընթացքում պատրաստել էին մի փաստաթուղթ, որը ստացավ «Դամասկոսի արձանագրություն» անվանումը: Այնտեղ շարադրված էին այն պայմանները, որոնց ընդունելու դեպքում, արաբները պատրաստ էին համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ, եթե այդ պայմանները, իհարկե, ընդունելի լինեին նաև նրա համար:

Նա պարունակում էր չորս կետ:

Առաջին կետը, որն ամենակարևորն էր, վերաբերում էր, արաբական երկրների անկախության հարցին: Այդ կետը շարադրված էր հետևյալ կերպ՝ «Մեծ Բրիտանիայի կողմից արաբական երկրների անկախության ճանաչումը հետևյալ սահմանների շրջանակում», որից հետո գծված էին արաբական անկախ պետության հյուսիսային, արևելյան, հարավային և արևմտյան սահմանները: Նա ներառնում էր ամբողջությամբ Արաբիան, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Պաղեստինը, Հորդանանը և Փոքր Ասիայի հարավային որոշ շրջաններ՝ Մերսինը, Ադանան, Ուրֆան և այլն:

Երկրորդ կետը վերաբերում էր կապիտուլյացիաներով օտարերկրացիներին տրվող բացառիկ արտոնությունների վերացմանը:

Շատ կարևոր էր երրորդ կետը՝ «Պաշտպանական դաշինքի կնքում Մեծ Բրիտանիայի և ապագա արաբական անկախ պետության միջև»:

Եվ, վերջապես, չորրորդ կետով նախատեսվում էր «Տնտեսական արտոնությունների շնորհում Մեծ Բրիտանիային»:

Դրա հետ միասին այդ երկու ընկերությունների վեց ականավոր ղեկավարներ երդվեցին շերիֆ Հուսեյնին ճանաչել որպես արաբ ազգի խոսնակ, որն իրավունք ուներ հանդես գալու նրա անունից:

Շեյխ Բադր ադ–Դին ալ–Հասանին, սիրիական երևելի դեմքերից մեկը, իր կնիքը տվեց Ֆեյսալին՝ Հուսեյնին փոխանցելու համար, որպես նշան այն բանի, որ սիրիացիները վստահում են Հուսեյնին:

Դամասկոսի արձանագրությունը առաջին կարևոր փաստաթուղթն էր, որտեղ արաբական ազգային առաջնորդները հստակորեն սահմանել էին իրենց հիմնական քաղաքական պահանջները՝ որպես

հետագա գործողությունների ծրագիր և հակաթուրքական ապստամբության հիմք:

«Ալ–Ֆաթաթի» և «ալ–Ահդի» ղեկավարները հանձնեցին այս փաստաթուղթը Ֆեյսալին՝ իր հորը փոխանցելու համար և պարզելու, թե արդյո՞ք նա ընդունելի է Հուսեյնի համար և կարո՞ղ է բավարար հիմք հանդիսանալ Մեծ Բրիտանիայի հետ դաշինք կնքելու և կոնկրետ համագործակցության համար:

Փաստաթղթի մի օրինակը, մանր տառերով գրված, Ֆեյսալը, ղեկավարվելով անվտանգության նկատառումներով, թաքցրեց իր կոշկի ներբանում, և նստելով Դամասկոս–Մադինա գնացքը, մեկնեց Հիջազ: 1915 թ. հունիսի 20–ին նա հասավ Մեքքա:

Հենց այդ նույն օրն էլ Դամասկոսի արձանագրությունն արդեն Հիջազի կառավարիչ, Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի սեղանի վրա էր:

Մինչ ծավալվում էին այս գործողությունները, Եգիպտոսում բրիտանական իշխանությունները՝ Հենրի Մակ–Մահոնի գլխավորությամբ, որը 1915 թ. հունվարից արդեն ստանձնել էր Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսարի պարտականությունները, աշխատում էին ընդլայնել շփումները արաբական գործիչների հետ, որոնք գտնվում էին Արաբիայից դուրս: Ռ. Սթորսը և Կահիրեում բրիտանական ռազմական հետախուզության պետ Ջ. Կլեյթոնը հանդիպումներ ունեցան Ազիզ Ալի ալ–Մըսրիի և Սայիդ Ռաշիդ Ռիզայի հետ: Այս վերջինս եգիպտական հեղինակավոր աստվածաբան և քաղաքական գործիչ էր: Նրանց զրույցի թեման հիմնականում երկու հարցի մասին էր: Առաջինը, Կիտչեների և Հուսեյնի միջև ուղղակի և անուղղակի նամակների փոխանակության և նրանցում բարձրացված հարցերի վերաբերյալ: Երկրորդը՝ բրիտանացիները փորձում էին համոզել ալ–Մըսրիին և Ռաշիդ Ռիզային, որ արաբների ապագան Անգլիայի հետ նրանց դաշինքի մեջ է: Եգիպտական երկու գործիչները, դեմ չլինելով նման դաշինքին, սակայն, դրա նախապայմանը համարում էին արաբական անկախության վերաբերյալ բրիտանական երաշխիքները: Բայց քանի որ Սթորսը և Կլեյթոնը, գտնվելով Կահիրեում, նման երաշխիքներ չէին կարող տալ, ուստի բանակցություններն ընդհատվեցին:

Անգլիացիները կապեր էին հաստատել նաև Իրաքի ազգային գործիչների, հատկապես Բաղդադի այսպես կոչված լիբերալ կոմիտեի հետ: Նրանց ներկայացուցիչները ևս պահանջում էին, որ Անգլիան ռազ-

մական և քաղաքական օգնություն ցույց տա արաբներին՝ ի դիմաց Թուրքիայի դեմ ապստամբվելու նրանց պատրաստակամության:

Բրիտանացիները հանդիպումներ ունեցան նաև Սուդանի երևելի դեմքերի հետ:

Շփումները ոչ միայն Հիջազի կառավարիչ Հուսեյնի ու նրա որդիների, այլև եգիպտական, իրաքյան ու սուդանական ազգային գործիչների հետ վերջնականապես համոզեցին Մեծ Բրիտանիայի կառավարությանը, որ եթե նա ուզում է օգտագործել արաբական ապստամբությունն իր շահերի համար, ապա անհրաժեշտ նախապայման է երաշխիքներ տալ նրանց մի այնպիսի սկզբունքային հարցում, ինչպիսին արաբների անկախության հարցն է: Եվ բրիտանական կառավարությունը լիազորեց Մակ–Մահոնին հանդես գալ համապատասխան հայտարարությամբ: Մակ–Մահոնի հայտարարության մեջ, որը հրապարակվեց 1915 թ. հունիսի սկզբներին, երկու կարևոր հարց էր շոշափվում՝ արաբների անկախության և խալիֆայության: Մակ–Մահոնը բրիտանական կառավարության անունից վստահեցնում էր արաբներին, որ Արաբական թերակղզին կճանաչվի որպես անկախ պետություն, որի գերիշխանությունը տարածվելու է իսլամական սրբավայրերի վրա: Իսկ ինչ վերաբերում էր խալիֆայությանը, ապա հայտարարությունն ակնարկ էր պարունակում այն մասին, որ եթե արաբները հռչակեն խալիֆայություն, ապա Մեծ Բրիտանիան կողջունի նրանց այդ քայլը:

Բրիտանացիների ջանքերով այդ հայտարարությունը թռուցիկների ձևով տարածվեց Եգիպտոսում, Իրաքում, Սուդանում և Սիրիայում:

Այժմ կրկին վերադառնանք Հիջազի կառավարիչ Հուսեյնին և նրա ստացած Դամասկոսի արձանագրությանը: Հուսեյնը լրիվ հավանություն տվեց Դամասկոսի արձանագրությանը, և նրանում առաջ քաշված դրույթներն ու ձևակերպումները միանգամայն բավարար համարեց դրանց հիմքի վրա բանակցություններ սկսել Մեծ Բրիտանիայի հետ: Ելնելով ստեղծված իրադրությունից, նպատակահարմար գտնվեց բանակցությունները վարել Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսար Մակ–Մահոնի հետ, որն, անշուշտ, համապատասխան լիազորություններ ուներ իր կառավարությունից:

Բանակցությունների վարման ձև ընդունվեց նամակագրությունը: Այսպես լույս աշխարհ եկավ «Հուսեյն–Մակ–Մահոն նամակագրությունը», որը արաբա–բրիտանական դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ մտել է որպես կարևոր փաստաթուղթ:

Առաջին նամակը ուղարկեց Հուսեյնը 1915 թ. հուլիսի 14–ին: Ընդհանուր առմամբ կողմերի միջև փոխանակվել է 8 նամակ: Վերջին նամակը թվագրված է 1916 թ. հունվարի 30–ին:

Բանակցությունների հիմքում Հուսեյնը դրեց Դամասկոսի արձանագրության հիմնական պահանջները՝ որոշ փոփոխություններով: Եթե Դամասկոսի արձանագրությունը բաղկացացած էր 4 կետերից, ապա Հուսեյնի նամակը պարունակում էր 6 կետ:

Հուսեյնը նշում էր, որ հաշվի առնելով քաղաքական, աշխարհագրական և տնտեսական գործոնները և Մեծ Բրիտանիայի կառավարության դիրքորոշումը, նրանք՝ արաբները, «բրիտանական օգնությունը գերադասում են որևէ մեկ այլ երկրի օգնությունից»: Բայց Մեծ Բրիտանիայի հետ արաբների մերձեցման համար, Հուսեյնը գտնում էր, որ պետք է իրագործել արաբների հիմնական պայմանները:

Առաջին պայմանը՝ «Մեծ Բրիտանիան ճանաչում է արաբական երկրների անկախությունը»: Հուսեյնը նույնությամբ նշում է այն սահմանները, որոնք գծված էին Դամասկոսի արձանագրության մեջ: Նա ներառնելու էր Արաբիան, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Պաղեստինը, Հորդանանը և Թուրքիայի կազմի մեջ մտնող փոքրասիական հարավային տարածքները:

Երկրորդ պայմանը՝ «Մեծ Բրիտանիան համաձայն է արաբական իսլամական խալիֆայության հռչակմանը»:

Երրորդ պայմանը նախատեսում էր, որ Շերիֆական արաբական կառավարությունը Մեծ Բրիտանիային կշնորհի արտոնություններ արաբական երկրներում բոլոր տեսակի տնտեսական գործունեության համար:

Չորրորդ պայմանը վերաբերում էր փոխադարձ օգնությանը: Այստեղ նշվում էր, որ արաբական անկախության ամրապնդման և Մեծ Բրիտանիային տրվելիք տնտեսական արտոնությունների արդյունավետության ապահովման համար, պայմանավորվող երկու կողմերը՝ նրանցից որևէ մեկի վրա օտարերկրյա պետության հարձակման դեպքում, օգնության կգան միմյանց՝ իրենց բոլոր ռազմական և ծովային ռեսուրսներով, և հաշտություն կկնքվի միայն երկու կողմերի համաձայնությամբ:

Այն դեպքում, երբ կողմերից մեկը հարձակում ձեռնարկի, ապա մյուս կողմը պարտավորվում է չեզոք դիրք գրավել, բայց եթե նրան հրավիրում են միանալ, ապա նա պարտավորվում է խորհրդակցել մյուս կողմի հետ համատեղ գործողությունների վերաբերյալ:

Հինգերորդ պայման՝ Մեծ Բրիտանիան համաձայն է արաբական երկրներում կապիտուլյացիաների վերացմանը և կօժանդակի Շերիֆական կառավարությանը հրավիրելու միջազգային կոնգրես՝ նրանց վերացման համար որոշում ընդունելու նպատակով:

Վեցերորդ պայման՝ սույն Համաձայնագրի 3 և 4 կետերն ուժի մեջ են 15 տարվա ընթացքում:

Վերջում Հուսեյնը խնդրում էր Մակ–Մահոնին պատասխանել երեսուն օրվա ընթացքում՝ անկախ այն բանից, նրա պատասխանը դրական կլինի, թե բացասական:

Մակ–Մահոնը Հուսեյնին պատասխանեց 1915 թ. օգոստոսի 30–ին: Բարձր գնահատելով արաբների զգացմունքները և վստահությունը Մեծ Բրիտանիայի նկատմամբ, Մակ–Մահոնը նշում է, որ ինքը վերահաստատում է Կիտչեների դեկլարացիան՝ առ այն, որ Մեծ Բրիտանիայի ցանկությունն է արաբական երկրներին անկախություն տալը, և որ մեծ Բրիտանիան պատրաստ է ճանաչել արաբական խալիֆայությունը՝ նրա հռչակման պարագայում: Այնուհետև նա ավելացնում է. «Մենք այժմ մի անգամ ևս հայտարարում ենք, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը կողջունի արաբական խալիֆայությունը Մարգարեի օրհնյալ տոհմից՝ ծնունդով իսկական արաբի, վերադարձնելը»:

Մակ–Մահոնի նամակի մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում ապագա արաբական անկախ պետության սահմանների հարցը: Այդ կապակցությամբ, նա նշում է, որ սահմանների վերաբերյալ բանակցությունները դեռ վաղ են և դրա քննարկումը ժամանակի վատնում կլինի ներկա փուլում, քանի որ պատերազմը դեռ շարունակվում է և արաբական երկրների մեծ մասը օկուպացված է Թուրքիայի կողմից: Եվ այդ կապակցությամբ նա անում է մի դիտողություն, որը հազիվ թե դուր գար Հուսեյնին և նրա կողմնակիցներին: Մակ–Մահոնը գրում է Հուսեյնին, որ «Այդ տարածքներում (Թուրքիայի տիրապետության տակ գտնվող — Ն. Հ.) բնակվող արաբների մեծ մասը, ի զարմանս մեր և ի ցավ մեզ, աչքաթող են անում և անտեսում այս անգնահատելի և աննախընթաց հնարավորությունը, և, փոխանակ օգնության գան մեզ, օժանդակում են գերմանացիներին և թուրքերին»:

Իր պատասխան նամակում, Հուսեյնն ափսոսանք է հայտնում, որ Մեծ Բրիտանիան հրաժարվում է քննարկել սահմանների հարցը: Նա նշում է, որ այդ հարցը ոչ թե առանձին անհատի, տվյալ դեպքում՝ իր, այլ

ամբողջ արաբ ժողովրդի պահանջն է, ակնարկելով, որ այդ հարցին պատասխանելուց է կախված հետագա համագործակցությունը:

Հետագա նամակափոխանակության ժամանակ, կողմերը գնացին զիջումների, հիմնականում Հուսեյնը, և համաձայնության եկան հետևյալի շուրջը:

Մերսինը և Ալեքսանդրետը, Դամասկոս–Հոմս–Համա–Հալեբ գծից ընկած ամբողջ տարածքը դուրս էր մնում ապագա արաբական պետությունից: Բասրայի և Բաղդադի վիլայաթները ձևականորեն մտնում էին արաբական պետության կազմի մեջ: Բայց հաշվի առնելով այստեղ արդեն հաստատված բրիտանական դիրքերն ու շահերը, կողմերը համաձայնվեցին, որ Անգլիան այստեղ կհաստատի հատուկ կառավարչություն՝ «այդ շրջաններն արտաքին ագրեսիայից պաշտպանելու, բնակչության բարեկեցությունն ապահովելու և մեր փոխադարձ շահերը պաշտպանելու համար»: Դրա դիմաց Անգլիան պարտավորվում էր փոխահատուցում վճարել արաբներին՝ օկուպացման ամբողջ ժամանակահատվածի համար:

Արաբական մնացած տարածքների վրա ստեղծվելու էր արաբական անկախ պետություն: Մեծ Բրիտանիան համաձայնվում էր ճանաչել այդ պետությունը, ինչպես նաև արաբական խալիֆայությունը:

Մեծ Բրիտանիան համաձայնվեց Հուսեյնին ցույց տալ քաղաքական, ռազմական, ֆինանսական և նյութական օգնություն՝ ապստամբության բարձրացման և իրագործման ընթացքում:

Ահա այսպիսին էր Հուսեյն–Մակ–Մահոն մոտ յոթ ամիս տևած նամակագրության քաղաքական արդյունքը:

Հասկանալի է, որ դա նամակափոխանակություն չէր սովորական առումով, այլ քաղաքական կարևոր փաստաթղթի պատրաստում, որը մեծ նշանակություն ունեցավ թուրքական լծից արաբների ազատագրման գործում:

Հուսեյնին և նրա կողմնակիցներին չհաջողվեց Մեծ Բրիտանիայի հետ համաձայնության գալ տարածքային հարցերում, այնպես ինչպես իրենք կցանկանային, որը գրի էր առնված Դամասկոսի արձանագրության մեջ: Դա ուներ իր պատճառները, որոնցից գլխավորներն էին՝ արաբների ռազմական թուլությունը, անբավարար կազմակերպվածությունը, սեփական ուժերով թուրքական տիրապետությունը տապալելու անհնար լինելը, արտաքին որևէ հզոր պետությունից օգնություն ստանալու կենսական անհրաժեշտությունը և այլն: Այդպիսի պետություն

հանդիսացավ Մեծ Բրիտանիան, որի շահերը տվյալ պատմական փուլում համընկան արաբների շահերի հետ: Բայց դա հանգեցրեց նրան, որ արաբները կախման մեջ ընկան Մեծ Բրիտանիայից և նրանից ակնկալվող օգնությունը նրանք կարող էին ստանալ միայն այն դեպքում, եթե զիջումների գնային և բավարարեին անգլիացիների պահանջները:

Այդուհանդերձ, դրա հետ միասին պետք է նկատի ունենալ, որ այդ համագործակցությունն իր դրական դերը խաղաց թուրքական լծից արաբների ազատագրման գործում:

Իսկ դա քիչ բան չէր:

3. Սայքս–Պիկոյի համաձայնագիրը և արաբական դրամայի վերջին արարը

Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնությունը, որը ձեռք բերվեց նամակների փոխանակության ձևով, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, արաբական դրամայի լոկ առաջին արարն էր: Արաբները՝ Հուսեյնը, նրա որդիները, սիրիական, իրաքյան և եգիպտական ազգային առաջնորդները միամտորեն կարծում էին, որ արաբական հարցը միջազգային թատերաբեմում արդեն լուծված է և մնում է միայն վարագույրն իջեցնել:

Բայց նրանց հիասթափություն էր սպասում:

Այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր նամակափոխանակությունը Հիջազի կառավարիչ Հուսեյնի և Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսար Մակ–Մահոնի միջև, որը գործում էր հանուն բրիտանական կառավարության, ժամանակի առումով այդ նույն միջոցին, ընթանում էին մեկ այլ գաղտնի բանակցություններ Անգլիայի և Ֆրանսիայի միջև՝ արաբական երկրները նրանց միջև բաժանելու մասին, որը դառնալու էր արաբական դրամայի իրական և վերջնական արարը:

Անգլիան և Ֆրանսիան, թեև դաշնակիցներ էին Անտանտի գծով, այդուհանդերձ, նրանց միջև գոյություն ունեին տարաձայնություններ տարբեր հարցերի, այդ թվում և արաբական աշխարհում ազդեցություն ունենալու և իրենց տիրապետությունը հաստատելու հարցում: Այդ տարաձայնությունները հարթելու նպատակով, 1915 թ. նոյեմբերի 23–ին գաղտնի բանակցություններ սկսվեցին Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որոնք ընթանում էին Լոնդոնում:

Բանակցություններում անգլիական կողմը ներկայացնում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի մշտական տեղակալ Արթուր Նիկոլսոնը, որին այնուհետև փոխարինեց Ֆորին Օֆիսի մերձավորարևելյան հարցերի մասնագետ Մարկ Սայքսը, իսկ ֆրանսիական կողմը՝ Բեյրութում ֆրանսիական հյուպատոս, հետագայում Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Ֆրանսուա Ժորժ–Պիկոն: Բանակցություններն ընթանում էին շատ դժվար, բայց 1916 թ. փետրվարին կողմերին հաջողվեց գալ համաձայնության հիմնական հարցերի շուրջը:

Այդ համաձայնագիրը պատմության մեջ մտել է որպես «Սայքս–Պիկոյի համաձայնագիր»՝ այն պատրաստած Մարկ Սայքսի և Ֆրանսուա Ժորժ–Պիկոյի անուններով:

Համաձայնագիրը, ինչպես նշեցինք, վերաբերում էր արաբական երկրների բաժանմանը Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որն իրականացվում էր յուրօրինակ ձևով:

Արաբական երկրները բաժանվում էին հինգ գոտիների.

Առաջին՝ կապույտ գոտի, որի մեջ մտնում էին Դամասկոս–Հոմս–Համա–Հալեբ գծից արևմուտք ընկած տարածքները, որոնք կազմում էին Արևմտյան Սիրիան և Լիբանանը, Կիլիկիան, Այնթաբը, Ուրֆան, Մարդինը, Դիարբաքրը և Հաքյարիի շրջանը: Այս գոտին անցնում էր Ֆրանսիայի անմիջական տիրապետության տակ:

Երկրորդ՝ կարմիր գոտի, որը ներառնում էր Իրաքի հարավային մասը՝ Բաղդադի և Բասրայի վիլայաթները, Հայֆայի ու Ակկայի նավահանգիստները, անցնում էր Անգլիայի անմիջական տիրապետության տակ:

Երրորդ՝ շագանակագույն գոտի, որը ներառնում էր Պաղեստինն՝ առանց Հայֆայի և Ակկայի, պետք է անցներ միջազգային կառավարման ներքո, որի ձևը պետք է հաստատվեր Ռուսաստանի և մյուս դաշնակիցների հետ համաձայնեցնելուց հետո:

Չորրորդ՝ «Ա» գոտի, որի մեջ մտնում էին Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայաթը, համարվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի:

Հինգերորդ՝ «Բ» գոտի, որը ներառնում էր Անդրհորդանանը և Կենտրոնական Իրաքը, համարվում էր Անգլիայի ազդեցության գոտի:

Նախատեսվում էր, որ «Կապույտ» և «Կարմիր» գոտիներում, որոնք անցնում էին Ֆրանսիայի և Անգլիայի տիրապետության տակ,


ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ
ԸՍՏ ՍԱՅԿՍ-ՊԻԿՈՅԻ
ՄԱԳԻՍ-ՖՐԱՆՍԻՍԿՄԱՆ
1916 Թ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍԵՎ ԾՈՎ
40°
40°
Սամսուն
Տրապիզոն
Բաքու
Երևան
Սվաս
Անգորա
Մուշ
ՎԱՆԱ ԼԻՃ
Խարբերդ
Վան
Թավրիզ
Կոնիա
Դիարբեքիր
Բիթլիս
Ամադիա
ՈՒՐՄԻԱ ԼԻՃ
Սարաշ
Ուրֆա
Բիրեջիկ
Մարդին
Սղանա
Ալեքսանդրետ
Մերսին
Սոսուլ
Հալեբ
Անտիոք
Համա
Համադան
Հոմս
Տրիպոլի
Քերմանշահ
Բեյրութ
Սիդոն
Բասրաբուբա
Բաղդադ
Տյուրոս
Դամասկոս
Ակրա
Հայֆա
Յաֆֆա
Քերբելա
Հիլլա
Դիվանիյա
Նաջաֆ
Քութնա
Դազա
Երուսաղեմ
Բասրա
Ալ Զուբայր
Աքաբա
ԱՆԱՏՈԼԻԱ
ԿԻՊՐՈՍ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԿԱՍՊԻԱ ԾՈՎ
ՊԱՐՍԻՑ ԾՈՎ
ԱՐԱԲԻԱ

նրանք իրավունք ունեին հաստատել կառավարման այնպիսի վարչակարգ, որը նրանք նպատակահարմար կգտնեին:

Իսկ «Ա» և «Բ» գոտիներում ենթադրվում էր ստեղծել արաբական անկախ պետություն կամ արաբական պետությունների դաշնություն՝ ֆեդերացիա: Եվ քանի որ այդ գոտիները համարվում էին ֆրանսիական և անգլիական ազդեցության գոտիներ, ապա Ֆրանսիան և Անգլիան, համապատասխանաբար, յուրաքանչյուրն իր գոտում, նախապատվություն էին ստանում ֆինանսական և տնտեսական հարցերում՝ փոխառությունների, կոնցեսիաների և այլն: Բացի դրանից, նրանց էր պատկանում արաբական տեղական իշխանություններին կից օտարերկրյա խորհրդականներ նշանակելու արտոնությունը:

Անգլիան և Ֆրանսիան համաձայնվեցին, որ նրանք չեն փորձի տարածքներ ձեռք բերել Արաբական թերակղզում և թույլ չեն տա որևէ երրորդ պետության նման տարածքներ ձեռք բերի կամ ծովային բազաներ կառուցի Կարմիր ծովի ափերում և կղզիներում: Սակայն, Անգլիան իրավունք էր ստանում կառուցել Հայֆա–Բաղդադ երկաթուղագիծը, իսկ Ֆրանսիան՝ Հալեբ–Բաղդադ ճանապարհը: Մինչև այդ ճանապարհների ավարտը, դադարեցվում էր Բաղդադի երկաթուղու շինարարությունը: Ալեքսանդրետը և Հայֆան հայտարարվում էին բաց՝ ազատ նավահանգիստներ: Անգլիան և Ֆրանսիան շարունակելու էին բանակցությունները Հիջազի կառավարիչ Հուսեյնի հետ՝ ապագա արաբական պետության կամ պետությունների դաշնության սահմանների վերաբերյալ:

1916 թ. մարտի 9–ին Սայքսը և Պիկոն ժամանեցին Պետրոգրադ և Անտանտի գծով իրենց դաշնակից Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին հանձնեցին իրենց համաձայնեցված տեքստը: Մարտի 17–ին Սազոնովը հուշագիր հանձնեց անգլիական և ֆրանսիական դեսպաններին, որով նա պաշտոնապես հայտնեց նրանց, որ Ռուսաստանը համաձայն է Սայքսի և Պիկոյի կողմից ներկայացված նախագծին: Միաժամանակ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը նրանց հայտնեց, որ Ռուսաստանն իր համաձայնությունը պայմանավորում է Կոնստանդնուպոլսի ու նեղուցների մասին համաձայնության, Բիթլիսի լեռնանցքները, Ուրմիայի շրջանը, Արևմտյան Հայաստանը, Հաքյարիի շրջանը և Սև ծովի հարավային ափերը Ռուսաստանին հանձնելու վերաբերյալ համաձայնագրի կատարման հետ: Սազոնովը ցարական կառավարության անունից վստահեցրեց Անգլիային և Ֆրանսիային, որ Ռուսաստանը հավակնություններ չունի Ամադիա–Զազիրա իբն

Օմար–Դիարբաքր–Սաիսաթ–Մարաշ–Ադանա գծից հարավ ընկած տարածքների նկատմամբ: Այդ պահանջները բավարարելու դեպքում, Ռուսաստանը պատրաստ էր իր համաձայնությունը տալ Սայքսի և Պիկոյի միջև ձեռք բերված պայմանավորվածությանն արաբական երկրների բաժանման վերաբերյալ:

1916 թ. ապրիլի 26–ին ֆրանսիական դեսպան Պալեոլոգը տեղյակ պահեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը, որ ռուսական պահանջները Անգլիայի և Ֆրանսիայի կողմից ընդունվում են: Ի պատասխան, Ռուսաստանը տվեց իր լրիվ համաձայնությունը անգլո–ֆրանսիական համաձայնագրին, որը ուժի մեջ մտավ 1916 թ. մայիսի 9–ին և 16–ին, Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար էդվարդ Գրեյի միջև նոտաների փոխանակությունից հետո:

Սայքս–Պիկոյի համաձայնագիրն իր բովանդակությամբ, մոտեցումներով և սկզբունքներով ուղղակի հակադիր էր Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրում ամրագրված դրույթներին: Ճիշտ է, վերջին համաձայնագրով նույնպես Անգլիան որոշակի արտոնություններ էր ձեռք բերում: Բայց նրանում շատ հստակ էին սահմանագծված արաբական ապագա անկախ պետության տարածքները, որը, անհամեմատ, ավելի ընդարձակ էր, քան այն, ինչ թողնվում էր արաբներին Սայքս–Պիկոյի համաձայնագրով:

Բացի դրանից, Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրում խոսք չկար ֆրանսիական տիրապետության մասին արաբական ընդարձակ տարածքների վրա: Ֆրանսիայի մասնակցությունը արաբական երկրների բաժանմանը և նրա գաղութային տիրապետության հաստատմանը Արևմտյան Սիրիայի, Լիբանանի և այլ տարածքների վրա, նորություն էր և մի քայլ ետ՝ համեմատած Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրի հետ:

Հավասարապես, Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրում խոսք չկար նաև արաբական մի շարք տարածքների վրա Անգլիայի գաղութային տիրապետության հաստատման մասին:

Նորություն էր նաև՝ բացասական իմաստով, արաբական երկրները անգլիական և ֆրանսիական ազդեցության գոտիների բաժանելը, Պաղեստինի հարցի լուծման առաջարկվող տարբերակը և այլն:

Եթե Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագիրը որոշ իմաստով նույնպես գործարք էր, որի համար նա պատմական գրականության մեջ արժանացել է քննադատության, հատկապես Հուսեյնի կողմից անգլիա-

ցիներին կատարված անհարկի զիջումների համար, բայց, այնուհանդերձ, նրանում սահմանված արաբական ապագա անկախ պետությունը ներառնում էր արաբական հիմնական երկրները, ապա Սայքս–Պիկոյի համաձայնագիրն իր բնույթով, ոչնչով չսքողված գաղութային պայմանագիր էր, որով եվրոպական երկու առաջատար պետություններն իրար միջև բաժանում և իրենց տիրապետությունն էին հաստատում արաբական երկրների վրա:

Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագիրը մի կարևոր տարբերություն ևս ուներ: Նա այնպիսի համաձայնագիր էր, որի մի կողմը արաբներն էին: Այսինքն, դա արաբների համար գաղտնի համաձայնագիր չէր և արաբական կողմը նրան դիմել էր գիտակցաբար՝ նրա հիմքում դնելով օսմանյան լծից արաբական երկրների ճնշող մեծամասնության ազատագրման և արաբական անկախ պետության ստեղծման գաղափարը: Մինչդեռ, Սայքս–Պիկոյի համաձայնագրում բացակայում էր արաբական կողմը, և ոչ միայն բացակայում, այլև բոլորովին տեղյակ չէին այդ մասին: Ուրեմն, դա գաղութարարական բնույթի գործարք էր երկու եվրոպական պետությունների միջև՝ առանց արաբական կողմի գիտության ու մասնակցության, և ընդդեմ արաբական կողմի:

Եթե այս բոլորին ավելացնենք նաև հարցի բարոյական կողմը, այսինքն այն պարագան, որ բանակցություններն Անգլիայի և Ֆրանսիայի միջև արաբական երկրները բաժանելու վերաբերյալ ընթանում էին այն ժամանակ, երբ արդեն ավարտին էին մոտենում բանակցությունները Հուսեյնի և Մակ–Մահոնի միջև, որով Մեծ Բրիտանիան արաբներին բոլորովին այլ բնույթի խոստումներ էր տալիս և տրամագծորեն միանգամայն այլ պարտավորություններ վերցնում իր վրա, ապա Սայքս–Պիկոյի համաձայնագիրը բարոյական առումով խայտառակություն էր:

Անգամ բրիտանական և ֆրանսիական դիվանագիտության պատմության մեջ, որը հարուստ է ուրիշ երկրների ճակատագիրն ըստ իրենց հայեցողության տնօրինելու փաստերով, Սայքս–Պիկոյի համաձայնագիրն իր ձևով, բովանդակությամբ և արաբներին խաբելու իրողությամբ, առանձնահատուկ տեղ է գրավում, որը, բնավ, չի կարելի դասել այդ երկրների դիվանագիտությանը պատիվ բերող երևույթների շարքը:

III. ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Նախքան արաբական ապստամբությունը և թուրքական տիրապետությունից արաբների ազատագրման ռազմական գործողությունները լուսաբանելը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ 1915 թ. հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին՝ արաբների ընկալման և արաբական պատմագրության լուսաբանության տեսանկյունից:

Այդ հարցը փաստական առումով և իր տրամաբանությամբ կապված է նաև արաբական իրականության և արաբների՝ որպես էթնոսի, քաղաքական ճակատագրի հետ, ուստի և նրա լուսաբանությունը կարող է լույս սփռել նաև արաբական աշխարհում տեղի ունեցած իրադարձությունների վրա:

Հարցի քննարկումն այդ հարթության վրա՝ պատճառաբանված է մի քանի հանգամանքներով:

Հայոց ցեղասպանությունն իրագործվեց Օսմանյան կայսրությունում, մի պետության շրջանակներում, որի մասերն էին կազմում արաբական երկրները և Արևմտյան Հայաստանը: Հետևաբար, այդ ոճրագործությունը չէր կարող անտարբեր թողնել արաբներին և կայսրության մյուս ժողովուրդներին:

Դա իրականացրեց երիտթուրքական կառավարությունը, որը, իրավական առումով, արևմտահայերի և արաբների «կառավարությունն էր»: Իսկ դա, բնականաբար, պետք է խորապես անհանգստացներ արաբներին, որոնք արդեն ընդհուպ մոտեցել էին հակաթուրքական ապստամբության բարձրացմանը:

Նա իրագործվեց օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների՝ հայերի, արաբների, ասորիների, հույների և այլ էթնիկական խմբերի բռնի թուրքացման և «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու երիտթուրքերի ռասայական տեսության շրջանակներում և հանդիսացավ այդ մարդատյաց «տեսությունը» պրակտիկայում կիրառելու առաջին ողբերգական փորձը: Այլ կերպ ասած, դա հավասարապես վերաբերում էր թե՛ հայերին, թե՛ արաբներին և թե՛ կայսրության մյուս բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, մանավանդ, եթե նկատի ունենաք, որ հայոց ցեղասպանությունը մեկուսի չէր իրագործվում, այլ զուգակցվում էր կայսրության մյուս ժողովուրդների, առաջին հերթին ասորիների և արաբների

բնաջնջման գործողությունների հետ, և պետք է ունենար իր հետագա շարունակությունը:

Եվ, վերջապես, երիտթուրքերի պարագլուխների կողմից նախատեսված էր, որ հայոց ցեղասպանության վերջին՝ հայերի մահն ավետող ղողանջը, հնչելու էր արաբական անապատներում ու բնակավայրերում, որի անմիջական մասնակիցները, ինչպես ենթադրում էին նրանք, պետք է լինեին մուսուլման արաբները:

1. Արաբների ասպնջականությունը: «Հայերի պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով»

XX դարի առաջին՝ հայերի 1915 թ. ցեղասպանությունը, ցնցեց արաբներին, ինչպես նաև Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդներին:

Արաբները թերևս միակ ժողովուրդն էին, որ ազգովին 1915 թ. հայոց ցեղասպանության ականատեսները եղան, երբ բռնի տեղահանված հայերի քարավաններն անցնում էին նրանց տարածքներով, նրանց անապատներով, գյուղերի, ավանների ու քաղաքների միջով: Հայոց գողգոթայի վկաները հանդիսացան Դեյր ազ–Զորի, Ռաս ուլ–Այնի, Հալեբի, Մեսքենեի, Մոսուլի, Բաքուբայի, Բաղդադի, Նահր ալ–Ումարի և Շատ ալ–Արաբի ափերին փռված շատ բնակավայրերի արաբ բնակիչներ: Հայերի համար դրանք ոչ թե սոսկ արաբական աշխարհագրական անուններ են, այլ նրանց պատմության ամենաողբերգական հանգրվանները խորհրդանշող ուղենիշներ:

Հայոց ցեղասպանությունը՝ մեթոդոլոգիական առումով, երիտթուրքերի կողմից ծրագրված էր իրականացնել երկաստիճան մակարդակով: Առաջին, հայերի հիմնական մասի սպանություն նրանց բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, երկրորդ, նրանց մնացած մասի ոչնչացում արաբական անապատներում և բնակավայրերում՝ բռնագաղթի ճանապարհին:

Հայերի զանգվածային սպանությունն իրագործվեց հայկական վեց մարզերում՝ Էրզրումի, Սվասի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի և Դիարբաքրի վիլայաթներում, ինչպես նաև Օսմանյան կայսրության հայաբնակ մնացած բոլոր այլ վայրերում:

Իսկ ցեղասպանության երկրորդ մասը երիտթուրքական ղեկավարությունը հույս ուներ իրագործել արաբական երկրներում՝ դաժան ա-

նապատային բնակլիմայական պայմանների, հայ գաղթականներին սովի և ծարավի մատնելու, նրանց գոյության համար դժոխային պայմաններ ստեղծելով միջոցով, սակայն, ամենագլխավորը, արաբների օգնությամբ: Նրանք հավատացած էին, որ հայ ընտանիքներին, ծերունիներին, կանանց, երեխաներին և հիվանդներին Սիրիա և Իրաք աքսորելով, ի դեմս արաբների նրանք կգտնեն իրենց արյունոտ գործի շարունակողների: Երիտթուրքական ղեկավարությունն իր հույսը դրել էր արաբների մուսուլման լինելու և իրենց կողմից քրիստոնյաների դեմ հայտարարված սրբազան պատերազմի՝ ջիհադի վրա, հանգամանքներ, որոնք, ըստ նրանց տրամաբանության, արաբներին ինքնաբերաբար պետք է դարձնեին քրիստոնյա հայերի, եթե ոչ ոխերիմ, ապա առնվազն անհաշտ թշնամի:

Բայց երբ հայ գաղթականների հոգնած, սոված ու տանջահար քարավանները հայտնվեցին Սիրիայի, ապա Իրաքի և արաբական մյուս երկրների տարածքներում, կատարվեց անսպասելին: Արաբ ազգաբնակչությունը, որն ատում էր թուրքերին և արդեն նախապատրաստվում էր ապստամբվել օսմանյան ատելի լծի դեմ, օգնության ձեռք մեկնեց հայ տարագիրներին, նրանց առջև բացեց իր սիրտը և տան դռները, որի շնորհիվ հարյուր հազարավոր հայ գաղթականներ փրկվեցին անխուսափելի մահվան ճիրաններից: Դա համաշխարհային պատմության մեջ ասպնջականության՝ ասպետական մարդասիրության դրսևորման ամենափայլուն դրսևորումներից մեկն էր: Հայ գաղթականները, հակառակ երիտթուրքերի սպասումների, արաբական երկրներում գտան ոչ թե թշնամական, այլ բարեկամական միջավայր: Հենց այս հանգամանքը որոշիչ դեր խաղաց արաբական երկրներում հայերի հաստատման և հետագայում հայկական համայնքների ձևավորման համար: Իսկ դա իր հերթին հիմք հանդիսացավ մերօրյա սփյուռքի առաջացման համար Արաբական Արևելքում, որն այնուհետև իր ճյուղավորումներն ունեցավ աշխարհի տարբեր կողմերում:

Հայ տարագիրների նկատմամբ արաբների՝ թե՛ բնակչության, և թե՛ պաշտոնյաների, բարեկամական դիրքորոշումը, ինչպես նաև նրանց կողմից հայոց ցեղասպանության դատապարտումը, պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ, ինչպես նշել ենք, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին արաբ և հայկական քաղաքական միտքն արդեն հանգել էր այն հետևության, որ հայերի և արաբների ազգային–քաղաքական շահերը համընկնում էին, քանի որ նրանք գտնվում էին

միևնույն՝ օսմանյան տիրապետության տակ, որի բռնակալական լծից ազատագրվելու հարցում նրանք հանդիսանում էին բնական դաշնակիցներ:

Հայ գաղթականներին օգնություն ցույց տալը ոչ միայն դյուրին չէր, այլև շատ վտանգավոր գործ էր, քանի որ երիտթուրքական իշխանությունները խստիվ արգելել էին արաբներին որևէ օգնություն ցույց տալը հայերին, սպառնալով ամենադաժան պատիժներ:

Արաբների կողմից հայ գաղթականների նկատմամբ դրսևորվող մարդասիրական վերաբերմունքի մասին, հարկավ, տեղյակ էին երիտթուրքական պարագլուխները: Դրա մասին են վկայում ներքին գործերի նախարար Թալեաթի ստորև բերվող մի շարք նախազգուշական գաղտնի հեռագրերը Հալեբի նահանգապետին և այլ տեղական կառավարիչներին:

«Հալեբի նահանգապետին, 9 սեպտեմբերի, 1915 թ.:

Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը կատարելապես չեղյալ է համարվում: Այս կապակցությամբ կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է նույնիսկ չխնայել օրորոցի մանուկներին: Այս հրամանի իրագործումն արդեն տվել է իր արդյունքը մի շարք նահանգներում: Հակառակ դրան, մեզ անհայտ պատճառներով, բացառություններ են եղել մի շարք մարդկանց նկատմամբ՝ փոխանակ աքսորավայր ուղարկելու, նրանց պահել են Հալեբում: Այս հանգամանքը կառավարությանը կանգնեցնում է ավելի դժվարին կացության առջև: Առանց ուշադրություն դարձնելու նրանց առարկություններին, այդտեղից հեռացրեք բոլորին, ով ուզում է լինի, թե՛ կանանց և թե՛ երեխաներին, նույնիսկ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվելու: Թույլ մի տվեք, որ մարդիկ պաշտպանեն նրանց:

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Ուղիղ մեկ շաբաթ անց՝ 1915 թ. սեպտեմբերի 16–ին, Թալեաթը Հալեբի նահանգապետին է ուղարկում մեկ այլ հեռագիր. «Ձեզ արդեն հաղորդվել է այն մասին, որ կուսակցության որոշմամբ, հրահանգված է ամբողջապես ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր դեմ կկանգնեն այս որոշմանը, չեն կարող մնալ կայսերական պատասխանատու պաշտոններում: Ինչքան էլ, որ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, նրանց (հայերի — Ն. Հ.) գոյությանը վերջ է տրվելու:

Ուշադրություն մի դարձրեք նրանց ո՛չ տարիքին, ո՛չ սեռին և ո՛չ էլ խղճի խայթ զգացեք: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Եվ, վերջապես, ևս մեկ սահմռկեցուցիչ գաղտնի հրահանգ Հալեբի նահանգապետին, որը թվագրված է 1915 թ. նոյեմբերի 23–ին, և ստորագրված երիտթուրքական եռապետության անդամ և ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից: «Արևելյան վելայեթներից ձեր ձեռքն անցած հայերին ոչնչացրեք գաղտնի ձևով: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

«Տեղահանության մասին օրենքի» համաձայն, որն ընդունել էր օսմանյան կառավարությունը դեռևս 1915 թ. մայիսի 14 (27)–ին, թուրքական բանակի կորպուսների, բանակների և դիվիզիաների հրամանատարներին հրամայված էր խստագույնս զենքի ուժով պատժել բոլոր նրանց, ովքեր որևէ ձևով կհակառակվեն հայերի տեղահանման մասին օրենքի կատարմանը, կառավարության հրամաններին ու միջոցառումներին: Այս օրենքի իրագործման պատասխանատվությունը դրված էր ռազմական նախարար Էնվերի վրա: Ըստ այդ օրենքի, թուրք հրամանատարությունը զգուշացրել էր տեղական իշխանություններին, որ նրանք պատասխանատվություն են կրում սույն օրենքի կատարման համար, և եթե մուսուլմանները փորձեն իրենց տներում պահել հայերին, «ապա նրանք պետք է կախաղան հանվեն իրենց տների առջև, իսկ տները՝ հրդեհվեն»: Մեկ այլ հրամանով, որն անմիջապես վերաբերում էր զինվորականներին, խստորեն նախազգուշացված էր, որ հայերին պաշտպանել փորձող մուսուլմանները, «եթե զինծառայող են, կզրկվեն զինվորական կոչումից և անհապաղ կկանգնեն զինվորական դատարանի առջև»: Քաղաքացիական ծառայողները նման արարք թույլ տալու դեպքում, նույնպես կանգնելու էին զինվորական դատարանի առջև:

Չնայած այս խիստ հրամաններին և կարգադրություններին, շատ արաբներ, այդ թվում և պաշտոնյաներ, իրենց բարեկեցությունը, անգամ կյանքը վտանգի ենթարկելով, ձգտում էին գեթ մի փոքր թեթևացնել հայ անպաշտպան և տանջահար գաղթականների վիճակը: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ արաբ պաշտոնյաները ստանալով «Իթիհադ վե թերակի» երիթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի, երիտթուրքական եռապետության՝ Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի, և օսմանյան կառավարության հրահանգները կամ նամակները՝ իրենց ենթակա տարածքներով անցնող կամ այնտեղ գտնվող հայ գաղթականներին ոչն-

չացնելու մասին, հրաժարվել են կատարել այդ անմարդկային կարգադրությունները:

Այդպես է վարվել Դեյր ազ–Զորի արաբ կառավարիչ Սաիդ Հաքիմը, որը ոչ միայն չսպանեց հայերին, այլև կառուցեց ժամանակավոր տնակներ՝ հայ գաղթականներին, առաջին հերթին որբ երեխաներին պատսպարելու համար՝ ապահովելով նրանց նաև անհրաժեշտ սնունդով: Դրա համար, այդ ազնիվ արաբը հեռացվեց իր պաշտոնից:

Դիարբաքրի վիլայաթի ալ–Բաշիրի (ալ–Բշերիքի) գավառապետ աս–Սուվեյդին, ստանալով հայերին սպանելու վերաբերյալ օսմանյան կառավարության հրամանը, հեռագիր է ուղարկում Ստամբուլ՝ երիտթուրքական ղեկավարությանը, որ «իր խիղճը թույլ չի տալիս իրեն նման գործ կատարել» և իր հրաժարականը ներկայացնում: Նրա հրաժարականն ընդունվում է, սակայն նա շուտով սպանվում է թուրք զինվորների կողմից, որպեսզի դա դաս ծառայեր մյուս անհնազանդ արաբների համար:

Նույն կերպ է վարվում նաև Դիարբաքրի Լիջայի գավառապետը, որն արժանանում է աս–Սուվեյդիի ճակատագրին՝ նրան նույնպես թուրք զինվորները սպանում են:

Հայերի նկատմամբ անթաքույց մարդասիրական դիրքորոշում են գրավում Դիարբաքրի նահանգապետ Ջալալ բեկը, և նրան հաջորդած Սամի բեկը: Ամենայն գովեստի է արժանի Սիրիայի Համա քաղաքի մուսուլման կրոնական գործիչ Աբդալլահ Մուսաին, որն իր միջոցներով չորս ամսվա ընթացքում Համայում կառուցել էր տուն–որբանոցներ հայ որբերի համար, պատսպարելով նրանց այնտեղ և ապահովելով հագուստով ու սնունդով:

Շատ ազնիվ գտնվեցին Իրաքի Մոսուլ քաղաքի արաբ երևելիները: Երբ Մոսուլի արաբ կառավարիչը Ստամբուլից, երիտթուրքերի ղեկավարությունից, հրաման ստացավ հայերին ոչնչացնելու վերաբերյալ, նա, փոխանակ այդ հրամանն ի կատար ածելու, խորհրդակցության հրավիրեց քաղաքի երևելի դեմքերին՝ քննարկելու այդ հարցը և համապատասխան որոշում ընդունելու համար: Նրանք միաձայն որոշեցին մերժել թուրքական կառավարության պահանջը, հայտարարելով, որ «իրենց խիղճը թույլ չի տալիս, որ իրենց ձեռքերը թաթախեն հայերի արյան մեջ»: Դրա շնորհիվ տասնյակ հազարավոր հայերի կյանք փրկվեց:

Ցեղասպանության տարիներին հայերի նկատմամբ արաբների ասպնջականության մի անմոռանալի դրսևորում հանդիսացավ եգիպ-

տացիների՝ բնակչության և կառավարության անգնահատելի օգնությունը Մուսա լեռան հայերին: Մուսալեռցի հայ հերոսները մի քանի ամիս շարունակ դիմադրելով թուրքական կանոնավոր բանակի հարձակումներին, կարողացան հետ մղել նրանց, և այդպես էլ անձնատուր չեղան մի քանի անգամ նրանց գերազանցող թուրքական ավազակաբարո մարդասպաններին: Ի վերջո, օգնության եկած ֆրանսիական նավերը 1915 թ. սեպտեմբերի 13–15–ը մոտ չորս հազար հայերի տեղափոխեցին Եգիպտոս: Այստեղ նրանք լավ ընդունելություն գտան եգիպտացիների կողմից: Նրանք տեղավորվեցին Պորտ Սաիդում՝ հատուկ նրանց համար պատրաստված ճամբարում: Ուշագրավ է այն փաստը, որ Եգիպտոսի սուլթան Հուսեյն Քամիլ փաշան հայ գաղթականներին պահելու ծախսերի մի զգալի մասը հոգաց ինքը:

Ցեղասպանությունից հայ վերապրողները մեծ երախտագիտությամբ են հիշում արաբ հասարակ մարդկանց, որոնք ուշադրություն չդարձնելով թուրքական ասկյարների սպառնալիքներին, կարողանում էին իրենց գյուղերով և քաղաքներով անցնող հայ գաղթականներին ուտելիք և ջուր տալ, օգնել նրանց, ինչով, որ կարող էին: Քիչ չեն եղել դեպքերը, երբ հայ մայրերը, ճարահատյալ, արաբ կանանց էին հանձնում իրենց որդիներին ու դուստրերին, նրանց վստահում իրենց զավակներին, հուսալով այդ կերպ փրկել մահվան դռանը հայտնված իրենց երեխաների կյանքը: Այդ կերպ հազարավոր հայ երեխաներ փրկվեցին մահվան ճիրաններից և թուրքական զինվորների գազանություններից:

Արաբների հայանպաստ դիրքորոշման մեջ առանձնահատուկ նշանակություն ունեցավ Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյնի անձնական մոտեցումը հայերի ցեղասպանությանը և երիտթուրքերի կատարած ոճրագործությանը:

1916–1917 թթ. Հուսեյնը՝ համայն մուսուլմանական աշխարհին հասցեագրված իր ուղերձներում, խստորեն քննադատում էր Միությունն և առաջադիմություն երիտթուրքական կուսակցությանը, նրա ղեկավարներին՝ Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, որոնք, նրա կարծիքով, սխալ քաղաքականության և վատ կազմակերպության պատճառով Օսմանյան կայսրությունը տարան կործանման: Նա հատկապես դատապարտում էր երիտթուրքերի քաղաքականությունը ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Իր տեսակետն ապացուցելու համար, Հուսեյնը մատնանշում էր երեք հանգամանք:

Առաջին, կայսրության բոլոր ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքերի փորձերը:

Երկրորդ, նրանց թշնամական դիրքորոշումը արաբների և արաբական լեզվի նկատմամբ, մատնանշելով, որ արաբերենն արգելված էր դպրոցներում, պետական հիմնարկներում, դատարաններում, չնայած այն հանգամանքին, որ արաբերենը աշխարհի բոլոր մուսուլմանների սուրբ գրքի՝ Կորանի, լեզուն է:

Հուսեյնը արաբական 21 ազգային գործիչների կախաղան հանելը Ջեմալի հրամանով, նույնպես դիտում էր որպես երիտթուրքերի հակաարաբական քաղաքականության արտահայտություն:

Երրորդ, պատերազմի տարիներին հայերի զանգվածային սպանդը կայսրության տարածքում:

Իր մեկ այլ հայտարարության մեջ, Մեքքայի շերիֆը դատապարտում էր երիտթուրքերին, գտնելով, որ նրանց քաղաքականությունը հակասում էր իսլամի սկզբունքներին, որ նրանք իրենց բազում ոճիրներով «կապերը խզել են իսլամական աշխարհի, սրբազան Կորանի և սուննայի հետ» և այդ ոճիրները «ոչ մի ընդհանուր բան չունեն իսլամի և իսլամական առաքինությունների հետ»:

Նման հետևությունների նա հանգել էր նաև հայկական հարցում երիտթուրքերի վարած քաղաքականության պատճառով: Եվ նա այդ մասին ավելի հստակ ու բացահայտ խոսում է 1916 թ. իր որդուն՝ էմիր Ֆեյսալին և էմիր Աբդ ալ–Ազիզ ալ–Ջարբային, որոնք ղեկավարում էին արաբական ապստամբ բանակի գործողությունները սիրիական ճակատում, ուղղված նամակում և պահանջում նրանցից ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայ գաղթականներին և «պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք (հայերը — Ն. Հ.) մուսուլմանների զիմմիներն (ենթահովանավորյալները — Ն. Հ.) են»: Այստեղ Հուսեյնն նկատի ունի այն հանգամանքը, որ ըստ Կորանի դրույթների և մուսուլմանական իրավունքի, քրիստոնյաները համարվում էին մուսուլմանների կողմից հովանավորվողներ:

Վերջին տասնամյակներում համաշխարհային գիտության մեջ ձևավորվել է մի նոր գիտություն՝ ցեղասպանագիտություն, որը նորովի մոտեցում է ցուցաբերում ցեղասպանության պատճառների, նախադրյալների, բնույթի, պետություն–հասարակություն փոխհարաբերությունների և այլ հարակից հարցերի լուսաբանության բնագավառում:

Հայկական և հրեական, ապա նաև նրանց հաջորդած ցեղասպանությունների վերլուծության հիման վրա, 1970–ական թվականներին ցեղասպանագիտության կողմից առաջ քաշվեց ցեղասպան պետության և ցեղասպան հասարակության վերին աստիճանի կարևոր տեսադրույթը, որը, մեր կարծիքով, խարսխվում է մի քանի, առանցքային նշանակություն ունեցող սկզբունքների վրա:

Առաջին, ցեղասպանությունը պատահական չի լինում: Նա սովորաբար ունենում է տվյալ հասարակության ընդերքում ծնավորված նկատելի և աննկատ նախադրյալներ, որոնք ներքին և արտաքին բարենպաստ պայմանների դեպքում ի հայտ են գալիս, և անխուսափելիորեն հանգեցնում ցեղասպանության փորձերի կամ ցեղասպանության:

Երկրորդ, ցեղասպանությունը հնարավոր է միայն յուրահատուկ կառուցվածք ունեցող հասարակություններում և այնպիսի պետություններում, որոնք տիպաբանորեն պատկանում են բռնատիրական վարչակարգ ունեցող երկրների շարքին: Այդ վարչակարգը կարող է լինել զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ռազմաֆեոդալական, դիկտատորական և կամ ամբողջատիրական վարչակարգ:

Երրորդ, սակայն այդ հանգամանքն ինքնին վերցրած դեռևս բավարար չէ ցեղասպանության համար: Կարևոր հանգամանք են տեսական պոստուլատները, որոնց վրա խարսխվում է ցեղասպանություն իրագործող պետություն–հասարակությունը: Դրանց մեջ առաջնային է տիրապետող ազգի գերազանցության գաղափարը տվյալ պետության շրջանակներում բնակվող մնացած բոլոր ազգությունների նկատմամբ, մի կողմից, և «օտարածին» մարմիններից ազատվելու և էթնիկական առումով «մաքուր» և միատարր երկիր ստեղծելու հիմնադրույթը, մյուս կողմից: էթնիկապես «մաքուր» պետություն ստեղծելու այլ ուղի, ինչպես վկայում է պատմական փորձը, քան բռնությունն է, գոյություն չունի: Իսկ բռնությունից մինչև ցեղասպանություն՝ մի քայլ է միայն:

Չորրորդ, ցեղասպան պետության համար անհրաժեշտ է նաև մեկ այլ նախապայման՝ տվյալ հասարակության դիրքորոշումը: Ցեղասպանության իրագործման համար տվյալ հասարակությունը ոչ միայն չպետք է ընդվզի էթնիկական «մաքրման» դեմ, որը կարող է իրականացվել ֆիզիկական ոչնչացման կամ բռնագաղթի ճանապարհով, այլև ընդունի և պաշտպանի այդ քաղաքականությունը: Այդ պաշտպանությունը կարող է դրսևորվել երեք մակարդակներով՝ ակտիվ պաշտպանություն, պասիվ պաշտպանություն և անտարբերություն: Բոլոր երեք դիրքորո-

շումներն էլ նպաստավոր են ցեղասպանության իրագործման և այն իրագործող ուժերի համար:

Հինգերորդ, խիստ կարևոր է, որ ցեղասպանություն իրագործող պետության ներսում գոյություն չունենան ցեղասպանությունն արգելակող կամ խոչընդոտող քաղաքական, կուսակցական, հասարակական, կրոնական և ռազմական ուժեր:

Վեցերորդ, ցեղասպանության համար անհրաժեշտ նախապայման է պետության և հասարակության համընդհանուր շահագրգռվածություն և շահերի համընկնում: Ուստի ցեղասպանության հարցում պետությունը չի կարելի անջատել հասարակությունից, առավել ևս, միմյանց հակադրել և այդ կերպ ցեղասպանության պատասխանատվության ամբողջ բեռը գցել պետության, պետական կառավարման մեքենայի վրա: Ցեղասպանության հարցում պետությունը և հասարակությունը կազմում են մեկ ամբողջություն:

Եթե այս բոլոր նախադրյալներն առկա են, ապա տվյալ պետությունը դասվում է ցեղասպան պետության, իսկ հասարակությունը՝ ցեղասպան հասարակության շարքը:

Երբ մենք ցեղասպան պետության այս հասկացողությունը կիրառում ենք հայոց ցեղասպանությունն իրագործած Օսմանյան կայսրության նկատմամբ, ապա ակնհայտ է, որ XIX դարի և XX դարի առաջին քսանամյակի Օսմանյան կայսրությունն առանց վերապահության պետք է համարվի ցեղասպան պետություն, իսկ թուրքական հասարակությունը՝ ցեղասպան հասարակություն:

Այդ առումով, Օսմանյան կայսրությունը համարվում է դասական ցեղասպան պետություն, որի կողքը, որպես դասական ցեղասպան պետություն, կարելի է դնել հրեական հոլոկոստն իրականացրած նացիստական Գերմանիային:

Ցեղասպան պետությունը ողբերգություն է պատճառում ոչ միայն ենթակա ազգերին, այլև պատժում սեփական ժողովրդին՝ նրան, կամա թե ակամա, ոճրագործության մեղսակից դարձնում: (Այս մասին ավելի մանրամասն տես. Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Ե., 2002)

Օսմանյան ցեղասպան պետության շրջանակներում իրագործված1915 թ. հայոց ցեղասպանության հարցում մենք տեսնում ենք թուրքական պետության և թուրքական հասարակության միասնականու-

թյուն, որի շրջանակներում թուրքական պետությունը և թուրք ժողովուրդն ունեն մեղքի իրենց բաժինը:

Ահա այս ֆոնի վրա, Օսմանյան կայսրությունում առկա ցեղասպանածին պայմաններում, ավելի է ընդգծվում արաբների ասպնջականությունը, նրանց հումանիստական վերաբերմունքը ցեղասպանության ենթարկված հայերի նկատմամբ, որը, բնականաբար, առաջ է բերել նրանց խորը երախտագիտությունը և շնորհակալական ամենաանկեղծ և ամենաջերմ զգացմունքները արաբ ժողովրդի հանդեպ: Արաբների այդ ազնիվ դիրքորոշումն արժանացել է հայերի, ինչպես արաբական երկրներում հայտնված գաղթականների, այնպես էլ համայն հայության ամենաբարձր գնահատականին, որը մեկ անգամ չէ, որ նրանց կողմից արտահայտվել է ի լուր աշխարհի:

1919 թ. մայիսի 9–ին Դամասկոսի քաղաքային սրահում տեղի ունեցավ օսմանյան տիրապետությունից պատմաաշխարհագրական Սիրիայի ազատագրումն իրականացրած էմիր Ֆեյսալի հանդիպումը Սիրիայի, Պաղեստինի, Հորդանանի և Լիբանանի ղեկավար գործիչների և հասարակայնության ամենալայն շրջանակների ներկայացուցիչների հետ: Նրանց առջև Հուսեյնի որդին դրեց իր քաղաքականությանը վստահություն տալու հարցը:

Ի պատասխան այդ հարցման, առանձին հայտարարություններով հանդես եկան այդ երկրների և նրանց տարբեր շրջանների ներկայացուցիչները, որոնք իրենց վստահությունը հայտնեցին Ֆեյսալին և նրա քաղաքականությանը:

Դամասկոսի սրահում կայացած այդ պատմական նիստում ներկա էր նաև Դամասկոսում, Հալեբում և Սիրիայի այլ վայրերում հաստատված հայ գաղթականների ներկայացուցիչը: Նրան ևս իրավունք է տրվում ելույթ ունենալ, որն իր խոսքում պաշտպանում է արաբներին ազգային անկախության համար մղած նրանց պայքարում, և, առիթից օգտվելով, ամբողջ հայության անունից շնորհակալություն հայտնում արաբներին նրանց բարի վերաբերմունքի համար: Հայ պատվիրակը, ներկաների որոտընդոստ ծափահարությունների տակ հայտարարում է. «Հայերի պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով»:

Հայերի դիրքորոշումն այդ հարցում չի փոխվել մինչև օրս:

Նա համոզմունքի ուժ ունի:

2. Հայոց ցեղասպանության լուսաբանությունն արաբական պատմագրության մեջ: Արմենոցիդ

Հայոց ցեղասպանության նկատմամբ արաբների դիրքորոշման բաղկացուցիչ մասն է կազմում հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը արաբական պատմագրության մեջ:

Արաբ հեղինակները՝ սիրիացի, լիբանանցի, եգիպտացի, իրաքցի, հորդանանցի և պաղեստինցի պատմաբանները, տնտեսագետները, քաղաքագետները, լրագրողները և այլ մասնագետներ, հատկապես վերջին 30–40 տարիներին, մեծ ուշադրություն են դարձնում այդ հարցի լուսաբանության վրա: Բեյրութում, Կահիրեում, Դամասկոսում, Հալեբում և Բաղդադում լույս են տեսել բազմաթիվ մենագրական ուսումնասիրություններ, հոդվածներ և հուշագրություններ, որոնցում հայկական հարցի, այդ թվում և ցեղասպանության հետազոտությունը, ներհյուսվում է արաբական պատմությանը, նրա առանցքային հիմնախնդիրների լուսաբանությանը՝ հատկապես այն ժամանակաշրջանի, որն ընդգրկում է XIX երկրորդ կեսի և XX դարի առաջին երկտասնյակի պատմությունը:

Եվ դա բնավ էլ պատահական չէ: Դա արտացոլումն է արաբ պատմաբանների կողմից սեփական պատմության ուսումնասիրության նկատմամբ դրսևորվող նոր իրողությունների և մոտեցումների:

Արաբ պատմաբանները, արաբական երկրների կողմից իրենց քաղաքական անկախությունը վերջնականապես նվաճելուց հետո, որն իրականացվեց XX դարի 40–70–ական թվականներին, սկսեցին ավելի խորամուխ լինել իրենց սեփական պատմության ուսումնասիրության մեջ: Նրանց համար կենտրոնական հիմնախնդիրներ են դարձել այնպիսի հարցերի լուսաբանությունը, ինչպես արաբական ազգային ինքնագիտակցության արթնացումը, արաբական ազգային–քաղաքական զարթոնքը, արաբական ինքնության՝ այդենթիթիի պահպանումը, թուրքական զուլումը և նրա անդրադարձը արաբների ճակատագրի վրա, սուլթանների և երիտթուրքերի քաղաքականությունն արաբների նկատմամբ, արաբների ազգային–ազատագրական շարժումը և արաբական ապստամբությունը, և հարակից այլ հարցեր: Այդ հարցերի ուսումնասիրության ուղիով, նրանք ձգտում են գտնել իրենց և բոլոր արաբներին հուզող այնպիսի հարցերի պատասխանը, ինչպես՝ արաբների, երբեմնի մեծ քաղաքակրթություն ստեղծած և զարգացած ժողովրդի, քաղաքական, սոցիալ–տնտեսական և մշակութային հետմնացության պատճառ-

ները, որն աստիճանաբար դրսևորվեց XVI դարի սկզբներից, երբ արաբական երկրներն ընկան օսմանյան տիրապետության տակ, և որը սպառնալից իրողության վերածվեց արաբների գոյության համար XVII–XX դարերում:

Մյուս կողմից, արաբ հետազոտողներին հետաքրքրում է նաև այն հարցը, թե ինչու դարեր շարունակ միևնույն՝ իսլամական կրոնի սահմաններում գոյակցած, շատ հաճախ նաև համագործակցած երկու ժողովուրդների՝ արաբների և թուրքերի ճանապարհները բաժանվեցին և նրանք հայտնվեցին բարիկադների հակադիր կողմերում:

Արաբ պատմաբանները համոզված են, որ իրենց և արաբական հասարակայնությանը հուզող այդ հարցերի պատասխանը գտնելու տեսանկյունից, ավելի հարմար պատմական ժամանակաշրջանի ուսումնասիրություն, քան XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին քսանամյակի պատմությունն է, չկա:

Արաբ հետազոտողները, բարեբախտաբար, այդ հարցի ուսումնասիրության ժամանակ ընտրեցին ճիշտ մեթոդոլոգիական մոտեցում: Նրանք հասկացան, որ եթե վերոնշյալ հարցերն ուսումնասիրվեն մեկուսի, սահմանափակվելով զուտ արաբական իրողություններով, ապա չեն հասնի սպասված արդյունքների և չեն ստանա իրենց հուզող հարցերի ճշգրիտ պատասխանները: Ուստի՝ նրանք արաբական հիմնախնդիրների ուսումնասիրությունը տարան համաօսմանյան հենքի վրա՝ կապակցելով կայսրության մյուս՝ մուսուլման և ոչ մուսուլման, ժողովուրդների հիմնախնդիրների հետ: Այդ, եթե կարելի է ասել, համալիր մոտեցումը, հնարավորություն տվեց նրանց ավելի խորն ընբռնել օսմանյան տերության բարբարոսական բնույթը, սուլթանների դաժան քաղաքականությունը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, կայսրությունում տիրող խավարամոլությունը, որը ոչ մի պայմաններ չէր ստեղծում ազգերի նորմալ գոյության համար, կաշկանդում էր նրանց մտավոր և կուլտուրական զարգացումը, երբ ջարդերի ու կոտորածների քաղաքականությունը բարձրացվել էր պետական քաղաքականության մակարդակի: Նրանք հասկացան, որ երիտթուրքերի թուրքացման քաղաքականությունը համաօսմանյան բնույթ էր կրում և ուղղված չէր միայն արաբների դեմ:

Իսկ արաբ հեղինակների կողմից արևմտահայերի պատմությանն անդրադառնալը, հայկական հարցի և ցեղասպանությանն առանձնահատուկ ուշադրությունը դարձնելը, պայմանավորված է, նախ, այն

կարևոր դերով, որ հայերը, ինչպես ցույց է տրվել սույն հատորի էջերում, երևելի դեր են խաղացել արաբական նահդայի՝ ազգային զարթոնքի, մեջ: Նրանք զգալի դերակատարում են ունեցել արաբական երկրների, առաջին հերթին՝ Եգիպտոսի և Լիբանանի, պետական և քաղաքական կյանքում, գիտության և մշակույթի ասպարեզներում:

Դրան պետք է ավելացնել նաև հայերի ցեղասպանության իրագործումը երիտթուրքերի կողմից: Այստեղ հարցն այն է, որ արաբները գիտեին, որ երիտթուրքերի ծրագրերի մեջ մտնում էր ոչ միայն հայերի, այլև արաբների ֆիզիկական բնաջնջումը: Ուստի, արաբական պատմագրության մեջ հայոց ցեղասպանության լուսաբանությունը պայմանավորված է ոչ միայն գիտական հետաքրքրությամբ, այլև արաբներին առարկայորեն ցույց տալու համար, թե ինչ էր սպասում նրանց, եթե նրանք չապստամբվեին թուրքական տիրապետության դեմ և չկանխեին երիտթուրքերի համանման ծրագրերի իրականացումը արաբների նկատմամբ:

Հայկական հարցին և ցեղասպանությանը նվիրված արաբ հեղինակների աշխատությունները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են այն աշխատությունները, որոնք հատուկ նվիրված են 1915 թ. ցեղասպանության հարցի լուսաբանությանը: Դրանց շարքում առաջին հերթին պետք է նշել Ֆայեզ ալ–Ղոսեյնի «Ջարդերը Հայաստանի մեջ» աշխատությունը, որի արժեքը կայանում է նախ և առաջ նրանում, որ դա արաբ ականատեսի վկայություններն են, որը լույս է տեսել դեռևս 1916 թ.: Դա առաջին գրքերից մեկն էր, որն անմիջապես թարգմանվեց եվրոպական լեզուներով ու հայերեն, և համաշխարհային հանրությանը տեղյակ պահեց երիտթուրքերի ոճրագործության՝ հայոց ցեղասպանության մասին: Այս շարքին են պատկանում նաև Մուսա Պրենսի «Մի անպատիժ ցեղասպանություն՝ Արմենոցիդ» ֆրանսերեն լեզվով հրատարակված ուսումնասիրությունը, Իլյաս Զանազիրիի «Ժողովրդի ողբերգությունը, Նաիմ ալ–Յաֆիի «Հայկական ջարդերը և արաբական հասարակական կարծիքը», Սալեհ Զահր ադ–Դինի «Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հարցում (XIX դարի վերջին քառորդ–XX դարի առաջին քառորդ), նույնի «Հայերը և արաբները թուրանիզմի և սիոնիզմի միջև» արաբերեն լեզվով լույս տեսած աշխատությունները:

Երկրորդ խումբը կազմում են արաբ հեղինակների այն աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը, որոնցում, սակայն, ամբողջական հատվածներ, բաժիններ կամ գլուխներ են հատկացված հայոց ցեղասպանությանը: Նման ուսումնասիրություններից հիշատակության են արժանի Ֆուադ Հասան Հաֆիզի «Հայ ժողովուրդի պատմությունը սկզբնական շրջանից մինչև մեր օրերը», Մրվան ալ–Մուդավարի «Հայերը պատմության ընթացքում», Օսման աթ–Թուրքի «Էջեր հայ ազգի պատմությունից», Սամիր Արբաշի «Հայաստան. Հող և ժողովուրդ», Սալեհ Զահիր ադ–Դինի» Հայեր. ժողովուրդ և հիմնահարց» աշխատությունները:

Երրորդ խումբը կազմում են արաբ հեղինակների այն աշխատությունները, որոնք նվիրված են մերձավորարևելյան ընդհանուր խնդիրներին, միջազգային հարաբերությունների տարբեր հարցերին և արաբական երկրների, մասնավորապես, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի նոր և նորագույն պատմության տարբեր հիմնահարցերի ուսումնասիրությանը: Նրանցում որպես կանոն լուսաբանվում են նաև հայ ժողովրդի պատմության, հայկական հարցի և 1915 թ. հայոց ողբերգության առանձին հարցեր: Այդ բնույթի աշխատություններից են Ամին Սահդի «Արաբների ապստամբությունները XX դարում», Զիհադ Սալեհի «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև», Մասուդ Դահիրի «Լիբանանի սոցիալական պատմությունը», Զեյն Ն. Զեյնի «Արաբական ազգայնականության առաջացումը», Էմիլ Թումայի «Ազգային–ազատագրական շարժումը և արաբական միասնականության խնդիրը», Ասադ Դաղիրի «Արաբական ապստամբությունը» և այլ ուսումնասիրություններ:

Այս ուսումնասիրություններում առաջնակարգ տեղ է գրավում հայոց ցեղասպանության պատճառների բացահայտումը: Սովորաբար արաբ հեղինակները նշում են չորս պատճառներ:

Առաջին, դա Օսմանյան կայսրությունում տիրող ընդհանուր մթնոլորտն էր, որը բարենպաստ չէր ոչ թուրք ազգերի և ժողովուրդների գոյության համար: Մուհամմադ Շակիկ Ղարբալը և Ֆուադ Հասան Հաֆիզ մատնանշում են, որ Օսմանյան կայսրության բուն գոյությունը խարսխված էր պատերազմների և բռնությունների, ճնշումների ու հալածանքների վրա: Նման իրադրության մեջ այս կամ այն ազգի կամ էթնոսի ոչնչացումը կարող էր միանգամայն օրինաչափ լինել՝ ըստ թուրքական պատկերացումների: Ֆուադ Հաֆիզը այս պարագան համարում

է բանալի՝ հասկանալու համար օսմանյան կառավարողների ազգային քաղաքականության էությունն՝ ընդհանրապես, և հայոց ցեղասպանության դրդապատճառները՝ մասնավորապես:

Երկրորդ, արաբ հեղինակները գտնում են, որ XIX դարում և XX դարի սկզբներում Օսմանյան կայսրության տարածքային կորուստների՝ Հունաստանի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Սերբիայի, Թունիսի և Ռումինիայի անջատվելու հետևանքով, նոր և կայսրության գոյության համար խիստ վտանգավոր իրադրություն ստեղծվեց: Դա մեծ տագնապ առաջացրեց օսմանյան կառավարողների մոտ, որոնք մտավախ էին, թե կայսրությունից անջատվելու հերթը հայերինն է:

Վերոնշյալ երկրները Օսմանյան կայսրության ծարամասերն էին, որոնց անջատվելը դեռևս հարցականի տակ չէր դնում կայսրության գոյությունը: Այլ բան էր Արևմտյան Հայաստանը, որը Սամիր Արբաշը, Ֆուադ Հաֆիզը և այլ արաբ պատմաբաններ, համարում են Օսմանյան կայսրության սիրտը: Նրանց կարծիքով Արևմտյան Հայաստանի անջատվելը, աղետաբեր կարող է լիներ բուն թուրքական պետության համար: Ֆուադ Հաֆիզը նշում է, որ երիտթուրքերը գտնում էին, որ չէր կարելի թույլ տալ հայերի անջատվելը, քանի որ «զրկվել օսմանյան պետության մի մասից հօգուտ հայերի, նշանակում էր նրա սրտի կորուստ և մայրամուտ»: Ու թեև հայերը, ինչպես նշում են արաբ պատմաբանները, օսմանյան պետությունից անջատվելու հարց չէին դնում, այդուհանդերձ, երիտթուրքերն այլևս չէին հավատում նման հայտարարություններին՝ Բալկաններում և արաբական երկրներում ունեցած տարածքային կորուստներից հետո:

Երրորդ պատճառը, ըստ արաբ պատմաբանների, օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների թուրքացման քաղաքականությունն էր, որին ենթակա էին նաև հայերը: Երիտթուրքերը, ինչպես նշվել է, ձգտում էին ստեղծել էթնիկական առումով «մաքուր» և կրոնական առումով միատարր թուրքական պետություն: Դրան հասնելու երկու ուղի կար՝ կամ կայսրության ոչ թուրք ժողովուրդների կամովին ենթարկել երիտթուրքերի ձուլման և թուրքացման քաղաքականությանը, կամ էլ դրանից հրաժարվող ժողովրդի ֆիզիկական ոչնչացումը: Այս հարցը բավականին հանգամանորեն է քննարկված Զիհաղ Սալեհի աշխատության մեջ, որի մի գլուխը վերնագրված է «Հայկական հարցը»: Նա նշում է, որ երիտթուրքերի ազգային քաղաքականության բնորոշ գիծը «մոլեռանդ նացիոնալիզմն էր՝ հիմնված ենթարկելու և բռնի թուրքացման

սկզբունքների վրա»: Իսկ Նաիմ ալ–Յաֆին գրում է, որ 1908 թ. հեղաշրջումից հետո «երիտթուրքերը հակվեցին Օսմանյան կայսրության հպատակների, ինչպես արաբների, հայերի, քրդերի և այլ ժողովուրդների, թուրքացմանը»: Այդ կապակցությամբ նա նկատում է նաև, որ «Հայերը, ինչպես նաև արաբները, վճռականորեն ընդդիմանում էին թուրքացմանը, որպեսզի պահպանեն իրենց լեզուն, մշակույթը, սովորույթները և ավանդույթները»:

Խիստ արժեքավոր է արաբ հեղինակների նկատառումն առ այն, որ թուրքացման, էթնիկական առումով թուրքական «մաքուր» պետություն ստեղծելու երիտթուրքերի ձգտումը խարսխված էր թուրք էթնոսի գերազանցության գաղափարի վրա: «Թուրքական ազգը,— գրում է ալ–Յաֆին,— համարվում էր բարձր մյուս ազգերից»: Արաբ ուսումնասիրողները վճռականորեն դեմ են այդ տեսակետին և այն մերժում են հենվելով հայերի, հույների և արաբների մշակութային նվաճումների վրա: Սամիր Արբաշի կարծիքով, «հայ ժողովուրդն այն ժողովուրդն է, որը հռչակվել է խելքով, հանճարով ու խիզախությամբ»: Ֆուադ Հաֆիզն ընդգծում է այն վիթխարի ներդրումը, որ հայ ժողովուրդը կատարել է համաշխարհային քաղաքակրթության մեջ: Իսկ Սալեհ Զահր ադ–Դինն իր «Հայերը. ժողովուրդ և հիմնահարց» գրքում հատուկ բաժին է հատկացրել հայերի ստեղծած մշակույթին և քաղաքակրթությանը, բարձր գնահատելով այդ մշակույթի ինքնատիպությունը և միջազգային նշանակությունը:

Հակադրվելով երիտթուրքերի բռնի թուրքացման քաղաքականությանը, հայերը ապավինում էին նաև իրենց մշակութային արժեքներին: Եվ արաբ հեղինակների վկայությամբ, երիտթուրքերը, որոնք խոսում էին թուրք ազգի «գերազանցության «և «բարձր» լինելու մասին, ի վիճակի չեղան խաղաղ ճանապարհով «մարսել» հայերի ինքնատիպ քաղաքակրթությունը:

Այդ ձախողումից հետո, երիտթուրքերը, արաբ պատմաբանների կարծիքով, կանգնեցին հայերին ֆիզիկապես ոչնչացնելու քաղաքականության վրա: Այդ տեսակետը շատ հստակ է ձևակերպված Սալեհ Զահր ադ–Դինի կողմից: Նա նշում է, որ իթիհադականների մոտ ծագեց «հայերին իրենց հարազատ վայրերից տեղահանելու և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում նրանց ոչնչացնելու ծրագիրը»: Նույն տեսակետին են նաև Իլյաս Զանազիրին և արաբ այլ հեղինակներ:

Չորրորդ, արաբ պատմաբանները համոզված են, որ հայերի ցեղասպանության կազմակերպման և իրագործման պատճառների մեջ իր բաժինն ուներ պանթուրքիզմի քաղաքականությունը: Եթե թուրքիզմը նպատակաուղղված էր հայերի և կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացմանը կայսրության ներսում, ապա պանթուրքիզմը միտված էր թուրքալեզու բոլոր ժողովուրդներին թուրքական պետության իշխանության ներքո միավորելուն: Մրվան ալ–Մուդավարը նշում է, որ երիտթուրքերը ձգտում էին ստեղծել մի «նոր կայսրություն՝ բաղկացած թուրք ժողովուրդներից, որոնք բնակվում էին Կովկասյան լեռներից մինչև Թուրքեստանի սահմանները: Պատահական չէ, որ Զիհադ Սալեհը պանթուրքիզմը կամ թուրանիզմը բնութագրում է որպես ռասայական, շովինիստական, հետադիմական, ֆաշիստական շարժում»: Արաբ հեղինակները գտնում են, որ պանթուրքիզմը լուրջ սպառնալիք էր կայսրության ժողովուրդների, հատկապես արաբների և հայերի համար, քանի որ նրա իրականացման դեպքում, ինչպես հաստատում է Մրվան ալ–Մուդավարը, «նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուրդների, ինչպիսիք են արաբները և հայերը»: Հայերը կանգնած էին պանթուրքիզմի իրականացման ճանապարհին որպես խոչընդոտ և ենթակա էին ոչնչացման: Արաբ հեղինակներն իրենց աշխատություններում նշում են երիտթուրքերի ղեկավարներից մեկի՝ Ալի Իհսան փաշայի հետևյալ արտահայտությունը՝ «Եթե չլինեին հայերը, մենք վաղուց նվաճած կլինեինք Կովկասը»: Եվ քանի որ ձախողվեց հայերի թուրքացման քաղաքականությունը, որը բնական ճանապարհով կվերացներ հայկական պատնեշը, ապա մնում էր միայն մի ելք՝ հայերի ֆիզիկական ոչնչացումը:

Այսպիսով, թուրքացման և «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու կամ թուրքիզմի խնդիրը միաձուլվեց պանթուրքիզմի խնդրի հետ: Այս տեսակետը շատ հստակ է ձևակերպել Ֆուադ Հաֆիզը՝ «Այս երկու խնդիրները պահանջում էին օսմանյան հայերի վերջնական վերացում, քանի որ նրանք ներկայացնում էին քրիստոնեական և էթնիկական կարևոր, այսինքն ոչ մուսուլմանական և ոչ թուրքական փոքրամասնություն, որն ըստ էության անհնազանդ և ընդդիմադիր էր, որը խանգարում էր թուրքերի տիրապետության ծավալմանը և չէր ուզում ծառայել օսմանյան պետությանը: Նրանք խոչընդոտ էին, որն անհրաժեշտէր վերացնել»:

Այսպիսով, արաբական պատմագիտության մեջ տիրապետող է այն սկզբունքային տեսակետը, որ երիտթուրքերին անհրաժեշտ էր հայերին ոչնչացնել Օսմանյան կայսրությունը պահպանելու, էթնիկական առումով «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու և իրենց պանթուրքական–թուրանական ծավալապաշտական ծրագրերն իրականացնելու համար:

Կարծում ենք, որ սա միանգամայն հիմնավորված տեսակետ է, որը ճշգրտորեն է արտացոլում պատմական այն ողբերգական եղելությունը, որը կոչվում է հայոց ցեղասպանություն:

Արաբական պատմագիտության մեջ իր համարժեք արտացոլումն է գտել նաև մի այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին հայոց ցեղասպանությունը նախապատրաստելու հարցն է: Արաբ հեղինակները, հենվելով իրենց ձեռքի տակ եղած արժեքավոր և հավաստի աղբյուրների և նրանց անաչառ վերլուծության վրա, գալիս են այն հետևության, որ 1915 թ. հայոց ցեղասպանությունը ծրագրված բնույթ ուներ: Հայոց ցեղասպանությունը նախօրոք ծրագրվել և ամենայն դաժանությամբ իրագործվել է թուրքական պետության կողմից: Այդ կապակցությամբ նշենք մի քանի արաբ հեղինակների կողմից արտահայտած տեսակետները: «Հայերի ցեղասպանությունը,— գրում է Նաիմ ալ–Յաֆին,— իրագործվեց մտածված կերպով և հրահանգներով՝ համաձայն ընդունված ծրագրերի»: Նման ծրագրի գոյության հանգամանքը նշում է նաև Իլյաս Զանանիրին, որն ընդգծում է, որ «Երբ սկսվեց պատերազմը, թուրքական կառավարությունը հրաժարվեց հայերի վիճակի բարելավման ծրագրից և գտավ, որ պատերազմը հարմար առիթ է ընձեռում իրագործել հայ ժողովրդի ոչնչացման ծրագիրը»: Իսկ արաբական մի այնպիսի հեղինակավոր և լավատեղյակ հեղինակ, ինչպիսին Ամին Սաիդն է, հայտնում է. «Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը գլխավորեց հայերին ոչնչացնելու արշավը: Այդ արշավի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում, որ արտաքսեն հայերին Արևելյան Անատոլիայից և աքսորեն նրանց հետիոտն՝ զինվորների հսկողությամբ, Արաբական անապատ, որտեղ նրանց սպասում էր անխուսափելի մահը»:

Կարելի է շարունակել այս ցանկը: Սակայն բերված օրինակներն էլ բավարար են հաստատելու, որ հայերի ոչնչացման, հայերի ցեղասպանության ծրագրավորված լինելը հայեցակարգային տիրապետող տեսակետ է ժամանակակից արաբական պատմագրության մեջ:

Արաբ հեղինակները հատակորեն տարբերակում են ցեղասպանությունը ջարդերից և կոտորածներից: Նրանք գտնում են, որ այն, ինչ տեղի ունեցավ արևմտահայերի հետ 1915 թ., դա տեղական բնույթի բախումներ կամ սովորական ջարդեր չէին, այլ ցեղասպանություն: Նրանց համար ոչնչացման ծրագրի առկայությունը և նրա զանգվածային իրագործումը պետական մակարդակով, կարևոր հանգամանք է կոտորածը ցեղասպանությունից տարբերակելու համար: Ուստի, արաբ պատմաբանները միակարծիք են այն հարցում, որ 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործվեց հայերի ցեղասպանություն: Այդ կապակցությամբ լիբանանցի պատմաբան և քաղաքագետ Սալեհ Զահր ադ–Դինը գրում է. «Այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ 1915 թ. և հետագա տարիներին, ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն»: Այդ նույն տեսակետն է արտահայտված նաև Ֆուադ Հաֆիզի, Մրվան ալ–Մուդավարի, Սամիր Արբաշի, Զիհադ Սալեհի, Խեյրի Համայի, Զամիլ Խաբրի, Մասուդ Դահիրի և այլոց աշխատություններում: Այս վերջինը, անդրադառնալով Լիբանանում և արաբական այլ երկրներում հայ գաղթականների հայտնվելուն, ընդգծում է, որ դա «արդյունք էր երիտթուրքերի կողմից հայերի նկատմամբ կիրառված ցեղասպանության քաղաքականության»: Ֆուադ Հաֆիզը և Սամիր Արբաշը, 1915 թ. մեծ ողբերգությունը բնութագրելով որպես ցեղասպանություն, այն համարում են «XX դարի սև էջ» և «հանցագործություն համայն մարդկության դեմ»: Իսկ Իլյաս Զանանիրին դա դիտում է «խայտառակություն ազատ աշխարհի համար»:

Միանգամայն ինքնատիպ են Մուսա Պրենսի մոտեցումը հայոց ցեղասպանությանը և դրան տրված նրա գնահատականները: Համակողմանիորեն ուսումնասիրելով հայոց ցեղասպանությունը, նրա պատճառները, բնույթը, նրա իրագործման ձևերն ու ծավալները, նա գենոցիդի անալոգիայով շրջանառության մեջ դրեց արմենոցիդ՝ հայասպանություն, եզրը և տվեց դրա սահմանումը: Նա գտնում է, որ «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»: Մուսա Պրենսի այս դրույթը կարևոր ներդրում է հայոց ցեղասպանության ուսումնասիրության մեջ:

Այս առումով, կարևոր է նաև նրա մեկ այլ հետևությունը: Մուսա Պրենսը գտնում է, որ «Արմենոցիդը ելակետային փուլ էր նացիստների կողմից իրագործված ցեղասպանության ճանապարհին», քանի որ «թուրքերի կատարածը քառորդ դար անց կրկնեց Հիտլերը»:

Մուսա Պրենսը, ինչպես նաև Ֆուադ Հաֆիզը և մի շարք այլ արաբ ուսումնասիրողներ, իրենց աշխատություններում վկայակոչում են Հիտ-

լերի խոսքերը, արտասանված 1939 թ. օգոստոսի 22–ին Զալցբուրգում, գերմանական բարձրագույն հրամանատարության խորհրդակցության ժամանակ՝ Լեհաստան ներխուժելու նախօրյակին: Դիմելով ներկաներին և կոչ անելով նրանց անխնա ոչնչացնել լեհ տղամարդկանց, կանանց և երեխաներին, Հիտլերը բացականչում է. «Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածները»:

1915 թ. երիտթուրքերի իրականացրած հայոց ցեղասպանության և հետագայում ֆաշիստական Գերմանիայի իրագործած հրեաների հոլոկոստի միջև կապ է տեսնում նաև Ֆուադ Հաֆիզը: «Երբ Ադոլֆ Հիտլերը,— գրում է նա,— կատարեց իր ցեղասպանությունը, նա հիշեցրեց հայկական ցեղասպանության մասին որպես օրինակ և նմուշ»: Սա շատ էական դիտողություն է ցեղասպանության մեջ ուսուցիչ–աշակերտ հարաբերակցության առումով, որը վկայում է այն մասին, որ երիտթուրքերը տալով ցեղասպանության նմուշը, փաստորեն գերմանական ֆաշիստների համար ծառայել են որպես ուսուցիչներ:

Ուշագրավ է Մուսա Պրենսի նաև մեկ այլ դիտողությունը, կապված այն հարցի հետ, որ համաշխարհային հասարակայնության կողմից հայոց ցեղասպանությունը չդատապարտվեց, իսկ նրա կազմակերպիչները չպատժվեցին: Եվ նա դառնությամբ նշում է, որ «արմենոցիդը չունեցավ իր Նյուրենբերգը»:

Հայոց ցեղասպանությանը արաբական պատմագրության մեջ անդրադառնալու պատճառների մեջ, անհրաժեշտ է նշել մի կարևոր հանգամանք ևս:

Արաբների մոտ տիրապետող է հանդիսանում այն տեսակետը, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերը հայերի ցեղասպանության իրագործման հետ միասին ծրագրում էին իրագործել նաև արաբների ցեղասպանությունը, որը նրանց հաջողվեց մասամբ: Հետևաբար, արաբ պատմագրության մեջ հայոց ցեղասպանությանն անդրադառնալը նպատակ ուներ նաև ինչ–որ չափով ուսումնասիրել արաբական մինչև վերջ չկայացած ցեղասպանությունը՝ որպես օսմանյան ղեկավարության հակաարաբական ազգային քաղաքականության տրամաբանական ավարտ: Եվ քանի որ այս հարցն իր բնույթով շատ սուր հարց է, որն անգամ կարող է ոմանց մոտ տարակուսանք առաջացնել, ուստի և պետք է ընթերցողի ներողամտությունը հայցենք՝ բազմաթիվ մեջբերումների համար:

Արաբ հեղինակները գտնում են, որ երիտթուրքերի բռնի թուրքացման և պանթուրքիզմի քաղաքականությունը հավասարապես վտանգ էր ներկայացնում նաև արաբների համար՝ քանի որ թուրքական «մաքուր» պետության ստեղծումը և թուրքալեզու բոլոր ժողովուրդներին Ստամբուլի գերակայության տակ միավորելը ու թուրանական ընդարձակ կայսրության հիմնումը, անհնար էր արաբների էթնիկական ինքնության պահպանման դեպքում, որոնք կայսրության ամենամեծաթիվ ժողովուրդն էին և թվաքանակով գերազանցում էին նաև թուրքերին: Այստեղից էլ բխում էր արաբներին ոչնչացնելու երիտթուրքական պահանջը, որը հիանալի է ձևակերպել Մրվան ալ–Մուդավարը, շեշտելով, որ երիտթուրքերը ձգտում էին ստեղծել «նոր կայսրություն՝ կազմված թուրք ժողովուրդներից», որի դեպքում «նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուրդների, ինչպիսիք են արաբներն ու հայերը»: Այս երկու ժողովուրդները, այսինքն արաբները՝ հայերի նման, կանգնած էին թուրքիզմի՝ բռնի թուրքացման, և պանթուրքիզմի ճանապարհին, և ենթակա էին վերացման»: «Հայերը և արաբները,— գրում է Սալեհ Զահիր ադ–Դինը,— այն երկու ժողովուրդներն էին, որոնք ամենից շատ էին ենթակա ոչնչացման ռասայական քաղաքականությանը», ավելացնելով, որ ինչպես հայերը, «արաբները վճռականորեն ընդդիմանում էին թուրքացմանը, որպեսզի պահպանեն իրենց լեզուն, մշակույթը, սովորույթները և ավանդույթները»:

Արաբ հայտնի փիլիսոփա, բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ Հուսեյն Մուրուվան, քննարկելով այս հարցը, գտնում է, որ արաբների և հայերի ոչնչացման համար ելակետային էր թուրանիզմը: Նա թուրանիզմը համարում է ռասիզմ, որը գործնականում դրսևորվեց ամբողջ ժողովուրդների ոչնչացման ձևով:

Այս հարցը հանգամանորեն է վերլուծում արաբական մի այնպիսի լավատեղյակ հեղինակ, ինչպես Ամին Սաիդը: Նա մատնանշում է, որ գերմանա–թուրքական բլոկի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում ձեռք բերած՝ ռազմական հաջողությունները «պտտեցրին ստամբուլյան կառավարության ղեկավարների գլուխները, որոնք պանթուրքիզմի մեծ ջատագովներ էին: Նրանք վճռեցին, որ հասել է երկու ուժեղ ազգային շարժումները ոչնչացնելու հարմար պահը՝ արաբական ազգայնականների շարժումը Սիրիայում, Իրաքում և Հիջազում, և հայկական շարժումը Արևելյան Անատոլիայում»: Այնուհետև նա ավելացնում է, որ հայերի ոչնչացման արշավը ղեկավարեց Թալեաթը, իսկ

արաբներինը՝ երիտթուրքական հանցավոր եռապետության մյուս անդամ Ջեմալը: «Սիրիայում,— շարունակում է Ամին Սաիդը,— այդ գործին (արաբների ոչնչացմանը–Ն. Հ) ձեռնամուխ եղավ ռազմածովային նախարար և Թալեաթ բեյի գործընկեր Ահմեդ Ջեմալ փաշան, որը Սիրիայում կոչվում էր «արյունարբու»: Բեյրութում, Դամասկոսում և Ղազայում կախաղաններ պատրաստվեցին: Ահմեդ Ջեմալ փաշան կախում էր, աքսորում և բանտեր նստեցնում»:

Այս հարցը լուսաբանելիս, Ամին Սաիդը ուշադրություն է դարձրել մի հանգամանքի վրա ևս: «Ուշադրություն է գրավում այն փաստը,— գրում ե նա,— որ թուրքական կառավարությունը, որը կատարել էր այս բոլոր ոճրագործությունները և փորձում էր ամբողջապես ոչնչացնել երկու՝ հայկական և արաբական, ազգությունները, գլխավորում էր էմիր Սաիդ Հալիմը՝ Մուհամմադ Ալիի թոռը»: Ամին Սաիդի ակնարկն այստեղ միանգամայն հասկանալի է: Ինչպես ցույց է տրվել հատորի նախորդ էջերում, Մուհամմադ Ալին իր ամբողջ կյանքը նվիրեց Եգիպտոսի անկախությանը, արաբական երկրները օսմանյան լծից ազատագրելու գործին՝ մեծ տեղ հատկացնելով նաև հայերին իր ծրագրերի իրագործման համար: Իսկ նրա անարժան թոռը ծառայում էր օսմանյան շահերին և իր ներդրումն ունեցավ երիտթուրքերի թուրքացման և արաբներին ու հայերին ոչնչացնելու նրանց ոճրագործ քաղաքականության իրագործման մեջ:

Արաբներին ոչնչացնելու թուրքական կառավարության գործնական քայլերի մասին են գրում նաև Ջեյն Ջեյնը, Մասուդ Դաիրը, Ֆուադ Հաֆիզը և արաբ այլ հեղինակներ: Այսպես, օրինակ, Ջեյն Ջեյնը նշում է, որ 1915 թ. Ջեմալ փաշան «արաբական շատ ղեկավարների դատապարտեց մահվան: Շատ ընտանիքներ աքսորվեցին Անատոլիայի ներքին շրջանները և շատերի ունեցվածքը բռնագրավվեց»:

Այս բոլորը, փաստորեն, հաստատում են նաև թուրքական որոշ փաստաթղթեր: Այդ տեսակետից, կարծում ենք, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հալեբի Աքսորի հարցերով գլխավոր կոմիտեի նախագահ Աբդուլլահադ Նուրի բեյի և նրա գլխավոր քարտուղար Նաիմ բեյի միջև կայացած զրույցը, որի գրառումը հրապարակել է Նաիմ–բեյն իր հուշերում: «Մի անգամ,— գրում է Նաիմ բեյը,— ես ասացի Աբդուլլահադ Նուրի բեյին. «Բեյ–էֆենդի, ե՛կ հայերի աքսորն անենք նվազ խիստ, այլապես մահը կսպառնա ամբողջ Միջագետքին: Այս ընդարձակ տարածքներում ոչ ոք, բացի սատանաներից, չի մնա: Ռասուլ Այնի կայմա-

կամը տագնապալի լուրեր է հաղորդում»: Նուրի բեյը ծիծաղեց: «Ձավակս,— ասաց նա,— այդ կերպ մենք միանգամից կազատվենք երկու վտանգավոր տարրերից: Հայերի հետ միասին, ախր, մեռնում են արաբները: Դրանով ճանապարհ է մաքրվում թուրքիզմի համար»:

Արաբ պատմագրության մեջ, արաբների ու հայերի ոչնչացման հետ միասին, լուսաբանվում են նաև ասորիների ցեղասպանության հարցերը: Կարծում ենք, որ արաբ հեղինակների նման համալիր մոտեցումը երիտթուրքերի ազգային քաղաքականությանը, նրանց կողմից իրականացված ցեղասպանության և ջարդերի քաղաքականությանը, գալիս է ավելի համոզիչ դարձնելու այն տեսակետը, որ երիտթուրքերի գլխավոր նպատակներից մեկը եղել է բոլոր ոչ թուրքերի բռնի թուրքացումը՝ անհրաժեշտության դեպքում նաև նրանց ոչնչացման ուղիով:

Հայոց ցեղասպանության հարցերը քննարկելիս, արաբ հեղինակներն անդրադարձել են նաև հայ վրիժառուների կողմից այդ ոճրագործության հեղինակներին պատժելու խնդրին: Ինչե՞ս են նրանք գնահատում հայ վրիժառուների գործողությունները: Նրանք մեկ առ մեկ նշում են, թե երբ և ում կողմից սպանվեցին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սաիդ Հալիմը, Շաքիր Բեհաէդդինը և երիտթուրքական մյուս ոճրագործները: Արաբ հեղինակները, որոնք անդրադարձել են այդ խնդրին, բոլոր հայ վրիժառուների գործողությունները համարում են ոչ թե ահաբեկչական, այլ միանգամայն արդարացված գործողություններ: Լիբանանյան հանրագիտարանում, Ֆուադ Հաֆիզի, Սամիր Արբաշի և այլ արաբ պատմաբանների աշխատություններում, նրանք կոչվում են ֆիդայիներ, այսինքն սուրբ նպատակի նվիրված գործիչներ, հերոսներ և արդարության մարտիկներ: Այդպիսի գնահատականի են նրանք արժանացրել Սողոմոն Թեհլերյանին, Արշավիր Շիրակյանին, Պետրոս Տեր–Պողոսյանին, Ստեփան Ծաղիկյանին, որոնք պատժեցին երիտթուրքական պարագլուխներին: Ամին Սաիդը բնական է համարում, որ «հայ երիտասարդության ներկայացուցիչները պատերազմից հետո սպանեցին էմիր Սաիդ Հալիմին, Ահմեդ Ջեմալ փաշային և Թալեաթ փաշային»: Ֆուադ Հաֆիզն արաբ ընթերցողին տեղյակ է պահում, որ «առաջինը սպանվեց Թալեաթ փաշան՝ Բեռլինում, 1921 թ. մարտի 21–ին, Սողոմոն Թեհլերյանի կողմից»: Հետո, շարունակում է նա, 1921 թ. դեկտեմբերի 6–ին, Հռոմում, Արշավիր Շիրակյանի ձեռքով սպանվեց էմիր Մուհամմադ Սաիդ Հալիմ փաշան, Օսմանյան կայսրության 1913–1917 թթ. վարչա-

պետը, 1922 թ. ապրիլի 7–ին Բեռլինում սպանվեց Շաքիր Բեհաէդդինը, իսկ նույն թվականի հուլիսի 21–ին Թբիլիսիում՝ Ջեմալ փաշան:

Սակայն այդ հարցը քննարկելիս և հայ վրիժառուներին ֆիդայի՝ ազգային հերոսներ հռչակելիս, արաբ պատմաբաններն այդ խնդրին մոտենում են ոչ միայն հայ ժողովրդի, այլև արաբ ժողովրդի հետ կատարված ողբերգության տեսանկյունից, ողբերգություն, որի մասին խոսվեց նախորդ էջերում: Ինչպես նշել ենք, երիտթուրքերը պատերազմի ժամանակ փորձեցին իրագործել նաև արաբների ցեղասպանությունը: Սակայն արաբներին չհաջողվեց պատժել Ջեմալին, Թալեաթին և մյուս երիտթուրքական ղեկավարներին, որոնց հրամաններով 1915–1916 թթ. կախաղան հանվեցին արաբական ազգային շարժման ականավոր ղեկավարները, արաբական հազարավոր ընտանիքներ աքսորվեցին, նրանց գույքն ու ունեցվածքը բռնագրավվեց, շատ–շատերը բանտերը նետվեցին, ենթարկվեցին կտտանքների, ծաղրուծանակի: Ահա թե ինչու, արաբ պատմաբանները գտնում են, որ հայ վրիժառուները, սպանելով Թալեաթին, Ջեմալին և երիտթուրքական մյուս ղեկավարներին, դրանով իսկ վրեժ են լուծել նաև արաբների փոխարեն:

Այդ կապակցությամբ ահա թե ինչ կարծիք է հայտնում Ֆուադ Հաֆիզը: Նա գտնում է, որ հայ վրիժառուների կողմից երիտթուրքերի ղեկավարներին սպանելը «արդարացի պատիժ էր ոչ միայն 1915 թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի ցեղասպանության համար, այլև արաբական ապստամբության ղեկավարների սպանության համար, որոնք մահապատժի ենթարկվեցին 1916 թ. Շամում (Սիրիայում — Ն. Հ.) և հարևան վիլայաթներում տեղակայված օսմանյան բանակի հրամանատար Ջեմալ փաշայի կախաղանների վրա»: Ընդունելով, որ հայերի արարքը միանգամայն պատճառաբանված ու արդարացված էր, Սամի Արբաշը նույնպես գտնում է, որ «դա արդարացի էր ոչ միայն հայոց ցեղասպանության, այլև արաբական ապստամբության առաջնորդներին սպանելու կապակցությամբ, որն իրագործեցին Ջեմալ փաշան և Սիրիայում գտնվող չորրորդ բանակի հրամանատարությունը»: Իսկ Ասադ Դաղիրը հայ վրիժառուներին համարում է հերոսներ: Նրա «Արաբների ապստամբությունը» արաբերեն լույս տեսած գրքում զետեղված են Պետրոս Տեր–Պողոսյանի և Ստեփան Ծաղիկյանի համատեղ լուսանկարը՝ հետևյալ գրությամբ. «Հայ հերոսներ Պետրոս Տեր–Պողոսյան և Ստեփան Ծաղիկյան, որոնք սպանել են Ջեմալ

փաշային Թիֆլիսում 1922 թ., վրեժ լուծելով մեկուկես միլիոն հայկական զոհերի և արաբական զոհերի համար»:

Արաբական պատմագիտության կողմից հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի: Նա ընդլայնում է հայոց ցեղասպանության պատմության և խնդիրների ուսումնասիրության դաշտը: Փաստորեն մինչև վերջերս ուսումնասիրողները հիմնականում ուշադրությունը կենտրոնացնում էին եվրոպական աղբյուրների վրա և հաշվի առնում գլխավորապես արևմտյան պատմագրության մեջ արտահայտված տեսակետները:

Արաբական աղբյուրների և տեսակետների ներհոսքը հայոց ցեղասպանության հիմնահարցերի ուսումնասիրության ոլորտը, լրացուցիչ և նոր երանգ է հաղորդում հայոց Մեծ Եղեռնի առավել հիմնավոր հետազոտմանը:

IV. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ ՈՒ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

1916 թ. կեսերին ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունն այլևս ի վիճակի չէ պահպանել իր դիրքերը Արաբական Արևելքում: Վերջնականապես ձախողվեցին Եգիպտոսը վերագրավելու նրա փորձերը: Անգլիացիները, ուշքի գալով Իրաքում 1915 թ. կրած ռազմական անհաջողություններից, 1916 թ. անցան վճռական հարձակման, որը թուրքերն այդպես էլ չկարողացան կանգնեցնել: 1916 թ. հունիսին Արաբիայում՝ Հիջազում, սկսվեց արաբական ապստամբությունը, որը, բրիտանական ռազմական ուժերի հետ համագործակցելով, կոտրեց թուրքական բանակների ողնաշարը և դրեց Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի ու Պաղեստինի ազատագրման սկիզբը: Պատերազմն այստեղ թնակոխեց իր ավարտական փուլը:

Օսմանյան կայսրությունն անկասելիորեն գահավիժում էր անդունդը:

1. Պատերազմական գործողություններն Իրաքյան ռազմաճակատում: Գեներալ Մոդի դեկլարացիան: Բրիտանական կառավարման գաղութային վարչակարգի հաստատումն Իրաքում

Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելուց հետո, պատերազմական գործողությունները նրա և Անտանտի միջև ընթանում էին երկու ճակատներում՝ Կովկասյան ճակատում և արաբական տարածքներում, այդ թվում և Միջագետքում:

Կովկասյան ճակատում պատերազմը գնում էր Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի միջև, իսկ Միջագետքում՝ Իրաքում, թուրքական զորքերի և հիմնականում բրիտանական ուժերի միջև:

1914 թ. նոյեմբերի 6–ին, բրիտանական 6–րդ դիվիզիայի բրիգադը՝ գեներալ Վ. Դելամենի հրամանատարությամբ, գրավեց Ֆաո նավահանգիստը, որ գտնվում է Շատ ալ–Արաբի գետաբերանում: Զարգացնելով ռազմական գործողությունները, անգլիական զորքերը նոյեմբերի 22–ին գրավեցին Բասրան՝ Բաղդադից հետո Իրաքի երկրորդ նշանավոր կենտրոնը: Բասրայի գրավումը կարևոր նշանակություն ունեցավ հարավային, իսկ հետագայում նաև կենտրոնական Միջագետքի գրավման համար: Շարունակելով հարձակումը և առաջ շարժվելով, բրիտանական զորքերը 1914 թ. դեկտեմբերին մտան Կուրնա, իսկ 1915 թ. հուլիսին՝ Ամարա: Փաստորեն ամբողջ հարավային Իրաքն ազատագրվեց թուրքական տիրապետությունից:

Անգլիացիները շտապում էին օր առաջ գրավել Բաղդադը, ապա նաև հյուսիսային Միջագետքը, և դրանով ավարտել Իրաքի գրավումը, որը նշանակում էր նրա ազատագրումը թուրքական տիրապետությունից: Անգլիական էքսպեդիցիոն ուժերի գլխավոր քաղաքական սպա Պերսի Կոքսը, բրիտանական կառավարությանը դեռևս 1914 թ. նոյեմբերի 23–ին ուղարկած հեռագրում, նշում էր, որ շատ կարևոր է Բաղդադի գրավումը: «Մենք չենք կարող թույլ տալ,— գրում էր նա,— որ Թուրքիան տիրապետի Բաղդադին և դժվարություններ ստեղծի մեզ համար Բասրայում, մենք նույնպես չենք կարող թույլ տալ, որպեսզի որևէ պետություն այն գրավի»: Բրիտանական կառավարությունը համաձայնվելով Պերսի Կոքսի փաստարկների հետ, թույլատրեց հարձակում սկսել Բաղդադի վրա: Հարձակումը Բաղդադի ուղղությամբ սկսվեց 1915 թ. ամռանը: Թուրքերն ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս և այդ պատ-

ճառով բրիտանական հարձակումը Տիգրիս և Եփրատ գետերի երկայնքով, դանդաղ էր զարգանում: 1915 թ. նոյեմբերին անգլիական կորպուսը, գեներալ Թաունդսհենդի հրամանատարությամբ, մոտեցավ Տիգբոնին, Սասանյան Պարսկաստանի երբեմնի փառահեղ մայրաքաղաքին, որը այդ ժամանակ գտնվում էր Իրաքի տարածքում, և գրոհեց թուրքական բանակի դիրքերի վրա: Բայց նա հաջողության չհասավ: Կրելով նշանակալի կորուստներ, անգլիական բանակը նահանջեց: Բաղդադը գրավելու անգլիական ծրագիրն անհաջողության մատնվեց:

Թուրքական զորքերին, որոնք հետապնդում էին նահանջող անգլիացիներին, հաջողվեց 1915 թ. դեկտեմբերին Կուտ ալ–Ամարայի մոտ շրջապատման օղակի մեջ վերցնել գեներալ Թաունսդհենդի բանակը: Սկսվեց երկարատև պաշարումը, որը տևեց մինչև 1916 թ. ապրիլ ամիսը:

Անգլիական զորքերը շրջապատումից դուրս գալու համար կարող էին օգտվել Կովկասյան ճակատում ռուսական զորքերի հաղթանակներից: Գեներալ Բարաթովի կորպուսը 1916 թ. գարնանը, արևմտյան Իրանից, պատմության մեջ առաջին անգամ, մոտեցավ իրաքյան սահմաններին և հասավ մինչև Խանեկին, որը գտնվում է Բաղդադից մոտ 150 կմ հեռավորության վրա: Սակայն անգլիական հրամանատարությունը չցանկացավ կապեր հաստատել ռուսական հրամանատարության հետ, ուստի և ռուսական զորքերը դադարեցրին ռազմական գործողություններն այդ տարածաշրջանում:

Առաջին հայացքից անգլիացիների այդ տարօրինակ պահվածքի պատճառները պետք է փնտրել այն հակասությունների մեջ, որ գոյություն ունեին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև: Անգլիան մահու չափ վախենում էր, որ Ռուսաստանը, նրա դարավոր ախոյանը, կարող է հաստատվել Միջագետքում: Ինչպես նշում է ֆրանսիական պատմաբան Պ. Ռոսին, «նրանց (անգլիացիների — Ն. Հ.) վախը հասկանալի է: Ոչ միայն ձախողվել էր Միջագետքն արագ գրավելու ծրագիրը, այլև հնարավորություն էր ստեղծվել Պարսից ծոց տանող ուղիների վրա ռուսների հաստատման համար»:

Մերժելով ռուսական օգնությունը, անգլիացիները փորձում էին ամեն գնով փրկել շրջապատման մեջ գտնվող կորպուսը: Այդ նպատակով եգիպտոսում տեղակայված անգլիական բանակի քարտեզագրության բաժնի աշխատակից, հայտնի հետախույզ, այդ ժամանակ ընդամենը լեյտենանտ Թ. Լոուրենսը, անգլիական կառավարության գաղտնի

հանձնարարությամբ, հանդիպեց անգլիական զորքերին շրջապատած թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշայի հետ: Թ. Լոուրենսը, ինչպես նշում է Պ. Ռոսին, իր հետ տարել էր մեծ գումար՝ փաշային կաշառելու և անգլիական կորպուսը շրջապատումից ազատելու համար: Սակայն այդ ծրագիրը չհաջողվեց իրագործել՝ թուրքական հրամանատարությունը չհամարձակվեց դիմել նման քայլի:

1916 թ. ապրիլի 29–ին Թաունսդհենդի կորպուսն անձնատուր եղավ թուրքերին: Նրանց գերի հանձնվեցին անգլիական 5 գեներալ, 476 սպա և 13 հազար զինվոր՝ Թաունսդհենդի գլխավորությամբ: Անգլիական զորքերի կապիտուլյացիան ծանր հարված էր բրիտանացիների հեղինակությանը: Բրիտանական վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը դառնությամբ հաստատում էր. «Մեզ ջախջախեցին Միջագետքում, որտեղ անգլիական բանակն անձնատուր եղավ թուրքերին»:

Մեծ Բրիտանիան արաբական ճակատում իր ուժերը վերադասավորելիս՝ թուրքերին վերջնական հարված հասցնելու համար, որոշեց ավելի մեծ ու վճռական դեր հատկացնել արաբական ուժերին և նրանց ներգրավել պատերազմական գործողությունների մեջ: Այդ հանգամանքը ստիպեց նրանց արագացնել արաբական ապստամբությունը, որը, ինչպես ցույց կտրվի հաջորդ ենթաբաժնում, իր նշանակալի դերը խաղաց թուրքերի պարտության և դաշնակիցների ռազմական դրության բարելավման գործում:

1916 թ. վերսկսվեցին պատերազմական գործողություններն արաբական ճակատում Թուրքիայի դեմ: Թուրքիան մեկը մյուսի հետևից ծանր պարտություններ էր կրում Սինայի ռազմաճակատում, Պաղեստինում և Միջագետքում:

Պատրաստվելով նոր և վճռական ռազմական գործողությունների Իրաքում, անգլիական հրամանատարությունը ծեր և հիվանդ գեներալ Պերսի Լեյկի փոխարեն Իրաքում անգլիական զորքերի հրամանատար նշանակեց գեներալ Մոդին, որն, իրոք, կարողացավ արմատական փոփոխություններ մտցնել ռազմական իրադրության մեջ:

1916 թ. դեկտեմբերի 10–ին անգլիական զորքերն Իրաքում անցան հարձակման, որը, թուրքական բանակները, չնայած նրանց ուժեղ դիմադրությանը, այդպես էլ չկարողացան կասեցնել: Նրանք մինչև 1917 թ. փետրվարի 4–ը թուրքերից մաքրեցին Տիգրիսի ամբողջ աջափնյա տարածքը, մինչև Հայյ քաղաքը, փետրվարի 24–ին ազատագրեցին Սանայիա քաղաքը և հենց նույն օրն էլ Տիգրիսի աջ ափից անցում կատա-

ռեցին ծախ ափը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող գործողություն էր: Ռազմական այս գործողությունների հետևանքով, գեներալ Մոդի զորքերի առջև բացվեցին Բաղդադը գրավելու լայն հնարավորություններ: 1917 թ. մարտի 11–ին գեներալ Մոդի զորքերը մտան Բաղդադ: Բաղդադի գրավումը կարևոր ռազմական և քաղաքական նշանակություն ունեցավ Անգլիայի համար: Ռազմական այդ հաղթանակը մեծապես բարձրացրեց անգլիացիների հեղինակությունն արաբների աչքում, որը խիստ ընկել էր Կուտ ալ–Ամարայի տակ անգլիական զորքերի պարտության և գերի ընկնելու հետևանքով:

Այսպիսով, իրագործվեց Իրաքում անգլիական ռազմական և քաղաքական ծրագրերի առաջին մասը, որի նպատակը հարավային և կենտրոնական Իրաքի գրավումն էր:

Բաղդադը գրավելուց հետո, գեներալ Մոդը 1917 թ. մարտի 19–ին հանդես եկավ հատուկ կոչով, կամ ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, դեկլարացիայով՝ ուղղված բաղդադցիներին և բոլոր իրաքցիներին: Մոդը հայտարարեց, որ անգլիական զորքերը մտել են Դար աս–Սալամ, այսինքն՝ Բաղդադ, ոչ թե որպես նվաճողներ և թշնամիներ, այլ ազատարարներ: «Անգլիական կառավարությունը,— ընդգծում էր գեներալ Մոդը,— ձեզ չի պարտադրելու օտարերկրյա կարգեր: Նրա միակ ցանկությունն է՝ իրականացնել այն, ինչին որ ձգտում են ձեր փիլիսոփաները և գրողները... Անգլիան և նրա դաշնակիցները կապահովեն արաբական ազգի նոր վերածնունդը, նրանք հարություն կտան նրա վեհությանը և փառքին»:

Ինչպիսի գեղեցիկ բառեր:

Սակայն անգլիացիները բնավ մտադիր չէին սահմանափակվել միայն Իրաքի հարավային և կենտրոնական մասերի գրավումով: Նրանք ձգտում էին գրավել Իրաքի նաև արևմտյան և հյուսիսային հատվածները և դրանով ամբողջացնել Իրաքի նվաճումը: Շարունակելով հարձակողական գործողությունները, անգլիական զորքերը 1917 թ. նոյեմբերին թուրքերից մաքրեցին Բաղդադից հյուսիս ընկած տարածքները՝ մինչև Թիկրիտ: Բայց, մինչև Թուրքիայի հետ զինադադար ստորագրելը, նրանք չկարողացան լրիվ գրավել Իրաքը: Նրանց տիրապետությունից դեռևս դուրս էր մնում հյուսիսային Իրաքի գլխավոր կենտրոնը՝ Մոսուլը: Այդ կարևոր քաղաքը նրանք մտան 1918 թ. նոյեմբերի 8–ին:

Դրանով ավարտվեց Իրաքի ազատագրումը թուրքական լծից:

Իրաքի, ինչպես նաև արաբական մյուս տարածքների գրավումը անգլիական զորքերի կողմից, նշանակում էր ոչ միայն Օսմանյան կայսրության պարտություն, այլև Մերձավոր Արևելքում գերմանական իմպերիալիզմի ծրագրերի ձախողում: Դ. Լլոյդ Ջորջի կարծիքով, պատերազմի ժամանակ ասիական ռազմաճակատներում Անգլիայի կողմից ունեցած մարդկային և նյութական կորուստները նրան հնարավորություն տվեցին «Գերմանիայի ձեռքից խլել կայսրությունը (Օսմանյան — Ն. Հ.)»:

Անգլիական վարչապետի կողմից սա շատ կարևոր խոստովանություն էր:

Իրաքը գրավելուց հետո, Անգլիան այդ երկրում հաստատեց մի վարչակարգ, որն իր բնույթով գաղութային էր: 1918 թ. հոկտեմբերի 30–ին Օսմանյան կայսրության անձնատվությունից հետո, այդ վարչակարգի շատ մարմիններ, մեթոդներ և սկզբունքներ անցան հաջորդ փուլը, երբ Իրաքը հայտնվեց բրիտանական ենթամանդատային տիրապետության ներքո:

Սակայն, որպեսզի հասկանալի լինի, թե որքանով էր գեներալ Մոդի դեկլարացիան ճիշտ արտահայտում Մեծ Բրիտանիայի իսկական մտադրությունները՝ Իրաքին ազատություն բերելու և նրան օտարերկրյա, այսինքն՝ բրիտանական կարգեր չպարտադրելու հարցում, անհրաժեշտ է կանգ առնել մի շարք կարևոր բրիտանական պաշտոնական փաստաթղթերի վրա:

Նախ, անհրաժեշտ է հիշել Սայքս–Պիկոյի համաձայնագրի մասին, որով Իրաքն անցնում էր Բրիտանիայի տիրապետության ներքո՝ ուղղակի ձևով կամ որպես ազդեցության գոտի: Գուցե այդ համաձայնագրի ստորագրումից հետո, մինչև Մոդի դեկլարացիան, Բաղդադի, ապա նաև ամբողջ Իրաքի գրավումը, Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ տեղի էին ունեցել ինչ–որ փոփոխություններ և նա հրաժարվե՞լ էր իր նախկին իմպերիալիստական քաղաքականությունից: Ոչ մի նման բան տեղի չէր ունեցել: Մեծ Բրիտանիան, ինչպես նաև Ֆրանսիան, պատերազմը դեռ չավարտված, արաբական երկրներում իրենց քաղաքականության հիմքում դրել էին այդ Սայքս–Պիկոյի համաձայնագրի հիմնադրույթները:

1917 թ. մարտի 29–ին, Մոդի դեկլարացիայից ուղիղ 10 օր անց, անգլիական կառավարությունը Բաղդադ, գեներալ Մոդին ուղարկում է հատուկ հրահանգ, որտեղ ասված էր. «Բասրան պետք է մշտապես մնա

բրիտանական կառավարման ներքո... Բաղդադում կարելի է ստեղծել արաբական պետություն տեղական կառավարությունով, որն ամեն բանում, բացի իր անվանունից, պետք է գտնվի բրիտանական պրոտեկտորատի տակ: Նա, հասկանալի է, չպետք է հարաբերություններ ունենա արտասահմանյան երկրների հետ»: Այսպիսով, բրիտանական կառավարությունը Բաղդադի անգլիական ռազմական իշխանություններին ուղարկում էր հրահանգներ, որոնք իրենց բնույթով տրամագծորեն հակառակ էին Մոդի դեկլարացիայում հռչակված դրույթներին:

Նման բույթի գաղտնի հեռագրեր և հրահանգներ անգլիական կառավարության կողմից տրվում էին նաև հետագայում: Այսպես, օրինակ, 1918 թ. նոյեմբերին, երբ գեներալ Մարշալը Իրաքում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնում փոխարինեց մահացած գեներալ Մոդին, նա իր կառավարությունից ստացավ հետևյալ խիստ հրամանը. «Ձեր ուժերի առաջնահերթ խնդիրն է բրիտանական ազդեցության հաստատումը և պահպանումը Բաղդադի վիլայաթում»:

Իրաքում բրիտանական ռազմական և քաղաքացիական ղեկավարների դիրքորոշումը վերոնշյալ հարցերի նկատմամբ լիովին համարժեք էր Լոնդոնից նրանց ներկայացվող պահանջներին: Դեռ ավելին, երբեմն նրանք հանդես էին գալիս ավելի արմատական դիրքերից:

Իրաքում Մեծ Բրիտանիայի գլխավոր քաղաքացիական կոմիսար Առնոլդ Վիլսոնը Իրաքի ապագա կառուցվածքի և կարգավիճակի վերաբերյալ իր կառավարությանը ներկայացրած ծրագրում հանդես էր գալիս Միջագետքում անկախ պետություն ստեղծելու գաղափարի դեմ, նշելով, որ դա քաոս կառաջացներ: Նրա կարծիքով Իրաքը պետք է լիներ պրոտեկտորատ, որը կարող էր «ժամանակի ընթացքում դառնալ արաբական պետություն՝ բրիտանական գահի դոմինիոնի կարգավիճակով»: Անգլիական կառավարությանն ուղարկած հեռագրում նա մի անգամ ևս ընդգծում էր անկախ Իրաքի ստեղծման աննպատակահարմարությունը: «Ես հավատացած եմ,— գրում էր նա,— որ այս օրերին անհնար է թուրքական կայսրության փլատակների վրա ստեղծել նոր սուվերեն մուսուլմանական պետություն»:

Ա. Վիլսոնը միաժամանակ մեծ ճիգ էր գործադրում ապացուցելու, որ Իրաքը դեռևս չէր հասունացել որպես ինքնուրույն պետություն գոյություն ունենալու համար: «Իրաքը,— գրում էր նա,— դարերի ընթացքում գտնվել է թուրքերի ուղղակի կառավարման ներքո, և նա չպետք է ձգտի ինքնուրույնության, քանի որ շտապողականությունն այդ գործում կվ-

նասի Իրաքին և կարող է հանգեցնել ոչ հաճելի հետևանքների»: Սա գաղութարարներին բնորոշ տրամաբանություն էր, որը ժողովուրդների բաժանում է «բարձրերի», որոնք ինքնուրույն պետություն ունենալու իրավունք ունեն, և «ցածրակարգ» ժողովուրդների, որոնք չեն հասունացել այդպիսի կարգավիճակի համար: Նման «տեսական» դրույթների օգնությամբ անգլիական գաղութարարները ցանկանում էին արդարացնել իրենց քաղաքականությունը և իրենց տիրապետության հաստատումն Իրաքում: Այդ տեսակետից ավելի բացահայտ է արտահայտվում արաբական երկրներում բրիտանական քաղաքականության իրագործողներից մեկը՝ Գ. Բելը, որ նշում էր, որ «եթե մենք կորցնենք Միջագետքը, ապա մենք անխուսափելիորեն կկորցնենք Պարսկաստանը և Հնդկաստանը»: Ուրեմն, խոսքը գնում էր ոչ միայն Արաբական Արևելքի, այլև Պարսից ծոցում և Հնդկական օվկիանոսում անգլիական գաղութային տիրույթների պահպանման և ընդարձակման մասին:

Այսպիսով, անգլիական կառավարության անունից գեներալ Մոդի հրապարակած հռչակագրի սկզբունքների համեմատությունը հետագայում բրիտանական կառավարության գաղտնի հրահանգներում պարունակվող սկզբունքների հետ, համոզում են, որ անգլիական կառավարությունն անկեղծ չէր Իրաքի անկախության հարցում, որ նա երկակի մոտեցում ուներ արաբների համար կենսական նշանակություն ունեցող այդ հիմնախնդրի նկատմամբ: Նա մի կողմից հրապարակավ հայտարարում էր, որ մտել է Իրաք նրան ազատություն բերելու առաքելությամբ, իսկ մյուս կողմից գաղտնի հրահանգներ էր տալիս Իրաքում իր բարձրագույն ներկայացուցիչներին այն մասին, որ Իրաքն ամեն գնով պետք է պահել բրիտանական տիրապետության ներքո: Իրաքցի պատմաբան Աբդել Ռահման ալ–Բազազն այդ կապակցությամբ նշում է, որ Մոդի դեկլարացիայի հրապարակումով, անգլիացիներն ուզում էին «հանգստացնել ժողովրդին և խանգարել նրան՝ դիմադրություն ցույց տալու անգլիական օկուպացիոն բանակին, որը դեռ պետք է ավարտեր Բաղդադի վիլայաթի նվաճումը»:

Այս և նման այլ պաշտոնական փաստաթղթերը վկայում էին այն մասին, որ անգլիացիները Դար աս–Սալամ մտել էին ոչ թե որպես ազատարարներ, այլ նոր տիրապետողներ:

Դրան համապատասխան էլ Իրաքում, չսպասելով պատերազմի ավարտին և Օսմանյան կայսրության վերջնական պարտությանը, անգլիացիները մտցրեցին կառավարման մի համակարգ, որն ամենից ավե-

լի համապատասխանում էր նրանց կայսերական շահերին արաբական երկրներում:

Իրաքում հաստատվեց ոչ թե ազգային վարչակարգ, ինչպես սկզբում խոստացել էին անգլիացիները, այլ բրիտանական քաղաքացիական իշխանություն՝ ադմինիստրացիա: 1917 թ. հուլիսին Իրաքում բրիտանական գլխավոր քաղաքական սպան վերանվանվեց քաղաքացիական կոմիսարի, իսկ ապա՝ գլխավոր կոմիսարի: Նա գլխավորում էր քաղաքացիական վարչությունը (ադմինիստրացիան): Ձևականորեն նա ենթակա էր Իրաքում բրիտանական ռազմական ուժերի գլխավոր հրամանատարին, բայց իրականում ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր քաղաքացիական կոմիսարի ձեռքում, որն օգտվում էր գործողությունների լայն ազատությամբ:

Իրաքում բրիտանական առաջին քաղաքացիական կոմիսար նշանակվեց Պերսի Կոքսը, որը գաղութային քաղաքականություն իրագործելու մեծ փորձ ուներ: Մեկ տարի անց՝ 1918 թ. մայիսին, նրան փոխարինեց նրա տեղակալ Առնոլդ Վիլսոնը, որն այդ պաշտոնը վարեց մոտ երեսուն ամիս:

Քաղաքացիական կոմիսարն ուներ իր շտաբը և քարտուղարությունը, որը բաղկացած էր եկամուտների, ֆինանսների, առողջապահության, հասարակական աշխատանքների և դատական գործերի բաժիններից: Իսկ տեղերում նշանակվեցին քաղաքական սպաներ, որոնք, հեռացնելով տեղական պաշտոնյաներին իրենց զբաղեցրած պաշտոններից, դարձան իրենց հանձնարարված շրջանների լիիշխան տերերը:

1917 թ. քաղաքական սպաներ նշանակվեցին Բաղդադում, Բասրայում, Բաքուբայում, Խանեկինում, Ազիզիյայում, Հիլլում, Քերբելայում, Ռամադիում, Սամավայում, իսկ հետագայում նաև այլ, այդ թվում և քրդական շրջաններում: Նրանց տնօրինում էին այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին ցեղերին և ցեղային փոխհարաբերություններին, անվտանգությանը, քաղաքական հարցերին հարկերի հավաքմանը, բանակի հետ փոխհարաբերություններին և այլն: Կառավարման այս կարևոր մարմիններում բոլոր գլխավոր պաշտոնները գրավում էին անգլիացիները և հնդիկները: Քաղաքացիական կոմիսարի վարչությունում 534 պաշտոնյաներից, որոնք զբաղեցնում էին պատասխանատու պաշտոններ, միայն 20 էին արաբներ, իսկ մնացածներն անգլիացիներ էին և մի քանի հնդկացիներ: Իսկ ցածր վարձատրվող և երկրորդական պաշտոններին հավաքագրում էին գլխավորապես արաբների:

Անգլիական վարչակարգը վարում էր կոշտ քաղաքականություն հասարակական–քաղաքական և տնտեսական բոլոր ոլորտներում: Արգելվեցին ազգային կազմակերպությունների գործունեությունը, ժողովրդական ելույթները, փակվեցին բազմաթիվ պարբերականներ, հաստատվեց գրաքննություն:

Զգալիորեն վատթարացավ աշխատավորական զանգվածների վիճակը և ընդհանուր տնտեսական դրությունը երկրում: Մոտ երեք անգամ բարձրացան հարկերը: Եկամուտների մեծ մասը գնում էր բրիտանական գաղութային վարչակարգի պահպանմանը: Ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք ծանր հարված հասցրեցին գյուղատնտեսությանը: 1918 թ. սեպտեմբերի 25–ին անգլիական քաղաքացիական վարչությունն ընդունեց «Հողեր ձեռք բերելու մասին» օրենք, որն ավելի շատ հողերի էքսպրոպրիացիայի բնույթ էր կրում: Մեծ քանակությամբ հողատարածքներ անցան անգլիական գաղութարարների ձեռքը՝ ռազմական օբյեկտների տեղակայման, Բասրայի նավահանգստի կառուցապատման, ֆերմաների ստեղծման և այլ նպատակների համար:

Իրաքում՝ Բաղդադում և տեղերում, սրվեցին հարաբերությունները բնակչության և բրիտանական գաղութային իշխանությունների միջև, որն ալեկոծեց ամբողջ երկիրը և 1918–1920 թթ. վերածվեց հակաբրիտանական հզոր ապստամբության:

Այսպիսով, Իրաքը Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին ազատագրվեց թուրքական հետադիմական և բարբարոսական լծից: Դրանով իրականություն դարձավ իրաքցիների երազանքը՝ տեսնել իրենց երկիրն ազատ թուրքական ատելի լծից:

Բայց, տարաբախտաբար, դա չհանգեցրեց իսկապես ազատ ու անկախ Իրաքի ստեղծմանը: Մինչ այդ դեռ շատ հեռու էր և դեռ շատ երկար ճանապարհ էր պետք իրաքցիներին անցնել՝ մինչև բաղձալի նպատակին հասնելը:

2. Աս–սաուրա ալ–արաբիյա ալ–քուբրա՝ արաբական մեծ ապստամբությունը

Եգիպտական և իրաքյան ռազմաճակատներում ծավալվող ռազմական գործընթացներին զուգահեռ, արագ թափով առաջ էր գնում ապստամբության նախապատրաստումը Հիջազում: 1916 թ. մայիսի 24–ին Ալին՝ Հուսեյնի ավագ որդին, նոր հրահանգ ստացավ հորից՝

վերջնականապես ճշտել ապստամբության կոնկրետ օրը: Ալին և իր եղբայրը՝ Ֆեյսալը, խորհրդակցելով, ապստամբության օրը նշանակեցին հունիսի 5–ի երկուշաբթի օրը, և այդ մասին տեղյակ պահեցին Հուսեյնին: Միաժամանակ նրանք իրենց հորը խորհուրդ տվեցին պահանջել անգլիացիներից, որ այդ օրը նրանք ռազմական ցույց կազմակերպեն Սիրիայի ափերի մոտ՝ ի նշան աջակցության արաբական ապստամբությանը: Ալին իր մարդկանց ուղարկեց իրենց հավատարիմ ցեղապետերի մոտ՝ նրանց տեղյակ պահելով ընդունված որոշման մասին, և նախազգուշացրեց նրանց պատրաստ լինել ապստամբությանը:

Հուսեյնը հավանություն տվեց Ալիի և Ֆեյսալի ընդունած որոշմանը՝ ապստամբության սկսման օրվա կապակցությամբ:

1916 թ. հունիսի 5–ին, առավոտյան, արևածագին, Ալին և Ֆեյսալը Մադինայի մերձակայքում գտնվող Համզայի մոտ, որտեղ ճամբարել էին շերիֆ Հուսեյնի հավաքագրված 1500 արաբ զինվորներ, իրենց հոր՝ Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի անունից, պաշտոնապես հռչակեցին արաբների անկախությունը Թուրքիայից: Այնուհետև նրանք, ցեղերի այդ հեծելազնդի գլուխն անցած, շարժվեցին Մադինայից հարավ–արևելք նշանակված մի վայր, որտեղ միացան այնտեղ կենտրոնացված զինված ցեղերին:

Այսպես սկսվեց արաբական ապստամբությունը, որը պատմության մեջ հայտնի է որպես արաբական մեծ ապստամբություն:

Ապստամբության քաղաքական և ռազմական ղեկավարությունը կենտրոնացվեց Հուսեյնի իբն Ալիի ընտանիքի՝ Մեքքայի շերիֆ Հուսեյնի և նրա երեք որդիների Ալիի, Աբդալլահի և Ֆեյսալի ձեռքում, որոնց հետագայում միացավ նրանց կրտսեր եղբայր Զայդը:

Համզայի մոտ ապստամբության և արաբների անկախության հայտարարությունից հետո, հաջորդ քայլը կատարվեց Մեքքայում, որից շատ բան էր կախված՝ ապստամբության հետագա հաղթարշավի իմաստով:

Ապստամբությունը Մեքքայում նշանակված էր 1916 թ. հունիսի 10–ին, շաբաթ օրը: Մեքքայում դրությունը բավականին բարդ էր, քանի որ այստեղ գտնվում էին թուրքական զորանոցները և թուրքական մի ռազմախումբ, կազմված 1400 թուրք զինվորներից: Բարեբախտաբար, անտանելի շոգերի պատճառով, Մեքքայից ավելի զովասուն Թաիֆ էր մեկնել Հիջազում թուրքական վալին՝ գլխավոր նահանգապետը, իր հետ տանելով զինվորների մի մեծ խումբ:

Մեքքայում ապստամբությունը ղեկավարում էր անձամբ Հուսեյնը, որի անմիջական հրամանով, 1916 թ. հունիսի 10–ի արշալույսին, առավոտյան ժամը 3:30–ին, արաբ ապստամբ ուժերը հարձակվեցին թուրքական զորանոցների և կայազորային կետերի, Համիդիե կառավարական շենքի վրա, ապա պաշարեցին այն: Երեք օր անընդհատ կատաղի մարտեր էին գնում, որը վերջացավ արաբ ապստամբական ուժերի հաղթանակով՝ թուրքական դիմադրական ուժերն անձնատուր եղան:

Սակայն մնում էին դեռևս թուրքական գլխավոր զորանոցները և Ջիադ ամրոցը, որոնք ավելի լավ էին զինված և իրենց տրամադրության տակ ունեին գնդացիրներ և ծանր հրետանի: Մինչդեռ արաբների հիմնական զենքը հրացանն էր: Նրանց տրամադրության տակ չկար ոչ մի հրետանի, որը նրանց դնում էր ծանր դրության մեջ, և որի պատճառով ավելի մեծ էին արաբների կորուստները: Այդ պատճառով էլ թուրքական ուժերը կարողացան այստեղ դիմադրել մոտ երեք շաբաթ:

Թուրք զինվորները դիմում էին ամեն մի քայլի, նույնիսկ այնպիսի քայլերի, որոնք սրբապղծություն էին համարվում իսլամի և շարիաթի կողմից: Նրանք չխնայեցին անգամ մուսուլմանների սրբությունները: Թուրք հրետանավորները հրետանային երկու արկ արձակեցին բոլոր մուսուլման հավատացյալների սուրբ սրբոցը համարվող Կաաբայի վրա: Նրանք գնդակոծում էին խաղաղ բնակչությանը, անցորդներին և ուխտավորներին, նույնիսկ նրանց, ովքեր նետվեցին հանգցնելու հրետանային կրակոցից հետո Կաաբայի այրվող ծածկոցը:

Այդ ընթացքում արաբ ապստամբներին օգնության եկան Սուդանում տեղակայված եգիպտական երկու հրետանային մարտկոցներ, որոնք Ռեջինալդ Վինգեյթի կարգադրությամբ, կտրելով բավականին մեծ տարածություն, նետվեցին օգնության Հուսեյնի զորքերին: Դրանք վճռական դեր խաղացին և ստիպեցին Հիջազում տեղակայված թուրքական ուժերին դադարեցնել դիմադրությունը և հանձնվել հաղթանակած արաբ ապստամբական ուժերի ողորմածությանը:

Ապստամբության հաղթանակը Մեքքայում վճռորոշ նշանակություն ունեցավ Հիջազում և Արաբիայում ապստամբական շարժման հետագա ծավալման և վերջնական հաղթանակի գործում:

Հունիսի 16–ին անձնատուր եղավ Ջիդդայի թուրքական 1500–անոց կայազորը: Ջիդդան գրավելու առաջին փորձը կատարեց արաբական Հարբ ցեղային կոնֆեդերացիային պատկանող մոտ 3500 զորախումբը՝ շերիֆ Մուհսինի գլխավորությամբ, այն նույն օրը, երբ ապս-

տամբություն սկսվեց Մեքքայում, այսինքն 1916 թ. հունիսի 10–ին: Սակայն նրանք հաջողության չհասան: Այստեղ նույնպես իր դերը խաղաց թուրքական հրետանին: Բայց ապստամբներին օգնության եկան անգլիացիները: Բրիտանական ռազմական նավերը Կարմիր ծովից հրետակոծեցին թուրքերի դիրքերը իսկ ինքնաթիռները ռումբեր նետեցին թուրքական պաշտպանական դիրքերի վրա: Դա որոշեց պայքարի ելքը: Ջիդդան անցավ ապստամբների ձեռքը:

Ապաստամբական մի զորախումբ՝ Հուսեյնի որդի Աբդալլահի հրամանատարությամբ գրավեց Ռաբիղը և Յանբոն, իսկ սեպտեմբերի 21–ին նրան անձնատուր եղավ Թաիֆը: Արաբներին հանձնված թուրք գերիների մեջ էր նաև Հիջազի գլխավոր նահանգապետ Ղալիբ փաշան:

Այս գործողությունների ընթացքում ապստամբները գերի վերցրեցին 6000 թուրք զինվոր ու սպա, որպես ռազմական ավար վերցրեցին մեծ քանակությամբ զինամթերք ու զենք՝ հրացան, անգամ հրետանի և այլն:

Ապստամբները թուրքական տիրապետությունից ազատագրեցին Հիջազի բոլոր գլխավոր քաղաքները՝ Մեքքան, Թաիֆը, Ջիդդան, Յանբոն և այլ քաղաքներ ու բնակավայրեր, բացի Մադինայից:

Ծանր դրություն ստեղծվեց Ասիրում և Եմենում տեղակայված թուրքական զորքերի համար: Նրանք լրիվ կտրվեցին արտաքին աշխարհից և դրսից օգնություն ստանալու ոչ մի հույս կամ հնարավորություն չունեին, չնայած այն բանին, որ Եմենի իմամը և Իբն Ռաշադը չհրաժարվեցին իրենց թուրքամետ դիրքորոշումից: Բայց նրանք նույնպես մեկուսացվեցին:

Հիջազում բարձրացված ապստամբությունը խանդավառությամբ ընդունեցին Արաբիայի մյուս շրջանները և նրանց ղեկավարները՝ առաջին հերթին Նաջդի կառավարիչ Իբն Սաուդը, Քուվեյթի շեյխ աս–Սաբահը և մյուսները: 1916 թ. նոյեմբերի 20–ին Քուվեյթում տեղի ունեցավ նրանց, Մուհամմարայի շեյխի և 150 այլ ականավոր ցեղապետերի ու շեյխերի հանդիպումը: Այստեղ շատ կարևոր ելույթ ունեցավ Իբն Սաուդը, որը կոչ արեց բոլոր արաբներին կանգնել ապստամբության դրոշի ներքո և ոչ մի ջանք չխնայել ընդհանուր գործի հաջողության համար:

Բարդ իրադրություն ստեղծվեց Մադինայի շուրջը: Ապստամբներին չհաջողվեց գրավել Մադինան: Այստեղ գտնվում էր թուրքական լավ զինված կայազորը՝ կազմված 14 հազար զինվորներից: Կայազորի տրամադրության տակ կար նաև հրետանի, որից արձակված արկերը և

նրանց դղրդյունը շատ հաճախ խուճապ էր առաջացնում բնակչության, ինչպես նաև միայն հրացաններով զինված ցեղերի մեջ:

Բայց Մադինան շրջապատված էր արաբական զորքերով: Նրան դեմ–հանդիման մշտապես կանգնած էին Ալիի զորքերը: Մադինայի վիճակն ավելի բարդացավ, երբ արաբները Ֆեյսալի գլխավորությամբ 1917 թ. հունվարին գրավեցին Վաջը: Թուրքական զորքերին այդպես էլ չհաջողվեց մինչև պատերազմի ավարտը դուրս գալ Մադինայից, իրագործել Մեքքայի վերագրավումը և կապեր հաստատել Ասիրի և Եմենի թուրքական կայազորների հետ: Ապստամբները կարողացան կանխել նրանց այդ գործողությունները, որը պետք է համարել նրանց կարևոր հաջողություններից մեկը:

Ապստամբների շարքերն օրեցօր և ամսեամիս համալրվում էր արաբական հայրենասիրական ուժերով: Հիջազի արաբներին միացան նաև Սիրիայի, Իրաքի, ապա նաև Եգիպտոսի արաբները, որի հետևանքով արաբական ապստամբությունը դուրս եկավ Հիջազի շրջանակներից և ընդունեց համաարաբական բնույթ: Ապստամբությունն սկսվելուց երեք շաբաթ անց ապաստամբական ուժերի թիվը կազմում էր 30–40 հազար, իսկ 1917 թ. հունվարին այդ թիվը հասավ մոտ 70 հազարի: Հետագայում ապստամբների շարքերը համալրվեցին նոր ուժերով:

Սակայն պետք է նշել, որ ապստամբական բանակը, որը հիմնականում կազմված էր կարգապահության չենթարկվող բեդվիններից, վատ էր պատրաստված: Նա, նախ և առաջ, վատ էր զինված: Բավական է նշել, որ այդ 70 հազարից, հրացան հասնում էր միայն 28 հազարին: Նրա տրամադրության տակ չկային գնդացիրներ, հրետանի և ժամանակակից զենքի այլ տեսակներ: Հուսեյնի բոլոր պահանջները՝ ուղղված Անգլիային, ապստամբական բանակին տրամադրել բավարար քանակությամբ հրացաններ, գնդացիրներ և հրետանի, մնում էին անպատասխան: Լավագույն դեպքում անգլիացիները տրամադրում էին որոշ քանակի հին հրացաններ, և ոչինչ ավելի: Անգլիայի նման մոտեցումն իր դաշնակից արաբների նկատմամբ բացատրվում է նրանով, որ նա չէր ցանկանում նպաստել ուժեղ արաբական բանակի ստեղծմանը, որը կարող էր վտանգավոր դառնալ նրա համար: Նա գերադասում էր ունենալ թույլ դաշնակից, որը մշտապես կախման մեջ կգտնվեր նրանից և նրա համար գլխացավանքներ չէր ստեղծի ապագայում:

3. Թուրքիայի վերաբերմունքն արաբական ապստամբությանը և նրա ձեռնարկած քայլերը

Արաբական ապստամբությունը, ժամանակակիցների վկայությամբ, շշմեցուցիչ տպավորություն է գործել Թուրքիայի վրա: Թուրքերի՝ ղեկավարների ու ժողովրդի համար, դա անակնկալ էր, որին սկզբնական շրջանում անգամ չէին ուզում հավատալ: Դա խոսում է այն մասին, որ արաբների կողմից գաղտնապահությունը գտնվել է բարձր մակարդակի վրա, նրանց շարքերում չեն գտնվել մատնիչներ, մի կողմից, և վկայում է թուրքական հետախուզության վատ աշխատանքի մասին, որը ոչ միայն հավաստի տեղեկություններ չի ունեցել, այլև չի կասկածել անգամ ապստամբության հնարավորության մասին, մյուս կողմից:

Թուրքական իշխանությունները սկզբում, մի քանի շաբաթ, ժողովրդից լրիվ գաղտնի պահեցին այն, ինչ տեղի էր ունեցել Արաբիայում: Ապստամբության մասին ոչ մի խոսք չէր թույլատրվում ասել և ոչինչ չէր գրվում: Նույնիսկ 1916 թ. հունիսի 26–ին հրապարակված թուրքական այսպես կոչված հաղորդագրության մեջ, ժխտվում էր Հիջազում տեղի ունեցած ապստամբության փաստը: Միայն հունիսի 29–ին Դամասկոսում լույս տեսնող «աշ–Շարկ» պաշտոնական օրաթերթում ակնարկ կար այն մասին, որ «որոշ ցեղախմբեր հարձակում են գործել Մադինայի հարևանությամբ գտնվող մի քանի կետերի վրա»: Այդուհանդերձ, ապստամբության մասին լուրերն աստիճանաբար տարածվում էին ամբողջ կայսրությունում՝ առաջացնելով ոչ թուրք ճնշված ժողովուրդների համակրանքը, մի կողմից, և թուրքերի զայրույթն ու արաբներին պատժելու անհագուրդ ցանկությունը, մյուս կողմից:

Հուլիսի վերջերից թուրքական իշխանություններն արդեն հարկադրված էին թույլատրել որոշ հաղորդագրությունների տպագրում Ստամբուլում լույս տեսնող «Թանինի» էջերում: Մասնավորապես 1916 թ. հուլիսի 26–ի համարում առաջին անգամ լույս տեսան միանգամայն խեղաթյուրված տեղեկություններ արաբական մեծ ապստամբության մասին: Այդ և հաջորդ համարներում, մի քանի ամիս շարունակ, թուրքական մամուլն այն «տեսակետն» էր զարգացնում, որ ոչ մի ապստամբություն էլ տեղի չի ունեցել, և որ կատարվածն ընդամենը շերիֆ Հուսեյնի անձնական անհնազանդությունն էր, որն, իր հերթին, արդյունք էր բրիտանական խարդավանքների և դավադրությունների: Նշվում էր նաև, որ անհնազանդները ջախջախվել են Հիջազի ժողովրդի և Ստամբուլին հա-

վատարիմ մի քանի ցեղերի կողմից, որը «վկայում է խալֆաթին և ջիհադի վերաբերյալ մարգարեի դրույթներին նրանց հավատարիմ մնալու մասին»:

Պարբերաբար հրապարակվում էին թուրքական աղավաղված և հորինված հայտարարություններ՝ կոմյունիկե, ռազմական գործողությունների մասին: 1916 թ. սեպտեմբերի 19–ի նման մի կոմյունիկեում, Մադինայում թուրքական զորքերի հրամանատարի անունից հայտարարվում էր, որ Հիջազի ցեղերը հնազանդ են, Ֆեյսալը պարտվել և ապաստան է գտել բրիտանական ռազմական նավերից մեկում, իսկ Ալին՝ մոլորված ու շփոթված, թափառում է: Նույնիսկ Թաիֆն Աբդալլահին անձնատուր լինելուց երեք օր անց, «աշ–Շարկը» գրում էր, թե Աբդալլահը ծանր կորուստներ կրելով, նահանջել է և «Թաիֆում ամեն ինչ հանգիստ է»:

Միայն նման ստեր և հորինվածքներ էին թույլատրվում տպագրել թուրքական պաշտոնական լրագրամիջոցներում:

Թուրքական մամուլը և ղեկավարները ջանք չէին խնայում անձամբ Հուսեյնին վիրավորելու և վարկաբեկելու ուղղությամբ: Նրան համարում էին դավաճան, որը ծախվել է Անգլիային և այլ քրիստոնյա երկրների, իսկ նրա արարքը որակում որպես հակաիսլամական: Այդ բնագավառում ևս «փայլում «էր Ջեմալ փաշան: Իր հրապարակային ելույթներից մեկի ժամանակ, նա հարկադրված էր խոստովանել, որ «սուրբ ջիհադի գործընթացը շրջափակման ենթարկվեց մի անհատ մարդու կողմից՝ Իսլամի Սուրբ Երկրի հենց սրտում, որը դաշնակցում է այն քրիստոնեական պետությունների հետ, որոնց նպատակն է թալանել իսլամի աշխարհը»: Ջեմալը «մի անհատ մարդ» ասելով, հասկանալի է, նկատի ուներ շերիֆ Հուսեյնին: Շարունակելով նրան պարսավել, Ջեմալը Հուսեյնին անվանում է «ստոր անհատ» և համոզմունք հայտնում, որ իր թուրքական հերոսները «կկտրեն այդ սրիկայի գլուխը Մեքքայում»:

Առաջ անցնելով, նշենք, որ Ջեմալին չհաջողվեց կտրել Հուսեյնի գլուխը ոչ Մեքքայում և ոչ էլ մեկ այլ տեղ: Հուսեյնը բարեհաջող ապրեց մինչև 1924 թ. և մահացավ իր մահիճում, լրիվ տեղյակ լինելով Ջեմալի սպանության մասին, որը կատարվեց 1922 թ. Թիֆլիսում, երկու հայ հերոսների ձեռքով:

Ստամբուլը, առնելով արաբական ապստամբության լուրը, դիմեց զանգվածային պատժամիջոցների, չհասկանալով, որ ամեն ինչ արդեն

ուշ էր, ժամանակները փոխվել էին և Օսմանյան կայսրություն կոչվածն էլ այլևս նախկին ուժն ու հնարավորությունը չուներ:

1916 թ. հուլիսի 2–ին սուլթանական հրովարտակով Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմին ազատվեց Հիջազի կառավարչի և Մեքքայի շերիֆի պաշտոնից և նրա փոխարեն նշանակվեց Ալի Հայդարը, որը նույնպես շերիֆական տոհմից էր: Սակայն սուլթան Մուհամմադ V Ռաշադի այդ հրամանը մնաց թղթի վրա, քանի որ չկար այն թուրքական ուժը, որը գործնականում ի վիճակի լիներ կիրառել նրա հրամանը:

Դրա փոխարեն Սիրիայում ամենադաժան քայլերի դիմեց գազազած Ջեմալ փաշան, առավելագույնս օգտվելով ռազմական դրությամբ իրեն տրված լիազորություններից: Նա իր սահմաններ չճանաչող զայրույթը թափեց այն սակավ արաբ ազգային գործիչների գլխին, որոնք ինչ–ինչ պատճառներով խուսափել էին Ջեմալի կողմից մինչ այդ՝ 1915–1916 թթ., կիրառած պատժամիջոցներից: Նա հրաման արձակեց զանգվածային ձերբակալությունների մասին: Զինվորական ոստիկանությունը ձերբակալեց մոտ 40 ականավոր սիրիացիների, նետեց նրանց բանտերը և ենթարկեց զանազան անմարդկային տանջանքների: Իսկ 120 ականավոր այլ սիրիացիներ աքսորվեցին Անատոլիա: Ձերբակալվածների մեջ շատ կային տարեցներ և հիվանդներ, որոնց օրերն առանց այդ էլ հաշվված էին: Բայց դա ոչ մի նշանակություն չուներ Ջեմալ փաշայի համար: Նա բոլորին տանջում էր հավասարապես: Դրանց մեջ էր Աբդուլ Համիդ փաշա Կալտակչին՝ թուրքական բանակի բրիգադային գեներալ, Զաքի բեյ ալ–Ազմեհը, որը նույնպես եղել էր թուրքական բանակի բարձրաստիճան սպա, Ֆարես ալ–Խուրին՝ թուրքական պառլամենտի անդամ և այլն: Նրանց ծեծում և քաղցած էին պահում, բայց նրանցից ոչ մեկը ոչ մի խոստովանություն չարեց, իր ընկերներին չմատնեց կամ արաբական ապստամբության մասին որևէ գաղտնիք չհայտնեց: Իսկ ալ–Ֆաթաթ կազմակերպության անդամ, երիտասարդ Շուքրի Քուվաթլին, որը հետագայում դարձավ անկախ Սիրիայի առաջին պրեզիդենտը, վախենալով, որ չարչարանքների ժամանակ կարող է չդիմանալ և ակամայից ինչ–որ բաներ հայտնել այդ կազմակերպության մասին, փորձեց ինքնասպանությամբ վերջ տալ կյանքին՝ կտրելով իր երակը:

Ջեմալ փաշան, ձեռքի տակ չունենալով այնպիսի ապացույցներ, որի հիման վրա կարողանար նրանց մահվան դատապարտել, սկսեց

«թխել» նման փաստեր և ապացույցներ՝ փորձելով նրանց մեղադրել դավաճանության մեջ:

Սակայն գործին միջամտեց Հուսեյնի որդի Ֆեյսալը, ապստամբական բանակի ղեկավարներից մեկը: Նա զգուշացրեց Ջեմալին, որ ձերբակալվածներին մահապատժի ենթարկելու կամ վատ վերաբերմունքի պատճառով նրանց մահանալու դեպում, ինքը համարժեք պատժամիջոցներ կգործադրի Մեքքայի և Թաիֆի գրավման ժամանակ գերի վերցված թուրք սպաների նկատմամբ, խոստանալով նրան՝ յուրաքանչյուր սպանված կամ մահացած արաբ բանտարկյալի դիմաց, սպանել 10 թուրքական սպա:

Ֆեյսալի սպառնալիքն իր ազդեցությունն ունեցավ: Վախեցած Ջեմալն ազատ արձակեց արաբ երևելի բանտարկյալներին:

Ջեմալի և թուրքական իշխանությունների բացարձակ թողտվության հետևանքով և տնտեսական հարցերը լրիվ անտեսելու պատճառով, սարսափելի ծանր վիճակ ստեղծվեց սիրիացիների համար: Կարելի է ասել, որ սովը և հիվանդությունները հնձում էին նրանց, որի մասին կան բազմաթիվ վկայություններ, հատկապես օտարերկրյա գործիչների, որոնք այդ դժնդակ օրերին գտնվել են Սիրիայում: Նրանց ստացած ընդհանուր տպավորությունն այնպիսին էր, որ նման իրավիճակը թուրքերին ձեռնտու էր, քանի որ զանգվածաբար կոտորվում էին նրանց ատելի արաբները, և վերանում էին նրանց կողմից ապստամբվելու հնարավորությունները: Սիրիայում ամերիկյան գլխավոր հյուպատոսը 1916 թ. հուլիսի 15–ին տեղյակ էր պահում ԱՄՆ–ի կառավարությանը, որ «աղքատների պայմաններն այստեղ ողբալի են: Փողոցները լիքն են սովահար կանանցով և երեխաներով: Իշխանությունները (թուրքական — Ն. Հ.) բացարձակապես անսիրտ են այս թշվառ մարդկանց տառապանքների հանդեպ, և ոչ էլ թույլատրում են Ամերիկյան Կարմիր Խաչին օգնելու նրանց: Իմ երեկոյան պտույտների ժամանակ ես հաճախ տեսնում եմ առուներում ընկած դիակներ»: Իսկ անգլիական «Թայմսը» 1916 թ. օգոստոսի 12–ի համարում հաղորդում էր, որ «արաբախոս մուսուլմանների նկատմամբ կիրառվում է նոր ահաբեկչություն: Մոտ 60–80 հազար մարդ է մահացել սովից Հյուսիսային Սիրիայում»:

Նման փաստերը շատ–շատ են, որոնք գալիս են հաստատելու, որ թուրքական իշխանությունները, Ջեմալ փաշայի գլխավորությամբ, Սիրայում արաբ բնակչության նկատմամբ, իրոք, կիառում էին նոր ձևի տե-

ռորիզմ՝ իրենց դատապարտված տիրապետությունը երկարաձգելու միտումով:

4. «Վերջին մեխը ջիհադի դագաղին»

Արաբական ապստամբության բարձրացումից հետո, նրա ղեկավար Հուսեյնը երկու անգամ՝ 1916 թ. հուլիսին և սեպտեմբերին, հանդես եկավ հայտարարությամբ՝ դեկլարացիայով, ուղղված համայն աշխարհի մուսուլմաններին:

Դա միանգամայն բնական էր, քանի որ ապստամբության հետևանքով պահանջ էր առաջացել աշխարհի մուսուլմաններին բացատրելու, թե ինչու է մուսուլմանական աշխարհի սրբավայրերի պահապան, Մեքքայի շերիֆ Հուսեյնն ապստամբվել մուսուլմանական օսմանյան–թուրքական կայսրության դեմ, որի սուլթանը համարվում էր նաև բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ՝ խալիֆա, թեև շատերի, այդ թվում և արաբների կողմից, այս վերջին պարագան վիճարկվում էր:

Այս երկու հայտարարություններն իրենց բնույթով նման են, ուստի նպատակահարմար ենք համարում կանգ առնել առաջին դեկլարացիայի վրա:

Հուլիսյան հայտարարության մեջ նա իր առջև երկու խնդիր էր դրել: Նախ, բացատրել աշխարհի մուսուլմաններին, թե ինչու է նա դիմել այդ քայլին՝ ապստամբվել Օսմանյան տիրապետության դեմ: Հուսեյնը բացեիբաց դատապարտում է Միասնություն և առաջադիմություն երիտթուրքական կուսակցությանը և նրա գործունեությունը, որը նա համարում է իր բնույթով հակաիսլամական, վկայակոչելով նրա կոնկրետ գործողությունները: Հուսեյնն անարգանքի սյունին է գամում էնվեր–Թալեաթ–Ջեմալ երիտթուրքական եռապետությանը, այդ ոհմակին մեղադրելով Սիրիայում կիրառած պատժամիջոցների, մահապատիժների և տեռորիզմի մեջ, ինչպես նաև այլ հանցանքների համար, որ նրանք գործել են իսլամի և արաբների դեմ:

Այդ բոլորից հետո, շերիֆ Հուսեյնն անդրադառնում է բուն ապստամբության հարցին: Նա արաբական մեծ հեղափոխությունը համարում է միաժամանակ և՛ կրոնական, և՛ ազգային ապստամբություն: Դեռ ավելին, նա դա համարում է կրոնական և ազգային պարտականություն, որ Ալլահը շնորհել էր նրանց անկախություն ձեռք բերելու համար: Եվ

նա գտնում է, որ իրենք, արաբ–մուսուլմանները, պարտավոր էին օգտվել Ալլահի ընձեռած այդ հնարավորությունից:

Փաստորեն ընդգծելով, որ ապստամբությունը չէր հակասում իսլամի դրույթներին, քանի որ Թուրքիայի ղեկավարության պահվածքը, գործելակերպը և քաղաքականությունն ամբողջապես հակաիսլամական էր, ուստի և արաբական ապստամբությունը պատասխան քայլ էր թուրքական հակաիսլամիզմին, Հուսեյնն իր այդ հայտարարության մեջ, որն ըստ էության մի դիմում էր աշխարհի բոլոր մուսուլմաններին, կոչ է անում նրանց, հետևել իր օրինական և միանալ արաբներին՝ նրանց պայքարում՝ ընդդեմ թուրքական տիրապետության: Նա միաժամանակ կոչ է անում նրանց կատարել իրենց պարտականություններն իր՝ որպես Մեքքայի շերիֆի, նկատմամբ և պահպանել իսլամական համերաշխությունը:

Այսպիսով, Հուսեյնի պրոկլամացիան ոչ միայն արաբական ապստամբության արդարացում էր, այլև կոչ աշխարհի բոլոր մուսուլմաններին նույնպես ապստամբվել Թուրքիայի և նրա երիտթուրքական ղեկավարության դեմ:

Այսպիսով, ի հակադրություն Ստամբուլի կոչի, ուղղված աշխարհի բոլոր մուսուլմանների՝ ոտքի ելնել ջիհադի՝ սրբազան պատերազմի Թուրքիայի գլխավորությամբ՝ ընդդեմ քրիստոնյա Անգլիայի, Ֆրանսիայի և նրա դաշնակիցների, Հուսեյնի կոչը թե՛ ձևի, և թե՛ բովանդակության առումով, նպատակաուղղված էր թուրքական ջիհադը պսակազեծելուն և կանխելուն:

Այս կոչը վճռական նշանակություն ունեցավ թուրքական ջիհադի տապալման գործում: Ինչպես պատկերավոր կերպով նկատել է Ջ. Անտոնիուսը, Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիի կոչը «վերջին մեխը եղավ ջիհադի դագաղին»:

Այստեղ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերջին մեխը խփողը եղան աշխարհին իսլամ պարգևած և իսլամի օրենքների անբաժան մասը կազմող ջիհադի հեղինակներ՝ մուսուլման արաբները:

5. Հուսեյն իբն Ալիի թագավոր հռչակվելը և անգլո–ֆրանսական դիմակայությունը նրա ինվեստիտուրայի հարցում

Այդ ընթացքում տեղի ունեցան նաև քաղաքական կարևոր իրադարձություններ: Ինչպես արդեն նշվել է, թուրքական սուլթանի 1916 թ.

հուլիսի 2–ի հրամանով, Հուսեյնը պաշտոնանկ արվեց և նրա փոխարեն Մեքքայի նոր շերիֆ նշանակվեց մեկ ուրիշը: Բայց Հուսեյնն արհամարհեց սուլթանական այդ հրովարտակը, և հուլիսից մինչև նոյեմբեր ամիսը շարունակեց Հիջազը կառավարել որպես նրա կառավարիչ և պահպանեց Մեքքայի շերիֆի իր կարգավիճակը:

Թուրքերի նկատմամբ ապստամբների մի շարք կարևոր հաղթանակներից հետո, երբ հայտնի դարձավ, որ արաբական մեծ ապստամբությունը կայացել է, Հուսեյնը և նրա մերձավոր շրջապատը գտան, որ հասել էր Հուսեյնին թագավոր հռչակելու պատմական հարմար պահը:

1916 թ. նոյեմբերի 2–ին Մեքքայում գումարվեց արաբական կրոնական առաջնորդների, ցեղապետերի և քաղաքացիական երևելիների համաժողով, որը միահամուռ կերպով Հուսեյն իբն Ալի ալ–Հաշիմիին հռչակեց «Արաբական երկրների թագավոր»: Տեղի ունեցավ միապետ հռչակելու արարողություն՝ բաիա, համաձայն արաբական ավանդական ծիսակատարության: Դա կազմում էր միապետի ինվեստիտուրայի էական մասը՝ երբ նրան թագավոր հռչակողները միաժամանակ նրան տալիս էին հավատարմության երդում:

Հուսեյնը հռչակվեց արաբական բոլոր երկրների թագավոր, որը նշանակում էր, որ նա հավակնում էր արաբական բոլոր երկրները միավորել իր հովանու ներքո և իրականացնել արաբների պատմական երազանքները, գոնե նրանց այն մասով, որն արձանագրված էր Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրում:

Կազմվեց արաբական կառավարություն՝ Հուսեյնի ավագ որդի Ալիի գլխավորությամբ, որի մեջ նրա եղբայրներ Աբդալլահը և Ֆեյսալը զբաղեցրին համապատասխանաբար արտաքին գործերի և ներքին գործերի նախարարների առանցքային պաշտոնները:

Էմիր Աբդալլահը, որպես արտաքին գործերի նախարար, կատարեց իր առաջին կարևոր հանձնարարությունը: Նա, արարողությունից անմիջապես հետո, հեռագրեց արաբների գլխավոր դաշնակից երկրներին, ինչպես նաև բոլոր չեզոք երկրներին, Հուսեյնի արաբական երկրների թագավոր ընտրվելու մասին, և խնդրեց նրանց ճանաչել նրան որպես այդպիսին:

Աբդալլահի հաղորդած լուրը դիտվեց որպես սենսացիա և մեծ հուզմունք առաջացրեց Լոնդոնում և Փարիզում, որն այնուհետև վերածվեց դժգոհության: Նրանց համար Հուսեյնի «Արաբական երկրների թա-

գավոր» հռչակվելը անընդունելի էր, որը պայմանավորված էր մի շարք պատճառներով:

Առաջին, Հուսեյնի թագավոր հռչակումը՝ պահի առումով, հաջող չէր: Անգլիան և Ֆրանսիան գտնում էին, որ տվյալ պահին, երբ ընթանում էին պատերազմական գործողություններ, և երբ ամեն ինչ դեռևս հստակ չէր, ժամանակը չէր հասունացել նման արմատական բնույթի որոշման համար: Նրանք գտնում էին, որ անհրաժեշտ էր սպասել, մինչև կհասունանային բոլոր պայմանները:

Երկրորդ, Հուսեյնի թագավոր հռչակվելն իրավական առումով հիմնավորված չէր, քանի որ այն իրագործվել էր Մեքքայում հավաքված միայն մի խմբի կողմից: Մինչդեռ բոլոր արաբական երկրների թագավորի ինվեստիտուրայի համար անհրաժեշտ էր համաարաբական համաժողով, որտեղ ներկայացված կլինեին արաբական իրոք բոլոր երկրների երևելիները՝ կրոնական առաջնորդները, ականավոր ցեղապետերը, շեյխերը, քաղաքացիական, ազգային գործիչները և այլն:

Երրորդ, Լոնդոնում և Փարիզում գտնում էին, որ տիտղոսի ընտրման հարցում Հուսեյնը նույնպես շտապողականություն է ցուցաբերել: Նա ընտրել էր «Արաբական երկրների թագավոր» տիտղոսը, որով Հուսեյնը, ըստ անգլիացիների և ֆրանսիացիների, անցել էր թույլատրելիի սահմանը և սխալ գործել գահի մյուս հնարավոր հավակնորդների նկատմամբ:

Այս բոլորի մեջ, հարկավ, կա ճշմարտության հատիկ: Բայց, կարծում ենք, որ Անգլիայի և Ֆրանսիայի գլխավոր դժգոհության և Հուսեյնի ու նրա որդիների ցանկությանը հակադրվելու նրանց գլխավոր շարժառիթը կայանում էր նրանում, որ Հուսեյնի ցանկությունը՝ դառնալ արաբական բոլոր երկրների թագավոր, հակասում էր Սայքս–Պիկոյի անգլո–ֆրանսիական գաղտնի պայմանագրի սկզբունքներին, որի մասին անտեղյակ էր Հուսեյնը: Նրա կողմից «Արաբական երկրների թագավորի» տիտղոս ընտրելը ուղղակի և անուղղակի նշանակում էր, որ նա հավակնում էր դառնալ առնվազն արաբական մի այնպիսի անկախ պետության թագավոր, որի սահմանները գծված էին Մակ–Մահոնի հետ ձեռք բերված համաձայնագրով: Իսկ դա շատ ավելի ընդարձակ տարածք էր նախատեսում արաբական ապագա անկախ պետության համար, քան թե Սայքս–Պիկոյի համաձայնագիրը, որով Անգլիան և Ֆրանսիան իրար միջև բաժան–բաժան էին անելու արաբական երկրները, ոչ մեծ տարածք թողնելով արաբական անկախ պետության համար:

Ահա այսպիսի պայմաններում, հաշվի առնելով նաև այն պարագան, որը կողմերը դեռևս զգում էին միմյանց կարիքը՝ պատերազմը հաղթական վախճանի հասցնելու համար, Հուսեյնը մի կողմից, և Անգլիան ու Ֆրանսիան՝ մյուս կողմից, գերադասեցին փոխզիջման դիմել: Անգլիան և Ֆրանսիան համաձայնվեցին Հուսեյնին ճանաչել որպես միայն ու միայն Հիջազի թագավոր: 1917 թ. հունվարի 3–ին Անգլիան և Ֆրանսիան պաշտոնապես տեղյակ պահեցին այդ մասին Հուսեյնին: Վերջինս ճարահատյալ հարկադրված էր համակերպվել նոր տիտղոսի հետ:

Դա նույնպես որոշակի նվաճում էր նրա համար, քանի որ նա Հիջազի կառավարչից դառնում էր Հիջազի թագավոր՝ մի գլխով բարձրանալով իրեն հավասար բազում կառավարիչների մեջ:

Կարևոր փոփոխություններ, այդ թվում և կադրային, եղան նաև Արաբական Արևելքում անգլիական ռազմական և քաղաքական ղեկավարության մեջ:

Ջիդդայում հաստատվեցին անգլիական և ֆրանսիական առաքելություններ: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ արաբական երկրներում սկսել էր ակտիվանալ Ֆրանսիան: Նա չէր ցանկանում ամեն ինչ թողնել միայն Անգլիայի տնօրինության տակ:

Անգլիական առաքելության ղեկավար նշանակվեց փոխգնդապետ Ս. Վիլսոնը, որը մինչ այդ ծառայում էր Սուդանի քաղաքական բաժնում: Նա նշանակվեց որպես շերիֆին կից հավատարմագրված բրիտանական գործակալ:

1916 թ. սեպտեմբերին Ջիդդա ժամանեց ֆրանսիական առաքելությունը՝ գնդապետ Ե. Բրեմոնի գլխավորությամբ: Նա դարձավ ֆրանսիական առաջին բարձրաստիճան պաշտոնական անձնավորությունը Հիջազում:

Հետագայում Հիջազ ժամանեցին այլ պաշտոնյաներ, որոնք որպես խորհրդականներ, տարբեր պարտականություններ էին կատարում: Դրանց մեջ էր նաև Թ. Լոուրենսը, որը հետագայում կարևոր դերակատարում ունեցավ Հուսեյնի հետ Մեծ Բրիտանիայի հարաբերություններում և արաբական ապստամբական բանակի ռազմական գործողություններում:

Բայց ամենամեծ և ամենակարևոր փոփոխությունը կապված էր Ռեջինալդ Վինգեյթի նոր նշանակման հետ: Նա սկզբում նշանակվեց Հիջազում ռազմական ուժերի գլխավոր հրամանատար, իսկ 1916 թ. վեր-

ջերին՝ նաև Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսար, այդ բարձր պաշտոնում փոխարինելով Մակ–Մահոնին: Դրանով նրա իրավասության տակ անցան անգլո–արաբական ռազմական և քաղաքական համագործակցության բոլոր հարցերը:

6. Թուրքական բանակի ջախջախումը և Պաղեստինի, Հորդանանի, Լիբանանի ու Սիրիայի ազատագրումը

1916 թ. վերջը և 1917 թ. սկիզբները բախտորոշ եղան արաբների և Անտանտի երկրների համար արաբական ռազմաճակատում: Թուրքերի հարձակողական բոլոր ռազմական ծրագրերն անհաջողության էին մատնվել և թուրքական բանակները հարկադրված էին անցնել պաշտպանության:

Վերափոխումներն անգլիական ռազմական և քաղաքական ղեկավարության մեջ և Հուսեյնի դիրքերի ամրապնդումը Հիջազում ու նրա հեղինակության բարձրացումն արաբական աշխարհում, դրական ազդեցություն ունեցավ նրանց հետագա քաղաքական և ռազմական ծրագրերի իրականացման մեջ: Արաբական ռազմաճակատներում նախաձեռնությունն անցավ անգլիացիների ու արաբների ձեռքը, որը նրանք պահպանեցին մինչև պատերազմի ավարտը:

Թուրքերին վռնդելով Հիջազից, անգլիական զորքերը և արաբական բանակն անցան հարձակման և 1917 թ. սկզբներին մտան Պաղեստին: Սկսվեց նրա, ապա նաև Հորդանանի, Լիբանանի ու Սիրիայի ազատագրման պատմական պահը: 1917 թ. հուլիսի 6–ին արաբական զորքերը գրավեցին Աքաբան, որի անկումը ծանր հարված էր թուրքական բանակին: Արաբական զորքերը լրիվ ազատագրեցին Կարմիր ծովի ափերը և շատ կարևոր հենարան ստեղծեցին իրենց և անգլիացիների համար Սիրիա մտնելու առումով:

Ռազմական մասնագետները, որոնք հատուկ ուսումնասիրել են Առաջին համաշխարհային պատերազմի հիմնական թատերաբեմերը, Աքաբայի գրավումը համարում են շրջադարձային արաբական ռազմաճակատում: Մինչ այդ, ռազմաքաղաքական կենտրոնը համարվում էր Հիջազը: Աքաբայի գրավումից հետո, կենտրոնը տեղափոխվեց Հիջազից Աքաբա: Հիջազում մնացին Ալիի և Աբդալլահի հրամանատարությամբ գործող արաբական ուժերը, որոնք հիմնականում իրենց հսկողության տեսադաշտում էին պահում Մադինան, առանց փորձ անելու

այն գրավելու, քանի որ այնտեղ կենտրոնացված էին բավականին մեծ թվով թուրքական ուժեր: Բայց դա ինքնին արդեն օգնություն էր արաբական ապստամբական ուժերին և անգլիացիներին, քանի որ թուրքական այդ բանակը գամված էր մնում Մադինայում, և թուրքական հրամանատարությունը զրկված էր դրանք փոխադրել այլ ճակատներ, որի կարիքն այդքան զգում էր Թուրքիան:

Դրա հետ միասին, Ալիի և Աբդալլահի զինական ուժերը, որոնց միացավ իր ոչ մեծ զորախմբով նաև նրանց ամենակրտսեր եղբայրը՝ էմիր Զայդը, պարբերաբար հարձակումներ էին գործում հիջազյան երկաթուղու վրա, որը Դամասկոսը կապում էր Մադինայի հետ, մեծ անհանգստություն պատճառելով երկաթուղագիծը պաշտպանող թուրքական զորքերին: Այս վերջիններս մեծ կորուստներ էին ունենում, տալով սպանվածներ և գերիներ:

Ալիի, Աբդալլահի և Զայդի բանակներում ծառայում էին մեծաթիվ օտարերկրյա, գլխավորապես ֆրանսիական, ռազմական խորհրդատուներ, մասնավորապես Մարոկկոյից և Ալժիրից: Նրանք բավականին փորձառու էին և տիրապետում էին բեդվիններից կազմված արաբական զինախմբերի հետ աշխատելու արվեստին: Նրանք նշանակալի դեր խաղացին երեք էմիրների հրամանատարության տակ գտնվող արաբական բանակի մարտունակությունը բարձրացնելու գործում:

Ֆեյսալի հրամանատարության տակ գտնվող բանակում նույնպես կային ռազմական խորհրդատուներ, որոնք անգլիական սպաներ էին:

Աքաբայի գրավումը միաժամանակ դուռ էր բացում հարձակողական գործողությունները ծավալելու Սիրիայի ուղղությամբ, որը, վերջին հաշվով, ամենակարևորն էր:

Այս ընթացքում տեղի ունեցավ նոր փոփոխություն անգլիական հրամանատարության կազմում: 1917 թ. հունիսին արաբական ռազմաճակատում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց սըր Էդմունդ Ալլենբին:

Նոր իրադրության պայմաններում, Ֆեյսալի բանակը դարձավ եգիպտական էքսպեդիցիոն ուժերի աջ թևը, որը ներգրավվեց Սիրիան գրավելու Ալլենբիի մշակած ռազմական ծրագրի իրականացման մեջ:

1917 թ. հոկտեմբերի 31–ին անգլիացիներն անցան հարձակման Ղազա–Բեերշաբ հատվածում, ճեղքեցին թուրքական բանակի պաշտպանությունը, և, շարժվելով դեպի հյուսիս, 1917 թ. նոյեմբերի 16–ին

գրավեցին Յաֆֆան, իսկ դեկտեմբերի 9–ին՝ Երուսաղեմը: Դա նշանակում էր, որ թուրքական զորքերը ծանր պարտություն կրեցին արաբական պաղեստինա–հորդանանյան ռազմաճակատում և անվերադարձորեն կորցրեցին Պաղեստինը:

Պետք է նկատի ունենալ, որ այդ նույն ժամանակ անգլիացիները, ինչպես նշվել է, վճռական հաջողության հասան նաև Միջագետքում, քայլ առ քայլ ազատագրելով Իրաքի տարածքները: 1917 թ. փետրվարից մինչև նոյեմբեր ամիսը, նրանք, պարտության մատնելով թուրքական զորքերին, հարավային Իրաքից հասան մինչև Թիկրիտ: Արաբների և անգլիացիների հարձակողական հաջող գործողությունները երկու ռազմաճակատներում թուրքերին զրկեց իրենց զորքերը մի ռազմաճակատից մյուսը նետելու և ռազմական իրադրությունը հօգուտ իրենց փոխելու հնարավորությունից:

Սակայն Հուսեյնի համագործակցությունն իր դաշնակիցների, առաջին հերթին, անգլիացիների հետ հարթ չէր ընթանում: Նրանց միջև մշտապես ծագում էին տարաձայնություններ տարբեր հարցերի շուրջը, որոնց վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել, ընդհատելով ռազմական գործողությունների լուսաբանությունը:

7. Հուսեյնի տարաձայնությունները անգլիական և ֆրանսիական դաշնակիցների հետ և դրանց պատճառները

Իրոք, արաբական ապստամբության ղեկավար Հուսեյնի և նրա մերձավորագույն շրջապատի հարաբերություններն Անտանտի իրենց դաշնակիցների հետ անամպ չէին: Պարբերաբար նրանց միջև առաջանում էին հակասություններ, որոնք երբեմն շատ սուր բնույթ էին կրում՝ նույնիսկ այն աստիճանի, որ կարող էին անգամ հարցականի տակ դնել նրանց համագործակցությունը:

Նրանց միջև առաջին տարաձայնությունը ծագեց, ինչպես արդեն նշել ենք, Հուսեյնի արքայական ինվեստիտուրայի հարցում, երբ Անգլիան և Ֆրանսիան հրաժարվեցին ճանաչել նրան որպես արաբական երկրների թագավոր, ստիպելով նրան սահմանափակվել լոկ Հիջազի թագավորի տիտղոսով: Հուսեյնը հարկադրված էր կուլ տալ այդ վիրավորանքը, որը, սակայն, նրա մոտ մեծ նստվածք տվեց, ուժեղացնելով նրա և նրա շրջապատի կասկածները անգլիացիների, ինչպես նաև ֆրանսիացիների անկեղծության վերաբերյալ:

Այդուհանդերձ, Հուսեյնն իր մեջ ուժ չգտավ խզել կապերն իր դաշնակիցների հետ, երբ դեռ նոր էր սկսվել արաբական ապստամբությունը և իրենք մեծապես կախված էին անգլիական ռազմական օգնությունից և քաղաքական աջակցությունից:

Տարածայնության մյուս աղբյուրը՝ Անգլիայի կողմից արաբ ապստամբներին անհրաժեշտ քանակությամբ ժամանակակից զենքով ապահովելու հարցն էր, որը, Մեծ Բրիտանիան, հակառակ իր խոստումների, այդպես էլ, ըստ էության, չկատարեց պատերազմի ընթացքում: Նա բավարարվում էր միայն սահմանափակ քանակությամբ հրացաններ և զինամթերք մատակարարելով: Ձիերի, ուղտերի և ջորիների վրա նստած արաբ ապստամբ բեդվինների հիմնական զենքը շարունակում էր մնալ թուրը: Հուսեյնն անընդհատ դիմում էր անգլիական հրամատարությանն իր զորքին հրետանի, գնդացիրներ կամ գոնե բավարար քանակությամբ ժամանակակից հրացաններ մատակարարել: Նույնը նա անում էր անգլիական զինվորական ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ: Սակայն, անգլիական կողմը, զանազան պատրվակներով, խուսափում էր բավարարել արաբական կողմի այդ միանգամայն բնական պահանջը: Նրան պետք չէր ուժեղ, լավ զինված ու մարզված արաբական կանոնավոր բանակ, որը, ինչպես ենթադրում էին Լոնդոնում, պատերազմի ավարտից հետո կարող էր լուրջ խնդիրներ առաջացնել:

Արաբների մոտ լուրջ դժգոհություն առաջացրեց Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Բալֆուրի 1917 թ. նոյեմբերի 2–ի դեկլարացիան Պաղեստինում հրեական օջախ ստեղծելու վերաբերյալ: Իր ձևով այդ դեկլարացիան պարզապես մի նամակ էր, որ Բալֆուրն իր կառավարության անունից հղել էր բանկիր, ծագումով հրեա Ռոտշիլդին: Նրանում ասված էր, որ նորին բրիտանական մեծության կառավարությունը «վերաբերվում է բարեհաճորեն Պաղեստինում հրեական ժողովրդի համար ազգային օջախ հիմնելուն, և իր բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի հեշտացնի այդ նպատակին հասնելը»: Միաժամանակ նրանում նշված էր, որ այդ նպատակն իրագործելիս, «չպետք է վնաս հասցվի Պաղեստինում գոյություն ունեցող ոչ հրեական համայնքների քաղաքացիական և կրոնական իրավունքներին»:

Բալֆուրի դեկլարացիան առաջ բերեց Հուսեյն թագավորի և արաբական ազգային և կրոնական առաջնորդների սուր բողոքը: Արաբական ճամբարում ձայներ էին հնչում Անգլիայի հետ կապերը խզելու մա-

սին: Արաբները, այդ թվում և Հուսեյնը, Բալֆուրի դեկլարացիան համարում էին Հուսեյն–Մակ–Մահոն համաձայնագրի կոպիտ խախտում Անգլիայի կողմից, քանի որ Պաղեստինը դուրս էր բերվում ապագա անկախ արաբական պետության տարածքներից:

Պետք է նշել, որ Բալֆուրի դեկլարացիան նաև Սայքս–Պիկոյի համաձայնագրի խախտում էր նշանակում, քանի որ այդ համաձայնագրում հստակ գրված էր, որ Պաղեստինը դրվելու էր միջազգային կառավարման ներքո:

Մեծ Բրիտանիան, վախենալով, որ արաբները կարող են դաշնակցային կապերը խզել և դուրս գալ պատերազմից, անհրաժեշտ համարեց Հուսեյնի մոտ ուղարկել հայտնի պատմաբան, արաբագետ, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Հոգարթին: Հոգարթը, որն այդ ժամանակ ավելի շատ հետախուզության բնագավառում էր աշխատանքներ կատարում, քան թե արաբագիտության, բրիտանական կառավարության հանձնարարությամբ, պատրաստեց մի բացատրական փաստաթուղթ Հուսեյնին հանձնելու համար, որը կոչվում է «Հոգարթի հուշագիր»: Հուշագիրը հանձնվեց Հիջազի թագավոր Հուսեյնին 1918 թ. հունվարի 4–ին: Եվ, իրոք, այդ ժամանակ բանակցություններ էին ընթանում արաբական որոշ շրջանակների և Թուրքիայի միջև՝ սեպարատ հաշտություն կնքելու վերաբերյալ:

Նա կազմված էր տիպիկ բրիտանական ոճով՝ շատ բան ասել, բայց ոչ մի կոնկրետ պարտավորություն չստանձնել: Հուշագիրը հիմնված էր երկու գաղափարների վրա: Առաջին՝ «Պաղեստինում ոչ մի ժողովուրդ չի ենթարկվելու մյուսին»: Սա ասված էր արաբներին հանգստացնելու համար, որ Հրեական օջախի ստեղծման պարագայում, Պաղեստինում բնակվող արաբները չեն ենթարկվի հրեաներին, և, ընդհակառակը: Երկրորդ՝ Հոգարթը պարտավորեցնող տոնով հիշեցնում էր Հուսեյնին, որ Անտանտը հնարավորություն էր տվել արաբներին միավորվել և «արաբական ազգ ստեղծել»: Այս դիտողության իմաստն այն էր, որ արաբները, իբր, պարտական էին Անգլիային և Անտանտի մյուս երկրներին այն առումով, որ եթե չլիներ նրանց բարեհաճ դիրքորոշումը, ապա հնարավոր չէր լինի նաև արաբների միավորվելը և արաբական ազգ ստեղծելը: Այլ կերպ ասած, անգլիացիներն իրենց այդ «ծառայության «դիմաց պահանջում էին Հուսեյնից և ընդհանրապես արաբներից, զիջել և խոչընդոտներ չհարուցել Բալֆուրի դեկլարացիայի հարցում:

Հուսեյն թագավորի դիրքորոշումը նույնպես յուրատեսակ եղավ: Նա բավարարվեց միայն Հոգարթի հուշագիրը և անգլիական կառավարության բացատրություններն ի գիտություն ընդունելով, սակայն ոչ մի երաշխիքներ չտվեց դրանց վերաբերյալ, Ավելին, նա չթաքցրեց, որ պատերազմի ավարտից հետո ինքը կանդրադառնա Բալֆուրի դեկլարացիային և ամեն ինչ կանի այն վերանայելու համար:

Արաբների տարածայնությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ իրենց գագաթնակետին հասան և վերածվեցին քաղաքական լուրջ ճգնաժամի, երբ նրանց հայտնի դարձան Սայքս–Պիկոյի համաձայնագրի գոյության մասին: Ինչպես նշել ենք, Հուսեյնը և մյուս արաբ առաջնորդները, ոչ մի գաղափար չունեին նրա մասին: Այդ համաձայնագրի մասին արաբներն առաջին անգամ իմացան, երբ խորհրդային կառավարությունը 1917 թ. նոյեմբերի 22–ին հրապարակեց ցարական Ռուսաստանի կնքած գաղտնի պայմանագրերը, համաձայնագրերը և դիվանագիտական այլ փաստաթղթեր, որոնց թվում և Սայքս–Պիկոյի համաձայնագիրը արաբական երկրները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու վերաբերյալ: Դրա հիման վրա, անգլիական «Մանչեստր Գարդիան» թերթը 1917 թ. նոյեմբերի 28–ին իր էջերում հրապարակեց համաձայնագրի հիմնական բովանդակությունը:

Առիթից օգտվեց նաև Թուրքիան: Ջեմալ փաշան նոյեմբերի վերջերին իր հատուկ գործակալի միջոցով պայմանագրի լրիվ տեքստը հանձնեց էմիր Ֆեյսալին Աքաբայում: Այդ նույն գործակալը, համաձայնագրի հետ միասին, էմիր Ֆեյսալին և արաբական ապստամբական բանակի մյուս ականավոր ղեկավար Ջաֆար ալ–Ասկարիին, հանձնեց Ջեմալ փաշալի նամակները, թվագրված 1917 թ. նոյեմբերի 26–ին: Ջեմալը թուրքական կառավարության անունից արաբական կողմին առաջարկում էր բանակցություններ սկսել սեպարատ հաշտություն կնքելու համար:

Ֆեյսալին ուղղված նամակում Ջեմալը մատնանշում էր, որ նա և նրա հայրը՝ Հուսեյնը, սխալ են գործել՝ հավատալով արաբական անկախության խոստումներին և ապստամբվելով իսլամի գերագույն իշխանության, այսինքն՝ թուրքական սուլթանի դեմ, և որ այդ խոստումներն այժմ արդեն երևում է, որ եղել են լրիվ կեղծ, քանի որ դաշնակիցների իսկական մտադրությունը եղել է արաբական երկրների բաժանումը և նրանք օտարերկրյա տերերի տիրապետության՝ Սիրիան Ֆրանսիայի, Իրաքը Անգլիայի և Պաղեստինը միջազգային կառավարման ներքո

դնելը: Այնուհետև, Ջեմալը նշում է, որ միակ կուրսը, որ մնացել է արաբներին ընտրել՝ վերադարձն է օսմանյան գիրկը և նրանց օրինական իրավունքների ապահովումը՝ համաձայնության գալով թուրքերի հետ:

Նամակի վերջում Ջեմալը հրավիրում էր Ֆեյսալին անձամբ գալ Դամասկոս բանակցությունների համար, խոստանալով նրա անձի անվտանգության լրիվ ապահովում:

Նամակին կցված էր նաև մի էջ, որի վրա գրված էին թուրքական նոր առաջարկությունները, որի շուրջը պետք է Ֆեյսալը և Ջեմալը բանակցեին: Ջեմալն իր կառավարության անունից առաջարկում էր Օսմանյան կայսրության արաբական բոլոր վիլայաթներին լրիվ ինքնավարության շնորհում, որի շրջանակներում նրանց ազգային բոլոր պահանջները կբավարարվեին: Այնուհետև նա նշում էր, որ եթե այդ բանակցությունների արդյունքում համաձայնագիր ստորագրվի, որի մեջ Ջեմալը չէր տարակուսում, ապա նրա դրույթների կատարումը կերաշխավորվեր ոչ միայն թուրքական սուլթանի, այլև Գերմանիայի կառավարության կողմից:

Այնուհետև, նա «բացատրում» էր Ֆեյսալին և նրա միջոցով արաբներին, որ գոնե այժմ, երբ արդեն ամեն ինչ հայտնի է դարձել, «արաբ առաջնորդները պետք է գիտակցեն, որ նրանց համագործակցությունը դաշնակիցների հետ, որը նրանք պատկերացնում էին թե դա կբերի նրանց անկախություն, իրականում արաբական երկրներին առաջնորդում է դեպի ստրկացում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից»:

Ինչպես տեսնում ենք, Ջեմալը և թուրքական կառավարությունը ոչինչ չէին հասկացել և չէին պատկերացնում, թե ինչպիսի արմատական փոփոխություններ էին տեղի ունեցել արաբական իրականությունում, արաբների հոգեբանության և մտածելակերպի մեջ: Նրանք չէին ըմբռնում, որ արաբները բոլոր կամուրջներն արդեն այրել էին և վերադարձը թուրքերի գիրկը, որոնք այդ ընթացքում ավելի էին կատարելագործել իրենց դաժան պատիժների մեքենան, որոնք կախաղան էին հանել արաբական ազգային շարժման ղեկավարությունը, հազարավոր ընտանիքներ աքսորել, նրանց ունեցվածքը բռնագրավել, իսկ տասնյակ հազարավորների էլ բանտերը նետել, այդ բոլորից հետո կրկին վերադառնալ «թուրքերի գիրկը», հավասար էր համազգային ինքնասպանության:

Ջեմալի նամակի մեջ կար ուշագրավ մի հանգամանք ևս՝ նրա առաջարկությունն առ այն, որ արաբների՝ օսմանյան գիրկը վերադառնա-

լու պարագայում, նրանց իրավունքների երաշխավորները թուրքերի, նրանց սուլթանի հետ միասին, պետք է լիներ նաև Գերմանիան: Ուրեմն, Ջեմալը, որն իր նամակում դատապարտում էր Հուսեյնին այն բանի համար, որ նա պայմաններ էր ստեղծում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից արաբական երկրների ստրկացման համար, այժմ ինքն էր փորձում պայմաններ ստեղծել գերմանական ազդեցության տարածման և գերմանական տիրապետության հաստատման համար արաբական երկրներում՝ արաբներին երաշխիքներ տալու պատրվակով:

Ֆեյսալը Ջեմալի նամակը և իր պատասխանը նրան, նախապես ուղարկեց իր հորը: Հուսեյն թագավորն անմիջապես կողմնորոշվեց և որոշեց չընկնել թուրքերի թակարդը, վճռականորեն մերժելով նրանց հետ որևէ գործ ունենալ: Նա փոփոխություններ մտցրեց նաև Ջեմալին հասցեագրված Ֆեյսալի պատասխան նամակի մեջ, առաջարկելով նրան մերժել հաշտության մասին նրա առաջարկությունը: Միաժամանակ, Հուսեյնն այդ բոլոր փաստաթղթերի փաթեթն ուղարկեց Կահիրե՝ եգիպտոսում բրիտանական գլխավոր կոմիսար Ռեջինալդ Վինգեյթին, պահանջելով նրանից բացատրություններ Ջեմալի նամակում նշված անգլո–ֆրանս–ռուսական գաղտնի պայմանագրի մասին:

Գլխավոր կոմիսարը, նույնպես շփոթված այդ «նորությունից», հարցն ուղղեց բրիտանական Ֆորին Օֆիսին, գտնելով, որ դա ավելի շատ նրան է վերաբերում:

Սայքս–Պիկոյի համաձայնագրի և նրա բովանդակության հայտնի դառնալը արաբներին, ռումբի ազդեցություն գործեց նրանց վրա: Նրանք ապշած ու զայրացած էին, ու հասկացան, որ խաբված են և Անգլիան իր սովորության համաձայն երկդիմի քաղաքականություն է վարում:

Անգլիային իր պաշտոնական բողոքը հայտնեց Հուսեյն թագավորը, նշելով, որ ինքը «երբեք չի ճանաչի Ֆրանսիայի հետ կնքած որևէ պայմանագիր»:

Զայրույթն այնքան խորն էր, որ արաբական շատ սպաներ ու զինվորներ այլևս անհնար էին համարում անգլիացիների հետ կողք–կողքի պատերազմը շարունակել:

Ծանր դրության մեջ հայտնվեց նաև Անգլիան: Նա դիմեց մի շարք քայլերի, որոնց նպատակն էր փարատել արաբների կասկածանքները, մանավանդ կանխել արաբա–թուրքական սեպարատ բանակցությունները, որ սկսել էին արաբական որոշ բարձրաստիճան զինվորականներ:

Անգլիայի նպատակն էր շարունակել օգտագործել արաբների ռազմական ուժը Թուրքիայի դեմ դեռևս շարունակվող պատերազմում: Անգլիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը, անդրադառնալով խորհրդային կառավարության կողմից Սայքս–Պիկոյի համաձայնագրի հրապարակման հարցին, և ընդունելով, որ դա առաջացրել արաբների խոր զայրույթը, հետագայում իր հուշերում գրում էր. «Անհրաժեշտ էին նոր հավաստիացումներ, որպեսզի կանխվեր խզումն արաբների հետ»:

Անգլիան, սկզբում, լորդ Բալֆուրի շուրթերով, փորձեց հերքել Սայքս–Պիկոյի համաձայնագրի գոյությունն ընդհանրապես: Ապա հետևեց Ֆորին Օֆիսի պատասխանը Հուսեյնի հարցմանը, որ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանն էր փոխանցել Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Ռեջինալդ Վինգեյթը: Իսկ վերջինս էլ այդ պատասխանը հեռագրով փոխանցեց Հուսեյն թագավորին:

Բրիտանական պատասխանը երկիմաստ փաստաթուղթ էր և հարցին ուղղակի պատասխանելուց խուսափելու մի փայլուն օրինակ է: Վինգեյթի հեռագրում ամբողջ մեղքը բարդվում էր Ջեմալի վրա և արաբներին խորհուրդ էր տրվում նրա կողմից ներկայացվածը համարել որպես հերթական թուրքական խարդավանք: Բրիտանական պատասխանում բառացիորեն ասված էր հետևյալը. «Փաստաթղթերը, որ բոլշևիկները հայտնաբերել են Պետրոգրադում, արտաքին գործերի նախարարությունը չի համարում իսկապես կնքված համաձայնագիր, այլ համարում է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև նախնական կարծիքների և զրույցների գրառում, որը տեղի է ունեցել պատերազմի սկզբնական օրերին և նախքան արաբական ապստամբությունը՝ այն նկատառումով, որպեսզի խուսափեն բարդություններից պետությունների միջև Թուրքիայի դեմ պատերազմ մղելու ընթացքում:

Ջեմալ փաշան, տգիտությամբ կամ չար մտադրություններով, նենգափոխել է պետությունների (Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի — Ն. Հ.) միջև հասկացողության նախնական նպատակները... Նա անգիտացել է նաև այն փաստը, որ արաբական ապստամբության զարմանալի հաջողությունը, ինչպես նաև Ռուսաստանի ետ քաշվելը, վաղուց ստեղծել են բոլորովին այլ իրադրություն»:

Այս հարցի վերաբերյալ կա նաև Մեծ Բրիտանիայի կառավարության 1918 թ. փետրվարի 8–ի նոտան Հիջազի թագավոր Հուսեյնին, որտեղ դարձյալ դատապարտվում էին Թուրքիայի փորձերը գժտեցնել արաբներին իր դաշնակիցների հետ: Նրանում նշվում էր նաև, որ դաշնա-

կիցների նպատակն է հաստատ պաշտպանել բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման գործը և «նրանք վճռական են կանգնել արաբ ժողովրդի կողքին՝ նրա այն պայքարում, որ նրանք մղում են հանուն մի այնպիսի արաբական աշխարհի ստեղծման համար, որտեղ օրենքը կփոխարինի օսմանական անարդարությունը: Նորին Մեծության կառավարությունը վերահաստատում է իր նախկին պարտավորությունը արաբական ժողովուրդների ազատագրության վերաբերյալ»:

Դրանով, արաբների և Անգլիայի միջև ծագած կոնֆլիկտը՝ կապված Սայքս–Պիկոյի համաձայնագրի հետ, հարթվեց: Արաբները չխզեցին կապերը ոչ միայն Անգլիայի, այլև Ֆրանսիայի հետ, և շարունակեցին պատերազմական գործողությունները Թուրքիայի դեմ:

Հուսեյնի վարքագիծն այս կոնֆլիկտի առնչությամբ տարբեր գնահատականների է արժանացել, այդ թվում և քննադատական: Տիրապետող է այն տեսակետը, որ Հուսեյնը վստահում էր անգլիացիներին: Ամին Սաիդը գրում է, որ «ցավոք, Հուսեյնը շարունակում էր հավատալ անգլիացիների անկեղծությանը և բարեկամությանը»: Ջ. Անտոնիուսը, Անգլիայի պահվածքը և բրիտանական կառավարության քաղաքականությունը իրավացիորեն որակելով անազնիվ, իսկ բրիտանական ուղերձները Հուսեյնին գնահատելով որպես նրան խաբելու միտումնավորություն, նշում է, որ Հուսեյն թագավորը փաստորեն թույլ տվեց որ իրեն խաբեն: Նրա կարծիքով դրա պատճառները պետք է փնտրել այն բանում, որ Հուսեյնի մոտ անսասան էր հավատը բրիտանական ազնվության նկատմամբ:

Հետագայում Հուսեյնը պիտի փոշմանի և ափսոսա դրա համար, բայց դա արդեն ուշ կլինի:

8. Ռազմական գործողությունների վերսկսումը և անգլո–արաբական զորքերի նոր հաղթանակները

Թուրքական զորքերի պարտությունը Հիջազում, Պաղեստինում և Իրաքում արմատապես փոխեց ռազմական իրադրությունը հօգուտ արաբների և նրա դաշնակից անգլիացիների: Նրանք նախապատրաստական մեծ աշխատանքներ տարան 1918 թ. ընթացքում հարձակողական նոր գործողություններ ծավալելու համար:

Բացի մարտական պատրաստականությունից, որը հատկապես կարևոր էր արաբական բեդվինական բանակի համար, դաշնակիցներն

առանձնահատուկ նշանակություն էին տալիս քարոզչական աշխատանքների ծավալմանը՝ դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող արաբների շրջանում: Դրա նպատակն էր նախօրոք, նախքան դաշնակից զորքերի հայտնվելը, ապահովել արաբների անցումը նրանց կողմը: Այդ նպատակով պատրաստվում էին թռուցիկներ՝ արաբերեն լեզվով գրված, որոնք, այնուհետև, անգլիական ինքնաթիռները վերևից նետում էին ռազմաճակատի գծից այն կողմ, թուրքական բանակի թիկունքում գտնվող արաբական գյուղերի, քաղաքների և այլ բնակավայրերի վրա: Հատկապես մեծ արձագանք էին գտնում Հուսեյն թագավորի նամակները, որոնք այդ նույն ձևով տարածվում էին ռազմաճակատի մյուս կողմում գտնվող արաբների շրջաններում: Նրանցում կոչ էր արվում թուրքական բանակում ծառայող արաբ սպաներին ու զինվորներին, փախչել և ռազմաճակատի գիծն անցնելով, միանալ շերիֆական ուժերին և օգնել նրանց ու անգլիական զորքերին:

Դեռևս Աքաբայում գտնվող էմիր Ֆեյսալն իր հերթին, մի կողմից, աշխատելով իր բանակի մարտունակությունը համապատասխան մակարդակի բարձրացնելու ուղղությամբ, մյուս կողմից, ուժեղացնում էր իր կապերը ներքին Սիրիայում գտնվող ցեղապետերի հետ, ջանալով վերջնականապես նրանց իր կողմը գրավել: Այդ նպատակով նա իր հավատարիմ մարդկանց էր ուղարկում Սիրիա և նրանց օգնությամբ հուսալի կապեր հաստատում արաբական ազդեցիկ ցեղապետերի հետ, որոնց պարտականությունների մեջ էր մտնում նաև թուրքական բանակում ծառայող արաբ զինվորներին զանգվածային դասալքության հրահրելը:

Այս քաղաքականությունը տվեց իր դրական արդյունքներն արդեն 1917 թ.: Այսպես, օրինակ, Բեեր–Շեբբի արաբական ցեղերը, որոնք մինչև արաբական և բրիտանական քարոզչական արշավը սկսվելը պայքարում էին թուրքերի կողքին, լքեցին իրենց դիրքերը և անցան դաշնակիցների կողմը, մարտական դիրքեր գրավելով Ղազա շարժվող բրիտանական բանակի կողքին: Դա հանգեցրեց նրան, որ թուրքերը հարկադրված էին թողնել ալ–Արիշը, ուր մտան բրիտանական և արաբական զորքերը: Թուրքերը փորձեցին ամրանալ Մաղդաբայում, բայց դա նրանց չհաջողվեց, քանի որ արաբական զորքերն իրենց ամբողջ շարքերով լքեցին թուրքերին և անցան Հուսեյնի զորքերի կողմը:

1917 թ. վերջերին թուրքական բանակից արաբների դասալքությունը մեծ ծավալներ էր ընդունել: Նրանց մի մասն անձնատուր էր լի-

նում բրիտանացիներին, իսկ մի մասն էլ անցնում էր Աքաբա՝ միանալու Ֆեյսալի բանակին:

Այդ բոլորը մեծ անհանգստություն պատճառեց գերմանական հրամանատարությանը, որը որոշեց համապատասխան հակաքայլեր ձեռք առնել: 1917 թ. հոկտեմբերին գերմանական հրամանատարությունը Դամասկոսում հիմնեց Արաբական բյուրո, որը համալրվեց արաբական հարցերի գերմանական մասնագետներով: Գերմանացիներն ամենի ինչ իրենց ձեռքում կենտրոնացրին, քանի որ նրանք շատ ցածր կարծիքի էին Ջեմալ փաշայի քաղաքական ունակությունների մասին: Նույնը կարելի է ասել նաև նրա ռազմական կարողությունների վերաբերյալ: Գերմանիան հատկացրեց մի համապատասխան գումար հակաքարոզչության համար: Ավելի խիստ միջոցներ ձեռք առնվեցին արաբների դասալքությունը կանխելու ուղղությամբ, սահմանվեցին խիստ պատիժներ այն զինվորականների և քաղաքացիների համար, ովքեր կհամարձակվեին իրենց մոտ պահել անգլիական ինքնաթիռներից նետվող թռուցիկները: 1917 թ. նոյեմբերի 14–ին Ջեմալ փաշան, գերմանացիների ճնշման տակ, հրապարակեց մի կոչ՝ խոստանալով ներել բոլոր այն արաբներին, ովքեր հանձնվել էին Հուսեյն թագավորին, սակայն, երեսուն օրվա ընթացքում կվերադառնային իրենց նախկին զորամասերը:

Բայց այս հակամիջոցները ոչ մի արդյունք չտվեցին: Արաբների զանգվածային դասալքությունը շարունակվում էր: Այդ առթիվ շատ հետաքրքիր դիտողություն է արել Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար Լիման ֆոն Սանդերսը: Նա տալով ռազմական իրադրության ընդհանուր գնահատականը, ելնելով թուրքական բանակից արաբների զանգվածային դասալքության իրողությունից, նշել է, որ այնպիսի տպավորություն է ստացվում, որ բրիտանական ուժերը կարծես թե կռվում են բարեկամական երկրում, իսկ թուրքերը, որոնք պաշտպանում են իրենց սեփական երկիրը, կռվում են թշնամաբար տրամադրված բնակչության միջավայրում:

Ահա այսպիսին էր ընդհանուր քաղաքական մթնոլորտը, երբ 1917 թ. վերջերին Ալլենբին սկսեց հարձակողական գործողությունները, որոնք զուգակցվեցին արաբների հարձակողական գործողությունների հետ: Այս նոր հարձակումը Հիջազում, Պաղեստինում և Իրաքում ձեռք բերած ռազմական հաջողություններից հետո, չտեսնված խանդավառություն առաջացրեց արաբների մոտ: Շատ վայրերում, նախքան անգլիական և արաբական զորքերի մոտենալը, արաբական ցեղերն ապս-

տամբվում էին թուրքերի դեմ և անցնում Հուսեյն թագավորի արաբական և բրիտանական զորքերի կողմը: Այդպես վարվեցին ալ–հուվեյտար ցեղը՝ Օդե Աբու Թաբիի, ռուալ ցեղը՝ շեյխ Նուրի ալ–Շաալանի գլխավորությամբ, ալ–մաջալի ցեղը Կարկի շրջանում և այլն: Սիրիայի տարբեր քաղաքներից և գյուղերից զանգվածաբար անցնում էին ռազմաճակատի գիծը և միանում արաբական բանակին: Իրաքում արաբական և քրդական անկանոն զորաջոկատները սկսեցին ոչ միայն հեռանալ ռազմաճակատից, այլև միանալով արաբական բանակին, իրենց զենքն ուղղեցին թուրքերի դեմ:

1917 թ. վերջերի և 1918 թ. սկզբների հարձակողական գործողությունները ծավալվեցին Սիրիայում, որի հիմնական նպատակն էր Սիրիայի ազատագրումը՝ Լիբանանով հանդերձ:

Պետք է նշել, որ այդ ժամանակ կարևոր փոփոխություններ եղան Սիրիայում՝ թուրքական ղեկավարության մեջ: 1917 թ. դեկտեմբերին իր զբաղեցրած բոլոր պաշտոններից ազատվեց Ջեմալ փաշան, որը մեղավոր էր արաբական ճակատում թուրքերի կրած ռազմական պարտությունների, ինչպես նաև Սիրիայում տարվող քաղաքականության ձախողման համար: Սիրիայում ամբողջ ռազմական և քաղաքական իշխանությունն անցավ գերմանացիների ձեռքը՝ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Բայց արդեն ուշ էր՝ Թուրքիան գտնվում էր կատաստրոֆիկ վիճակում և արդեն կանգնած էր կործանման եզրին: Գերմանացիներն արդեն ոչինչ չէին կարող անել, մանավանդ որ նրանց դրությունը եվրոպական ճակատներում օրեցօր վատանում էր և նույնպես դառնում օրհասական:

1917 թ. վերջերին բրիտանական զորքերը լրիվ գրավեցին այն տարածքները, որոնք կազմում էին Երուսաղեմի սանջաքը: Երուսաղեմի հետ միասին, որը գրավվել էր դեկտեմբերի 9–ին, թուրքական տիրապետությունից ազատագրվեցին նաև Հեբրոն, Բեթղեհեմ և Յաֆա քաղաքները: Բնակչությունն ամենուր նրանց դիմավորում էր խանդավառությամբ: Բոլորը շտապում էին իրենց օգնությունն առաջարկել: Նրանց կողմն անցած արաբ սպաներն արժեքավոր տեղեկություններ էին հաղորդում թուրքական զորքերի, նրանց թվաքանակի, զինուժի և դասավորության մասին: Բրիտանական հրամանատարությունը Երուսաղեմի սանջաքում հատուկ գրասենյակներ բացեց Ֆեյսալի բանակին կամավորներ հավաքագրելու համար: Մարդիկ հոծ բազմություններով և ու-

ռախությամբ անդամագրվում էին արաբական բանակին և այդ առումով նրանց պատրաստակամությունը գերազանցեց բոլոր սպասելիքները:

1918 թ. հունվարին Ալլենբին հիմնական հարվածի ուղղություն ընտրեց Ամմանը, Հորդանանի ապագա մայրաքաղաքը: Նրան օգնություն էին ցույց տալիս արաբական զորքերը Ֆեյսալի հրամանատարությամբ: Սակայն այդ օպերացիան հաջողություն չունեցավ, գլխավորապես բրիտանական և արաբական զորքերի միջև փոխգործողությունների բացակայության պատճառով, և բրիտանական զորքերը ետ քաշվեցին Հորդանան գետի արևմտյան ափը: Իսկ Ֆեյսալը, հասկանալով, որ փոխգործողությունը անգլիական զորքերի հետ դեռևս չի ստացվում, որոշեց ռազմական գործողություններ ծավալել Մաանի ուղղությամբ, նպատակ ունենալով մեկուսացնել այդ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հորդանանյան քաղաքը, իսկ համապատասխան նախապատրաստությունից հետո գրավել այն: Բայց այդ տարի եղան սաստիկ սառնամանիքներ և մեծ քանակությամբ ձյուն տեղաց, որին սովոր չէին անապատի որդիները՝ բեդևիները: Դա ստիպեց Ֆեյսալին որոշ ժամանակով հետաձգել իր ծրագրերի իրագործումը:

Օգտվելով առիթից, գերմանա–թուրքական հրամանատարությունը ուժեղացրեց Մաանի կայազորը: Միաժամանակ Գերմանական արաբական բյուրոն իր գործակալներին ուղարկեց Ֆեյսալի զորքերի տեղակայված շրջանները, որոնք իրենց հետ ունեին մեծ քանակությամբ ոսկի: Առատորեն օգտագործելով ոսկին և գնելով զանազան մարդկանց, այդ գործակալները սկսեցին կասկածներ ու անվստահություն սերմանել բնակչության մեջ Ֆեյսալի և նրա արաբական զորքերի հանդեպ: Բայց նրանք առանձնակի հաջողության չհասան:

Թուրքական զորքերը իրենց ոչ մեծ ծավալի հակահարձակումներով փորձում էին բարելավել իրենց վիճակը: Սակայն, դա, բացի կորուստներից, նրանց ոչինչ չէր տալիս: Արաբներն ավելի ու ավելի էին ուժեղացնում ճնշումը Մաանի վրա և ավելի վտանգավոր դարձնում իրենց հարձակումները Հիջազյան երկաթուղու վրա: Դրա հետևանքով կրճատվեց գնացքների թվաքանակը այդ երկաթուղով, որը իջեցվեց շաբաթական մեկ գնացքի, որը նախկին տասնութ ժամվա փոխարեն, Դամասկոսից Մադինա հասնում էր հինգ շաբաթվա ընթացքում: Ստեղծված պայմաններում թուրքերը գտան, որ այլևս անիմաստ է պահել Մադինան և որոշեցին էվակուացնել այն:

Թուրքերի որոշումը Մադինան էվակուացնելու մասին, Ֆեյսալին հասավ 1918 թ. մարտի կեսերին և նա անմիջապես կռահեց, թե ինչ էր թաքնված դրա հետևում և ինչ էր ծրագրում իրականացնել գերմանա–թուրքական հրամանատարությունը: Նա ճիշտ հասկացավ, որ թուրքերի նպատակն էր Մադինայում գտնվող կայազորը՝ 12 հազար բավականին լավ զինված բանակ, դուրս բերել Մադինայից, որտեղ նրանք այլևս անելիք չունեին, և տեղափոխել այդ զորախումբը Մաան՝ միացնելով նրա 7 հազարանոց կայազորին: Դրանց կարող էին միանալ ևս 3 հազար թուրք զինվորներ, որոնք պաշտպանում էին Հիջազյան երկաթուղին: Այսպիսով, կստացվեր 22 հազար մարտիկներ հաշվվող մի մարտունակ բանակ՝ կենտրոնացված Մաանի մոտ և պատրաստ հարձակման, որը, հասկանալի է, ծանր դրության մեջ կդներ Ֆեյսալի բանակին և անգլիացիներին: Նա հասկանում էր, որ դա չպետք է թույլ տալ:

Ֆեյսալը խորհրդակցելով Թ. Լոուրենսի հետ, որը, ինչպես նաև անգլիական մեկ այլ սպա՝ Ջոյսը, դարձել էին նրա խորհրդատուները, կազմեց մի ծրագիր, որի խնդիրն էր անհապաղ հարձակողական գործողություններով մեկուսացնել Մաանը, կտրել նրա կապերը Մադինայի հետ և ի դերև հանել թուրքական ծրագրերը: Այդ ծրագրին հավանություն տվեց Ալլենբին և խոստացավ օգնություն ցույց տալ Ֆեյսալին:

Ֆեյսալի ծրագիրը նախատեսում էր կազմել երեք զորասյուն և հարձակվել Հիջազյան՝ Դամասկոս–Մադինա երկաթուղու վրա միաժամանակ երեք հատվածում: Դրա նպատակն էր կտրել երկաթուղին երեք տեղերից և դրանով արգելակել թուրքական զորքերի տեղափոխումը Մադինայից Մաան: Հարձակումը սկսվեց 1918 թ. ապրիլի սկզբներին: Հյուսիսային զորասյունը քանդեց երկաթուղին Մաանի և Ամմանի միջև, հարավայինը՝ Մաանից հարավ, մինչև Մուդավարա ընկած հատվածը, իսկ կենտրոնականը՝ գրավեց Մաանի արտաքին պաշտպանական կառույցները և քանդեց երկաթուղին նրանից անմիջապես հյուսիս և հարավ ընկած մասերում: Ապրիլի 20–ին Մաանը լրիվ մեկուսացված էր: Տասն օրվա ընթացքում Ֆեյսալի զորքերը ավերեցին 50 կամուրջ և քանդեցին 3 հազար ռելս: Թուրքերը մի քանի անգամ ձեռնարկեցին հակահարձակում, բայց դա ոչ մի հաջողություն չբերեց նրանց: Նրանք ունեցան մարդկային նշանակալի զոհեր և արաբներին գերի ընկան 450 ասկյարներ: Մադինան էվակուացնելու թուրքական ծրագիրը ձախողվեց, իսկ արաբներն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը Մաանի շրջանում:

1918 թ. մայիս–հունիս ամիսներին իրենց գործողություններն ակտիվացրին նաև Ֆեյսալի եղբայրները՝ Ալիի և Աբդալլահի զորաբանակները, որոնք հիմնականում կործանիչ բնույթ էին կրում: Նրանք քանդում էին ճանապարհները, կամուրջները, շենքերը և այլն, և արգելակում թուրքերի տեղաշարժերն ու գործողությունները: Աբդալլահը ծանր հարված հասցրեց թուրքերի դաշնակից Իբն Ռաշիդին, մասնավորապես նա ոչնչացրեց թուրքական մի լավ զինված ռազմագունդ՝ բաղկացած հետևակից և հեծելազորից, որը Մադինայից դուրս գալով, փորձում էր օգնության հասնել Իբն Ռաշիդին:

Բացի Մաանի կայազորից, բրիտանական և արաբական ուժերի դեմ՝ Հորդանան գետի երկու կողմերում, կանգնած էին թուրքական երեք բանակներ՝ VII բանակը՝ Մուսթաֆա Քեմալ փաշայի, Թուրքիայի ապագա պրեզիդենտի, հրամանատարությամբ, և VIII բանակը՝ Զևադ փաշայի հրամանատարությամբ, որոնք անմիջապես կանգնած էին բրիտանական ուժերի դեմ: Այդ երկու բանակը միասին ուներ 17 հազար զինվոր ու սպա: Իսկ Ֆեյսալի արաբական բանակի դեմ կանգնած էր թուրքական IV բանակը, բաղկացած 14 հազար զինվորներից ու սպաներից: Այսպիսով, արաբական բանակի դեմ կանգնած էին համարյա նույնքան ուժեր, որքան բրիտանական զորքերի դեմ: Սա խոսում է այն ծանրակշիռ դերակատարման մասին, որ արաբական ռազմական ուժերն ունեին թուրքական ռազմաճակատում: Ֆեյսալի բանակի կարևոր դերի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նա ամրանալով Մաանից արևելք ընկած տարածքում, ծածկում էր բրիտանական բանակի աջ թևը Պաղեստինում և պաշտպանում նրա երկարածիգ կոմունիկացիաները թուրքական հարձակումներից Հեբրոնի և Բեեր–Շեբբայի մատույցներում: Եվ, վերջապես, Ֆեյսալը, Ալին և Աբդալլահն իրենց զորքերով ու գործողություններով գամված էին պահում մեծաքանակ թուրքական զորքերի, որոնք այնքան կարևոր էին ու պետքական գերմանացի Լիման ֆոն Սանդերսին, որը 1918 թ. մարտի 1–ին նշանակվել էր թուրք–գերմանական ուժերի գլխավոր հրամանատար և իր շտաբ–կայանը հաստատել Նազարեթում:

Այս ընթացքում որակական փոփոխություններ կատարվեցին Ֆեյսալի բանակում: Ֆեյսալի և նրա ռազմական խորհրդականների քրտնաջան աշխատանքների հետևանքով, նա դարձել էր մարտունակ, կարգապահ և բավականին լավ զինված բանակ, որի կորիզը՝ 7000 զինվոր,

արդեն ոչ թե հիջազցիներ էին, այլ սիրիացիները, իրաքցիները և պաղեստինցիները:

1918 թ. սեպտեմբերին անգլիական զորքերը, որոնց կազմում գործում էր նաև ֆրանսիական մի բրիգադ և իտալական մի ոչ մեծ զորամաս (Իտալիան 1915 թ. մայիսին դուրս էր եկել եռյակ դաշինքից և միացել Անտանտին) և Ֆեյսալի բանակը, Ալլենբիի ընդհանուր հրամանատարությամբ անցան հարձակման: Նրանք մեկը մյուսի հետևից գրավեցին Ամմանը, Մաանը, Դերաան և այլ կարևոր կենտրոններ:

Սկսվեցին վերջին վճռական մարտերը Պաղեստինը, Հորդանանը, Սիրիան և Լիբանանն ազատագրելու համար:

9. Արարայի ճակատամարտը: «Հայ զինվորների սքանչելի կեցվածքը»

1918 թ. սեպտեմբերի 19–ին անգլիական բանակը հարձակման անցավ Նաբլուսի մոտ՝ Ռաֆաթի և Արարայի շրջանում, և կարողացավ ճեղքել գերմանա–թուրքական ճակատը: Այստեղ անգլիական զորքերի հետ կողք–կողքի, առաջին անգամ ճակատամարտին մասնակցեց և իր մարտական մկրտությունը ստացավ Արևելյան կամ Հայկական լեգեոնը:

Արևելյան լեգիոն ստեղծելու մասին որոշումն ընդունվել էր 1916 թ. նոյեմբերի 26–ին, Հայ ազգային պատվիրակության, որը գլխավորում էր Պողոս Նուբարը, և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության միջև ձեռք բերված համաձայնագրի հիման վրա: Այդ համաձայնագրի մեջ ասված էր, որ ֆրանսիական կառավարությունը որոշել է քաջալերել հայերի և սիրիացիների թուրքերի դեմ պայքարելու բաղձանքները: Լեգեոնը մասնակցելու էր միայն Ասիական Թուրքիայում՝ սիրիա–պաղեստինյան ռազմաճակատում մղվող ռազմական գործողություններին, և նրա բոլոր ծախսերը հոգալու էր ֆրանսիական կառավարությունը: Լեգեոնը կազմավորվում էր կամավորության սկզբունքով, որի անդամներ կարող էին դառնալ հայերը և արաբները: Հրամանատարները կարող էին լինել ֆրանսիացիները: Լեգեոնի ընդհանուր հրամանատար նշանակվեց ֆրանսիական բանակի գնդապետ Ռոմիյոն:

Լեգեոնի մեծամասնությունը կազմում էին հայերը՝ 3000 զինվոր, այդ պատճառով էլ նա հաճախ կոչվում է նաև Հայկական լեգեոն: Լեգեոնը կազմավորելիս, ֆրանսիական իշխանությունները խոստացել էին հայերին ինքնավարություն շնորհել Կիլիկյան Հայաստանին պատե-

ռազմի ավարտից հետո, որը, ըստ Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագրի, պետք է անցներ ֆրանսիական տիրապետության տակ:

Այդ հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ լեգեոնին հայերի կամավոր անդամակցելու գործում:

Հայ–սիրիական այս զորախումբը, որի կորիզը, ինչպես նշվեց կազմում էին հայ զինվորները, ռազմական դիրքեր գրավեց Արարա սարի մոտ՝ Նաբլուսից հարավ: Ավելի քան 12 ժամ նրանք համառ դիմադրություն էին ցույց տալիս թուրքական կանոնավոր բանակի զորքերին, հերոսաբար ետ մղում նրան հարձակումները, որից հետո, թուրքական զորքերը, ինչպես ռազմաճակատի մյուս հատվածներում, այնպես էլ այստեղ, չդիմացան և փախուստի դիմեցին:

Հայկական լեգեոնի մարտական գործողությունները բարձր գնահատանքի արժանացավ գնդապետ Ռոմիոյի կողմից: «Վաշտը,— հայտարարեց նա,— այս դիրքը (նկատի ունի Արարայի մոտ — Ն. Հ.) գրավեց անսպասելիորեն գեղեցիկ խանդով մը և պահեց զայն Արարայի ահեղ հարվածներու տակ, զոր գերմանացիք թրքական դիմադրության զորավոր առանցքըն ըրած էին այն բաժնին մեջ, ուր այդ դիմադրությունը խորտակվեցավ»: Շարունակելով ռազմական այդ գործողության վերլուծությունը, ֆրանսիական գնդապետը հաստատում է, որ «Ավելի քան տասներկու ժամվա ընթացքին սքանչելի կեցվածքը, հակառակ իր կորուստներուն, կարելի ընծայեց իրականացումը թշնամուն կասեցնելու իր առաքելությունը, որով կռվին շարունակությունը վաշտին կողմե ավելորդ եղավ»: Գնդապետ Ռոմիյոն վերջում ավելացնում է, որ հայ հերոսները բոլորն էլ պատերազմի առաջին գծի վրա ընկան՝ իրենց երեսը դեպի թշնամին և դրանով օրինակ հանդիսացան ուրիշների համար:

Արարայի ճակատամարտից հետո ևս Հայկական լեգեոնը մասնակցել է արաբների հակաթուրքական ազատագրական պատերազմին: 1918 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին նա դաշնակիցների զորքերի հետ հասել է Կիլիկիա և ազատագրել մի շարք կարևոր նշանակություն ունեցող բնակավայրեր: Այդ ընթացքում նրա թվաքանակն աճել էր և հասել 5000, որոնք խմբավորված էին 4 գումարտակներում:

Սակայն, Ֆրանսիան դրժեց իր խոստումը՝ պատերազմի ավարտից հետո Հայկական Կիլիկիային ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ, իսկ Հայկական լեգեոնը դադարեցրեց իր գոյությունը:

Հայ լեգեոներներն իրենց խաբված էին զգում, սակայն, նրանց համար մեծ մխիթարություն էր այն հանգամանքը, որ նրանք իրենց ա-

ությունը հեղելով արաբական հողի վրա, դրանով իրենց անգնահատելի լուման ներդրեցին թուրքերի պարտության և թուրքական լծից արաբների ազատագրության գործում:

10. Խան Թումանի հաղթանակը՝ ռևանշ Մարջ Դաբիքի պարտության դիմաց

1918 թ. սեպտեմբերին սկսված ընդհանուր հարձակման և թուրքական ճակատի ճեղքման հետևանքով, անգլիական զորքերը գրավելով Նաբլուսը, Նազարեթը և այլ բնակավայրեր, շարունակեցին հաղթականորեն շարժվել դեպի հյուսիս: Նազարեթում էր գտնվում, ինչպես նշվել է, գերմանական և թուրքական ռազմական ուժերի գլխավոր հրամանատար Լիման ֆոն Սանդերսի շտաբը: Անգլիացիները բոլորին գերի վերցրեցին և միայն Լիման ֆոն Սանդերսին հաջողվեց պատահականորեն փրկվել գերությունից:

Իսկ Ֆեյսալի արաբական 15 հազարանոց հեծյալ բանակը Մաանն ազատագրելուց հետո, մեծ երթ կատարեց և հայտնվեց Դերաայի շրջանում՝ Ամմանի և Դամասկոսի միջև, փակելով թուրքական IV բանակի նահանջի ուղին: Անգլիական և արաբական զորքերը շրջափակման մեջ վերցրեցին թուրքական–գերմանական բանակի մի մեծ զորախումբ, որը շուտով անձնատուր եղավ նրանց: Գերի հանձնվեցին 72 հազար թուրք և 4 հազար գերմանացի զինվոր ու սպա:

Անգլիական և արաբական զորքերի համար զգալի օգնություն հանդիսացան արաբական ցեղերի ապստամբությունները, որոնք խնամքով նախապատրաստվել էին Ֆեյսալի և նրա համախոհների կողմից: Այդ առումով առանձնանում է դրուզների ապստամբությունը Ջեբել Դրուզում 1918 թ. սեպտեմբերին՝ Սուլթան ալ–Աթրաշի գլխավորությամբ: Թուրքերն այստեղ գլխովին պարտություն կրեցին:

Արաբական և անգլիական զորքերի առաջխաղացումը հյուսիս անկասելիորեն զարգանում էր, որի նպատակը Դամասկոսի ազատագրումն էր: Դամասկոսի արվարձանների մոտ ավելի շուտ հայտնվեցին արաբական հեծյալները, որոնք գիշերվա ժամը 3:30–ին մտան Դամասկոս: Հաջորդ օրը ժամանեցին նաև անգլիական զորքերը:

1918 թ. հոկտեմբերի 3–ին Դամասկոս ժամանեց էմիր Ֆեյսալը: Նրա մուտքը կազմակերպվել էր մեծ շուքով: Հուսեյնի վայելչակազմ որդին Դամասկոս մտավ արաբական ընտիր սպիտակագույն նժույգի վրա՝

1500 արաբական հեծելազորի գլուխն անցած: Մայրաքաղաքի բնակչությունը դուրս էր հորդել դիմավորելու Ֆեյսալին, որը նրանց աչքում հերոսի մարմնավորում էր հանդիսանում: Նրան դիմավորեցին խանդավառությամբ և ուրախության բացականչություններով: Թուրքական դրոշներն ամենուր իջեցվեցին և Արաբական խալիֆայության երբեմնի մայրաքաղաքի վրա փողփողաց Հուսեյն թագավորի սև, սպիտակ, կանաչ արաբական եռագույն դրոշը:

Դա պատմական պահ էր, որն իրենով նշանավորում էր թուրքական չորսհարյուրամյա տիրապետության ավարտը:

Սակայն Սիրիան դեռևս լրիվ ազատագրված չէր և թուրքերն էլ դեռևս վերջնականապես դուրս չէին շպրտվել Սիրիայից ու արաբական մյուս տարածքներից: Ուստի, պատերազմական գործողությունները շարունակվում էին: 1918 թ. հոկտեմբերին թուրքերից մաքրվեցին Դամասկոսից հյուսիս ընկած արաբական տարածքները, քաղաքներն ու գյուղերը: 1918 թ. հոկտեմբերի 8–ին ազատագրվեց Բեյրութը: Շարունակելով հաղթարշավը սիրիական տարածքում, արաբա–անգլիական զորքերը 1918 թ. հոկտեմբերի 11–ին ազատագրեցին Հոմսը, իսկ հոկտեմբերի 17–ին՝ Համան, ու ընդհուպ մոտեցան Հալեբին:

Հալեբից հարավ, Խան Թումանի մոտ, պաշտպանական ուժեղ դիրքեր էին գրավել թուրքական պարտված զորքերի մնացորդները՝ Մուսթաֆա Քեմալ փաշայի հրամանատարությամբ:

Պատմությանը հաճո եղավ, որ հենց Հալեբի մոտ, ինչպես 1516 թ., տեղի ունենա վճռական ճակատամարտը թուրքական և արաբական բանակների միջև:

1918 թ. հոկտեմբերի 25–ին՝ Խան Թումանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, արաբները գլխովին ջախջախեցին թուրքերին և ազատագրեցին սիրիական փառահեղ պատմություն ունեցող Հալեբ քաղաքը: Արաբները ռնանշ վերցրեցին 1516 թ. Հալեբի մոտ՝ Մարջ Դաբիկում, կրած պարտության համար:

Եթե օսմանյան սուլթան Սելիմ I–ի հաղթանակը Մարջ Դաբիկի մոտ արաբական երկրների նվաճման սկիզբը դրեց, ապա չորս հարյուր տարի անց՝ 1918 թ., Խան Թումանի մոտ թուրքերի դեմ տարած հաղթանակով վերջակետ դրվեց թուրքական տիրապետությանը արաբական երկրների վրա:

11. Արևելագիտական պատմագիտական գրականության մեջ թուրքերի նկատմամբ տարած հաղթանակներում արաբական ապստամբության նշանակության գնահատականի շուրջը

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությանը մեծապես նպաստեցին արաբական մեծ ապստամբությունը, արաբական բանակի և պարտիզանների գործողությունները: Թուրքիայի պարտությունը արաբական ռազմաճակատներում՝ Պաղեստինում, Անդրհորդանանում, Սիրիայում, ինչպես նաև Իրաքում, անհնար է պատկերացնել առանց արաբների հակաթուրքական գործողությունների: Դա մեծ, կարելի է ասել, անգնահատելի օգնություն էր Անտանտի երկրներին, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ արաբական ռազմաճակատներում թուրքական զորքերը միայնակ չէին գործում: Նրանք ունեին այնպիսի աջակիցներ և հմուտ ռազմական խորհրդականներ, ինչպիսին Թուրքիայի դաշնակից գերմանացիներն էին, որն ավելի վտանգավոր ու սպառնալից էր դարձնում թուրքական զորքերի գործողությունները պատերազմի այս հատվածում:

Արևելագիտական պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն արաբական ապստամբության նշանակության և այն դերի վերաբերյալ, որ նա խաղաց պատերազմում Թուրքիայի ջախջախմանգ գործում: Որոշ արևմտյան հեղինակներ փորձում են թերագնահատել նրա նշանակությունը կամ մեծ վերապահումով են մոտենում նրա խաղացած դերին: Այդպես է վարվում, օրինակ, Ջ. Մարլոուն «Արաբ նացիոնալիզմը և բրիտանական իմպերիալիզմը» իր աշխատության մեջ:

Սակայն, բարեբախտաբար, պատմաբանների, ինչպես նաև ռազմական և քաղաքական գործիչների մեծ մասը բարձր է գնահատում արաբների մատուցած ծառայությունները Անտանտի երկրներին և օբյեկտիվորեն է գնահատում նրանց դերակատարումը արաբական ռազմաճակատներում:

Անգլիական պատմաբան և քաղաքական գործիչ Ռ. Բուլարդը գրում է, որ «Արաբական ապստամբությունը փոքր նշանակություն չունեցավ դաշնակիցների համար»: Իսկ Թ. Լուորենսը, որը էմիր Ֆեյսալի խորհրդականն էր և քիչ բան չի արել արաբական ապստամբության ծավալման գործում, շատ բարձր գնահատական է տալիս արաբական ապստամբությանը «Իմաստության յոթը սյուները» իր աշխատության

մեջ, որտեղ նա գրում է. «Արաբական ապստամբությունը արևելյան պատերազմում մեր հաղթանակի գլխավոր գործիքն էր»: Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Դ. Հոգարթը, որը արաբական ռազմաճակատներում ծավալված գործողությունների ակտիվ մասնակիցներից էր և այն քիչ մարդկանցից մեկը, որ քաջածանոթ էր արաբական ապստամբության ծալքերին, ընդգծում է, որ «Արաբական ապստամբությունը, եթե որևէ այլ բան արած չլիներ, քան 1916 թ. դեպի Հարավային Արաբիա թուրքերի և գերմանացիների համատեղ արշավանքի ծախողումը, ապա դա բավական է, որ մենք նրանց ավելի պարտական լինենք, քան արել ենք դա մինչև օրս»: Նույնպիսի բարձր գնահատական է տալիս Գ. Բելը, որը մեծ դերակատարում է ունեցել այդ ժամանակաշրջանում և հետագա տարիներին արաբական երկրներում: Նա դեռևս 1916 թ. հունիսի 25–ին, արաբական ապստամբությունը սկսվելուց 20 օր անց գրած իր նամակներց մեկում, չի կարողանում թաքցնել իր ուրախությունը արաբական ապստամբությունը սկսվելու առիթով, շատ լավ հասկանալով, թե դա ինչպիսի կարևոր դեր կարող է խաղալ հակաթուրքական ռազմական թատերաբեմում: «Այս շաբաթ,— գրում է նա,— լուրերը Մեքքայից շատ հետաքրքրական էին: Սուրբ վայրում սկսված ապստամբությունը հսկայական քաղաքական և բարոյական նվաճում է»:

Արաբական ապստամբությանը համանման բարձր գնահատականների են արժանացրել նաև Անգլիայի և Ֆրանսիայի պետական և ռազմական գործիչները, որոնք իրենց աշխատանքների բերումով մշտական շփումների մեջ են եղել արաբական ապստամբության ղեկավարների՝ Հիջազի թագավոր Հուսեյնի, նրա որդիների՝ էմիրներ Ալիի, Աբդալլահի և Ֆեյսալի, ինչպես նաև արաբական առանձին ականավոր և ազդեցիկ ցեղապետերի հետ:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը, 1919 թ, սեպտեմբերի 15–ին, հինգ մեծ պետությունների՝ ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների հանդիպման ժամանակ հայտարարեց, որ արաբների ապստամբությունը շատ անհանգստություն պատճառեց թուրքերին և նյութական մեծ օգնություն ցուցաբերեց անգլիական զորքերին: Այնուհետև, նա խոստովանեց, որ «Դրանով իսկ, արաբները լրիվ կատարեցին իրենց խոստումները»:

Իսկ Եգիպտոսում անգլիական էքսպեդիցիոն ուժերի հրամանատար Ալլենբին, որը 1917 թ. ստանձնեց նաև Մերձավոր Արևելքում դաշնակից բոլոր ուժերի գլխավոր հրամանատարի պարտականություններ-

ը, Փարիզում արած իր հայտարարության մեջ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակիցներին արաբների օգնությունը համարեց անգնահատելի:

Արաբական ապստամբության նշանակությունն ըստ արժանվույն են գնահատել նաև Ֆրանսիայի ներկայացուցիչները: Մասնավորապես, Հիջազում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Բրեմոնը, անդրադառնալով դեպի Եմեն թուրք–գերմանական էքսպեդիցիային, որի հաջողության դեպքում, ինչպես նշում է նա, Թուրքիան և Գերմանիան կշրջափակեին Կարմիր ծովը և հնարավորություն կստեղծվեր Գերմանիայի համար ռազմական գործողություններ սկսել Հնդկական օվկիանոսի ավազանում, արձանագրում է. «Բարեբախտաբար, Հիջազի ապստամբությունը ձախողության մատնեց այդ էքսպեդիցիան, և դրանով իսկ նա, անկասկած, մեծ ծառայություն մատուցեց դաշնակիցների գործին»:

Սըր Արչիբալդ Մուրեյը, որը մի կարճ ժամանակ դաշնակիցների ուժերի ընդհանուր հրամանատարն էր ռազմաճակատի արաբական հատվածներում, սկզբում լուրջ չէր ընդունում արաբական ապստամբությունը և նրան լավ չէր վերաբերվում, հետագայում, մանավանդ Ֆեյսալի հաջող ռազմական գործողություններից հետո, հարկադրված էր փոխել իր դիրքորոշումը և, ինչպես նշում է Թ Լուորենսը, «գիտակցել, որ ավելի շատ թուրքական զորքեր են կռվում արաբների դեմ, քան թե իր (Արչիբալդ Մուրեյի — Ն. Հ.) դեմ»:

Իսկ Ջ Անտոնիուսի «Արաբական զարթոնքը» արժեքավոր աշխատությունը, որը գրված է եզակի սկզբնաղբյուրների, արաբական բարձրագույն ղեկավարության հետ նրա ունեցած զրույցների գրառումների վրա, որոնք նույնպես հազվագյուտ արժեք են ներկայացնում, և որի շնորհիվ, Ջ. Անտոնիուսի աշխատությունը որոշ իմաստով նույնպես սկզբնաղբյուրի նշանակություն է ձեռք բերում, ահա այս աշխատությունը ծայրից ծայր ողողված է արաբական ապստամբության մասին գովեստներով: Հեղինակը, որն ուղղակի փայլում է մարդկանց, դեպքերի և իրադարձությունների լավատեղյակությամբ, և աչքի ընկնում իր օբյեկտիվությամբ, և շատ բարձր է գնահատում արաբների ներդրումը թուրքերի դեմ տարած հաղթանակի մեջ, իր տեսակետը արաբական ապստամբության մասին, խտացված կերպով, արտահայտել է հետևյալ, բանաձևի իմաստ ունեցող, մտքի մեջ՝ «Արաբական անընդմիջվող ժապավենը ձգվում էր Կարմիր ծովից մինչև Պարսից ծոց,

այդ երկու ջրային ուղիներն անվտանգ դարձնելով դաշնակիցների փոխադրությունների համար»:

Արաբական ապստամբությունը և արաբական զորքերի մասնակցությունը ռազմական գործողություններին Պաղեստինում, Անդրհորդանանում և Սիրիայում, իրոք, կարևոր գործոն հանդիսացավ թուրքերի և նրանց դաշնակից գերմանացիների դեմ հաղթանակի հասնելու մեջ:

12. Սիրիական առաջին ազգային կառավարության ստեղծումը և տարաձայնությունների նոր փուլը արաբների և դաշնակիցների միջև

Դամասկոսը և Սիրիան ազատագրելուց հետո արաբների մոտ կասկած չկար, որ հասել էր իրենց անկախ պետությունը ստեղծելու ժամը: Այդ մտայնությունը նրանց մեջ ավելի ամրապնդվեց, երբ Անգլիան պաշտոնապես հերքեց արաբական տերիտորիաները բաժանելու վերաբերյալ Սայքս–Պիկոյի անգլո–ֆրանսիական համաձայնագրի գոյությունը և հավաստիացրեց, որ Անգլիան սատարում է արաբների ազատագրությանը և ընդհանրապես դեմ չէ արաբական անկախ պետության ստեղծմանը: Խանդավառ սիրիացիները ձեռնամուխ եղան ազգային պետական մարմինների կազմավորմանը:

Սակայն արաբների մեջ կային տարբեր ուժեր, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր ձեռքը վերցնել Սիրիայի կառավարման գործը:

Դրա մասին է վկայում այն փաստը, որ երբ Ֆեյսալի զորքերը մտան Դամասկոս, այնտեղ արդեն գոյություն ուներ «արաբական կառավարություն»՝ Աբդ ալ–Կադր և Մուհամմադ Սաիդ ալ–Ջազաիրի եղբայրների գլխավորությամբ, որը ստեղծել էին թուրքերն իրենց կողմնակիցներից Դամասկոսը թողնելուց առաջ՝ Ջեմալ փաշայի կարգադրությամբ:

Ֆեյսալը և նրա կողմնակիցները, որոնք կազմակերպել ու ղեկավարել էին արաբական ապստամբությունը, իրենց ուսերի վրա տարել թուրքերի դեմ մղված պատերազմի ամբողջ ծանրությունը, բնականաբար, չէին կարող հանդուրժել, որ իրենց փոխարեն իշխանությունը գրավեն այլ ուժեր և այն էլ պարտություն կրած թուրքերի պարտադրանքով:

1918 թ. հոկտեմբերի 1–ին Լուրենսը և էմիր Նասերը, որը Ֆեյսալի մերձավոր զինակիցներից մեկն էր, տեսակցություն ունեցան Մուհամմադ Սաիդ ալ–Ջազաիրիի հետ և պահանջեցին նրանից հրաժարվել

այսպես կոչված «արաբական կառավարության» ղեկավարի պաշտոնից, իսկ կառավարությունն էլ ցրել: Ալ–Զազահիրին բուռն կերպով փորձում էր պաշտպանել իր «իրավունքները» և հիմնավորել իր կառավարության «օրինական» լինելը: Սակայն, Լուորենսն այդ կառավարությունը հայտարարեց տապալված և Ֆեյսալի անունից Սիրիայի ռազմական կառավարիչ նշանակեց գեներալ Ալի Ռիզա ալ–Ռիկաբիին:

Ալ–Զազահիրի եղբայրները և նրանց կողմնակիցները հոկտեմբերի 2–ին ապստամբվեցին, նպատակ ունենալով տապալել շերիֆյաններին և իշխանությունը կրկին վերցնել իրենց ձեռքը: Սակայն այդ ապստամբությունը Ֆեյսալի զորքերի կողմից ճնշվեց առանց բարդությունների: Աբդ ալ–Կադրը մահապատժի ենթարկվեց, իսկ Մուհամմադ Սաիդը բանտ նետվեց:

Շերիֆյանների հաջորդ քայլը հանդիսացավ արաբական իշխանության հաստատումը Բեյրութում և Լեռնալիբանանում: Էմիր Ֆեյսալի հանձնարարությամբ 1918 թ. հոկտեմբերի 2–ին ռազմական մի ջոկատով Բեյրութ մեկնեց Շուքրի ալ–Այուբին: Նա Բեյրութ հասավ հոկտեմբերի 4–ին, որտեղ արդեն Ումար Դաուքը կազմել էր արաբական կառավարություն: Բեյրութում նույնպես բարձրացվեցին Հուսեյնի արաբական դրոշները: Այնուհետև, ալ–Այուբին իր իշխանությանը ենթարկեց նաև Լեռնալիբանանը, որտեղ տեղապահ նշանակեց Հաբիբ աս–Սաադին:

Այստեղ կրկին անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, որ այդ ժամանակ երբ արաբները Սիրիա էին ասում, հասկանում էին ոչ միայն կոնկրետ այն տերիտորիան, որը զբաղեցնում է ժամանակակից Սիրիան, այլև Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը: Այդ պատճառով էլ էմիր Ֆեյսալը Դամասկոսում իր իշխանությունը հաստատելուց հետո, իր ներկայացուցչին ուղարկեց Լիբանան, այնտեղ նույնպես իր իշխանությունը հաստատելու համար:

1918 թ. հոկտեմբերի 3–ին Դամասկոս ժամանեց գեներալ Ալլենբին, որը «Օթել Վիկտորիայում» անմիջապես հանդիպում ունեցավ էմիր Ֆեյսալի հետ: Ալլենբին էմիրի հետ քննարկեց Սիրիայի ապագա կառուցվածքի հետ կապված մի շարք շատ կարևոր հարցեր: Ալլենբին այդպիսի փութաջանությամբ էր քննարկում այդ հարցերը, քանի որ նա կարգադրություն էր ստացել իր երկրի արտաքին գործերի նախարարությունից՝ ամեն կերպ զսպել Ֆեյսալի և արաբների շատ հեռուն գնացող քաղաքական ձգտումները: Զրույցի թեման և արդյունքները ուղղակի հիասթափեցրին արաբներին: Ալլենբին զարմացած Ֆեյսալին տեղյակ

պահեց, որ իր զորքերի կողմից գրաված տարածքները, քանի դեռ պատերազմը չի ավարտվել, համարվում են «թշնամու օկուպացված տերիտորիաներ», որտեղ գերագույն իշխանությունը պատկանում է Անգլիային: Շարունակելով Ֆեյսալին բացատրել իրադրությունը, Ալլենբին փաստորեն նրան շարադրում է Սայքս–Պիկոյի համաձայնագրի պայմանները՝ առանց պայմանագրի անունը հիշելու: Նա Ֆեյսալին հայտնում է, որ Լոնդոնից հրահանգ է ստացել թույլատրել ֆրանսիացիներին իրենց վերահսկողությունը հաստատել Դամասկոս–Հոմս–Համա–Հալեբ գծից արևմուտք ընկած ամբողջ տերիտորիայի վրա, ներառյալ Բեյրութը և ամբողջ Լիբանանը: Այնուհետև Ալլենբին տեղյակ է պահում Ֆեյսալին, որ ըստ Անգլիայի և Ֆրանսիայի միջև կայացած համաձայնության, Ֆրանսիան համարվում է հովանավորող պետություն Սիրիայի այն տերիտորիայի վրա, որն ընդգրկում է Հալեբ, Համա, Հոմս և Դամասկոս քաղաքներն ու նրանց և նրանց շրջակա տարածքները, բայց այստեղ կարող է ստեղծվել արաբական պետություն Ֆեյսալի գլխավորությամբ:

Այս նորություններից Ֆեյսալն ուղղակի ցնցված էր և նա Ալլենբիին ասաց, որ նրա պահանջներն անընդունելի են արաբների համար: Սակայն Ալլենբին մնաց անդրդվելի, և Ֆեյսալի մոտ հույսի ոչ մի նշույլ չթողեց, հայտարարելով, որ ինքը Պաղեստինում և Սիրիայում անգլիական զորքերի գլխավոր հրամանատարն է և բոլորը պարտավոր են ենթարկվել նրա հրամաններին:

Այսպես ավարտվեց Ալլենբի–Ֆեյսալ առաջին հանդիպումը: Արաբներին ոչինչ չէր մնում անել, քան ենթարկվել Անգլիայի պահանջներին, որոնք հրամանի պարտադրանք ունեին:

Ի կատարումն Ալլենբիի պահանջների, 1918 թ. հոկտեմբերի 8–ին Բեյրութից հեռացվեց Շուքրի ալ–Այուբին, որին Ֆեյսալն ուղարկել էր Լիբանան՝ արաբական իշխանություն հաստատելու համար: Գիշերվա մթության մեջ իջեցվեցին Հուսեյնի արաբական դրոշները, որոնց փոխարեն բարձրացվեցին ֆրանսիական դրոշները, իսկ Բեյրութում, Սայդայում և Տյուրոսում նշանակվեցին ֆրանսիական ռազմական կառավարիչներ: Բեյրութում ֆրանսիական ռազմական կառավարիչ նշանակվեց ֆրանսիական բանակի գնդապետ Պյեպապը: Մինչ այդ, 1917 թ. ապրիլի 9–ին, ֆրանսիական կառավարությունը Ժորժ Պիկոյին՝ Մարկ Սայքսի հետ ստորագրած գաղտնի համաձայնագրի հեղինակներից մեկին, նշանակել էր ֆրանսիական գլխավոր կոմիսար Պաղեստինում, Սիրիայում և Հայաստանում (Կիլիկիա) գլխավոր կոմիսար:

պատերազմը: Իսկ ինչ վերաբերում է արևելյան կամ արաբական ռազմաճակատին, ապա այստեղ, ինչպես ցույց տրվեց աշխատության նախորդ էջերում, Թուրքիան 1918 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին, կրելով մի շարք պարտություններ, արաբական և անգլիական բանակների կողմից, գործնականում կորցրեց ամեն ինչ:

Թուրքիան այլևս ոչ թե կայսրություն էր՝ «Օսմանյան կայսրություն» անվան տակ, այլ Փոքր Ասիայում սեղմված և շագրենի կաշվի պես կրճատվող, հոգևարքի մեջ գտնվող մի կազմավորում էր: Նա այլևս չուներ մարտունակ բանակ: Դրա փոխարեն, բազմաթիվ պարտություններից հետո, մնացել էր բարոյալքված, բզկտված, հոգնած, կիսամերկ ու կիսաքաղց մի զանգված, որը ցանկության դեպքում անգամ հնարավոր չէր բանակ կամ ռազմական ուժ անվանել:

Երիտթուրքերի ղեկավարությունը, երիտթուրքական Թալեաթ–Էնվեր–Ջեմալ եռապետությունն իրենց անհեռատես, ռասայական, բռնի թուրքացման ու պանթուրքիզմի, անհամար ջարդերի ու կոտորածների, հայոց ցեղասպանության քաղաքականության, արաբների, ասորիների, հույների և մյուս ժողովուրդների ցեղասպանության փորձերի քաղաքականության արդյունքում ստացան այն, ինչ որ կարելի էր ստանալ՝ կատաստրոֆա: Ստեղծված պայմաններում խոսքը գնում էր ոչ թե ռազմական պարտության մասին սովորական իմաստով, որով այնքան հարուստ է մարդկության պատմությունը, այլ քաղաքական մահվան և աշխարհի քարտեզից ընդմիշտ անհետանալու մասին: Օսմանյան կայսրությունը փլուզվեց և կործանվեց:

Այդ պատմական քաղաքական կարևոր իրողության իրավաբանական ձևակերպումը հանդիսացավ Մուդրոսի զինադադարը, որը կնքվեց 1918 թ. հոկտեմբերի 30–ին, Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում խարիսխ նետած անգլիական «Ագամեմնոն» ռազմանավի վրա: Զինադադարը կնքվեց Թուրքիայի և Անտանտի միջև: Բայց Անտանտը ներկայացնում էր միայն Անգլիան: Անգլիական ծովակալ Կալթորպը թույլ չտվեց անգամ Ֆրանսիայի ներկայացուցչին բարձրանալ նավի վրա և գոնե ներկա լինել հրադադարի ստորագրման արարողությանը: Անգլիացիները նույն կերպ վարվեցին նաև արաբների հետ, թեև նրանց ավելի քան երկու տարի տևած ակտիվ մասնակցությունը Թուրքիայի դեմ ուղղված պատերազմական գործողություններին, նրանց տարած հաղթանակները, մարտերում տված բազմաթիվ զոհերը և պատերազմի պատճառով կրած զրկանքները, նրանց տալիս էր այդ իրավունքը՝ մաս-

նակցելու զինադադարի ստորագրմանը, մանավանդ որ, Թուրքիայի կողմից այն ստորագրեցին երեք անձնավորություններ:

Եվ, այսպես, զինադադարն Անտանտի կողմից ստորագրեց անգլիական ծովակալ Կալթորպը, իսկ Թուրքիայի կողմից՝ Հուսեյն Ռաուֆը, Հիքմեթը և Սաադուլլան: Թուրքիան ընդունեց հրադադարի այն բոլոր պայմանները, որ նրան թելադրեցին Անտանտի երկրները: Թուրքիան համաձայնվում էր անհապաղ զորացրել թուրքական բանակը, բացել նեղուցները Անտանտի երկրների ռազմական նավատորմների առջև, թույլատրել նրանց գրավել Բոսֆորի և Դարդանելի ամրությունները, թուրքական զորքերը դուրս բերել Իրանից և Անդրկովկասից, դաշնակիցներին թույլատրել գրավել Բաթումը և Բաքուն, նրանց հանձնել թուրքական նավատորմը, կտրել ամեն տեսակի կապեր Կենտրոնական պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի հետ և այլն:

Մուդրոսի հրադադարի մի շարք կետեր ուղղակի վերաբերում էին մեզ հետաքրքրող՝ արաբական հարցին: Ստամբուլը պարտավորվեց, որ Անտանտին անձանատուր լինեն թուրքական մի շարք կայազորներ, որոնք կղզյակների ձևով շարունակում էին իրենց գոյությունը պահպանել Իրաքում, Սիրիայում, Հիջազում և Եմենում: Նա պարտավորվեց նաև թուրքական զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Մուդրոսի զինադադարը պարունակում էր նաև հատուկ կետ, բացի Կիլիկիայից, նաև հայկական վեց վիլայաթների՝ Էրզրումի, Սվասի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի և Դիարբաքրի վերաբերյալ: Նրանում արձանագրված էր, որ դաշնակիցներն իրավունք ունեին գրավել հայկական վեց վիլայաթները, եթե նրանցից մեկում ծագեին անկարգություններ:

Իսկ 1919 թ. հունվարին Անտանտի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Սիրիան, Պաղեստինը, Արաբիան, Միջագետքը և Հայաստանն անջատել Թուրքիայից, որը 1920 թ. օգոստոսի10–ին հաստատվեց նաև Սևրում կնքված հաշտության պայմանագրով:

Այսպիսով, Մուդրոսի զինադադարը հանդիսացավ Օսմանյան կայսրության մահվան դողանջը, որը մարդկությանն ավետեց Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ ժողովուրդների դարեր շարունակ բռնության մեջ պահած, անլուր հալածանքների, ջարդերի ու կոտորածների ենթարկած, մի շարք քաղաքակիրթ ժողովուրդների սոցիալ–տնտեսական և մշակութային զարգացումն արգելակած վայրագ թուրքա-

կան սուլթանության կործանումը: Նա ավետեց մարդկությանը օսմանյան կոչված չարիքից ազատագրվելու սկիզբը:

Ավարտվեց արաբների չորսհարյուրամյա պատմությունը, որը նրանց համար հանդիսանում էր պետական անկախությունը կորցնելու, օտարերկրյա լծի ներքո տառապելու, իրենց ազգային ինքնությունը, լեզուն, մշակույթը և ազգային սովորությունները պահպանելու, ազատության և իրենց ազգային անկախ պետականությունը վերականգնելու պայքարի դարաշրջան:

Փակվեց արաբների պատմության մի արյունոտ և մռայլ էջ: Արաբներն ազատագրվեցին օսմանյան չորսդարյա զուլումից:

Ճիշտ է, նրանց անկախությունը կատարյալ չեղավ այն առումով, որ արաբական մի շարք երկրների կողքին, որոնք, իրոք, անկախություն ձեռք բերեցին, մի շարք երկրներ էլ անցան Ազգերի լիգայի կողմից հաստատված անգլիական և ֆրանսիական մանդատային տիրապետության ներքո: Սակայն, այդ հանգամանքը դույզն իսկ չի կարող ստվեր ձգել արաբների կողմից օսմանյան բռնակալությունը տապալելու և թուրքական լծից ազատագրվելու պատմական նշանակություն ունեցող երևույթի վրա:

Վերջ երկրորդ հատորի

ԱՂԲՈՒՄԱԿՆԵՐ

Ի. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ 1299–1922 թթ.

1. Օսման I 1299–1326
2. Օրխան 1326–1359
3. Մուրադ I 1359–1389
4. Բայազետ I 1389–1401
5. Մուհամմադ I 1401–1421
6. Մուրադ II 1421–1451
7. Մուհամմադ (Մեհմեդ) II 1451–1481
8. Բայազետ II 1481–1512
9. Սելիմ I 1512–1520
10. Սուլեյման I 1520–1566
11. Սելիմ II 1566–1574
12. Մուրադ III 1574–1595
13. Մուհամմադ III 1595–1603
14. Ահմադ I 1603–1617,
15. Մուստաֆա I 1617, 1622
16. Օսման II 1618–1623
17. Մուրադ IV 1623–1640
18. Իբրահիմ 1640–1648
19. Մուհամմադ IV 1648–1687
20. Սուլեյման II 1687–1691
21. Ահմադ II 1691–1695
22. Մուստաֆա II 1695–1703
23. Ահմադ III 1703–1730
24. Մահմուդ I 1730–1754
25. Օսման III 1754–1757
26. Մուստաֆա III 1757–1774
27. Աբդուլ Համիդ I 1774–1789
28. Սելիմ III 1789–1807
29. Մուստաֆա IV 1807–1808

30. Մահմուդ II 1808–1839
31. Աբդուլ Մաջիդ 1839–1861
32. Աբդուլ Ազիզ 1861–1876
33. Մուրադ V 1876
34. Աբդուլ Համիդ II 1876–1909
35. Մուհամմադ V Ռաշադ 1909–1918
36. Մուհամմադ VI Վահիդ ադ–Դին 1918–1922

II. ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ՏՈՀՄԱՃԱՌԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1805–1953 թթ.

1. Մուհամմադ Ալի 1805–1848
2. Իբրահիմ 1848
3. Աբբաս I 1848–1854
4. Սաիդ 1854–1863
5. Իսմաիլ 1863–1879
6. Թոֆիկ . . . . . .1879–1892, խդիվ 1866–ից
7. Աբբաս II Հիլմի 1892–1914
8. Հուսեյն Քամիլ . . . . . .1914–1917, սուլթան 1917–ից
9. Ֆուադ . . . . . .1917–1936, թագավոր 1922–ից
10. Ֆարուկ 1936–1952
11. Ահմեդ 1952–1953

III. ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՒԹԱՍԱՐԻՖ–ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԸ 1861–1914 թթ.

1. Կարապետ–Հարություն Դաուդյան (հայ) 1861–1868
2. Ֆրանկո Նասրի (հայ) 1868–1872
3. Ռուստամ 1872–1883
4. Վասա 1883–1892
5. Նաում 1892–1902
6. Մուզաֆար 1902–1907
7. Յուսուֆ Նասրի (հայ, Ֆրանկո Նասրի որդին) 1907–1913
8. Հովհաննես Կույումջյան (հայ) 1913–1915



Հունական ուղղափառ մենաստանը Գայթակղությունների լեռան վրա

Բեթղեհեմի համայնապատկերը



Տիրոջ Գերեզմանի եկեղեցին Երուսաղեմում, որը պատկանում է
Հռոմի կաթոլիկ, հույն ուղղափառ, հայ, ղպտի, սիրիական
և եթովպական համայնքներին



Գողգոթայի ճանապարհին Հիսուսի երրորդ կանգառը, որտեղ նա առաջին անգամ վայր ընկավ: Ի հիշատակ դրա՝ այդտեղ XIX դարում Հայ կաթոլիկ պատրիարքարանը մատուռ կառուցեց:



Սուրբ Հակոբի տաճարը. հայ համայնքի կենտրոնը
Երուսաղեմի Հին քաղաքում



Հայֆայի համայնապատկերը

Ակկրա



Կահիրեի միջնաբերդը

Մուհամմադ Ալիի մզկիթը

Կահիրեի միջնաբերդում Մուհամմադ Ալիի մզկիթի ինտերյերը

Կահիրե. Աբդին պալատը

Դամասկոս. Ազըմի պալատը



Դամասկոս. Սուլեյմանի մզկիթը



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբբաս I, 358, 360, 362, 363, 365
Աբբաս I փաշա, 359-361
Աբբաս II Հիլմի, 383, 519
Աբբասյան, 12, 14, 17, 40, 42, 46-50, 52, 53, 63, 74
Աբդ ալ-Ազիզ, Մարոկկոյի սուլթան, 412
Աբդ ալ-Ազիզ, Աբդուլ Ազիզ, 431
Աբդ ալ-Ազիզ ալ-Զարբա էմիր, 567
Աբդ ալ-Ազիզ աս-Սաուդ, 102
Աբդ ալ-Ալի, 381
Աբդ ալ-Կադիր, 317, 387-390, 409, 631, 632
Աբդ ալ-Կադիր ալ-Խարսան, 535
Աբդ ալ-Համիդ ալ-Զահրավի, 535
Աբդ ալ-Ղանիմ ալ-Ուրայիսի, 482
Աբդ ալ-Մաջիդ, Աբդել Մաջիդ, 240-243, 246, 291, 292, 317, 318, 338
Աբդ առ Ռահման առ-Ռաֆի, 518
Աբդ առ-Ռահման ալ Կավակիբի, 349, 437, 438, 452, 483
Աբդ առ-Ռահման Շահբանդեր, 509
Աբդ ալ-Ռահման Զաբարտի, 114, 139
Աբդ ալ-Քարիմ ալ-Խալիլ, 535
Աբդալլահ, էմիր, 201-204, 539, 542, 605
Աբդալլահ Մուսա, 565
Աբդալլահ Նադիմ, 381
Աբդալլահ փաշա, 215, 280, 281
Աբդել Ռահման ալ-Բազազ, 592
Աբդուլ Համիդ փաշա Կալտակչի, 601
Աբդուլ Համիդ ալ-Խաին, 450
Աբդուլ Համիդ II, 7, 64, 347, 370, 372, 375, 429-450, 452, 454, 457, 459, 465, 470, 471, 510
Աբդուլլահ ադ Նուրի բեյ, 582
Աբու Հանիֆի, 42
Աբու Մուսլիմ, 17
Աբու Նակիտ, 297, 301
Ագաթանգեղոս, 11
Ադամով Ա., 46
Ադիբ, Ադիբ Իսհակ, Զուլնաթյան Ադիբ, 344, 349, 351-355, 439
Ազիզ Ալի ալ-Մըսրի, Ազիզ ալ-Մըսրի, Ազիզ Մըսրի, 480, 493, 494, 550
Ալ-Ազըմներ, 76, 78
Ալա ադ-Դին Քեյ Կուբադ I սուլթան, 16
Ալա ադ-Դին Քեյ Կուբադ III սուլթան, 16
Ալի Բաշ Համբա, 404
Ալի բեյ, 70-73, 86, 87, 139
Ալի Բունաբարդի, տե՛ս Նապոլեոն Բոնապարտ, Նապոլեոն I, 116, 121
Ալի Իհսա, 577
Ալի Հայդար, 601
Ալի Մունիֆ բեյ, 528
Ալի Ռիզա, 258-264
Ալի Ռիզա ալ-Ռիկաբի, 632, 634
Ալի փաշա, 326, 329
Ալլենբի էդմունդ, 609, 619, 621, 622, 624, 629, 632-635
Ալպոյաճյան Ա., 142, 190
Ալփ Արսլան, 14
Ահմադ ալ-Մանսուր, 406, 407
Ահմադ ալ-Զազար, 87, 88
Ահմադ Արաբի, 369, 371, 376, 377, 381, 382, 437
Ահմադ Արսլան, 301, 305, 322
Ահմադ Ֆարիս ալ-Շիդյակ, 433
Ահմադ Ֆուադ, 522
Ահմեդ բեյ, 387-389, 397
Ահմեդ Բու Մեզրագ, 394
Ահմեդ Զեմալ փաշա, 524, 582, 583

Սիմեդ Վեֆիք, 323
Սիմեդ Ֆեվզի փաշա, 246
Աղազարմ Ն., 190
Սամի առ-Ռեյհանի, 345
Սամի Արսլան, 297
Սամի Շմայիլ, 344
Սամի Սաիդ, 56, 58, 518, 536, 574, 578, 581-583, 617, 535
Անդրեն Ա., 48
Անտոնիուս Զ., 343, 466, 469, 484, 489, 503, 513, 514, 524, 543, 604, 617, 630
Ասադ ալ-Ազըմ, 78
Ասադ Դաղիր, 534, 574, 584
Ասադ փաշա, 305
Ավստրիացի Օմար, Օմար Նամսաուի, 300
Արաբի, փաշա, 437
Արթին Կարապետ Դաուդյան, Արթին Դաուդյան, Արթին Դաուդ, 330-334, 527
Արթուր Նիկոլսոն, 556
Արիան, 303, 304
Արսլաններ, 79, 282, 296
Աունի Աբդ ալ-Հադի, 482

Բազիլի Կ., 271, 290, 311
Բադր ադ-Դին ալ-Հասան շեյխ, 549
Բալֆուր, 611-613, 616
Բայազիդ I, սուլթան, 18-20
Բաշիր Բին Կասեմ Շիհաբ, 291, 292
Բաշիր II, 267, 269-291
Բաշիր III, 292, 293, 296-300, 302, 316
Բաշիրներ, 301
Բարաթով, գեներալ, 587
Բարակատ, շերիֆ, 37
Բարկան Օ., 132
Բարտոլդ Վ. Վ., 17, 48, 50-53
Բարուդի, 373, 375
Բեգլար, 324
Բելլ Գ., 629
Բերինգ, լորդ Կրոմեր, 383
Բլիներ, 368, 369
Բյուժո մարշալ, 389, 391
Բշերիք, 565
Բշիր Սֆար, 404
Բոնապարտ, Նապոլեոն Բոնապարտ, Նապոլեոն I, 74, 111-124, 139, 140, 149, 150, 272, 273, 317, 385
Բոֆոր դ'Օպուլ, 321
Բրեմոն Ե., 607, 630
Բու Մազա, 390
Բուալեկոնտ բարոն, 228
Բուզանդ Փավստոս, 11
Բուզե դյու կոմիսար, 393
Բուլարդ Ռ., 628
Բույուկ Սուլեյման, 94, 249, 251
Բուտենն Ա., 224
Բուտրուս ալ-Բուստան, 286
Բուտրոս Դալի, 426
Բուրբոնների դինաստիա, 112, 384
Բուրմոն գեներալ դը, 386

Գարտաշյան Ա., 190
Գորդոն, 421, 422
Գրեյ էդվարդ, 558
Գրիգոր Վարդապետ, 349

Դահդահ Ն., 334, 351
Դաուդ փաշա, 251-264, 266, 267, 285, 330-332
Դաֆֆերին լորդ, 324, 325, 382
Դելամեն Վ., 586
Դեմիրճյան Ստեփան, 194
Դեֆտերդար բեյ, 208, 210
Դիոգենես Ռոմանոս, 15
Դոլինա Ա., 343

Եկատերինա II, 54
Երեմեն Դ., 11, 25, 26, 48, 433, 466, 475, 476

Զահիր ալ-Ումար, 73, 85-87
Զայդ, էմիր, 539, 595, 609
Զաքի բեյ ալ-Ազմեհ, 601
Զեյն Ն. Զեյն, Զեյն Զեյն, 434, 435, 475, 574, 582
Զոհրապ Գրիգոր, 486
Զուլալյան Մ., 132
Զուլմաթյան Ադիբ, Ադիբ Իսհակ, 351

Էդվին Մանսել Բլիս, 240
Էմիլ Թումա, 56, 58, 354, 355, 434, 454, 467, 470, 472, 474, 574
Էյաս փաշա, 91
Էնվեր, 502, 503, 511, 548, 564, 566, 583, 603, 636
Էրթուղրուլ, 16

Թաունդսհենդ, գեներալ, 587, 588
Թալեաթ, Թալեաթ բեյ, 502, 511, 548, 563, 564, 566, 578, 581, 582-584, 603, 636
Թալալ, էմիր, 207
Թալհուքներ, 296, 301
Թահմասպ շահ, 41
Թանիուս Շահին, 314, 315, 322
Թարազի Ֆիլիպ դի, 350
Թարբին, 334
Թեհլերյան Սողոմոն, 583
Թուման բեյ, 30-33, 36, 49, 50, 58
Թուսուն, 167, 199, 201, 202
Թոֆիկ, 368-379, 382, 383, 436
Թոֆիկ ալ-Նաթուր, 482

Ժոզեֆ Բոնապարտ, 150
Ժոմառ Մ., 190

Իբն Իյաս, 31, 50
Իբն Ռաշադ, 597
Իբն Ռաշիդ էմիր, 513, 623

Իբն Սաուդ, 510, 513, 597
Իբրահիմ, 202, 203, 216, 218, 221, 228-232, 239, 240, 243, 245, 282-289, 344, 348, 349, 351, 356-363, 447
Իբրահիմ բեյ, 74, 117, 119, 123
Իբրահիմ ալ-Յազիջին, 447
Իբրահիմ փաշա, 212, 213, 215, 217, 220, 224, 227, 229, 230, 233-235, 246
Իդրիս, էմիր, 513, 526, 532
Իլյաս Զանանիրի, 573, 576
Իսա շեյխ, 264
Իսմայիլ ալ-Ազըմ, 28, 34, 40, 41
Իսմայիլ շահ, 28, 34, 40, 41
Իսմայիլ փաշա, խդիվ Իսմայիլ, 208, 209, 361, 367-373, 376, 419, 436, 522

Լամարթին, 279
Լամմենզ Հ., 333
Լանկ Թիմուր, 20, 30, 138
Լաստիվերտցի Արիստակես, 11, 14
Լեյկ Պերսի, 588
Լեսեպս, Ֆերդինանդ դը Լեսեպս, 361, 363, 364
Լիոտե գեներալ, 414, 417
Լիման ֆոն Սանդերս, 524, 619, 620, 623, 626
Լլոյդ Ջորջ Դ., 588, 590, 616, 629
Լյուդովիկոս XV, 108
Լյուդովիկոս XVI, 112
Լոուրենս Թ., 587, 588, 607, 622
Լուի Նապոլեոն III Բոնապարտ, 317, 324, 392
Լուի Ֆիլիպ, 386
Լուիս աս-Սաբունջի, 348
Լուցկի Վ., 157, 334, 489
Լևին Զ., 343, 353

Խաիր բեյ, 29, 30, 33, 68, 75, 76
Խալիլ ալ-Խուրի, 344, 345
Խալիլ Ղանիմ, 445, 446
Խալիլ փաշա, 588
Խալիմ ալ-Ջազաիրի, 535
Խայր ադ-Դին Բարբարոսա, 43
Խեյրի Համա, 458, 579
Խոսրով Մեհմեդ փաշա, 224
Խորենացի Մովսես, 11
Խրիմյան Հայրիկ, 456
Խուրշիդ փաշա, 155, 157, 313, 314, 316, 318, 321

Ծաղիկյան Ստեփան, 583, 584

Կալթորպ, 636, 637
Կամբոն Պոլ, 435, 558
Կանսոհ սուլթան, 28, 29, 31, 33, 49
Կասիմ, 96, 97
Կավակիբի, Աբդ առ–Ռահման ալ–Կավակիբի, 349, 354, 437-440, 452, 483
Կարամանլիներ, 104
Կիսելյով, 323
Կիտչեներ Հերբերտ, գեներալ, 424-426, 540-548, 550, 553
Կլեբեր գեներալ, 122-124
Կլեյթոն Ջ., 550
Կոլվին, 372
Կոտլով Ն., 343, 350, 351, 354
Կորնվալիս լորդ, 150
Կոուլ, 323
Կոքս Պերսի, 586, 593
Կրաչկովսկի Ի., 343, 344, 353
Կրես ֆոն Կրեսենշտայն, 524, 532
Կրիմսկի Ա., 334, 343
Կրոմեր, Բերինգ, 383

Կույումջյան Հովհաննես, 335, 527
Կուտբ ադ-Դին Մեքքացի, 51

Հաբիբ աս-Սաադ, 632
Հաթթար Իմադ, 301
Հակկի բեյ, 528
Համոն Պ., 192
Հայդար Աբու Լամա, 305
Հաննա Աբգարիոս, 350
Հաշիմի, 95, 406
Հաշիմի շերիֆներ, 205
Հաշիմիներ, Հաշիմյաններ, 203
Հաջի Մեհմեդ Ակիֆ էֆենդի, 224
Հասան փաշա, 94, 248, 249
Հասուն, 344, 348, 350, 351
Հաուրանի Ա., 438, 447, 450, 463, 464, 473-476, 486, 489, 490
Հաքիմի, խալիֆա, 295
Հաֆիզ Ալի, 249
Հաֆիզ Ֆուադ Հասան, 56-58
Հիթթի Ֆ., 24, 48, 56-58, 102, 135, 159, 333, 344
Հինքս գեներալ, 421
Հիտլեր Ադոլֆ, 579, 580
Հիքմեթ, 636
Հոգարթ Դ., 612, 613, 629
Հովսեփ Բաքոս, 350
Հուսեյն իբն Ալի, Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմի, շերիֆ, 8, 491, 511, 550, 601, 604, 605
Հուսեյն Թալհուք, 301
Հուսեյն Մուրուվա, 581
Հուսեյն Շիհաբ, 274, 275
Հուսեյն Ռաուֆ, 637
Հուսեյն Ռուշդի, 516, 519
Հուսեյն փաշա, 217
Հուսեյն Քամիլ, 519, 522, 566

Ղալիբ, շերիֆ, 200
Ղալիբ փաշա, 597
Ղուկաս, 286

Մաան, Մաանների դինաստիա, 38, 79, 85, 142, 269
Մակ-Մահոն, 519, 522, 546, 550-559, 605, 606, 608, 612
Մակրիզի, 16
Մահդի, Մահդի Մուհամմադ Ահմադ, 420, 422-424
Մահմուդ Շնքեթ փաշա, 470, 534
Մահմուդ Սամի, Մահմուդ Սամի ալ-Բարուդի, 373, 375, 376, 381
Մահմուդ I սուլթան, 108
Մահմուդ II Մուհամմադ Ալի սուլթան, Մահմուդ II սուլթան, 197, 202, 211, 213, 214, 216, 217, 222, 240, 241, 256, 258, 281
Մանֆրեդ, 114
Մաշարի էմիր, 203, 204
Մասուդ Դաիր, 574, 579, 582
Մատթեոս Ուռհայեցի, 11
Մար Իլիաս, 280
Մարիյա Թերեզա, 112
Մարլոու Ջ., 628
Մարշան, գեներալ, 425
Մարրաշ Ֆրանսիս, Ֆրանսիս Ֆաթհալլահ Մարրաշ, 344, 348
Մաքիավելլի Նիկկոլո դի Բերնարդո, 195
Մաքսուել Ջոն Գրենվիլ, Ջոն Մաքսուելլ, 517, 545
Մեդիչի Ֆերդինանդ, 82
Մեհմեդ Շեքիր էֆենդի, 312
Մեհմեդ Ռեշիդ փաշա, 217
Մեհմեդ II Ֆաթիհ, Մեհմեդ II, 19-22
Մեհմեդ V, սուլթան, 506
Մետերնիխ, 304
Միդհատ բեյ, 489
Միդհատ փաշա, 340, 341, 431-433, 447
Միխաիլ Մուդավար, 348
Մինաս Չերազ, 460, 462
Մխիթար Այրիվանցի, 11
Մշակկա Միքայել, 344
Մոդ գեներալ, 386, 588-592
Մրվան ալ-Մուդավար, 58, 454, 457, 471, 475, 476, 574, 577, 579, 581
Մութավաքիլ իբն Ամրիլ Հաքիմ, 47-53
Մուհամմադ ազ-Զահաբի, 70, 72
Մուհամմադ ալ-Համսանի, 535
Մուհամմադ ալ-Մուկրան, 394
Մուհամմադ ալ-Միհմիսանի, 482
Մուհամմադ աս-Սադիկ բեյ, 397, 398
Մուհամմադ Աբդո, 437, 438
Մուհամմադ Ալի, 147, 152-247, 252, 255, 258, 265, 267, 281, 282, 284, 285, 287, 290-292, 321, 342, 345, 355-370, 388, 417-419, 426, 436, 522, 582
Մուհամմադ Ահմադ, Մուհամմադ Ահմադ Աբդուլլա, 419-424
Մուհամմադ Արսլան էմիր, 471
Մուհամմադ Բեկ, 42
Մուհամմադ բեյ, 397
Մուհամմադ էլֆի բեյ, 160
Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբ, 97-99, 102
Մուհամմադ իբն Սաուդ, 102
Մուհամմադ Զամալ ադ-Դին ալ-Աֆղանի, 353
Մուհամմադ Շակիկ Ղարբալ, 574
Մուհամմադ Սաիդ, 400
Մուհամմադ Սաիդ Հալիմ փաշա, 583
Մուհամմադ Սաիդ ալ-Զազարի, 631, 632
Մուհամմադ մարգարե, 34, 35, 45, 98, 99, 203, 405, 406, 420, 421, 491, 512, 539
Մուհամմադ (Մեհմեդ) V Ռաշադ, սուլթան, 472, 601
Մուհամմադ VI Վահիդ ադ-Դին, սուլթան, 19
Մուհսին շերիֆ, 596
Մուլայ Աբդ առ-Ռահման, 389, 408, 409
Մուլայ Իսմայիլ, 407, 408
Մուլայ Խաֆիդ, 412-414, 417
Մուլայ Յուսուֆ, 417
Մուլայ Սուլեյման, 408
Մունթազ բեյ, 528
Մուսա Պրենս, 430, 455, 456, 459, 467, 471, 475, 486, 573, 579, 580
Մուսթաֆա Քեմալ փաշա, 623, 627
Մուսթաֆա Նուրի փաշա, 299, 300
Մուսթաֆա Քամիլ, 437, 440-442
Մուստաֆա Բայրակդար, 179
Մուրադ բեյ, 74, 118, 119
Մուրադ I, 18, 19
Մուրադ II սուլթան, 20
Մուրադ III սուլթան, 106
Մուրադ IV սուլթան, 83, 84, 92
Մուրադ V սուլթան, 431
Մուրաջա դ'Օսսոն, 53
Մուրավյով գեներալ, 220
Մուրեյ Արչիբալդ, 630

Յակուբ Սարրուֆ, 345
Յահյա իմամ, 513

Յուսուֆ ալ-Ասիր, 344
Յուսուֆ Դիա, 274
Յուսուֆ Յազբեկ, 349, 350, 353, 434, 449
Յուսուֆ Նասրի, 335
Յուսուֆ Շիհաբ էմիր, 268, 269
Յուսուֆ Քարամ, 322, 332, 333
Յուսուֆյան Պողոս, 191

Նաամա Ջունբլաթ, 297, 301
Նաիմ բեյ, 582
Նաիմ ալ-Յաֆի, 56, 573, 576, 578
Նալբանդյան Հ., 190
Նապոլեոն Բոնապարտ, Նապոլեոն I, 111, 112, 114, 119, 125, 150, 180, 318, 384, 385
Նապոլեոն III, Լուի Նապոլեոն III Բոնապարտ, 317-319, 324, 364, 392
Նաջարյան Ե., 343, 354
Նաջի Ալլուշ, 353
Նաջիբ Ազուրի, 343, 442, 447-449, 460-462
Նաջիբ ալ-Արմանազի, 634
Նաջիբ ալ-Հադդադ, 344
Նասեր էմիր, 631
Նասեր Գամալ Աբդել, 357
Նասիֆ Աբու Նակիտ, 301
Նասիֆ ալ-Յազիջի, 344, 351
Նաում, 286
Նելսոն ծովակալ, 114, 119
Նեպիր Չարլզ, 246
Նեսելռոդե Կ., 226
Նիկոլայ I, 220, 221
Նիյազ, 464
Նորատունկյան Գ., 335
Նովիկով, 325
Նոֆալ Նամաթալլահ ատ-Տարաբլուս, 345
Նուբար Նուբարյան, 357, 365-368
Նուր ադ-Դին ալ-Կադի, 535
Նուրի ալ-Շաալան շեյխ, 620

Շակիկ Ղարբալի, Մուհամմադ Շակիկ Ղարբալի, 56, 60, 137, 574
Շակիկ Մուվայիդ ալ-Ազըմ, 535
Շահբանդեր, Աբդ Ռահման Շահբանդեր, 509, 510
Շամմար, 204, 206, 207
Շամմարներ, 204, 207, 262
Շարիֆ Ահմադ ալ-Մանսուր, 406
Շարիֆ Մուհամմադ բին Աբդալլահ, 408
Շաքիր Բեհաէդդին, 583, 584
Շեկիբ Արսլան, 347
Շերիֆ փաշա, 370-373
Շեքիր էֆենդի, 312
Շիբլի Աքրաշ, 444
Շիբլի Արիան, 303, 304
Շիդյակ, 351, 433, 451
Շիհաբներ, Շիհաբների դինաստիա, 79, 85, 88, 269, 274, 275, 298, 300-302
Շիրակյան Արշավիր, 583
Շլոշի, 263
Շումով Ս., 48
Շուքրի Ասալի, 534
Շուքրի Քուվաթլի, 601
Շուքրի ալ-Այուբի, 632, 633

Չաղրի բեկ, 13, 14

Պալեոլոգ, 558
Պալմերստոն լորդ, 227
Պեդրո Տեքսիերա, 142
Պիկո, Ժորժ Ֆրանսուա, 555-559, 590, 606, 612-617, 625, 631-635
Պյեպապ, 633
Պողոս բեյ, 191
Պողոս Նուբար, 624

Ջազար, Ահմադ ալ-Ջազար, 87, 88, 268-276, 280
Ջալալ բեկ, 565
Ջամալ ադ-Դին Աբու Նումեյ Մուհամմադ, 37
Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանի, տե՛ս Մուհամմադ Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանի
Ջամիլ Խաբրի, 579
Ջամիլ Հաբբ, 459
Ջամիլ Մարդամ, 482
Ջան-Բիրդի ալ-Ղազալի, 75, 76
Ջաֆար ալ-Ասկարի, 613
Ջեմալ փաշա, Ահմեդ Ջեմալ փաշա, 8, 484, 509, 511, 513, 514, 524, 526, 538, 582-584, 600-602, 613, 616, 619, 620, 631
Ջիհադ Սալեհ, 574, 575, 577, 579
Ջոյս, 622
Ջումբլաթ շեյխ, 281
Ջուրջի Զեյդան, 350, 447
Ջնադ փաշա, 623

Ռագիբ փաշա, 377, 379
Ռաթման Լոթար, 354
Ռաշիդ շեյխ, 42, 89-91
Ռաշիդ Ռիզա, 550
Ռաշիդներ, 207
Ռաֆիկ ալ-Ազըմ, 483
Ռաֆիկ Թամիմի, 482
Ռենո դեսպանորդ, 413
Ռզգալլահ Հասուն, տե՛ս Աստվածատուր Հասուն, 344, 350
Ռիյադ փաշա, 371
Ռոմիյո, 624, 625
Ռոսի Է., 492
Ռոսի Պ., 587
Ռոտշիլդ, 368, 611
Ռորբախ Պ., 504
Ռուստամ Հայդար, 482

Ռուշեյդ Դահդահ, 351

Սաադուլլա, 637
Սաբահ շեյխ, 513, 597
Սաբահեդդին, 464, 479, 486
Սադիկ ալ-Ազըմ, 469
Սազոնով, 557
Սաիդ փաշա, 249, 252, 360-365
Սաիդ Հալիմ էմիր, 548, 582, 583
Սաիդ Հաքիմ, 565
Սաիդ Ջումբլաթ, 297, 301, 304
Սալահ ադ–Դին, 36
Սալիհ Զահր ադ-Դին, 56, 59, 430
Սալիհ Հայդար, 535
Սամի, 375, 376
Սամի բեկ, 564
Սամիր Արբաշ, 56, 430, 574-576, 579, 583, 584
Սայիդ Ալի ալ-Միրղան, 513
Սայիդ Ռաշիդ Ռիզա, 550
Սայիդ Տալիբ, 491
Սայքս Մարկ, 555, 556-559, 590, 606, 612-617, 625, 631-634
Սաուդ էմիր, 102, 201, 513
Սաուդյաններ, 202, 204-207, 267
Սաֆրաստյան Ա., 132
Սելջուկ, 13
Սելիմ I Ահեղ, Սելիմ Ահեղ, 27-40, 47-53, 68, 75, 76, 79, 80, 95, 627
Սելիմ ալ-Բուստան, 344
Սելիմ III, 87, 88, 118, 120, 149, 150, 152, 155, 156, 158, 162, 163, 179, 273, 274
Սեյմուր, 377
Սեն Ջոն, 43
Սթորս Ռոնալդ, 540, 543
Սիմեոն Լեհացի, 139, 141
Սինան փաշա, 43, 44
Սկոտ Վալտեր, 447
Սմիլյանսկայա Ի., 314
Սուլեյման ալ-Բուստան, Սուլեյման Բուստան, 344, 346, 446
Սուլեյման Կանունի, սուլթան, Սուլեյման I, Սուլեյման Հոյակապ, 30, 40-43, 51, 52, 69, 71, 76, 80, 90, 107
Սուլեյման փաշա, 62, 180, 181, 280, 290
Սուլթան ալ-Աթրաշ, 626

Վահաբիներ, 200, 204, 206, 250, 251
Վասիլև Լ. Ս., 23-25
Վարդգես, Վարտակիս, 472
Վեհիբ բեյ, 547
Վեյլ, 51, 52
Վերդի Ջուզեպե, 364
Վիլհելմ II, 411
Վիլսոն Առնոլդ, 591, 593
Վիլսոն, 368, 369, 500, 591, 593, 607
Վինգեյթ Ռեջինալդ, 522, 596, 606, 615, 616
Վիտոլ Ա. Վ., 133, 136

Տարլե Ե., 114
Տեր-Պողոսյան Պետրոս, 583, 584
Տուղրիլ բեկ, 13, 14
Տուրկու, 204, 205

Ուզունչարշըլը Ի., 132
Ումար Դաուք, 632
Ուոլսլի, 380, 382

Փափազյան Ա., 133, 337

Քամալ ադ-Դին Հուսեյն, 522
Քամալ Սալիբ, 333
Քաֆեսօղլու, 26
Քեմալ բեյ, 50
Քեչեչի-զադե Ֆուադ փաշա, 318
Քուչուկ Սուլեյման, 249, 251
Քուրքումազ, 80

Օդե Աբու Թաբի, 620
Օմայյան դինաստիա, Օմայյաններ, 12, 17, 29, 63, 75
Օմար ան-Նամսաու, տե՛ս Ավստրիացի Օմար
Օմար փաշա, 300, 301, 303-305
Օռլով Ա., 138, 224
Օսման II, սուլթան, 82
Օսման Բարդիս, 154, 160
Օսման աթ-Թուրք, 430, 434, 455, 458, 471, 474, 574
Օտյան Գրիգոր, 432, 433
Օրհան, 18-20

Ֆաթալի շահ, 255
Ֆախր ադ-Դին I, 38, 39, 79, 80, 85
Ֆախր ադ-Դին II, 80-84, 142
Ֆայեզ ալ-Ղոսեյն, 573
Ֆարես ալ-Խուրի, 601
Ֆարիս Նիմր, 344, 447
Ֆարիս աշ-Շիդյակ, 351, 433
Ֆարրաջալլահ Միքայել, 350
Ֆուադ փաշա, 318, 319, 321, 322, 324, 334
Ֆուադ Հասան Հաֆիզ, Ֆուադ Հաֆիզ, 56-58, 430, 434, 435, 454, 456, 457-459, 474, 537, 574, 576, 577, 579, 580, 582-584
Ֆեվզի Մեհմեդ փաշա, 224
Ֆեյսալ, 205, 206, 539, 543, 544, 546-550, 566, 570, 595, 598, 600, 602, 605,

609, 613-615, 618, 620-635
Ֆին Զ., 450
Ֆրանցիսկ I, 107
Ֆրանկո Նասրի, 334, 335
Ֆուադ փաշա, 318, 319, 321, 322, 324, 334
Ֆախր ադ-Դին ալ-Սաան, էմիր, 38

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբայի, 333
Աբբա կղզի, 419, 420
Աբբասյան խալիֆայություն, 14, 40, 46, 47, 52, 74
Աբդին պալատ, 369
Աբուկիր, 119, 120, 122
Աղանա, 131, 217, 471, 534, 549, 559
Աղեն, 42, 207, 526, 532
Ադրիանապոլիս, 18
Ազիզիյա, 593
Ազիար, 121, 154, 155, 156, 158, 494
Ազով, 44
Աթենք, 212
Աթենքի դքսություն, 21
Ալբանիա, 19, 44
Ալեքսանդրետ, 245, 291, 554, 557
Ալեքսանդրիա, 50, 114, 124, 155, 161, 162, 181, 184, 185, 188, 190, 191, 194, 220, 240, 146, 324, 360, 365, 375-380, 382
Ալժիր, 42-44, 103, 104, 317, 341, 383-397, 403, 409, 410, 414, 501, 505, 513, 523, 609
Ալխեսիրաս, 412
Ալկազարքվիվիր, 406
Ակկա, 73, 84, 85, 87, 122, 215, 216, 245, 268-274, 276, 280-284, 291, 556
Աղադիր, 405, 413
Ամադիա, 557
Ամարա, 586, 587, 589
Ամերիկա, 113, 449
Ամման, 621, 622, 624, 626
Ամյեն, 150
Այդընի բեյլիք կամ բեյություն, 16
Այնթաբ, 556
Անատոլիա, 15, 16, 44, 217, 534, 536, 578, 581, 582, 601
Անգլիա, 7, 8, 105, 107, 109, 110, 112, 113, 119, 148, 150, 152, 160-162, 168, 182, 205, 207, 212, 215, 218, 219, 221-227, 236-246, 253, 257, 265, 266, 290, 291, 297, 302, 309, 316, 317, 320, 323, 324-328, 335, 348, 356, 360, 367, 370, 371, 373, 375-380, 383, 398-401, 408-411, 416, 419, 424, 425-427, 436, 437, 437, 441, 449, 450, 455, 496-509, 512, 516-526, 531-533, 538-546, 550, 554, 555-559, 587, 589, 590, 598, 600, 604, 607, 611-617, 629-636
Անգորա, 20
Անգլո-եգիպտական կոնդոմինիում, 426
Անգլո-եգիպտական համատիրություն, 428
Անգլո-եգիպտական Սուդան, 427, 428
Անդրլիբանան, 235, 273, 291, 303, 315
Անդրկովկաս, 10-15, 247, 503, 637
Անդրհորդանան, 543, 556, 628, 631-635
Անթիլիաս, 280, 289
Անի, 14
Անկարա, 20, 21
Անտանտ, Անտանտի երկրներ, 8, 441, 496, 497, 499, 501, 502, 506, 507, 515, 532, 538, 541, 555, 557, 586, 608, 610, 612, 624, 628, 636, 637
Անտիոք, 232, 233, 294, 471
Ասիա, 5, 10, 21, 27, 33, 44, 105, 110, 113, 122, 136, 143, 216-218, 222-224, 247, 339, 398, 399, 442, 448, 461, 497, 498, 505, 526, 549, 624, 636, 637
Ասիր, 97, 102, 200, 202, 204, 513, 525, 526, 532, 597, 598
Ասյուտ, 345
Ասորիք, 27
Ասուան, 191
Ավստրիա, 105, 112, 113, 152, 182, 236, 241-246, 290, 300, 309, 317, 320, 323-327, 331, 367, 368, 370, 398, 399, 426
Ավստրիական կայսրություն, 300, 304, 481
Ավստրո-Հունգարական կայսրություն, 224
Ավստրո-Հունգարիա, 441, 496, 498, 502, 503, 506, 516, 635, 637
Ատլանտյան օվկիանոս, 6, 409
Ատլաս, Ատլասի լեռներ, Ատլասյան լեռներ, 406, 407, 414
Ատրպատական, 14, 28, 41
Արաբական անապատ, 578
Արաբական Արևելք, 4, 5, 227, 339, 342, 538, 562, 585, 592, 607
Արաբական Արևմուտք, 5, 227
Արաբական թերակղզի, 102, 103, 525, 526, 551, 557

Արաբական խալիֆայություն, 12, 45, 63, 67, 125, 127, 627
Արաբիա, 35-38, 44, 48, 75, 95-102, 113, 126, 167, 197-209, 223, 227, 236, 241, 246, 250, 251, 262, 267, 285, 344, 433, 451, 452, 501, 504, 507, 513, 523, 525, 526, 532, 536, 538, 549, 550, 552, 585, 596, 597, 599, 629, 637
Արաբկիր, 141
Արաբստան, 83, 339
Արարա սար, 624, 625
Արարայի ճակատամարտ, 624, 625
Արիշ, 122, 618
Արքուբ, 310
Արևելյան Անատոլիա, 536, 578, 581
Եվրոպա, 6, 102
Արևելյան Հայաստան, 351
Արևելյան Հնդկական Ընկերություն, 266
Արևելյան Միջերկրական, 238
Արևելյան Սիրիա, 556, 634
Արևելյան Սուդան, 207-211, 355, 425-427, 504
Արևմտյան Հայաստան, 28, 132, 142, 190, 454, 457, 486, 498, 557, 560, 573, 575
Արևմտյան Սիրիա, 556, 558
Աքաբա, 608, 609, 613, 619
Աֆղանստան, 507
Աֆրիկա, 5, 6, 42-44, 105, 112, 113, 196, 227, 245, 247, 339, 354, 386, 387, 396, 398, 399, 404, 409, 442, 448, 460, 497, 505, 523, 538, 637

Բաաբդա, 292, 315
Բաալբաք, Բաալբեկ, 81, 273, 288, 323, 482
Բաբելոն, 251, 253, 260, 505
Բաթում, 637
Բալկաններ, 6, 18, 19, 27, 33, 62, 136, 221, 223, 339, 389, 436, 461, 536, 575
Բահրեյն, 103, 207
Բաղդադ, 12-14, 40-42, 48, 89, 91, 93, 94, 102, 110, 134, 142, 230, 248, 249, 250, 251, 252, 254, 257-267, 339, 340, 467, 493, 504, 505, 524, 544, 550, 554, 556, 557, 561, 571, 586-594
Բասրա, 42, 89-94, 102, 110, 136, 142, 248, 254, 260, 266, 490, 495, 554, 556, 586, 590, 593, 594
Բասրա վիլայաթ, 89, 91, 556
Բատավիա, 150
Բատրուն, 245, 291
Քարդդ, 400
Բարձր Դուռ, 43, 70, 71, 75, 79-96, 104, 105, 109, 120, 128, 152, 153, 155, 165, 166, 171, 173, 215, 216, 223, 225, 241, 248, 250, 252, 258, 260, 268, 270, 273, 274, 288, 300-306, 309, 316, 318, 320, 326, 329, 332, 362, 365, 372, 444, 489, 510, 526, 527
Բաքու, 637
Բաքուբա, 561, 593
Բեեր-Շեբա, 609, 618, 623
Բեթղեհեմ, 620
Բեյթ աղ-Դին, 278, 279, 286, 292, 301, 303, 304
Բեյլանի լեռնանցք, 216
Բեյրութ, 77, 81, 83, 86, 88, 139, 141, 245, 275, 283, 284, 286, 290-292, 298, 299, 306, 310-315, 318, 319, 321, 328-330, 334, 340, 345, 349, 351, 352, 444-448, 467, 482, 495, 528, 532, 535, 536, 556, 571, 582, 627, 632, 633
Բեյրութի Ամերիկյան Համալսարան, 345, 349
Բեյրութի Բարենորոգումների լիգա, 495
Բենհայ, 360
Բեռլին, 331, 389, 398, 399, 413, 454-456, 521, 583, 584
Բեռլինի կոնգրես, 399, 454-456
Բթեթար, 310
Բիզերտա, 400
Բիթլիս, 141, 458, 556, 561, 637
Բիքաա, 81, 273, 276, 288, 291, 303, 315
Բյուզանդական կայսրություն, 6, 12, 18, 19, 21, 27, 498
Բյուզանդիա, 12, 15, 18
Բոհեմիա, 110
Բոսնիա, 19, 22, 44, 87, 399
Բոսֆոր, 221, 637
Բրիտանական կայսրություն, 24
Բուիների տիրապետություն, 14
Բուլակ, 123, 184
Բուլղարիա, 19, 44, 457, 486, 497, 575
Բուտրոս, 286
Բուրսա, 18

Գերմանիա, 370, 389, 399, 410-413, 426, 441, 455, 496-506, 510, 516, 517, 523, 524, 526, 528, 543, 569, 580, 590, 614, 615, 619, 630, 635, 637
Գիզա, 117-119, 182
Գյուլիանե, 336
Գյուրջիստան, 131, 133

Դալմացիա, 44
Դամասկոս, 29-31, 72-88, 102, 135, , 141, 206, 230, 232, 233, 268, 276, 284, 285, 288, 306, 311, 317, 318, 319, 321, 329, 339, 351, 390, 391, 447, 482, 484, 493, 512-514, 524, 530, 532, 535, 544-556, 570, 571, 582, 599, 609, 614, 619, 621, 622, 626, 627, 631-634
Դամյաթ, 136
Դար աս-Սալամ, 589, 592
Դարդանել, 18, 225, 361, 637
Դարդանելի նեղուց, 225
Դարյա, 204
Դեյր ազ-Զոր, 561, 565
Դեյր ալ-Կամար, 275, 278, 284, 286, 299, 308, 311, 315
Դերաա, 624, 626
Դիարբաքր, Դիարբեքիր, Դիարբաքիր, 131, 556, 558, 561, 565, 637
Դոնղոլա, 209, 210

Եվրոպա, 5, 6, 18, 19, 27, 44, 54, 81, 83, 105, 106, 110-113, 160, 180-183, 191, 194, 195, 218, 236, 247, 294, 304, 305, 311, 319, 321, 336, 356, 363, 368, 399, 410, 425, 436, 449, 461, 487, 497, 498, 637
Եգիպտոս, 9, 28, 30-35, 38, 43, 44, 47, 50, 51, 68-77, 83, 86, 92, 95, 106, 107, 110-131, 135-140, 147-223, 227, 229, 232, 236-248, 252, 257, 258, 265, 267, 272, 273, 281-295, 339-345, 352-383, 388, 399, 401, 411, 417-428, 436-448, 457, 459, 484, 494, 501, 504, 513, 516-531, 540, 543, 545, 550, 551, 555, 566, 573-575, 582, 585, 587, 598, 608, 615, 616, 629
Ենիշեհր, 18
Եմեն, 38, 42, 44, 96, 97, 100, 201-207, 449, 495, 501, 513, 525, 526, 536, 539, 545, 597, 598, 630, 637
Երևան, 141, 337
Եփրատ, 135, 239, 366, 587
Երուսաղեմ, 30, 75, 77, 135, 136, 235, 340, 448, 514, 600, 620

Զահլե, 286, 315
Զալցբուրգ, 580
Զակազիկ, 190
Զմմառ, 141
Զմյուռնիա, 365

Էգեյան ծով, 20, 22
Էդիրնե, 18
Էլզաս, 497
Էյալաթ, 77
Էրզրում, 131, 141, 458, 561, 637

Թաիֆ, 200, 201, 595, 597, 600, 602
Թազա, 414
Թաբետ, 286
Թաքարիա, 450
Թանքայ, 190
Թավրիզ, 41, 42
Թբիլիսի, Թիֆլիս, 584, 585, 600
Թել ալ–Քաբիր, 380, 381
Թիկրիտ, 589, 610
Թրակիա, 12, 44
Թրատ, 286
Թուեյնի, 286
Թունիս, 42-44, 103, 104, 341, 396-405, 409, 410, 413, 457, 501, 505, 513, 522, 575
Թուրքեստան, 476, 503, 577
Թուրքիա, 23, 40, 82, 93, 94, 108-110, 124, 139, 161, 186, 190, 196, 206, 207, 211, 214, 216-226, 234-258, 265, 302, 312, 318-320, 323, 326, 327, 335, 336, 338, 382, 399, 426, 436, 439, 449, 451, 452, 462, 466, 486, 492, 493, 499, 501-518, 523-527, 532, 533, 536, 538, 540, 541-553, 563, 586, 588, 589, 595, 599, 604, 609, 612, 613, 616, 617, 619, 620, 623, 624, 628, 630, 635, 636, 637

Ժնև, 521

Իզմիր, 15
Իկոնիա, 15, 16, 18, 25
Իկոնիայի սելջուկյան պետություն, 16
Իկոնիայի սուլթանություն, 15, 16, 18, 25
Իսմայիլիա, 380
Իսպանիա, 43, 150, 408-412, 416
Իտալիա, 22, 83, 182, 356, 367, 368, 370, 398, 399, 403, 410, 411, 419, 426, 496, 498, 501, 502, 522, 624, 628
Իրան, 14, 92, 93, 507, 587, 637
Իրաք, 14, 40-44, 47, 48, 68, 89-97, 102, 110, 113, 126, 130, 134, 141-143, 197, 198, 223, 230, 241, 248-267, 285, 338-341, 344, 355, 432, 442, 444, 446, 459, 480, 484, 486, 487, 495, 501, 504, 505,

523, 524, 528, 529, 532-536, 543, 544, 549-552, 556, 562, 565, 574, 581, 585-594, 598, 610, 612, 616, 619, 620, 628, 636
Իրաքյան Քրդստան, 256, 265

Լագուատի օազիս, 391
Լաթաքիա, 141, 245, 291, 471
Լայպցիգ, 354
Լառաշ, 408, 413
Լեհաստան, 105, 580
Լեմնոս կղզի, 636
Լեջա, 235
Լեռնալիբանան, 77, 79, 86, 288-291, 305-307, 317, 325-329, 330-335, 340, 349, 456, 527, 528, 632
Լիբանան, 8, 38, 39, 44, 77-88, 92, 126, 130, 141, 142, 241, 243, 245, 267-335, 340-349, 354, 430, 434, 442, 445-449, 455, 459, 475, 484, 486, 487, 495, 501, 505, 523, 527-533, 536, 549, 552, 556, 570, 573, 574, 579, 583, 585, 608, 620, 624, 632-634
Լիբանանի էմիրություն, 81, 84, 86
Լիբանանյան իշխանապետություն, 85, 267-273, 278, 281-285, 288-292, 296-300, 302, 316
Լիբիա, 411, 501
Լիվորնո, 181
Լոզան, 501
Լոթարինգիա, 497
Լոնդոն, 148, 192, 219, 225, 237, 238, 242, 243, 351, 535, 411, 450, 537, 542, 544-546, 555, 558, 591, 605, 606, 610, 632
Լոռի, 14
Լոս Կաստիլյոս, 409

Խան Թուման, 626, 627
Խարբերդ, 458, 561, 637
Խարթում, 419, 422
Խորասան, 14, 16

Կաաբա, 37, 596
Կաբիլիա, 391, 394
Կադիմայն, 92
Կահիրե, 31-33, 36-38, 46-51, 68, 70, 72, 73, 87, 95, 115, 116-124, 131, 134, 136, 139, 150, 152-157, 160-167, 171, 174, 179, 182, 184, 185, 188, 190, 192, 194, 202, 203, 225, 238, 241, 243, 345, 352, 360, 369, 371, 373, 377, 380-382, 418, 438, 445, 448, 479, 494, 519, 533, 540-543, 550, 571, 615
Կայզերական Գերմանիա, 441, 498, 499, 503, 505
Կասալա, 210
Կասիմ, 96, 200, 204, 206, 207
Կավալլա, 152, 158
Կատիֆ, 202, 205
Կարլովից, 105
Կարամանի բեյլիք կամ բեյություն, 16
Կարմիր ծով, 72, 103, 199, 200, 360, 512, 557, 597, 608, 630
Կեսարիա, 131
Կիլիկիա, 142, 223, 229-236, 239, 246, 471, 556, 625, 633, 637
Կիլիկյան Հայաստան, 624
Կիպրոս, 44, 399
Կիրենաիկա, 44, 103, 501
Կիրկուկ, 256
Կյութահյա, 218, 220-223, 227, 234, 236, 285
Կոնիա, 15, 217, 218, 357
Կոնիայի ճակատամարտ, 218
Կոնստանտին, 388, 395
Կոստանդնուպոլիս, 19, 21, 330, 498, 557
Կովկաս, 11, 71, 218, 442, 476, 503, 577, 586, 587
Կովկասյան լեռներ, 476, 577
Կորդոֆան, 210, 420-422
Կսար աս-Սաղիր, 413
Կրետե, 44, 191, 212, 222, 236, 247, 443
Կուբան, 44
Կուտ ալ-Ամարա, 587, 589
Կուրնա, 586

Հաբաշ, 102
Հալեբ, 29, 33, 48, 49, 68, 74, 76, 77, 83, 102, 108, 134-136, 141, 142, 216, 232, 258, 259, 261, 276, 334, 340, 351, 438, 444, 493, 554, 556, 557, 561, 563, 564, 570, 571, 582, 627, 633
Համա, 29, 216, 553, 554, 565, 579, 627, 633
Համադան, 142
Համզա, 595
Հայաստան, 27, 28, 44, 132, 133, 142, 190, 351, 435, 454, 456-458, 486, 498, 557, 560, 561, 573-575, 624, 633, 637
Հայկական Կիլիկիա, 625
Հայյ, 588
Հայֆա, 122, 215, 245, 291, 556, 557
Հաջն, 471
Հասբայյա, Հասբիյյա, 315, 318, 323
Հաուրան, 235, 270, 297, 303, 311, 321, 340
Հաքյարի, 556
Հեբրոն, 620, 623
Հելիոպոլիս, 123

Հերցեգովինա, 44, 399
Հիջազ, 8, 17, 35-38, 72, 95-102, 199-207, 448, 501, 508, 510-514, 525, 536, 538, 540-551, 554, 556, 566, 581, 585, 594, 596-601, 605-612, 616, 617, 621, 622, 629, 630, 637
Հնդկական օվկիանոս, 90, 253, 505, 516, 592, 630
Հնդկաստան, 113, 119, 124, 266, 442, 507, 592
Հոլանդիա, 105, 107, 110, 150, 410
Հոմս, 216, 218, 284, 484, 554, 556, 627, 633
Հորդանան, 39, 44, 504, 549, 552, 570, 585, 608, 624, 634
Հորդանան, գետ, 621, 623
Հռոմ, 14, 294, 582
Հունաստան, 19, 44, 211-214, 339, 457, 486, 575
Հունգարիա, 19, 22, 44,
Հունքիյար Իսքելեսի, 222, 225, 226, 239, 240, 242

Ղազա, 32, 75, 122, 215, 530, 582, 608, 618
Ղանթարա, 530
Ղարաբաղ, 141
Ղրիմ, 21, 44, 503
Ղրիմի խանություն, 21

Ճապոնիա, 497, 629
Ճենովա, 107, 110

Մաան, 38, 79, 530, 621-626
Մադինա, 17, 35, 36, 47, 72, 95, 97, 100, 102, 199-201, 206, 421, 508, 513, 546, 550, 595, 597-600, 608, 609, 621-623
Մադրիդ, 410
Մալթա, 43, 291, 302
Մակեդոնիա, 44, 152, 158, 443, 464, 465, 471
Մահդիական պետություն, 417, 423, 425
Մաղդաբա, 618
Մանազկերտ, 14, 15
Մանասիֆ, 310
Մասավա, 210
Մասկատ, Մասկադ, 42, 103, 206
Մարակեշ, 406, 412, 414
Մարաղա, 405
Մարաշ, 240, 471, 558
Մարդին, 556
Մարոկկո, 44, 53, 341, 389, 390, 405-417, 501, 505, 513, 523, 609
Մարջ Դաբիք, Մարջ Դաբիքի ճակատամարտ, 29, 38, 39, 49, 68, 75, 626
Մարսել, 181
Մեթն, 280, 290, 306, 310, 311
Մեծ Բրիտանիա, 237, 378, 427, 494, 506, 517, 518, 522, 523, 538-546, 549-559, 587, 588, 590, 591, 607, 608, 611, 612, 616, 629
Մեծ Լիբանան, 81
Մեսքենե, 560
Մերսին, 471, 549, 554
Մերձավոր Արևելք, 5, 7, 10-15, 21, 40, 42, 110, 152, 196, 218, 238, 247, 341, 344, 516, 590, 629
Մերվ, 14
Մեքքա, 35-37, 47, 72, 95, 97, 100, 102, 200-206, 421, 451, 491, 492, 507, 508, 510, 511, 537, 540, 541, 544-546, 550, 566, 567, 595-606, 629
Միջագետք, 284, 489, 262, 504, 506, 582, 586-588, 591, 592, 610, 637
Միջերկրածովյան ավազան, 43
Միջերկրական ծով, 113, 150, 245, 288, 360, 384
Մոլդովա, 22, 44
Մոնաստիր, 465
Մոստագան, 386
Մոսուլ, 42, 89, 142, 256, 493, 494, 529, 556, 561, 565, 589
Մոսուլի վիլայաթ, 89, 256, 529, 556
Մորեա, 21, 211-214
Մուդրոս, 636, 637
Մուխթարա, 304, 309, 310
Մուհամմարա, 597
Մուշ, 458
Մուսա լեռ, 566

Յանբո, 199, 200, 597
Յաֆֆա, 610

Նաբլուս, 85, 482, 624-626
Նազարեթ, 81, 85, 622, 626
Նախիջևան, 14
Նահր ալ-Ումար, 561
Նաջաֆ, 41, 42, 47, 92, 256, 265, 529, 530
Նաջդ, 97, 98, 102, 201-207, 262, 267, 449, 501, 510, 513, 526, 597
Նավարին, 212, 213, 240
Նաուֆալ, 286
Նեապոլ, 451
Նեզիբ, 357
Նեղոս, 118, 120, 121, 150, 176, 273, 359, 361, 419, 437, 516
Նիկիա, 18
Նիկոմեդիա (Իզմիթ), 18
Նիկոպոլիս, 19
Նիշապուր, 14
Նյուրենբերգ, 580
Նոր Ջուղա, 142
Նուբիա, 209

Շամ, 76, 584
Շամմարի էմիրություն, 207

Շամմարի ֆեոդալական իշխանապետություն, 206
Շամմարների պետություն, 207
Շատ ալ-Արաբ, 561, 586
Շուֆ, 79, 270, 275, 303-306, 310
Շվեյցարիա, 487

Պաղեստին, 32, 39, 44, 77, 85, 87, 88, 92, 113, 126, 135, 213, 215, 223, 227, 229-236, 241-246, 268, 271, 275, 276, 285, 291, 292, 333, 339-342, 442, 444, 446, 484, 501, 504, 505, 523, 524, 526, 528, 529-533, 536, 549, 552, 556, 558, 570, 585, 588, 608, 610-613, 617, 619, 623, 624, 628, 631-637
Պայմանագրային Օման, 207
Պարսից ծոց, 90, 94, 103, 143, 207, 238, 239, 241, 253, 254, 265, 266, 504, 505, 523, 587, 592, 630
Պարսկաստան, 28, 40, 41, 89, 93, 142, 255-257, 265, 266, 587, 592
Պետրոգրադ, 557, 616
Պիզա, 110
Պորտ Սաիդ, 566
Պորտուգալիա, 105, 410
Պրուսիա, 112, 113, 241, 242, 244-246, 309, 317, 320, 322, 324, 326, 327, 330, 331
Պոդոլիա, 44

Ջազիրա իբն Օմար, 557
Ջավախք, 14
Ջեբել Դրուզ, 444, 447, 530, 626
Ջեզզին, 84
Ջենին, 482
Ջերբի, 261, 262
Ջիդդա, 36, 200, 596, 597, 607
Ջուբեյլ, 245, 273, 274, 276, 281, 288, 291, 299
Ջուղա, 141

Ռաբիղ, 597
Ռամադի, 593
Ռամազանօղլուի բեյլիք կամ բեյություն, 16
Ռաշայյա, 315, 318
Ռաս ուլ-Այն, 561
Ռաֆաթ, 624
Ռեյֆուն գյուղ, 314
Ռեսնա ամրոց, 465
Ռիդանիյա, 32
Ռիյադ, 102, 204-207, 371, 372
Ռոզետտա, 161, 184, 190
Ռումի սուլթանություն, 15, 25
Ռումինիա, 457, 575
Ռուսական կայսրություն, 476, 498, 503
Ռուսաստան, 24, 54, 105, 110, 139, 152, 212, 215, 218, 219-226, 236-244, 258, 265, 317, 320, 323-327, 330, 335, 351, 370, 399, 410, 426, 465, 456, 476, 496, 498-500, 503, 506, 556-558, 586, 587, 613, 614, 616

Սայդա, 74, 77, 78, 87, 88, 268, 273, 282, 284, 286, 291, 299, 304, 305, 310, 311, 315-317, 329, 340, 633
Սաիսաթ, 558
Սալոնիկ, 472
Սահարայի անապատ, 396, 406, 407
Սամավա, 593
Սամարա, 524
Սան-Ստեֆանո, 454, 455
Սանայիա, 588
Սանկտ-Պետերբուրգ, 219, 221, 226
Սասանյան Պարսկաստան, 587
Սասուն, 141, 458
Սարուխանի բեյլիք կամ բեյություն, 16
Սաուդյան Արաբիա, 102
Սաֆադ, 75, 81, 85
Սաֆրա, 199
Սեբաստիա, 141
Սելջուկյան պետություն, 14, 15
Սելջուկյան Մեծ սուլթանություն, 15, 25
Սեն-Ժերմեն, 487
Սեննար, 209, 210
Սերբիա, 19, 21, 339, 457, 486, 575
Սեֆյան Պարսկաստան, 28
Սիդոն, 81, 83, 86, 245
Սինայ, 447, 530, 531, 588
Սիրիա, 9, 14, 28-35, 38, 39, 44, 51, 68, 72, 74-78, 87-89, 92, 95, 97, 102, 108, 110, 113, 119, 122, 123, 126, 130, 134, 138, 141, 177, 197, 198, 213-217, 223, 227, 229-236, 239-246, 262, 268, 270-276, 282, 284-295, 317, 319-324, 329, 333, 338-342, 344, 345, 348, 349, 438, 445-447, 471, 480, 482, 484, 486, 487, 495, 501, 505, 509, 511, 514, 523-538, 544, 546, 548, 549, 551, 552, 556, 558, 562, 565, 570, 574, 581, 582, 584, 585, 594, 598, 601-603, 608, 609, 613, 618, 620, 624, 627, 628, 631-637
Սիրիական անապատ, 262
Սողյուր, 18
Սոֆիա, 51
Սպիտակ Նեղոս, 419

Սվաս, 458, 561, 637
Ստամբուլ, 21, 41, 42, 48, 50, 51, 53, 64, 68, 70-75, 79, 81-95, 103, 104, 109, 149, 155-157, 162, 165, 166, 171, 178, 190, 198, 201, 202, 215-221, 240-243, 252, 253, 260, 264-268, 275, 299-302, 306, 320, 326, 329, 330, 336, 339, 340, 362, 366, 382, 432, 435, 436, 447, 458, 465, 468, 471, 472, 480, 484, 494, 498, 502, 508, 510-514, 526, 529, 534, 535, 539, 540, 541, 547, 548, 565, 581, 599, 600, 604, 637
Ստորին Պովոլժիե, 503
Սուդան, 176, 177, 207-211, 223, 227, 236, 241, 246, 285, 339, 341, 355, 366, 417-428, 500, 504, 513, 522, 524, 551, 596, 607
Սուեզ, 360, 364, 380
Սուեզի գոտի, 531, 532
Սուեզի ջրանցք, 360, 361, 363, 367, 524, 530, 531
Սուլեյմանիա, 256, 265
Սուր, 88, 283, 284, 291
Սուրսոք, 286
Սուվեյդիա, 447
Սև ծով, 18, 21, 44, 557
Սեր, 637

Վադի Դռաա, 406
Վալախիա, 19, 22, 44
Վան, 131, 141, 458, 561, 637
Վասիտ, 261, 262
Վատիկան, 294
Վենետիկ, 22, 105-110
Վիեննա, 22, 331
Վոլգա, 442
Վրաստան, 28, 44, 131

Տակա, 210
Տանժեր, 390, 405, 408, 411, 416, 417
Տավրոս, 191
Տավրոս լեռնաշղթա, 224, 447, 505
Տետուան, 409
Տիբերիա, 81, 85
Տիգրիս, 266, 587, 588
Տիզբոն, 587
Տյուրոս, 245, 633
Տրանսիլվանիա, 44
Տրապիզոն, 21, 131
Տրիպոլիտանիա, 44, 103, 501
Տրոպոլի, 42-44, 74-78, 81, 83, 87, 103, 104, 136, 268, 284, 286, 288, 311, 328, 340, 411, 447
Տոսկանա, 81, 82
Տուլոն, 114
Տրիեստ, 181

Ցեյլոն կղզի, 382

Ուադի աթ-Թայմ, 311
Ուրալ, 442
Ուրմիա, 557
Ուրֆա, 240, 548, 556

Փարիզ, 53, 111, 113, 183, 192, 225, 242, 317, 323, 326, 353, 365, 392, 394, 416, 432, 433, 445, 447, 448, 460, 464, 465, 473, 482, 483, 489, 605, 606, 630
Փոքր Ասիա, 10-21, 27, 33, 122, 136, 143, 216-218, 222-224, 246, 339, 498, 504, 548, 636

Քաբան, 76
Քարթլի, 14
Քեսրվան, 277, 280, 306, 313-315, 322

Քերբելա, 41, 42, 47, 92, 96, 102, 250, 256, 265, 529, 530, 593
Քերմանշահ, 142
Քրդստան, 44, 248, 255, 256, 265
Քուչուկ-Կայնարջի, 54
Քուվեյթ, 103, 513, 523, 597

Օմայյաներ, 75
Օման, 97, 103, 207
Օմդուրման, 425
Օսմանյան բեյլիք (բեյություն) կամ Օսմանլ, 16, 17, 19, 44
Օսմանյան կայսրություն, 4, 5, 8, 9, 17, 19, 21, 24, 25, 40, 43, 45, 47, 52, 53, 55-71, 73, 77, 78, 81, 82, 91-94, 105-110, 115, 120, 124-134, 138, 142, 146, 147, 150, 155, 165, 166, 171, 179, 186, 190, 196, 219, 223, 224, 239, 247, 319, 326, 327, 329, 331, 333, 335-340, 347, 354, 361, 362, 366, 382, 397, 399, 405, 426, 429-448, 451, 453-457, 461, 463, 464, 466, 467, 469, 473, 475, 478-481, 485-490, 492, 495, 497-511, 515, 524, 533-539, 547, 548, 560, 561, 566, 569, 570, 574-579, 583, 585, 586, 590, 592, 601, 614, 635-637
Օրան, 386, 395
Օրմուզ կղզի, 90

Ֆազողլու, 209, 210
Ֆաշոդա, 210, 425, 441
Ֆաո նավահանգիստ, 266, 586
Ֆես, 406, 413-416
Ֆեցա, 500

Ֆիլիպվիլ, 395
Ֆլորենցիա, 82
Ֆրանսիա, 7, 8, 105107-125, 147-160, 168, 182, 191, 212, 215, 218-224, 236-245, 297-302, 309, 316-328, 348, 351, 356, 360, 361, 363-376, 383-402, 408-416, 435-448, 460, 487, 488, 489, 496-509, 513, 532, 544, 555-559, 590, 604, 606, 607, 610, 613-617, 624, 625, 629, 630, 634, 636

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, հ. Բ, Երևան, 1967:
2. **Ազատեան Լ.** Հայ որբերը մեծ Եղեռնի, Գիրք առաջին, Լոս Անճելըս, 1995, Գիրք երկրորդ, Լոս Անճելըս, 1999, Գիրք երրորդ, Լոս Անճելըս, 2002:
3. **Ազատյան, Հ. Գ.**, Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002:
4. **Ալպոյաճեան Ա. Ա.**, Իրաքի հայերը, Երևան, 2003:
5. **Ալպոյաճեան Ա. Ա.**, Պատմություն հայ գաղթականության, հ. 1, Կահիրե, 1941: Հ. 2, Կահիրե, 1955:
6. **Ահարոնյան Գ. Փ.**, Խոհեր հիսնամյակի ավարտին. 1915–1965, Պեյրութ, 1966:
7. **Արզումանյան Մ. Վ.**, Հայաստանը 1914–1917 թթ., Երևան, 1969:
8. Արևելագիտական ժողովածու, հ. I, Երևան, 1960, հ. II, Երևան, 1964:
9. **Երեմեն Դ. Ե.**, Թուրքերի ծագումը, Երևան, 1975:
10. Թուրքական աղբյուրները Հայաստանի. հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Թարգմանություն թուրքական բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով: Հ. Ա: Կազմեց **Ա. Խ. Սաֆրաստյան**, Երևան, 1961:
11. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Թարգմանություն թուրքերեն բնագրերերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով: Հ. Բ: Կազմեց **Ա. Խ. Սաֆրաստյան**, Երևան, 1964:
12. Թուրքական աղբյուրներ. Հ. Գ, Էվլիյա Չելեբի: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Ա. Խ. Սաֆրաստյանի**, Երևան, 1967:
13. Թուրքական աղբյուրներ. Հ. Դ: Թարգմանություն բնագրերից **Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի**, Երևան, 1972:
14. **Ինճիկյան Հ. Գ.**, Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ–տնտեսական ակնարկ, Երևան, 1984:
15. **Ինճիկյան Հ. Գ.**, Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը, Երևան, 1990:
16. **Կարապետյան Ռ. Կ.**, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:
17. **Կիրակոսյան Ջ. Ս.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:
18. Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան, 1996:
19. Հայաստանի հարակից երկրների պատմություն, հեղ. կոլ., Երևան, 1992:
20. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), պրոֆ. **Ջ. Ս. Կիրակոսյանի** խմբագրությամբ, Երևան, 1972:

21. Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը, ծանոթագրությունները **Ա. Հ. Փափազյանի,** Երևան, 1988:
22. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Խմբագրությամբ պրոֆեսոր **Մ. Գ. Ներսիսյանի,** Երևան, 1991:
23. **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.,** Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986.
24. **Հարությունյան Ա. Հ.,** Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
25. 1915 թ. հայոց ցեղասպանությունը: Պատմության և պատմագիտության հարցեր, Երևան, 1995:
26. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Ազգային–ազատագրական պայքարը Լիբանանում, Երևան, 1967:
27. **Հովհաննիսյան Ն. Հ.** Հոկտեմբերը և ազգային–ազատագրական շարժման վերելքը Արաբական արևելքում – Վ. Ի. Լենինը և Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը, Երևան, 1969:
28. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Օսմանյան տիրապետության հաստատումը արաբական երկրներում (XVI–XVIII դդ.): Պայքար օսմանյան տիրապետության տապալման համար (XIX դ.–1918 թ.) — Հայաստանի հարակից երկրների պատմություն, Գլ. II, # 2, 3, Երևան, 1992:
29. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական ժամանակակից պատմագրության մեջ, Երևան, 1996:
30. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002:
31. **Հովհաննիսյան Ն. Հ.,** Արաբական երկրների պատմություն, հ. I, Երևան, 2003:
32. **Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Հ.,** Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975:
33. Հունական արխիվային փաստաթղթեր հայ–հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920 թթ): Թարգմանություն հունարենից **Հ. Մ. Բարթիկյան,** Երևան, 1998:
34. **Ղազարյան Հ. Մ.,** Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001:
35. Մերձավոր և Միջին Արևելքի երկներ և ժողովուրդներ, հ. III, Արաբական երկրներ, Երևան, 1967:
36. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. V, Թուրքիա, Երևան, 1970:
37. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Արաբական երկրներ, Երևան, 1974:
38. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VII, Քրդագիտություն, Երևան, 1975:
39. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IX, Արաբական երկրներ, Երևան, 1978:
40. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. X, Թուրքիա, Երևան, 1979:
41. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XII, Թուրքիա, Երևան, 1985:
42. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989:
43. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVI, Երևան, 1996:
44. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, 1998:

45. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIX, Երևան, 2000:
46. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001:
47. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXI, Երևան, 2002:
48. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2003:
49. **Նաջարյան Ե. Հ.**, Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985:
50. **Նաջարյան Ե. Հ.**, Արաբական ազգային մշակութային զարթոնքը, Երևան, 1988:
51. **Պայրամեան Ա. Ա.**, Կիլիզա. Հայկական Քիլիս, Երևան, 2001:
52. Պատմութիւն Արիստակեայ Վարդապետի Լաստիվերացիոյ, Թիֆլիս, 1912:
53. **Պոյաճյան Տ. Յ**, Հայկական լեզեոնը, Ուոթրթաուն, 1965:
54. **Սարգսյան Ե. Ղ.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, 1914–1918 թթ., Երևան, 1964:
55. **Փափազյան Ա. Հ.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XVI–XIX դարեր), Երևան, 1999:
56. **Փափազյան Ա. Հ.**, Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:
57. **Փափազյան Ա. Հ.**, Թուրք վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ–մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թթ.), Երևան, 2002:
58. **Քիլիմջյան Գ. Ա.**, Թուրք–հունական հարաբերությունները 1908–1914 թթ., Երևան, 1988:
59. **Վարժապետյան Ս. Հ.**, Հայերը Լիբանանի մեջ. Հանրագիտարան Լիբանանի հայ գաղութի, Գ հատոր, Պեյրութ, 1981:
60. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI–XVII դդ. Կանոնանամեներ): Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Ա. Սաֆրաստյանի և Մ. Ջուլալյանի**, Երևան, 1964:
61. **Ֆայեզ էլ Ղոսեյն**, Ջարդերը Հայաստանի մեջ (Ականատեսի վկայություններ), Գահիրե, 1960:
62. **Абд ар–Рахман ал–Джабарти.** Египет в период экспедиции Бонапарта (1798–1801), Москва, 1962.
63. **Абд ар–Рахман аль–Кавакиби.** Природа деспотизма и гибельность порабощения, перев. с араб. Исследование **З. И. Левина,** Москва, 1964.
64. **Абдаррахман ар–Рафии.** Восстание 1919г. в Египте, сокращ. перевод с арабского, Москва, 1954.
65. **Аветян А. С.** Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, Москва, 1966.
66. **Адамов А.** Ирак Арабский, СПб., 1901.
67. **Амин Саид.** Восстания арабов в XX веке, пер. с араб. Москва, 1964.
68. **Аралов С. И.** Воспоминания советского дипломата, Москва, 1960.
69. Армянский вопрос. Энциклопедия, Ереван, 1991.
70. **Арутюнян А. О.** Кавказский фронт. 1914–1917, Ереван, 1971.
71. **Базили К. М.** Сирия и Палестина под турецким правительством, Москва, 1962.
72. **Бартольд В. В.** Халиф и Султан, Сочинения, т. VI, Москва, 1966.
73. **Бодянский В. Л.** Современный Бахрейн. Справочник, Москва, 1976.
74. **Бондаревский Г. Л.** Английская политика и международные отношения в басейне Персидского залива, М. 1968.
75. **Брукс Майкл.** Нефть и внешняя политика, Москва, 1949.
76. **Валерс Ж.** Крестьяне Сирии и Ливана, Москва, 1962.

77. **Васильев А. М.** Пуритане ислама? Москва, 1967.
78. **Васильев А. М.** История Саудовской Аравии (1745—1973), Москва, 1982.
79. **Васильев Л. С.** История Востока. Т. 1, Москва, 2001.
80. **Вильчевский О. Л.** Курды. Введение в этническую историю курдского народа, М.—Л., 1961.
81. **Витол А. В.** Османская империя. Начало XVIII в. Москва, 1987.
82. **Губер А. А., Ким Г. Ф., Хейфец А. Н.** Новая история стран Азии и Африки, Москва, 1982.
83. Геноцид армян в османской империи. Сборник документов материалов. Под редакцией **М. Г. Нерсисяна**, Ереван, 1982.
84. **Данциг Б. М.** Ирак. Москва, 1955.
85. **Данциг Б. М.** Ирак в прошлом и настоящем. Москва, 1960.
86. Дипломатический словарь. Т. I, Москва, 1960. Т. II, Москва, 1961. Т. III, Москва, 1964.
87. **Джафар Хайят.** Иракская деревня. Пер. с араб., Москва, 1953.
88. Документы внешней политики СССР. Т. I, Москва, 1957.
89. Документы внешней политики СССР. Т. VI. Москва, 1962.
90. **Иванов Н. А.** Кризис французского протектората в Тунисе. Москва, 1971.
91. **Иванов Н. А.** Османское завоевание арабских стран (1516—1574). Москва, 1984.
92. **Инджикян О. Г.** Буржуазия Османской империи. Ереван, 1977.
93. **Инджикян О. Г.** Социальная психология геноцида. Москва, 1993.
94. История дипломатии. Т. II. Под редакцией акад. **В. П. Потемкина.** М.—Л., 1945.
95. **Кильберг Х. И.** Восстание Араби—паши в Египте. Москва, 1937.
96. **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России. Москва, 1926.
97. **Котлов Л. Н.** Становление национально—освободительного движения на Арабском Востоке (середина XIX в.—1908). Москва, 1975.
98. **Котлов Л. Н.** Становление национально—освободительного движения в Арабских странах Азии. 1908—1914. Москва, 1986.
99. **Крачковский Ю. И.** Избранные сочинения, т. 3, М—Л, 1958.
100. **Крымский А.** История Турции и ее литература. Т. I. Москва, 1916.
101. **Крымский А. Е.** История новой арабской литературы. XIX—начало XX века. Москва, 1971.
102. **Лазарев М. С.** Крушение турецкого господства на Арабском Востоке. Москва, 1960.
103. **Левин И.** Ирак. Москва, 1937.
104. **Левин З. И.** Развитие основных течений общественно—политической мысли в Сирии и Египте (новое время). Москва, 1972.
105. **Ллойд С.** Пеки—близнецы. Москва, 1972.
106. **Ллойд Джордж Д.** Правда о мирхых договорах. Т. I, II. Москва, 1957.
107. **Луцкая Н. С.** Очерки новейшей истории Марокко. Москва, 1973.
108. **Луцкий В. Б.** Новая история арабских стран. Москва, 1971.
109. **Манасерян Л. П.** Марокко в борьбе за независимость. Ереван, 1969.
110. **Матвеев К. П.** Ассирийцы и ассирийская проблема в новое и новейшее время. Москва, 1979.
111. **Миллер А. Ф.** Краткая история Турции, Москва, 1948.
112. **Миллер А. Ф.** Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века, М.—Л, 1947.

113. **Нерсесов Г. А.** Дипломатическая история египетского кризиса. 1981—1982гг. Москва, 1979.
114. Новая история Армении в трудах современных зарубежных авторов, (коллектив авторов). Ереван, 1993.
115. Новая история стран Азии и Африки. Москва, 1975.
116. Новейшая история арабских стран (1917—1966). Москва, 1968.
117. **Новичев А. Д.** Турция. Краткая история. Москва, 1965.
118. **Оганесян Н. О.** Становление и развитие востоковедения в Советской Армении. В кн. Востоковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина). Москва, 1988.
119. **Оганесян Н. О.** Национально—освободительное движение в Ираке (1917—1958гг). Ереван, 1976.
120. **Оганесян Н. О.** Арабская историография по новой истории Армении. В кн. Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993.
121. Османская империя. Москва, 1986.
122. **Панченкова М. Т.** Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860—1861гг. Москва, 1966.
123. **Пегов С., Алитовский С.** Ирак. М. 1966.
124. **Петросян Ю. А.** Новые османы: и борьба за конституцию 1876г. в Турции. Москва, 1958.
125. **Петросян Ю. А.** Младотурецкое движение (вторая половина XIX—начало XX в.). Москва, 1971.
126. Проблемы современной советской арабистики. Труды IV всесоюзной конференции арабистов. Ереван, 1985. Вып. I. Современные политические и социально—экономические проблемы арабских стран. Ереван, 1988.
127. Проблемы современной советской арабистики. Вып. II. Проблемы истории и филологии. Ереван, 1990.
128. **Прошин Н. И.** Страны Аравийского полуострова. Москва, 1958.
129. **Прошин Н. И.** История Ливии. Конец XIX в.—1965. Москва, 1975.
130. Раздел Азиатской Турции (по секретным документам б. Министерства иностранных дел). Под. ред. **Е. А. Адамова.** Москва, 1924.
131. **Ротштейн Ф. А.** Захват и закабаление Египта. Москва, 1959.
132. **Салиби Камаль.** Очерки по истирии Ливана. Пер. с араб., Москва, 1969.
133. **Саркисян Е. К.** Экспансионистская политика Османской империи в Закавказье. Накануне и в годы первой миривой войны. Ереван, 1962.
134. **Саркисян Е. К.** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, 1972.
135. Саудовская Аравия. Справочник. Москва, 1990.
136. **Сафрастян Р. А.** Доктрина османизма в политической жизни Османской империи. Ереван, 1985.
137. **Себа Поль.** Тунис. Пер. с франц. Москва, 1953.
138. **Смилянская И. М.** Крестьянское движение в Ливане в первой половине XIX в. Москва, 1965.
139. **Смилянская И. М.** Социально—экономическая структура стран Ближнего и Среднего Востока на рубеже нового времени. Москва, 1979.
140. **Смирнов С. Р.** История Судана. Москва, 1968.
141. **Степанян С. С.** Армения в политике империалистической Германии (конец XIX—на-

чало XX века). Ереван, 1975.
142. **Степанянц М. Т.** Мусульманские концепции в философии и политике XIX–XX вв. Москва, 1982.
143. Современная Сирия. Москва, 1974.
144. Страны Аравии. Москва, 1964.
145. **Тума Э.** Национально–освободительное движение и проблема арабского единства. Москва, 1977.
146. **Федченко А. Ф.** Ирак в борьбе за независимость. Москва, 1970.
147. **Фридман Л. А.** Египет (1882–1952). Социально–экономическая структура деревни. Москва, 1972.
148. **Ш. аш–Шафии.** Развитие национально–освободительного движения в Египте (1882–1956). Пер. с араб., Москва, 1961.
149. **Шпилькова В. И.** Младотурецкая револ–ция 1908–1909гг. Москва, 1977.
150. **Шульце Э.** Борьба за персидско–месопотамскую нефть. Пер. с немецкого, Москва, 1924.
151. **Шумов С., Авдеев А.** Ирак. История. Народ. Культура. Москва, 2002.
152. **Abd al–Rahman al–Bazaz.** Muhatharat an al–Iraq min al–Ihtilal Hatta al–Istiklal. Al–Kahira, 1954.
153. **Abd al–Razak al–Hasani.** Tarih al–Iraq al–Siyasi al–Hadis. 1–3. Saida, 1957.
154. **Abd al–Razak al–Hilali.** Muajam al–Iraq. Baghdad. 1953.
155. **Abouchdid E.** 30 Years of Lebanon and Syria. 1917–1947. Beirut, 1947.
156. **Adib Farhat.** Lubnan wa Suriya. Beirut.
157. **Adnan al–Sayid Husayn.** Hak Takrir al–Masir. Al–Kadiya al–Armaniya. Numuziha. Burj Hamud. Lubnan, 1998.
158. Ambassador Morgenthau` s Story. By **Henry Morgenthau.** Formerly American Ambassador in Turkey. New York, 1919.
159. **Amil Tuma.** Al–Arab wa Tatawur Al–Tarihi fi–l Shark al–Awsat. Haifa, 1963.
160. **Amin Said.** Al–Saura al–Arabiya al–Qubra. Djuz al–Salis, Al–Kahira, 1934
161. **Amine Youssef Bey.** Independent Egypt. London, 1940.
162. An Introduction to the Past and Present of the Kingdom of Iraq. By a Committee of Officials. Baghdad, 1946.
163. **Antonius G.** The Arab Awakening. New York, 1946.
164. **Asad Muflih Daghir.** Saura al–Arab. Haleb, 1989.
165. Asala al–Arab wa–l waka'a al–Arman. Beirut, 2000.
166. **Bardakjian G. P.** Hitler and the Armenian Genocide. Camb. Mass., 1985.
167. Bliss ddwin Munsell. Turkey and Armenian Atrocities. A Reign of Terror. New York, 1896.
168. **Bullard R.** Britain and the Middle East. From the Earliest Times to 1950. London, 1951.
169. **Colvin Archibald.** The Making of Modern Egypt. London, 1906.
170. **Djalal Nuri.** Tarih al–Istikbal. Istanbul, 1913.
171. Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record. By **J. C. Hurewitz.** Vol. I. Princeton, 1956.
172. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, vol. I., London, 1947.
173. Documents on British Foreign Policy. 1919–1939. 1st Series, vol. IV. London, 1952.
174. Documents on the Genocide Against the Assyrian–Suryoye–Chaldean–Arameic People (Seyfo). 1999.

175. **Edmunds C.** Kurds, Turks, Arabs. London, 1957.
176. **Foster H.** The Making of Modern Iraq. Oclahoma, 1935.
177. **Fuad Hasan Hafiz.** Tarih al–Shaab al–Armani Munzu al–Bidayat Hatta al–Yaum. Al–Kahira, 1986.
178. **Gavan S.** Kurdistan. Divided Nation of the Middle East. London, 1958.
179. **Haddad G.** Fifty Years of Modern Syria and Lebanon. Beirut, 1960.
180. **Hitti Ph.** History of the Arabs. From the Earliest Times to the Present. London, 1951.
181. **Hitti Ph.** History of Syria, Including Lebanon and Palestine. London, 1951.
182. **Hitti Ph.** Lebanon in History. London, 1957.
183. **Hitti Ph.** Syria. A Short History. New York, 1959.
184. **Hogarth D. G.** Arabia. London, 1922.
185. **Hovhannisyan N. H.** The Armenian Genocide. Armenocide. Yerevan, 2002.
186. **Hourani A.** Syria and Lebanon. London, 1946.
187. **Hourani A.** Minorities in the Arab World. London, 1947.
188. **Hourani A.** Arabic Thought in the Liberal Age. 1798–1939. London, 1970.
189. **Ihsan Hindi.** Qifah al–Shaabi al–Arabi al–Suri. 1908–1948. Dimashk, 1962.
190. **Ireland Ph.** Iraq. A Study in Political Development. London, 1937.
191. **Jacob Harold F.** Kings of Arabia. The Rise and Set of the Turkish Sovereignty in the Arabian Peninsula. London, 1923.
192. Jean and Simonne. Egypt in Transition. New York, 1958
193. **Kedourie E.** England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914–1921. London, 1956.
194. **Kirk G. A** Short History of the Middle East. From the Rise of Islam to Modern Times. London, 1961.
195. **Kouyoumjian Ohannes Pasha.** Le Liban. A la veille au Debut de la Grande Guerre. Memoires d'un gouverneur, 1913–1915. Paris, 2003.
196. **Lawrence T.** Seven Pillars of Wisdom. London, 1935.
197. The Letters of Gertrude Bell. London, 1930.
198. **Longrigg S.** Iraq. 1900 to 1950. London, 1953.
199. **Longrigg S.** Oil in the Middle East. Its Discovery and Development. London, 1955.
200. **Longrigg S.** Syria and Lebanon under French Mandate. London, 1958.
201. **Longrigg S. and Stoakes F.** Iraq. London, 1958.
202. **Mahmud Rifat al–Imam.** Al–Arman fi Misr al–Karn al–Tasih Ashar. Al–Kahira, 1995.
203. **Mahmud Rifat al–Imam.** Al–Kadiya al–Armaniya fi–l Duwlati al–Usmaniya. 1878–1923. Al–Kahira, 2002.
204. **Mahmud Mustafa Miru.** Al–Ar'a al–Idjtimaghiya, al–Siyasiya al–Aminar–Riyhani. Haleb, 1996.
205. **Main E.** Iraq From Mandate to Independence. London, 1935.
206. **Majid Khadduri.** Independent Iraq. A Study in Iraqi Politics. London, 1960.
207. **Marlowe J.** Anglo–Egyptian Relations. 1800–1953. London, 1954.
208. **Marlowe J.** Arab Nationalism and British Imperialism. London, 1961.
209. **Marwan al–Mudawar.** Abra Tarih. Beirut, 1982.
210. Al–Masadir al–Arabiya hawla Jarima Ibada al–Armaniya. Beirut, 1988.
211. **Meo Leila.** Lebanon. Improbable Nation. Bloomington, 1968.
212. The Middle East and North Africa. 1969–1970. Survey and Directory. London, 1969.
213. **Moussa Prince.** Un Genocide impuni: L'Armenocide. Beyrouth, 1975
214. **Moussa Prince.** Mujazar al–Arman Jarai'm did al–Insaniya. Beirut, 1956

215. **Munir Taki ad–Din.** Wiladat al–Istiklal. Beirut, 1953.
216. **Munir Taki ad–Din.** Al–Jala'. Beirut, 1956.
217. **Nabih Faris,** Muhammed Husayn. The Crescent in Crisis. Kansas, 1955.
218. **Nadir al–Satar.** Tarih as–Suriya fi Usur al–Hadis. Al–Jaz ul–Awal (1516–1908). Dimashk, 1962.
219. **Najib al–Armanazi.** Muhatharat an Suriya Min al–Ihtilali Hatta al–Jala'. Al–Kahira, 1954.
220. **Naim al–Yaffi.** Mujazar al–Arman wa Mauqif al–Ray al–Amm al–Arabi
221. **Minha.** Al–Lazaqiya, 1992.
222. **Osman at–Turq.** Min Tarih al–Umma al–Armaniya. Haleb. 1960.
223. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Parts Peace Conference. Vol. V. Washington, 1946.
224. Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. Vol. XII. Washington, 1947.
225. **Sami al–Qalali.** Sira' fi Sabili al–Kaumiya al–Arabiya. Haleb, 1959
226. **Samir Arbash.** Arminiya. Ard wa Shaab. Beirit, 1991.
227. **Salih Zahr ad–Din.** Al–Arman. Shaab wa Kadiya. Beirut, 1988.
228. **Salih Zahr ad–Din.** Al–Arman wa al–Arab Baina Al–Turaniya wa al–Sihuniya. Beirut, 1994.
229. **Salih Zahr ad–Din.** Siyasat al–Huqumat al–Usmaniyat fi Arminiya wa Mauqif al–Kuwa al–Duwaliya Minha. Beirut, 1996.
230. **Shaqir Khasbaq, Muhamad al–Mahna, Feisal al–Atrakji.** Jughrafiya al–Iraq. Baghdad, 1960.
231. **Sati al–Husri.** Al–Bilad al–Arabiya wa Duwlat ul–Usmaniya. Beirut, 1960.
232. **Soane E.** To Mesopotamia and Kurdistan in Disguise. London, 1926.
233. **Tufik Ali Beru.** Al–Arab wa Al–Turq fi–I Udud Al–Dusturi al–Usmani. 1908–1914. Al–Kahira, 1960
234. **Tullio Irace.** With the Italians in Tripoli. The Authentic History of the Turco–Italian War. London, 1912.
235. **Veou P.** La passion de la Cilicie. 1917–1922. Paris, 1954.
236. **Wilson A.** Mesopotamia. 1917–1920. A Clash of Loyalties, London, 1931.
237. **Yale W.** Near East. A Modern History. Michigan, 1955.
238. **Young G.** Egypt. London, 1927.
239. **Young H.** The Independent Arab. London, 1933.
240. **Zein N. Zein.** The Struggle for Arab Independence. Beirut, 1960.
241. **Zein N. Zein.** The Emergence of Arab Nationalism. New Tork, 1973.
242. **Ziadeh N.** Syria and Lebanon. London. 1959.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

Գլուխ առաջին
ՕՂՈՒԶԱ–ՕՍՄԱՆՅԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆՎԵԼԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄՈՒՄ (XIII–XV ԴԴ.)

I. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔՈՉՎՈՐ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱ . . . 10
1. Թուրքական առաջին ցեղերի հայտնվելը տարածաշրջանում և դրա մասին հայկական աղբյուրների կարևորությունը . . . 10
2. Թուրքական քոչվորական ցեղերի տարածաշրջան ներթափանցելու նոր փուլը: Դեմոգրաֆիական նոր երևույթ . . . 12

II. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ (1299 թ.) 14
1. Թուրքական գործոնը . . . 14
2. Բեյլիքներ: Օսմանլը կամ Օսմանյան բեյլիքության կազմավորումը . . . 16

III. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ — ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (XIV–XV ԴԴ.) . . . 17
1. Օսմանյան բեյլիքը որպես ագրեսիվ պետություն: Բեյության վերածումը սուլթանության . . . 17
2. Մեհմեդ II Ֆաթիհը և Բյուզանդական կայսրության անկումը . . . 19

IV. «ԹՈՒՐՔ» ԷԹՆՈՍ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԵՐԺԵԼԻ ՏԵՍԱԿԵՏԻ ՄԱՍԻՆ . . . 22

Գլուխ երկրորդ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ (XVI Դ.)

I. ՄԱՐՋ ԴԱԲԻՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ . . . 27
1. Օսմանյան սուլթանության նվաճողական քաղաքականության արևելյան ուղղությունը . . . 27
2. Մարջ Դաբիքի ճակատամարտը և Սիրիայի նվաճումը 29

II. ՌԻԴԱՆԻՅԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ . . . 30
1. Սելիմ I Ահեղի առաջարկությունները եգիպտոսի սուլթան մամլուք Թուման բեյին . . . 30
2. Ռիդանիյայի ճակատամարտը և եգիպտոսի գրավումը . . . 32

III. ԱՐԱԲԻԱՅԻ ՀՊԱՏԱԿՎԵԼԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆԻՆ . . . 35
1. Արաբիայի կարևորությունը Սելիմ I համար 35

2. Օսմանյան տիրապետության հաստատումը Արաբիայի վրա 37
IV. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՑՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ 38
V. ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԻՐԱՔԻ ԳՐԱՎՈՒՄԸ (1534–1538 թթ.) 40
1. Իրաքը կռվախնձոր Օսմանյան կայսրության և շահական Պարսկաստանի միջև 40
2. Թուրք–պարսկական պատերազմը և Իրաքի գրավումը Օսմանյան պետության կողմից 41
VI. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ՝ ՄԱՂՐԻԲԻ ՆՎԱՃՈՒՄԸ 42
1. Ալժիրի, Թունիսի և Տրիպոլիի նվաճումը 42
2. Օսմանյան բեյության կայսրության վերածվելու գործընթացի ավարտը 44
VII. ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԿԵՂԾ ԽԱԼԻՖԱՆԵՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ: Դ'ՕՍՍՈՆԻ ՏԵՍԱԴՐՈՒԹԸ 45
1. Իսլամագետների և պատմաբանների տեսակետները օսմանյան սուլթանների անօրինական խալիֆաներ լինելու հարցի վերաբերյալ . 45
2. Հայազգի դ'Օսսոնի հոգևոր սուվերենության տեսադրությը օսմանյան սուլթանների խալիֆա լինելու վերաբերյալ 52

Գլուխ երրորդ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ (XVI–XVIII ԴԴ.)

I. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ 55
1. «Օսմանի սուրը» կայսրության միասնականության պահպանման գլխավոր զենք 55
2. «Արաբները թուրքերից ավելի քաղաքակիրթ ժողովուրդ են» 58
II. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 62
1. Վարչատարածքային բաժանման ընդհանուր սկզբունքները 62
2. Կառավարման կենտրոնածիգ համակարգը և նրա առանձնահատկությունները 63
III. ԵԳԻՊՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԵԿ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ: ՄԱՄԼՈՒՔՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐ ԴՌՈՒՌԸ 68
1. «Կանուն ալ–Մըսրի» 68
2. Հարաբերությունների սրումը մամլուքների և Բարձր Դռան միջև: Մամլուքներ Ալի բեյը և Մուհամմադ ազ–Զահաբին 70
IV. ՍԻՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 74
1. Սիրիայի բաժանումը վիլայաթների: Սիրիան անկախ հռչակելու ալ–Ղազալիի փորձերի ձախողումը 74
2. Սիրիական ավագանու դիրքերի ուժեղացումը կառավարման համակարգում: Ալ–Ազըմների ընտանիքը 76
V. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱԱՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ 78
1. Լիբանանը որպես ներքին ինքնավարությամբ օժտված իշխանապետություն 78

2. Էմիր Ֆախր ադ–Դին II: Լիբանանի անկախության նվաճման նրա փորձերը 80
3. Լիբանանը հետֆախրադդինյան շրջանում: Շիհաբները Լիբանանյան իշխանապետության էմիրներ 85
VI. ԻՐԱՔԸ ՈՐՊԵՍ ՎԻԼԱՅԱԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ: ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՔԻ ՀԱՄԱՐ 89
1. Իրաքի բաժանումը Բաղդադի, Բասրայի և Մոսուլի վիլայաթների . . . 89
2. Թուրք–պարսկական նոր պատերազմներ Իրաքի համար 92
3. Բաղդադի տեղական վալիների դիրքերի ամրապնդումը 93
VII. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԽԵՃԱՆԿԱՐՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ 95
1. Հիջազը որպես մեկ վարչատարածքային միավոր, իսկ օսմանյան սուլթանները Մեքքա և Մադինա քաղաքների սպասավոր 95
2. Եմենի իմամությունը 96
3. Կրոնի ու սրի դաշինքը և վահաբիական պետության առաջացումը Կենտրոնական Արաբիայում 97
VIII. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՂՐԻԲՈՒՄ 103
IX. ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻՈՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ 105
1. Կապիտուլյացիոն ռեժիմի հաստատումը Օսմանյան կայսրությունում . . . 105
2. Կապիտուլյացիոն ռեժիմի տարածումը Օսմանյան կայսրության արաբական երկրների վրա և եվրոպական երկրների ներթափանցման սկիզբը 110
X. ԲՈՆԱՊԱՐՏԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 111
1. Բոնապարտի եգիպտական արշավանքի դրդապատճառները և քաղաքական նպատակները 111
2. Բոնապարտի ներխուժումը Եգիպտոս և եգիպտացիներին ուղղված նրա Մանիֆեստը 114
3. Գիզայի ճակատամարտը, մամլուքների պարտությունը և Կահիրեի գրավումը ֆրանսիացիների կողմից 117
4. Նապոլեոնի դժվարությունները Եգիպտոսում: Հակաֆրանսիական ապստամբությունը 119
5. Բոնապարտի գաղտնի հեռանալը Եգիպտոսից և ֆրանսիական կորպուսի հետագա ճակատագիրը: Կահիրեի երկրորդ ապստամբությունը 122
6. Ֆրանսիացիների հեռանալը Եգիպտոսից 124
XI. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 125
1. Սոցիալ–տնտեսական վիճակի առանձնահատկությունները: Հողը պետական սեփականություն 125
2. Վակուֆային հողային սեփականության ընդլայնումը 127

3. Իլթիզամ կամ իկտա, թիմար և զեամաթ 128
4. Տեղական «Կանուն նամեները» կամ Օրինամատյանները 130
5. Հարկային համակարգը 132
6. Տնտեսական անկում և բնակչության վիճակի վատթարացում 134
XII. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 137
1. Հայ համայնքների գոյության և զարգացման վրա ազդող բացասական գործոնները 137
2. Եգիպտահայերի ծանր վիճակը 139
3. Հայերը Սիրիայում, Լիբանանում և Իրաքում 141

Գլուխ չորրորդ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

I. ՈՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 144
1. Արաբական ազգային ինքնագիտակցության արթնացման ազդակները . . . 144
2. Օսմանյան տիրապետությունից ազատագրվելը որպես արաբական ազգային ինքնագիտակցության կենտրոնական գաղափար 145
II. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՒՍԱԿԱԼ 147
1. Ուժերի նոր հարաբերակցություն Եգիպտոսում XIX դարի սկզբներին . . . 147
2. Թուրք–մամլուքյան ռազմական բախումները 149
3. Մուհամմադ Ալիի հայտնվելը քաղաքական ասպարեզում 152
4. Մուհամմադ Ալիի ճակատագրական քայլը 154
5. Մուհամմադ Ալին Եգիպտոսի կառավարիչ–կուսակալ 157
6. Ծանր փորձություններ Եգիպտոսի նոր կուսակալի համար 1805–1807 թթ. 159
III. ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ 163
1. Կառավարման համակարգի և պետական ապարատի վերակառուցումը . . . 163
2. Բարեփոխումները հողային կամ ագրարային հարաբերությունների ոլորտում 172
3. Բարեփոխումներ զինվորական բնագավառում 178
4. Բարենորոգումներ կրթության մարզում 186
5. Մուհամմադ Ալիի բարեփոխումները և եգիպտահայությունը 189
IV. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ . . . 196
1. Արաբիան Մուհամմադ Ալիի տիրապետության ներքո (1811–1840 թթ.) 197
2. Արևելյան Սուդանի գրավումը և կցումը Եգիպտոսին . . . . . .
3. Եգիպտոսի ներգրավումը հունական գործերին և Մուհամմադ Ալիի նկատառումները 211

V. ԵԳԻՊՏՈՍԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՎՐԱ: ԵԳԻՊՏԱ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (1832–1833, 1839–1840 թթ.) . . 213
1. Եգիպտական զորքերի ներխուժումը Պաղեստին և Սիրիա 213
2. Եգիպտա–թուրքական առաջին պատերազմը (1832–1833 թթ.) 216
3. Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջպմտությունը 218
4. Կյութահիյայի և Հունքիյար Իսքելեսիի պայմանագրերը և եգիպտա–թուրքական առաջին պատերազմի արդյունքները 222
5. Սիրիան և Պաղեստինը եգիպտական տիրապետության տարիներին (1832–1840 թթ.) 227
6. Եգիպտա–թուրքական երկրորդ պատերազմը (1839–1840 թթ.) . . . 236
7. Սուլթան Աբդ ալ–Մաջիդի 1841 թ. հունիսի 1–ի ֆերմանը 246
VI. ԻՐԱՔԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 248
1. Ընդհանուր իրադրությունը երկրում և հարաբերություններն Իրաքի կառավարիչների ու Բարձր Դռան միջև 248
2. Դաուդ փաշան և Իրաքի վերանվանումը «Բաբելոնի երջանիկ թագավորության» 251
3. Թուրք–իրաքյան «պատերազմը» և կյուլեմենների իշխանության տապալումը Իրաքում 258
4. Իրաքը խառվահույզ ժամանակներում (1830–1840–ական թվականներ) . . 260
VII. ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ: ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՏԸ: ԱՐԹԻՆ ԴԱՈՒԴՅԱՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄՈՒԹԱՍՍԱՐԻՖ 267
1. Բաշիր II Շիհաբը Լիբանանյան իշխանապետության էմիր (1788–1840 թթ.) 267
2. Լիբանանյան իշխանապետությունը եգիպտոսի տիրապետության տարիներին 282
3. Լիբանանյան իշխանապետության վերացումը և թուրքական ուղղակի կառավարման հաստատումը 292
4. Լիբանանի երկատումը մարոնական ու դրուզական հատվածների և երկու կայմակամների կառավարման համակարգի հաստատումը . . . 300
5. Դրուզ–մարոնի 1845–1860 թվականների կոտորածները 307
6. Լուի Նապոլեոն III Բոնապարտի կողմից ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի առաքումը Սիրիա 317
7. Լիբանանի օրգանական ստատուտը 323
8. Կարապետ–Հարություն Դաուդյանը ինքնավար Լեռնալիբանանի առաջին մութասարիֆ–կուսակալ 330
VIII. ԹԱՆԶԻՄԱԹԻ ԱՐՇԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 335
1. Սուլթան Աբդուլ Մաջիդը ակամա ռեֆորմատոր 335
2. Թանզիմաթի կիրառման փորձերը Սիրիայում և Իրաքում 338
IX. ՆԱՀԴԱ 341
1. Նահդայի առաջացման նախադրյալները և բնույթը: Նահդայի առաջին գրական–մշակութային փուլը 341

2. Նահդայի երկրորդ փուլը՝ ազգային–հայրենասիրական ուղղությունը . . . 346
3. Հայերի մասնակցությունը և ներդրումը արաբական նահդայում . . . 349
X. ԵԳԻՊՏՈՍԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ 355
1. Քաղաքական իրադրությունը հետմուհամմադալիական Եգիպտոսում . . . 355
2. Գնդապետ Ահմադ Արաբիի ապստամբությունը 369
3. Արաբիի ապստամբության ճնշումը և Եգիպտոսի նվաճումն անգլիացիների կողմից 380
XI. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ 383
1. Ալժիրի դեյի հովհարով հարվածը ֆրանսիական հյուպատոսին և Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից 383
2. Թունիսը ֆրանսիական պրոտեկտորատ 396
3. Մարոկկոն պետությունների պայքարի խաչմերուկում 405
4. Ֆրանսիական պրոտեկտորատի հաստատումը Մարոկկոյի վրա . . 409
5. Սուդանը Եգիպտոսի տիրապետության տարիներին: Մահդիական պետությունը (1885–1898 թթ.) 417
6. Սուդանի ռեկոնկիստան և անգլո–եգիպտական կոնդոմինիումը՝ համատիրությունը Սուդանում (1898–1899 թթ.) 424

Գլուխ հինգերորդ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՆ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՁՈՒԼՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1876–1908 թթ.)

I. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II–Ի ԲԱՆՏ 429
1. «Աս–սուլթան ալ–ահմար» 429
2. Ձուլում 431
3. Հակազուլումյան շարժման և պայքարի դրսևորումներն արաբական երկրներում 443
4. Դարձյալ թուրքական սուլթանների անօրինական խալիֆաներ լինելու հարցի մասին 450
5. Արաբական պատմագրության անդրադարձը հայերի 1894–1896 թթ. աբդուլհամիդյան կոտորածներին 453

Գլուխ վեցերորդ
ԱՐԱԲՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ: ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1908–1914 թթ.)

I. ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 463
1. Իշխանության անցումը երիտթուրքերին 463
2. Արաբ–թուրքական «եղբայրության» մեղրամիսը և խաբկանքը 466
II. ԲՈՆԻ ԹՈՒՐՔԱՑՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԸ . . . 473
1. Արաբները թուրքական նացիոնալիզմի և պանթուրքիզմի արանքում 473
2. Արաբները ապակենտրոնացման և անկախության երկընտրանքի առջև . . 477

Գլուխ յոթերորդ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՇԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՇԻՑ (1914–1918 թթ.)

I. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ (1914–1916 թթ.) 496
1. Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը և հակադիր բլոկների ռազմաքաղաքական նպատակները 496
2. Արաբական գործոնը 500
3. Եգիպտոսը՝ անգլիական պրոտեկտորատ 516
4. Պատերազմի անդրադարձը Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի ներքին դրության վրա 523
5. Կախաղաններ Բեյրութում և Դամասկոսում 532
II. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ 537
1. Մեքքա–Լոնդոն նախնական շփումները 537
2. Հուսեյն–Մակ–Մահոն նամակագրությունը և ապագա արաբական անկախ պետության սահմանների գծումը 546
3. Սայքս–Պիկոյի համաձայնագիրը և արաբական դրամայի վերջին արարը 555
III. ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1915 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ . . 560
1. Արաբների ասպնջականությունը: «Հայերի պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով» 561
2. Հայոց ցեղասպանության լուսաբանությունն արաբական պատմագրության մեջ: Արմենոցիդ 571
IV. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ: ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ 585
1. Պատերազմական գործողություններն իրաքյան ռազմաճակատում: Գեներալ Մոդի դեկլարացիան: Բրիտանական կառավարման գաղութային վարչակարգի հաստատումն Իրաքում 586
2. Աս–սաուրա ալ–արաբիյա ալ–քուբրա՝ արաբական մեծ ապստամբությունը 594
3. Թուրքիայի վերաբերմունքն արաբական ապստամբությանը և նրա ձեռնարկած քայլերը 599
4. «Վերջին մեխը ջիհադի դագաղին» 603
5. Հուսեյն իբն Ալիի թագավոր հռչակվելը և անգլո–ֆրանսիական դիմակայությունը նրա ինվեստիտուրայի հարցում 604
6. Թուրքական բանակի ջախջախումը և Պաղեստինի, Հորդանանի, Լիբանանի և Սիրիայի ազատագրումը 608
7. Հուսեյնի տարաձայնություններն անգլիական և ֆրանսիական դաշնակիցների հետ և դրանց պատճառները 610
8. Ռազմական գործողությունների վերսկսումը և անգլո–արաբական զորքերի նոր հաղթանակները 617

9. Արարայի ճակատամարտը: «Հայ զինվորների սքանչելի կեցվածքը» 624
10. Խան Թումանի հաղթանակը՝ ռնանշ Մարջ Դաբիքի պարտության դիմաց 626
11. Արևելագիտական պատմագիտական գրականության մեջ թուրքերի նկատմամբ տարած հաղթանակներում արաբական ապստամբության նշանակության գնահատականի շուրջը 628
12. Սիրիական առաջին ազգային կառավարության ստեղծումը և տարաձայնությունների նոր փուլը արաբների և դաշնակիցների միջև . . . 631
13. Օսմանյան կայսրության վերջին՝ մահվան ղողանջը 635

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

I. Օսմանյան կառավարողների տոհմածառը. 1299–1922 թթ. 639
II. Մուհամմադ Ալիի դինաստիական տոհմածառը Եգիպտոսում. 1805–1953 թթ. 640
III. Լեռնալիբանանի ինքնավարության մութասարիֆ–կուսակալները. 1861–1914 թթ. 640

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 641

ՔԱՐՏԵԶՆԵՐ

1. Արաբական երկրները օսմանյան տիրապետության ներքո. 1516–1918 թթ.
2. Սիրիայի վարչական բաժանումը օսմանյան տիրապետության օրոք
3. Արաբական երկրների բաժանումն ըստ Սայքս–Պիկոյի անգլո–ֆրանսիական 1916 թ. համաձայնագրի

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 655

CONTENTS

FOREWORD 5

CHAPTER I
THE APPEARANCE OF OGHUZ–OTTOMAN ISLAMIC STATE ON THEATRE OF HISTORY (XIII CENTURY)

I. PENETRATION OF TURKIC NOMADIC TRIBES IN THE MIDDLE EAST, TRANSCAUCASIA AND ASIA MINOR 10
   1. The Appearance of the First Turkic Tribes in the Region and Significance of the Armenian Sources on it 10
   2. New Stage of Penetration of Turkic Nomadic Tribes in the Region. A New Demographic Phenomenon 12
II. EMERGENCE OF THE OTTOMAN STATE (1299) 14
   1. The Turkish Factor 14
   2. The Beyliqs. Formation of Ottoman Beyliq 16
III. THE AGGRESSIVE POLICY OF THE OTTOMAN STATE — WESTERN DIRECTION (XIV–XV CENTURIES) 17
   1. Ottoman Beyliq–an Aggressive State. Transmission of Beyliq into Sultanate. 17
   2. Mehmed II Fatih and the Fall of the Byzantine Empire 19
IV. ON A NON–ACCEPTABLE INTERPRETATION OF «TURK» ETHNICITY 22

CHAPTER II
THE CONQUEST OF ARAB COUNTRIES (XVI CENTURY)

I. THE MARJ DABIQ BATTLE AND THE CONQUEST OF SYRIA 27
   1. The Eastern Direction of the Aggressive Policy of the Ottoman Sultanate . . . 27
   2. The Marj Dabiq Battle and the Occupation of Syria 29
II. THE RIDANIYA BATTLE AND OCCUPATION OF EGYPT 30
   1. The Suggestions of Selim I Yawuz to the Egypt's Mamluk Touman Bey 30
   2. The Ridaniya Battle and the Occupation of Egypt 32
III. SUBJUGATION OF ARABIA TO OTTOMAN SULTAN 35
   1. The Significance of Arabia for Selim I 35
   2. Establishment of Ottoman Domination in Arabia 37

IV. LEBANON UNDER OTTOMAN DOMINATION 38
V. TURKISH–PERSIAN WARS AND OCCUPATION OF IRAQ (1534–1538) 40
1. Iraq an Apple of Discord Between Ottoman Empire and Shah Persia 40
2. The Turkish–Persian War and Occupation of Iraq by Ottoman State 41
VI. THE CONQUEST OF THE ARAB WEST–MAGHRIB 42
1. Conquest of Algeria, Tunisia and Tripoly 42
2. The End of Transmission of Ottoman Beyliq into Empire 44
VII. THE PROBLEM OF BEING OF OTTOMAN SULTANS' AS FALSE CALIPHS. THE CONCEPTION OF D'OSSON 45
1. Point of Views of Islamists and Historians on Legitimasy of Ottoman Sultans as Caliphs 45
2. A Conception of Armenian Author–D'Osson on Spiritual Sovereignty of Ottoman Sultans as Caliphs 52

CHAPTER III
THE ADMINISTRATIVE–TERRITORIAL DIVISION, SYSTEM OF GOVERNMENT AND SOCIAL–ECONOMIC CONDITIONS OF ARAB COUNTRIES (XVI–XVII CENTURIES)

I. THE ARAB PERCEPTION OF THE CHARACTER OF OTTOMAN EMPIRE 55
1. «The Osman's Sword» as Main Weapon For Preserving of the Empire's Unity 55
2. «Arabs Are More Civilized People Than Turks» 58
II. ADMINISTRATIVE–TERRITORIAL DIVISION AND SYSTEM OF GOVERNMENT. GENERAL PRINCIPLES 62
1. General Principles of Administrative–Territorial Division 62
2. Vertical System of Government and Its Pecularities 63
III. EGYPT AS ONE TERRITORIAL UNIT. THE MAMLUKS AND THE SUBLIME PORTE 68
1. «Kanun al–Misri» 68
2. Aggravation of Relations Between the Mamluks and Sublime Porte. Mamluks Ali Bey and Muhammad al–Zahabi 70
IV. ADMINISTRATIVE–TERRITORIAL DIVISION OF SYRIA AND HER STATUTE 74
1. The Division of Syria Into Vilayats. The Failure of the Attempts of al–Ghazali to Declare the Syrian Independence 74
2. Strengthening of the Positions of Syrian Notables in the System of Government 76
V. THE STATUTE OF LEBANON AND THE MAAN DYNASTY 78
1. Lebanon a Princedom With Internal Autonomy 78
2. Amir Fakhr ad–Din II. His Attempts to Achieve the Lebanese Independence 80

3. Lebanon in the Post–Fakhr ad–Din Period. Shihabs–Amirs of the Lebanon 85
VI. IRAQ AS A SYSTEM OF VILAYATS. TURKISH–PERSIAN CONFRONTATION FOR IRAQ 89
1. The Iraq's Division Into Baghdad, Basra and Mosul Vilayats 89
2. The New Turkish–Persian Wars for Iraq 92
3. Strengthening of the Positions of the Baghdad Local Valis 93
VII. A MOSAIC OF ADMINISTRATIVE–TERRITORIAL DIVISION AND STATUTE IN ARABIA 95
1. Hijaz as a One Administrative–Territorial Unit and the Ottoman Sultans as Servants of Mecca And Madina 95
2. The Yemen Imamat 96
3. The Alliance of Religion and Sword and the Emergence of the Wahhabi State in Central Arabia 97
VIII. PECULARITIES OF ADMINISTRATIVE–TERRITORIAL DIVISION AND GOVERNMENT IN MAGHRIB 103
IX. THE REGIME OF CAPITULATION AND PENETRATION OF THE EUROPEAN POWERS IN ARAB COUNTRIES 105
1. Establishment of the Regime of Capitulations in the Ottoman Empire 105
2. Dissemination of the Regime of Capitulation over the Arab Countries of the Ottoman Empire and the Beginning of Penetration of the European Countries 110
X. BONAPART IN EGYPT 111
1. The Reasons and Political Aims of the Bonapart's Egyptian Campaign 111
2. The Bonapart's Invasion Egypt and His Address to Egyptians 114
3. The Giza Battle, Defeat of Mamluks and Occupation of Cairo by the French troops 117
4. The Napoleon's Difficulties in Egypt. The Anti–French Uprisisng 119
5. The Bonapart's Secret Leaving of Egypt and the Further Destiny of the French Corps. The Second Uprising in Cairo 122
6. The Departure of Frenchmen From Egypt 124
XI. THE SOCIAL–ECONOMIC CONDITIONS OF ARABS IN XVI–XVIII CENTURIES 125
1. Pecularities of the Social–Econoimic Situation. Land as a State Property 125
2. Enlargemant of Waquf Property 127
3. Iltizam or Ikta', Timar, Zeamat 128
4. Local «Kanun Names» 130
5. System of Taxation 132
6. Economic Degradation and Worsening of Condition of Population 134

XII. ARMENIAN COMMUNITIES IN THE ARAB COUNTRIES IN XVI–XVIII CENTURIES 137
1. The Factors Impacting Negatively on the Existence and Development of the Armenian Communities 137
2. The Heavy Conditions of Egyptian Armenians 139
3. Armenians in Syria, Lebanon and Iraq 141

CHAPTER IV
ARAB COUNTRIES IN XIX CENTURY. DEVELOPMENT OF NATIONAL SELF–CONCIOUSNESS OF ARABS AND NEW STAGE OF ANTI–OTTOMAN STRUGGLE

I. ESSENTIAL ADVANCES IN THE ARAB NATIONAL MENTALITY AND THE PREREQUISITES OF ANTI–OTTOMAN STRUGGLE 144
1. Factors of Awakening of Arab Self–Conciousness 144
2. Liberation From Ottoman Domination as the Main Idea of Arab National Self–Conciousness 145
II. SITUATION IN EGYPT AT THE BEGINNING OF XIX CENTURY. MUHAMMAD ALI GOVERNOR OF EGYPT 147
1. A New Balance of Power in Egypt at the Beginning of XIX Century 147
2. Turkish–Mamluk Military Clashes 149
3. The Appearance of Muhammad Ali in the Political Arena 152
4. The Muhammad Ali's Fatal Step 154
5. Muhammad Ali–Ruler of Egypt 157
6. Ordeals for Egyptian New Ruler. 1805–1807 159
III. THE MUHAMMAD ALI'S REFORMS IN THE FIELDS OF STATE RULING, ECONOMY, MILITARY, EDUCATION AND PREPEARING OF NATIONAL CADRES 163
1. Reorganization of Ruling System and State Mashinery 163
2. Reforms in Agrarian Relations 172
3. Military Reforms 178
4. Reforms in the Field of Education 186
5. The Muhammad Ali's Reforms and the Armenians of Egypt 189
IV. ARAB COUNTRIES UNDER THE RULE OF MUHAMMAD ALI 196
1. Arabia Under the Rule of Muhammad Ali (1811–1840) 197
2. Occupation of Eastern Sudan and Its Join to Egypt 207
3. Egyptian Involvement in Greek Affairs and the Muhammad Ali's Purposes . . . 211
V. ESTABLISHMENT OF EGYPTIAN DOMINATION OVER SYRIA AND PALESTINE. THE EGYPTIAN–TURKISH WARS (1832–1833, 1839–1840) 213
1. Invasion of Egyptian Troops in Palestine and Syria 213
2. The First Egyptian–Turkish War (1832–1833) 216
3. Intervention of Russia, England and France 218

4. The Kyutahiya and Hunkar Iskelesi Treaties and the Results of the First Egyptian–Turkish War 222
5. Syria and Palestine in the Years of Egyptian Rule (1832–1840) 227
6. The Egyptian–Turkish Second War (1839–1840) 236
7. The Sultan Abd al–Majid's June 1, 1841, Ferman 246
VI. IRAQ IN THE FIRST PART OF XIX CENTURY 248
1. The Situation in country and Relations Between Iraq and Sublime Porte. . . . 248
2. Daud Pasha and Renaming of Iraq into «Happy Babilonian Kingdom» 251
3. Turkish–Iraqi «War» and the Fall of the Kulemen Power in Iraq 258
4. Iraq in the Troubled Times (1830–1840) 260
VII. THE LEBANESE PRINCEDOM IN THE FIRST HALF OF XIX CENTURY. THE LEBANES ORGANIC STATUTE. ARTIN DAUDIAN THE FIRST MUTASARIF OF LEBANON 267
1. Bashir II Shihab as an Amir of the Lebanes Princedom (1788–1840) 267
2. Lebanes Princedom in the Years of Egyptian Domination 282
3. Liquidation of the Lebanese Princedom and Establishment of Turkish Direct Rule 292
4. Division of Lebanon Into Druze and Maronite Parts and Establishment of Two Kaymakams' Ruling System 300
5. Druze–Maronite Massacres in 1845–1860. 307
6. The Sending of a French Expedition Corps to Syria by Loui Napoleon III Bonapart 317
7. Organic Statute of Lebanon 323
8. Karapet–Harutiun Daudian as the First Mutasarif of Lebanon 330
VIII. THE ECHO OF TANZIMAT IN ARAB COUNTRIES 335
1. Sultan Abdul Majid as a Willy–Nilly Reformer 335
2. The Attempts of Implementation of Tanzimat in Syria and Iraq 338
IX. NAHDA 341
1. Prerequisities of Origin and Character of Nahda. The First–Literary–Cultural Stage of Nahda 341
2. The Second Stage of Nahda — National Patriotic Stage 346
3. Participation and Contribution of Armenians in Nahda 349
X. EGYPT IN THE SECOND HALF OF XIX CENTURY 355
1. Political Situation in Post Mihammad Ali Egypt 355
2. Uprising of Colonel Arabi Pasha 369
3. Suppression of Arabi Uprising and Occupation of Egypt by England 380
XI. THE ARAB COUNTRIES OF NORTH AFRICA IN XIX CENTURY 383
1. The Algerian Dey's Blow by Fan on French Consul and Occupation of Algeria by France 383
2. Tunisia as French Protectorate 396
3. Morocco in the Crossroads of the Struggle of States 405
4. Establishment of French Protectorate on Morocco 409

5. Sudan in the Period of Egyptian Domination. A Mahdian State (1885–1898) 417
6. Reconquest of Sudan and The Anglo–Egyptian Condominium in Sudan (1898–1899) 424

CHAPTER V
ARAB COUNTRIES IN THE PERIOD OF ABDUL HAMID'S ZULUM (1876–1808)

I. OTTOMAN EMPIRE AS A PRISON OF ABDUL HAMID II 429
1. «As–Sultan al–Ahmar» 429
2. Zulum 431
3. Anti–Zulum Movement and Struggle in the Arab Countries 443
4. Once Again on Turkish Sultans as Non–Legitimate Caliphs 450
5. Arab Historiography on the Massacres of Armenians, Organized by Abdul Hamid II in 1894–1896 453

CHAPTER VI
ARABS AND YOUNG TURKS. ILLUSIONS AND REALITY (1908–1914)

I. NEW POLITICAL REALITIES 463
1. Young Turks Captured Power 463
2. An Arab–Turkish «Honey–Moon» and Its Fruad 466
II. THE YOUNG TURKS CONCEPTION OF TURKIZATION AND ARABS 473
1. Arabs Between Turkish Nationalism and Panturkism 473
2. Arabs Before Dilemma of Decentralization and Independence 477

CHAPTER VII
THE FALL OF OTTOMAN EMPIRE AND LIBERATION OF ARABS FROM TURKISH YOKE (1914–1918)

I. ARAB COUNTRIES IN THE FIRST STAGE OF WORLD WAR I (1914–1916) . . 496
1. The Beginning of the First World War and the Military–Political Aims of the Confronting Blocks 496
2. The Arabic Factor 500
3. Egypt as a British Protectorate 516
4. Impact of the War on Internal Situation of Syria, Lebanon, Palestine and Iraq 523
5. Gallows in Beirut and Damascus 532
II. PREPARATION OF ARAB REVOLT 537
1. Mecca–London Initial Contacts 537
2. Husayn–Mac–Mahon Correspondence and Defination of Future Arab State Borders 546
3. Sykes–Picot Agreement and the Last Action of the Arab Drama 555

III. THE ATTITUDE OF ARABS TOWARDS THE ARMENIAN GENOCIDE, 1915 . . 560
1. The Arab Humanenness. «The Name of Arabs Will Be Written by Golden Letters in the History of Armenians» 561
2. Elucidation of Armenian Genocide in the Arab Historiography. Armenocide. 571
IV. THE ARAB REVOLT. WAR ACTIONS IN IRAQ AND SYRIA. OVERTHROW OF TURKISH DOMINATION 585
1. Military Actions in the Iraqi Front. Declaration of Mode. Establishment of British Colonial Regime in Iraq 586
2. As–Saura al–Arabiya al–Qubra–The Great Arab Revolt 594
3. The Turkish Attitude Towards the Arab Revolt and Its Actions Against It 599
4. «The Last Nail on the Jihad Coffin» 603
5. Proclamation of Husayn Ibn Ali as King and the Anglo–French Confrontation to That Action 604
6. Crushing Defeat of Turkish Army and Liberation of Palestine, Jordan, Lebanon and Syria 608
7. The Husayn's Disagreements With English and French Allies and Their Causes 610
8. Restart of Military Actions and New Victories of Anglo–Arab Troops. 617
9. The Arara Battle. «The Brilliant Behaviour of Armenians» 624
10. Victory in Khan Touman Battle–Revenge For Marj Dabiq Defeat . . . 626
11. On Appreciation of the Arab Revolt's Contribution in Victories Over Turks in the Orientalistic Historiography 628
12. Creation of the First Syrian Arab National Government and a New Stage of Disagreements Between Arabs and Alies 631
13. The Last Bell of the Ottoman Empire 635

TABLES
I. Genealogy of Ottoman Rulers. 1299–1922 639
II. Muhammad Ali's Dynastic Genealogy in Egypt. 1805–1953 640
III. Mutasarifs of Lebanon. 1861–1915 640

INDEX 641

MAPS
1. Arab Countries Under the Ottoman Domination. 1516–1918
2. Administrative Division of Syria During the Ottoman Domination
3. Sykes–Picot Agreement, 1916, on Division of Arab Countries

LITERATURE 655

Նիկոլայ Հովհաննիսյան
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Հատոր II. Օսմանյան տիրապետության շրջան. 1516–1918 թթ.

Nikolay Hovhannisyan
HISTORY OF THE ARAB COUNTRIES
Volume II: Period of Ottoman Domination 1516–1918
(In Armenian)
"Zangak–97" Press, Yerevan, Armenia, 2004

Николай Оганесян
ИСТОРИЯ АРАБСКИХ СТРАН
Том II: Период османского владычества — 1516–1918 гг.
(на армянском языке)
Изд. "Зангак–97", Ереван, 2004 г.

Հրատարակչութ. տնօրեն՝ Մ. Վ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Համակարգչ. ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի
Ներդիրի նկարների մշակումը՝ Ա. Տ. Հակոբյանի
Քարտեզների պատրաստումը՝ Գ. Ս. Բեգլարյանի
Շապիկի համակարգչ. մշակումը՝ Ա. Տ. Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսետ:
Ծավալը՝ 42.5 տպ. մամ. + 1.25 կավճ., 37.26 + 1.23 հրատ. մամ., 39.53 + 1.16 պայմ. մամ.:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+3741) 23–25–28,
ֆաքս՝ (+3741) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am